

«Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ա Ր Ա Ն»  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս Ե Բ Է Ո Ս Ի

ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹՅԱՄԲ  
Գ. Վ. ԱԲԳԱՐՅԱՆԻ

«МАТЕНА ДАРАН»  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА  
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

# ИСТОРИЯ СЕБЕОСА

СВОДНЫЙ КРИТИЧЕСКИЙ ТЕКСТ,  
ПРЕДИСЛОВИЕ И КОМЕНТАРИИ  
Г. В. АБГАРЯНА

Պատասխանատու իմբագիր  
Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Սերէոս

Ս 333 Պատմութիւն Սերէոսի /Աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարյանի.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979.— 445 էջ

«Սերէոսի Պատմութիւնում» արտացոլված են մ. թ. VII դարում տեղի ունեցած քաղաքական այնպիսի նշանավոր իրադարձութիւններ, ինչպիսիք էին պարսկա-բյուզանդական պատերազմները, արաբների պատմական ասպարեզ իջնելն ու առաջին արշավանքները, Սասանյան հարբստութեան անկումն իրանում, բյուզանդական տիրապետութիւնների մի մասի նվաճումն արաբների կողմից: Այն կարևոր սկզբնաղբյուր է հատկապէս հայագիտական, կովկասագիտական, իրանագիտական, բյուզանդագիտական և արաբագիտական ուսումնասիրութիւնների համար: Հայ ժողովրդի VI—VII դդ. պատմութեան համար սա անփոխարինելի աղբյուր է:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
Համառոտագրություններ	43
Պատմութիւն Սեբէոսի	45
Յանկ գլխոց Պատմութեան Սեբէոսի	179
Մանրագրություններ	187
Հավելվածներ	369
Ա. «Սեբէոսի Պատմության» հեղինակի հարցը	371
Բ. Անանունի Ա—Զ գլուխները	386
Գ. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց	391
Դ. Պատմութիւն Թովմայի Արծրունւոյ	399
Ե. Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Եփեղբրական	407
Զ. Պատմութիւն Վարդանայ	416
Է. Գիւտ նշխարաց սրբոյն Հոփսիմեայ	419
Ը. «Հերակլի պատմության» հատվածական վերապատումները	421
Հատուկ աւուճների ցանկ	435



Հայրենական պատերազմում զոհված  
ԱՐԱՄԱՅԻՍ, ԱՐՏԱՎԱԶԴ, ԱՇՈՏ  
եղբայրներիս անմար հիշատակին

## Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Հրապարակվող երկն ընդգրկում է հիմնականում մեր թվականության հինգերորդ դարի երկրորդ կեսից մինչև յոթերորդ դարի յոթերորդ տասնամյակում տեղի ունեցած անցքերի պատմությունը: Այն կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի և հարևան երկրների պատմության ուսումնասիրման համար: Այստեղ արձագանք են գտել համաշխարհային պատմական նշանակություն ունեցած այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են Երուսաղեմի գրավումը պարսիկների կողմից (614), Խոսրով Ապրվեզի (590—627) և Հերակլ կայսեր (610—640) միջև մղված պարսկաբյուզանդական պատերազմները, արաբների պատմական ասպարեզ իջնելը և առաջին արշավանքները, Սասանյան հարստության անկումը:

Հեղինակն ապրել է VII դարում և անձամբ հանդիպել ու լսել է իր նկարագրած դեպքերի ականատեսներին ու մասնակիցներին: Նրա նկարագրած որոշ դեպքեր ծավալվել են միջնադարյան գրեթե ամբողջ Արևելքով մեկ, ընդգրկելով ամենահեռավոր սահմաններ, ընդհուպ մինչև «ի սահմանս Հնդկաց», մինչև Աֆրիկա: Դեպքերին մասնակից են եղել բազմաթիվ ժողովուրդներ ու ցեղեր. աղվաններ, ասորիներ, արաբներ, եգերացիներ, թեառլացիներ, հայեր, հեփթաղներ, հնդիկներ, հոններ, հրեաներ, հույներ, մազբույթներ, մարեր, պարսիկներ, վրացիներ, քուշաններ և այլն:

Հատկապես Խոսրովի և Հերակլի թագավորության տարիներին, ինչպես նաև արաբական արշավանքներին վերաբերող հունական, արաբական, պարսկական, ասորական, լատինական, դպտական և այլ աղբյուրների շարքում հայկական սկզբնաղբյուրը գրավում է ուրույն տեղ, որպես դեպքերի մերձավոր ժամանակակցի կողմից շարադրված պատմություն: Այս տեսակետից հայ պատմիչի երկն օգտագործել և գնահատել են հայագետների հետ միասին նաև կովկասագետները, արևելագետները, բյուզանդագետները:

«Սեբեոսի Պատմությունը» գիտական լայն շրջանառության մեջ է մտել ուսուերեն, ֆրանսերեն և գերմաներեն (հատվածական) թարգմանությունների միջոցով և այսօր էլ շարունակում է գրավել մասնագետների ուշադրությունը առաջին հերթին որպես հայ-պարսկական, հայ-բյուզանդական, հայ-արաբական, իրանա-բյուզանդական, արաբա-բյուզանդական հարաբերություններին և այլ խնդիրների վերաբերող հավաստի աղբյուրներից մեկը:

Պատմիչն ինքը առաջաբանում այսպես է ներկայացրել իր գրքի համառոտ բովանդակությունը. «Բայց զայն ամենայն, որ ի Պերոզի ժամանակն եղեալ

շարութիւն, և զառ ի խոսորովայ զապատամբութիւնն զՎարդանայ, և զզարացն Պարսիցն զապատամբելն յՈրմզդէ, զմահն Որմզդի և զթագաւորելն խոսորովայ, զմահն Մարկայ և զթագաւորելն Փոկասայ, զանուլն Եգիպտոսի, զկոտորածն Աղեքսանդրի, զգիւմելն Հերակլի ի կողմանս հիւսիսոյ առ արեայն Թէտալացոց, զյուղարկումն անհուն բազմութեանն ազգաց, զասպատակն Յունաց յԱտրպատական, զառ և զաւար՝, և զդարձն ընդ Փայտակարան, զեկ զաւրացն Պարսից յարեւելից զդիմի հարկանել նմա, զպատերազմն, որ յաշխարհին Աղուանից, զդարձ կայսերն ի Նախճրան քաղաքն և զկոհն Արճիշոյ, զգնալն կայսեր անդէն ի սահմանս իւր, զմեւս ևս այլ դիմելն ի վերայ խոսորովայ, զգործ պատերազմին, որ ի Նինուէ, զասպատակն որ ի Տիսբոն քաղաք, զդարձն յԱտրպատական, զմահն խոսորովայ, զթագաւորելն Կաւատայ, զհաշտութիւն՝ որ ի մէջ թագաւորացն երկոցունց, զթողուլն անդրէն ի բաց զսահմանն Յունաց, զդարձ աստուածեան խաչին ի քաղաքն սուրբ: Յետ այսորիկ զարթուցեալ անհուն բարկութիւն, և զվերջին աղէտս հինին՝ որ ի կողմանս հարաւոյ, և թէ որպէս յանկարծարէն շարժեցան բանակքն Իսմայելի, և ի վայրկեան ժամանակի վանելով զզարութիւն թագաւորացն երկոցունց՝ կալան յնգիպտոսէ մինչև յայսկոյս գետոյն մեծի Եփրատայ և ցահման Հայաստանեայց, և յեզերէ ծովուն մեծի Արևմտից մինչև ի դուռն թագաւորութեանն Պարսից զամենայն քաղաքս Միջագետաց Ասորոց և զՏիսբոն և զՎեհ Արտաշիր և զՄարանդ, զՀամադան մինչև ցԳանձակ քաղաք և զՀրատն մեծ՝ որ յԱտրպատական գաւառի—զայս ամենայն կամեցայ ի ձեռն գրոյս այսորիկ կարճառաւտի ձեզ վիպասանել»:

Այս կարճատե թվարկումն իսկ ցույց է տալիս, թե որքան լայն ընդգրկում ունի հայ պատմիչի երկը:

Թվարկման բնույթն այնպիսին է, որ թելադրում է այն միտքը, թե «Սեբեոսի Պատմութեան» հեղինակը գրել է ոչ թե հայոց, այլ՝ իր մերձակա ժամանակի ընդհանուր պատմութիւնը: Նա առաջաբանում ոչ մի խոսք չի ասում հայ գործիչների մասին, այլ թվարկում է պարսիկ, բյուզանդացի և արաբ իշխողների ու նրանց գործողութիւնների սահմանները: Այսուհանդերձ՝ գիրքը շարադրելու ընթացքում նա մեծ ուշադրութիւն է դարձրել իր հայրենիքի հետ առնչվող դեպքերին, հայ և օտար գործիչների քաղաքական, ռազմական և դիվանագիտական հարաբերութիւններին: Պատմութիւնը շարադրել է հայկական հողի վրա, որպէս հայ պատմիչ, լրացնելու համար իր նկատած բացը մեր պատմագրութեան մեջ:

Հինգերորդ դարի հարուստ պատմագրութիւնից հետո, վեցերորդ, յոթերորդ դարերում, մինչև հրատարակվող երկի հանդես գալը, չի գրվել կամ մեզ չի հասել պատմագրական ոչ մի կարևոր աշխատութիւն: Սույն գրքի հեղինակին ենք պարտական շուրջ երկու հարյուր տարվա պատմական մի ժամանակաշրջանում տեղի ունեցած գրեթե բոլոր նշանավոր դեպքերի գրանցման համար: Մյուս պատմիչները կրկնում են այս ստուգապատում մատենագրին և էական նորութիւններ չեն ավելացնում նրա գրածին<sup>2</sup>:

<sup>1</sup> Ընդգծված տողերում հայտնվող իրադարձութիւնների պատմութիւնը մեզ հասած ձեռագրերում բացակայում է, հավանաբար թղթերի կորստյան հետևանքով:

<sup>2</sup> Ուշագրավ բացառութիւն է կազմում Ուխտանեսը: Նա «Գիրք թղթոցի» և այլ աղբյուրների հիման վրա շարադրել է հայ և վրաց եկեղեցիների բաժանման պատմութիւնը, որը անհասկանալի պատճառներով բացակայում է «Սեբեոսի Պատմութեանից»:

## ՆԵՐԿԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

**Առաջին:** Նախորդ հրատարակություններում օգտագործված ձեռագրերից բացի, օգտագործված են նաև ՄՄ № 2935 ձեռագիրը, ՄՄ Երիցյանի արխիվում (թղթ. 153, վ. 124) պահվող հատվածական ընդօրինակությունը և № 1343 պատատիկը:

Օգտագործված են նաև ՄՄ № 1898 և 2679 ձեռագրերը, որոնք «Սեբեոսի Պատմության» ձեռագրերից չեն, բայց պարունակում են այդ Պատմությունից քաղված հատվածներ: Սրանք ավելի հին են, քան «Սեբեոսի Պատմության» մեզ հասած հնագույն ձեռագիրը և ունեն ուշագրավ տարրնթերցվածքներ ու լրացումներ:

**Երկրորդ:** Ուղղված են ձեռագրերում աղճատված և նույն վիճակում տպագրված բազմաթիվ հատվածներ:

Նոր ձեռագրերի հիման վրա վերականգնված են նախնական բնագրում եղած մի շարք միավորներ, որոնք առաջին անգամ են հրատարակվում «Սեբեոսի Պատմության» կազմում:

Մեզ հասած ձեռագրերում իր տեղը կորցրած հեղինակային վերջաբանը սույն հրատարակության մեջ տպագրված է առաջին անգամ իսկական տեղում:

**Երրորդ:** Տողատակի տարրնթերցվածքների բաժնում ներկայացված են հիմնականում № 2639 ձեռագրի (մայր օրինակ) տարրնթերցվածքները: Մյուս ձեռագրերից գրանցված են միայն կարևոր տարրնթերցվածքները:

Բացի մայր օրինակից, մյուս բոլոր ձեռագրերն ընդօրինակել են ոչ թե սովորական գրիչներ, այլ XIX դարի մտավորականներ, ուստի՝ նրանց որոշ ընթերցումներ ստանում են գիտական վերծանության նշանակություն: Այսպես օրինակ, №№ 2935, 6454 ձեռագրերի գրիչները հնագույն ձեռագրի «զանստարագրել» վրիպակը Անանունի հատվածում ընդօրինակել են՝ վերականգնելով նախնական բնագրում եղած ճիշտ ձևը՝ «զանստորագրեալ»: Մեկ այլ գրիչ Դավանության թղթում վերականգնել է «յամի երեքտասաներորդի» ընթերցվածքը, որի փոխարեն հնագույն ձեռագրում առկա է «յամի ԺԳ երեքտասաներորդի» վրիպակը: Երբեմն կատարվել են նաև ոչ ճիշտ վերծանություններ, որոնք նույնպես ցույց ենք տվել տարրնթերցվածքների բաժնում:

Ձեռագրական տարրնթերցվածքներին զուգընթաց նշել ենք նաև տպագրի բնագրերի ընթերցվածքները, որոնց մեջ կան նաև այնպիսիները, որոնք սպորդի են պարզապես որպես տպագրական վրիպակներ, հրատարակիչների կամքից անկախ: Նման դեպքերում տողատակի տարրնթերցվածքի կողքին, փակագծի մեջ ավելացրել ենք «տպագրական վրիպակ» նշումը, առանց որի վրիպակը կարող էր թողնել իրական տարրնթերցվածքի տպավորություն: Օրինակ, Մալխասյանցի հրատարակության մեջ (էջ 52) տպագրված է «սեպուհն», այնինչ՝ ձեռագրում գրված է «սեպուհն»: Մենք տպագրել ենք ձեռագրի

ձիշտ ձևը, իսկ վրիպական իջեցրել ենք տողատակ, կողքին գրելով «տպագրական վրիպակ»: Այսպես ենք վարվել միայն կարևոր վրիպակների դեպքում: Անկարևորները չենք նշել, այլ միայն ուղղել ենք:

Հնագույն ձեռագրում գտնվող որոշ տարրնթերցվածքներ կարող են առաջին հայացքից անկարևոր թվալ, սակայն դրանք մենք նշել ենք, նկատի ունենալով նրանց հետևողականությունը: Այսպես օրինակ, «կաթողիկոս» բառը ամենուրեք գրված է «կաթաղիկոս»: Միևնույն գրությունը գտնում ենք նաև № 1343 պատասխիկում, որը № 2639 ձեռագրից ավելի հին է: Կնշանակի այդ գրությունը պատահական չէ: Բառամիջում «ի» ձայնավորի փոխարեն «ե»-ի գործածության (առեւծ, գեւղ, մեւս, երկեւղ) բազմաթիվ դեպքեր կարող էին մեզ թելադրել ընդունել այդ ուղղագրությունը, սակայն Միհրդատյանի հրատարակության մեջ գտնում ենք «ի» ուղղագրությունը (առիւծ, գիւղ, միւս, երկիւղ), որից պետք է ենթադրել, որ դա մեզ չհասած հնագույն ձեռագրի ուղղագրությունն է:

Հաճախ բառասկզբի «հ»-ն ձեռագրում չի գրված («անդերծագինս» փի. «հանդերծագինս»): Սա նույնպես պատահական վրիպակ չէ, այլ՝ հետաքրքիր հնչյունասղման երևույթ: Այդպես են նաև մի քանի այլ հնչյունների սղման դեպքերը (գնահն, հրամաէ, արամք, քումէ, որդոյ, ասորոց, ջրորոց և այլն):

Անունները երբեմն գրված են մի քանի տարբեր ձևերով (Գրիգոր—Գրիգորիոս, Դուին—Դրին, Հերակլ—Հերակղ—Հայրակղ—Հերակլոս և այլն): Թողել ենք նույնությամբ, որովհետև չենք իմացել, թե ո՞րն է հեղինակինը: Բացի այդ՝ անվան որոշ ձևեր կարող էին նույնությամբ քաղված լինել «Սեբեոսի Պատմության» մեջ օգտագործված աղբյուրներից և տարբերվել հեղինակի գործածած սեփական ձևերից: Եթե բոլոր անունները միանման դարձնեինք՝ կկորցնեինք հնարավոր աղբյուրների հետքերը: Ուղղումներ կատարել ենք միայն այն դեպքերում, երբ ուղիղ ձևը գտել ենք ձեռագրերում:

Բնագիրը ծանրաբեռնած չլինելու համար՝ տողատակին չենք նշել ձեռագրական այն տարրնթերցվածքները, որոնք հանդիպում են միջնադարյան գրեթե բոլոր ձեռագրերում և հանրահայտ են. օրինակ, բառերի վերջում «յ» տառի բացակայությունը (Հայկա, Արարադա, Կաղմեա, Դեմետրեա), այս տառի ավելորդ գործածության դեպքերը (սայ, դայ, դմայ, գնայ), «ն» դիմորոշ հոդի գործածության կամ բացթողման անկանոնությունները (արքայի, արքային) խառն ուղղագրության դեպքերը (աւ—օ, դ—լ, ով—ո) և այլն: Հետևել ենք Մալխասյանցի և նախորդների ընդունած ուղղագրությանը:

Տողատակ չենք իջեցրել և չենք սրբագրել նախորդ հրատարակիչների կողմից նույնպես չսրբագրված և բնագրի մեջ նույնությամբ թողնված «բազմաթիվ քերականական սխալներ, որոնք շատ հեշտ էր ուղղել, բայց մենք ձեռք չտվինք, քանի որ համոզված չէինք, թե դրանք գրիչների սխալներն ու աղավաղություններն են»<sup>1</sup>:

<sup>1</sup> Մալխ., Առաջբան, էջ 2Ա: Մալխասյանցն այս էջում մատնանշում է մի շարք օրինակներ. «ի սովոս» (փի. «ի սովոյս»), «ազղ լինի եղեալ իրքն», «բանքն ոչ ունէր հաստատութիւն», «ելին իրաւունս ի վերայ նորա», «հնադանդեցան ամենայն բնակիչք... լեռնականս և դաշտականս», «էին նոքա երեք հազար սպառազէնս», «առ մահուն երկիւղիւ», «մերծ քաղաքան», «հատեալ նման զկապանս» և այլն: Աշխարհաբարի ձևեր. «հասաւ», «դիպաւ», «ծողովէ», «հրամայէ» և այլն:

**Չորրորդ:** Նախքան Մալխասյանցի հրատարակությունը «Սեբեոսի Պատմությունը» կոչվել է «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլին»: Մալխասյանցը վերացրեց Հերակլի անունը և կոչեց «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն»: Մենք հրատարակել ենք «Պատմութիւն Սեբէոսի» խորագրով: «Եպիսկոպոս» տիտղոսը կրճատել ենք, որովհետև մյուս պատմիչները (որոնք նույնպես գրեթե առանց բացառութեան տիտղոսներ ունեցել են) հրապարակվում են սովորաբար առանց տիտղոսները նշելու: Հնագույն ձեռագրում Պատմությունը խորագիր և հեղինակի անուն չունի:

Գիտական գրականության մեջ, հատկապես արտասահմանում, երբեմն դործածվում է «Սեբիոս» անվանաձևը, որն ավելի ճիշտ է, քան «Սեբէոս»-ը (այս մասին մանրամասն տե՛ս ստորև, Միհրդատյանի օգտագործած և մեզ չհասած հին ձեռագրին վերաբերող բաժնում), բայց քանի որ նախորդ բոլոր հրատարակությունները տպագրված են «Սեբէոս» անվանաձևով՝ մենք հետևել ենք այդ ավանդույթին:

Մ. Արեղյանը Մալխասյանցի հրատարակության կապակցությամբ գրում է. «Ավելի ճիշտ կլիներ՝ վերնագիրը դնել Պատմութիւն Հայոց, և ոչ՝ թե լոկ «Պատմութիւն»<sup>2</sup>: Ա. Զամինյանը նույնպես գրել է. «Սեբէոս էլ գրում է հայոց ամբողջական պատմությունը»<sup>3</sup>: Այսուհանդերձ մենք չենք համարձակվել գիրքը կոչել «Պատմութիւն Հայոց», որովհետև «Սեբեոսի Պատմության» հեղինակն ինքը իր Պատմության առաջին մասը կոչել է «Մատեան... Խոսրովեան», իսկ հաջորդ մասը, որը վերաբերում է արաբական շրջանին, դարձյալ իրավունք չի տալիս գիրքը Հայոց պատմություն կոչելու: Ն. Ակինյանը, Ստ. Մալխասյանցը և ուրիշներ երբեմն առաջարկել են «Պատմութիւն Խոսրովու» խորագիրը<sup>4</sup>, որը, սակայն, ինչպես ասվեց, վերաբերում է գրքի միայն առաջին մասին:

**Հինգերորդ:** «Սեբեոսի Պատմության» առաջին երեք հրատարակությունները լույս են տեսել գլուխների միևնույն վերնագրերով, որոնք շարադրել է Միհրդատյանը: Մալխասյանցը վերաշարադրել ու ավելի է կարգավորել վերնագրերը, գիրքը բաժանելով 50 գլուխների (նախորդ տպագրությունների 38-ի փոխարեն): Մենք կրկնել ենք Մալխասյանցի հրատարակության վերնագրերը որոշ ճշգրտումներով և երկու վերնագիր ավելացնելով (գլուխ Դ «Մենդաբանութիւն ազգին Մամիկոնէից» և գլուխ Ե «Թագաւորք Հայոց, Պարսից և Յունաց»): Մեր հրատարակությունը բաղկացած է 52 գլուխներից: Ավելացված գլուխների մասին տե՛ս ծանոթագրությունների բաժնում (ծան. 75 և 78):

**Վեցերորդ:** Ծանոթագրությունների մեջ օգտագործել ենք նաև Հ. Շահխաթունյանցի, Ա. Կարիբրի, Յ. Մարկվարտի և Ա. Զամինյանի արխիվներում պահպանված անտիպ նյութերը, որոնք առաջին անգամ են հրապարակվում

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1944, հ. Ա, էջ 388:

<sup>3</sup> ՄՄ, Զամինյանի արխիվ, թղթ. 232բ, վավ. 133 (մեր բերած խոսքերը Զամինյանը գրել է «Սեբեոսի Պատմության» 1912 թ. հրատարակության ներքին շապիկի վրա):

<sup>4</sup> Ն. Ակինյանը («Մատենագրական հետազոտություններ», Վիեննա, 1924, էջ 19) գրում է. «Պատմության հարազատագույն խորագիր կհամարիմ հիմնված Ուստանեսի և Ասողիկի վրա «Պատմութիւն Հեռակի ի Սեբիոսէ եպիսկոպոսէ ասացեալ», սակայն հետագայում (էջ 47) հայտնում է. «ավելի հարազատ խորագիր պիտի համարեի «Պատմութիւն յԱպրուէզն Խոսրով»:

և մտնում գիտական շրջանառության մեջ<sup>5</sup>: Հատկապես մեծ է Ա. Զամինյանի վաստակը: Նա դեռևս 1927 թ. հունիսի 8-ին գրել է. «Մեր հին պատմիչներից Սեբեոս եպիսկոպոսի ընտիր պատմագրությունը շափազանց խառնակված է: Ք. Պատկանյանը այդպես էլ տպագրած է և հայ բանասերներից ոչ ոք մինչև ցայժմ նորա ուղղագրությամբ չբաղած է: Մենք ահա փորձում ենք առաջին անգամ այդ գործը կատարելու: Գործածում ենք Տփղիսի 1912 թ. տպագրությանը» (Թղթ. 232ա, վ. 101, էջ 90):

**Յոթերորդ:** «Սեբեոսի Պատմության» գրաբար բնագրի հրատարակիչները, ինչպես նաև ուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն թարգմանությունների գիտնական հեղինակները մեծ աշխատանք են կատարել բնագրի վերծանման, լուսաբանման և ճշգրտման ուղղությամբ: Ներկա հրատարակության մեջ ընդունված և արտացոլված են հիշյալ հրատարակություններում և թարգմանություններում տեղ գտած բոլոր կարևոր վերծանություններն ու ծանոթագրությունները: Ընդունված և արտացոլված են նաև մի շարք այլ մասնագետների (է. Դյուլորիե, Ք. Նյուրեկե, Յ. Մարկվարտ, Ն. Բյուզանդացի, Ն. Ադոնց, Ա. Զամինյան, Ք. Ավդալբեգյան, Ն. Ակինյան, Մ. Գրիգորյան և այլն) սրբագրական առաջարկները:

**Արբերորդ:** Բնագրին հաջորդող հավելվածների բաժնում զետեղված են ութ առանձին հավելվածներ, որոնցից առաջին երկուսը վերաբերում են «Սեբեոսի Պատմության» հեղինակի հարցին և Անանունի Ա--Ձ գլուխներին:

Հաջորդ հավելվածներում առանձին-առանձին հրապարակված են Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Ստեփանոս Ասողկիկի և Վարդան Արևելցու երկերում «Սեբեոսի Պատմությունից» քաղված հատվածները: (Ասողկիկի և Վարդան Արևելցու երկերում «Սեբեոսի Պատմությանը» համապատասխանող տեղեկությունների մի մասը քաղված է ոչ թե անմիջապես «Սեբեոսի Պատմությունից», այլ Դրասխանակերտցուց և մեզ անհայտ աղբյուրներից):

Նույն բաժնում հրապարակված է նաև «Շինումն տաճարին Հոփսիսմեայ» հատվածի համեմատական բնագիրն ըստ ՄՄ № 993 և 1912 ձեռագրերի

<sup>5</sup> Շահխաթունյանցի, Կարիերի և Մարկվարտի անտիպ երկերից քաղված ծանոթագրությունները հատուկենտ են: Իսկ Զամինյանը հատկապես չբաղվել է «Սեբեոսի Պատմության» բնագրի վերահրատարակությամբ և այդ Պատմության 1912 թ. թիֆլիսյան հրատարակության (Ղուկասյան հրատարակություն) լուսանցքներում և տողամիջում կատարել է շուրջ 100 բնագրագրտական նշումներ (Զամինյանի արխիվ, Թղթ. 232բ, վավ. 133): Սրանք մեծ մասամբ զուգահեռում են մյուս բանասերների նշումներին, սակայն կան նաև այնպիսիները, որոնց առաջին հեղինակը ինքը Զամինյանն է: Որոշ նշումներ կատարված են 1931-ից հետո: Դա երևում է Զամինյանի օգտագործած հրատարակության 9-րդ էջից, որտեղ «Անգեղտուն» բառի դիմաց լուսանցքում Զամինյանը գրել է. «Տեսնել նաև Խաչատրյանի հոդվածը՝ Տեղեկագրի մեջ 1931, № 5 Անգեղտուն»: Հիշյալ հրատարակությունից 12 թերթ (29—40 և 59—70 էջերը) բացակայում են: Սակայն անվանացանկում (էջ 339) և Զամինյանի արխիվի մյուս թղթերում (Թղթ. 232, վավ. 101, էջ 58) պահպանվել են բացակայող էջերում գտնված ծանոթագրության կարոտ ամենագլխավոր աղճատումների («Թէարբունի» և «կարբեզովմայեցի») վերաբերյալ դիտողությունները, որոնք մենք զետեղել ենք այդ բառերին վերաբերող ծանոթագրությունների բաժնում:

Զամինյանը միաժամանակ փորձել է վերակազմել «Սեբեոսի Պատմության» բնագիրը (Թղթ. 232ա, վավ. 101), օգտագործելով նաև նախորդների ցուցումները, սակայն նրա վերակազմական առաջարկները հիմնավորված չլինելով՝ կիրառելի չեն: Վերակազմության փորձը կատարվել է 1934-ից հետո: Սա երևում է նրանից, որ Զամինյանը մի կապակցությամբ մատնանշել է «Հանդես ամսօրյալի» 1934 թ. էջ 28-ը:

(նախօրոք տպագրել ենք «էջմիածին» հանդեսում, 1968, № 1, էջ 58—61): Մույն հատվածը քաղված է «Սեբեոսի Պատմությունից», բայց ունի կիսով չափ ավելի մեծ ծավալ, քան գտնում ենք «Սեբեոսի Պատմության» բուն ձեռագրում:

Վերջին հավելվածում հրապարակված են ՄՄ № 7729 և 993 ձեռագրերում պահպանված «Ի Պատմութենէ Հերակղի» և «Ի Հերակլեայ պատմութեանց» հատվածները, որոնք քաղված են «Պատմութիւն Հերակլի» կոչված և մեկ շհասած մի երկից:

Այսպիսով՝ հավելվածների բաժնի երեք գլուխ (առաջին, երկրորդ, ութերորդ) կոչված են հիմնավորելու մեր տեսակետն այն մասին, որ «Սեբեոսի Պատմության» իրական հեղինակը Սեբեոսը չէ: Սեբեոսի անունը սույն հրատարակության վրա մենք պահպանել ենք պայմանականորեն, նկատի ունենալով, որ հրապարակվող երկը բազմիցս տպագրված լինելով հայերեն և այլ լեզուներով գիտական շրջանառության մեջ է մտել այդ հեղինակի անվամբ և յուրաքանչյուր նոր փոփոխություն ավելորդ շփոթ կառաջացնէր: Քանի դեռ չի գտնված միջնադարյան այնպիսի ընդօրինակություն, որը պահպանած լինէր որևէ հեղինակի անուն, նպատակահարմար պետք է համարել գիրքը հրատարակել արդեն ավանդույթի ուժ ստացած՝ Սեբեոսի անվամբ:

## ՆԱԽՈՐԳ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պատմութիւն Սերէտսի եպիսկոպոսի ի Հեռակլն: Ընծայեալ ի լոյս...  
ի Կոստանդնուպօլիս, ի տպարանի Յովհաննու Միհէլէնտիսեան, 1851 = ՌՅԱ:

Հրատարակիչն է Թադեոս Միհրդատ Տէր-Աստվածատրոյան Միհրդատ-  
յանցը, որն իր անունն ստորագրել է գրքին կից Կանխաբանութեան տակ:

Կանխաբանութեան մեջ հրատարակիչը արժանի է գտնում՝ իր հրատա-  
րակած նորագլուտ մատչանը «երկրորդ դասել յետ Քերթողհօրն ցանկալի  
դպրութեան՝ վասն հնախօսութեան ի մասին Արձանագրութեան (նկատի ունի՝  
Անանունի քաղած ագաթանգեղյան արձանագրութիւնը—Գ. Ա.), և վասն  
այլոց պատմութեանց»: Նրա կարծիքով՝ Հայկի և Բելի մասին տեղեկութիւն-  
ներն իր հրատարակած գրքում քաղված են ավելի հին աղբյուրներից, քան  
նորենացու աղբյուրն է. «ըստ նիւթոյն և ըստ հայրենաւանդ ստուգութեանն ոչ  
մի ինչ պակաս՝ այլ առաւելագոյն քան զայն»: Ենթադրութիւններ է անում  
«Սերէտսի Պատմութեան» աղբյուրների մասին և ցավում է, որ «չեհաս ի ձեռ-  
մեր ամբողջագոյն օրինակն սակս հասու լինելոյ յիշատակարանի սորին»:

Չափազանց կարևոր են հրատարակչի հայտնած տեղեկութիւնները իր  
օգտագործած երկու ձեռագրերի, հատկապէս՝ հին ձեռագրի մասին<sup>6</sup>: Ձեռ-  
գրերից առաջինը վերջից թերի է եղել, բայց ընդօրինակված լինելով XV<sup>1</sup>  
դարում, պարունակել է շատ կարևոր ընթերցվածքներ<sup>7</sup>, որոնք մեզ հասած  
ոչ մի ձեռագրում այժմ չկան: Անհետ կորած այս ձեռագրի մասին ավելի  
մանրամասն տե՛ս ստորև՝ ձեռագրերի բաժնում:

Երկրորդ ձեռագրի մասին Միհրդատչանը Ժ—ԺԱ էջերում հայտնում է  
հետևյալը. «Եւ ի միւս օրինակին՝ զոր արարաք մեզ բնագիր զոր ընկալեալըն  
էաք ի սրբոյ Վեհէն որպէս տեսցի ի ստորև որ էր գրեալ ՌՃԻԱ (=1672) թուոյն  
ի Բաղէշ ի վանս Յովհաննու Կարապետի, եղեալ էր ի վերջն յիշատակարան»,

<sup>6</sup> Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 86 ձեռագրի հիշատակարանից (Տաշչան, Յու-  
ցակ հայերէն ձեռագրաց, էջ 346—347) երևում է, որ Միհրդատչանն ունեցել է ևս մի օրինակ,  
որը, սակայն, տպագրութեան մեջ չի օգտագործել, որովհետև ձեռագիրը եղել է «հապճեպով իմն  
օրինակեալ»: Տաշչանը ենթադրում է, որ այս օրինակը «ըլլալու է Մարմաշինու օրինակին  
(այսինքն՝ Միհրդատչանի օգտագործած հին ձեռագրի—Գ. Ա.) նոր գրչութիւն մը» (էջ 347):  
Սույն հապճեպ ընդօրինակութեան մասին իմանում ենք № 86 ձեռագրի հիշատակարանի հետևյալ  
տողերից. «ասէր ցիս (Միհրդատչանն ասել է № 86 ձեռագրի վրին—Գ. Ա.), եթէ օրինակն զոր  
դու գրեցէր՝ աղաւաղ է, զի այն հապճեպով իմն օրինակեալ է յէջմիածին, և ես զիմ օրինակն  
գրեցի յէջմիածին բազում զգուշութեամբ»:

<sup>7</sup> Այս ընթերցվածքները Թ. Միհրդատչանը իր հրատարակութեան մեջ ցույց է տվել՝ նրանց  
կողքին գործածելով «միւս օրինակ» արտահայտութիւնը, որով նա նկատի է ունեցել XVI դարի  
ձեռագիրը: Ի տարբերութիւն այս ձեռագրի՝ նա երկրորդ օրինակի մասին գործածում է «ի  
մերում բնագրի», «յօրինակս մեր», «յօրինակին» արտահայտութիւնները: Բացառութիւն են  
կաղմում 7 դեպք, երբ Միհրդատչանը «միւս օրինակ» ասելով վրիպակաբար նկատի է ունեցել  
ոչ թէ հին ձեռագիրը, այլ՝ իր ունեցած նորագույն օրինակը:



զոր տեսցես ի վախճան մատենիս. և ի սկիզբն Սեբէոս եպիսկոպոսի ի Հե-  
րակլն»:

Այստեղ Միհրդատյանը չի կարողացել ճիշտ ներկայացնել իր ձեռագիրը և իրար է խառնել նրա գաղափար օրինակին, այսինքն՝ № 2639 ձեռագրին վերաբերող տեղեկությունները («էր գրեալ ՌՃԻԱ թուոյն ի Բաղէշ... եղեալ էր ի վերջն յիշատակարան...») և իրականում իր օգտագործած նորագույն ընդ-  
օրինակութեան տվյալները («ի սկիզբն Սեբէոս եպիսկոպոսի ի Հերակլն»): Սույն շփոթը առիթ է տվել Մալխասյանցին գրելու. «Մի մեծ տարակույս է այստեղ ծագում: Միհրդատյանն ասում է, թե այս ձեռագիրն սկզբում ունեցել է վերնագիր՝ Սեբէոս եպիսկոպոսի ի Հերակլն, այնինչ՝ ձեռագիրն իրոք ոչ մի վերնագիր և ոչ իսկ հեղինակի անուն չէ կրում (ինչպես տեսնում ենք, Մալ-  
խասյանցն այնպես է հասկացել, թե Միհրդատյանի խոսքը վերաբերել է № 2639 ձեռագրին—Գ. Ա.): Այս ակներև հակասությունը բացատրելու հա-  
մար պետք է ենթադրենք, թե հիշյալ վերնագիրը եղել է Միհրդատյանի ձեռքում գտնված նոր ընդօրինակության վրա, որը նա ստացել էր Ներսես կաթողիկոսից»<sup>3</sup>: Սա ճիշտ ենթադրություն է: Իսկապես, որ վերնագիրը գրք-  
ված է եղել նորագույն ընդօրինակության վրա և Միհրդատյանը տեսել է հենց այդ վերնագիրը: Հայտնի է, որ № 2639 ձեռագրից արտագրված ձեռագրերի մեծ մասի վրա ընդօրինակողներն ավելացրել են վերնագրեր, այդպես է վարվել նաև Միհրդատյանի օգտագործած ձեռագրի գրիչը:

Միհրդատյանը ԺԴ էջում ավելի որոշակի արտահայտվելով՝ ցրում է Ժ էջում ստեղծած այն պատրանքը, թե իր օգտագործած ձեռագիրն «էր գրեալ ՌՃԻԱ թուոյն»: Նշված՝ ԺԴ էջում նա գրում է. «ի 1850 ամի փրկչին ի գնալն մերում ի Տփլիս... տեսեալ իմ զսա (ձեռագիրը—Գ. Ա.) առ նորին Վեհափառու-  
թեան (Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի մոտ—Գ. Ա.) որ օրինակեալ էր ի բնագրէն, որ ի սուրբ էջմիածին՝ խնդրեցի և Վեհափառութիւնն նորին շնորհեաց մեզ»: Մեր ընդգծած արտահայտութեամբ, ինչպես տեսնում ենք, Միհրդատ-  
յանն արդեն պարզ ասում է, որ ինքն օգտագործել է ոչ թե էջմիածնում գտնվող և ՌՃԻԱ (—1672) թվականին ընդօրինակված ձեռագիրը, այլ նրանից «օրի-  
նակեալն»:

Սույն իրողությունը նա հաստատում է նաև 1853 թ. «Մասիսում» (№ 64) գրած հոդվածում, որտեղ միաժամանակ հայտնում է, որ իր հրատարակության համար հիմք ծառայած ձեռագիրն ընդօրինակված է եղել էջմիածնի միաբան-  
ների կողմից. «Բնագրէն օրինակողը Ս. էջմիածնի միաբաններն ըլլալով, աւելի անոնց պատույն կը դպչէր, քան թէ մեզի»: Ահա էջմիածնում ընդօրինակ-  
ված այս ձեռագրի վրա է, որ ավելացված է եղել «Սեբէոս եպիսկոպոսի ի Հերակլն» խորագիրը:

Ձեռագիրը Թիֆլիսում ձեռք բերելուց և ընդօրինակելուց «յետոյ ի գնալն մերում ի սուրբ Աթոռն՝ բաղդատեցաք ընդ բնագրին, յորում կայր ի մասին քրոնիկոնին (նկատի ունի Անանունի հատվածը—Գ. Ա.) պակաս յերկուս տեղիս. առաջինն գրեալ էր շարս տող պակաս է, երկրորդին՝ եօթն տող պակաս. և տարբերութիւնք ինչ ժամանակաց, յայնժամ լցուցաք զթերին ի միւս հնագոյն օրինակէն» (էջ ԺԴ):

Այսպիսով՝ Միհրդատյանը Թիֆլիսից գնում է էջմիածին, այնտեղ իր

<sup>3</sup> Մալխ, էջ Ը:

օրինակը համեմատում է № 2639 ձեռագրի հետ<sup>9</sup>, ինչպես նաև լրացնում է 4 և 7 տողանոց պակասները, քաղելով ավելի հին այն ձեռագրից, որը մեզ չի հասել: Այդ միևնույն ձեռագրից նա քաղում է նաև մյուս՝ ավելի ճշգրիտ ընթերցվածքները:

Բնագիրը կազմելիս նա գիտակցաբար շեղվել է ձեռագրից (այդ մասին հայտնելով) և Պատմությունը բաժանել է երեք դպրութունների, որպիսիք ձեռագիրը չունի: Առաջին երկու դպրութուններն ընդգրկում են Անանունի հատվածը, երրորդը՝ «Սեբեոսի Պատմությունը»: Վերջինիս առաջաբանը հրատարակիչը վերնագրել է «Նախերգանք հեղինակին Գ. Դպրութեան», որով, կարծես թե, ցույց է տվել, որ այդ մասի հեղինակին նախորդներից տարբերել է:

Ամբողջ բնագիրը նա բաժանել է 38 գլուխների, յուրաքանչյուրին մատակարարելով իր կազմած վերնագրերով<sup>10</sup> (ձեռագիրը միայն հատուկենտ վերնագրեր ունի): Առաջին դպրությանը կցել է 7 ծանոթագրություն և ամփոփել է իր եզրակացություններն այդ դպրության մասին: Ծանոթագրություններ է կատարել նաև տողատակի տարրնթերցվածքների բաժնում: Գրքի վերջում գետեղել է գրչի հիշատակարանը, որը, սակայն, բառացի արտագրված է № 2639 ձեռագրից: Ըստ որում՝ ձեռագրում բացակայում է Միհրդատյանի՝ շղատառով տպած «Արդ՝ գրեցաւ սա ի թուին (Հայոց) ՌՃԻԱ ի Բաղէշ ի վանս Յովհաննու Կարապետի» նախադասությունը<sup>11</sup>:

Միհրդատյանի հրատարակության մեջ վերականգնված են բնագրական մի շարք կարևոր միավորներ, որոնցից են՝ «ապաստան» (ձեռագրում՝ «ապըստամբ»), «տայ նմա» («մայինա»), «առ Մոդեստոս» («առ կայսր»), «ամէն» («ասէ»), «խոր վիրաւորեաց» («սոռոխոտունեաց»), «Ղիկուրգոս» («Ձի Կուրգոս»):

Գրաքննչական խստությունների հետևանքով՝ սույն հրատարակության մեջ մի երկու տեղ կրճատված են որոշ բառեր, որոնք վերականգնված են հաջորդ հրատարակություններում:

Միհրդատյանի հրատարակությունն իր ժամանակին մեծ դեր կատարեց: Նրա միջոցով է, որ հայագիտության մեջ թափանցեցին VI—VII դարերին վերաբերող առաջին այն տեղեկությունները, որոնք ուրիշ ոչ մի պատմիչ գրի

<sup>9</sup> Միհրդատյանը իր ունեցած ընդօրինակությունը № 2639 ձեռագրի հետ համեմատելուց հետո էլ, դժբախտաբար, հարազատ է մնացել հիմնականում իր օրինակին: Այսպես օրինակ, նա գրում է. «Բ բնագրին էր գլուխ Ա, բայց մեք եղաք Դպրութիւն Ա»: Իրականում, սակայն, № 2639 ձեռագիրը չունի «գլուխ Ա» ընթերցվածքը: Միհրդատյանը պարզապես կրկնել է իր ունեցած ընդօրինակության տվյալը: Նա այդպես է վարվել նաև այլ դեպքերում:

<sup>10</sup> Այս վերնագրերը երբեմն սխալմամբ ընկալվել են որպես հեղինակի գրած վերնագրեր: Այսպես օրինակ, «Նախերգանք հեղինակին Գ. դպրութեան» վերնագրի մեջ Միհրդատյանի գործածած «Նախերգանք» բառի հիման վրա Ն. Աղբալյանը («Պատմություն հայոց գրականության», 1970, Պեյրուս, հ. 4, էջ 448) դատողություններ է արել «Սեբեոսի Պատմության» հեղինակի լեզվի մասին:

<sup>11</sup> № 2639 ձեռագրի ընդօրինակման թվականը պարունակող հիշատակարանը գտնվում է ոչ թե «Սեբեոսի Պատմության» սահմաններում, ինչպես որ ներկայացրել է Միհրդատյանը, այլ «Դաշանց թղթի» վերջում (էջ 142ա): Միհրդատյանի տպագրած հիշատակարանում այս էջից է բաղված ՌՃԻԱ թվականը: Ն. Աղբալյանը 1923 թ. (երբ նա № 2639 ձեռագիրը դեռևս չէր տեսել) Միհրդատյանի հրատարակության հիման վրա կարծել է, թե նշված թվականը գտնվում է հենց «Սեբեոսի Պատմության» հիշատակարանում: Նա գրում է «Գրիգոր երեց այլուր (Սեբեոսի Պատմության վերջը) հայտնապես կը նշանակե գրության տարին 1672» («Մատենագրական հետազոտություններ», հ. Բ, էջ 7):

չի առել: Եվրոպացի հայագետները առաջին անգամ Միհրդատյանի հրատարակության միջոցով են ուսումնասիրել հայ պատմիչի երկը:

2. Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլէ և սկիզբն նորագիտ պատմութեան Միսիթարայ Անեցոյ: Ի լոյս ած Ք[Լրովբէ] Պ[ատկանեան]: Ս. Պետերբուրգ, 1879:

«Սեբէոսի Պատմութեան» երկրորդ հրատարակությունը պատկանում է Ք. Պատկանյանին: Հրատարակության համար հիմք է ծառայել Միհրդատյանի հրատարակությունը և Պետերբուրգի Կայսերական ակադեմիայի ձեռագիրը, որն ընդօրինակված է եղել XIX դարում: Ք. Պատկանյանն այդ ձեռագիրը կոչում է «նորագույն գրչագիր օրինակ» (Առաջաբան, էջ Ա): Սա այն միևնույն ձեռագիրն է, որն ընդօրինակված է 1850 թ., և այժմ պահվում է ՍՍՀՄ ԳԱ Լենինգրադի արևելագիտության ինստիտուտի ձեռագրերի հավաքածուում (մանրամասն տե՛ս ստորև, այդ ձեռագրին վերաբերող բաժնում):

1878 թ. սեպտեմբերին Պատկանյանը Պետերբուրգից գալիս է էջմիածին, որպեսզի Պետերբուրգի օրինակը համեմատի Միհրդատյանի հիշատակած ձեռագրերի հետ. սակայն էջմիածնում չի գտնում այդ ձեռագրերից և ոչ մեկը: Ըստ երևույթին ձեռագրերից մեկի (այժմ № 2639) մատենադարանում գտնված լինելու մասին Պատկանյանի տեղեկատուները չեն իմացել<sup>12</sup>, իսկ մյուսը, ինչպես երևում է, պատկանել է մասնավոր անձանց և մատենադարանում չգտնվելով՝ չի գրանցվել որևէ ձեռագրացուցակում:

Պատկանյանն ստիպված է լինում իր ունեցած նորագույն ձեռագիրը (որը նույնպես ընդօրինակված է № 2639 ձեռագրից) հրատարակել առանց էջմիածնի ձեռագրերի հետ համեմատելու, «ուրեք ուրեք միայն զթերութիւնս գրչաց և զվրիպակս ընթերցուածոց ուղղելով ի վերայ նորագոյն գրչագրի և ի վերայ մասանց ինչ Սեբէոսի, որ ի փոխ առեալ յայլ պատմագրաց մերոց յերկասիրութիւնս նոցա հասին ցաւուրս մեր» (Առաջաբան, էջ Ա):

Պատկանյանի ձեռագիրը գլխաբաժանում չի ունեցել, ուստի հրատարակիչը նույնությամբ ընդօրինակում է Միհրդատյանի գլխաբաժանումը և զուգաների ընդարձակ վերնագրերը, որոնք բնագրի մեջ ներմուծել է Միհրդատյանը և ձեռագրերում չկան (բացի հազվագյուտ բացառություններից): Գլուխների ընդհանուր թիվն է ԼԸ (= 38):

Ի տարբերություն Միհրդատյանի՝ Պատկանյանը «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլէ» խորագիրը դրել է ոչ թե Անանունի հատվածների («ղպրութիւն Ա» և «ղպրութիւն Բ»), այլ՝ միայն բուն «Սեբէոսի Պատմութեան» վրա, որովհետև համոզված է եղել, որ Անանունի հատվածները «Սեբէոսի Պատմութեան» հեղինակի գրչին չեն պատկանում: Իր համոզմունքը նա արտահայտել է հետևյալ տողերում. «Յերից զպրութեանց մատենիս միայն զերրորդն համարիմք լինել Սեբէոսի... Առաջինն է Ազաթանգեղոսի անուանեալ արձանագրութիւն, նշխարք հնագոյն պատմագրութեան ազգիս, հաւասար քաղուածոցն հորենացոյն ի Մարիբաս Կատինայէ: Երկրորդն՝ Քրոնիկոն հանեալ ի պատմութեանց հորենացոյն և Ասողկայ: Այլոց ուրուք թուի լինել հատուածն զՄամիկոնէից ծագմանէ, ոչ ամենեկին միաբան Քերթողահորն զոր լուեալ հեղինակին ի բերանոյ հրեշտակաց ձենաց թագաւորին, եկեալ ոչ ի պալատն

<sup>12</sup> Գ. Տեր-Մկրտչյանը այդ ձեռագիրը 1892 թ. մատենադարանում հայտնաբերեց պատահաբար (տե՛ս № 2639 ձեռագրի նկարագրության բաժնում):

արքային Հայոց Խոսրովու, որպէս կարծեն ոմանք, այլ ի դուռն միոյ ի Խոսրովացն Պարսից» (Առաջաբան, էջ Բ):

Այս համառոտ ծանոթագրութիւնից հետո նա ցանկացողներին հղում է իր կատարած ռուսերեն թարգմանութեան ծանոթագրութիւններէ բաժինը, որը իրոք հարուստ է կարևոր այնպիսի ծանոթագրութիւններով, որոնցից շատերն այսօր էլ չեն կորցրել իրենց ուժը: Հայերեն հրատարակութեանը նա կցել է 53 ծանոթագրութիւններ, որոնցում ծանոթագրված են «Սեբեոսի Պատմութիւնում» գործածված մի շարք պարսկերեն և հունարեն բառեր, պատմական անձնավորութիւններ և վայրերի անուններ: Մի շարք ծանոթագրութիւններ էլ զետեղված են բնագրի տողատակում, որտեղ նշված են նաև Միհրդատյանի հրատարակութեան և Պետերբուրգի ձեռագրի տարբերակները:

Պատկանյանը սույն հրատարակութեան մեջ կատարել է շուրջ 20 բնագրային կարևոր սրբագրութիւններ, որոնց մի մասի հիմքն իր օգտագործած ձեռագիրն է, իսկ մյուս մասինը՝ բանասիրական սեփական հիմնավորումները կամ «Սեբեոսի Պատմութիւնից» օգտված պատմիչների երկերում պահպանված ուղիղ ընթերցումները: Որոշ դեպքերում էլ նա բնագիրը թողել է նույնութեամբ, բայց զգացել է վրիպակը և դրա փոխարեն տողատակին նշել է իր ենթադրած կամ այլ մատենագիրների մոտ պահպանված ճիշտ ձևերը: Պահպանել է նաև Միհրդատյանի կատարած սրբագրութիւնները:

Պատկանյանի կարևոր սրբագրութիւններից են հետևյալները (փակագծերում նշում ենք ձեռագրական սխալ ընթերցվածքները). Բագարատ (Բագարամ), Բիւրատ (Բիւրամ), եկն եհաս (եկն ի Հայս), պատերազմաւ (պատէ բազմաւ), որ Երան կաթողիկոս (որ էր անդ կաթողիկոս), թագաւորութեան Հայոց (թագաւորութեան հարց), Իսրայէլի (Երուսաղէմի), եհաս (եռես), պատմել (պարտել), կապարճս (կապանս), Ամաղ, Ռոյեան (ամաղոյեան), Ռոստոմայ (Ռոտոմայ), Ռազմիողան (Գազմիողան), Մոզեստոս (Մոզեստոս) և այլն: Կարևոր է նաև տողատակին բերված «Ատրպատականի» ընթերցվածքը, որը Պատկանյանը քաղել է Թովմա Արծրունուց: Սրա փոխարեն ձեռագրերում հանդիպում է «արի գեւղն այն» վրիպակը, որը բնագրի մեջ նույնութեամբ տպագրել են Միհրդատյանը և Պատկանյանն ինքը: Մալխասյանցը Պատկանյանի տողատակի ծանոթագրութեան թելադրութեամբ, իր հրատարակութեան մեջ վերականգնել է «Ատրպատականի» ձևը:

Բնագրական վերականգնումները և սրբագրութիւնները կատարելիս Պատկանյանը չի մոռացել ընթերցողին հիշեցնել առաջին հրատարակչի Միհրդատյանի վաստակը. «Այլ և այնպէս տեսցեն ընթերցողը զինչ ինչ տարբերութիւնս ի մէջ երկուց հրատարակութեանց, անմոռաց պահելով զարդիւնսն առաջին տպագրողին մատենիս»:

Պատկանյանի հրատարակութիւնը աչքի է ընկնում նաև տպագրութեան խնամքով պատրաստվածութեամբ (նկատված և ցուցակագրված է ընդամենը ութ վրիպակ) և լավորակ թղթով, որի շնորհիվ շուրջ հարյուրամյա հրատարակութեանը մինչև օրս պահում է իր թարմութիւնը:

Պատկանյանի հրատարակութեանը կից հավելվածների բաժնում («Յաւելուածք: Հատուածք Պատմութեան Սեբէոսի առ այլ մատենագիրս») տպագրված են Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Տարնացու (Ասողիկի) և Վարդան Արևելցու երկերի այն հատվածները, որոնք անմիջապէս կամ միջնորդաբար քաղված են «Սեբեոսի Պատմութիւնից»:

Հավելվածներին հաջորդում են հիշյալ 53 ծանոթագրությունները, որոնցից հետո տպագրված է Մխիթար Անեցու Պատմությունը: Սա բաղկացած է առաջաբանից (2 էջ), բնագրից (52 էջ) և 19 էջանոց հավելվածից, որը բովանդակում է Մովսես Կաղանկատվացու, Թովմա Արծրունու, Սամվել Անեցու, Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու երկերի այն հատվածները, որոնք վերաբերում են Մահմեդին:

### 3. Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1912—1913:

Սա տառացի արտատպությունն է Ք. Պատկանյանի 1879 թ. հրատարակության: Ավելացված է անվանացանկը:

4. Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, շորհուդ տպագրութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանի և ծանօթագրութեամբ ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939:

Տպագրված է «Սեբեոսի Պատմության» մեզ հասած հնագույն ձեռագրի (№ 2639)՝ հիման վրա:

Այստեղ կարգավորված է ձեռագրում հոռառաջ ընդօրինակված նշանավոր հատվածը (տե՛ս ծան. 161): Օգտագործված են նաև Մաշտոցի անվան մատենադարանում պահվող № 2867, 3122, 6454 ձեռագրերը, Վիեննայի № 86 ձեռագիրը, ինչպես նաև՝ նախորդ հրատարակությունները: XIX դարում ընդօրինակված հիշյալ ձեռագրերի հետ համեմատված է միայն Անանունը:

Նախորդ հրատարակությունների նկատմամբ ունի նաև այն տարբերությունը, որ նախորդների «Ա և Բ դպրությունները» այստեղ դարձել են Ա, Բ, Գ, Դ գլուխներ: Բացի այդ՝ գրքի խորագրից վերացված է Միհրդատյանի և Պատկանյանի հրատարակություններում գտնվող Հերակլի անունը: «Հերակլ անունը, — գրում է Մալխասյանցը, — չէ համապատասխանում Պատմության բովանդակությանը... Հերակլի անունը գրքի վերնագրում՝ սքողում է Սեբեոսի գրվածքի բուն էությունը, որ է Պատմություն Հայոց, նախնական ժամանակներից սկսած մինչև յուր օրերը: Բայց մենք զգուշացանք այս գրվածքը կոչել Պատմություն Հայոց, քանի որ հեղինակին ժամանակակից պատմության մեջ գլխավոր անցքերն են Պարսից և Հունաց պատերազմները, որոնց թատերաբեմն է էղել Հայաստանը, ինչպես նաև՝ արաբական արշավանքները: Ուստի այստեղ Հայաստանը և Հայոց իշխանները երկրորդական տեղ են գրավում: Ուստի ընտրեցինք «Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն» վերնագիրը, որ ոչ մի վեճ չէ հարուցանում» (էջ 2է):

Նախորդ հրատարակությունների 38 գլուխների փոխարեն Մալխասյանցը Պատմությունը բաժանել է 50 գլուխների, կարծելով, թե ձեռագրում նույնպես 50 գլուխների է բաժանված: «Գլուխների բաժանումը, — գրում է նա, — և զխահամարները մենք գրել ենք՝ մի կողմից հետևելով Միհրդատյանի ցուցումներին (Ա—Զ գլուխների մասին), մյուս կողմից Ակինյանի ցուցումներին (Եր. 27)<sup>13</sup>, միևնույն ժամանակ նկատի առնելով ձեռագրի լուսանցքում դրված նշաններն առանց տառաթվերի և կարմիր թանաքով սկսվող բառերը տողերի սկզբում» (նույն տեղում): Իրականում, սակայն, կարմիր թանաքով սկսվող բառերի հիման վրա դատողություններ կարելի է անել միայն «Սեբեոսի Պատմության» ձեռագրի առաջին գլուխների սահմաններում, իսկ հետագայում

<sup>13</sup> Միհրդատյանի և Ակինյանի ցուցումները հենված են ոչ թե № 2639 ձեռագրի, այլ նրա ընդօրինակությունների վրա, որոնցում ձեռագիրը սխալմամբ բաժանված է 50 գլուխների:

կարմիր տառերով են սկսվում նաև այնպիսի հատվածներ, որոնք գլուխ կազմել չեն կարող և որոնց դիմաց լուսանցքներում գլխահամարներ չեն նշված:

«Գլուխների բաշխումը մենք գտնում ենք անհարմար. կան շատ երկար գլուխներ՝ մի քանի տարբեր բովանդակություններով, որոնք պետք էր բաժանել մի քանի գլուխների, կան և կարճ գլուխներ: Բայց մենք ոչ մի փոփոխություն չմտցրինք այստեղ, այլ հետևեցինք ձեռագրի բաշխումներին» (էջ 28): Մենք նույնպես չնշին բացառություններով հետևել ենք Մալխասյանցի գլխաբաժանմանը, իհարկե, ոչ թե այն պատճառով, որ ձեռագիրն էլ նույն բաժանումն ունի (մի բան, որ ճիշտ չէ), այլ՝ որովհետև գտնում ենք, որ ավելի ճշգրիտ գլխաբաժանման համար չափանիշ չունենք: Ձեռագրում կանոնավոր և անսխալ համարակալված են միայն ԺԱ-- ԻՆ գլուխները, որոնք Մալխասյանցի հրատարակության մեջ նույնպես կրում են միևնույն համարները:

Միհրդատյանի և Պատկանյանի հրատարակությունների գլխաբաժանումը փոխելուց հետո Մալխասյանցը փոխել է նաև վերնագրերի շարադրանքը, որը գրեթե անփոփոխ կիրառված է նաև մեր սույն հրատարակության մեջ:

Բնագիրը կազմելիս նա չի նշանակել «ն» դիմորոշ հոդի տարբերությունները («արքայի» կամ «արքային»), չի պահպանել ձեռագրի խառն ուղղագրությունը (աւ=օ, նւ=իւ, դւ=լ, ով=ո): «Միայն հետևողական չենք եղել Ղ կամ Լ (Հերակղ, Հերակլ) գրության նկատմամբ և հիմք ունեինք կարծելու, թե արդեն յոթներորդ դարումն էլ խախտված էր Ղ հնչյունի գրության միօրինակությունը» (էջ 28):

Մալխասյանցը վերականգնել է շուրջ 20 բնագրական կարևոր միավոր, իսկ ընդհանուր առմամբ առաջարկել է «մոտ 100 նոր ուղղումներ, որոնցից մի մասը, — գրում է նա, — մուծել ենք բնագրի մեջ, իբրև աներկբայելի և կարեւոր, իսկ փոքր մասը դրել ենք բաղդատությունների մեջ՝ իբրև հավանական ենթադրություն կամ անկարևոր... Առանձին կարևորություն ունի ուղղումը է—Ը գլուխների մեջ եղած մեծ աղավաղության, որ առաջ էր եկել ձեռագրի մեջ մի պոկված թուղթ ուրիշ տեղ դնելու հետևանքով, և որի պատճառով մոտ տասը երես կցկտուր, անկապ և անհասկանալի էին մնում»:

Հիրավի, շատ կարևոր այս ուղղումից բացի Մալխասյանցը ուղղել է նաև հետևյալները (փակագծերում բերում ենք նախորդ հրատարակությունների սխալ ընթերցումները). «ղթէանով» («Աթէանով»), «որ էին անդ ի բուն» («որ էին անդ՝ տրիբուն»), «Սորմեն» («Սուրէն»), «նաև հրէայպետն» (նաև հայրապետն), «զոր անուանեալ Շահաստան-ի Նոկ-նոյ կոչեն» («զոր անուանեալ Շահաստանին Ոկնոյ կոչեն»), «գնաց ի Մեղիտինէ» («գնաց ի տեղի մի»), «գանձուդ այգորիկ զՀոնս մեր արասցուք» («գանձուդ այգորիկ զՀայաստան մեր արասցուք») և այլն:

Գիտնականն իր հրատարակությունը մատակարարել է նաև 74 կարևոր ծանոթագրություններով և անվանացանկով:

Առանձնապես արժեքավոր է հրատարակության ընդարձակ առաջաբանը, որի մեջ Մալխասյանցն անդրադառնում է Շահխաթունյանցի կողմից «Սերեոսի Պատմության» ձեռագրի հայտնաբերմանը (սխալմամբ նշելով 1842 թ. որպես հայտնաբերման թվական), ինչպես նաև մյուս ձեռագրերին, կազմում է սրանց ճշուղագրությունը, նկարագրում է նախորդ հրատարակությունները և թվարկում է իր հրատարակության հանգամանքները:

Ապա՝ «Քննություններ Սերեոսի Պատմության» խորագրի տակ շարա-

դրում է Անանունի հատվածի շուրջ ծագած բանասիրական հարցերի մանրակրկիտ պատմությունը: Ներկայացրել է Մ. Բրոսեի, Թ. Միհրդատյանի, Հ. Գաթրճյանի, Մ. Համիրի, Ք. Պատկանյանի, Վ. Լանգուայի, Հ. Հյուբերմանի, Ա. Գուտշմիդի, Մ. Գարագաշյանի, Գ. Զարբանալյանի, Ա. Բաումգարտների, Ֆետտերի, Նորայր Բյուզանդացու, Ա. Տեր-Միքելյանի, Ն. Մառի, Գր. Խալաթյանի, Ն. Ադոնցի, Ղ. Ալիշանի, Հ. Թոփչյանի, Ա. Մատիկյանի, Ն. Ակինյանի և իր սեփական կարծիքները: Սա շատ անհրաժեշտ մի տեղեկատու է, որն այսօր էլ պահպանում է իր ուժը և պատշաճ ծառայություն կարող է մատուցել Անանունով հետաքրքրվողներին:

Հրատարակության մեջ նկատելի են ձեռագիր և տպագիր բնագրերի ոչ ճիշտ ներկայացման որոշ դեպքեր: Այսպես օրինակ, № 2639 ձեռագիրն ունի «ղթեթևութիւն»<sup>14</sup>, «ի վերուստ մինչև»<sup>15</sup>, «Արկաւ և ինքն զանձամբ զսպառազինութիւն»<sup>16</sup>, «զամենեսեան»<sup>17</sup>, «նմա»<sup>18</sup> և այլ բառեր ու արտահայտություններ, որոնք բացակայում են Մալխասյանցի հրատարակությունից: Չեն նշված նաև մի շարք կարևոր տարբերակներ («հսկայս նուազունս», «մայրափայտեաց», «Խորով», «և սնոյց», «թիղա», «Դկղաթ», «կարմնջացն» և այլն):

Երբեմն նախորդ հրատարակություններին սխալմամբ վերագրված են այնպիսի տարբերակներ, որոնք իրականում գոյություն չունեն. «յայսմ» (էջ 26), «յերեսաց» (էջ 27), «ի կողմանս» (էջ 33), «ի միում» (30) և այլն: Հաճախ հայտնվում է, թե նախորդ հրատարակությունները կամ ձեռագրերը չունեն այս կամ այն բառը, սակայն իրականում դրանք կան, օրինակ, 109-րդ էջում կարդում ենք. «ՏՏ (=տպագիրները—Գ. Ա.) չիք՝ իբրև եկին հասին»: Բայց Միհրդատյանն ունի ընդգծված բառերը: 111-րդ էջում հայտնվում է տպագրերում «տուն» բառի բացակայության մասին, այնինչ՝ այդ բառն ունի Պատկանյանի հրատարակությունը. և, ընդհակառակը, չունի՝ հնագույն ձեռագիրը: Նման օրինակներ կարելի է գտնել հատկապես Անանունի հատվածում (էջ 3, 4, 5, 6, 8, 13, 14 և այլն):

Շուրջ 200 տպագրական վրիպակների մեջ կան այնպիսիները, որոնք գրչական տարբերակների տպավորություն են թողնում և կարող են շփոթեցնել մասնագետներին: Այսպես օրինակ, 63-րդ էջում տպված է Կոմշ նահանգում գտնվող Խեկեանդ գյուղի անունը: Սրան վերաբերող տողատակի ծանոթագրության մեջ հայտնվում է, որ «Սեբեոսի Պատմության» հնագույն ձեռագրում այդ անունը գրված է «Խեկեսանէ» ձևով: Սա կարևոր տարբերակներ է, որ մասնագետներն անտեսել չեն կարող: Հարց է առաջանում՝ ո՞րն է երկու անուններից (Խեկեանդ, Խեկեսանէ) ավելի ճշգրիտ: Դիմում ենք հնագույն ձեռագրին և պարզվում է, որ այնտեղ չկա այն տարբերակները, որը Մալխասյանցի հրատարակության մեջ նշված է տողատակին: Ձեռագրում պարզապես «Խեկեանդ»-ի փոխարեն գրված է «Խիկեանդ» և Մալխասյանցը 63-րդ էջի տողատակին նշած է եղել միայն այս աննշան տարբերությունը: Սակայն տպագրիչները «Խիկեանդ»-ը վրիպակաբար դարձրել են «Խեկեսանէ»:

<sup>14</sup> Մալխ, էջ 15, տող 3:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 27, տող 13:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 44, տող 6:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 49, տող 27:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 50, տող 12:

## Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը

«Սեբեոսի Պատմութեան» առաջաբանը (սկսած «Եւ եղև ի նուազել ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Հայաստան աշխարհի») բառերից մինչև վերջ՝ «զայս ամենայն կամեցայ ի ձեռն գրոյս այսորիկ կարճառաւտիւ ձեզ վիպասանել» բառերը ներառյալ), ինչպես նաև Անանունի երրորդ և չորրորդ գլուխները (սկսած «Արդ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացոյ և Ստեփանոսի Տարանացոյ» բառերից մինչև Մամիկոնյանների գրուցի վերջը՝ «Յայսմանէ այն է սպարապետ» բառերը ներառյալ) ֆրանսերենի են թարգմանվել դեռևս 1848 թ., երբ ձեռագիրը նոր էր հայտնի դարձել և տպագրված չէր: Մ. Բրոսեն ձեռագրի ընդհանուր նկարագրութեան ընթացքում թարգմանել է հիշյալ հատվածները և զետեղել իր «Rappports»-ում<sup>19</sup>: Սրանք «Սեբեոսի Պատմութեան» անդրանիկ թարգմանութեան նմուշներն են:

Այնուհետև, գրքի տպագրութեանից հետո, հայ պատմիչի երկն սկսեց թարգմանաբար վկայակոչվել բազմաթիվ հայ և օտար այն մասնագետներին կողմից, որոնք զբաղվել են «Սեբեոսի Պատմութեանում» նկարագրված ժամանակաշրջանի Անդրկովկասի, Արևելքի և Բյուզանդիայի պատմութեամբ: Այս ճանապարհով հեղինակը քաղվածաբար թարգմանվել է բազմաթիվ ուսումնասիրութեաններում, սկսած է. Դյուլորիեի ֆրանսերեն քաղվածքներից<sup>20</sup>: «Այնպես որ Սեբեոսի Պատմութեանը կարճ ժամանակամիջոցում դարձավ VI—VII դարերի Արևելքի պատմութեամբ զբաղվողների համար անհրաժեշտ գիրք»<sup>21</sup>:

Ուշագրավ է, որ «Սեբեոսի Պատմութեանը» քաղվածաբար վկայակոչվել է նաև լատիներեն՝ այնպիսի մի ժամանակ, երբ միջազգային այդ գիտական նախկին լեզուն այլևս քիչ էր շրջանառության մեջ մտնում<sup>22</sup>: Հայկական սկզբնաղբյուրի վերջին ժամանակներում կատարված քաղվածական թարգմանություններից ամենաընդարձակները գտնում ենք Նյու-Յորքում հրատարակված հոդվածում, որի հեղինակը անգլերենի և թարգմանել «Սեբեոսի Պատմութեան» վերջին յոթ գլուխներից զանազան հատվածներ<sup>23</sup>:

Մաշտոցի անվան մատենադարանում (Լազարյանների ֆոնդ, թղթ. 100, վավ. № 51) այժմ պահվում է անցյալ դարի կեսին Պիտանյանցի կողմից ուսերենի թարգմանված մի անտիպ հատված, որն ընդգրկում է «Սեբեոսի Պատմութեան» 18—19 գլուխներն ամբողջությամբ: Թարգմանությունը կատարված է Միհրդատյանի հրատարակությունից, անշուշտ, 1862 թվականից առաջ, այսինքն՝ նախքան Պատկանյանի ուսերեն թարգմանության տպագրությունը:

<sup>19</sup> M. Brosset, Rappports sur un voyage archeologique, p. 49—52.

<sup>20</sup> E. Dulaurier, Recherches sur la chronologie Arménienne, Paris, 1859, t. I. Դյուլորիեից հետո «Սեբեոսի Պատմութեան»՝ արաբների երևան գալու վերաբերյալ գլուխը ուսերենի է թարգմանել Մ. Էմինը՝ Վարզան Արևելցու ուսերեն թարգմանության ծանոթագրությունների բաժնում:

<sup>21</sup> „История императора Иракла“, СПб., 1862, Բ. Պատկանյանի Առաջաբանը, էջ 5.

<sup>22</sup> P. Peeters, Πασαγαθης—Περσογενης:—„Byzantion“, t. VIII, fasc. 2(1933), Bruxelles, 1933, p. 410—412.

<sup>23</sup> H. R. Hewsenian, The coming of the Ishmaelites:—„Ararat“, New-Yeork, vol. III, № 4, 1962, էջ 6—10: Վերջին ժամանակներս լույս տեսած անգլերեն քաղվածքներից հիշատակելի են նաև Արմեն Հովհաննիսյանի քաղվածքները („Cilician Armenia and the Crusades“, Detroit, 1958).



Թարգմանիչը դեռևս ծանոթ չի եղել Պատկանյանի կատարած սրբագրություններին: Դա երևում է վավերագրի շք էջում հանդիպող «ВОИНСКУЮ ДЕРЕВНЮ» արտահայտությունից: Սա թարգմանությունն է ձեռագրում գտնվող «արի գիւղն այն» վրիպակի, որը Ք. Պատկանյանը թարգմանելիս սրբագրել է «Ատրրպատական» տեղանվամբ: Պիտանյանցը սրան տեղյակ չի եղել և թարգմանել է վրիպակի:

Հայտնի են «Սեբեոսի Պատմության» նաև մի շարք ամբողջական կամ հատվածական այլ թարգմանություններ, որոնք նույնպես լույս տեսնելու բախտ չեն ունեցել: Դրանցից են երեք գերմաներեն<sup>24</sup> և երկու ֆրանսերեն<sup>25</sup> թարգմանություններ:

Բյուզանդագետների կողմից ծրագրված է եղել Բյուզանդիայի պատմության կարևոր աղբյուրների մատենաշարում հրատարակել նաև «Սեբեոսի Պատմության» անգլերեն թարգմանությունը, որը կատարելու էր նշանավոր հայագետ, պրոֆ. Կոնիբերր: Այս մասին հաղորդում է «Athenaeum» թերթը 1896 թ. դեկտեմբերի 5-ի համարում<sup>26</sup>:

«Սեբեոսի Պատմությանը» կից Անանունի հատվածի ուսերեն թարգմանության և առանձին հրատարակության ծրագիր է ունեցել նաև Ն. Մառը<sup>27</sup>:

Տպագրվել և գիտական շրջանառության մեջ են մտել ուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն (մասնակի) հետևյալ թարգմանությունները.

1. *История императора Иракла, сочинение епископа Себеоса писателя VII века. Перевод с армянского [К. Патканьяна], С. Петербург, 1862.*

Թարգմանությունը կատարված է Միհրդատյանի հրատարակության հիման վրա, Պետերբուրգի Կայսերական գիտությունների ակադեմիայի կարգադրությամբ:

Հրատարակությանը կից 9 էջանոց առաջաբանի սկզբում Ք. Պատկանյանը գրում է. «Մենք պարտք ենք համարել հաղորդել բնագրի ամենաճշգրիտ իմաստը, պահպանել ենք նրա արտահայտությունները, և ձգտել ենք միայն այն բանին, որ ընթերցողին տանք այնպիսի մի թարգմանություն, որը նրա համար հնարավորին չափ կփոխարիներ բնագրին: Թե ինչպես ենք մենք կատարել առաջադրանքը՝ այդ մասին դատելու թողնում ենք ընթերցողներին»

<sup>24</sup> Գերմաներեն մի անտիպ թարգմանություն, կատարված դ-ր Վենցելի կողմից, հիշատակում է Թ. Նյուլդեկեն (Wiener Sitzungsterichte d. K. Akademie d. Wissenschaften, phil.-hist. Klasse, Bd. 116 (1888) էջ 394): Մեկ ուրիշ թարգմանություն գտնվել է Հ. Գելցերի մոտ և հետադադում օգտագործվել է Է. Գերլանդի կողմից (Gerland E., Die persischen Feldzüge des Kaisers Herakleios, Leipzig, 1894, էջ 3): Գերմաներեն թարգմանության մասին տե՛ս նաև «Արձագանք», 1894, № 13, էջ 3: Բաղմաթիվ հատվածական թարգմանություններ մնացել են Յ. Մարկվարտի անտիպ երկերի արխիվում, որն այժմ պահվում է Հռոմում (Pontificio Istituto Biblico):

<sup>25</sup> Ֆրանսերեն առաջին անտիպ թարգմանությունը հիշատակվում է «Journal asiat. de Constantinople» պարբերականում (1852, t. I, № 1, janvier, p. 75): Երկրորդ անտիպ թարգմանության մասին հայտնվում է թարգմանիչի (Ա. Կարիեր) ֆրանսերեն մի նամակում, որն այժմ պահվում է մեր Մատենադարանում (անհատական արխիվների բաժին, թղթ. 235, վավ. 204): Տե՛ս նաև «Բանասեր», Փարիզ, Դ տարի, № 5, էջ 159, նաև «Histoire d' Heracleios, par l'évêque Sebèos», Paris, 1904, առաջաբան, էջ 11:

<sup>26</sup> Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1897, № 2, էջ 56:

<sup>27</sup> Марр Н. Я.. К критике Истории Моисея Хоренского; «Византийский вестник», 1898, № 1—2, стр. 11.

իրենց, ինչպես նաև՝ այն հայագետ գիտնականներին, որոնք շին ծուլանա իրենց տպագիր դատողությունն անել սույն առարկայի նկատմամբ» (էջ 3):

Ի պատիվ Ք. Պատկանյանի պետք է ասել, որ նրա թարգմանությունը գերազանց քննություն է բռնել և փաստորեն այդ թարգմանության միջոցով է հիմնականում տարածվել հայկական սկզբնաղբյուրը: Հետագա բոլոր թարգմանիչները հաշվի են առել Ք. Պատկանյանի բնագրական դիտողություններն ու ծանոթագրությունները: Հ. Հյուբշմանը գերմաներեն մասնակի թարգմանության վերջում հարկ է համարել հայտնել, որ օգտվել է Պատկանյանից<sup>28</sup>: Ֆ. Մակլերը նույնպես ֆրանսերեն թարգմանության մեջ հիշատակում է Պատկանյանին<sup>29</sup>:

Ք. Պատկանյանն առաջաբանում շատ համառոտակի անդրադառնում է «Սեբեոսի Պատմության» հայտնաբերման պատմությանը, Միհրդատյանի հրատարակությանը և իր թարգմանությանը նախորդած մասնակի թարգմանություններին (Դյուլորիե, էմին): Այնուհետև թվարկում է իր հրատարակության հանգամանքները (Միհրդատյանի հրատարակությունից բացի օգտագործել է նաև Ասիական թանգարանի ձեռագիրը), շարադրում է Պատմության իր հրատարակության երեք բաժինների (Անանունի «Ա դպրութունը», «Բ դպրութունը» և բուն «Սեբեոսի Պատմությունը») բովանդակությունը, գտնում է, որ Անանունի հատվածում հիշատակված «Ստեփանոս Տարոնացին ոչ այլ ոք է, քան Ստեփանոս Ասողիկը» և որ «բոլոր երեք բաժիններից մենք Սեբեոսին վերագրում ենք միայն վերջինը»:

Թարգմանության ընթացքում կատարվել են բնագրական ճշգրտումներ:

Թարգմանության վերջում Ք. Պատկանյանը կցել է 219 կարևոր ծանոթագրություններ, որոնցից մենք օգտվել ենք և որոնք պետք է օգտագործվեն նաև «Սեբեոսի Պատմության» նոր թարգմանիչների կողմից:

2. *История епископа Себеоса. Перевел с четвертого исправленного армянского издания Ст. Малхасяну, Ереван, 1939.*

Հինգ էջանոց առաջաբանում Ստ. Մալխասյանցը շարադրում է իր թարգմանության հանգամանքները, հայտնում է, որ օգտվել է Ք. Պատկանյանի թարգմանությունից և որ՝ թարգմանությունը կատարել է ըստ իր իսկ հրատարակած հայերեն բնագրի, որի մեջ կան ճշգրտումներ: Կրկնում է հայերեն հրատարակության առաջաբանի բովանդակությունը որը մեզ արդեն ծանոթ է: Թվարկում է աուսերեն թարգմանված անունների տառադարձության, բաների ընտրության և այլ տվյալների վերաբերյալ մանրամասնություններ:

Թարգմանությանը կցել է 206 կարևոր ծանոթագրություն, որոնց նույնպես ամբողջապես վերաբերում է մեր քիչ առաջ ասածը Ք. Պատկանյանի ծանոթագրությունների կապակցությամբ:

Թարգմանության մեջ ղժբախտաբար սպրդել են որոշ վրիպակներ: Այսպես՝ օրինակ, 15-րդ էջում բաց է թողնված Արա Գեղեցկի անունը («на великую равнину»), 79-րդ էջում՝ Աղեքսանդրիայի փոխարեն տպված է Անտիոքիա («великую Антиохию»), 54-րդ էջում «перозовское войско» գրելու փոխարեն տպված է «персидское войско» և այլն:

<sup>28</sup> „Zur Geschichte Armeniens“, S. 44:

<sup>29</sup> „Histoire d'Héraclius“, p. 6, 48, 71, 88, 133:

3. *Histoire d'Héraclius par l'évêque Sebêos, traduite de l'arménien et annotée par Frédéric Macler, Paris, 1904.*

Թարգմանությունը նվիրված է Ֆրանսիացի նշանավոր հայագետ, «Սեբեոսի Պատմության» մասնակի անտիպ թարգմանության հեղինակ Ավգուստ Կարիերին:

Հինգ էջանոց առաջաբանում Ֆ. Մակլերը հակիրճ բնութագրում է «Սեբեոսի Պատմությունը» և նրա նշանակությունը, թվարկում է իր թարգմանության հանգամանքները, նախորդ հրատարակություններն ու թարգմանությունները, հայտնում է որոշ այլ տեղեկություններ, որոնք մեզ արդեն ծանոթ են վերը ներկայացված թարգմանությունների նկարագրությունից:

Չնայած 9-րդ էջում հայտնում է, թե ուսերեն շիմանալու պատճառով չի օգտվել Ք. Պատկանյանի թարգմանությունից, բայց իրականում Ա. Մեյեի օգնությամբ ծանոթացել է նրան (տե՛ս էջ 6, 48, 71, 88, 133 և այլն): Բացի դրանից, նա թարգմանության ընթացքում հաճախ օգտվել է Պատկանյանի մեկ ուրիշ աշխատության ֆրանսերեն թարգմանությունից<sup>30</sup>, որի մեջ արդեն լուսաբանված են «Սեբեոսի Պատմության» որոշ հատվածներ: Մակլերը ծանոթ է նաև սեբեոսագիտական այլ աշխատությունների, որոնցից օգտվել է թարգմանության ընթացքում:

Ֆրանսիացի գիտնականը հայտնում է նաև Ա. Կարիերի մասնակի թարգմանության մասին: Ա. Մեյեյն Մակլերին խորհուրդ է տվել շարունակելու Կարիերի հազիվ սկսած այդ գործը, որը և կատարել է Մակլերը, շնորհակալություն հայտնելով Ա. Մեյեին: Շնորհակալություն է հայտնում նաև Արշակ Չոպանյանին, որին դիմելու հաճախակի առիթ է ունեցել ինքը:

Թարգմանության ընթացքում կատարված են բնագրագիտական ճշգրտումներ:

Թարգմանությունն սկզբից մինչև վերջ ուղեկցվում է տողատակային հարուստ ծանոթագրություններով, որոնք լուսաբանում են բնագիրը և՛ բնագրագիտական, և՛ պատմաբանասիրական առումով: Որոշ ծանոթագրություններ կրում են ընդհանուր արևելագիտական, բյուզանդագիտական, աստվածաբանական բնույթ և դրանով ավելի են արժեքավորում հայ պատմիչի գործը:

4. *Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber. Aus dem Armenischen des Sebêos. [Übersetzt von] Heinrich Hübschmann. Leipzig, [1875].*

Թարգմանությունը ներկայացված է կայսցիզի համալսարանին որպես հարակից նյութ Հ. Հյուբշմանի «Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen» հետազոտության:

Թարգմանված է «Սեբեոսի Պատմության» վերջին մասը, որը վերաբերում է արաբների պատմական ասպարեզ ելնելուն և նրանց առաջին արշավանքներին:

Թարգմանությունը կատարված է Թ. Միհրդատյանի հրատարակության հիման վրա, ընդգրկում է նրա 30—38 գլուխները, որոնցից 31-րդը և 33-րդը փոխանակ թարգմանելու՝ վերապատմել է:

<sup>30</sup> Essai d'une histoire de la dynastie Sassanides, d'après les renseignements fournis par les historiens Arméniens. Թարգմանությունը տպագրված է Փարիզի «Journal asiatique»-ում (1896, էջ 101—238):

Թարգմանութեան տողատակի բաժնում գետեղված են տասնյակ արժեքավոր ծանոթագրութիւններ և բնագրագիտական ճշգրտումներ, որոնք օգտագործել են ուսումնասիրողները, ինչպես նաև Ֆ. Մակլերը՝ ֆրանսերէն թարգմանութեան և մենք՝ սույն հրատարակութեան մեջ: Հ. Հյուբշմանն իր հերթին օգտվել է նախորդներից, հատկապես Ք. Պատկանյանից, որի մասին հայտնում է իր գրքի վերջում (էջ 44):

Թարգմանութեանը կից 10 էջանոց առաջաբանում գերմանացի հայագետը ընդհանուր գնահատական է տալիս հայ պատմագրութեանը՝ այն համեմատելով պարսիկների և հնդիկների պատմագրութիւնների հետ և առավելութիւնը տալով հայկականին: Ապա՝ անդրադառնում է մերթ հոմայեցիների և պարթևների, մերթ բյուզանդացիների և սասանյանների, մերթ թուրքերի և պարսիկների պատմական շահերի բախման կետում գտնված Հայաստանի վիճակին, որով և պայմանավորվել է նրանց պատմագրութեան բովանդակութիւնը:

5. *Le Pseudo-Agathange. Histoire ancienne de l'Arménie:—Collection des historiens anciens et modernes de l'Arménie... par Victor Langlois, t. I, Paris, 1867, էջ 195—200:*

Սույնը տպագրված է Կ. Մյուլլերի հետևյալ հրատարակութեան մեջ: *Historicorum Graecorum et syriorum reliquiae in Armeniorum scriptis servatae... (=Fragmenta historicorum Graecorum, Volume.1 quintus. Pars altera), Parisiis, 1884.*

Ֆրանսերէնի է թարգմանված «Սեբեոսի Պատմութեան» անդրանիկ հրատարակութեան «Դպրութիւն Ա» գլուխը:

Թարգմանութեանը նախորդում է քսան տողանոց մի առաջաբան, որի մեջ, հայտնի չէ. թե ինչ հիմունքներով, Սեբեոսը համարված է Մամիկոնյան տոհմի եպիսկոպոս (էջ 195): Մի սխալ տեղեկութիւն էլ գտնում ենք տողատակի ծանոթագրութիւնների բաժնում, որտեղ կարդում ենք. «էջմիածնի մատենադարանի տպագիր ձեռագրացուցակում (Թիֆլիս, 1863, հայերէն) այս կարևոր երկը հիշատակված է 192-րդ էջում, 1746 համարի տակ»: Իրականում, սակայն, նշված ցուցակում Սեբեոսի երկը առհասարակ հիշատակված չէ: Ֆրանսերէնի ծանոթագրութեան հեղինակը ցուցակում նշված «Երակղիտոսի յաղագս անհաւատալեաց» երկը շփոթել է Սեբեոսի երկի հետ: Պարզ ասած՝ Միհրդատյանի հրատարակութեան խորագրի «Հերակլ» անունը շփոթվել է ցուցակի «Երակղիտոսի» հետ:

Ֆրանսերէն թարգմանութեան տողատակին բերված են տեքստը լուսաբանող ծանոթագրութիւններ: Հիմնականում ցույց են տրված Մովսես Խորենացու համապատասխան տեղերն ու նրանց տարբերութիւնները, ինչպես նաև բացատրված են մի քանի տեղանուններ և անձնանուններ:

6. *Pseudo-Sebêos. Texte arménien traduit et annotée par Frédéric Macler, 1905.*

Հրատարակված է Փարիզի «Journal asiatique»-ի 1905 թ. հուլիս-օգոստոսի 121—155 էջերում:

Թարգմանված է Անանունի երկրորդ բաժինը, սկսած «Արդ՝ թէ պիտոյ է բեզ, ով ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացույ եւ Ստեփանոսի Տարանացույ» խորագրից մինչև Անանունի վերջը:

Ինն էջանոց առաջաբանում Մակլերը ներկայացնում է իր թարգմանած մասի դիրքը ձեռագրերում և նախորդ հրատարակութիւններում, գնահատում

է «Սեբեոսի Պատմութիւնը», նշում է Պատմութեան առաջին արձագանքները ֆրանսիական գիտական գրականութեան մեջ, թվարկում է Ք. Պատկանյանի Մ. Բրոսեի կասկածները Անանունի և «Սեբեոսի Պատմութեան» կապի առթիվ և ինքն էլ հաստատում է, որ Ասողիկը շէր կարող աղբյուր հանդիսանալ VII դարի մի հեղինակի համար: Հետևաբար՝ իր թարգմանած մասը, որտեղ հիշատակված է Ասողիկը, «Սեբեոսի Պատմութեան» հեղինակինը չէ: Զանազան խորհրդածութիւններ է անում այս հարցի կապակցութեամբ և եզրակացնում. «Մինչև ավելի համոզիչ փաստերի ի հայտ գալը՝ խնդիրը մնում է չլուծված, թեպետ՝ մենք հակված ենք Կեղծ Սեբեոսին (Անանունին— Գ. Ա.) համարելու հեղինակ VII դարի, այսինքն՝ այն ժամանակի, երբ ավարտվում է իր Պատմութիւնը»<sup>31</sup> (էջ 11—12):

Մակլերի կարծիքով, իր թարգմանածի ամենակարևոր մասը հայոց, պարսից և հույն թագավորների համաժամանակյա ցանկն է, եռակի կանոնը: Այս ցանկի հիման վրա նա իր թարգմանութեան վերջում կազմել է ժամանակագրական մի աղյուսակ, որն ընդգրկում է հիշյալ թագավորների ցանկը:

Ժամանակագրական աղյուսակի ընդհանուր գնահատականն այն է, որ գրչական աղճատումները շպետք է նսեմացնեն սկզբնաղբյուրի արժեքը: «Հայերենում նույնպես, ինչպես և Ասորերենում և մյուս լեզուներում, այբուբենի տառերը կատարում են նաև թվերի դեր: Սխալ վերծանված մեկ տառը, գրչի մի փոքր անուշադրութիւնը կարող են առաջ բերել բազմաթիվ տարիների շեղում: Սակայն գրչի թույլ տված սխալը ոչնչով չի նվազեցնում նրա միջոցով մեզ ավանդված վավերագրի կարևորութիւնը» (էջ 13—14):

### «ՍԵԲԵՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՁԵՌԱԳՐԵՐԸ

#### Ա

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ՝ XVI ԳԱՐԻ  
ՁԵՌԱԳՐԵՐԸ (ԱՅԺՄ ԿՈՐԱԾ)

Այս ձեռագիրն այժմ չկա, բայց նրա տարրնթերցվածքները գրանցվել և հասել են մեզ Միհրդատյանի հրատարակութեան կազմում: Դրանք օգտագործվել են նաև հետագա հրատարակութիւններում, նրանց թվում՝ նաև մեր հրատարակութեան մեջ: Այսպիսով, ձեռագիրը փաստորեն առկա է բոլոր հրատարակութիւններում և նրա կորուստը ներկա դեպքում զուրկ է գործնական նշանակութիւնից: Այդ իսկ պատճառով էլ ձեռագիրը նկարագրում ենք այն 10 ձեռագրերի հետ միասին, որոնք հասել են մեզ և պահվում են տարբեր մատենադարաններում:

Ձեռագրի նկարագրութիւնը Միհրդատյանը ամփոփել է իր հրատարակութեան Ժ էջի հետևյալ տողերում. «Օրինակի միոյն շգոյր յիշատակարան՝ և

<sup>31</sup> «Սա կարծիքն է նաև օքսֆորդցի Կոնիբերի (մասնավոր նամակ՝ 1905 թ. մայիսի 5): Նրա ենթադրութեամբ Կեղծ-Սեբեոսը պետք է որ արտագրված կամ գուցե՝ օգտագործված լինի վերջնա Վենետիկում 2. Սարգիսյանի կողմից հրատարակված մի ժամանակագրութեան (Անանուն ժամանակագրութիւն, Վենետիկ, 1904, հրատ. 2. Բ. Սարգիսեան) անանուն հեղինակը (Անանիա Շիրակացու) կողմից» (էջ 12, ծ. 1):

էր թերի, որ էր բոլոր գրով՝ հին թուղթ բամպակեայ. և թուի թէ ի վեշտասաներորդ դարու գրեալ իցէ, բայց ամենայն մասամբ մաքուր գրութիւն ի հմուտ գրչէ. կայր ևս ի միջի նորին աղօթք հրաշազան յորինուածով արարեալն սրբոյն Յակովբայ Մծբնացոյ վասն մահտարածմի զոր և օրինակեցաք. (եւ ունիմք ի ժամանակին ի լոյս ընծայել): Եւ գոյր ի վերջն զայս յիշատակարան. «Արդ գրեցաւ... թուին Ռժէ ի սուրբ և տիեզերական ուխտս Մարմաշինու վանաց. ձեռամբ յոգնամեղ և անարդիւն գրչի տէր Յուսիկ կոչեցելոյ... և այլն»: Եւ էր դրոշմեալ ի ճակատին «Պատմագիրք Սեբէոսի ի Հերակլն»:

Այս տեղեկություններից բացի մեզ հայտնի են նաև տարրնթերցվածքները<sup>32</sup>, որոնք Միհրդատյանը քաղել է խնդրո առարկա ձեռագրից: Դրանք, ինչպես ասվեց, կարևոր ընթերցվածքներ են: Առանձնապես արժեքավոր է «զոր իմ գտեալ ի Միջագետս» ընթերցվածքը: Այժմ մեր ձեռքին գտնվող բոլոր ձեռագրերում բացակայում է «ի Միջագետս» արտահայտությունը, որի հետևանքով անհայտ է մնացել Մարաբա Մծուրնացու մատյանի գտնված վայրը: Միհրդատյանի օգտագործած ձեռագիրը լրացնում է այս բացը: Այդ միևնույն ձեռագրի միջոցով են մեզ հայտնի դարձել նաև № 2639 ձեռագրում (Անանունի հատվածում) բացակայող այն շորս և յոթ տողանոց հատվածները, որոնցից առաջինը վերաբերում է Կոռնակ սպարապետին, երկրորդը՝ Գաղիանոս կայսեր և Շապուհ արքայի միջև մղված պատերազմներին:

Միհրդատյանի օգտագործած ձեռագրի բոլոր ընթերցվածքներն անխտիր վերցրել ենք մեր հրատարակության մեջ և ցույց ենք տվել «Հ» (հին) պայմանական նշանով:

Կորած ձեռագիրը՝ շնայած անմիջական կապ չունի № 2639 ձեռագրի հետ, բայց նյութերի հերթականությամբ և բոլոր մյուս հատկանիշներով սկզբից մինչև վերջ համապատասխանում է այդ ձեռագրին, չհաշված այն տեղերը որոնք այդ ձեռագրում ավելի լավ են պահպանված և այն թերթերը, որոնք կորած են եղել այդ ձեռագրում: Հիմնական կորուստները եղել են վերջին շորս և կես գլուխները, սկսած «Եւ ի նմին ամի ապստամբեցին Հայք և ի բաց կացին ի թագաւորութենէն Յունաց և հնազանդեցան ի ծառայութիւն արքային Իսմայելի, եղին ուխտ ընդ մահու, և ընդ դժոխոց դաշինս կոեցին» տողերից մինչև Պատմության վերջը:

Ձեռագրի մեջ պակասած թերթերի շարքում Միհրդատյանը նշել է նաև երկու այլ թերթեր: Նրանցից առաջինը համապատասխանում է Վահրամ Զոբինի՝ առ Մուշեղ ուղղված նամակի հետևյալ խոսքերին. «Գրեցի առ ձեզ ի բաց կալ ի նոցանէ» մինչև նույն գլխի «և կապեալ զձեռս ի վերայ թիկանց՝ բերեալ կացուցանէին առաջի թագաւորին» բառերը ներառյալ, իսկ երկրորդը՝ Դավանության թղթից մի հատվածի, սկսած «Որ իբրև տեսին զմիմեանս՝ առաջի կալաւ Կոստանդիանոսի զսուրբն Գրիգորիոս» բառերից մինչև հայտնի չէ, թե որտեղ (Միհրդատյանը չի նշել):

Միհրդատյանի նկարագրածից կարելի է եզրակացնել, որ իր օգտագործած ձեռագրում գտնված երկրորդ նյութը՝ Հակոբ Մծբնացու աղօթքը սկզբնապես այդ ձեռագրին չի պատկանել և միայն հետագա ժամանակներում է «կազմի

<sup>32</sup> Ստ. Մախասյանցը (Մալխ, էջ ԺԳ) Միհրդատյանի հրատարակության մեջ հաշվել է կորած ձեռագրից քաղված 41 տարրնթերցվածք, սակայն, ճշգրիտ հաշվելը դժվար է, որովհետև Միհրդատյանը մի քանի տեղ ինքն է շփոթել:

մեջ կցված Սեբեոսի Պատմութեանը»<sup>33</sup>: Դա երևում է նրանից, որ Միհրդատյանը ձեռագրի մասին խոսելիս շատ որոշակիորեն տարբերում է մի կողմից «Սեբեոսի Պատմութեան», մյուս կողմից էլ Մծբնացու աղոթքի հիշատակարանները: Առաջինի դեպքում հայտնում է, որ ձեռագիրը հիշատակարան չունի, իսկ երկրորդի դեպքում գրում է «գոյր վերջն գայս յիշատակարան՝ «Արդ գրեցաւ... թուին Ռժէ»:

Եթե Մծբնացու աղոթքն էլ գրված լիներ միևնույն գրչի ձեռքով և գտնվեր միևնույն ձեռագրի կազմում, Միհրդատյանը նախ՝ հիշատակարանները դանազանելու կարիք չէր զգա և երկրորդ՝ Ռժէ թվականը կհամարեր միաժամանակ նաև «Սեբեոսի Պատմութեան» ընդօրինակման թվականը: Չէ՞ որ № 2639 ձեռագրում նույնպես այդ Պատմութեան ընդօրինակման թվականը չի նշված, բայց մենք գիտենք, որ դա ընդօրինակված է այն միևնույն տարին, երբ ընդօրինակվել է նաև նույն ձեռագրում գտնվող Դաշանց թուղթը, որի կապակցությամբ ձեռագրում նշված է ընդօրինակության թվականը՝ ՌժԻԱ. (—1672): Այս թվականը մասնագետները տարածել են նաև «Սեբեոսի Պատմութեան» վրա: Բնականաբար, այդպես պետք է վարվեր նաև Միհրդատյանը՝ Մծբնացու աղոթքի 1568 թվականը տարածելով նաև «Սեբեոսի Պատմութեան» վրա: Բայց քանի որ աղոթքի հիշատակարանը «Սեբեոսի Պատմութեանը» չի վերաբերել՝ Միհրդատյանը Պատմութեան թվականը համարել է աճհայտ և միայն ենթադրարար է որոշել XVI դարը. «բուի թէ ի վեշտասաներորդ դարու գրեալ իցէ»:

Այս փաստը չնկատելով՝ որոշ բանասերներ կարծել են, թե Մծբնացու աղոթքի ընդօրինակման թվականը վերաբերում է նաև «Սեբեոսի Պատմութեանը» և 1568 թվականը համարել են նաև այդ Պատմութեան ընդօրինակման թվականը<sup>34</sup>:

Մեկ այլ շփոթի հետևանքով բանասիրության մեջ թափանցել է մի այնպիսի կարծիք, որի համաձայն Միհրդատյանն օգտագործել է իբր այն ձեռագիրը, որը «գտել է Շահխաթունյանցը... Այս ձեռագիրն անհետ կորել է»<sup>35</sup>: Իրականում, սակայն, Շահխաթունյանցի գտած ձեռագիրը կապ չունի նշված ձեռագրի հետ: Շահխաթունյանցը հայտնաբերել է № 2639 ձեռագիրը, որն այսօր էլ պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում: Այդ ձեռագրի նկարագրությունը կատարվել է ղեռնա Միհրդատյանի հրատարակությունից առաջ՝ 1833 թ. հենց Շահխաթունյանցի կողմից<sup>36</sup>:

Մեկ ուրիշ նկարագրություն գտնում ենք Բրոսեի թելադրանքով կազմված դարձյալ անտիպ մի ցուցակում, որտեղ 5-րդ համարի տակ կարդում ենք

<sup>33</sup> Գ. Տեր-Պողոսյան, նկատողություններ Փավստոսի Պատմութեան վերաբերյալ, Վիեննա, 1919, էջ 69: Այստեղ Գ. Տեր-Պողոսյանը միաժամանակ հնարավոր է համարում, որ Մծբնացու աղոթքի թվականը Ռժէ (=1568) աղճատված լինի «Ռժէ (=1658) տառերից: Եթե իսկապես այսպես լիներ՝ կնշանակեր, որ Մծբնացու աղոթքը «Սեբեոսի Պատմութեան» ձեռագրի մեջ ներմտծված է եղել այդ ձեռագրի ընդօրինակման ժամանակից (XVII դար) հարյուր տարի հետո: Ինչպես էլ որ լինի՝ նշված թվականը կարող է վերաբերել միայն և միայն Մծբնացու աղոթքին, որովհետև եթե վերաբերեր նաև «Սեբեոսի Պատմութեանը»՝ Միհրդատյանը չէր գրի «յօրինակի միոյն շղոյր յիշատակարան»:

<sup>34</sup> Մալխ, էջ է—Ը: Նաև՝ Պ. Անանյան, Ով է Սեբեոսի Պատմութեան հեղինակը, «Թագավանդակ», 1970, թ. 1—3, էջ 5:

<sup>35</sup> Մալխ, էջ Ը:

<sup>36</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. № 3801, էջ 142բ:

№ 2639 ձեռագրի բովանդակության հետևյալ ցանկը. «Պատմութիւնք Ազաթանգեղոսի, Խորենացոյ, Զարմից սրբոյն Լուսաւորչի, Եղիշէի, Ղազարու, Փարպեցոյ, Նորին թուղթ առ Վահան Մամիկոնեան, Սեբէոսի եպիսկոպոսի Բագրատունեաց գշերակլ կայսրէ և Պատմութիւն թարգմանչացն մեր ի Կորին վարդապետէ, գրեալ ի թուին հայոց ՌՃԼԱ (պետք է լինի՝ «ՌՃԻԱ».—Դ. Ա.) յԱմբոսլ»<sup>37</sup>:

Շահխաթունյանցի հայտնաբերած ձեռագրի նկարագրութիւնը ֆրանսերեն թարգմանութեամբ ներկայացրել է նաև Մ. Բրոսեն՝ 1849 թ. լույս տեսած իր «Rapports»-ում: Այստեղ նա միաժամանակ հայտնել է (էջ 49—55), թե ո՞ր նյութը ձեռագրի ո՞ր բրտրոգ էջում է գտնվում: Երբ համեմատում ենք նրա ցույց տված էջահամարները № 2639 ձեռագրի էջահամարների հետ՝ տեսնում ենք, որ դրանք նույնն են: Բացի այդ՝ Բրոսեն հիշյալ աշխատության 49-րդ էջում Շահխաթունյանցի հայտնաբերած ձեռագրի էջերի թիվը նշում է 123: Սա նույնպես № 2639 ձեռագրի էջերի քանակն է: Այսպիսով՝ ոչ մի կասկած չի մնում այն մասին, որ Շահխաթունյանցի հայտնաբերածը եղել է ոչ թե այժմ անհետ կորած, այլ՝ № 2639 ձեռագիրը:

Միհրդատյանը (էջ Ժ) հայտնում է, որ կորած ձեռագրի ճակատին դրոշմված է եղել «Պատմագիրք Սեբէոսի ի Հերակլին»: Փաստերը ցույց են տալիս, որ այս խորագիրը ձեռագրի վրա ավելացված է եղել հետագայում, Շահխաթունյանցի հայտնագործութիւնից հետո և՛ նրա ազդեցութեամբ: Այդ մասին է վկայում ամենից առաջ «Սեբէոս» անվանաձևը: Սեբէոսի անունը հիշատակող պատմիչներից և մատենագրական ցանկերի հեղինակներից ոչ ոք հեղինակին «Սեբէոս» չի կոչում: Նրանցից ոմանք գրում են «Եւսեբիոս», ոմանք էլ սկզբի երկու տառերը («Եւ») կրճատելով թողնում են «Սեբիոս»: Իսկ «Սեբէոս» ձևը առհասարակ գիտական գրականութեան մեջ մուտք է գործել Շահխաթունյանցի ձեռքով: Առաջին անգամ Շահխաթունյանցն է, որ «Հերակլի պատմության» հեղինակին 1837 թ. նույնացրել է Դվինի եկեղեցական ժողովի (645 թ.) կանոններն ստորագրող Բագրատունյաց եպիսկոպոս Սեբէոսի հետ (համատ. ՄՄ, ձեռ. № 3801, էջ 98): Զամչյանը, որ ծանոթ չէր Շահխաթունյանցի նույնացմանը, որոշակիորեն տարբերում է այդ երկու անձնավորութիւններին: Պատմիչին նա կոչում է այնպես, ինչպես կոչել են Շահխաթունյանցից առաջ բոլորը՝ «Սեբիոս» (Զամչյան, հատ. 1, էջ 18)<sup>38</sup>, իսկ Բագրատունյաց եպիսկոպոսին՝ «Սեբէոս» (հատ. 2, էջ 345):

Որ Միհրդատյանի օգտագործած ձեռագրի ճակատին դրոշմված «Սեբէոս»-ը գրվել է իսկապես Շահխաթունյանցից հետո, այդ մասին վկայում է նաև Շահխաթունյանցի՝ 1833 թ. կազմած ցանկը (ՄՄ, ձ. 3801, էջ 142բ): Այստեղ Սեբէոսի անվան առջև գրված է «կարծի» բառը, որով հայտնվում է, որ Սեբէոսի անունը սոսկ ենթադրաբար է վերագրվում անխորագիր երկին: Եթե Շահխաթունյանցի օրոք իրոք գոյություն ունեցած լիներ Սեբէոսի անունը՝ հին ժամանակներից սկսած կրող մի ձեռագիր՝ Շահխաթունյանցն այդ մասին

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 98ա:

<sup>38</sup> Միհրդատյանը (էջ ԺԱ) Զամչյանի գործածած ձևը սխալմամբ նշում է «Սեբէոս»: Նա այդպես է վարվել նաև Ասողկի և Կիրակոս Գանձակեցու հիշատակած «Սեբիոսի» դեպքերում: Նրա համար «Սեբէոս» և «Սեբիոս» տարբերությունը նշանակություն չունի: Այդ երկուսից նա ընտրել է Շահխաթունյանցի գործածած ձևը, ինչպես որ ընդունված է նաև մեր օրերում:



կիմանար և պատմիչի անունը չէր ներկայացնի որպես սեփական կարծիքի արգասիք:

Շահխաթունյանցի կազմած ձեռագրացուցակներից և ոչ մեկում չենք գտնում № 2639 ձեռագրից բացի անխորագիր երկը պարունակող մեկ այլ ձեռագիր: Սրանից կարելի է ենթադրել, որ Միհրդատյանի օգտագործած ձեռագիրը գտնվել է Շահխաթունյանցի անձնական գրադարանում և շի արտահայտվել ձեռագրացուցակներում: Մեզ հայտնի են հաստատ տվյալներ այն մասին, որ Շահխաթունյանցը իսկապես ունեցել է իր սեփական ձեռագրերը: 1828 թ. մարտի 7-ին գրած մի նամակում, ուղղված «առ Ներսէս արքեպիսկոպոսն Տփխիսոյ», նա հայտնում է, որ սեփական գրամով և այլ միջոցներով հայթայթած ձեռագրերը խլել են իրենից և շեն վերադարձնում. «Իսկ որ իմ էին ստացեալ յայլ ուրէք թէ՛ գրամովք և թէ՛ այլով իւիք, ի բաց առին անտի ըզգըրչեսյ գրեանս մետասան... զրկեալ զիս ի նոցունց ամենևին մինչև ցայժմ»<sup>39</sup>: Ահա այս «զրկեալ» ձեռագրերի շարքում պետք է լիներ նաև Միհրդատյանին տրամադրված ձեռագիրը: Կամ էլ՝ պետք է մտածել, որ ձեռագիրը Միհրդատյանին տրամադրել է մեկ այլ անձնավորություն:

Ձեռագրացուցակներում խնդրո առարկա ձեռագրի նշված շիները որոշ բանասերների առիթ է տվել կասկածի ենթարկելու նրա գոյություն փաստը<sup>40</sup>: Բայց սա ավելորդ կասկած է, որովհետև ցուցակում նշված շիները դեռևս հավասար չէ գոյություն չունենալուն: Հայտնի են գիտական շրջանառության մեջ մտած բազմաթիվ ձեռագրեր, որոնք ձեռագրաց ցուցակներում գրանցված չեն:

Ակիւնյանը ձեռագրի գոյությունը ժխտել է նկատի ունենալով նաև այն, որ Միհրդատյանը իբր չի հայտնում «թե ո՞ւր պատահած է ձեռագրիս» և թե այդ ձեռագիրը իբր «ըստ ամենայնի կը համընթանա» № 2639 ձեռագրի հետ<sup>41</sup>: Իրականում, սակայն, նախ ձեռագիրն ունեցել է № 2639 ձեռագրից տարբերվող կարևոր լրացումներ և երկրորդ՝ Միհրդատյանը հայտնում է, որ ձեռագրին պատահել է էջմիածնում: Նա գտնում է. «Ի գնալն մերում ի սուրբ Աթոնս (այսինքն էջմիածին—Գ. Ա.)... յայնժամ լցուցաք զթերին՝ ի միւս հնագոյն օրինակէն»<sup>42</sup>:

№ 2639 ձեռագրում գրված է եղել. «Ընդդէմ նորա ելանէ» և միտքը կիսատ է թողնված. հայտնի չէ, թե ով է ելել «ընդդէմ նորա»: Այդ անհայտ անձնավորության տեղը բաց է թողնված, որպեսզի հետագայում լրացվի: Սա կատարվել է Միհրդատյանից շուրջ 200 տարի առաջ՝ 1672 թ.: Ահա, Միհրդատյանը օգտվելով իր ունեցած և այժմ մեզ չհասած հնագույն ձեռագրից, լրացրել է պակասը. «Կոռնակ սպարապետ մեծին Խոսրովու հարն Տրդատայ» (և այլն): Մեկ այլ տեղ նա լրացրել է № 2639 ձեռագրում դարձյալ բացակայող «ի Միջագետս» արտահայտությունը: Այս լրացումները քաղված են կորած ձեռա-

<sup>39</sup> ՄՄ, Կաթ. դիվան, թղթ. 59, վավ. 652ա—լզ, էջ 1ա: Սույն վավերագրի մասին մեզ հայտնել է մեր հանգուցյալ գործընկեր, Մատենադարանի բարեհիշատակ աշխատակից Սուրեն Ավագյանը:

<sup>40</sup> Գ. Տեր-Պողոսյան, Նկատողություններ..., էջ 59: Ն. Ակիւնյան, Մատենագրական հետազոտություններ, հ. Բ, էջ 11 և այլն:

<sup>41</sup> Ն. Ակիւնյան, նույն տեղում:

<sup>42</sup> «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Կ. Պոլիս, 1851, էջ ԺԳ:

գրից և վկայում են նրա գոյության մասին: Իսկ առհասարակ Միհրդատյանը ոչ մի պատճառ չունի ձեռագիր հնարելու:

Կորած ձեռագրի հետքերը մենք որոնել ենք անխորագիր երկից քաղվածքների պարունակող մեզ հայտնի բոլոր աղբյուրներում (տպագիր և անտիպ): Բայց նրանցից ոչ մեկը չի համապատասխանում կորած ձեռագրի մասին Միհրդատյանի գրանցած տվյալներին: Ինչպես երևում է, ձեռագիրն իսկապես պատկանած է եղել մասնավոր անձանց և չի արտագրվել:

Մեր որոնումների ժամանակ ի հայտ են եկել նաև այնպիսի տարրնթերցվածքներ, որոնք առաջին հայացքից թվացել են բոլորովին անծանոթ ձեռագրերի գոյության մասին վկայող տվյալներ: Այսպես օրինակ, Շահխաթունյանցը «Ստորագրության» առաջին հատորի 262, 263, 286, 287 էջերում և անտիպ թղթերում (ձ. № 4535, էջ 43ա) հիշատակում է Սեբեոսին, կամ էլ՝ զանազան քաղվածքներ է անում «Սեբեոսի Պատմութունից»: Սրանք երբեմն այնքան տարբեր են Պատմության մեզ հասած հայտնի բնագրից, որ թվում է, Շահխաթունյանցն օգտվել է մինչև այժմ անհայտ մեկ այլ բնագրից: Սակայն ուշագիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբերություններն արդյունք են ոչ ճիշտ արտագրության: Շահխաթունյանցը անուշադրաբար բաց է թողել որոշ բառեր, նույնիսկ՝ մի ամբողջ նախադասություն («երից հաւատարմաց երրորդ մատանեաւք, ով մարգարիտ»): Միևնույն արտահայտությունը բացակայում է նաև մեր Մատենադարանի №№ 993 և 1912 ձեռագրերում ընդօրինակված՝ Հոփոսիմեի տաճարի շինությանը վերաբերող հատվածից: (Բացակայության պատճառը տե՛ս մեր հոդվածում. «էջմիածին», 1968, № 1, էջ 58—61): Այս զուգահեռությունը կարող էր շփոթեցնել, բայց բարեբախտաբար պահպանվել է Շահխաթունյանցի «Ստորագրության» 286-րդ էջում տպված քաղվածքի անտիպ հիմքը, որը գրված է հենց Շահխաթունյանցի ձեռքով (Կաթ. դիվան, թղթ. 59, վավ. 652 ա—լզ, էջ 14—15): Այս քաղվածքը տպագրածի հետ համեմատելով տեսնում ենք, որ Շահխաթունյանցն ինքը սխալ է արտագրել իր ձեռքով գրածը: Անտիպ քաղվածքը ճշտիվ համընկնում է № 2639 ձեռագրի 534բ էջում իրեն համապատասխանող հատվածին: Ուրեմն մեզ անծանոթ որևէ ձեռագրի մասին խոսք լինել չի կարող:

## Բ

«ՍԵԲԵՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ ՀԱՍԱԾ ՀՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳԻՐԸ  
(№ 2639, շին № 611)

Մալխասյանցի և մեր հրատարակություններում «Ա» պայմանական նշանը կրող և ծրևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում պահվող սույն ձեռագիրը ընդօրինակված է հիմնականում 1672 թ., Բաղեշի Հովհան Մկրտչի վանքում, «որ մականուամբ Ամրդուլու վանք ասի»: Ձեռագրի պատվիրատու Վարդան վարդապետ Բաղիշեցին XVII դարի հայ ամենանշանավոր ուսուցիչներից, մատենագետներից ու մատենադարանապետներից է<sup>43</sup>:

Վերին աստիճանի հստակ ձեռագրագրով արտագրված սույն ժողովածուի մեջ ամփոփված են հետևյալ նյութերը՝ Ազաթանգեղոս, Դաշանց թուղթ, Մովսես Խորենացի, Մեսրոպ Վայոցձորեցի, Սահակի տեսիլը (քաղված Դազար

<sup>43</sup> Վարդան Բաղիշեցու կյանքի ու գործի մասին տե՛ս Ն. Ալիևյան, Բաղեշի դպրոցը, էջ 231—313:

Փարպեցուց), Եղիշե, Ղազար Փարպեցի (թղթի հետ միասին), «Սեբեոսի Պատմություն», Կորյուն:

Ընդօրինակման մասնակցել են երեք գրիչներ: Մինչև Եղիշեն ներառյալ: Ընդօրինակել է գրիչ Պողոս Գավրուցին, այնուհետև՝ Ղազար Փարպեցին և «Սեբեոսի Պատմություն» ընդօրինակված են Գրիգոր Երեցի ձեռքով, իսկ Կորյունի ընդօրինակողը Գրիգորն է (հետագայում Գրիգոր Շղթայակիր անվամբ հռչակված նշանավոր գործիչն ու բանաստեղծը):

Վերջինս Կորյունի երկի վերջում գետեղած հիշատակարանում առանց իր անունը տալու հիշատակում է ձեռագրի պատվիրատու Վարդան Բաղիշեցուն: Քանի որ ձեռագրի նախորդ մասերում նույնպես հիշատակված է միևնույն պատվիրատուն, բանասերները կարծել են, թե Կորյունի վարքն ընդօրինակողն այն միևնույն Գրիգոր երեցն է, որն ընդօրինակել է նաև նախորդ նյութերը: Այս պատկերացման համաձայն՝ ձեռագիրն ամենուրեք ներկայացված է որպես երկու գրիչների (Պողոս և Գրիգոր) ընդօրինակություն: 1958 թ. մենք բացահայտեցինք նոր գրիչ և պարզեցինք, որ Մաշտոցի Վարքն ընդօրինակված է նախորդ նյութերից տասնյակ տարիներ հետո և ձեռագրին միացել է հետագայում<sup>44</sup>:

Ձեռագրի 1—548 էջերը ծաղկել է XVII դարի հայտնի ծաղկող Սահակ Վանեցին, իսկ շարունակությունը (Կորյունի երկը) նրա օրոք ձեռագրի կազմում չի գտնվել:

«Սեբեոսի Պատմությունը» պարունակող մասի հիշատակարաններում ձեռագրի ընդօրինակման թվականը չի նշված<sup>45</sup>, մենք այն քաղել ենք Դաշանց թղթին վերաբերող հիշատակարանից (էջ 142ա): Դաշանց թուղթը գրված է ուրիշ գրիչ կողմից և այլ թղթի վրա, սակայն ձեռագրի տվյալներից երևում է, որ «Սեբեոսի Պատմությունը» նույնպես ընդօրինակված է միևնույն թվականին: Միևնույն թվականին էլ ձեռագիրը կազմվել է՝ իր մեջ արդեն ունենալով բոլոր նյութերը (բացի Կորյունի «Վարք Մաշտոցի» երկից):

Հաստատ չգիտենք, թե ինչ գաղափար օրինակից է ընդօրինակված «Սեբեոսի Պատմությունը»: Մինչև այժմ անվերապահորեն ընդունված է եղել կարծել, թե օրինակված է Հունան վարդապետի օրինակից<sup>46</sup>, սակայն այս վարդապետի մասին հիշատակարանը գտնվում է Ղազար Փարպեցու երկի բաժնում և չենք կարող վստահ ասել, որ վերաբերում է նաև «Սեբեոսի Պատմությանը»: Հնարավոր է նաև, որ Վարդան Բաղիշեցին «Սեբեոսի Պատմություն» ընդօրինակելու համար բնագիրը հայթայթած լիներ ոչ թե Հունան վարդապետի օրինակից, որից և ընդօրինակված է Ղազար Փարպեցին, այլ՝ մեկ այլ ձեռագրից: Ինչ էլ որ լինի, ընդօրինակությունը կատարված է շատ

<sup>44</sup> Կորյունի երկին վերաբերող նորությունը 1958 թ. «Մատենադարանի բանբերում» (№ 4) հրատարակելուց հետո գետեղել ենք նաև 1965 թ. լույս տեսած «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը՝ աշխատության 24—25 էջերում: Այսուհանդերձ՝ նորությունը վրիպել է ուղարկությունից (հմմտ. «Յուրալի ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հ. Ա, Երևան, 1965, էջ 843 և Անանյան, նշված աշխ., էջ 7):

<sup>45</sup> Ն. Ալիևյանը սխալմամբ հայտնում է, թե «Սեբեոսի Պատմության» վերջում կա ձեռագրի թվականը պարունակող հիշատակարան. «Գրիգոր երեց այլուր (Սեբեոսի Պատմության վերջը) հայտնապես կը նշանակի գրության տարին 1672» («Մատենագրական հետազոտություններ», էջ 7): Սա Միհրատյանի հրատարակության վերջում տպված հիշատակարանի ազդեցությամբ առաջացած թյուրիմացություն է:

<sup>46</sup> Մալխ, էջ Թ, ԺԲ: նաև՝ Ն. Ալիևյան, Մատենագրական հետազոտություններ, Վիեննա, 1924, էջ 13, 27 և այլն:

հին ու քայքայված մի ձեռագրից<sup>47</sup>: Այդ մասին են վկայում երկաթագիր Տ-ի և Մ-ի շփոթից բխող ընթերցվածքները («Բագարամ», «Բիւրամ» և այլն), ինչպես նաև այն պակասող թերթերը, որոնք զաղափար օրինակից ընկած են եղել ձեռագրի քայքայվածության պատճառով և այն տողերը, որոնք ջնջված են եղել և չեն կարդացվել:

Գաղափար օրինակը չի ունեցել վերնագիր և ընդօրինակված է եղել առանց հեղինակի անվան: Այդ իսկ պատճառով էլ № 2639 ձեռագիրը անվերնագիր է:

«Սեբեոսի Պատմության» ներքին գլխաբաժանումը նույնպես զաղափար օրինակում հստակ չի եղել: Որոշ գլուխներ ունեցել են վերնագրակերպ նշումներ (որոնք ընդօրինակված են նաև № 2639 ձեռագրում և որոնք մենք ցույց ենք տվել բնագրի տողատակի ծանոթագրությունների համապատասխան տեղերում), իսկ մյուսները զուրկ են որևէ վերնագրից: Պահպանված վերնագրերը, Ակինյանի կարծիքով, մնացորդներն են զաղափար օրինակում եղած վերնագրերի: Իսկ «Սեբեոսի Պատմության» հեղինակային օրինակում դրանք հավանաբար չեն եղել. «Եթե այս խոստաբանությունները (վերնագրերը—Գ. Ա.) հարազատ են սկզբնագրին, ինչու նմանները կպակսին մյուս հատվածներու»<sup>48</sup>:

Ձեռագրում գլխաբաժանումը ցույց է տրված կարմիր գլխագրերով սկսվող տառերով կամ տողերով: Գլուխներից ԺԱ—ԼԲ (11—32-րդը) որոշ բացթողումներով համարակալված են: Մյուս համարների հետքերը կորել են:

XIX դարի ընդօրինակություններից Վիեննայի № 52 ձեռագիրը գրչի նախաձեռնությամբ բաժանված է 50 հատվածների: Մայր ձեռագիրը նման բաժանում չունի: Ն. Ակինյանը, ձեռագիրը տեսած շինելով, կարծել է, թե դա ձեռագրի ստորաբաժանումն է<sup>49</sup>: Ստ. Մալխասյանցը, որ ձեռագիրը տեսել է և նրա հիման վրա է կազմել իր հրատարակած բնագիրը, կրկնել է Ակինյանի սխալը<sup>50</sup>: Ձեռագրի սկզբնական վիճակում բացակայել են Անանունի հատվածում գտնվող այն 4 և 7 տողերը, որոնց մասին արդեն խոսել ենք կորած ձեռագրի կապակցությամբ և որոնց նվիրված են հատուկ ծանոթագրություններ: Այս պակասող տողերի բովանդակությունը ձեռագրի մեջ ներմուծել են անցյալ դարում, քաղելով հավանաբար Միհրդատյանի տպագիր բնագրից: Սույն ձեռագրից ընդօրինակված 9 ձեռագրերից ոչ մեկում պակասը չի լրացված:

Բարեբախտաբար, մեզ հասել են Բաղեշի Ամրդուլու վանքի ձեռագրերի ցուցակը, կազմված հենց Վարդան Բաղիշեցու ձեռքով<sup>51</sup>, ինչպես նաև № 2639

<sup>47</sup> Ակինյանի կարծիքով, № 2639 ձեռագիրն, անկասկած, ընդօրինակված է Սիմեոն Ապարանեցու օրինակից. «Ղազար Փարպեցվո և Սեբիոսի դրակցությունը ձեռագրին մեջ կհիշեցնեն մեզի այն հնագույն օրինակը, զոր ունեցած է աշքի առջև Սիմեոն Ապարանցի («Մատենագր. հետազոտ.»), էջ 8):

<sup>48</sup> Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, էջ 27:

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 26—28:

<sup>50</sup> Տե՛ս Մալխ, էջ ԺԵ: Այստեղ Մալխասյանցը գրում է. «ձեռագիրն ունի 50 գլուխ» (հմմտ. նաև էջ 2է):

<sup>51</sup> Ամրդուլու մատենադարանի ձեռագրերի ցուցակը այժմ պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում (№ 737, էջ 223բ—232ա): Աննշան աղճատումներով այն հրատարակված է «Արարատ» ամսագրում (Վաղարշապատ, 1903, էջ 178—189): Ցուցակը կազմված է 1689—1704 թթ. և կրում է հետևյալ խորագիրը. «Այս են վարդապետական գրեանքի վանքն Ամիրդուլու Համարով: Անջինջ յիշատակ գրեալ իմովս ձեռամբ՝ Վարդանայ վարդապետին»:

ձեռագրի գրանցումը պարունակող մի քանի այլ անտիպ ու տպագիր ձեռագրացուցակներ, որոնց միջոցով հնարավոր է հետևել ձեռագրի կենսագրությունը, սկսած ընդօրինակության գրեթե առաջին տարիներից:

Վարդան Բաղիշեցին 1689—1704 թթ. կազմած իր ցուցակում № 2639 ձեռագիրը գրանցել է այսպես. «Մովսէս պատմագիրք. կայ ի մէջ է (=7) պատմագիրք, Ագաթանգեղոս, Մովսէս, Եղիշէ, Ներսէսի Պատմութիւն, Ղազարու Փարպեցոյ և Խոսրովու»: Այստեղ «է» (=7) թվանշանը վրիպակ է, իսկ «Սեբեոսի Պատմությունը» գրանցված է իր գլխավոր հերթսի՝ Խոսրով Ապրովելի անվամբ<sup>52</sup> (ինչպես որ Մեսրոպ Վայոց-ձորեցու Պատմությունը գրանցված է Ներսէս Պարթևի անվամբ): Յուցակում Կորյունի երկը չի նշված, որովհետև ցուցակը կազմելու տարիներին այն դեռևս ձեռագրի կազմում չի եղել: Այն միացվել է ձեռագրին հավանաբար դարձյալ Ամրդուում գտնված ժամանակ: Դա երևում է նրանից, որ Կորյունի երկն էլ ընդօրինակված է Ամրդուում վանքում, Վարդան Բաղիշեցու պատվերով:

Թե մինչև երբ է ձեռագիրը գտնվել Ամրդուում վանքում՝ չգիտենք: Մեզ հայտնի է, որ 1828 թ. այն այլևս Բաղեշում չէր: Այս թվականին Մանվել Գյումուշխանեցին կազմել է էջմիածնի մատենադարանի ձեռագրերի ցուցակը, որի մեջ արդեն գրանցված է (446-րդ համարով) նախկինում Ամրդուում վանքում գտնված այդ ժողովածուն. «Պատմութիւն Ագաթանգեղոսի, Խորենացոյ, Եղիշէի, Ղազարու Փարպեցոյ, Պատմութիւն մի անհեղինակ («Սեբեոսի Պատմություն»—Գ. Ա.) և Պատմութիւն Կորիւն վարդապետի վասն գիտի գրոց և մերոյ թարգմանչի»<sup>53</sup>: (Այստեղ ցուցակագրողի ուշադրությունից վրիպել է Մեսրոպ Վայոց-ձորեցու երկը): Հինգ տարի անց՝ 1833 թ. ձեռագիրը գրանցել է Հովհ. Շահյանթունյանցը. «Պատմութիւն (կարծի) Սեբէոս»<sup>54</sup>: Ինչպես տեսնում ենք, Մանվել Գյումուշխանեցու «Պատմութիւն մի անհեղինակ»-ը այստեղ ստացել է Սեբեոսի անունը, թեկուզև հարցականով:

1837 թ. հետո կազմված մեկ այլ ցուցակում՝ Սեբեոսի անունը արդեն գրված է հաստատ. «Սեբէոսի եպիսկոպոսի Բագրատունեաց զՀերակլ կայսրի է»<sup>55</sup>:

Այս ցուցակի հիման վրա, ձեռագրի հաջորդ նկարագրությունը ֆրանսերեն թարգմանությունամբ հանդիպում ենք Մ. Բրոսեի՝ 1849 թ. հրատարակած գրքում<sup>56</sup>:

1850 թ. էջմիածնում ձեռագրից օգտվել է Թ. Միհրդատյանը: Կնշանակի ձեռագիրը այդ թվականին նույնպես գտնվում էր էջմիածնում:

«Նոյեան Աղանի» շաբաթաթերթի (Կ. Պոլիս) 1853 թ. № 52-ում էջմիածնից ստացված մի թղթակցություն մեջ նշված են ձեռագրի էջերը և այդ էջերում գտնվող տարրնթերցվածքները Միհրդատյանի հրատարակության համեմատությամբ: Հետևաբար, ձեռագիրը 1853 թ. նույնպես պահվում էր էջմիածնում:

Տասր տարի անց՝ 1863 թ. Թիֆլիսում հրատարակվեց էջմիածնի մատեն-

<sup>52</sup> Այս գրանցման և առհասարակ № 2639 ձեռագրի մասին լրացուցիչ տեղեկություններ տե՛ս «Բանբեր մատենադարանի», № 10, էջ 449—456, 459:

<sup>53</sup> ՄՄ, ձեռ. № 3801, էջ 209բ:

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 142բ:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 98ա:

<sup>56</sup> St'e u Brosset M., Rapports sur un voyage, p. 49—55.

նադարանի «Կարենեան» կոչվող ձեռագրացուցակը, որի մեջ ձեռագիրը գրանցված է: Կնշանակի՝ գտնվել է մասնավոր անձանց ձեռքին:

Մատենադարանում չի գտնվել նաև 1878 թ. սեպտեմբերին, երբ Ք. Պատկանյանը Պետերբուրգից եկել էր էջմիածին՝ հատկապես այդ ձեռագրի համար<sup>57</sup>:

14 տարի անց՝ 1892 թ. նոյեմբերի 10-ին (հին տոմարով) Գ. Տեր-Մկրտչյանը Փարիզից Վիեննա՝ «Հանդես ամսօրյային» (էջ 371) ուղարկում է մի «Իխտողութիւն» Սոկրատի և Խորենացու վերաբերյալ, որի մեջ ի միջի այլոց հայտնում է, որ ինքը Մատենադարանում պատահաբար գտել է այդ ձեռագիրը. «էջմիածնի Սեբէոսի օրինակը կորած էր համարվում մինչև այսօր. բայց պատահամբ, ուրիշ ձեռագիր որոնելով, հանդիպեցա ես Սեբէոսի այդ իսկ օրինակին: Եվ այսպիսի Surprise-ներ շատ են պատահում»: Գ. Տեր-Մկրտչյանը ձեռագիրը գտել և նկարագրել էր նախորդ տարին («Արարատ», 1891, էջ 147—155), որից հետո նա ձեռագրի հիշատակարանները հրատարակեց 1896 թ.՝ Մովսես Խորենացուն նվիրված իր ուսումնասիրության 37—44 էջերում:

Ձեռագիրը կրկին անհայտանում է 1896 թվականից հետո (մենք նրա գրանցումը չենք գտնում այդ թվականից հետո կազմված մի անտիպ ձեռագրացուցակում, որի մեջ հիշատակված է Հ. Տաշյանի՝ 1895 թ. լույս տեսած ցուցակը)<sup>58</sup>:

Սկսած 1900 թվականից ձեռագիրն անընդմեջ գտնվել է էջմիածնի մատենադարանում (1939 թվականից հետո՝ Երևանում) և նկարագրվել է ինչպես առանձին<sup>59</sup>, այնպես էլ ձեռագրում գտնվող պատմագրերից յուրաքանչյուրի հրատարակության մեջ<sup>60</sup>:

Ձեռագիրը բաղկացած է 564 թերթերից (502—503 թերթերի միջև գտնվող մի թերթ չի համարակալված: Վերջին երկու թերթը, ինչպես նաև 487 թերթը դատարկ են): Նյութ՝ թուղթ, մեծ. 25×19 (1—548 էջերը) և 25×18 (549—562 էջերը, որոնք սկզբնապես գտնվել են ուրիշ ձեռագրի կազմում): Գրադաշտ՝ երկսյուն: Տառածև՝ բոլորգիր, Տոկ 31—33 (1—548 էջերը) և 38 (549—562 էջերը): Պահպանակ՝ (1ա—բ էջերը) մագաղաթ, մեծ. 25×18: Ժամանակ՝ IX—X դդ. (?), բոլորագիծ երկաթագիր, բովանդակությունը՝ Ավետարան ըստ Ղուկասոս գլ. 2, տուն 34—45: Կազմ՝ կաշեպատ տախտակ դրոշմագրող, առաջին փեղկի արտաքին կողի վրա՝ պղնձյա երեք ելուններ: Կազմի աստառը դաշածո կտոր (կազմը և աստառը ժամանակակից են ձեռագրին):

«Սեբէոսի Պատմությունը» ձեռագրում գրվում է 488—548ա էջերը:

Սկիզբը. «Եւ եղև ոչ ի կամայական պիտոյից վարժ խուզակի զանստորա-

<sup>57</sup> Տե՛ս «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Ս. Պետերբուրգ, 1879, էջ 1:

<sup>58</sup> Տե՛ս ՄՄ, ձեռագրատան անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, գործ Մեքոպ Մագիստրոսի, № 45, էջ 63—64:

<sup>59</sup> Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Ղազար Փարպեցու ձեռագրերը, «Արարատ», 1901, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 548—549: Ն. Ալիևյան, Մատենագրական հետազոտություններ, հ. Բ, էջ 3—8 (Ալիևյանը հետազոտում ձեռագրին անդրադարձել է նաև այլ աշխատություններում): «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1965, էջ 843:

<sup>60</sup> Տե՛ս Ղազար Փարպեցի, Տփղիս, 1906, էջ Ե—Զ; Ագաքանգեղոս, Տփղիս, 1909, էջ ԺԴ: Մովսես Խորենացի, Տփղիս, 1913, էջ ԺԵ—ԺԶ; Սեբէոս, 1939, էջ Թ: Կորյուն, Երևան 1941, էջ 20—21 (Վիեննա, 1952, էջ ԽԱ), Եղիշե, Երևան, 1957, էջ XXXIV—XXXVI:

գրեալ ժամանակ և զնախնի քաջացն ձեռնարկելով դրոշմել վիպասանութիւնս» (488):

Վերջը. «...մինչև զաւրացաւ Մաւիաս եւ յաղթեաց ամենեցուն: Եւ հնազանդեցուցեալ ընդ ինքեամբ՝ եւ թագաւորէ ի վերայ կալուածոց որդւոցն Իսմայելի, եւ առնէ խաղաղութիւն ընդ ամենեսին» (548) :


Գ

«ՍԵՐԵՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՆՈՐԱԳՈՒՅՆ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեզ հասել են 1850—1852 թթ. ընթացքում № 2639 ձեռագրից ընդօրինակված 9 ձեռագիր: Ելնելով ընդօրինակման թվականներից ու վայրերից, ինչպես նաև ընդօրինակված տեքստի մանրամասնություններից, կարելի է ենթադրել, որ ձեռագրերից երկուսը (Մաշտոցի մատենադարան № 6454 և Լենինգրադի ձեռագիրը) ընդօրինակված են անմիջապես № 2639-ից, մնացած յոթ ձեռագրերից երկուսը (Մաշտոցի մատենադարան №№ 2935, 2867)՝ Ներսես Աշտարակեցու թիֆլիսյան մեզ չհասած ձեռագրից, մեկը (Մաշտոցի մատենադարան № 3122)՝ հավանաբար № 6454-ից, մեկը (Վիեննայի № 52)՝ Միհրդատյանի մեզ չհասած ձեռագրից, երեքը (Երուսաղեմի ձեռագիրը, Վիեննայի № 86-ի կեսը և հավանաբար Վենետիկի ձեռագիրը) Վիեննայի № 52 ձեռագրից:

№ 2639 ձեռագրից չի ծագում Մաշտոցի մատենադարանի Երիցյանի արխիվում պահվող հատվածական ընդօրինակությունը, որի մայր օրինակը մնում է անհայտ:

Ձեռագրերի ենթադրական ճյուղագրությունն ունի հետևյալ պատկերը.



Սրանցից Ներսես Աշտարակեցու և Թ. Միհրդատյանի օրինակները մեզ չեն հասել: № 2639-ը արդեն նկարագրեցինք: Մյուս 9 ձեռագրերի առանձին նկարագրությունը բերում ենք ստորև:

1. Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 2935:

Մեր հրատարակության մեջ «Բ» պայմանական անվամբ նշված սույն ձեռագիրն ընդօրինակված է 1850 թ. Թիֆլիսում, տարբեր գրիչների կողմից:

Արտագրված է, հավանաբար, ներսես Աշտարակեցու ձեռքին եղած այն օրինակից, որն ընդօրինակել է Թ. Միհրդատյանն իր հրատարակութեան համար:

Բաղկացած է 68 թերթից (թուղթ), մեծությունն է 35,5×22,5, տողերի քանակը՝ 29—40, կազմը՝ ստավարաթուղթ: Միասյուն, շղագիր:

1—7ա էջերն ընդօրինակել է Ներսես Տեր Բարսեղի Արովյանը, որը 7ա էջի վրա թողել է հետևյալ հիշատակարանը. «Ի սկզբէն ցաստ գրեաց ներսէս Տէր Բարսեղեան Աբովեան՝ աշակերտ Սարգիս իմաստասէր վարդապետի Հասան Զալալեան, ի 5-ն մարտի 1850 ամի ի Տփլիսի քաղաքի»:

Շարունակությունն ընդօրինակել են երկու այլ գրիչներ, հավանաբար՝ դարձյալ Ս. Հասան-Զալալյանի աշակերտները:

Ձեռագրի ստացողն է Ս. Հասան-Զալալյանը<sup>61</sup>, որն իր աշակերտների ընդօրինակած ձեռագիրը նվիրել է Մկրտիչ Եկենյանին: Այդ մասին բնագրի առաջին էջի ստորին լուսանցքում Ս. Զալալյանցը գրել է. «Ի նշան անտխեղծ սիրոյ ընծայեմ զայս պատմագիր արարեալ Եսոպոս եպիսկոպոսի պատուելի վարժապետ Մկրտիչ Եկենեան, Սարգիս վարդապետի Զալալեանց: 1851 ամի ի 26 սեպտ.»:

Կազմի աստուծի վրա կարդում ենք. «Ի գրոց Մկրտիչ վարժապետի Եկենեան, որում ընծայեաց ի նշան սուրբ սիրոյ, բարձր արժանապատիւ Սարգիս վարդապետ Զալալեանց 1851, ի 26 սեպտ. ի Նախիջևան: Յիշատակ ընտիր և անջնջելի յաւերժ»:

Սրա տակ ուրիշ ձեռագրով. «Զայս մատեան ձեռագիր, զոր գտի ի գիրս Յովհաննու Խաթրեան Նոր-Նախիջևանցու ու ստացայ ի նման է ի վայելումն անձին իմոյ, ահա նուիրեմ մատենագրարանի Ս. էջմիածնի: Երուանդ Յովակիմեան Շահագիգ—Կամսարական, 1899, 29 մայիսի ի Նոր Նախիջևան»:

Բնագրի սկզբում գրված վերնագիրն է. «Պատմութիւն Եսոպոս եպիսկոպոսի»: Բայց սա շեղում է № 2639 ձեռագրից, որը, ինչպես գիտենք, վերնագիր չունի: Մյուս բոլոր դեպքերում № 2935 ձեռագրի գրիչները կրկնում են № 2639 ձեռագրից ընդօրինակված իրենց գաղափար օրինակին, ընդհուպ մինչև 4 և 7 տողերի պակասը (որի լրացման համար, սակայն, գրիչն ազատ տեղ չի թողել): 50բ էջի վրա «Հոգիընկալ» բառի «Հ» զլխատառը նմանեցված է № 2639 ձեռագրի նույն տառի «Հ»-ին (որի նմանողությունը գրիչը գտել է իր գաղափար օրինակում):

Ընդօրինակությունը կատարելիս, հավանաբար Ս. Հասան Զալալյանի պատվերով, գրիչները կատարել են որոշ ուղղումներ, որոնք ցույց ենք տվել տարրնթերցվածքների բաժնում: 35բ և 36ա էջերի լուսանցքներում ծանոթագրված են «Տիգրանակերտ» և «Ծղուկ» տեղանունները:

## 2. Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 6454:

Մեր հրատարակության մեջ «Գ» պայմանական անունն ունեցող սույն ձեռագիրը չունի ո՛չ հիշատակարան, ո՛չ էլ խորագիր: Ընդօրինակման տեղն ու ժամանակը հայտնի չեն: Ելնելով այն ընդհանուր փաստից, որ № 2639 ձեռագիրն սկսել է ընդօրինակվել միայն Շահխաթունյանցի մահից (1849 թ.) հետո, պետք է ենթադրել, որ սույն ձեռագիրը նույնպես ընդօրինակվել է

<sup>61</sup> Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրաց ցուցակում (Ա. հատոր, էջ 905) ձեռագրի ստացող սխալմամբ համարվել է Մկրտիչ Եկենյանը:



1849-ից հետո, 1850—1852 թթ. ընթացքում, մինչև Միհրդատյանի տպագրության հայտնի դառնալն ու լայն տարածում գտնելը, որը տեղի է ունեցել 1852 թ.: Այս թվականի մասին են վկայում «Եվրոպա», «Մասիս», «Նոյեան Աղանի» թերթերը, որոնք բոլորն էլ Միհրդատյանին արձագանքել են 1851-ից հետո: Իսկ «Journal asiatique de Constantinople» հանդեսի 1852 թ. հունվարի համարում «Սեբեոսի Պատմությունը» դեռևս կոչված է «անտիպ գործ» (էջ 75):

Անհայտ գրչի ձեռքով արտագրված (շղագիր, միասյուն) այս թղթյա ձեռագրի ընդօրինակությունը կատարվել է հավանաբար էջմիածնում, անմիջապես № 2639 ձեռագրից: Այդ մասին է վկայում այն փաստը, որ սա մեզ ծանոթ միակ ձեռագիրն է, որ ունի № 2639 ձեռագրի լուսանցքներում պահպանված գլխահամարները: Դարձյալ մայր օրինակին հետևելով, գրիչը երկու տեղ բաց է թողել ազատ տարածություններ, որպեսզի հետագայում լրացվեն № 2639 ձեռագրում բացակայած 4 և 7 տողերը: 6ա էջում գրված է աստղանիշ և ծանոթագրված. «Չորս տող պակաս էր յօրինակին»: 6բ էջում. «Եօթն տող պակաս էր յօրինակին»: Պակասը հետագայում չի լրացված:

Գրիչը չի արտագրել № 2639 ձեռագրի լուսանցքներում նշված որոշ միավորներ, որոնցից են «Այս խոսքով որ կոչեցաւ Անուշըռուան» բառերի դիմաց կարմիր տառերով գրված «է» թվագիրը և Մողեստոսի՝ Կոմիտասին ուղղած նամակի դիմաց՝ «առ տէր Կոմիտաս» բառերը: Չի արտագրել նաև Անանունի հատվածի ամենավերջին բառերին («բարձաւ տերութիւնն Պարսից, որ կալաւ Շլիւ ամ»): Հաջորդող «Ե» տառը, որի նշանակությունը ձեռագրում դարձյալ հայտնի չէ: Նշված տառերի («է» և «Ե»), ինչպես նաև ԺԱ—ԺԲ գլխահամարների բացթողումը ընդհանուր երևույթ է գրեթե բոլոր ընդօրինակությունների համար:

Ձեռագիրը խաշիկ վարդապետ Դադյանի երկրորդ հավաքածուի ձեռագրերից է և կրել է 26-րդ համարը: էջմիածնի մատենադարան է ներմուծվել 1920 թ.: Մեծությունն է 21×17, թերթ՝ 81, տող՝ 26, կազմը՝ սովորաթուղթ:

Ձեռագրի կարևոր տարրնթերցվածքները նշել ենք տողատակի տարրնթերցվածքների համապատասխան տեղերում:

### 3. Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 2867:

Մեր հրատարակության մեջ «Դ» պայմանական անունը կրող սույն ձեռագրի ընդօրինակության տեղն ու թվականը հայտնի չեն: Արտագրված պետք է լինի 1850—1852 թթ. (տե՛ս նախորդ՝ № 6454 ձեռագրի նկարագրությունը):

Բաղկացած է 78 թերթից (թուղթ), մեծությունը՝ 33,7×21,5, տող՝ 28—38, միասյուն, շղագիր, կազմը սովորաթուղթ:

Ձեռագրի շապիկի վրա գրված է «Պատմութիւն «Սեբեոսիանոսի», այնուհետև մեկը շնչել է «Սեբեոսիանոս» անունը և ուրիշ թանաքով գրել «Սեբէոսի»:

Ձեռագիրը ենթարկվել է սրբագրման, սեղ-տեղ շնչված են բնագրի ընթերցումները և նրանց վրա ավելացվել են սրբագրողի կարծիքով ճիշտ ընթերցվածքներ, որոնք երբեմն խակապես ճիշտ են: Օրինակ, Սմբատ Բագրատունուն նվիրված ԺԸ գլխում ասվում է «տայ ի նմա զմարզպանութիւն»: № 2639 ձեռագրի գրիչը գաղափար օրինակի երկաթագիր «Տ»-ն «Մ»-ի հետ շփոթելով «տայ»-ի փոխարեն գրել է «մայ»: № 2867 ձեռագրի գրիչն իր ձեռա-

գրում ուղղել է այս վրիպակը: Բանասիրական արժեք ունի նաև «զանստարագրել» վրիպակի սրբագրությունը «զանստորագրեալ» ճիշտ ընթերցմամբ: Ձեռագիրն ընդօրինակվել է որոշ բացթողումներով, որոնք հետագայում լրացրել է մեկ ուրիշը: Վերջինս չի լրացրել հիշյալ 4 և 7 տողերի պակասը: Ինչպես երևում է, նա դեռևս ծանոթ չի եղել Միհրդատյանի հրատարակությանը, որի մեջ այդ տողերը լրացված են:

Ձեռագիրը պատկանել է Տայոց և Տիդիսեաց առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսին և էջմիածնի մատենադարան է ներմուծվել 1869 թ. Ախալցխայից: Գևորգյան հավաքածուի մեջ է մտել 1881 թ.:

#### 4. Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 3122:

Մեր հրատարակության մեջ «Ե» տառով նշված այս ձեռագիրն ընդօրինակված է 1852 թ., Երևանում: Այդ մասին տետրակի վերջում կարդում ենք. «Ոսկան Տէր Գէորգեան Յովհաննէսեանց, 10 յունվարի 1852 ամի, Երևան»:

Մեր մատենադարանում պահվում են նաև 5 այլ ձեռագրեր ընդօրինակված միևնույն գրչի ձեռքով (Ղևոնդ, Ուխտանես, Ասողիկ, Միխայել Ասորի, Վարդան Արևելցի): Այսուհանդերձ, «Սեբեոսի Պատմության» ձեռագիրը շատ անհաջող և բազմաթիվ սխալներով ընդօրինակություն է, որը սրբագրել է հավանաբար Մկրտիչ էմինը:

Շապիկի վրա. «Պատմութիւն Հայոց և կայսերն Յունաց մեծին Հերակլի արարեալ ի Սեբէոս եպիսկոպոսէ Հայոց, բովանդակեալ յԳԺ տետր»: Ձեռագրի վերջին էջի վրա թանաքով ջնջված է երկու տող, որի տակ կարդացվում է. «Անզոյգ բարերարիս Մկրտիչ Յովհաննեսեանցին Գրիգոր եպս. աշակերտ»:

Կաղմին փակցված պիտակի վրա գրված է. «Պատմութիւն Սեբէոս եպիսկոպոսի բառածալ, շաղագիր օրինակեալ ի ձեռն Յովհ. Ոսկանայ Տէր Գէորգեան Յովհաննեսեանց, յամի 1852 յԵրևան հանդերձ բաղդատութեամբ ինչ ինչ բառից և բանից»:

Բաղկացած է 100 թերթից (թուղթ): Մեծություն՝ 22,2×17,5, միասյուն, շղագիր, տող՝ 16—29, կազմ՝ ստավարաթուղթ:

#### 5. ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի ձեռագիր:

Արտագրված է Հովհաննես Շահխաթունյանցի մահվան հենց հաջորդ տարին՝ 1850 թ.: Ընդօրինակությունը կատարվել է անմիջապես № 2639 ձեռագրից: Պատվիրատուն մեր կարծիքով Մ. Բրոսեն է, որը ձեռագրի կազմի վրա թողել է հետևյալ մակագրությունը. „Histoire présumée écrite par Sébéos, eveque arménien des Bagratides, au VIII<sup>e</sup> S., copiée sur le m-it *unique*. d'Edchmiadzin, № 5 du Catalogue des m-its historiques de ce couvent, 1850. L'écrivain ne se nomme nulle part dans le cours de l'ouvrage, mais il s'exprime comme un contemporain. C'est le p. Jean Chakhato-unof qui présume avec beaucoup de probabilité que ce doit être l'évêque Sébéos, cite plusieurs fois dans l'Histoire de Jean Catholicos, postérieur

de quelque 200 ans. V. la Description d'Edchmiadzin... par J. Chakhatounof<sup>62</sup>.

Սա «Սեբեոսի Պատմության» հնագույն ձեռագրից արտագրված ընդօրինակություններից առաջինի մակագրությունն է, այդ իսկ պատճառով էլ քաղեցինք ամբողջությամբ:

ՍՄՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի հայերեն ձեռագրերի անտիպ ցուցակի հեղինակ Կ. Ն. Յուզբաշյանը մեզ տրամադրել է ձեռագրի նկարագրությունը, որից և քաղում ենք հետևյալը:

Ձեռագիրը վերնագիր չունի: Ընդօրինակված է № 2639 ձեռագրից 1850 թ.: Այս թվականին էլ մուտք է գործել Ասիական թանգարան: Կազմի վրա՝ Մ. Բրոսեի մակագրությունը (տե՛ս վերը): Նրա ձեռքով էլ գրված է վերնագիրը: Մեծություն՝ 34,8×21,6, թուղթ՝ 47, տող՝ 34, 36, 39: Տեքստի շափը՝ 28,5×17, շղագիր, սև թանաք, Ասիական թանգարանի կազմը ստավարաթղթյա՝ 35,5×22,5, կազմի վրա. „Histoire par Sébéos“: Ձեռագրի միկրոֆիլմը պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում (№ 324):

## 6. Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 52:

Մխիթարյան միաբանության մատենադարանում պահվող սույն ձեռագիրն ընդօրինակված է 1851 թ. Կոստանդնուպոլսում, Սերովբե Պետրոսյանի ձեռքով: Ընդօրինակությունը կատարված է մեր մատենադարանի № 2639 ձեռագրից արտագրված մի օրինակից, որը եղել է հավանաբար Միհրդատյանի օրինակը (հմմտ. Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, հ. Բ, Վիեննա, 1924, էջ 10): Մխիթարյանները № 52 ձեռագիրն ստացել են 1852 թ., որի մասին ձեռագրի կազմի ներքին կողմն գրված է. «Առաքեաց ի Կոստանդնուպոլսոյ Վ. Հ. Պողոս Յովնանեանց, 1852» (Ձեռագրի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ տե՛ս Հ. Տաշյանի ցուցակում, էջ 249—250):

Ձեռագիրն ընդօրինակողը հետևելով իր գաղափար օրինակին, «Սեբեոսի

<sup>62</sup> Բրոսեի մակագրության առաջին հիշատակությունը գտնում ենք Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրատան անտիպ ձեռագրացուցակների հավաքածուում (Մեքոպ Մագիստրոսի ֆոնդ, № 45, մատենագիտությունը, Սեբեոս, էջ 63—64): Այստեղ ձեռագիրը նկարագրված է որպես Պետրոսյանի Ասիական թանգարանի հայկական № 6 ձեռագիր: Բրոսեի մակագրությունը աննշան շեղումներով թարգմանված է այսպես. «Պատմութիւն կարծեօք գրեալ Սեբէոսի եպիսկոպոսի հայոց Բագրատունեաց, յեթներորդ դարու, ընդօրինակեալ մի եւ եթ ձեռագրէ վանացն էջմիածնի, համարաւ 5, յամին տեառն 1850: Հեղինակն ոչ ուրէք յիշատակէ զինքն, միայն ցուցանէ որպէս ակնատես պատմութեան: Հ. Յ. Շահաթունեանն է, որ մեծաւ հաւաստեօք ընդունէ, որ հեղինակն է եպիսկոպոսն Սեբէոս, քանի մի անգամ յիշատակեալ ի Պատմութեան Յոհաննու կաթողիկոսի, որ երկու հարիւր ամաւ (?) կեայր»:

Բրոսեն իր տպագիր երկում («Rapports», p. 49) նույնպես հայտնում է, թե Սեբեոսի անունը մի քանի անգամ հանդիպում է Հովհաննես Դրասխանակերտցու մոտ («son nom se retrouve plusieurs fois chez I. Catoliq»): Բայց սա թյուրիմացություն է: Դրասխանակերտցին իրականում շատ է օգտվել Սեբեոսից, բայց երբեք չի հիշատակել նրա անունը: Ֆրանսիացի գիտնականը Սեբեոսին մեքենայաբար շփոթել է Շապուհ Բագրատունու հետ: Եվ հիրավի, Դրասխանակերտցին մի քանի անգամ հիշատակում է Շապուհին և օգտվում նրանից: Բրոսեի շփոթը առաջին անգամ նկատել է Վիեննայի № 86 ձեռագրի գրիչ Հ. Պողոս վ. Հովնանյանը (տե՛ս Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 346):

Պատմութեան» բնագիրը բաժանել է 50 գլուխների, որի հիման վրա Ն. Ակինյանը, Ստ. Մալխասյանցը և ուրիշներ հայտնել են զանազան ոչ ճիշտ կարծիքներ: Բուն № 2639 ձեռագիրը, սակայն, 50 գլուխների չի բաժանված և ունի տարբեր գլխակարգում (տե՛ս № 2639 ձեռագրի մեր նկարագրութունը):

«Այս Խոսքով որ կոչեցաւ Անուշ Ընուան» բառերի դիմաց, ձեռագրի լուսանցքում կարմիր թանաքով գրված է № 2639 ձեռագրում նույնպես առկա «է» թվագիրը, որը իրականում գլխահամար չէ և որի հիման վրա Տաշյանն իր ցուցակի 249-րդ էջում սխալմամբ գրում է. «Ուստի հայտնի է, որ շփոթմամբ մոռցվել է Սեբեոսի «Նախերգանին» ն, և առաջին գլխուն 2 բաժանումը դնել լուսանցքի վրա»:

Գաղափար օրինակից արտագրութունը կատարված է տառացի հարազատութեամբ, ընդհուպ մինչև գրչական վրիպակները («նաև ի յայտնի սխալանախակ բառից և տառից»), ուստի մենք այս ձեռագրի հետ համեմատութուններ չենք կատարել:

Ձեռագրի գրիչը՝ Սերովբե Պետրոսյանը, շնայած հիշատակարանում հայտնում է, թե «Օրինակ մեր էր գրեալ ի թուին ՌՃԻԱ, ի Բաղէշ, ի վանս Յովհաննու Կարապետի, ձեռամբ Գրիգոր երիցո», բայց, ինչպես ասացինք, ընդօրինակութունը կատարված է ոչ թե անմիջապես № 2639 ձեռագրից, այլ՝ նրա ընդօրինակութունից: Այս ընդօրինակութեան հեղինակը բնագրի վրա կատարած է եղել զանազան սրբագրութուններ, որոնք և ընդօրինակել է նաև Սերովբե Պետրոսյանը, որն այդ մասին գրում է. «Եւ զի ումեմն սրբագրեալ էր զսա ի բազում տեղիս, բայց առանց եղծանելոյ զբնաբանն, մեք զնորա կարծիս դուն ուրեք եղաք ի լուսանցսն եւ ուրեք ի բնարանին առաք բոլորգրով ի փակագծի» (տե՛ս Տաշյան, Յուցակ..., էջ 250); № 52 ձեռագրի խորագիրն է. «Սեբեոսի Հայոց եպիսկոպոսի Պատմութիւն ի Հերակլ կայսր»: Եթե սա քաղված է գաղափար օրինակից. կնշանակի այդ օրինակի հեղինակի ներմուծումն է, որովհետև № 2639 ձեռագիրը, ինչպես գիտենք, խորագիր չունի: Այս ձեռագրի արտագրութունն է նաև Երուսաղեմի ձեռագիրը:

#### 7. Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 86:

Սա ոչ թե «Սեբեոսի Պատմութեան» բնագրի ամբողջական ընդօրինակութունը պարունակող ձեռագիր է, այլ Վիեննայի նախորդ՝ № 52 ձեռագրի և մեկ այլ ձեռագրի (Ա. Մատիկյանի կարծիքով՝ «Մարմաշինու օրինակի»: Տե՛ս «Անանունը կամ Կեղծ-Սեբեոս», Վիեննա, 1913, էջ 71) միմյանցից տարբերվող տեղերի համեմատութեամբ, որը կատարել է № 52 ձեռագիրը Կ. Պոլսից 1852 թ. Վիեննա ուղարկած վերոհիշյալ վարդապետը՝ Պողոս Հովնանյանը: Համեմատութունը կատարված է 1851 թվականին Կոստանդնուպոլսում և Վիեննա է ուղարկված № 52-ի հետ միասին, 1852 թվականին (Տե՛ս Տաշյան, Յուցակ..., էջ 345):

Ձեռագրի էջերը բաժանված են երկու սյունակի, որոնցից առաջինի վրա գրված են № 52 ձեռագրի էջերը, իսկ երկրորդի վրա՝ մյուս ձեռագրինը: Առաջին սյունակն սկսվում է այսպես. «էջ 3, տող 1 (սա № 52 ձեռագրի էջն ու տողն է—Գ. Ա.) 1. Պատմութիւն Հերակլի կայսեր»: Սա մյուս ձեռագրի վերնագիրն է, որի դիմաց՝ երկրորդ սյունակում գրված է № 52 ձեռագրի խորագիրը. «Սեբեոսի Հայոց եպիսկոպոսի Պատմութիւն ի Հերակլ կայսր»: Այս եղանակով

33 թղթից բաղկացած ամբողջ ձեռագրում նշված են երկու ձեռագրերի տարբերությունները, որոնք «բավական նշանավոր են, վասն զի ինչպես կան լուկ բառի կամ ընթերցման ու գրության տարբերություններ, կան նաև տողեր-տարբեր» (Տաշյան, Յուցակ..., էջ 346):

Այս տարբերություններից կարևորները Մալխասյանցը նշել է իր հրատարակության տողատակային տարբերությամբների բաժնում, որտեղից և մենք քաղել ենք մեր հրատարակության տարբերությամբները: Որոշ տարբերությամբներ էլ ցույց են տվել Ա. Մատիկյանը (նշված աշխատություն, էջ 73—91) և Ն. Ակիսյանը («Մատենագրական հետազոտություններ», Վիեննա, 1924, էջ 75—78) և ուրիշներ: Այդ տարբերությամբները հիմնականում հանդիպում են նաև մեր մատենադարանում պահվող նորագույն ընդօրինակություններում և բնագրական առանձին արժեք չեն ներկայացնում:

№ 86 ձեռագրի ավելի մանրամասն նկարագիրը տե՛ս Տաշյանի Յուցակում, էջ 345—347:

### 8. Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի ձեռագիր № 521:

Ընդօրինակված է 1851 թ. Կ. Պոլսում: Նկարագրված է «Երուսաղեմի ձեռագրաց մայր ցուցակում» (հ. II, կազմեց Նորայր եպոս. Պողարյան, Երուսաղեմ, 1964, էջ 524—525): «Մավալ՝ 22×18×2: էջք 191+72+93: Հանգամանք լավ: Թուղթ հասարակ: Գրիչ Սերովբէ Պետրոսեան: Գրություն սևորակ մելանով, միասյուն, 25 տող, էջ 4—72՝ 27 տող: Նոտր շեղագիր: Կազմ՝ կիսալաթ խավաքարտյա: էջ 3.—Սեբէոսի հայոց եպիսկոպոսի Պատմութիւն Ի Հերակլ կայսր... Հմմտ. Տպ. Կ. Պոլիս, 1851»: Այնուհետև հաջորդում է Սերովբէ Պետրոսյանի հիշատակարանը, որը նույնն է, ինչ Վիեննայի № 52 ձեռագրինը (Տե՛ս Տաշյան, Յուցակ..., էջ 249—250):

Այս ձեռագրի արտագրողը այն միևնույն Սերովբէ Պետրոսյանն է, որն արտագրել է նաև Վիեննայի մատենադարանի № 52 ձեռագիրը: Տե՛ս վերը այդ ձեռագրի մեր նկարագրությունը:

### 9. Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 745:

Սույն ձեռագիրը գրանցած մեզ ծանոթ առաջին ցուցակը Մեսրոբ Մագիստրոսի կազմած անտիպ ցուցակն է (Մաշտոցի մատենադարան, անտիպ ձեռագրաց ցուցակների հավաքածու, էջ 63—64), որի մեջ, սակայն, մանրամասնություններ չեն հայտնվում: Ձեռագիրն ընդօրինակված է հավանաբար 1850—1852 թթ.: Ունի հետևյալ վերնագիրը. «Սեբէոսի Հայոց եպիսկոպոսի Պատմութիւն Հիերակլի կայսր» (Հմմտ. Անանյան, նշված աշխ., էջ 7):

Ի

«ՍԵՅԵՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՊԱՏՄՈՒԿԸ, ԿԵՍԱՏ ՁԵՌԱԳԻՐԸ ԵՎ ՄԱՆԻ  
ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՍԿԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Ա. Հիշյալ ձեռագրերից բացի մեզ են հասել նաև XVI դարում ընդօրինակված անհայտ մի ձեռագրից պոկված մեկ թերթանոց մի պատառիկ (Մաշտոցի անվան մատենադարան, պատառիկների հավաքածու, պատառիկ № 1343), որն ընդգրկում է սկսած «Նւ բարձին զմարմին նորա և տարան քաղեցին առ»

հաւրն իւրում ի Դարիւնս<sup>63</sup>: Եւ զորդի նորա, որում անուն էր Սմբատ» բառերից մինչև հաջորդ գլխի սկզբի «մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին» բառերը ներառյալ:

Պատառիկի մեջ պահպանվել են մի երկու նախադասութիւն, որոնք պակասում են մեզ հասած մյուս բոլոր ձեռագրերում: Դրանցից կարևորները «Թէոդորոս զարու իւրով և յարձակեցաւ ի վերայ նոցա» բառերն են, որոնց մեջ պահպանվել է արաբների դեմ հարձակված հայոց զորավար Թեոդորոսի (Ռշտունու) անունը:

Բ. Պահպանվել է նաև «Սեբեոսի Պատմութեան» վերջին ինը գլուխների (սկսած «Իսկ գազանն շորորդ ահեղ և զարմանալի, և ժանիք նորա երկաթիք, և մագիլք նորա պղնձիք» բառերից մինչև «Սեբեոսի Պատմութեան» վերջը) ընդօրինակութիւնը:

28 թերթից (թուղթ) բաղկացած այս մասնակի ընդօրինակութիւնը (շղագիր, միասյուն) կատարվել է անցյալ դարում, դարձյալ հավանաբար 1850—1852 թթ.: Նրա սկզբի մասը կորել է, իսկ պահպանված մասը, մեծ շափսերի մի տետր, պահվում է Մաշտոցի անվան մատենադարանի դիվանատանը (Երիցյանի արխիվ, թղթ. 153, վ. 124): Չունի վերնագիր:

Վերջին մի քանի էջը ընդօրինակված է ուրիշի ձեռքով: Մի երրորդ անձնավորութիւն սրբագրել է ընդօրինակողների սխալները:

Որոշ տարբերութեան հիման վրա կարելի է ենթադրել, որ ընդօրինակութեան համար հիմք է ծառայել մեզ հասած բոլոր մյուս ձեռագրերից տարբերվող մի մայր օրինակ: Ընթերցվածքներից ամենակարևորը վերաբերում է բյուզանդական կայսր Կոստանդ 2-րդի և Թեոդորոս Ռշտունու բանակցութիւններին: Մեզ հասած բոլոր ձեռագրերում կայսրն առաջարկում է հայերին տալ «օրհնութիւն հոռգի»: Սա վրիպակ է: Սրա փոխարեն Երիցյանի արխիվում պահվող հատվածական ընդօրինակութիւնն ունի. «օգնութիւն հոռգի»: Այսպես են տպագրել բոլոր հրատարակիչները, սկսած՝ Միհրդատյանից, որը, ինչպես երևում է, ինչ-որ կողմնակի աղբյուրից ծանոթ է եղել սույն ճիշտ ընթերցմանը:

Մի ուշագրավ ընթերցում էլ գտնում ենք Դավանութեան թղթում: Մեզ հասած բոլոր ձեռագրերում և տպագրերում քրիստոնեական եկեղեցու նշանավոր գործիչներից մեկը՝ Թեոփիլեսը կոչված է «Ճարտարապետ» («Ի քաջէն Թէոփիլէ՛ ի մեծ ճարտարապետէն սկսեալ... և միանգամայն ընդհանուր ամենայն վարդապետաց եկեղեցւոյ...»): Սրա փոխարեն Երիցյանի արխիվում պահվող հատվածական ընդօրինակութիւնն ունի «հայրապետ» բառը («Ի մեծ հայրապետէն սկսեալ»):

Գ. Դարձյալ Դավանութեան թղթից մի հատված ընդօրինակված ենք գտնում Մաշտոցի անվան մատենադարանում պահվող թղթյա հնագույն ձեռագրում (էջ 193—194), որն արտագրված է 981 թ. և կրում է 2679 համարը:

Հատվածը, որը 1902 թ. նկատել է Գ. Տեր-Մկրտչյանը<sup>64</sup>, սկսվում է Դավանութեան թղթի «Եւ մեզ մի լիցի պարծել, բայց միայն ի խաչն տեառն մերոյ

<sup>63</sup> Ընդգծված բառերը պատահիկում չկան, մաշվել, ընկել են: Մեր օգտագործելուց հետո պատահիկը վերանորոգվել է, որի հետևանքով տուժել են պատառիկի ծայրերում գտնվող որոշ տառեր:

<sup>64</sup> Գ. Տեր-Մկրտչյան, Ստեփանոս Իմաստասեր, արտատպված 1902 թ. «Արարատի» մարտ-ապրիլ ամիսների համարներից, էջ 35, ծան.:

Յիսուսի Քրիստոսի» բառերից և ընդգրկում է մինչև «ըստ այնմ, թէ «Ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ ոչք գործեք զանաւրենութիւն» բառերը ներառյալ:

Թղթյա ձեռագրում զետեղված այս քաղվածքի մեջ պահպանվել են բնագրական որոշ միավորներ, որոնք բացակայում են մեզ հասած բոլոր ձեռագրերում: Դրանցից ամենակարևորները Թէանովի մանրապատումի ճշգրիտ ընդօրինակութիւնն է, ինչպես նաև՝ «դոր ոչ Սերովբէն իսկ ձեռաւքն՝ համարձակէր մերձենալ» արտահայտութիւնը, որով լրացրել ենք ձեռագրերում ու նախկին հրատարակութիւններում կիսատ մնացած նախադասութիւնը:

Գ. «Սեբեոսի Պատմութիան» մի հատված գտնում ենք ընդօրինակված նաև Մաշտոցի անվան մատենադարանի № 1912 (էջ 175բ—178ա) և № 993 (էջ 511բ) ձեռագրերում: Առաջինն ընդօրինակված է 1220 թ., երկրորդը՝ 1456: Այս ձեռագրերում պահպանված հատվածը գրեթե կրկնակի անգամ ավելի ընդարձակ է, քան «Սեբեոսի Պատմութիան» ձեռագրերի կազմում մեզ հասած հատվածը: Ավելի մանրամասն՝ այդ ձեռագրերին վերաբերող ծանոթագրութիւններում:

Ե. «Սեբեոսի Պատմութիւնից» և Անանունից քաղված մեկական նախադասութիւն աննշան աղճատմամբ ընդօրինակված ենք գտնում նաև Մաշտոցի անվան մատենադարանի № 1898 ձեռագրի 253բ էջում: Զեռագիրն ընդօրինակված է XIII դարում և մեծ ծառայութիւն է մատուցում հիշյալ երկու քաղվածքների բովանդակութիւնը բուն «Սեբեոսի Պատմութիան» մեջ և Անանունի հատվածում ճշգրտելու և լուսաբանելու գործում:

Նշված ձեռագրերից և հատվածական ընդօրինակութիւններից բացի որևէ այլ ձեռագիր մեզ ծանոթ չէ<sup>65</sup>:

<sup>65</sup> Մաշտոցի անվան մատենադարանում (ձեռ. № 948, էջ 66բ—72ա, 103բ—110ա, ընդօրինակված 1196 թ.) պահպանվել են Սեբեոսի անունը կրող երկու ճառեր, որոնք կապ չունեն «Սեբեոսի Պատմութիան» և նրա հեղինակի հետ: Մեզ թվում է սրանք հունարենից թարգմանված ճառեր են: Ավելի մանրամասն տե՛ւ մեր հոդվածը («Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 438, ծան. 51):

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ա. Ձեռագրեր

- Ա—ձեռ. № 2639 (1672 թ.):  
Բ—ձեռ. № 2965 (1850 թ.):  
Գ—ձեռ. № 6454 (1850—1852 թթ.):  
Դ—ձեռ. № 2867 (1850—1852 թթ.):  
Ե—ձեռ. № 3122 (1852 թ.):  
Երից—Երիցյանի արխիվում (թղթ. 153, վ. 124) պահվող հատվածական ընդօրինակությունը—  
(մինչև 1852 թ.):  
Զ—ձեռ. № 2679 (981 թ.), հատվածական ընդօրինակություն:  
Զամ—Զամինյանի սրբազրույթյունները, որոնք պահվում են անհատական արխիվների ֆոնդում  
(թղթ. 232բ, վ. 133):  
Հ—Միհրդատյանի օգտագործած և այժմ կորած հին ձեռագիրը (XVI դար):  
ՉՉ—բոլոր ձեռագրերը:  
ՄՄ—ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ—  
Մատենադարան:  
Պատառ—պատահիկ № 1343 (XVI դար):  
Վ—Վիեննայի ձեռ. № 86 (1851 թ.):

### բ. Տպագիրներ

- Բոլ—բոլոր տպագիրները և ձեռագրերը միասին:  
Մալլս—Սեբեթոսի եպիսկոպոսի Պատմութիւն, շորրորդ տպագրութիւն, բաղդատութեամբ ի ձեռն—  
Ստ. Մալխասեանց, Երևան, 1959: Սույն հրատարակությունը նշված է նաև ՍԵՊ համառոտա-  
գրութեամբ:  
Միհրդ.—Պատմութիւն Սեբեթոսի եպիսկոպոսի ՚ Հերակլին (հրատ. Թ. Միհրդատյանի), Կոստանդնու-  
պոլիս, 1851:  
Պատկ—Պատմութիւն Սեբեթոսի եպիսկոպոսի ի Հերակլին (և սկիզբն նորագիտ Պատմութեան  
Մխիթարայ Անեցոյ), ի լոյս ած Ք(էրովբէ) Պ(ատկանեան), Ս. Պետրբուրգ, 1879:  
ՏՏ—«Սեբեթոսի Պատմությունը» պարունակող բոլոր տպագիր հրատարակությունները:  
Малх.—История епископа Себеоса, перевел с четвертого исправленного армянского  
издания Ст. Малхасянц, Ереван, 1939.  
Патк.—История императора Иракла, сочинение епископа Себеоса, писателя VII ве-  
ка. Перевод с армянского. [Перевел К. Патканьян]. Санктпетербург, 1862.  
Hübsch.—Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber. Aus dem Ar-  
menischen des Sebeos. [Übersetzt von] Dr. Heinrich Hübschmann, [Leipzig,  
1875].  
Macl.—Histoire d'Heraclius par l'évêque Sebêos, traduite de l'arménien et annotée par  
Frédéric Macler, Paris, 1904.  
«Հ. ամս.»—«Հանդէս ամսօրեայ»:



ՊԱՏՄՈՒԹՒՒՆ ՍԵՖԷՈՍԻ

խոստաբանութիւն յառաջիկայ պատմութեանց: Մատեանն Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացոյ: Ագաթանգեղեան արձանագրութիւն: Հայկ եւ Բէլ: Պայագաաֆ Հայկայ: Շամիրամ եւ Արայ Գեղեցիկ: Հայֆ ընդ իշխա-  
5 նութեամբ Ասորեստանեայց, Մարաց եւ Մակեդոնացոց մինչեւ ցամ-  
բարձումն Պարթեւաց:

488ա Եւ եղև ոչ ի կամայական պիտոյից վարժ խուզակի<sup>1</sup> զանստորագրեալ<sup>2</sup> ժամանակ և զնախնի քաջացն ձեռնարկելով դրոշմել վիպասանութիւնս, զիմն<sup>3</sup> յիշատակել զառասպելս, և ի նոյն շարագրելով ասացից զառ ի  
10 յապայսն եղելոյ. և ցուցից համառատիւք զարդեաց ժամանակացս զա-  
ղետիցս վերաբերութիւն<sup>4</sup> զամս և զաւուրս հին<sup>5</sup> թագաւորացն յիշա-  
տակելով:

Անդ<sup>6</sup> հայելով ի մատեանս Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացոյ<sup>7</sup>, զոր եզիտ դրոշմեալ ի վերայ արձանի<sup>8</sup> ի Մծբին<sup>9</sup> քաղաքի, յապարանսն  
15 Սանատրուկ արքայի, հանդէպ դրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայենիցն:

Քանզի զսինս տաճարին այնորիկ խնդրեալ ի դուռն արքային Պար- սից, և բացեալ զաւերածն վասն սեանցն՝ աստ դիպան<sup>10</sup> արձանագրին, դրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հին<sup>11</sup> թագաւորացն Հայոց և  
20 Պարթեւաց յունարէն դպրութեամբ. զոր իմ գտեալ ի Միջագետս ի նորին աշակերտացն<sup>12</sup> կամեցայ ձեզ զրուցակարգել. քանզի այս<sup>13</sup> ունէր վերնա-  
գիրն այսպէս.—

«Ես Ագաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդա-  
25 տայ՝ առեալ ի դիւանէ արժունի»<sup>14</sup>: Զոր փոքր մի և ապա յիւրում տեղւոջն տեսցես զպատճենն:

1—6 Այս և հաջորդ բոլոր խորագրերը հեղինակային չեն. քաղել ենք Ստ. Մալխասյանցի հրատարակւոյթյունից (հատուկենտ բացառւոյթյուններ կնշվեն իրենց տեղերում):

7 Հ, Ա, Բ զանստորագրել, Գ զայնստորագրել, Դ, Ե զանստորագրել: Տե՛ս ծան. 2:

8—9 Ա.—Ե վիպասանութիւն Ե յիշատակելով զառասպելութիւն

11 Բոլ. վերաբերութեան: Տե՛ս ծան. 4:

12 Բոլ. հինգ փխ. հին: Տե՛ս ծան. 5:

13 Մալխ. անդր Միհրդ, Մարաբայ Մալխ. մատեանն Ա, Գ Մծուրնացոյ

14 Ա, Բ Մծբին

15 Ե Սանատրուք Ե չիք դրան

18 ԶԶ, Միհրդ., Պատկ. ըստ դիպան փխ. աստ դիպան, Մալխ. ըստդիպան: Տե՛ս ծան. 10:

19 Բոլ. հինգ փխ. հին. Տե՛ս ծան. 5 և 11:

20—21 Ա.—Ե չիք ի Միջագետս (որը գտնվել է Հ ձեռագրում): Ա կամեցա

21 Բոլ. այսու: Տե՛ս ծան. 13:

Բայց ես նախ առաջին<sup>15</sup> զվէպս յահեղն արքայ և յարին այրն սկսայց ասել, նախ զնախնեացն պատմութիւնս, ուստի եղև սկիզբն ամենայն երկրի շինուածոյ լրմանց. և անտի ի սոյնս պատուաստելոյ յաւրել զգրուցակարգութեան վէպս հսկայագանցն և զառասպելս ունայնս անհանձար զաւրացն<sup>16</sup>. զոր ի մեծ երկանցն աշտարակին<sup>17</sup> յղութիւն ծնանելով ցրէր ընդ մեծ անապատ անթիւ, որ ի կայս անլուրս ձայնից անդադար ի վերայ առն ընկերի առնոյր սուրն Տիտան. յորում առաջին թագաւորեաց ի վերայ երկրի:

Եւ Բէլն Տիտանեան<sup>18</sup> ի վեր կարծէր զինքն քան զամենայն ազգս մարդկան, զիրն ոչ ճանաչելով զբնութիւն, այլ զամենայն ազգս մարդկան ի ծառայութիւն իւր կոչէր: Ապա//յայնմ ժամանակի Հայկն Աբեթածին ոչ կամեցաւ հնազանդել ի ծառայութիւն Բելայ արքայի. արհամարհեաց զնա աստուած կոչել: Անդ Բէլ ի վերայ Հայկին յարձակեալ մարտի, իսկ Հայկն արի՛ աղեղամբ հալածեաց զնա:

Արդ՝ այս է Հայկն, որ ծնաւ զԱրամենակ զորդի իւր ի Բաբելոն: Եւ ծնաւ Արամենակ ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Արամայիս: Եւ ծնաւ Արամայիս ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Ամասիա: Եւ ծնաւ Ամասիա ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Գեղամ: Եւ ծնաւ Գեղամ ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Հարմայ: Եւ ծնաւ Հարմայ ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Արամ: Եւ ծնաւ Արամ ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Արայն Գեղեցիկն:

Արդ՝ այս են անուանք ազգածինն արանց, անդրանկելոցն ի Բաբելոն, գնացելոցն ընդ կողմանս հիւսիսոյ յերկիրն Արարադայ: Զի չուեաց խաղաց գնաց Հայկն ի Բաբելոնէ կնան և որդւովքն և ամենայն աղխիւն հանդերձ, և չոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ, ի տանն որ ի լեռնոտինն, որ զառաջինն շինեալ էր Զրուանայ՝ հարբն և եղբարբքն հանդերձ<sup>19</sup>:

Եւ ապա ետ զնա Հայկն կալուած ժառանգութեան Կաղմեայ թոռին իւրում որդւոյն Արամենակայ: Եւ ինքն չուեաց գնաց անտի ևս ի հիւսիսակողմն և չոգաւ բնակեցաւ ի բարձրաւանդ դաշտավայրի միոջ. և կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հարբ, յանուն Հարցն:

1 Ա. սկզբում եղել է յարաբին, ապա ԱԲ-ը ջնջել բողել են յար ին: Մայլս. յարի Ե յարաբին

3 Միհրդ., Պատկ. շինուածոց, Միհրդ., Պատկ. ի սոյն

3 Ե պատուաստելոց

7 Ա. տիտան, լուսանցում ուվելացված է եան

11 Ա., Ե, Գ ժամանակ

15 Միհրդ. Զարամանեակ, Ա.—Ե Բաբելոն

18 Ա Ամայսիայ

20 Միհրդ., Պատկ. Հարմա (նաև հետագայում)

23 Ա անդրանգելոցն

24 Ա գնացելոցն-ը լուսանցում է Գ, Ե չի գնացելոցն Միհրդ. գնացելոցն-ը փակագծերում է և տողատակին ծանոթագրված է. «Միս օրինակն ոչ ունէր փակագծի եղեալ բառը»:

25 Ա ախիւն

27 Բոլ. Զրուանայ հարն՝ և եղբարբքն հանդերձ: Տե՛ս ծան. 19:

29 ԶԶ Կաղմայ

31 Միհրդ., Պատկ. շքաւ

Իսկ երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ անունն Հայք, որ են հայա-  
զամբք հանդերձ:

Եւ արդ՝ այս Հայկ հզար զարութեամբ և բարի անձամբ և կորովի  
աղեղամբ և մարտիկ յոյժ:

5 Յայնմ ժամանակի թագաւորեաց ի Բաբելոն որսորդ հսկայ Բէլն  
Տիտանեան, ճոխն շաստուածացեալ, որոյ հզար զարութեամբ<sup>20</sup> և սաս-  
տիկ յոյժ գեղ պարանոցի իւրոյ: Եւ էր իշխան ամենայն ազգացն, որ  
սփոեցան ի վերայ երեսաց ամենայն երկրի: Որոյ արարեալ առ աշաւք  
կախարդութեամբ հնարս, և հրամանս թագաւորականս ամենայն ազ-  
10 գաց. և հպարտութեամբ ամբարտաւանութեան իւրոյ կանգնեաց զպատ-  
կերն իւր, և ետ երկիր պագանել իբրև աստուծոյ, և զոհս մատուցանել:

Եւ վաղվաղակի կատարէին ամենայն ազգքն զհրամանս նորա. բայց  
489՝ մի ոմն Հայկ անուն, նահապետ ազգացն, ո՛չ ՚հնազանդեցաւ ի ծառայու-  
թիւն նորա. և ո՛չ կանգնէր ի տան իւրում զպատկեր նորա, և ո՛չ մեծարէր  
15 զնա աստուածաւորէն շքով:

Եւ էր անուն նորա Հայկ, ընդ որում ծնաւ արքայի<sup>21</sup> Բէլայ յիսութիւն  
մեծ: Եւ զարաժողով լինի Բէլ արքայ ի Բաբելոն և դիմէ զնայ ի վերայ  
Հայկայ սպանանել զնա:

Գայ հասանէ յերկիրն Արարադայ ի տունն, որ էր նոցա հայրենի,  
20 զոր<sup>22</sup> շինեալն էր ի լեռնոտին. և Կադմոս փախստական գնաց ի Հարք  
առ հայր իւր ազգ առնել նմա. և ասէ. «Դիմեալ գայ Բէլ արքայ ի վերայ  
քո, և եկն եհասս մինչ ի տուն անդր. և ես կնաւ իմով և որդւովք ահաւա-  
սիկ գամ փախստական»:

Առնու Հայկն զԱրամենակ և զԿադմոս զորդի իւր. և զորդիս նոցա  
25 և զորդիս եւթանեցունց դստերաց իւրոց, արս հսկայս և նուազունս  
թուով:

Եւ ի դիմի հարկանի Հայկն Բէլայ արքայի. և ոչ կարաց զգէմ ունել  
բազմութեան արանց հսկայից սպառազինաց:

Անդ ի դիմի հարկանի Հայկն Բէլայ<sup>23</sup>, և կամեցաւ ըմբռնել զնա Բլլ  
30 ի բուռն իւր: Խոյս ետ Հայկն յերեսաց նորա, և զնայր նա փախստական.  
և Բէլ զհետ նորա երթայր պնդագոյն հանդերձ զինակրան իւրով:

Զտեղի կալաւ Հայկն և ասէ ցնա. «Զի՞ պնդեալ գաս զհետ իմ. դար-  
ծի՞ր անդրէն ի տեղի քո, զի մի՞ մեռանիցիս այսաւր ի ձեռաց իմոց.  
քանզի ոչ վրիպի նետ իմ իմիք»<sup>24</sup>: Պատասխանի ետ Բէլ, և ասէ. «Վասն  
35 այնորիկ, զի մի՞ անկցիս ի ձեռս մանկտոյ իմոյ և մեռանիցիս. այլ

7 Ա. ազգաց

9 Ա.—Յ. թագաւորական

11 Ա., Ե, Գ. իբր

17 Ա. Բաբելովն

22 Գ, Միհրդ., Պատկ. մինչև

23 Միհրդ., Պատկ. կամ փխ. գամ

25 Ա. եւթանեցունց

25 Ա. հսկայս նուազունս

27 Պատկ. լիք Հայկն

30 Ա., Ե, Գ. լիք գնայր

35 Ա. մանկտոյ

ե՛կ ի ձեռս իմ, և կեա՛ց ի տան իմում խախաղութեամբ, ունելով ի գործս զմանկունս ի տան իմոյ զորսականս»:

Պատասխանի ետ նմա Հայկն և ասէ. «Շո՛ւն ես դու և յերամակէ շանց՝ դու և ժողովուրդ քո: Եւ վասն այնորիկ թափեցից իսկ այսար ի քեզ զկապարճս իմ»: Եւ արքայն Տիտանեան սպառազինեալ, և վստահացեալ ի կուռ սպառազինութիւն անձին իւրոյ:

Եւ Հայկն Աբեթայն մերձենայր և ունէր ի ձեռին իւրում զաղեղն, որպէս հեծան հզար մայրափայտեայ: Եւ Հայկին զտեղի կալեալ պատրաստի ընդդէմ նորա աղեղմամբ: Եւ կանգնէ զկապարճսն ի գետնոյ ընդ 10 ինքեան յաւղ սկայարէն կամարին<sup>25</sup>, և ընդ գիրկս մտեալ՝ զաւրութեամբ հարկանէ նետիւ զտախտակս երկաթիս, և ընդ պղնձի վահանն ի թափանցուցանէ ընդ մսեղէն արձանն, յերկիր խարսխեալ վտարեալ<sup>26</sup> նետն. 489 և վաղ՝վաղակի յերկիր կործանեալ զաստուածակարծեալ հսկայն. և զարք նորա փախստական լինէին: Եւ նորա զհետ մտեալ թափեցին ի 15 նոցանէն երամակս ձիոց և ջորեաց և ուղտուց:

Եւ Հայկն դարձաւ ի տեղի իւր. և շոգաւ կալաւ Հայկն զերկիրն Արարադայ, և բնակեցաւ անդրէն<sup>27</sup> ազգաւ իւրով մինչև ցայժմ: Եւ ի ժամանակի մահուան իւրոյ ետ զնա կալուած ժառանգութեան Կաղմեայ թոռին իւրում, որդւոյ Արամենակայ եղբար շարմայի<sup>28</sup>: Եւ Արամենակայ հրամայեաց երթալ ի հիւսիսակողմն, ուր ինքն իսկ դադարեաց զառաջինն:

Եւ եղև յետ մահուանն Հայկայ առ Արամենակ զորդիս իւր և զդստերս իւր և զարս նոցա, և զքորս եւթանեսին<sup>29</sup> և զարս նոցա, զուստերս և զդստերս նոցա և զամենայն աղիս իւր, և շոգաւ բնակեցաւ անդէն յառաջնումն գաւառին, զոր կոչեցին յանուն հարց իրեանց՝ Հարբ: Ապա գնայ 25 անտի ևս Արամենակ ի հիւսիսակողմն, և երթեալ իջանէ յերկիր մի խորին դաշտավայր, որ կայ ի մէջ բարձրաբերձ լեռանց. և հատանէ անցանէ ընդ մէջ նորա գետ յորդահոսան. որով<sup>30</sup> անցեալ Արամենակ բնակէ անդ, և շինէ զերկիրն կալուած ժառանգութեան իւրոյ՝ զվայրն լեռնակողմն և զառապար:

Ձկնի Արամենակայ որդի նորա Արամայիս շինէ իւր ի վերայ գետեզերն տուն բնակութեան, և անուանէ զանուն նորա ըստ անուան իւրոյ Արամայի<sup>31</sup>: Եւ որդիքն նորա սկսան բազմանալ և ընուլ զերկիրն: Եւ շինեցին գաւառք:

Մեռաւ և Արամայիս, և կալաւ զերկիրն որդի նորա Ամասիա: Եւ 35 ապա յետ նորա Գեղամ: Մեռաւ Գեղամ, և տիրեաց որդի նորա Հարմայ. ապա որդին Հարմայի Արամ: Ապա որդի նորա Արայն Գեղեցիկ, որով անուն իսկ դաշտին այնորիկ կոչեցաւ յանուն Այրարադ:

8 Ա մայրափայտեաց Դ, Գ մայր փայտեայ

10 Միհրդ. յաղեղն փխ. յաւղ: Պատկանյանը հետևել է Միհրդատյանին, չնայած իր ձեռագիրն ունեցել է յաւղ: Տե՛ս ծան. 25:

13 Ա զաստուածակարծեալ

15 Միհրդ., Պատկ. ի նոցանէ

19 Ղ. որդոյ

22 Ա, Ե, Գ զքորսն զեաթանեսին, Բ զքորսն եաթանեսին

25 Ե արամենակի ի

32 Ա զերկիր

34 Ա Արամաիս

36 Դ, Միհրդ., Պատկ. որդի նորա փխ. որդին Հարմայի

Եւ Շամիրամ կինն Ասորոց արքային Նինոսի քանզի լուաւ վասն գեղեցկութեան նորա՝ և<sup>13</sup> կամեցաւ առնել ընդ նմա բարեկամութիւն, որպէս զի կատարեսցէ վկամս նորա պոռնկութեամբ. քանզի ըստ լրոյ համբաւոյ յոյժ տոփեալ էր ի վե՛րայ անձին և գեղոյ նորա գեղեցկու-  
 5 թեանն, զի ո՛չ գտանէր յայնմ ժամանակի նման նորա այր ոք ամենեկին՝ այր պատկերաճոխ<sup>33</sup>: Յղէ առ նա հրեշտակս պատարագաւք և կոչէ զնա առ ինքն ի Նինուէ: Իսկ Արայն ո՛չ զպատարագն նորա ընկալաւ և ո՛չ  
 490<sup>ա</sup> յանձն առնու երթալ ի Նինուէ առ Շամիրամ: || Ապա առնու զզարանս իւր Շամիրամ, և զնայ ի վերայ նորա ի Հաչս: Գայ հասանէ ի դաշտն Արայի,  
 10 և տայ պատերազմ ընդ Արայի, հարկանէ զզարն, և սպանանէ զԱրայ ի պատերազմին:

Եւ հրամայէ Շամիրամ տանել զղի նորա ի վերնատունն ապարանից իւրոց, և ասէ «Եւ ասացից աստուածոց լեզուլ զվէրս նորա, և կենդանացի»:

15 Իսկ իբրև նեխեցաւ դի նորա ի վերնատանն՝ հրամայեաց զաղտնի ընկենուլ ի վիճ և ծածկել: Եւ զարդարէ զմի զոմն ի հոմանեաց իւրոց այր պատշաճող. և համբաւ հանէ՝ զԱրայի լեզուլ աստուածոցն և յարուցանել: Ունի ի ծածուկ. և ոչ ումեք ի ծանաւթից նորա ցուցանէ զնա. և այսպէս հանէ համբաւ արալեզաց տիկինն Շամիրամ:

20 Յայնժամ տիրեաց Շամիրամ ի վերայ երկրին Հայաստանեայց, և յայնմհետէ Ասորեստանեայց թագաւորքն տիրեցին մինչև ցմեռանելն Սենեքարիմայ. ապա ապստամբեցին յԱսորոց թագաւորացն ծառայութենէ:

Եւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդոց Արամենակայ, այր  
 25 զարաւոր և կորովի ազելամբ. ապա Արմոգ. ապա Սարհանգ. ապա Շաւաշ. ապա Փառնաւազ:

Սա ծնաւ զԲագամ և զԲագարատ<sup>34</sup>. և Բագարատ ծնաւ զԲիրատ, և Բիրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արևմտից, այս ինքն է Անգեղ տուն.  
 30 վասն զի կոչեցաւ Բագարատ և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ աղգ բարբարոսացն աստուած կոչեցին<sup>35</sup>:

Այս Փառնաւազ հնազանդեալ նաբուզդոնոսորայ արքայի ի Բաբելոն: Եւ ապա յայնմհետէ Բաբելացոց և Մարաց թագաւորքն տիրեցին մինչև ցԱղեքսանդր Մակեդոնացի, որ զամենայն տիեզերս հնազանդե-  
 35 ցոյց ի ծառայութիւն:

Եւ ծառայեցին Մակեդոնացոց մինչև ցապստամբութիւնն Պարթևաց

13 Միհրդ., Պաակ. լիզուլ  
 13 Ա. դորա վի. նորա  
 17 Ա լիզուլ  
 19 Միհրդ., Պաակ. այնպէս, Ա. արա լիզաց Գ յարալեզաց  
 20—21 Ա. Հայաստանեաց, Ա. Ասորեստանեաց  
 22 Մալի. Սենեքերիմայ  
 27 ԶԶ, Միհրդ. այստեղ և հետո Բագարատ և Բիրատ անուններն ամենուրեք գրված են Բագարամ, Բիրամ: Տե՛ս ծան. 34:  
 34 Ա.—Ե ցաղէկոսանդր

ի<sup>36</sup> Մակեդոնացւոց, և ցհամբարձումն Արշակունեաց թագաւորութեանն: Քանզի զսոյն ճառէ ժամանակագիրն<sup>37</sup> այդպէս, որպէս առաջիդ կայ:

(Ի Գամասկոսէ ասեն գնացեալ զՄարսեակն<sup>38</sup> զընդոծինն Աբրահամու, փախստական լեալ յԻսահակայ, և եկեալ բնակեցաւ առ ոտամբ 5 երկուց լերանցն որ հային հանդէպ մեծի դաշտին Արայի, յԱրագած կատար և ի Գեղ լեանն:

490բ Եւ անուանէ զլերինս յանուն իւր, որում Ազատն կոչեն լեանն: // Եւ լինին նորա երեք որդիք, Փառոխ, նա է Եղիազար, և Փառոխտ կոչեն զտեղի բնակութեանն, և Փառականն<sup>39</sup> դաշտ որսոց և արշաւանաց նոցին, որ 10 խառնին յազգ Արամենակայ):

Գ Լ Ո Ւ Խ Բ

Ապստամբութիւն Պարթեւաց որ եղի ի յայս ժամանակի:

Եւ եղև յետ մահուանն Աղեքսանդրու կայսեր Մակեդոնացւոց ծառայեցին 15 Պարթևք Մակեդոնացւոց ամս ԿԱ: Քանզի թագաւորեաց Սեղևկիոս Նիկանովր<sup>40</sup> ի Բաբելոն ամս լԲ<sup>41</sup>: Անտիոքոս Սոտեր՝ ամս ԺԹ: Անտիոքոս Թէոս՝ ամս Ժ:

Եւ յամի մետասաներորդի Անտիոքայ արքայի ապստամբեալ ի բաց կացին Պարթևք ի ծառայութենէ Մակեդոնացւոց: Եւ թագաւորեաց Ար- 20 շակ Մեծ, որդի արքային Թէտայացւոց<sup>42</sup>, ի Բահլ Շահաստանի յերկիրն<sup>43</sup> Քուշանաց, որում ամենայն ազգք արևելից և հիւսիսոյ հնազանդեցան ի ծառայութիւն:

Չուեաց խաղաց գնաց Արշակ արքայն ամենայն զաւրաւքն հանդերձ յարևելից երթալ ի Բաբելոն, յառաջին թագաւորացն կալուածսն. զի անդ 25 հաստատեսցէ զթագաւորութիւն իւր. եկն եհաս ի Բաբելոն:

Իսկ Անտիոքոս իբրև ետես, զի անշափ բազմութեամբ եկեալ հասեալ էր ի վերայ նորա Արշակ արքայն Պարթևաց, այնուհետև ոչ կարացեալ վստահանալ յիւր զաւրացն բազմութիւն ի դիմի հարկանել վիրագին այնմիկ՝ խոյս ետ յերեսաց նորա. փախեաւ և գնաց յԱսիաստան<sup>44</sup>,

30 Եւ թագաւորէ ի վերայ Ասիաստանի ամս Ե. և ապա մի քստ միոջէ թագաւորեն Մակեդոնացիքն յԱսիաստան ի ժամանակս ինչ<sup>45</sup>: Եւ Արշակ

1 29, Միհրդ., Պատկ. և Մակեդոնացոց փխ. ի Մակեդոնացւոց: Տե՛ս ծան. 36:

7-8 Ա.—Ե և լինին նորա երեք որդիք, Փառոխ՝ նա է Եղիազար, որում ազատն կոչեն լեանն փխ. որում Ազատն կոչեն լեանն: Եւ լինին նորա երեք որդիք, Փառոխ նա է Եղիազար: Տե՛ս ծան. 39:

9 Ա որսաց

12 Վերնագիրը ձեռագրիեն է

13 Ա.—Ե Աղէկասանդրու կայսեր մակեդոնացւոյ

15-16 Միհրդ., Պատկ. Սելևկիոս, Բալ. Նիանովր (տե՛ս ծան. 40), Բալ. ամս լԸ փխ. ամս լԲ (տե՛ս ծան. 41):

21 Ա.—Ե ազգ

24 ՏՏ Բարիլոն

29 Միհրդ. ծանոթագրում է. «Ի միտում օրինակի վայրագին»: Միհրդ., Պատկ. և խոյս փխ. խոյս

30 Միհրդ., Պատկ. ի վերայ Ասիաստանու

31 Ա յասիաստանի ժամանակս ինչ, Ե յասիաստանի ի ժամանակս ինչ

արքայ հնազանդեցոյց ի ծառայութիւն զԱսորեստանեայս, որ ըստ Անտիոքայ<sup>46</sup>, և զԲաբելոնացիս և զՊարսիկս և զՄարս, և զերկիրն Հայոց մինչև ցլեառն մեծ Կապկոհ<sup>47</sup>, և ի յեզր ծովուն մեծի Արևմտից: Թագաւորէ Արշակ ի Բաբելոն ամս բազումս:

5 Եւ եղև յամին հարիւր և տասներորդի շորրորդի Արշակայ արքայի Պարթևաց, ի շորրորդում ամի թագաւորութեան Դեմետրեայ ի վերայ Ասիաստանի և Ասորոց, մինչ Արշակ արքայ զնաց յարևելս՝ զաւրաժողով լեալ և Դեմետրիոս շոգաւ կալաւ զԲաբելովն:

Իբրև ետես Դեմետրիոս, զի այնչափ բազմութեամբ եկն եհաս ի 10 վերայ նորա Արշակ՝ տեղի ետ նմա և զնաց մինչև ցԱնտիոք. և անդ ճակատեցաւ ընդդէմ Արշակայ ի պատերազմ: Եւ եղև պատերազմ մեծ 491ա առ Անտիոք քաղաքաւ: Հարկալ/նեն և սրբաշունչ առնեն զգաւրն Դեմետրեայ. և ձերբակալ առնեն զԴեմետրիոս: Կապէ զնա Արշակ արքայ ոտիւք և ձեռաւք, և առնու զնայ յարևելս ի Բահլ Շահաստան:

15 Իբրև ետես Անտիոքոս եղբայր Դեմետրեայ, եթէ ըմբռնեցաւ Դեմետրիոս ի ձեռս Արշակայ արքայի՝ ինքն թագաւորէ ի վերայ Ասորոց և Ասիաստանի. զաւրաժողով լինի և զնայ ի Բաբելոն, զկնի տասն ամի: Աղդ լինի սորին<sup>48</sup>, եթէ թագաւորեաց Անտիոքոս եղբայր Դեմետրեայ և եկն ի Բաբելոն:

20 Լուծանէ Արշակ զԴեմետրիոս զկնի տասն ամի և արծակէ առ եղբայրն, որպէս զի խաւեսցի ինչ առնել նմա. և Դեմետրիոս ոչ զնաց առ եղբայրն իւր ի Բաբելոն, այլ յԱսիաստան անցանէ: Ապա խաղայ զնայ Արշակ ի Բաբելոն երեքտասան<sup>49</sup> բիրովք:

Յամի հարիւրերորդի քսաներորդի ութերորդի թագաւորութեան իւրոյ 25 իբրև մատ եղև ի Բաբելոն՝ անկանի ի վերայ նորա Անտիոքոս յանկարծակի ի ձմեռն ժամանակի՝ ի նեղ վայրի: Եւ ոչ կարեն զաւրել. սպանեն զգաւրն. զարկանեն և ընկենուն զԱնտիոքոս ի խոնարհ և սպանանեն. և ձերբակալ առնեն զՍելևկիոս զորդին Անտիոքայ, զոր ունէր, ասէ<sup>50</sup>, արքայ ի դրանն իւրում թագաւորութեան<sup>51</sup>:

30 Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին<sup>52</sup> քաղաքի: Եւ զատուցանէ նմա սահմանս զԱրուաստան<sup>53</sup> առ երկրան Տաճկաց և առ երկրան Ասորոց, և զԿապուտկեայ առ Կիւղիկեալ<sup>54</sup>, մինչև ցեզր ծովուն մեծի Արևմտից. և ցհիւսիսոյ կողմանէ ի լեառն մեծ Կովկաս, որ ձգի ընդ 35 կողմանս արևելից և անցանէ առ սահմանան առ ամուր աշխարհան:

3 Բոլ. արևմտից փխ. Արևմտից

6 Ա թագաւորութեանն (ևան՝ հետագայում)

21 Ա, Ե, Գ որպէս փխ. որպէս զի

23 Ա Աշխակ փխ. Արշակ

23 Ա բիրոյ

26 Ա, Ե, Գ ձեռն փխ. ձմեռն

27 Ա զարկանեն ընկենուն

28 Ա զՍելևկիոս

28 Վ ասեն փխ. ասէ

29 ՁԸ, Միհրդ., Պաակ. թագաւորին: Տե՛ս ծան. 51:

31 Ա Մծբին

33 Ա կապուտկիայ

34 Ա Բոլ. արևմտից



Մտրաց, և հասանէ ի լեառն Զարասպ<sup>55</sup>, և անցանէ առ նոր Շիրակ երկրան<sup>56</sup>:

Եւ յուղարկէ զնա ի Մրծանայ ընդ յարևմուտս զարու մեծաւ եւթանասուն հազարաց սպառազինաց. և մեծամեծ իշխանաւք նախարարաց 5 հազարաց<sup>57</sup> բիրաւորաց, որում ոչ ոք կարէր զդէմ ունել պատերազմաւ: Սմա ընդ առաջ ելանէ Բագարատն Փառազեան յորդոցն Արամենակայ նախարար մեծ հանդերձ զարու: Մատուցանէ նմա պատարագ ոսկի և արծաթ. և զարդարէ զնա ի սնդր<sup>58</sup> և ի վակաս. պսակէ զնա ի թագ հայրենի. և նստուցանէ զնա ի վերայ ոսկիապատ ականակուռ զահոյիցն. 491բ և տայ նմա զդուստր||իր ի կնութեան:

Զսա արար Արշակ արքայ ասպետ Հայաստան երկրին, որ էր իշխան և հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց զուխ, և հայր արքայի, և եղբայր. որում ետ իշխանութիւն տէրութեանն այնորիկ, Նսկոտորեաց զհակայսն, որ զարաժողով եղին ի վերայ նորա ի Միջա- 15 գետս Ասորուց<sup>59</sup>:

Եւ այս են իշխանք Պարթևաց, որք թագաւորեցինն զկնի Արշակայ հաւր իւրեանց ի Բահլ Շահաստան յերկիրն Քուշանաց<sup>60</sup>: Որդիք շորք ասեն լեալ Արշակայ արքայի Պարթևաց. զառաջինն ասեն թագաւորեցոյց Թեալացուց աշխարհին. զերկրորդն ի վերայ Կիլիկեցոց<sup>61</sup>. զերրորդն 20 ի վերայ Պարթևաց. զչորրորդն ի Հայաստան աշխարհին:

Եւ լինին ամենայն ամք Արշակայ կենաց իւրոց՝ ճլ ամ. և թագաւորեաց ամս յիսուն և վեց: Զկնի նորա թագաւորէ որդի նորա Արշակ ի վերայ Պարթևաց ի Բահլ Շահաստանի յերկիրն Քուշանաց՝ ամս Հ: Ապա որդի նորա Աշնաշ՝ ամս ԼԲ: Ապա Արշէն՝ ամս ԻԲ: Ապա Արշաւիր՝ ամս 25 ԽԵ: Ապա Արտաշէս՝ ամս ԼԴ: Ապա Դարեհ՝ ամս Լ: Ապա Արշակ՝ ամս ԺԷ: Ապա Արտաշիր՝ ամս ԽԶ: Ապա Պերոզ՝ ամս ԿԴ: Ապա Վաղարշակ՝ ամս Ծ: Ապա Արտաւան՝ ամս ԼԶ: Ապա լինին ամենայն ամք Պարթևաց տէրութեանն ամք ՇՀԳ:

Եւ այս են թագաւորք Արշակունիք<sup>62</sup>, որք թագաւորեցին Հայաստան երկրի զկնի Արշակայ Մեծի<sup>63</sup>:

Արդ՝ թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ՝<sup>64</sup> յամի հարիւրերորդի քսան և իններորդի թագաւորութեանն Արշակայ հաւր իւրոյ ի վերայ Հայաստան երկրի ի Մրծուին<sup>65</sup> քաղաքի, եղբարք իւրով Վաղարշակաւ, զոր թագաւորեցոյց Հայաստան աշխարհին՝ ամս ԽԲ<sup>66</sup>: Ապա Արշակ՝ ամս ԺԳ: 35 Ապա Արտաշէս՝ ամս ԻԵ: Ապա Արտաւան և Արշաւիր՝ ամս ԺԲ: Ապա Արշակ որդի Արշաւրի՝ ամս ԼԷ: Ապա Երուանդ որդի Արշակայ՝ ամս ԻԱ.

3 Վ Մծրանայ

10 Ա ի կնութեանն, Մինդ., Պաակ. ի կնութիւն

17 Ա Դ որդիք փխ. Որդիք շորք

19 Ա.—Ե թէտալացուց

20 Վ ի վերայ Հայաստան երկրին փխ. ի Հայաստան աշխարհին

21-22 Ա.—Ե թագաւորութեանն փխ. կենաց իւրոց, Ա.—Դ շիք և թագաւորեաց ամս յիսուն և վեց

27 Ե Ապա Արտաւան ամս ԼԶ բառերից հետո բաց է բողոքում մինչև հաջորդ զլիք նախավերջին պարբերության Արտաւան՝ ամս ԼԶ բառերը ներառլայ:

33 Վ Մծրին փխ. Մրծուին

Ապա Արտաշէս եղբայր նորին՝ ամս ԾԲ: Ապա Տիրան որդի Արտաշեսի՝ ամս ԻԲ: Ապա Տիգրան եղբայր նորին՝ ամս ԽԲ: Ապա Արշամ՝ ամս Ի: Ապա Աբգար որդի Արշամայ՝ ամս ԼԸ: Ապա Սանատրուկ քեռորդի Աբգարու՝ ամս Լ: Ապա Արտաշէս որդի Սանատրուկոյ՝ ամս ԽԱ: Ապա Արտա-  
 5 ւազդ և ապա Տիգրան, որդիք Արտաշեսի՝ ամս ԻԳ: Ապա Վաղարշ որդի Տիգրանայ՝ ամս Ի: Ապա Քաջն հոսորով որդի Վաղարշու՝ ամս ԽԸ: Ապա  
 492a Մեծն Տրդատէս որդի հոսորովայ՝/ամս ԾԶ<sup>67</sup>: Ապա հոսորով որդի Տրդատայ՝ ամս Թ<sup>68</sup>: Տիրան որդի հոսորովայ՝ ամս ԽԸ: Արշակ որդի Տիրանայ՝ ամս Լ<sup>69</sup>: Շապուհ արքայ Պարսից՝ ամս ԺԲ<sup>70</sup>: Պապ որդի Արշակայ՝  
 10 ամս է:

Գ Լ Ո Ի Խ Գ

Արդ՝ թէ պիտոյ է քեզ, ո՛վ ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի հորեմացոյ եւ Ստեփանոսի Տաւաւնացոյ, հաւաստի եւ հշմա-  
 իրտ մատենագրաց՝ զորդի ի հաւրէ նանաշի<sup>71</sup>:

15 Յետ մահուանն Աղեքսանդրու թագաւորէ Արշակ Քաջ ի Բահլ Շահաստանի, յերկիրն Քուշանաց. կեցեալ ամս ՃԼ, թագաւորեաց ամս Ծէ: Յետ նորա որդի նորա Արտաշիր՝ ամս ԼԱ: Յետ նորա թագաւորէ նորին որդի Արշակ, որ կոչեցաւ Մեծ՝ ամս ԾԲ:

Սա թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս  
 20 Հայոց: Արդ՝ այսպէս զատուցեալ երեւէին երկու ցեղքն թագաւորութեանց՝ Պարսից և Հայոց:

Արշակ Քաջ նախնեաց երկուց ցեղից՝ թագաւորեցելոյ Պահլաւկանին և Արշակունւոյն, ամենայն քաջութեամբ թագաւորեաց ամս Ծէ: Յետ  
 որոյ որդիքն զատուցեալք թագաւորք Պարսից. Արշակ Մեծ՝ ամս ԾԲ:  
 25 Արշական՝ ամս Լ: Արշանակ՝ ամս ԼԲ: Արշէս՝ ամս Ի: Արշալիր՝ ամս ԽԶ: Արտաշէս՝ ամս ԼԱ: Դարեհ՝ ամս Լ: Արշակ՝ ամս ԺԹ: Արտաշէս՝ ամս Ի: Պերոզ՝ ամս ԼԳ: Վաղարշակ՝ ամս Ծ: Արտաւան՝ ամս ԼԶ:

Զսա սպանեալ Ստահրացոյն Արտաշրի որդւոյ Սասանայ՝ եբարձ  
 զտէրութիւն Պահլաւաց<sup>72</sup>, յերկրորդ ամին Փիլիպպեայ թագաւորին Հոռ-  
 30 մայ: Աստանար դադարէ թագաւորութիւնն Պարթեւաց յազգէն Պահլաւ-

1 Ա.—ե ամս ԿԲ փիս. ամս ԾԲ Վ ամս ԶԲ  
 5 Ա.—ե որդի  
 6-7 Վ Ը փիս. ԽԸ, Ա.—ե շիբ ապա մեծն շիբ ապա («հոսորով որդի Տրդատայ» բառերից առաջ):  
 8 Ա.—ե Ը («Արշակ» աճունից առաջ) փիս. ԽԸ  
 9 Բոլ. ամս է փիս. ամս Լ: Տե՛ս ծան. 69:  
 9 Բոլ. ԶԳ փիս. ԺԲ: Տե՛ս ծան. 70:  
 12-14 Վերեւագիրը ձեռագրի են է:  
 13 Ա. Մովսէսի  
 17 Ա. սորա փիս. նորա  
 22 Ա. պահլաւկանին  
 24 Ա. որդի  
 28 Ա. Հստարհացոյն  
 28-30 Բալ. չիբ եբարձ զտէրութիւն Պահլաւաց բառերին հաջորդով 11 բառեր (մինչև «յազգէն Պահլաւաց» բառերը ներառյալ), որոնք լրացել ենք, քաղելով Աստ-  
 ղիկից: Տե՛ս ծան. 73:

կաց<sup>73</sup> սկսեալ յերեսուն ամի թագաւորութեանն Փիլեղելիոս Պտղոմէոսի, կալեալ նոցա ընդ ամենայն ամս՝ նՄէ:

Յետ որոյ նուաճեալ Ստահրացոյն Արտաշրի որդոյ Սասանայ զամենայն Արիս և զանարիս, և զբազումս ի նոյն ազգէ թագաւորութեան 5 Պարթևաց և Պահլաւկաց՝ թագաւորէ ինքն, և յետ նորա պայազատք նորին զնոյն ձև արին<sup>74</sup>

Գ Լ Ո Ւ Խ Դ

Մննդաբանութիւն ազգին Մամիկոնէից

- 10 . . . . . աղրէ<sup>75</sup> զՄամիկոնէիցն սակս ազգաց զնեղութիւնն: Քանզի ոչ են սոքա որդիք ազգածնինն Արամենակայ, այլ են եկեալ ի Ճենաստանէ յամս Արտաւանայ արքայի Պարթևաց և Մեծին հոսորովու արքայի Հայոց. որպէս լուայ յառնէն մեծէ, որ եկեալ էր հրեշտակութեամբ ի Ճենաց թագաւորէն առ 15 արքայն հոսորով. յոր իմ հարցեալ ի դրանն արքունի, եթէ «Ազգ մի մեծ ի Հայաստան երկրի կայ, զորմէ ասեն եթէ ի ձերմէ աշխարհէն զնացեալ են»: Եւ նա ասաց ինձ. «Ասեն, ասէ, գուսանք և ի մերում աշխարհին//յերգս իւրեանց զՄամիկն և զԿոնակն, արս երկուս լեալ քաջս և զլիսաւոր եղբարս հարազատս, որդիք Կառնամայ նախարարին, որ էր 20 երկրորդ ի թագաւորութեանն Ճենաստանի: Որոյ յետ մահուանն առնս այսորիկ, առ զկին սորին թագաւորն նոցին ի կնութիւն: Ե՞ եղև ի նմանէ որդի, որ զկնի մահուան հար իւրոյ յաջորդեալ նստաւ յաթոռ հայրենի թագաւորութեանն: Եւ նոքա, երկու եղբարք նորա ի մարէ և ոչ ի հարէ, ապստամբեալ ի բաց կացին ի նմանէ. և միաբանեալ ընդ ինքեանս 25 զմասն մի ի նախարարացն և ի զարացն՝ առնեն ուխտ միաբանութեան: Որոց խորհեալ խորհուրդ շարութեան՝ սպանանել զեղբայրն իւրեանց, զթագաւորն աշխարհին Ճենքակուր, և առնուլ զթագաւորութիւն նորա: Եւ զարածողով լինէին Մամիկն և Կոնակն ի վերայ նորա ի միում տեղուոյ աշխարհին իւրեանց. և բաժանի զար աշխարհին յերկուս: Ազգ

1 Ա,Գ սկսեալք և ամի, Դ սկսեալ յի ամի  
 1 Ա,Ե,Գ Փիլիղելիոս Պտղոմիոսի, Դ Փիլիղելիոսի Պտղոմիոսի  
 2 Ա.—Ե սոցա փխ. նոցա  
 6-10 Ա,Գ,Ե զնոյն ձև արինաղրէ զՄամիկոնէիցն սակս զազգաց զնեղութիւնն, Բ,Գ զնոյն ձևնաղրէ զՄամիկոնէիցն սակս զազգաց զնեղութիւնն, Միեղդ., Պատկ. զնոյն ձև արինաղրէն Մամիկոնէիցն սակս ազգաց զնեղութիւնն, Մալխ. զնոյն ձև արինա(կի)... որէն զՄամիկոնէիցն սակս ազգաց զնեղութիւնն: Մեճճ տեճտը բաժանել եճճ տարբեր գրովների և ավելցրել եճճ Մննդաբանութիւն ազգին Մամիկոնէից խորագիրը: Տե՛ս ծան. 74—75:  
 12 Ա.—Ե Արտեւանայ  
 14 Ա.—Ե յառնէնն, Ա.—Ե էր եկեալ փխ. եկեալ էր  
 20 Ա.—Ե չիք յետ  
 23 Ա եղբայրք  
 24 Վ ընդ միմեպնս փխ. ընդ ինքեանս

լինի ձեռքակուրի. գումարէ և նա զզարս իւրոյ կողմանն, և գնայ ի վերայ նոցա ի պատերազմ: Եւ յարձակին ի վերայ միմեանց, հարկանեն սրով սուսերի, և սպանեն զզարն ապստամբական: Փախստական լեալ Մամիկն և Կոնակն գնան առ արքայն Արշակունի, որ նստէր ի Բահլ 5 Շահաստանի, յերկիրն Քուշանաց: Եւ էր խաղաղութիւն ի մէջ երկոցունց թագաւորութեանցն այնոցիկ:

Յայնժամ մեծաւ աղերսիւ խնդրեալ զնոսա ձեռքակուրի յարքայէն Պարթևաց, «զի բարձցէ ի միջոյ. ապա թէ ոչ՝ լուծցի ուխտ խաղաղութեանն՝ որ ի միջի մերում»: Իսկ նորա խնայեալ յարսն՝ ոչ ետ զնոսա 10 ի ձեռս նորա, այլ գրէ առ նա սիրով. «Անդրէն ուխտ խաղաղութեան մերոյ, ասէ, հաստատուն կացցէ ի միջի մերում, զի երդուեալ եմ առ նոսա, զի նոքա մի՛ մեռցին. այլ ետու տանել զնոսա ի մուտս արևու և յեզր երկրի, ի տեղին յայն, ուր արեգակն ի մայրն մտանէ»:

Յայնժամ հրամայէ արքայն Պարթևաց զարաց իւրոց տանել զնոսա 15 զգուշութեամբ մեծաւ, կնաւ և որդւովքն իւրեանց և ամենայն աղխին իւրեանց յերկիրն Հայոց առ ազգական իւր արքայն Արշակունի, որ էր թագաւոր Հայաստան երկրին, ուր և սերեալ բազմացան յոյժ, և եղեն յազգ մեծ ի Մամիկայ և ի Կոնակայ»<sup>76</sup>: Յայսմանէ այն է սպարապետ<sup>77</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Ե

20

Թագաւոր Հայոց, Պարսից եւ Յունաց<sup>78</sup>

Եւ եղև յետ մահուանն Արտեանայ, որդւոյ Վաղարշու արքային 493ա Պարթևաց, թագաւորեաց Արտաշէր որդի Սասանայ||միահեծան տէրութեամբ ի վերայ Բաբելացոց և Ասորւոց և Մարաց և Պարսից և Պարթե- 25 վաց, ամա Ս:

Յամի երրորդի Եղիանոսի<sup>79</sup> կայսեր, և յամա Լ-երրորդի առաջի Մեծին հոսորովայ արքային Հայոց՝ փոփոխումն թագաւորութեանն այսորիկ լեալ: Եւ էր հոսորով՝ ԼԱ ամ: Եղիանոս՝ երրորդն. Արտաշէր՝ զառաջինն:

Յամին Լ-երրորդի չորրորդի Մեծին հոսորովայ, և չորրորդ ամի ար- 30 քային Պարսից Արտաշէրի թագաւորէ Տերենտիանոս ամիսս վեց. քանզի փութանակի վախճանի:

Յամին ԼԵ-երրորդի հոսորովայ արքայի, և ի հինգերորդ ամի Արտա-

1 Վ ձեռքակուրի (լուսանցում՝ ձեռքակ): Ա.—Ե զօրս (նակ՝ հետագայում):

9 Ա խաղաղութեան, Ա խնայեալ

10 ԶԶ ի ձեռն

13 Ա ի տեղի

13 Ա.—Ե որ (փխ. ուր) արեգակն

18 Բոյ. Մամիկոնայ: Տե՛ս ծան. 76:

24 Պատկ. չիք և (Ասորւոց բառից առաջ)

26 Ա Գ-երրորդի յառաջի, Բ Լ-երրորդի առաջին, Միհրդ., Պատկ. Լ-երրորդի ամ

27 ՏՏ Մեծի

28 Ա.—Ե և ևս փխ. և էր Միհրդ. ԼԱ ամաւ

29 Ա չորրորդին փխ. չորրորդի

32 Ա հոսորով արքայի

շրի Պարսից արքայի թագաւորէ՝ Պրոպոս ամս Զ: Խոսրով՝ Լե: Արտաշիր՝ Ե: Պրոպոս՝ զառաջինն:

Եւ եղև յամին ԽԱ-երորդի Մեծին Խոսրովայ, և ի ԺԱ ամի Արտաշրի թագաւորէ Յունաց Կարոս, հանդերձ որդուվքն իւրովք Կարինա<sup>80</sup> և 5 նոմերիանոսի՝ ամս է: Խոսրով՝ ԽԱ: Արտաշիր՝ ԺԱ: Կարոս՝ զառաջինն:

Յամին ԽԲ-երորդի Խոսրովայ, ԺԸ Արտաշրի, մինչ արքայ Խոսրով ի Միջագետս էր, Կարոս կայսր գումարէ ամբոս զաւրաց բազմաց, և զիմէ ի վերայ արքային Խոսրովայ<sup>81</sup>: Անտի աճապարեալ ընդդէմ նորա 10 ելանէ<sup>82</sup> Կոռնակ սպարապետ Մեծին Խոսրովու հաւրն Տրդատայ: Ասեն զսմանէ յերկարեալ զամս կենացն ՃԿ և ունել ի Ժամ մահուանն զհերս և զաշս և զլսելիս և զզարութիւնն և զթեթևութիւն մանկութեանն:

Եւ ապա յայնժամ եղև պատերազմ մեծ ի մէջ Խառանու և Ուրհայի. հարկանեն և վանեն զզաւրն Յունաց. և մեռանի Կարոս ի պատերազմին 15 հանդերձ միով որդուվն Կարիանոսի: Եւ ի նմին ամի թագաւորէ Յունաց Դիոկղետիանոս ամս ԻԲ: Խոսրով ԽԸ: Արտաշիր՝ ԺԸ: Դիոկղետիանոս զառաջինն:

Յամի Ի-երորդի առաջներորդի Արտաշրի Պարսից արքային ի շուրորդում ամի Դիոկղետիանոսի կայսեր՝ մեռանի Քաջն Խոսրով ի վա- 20 տանուն Անակայ: Եւ տիրէ ի վերայ աշխարհիս Հայոց Արտաշիր արքայ Պարսից ամս ԺԱ: Դիոկղետիանոս՝ զշորրորդն:

Յամին ԼԲ-երորդի Արտաշրի<sup>83</sup>, հնգետասաներորդի Դիոկղետիանոսի, կայսերակերպ շքեղութեամբ Տրդատիոս ելանէ ախոյեան ընդդէմ ար- քային Գղաց: Եւ անդէն ձերբակալ արարեալ զախոյեանն անարի զթագա- 493բւորն Գղաց՝ ածեալ կացուցանէ յանդիման կայսերն Դիոկղետիա/նոսի. և անդէն ի նմին ամի թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց: Գումարէ ի ձեռս սորա զաւրս բազումս և ար- ձակէ յիւրական իշխանութիւն աշխարհին Հայոց: Որ տիրէ ամենայն քաջութեամբ և բարեպաշտութեամբ ամս Հ: Եւ է այսպէս. Արտաշիր՝ ԼԲ: 30 Դիոկղետիանոս՝ ԺԵ: Տրդատէս՝ զառաջինն:

Յամին Թ-երորդի Տրդատայ արքային Հայոց թագաւորէ ի վերայ

5 Ա.—Ե նոսերիանոսի

6 Ա.—Ե զառաջին

10-11Ա. Ենթայալ Կոռնակ սպարապետ-ից մինչև հաջորդ տողի և ունել բառերը լրացված են 19-րդ դարի գրչուրյամբ: Մյուս ձեռագրերում այդ բառերը բացակայում են: Միեղատյանը պակասը գտել է Հ ձեռագրում և գետեղել փակագծերի մէջ, ծանոթագրելով «Փակագծիւ եղեալն ոչ գոյր ի բնագրին, զոր լցուցաք ի միս օրինակէն»: Պատկանյանը հետեւել է Միեղատյանին: Տե՛ս ծան. 82:

11 Ա մահուն

12 Մալս. չիք և զթեթևութիւն

13 Ա, Գ, Ե, ՏՏ Ժամ փխ. յայնժամ:

16 Միեղ., Պատկ. Դիոկղետիանոս (նաև՝ հետագայում), Ա, Գ, Դ Խոսրով ԻԸ

22 Բոլ. Լ-երորդի փխ. ԼԲ-երորդի: Տե՛ս ծան. 83:

23 Միեղ. ծանոթագրում է. «Ե միս օրինակին կայսերապակ»:

24 Միեղ., Պատկ. Գթաց, Ա ձերբակ

29 Դ ամս Ե փխ. ամս Հ

31 Ա.—Ե յամին ԽԹ յերորդի ամի Տրդատայ

Յունաց աշխարհին Կոստանդիանոս, որ շինեաց զԲիւզանդիա՝ ամս Թ: Արտաշիր՝ զև: Տրդատիոս՝ իններորդ: Կոստանդիանոս՝ զառաջինն:

3 3ամին ԽԹ-երորդի Արտաշրի արքային Պարսից, և ԺԹ ամ Տրդատայ արքային Հայոց<sup>84</sup> թագաւորէ Շապուհ որդի Արտաշրի ի վերայ աշխարհին Պարսից ամս 29: Եւ ի սոյն ամի վախճանի կայսրն Յունաց Կոստանդիանոս և թագաւորէ Մաքսիմիանոս և Գալիանոս<sup>85</sup> ամս ԺԸ, և տայ պատերազմ ընդ Շապուհոյ որդւոյ Արտաշրի ի Միջագետս ի հառան. և լինի անդ կոտորած մեծ, մինչև ի նեղ անկանել զաւրուն Պարսից յերկիրն Ուրհայտ<sup>86</sup>: Եւ տեսեալ Շապուհ զպարտութիւն իւր զաւրուն, զիջանի առնել խաղաղութիւն ընդ կայսեր. և նա առեալ զգանձս և զաւարս բազումս դառնայ ի տեղի իւր: Տրդատէս՝ Ի: Մաքսիմիանոս և Գալիանոս՝ զերկրորդն: Շապուհ՝ զառաջինն:

3 3ամին ԼԷ-երորդի Տրդատայ արքային, ԺԸ-երորդի Շապուհոյ արքայի թագաւորէ Յունաց Մաքսիմիանոս որդի Մաքսիմիանոսի՝ ամս ԺԳ: Տրդատէս՝ ԼԷ: Շապուհ՝ ԺԸ: Մաքսիմիանոս՝ զառաջինն:

3 3ամին Ս-երորդի Տրդատայ արքայի՝ թագաւորէ Յունաց Կոստանդէս՝ ամս ԺԷ: Տրդատէս՝ Ս: Շապուհ՝ ԼԱ: Կոստանդէս՝ զառաջինն:

3 3ամին ԿԷ-երորդի Տրդատայ արքային Հայոց, ԽԸ ամի Շապուհոյ արքային Պարսից՝ թագաւորէ Կոստանդիանոս որդի Կոստանդեայ ամս 20 ԼԲ: Տրդատ՝ ԿԷ: Շապուհ՝ ԽԸ: Կոստանդիանոս՝ զառաջինն:

3 3ամին ՍԲ-երորդի Շապուհոյ արքային Պարսից, Ե-երորդի ամի բարեպաշտին Կոստանդիանոսի կայսեր, վախճանի երանելին Տրդատէս. և թագաւորէ Խոսրով որդի նորա ամս ԺԷ: Շապուհ՝ ՍԲ: Կոստանդիանոս՝ Ե-երորդն: Խոսրով՝ զառաջինն<sup>87</sup>:

25 3ամին ԿԹ-երորդի Շապուհոյ արքային Պարսից, ԻԲ Կոստանդիանոսի կայսեր՝ թագաւորէ ի վերայ Հայոց Տիրան, որդի Խոսրովայ, ամս ԺԲ: Շապուհ՝ ԿԹ: Կոստանդիանոս՝ ԻԲ: Տիրան զառաջինն:

3 3ամի ԻԷ-երորդի Կոստանդիանոսի կայսեր, ի 2 ամի Տիրանայ արքայի Հայոց՝ թագաւորէ Ներսէճ որդի Շապուհոյ ի վերայ Պարսից ամս 494 Թ: Կոստանդիանոս՝ ԻԷ: Տիրան՝ 2: Ներսէճ՝ զառաջինն:

1 Ա—Ե զԲուզանդիա

3 Ա—Ե Ժ ամ փխ. ԺԹ ամ

4-11 Թագաւորէ Շապուհ որդի Արտաշրի ի վերայ աշխարհին Պարսից ամս 29 բառերից սկսած մինչև նա առեալ զգանձս և զաւարս բազումս դառնայ ի տեղի իւր բառերը ներառյալ լրացված են XIX դարի գրչութեամբ: Մյուս բոլոր ձեռագրերում այս բառերը պակասում են: Տե՛ս ծան. 84:

5-6 22, Միհրդ., Պատկ. վախճանի կայսրն յունաց Մաքսիմիանոս, և թագաւորէ Գալիանոս: Տե՛ս ծան. 85:

5-11 և ի սոյն ամի վախճանի բառերից սկսած մինչև դառնայ ի տեղի իւր բառերը ներառյալ Միհրդատյանը վերցրել է փակագծերի մեջ և ծանոթագրել. «փակագծի եղանակն ոչ գոյր ի բնագրիս. գոր լցուցաք ի միս օրինակէ»:

12 Ա զառաջին

17 Ա, Ե Տրդատէս՝ զՍ

18 Ա յամի Շապուհոյ

19 Ա արքայի Պարսից

23 Ա Շապուհ՝ զՍԲ

25 Ա արքայի Պարսից

Յամի ԺԲ-երորդի Տիրանայ արքայի Հայոց թագաւորն Կոստանդիաս և Կոստաս, որդիք Կոստանդիանոսի<sup>88</sup> բարեպաշտի՝ ամս ԺԴ: Տիրան ամս ԺԲ: Ներսէ՛հ՝ է: Կոստանդիաս և Կոստաս՝ զառաջինն:

Յամին ԺԲ-երորդի Տիրանայ, և է-երորդ ամի Ներսէ՛հի արքային 5 Պարսից, և Ա ամի Կոստանդի և Կոստասայ, որդոց Կոստանդիանոսի բարեպաշտի Հոովմայ՝ եկն ի վերայ նորա ի Բասեան գաւառի ի գեաւղն Յոսիայ, մինչ դարձուցանել նմա զՏիրան՝ արքայ ամենայն գերութեամբն: Հանդերձ, և զորդի նորա Արշակ թագաւորեցուցանել և արձակել ի Հայս: Ներսէ՛հ՝ զութերորդն: Կոստանդիաս և Կոստաս՝ զԲ: Արշակ՝ զառաջինն:

10 Յամի չորրորդի Կոստանդեայ և Կոստասու, և յերրորդի ամի Արշակայ թագաւորեաց Պարսից Որամազդ որդի Շապհոյ ամս Գ: Կոստանդիաս և Կոստաս՝ Դ: Որամազդ՝ զառաջինն:

Յամի Զ-երորդի Արշակայ արքային Հայոց թագաւորէ ի վերայ Պարսից Շապուհ որդի Որամազդայ՝ ամս Հ: Կոստանդիաս և Կոստաս՝ 15 է-երորդն: Արշակ՝ Զ-երորդն: Շապուհ՝ զառաջինն:

Յամի Թ և Ժ-երորդի Շապհոյ արքայի Պարսից, Ի-երորդի չորրորդի ամի Արշակայ արքային Հայոց, թագաւորէ Յունաց Յուլիանոս՝ ամս Բ: Արշակ՝ ԻԴ: Շապուհ՝ ԺԹ: Յուլիանոս նզովածն՝ զառաջինն: Սա որդի է քեռ մեծին Կոստանդիանոսի. թողեալ զքրիստոնէութիւնն և եղև կռապաշտ: Ի նոյն աւուրս երանելին Աթանաս հալածեցաւ յԱրիանոսացն, զոր Սոկրատն պատմէ<sup>89</sup>: (Ի սուրբն Կոստանդիանոսէ սկսանի և մինչ ի Փոքր Թէոդոսն զանսրբոց և զսրբոց գործքն և զհայրապետացն զուղղափառութիւնս: Յուլիանոս և Գաղիանոս<sup>90</sup>, որդիք Դադմատիոսի ումեմն, մնացին որբ ի մէկ հարէ և ոչ ի մարէ, զոր սնոյց Կոստանդ բարեպաշտն. յետոյ եղեն կռապաշտ: 25

Կոստի քոյր թագաւորին Կոստանդէ, կին Լիկիանէ թագաւորին, որ ի բռնազբաւեղն մեռաւ)<sup>91</sup>:

Յամին ԻԶ-երորդի Արշակայ թագաւորին Հայոց և ի ԻԱ-երորդ ամի Շապուհ արքային Պարսից՝ թագաւորէ Վաղենտիանոս և Վաղէս՝ ամս 30 ԺԳ: Արշակ՝ ԻԶ: Շապուհ իԱ: Վաղենտիանոս և Վաղէս՝ զառաջինն:

1 Ա ԲԺ աներորդի փխ. ԺԲ-երորդի  
2 Բոլ. որդիք Կոստանդի: Տե՛ս ծան. 88:  
4 Ա յամի ԲԺ աներորդի փխ. ԺԲ-երորդի, Ա և Գ ամի Ներսէհի փխ. և է-երորդ ամի Ներսէհի  
5 Ա, Գ, Ե, և Ա Կոստանդին փխ. և Ա ամի Կոստանդի, Ա, Գ, Ե, որդոյ  
8-9 Ա, Ե արձակիլ Ա Ներսէի  
9 Ա Կոստանդիա փխ. Կոստանդիաս  
10 Ա Գ երրորդի փխ. և յերրորդի  
11 Մալխ. ամս Դ (տպագր. վրիպակ) փխ. ամս Գ  
12 Ա Կոստաս՝ զչորրորդն փխ. Կոստաս՝ Դ  
13 Ա—Ե յամին է-երորդի Արշակայ  
14 Բոլ. ամս Հ, Մալխ. «ուղղելի՛ ամս ՀԴ» (տողապակի ծանոթագրութիւն):  
15 Ա, Գ, Ե Արշակ գէ-երորդն, Դ Արշակ զ. երրորդն  
16 Ա յամին Թ  
21-27 փակագծերի մէջ վերցված հաւովածն ընդմիջարկութիւն է: Տե՛ս ծան. 91:  
52 Ա, Միհրդ. և սնոյց յետոյ փխ. յետոյ  
28 Ա—Ե ի ամի փխ. ԻԱ-երորդ ամի, Ե Շապհոյ  
29 Ա Վաղէտիանոս

Յամի ԼԴ-երորդի Շապհոյ արքային Պարսից, ԼԹ ամի Արշակայ արքային Հայոց՝ թագաւորէ Յունաց Գրատիանոս<sup>92</sup> զառաջինն:

494բ Յամի ԽԴ-երորդի|Շապհոյ արքային Պարսից (և Յուլիանոսի պղծոյ)<sup>93</sup> ըմբռնի Արշակ Հայոց արքայ ի Շապհոյ արքայէն Պարսից: Եւ 5 տիրէ Շապուհ ի վերայ Հայոց ամս ժԲ սրով և հրով և գերութեամբ: Ապա թագաւորէ Յունաց Թէոդոս՝ ամս ժԹ: Շապուհ ՄԱ, ի տէրութեան ի վերայ Հայոց<sup>94</sup> զԵւթներորդն<sup>95</sup>: Թէոդոսն Մեծ զառաջինն:

Յամին ՄԶ-երորդի Շապհոյ արքային Պարսից, և ի Զ-երորդի ամի թագաւորութեանն Թէոդոսի Մեծի, թագաւորեցոյց Թէոդոս զՊապ որդի 10 Արշակայ ի վերայ աշխարհին Հայոց: Տիրէ ամս ժԳ: Շապուհ՝ ՄԶ: Թէոդոս՝ Զ: Պապ՝ զառաջինն:

Յամի ԿԹ-երորդի Շապհոյ արքային Պարսից, ժԹ-երորդի Թէոդոսի Մեծի, թագաւորէ ի վերայ Հայոց Վարազդատ՝ ամս Զ: Շապուհ՝ ԿԹ: Վարազդատ՝ զառաջինն:

15 Յամի Լ-երորդի<sup>96</sup> Շապհոյ արքային Պարսից, երկրորդ ամի Վարազդատայ արքայի Հայոց՝ թագաւորէ Յունաց Արկաղէոս որդի Թէոդոսի ամս ժԹ: Շապուհ՝ Լ: Վարազդատ՝ զերկրորդն: Արկաղէոս՝ զառաջինն:

Յամի Ե-երորդի Արկաղեայ կայսեր, ի Զ-երորդ Վարազդատայ արքայի Հայոց, թագաւորէ Պարսից Արտաշիր որդի Շապհոյ՝ ամս Դ: 20 Արկաղէոս՝ Ե: Վարազդատ՝ Զ: Արտաշիր՝ զառաջինն:

Յամի Զ-երորդի Արկաղեայ կայսեր, յերկրորդի ամի Արտաշիր արքային Պարսից, թագաւորեն ի վերայ Հայոց Արշակ և Վաղարշակ՝ ամս Ե: Արկաղէոս՝ Զ: Արտաշիր՝ Բ: Արշակ և Վաղարշակ՝ զառաջինն:

Ապա թագաւորէ Պարսից Վոամ ամս ժԱ: Արկաղէոս՝ ամս Թ: Ար- 25 շակ և Վաղարշակ՝ Դ: Վոամ զառաջինն:

Յամի երկրորդի<sup>97</sup> Վոամայ, մետասաներորդի ամի Արկաղեայ կայսեր, թագաւորէ ի վերայ Հայոց Խոսրով ոմն հրամանաւ Պարսից արքային՝ ամս Գ: Արկաղէոս՝ ժԱ: Խոսրով զառաջինն:

Յամի ժԴ-երորդի Արկաղեայ կայսեր, և ի Զ-երորդի ամի Վոամայ 30 Պարսից արքային՝ թագաւորէ Հայոց Վոամշապուհ արքայ ամս Ը: Արկաղէոս՝ ժԴ: Վոամ՝ Զ-երորդն: Վոամշապուհ՝ զառաջինն:

1 Ա.—Ե յամին ԼԴ Շապհոյ (Դ Շապուհ) արքայի, Ա,Գ,Ե Լ և Թ ամի Արշակայ, Դ և Թ ամի Արշակայ  
4-5 և Յուլիանոսի պղծոյ բառերն ընդմիջարկութիւն են: Տե՛ս ծան. 93:  
6-7 Ե թագաւորէ Յունաց բառերից հետո երկու տող բաց է թողած, որից հետո շարունակում է Թէոդոսն մեծ զառաջինն  
6-7 Ա ՄԱ ամ փխ. ՄԱ Ա,Դ չիք ի վերայ Հայոց Միհրդ. Պատկ., Մայիս. ի վերայ Հայոց բառեր վերցրել են փակագծի մեջ, էլնելով Միհրդատայանի հետևյալ ծանոթագրութունից. «Ե միւ օրինակին ոչ գոյ փակագծիւ եղեալն»: Տե՛ս ծան. 94:  
7 Բոյ. զերկոտասաներորդ փխ. զԵւթներորդն: Տե՛ս ծան. 95:  
10 Ա Շապուհ ՄԴ  
15 ՏՏ արքայի փխ. արքային  
18 Ա.—Ե յամի Է-երորդի  
20 Ա Արկաղիոս (նաև՝ հետագայում)  
23 Ա Արտաշիր՝ զԲ  
24 Ա Արկաղեա  
30 Ա,Ե չիք ամս



Յամին ԺԱ-երորդի Վոսմայ Պարսից արքայի թագաւորէ Յունաց Ոնորիոս՝ ամս ԻԲ<sup>98</sup>; Վոսմշապուհ է: Յազկերտ զառաջինն<sup>99</sup>:

Յամի երկրորդի Յազկերտի որդւոյ Վոսմայ, և յամի երկրորդի Ոնորեայ կայսեր բարձաւ թագաւորութիւնն Հայոց: որ տեհաց ամս 5 ՆԵ<sup>100</sup>: Եւ վախճանեցաւ և վճարեցաւ:

Գ Լ Ո Ւ Խ Զ

495ա Եւ արդ՝ երկակի//կանոնաւ զՊարսից եւ զՅունաց հաստատելով նշանակեցից զթագավորութեան ժամանակն:

Արդ՝ թագաւորէ Պարսից Յազկերտ ամս ԻԱ: Եւ Ոնորիոս թագաւորէ 10 Յունաց ամս ԻԲ: Յազկերտ զառաջինն: Եւ Ոնորիոս զառաջինն:

Յամի Ի-երորդի երկրորդի Ոնորեայ կայսեր թագաւորէ Վոսմ որդի Յազկերտի՝ ամս ԻԲ: Եւ յամի երկրորդի Վոսմայ թագաւորէ Յունաց Թէոդոս ամս ԻԲ<sup>101</sup>: Եւ Ոնորիոս՝ ԻԲ: Վոսմ՝ Բ: Թէոդոս՝ զառաջինն:

Յամի Ի-երորդի Թէոդոսի Փոքու թագաւորէ Պարսից Յազկերտ 15 որդի Վոսմայ ամս ԺԹ: Եւ յամի Յազկերտի թագաւորէ Յունաց Կոստանդիան՝ ամս Ա: Յազկերտ՝ զառաջինն:

Յամի երկրորդի Յազկերտի թագաւորէ Յունաց Վաղենտիանոս՝ ամս Լ: Յազկերտ՝ զերկրորդն: Վաղենտիանոս՝ զառաջինն:

Յամի ԺԼ-երորդի Վաղենտիանոսի կայսեր թագաւորէ Պարսից Վա- 20 զարշ որդի Յազկերտի՝ ամս Դ: Վաղենտիանոս՝ ԺԸ: Վազարշ՝ զառաջինն:

Յամի Ի-երորդի երկրորդի Վաղենտիանոսի կայսեր թագաւորէ Պարսից Պերոզ՝ ամս ԽԸ: Վաղենտիանոս՝ ԻԲ: Պերոզ՝ զառաջինն:

Յամի Ժ-երորդի Պերոզի թագաւորէ Յունաց Նարկիսոս ամս Զ: 25 Պերոզ՝ Ժ: Նարկիսոս՝ զառաջինն:

Յամի ԺԷ-երորդի Պերոզի արքայի թագաւորէ Յունաց Վոսմիոս՝ ամս Գ: Պերոզ՝ ԺԷ: Վոսմիոս՝ զառաջինն:

Յամի Ի-երորդի Պերոզի թագաւորէ Յունաց Մարկիանոս ամս Ե: Պերոզ՝ Ի: Մարկիանոս՝ զառաջինն:

30 Յամի ԻԵ-երորդի Պերոզի՝ թագաւորէ Լևոն զառաջինն: Յամին Լ-երորդի<sup>102</sup> Պերոզի թագաւորէ Յունաց Անթիմոս, ամս՝ Զ: Պերոզ՝ ԼԱ: Անթիմոս զառաջինն:

Յամի ԽԴ-երորդի Պերոզի թագաւորէ Յունաց Ուլիմպոս՝ ամ մի: Եւ ի միառամ ամի մեւ Զենոն՝ ամ մի: Եւ ի ԽԶ-երորդին Պերոզի՝ թա- 35 գաւորէ Զենոն ի վերայ Յունաց՝ ամս ԺԷ: Պերոզ՝ ԽԶ: Զենոն՝ զառաջինն:

1 Ա.— Ե յամի Ե-երորդի Յազկերտի փխ. յամին ԺԱ-երորդի Վոսմայ  
4 Ա. Ոնորեայ  
5 Ա. շորեքճարիւր և հինգ փխ. ՆԵ  
7-8 Վերնագիրը ձեռագրիկն է:  
7 Ա. զպարսիցն  
7 Ա. զյունա փխ. զՅունաց  
20 Ա. Վաղենտիանոս զԺԸ  
33 Ա,Գ,Ե յամի ԽԴ-երորդի ամի, Մրեռդ., Պատկ. յամի Խ. և շորորդի, Ա,Գ Ուլիմպոս

- Յամի շորրորդի Ձենոնի թագաւորէ Պարսից Ջամասպ՝ Բ<sup>103</sup>, Ձենոն  
 Ի վերայ Յունաց՝ զշորրորդն: Ջամասպ՝ զառաջինն:  
 Եւ Ի վերայ Ե-երրորդի ամի Ձենոնի կայսեր թագաւորէ Պարսից  
 Կաւատ՝ ամս ԽԱ: Ձենոն՝ Զ: Կաւատ՝ զառաջինն:
- 5 Յամի ԺԳ-երրորդի Կաւատայ թագաւորէ Յունաց Անաստաս՝ ամս  
 ԽԷ: Կաւատ՝ զԺԳ: Անաստաս՝ զառաջինն:  
 Յամի Խ-երրորդի Կաւատայ թագաւորէ Յունաց Յուստիանոս ամս  
 ԼԸ: Կաւատ՝ զԽ: Յուստիանոս՝ զառաջինն,  
 Յամի երրորդի Յուստիանոսի կայսեր թագաւորէ Խոսրով որդի Կա-
- 495 րատայ՝/ամս ԽԸ<sup>104</sup>: Յուստիանոս՝ զերրորդն: Խոսրով՝ զառաջինն:  
 Յերեսուն և եօթն ամի Խոսրովայ թագաւորէ Յունաց Յուստիանոս՝  
 ամս ԺԲ: Խոսրով՝ ԼԷ: Յուստիանոս՝ զառաջինն:  
 Յամի ԺԲ-երրորդի Յուստիանոսի կայսեր թագաւորէ Պարսից Որմիզդ-  
 որդի Խոսրովայ ամս ԺԲ: Յուստիանոս՝ ԺԲ: Որմիզդ՝ զառաջինն:
- 15 Յամի երկրորդի Որմզդի թագաւորէ Յունաց Տիբերոս՝ ամս Գ: Որ-  
 միզդ՝ զերկրորդն: Տիբերոս՝ զառաջինն:  
 Ի Հինգերորդի ամի Որմզդի թագաւորէ Յունաց Մարիկ՝ ամս ԻԱ:  
 Որմիզդ՝ Ե: Մարիկ՝ զառաջինն:  
 Յամի Է-երրորդի<sup>105</sup> Մարիկայ կայսեր թագաւորէ Պարսից Խոսրով
- 20 որդի Որմզդի՝ ամս ԼԷ: Մարիկ՝ զԷ-երրորդն: Խոսրով՝ զառաջինն:  
 Յամի ԺԳ-երրորդի Խոսրովայ թագաւորէ Յունաց Փոկաս՝ ամս Ը:  
 Խոսրով՝ ԺԳ: Փոկաս՝ զառաջինն:  
 Յամի Ի-երրորդի<sup>106</sup> Խոսրովայ Պարսից արքային թագաւորէ Յունաց  
 Երակղոս որդի Երակղի՝ ամս Լ: Խոսրով՝ ԻԲ: Երակղոս՝ զառաջինն:
- 25 Յամի ԺԷ-երրորդի Երակղի կայսեր թագաւորէ Պարսից Կաւատ որդի  
 Խոսրովայ՝ ամս Ա: Երակղոս՝ ԺԷ: Կաւատ՝ զառաջինն:  
 Ապա Արտաշիր՝ ամս Գ: Երակղոս՝ ամս Ի: Արտաշիր՝ զառաջինն:  
 Ապա Բբոր<sup>107</sup> բամբիշն զուստր Խոսրովայ՝ ամս Բ: Երակղոս՝ ԻԱ:  
 Բամբիշ՝ զառաջինն<sup>108</sup>:
- 30 Ապա Յազկերտ՝ ամս Ի, Երակղոս՝ ԻԳ: Յազկերտ՝ զառաջինն:  
 Յամի ԻԳ-երրորդի երանելոյն Երակղի կայսեր, և յերկրորդ ամի<sup>109</sup>

1 Ա, Գ, Ե Ջամասպ Գ ջԱմասպ

1 Բռլ. Ջամասպ Ը փխ. Ջամասպ Բ: Տե՛ս ծան. 103:

3 Ա Ի վերայ երրորդի

9-10 Բռլ. որդի Կաւատայ ամս ԽԷ: Տե՛ս ծան. 104:

13 Ա, Գ, Ե Որմզդի

19 Ա—Ե յամին երրորդի Տօրկա

20 Ա—Ե Մօրիկ՝ զիններրորդն

25-26 Գ շի՛ք Երակղի կայսեր Ե գրիշը բաց է թողել Երակղի կայսեր թագաւ. բառերը և շարունակել է կիսատ մնացած թագաւորէ բառի -որէ մասնիկից (որէ Պարսից Կաւաղ): Ա որէ փխ. թագաւորէ Ա—Գ Երակղոս Ժ, Գ չիք Երակղոս ԺԷ: Կաւատ՝ զառաջինն: Ապա Արտաշիր՝ ամս Գ: Երակղոս՝ ամս Ի: Արտաշիր՝ զառաջինն

31 ԶԶ յերկրորդ ամի միաբանեալ Պարսից արքայի ընդ իսմայելացիսն արտաքս Ի Սինէ անապատէ, Միհրդ., Պատկ. ԶԶ-ին ավելացնում են որ Ելին (արտաքս բառից հետո), Մալխ. երկրորդ ամի Յազկերտի Պարսից արքայի միաբանեալ Հրէից ընդ իսմայելացիսն..., որ Ելին արտաքս Ի Սինէ անապատէ: Տե՛ս ծան. 103:

Յազկերտի Պարսից արքայի միաբանեալ Իսմայելացիքն՝ ելին արտաքս ի Սինէ անապատէ հրամանաւ Աստուծոյ՝ առնել անապատ միանգամայն զամենայն երկիր: Երակղոս ԻԴ: Յազկերտ զերկրորդն: Ամռ, արքայ Իսմայելի՝ զառաջինն:

5 Բայց զամս եկամտիցն և ծառայիցն թագաւորելոցն, որպէս Խոռեմայն և զԽոռոխ Որմզդին<sup>110</sup> և Խոսրովայն և զՈրմիզդն, որք բռնութեամբ կալան զթագաւորութիւնն, և էր որ ընդ պատառել ազգացն հակառակութեամբ, ի սոյնս յաւելեալ կարգեցից թիւ. որպէս զկէս ամին Խոռեմայ ի կէս ամին Կաւատայ յաւել ևս ասացից ամ մի:

10 Յամի Թ-երորդի<sup>111</sup> Պարսից արքայի Յազկերտի վախճանի երանելին Երակղէս, և թագաւորեն որդիք նորա Կոստանդին և Երակղակ: Ի նմին ամի մեռաւ Կոստանդին դաւեալ ի մարէն: Եւ թագաւորէ Երակղակ: Դարձեալ փոխեցաւ Երակղակ, և թագաւորէ Կոստաս<sup>112</sup> որդի Կոստան-  
496<sup>a</sup> դեայ, որ կոչեցաւ յանուն հար իւրոյ Կոստանդին: // Յազկերտ՝ Ժ-երորդ<sup>113</sup>:

15 Կոստաս՝ զառաջինն:  
Եւ թագաւորեաց Յազկերտ ի վերայ աշխարհին Պարսից ամս Ի: Յազկերտ՝ Ի: Կոստանդին՝ ԺԱ<sup>114</sup>: Արքայն Իսմայելի՝ ԺԹ<sup>115</sup>:  
Յերկոտասան ամի Կոստանդի, և ի Ի-երորդ ամի Իսմայելացոց տէրութեանն՝ բարձաւ տէրութիւնն Պարսից որ կալաւ ՇԼԲ<sup>116</sup> ամ<sup>117</sup>:

20 Գ Լ ՈՒ Խ Ե

Հայք զկնի բառնալոյ տէրութեանն Արշակունեաց: Բովանդակութիւն առաջիկայ պատմութեան, յապատմութենէն Վահանայ մինչեւ ցյառնելն Իսմայելացոց եւ տիրել յԵգիպտոսէ մինչեւ ի Պարսիկս:

Եւ եղև ի նուազիլ ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Հա-  
25 յաստան աշխարհի, ի բառնալ տէրութեանն Վոսմշապուհ արքայի՝ տիրէ ի վերայ սորա ազգն Կարբեղովմայեցի<sup>118</sup> իշխանութեանն: Խորհուրդ ի ձեռն առեալ ահեղ և ահագին՝ հանդերձ միաբանութեամբ դառնաշունչ և մեծամեծ քաղէիցն և ամենայն գլխաւոր նախարարաւքն թագաւորութեան իւրոյ՝ բառնալ ի Հայաստան աշխարհէ զբարեպաշտու-

30 թեան պտուղս: Ուստի ոչինչ աւգտեցաւ, այլ յոյժ վնասեցաւ, և բարեպաշտութիւնն ևս քան զևս ծաղկեալ պայծառացաւ:  
Արդ՝ զժամանակս թագաւորութեանն շարագործին Յազկերտի. և Եթէ

3-4 Ա.—Ե յազկերտ զառաջինն, Ա, Գ, Ե Իսմայէլ  
10 Ա.—ն յամին իններորդի  
10 Միհրդ., Պատկ., Մալխ., յամի Զ-երորդի: Տե՛ս ծան. 111:  
11-12 Ա. նմին փիւ. ի նմին  
13 Բոլ. Կոստաս: Տե՛ս ծան. 112:  
14 Ա, Գ, Ե յազկերտի Ժ-երորդի, Դ ազկերտ ի Ժ-երորդի  
14 Միհրդ., Պատկ., Մալխ., Յազկերտ՝ է-երորդ: Տե՛ս ծան. 113:  
16 Ա. աշխարհիս  
17 Ա. Ե Կոստանդիս, Դ Կոստանդիս Բոլ. արքայն Իսմայելի՝ Թ: Տե՛ս ծան. 115:  
19 Միհրդ. ՇԼԲ ամ (աշխարհի), Ա ՇԼԲ ամ: Ե: Տե՛ս ծան. 117:  
24 Մալխ. ի նուազել  
26 Ա. Կարբեղովմայեցի

ո՛րպէս նա կամէր զաստուածայինն եղծանել կարգս, և կամ ո՛րպէս քաջ  
 նախարարացն Հայոց և նախանձաւորն Աստուծոյ նահապետն Մամի-  
 կոնէից տանն, **Կարմիրն** կոչեցեալ Վարդան, հանդերձ միագունդ սպա-  
 ռազէն նիզակակից ընկերաւքն և զաւրաւք իւրեանց կազմեալ զինեցան  
 5 ի պատերազմ, առեալ ի ձեռն զվահանն հաւատոյ, և զգեցեալ իբրև  
 զգրահ ամրութեան զնախանձն աստուածային բանին, գոգցես թէ առաջի  
 աշաց իսկ ականատես դէմ յանդիման տեսանելով զ՛ ի վերուստ առաքեալ  
 նոցա զպսակն. վասն որոյ արհամարհեալ զմահ, և առաւել լաւ հա-  
 մարեալ մեռանել ի վերայ աստուածային պնդիտային. և թէ որպէս ի  
 10 վերայ նոցա եկին<sup>119</sup> զաւրքն պարսիկ սաստիկ բռնութեամբ, և կամ  
 ո՛րպէս ի դիմի հարեալ զիւրեանց կատարեցին զնահատակութիւն, և  
 կամ որպէս ի ձեռս հեթանոսաց ըմբռնեալ սուրբ վկայքն Քրիստոսի՝  
 կատարեցին զնահատակութիւնս իւրեանց յԱպր Շահր մերձ ի Նիւշա-  
 պուհ քաղաքի, ի տեղուոյն, որ կոչի Թէարքունի<sup>120</sup> — այն ամենայն ի ձեռն  
 15 այլոց<sup>121</sup> գրեցաւ, որպէս ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն<sup>122</sup>:

Բայց զայն ամենայն, որ ի Պերոզի ժամանակն եղեալ շարութիւն, և  
 և զառ ի հոսորովայ զապստամբութիւնն զՎարդանայ, և զզաւրացն Պար-  
 սիցն զապստամբելն ի յՈրմզդէ, զմահն Որմզդի<sup>123</sup> և զթագաւորելն  
 496p հոսորովայ. զմահն Մարկայ և զթագաւորելն Փոկասայ. զառնուլն  
 20 Եգիպտոսի. զկոտորածն Աղեքսանդրի. զդիմելն Հերակլի ի կողմանս  
 հիւսիսոյ առ արքայն Թէտալացոց<sup>124</sup>. զյուզարկումն անհուն բազմու-  
 թեանն ազգաց. զասպատակն Յունաց յԱտրպատական, զառ և զաւոր,  
 և զզարձն ընդ Փայտակարան<sup>125</sup>. զեկ զաւրացն Պարսից յարևելից զդիմի  
 հարկանել նմա. զպատերազմն որ յաշխարհին Աղուանից. զզարձ կայ-  
 25 սերն ի Նախճըւան քաղաքն և զկոիւն Արճիշոյ. զգնալն կայսեր անդէն  
 ի սահմանս իւր. զմեւս ևս այլ դիմելն ի վերայ հոսորովայ. զգործ պա-  
 տերազմին որ ի Նիհնուէ. զասպատակն որ ի Տիսբոն քաղաք. զզարձն  
 յԱտրպատական. զմահն հոսորովայ. զթագաւորելն Կաւատայ. զհաշտու-  
 թիւն՝ որ ի մէջ թագաւորացն երկոցունց. թզողուլն անդրէն ի բաց զսահ-  
 30 մանսն Յունաց. զզարձ աստուածեան խաշին ի քաղաքն սուրբ: Յետ  
 այսորիկ զարթուցեալ անհուն բարկութիւն, և զվերջին աղէտս հինին՝ որ  
 ի կողմանս հարաւոյ, և թէ ո՛րպէս յանկարծարէն շարժեցան բանակքն  
 Իսմայելի, և ի վայրկեան ժամանակի վանելով զզաւրութիւն թագաւորացն  
 երկոցունց՝ կալան յՅեգիպտոսէ մինչև յայսկոյս գետոյն մեծի Եփրատայ

7 Ա. զի ի վերուստ, որք հետագայում դարձված է զը ի վերուստ

9 Ա. զմեռանել ի վերայ աստուածայեանն Միհրդ. տեսանել փխ. մեռանել

9-10 Միհրդ., Պատկ. եթէ փխ. և թէ: Բոլ. էին փխ. եկին: Տե՛ս ծան. 119:

17 Պատկ. զապստամբութիւն

18 Բոլ. զապստամբելն ի յՈրմզդի: Տե՛ս ծան. 123:

18 Բոլ. զմահն Որմզդայի: Տե՛ս ծան. 123:

20 Ա. Հերակլի

30 ՝ աստուածայեան

31 Ա. հենին

34 Ա. երկոցունցն

և ցասման Հայաստանեայց, և յեզերէ ծովուն մեծի Արևմտից մինչև ի դուռն թագաւորութեանն Պարսից զամենայն քաղաքս Միջագետաց Ասորոց և զՏիւրքն և զՎեհ՝ Արտաշիր և զՄարանդ, զՀամադան մինչև ցԳանձակ քաղաք և ցՀրատն<sup>126</sup> մեծ՝ որ յԱսորպատական գաւառի—զայս 5 ամենայն կամեցայ ի ձեռն գրոյս այսորիկ կարճառատիւ ձեզ վիպասանել<sup>127</sup>;

Գ Լ Ո Ւ Խ Ը

Ապստամբութիւն Վահանայ ի Պերոզէ: Մահ Պերոզի եւ թագաւորելու Կաւատայ: Վահան կարգի մարգպան Հայոց: Մահ Կաւատայ եւ թագա- 10 տրել Անուշրուվան Խուրովայ: Ապստամբութիւն Վարդանայ: Պատերազմ բնդ նմա Խուրովայ եւ պարտութիւն:

Եւ եղև յամա Պերոզի արքայի Պարսից բարձուն ամենայն իշխանութեանցն և կարգաց և աւրինաց քրիստոնէութեան, և այնպիսի վտանգ նեղութեան հալածանաց և քամահանաց ի վերայ հասեալ իշխանաց, 15 մինչ զի ի բաց ընկեցին յինքեանց զլուծն ծառայութեան: Եւ ապստամբեալ Մամիկոնեանն Վահան՝ հալածեաց զՊարսիկս և բռնաբարայն<sup>128</sup> գրաւեաց զիշխանութիւնն:

Յայնժամ արձակէ ի վերայ նորա Պերոզ արքայ՝ Հոնաց<sup>129</sup> զարյոյժ: Եւ հրաման տայ խիստ սաստիւ՝ սպանանել զապստամբն, և հար- 20 կանել զամենայն արու սրով սուսերի: Ընդդէմ սորա աճապարեալ Վա- 497\* հան սպարապետ Լ հազարու ընտիր վառելոց, կարգին գունդ առ/գունդ և ճակատ առ ճակատ, և յարձակին ի միմեանս ի ձայն փողոյ տագնապաւ ի դաշտին Գերանայ<sup>130</sup>:

Անդ յաւզնութիւն հասեալ աստուածեան Բանն, հողմն սաստկա- 25 ցուցեալ զմրրիկ փոշոյն՝ զզարաւըն. Պարսից հեղոյր, իբրև զմութ խաւարի զնոսա պատէր ի միջաւրեայ ժամանակի: Սաստիկ կոտորած լինէր երկոցունց կողմանցն, և ոչ զոյր ընտրել զդի անկելոցն, ո՛չ զպարսիկ և ո՛չ զհայ զաւրական: Բայց սակայն զաւրացեալ զաւրն Հայոց վանեցին անդ կոտորածով զզարն Պարսից, և զմնացեալսն փախստա- 30 կան արարեալ հալածական տանէին. և դարձան յաղթութեամբ մեծաւ:

Այս Վահան ժողովեաց և զհարկս աշխարհիս Հայոց և շինեաց զեկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քա-

1 Բով. արևմտից փխ. Արևմտից  
 3 Ա. և զՀամադան SS զՀամատան  
 5 Ա. կարճառատի ձեզ, SS կարճառատ ձեզ: Տե՛ս ծան. 127:  
 12 Ա. ասեն այն փխ. ամենայն  
 16 Ա. Վահան Մամիկոնեան փխ. Մամիկոնեանն Վահան  
 16 Ա. զՊարսիկն Ա բռնաբար այն: Տե՛ս ծան. 128:  
 21 Ա. ընդիր  
 21 Ա. կարգեն  
 26 Ա. ի մէջ արեա  
 27 Ա. ընդրել  
 31 Միերդ., Պատկ. աշխարհին  
 31 Միերդ., Պատկ. եկեղեցիս

ղաքի<sup>131</sup> և ի Դըւնի և ի Մզըրայա<sup>132</sup> և ի բազում տեղիս աշխարհիս Հայոց: Եւ շինեալ զերկիրս նորոգեաց վերստին:

Իսկ Պերողի արքային Պարսից, թէպէտ և կամեցաւ վերստին զարս գումարել ի վերայ աշխարհիս Հայոց, ո՛չ եղև նմա պարապ. զի համ-  
5 բաւք թշնամեացն ստիպէին զնա ի կողմանցն Քուշանաց և յայնմ մարզէ-  
զի ինքն իսկ արքայն Քուշանաց խաղացեալ գայր ի վերայ նորա զարու  
մեծաւ:

Եւ նորա գումարեալ զարս իւր՝ զնաց ընդդէմ նորա տագնապաւ  
մեծաւ: Ասէ. «Երթայց նախ առաջին զնա վանեցից, և ապա պարապաւ  
10 զարձեալ զնացից ի Հայս, և մի՛ խնայեսցէ սուր իմ ի նոսա, յարս և ի  
կանայս»:

Եւ ինքն անցեալ փութանակի եհաս ընդդէմ թշնամուցն յարևելս. և  
եղև պատերազմն սաստիկ. հարին և կործանեցին զբազմութիւն զարացն  
Պարսից, մինչև ո՛չ մնաց ի նոցանէն ապրեալ և փախստական: Եւ մեռաւ  
15 Պերող արքայ ի պատերազմին հանդերձ եւթանեքումբք որդուվքն:

Եւ ապա յայնժամ թագաւորեաց Կաւատ որդի նորա ի վերայ աշ-  
խարհին Պարսից<sup>133</sup>, Եւ զի բեկեալ էր զարութիւն բազմութեանն զարաց  
իւրոց, ո՛չ ընդ ումեք կամեցաւ ունել գործ պատերազմի, այլ արար  
խաղաղութիւն յամենայն կողմանց. առնէ և ընդ Հայոց հաշտութիւն, և  
20 կոչէ զՎահան ի դուռն, և մեծարէ զնա մեծապէս պատուով: Եւ տայ նմա  
զմարդպանութիւն աշխարհին և զՄամիկոնեաց տէրութիւնն, և երդում  
առ բազում ի ծառայութիւն, և արձակէ բարեաւ յերկիր իւր<sup>134</sup>:

Յետ Վահանայ կալաւ զիշխանութիւնն Վարդ Պատրիկ եղբայրն նո-  
497բ րա սակաւ ինչ ժամանակ, և մեռաւ: Զկնի նորա//եկին մարդպան պար-  
25 սիկք. ապա ո՛չ կարացին պատերազմիլ Հայք, ի հնազանդութեան  
կացին մինչև ցՍուրէնն մարդպան և ցՎարդանն Մամիկոնէից տէրն:

Եւ եղև ի ԽԱ ամի թագաւորութեան Խոնրովայ որդուց Կաւատայ՝  
ապստամբեաց Վարդան և ի բաց եկաց ի ծառայութենէ թագաւորու-  
թեանն Պարսից հանդերձ միաբանութեամբ ամենայն Հայաստանեաւք:  
30 Սպանեալ զՍուրէնն մարդպան յանկարծաւրէն ի Դուին քաղաքի՝ առին  
զաւար բազում և զնացին ի ծառայութիւն Յունաց:

Յայնժամ յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց  
անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, և խնդրեաց ի Խոն-  
րովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զգիւան աշխարհին Սիւնեաց ի  
35 Դըւնայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զբազաքն ի շահրմար

1 Բել. քաղաք: Տե՛ս ծան. 131:

2 ՏՏ զերկիրն

5 Միհրդ., Պատկ. Քուշանաց: Եւ յայնմ մարզէ Ա մարզէ բառի փոխաւենն սկզբում  
գրված է եղել արէ, հետո սրբագրվել է մարզէ: Պատկանյանի ձեռագիրն  
ունեցել է արէ, բայց Պատկանյանը հետևելով Միհրդատյանին՝ տպագրել է  
մարզէ:

10 Ա յայրս փխ. յարս

21-22 Ա, Պատկ., Միհրդ. տէրութիւն, Ա արդ բազում փխ. առ բազում

25 Մալխ. պատերազմել

25 Ա ի հնազանդութիւն

30 Միհրդ., Պատկ. ի Դըւին

Ատրպատականի<sup>135</sup>, զի մի՛ ևս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա: Եւ կատարէր հրամանն:

Իսկ առ Հայոց երդնոյր թագաւորն Յունաց, և հաստատէր զնոյն ուխտ՝ որ ի մէջ թագաւորացն էր երկոցունց, երանելոյն Տրդատայ և 5 Կոստանդիանոսի. և տայր նոցա զզարան կայսերական յազնութիւն: Եւ նոցա առեալ զզարն՝ դիմեցին ի վերայ քաղաքին Դրւնայ և պաշարեալ կործանեցին ի վերուստ մինչև<sup>136</sup> ի վայր, և հալածեցին զզարն Պարսից որ ի նմա կային:

Բայց եհաս ի վերայ նոցա<sup>137</sup> յանկարծարէն խոտովութիւն մեծ, զի 10 զեկեղեցի սրբոյն Գրիգորի, որ շինեալ էր մերձ ի քաղաքն, էին արարեալ համբարանոցս Պարսիկքն, հարին հուր և այրեցին. վասն որոյ եղև նոցա խոտովութիւն մեծ:

Գայ ապա ի վերայ նորա Միհրանն Միհրեանդակ ի հազարաւ զարու և փղաւք բազմաւք: Եւ եղև պատերազմ մեծ ի դաշտին Խաղամխեայ<sup>138</sup>. 15 և հարեալ զզարն Պարսից անհնարին հարուածովք մաշէին ի սուր սուսերաց, զփիզսն զամենայն թափէին: Եւ Միհրանն<sup>139</sup> սակաւաւք պրծեալ զնացին յերկիրն իւրեանց:

Այս այն Վարդան է, յորոյ վերայ եկն ինքն արքայն Պարսից, կոչեցեալ Անուշ Ըռուան Խոսրով, հանդերձ բազմութեամբ սպառազէն զաւ- 20 րացն և փղաւք բազմաւք, և ճանապարհ կալեալ ընդ գաւառն Արտազոլ՝ զնաց ընդ Բագրեանդ, զանց արարեալ զԿարնոյ քաղաքաւ: Եւ կալեալ ճանապարհ զնաց ի Մեղիտինէ<sup>140</sup> և բանակեցաւ զէմ յանդիման նորա:

Եւ ի վաղուեան առաւօտուն հապճեալ ստիպով կարգեն զունդ առ 498ա զունդ և ճակատ առ ճակատ, և բաղխէին/զմիմեանս պատերազմաւ: Եւ 25 սաստկացաւ պատերազմն ի վերայ երեսաց երկրի, և խմբեցաւ պատերազմն յոյժ. և մատնեաց Տէր ի պարտութիւն զթագաւորն Պարսից և զարս նորա զամենայն: Եւ խորտակեցան առաջի թշնամեացն<sup>141</sup> սրով սուսերի, և փախեան յերեսաց նոցա սաստիւ տազնապաւ. ո՛չ գիտելով զճանապարհս փախստեան իւրեանց՝ երթեալ ամացան ի գետն մեծ, որ 30 կոչի Եւփրատէս: Եւ ուռուցեալ ի վեր ջուրն՝ խաղացոյց զբազմութիւն փախստականացն իբրև զբազմութիւն մարախոյ, և ո՛չ կարացին յաւուր յայնմիկ ճողոպրել բազումք: Բայց թագաւորն մազապուր պրծեալ սակաւաւք՝ ի փիղս և ի ձին ապաստան եղեալ, փախստական ընդ Աղձնիսն անդրէն ի կայեանս իւր երթայր:

35 Եւ նոքա առին զբանակն ամենայն հանդերձ արքունական գանձիւքն:

7 Պատկ., Մալխ. շիֆ ի վերուստ մինչև: Տե՛ս ծան. 136:

11 Ա. պարսիկսն

13 Ա. Միհրհանն (եակ այլուր):

16 Ա. Միհրհանն: Այսպես է եակ Պատկ. ձեռագրում:

18 Ա. յորս

19-20 Ա. զօրաց

22 ՁՁ, Միհրդ., Պատկ. տեղի մի փխ. Մեղիտինէ: Տե՛ս ծան. 140:

29 ՁՁ, Միհրդ., Պատկ. ամրացան փխ. ամացան

32-33 Ա. փրծեալ սակաւաւք ի փեղս: Ա. ապաստմբ փխ. ապաստան (այսպես է նաև Միհրդատյանի մյուս օրինակը):

34 Միհրդ., Պատկ. ի կայանս (եակ՝ այլուր):

Եւ կալան զբամբիշն և զբանուկան<sup>142</sup> և թափեցին զմաշապերճանն<sup>143</sup> ամենայն, դեսպակն ոսկեղէն բազմաքանքար, որ էր ակամբբ պատուականաւք և մարգարտու յօրինեալ, որ անուանեալ կոշէր ի նոցունց դեսպակ փառաց: Առաւ և Հրատն, զոր ընդ ինքեան շրջեցուցանէր թագաւորն 5 հանապազորդ յազանականություն իւր, որ մեծագոյն համարեալ էր քան զամենայն կրակ, որ կոշէր ի նոցունց Աթաշ. հեղձաւ ի գետն հանդերձ մովպետան մովպետաւ և այլ բազմութեամբ մեծամեծ աւաքաց: Յամենայն ժամ արհնեալ է Աստուած:

Գ Լ Ո Ի Խ Թ

10 Ի Քրիստոս հաւատալ եւ մկրտիլ Անուշըռուան Խոսրովայ: Մարգպանք եւ զաւրավարք Պարսից որ եկին ի Հայս յետ Վարդանայ մինչեւ ցբարձումն Սասանեան տէրութեանն:

Այս Խոսրով, որ կոչեցաւ Անուշ Հոռուան<sup>144</sup> ի ժամանակս իւրոյ թագաւորութեանն, յառաջ քան զապստամբութիւնս զայս, հաստատեաց 15 զերկիր, քանզի էր խաղաղասէր և աշխարհաշէն: Եւ ի լինել ապստամբութեանն այնորիկ, յայնմ հետէ ընդոստուցեալ զարթեալ ի բարկութիւն, զանձն անվնաս համարեալ իբր թէ՛ «Հայր էի ամենայն երկրի, և ոչ տէր, և սնուցեալ զամենեսեան իբրև որդի և սիրելի: Եւ արդ՛ ասէ, ի նոցանէ խնդրեսցէ Աստուած զարիւնս զայս»: Այս Խոսրով ի ժամանակս իւրոյ 20 թագաւորութեանն կապեաց զՊահաւակն Ճորայ և Աղուանից<sup>145</sup>. կալաւ ձերբակալ զարքայն Եգերացոց, և առ մարտիւ զԱնտիոք Պիսիդացոց<sup>146</sup>, և գերեալ նստոյց առ թագաւորական կայանին:

Շինեալ քաղաք և անուանեալ զնա Վեհ Անշատք Խոսրով<sup>147</sup>, զոր անուանեալ Շահաստան-ի Նոկ-նոյ կոչեն<sup>148</sup>: Եւ առ սա զԴարա և զԿաղ- 25 նիկոս, գերեաց ասպատակաւ և զկողմանս Կիլիկիացոց:

498բ //Կալաւ սա զթագաւորութիւնն ամս ԽԸ: Եւ ի ժամ վախճանին ծաշեալ փայլակնացեալ զնովաւ լոյս աստուածային Բանին. քանզի հաւատաց ի Քրիստոս, ասելով այսպէս. «Հաւատամ ի միայն Աստուած, յայն՝ որ արար զերկիրնս և զերկիր, զոր քրիստոնեայքդ պաշտել խոստովանին, Հայր և Որդի և Հոգի սուրբ. զի նա միայն է Աստուած, և այլ 30 ո՛չ գոյ բաց ի նմանէ, զոր քրիստոնեայքն պաշտեն»:

Եւ հրաման տուեալ սպասաւորացն՝ զմոզպետն արձակել արքունի

1 Իով. զբանակն փխ. զբանուկան: Տե՛ս ծան. 142:  
 1 ՏՏ Մաշապերճանն (մեծատառով): Տե՛ս ծան. 143:  
 2 Ա. ալամբ  
 7 Միհրդ., Պատկ. մեծամեծաց  
 13 Ա Այս Խոսրով որ կոչեցաւ բառերի դիմաց լուսանցում կարմիր քանափով գրված է է տառը, որի նշանակությունը ձեռագրում հայտնի չէ: Տե՛ս ծան. 144:  
 14 Ա. զապստամբութիւն  
 17 Ա. յերկիր փխ. երկրի  
 20 Պատկ., Մալխ. զպահակն: Տե՛ս ծան. 145:  
 24 ՁԶ, Միհրդ., Պատկ. Շահաստանին Ոկնոյ: Տե՛ս ծան. 148:  
 26 Միհրդ., Պատկ. վաղճանին (և՛ այլուր):  
 31 Ա. բայց ի նմանէ



ի հեռագոյն տեղիս ի գործ, և զայլսն մերժեալ յարքունական կայենիցն, և կոչեալ զհայկոսկոպոսապետն, որ Երան<sup>149</sup> կաթողիկոս անուանի, մկրտեցաւ ի նմանէ, և հրամայեաց ժամ առնել ի սենեկին, և ընթեռնուլ զտէրունական Աւետարանին զպատգամս, և հաղորդեցաւ կենդանարար 5 մարմնոյ և արեանն Տեառն<sup>150</sup>, և հրաժարեալ ի կաթողիկոսէն և ի տէրունեան Աւետարանէն՝ և արձակեն զնա յիւր տեղին:

Եւ ապա զկնի սակաւ ինչ աւուրց ննչեաց ի բարուք ծերութեան իւրում. և բարձեալ զմարմին նորա քրիստոնէիցն՝ տարեալ եղին ի շիրիմս թագաւորացն: Եւ թագաւորէ Որմիզդ որդի նորա յետ նորա:

10 Եւ արդ՝ այս են զաւրավարք արքային Պարսից, որ եկին մի ըստ միոջէ յերկիրս Հայոց՝ յապստամբութենէ Վարդանայ Մամիկոնէից տեառն որդւոյն Վասակայ, մինչև ցայսար ժամանակի<sup>151</sup>: Ոմանք մեռան ի պատերազմի, և ոմանք պատերազմեցան<sup>152</sup>, և ոմանք յաղթութիւն գործեցին և գնացին:

15 Յորժամ սպանին զՍուրէն մարզպան՝ ի նմին ամի եկն<sup>153</sup> Վարդան Վշնասպ<sup>154</sup> ոմն, և գործ ինչ ո՛չ կարաց գործել. եկաց ամ մի և գնաց:

Ապա եկն և Գողոնն Միհրանն<sup>155</sup> ի հազարաւ զաւրաց սպառազինաց և փղաւք բազմաւք, և ունէր նա ընդ ինքեան սատարս բազումս ի ճամբարէ անթիւ ազգացն, որ բնակեալն են ընդ<sup>156</sup> լեռնակողմամբն

20 Կովկասու ազգք Հոնաց, և հրաման յարքայէն՝ զի անճետս արասցեն զարս ի յաշխարհէն Հայոց, խլել, բրել, յատակել և անխնայ յերկիր կործանել: Եւ եկեալ նա, բայց եթէ ուրեք յանմատոյց ամրոցաց ուրեմն մնացեալ ապրեցան մարդիկ և կամ թէ՛ ուրեք ի հեռագոյն աշխարհս փախստական գնացին: Բայց սակայն ո՛չ կարացին բազումք ճողոպրել.

499ա քանզի զորս/զտանէին՝ սուր ի վերայ եղեալ սատակէին: Սա արար կոխ մի ի Վիրս, և պարտեցաւ: Եկն ի Հայս, և առ զԱնկղ սուտ երդմամբ:

Փիլիպպոս, Սիւնեաց տէր<sup>157</sup>. արար կոխ մի ընդ քաղաք և ընդ հաղամախիս<sup>158</sup>. և [վերստին]<sup>159</sup> կոխ մի ի Վանանդ, ի յԱթմասու գեղ<sup>160</sup>,

30 և յերկոսեանն պարտեցաւ. եկաց նա ամս է և գնաց:

500բ Ապա եկն ինքն արքայն Անուշ Բուռան հոսորով<sup>161</sup>, //որպէս ասացի, և արար պատերազմ մի մեծ ի Մեղիտինէ<sup>162</sup>, յորում պարտեցաւ և գնաց:

2 ԶԶ, Միհրդ., էր անդ փխ. Երան: Տե՛ս ծան. 149:

5 Բոլ. ի կենդանանար փխ. կենդանարար: Տե՛ս ծան. 150:

5 Ա. կաթողիկոսէն (միշտ)

8 Ա. զմարմինս

16 Գ, Միհրդ., Պատկ. ոչ գործեաց փխ. ոչ կարաց գործել

18 Ա. սա փխ. նա

19 ԶԶ, Միհրդ., Պատկ. ընդ որ բնակեալն են փխ. որ բնակեալն են ընդ: Տե՛ս ծան. 156:

21 Պատկ. անխնայ փխ. և անխնայ

29 Բոլ. շիք վերստին: Տե՛ս ծան. 159:

31 ԶԶ, Միհրդ., Պատկ. Ապա եկն ինքն արքայն Անուշ Բուռան հոսորով, որ բառերից հետո խախտված է տեքստի ընդօրինակութեան հերթական հաջորդականութիւնը և բնագիրն ընդօրինակված է ետևառաջութեամբ: Վերջինս կարգավորել է Մայիսայանցը: Տե՛ս ծան. 161:

32 Բոլ. Մեղիտինէ: Տե՛ս ծան. 162:

Ապա եկն Տամ հոսորով, և արար երկու կոիւս, մի՝ ի Բասեան ի Բոլորապահակի, ուր Մուրց և Երասխ խառնին, և մի՝ ի Բագրեանդ, ի 501<sup>ա</sup> Կըթնի: Եւ յերկոսինն յաղթութիւն գործեաց մեծամեծ. եկաց/|երկուս ամս և գնաց:

5 Ապա եկն Վարազ Վզուրն<sup>163</sup> և արար կոիւ մի ի Վանանդ ի յՈւթմսու գեղ, որ և նախ վանեցաւ, և ապա յաղթեաց. եկաց ամ մի և գնաց:

Ապա եկն ասպետն մեծ պարթևն և պահլան, և արար կոիւ մի ի Շիրակաւանին և յաղթեաց. եկաց եւթն ամ և գնաց:

10 Ապա Հրահատն մարդպան, որ գնաց ի Մրծունին իւրայնոցն սատար ի պատերազմ. և անդ նոքա պարտեցան և ապա յաղթութիւն ստացան: Եւ անտի դարձեալ՝ արար կոիւ մի ի Բզնունիս ի Մաղկաջուրն և յաղթեաց. եկաց շորս ամիս՝ և գնաց:

15 Ապա եկն Հրատրին Դատան մարդպան: Ապա այնուհետև ոչ կարացին Պարսիկք պատերազմաւ զդէմ ունել զաւրացն Յունաց: Առ սովաւ սպանաւ Որմիզդ, և թագաւորեաց որդի նորա հոսորով: Եկաց ամս երկու և գնաց:

Ապա եկին սահմանակալք պարսիկք<sup>164</sup> մինչև ցսպառումն խաղաղութեանն՝ որ ի մէջ Պարսից և Յունաց և ի մէջ թագաւորացն երկոցունց՝ Մաւրկայ և հոսորովայ:

20 Եւ ապա Վընդատականն: Ապա հորականն: Զսա սպանին զաւրք Պարսից ի Գառնի, և ինքեանք ապստամբեալք գնացին ի Գեղումս<sup>165</sup>: Ապա Մերակբուտն: Ապա Յազդէնն: Ապա Բուտմահ: Ապա Հոյիմանն:

5 Ա Վարազն  
7 Ա պահլան  
8 Միհրդ., Պաակ. ի Շիրակ աւանին  
10 Ա անդի  
13 Ա Հրատրին Տատան  
14 Ա յունացն

## Մ Ա Տ Ե Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ե Ա Ն

Պատմութիւն քագաւորական<sup>166</sup>

Վէպ արիական, վանումն տիեզերական, հէն Սասանական<sup>167</sup> յԱպրուէզն Խոսրովեան, որ հրդեհեալ բոցացոյց զառ ի ներքոյս ամենայն, 5 զղորդեալ զծով և զցամաք, զարթուցանել զկործանումն ի վերայ ամենայն երկրի:

Եւ արդ՝ ես ճառեցից զեղելոցն յերկրի զանցից կործանմանն առապելս<sup>168</sup> վիպասանելով, զի վերուստ զարթուցեալ<sup>169</sup> սրտմտութիւն, և զառ ի ներքոյ բորբոքեալ զբարկութիւն. զհրոյն և զարեան հեղեղս<sup>170</sup> և 10 զհինիցն արշաւանս. և զմահաբերն ասպատակ, զգոչիւն դիւաց և զաղաղակ վիշապաց, զազանց քաղեաց և զարանց հսկայազանց, քաջաց սպառազինաց հեծելոց, յարեւլից յարեւմուտս, ի հիւսիսոյ ի հարաւ, եւ զՀարաւայինն զարթուցեալ մեծաւ բորբոքմամբ՝ յարձակեալ ի վերայ միմեանց, և կատարել զհրամանն բարկութեան Տեառն ի վերայ ամենայն 501բ երկրի. որք իբրև զմրրիկ աւդոյ թուցեալ/փոթորկեալ ընթացեալ՝ ապականել զառ ի ներքոյս ամենայն, աւարել զլերինս և զբլուրս, պատառել զդաշտս վայրաց, և խորտակել զվէմս և զբարինս ի ներքոյ զարշապարաց երիվարաց և յառաթուր սմբակաց:

Եւ արդ՝ ասացից զվէպս ի կործանիչն և յապականողն Խոսրով, 20 յԱստուծոյ անիծեալն:

### Գ Լ Ո Ի Խ Ժ

Քագաւորել Որմզդի եւ կոտորել զնախարարս. Վահրամ Միբեւանդակ հարկանէ զՄասնութս: Որմիզդ զշարի ընդ սակաւ աւարամասնն: Զաւրք Վահրամայ ապստամբին յՈրմզդէ եւ առնեն իւրեանց քագաւոր զՎահրամ: Դիմումն Վահրամայ ի վերայ Որմզդի: Նախարարք սպանանեն 25 զՈրմիզդ եւ կացուցանեն քագաւոր գորդի նորա զԽոսրով: Փախուստ Խոսրովայ յերեսաց Վահրամայ:

Եւ եղև յետ մահուանն Խոսրովայ որդոյ Կաւատայ, և թագաւորել որդոյ նորա Որմզդի ի վերայ աշխարհին Պարսից. որոյ մայր իւր դուստր

5 Ա զկործումն

7 Ա կործանման

8 Ա վիպասելով զի վերուստ Բոլ. զարթուցանել: Տե՛ս ծան. 169:

9-10 Բոլ. հեղեղել: Տե՛ս ծան. 170: Ա զհինիցն

13 Ա Միբեղ. և զարթուցանել փխ. զարթուցեալ Ա բորբոքմամբ մեծաւ

14 Միբեղ., Պատկ. կատարեալ

17 Ա վայրեաց

էր Խաբանայ մեծի արքային թետալացոց, կին Խոսրովայ. հար սորա անուն Կայէն, որ թէպէտ ի հայրենեաց մեծագոյն՝ ևս առաւել մեծագոյն և զազանագոյն ի մայրենեաց կողմանէ<sup>171</sup>:

Քանզի երարձ սա զամենայն նախարարս և զնախնիս և զտունս 5 բնակագոյնս յաշխարհէն Պարսից: Սպան սա զասպարապետն մեծ, զպարթևն և զպահլան, որ էր ի զաւակէ Անակայ մահապարտի. զոր առեալ դայեկաց ի հինէ անտի Խոսրովայ արքայի Հայոց՝ փախուցին ի դուն արքունի իւրեանց՝ ի կողմնս Պարսից: Եւ կատարեաց արքայն ի վերայ նորա զպարզևսն խոստացեալս հարն նորա Անակայ զբուն իսկ 10 զպարթևական զպալհան անդրէն դարձուցեալ՝ թագ կապեալ մեծարեաց, և արար իւր երկրորդ թագաւորութեանն<sup>172</sup>:

Եւ էին երկու որդիք սպարապետիս այսորիկ, անուն միոյն Վնդոյ և 499ա երկրորդին՝ Վստամ.//զՎնդոյն կապեալ եղ ի Գրուանդականի, և Վստամ պրծեալ զնաց փախստական. և ո՛չ սակաւ ինչ պատերազմունս զարթոյց 15 սա յաւորսն յայնոսիկ շուրջ զիւրեալ:

Եւ եղև ի ժամանակին յայնմիկ<sup>173</sup> Վահրամ ոմն Մերհեւանդակ<sup>174</sup>, իշխան արևելից կողմանց աշխարհին Պարսից, որ հարկանէր քաջութեամբ իւրով զզարս թետալացոց և բնութեամբ ունէր զբահլ և զամենայն երկիրն Քուշանաց, մինչև յայնկոյս գետոյն մեծի, որ կոչի Վեհ- 20 ոտտ<sup>175</sup>, և մինչև ցտեղին, որ կոչի Կազբիտն<sup>176</sup>: Քանզի զանց արար յայնկոյս նիզակի քաջին Սպանդիատայ<sup>177</sup>, զորմէ ասեն բարբարոսքն<sup>178</sup>, եթէ հասեալ նա պատերազմաւ<sup>179</sup> մինչև ցայս վայր, ցցեալ զնիզակ իւր ի գետնի:

Յայնժամ արարեալ Վահրամայն այնորիկ պատերազմն ընդ մեծի 25 արքային Մազթաց, որ էր ի կողմանն յայնմիկ<sup>180</sup>, յայնկոյս գետոյն մեծի՝ եհար զբազմութիւն զարացն, և սպան զթագաւորն ի պատերազմի. և ըմբռնեալ յափշտակեաց զամենայն զզանձս թագաւորութեանն այնորիկ:

Յայնժամ առաքէ առ արքայն Պարսից ի ձեռն հրեշտակաց իւրոց 30 հրովարտակա աւետարտս<sup>181</sup>, և սուղ ինչ աւարամասն<sup>182</sup> ի մեծամեծ

2 Ա. թէպէտ և

8 Ա. արքունին

10 ՁԶ, Միհրդ., Պատկ. փախուցեալ փխ. դարձուցեալ: Տե՛ս ծան. 172:

13 ՁԶ, Միհրդ., Պատկ. Վստամ բառին հաջորդում է ոչ թե զՎնդոյն կապեալ եղ ի Գրուանդականի և նրանց հաջորդող բառերը, այլ մեզ հասած ձեռագրերում ետևառաջորդամբ զասավորված թերթերի տեխտը: Տե՛ս ծան. 161: № 2639 ձեռագրում Վստամ բառով վերջանում է ձեռագրի 501բ էջի երկրորդ սյունակի 8-րդ տողը:

14 Ա. փրծեալ

15 Ա. յաւորսն

16 Բոլ. յայնոսիկ փխ. յայնմիկ: Տե՛ս ծան. 173:

22 ՁԶ, Միհրդ. պատե բազմաւ փխ. պատերազմաւ: Տե՛ս ծան. 179:

24 Ա. շիբ ընդ

25 Միհրդ., Պատկ. ի կողմանս

25 Ա. գետին

27 Միհրդ., Պատկ. զզանձ

30 Բոլ. աւետարտ: Տե՛ս ծան. 181: ՁԶ, Միհրդ., Պատկ. աւարան փխ. աւարամասն- Տե՛ս ծան. 182:

զանձուցն հասելոց յաւարէ ասպատակին, նշանակ թագաւորութեանն ի պատուական իրացն, և զամենայն զդանձն զաւրուն շնորհէ ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան:

Արդ՝ իբրև տեսեալ թագաւորին Որմզդի զհրեշտակսն եկեալս աւետարտս, և ընթերցեալ զգիրս ողջունի զաւրացն, և ընկալեալ զընծայսն աւարամասն ի պատուական յարքունական զանձուցն, թէպէտ և խնդացեալ վեր ի վերոյ զմարդկան զմիտս հաճէր՝ այլ ի ներքուստ ցասմամբ բարբառեալ<sup>183</sup> ասէր. «Ընթրիքն առաւել մեծագոյն, և զնշանն ի պատառոյս<sup>184</sup> ճանաչեմ. բայց յայնչափ սաստիկ զանձուցն ոչ էր արժանայնչափ հասանել յարքունիս»:

349բ Յայնժամ փոխանակ աւետարտի/հրովարտակին հրամայէ գրել հրովարտակ առաւել ցասմամբ, և արձակէ ի գնդէն համահարզանց և փուշտիպանացն արքունի, զի երթիցեն առ զաւրն, և զգանձն զամենայն ի միջի արասցեն: Եւ նոցա երթեալ սկսան պահանջել:

15 Յայնժամ ընդոստուցեալ զաւրն ամենայն, սպանին զհաւատարիմս արքային, և ի բաց կացեալ ի ծառայութենէ նորա՝ զՎահրամ նստուցին թագաւոր իւրեանց: Երդումն կնքեցին ըստ արինի իւրեանց. միաբանեցան և դարձան յարեւելից և դիմեցին յԱսորեստան, զի սպանցեն զթագաւորն իւրեանց զՈրմիզդ, և բարձցեն զտունն Սասանական, և հաստատեցեն զՎահրամ յաթոռ թագաւորութեանն: Եւ փութանակի ժողովեալ և առեալ գնացեալ զբազմութիւն քաջ և մարտիկ ազգացն արեւելից:

Արդ՝ մինչև ցայս այսպէս շփոթ ամբոխի ի մէջ Պարսից աշխարհին լեալ՝ Յովհան պատրիկ և զաւրք Յունաց պատեալ պաշարեալ պահէին զբաղաքն Դընայ, մարտուցեալ ընդ նմա մեքենայիւքն՝ մերձ էին ի կործանել զպարիսպն: Իսկ իբրև եհաս լուրս այս՝ թողին զնա և գնացին. ճանապարհ կալեալ յԱտրպատական՝ լաստեցին զերկիրն ամենայն, հարեալ զամենայն զայր և զկին բերանով սրոյ իւրեանց, առեալ զամենայն առ և զգերի և զաւար՝ դարձան չերկիրն իւրեանց:

Արդ՝ իբրև եհաս լուր աղաղակիս այսորիկ ի դունն Սասանականին, առ Որմիզդ<sup>185</sup> թագաւորն Պարսից՝ ոչ սակաւ ինչ երկունք ահի պատեցին զնա: Եւ կոչեցեալ զնախարարս որ ի դրանն արքունի և զզունդս համահարզանց և զփուշտիպանացն, և խորհուրդ արարեալ՝ առնուլ զգանձն թագաւորութեան և զամենայն ամբոխ դրանն արքունի, և անցանել յայնկոյս գետոյն մեծի Դգղաթայ ընդ զոմ<sup>186</sup> ի Վեհկաւատ, և հատանել զլարսն կամրջացն. և խորհէր իւր ապաւէն առնել զբազմութիւն ամբոխին արքային Տաճկաց:

6 Միհրդ., Պատկ. արքունական  
9 92, Միհրդ., Պատկ. ի պատուոյս փխ. ի պատառոյս: Տե՛ս ծան. 184:  
9 Ա. յայնչափ  
11 Ա. գրով փխ. գրել  
23 Ա. պարսիկ փխ. պատրիկ  
25 ՏՏ. շիք իսկ  
26-27 Միհրդ. շիք հարեալ զամենայն  
30 Բոլ. առ Որմզդի: Տե՛ս ծան. 185:  
32 Ա. փուշտիպանացն  
34-35 Ա. Դգղաթայ (և հետագայում): ՏՏ Դգղաթայ (և հետագայում) Ա. Կարմնջացն (և հետագայում)

Իսկ այս ոչ այսպէս պատկանէր<sup>187</sup>. քանզի խորհուրդ արարեալ խորհին արանց<sup>188</sup> և համահարզանց և փուշտիպանաց արքային, զի սպանցեն զՈրմիզդ և նստուցեն թագաւոր զորդի նորա զնոսրով:

500բ //Արդ՝ վասն զի մայր շապհոյ<sup>189</sup> դուստր ասպարապետին այնորիկ, 5 որ էր նախարար տանն Պարթևաց, որք մեռեալ էին<sup>190</sup>, քոյր Վնդոյի և Վստամայ. և ինքն Վնդոյ էր այր իմաստուն և խորհրդական և սրտիւ 499բ արիագոյն՝//խորհուրդ արարեալ լուծանել զնա և առնել իւրեանց առաջնորդ և գործոյն զլիաւոր: Եւ զնացեալ ի բերդն Գրուանդականի, լուծին զնա և զամենայն կալանաւորսն ընդ նմա, և արձակեալ զոմն սուրհան- 500ա դակ//հաւատարիմ երագագոյն երիվարաւք, և գրեալ առ Վստամ եղբայր, զի սաստիկ ստիպով վաղ հասցէ ի տեղի զործոյն. և եկեալ նա փութանակի:

Եւ ժողովեցան ամենայն նախարարք և զարագլուխք և զարք ի դահլիճն արքունի, որ ի ժամուն յայնմիկ հանդիպեցան անդ. և մտեալ 15 ի սենեակ արքայի՝ կալան զթագաւորն Որմիզդ, և անդէն վաղվաղակի փորեցին զաչս նորա և ապա սպանին: Եւ նստուցին զորդի նորա<sup>191</sup> թագաւոր ի վերայ շախարհին Պարսից. և սկսան առնել պատրաստութիւն փախստեան յայնկոյս գետոյն մեծի Դգղաթայ:

Եւ ոչ յետ բազում ատուրց Վահրամն եկն հհաս փութանակի իբրև 20 զխոյանալ արծուոյ: Եւ քանզի մանուկ տղայ էր նոսրով ի թագաւորել իւրում՝ առին զնա քեռիքն՝ իւր Վնդոյ և Վստամ, և անցին յայնկոյս գետոյն մեծի Դգղաթայ ընդ զոմ, և հատեալ ի բաց զլարսն կամրջացն: Եւ եկեալ Վահրամն էառ զամենայն զտուն և զգանձ և զկանայս արքունի, և նստաւ ի գահոյս թագաւորութեանն: Եւ հրամայեաց կապել զլաստս 25 փայտեղէնս, և անց զգետովն առ ի յըմբունել զնոսրով:

Բայց նորա յերկիւղէն ոչինչ կարաց ունել զտեղի, իբրև<sup>192</sup> անցին զնացին փախստական, և խորհեալ ի ճանապարհի, թէ ո՞ր<sup>193</sup> լաւագոյն իցէ, երթալ առ արքայն Տաճկա՞ց, եթէ առ թագաւորն Յունաց:

Ապա լաւ համարեցան առնել իւրեանց ապաւէն զթագաւորն Յու- 30 նաց: «Զի թէպէտ և է<sup>194</sup>, ասեն, թշնամութիւն ի միջի, սակայն քրիստոնեայ են և ողորմած. և յորժամ երդնուն՝ ստել երդման ոչ կարեն»: Եւ զնացեալ ընդ արևմուտս զուղիղ ճանապարհ երթեալ մտին ի քաղաքն՝ որ կոչի Խաղաք. և դադարեցին անդ:

1-2 Ա խորհի արանց և համահարզաց  
3 ԶԶ. Միհրդ., Պատկ. զորդի նորա զնոսրով բառերին հաջորդում են մի բանի տող հետո եկող խորհուրդ արարեալ լուծանել զնա բառերը և նրանց շարունակութիւնը՝ մինչև հաջորդ գլխի շորհուրդ պարբերութիւնը եզրափակող ըստ զնդից, ըստ դրաւից իւրեանց բառերը: Դրանից հետո վերջանում է տեխստի ետևառաջ ընդօրինակութիւնը (տե՛ս ծան. 161) և կարգավորվում է հերթականութիւնը:  
4-5 Ա.—Ե այնորիկ որք մեռեալք էին եթէ էր նախարար տանն պարթևաց, քոյր (այսպես է նաև Միհրդատյանի մյուս օրինակը):  
9 Ա և արձակել  
16 Ա պորեցին փխ. փորեցին  
18 Ա Դկղաթայ ՏՏ Դգլաթայ  
24 Միհրդ., Պատկ. թագաւորութեան  
27 Ա ևթէ ո՞ր փխ. թէ ո՞ր

Եւ սա թէպէտ անց զգետովն՝ ոչ կարաց հասանել. յետս դարձան անդրէն ի Տիսբոն:

Գ Լ Ո Ի Խ Ժ Ա

Թուղթ Խոսրովայ առ Մաւրիկ կայսր: Խոսրուոյ Սինկղիտոսին: Մաւրիկ 5 առաքէ Խոսրովայ զաւր յաւգնականութիւն: Կրկին բուղթք Վահրամայ առ Մուշեղ եւ պատասխանի սորա: Պատերազմ, յորում հարկանի զաւրն Վահրամայ: Փայտուտ եւ մահ Վահրամայ:

3 Յայնժամ յղէ Խոսրով արքայ առ թագաւորն Մաւրիկ արս ճոխս պատարագաւք, և գրէ այսպէս. «Տուր ինձ զգահ և զտեղի թագաւորու- 10 թեան հարց և նախնեաց իմոց, և արձակեա՛ ինձ զաւր յաւգնութիւն, որով կարացից հարկանել զթշնամին իմ, և կանգնեա՛ զթագաւորութիւն իմ, և եղէց քոյ որդի: Եւ տաց քեզ զկողմանս Ասորոց—զԱրուաստանն ամենայն մինչև ի Մծբին քաղաք, և յերկրէն Հայոց՝ զաշխարհն Տանուտերական 500բ իշխանութեանն մինչև ցԱյրարաս և ցԴուրին/Քաղաք, և մինչև ցեզր ծո- 15 վուն Բզնունեաց և ցԱռեստաւան. և զմեծ մասն Վրաց աշխարհին՝ մինչև ցՏփխիս քաղաք. և կալցուք ուխտ խաղաղութեան ի մէջ մեր մինչև ցմահ երկոցունցս, և անշուշտ լիցի այս երդումն ի միջի մերում և ի մէջ որդոց մերոց, որ թագաւորելոց իցեն յետ մեր»:

Արդ՝ ժողովեալ թագաւորին զամենայն սնկղիտոսն, հարցանէր 20 ցնոսա խորհուրդ, և ասէր. «Սպանին Պարսիկք զԼրմիզդ զթագաւորն իւրեանց և նստուցին զորդի նորա թագաւոր: Եւ զաւրք թագաւորութեանն նստուցին զայլ ոմն թագաւոր յԱրեւելս. և եկեալ նա զաւրու մեծաւ յինքն յափշտակեաց զթագաւորութիւնն. և մանուկ որդի նորա փախստական գնացեալ եկն առ մեզ, և խնդրէ ի մէջ զաւրս յաւգնականութիւն, և խոս- 25 տանայ առնել այսպէս: Արդ՝ զի՛նչ արասցուք, ընդունի՛մք. արժա՞ն է ընդունել, թէ ոչ»: Իսկ նոքա ասեն. «Ոչ է արժան ընդունել, զի ազգ մի անարէն են և ամենեկին սուտ. ի նեղութեան իւրեանց խոստանան առնել, և յորժամը յանդորր ելանեն՝ ստեն. բազում շարիս կրեալ է մեր ի նոցանէ. թո՛ղ սպառեսցեն զմիմեանս, և մեք հանգիցուք»:

30 Անդ թագաւորն Խոսրով կայր ի մեծ վտանգի, և տեսանէր զմահ առաջի աշաց. զի զերժեալ էր ի բերանոյ առիւծու և անկեալ ի բերան թշնամեաց, ուստի փախուստ ոչ գոչր:

Իսկ թագաւորն մերժեալ զխորհուրդս սնկղիտոսացն՝ յինքենէ յղէր 35 զՓիղիպիկոս<sup>195</sup> զփեսայ իւր և տայր տանել պատասխանի ընդունելու- թեանն. առնոյր ի նմանէ երդումն, և տայր նմա զաւր կայսերական

1 Ա. յետ փխ. յետս  
10 ՁԶ, Միհրդ. Հայոց փխ. հարց Պատկանյանը վրիպակն ուղղել է ըստ Թ. Արժրուան:  
12 Միհրդ., Պատ. զԱսորոց  
14 Միհրդ., Պատկ. ցԱրարատ Ա ցԴուրին Ա յեզր փխ. ցեզր  
15 Ա. յԱռեստաւան փխ. ցԱռեստաւան Միհրդ. ցԱռեստաւան Մալխ. ցԱռեստաւան  
16 ՏՏ մինչ ցմահ  
27 Ա. ամենեկինն  
31 Միհրդ., Պատկ. առիւծոյ  
34 ՁԶ, Միհրդ., Պատկ. զփիկղիպիկոս: Տե՛ս ծան. 195:

յաւզնականութիւն՝ զՅովհանն Պատրիկ ի Հայոց կողմանէ, և զՆերսէս ստրատելատ յԱսորոց<sup>196</sup> և զզարս նոցա, անցեալք<sup>197</sup> ի հանդիսի, երեք հազար հեծեալ ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրաւշից իւրեանց:

501բ //Եւ զզարս աշխարհին Հայոց ընդունէին գումարել, որք ի ժամուն ատ ձեռն գտեալ. և անցեալք ի հանդիսի իբրև հազարք հնգետասանք, իւրաքանչիւր գունդք նախարարաց՝ ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրաւշուց իւրեանց: Ամենեքեան սոքա սպառազէնք, ընտիրք պատերազմողք, վառեալք քաջութեամբ՝ իբրև զՆուր, որ ո՛չ զանգիտեն և ոչ զթիկունս դարձուցանէին: Դէմք առիծու դէմք նոցա, թեթևութիւն ոտից իբրև զթեթևութիւն այծեմանց երագութեամբ ի վերայ դաշտաց: Մտադիրութեամբ և ամենայն հնազանդութեամբ շու յուղի անկեալ զնացին:

Արդ՝ առեալ ապստամբին միհրացելոյն զզարս իւր, զփիղս և զամենայն զգանձս թագաւորական, շու արարեալ զնայ հասանէ յԱտրպատական. և բանակեցան սակաւ մի հեռագոյն ի միմեանց ի վարարատ գաւառին:

502ա Արդ՝ գրէ Վահրամն հրովարտակ առ//Մուշեղ և առ այլ նախարարս Հայոց, որ ունէր այսպէս. —

20 «Ես այսպէս<sup>198</sup> կարծէի, եթէ ես յորժամ ընդ թշնամիս<sup>199</sup> ձեր մարտընչիմ, և դուք ի կողմանէ այտի եկեալ՝ ինձ աւզնական լինիցիք. զի ես և դուք միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն, զտունն Սասանայ: Իսկ դուք աւաղիկ ժողովեալ գայք ի վերայ իմ պատերազմաւ յաւզնականութիւն դմա: Այլ ես ո՛չ երկեայց ի ժողովելոց  
25 երիցանցդ Հոովմայեցւոցդ<sup>200</sup>, որ եկեալ են ի վերայ իմ: Բայց դուք, Հա՛յք, որ տարածամ ցուցանէք զտիրասիրութիւն. ո՛չ ապաքէն տունդ Սասանական եբարձ զերկիրդ ձեր և զտէրութիւն: Եւ կամ ընդէ՞ր բնաւ ապստամբեցին հարքն ձեր և զնացին ի ծառայութենէ նոցա, մինչև ցայսար պատերազմեալ ի վերայ աշխարհին ձերոյ: Եւ արդ՝ դիմեալ  
30 գայք<sup>201</sup> ի վերայ իմ կորուսանել զայնչափ վաստակս ձեր. զի թէ՛ Խոսրով յաղթեալ էր՝ երկրքին դոքա միաբանեալ բարձցեն զձեզ ի միջոյ: Բայց զի հաճոյ թուեսցի ձեզ ի բաց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս, և ձեռն տալ ինձ յաւզնականութիւն: Եւ թէ ես յաղթեցից՝ երգուեալ ի մեծ աստուածն Արամազդ, և յԱրեգակն տէր և ի Լուսին, ի Հուր և ի Զուր, ի

3-4 ըստ գնդից, ըստ դրաւշից իւրեանց բառերից հետո կարգավորվում է ետևառաջ ընդօրինակված տեքստը: Տե՛ս ծան. 161:

8 Ա ընդիրք  
10 Ա առիծու  
12 Մալխ. մտադրութեամբ  
14 Ա զօրս իւր զփիղս  
16 Ա ի վար առաստ Միհրդ. ի վարարաստ  
23 Ա զտուն, Ա աւաղիք  
24 Միհրդ., Պատկ. յաւզնութիւն Ա նմայ փխ. դմա  
25 Մալխ. Հոովմայեցւոյդ  
27 Ա զտիրութիւն  
30 Բով. գայ: Տե՛ս ծան. 201:  
34 Ա ի Լուսինն,



Մի՛հր և յամենայն աստուածս, եթէ ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւնն. զո՛ր և դուք կամիք՝ արասջիք ձեզ թագաւոր: Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցԿապկո՛հ և ցղուոն Աղուանից. և յԱսորուց կողմանէ՝ զԱրուաստան, զՄրժուիւն<sup>202</sup> և զՆոր Շիրական մինչև 5 ցսահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. և ընդ արեմուտս մինչև ցԿեսարիա Կապադովկացուց<sup>203</sup>: Եւ ես մի՛ իշխեցից քան զԶարասպ<sup>204</sup> անցանել յայնկոյս. և գանձն Արեաց թագաւորութեանս բաւական համարեալ լիցի ինձ և ձեզ, և այնչափ ձեզ շատ լիցի՝ մինչև ձեր թագաւորութիւնդ հաստատեսցի»:

10 Եւ ըստ իւրեանց կարգի՝ էր աղ ծրարեալ և կնքեալ ընդ հրովարտակին:

Եւ առեալ նոցա զհրովարտակն և ընթերցեալ՝ ոչ արարին բանիցն պատասխանի. և ոչ իսկ ասացին բազմաց, զի երկնչէին յանմիաբանութենէ իւրեանց:

15 Եւ արդ՝ գրէ նա անդրէն<sup>205</sup> դարձեալ թուղթ երկրորդ:

«Գրեցի առ ձեզ ի բաց կալ ի նոցանէ, ինձ և ձեզ բաւական համարելով զամենայն աշխարհս և զամենայն գանձս թագաւորութեանս 02բ այսորիկ. ուրեմն ոչ կամեցարուք լսել, թէ զի ոչ արարէք բանիցն պատասխանի»: «Ես զձեզ ապաշաւեմ, ասէ. քանզի վաղիւ առաւառունս<sup>206</sup> ցու- 20 ցանեմ ձեզ փիղս վառս<sup>207</sup>, և ի վերայ, զաւրս սպառագինեալս քաջաց, որ տեղացեան ի վերայ ձեր նետս երկաթեղէնս ձեռքաձգութեամբ<sup>208</sup>, և շաւառունս<sup>209</sup> մուխս պողվատիկս սլաքաւք՝ ի հաստածիդ աղեղանց. արս երիտասարդս հզարս սպառագէնս վատնելոց<sup>210</sup>, և երիվարս տաճիկս և երագունս, տապարս և սուսերս մուխս և պողվատիկս և կռուփս՝ որ- 25 չափ նոսրովայ և ձեզ պիտոյ իցէ»:

Առնէ նմա Մուշեղ պատասխանի այսքան. «Առ Աստուծոյ է թագաւորութիւնն<sup>211</sup>, և ում կամեցաւ՝ ետ. բայց դու պարտիս յանձն քո ապաշաւել և ոչ ի մեզ: Եւ ծանեայ զքեզ այր պոռոքբան. և ոչ խրախուսես յԱստուած, այլ ի քաջութիւն և ի փղաց զաւրութիւն: Այլ ես ասեմ քեզ. 30 եթէ Աստուած կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքե պատերազմ քաջաց, և ճայթեցեան ի վերայ քո և ի վերայ բազմութեան փղացդ իբրև զամպս երկնից զազանագոյնս քան զամենեսեան: Եւ ի վերուտ ահագին ճայթէ

---

1 Ա Միւր:  
 3 Ա զերկիրն ամենայն հայոց  
 4 Պատկ. շիք զՄրժուիւն  
 6 Ա ցԿէսարիայ  
 6-7 ՁՁ, զարասպ, Միհրդ., Պատկ. զԱրասպ. Մալխ. Զարասպ: Տե՛ս ծան. 204:  
 15 ՁՁ, Միհրդ., Պատկ. գրեն անդրէն, Թ. Արծր. գրէ դարձեալ: Տե՛ս ծան. 205: Երկրորդ բառից հետո Միհրդ. ծանոթագրում է. «Ի միս օրինակին բուրբ մի անկեալ էր»:  
 19 ՁՁ, Միհրդ., Պատկ. այլ վաղիւ, քանզի լինի առ Սասանայ փիս. քանզի վաղիւ առաւառուն: Տե՛ս ծան. 206:  
 21-22 ՁՁ, Մալխ. ձեռքաձգութեամբ: Տե՛ս ծան. 208: Միհրդ., Պատկ. շաւառունս: Տե՛ս ծան. 209:  
 24 Ա և մուխս և պողպատիկս փիս. մուխս և պողվատիկս  
 26-27 Բոյ. «Այսքան առ աստուծոյ է մարդասիրութիւնն» փիս. այսքան. «Առ Աստուծոյ է թագաւորութիւնն»: Տե՛ս ծան. 211:  
 28 Մալխ. պոռոտարան  
 32 Ա զազանագոյն

և փայլատակէ և յարձակին քեզ սպառազէնք ճերմակ երիվարաւք և բռնալիր նիզակաւք, և անցանեն ի մէջ բազմութեանն՝ իբրև զփայլատակունք հրոյ շանթելոյ, զի ցաւղանայցեն ի յերկնից ի յերկիր, և այրեսցեն զխոհա դաշտաց, զանտառս զդալարս և զգաւսացեալս<sup>212</sup>: Քանզի թէ 5 Աստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զգաւութիւնդ քո իբրև զփոշի, և գանձ արքունի յարքունիս գնայ»:

էին ընդ նոսա Վնդոյն այն և Վստամ, զոր վերագոյն ասացի. և զարք պարսիկք իբրև ութ հազար հեծեալ:

Եւ եղև ի վաղուեան առաւատուն, մինչդեռ արևն զծայրս հարկանէր, 10 կարգէին ճակատ առ ճակատ, և բաղխէին զմիմեանս պատերազմաւ: Ուժգին լինէր խումբ և խառնուրդ, և սաստիկ լինէր կոտորածն ի մէջ տարուբերին: Եւ մարտուցեալ յայդուէ մինչև ցերեկոյ՝ յաւգնեցան երկոքին կողմեանքն ի պատերազմին:

Եւ այնչափ սաստիկ լինէր կոտորածն, մինչև զի խաղացեալ վտակաց 15 սաստկութիւն արեանցն առգանէր զերկիրն ամենայն: Եւ ոչ կարացեալ<sup>213</sup> զդէմ ունել փախստական լինէր զարն ապստամբական առաջի զարացն Յունաց: Իսկ նոցա զհետ մտեալ մինչև զբաշ մթանալ երե- 5024 կոյին՝/ցիրս դիմթաւալ կացուցանէին զդաշտաւքն և զճանապարհաւքն. զբազումս սատակէին ի սուր սուսերի իւրեանց. և զբազումս ձերբակալ 20 արարին, և կապեալ զձեռս ի վերայ թիկանց՝ բերեալ կացուցանէին առաջի թագաւորին:

Եւ բազմութիւն փղացն դիմեալ գնային բռնաբար: Ապա զհետ ար- շաւեալ ազատագունդ սպառազինացն՝ ներքուստ ի վեր ծակոտէին զսպա- ռազէնս հեծելոց, որ կային ի նիւս փղացն. և աներկիւղ անվեհեր կոու- 25 էին, և սատակեալ զբազում փիղս և զհեծեալս և զփղապանս՝ դարձուցանէին անդէն բռնաբար և զբազմութիւն փղացն: Եւ եկին ածին յանդիման թագաւորին:

Եւ անդէն դիմեալ ի բանակատեղն զարացն Վահրամայ: Եւ կայր ի խորանին գանձ արքունի և ամենայն գանձք թագաւորութեանն անթիւ: 30 և անհամար պատուականք. զամենայն աւար հարկանէին. և զբազում դահոյս ոսկիապատս շքնաղ և զանազան կազմութեամբ մանրէին սուսերաւք

2-4 Բոլ. զփայլատակունք զանտառս զդալարս և զգաւսացեալս հրոյ շանթելոյ, զի ցաւղանայցեն ի յերկնից ի յերկիր, և այրեսցեն զխոհա դաշտաց փխ. զփայլատակունք հրոյ շանթելոյ, զի ցաւղանայցեն ի յերկնից ի յերկիր, և այրեսցեն զխոհա դաշտաց զանտառս զդալարս և զգաւսացեալս: Տե՛ս ծան. 212:

5 Ա ըզօրութիւնդ

10 Ա բախէին

14 Ա մինչ զի

15-16 Բոլ. ոչ կարացաւ: Տե՛ս ծան. 213:

19 Միհրդ., Պատկ. ձեռքակալ

20 Պատկ. ձեռս

20-21 առաջի թագաւորին բառերից հետո Միհրդատյանը ծանոթագրում է. «Ի միւս օրինակին մինչեւ այդ տեղն պակաս էր, վասն ընկելոյ թրթոյն գոր ի վերն ասացաւ»:

22 Ա գնաին

25 Ա փիւզս

26 ԶԶ, Միհրդ., Պատկ. անդրէն

28 Միհրդ., Պատկ. անդրէն

իրեանց, և անցանէին ի կողմանս փաղանգ փաղանգ զբեռինս բարձնալ ուղտուց և ջորուց բազմութեանն: Եւ լցան ամենեքեան բազում և մեծամեծ աւարաւ: Ժողովեցին ապա և զաւրն Պարսից ի ճապաղուածէ գանձուցն ոչ սակաւ իրս, և հասուցին անդրէն յարքունիսն իրեանց: Եւ զաւ-  
 5 րացաւ յաւոր յայնմիկ արքայ խոսրով ի ձեռն յաղթութեանն այնորիկ քան զամենայն զթշնամիս իւր, և հաստատեցաւ թագաւորութիւն նորա:

Եւ զբազմութիւն ձերբակալաց ձիահեծելոց և փղահեծելոցն հրամայէր մերկացուցանել և կապել զձեռս ի վերայ ուսոց և արկանել կոխան ի ներքոյ ոտից փղացն: Եւ ոչ ուրեք կարացին գտանել զհետ Վահրամայ.  
 10 զի զերծաւ և զնաց այսպէս փախստական, և չոգաւ և անկաւ ի Բահլ Շահաստան, ուր և<sup>214</sup> ի բանէն խոսրովայ սպանաւ ի նոցունց իսկ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ

Նենգութիւն խոսրովայ ընդդէմ Մուշեղի: Ամբաստանութիւն իշխանացն Յունաց զխոսրովայ առ Մարիկ կայսր: Մարիկ պաշտպանէ խոսրովայ  
 15 Եւ զՄուշեղ կոչէ ի պալատն: Խոսրով տայ կայսեր զաշխարհսն ըստ ուխտի խոստմանն:

Եւ եղև ըստ ատուրց ինչ յետ անցանելոյ պատերազմին այնորիկ մեծի, մինչդեռ արքայն խոսրով նստէր ի մէջ խորանին իւրում, և զաւրն Պարսից շուրջ զնովաւ բանակեալ, և զաւրն Յունաց հեռագոյն ի նոցանէ  
 20 աւթիւ միով, ուրոյն բանակեալ հոծ բազմամբոխ լիութեամբ աւարաւ իրեանց, և կային զառաջեաւ արքային ամենայն մեծամեծք նախարարք իւր—խաւսել սկսաւ արքայն և ասէ. «Իցէ՞ որ արդեաւք լեալ ի թագաւորաց աշխարհի, որ կարող է ըմբռնել զմեա այլ թագաւոր զթշնամի||իւր,  
 50<sup>2</sup> զաւերիչ թագաւորութեան իւրոյ, և ոչ սպանցէ զնա և ջնջեցէ զամենայն  
 25 արու յաշխարհէ նորա, այլ առնիցէ՛ զնա յորդեգիրս. թագ կապեալ նմա և ծիրանեաւք զարդարեալ մեծարիցէ, վանեալ զթշնամիս նորա, և հաստատեցէ զնա յաթոռ թագաւորութեանն, և տուեալ նմա զանձ արքունական ի գանձուց իւրոց, արձակէ զնա բարեաւ զնալ զճանապարհ իւր: Այսպիսի պարգևս շնորհեաց ինձ Մարիկ թագաւոր հայր իմ, զոր  
 30 ոչ ոք կարէ ի մարդկանէ շնորհել որդույ իւրում սիրելոյ»: Պատասխանի ետուն ոմանք ի նոցանէ, և ասեն. «Արքայ, յաւիտեա՛ն կեաց. մեք ոչ զհիտեմք, արժա՛ն իցէ շնորհ ունել և թէ ո՛չ: Զի ամենայն թագաւորութիւն գանձիւք հաստատեալ կայ. և դոքա զամենայն գանձս թագաւորութեան աւա՛ր վարեցին»:

35 Պատասխանի ետ արքայն և ասէ. «Զգանձս թագաւորութեան իմոյ

7 Միհրդ., Պատկ. ձերբակալաց  
 9 Ա. վահրանայ  
 10-11 Միհրդ., Պատկ. շոքաւ, Ա. շահրստան Բոլ. որպէս ի բանէն փխ. ուր և ի բանէն: Տե՛ս ծան. 214:  
 20 Ա. որոյն փխ. ուրոյն  
 29 Միհրդ., Պատկ. այնպիսի  
 30 Միհրդ., Պատկ. այսպէս պատասխանի ետուն փխ. պատասխանի ետուն  
 32 Ա. և եթէ ոչ

ընդ կողս դոցա այսրէն արտաքս քարշեցից հանդերձ նոցունց աղխեալ գանձիւք, քանզի իմ է այն ամենայն: Բայց ինձ այս կարի է, զի ապրեցաւ տիրատեացն այն և գնաց: Այր քաջ է նա և վերստին այլ զարս գումարէ ի քաջաց ազգաց արևելից»:

5 Պատասխանի ետուն նմա և ասեն. «Ձտիրատեացն զայն նոքա զերծուցին, քանզի մերով աշաւք իսկ տեսաք, զի կալաւ զնա Մուշեղն այն Մամիկոնեան, և ետ նմա երիվար և զէն, և արձակեաց»: Զայս ասացին՝ զի կամեցան ի վերայ նորա շարիս: Քանզի տեսանելով զհաւայս<sup>21b</sup> նորա շարաշարս՝ զարհուրեալ խոտորեցան սիրտք իւրեանց ի նմանէ:

10 Եւ ոչ ինչ էած զմտաւ արքայն, եթէ զի՛նչ իցէ բանն այն. քանզի մանուկ տղայ էր և խակ: Եւ ոչ ինչ յիշեաց զխոռվութիւն այնպիսի զարացն. այլ հաստատեաց զմիտս իւր ի վերայ քանիցն ստույթեան, և ասէ. «Կոչեսցի այսր Մուշեղ, և կապեսցի ոտիւք և ձեռաւք, մինչև ես վասն նորա ծանուցից կայսեր»:

15 Ի նմին ժամու հրամայէ գրել նա յետկար, և արձակու զմի ի սուրհանդակացն առ Մուշեղ. «Փութով եկ, ասէ, գործ հասեալ է կարի կարեվորագոյն»: Եւ հրաման ետ փուշտիպանացն իւրոց և ասէ. «Պատրաստ լիւրուք, զի յորժամ եկեսցէ նա, և ես ձեռամբ նշանակեցից ձեզ՝ յանկարծակի զձեռս նորա յետս կալարուք և կապեցէ՛ք զնա. բայց պատ-

20 րաստ չիշիք, զի այր քաջ է նա, և մի՛ թէ կամ ինքն մեռանի, կամ զիս սպանանէ: //Եւ թէ ինքն իսկ մեռանի՝ ես պատասխանի տաց կայսեր վասն նորա»: Սոյնպէս և բարապանացն պատուէր ետ, ասէ. «Զգոյշ կացէք, զի յորժամ եկեսցէ Մուշեղ ի դռնն խորանին իմոյ՝ ի բաց լուծէք ի միջոյ նորա զկամարն և զսուսերն, ասելով, եթէ «Ոչ է արէն զինու-

25 հանդերձ մտանել յանդիման թագաւորին»:

Արդ՝ մինչդեռ առնէր նա համար հանդիսի ի մէջ զարաց իւրոց, տեսանել զթիւ կենդանեացն և մեռելոց, որք անկան ի պատերազմին՝ եկն եկաց առաջի նորա սուրհանդակն և ասաց նմա ողջոյն, և մատոյց նմա զթուղթն: Իսկ Մուշեղայ առեալ զթուղթն՝ ասէ ցնա, եթէ «Ողջոյն իցէ և խաղա-

30 ղութիւն»: Պատասխանի ետ սուրհանդակն և ասէ. «Ողջոյն է և խաղաղութիւն, և զայլազգ ինչ ես ո՛չ գիտեմ, բայց միայն զի հրամայեցաւ ինձ փութանակի կոչել զքեզ»: Եւ անդէն վազվազակի պատրաստեցաւ նա որպէս ի պատերազմ, քանզի արկ ի միտս իւր, եթէ գուցէ հասեալ ինչ իցէ գործ պատերազմի, կամ շնորհ ինչ իցէ պարգևս փոխանակ վաս-

35 տակոցն: Եւ առնու ընդ իւր արս երկու հազարս ի սպառազինաց՝ յազատաց և յանազատաց, զորս գիտէր արժանիս պատուոյ, և վստահ էր հեծելութեամբ:

2 Ա մի է փխ. իմ է

7 Ա Մամիկոնեայն

10 Ա արքայն զմտաւ

15 Ա հրամայէ: Միհրդ., Պատկ. արձակէ

17 Ա փուշտիպանաց

19 Ա յետ

21 Միհրդ., Պատկ. և մի կամ թէ ինքն Միհրդ., Պատկ. իսկ ինքն փխ. ինքն իսկ

22 Ա նոյնպէս փխ. Սոնպէս

էր գրեալ վասն նորա և առ Պատրիկն Յովզան, զի արձակեսցէ զնա, և նորա դարձեալ հրաման տուեալ նմա երթալ այնպէս պատրաստութեամբ, և հրամայեաց ամենեցուն նոցա արկանել զանձամբ զիրաքանչիր զսպառազինութիւն: Արկաւ և ինքն զանձամբ զսպառազինութիւն 5 իւր<sup>216</sup>: Վառեցան և գնացին:

Եւ եղև իբրև մտին ի մէջ բանակին և մերձ եղեն մաւտ ի մաշկապերճանն արքունի, և հրաման հասանէր ընդդէմ, մի՛ երթալ այնքան բազմութեամբ, այլ բացագոչն նստուցանել զնոսա, և նմա սակաւ արամբք յանդիման լինել արքայի:

10 Եւ նորա ոչ առեալ յանձին առնել այնպէս, այլ գնաց զաւրութեամբք մաւտ ի դուռն խորանին արքունի. և զաւրն Պարսից կացին<sup>217</sup> շուրջ զխորանան սպառազինեալք. և իջեալ յերվարէն՝ գնաց ի դուռն խորանին Մ արամբք: Եւ զաւրն կային այնպէս զինեալ իւրաքանչիր երիվարաւք: Զարհուրեցաւ արքայն, և ամենայն զաւրք նորա. և սկսան 15 ծածկել զնենգութիւնն: Եւ եղև իբրև եհաս ի դուռն խորանին՝ մատեան 503բ բարապանք/դրանն և ասեն. «Լո՛յժ զկամարդ և զսուսերդ ի միջոյ ջումմէ, և մերկեա՛ ի քէն զսպառազինութիւն քո. զի ոչ է արէն մտանել առաջի թագաւորին»: Անկաւ կասկած ի սիրտս նորա, սկսաւ պատրաստել և կազմել զինքն յարձակումն: Պատասխանի ետ բարապանացն և 20 ասէ. «Ի մանկութենէ իմմէ սննդակից եղեալ եմ թագաւորաց ի նախնեաց իմոց և հաւուց, և այժմ հասեալ կամ ի դուռն արքունի, ի տեղի հանդիսի: Ես զսպառազինութիւնն իմ յանձնէ իմմէ ի բա՞ց մերկացայց, և լուծի՞ց զկամարս և զգաւտիս<sup>218</sup> յանձնէ իմմէ, զոր ո՛չ երբեք լուծանեմ ի տան իմում յուրախութեան: Եւ կամ ի՞նձ արժան իցէ զիտել զշարու 25 թիւնդ Պարսից»: Եւ հրաման ետ միում ընթանալ մանկանցն, զի յառաջ մատուցէ զզաւրն յաւգնութիւն. և ինքն դարձաւ անդրէն ի գնալ:

Ազդ եղև արքայի, եթէ ոչ կամեցաւ այնպէս մտանել, այլ դարձաւ անդրէն և գնաց: Եւ սկսաւ թագաւորն ծածկել զշարութիւնն և ասէ. «Թողցի արդ ի բաց խորհուրդն այն. թող եկեսցէ, որպէս և կամեսցի»: 30 Քանզի ինքն մանուկ էր, և զաւրութիւն զաւրացն<sup>219</sup> սուղ ինչ և սակաւ: Կոչեն անդրէն և ասեն. «Հրաման ետ մտանել որպէս և կամիս»: Նա դարձաւ և ասէ. «Թող տեսից, եթէ զի՞նչ բարի խորհեսցի տալ ինձ արքայից արքայ»: և գնաց:

Եւ եմուտ ի խորանն, զառաջեւաւ արքայի եւթն արամբք, և խորհ 35 նարհեցաւ ի վերայ երեսաց իւրոց, երկիր եպագ արքայի, և կանգնեցաւ: Եւ արքայ ոչ ձգեաց զձեռն իւր որպէս երեկն և եռանդն՝ ընդունել զնա

3-4 Պատկ. իւրաքանչիր զսպառազինութիւն իւր փխ. զիրաքանչիր զսպառազինութիւն  
 4-5 Պատկ., Մալխ. չիբ արկաւ և ինքն զանձամբ զսպառազինութիւն իւր: Տե՛ս ծան. 216:  
 7 Ա. այսքան  
 9 Ա. արամբ  
 16-17 Ա. քումէ  
 21 Ա. ի տուն փխ. ի դուռն  
 23 Միերդ. ոչ երբեք լուծեալ է իմ փխ. ոչ երբեք լուծանեմ Հ, Ա. լուծանել փխ. լուծանեմ  
 24 Հ, Ա. ի՞նչ փխ. ինձ  
 34 Ա. եաւթն արամբ  
 36 Ա. երէկն

և ողջունել, այլ կայր այնպէս յամառացեալ. և անդ կացին այսպէս յամառացեալք<sup>220</sup>:

Երկեաւ արքայ և զանգիտեաց, և ոչ կարաց տալ հրաման՝ որպէս խորհեալ էր, և ասել կամ մեծ կամ փոքր՝ յերկիրդէն: Եւ նա դարձեալ  
5 ել փութանակի ի խորանէն. մատուցին նմա զերիվարն, հեծաւ և գնաց: Եւ եղև իբրև ետես զայն արքայ՝ յոյժ երկեաւ, և կամեցաւ ծածկել զվնաս իւր. յտոն եկաց ի գահոյիցն և ընթացաւ ի դուռն խորանին, ել արտաքս և արձակեաց զհետ նորա զոմն զլխաւոր նախարար: Ետ տանել այդ կնքեալ՝ երդումն, և կոչել անդրէն, «զի պատուով և մեծարանաւք գնաս-  
10 ցես, ասէ, աստի, և մի՛ համարիր ի միտս քո խորհել վասն քո այլազգ ինչ»:

504ա Եւ նորա ո՛չ կամեցեալ, այլ գնաց//Ճանապարհ իւր: Արդ՝ նա խորհեալ նոցա զայս՝ յերրորդ ժամու դիմել ի վերայ խորանին և սպանանել զնա: Եւ հրաման տուեալ զաւրացն՝ որք սպառազինեալ շուրջ զխորան  
15 նան հոսորովու կային, Վասն զի եկեալ ի զգացումն և զաւրաց նորա զխոռովութիւն<sup>221</sup> դադարեցին ի խորհրդոյն և գնացին:

Եւ եղև մինչդեռ երթալին նոքա՝ ի դիմի հարաւ սոցա մի ոմն ի փուշտիպանաց արքայի, և ըմբռնեալ զնա՝ աօին գնացին ընդ իւրեանս. և սպառնացաւ նմա Մուշեղ երդամբք, զի եթէ ոչ պատմեսցէ նմա զե-  
20 ղեալն վասն նորա խորհուրդ՝ մեռցի:

Իսկ նորա երդմնեցուցեալ զնա, զի մի՛ տացէ զնա ի ձեռն արքայի. և պատմեաց զամենայն: Ապա ի միւսում աւուրն ընդ առաւաւտնն գնացեալ ի դուռն Պատրկին Յովհաննու, ետես զնա և խաւեցաւ զամենայն շարիսն, ունելով առաջի զոստիկանն փուշտիպանն, որ և նա եկաց և խաւ-  
25 սեցաւ զամենայն եղեալ բանս: Խոռվեցան իշխանքն և ամենայն զարն. բայց և նոցա յիշելով զերդումն և զխոռովութիւնն կայսերն, ոչ ինչ ի վեր հանին զբանսն: Ասացին զրեւ առ թագաւորն և ծանուցանել նմա զամենայն շարիսն: Բայց ասաց Մուշեղ յանդիման ամենեցուն. «Եթէ ոչ մեռցի այրն այն՝ ի նորա ձեռն կորնչելոց է ամենայն երկիր Հոռվմայեցուց  
30 տէրութեանդ»:

Յայնմ ժամանակի գործեցին ընծայս, մեծ աւարմասն թագաւորին իւրեանց, պսակս և խոյր մի ի զմրուխտս և ի մարդարիտս յարինեալս, ոսկի և արծաթ քաղում յոյժ, և ահանս պատուականս չքնաղագիւտ, և

1 Ա այսպէս ամառացեալ փխ. այնպէս յամառացեալ  
1-2 Միհրդ. կացին այնպէս Ա ամառացեալք  
4 Ա կամի մեծ փխ. կամ մեծ  
8 Ա արձակեաց բարձր գրված է կիսառ («արձակ») և կողք տեղ է բաց թողնված լրացնելու նամար: Միհրդատյանը լրացրել է արձակէ ձեռով, իսկ Պատկանյանի ձեռագիրն ունեցել է արձակեաց, որին և քնտնել է Մալխասյանցը և մեմէ:  
10 Միհրդ. չիք խորհել վասն քո  
14 Ա որ փխ. որք  
15 Ա զգայումն  
17-18 Ա ի փուշտիպանաց Մալխ. ըմբռեալ (վրիպակ) Ա զնոսս փխ. զնա  
18 Ա իւրեան  
23 Ա Յոհաննու  
24 Միհրդ., Պատկ. զառաջի  
32 Ա զմրուխտս փխ. ի զմրուխտս

- հանդերձս պճնեալս ի զգեստուց՝ որ է զարդ իւրեանց յարինեալ թագաւորացն Պարսից, երիվարս արքունականս հանդերձ նոցուն իսկ արքունական կազմուածովքն: Եւ գործեալ ընծայս, և առաքեն հանդերձ աւետարտ հրովարտակաւ, զրեալ և ամբաստանութիւն զարքայէն Խոս-
- 5 րովայ, և գումարեն զհետ ընծային հեծեալս շորեք հարիր: Ազդ լինի Խոսորովայ, եթէ հասուն տանել ի գանձուց քոց՝ գանձ աւարամասն թագաւորին իւրեանց, և գրեցին զքեն ամբաստանութիւն: Եւ ընդոստուցեալ դառնութեամբ Խոսորով՝ արձակէ զկնի նոցա զար, զի հասցեն ի ճանապարհի և կորուսցեն զՄուշեղն յանկարծարէն զաղտաբար. և
- 10 առեալ զգանձն արքունի՝ հասուցեն առ նա: Այնպէս իմն փութանակի  
504բ գիտացեալ|| և վասն իրացն և իշխանքն յունականք՝ և նոցա առաքեալ զկնի նոցա զար բռնագոյն. և հասեալ անդէն ի մատոյ՝ ոչ ապրեցուցին ի նոցանէ և ո՛չ մի: Եւ բանն ի վեր ոչ ել. և զաւարն<sup>222</sup> տարեալ հասուցին ի պաղատն մեծաւ խնդութեամբ:
- 15 Ընկալաւ թագաւորն զընծայսն, և առաքէ հրովարտակ մեծաւ շնորհակալութեամբ ի ձեռն իւրոյ հրեշտակի, և գրէ առ նոսա ի բաց կալ ի խորհրդոյն յայնմանէ, զոր ամբաստանեալ զթագաւորէն, «Եթէ ոչ զգուշանայցէք անձին դորա՝ ի ձեռաց ձերոց խնդրեցից զգա»: Գրէ և առ արքայն՝ զոհութեամբ արձակել զամենեսեան:
- 20 Յայնժամ արքայն Խոսորով ետ ամենեցուն ըստ իւրաքանչիւր շափուց պարգևս, և արձակեաց յիւրմէ: Եւ իւր շու արարեալ յԱտրպատականէ՝ գնաց յԱսորեստան, ի բնիկ թագաւորական կայանս իւր: Եւ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան. և զխոստացեալ պարգևսն կայսերն կատարեաց. ետ նոցա զԱրուաստան զամենայն մինչև ցՄծբին, և զեր-
- 25 կիրն Հայոց. որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրագղան, և զզաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի և ցեղր<sup>223</sup> ծովուն Բզնունեաց, և ցԱռեստաւան և զԳոգովիտ զաւառ մինչև ցՀացիւն և ցՄակու: Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային: Եւ ի նախարարացն Հայոց բազումք ի Յունաց կող-
- 30 մանէ և սակաւք՝ ի Պարսից: Ետ և զմեծ մասն Վրաց աշխարհին մինչև ցՏփիսիս քաղաք: Բայց զՄուշեղն զայն կոչեաց թագաւորն<sup>224</sup> ի պաղատն. և այլ ո՛չ ետես զերկիրն:

1 Ա ի սգեստուց

2 Ձջ ցուն փխ. նոցուն Միհրդ., Պատկ. չիք նոցուն

9 Ա կորուսանեն

13 Բոլ. զզարն փխ. զաւարն: Տե՛ս ծան. 222:

13 Ա հասուցանեն

25 Ա իւրեաւ

25 Ա գտուն

26 Միհրդ. ծանոթագրում է. «Միս օրինակին Հոագղան»:

27 Միհրդ., Պատկ. զԱռեստաւան և ցԳոգովիտ

28 Ա գնդի

30 Ա մասնն

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

Բարեպաշտութիւն Շիրին քագումոյ: Հրաման հոսորվայ՝ հաստատուն կալ և մնալ ի հայրենի արէնս:

էին սորա կանայք բազում ըստ արինի մոգութեան իրեանց, բայց  
 5 առ սա և կանայս քրիստոնեայս, և սորա կին քրիստոնեայ յոյժ գեղեցիկ  
 ի հուժաստան աշխարհէ, անունն Շիրին: Սա է բամբիշն, տիկնաց տի-  
 կին: Շինեաց վանս և եկեղեցի մերձակայ արքունական կայնիցն, և  
 բնակեցոյց ի նմա քահանայս և պաշտանեայս. կարգեաց ոռճիկս և  
 հանդերձագինս յարքունուստ, զարդարեաց ոսկով և արծաթով: Եւ բարձր  
 10 ի գլուխ համարձակութեամբ քարոզէր զաւետարանն արքայութեան ի  
 դրանն արքունի. և ոչ ոք իշխէր ի մեծամեծաց քաղէիցն բանալ զքերան  
 իւր և ասել բան մի մեծ կամ փոքր ընդ քրիստոնէի:  
 505ա //Բայց ապա յորժամ լցան արուրք և եհաս<sup>225</sup> ի կատարեալ ժամա-  
 նակի՝ զբազումս ի մոգուց որ դարձան ի քրիստոնէութիւն՝ սպանմամբ  
 15 կատարեալ մարտիրոսութեամբ ի տեղիս տեղիս:  
 Եւ հրաման<sup>226</sup> ետ, ասէ. «Մի՛ ոք յանարինաց<sup>227</sup> իշխեսցէ դառնալ  
 ի քրիստոնէութիւն, և մի՛ ոք ի քրիստոնէից դարձցի յանարինութիւն<sup>228</sup>,  
 այլ իւրաքանչիւր ոք յիւր հայրենի յարէնս պինդ կացցէ: Եւ որ ոչն կա-  
 միցի ունել զհայրենի դէն, այլ ապստամբեալ ի բաց կացցէ յիւր հայրենի  
 20 արինացն՝ մեռցի»: Բայց ի մեծ տանի ողորմեանն՝ երթային ի վանաց  
 Շիրինայ, և որ այլ քրիստոնեայք՝ ի դուռն սենեկին արքայի, պաշտմամբ  
 ընթեռնութիւն զաւետարան, և առնութիւն պարգևս ի թագաւորէն և գնային:  
 Եւ ոչ ոք իշխէր խաւսել ինչ ընդ նոսա:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

25 Խնդրել կայսերն Մարկայ ի հոսորվայ զմարմին Գանիէլի մարգարէին.  
 Եշանէ՛ որ եղեն ի տանելն զմարմինն:

Եւ եղև ընդ արուսն ընդ այնոսիկ խնդրեաց թագաւորն Յունաց ի  
 թագաւորէն Պարսից զմարմին մեռելոյ առն այնորիկ, որ կայր ի Շաւշ  
 քաղաքի, ի զանձու արքային, եղեալ ի պղնձի աւազանի, զոր պարսիկն  
 30 անուանէ Կաւ հոսորով, և քրիստոնեայքն ասեն զՊանիէլի մարգարէի:  
 Եւ արքայն հոսորով հրամայէ տալ նմա զխնդիրն: Իսկ տիկինն Շիրին  
 յոյժ խոտովեալ էր ի վերայ իրացն. իբրև ոչինչ կարաց առնել զկամս

4 Ա էին սորա կանայք բառերի դիմաց, լուսեցում, բնագիրն ընդօրինակող գրչի  
 ձեռնով գրված է ժԱ գլխահամարը: Այստեղից սկսած գլուխները համարա-  
 կալված են (որոշ ընդհատումներով) մինչև ձեռագրի ԼԲ գլուխը: Գլուխներն  
 ամենուրեք սկսվում են կարմիր գլխատառերով:

6 Ա. անսւն  
 9 Ա. անդերձագինս  
 11 Ա. բօթէիցն  
 23 Ա. ինչ խաւսել  
 31 Ա. Շիրինն



Թագաւորին դարձուցանել՝ հրաման ետ ամենայն քրիստոնէից աշխարհին, զի պահաւք և աղաւթիւք խնդրեսցեն ի Քրիստոսէ, զի մի՛ շարժեալ զնասցէ յաշխարհէն շնորհն այն:

5 Եւ ժողովեալ ամենայն երկիրն ի տեղին յայն, ուժդին խնդրուածովք և արտասուզաբոշ ողբովք խնդրէին ի Քրիստոսէ արդելուլ: Եւ ածեալ նմա ջորիս, և բերեալ նմա դեսպակ արքունի, և առին զնացին: Իսկ իբրև ելին ընդ դուռն քաղաքին, յանկարծարէն ցամաքեցան աղբիւրքն, որ ելանէին ի մէջ քաղաքին և հոսէին արտաքս. և ամենայն երկիրն վայիւ և աղաղակաւ զնային զհետ նորա:

10 Եւ եղև իբրև մեկնեցան ի քաղաքէն ասպարէզս երիս՝ յանկարծակի զտեղի առին ջորիքն որ ի դեսպակին. և ոչ ոք կարաց զնոսա շարժել ի տեղւոջէն: Եւ դարձեալ անդրէն<sup>29</sup> յանկարծակի բռնաբար սուր սուր հարկանելով զամբոխն պատառեցին և զգունդն բռնութեամբ, և ընթացան անդրէն ի քաղաքն. և եղև իբրև մտին ընդ դուռն քաղաքին՝ անդրէն 50Յ արձակեալ բղխեցին ջուրք գետոյն, և հոսէին ջուրքն արտաքս լի||ջորձանաւք ջուրց իբրև զառաջինն:

Գիտութիւն արարին կայսերն վասն նորա փութանակի: Եւ նորա տուեալ տանել նմա պատարագս՝ հրամայեաց առնել որպէս և նայն կամեցաւ. թողին զնա և զնացին ի բաց<sup>30</sup>:

20

Գ Լ Ո Ի Խ Ժ Ե

Նենգաւոր խորհուրդ Մարկայ՝ թափաւր յիշխանաց Հայոց կացուցանել զՀայս: Փախուստ բազում իշխանաց յունական մասինն Հայոց առ Պարսիկս:

3 3այնմ ժամանակի Թագաւորն Յունաց Մարիկ հրամայէ զրել առ 25 Թագաւորն Պարսից զիր ամբաստանութեան<sup>231</sup> վասն իշխանացն ամենայն Հայաստանեայց և դաւրաց իրեանց: «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զբոյզ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել: 2ի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս 30 սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ: 2ի եթէ դոքա յերկրի իրեանց լինիցին՝ մեզ հանդշել ոչ լինի»:

Միաբանեցան երկոքին: Եւ սկսաւ կայսրն հրաման տալ, զի ժողովեսցեն զամենեսեան և ի Թրակէ գումարեսցեն. և սաստիկ տազնա-

2 Ա խնդրէք փխ. խնդրեսցեն  
3 Ա շնորհն այն բառերի դիմաց լուսանցում գրված է զԴանիէլ մարգարէին շնորհ ոչ կարացին տեսանել  
10 Միհրդ., Պատկ. մեկնեցաւ  
12 սուր սուր բառերից մեկն ավելորդ է քվում:  
24 3այնմ ժամանակի բառերի դիմաց լուսանցում գրված է ԺԳ գլխահամարք:  
25 Բոլ. ամբաստան փխ. ամբաստանութեան: Տե՛ս ծան. 231:  
26 Միհրդ., Պատկ. նոցա փխ. իրեանց  
32 Ա կայսր  
33 Միհրդ., Պատկ. զամենեսեանս Ա գումարեսցին

պէր՝ հրամանն կատարէր: Եւ սկսան փախչել ի կողմանէն յայնմանէ և գալ ի ծառայութիւն Պարսից, մանաւանդ որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր: Իսկ նա զամենեսեան ընդունէր մեծարանաւք և մեծամեծ պարզեա քան զկայսր պարզէր նոցա. մանաւանդ իբր տեսանէր ըզ-  
 5 փախուտ նոցա ի կայսերէն՝ ևս առաւել մեծապէս սիրով կամէր զամենեսեան կորզել առ ինքն:

Գ Լ Ո Ի Խ Ժ Զ

Գալ համարակարին գանձու մեծաւ առ յանկուցանել զիշխանս Հայոց ի բաժնէն Յունաց. յափշտակել իշխանաց զգանձն: Միաբանութիւն երկու-  
 10 ցունց թագաւորաց ընդդէմ յափշտակչաց: Հաշտութիւն, երթալ ոմանց յիշխանացն առ Պարսիկս եւ այլոց առ Յոյնս:

Արդ՝ իբրև տեսանէր թագաւորն Պարսից զմարդկան փախուտ ի կայսերէն՝ արձակոյր ի Հայս զՎասպուրականն համարակարն<sup>232</sup> հանդերձ գանձու բազմաւ և մեծամեծ պատուովք. զի այնպէս նուաճեալ 15 ածցէ զնոսա ի ծառայութիւն իւր. և գնայր համարակարն ի Հայս, և ընդ նմա գանձ ուղտուք բազմաւք:

Եւ մինչ Սամուէլ Վահևունի հանդերձ այլովք ընկերաւք իւրեանց գնացին ընդդէմ նորա և պատահեալ նմա ի սահմանս Ատրպատական աշխարհին՝ հանին զգանձն, և համարակարին զարևն պարզե շնորհեցին:  
 20 Եւ էին այսոքիկ. Ատատ Խորխոռունի<sup>233</sup>, Սամուէլ Վահևունի և Մամակ Մամիկոնեան, Ստեփանոս Սիւնի և Կոտիտ Ամատունեաց տէր և Թէոդորոս<sup>234</sup> Տրպատունի<sup>235</sup>, և հեծեալք իբրև երկու հազարք: Եւ զայս եղեալ ի մտի՝ եթէ գանձուդ այդուիկ զՀոնս<sup>236</sup> մե՛ր արասցուք. և առեալ ի նոցանէ<sup>237</sup> ազնականութիւն՝ պատերազմեսցուք ընդ երկուսին թագա-  
 506ա տրսդ, և բռնութեամբ զերկիրդ/մեր ի մեզ դարձուցուք: Եւ հասեալ ի Նախճաւան քաղաք՝ քակտեցան խորհուրդք միաբանութեան. ո՛չ հաւատալով միմեանց ի բաց բաժանեցին զգանձն, և բանակեցան և նստան ի շամբին, որ կոչի Ճահուկ:

Նա աւանիկ համարակարն երթեալ ի դուռն՝ պատմեաց թագաւորին

5-6 SS չիք գամենեսեան

12 Ա արդ իբրև տեսանէր բառերի դիմաց լուսանցում գրված է ԺԴ գլխահամարը:

13 Ա համակարն

16 Միհրդ., Պատկ. ուղտաւք, Ա ուղտովք

17 Միհրդ., Պատկ. ընկերովք, Ա ընկերօք

18 SS չիք նմա

20 SS Խորխոռունի: Տե՛ս ծան. 233:

21 Պատկանչանի ձեռագիրն ունեցել է «կատից» փխ. Կոտիտ:

22 Բոլ. Թէոդոս: Տե՛ս ծան. 234:

23 ՋՋ, Միհրդ., Պատկ. այդորիկ զՀայաստան փխ. այդուիկ զՀոնս: Տե՛ս ծան. 236:

24 Միհրդ., Պատկ. ազնութիւն

զամենայն եղեալսն և բանք կայսերն<sup>238</sup> արդարացան: Յանժամ հրամայէ գրել խոսորով արքայ հրովարտակ առ կայսր, և խնդրէ զաւր յաւգնականութիւն, և արձակու անդրէն զՎասսպուրական համարակարն ի Հայս: Յայնժամ հրամայէ Հերակղի զաւրավարի, որ նստէր ի Հայաստան երկրի,  
 5 առնուլ զզաւրս իւր և զնալ ի վերայ նոցա ի պատերազմ: Եւ արդ՝ երթեալ միացան երկուց թագաւորացն զաւր ի նախճաւանն քաղաքի: Եւ եղև ի գումարել ի վերայ նոցա զաւրացս այսոցիկ՝ սկսան արձակել առ նոսա պատգամս, զի մի՛ լիցի պատերազմ և արինհեղութիւն ի մէջ քրիստոնէից, այլ ի բաց կացցեն ի յամառութենէն յայնմանէ, և նուաճեսցին  
 10 անդրէն ի ծառայութիւն թագաւորին, և երգմամբ հաստատեալ առ նոսա, եթե ո՛չ երկիւղ է ձեզ ի թագաւորէն: Ասէր և համարակարն, եթէ «Զիս արքայից արքայ առ ձեզ արձակեաց, և ես ձեզ իսկ բերի զգանձն, և չի՞ք ինչ ձեզ երկիւղ յարքայից արքայէ», և ցուցանէր նոցա երդումն ըստ արինի իւրեանց:

15 Սկսան նոքա քակտել և բաժանել ի միմեանց. ի բաց եկաց ի սոցանէ Մամակն Մամիկոնեան և Կոտիտն Ամատունեաց տէրն և Ստեփանոս և այլք ևս ընդ նոսա, զանձինս անվնաս ցուցանելով համարակարին՝ նուաճեսցին զզաւրս իւրեանց ի ծառայութիւն արքային Պարսից: Իսկ Ատատն խորխոռունի և Սամուէլն Վահեունի զաւրաւքն իւրեանց փախըստ  
 20 տական զնացին ընդ քաղաքագեղն կոչեցեալ Սաւդայ, հասանէին յաշխարհն Աղուանից, ի Հոնս դէմս արարեալ, և անցեալ ընդ գետովն որ կոչի Կուր՝ բանակէին առ գետեզերքն:

Հասեալ և սոքա յափն գետոյն՝ բանակէին աստի կողմանէ: Եւ իբրև ոչ կարացին նոքա վստահանալ ի ճամբարս Հոնաց, յայնժամ ապա եր-  
 25 դումն խնդրեալ ի թագաւորէն Յունաց, և զնացին ի ծառայութիւն նորա: Գնացին ոմանք առ համարակարն, և դարձան անդրէն յերկիրն իւրեանց: Եւ ժողովեալ համարակարին զամենայն իշխանս և զզաւրս Հայոց, որ  
 506բ ի//Պարսից կողմանէ՝ ողորաւ և ևս քաղցր բանիւք յորդորեալ զամենեսեան միաբանեաց, արար գունդս գունդս: Եթող անդրէն յաշխարհին  
 30 սակաւուք և զնաց. «Մինչև ես ծանուցից, ասէ, վասն ձեր, և հասցէ անտի հրաման դադարել անդ»: Զի զմտաւ իսկ ածեալ էր<sup>239</sup> նորա և զայլոց զալն առ նոսա և զբազմանալն:

Իսկ զԱտատն խորխոռունի փութանակի հանդերձ զաւրուն իւրոջ կոչէ թագաւորն ի պաղատն, և մեծարէ շքով և պատուով. և տայ ինչս  
 35 բազումս և գումարէ ի թրակացիս:

1 Ա. եղեալն

3 Միհրգ., Պատկ. արձակէ Ա. անդէն

8 Ա. արինահեղութիւն

9 Ա. նուաճեսցեն

17 Ա. համակարին

19 Մալխ. խորխոռունի

20 Ա. քաղաքագեղն կոչեցեալ Սողա

24 Ա. ի շամբարսն

31 Բոլ. ածեալ է փխ. ածեալ էր: Տե՛ս ծան. 239:

33 Մալխ. խորխոռունի

34 ՏՏ պալատն



Եւ նորա կապել հրամայեաց և տալ ի ձեռս թշնամեացն, զի մեոցի. և սաստիկ աղետիւք վտանգեցոյց:

Եւ թշնամիքն որ էին ի Թրակացոց կողմանէն, աւար առին զթագաւորութիւնն<sup>242</sup>, անհուն զարացն բազմութեամբ ի ձեռն հապճեպ պա- 5 տերազմացն զթագաւորութիւնն և զազս Հոռվմայեցոց տէրութեանն կամեցեալ բառնալ, և թագաւորութեանն տիրել անձամբ ի վերայ թագաւորանիստ քաղաքին:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը

Մարիկ գումարէ զաւս ընդէմ Թրակացոց. կացուցանէ զաւրազլոխ 10 զՄուշեղ Մամիկոնեան: Զառաջինն հարկանեն Յոյնք զքշնամիս, յերկրորդումն նուազի հարկանին մեծաւ կործանմամբ: Սպանումն Մուշեղի:

Յայնժամ թագաւորն Յունաց հրաման տայր՝ ժողովել զաւրաց<sup>243</sup> իւրոց զամենայն որ յարևելից կողմանէ. վասն զի խաղաղութիւն էր, և բանք ինչ ոչ գոյին նորա ընդ Ասորիսն ի Պարսից տէրութենէն: Հրաման 15 ետ անցուցանել զամենեսեան ընդ ծով, և զումարել ի կողմանս Թրակացոց ընդդէմ թշնամուցն: Հրաման ետ դարձեալ ժողովել զամենայն այր և ձի ի Հայաստանեայց և զիշխանս նախարարացն, որք հմուտ էին և կարող զդէմ ունել՝ կոռել ռազմ ի<sup>244</sup> նիզակամուխ ճակատի: Եւ հրաման ետ դարձեալ վերստին զար հանել յաշխարհէն Հայոց բազում յոյժ, 20 զամենեսեան կամով և ընտրով հասակի. կազմել զունդս զարդու<sup>245</sup> և զինու վառեալ և անցուցանել զամենեսեան յաշխարհն Թրակացոց ընդդէմ թշնամուցն. և Մուշեղ Մամիկոնեան զաւրազլոխ նոցա:

Արդ՝ երթեալ նոցա ի վերայ ազգացն, որ ունին զկողմանս արևմտից ի յեզր մեծի գետոյն Դանուբայ: Եւ եղև պատերազմ սաստիկ ի վերայ 25 երեսաց երկրին այնորիկ. խորտակեցաւ զաւրութիւն թշնամուցն այնորիկ առաջի երեսաց զաւրացն Յունաց, և փախստական արարեալ յայնկոյս գետոյն Դանուբայ: Եւ ինքեանք մեծաւ յաղթութեամբ հրեշտակ աւետաւոր կայսերն և ամենայն պաղատոյն<sup>246</sup> փութանակի առաքէին:

Եւ գնացեալ ինքեանք ի ներքին կողմն աշխարհին ասպատակաւ, և անցին ի նեղ ինչ տեղիս, աւերէին զերկիրն ամենայն, և հասեալ<sup>247</sup> ի 507բ դիմին՝ եղև պատերազմ մեծ. հարին զՅոյնն և խորտակեցին//կործանմամբ մեծաւ, և փախստական վարեցին առաջի իւրեանց: Եւ կալեալ

1 Ա. կապեալ Ա. թշնամեաց  
3 Ա. եւ զթշնամիսն որ էին ի Թրակացոց  
3-4 Բոլ. զթագաւորութեանն: Տե՛ս ծան. 242:  
5 Ա. հոռումայեցոց  
12 Ա. Յայնժամ թագաւորն Յունաց բառերի դիմաց լուանցում գրված է ԺԶ գլխահամարը:  
15-16 Ա. Թրակացոց ընդդէմ թշնամուցն  
17 Ա. Հայաստանեաց  
20 Ա. ընդրով ԶԶ, Միհրդ., Պատկ. զարդս փխ. զարդու: Տե՛ս ծան. 245:  
21 Միհրդ., Պատկ. զամենեսեանսն Ա. Թրակացոց  
28 Ա. պաղատային ՏՏ պաղատային: Տե՛ս ծան. 246:  
29 Միհրդ., Պատկ. չիք աշխարհին

զնեղ վայրն առաջի նոցա թշնամույն՝ վանեցին զնոսա սրով սուսերի, և ճողոպրեալ հազիւ հազ զերծանէին յամուրս աշխարհին Քրակացոց: Եւ ձերբակալ արարին զՄուշեղն Մամիկոնեան, կապեցին զբարձրաբերձ սնկոյ անտառին և սպանին: Եւ բազմութիւն նախարարացն և զաւրացն

5 Հայաստանեայց յաւուր յայնմիկ կործանեալ սատակեցան:

Ապա վերստին դարձեալ այլ զաւրս գումարեալ՝ հրամայեաց թագաւորն միայն զգուշանալ անձանց:

Գ Լ Ո Ի Խ Ժ Թ

Հրաման կայսերն Մաւրկայ՝ քարոզել զժողովն Քաղկեդոնի յեկեղեցիս

10 Հայաստանեայց: Բաժանումն արձոյց հայրապետութեանն:

Հրաման ելանէ դարձեալ ի կայսերէն վերստին այլ՝ քարոզել ըզժողովն Քաղկեդոնի յամենայն եկեղեցիս Հայաստան երկրի, և միաւորել հաղորդութեամբ ընդ զաւր իւր: Իսկ մանկունք ուխտի եկեղեցեացն Հայոց փախստական գնացեալ յաւտար երկիր վարէին: Եւ բազմաց առ

15 ոչինչ համարեալ զհրամանն՝ գտեղի կալան և անշարժ մնացին: Եւ բազումք հաւանեալ փառասիրութեամբ հաղորդեալ միաւորեցան աւելնաւք<sup>248</sup>: Բաժանեցաւ ապա և աթոռ կաթողիկոսութեանն յերկուս. անուն միոյն Մովսէս, և միւսոյն՝ Յովհանն<sup>249</sup>: Մովսէս ի Պարսից կողմանէ, և Յովհանն՝ Յունաց:

20 Եւ Յովհանն ընդ նոսա հաղորդեալ միաւորեցաւ, բայց Մովսէս ամենավին ոչ լինէր ի նոսա հուպ: Եւ սպասք ամենայն եկեղեցւոյն որ ի Գրունի<sup>250</sup> սրբոյն Գրիգորի, զոր տարան<sup>251</sup> եղեալ ի պահեստի ի Կարնոյ քաղաքի<sup>252</sup>: Ուստի վարեցաւ ինքն<sup>253</sup> այսուհետև ի գերութիւն յերկիրն Պարսից, յԱհմատան շահաստան:

Գ Լ Ո Ի Խ Ի

Հրաման դարձեալ ի կայսերէն՝ ժողովել զաւրս ի Հայոց եւ առաքել ի ձեռն Սահակայ Մամիկոնեանի եւ Սմբատայ Բագրատունոյ. դառնալ Սմբատայ անդրէն յետս եւ խորհուրդն ապաստմութեան: Սմբատ ըմբռնի եւ ածի ի Կոստանդնուպոլիս. հատանի վնիռ ի վերայ նորա՝ արկանել ի

30 կիւմիկն: Նահատակութիւնմ Սմբատայ անդ եւ գտանել ողորմութիւն. զկնի ախոր նորա յԱփրիկէ:

Յայնմ ժամանակի դարձեալ հրաման ելանէր ի կայսերէն՝ վերստին քննել և խնդրել յաշխարհէն Հայոց զայր և զձի արս ընտիրս սպառազէնս ԲՈ հեծելոց, և տալ յերկուս արս հավատարիմս և արձակել մեծաւ ստիպով:

2 Ա ճողոպրեալք  
 5 Ա Հայաստանեացն  
 11 Ա Հրաման ելանէ բառերի դիմաց լուսանցում գրված է Ժ՛ գլխահամարը:  
 13 Միւրդ., Պատկ. զաւրս  
 13 Ա. եկեղեցեաց  
 16-17 22, Միւրդ., Պատկ. արիւնաւորք յիւ. արիւնաւք: Տե՛ս ծան. 248:  
 18 Բոլ. միւսոյն Յոհանն: Տե՛ս ծան. 249:  
 32 Ա ժամանակաւ Ա յայնմ ժամանակի բառերի դիմաց լուսանցում գրված է Ժ՛ գլխահամարը:  
 33 Ա ընդիրս

Յայնժամ ի խնդիր ելեալ ընտրեցին արս ԲՆ սպառազէնս և ետուն՝ երկու հազարս յերկուս արս հաւատարիմս, մի հազար ցՍահակ Մամիկոնեան և մի հազար ի ձեռն Սմբատայ Բագրատունւոյ, որդւոյ Մանուէլի: Եւ ոչ ընդ մի ճանապարհ արարեալ նոցա զշուն, այլ զՍահակ<sup>254</sup> Մամիկոնեան արձակեն միով հազարաւ ընդ Սեբաստիա, և զՍմբատ Բագրատունի միւսովն ընդ կողմանս Խաղտեաց: Եւ Սահակ գնացեալ տունի  
508ա հասուցանէ<sup>255</sup> զզարն ի պաղատն, և յանդիման լինի թագաւորին:

Իսկ Սմբատ հասեալ ի Խաղտիս՝ բռնանայ. քանզի երկեաւ զարն ի ճանապարհի, ոչ կամեցեալ երթալ ի տեղին յայն զհետ<sup>256</sup> թագաւորին խնդրոյ: Ազգ լինի թագաւորին եղեալ իրքն. ապա ի ձեռն հրովարտակաց և հաւատարիմ հրեշտակաց երգմամբ խոստանայ՝ մեծաւ պատուով փութանակի արձակել յերկիրն իւր: Եւ զարուն խոստանայր պատիւս մեծամեծս և ինչս, և այնպէս ողորեալ ածէ ի հաշտութիւն, Եւ գնացեալ միաբանութեամբ յանդիման լինէին թագաւորին: Եւ թագաւորն սպառա-  
15 զինէ զզարն և զարդարէ և գումարէ ի սահմանս Թրակացոց, և զՍմբատ մեծաւ պատուով յուղարկէ անդրէն հասանել յերկիրն իւրեանց բազում ստացուածովք:

Ապա դարձեալ սկսան միաբանել մնացեալ նախարարքն Հայոց, և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել  
20 իւրեանց թագաւոր, զի մի՛ և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց: Եւ բանք խորհրդոց նոցա ոչ ունէր զմիաբանութիւն իրին յինքեանս հաստատեալ, այլ ոմանք ի նոցանէ շոգմոզութեամբ հասուցին զբանս խորհրդեանն յունկն թագաւորին, և ինքեանք այսր և անդր սորսորեալ խուսափէին:

25 Յայնմ ժամանակի հասանէին դեսպանք արքունականք հրովարտակաւք, և կալեալ զՍմբատ հանդերձ այլովք ոմամբք եւթն արամբք և տարան յանդիման թագաւորին: Եւ քնեալ զնոսա ի մէջ բազմամբոխ հրապարակին՝ հատաւ վճիռ ի վերայ նոցա՝<sup>257</sup> մերկացուցանել և ընկենու ի կիւնիկն<sup>258</sup>:

30 Եւ էր սա այր անհեղեղ անձամբ և գեղեցիկ տեսեամբ, և բարձր և լայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով: Յայնժամ<sup>259</sup> հզար և պատերազմող, որ ի բազում պատերազմունս ցուցեալ էր զիւր քաջութիւնն և զբռնութիւն: Այս է զարուսթիւն նորա. քանզի անցեալ սա ի ներքոյ անտառախիտ մայրեաց և զարաւոր ծառոց, ի վերայ յազթանդամ և  
35 հզար երիվարին, և յարձակեալ զոստով ծառոյն՝ բուռն հարկանէր, և կծկեալ ուժգին երանաւքն և ոտիւք զմէջ երիվարին՝ վերացուցանէր երա-

2 Միհրդ., Պատկ. չիք երկու հազարս Ա յերկու արս

3 Ա Սմպատայ

4 Բոլ. Սահակ: Տե՛ս ծան. 254:

7 Բոլ. հասուցանել փխ. հասուցանէ: Տե՛ս ծան. 255:

10 Ա իրսն փխ. իրքն

22 Ա ի յինքեանս

26 Ա եաւթն արեամբք

30 Միհրդ., Պատկ. անհեթեթ

31 Դ յայնժամ բառը շնչված, դարձված է յոյժ: Տե՛ս ծան. 259:

36 Միհրդ. կծեալ փխ. կծկեալ

նաւքն ի գետնոյն. մինչ զի ամենայն զաւրացն տեսեալ ահաբեկ լինէին ի զարմացմանէ:

508բ Եւ արդ՝ մերկացուցեալ զնա և ագուցեալ անդրավարտիս և ընկեցեալ ի կիւնիկն, զի կուր լիցի գազանաց:

5 Եւ արձակեալ ի վերայ նորա<sup>260</sup> արջ: Եւ եղև՝ իբրև դիմեաց ի վերայ նորա արջն՝ նա աղաղակեաց մեծաձայն և ընթացաւ ի վերայ արջոյն, և զարկեալ բռամբ իւրով զճակատն, և անդէն սատակէր զնա ի տեղոջն:

Երկրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա ցուլ: Իսկ նորա բռուն հարեալ զեղջերացն ցլուն... և զաղաղակ հզարին...<sup>261</sup> և յաւզեալ ցուլն ի մարտին՝ զելոյր զպարանոցն և խորտակէր զերկոսին եղջիւրսն ի վերայ գլխոյն. թուլանայր ցուլն և յետս-յետս գնալով ի փախուստ դառնայր: Իսկ նորա գհետ ընթացեալ՝ բռուն հարկանէր յագին և ի կճղակն ազդեր միոյ ոտին նորա, և թափեալ զկճղակսն՝ մնայր ի ձեռին նորա: Եւ ցուլն գնայր ի նմանէ փախստական, միով ոտամբն բոկ:

15 Դարձեալ երրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա առիւծ: Եւ եղև՝ ի վերայ նորա յարձակել առիւծուն՝ այնպէս իմն յաջողեալ նմա ի տեսնէ, բռուն հարեալ յականջ առիւծուն՝ հեծաւ ի վերայ նորա: Եւ անդէն բռուն հարեալ զխոշափողիցն՝ խեղդէր զառեւծն և սպանանէր: Անդ աղաղակ բազում ամբոխին զերկիրն յնուին, և խնդրէին ի վերայ նորա ողորմութիւն ի թագաւորէն<sup>262</sup>:

Եւ նա վաստակեալ ի մարտին՝ նստէր ի վերայ առիւծուն մեռելոյ, զի փոքր մի հանգիցէ: Անդ և կին թագաւորին անկեալ առ ոտս նորա՝ խնդրէր ի վերայ նորա առնել ողորմութիւն. վասն զի սիրելի էր յառաջն այրն այն թագաւորին և կնոջ նորա, և անունեալ էր զնա իւր յորդեգիրս:

25 Եւ նա զարմացեալ ընդ զաւրութիւն և ընդ պնդութիւն առնն և լուեալ պաղատանաց կնոջն և ամենայն պաղատոյն՝ հրամայեաց առնել ի վերայ նորա ողորմութիւն:

Յայնժամ տարան զնա ի լուացումն ի բաղանիս. լուացին զնա և զգեցուցին, և կոչեցին զնա յընթրիս արքունի, դարմանեցին զնա կերպ- 30 կրովք: Եւ զկնի սուղ ինչ անցելոց, մանաւանդ եթէ ոչ ի շար ինչ կամաց թագաւորին, այլ ի նախանձորդաց շարախօսութեանէ, հրամայէ հանել զնոսա ի նաւ և աքսորել ի կղզիս հեռաւորս. և ապա անտի հրամայէ անցուցանել յԱփրիկէ, (և առնել նոցա անդ ի մէջ նոցա)<sup>263</sup> և առնել զնա<sup>264</sup> անդ ի մէջ զաւրացն, որ էին անդ՝ տրիբուն<sup>265</sup>:

5 Ա. նոցա փխ. նորա  
7 Միհրդ., Պատկ. անդրէն  
9 Ա. զեղջրուացն  
11 Մալխ. յետս փխ. յետս-յետս  
14 Ա. փախստական յետս յետս գնալով միով ոտամբն բոկ  
15 Ա. արձակէ  
16 Ա., Մալխ. առեւծ Ա. առեւծուն  
17 Ա. առեւծուն (նաև՝ հետո)  
24-25 Ա. ընդ որդեգիրս և նա զարմացեալ էր փխ. իւր յորդեգիրս: Եւ նա զարմացեալ  
25 Ա. լսեալ  
33 և առնել նոցա անդ ի մէջ նոցա բառերն աւելորդ են: Տե՛ս ծան. 263:  
34 ՁՁ, Միհրդ., Պատկ. ի բուն փխ. տրիբուն: Տե՛ս ծան. 265:



Գ Լ Ո Ւ Խ Ի Ա

Խոստով հրովարտակաւ կոչէ ի դուռն զնախարարսն՝ զորս թողեալ էր համարակարին. ցուցանէ նոցա պատիւս մեծամեծս եւ զգաւսս նոցա նստուցանէ ի Սպահան քաղաքի:

5 Իսկ որ ի Պարսից կողմանէ էին նախարարքն և զարք, զորմէ վերագոյն ասացի, եթէ եթող համարակարն և գնաց<sup>266</sup>. Թէ մինչև հասցէ հրամանն արքունի:

509ա Յայնժամ եկին հասին/պէշասպիկը<sup>267</sup> հրովարտակաւ կոչել զնոսս միաբանութեամբ ի դուռն արքունի: Եւ այսոքիկ են նախարարք և զարք,

10 որ գնացին միաբանութեամբ հանդերձ իւրաքանչիւր գնդովք և դրաւշու ի դուռն թագաւորին Պարսից Խոսրովու, յամի վեցերորդի թագաւորութեան նորա: Առաջին՝ Գազիկ Մամիկոնեան որդի Մանուէլի. երկրորդն՝ Պապ Բագրատունի որդի Աշոտայ ասպետի. երրորդն՝ Խոսրով Վահուհեաց տէր. չորրորդն՝ Վարդան Արծրունի. հինգերորդն՝ Մամակ Մամի-

15 կոնեան. վեցերորդն՝ Ստեփանոս Սիւնի. եմներորդն՝ Կոտիտ Ամատունեաց տէր, և այլք ընդ նոսա ի նախարարաց: Եւ հասեալ նոցա յԱսորեստան ի տեղի արքունական տանն և յանդիման եղեն թագաւորին: Իսկ նա խնդութեամբ ընկալաւ զնոսս, և հրեկելի շքեղութեամբ մեծացոյց պատուովք. և զմեծամեծ իշխանսն հրամայէ պահել ի դրանն արքունի,

20 կարգել նոցա ոռճիկս յարքունուստ՝ տալ ի տունս իւրաքանչիւր, և կոչել յամենայն աւուր յընթրիս արքունի: Եւ զարաց նոցա հրաման տայր նստել ի Սպահան աշխարհի, և դարմանել զնոսս սիրով և ամենայն կամակարութեամբ:

Գ Լ Ո Ւ Խ Ի Բ

25 Սպանումն Վնդոյի. փախուստ եւ ապստամբութիւն Վստամայ եւ Երթ նոսա ի կողմանս Պարթեւաց:

Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր Խոսրով արքայն՝ խնդրել զքէն վրիժուց մահուան հար իւրոյ ի ձեռաց նախարարացն այնոցիկ, որք սպանին զնա: Եւ նախ կամի դատել զքեռիս իւր: Հրաման տայ ունել  
30 զՎնդոյ, զայն որ վերագույն ասացի, կապել և սպանանել: Իսկ եղբայր նորա Վստամ ոչ հանդիպեցաւ ի ժամուն յայնմիկ ի դրանն արքունի: Եւ թէպէտ և կոչեալ պատրանաւք և բազում ողորջանաւք, իբր թէ ոչ գիտիցէ նա զմահ եղբարն իւրոյ, սակայն նա ուստեմն իրազեկ եղեալ՝ ոչ ան-

5 Ա իսկ որ ի Պարսից բառերի դիմաց լուսնցֆում գրված է ԺԹ գլխահամարը:  
8 ԱԶ, Միհրդ., Պատկ. պէշասպիկը: Տե՛ս ծան. 267:  
19 Ա. զիշխանսն  
22 Միհրդ., Պատկ. նստիլ  
27 Յայնմ ժամանակի բառերից առաջ, լուսնցֆում գրված է Ի գլխահամարը:  
31-32 Ա յայնոսիկ փխ. յայնմիկ Միհրդ., Պատկ. թէպէտ փխ. թէպէտ և  
33 Ա իրազիկ

կանէր ի պատրանս խաբէութեան նորա, այլ ապստամբեալ անկանէր յամուր երկիրն Գեղմայ<sup>268</sup>, և գումարեալ նուաճէր ընդ ինքեան զամենայն զարս նոցա:

5 Եւ ելեալ ի կողմն Ռէոյ ասպատակաւ, և աւար հարկանէր զամենայն զքաղում աշխարհս թագաւորութեանն Պարսից: Յայնժամ արքայն խոսրով առնոյր զզարս իւր և գնայր ի վերայ նորա. և զար կայսերն էր ընդ նմա: Եւ մարտ եղեալ կոռով ընդ միմեանս յԻէհ աշխարհին: Եւ յայնմ պատերազմի ոչ փոքր ինչ քաջութիւն գործեալ հայակոյտ զարացն. զոր տեսեալ թագաւորն՝ առաւել զարմանայր:

509բ Իսկ իբրև ոչ կարաց/ընդդէմ ժուժկալել ապստամբն՝ ի լեռնակողմն ապաւինեալ ամրանայր: Եւ այնպէս ոչ յաղթահարեալք ի միմեանց՝ ի բաց դառնային յիրաքանչիւր տեղի: Գնայր և ապստամբն Վստամն յամուր յերկիրն Գեղմայ, որ և ապա անտի շու արարեալ երթայր ի կողմանս Պարթևաց, ի բուն երկիրն իւրոյ իշխանութեանն, զի նուաճեցուցէ:

15 ընդ ինքեան զզարս կողմանն այնորիկ և դարձցի նոյնպէս:

Եւ թագաւորին շու արարեալ յԱսորեստան՝ հասանէր ի բուն կայեանս իւրոյ արքունականս, և իշխանք նախարարացն Հայոց ընդ նմա:

Գ Լ Ո Ի Խ Ի Գ

Մահ նախարարացն Հայոց որ յԱսորեստանի: Սպանումն Կոտիտայ  
29 Ամատունույ սաղրանօք խոսրովայ: Ապստամբութիւն զաւուռն Հայոց որ նստէրն ի Սպահան: Յափշտակութիւն զանձու համարակարին եւ անկանել ոմանց յերկիրն Պարթևաց առ Վստամ:

Յայնժամ հասեալ մահ իշխանացն Հայոց, մեռան ի դրանն արքունի մահուամբ իւրեանց՝ Գագիկ Մամիկոնեան և խոսրով Վահուկեաց տէր:  
25 Իսկ Մամակ Մամիկոնեան արձակեալ ի Հայս վասն զարուն. և նորա իսկ և իսկ հասեալ ի Դուին քաղաք, կեցեալ սակաւ ինչ աւուրս՝ մեռանէր: Իսկ Ստեփանոս Սիւնոյ պայքարեալ վասն տանուտէրութեան (լեալ) ընդ հարեղբարն իւրում Սահակայ<sup>269</sup>: Իսկ Սահակ գրէր ի վերայ նորա գիր մահապարտութեան, և կնքէր մատանեաւ իւրով և տանն եպիսկոպոսի,  
30 և մատանեաւ այլ ևս իշխանաց Սիւնեաց, յիշեցուցանել թագաւորին զվնաս նոցա ապստամբութեանն:

2 Միւրդ. ծանոթագրում է. «Ի միւսում օրինակին գրեալ էր «Գեղմայ»:  
6 Մալխ. իւր գնայր փխ. իւր և գնայր  
6 Ա թագաւորին փխ. կայսերն  
12 Ա. յիրաքանչիւր իւր տեղի  
16 Միւրդ., Պատկ. կայանս  
23 Ա. յայնժամ հասեալ մահ բառերի դիմաց լուսնցքում գրված է ԻԱ գլխահամարը:  
26 Ա. ի Դրբին  
27 Մալխ. պայքար փխ. պայքարեալ: Փակագծված լեալ-ը ավելորդ է: Տե՛ս ծան. 269:  
30 Ա. յիշեցուցանելով  
31 ապստամբութեանն բառով ավարտվող նախադասությունը Միւրդատյանը վերցրել է փակագծերի մեջ և ծանոթագրել. «Փակագծիւ Լեղալն՝ գերծեալ էր ի միւս օրինակին»:

Յայնժամ հրաման ետ արքայն կապել զՍտեփանոս և զնել ի բանտ. և զլխատեցին զնա ի բուն աղուհացսն<sup>270</sup> ի զատկին շաբաթուն:

Եւ զԿոտիտ արձակեալ ի Մրժուին դեսպան՝ հրաման ետ հեծելոցն դարանամուտ լինել ի դաշտի, և աւազակաբար յարձակեալ ի վերայ՝  
5 սպանին զնա ի ճանապարհին: Իսկ զաւրն նոցա որ նստէին ի Սպահան աշխարհին, իբրև լուան զեղեալսն՝ ասպատակեալ աւերեցին զերկիրն. առին և զգանձն արքունի որ ի տանն համարակարին, որ ի հարկաց ժողովեալ աշխարհին այնորիկ. և ճանապարհ կալեալ զնացին յամուրն ի յերկրին Գեղմայ: Եւ զհետ սոցա հասանէին զաւրն պերոզական<sup>271</sup>. զո-  
10 մանս ի նոցանէ սրով սատակէին, և ոմանք ընդ իւրեանս իսկ սուր ելեալ՝ զի մի՛ լիցին ձերբակալեալ. և ոմանք մազապուր պրծեալ անկանէին յամուր երկրին Գեղմայ: Եւ իբրև անդ ոչ դիպէին Վստամայ՝  
510ա ճանապարհ կալեալ զնացին յերկիրն//Պարթևաց, և երթեալ կային առաջի նորա:

15 **Գ Ո Ի Խ Ի Ի**

Սմբատ Բագրատունի կարգի մարզպան Վրկանայ, նուանէ զապստամբսն, բարեկարգէ զաշխարհն Վրկանայ:

Եւ եղև ի ժամանակին յայնմիկ հաճոյանալ Սմբատայ Բագրատուն-  
ւոյ<sup>272</sup> յաշս Խոսրովու արքային. տայ ի նա<sup>273</sup> զմարզպանութիւն երկրին  
20 Վրկանայ, առնէ զնա իշխան ի վերայ<sup>274</sup> ամենայն կողմանն այնորիկ, առաւել մեծացուցանէ պատուովք և իշխանութեամբ. լնու զնա ոսկւով և արծաթով, զարդարէ ի հանդերձս պատուականս և յերևելիս: Տայ նմա զկամարն և զսուսերն լեալ հար իւրոյ Որմզդի. զումարէ ի ձեռս նորա զաւրս պարսիկս և զհայաստանեայս և հրամայէ զնալ յերկիր իշխանու-  
25 թեանն իւրոյ:

Էին ապստամբ ի ժամանակին յայնմիկ յարքայէն Պարսից երկիրքն, որ անուանեալ կոչին Ամաղ, Ռոյեան<sup>275</sup>, Զրէճան<sup>276</sup> և Տապարաստան. զորս վանեալ նորա պատերազմաւ՝ հարկանէր սրով սուսերի և ի ծառայութիւն արքային Պարսից կացուցանէր, և շինեալ հաստատէր զա-  
30 մենայն երկիր իւրոյ մարզպանութեանն, քանզի էր երկիրն աւերակ:

2 Բոլ. աղուհացն: Տե՛ս ծան. 270:  
3 Ա. արձակել  
7 Պատկ. առին զգանձն փխ. առին և զգանձն  
7-8 Ա. համակարին ի հարկաժողովեալ զաշխարհին  
9 Ա. պերոզական:  
11 Ա. ձերբակեալ Ա. մազապուր  
13 Ա. յերկրին: Մալխ. երթալ (վրիպակ)  
18 Ա. եւ եղև ի ժամանակին բաւերի դիմաց, լուսանցում գրված է իՅ գլխահամարը:  
19 Ա., Բ., Գ. մայ ի նա Գ տայ ի նա Միհրդ., Պատկ. տայ նմա: Տե՛ս ծան. 273:  
20 Բոլ. և ի վերայ: Տե՛ս ծան. 274:  
23 Ա. իւրում փխ. իւրոյ  
24 Միհրդ., Պատկ. հրամայէ փխ. և հրամայէ  
27 Պատկանյաւն իր ձեռագրի Զրէճան-ը ուղղել է Զրէճան: Նրան հետեւ է նաև Մալխասյանցը: Տե՛ս ծան. 276:

Կային յաշխարհին յայնմիկ ազգն<sup>277</sup> գերեալք ի Հայաստան երկրէ, և նստուցեալ առ ստորոտով անապատին մեծի, որ ի Թուրքաստանի և ի Դելհաստան<sup>278</sup> կողմանէ. զլեզու իւրեանց մոռացեալ<sup>279</sup> և դպրութիւն նուազեալք և կարգ քահանայութեանն պակասեալք: Կային անդ և ազգ 5 Կողրեացն, որք գերեցան մերովքն արամբք: Կային անդ և յիշխանութենէն Յունաց և յԱսորոց կողմանէ ոչ սակաւք:

էին ազգ Կողրեացն անհաւատք. բայց ի վերայ քրիստոնէիցն ծագէր լոյս մեծ. հաստատէին ի հաւատս և ուսանէին զդպրութիւն և զլեզու<sup>280</sup>. և հաստատէին ի կարգ քահանայութեան յաշխարհի անդ երէց ոմն ի 10 նոցանէ, որ անուանեալ կոչէր Աբէլ<sup>281</sup>:

Գ Լ Ո Ի Խ Ի Ե

Դիմելն Վստամայ յԱսորեստան ի վերայ հոսրովու եւ մեռանել յուլոչ ի նենգութենէ Պարիովկայ արբային Քուշանաց: Յրուել զաւրաց Վստամայ: Պատեալով Սմբատայ մարգպանի ընդ Գեղումս եւ պարտութիւն:

15 Եւ եղև ի ժամանակին յայնմիկ նուաճեալ ընդ ինքեան<sup>282</sup> Վստամայ զերկոսին թագաւորսն Քուշանաց, զՇաւկն<sup>283</sup> և զՊարիովկն. և գումարեալ զամենայն զաւրսն կողմանց Արևելից՝ դիմեաց գնաց յԱսորեստան զաւրու մեծաւ և հզաւր յոյժ, զի սպանցէ զհոսրով և աոցէ յինքն զթագաւորութիւն նորա: Եւ զաւրք նորա կային յաջմէ և յահեկէ բացագոյն ի նմանէ. և 20 արքայն Քուշանաց Պարիովկն ի թիկունս նորա զկնի նորա: Յայնժամ արկեալ ի միտս իւր նենգաւոր արքային Քուշանաց՝ երթեալ անցա- 510բ նէր/զանաչեաւ նորա սակաւ արամբք, և իջեալ յերիվարէն երկիր պա- զանէր ի վերայ երեսաց իւրոց ելին անգամ: Եւ մատուցեալ սա յառաջ՝ հրամայեաց հեծանել անդրէն յերիվարն իւր: Եւ դարան զործեալ էր նմա 25 ի ճանապարհի: Ասէ ցնա Պարիովկն. «Հրամայեա՛ արձակել ի քէն զամբոխդ, զի խաւսեցայց ինչ ընդ արքայի բանս ինչ խորհրդեան»: Որոյ ոչ զգացեալ զնենգութիւն նորա՝ հրամայեաց մարդկանն երթալ յինքենէ: Եւ եղև մինչդեռ երթային նոքա զճանապարհն և խաւսէին՝ ելին յանկարծակի դարանակալքն ի տեղւոջէն իւրեանց, և հարեալ սպանին 30 զՎստամ: Եւ ժամադիր լեալ զաւրացն իւրոց Պարիովկն՝ ազգ առնէր նոցա փութանակի, և նոցա զհետ արշաւեալ հասանին և կալեալ զկին Վստա-

3-4 Բոլ. մոռացան: Տե՛ս ծան. 279: Ա. նուազեալք:  
 5 Ա. մրաւքն արամբ Դ մսերով մրաւ քնարամբ  
 6 Ա. յԱսորոց փխ. և յԱսորոց  
 8-9 Բոլ. դպրութիւն և լեզու. Տե՛ս ծան. 280: Ա. կարգ փխ. ի կարգ  
 9-10 Ա. անտ, Պատկ. Աբել  
 15 Ա. եւ եղև բաւերի դիմաց լուանցումս գրված է ԻԳ զխաճամարը:  
 16 Ա. զշօկն, Պատկանյանի ձեռագրում՝ Շօկն, բայց Պատկանյանը և Մալխասյանը հետեւելով Միհրդատյանին, դարձել են զՇաւկն: Տե՛ս ծան. 283:  
 19 Ա. գային փխ. կային  
 19 Ա. բայցագոյն  
 25 Պատկ., Մալխ. ասէ փխ. ասէ ցնա  
 27 Ա. որոց

մայ և զամենայն աղիս և զկարասի նորա՝ դարձան փութանակի և գնացին:

Անագան ուրեմն և ապա յետ ատուրց ինչ անցելոց ազդ լինէր ամենայն զաւրացն. և նոքա լքեալ քակտեցան ի միմեանց, և մեկնեալ գնացին

5 յիւրաքանչիւր ի տեղիս: Գնացին նոյնպէս և զաւրն Գեղումն որ ընդ նմա, եկեալ հասեալ փութանակի յամուրս աշխարհին իւրեանց, և արքն այն հայաստանեայք, որ ապստամբեալ էին ի Սպահան<sup>284</sup> և գնացեալք առ Վստամ՝ ընդ նոսա: Իբրև գնացին նոքա յերկիրն որ կոչի Կոմշ<sup>285</sup>, որ կայ անդրէն ի թիկանց Վրկանի, յայնմ կողմանէ սարոյն, որ անցանէ ընդ

10 մէջ նոցա, և հասին ի գեւղն, որ կոչի Խեկեանդ՝ ընդդէմ ելանէր նոցա Շահր Վահրիճ, և Սմբատ Գուրկան մարզպան հանդերձ բազմաւ: Եւ զաւրք Գեղումք ոչ աւելի քան զերկուս հազարս: Եւ եղև պատերազմ ի վերայ երկրին այնորիկ: Հարին զզաւրն Պարսից, և փախստական արարեալ հալածական տանէին. զբազումս սպանեալ և զբազումս ձերբակալ

15 արարեալ դարձան անդրէն և բանակեցան մաւտ ի տեղի պատերազմին և արքն այն հայաստանեայք ընդ նոսա: Մեռան բազումք և ի զաւրացն և ի հայաստանեայցն, որ ընդ մարզպանին Սմբատայ:

Գ Լ Ո Ւ Խ Ի Զ

Գիտ մասին տէրունեան խաչին ի ձեռն տեսեան:

20 Արդ՝ անկեալ ի միտ առն միոջ երազիր երեք ամսաւք յառաջ քան զլինելն պատերազմին այնորիկ. և անուն առն Յովսէփ: «Այր մի, ասէ, 511<sup>ա</sup> սքանչելատեսիլ, եկեալ ասէր ցիս՝ պատերազմ լինի զկնի երից/ամսոց, և անկանին բազումք ի պատերազմին. բայց դու երթիչի՛ր ի տեղի պատերազմին<sup>286</sup>. և նշան լիցի քեզ այս, զի տեսանիցես այր մի անկեալ

25 ի վերայ երեսաց երկրի, և մարմին նորա պաղպաղէ ի մէջ ամենայն դիակսնցն, և դու երթեալ որ ինչ գտանիցես առ նմա, աոցես ի քեզ: Եւ զգոյշ լեր, ասէ, մի՛ մոռանայցես զշնորհն այն<sup>287</sup> զի նա է սքանչելի»: Եւ յարուցեալ գնաց. և իբրև հասեալ ի տեղին՝ գտանէ նոյնպէս, որպէս ի տեսեանն ասացեալ էր, զի մերկացուցեալ էր զնա և զամենայն դիա-

30 կունսն: Եւ ունէր ընդ անձն շագոյր մաշկեղէն ուս ընդ անութ իւր<sup>288</sup>: Ապա կայր մարմին նորա ի մէջ դիականցն. և մատուցեալ՝ առ յինքն

1 Ա. ախզ  
 4 Միհրդ., Պատկ. լքեալք  
 6 Միհրդ., Պատկ. այնք  
 7 Բոլ. ի Սմբատայ փխ. ի Սպահան: Տե՛ս ծան. 284:  
 8 Միհրդատյանք ծանօթագրուլ է. «Ի մեռուլ բնագրի կոմշ»: Տե՛ս ծան. 285:  
 10 Ա ի գեւղն: Պատկ., Մալխ. կոչին: Ա. Խիկեանդ (և ոչ՝ Խեկեանդ, ինչպես ուր վրիպակարար եղված է Մալխայանցի մոտ):  
 13 Ա. ըզօրն փխ. զզաւրն  
 14 Ա. զբազում սպանեալ  
 16 Միհրդ., Պատկ. այնք, Ա. հայաստանայք  
 20 Միհրդ., Պատկ. երազ իւր  
 27 Ա. ՏՏ չիք զշնորհն այն: Տե՛ս ծան. 287:  
 30 Ա. ուս ընդ ութ իւր ՏՏ ընդ ուս իւր: Տե՛ս ծան. 288:

զլագոյրն. և տեսանէր զի կայր ի նմա տուփ մի արծաթեղէն և խաչ մի ի մէջ նորա, յորում կայր մասն մեծ ի տէրունեան խաչէն: Կնքէր զինքն նովաւ, և առեալ զնայր զհետ ընկերաց իւրոց:

2 Զուեցին ամենայն զաւրքն ի տեղուղէն յայնմանէ, և երթեալ հասանէին յամուրս աշխարհին իւրեանց: Յայնժամ զՎահրիճն խնդրէր թագաւորն ի տուն, և առ Սմբատ առաքէր շնորհակալութիւն մեծ, զի միամտութեամբ մարտուցեալ վանեցաւ, և ոչ եթող զտեղին, և ապա յետոյ ամենեցուն զնայր և նա փախստական<sup>289</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Ի Է

10 Գարձեալ պատերազմ Սմբատայ ընդ թջնամիս ի Տապարաստանի և յաղթել: Մեծանալ Սմբատայ պատուով քան զամենայն մարգպանս: Եկն Սմբատայ ի Հայս. շինութիւն եկեղեցւոյն Ս. Գրիգորի ի Դուփն: Կարողիկոսութիւն Աբրահամու Թշտունւոյ:

Եւ եղև ի գալ միւս ամի՝ ժողովէին ամենայն գունդքն թշնամեաց, և 15 երթեալ բանակէին<sup>290</sup> ի Տապարաստան գաւառի. գումարէ և Սմբատ զամենայն զաւրսն իւր և ի դիմի հարկանի նոցա պատերազմաւ: Եւ մատնեաց տէր Աստուած զզաւրս թշնամեացն ի ձեռն Սմբատայ, և սատակեաց զամենայն սրով սուտերի. և ապրեալքն զնացին փախստական ի տեղիս իւրեանց: Իսկ այնք, որ էին ընդ նոսա, խնդրեցին երդումն և պայման և եկին կացին առաջի Սմբատայ, և Յովսէփն այն ընդ նոսա: Ապա 20 ունէր Յովսէփ զգիւտն իւր առաջի նորա և պատմէ զտեսիլն, և բազում նշանս, զոր արարեալ էր ի մէջ բարբարոսացն, պատմէր: Յայնժամ յարուցեալ Սմբատ ծունր կրկնէր առաջի նորա, և առեալ յինքն՝ կնքէր զինքն նովաւ. և տայր ի ձեռն Միհրուի<sup>291</sup> ուրումն առն երանելոյ, զոր 25 և կարգեալ էր ի վերայ տանն իւրոյ հաւատարիմ և կամակատար, որ ի տանէ Իմաքսենից, և տայր<sup>292</sup> յեկեղեցին զոր ունէին երիցունք դրան նորա:

511բ Յայնժամ//առաքէ առ նա թագաւորն հրովարտակ մեծապէս գոհութեամբ, պատուով մեծացուցանէ ի վեր քան զամենայն մարգպանս իւրոյ 30 տէրութեան առնելով, և զամենայն անաւթս մատուակացն առաքէ նմա ոսկի, և հանդերձս թագաւորականս, արտախորակս ոսկեզաւծս և զանգապանակ ակամբք և մարգարտովք կարգեալ. և զորդի նորա, որոյ անունն էր Վարազտիրոց, զոր էր սնուցեալ նորա իբրև զմի յորդոց իւրոց և էր մեծարու ամենայն դրանն արքունի՝ կարգէր ի մատուակու- 35 թեան, պաշտել զգինի անձին արքայի:

14 Եւ եղև ի գալ միւս ամի բառերի դիմաց լուսանցում գրված է ԻԾ գլխահամարը:

15 Բոլ. բնակէին: Տե՛ս ծան. 290, Ա. Տապարաստան

19 Ա այն

28-29 Ա գոհութիւն

30 Ա տէրութեանն

32 Ա զանգապանակ

32-33 Ա մարգարտով Ա զորդին Ա Վարազտիրոս

Եւ կալաւ Սմբատ դմարդպանութիւն<sup>293</sup> աշխարհին այնորիկ ամս Ը: Յետ այսորիկ հրաման հասանէ կոչել զնա բազում մեծարանաւք ի դուռն<sup>294</sup> արքունի, և հրամայէ երթալ տեսանել զերկիր իւր՝ յամի ութ և տասներորդի իւրոյ թագաւորութեանն:

- 5 Արդ՝ խնդրէ նա հրաման յարքայէն շինել զեկեղեցի սրբոյն Գրիգորի, որ էր ի Դուին քաղաքի: Եւ վասն զի վախճանեալ էր Մովսէս կաթողիկոսն երանելի, և ոչ գոյր վարդապետ ի տեղւոյն յայնմիկ<sup>295</sup> և ևս փութացաւ խնդրել յարքայէն հրաման. և հասեալ հրաման յերկիր իւր՝ առնէ խնդիր վասն աթոռոյն մեծի, զի կարգեսցեն ի վերայ նորա տեսուչ խնամող եկեղեցւոյն և առաջնորդ փրկութեան իւրոյ: Եւ նստուցին զԱբրահամ զմշտունեաց եպիսկոպոսն յաթոռ հայրապետութեան: Ապա սկսան արկանել հիմն եկեղեցւոյն. ժողովեաց ճարտարապետս քարի, և կացոյց ի վերայ նոցա հաւատարիմ գործակալս, և հրաման ետ փութանակի հասուցանել ի կատարումն:
- 15 Եւ գրեալ զիր ամբաստանութեան բերդակալին և մարդպանին առ արքայ, եթէ «Կարի մերձ է առ բերդն, և վնասակար է ի թշնամուց»: Հրաման հասեալ յարքայէ, եթէ «Բերդն քակեսցի, և եկեղեցին անդրէն ի նմին տեղւոյն շինեսցի»: Ամէն:

### Գ Լ Ո Ւ Խ Ի Ը

- 20 Սմբատ կոչի անդրէն ի դուռն Պարսից, պատուի տանուտերութեամբ՝ որ անուանեալ կոչի Խոսրով—Շում եւ առաքի ընդդէմ Քուշանաց: Նախարարք Հայոց՝ որք ընդ նմա: Գունդ մի սակաւածեռն Պարսից պաշարի ի Քուշանաց եւ հարկանի յանլստութենէ Դատոյենի: Սպանումն Դատոյենի: Սմբատ ի մենամարտի սպանանէ զարքայն Քուշանաց: Փախուտ գաւրուն Քուշանաց: Չաւրն Պարսից յաւարի առնու զաշխարհ ևնցա: Մեծաւ շքով կոչի Սմբատ ի դուռն:

- Եւ եղև՝ յանցանել ձմերայնուոյն, ի գալ զարնայնուոյն ժամանակի՝ հասանէին սուրհանդակքն հրովարտակաւք, և կոչեն զնա մեծաւ շքեղութեամբ ի դուռն արքունի: Եւ երթեալ յանդիման լինի<sup>296</sup> թագաւորին ի
- 30 Մեծ անուանեալ Դաստակերտին<sup>297</sup> և ելեալ արտաքս ի դահլիճն, նստի ի բոբ և ի բահղակ<sup>298</sup>:

1 Բոլ. մարդպանութիւն: Տե՛ս ծան. 293:

6 Ա Դըւին

6-7 Ա կաթողիկոսն (միշտ այսպես)

7 Բոլ. յայնսիկ փխ. յայնմիկ: Տե՛ս ծան. 295:

11 Ա հայրապետական

15 Ա, Դ ամբաստանութիւն փխ. զիր ամբաստանութեան

16-17 Գ, Միհրդ. ի թշնամին, Ա և հրաման փխ. հրաման: Ա ի յարքայէ

27 Եւ եղև յանցանել ձմերայնուոյն բառերի դիմաց լուսանցում գրված է ԻԶ գլխահամարք: Ա ձմերանուոյն: Ա զարնանուոյն

29 Բոլ. լինել: Տե՛ս ծան. 296:

31 Ա պահղակ Միհրդ., Պատկ. մեծատաներով՝ ի Բոբ և ի Բահղակ

3 Զայնժամ տայ նմա արքայ զտանուտէրութիւն՝ որ անուանեալ կոչէր  
 512ա Խոսորով Շում<sup>299</sup>, զարդարէ ի շքնաղս, ի գտակ և ի պատմուճան բեհե-  
 ականակապ և ի գումարտակ, և ի գահս արծաթիս. արծակու ի նա  
 5 զվաճառն<sup>300</sup> փոքր, զգիւան աշխարհին: Տայ նմա զփողսն շորեքձայնեանս  
 և պահապանս դրանն նորա ի հետեակաց արքունի. գումարէ<sup>301</sup> նմա  
 զար մեծաւ անհղութեամբ յարևելս յերկիրն Քուշանաց. և հրամայէ նմա  
 առնել մարդպան՝ զոր ինքն կամեսցի: Իսկ սորա դնացեալ անտի՛ եկն  
 10 առ ինքն ի Վրկանէ դբուն ձեռական զարսն իւր զհամաշխարհիկ և գնայ  
 ուղղորդ յԱրևելս:

Եւ այս են իշխանք նախարարացն Հայոց, որ ընդ նմա իւրաքանչիւր  
 գնդաւ և դրաւշու. Վարազշապուհ Արծրունի, Սարգիս Տայեցի, Արտա-  
 15 վազդ և Վստամ և Հմայեակ Ապահունի, Մանուէլ Ապահունեաց տէր,  
 Վոսամ Գողթնեաց տէր, Սարգիս Դիմաքսեան, Սարգիս Տրպատունի, և  
 այլք ի նախարարացն: Եւ զարք նորա իբրև երկու հազար հեծեալ՝ յաշ-  
 խարհէն, Ետես զի զարքն Քուշանաց ասպատակեալ սփռեալ էին ի վերայ  
 երեսաց ամենայն երկրին. և իբրև լուան զլուր համբաւոյ նորա՝ ժողո-  
 վեցան և գնացին. և սա պնդեալ զհետ նոցա՝ փութանակի հասանէր: Իսկ  
 20 նոքա իբրև տեսին զնա զհետ նոցա հասեալ՝ դարձան ընդդէմ ճակա-  
 տեցան, և բաղխեցին զմիմեանս պատերազմաւ. անտի ի փախուստ  
 դարձան զարքն Քուշանաց, և վանեցան առջի զարացն Խոսորով Շմոյ,  
 բազումք ի նոցանէ մեռան և բազումք փախստական գնացին: Եւ նա  
 դարձեալ բանակեցաւ յԱպր Շահր՝ ի Տոս գաւառի<sup>303</sup>. և ինքն նստեր երեք  
 25 հարիւր արամբք ի քաղաքագեղն որ կոչի Խոռխտ:

3 Զայնժամ թագաւորքն Քուշանաց խնդրեցին իւրեանց օգնական ի  
 Մեծէն Խաքանայ<sup>304</sup> արքայէ կողմանցն հիւսիսոյ: Եւ եկն ել ամբոխ և  
 բիրոյ ի թիկունս աւգնականութեան նոցա, անց զգետովն որ կոչի Վեհ-

2 Միհրդ., Պատկ. պատմուճանս  
 3 Ա ի ճանբար  
 4 Միհրդ. արձակէ նմա  
 8-9 ՋՋ, Միհրդ., եկն ի Հայս փխ. եկն եհաս: Տե՛ս ծան. 302:  
 9 Դ հետագա մի սրբագրող ջնջել է «կոմշ»-ը  
 10 Ա գնաց  
 13 Ա դրօշաւ  
 14 Ա Հմակակ  
 15 Ա գողթեան  
 15 Ա դիմակսեան  
 16-17 Ա յաշխարհն  
 20 Ա դարձաւ  
 24 Ա յապրշահր տոս գաւառի Միհրդ. յԱպր Շահրտոս գաւառի Պատկ. Յապր Շահր  
 և ի Տոս գաւառի: Տե՛ս ծան. 303:  
 25 Ա արամբ, ՋՋ խրոխտս  
 27 Ա արքայի



ոտո (որ ելանէ ի Թուրքաստանէ՝ յերկրէն Եփղատայ, զԳիմնոսոփես-  
տեայս<sup>305</sup>, զՇամնն և զԲրահմնն, և հոսի ի Հնդիկս): Եւ բանակեալ<sup>306</sup> ի  
վերայ գետեզրն՝ ասպատակս սփռեցաւ ընդ արեւուտս, և հասեալ  
յանկարծարէն պատեցին պաշարեցին զգիւրաղաքն, զի ունէր գեղն  
5 պատուար ամբողջեան շուրջ զիւրեաւ շուրջանակի:

Յայնժամ հրաման տայ Սմբատ երեք հարիւրոց անկանել ի բեր-  
դակն, որ ի մէջ դիւղաքաղաքին. և ինքն հեծեալ յերիվար երիւք արամբք,  
որոց էին անուանք այտքիկ՝ Սարգիս Դիմաքսեան և Սարգիս Տրպա-  
տունի և ոմն մի ի զինակրացն գեղջու<sup>307</sup> հեծեալ, անուն Սմբատիկ. և  
10 դիմեալ յանկարծարէն՝ ի դուռն հասին, հատին զամբոխին զարուժիւն  
և գնացին: Եւ երեք հարիւրքն անկեալ ընդ բերդակն որ ի մէջ դիւղա-  
քաղաքին՝ դիմեցին ի վերայ զարաց նորա: Եւ էր հրամանատար զարուն  
նորա պարսիկ ոմն իշխան՝ անուն Դատոյեան, հրամանաւ արքունի:

Արդ՝ թէպէտ և արձակու<sup>308</sup> առ նա Սմբատ որ է Խոսրով Շումն, խոյս  
15 տալ ի նոցանէ, նորա ո՛չ կամեցեալ լսել՝ եւ ընդդէմ նոցա պատերազ-  
մաւ. և հարեալ նոցա զզարս Պարսից՝ փախստական արարին զԴաւառ-  
յեան, և ինքեանք ասպատակ սփռեալ՝ արշաւեցին մինչև ի սահմանս  
Ռէոյ և Ասպահան գաւառի, և աւերեալ զերկիրն ամենայն՝ դարձան  
անդրէն ի բանակն իւրեանց: Եւ հրաման հասեալ ի Մեծէն Խաքանայ առ  
20 Ճեմբուխ<sup>309</sup> անցին զգետովն և դարձան անդրէն ի տեղի իւրեանց:

Ապա հասեալ քննող յարքունուստ Սմբատայ և Դատոյեանայ, այր  
ոմն գլխատր նախարար, որում անունն էր Շահրապան Բանդական:  
Իսկ<sup>310</sup> արդարացուցին զարն ամենայն մնացեալն զՍմբատ. և Դա-  
տոյեան տարեալ ի դուռն կապանաւք՝ սպանաւ յարքայէ:

Յայնժամ Սմբատ ժողովէ զզարն և վերստին սպառազինէ, գումարէ  
և այլ զարս բազումս յաւանութիւն իւր, և դիմեալ գնայր ի վերայ ազգին  
Քուշանաց և արքային Հեփթաղեայ: Եւ նա անտի մեծաւ կազմութեամբ  
ընդդէմ ելանէ նորա. եկին հասին ի տեղի մարտին և ճակատեցան դէմ  
յանդիման միմեանց: Արդ՝ պատգամ յղէ առ Սմբատ արքայն Քուշա-

30 նաց և ասէ. «Զի՞նչ աւզուտ է այսպէս խառնամբոխ մտանել ի պատե-  
րազմ՝ սպառել զարս մեր: Եւ կամ ի՞նչ ծանիցի իմ և քո քաջութիւնդ:  
Բայց ե՛կ, ես և դու միայն մարտիցուք, ելեալ ես աստի ախոյեան, և  
դու՝ այտի. զի այսար ծանիցի քեզ քաջութիւն իմ»: Իսկ նորա ձեռն յան-  
ձին հարեալ՝ ասէ. «Ահաւասիկ պատրաստ եմ ի մեռանել»: Եւ յար-

1-2 Պատկանչանի ձեռագիրն ունեցել է և ի զատայ փխ. Եփղատայ Ա գրիոնոս, Կփես-  
տեայս SS գրիոնոս Եփեսոսեայս փխ. գիմնոսոփեստեայս SS զՇամնն և զԲրահմնն:  
Տե՛ս ծան. 305: Միւրապայանի մյուս օրինակը՝ զՇամնն և զԲրահմնն:

2 Բոլ. բնակեալ: Տե՛ս ծան. 306:  
4 Ա զգեղաքաղաքն Ա գեղջն  
10 Ա հասին փխ. հասին, հատին  
12 Ա հրամատար  
14 Ա արձակ Միհրդ., Պատկ. արձակէ, Ա ըշումն  
15 Ա նորա փխ. նոցա  
16 Մայխ. ի հարեալ փխ. և հարեալ  
21 Միհրդ., Պատկ. չիք և  
27 Ա անդի

- 513ա ձակեալք աստի և անտի/մեծաւ տազնապաւ ի միմեանս հասանէին. և ի մէջ երկուց ձակատուցն մարտ եղեալ ընդ միմեանս կոուէին. և ոչ կարէին վաղվաղակի զմիմեանս յաղթահարել, զի արք սկայազաւրք<sup>311</sup> էին երկոքինն և կուռ սպառազինեալք: Ապա ի վերուստ իմն հասեալ 5 աւգնութիւն՝ պատառի վերտամուտ<sup>312</sup> բահլիկ և կուռ զրահին ամրութիւն արքային Քուշանաց ի նիզակէն Սմբատայ. զի հարեալ զնա զաւրութեամբ դիաթաւալ յերկիր կործանէր: Եւ զաւրքն նորա իբրև տեսին զարքայն իւրեանց՝ զարհուրեցան և զարձան զնացին փախստական. և սոքա զհետ արշաւեալ հասին ասպատակաւ մինչև ի Բահլ շահաստան 10 Քուշանաց, և աւար հարեալ զերկիրն ամենայն, զՀարև<sup>313</sup>, զՎատագէս, զՏոխտոստայն<sup>314</sup> ամենայն և զՏաղական. առնոյր և զբերդս բազումս և զնոյնս քանդեալ աւերէր, և դառնայր յաղթութեամբ մեծաւ և բազում աւարաւ, և երթեալ բանակէր ի Մարգ և ի Մարգոտոս գաւառի<sup>315</sup>:
- Յայնժամ հրեշտակք աւետարտք փութով հասանէին առ արքայն 15 Խոսրով, լիով զեղեալսն պատմէին քաջութիւն: Իսկ արքայն Խոսրով զուարճանայր զուարթանայր մեծաւ խնդութեամբ, և հրամայէր զարդարել փիղ մի մեծ և ածել ի դահլիճն. հրամայէ ևս հանել ի վեր զորդի նորա զՎարազտիրոց, որ անուանեալ կոչէր յարքայէ Զավիտեան Խոսրով<sup>316</sup>: Եւ հրամայէ դանձս ցանել ամբոխին. և զրէր առ նա հրովարտակ 20 մեծապէս զոհութեամբ. և կոչէր զնա ի դուռն<sup>317</sup> մեծաւ պատուով և շքեղութեամբ:

Գ Լ Ո Ի Խ Ի Թ

Ման Սմբատայ: Ապստամբել նախարարացն Հայոց ի Պարսից եւ Երթալ ի ծառայութիւն Խախանայ:

- 25 Եւ եղև իբրև մերձեցաւ աւթիւ միով ի դուռն արքունի՝ հրաման տայ արքայ ամենայն նախարարացն և զաւրաց իւրոց ելանել ընդ առաջ նորա, և աւժանդակացն հրամայէ նժոյգ տանել ընդ առաջ նորա յախոռէ արքունի՝ արքունական կազմուածով. և երթեալ մեծաւ շքով և փառաւք յանդիման եղև թագաւորին:
- 30 Իսկ նորա տեսեալ խնդութեամբ ընկալաւ զնա, և ձգեաց առ նա զձեռն իւր. և նորա համբուրեալ զձեռն նորա՝ անկաւ ի վերայ երեսաց

3 22, Միհրդ., Պատկ. սակաւազաւրք

5 22, Միհրդ., Պատկ. վերևամուտ Մայիս. վերտ և ամուր: Տե՛ս ծան. 312:

8 Միհրդ., Պատկ. և գնացին փխ. գնացին

9 Ա. Բահլ

10 Բոլ շար և փխ. շարև: Տե՛ս ծան. 313:

11 Միհրդ. զՏոխտոստայն

12 Ա. զնոյն

13 Բոլ. բնակէր: Տե՛ս ծան. 315:

13 Ա. Մարգոտոս, Բ. մարոտոս, Միհրդ. Մարգոտոս, իսկ մյուս օրինակում՝ Մարգոտոս

17 Ա. շիբ ևս

19 22, գանձու, Միհրդ. գանձ

20 Ա. զոհութիւն

28 Ա. կազմածով Մայիս. կազմածով

իւրոց: Յայնժամ ասէ ցնա արքայ. «Միամտութեամբ վաստակեցար, և մեք աւելի գոհ եմք զքէն. և արդ՝ յայսմհետէ աւելի մի՛ լինիր աշխատ  
 513բ ելանել ի պատերազմն, այլ կա՛ց աստէն/մերձակայ, ա՛ռ, կե՛ր և ա՛րբ, և ուրախութեան մերում պարապեա՛: Եւ էր նա երրորդ նախարար ի 5 տաճարի թագաւորութեանն Խոսրովայ արքայի, և կացեալ ժամանակս սակաւ՝ վախճանեցաւ յամի՞<sup>318</sup> ԻԸ-երրորդի թագաւորութեանն նորա<sup>319</sup>: Իսկ զմարմին նորա մեռեալ՝ տարան ի Հայաստան երկիր ի բնիկ հանգստարանսն, և եղին ի տապանի ի գիւղն Դարիւնս, որ է ի Գոգովիտ գաւառի<sup>320</sup>:

10 . . . . . 321

Ապա ապստամբեալ գնացին<sup>322</sup> ի ծառայութիւն Մեծին Խաքանայ արքայի կողմանցն հիւսիսոյ, ի ձեռն ճենաստանն Ճեպետխոյ<sup>323</sup>. ապա գնացեալ յարեւից յարեւմուտս ընդ կողմանս հիւսիսոյ՝ խառնել ընդ զարացն Ճեպետխոյն այնորիկ<sup>324</sup> հրամանաւ թագաւորին իւրեանց Խա-  
 15 քանայ: Եւ ելեալ ընդ Պահակն<sup>325</sup> շորայ զարաւբ բազմութեան՝ գնացին յազնականութիւն թագաւորին Յունաց:

Գ Լ Ո Ւ Խ Լ

Փախչել Ատանայ Խոռխոռունոյ ի ծառայութենէ Յունաց եւ անկանել առ Խոսրով եւ մեծաւել ի նմանէ. ապա ապստամբութիւն ի Խոսրովէ եւ  
 20 սպանումն: Սահմանակալք Պարսից եւ Յունաց ի Հայաստան աշխարհի յամս հաշտութեան թագաւորացն երկոցունց:

Իսկ արդ՝ զի՞նչ ևս զԱտատ Խորխոռունոյ ասացից և զմիւսանգամ զապստամբութիւնն<sup>326</sup>: էր սա պատրիկ մեծ, վասն որոյ հրաման տայ թագաւորն կոչել զնա ի պաղատն, և գնացեալ ի նա եւթանասուն արամբբ.  
 25 և մեծարեալ շքեղացոյց զնա և որ ընդ նմայն ըստ արժանի վայելչական ընդունելութեանն: Ետ նմա անաւթս ոսկիս և արծաթիս և զանձս բազում յոյժ:

Եւ հրաման ետ երթալ ի Թիրակ առ զարս իւր. և հրաժարեալ ի թագաւորէն և գնաց: Եւ մինչդեռ զնայր ի ճանապարհի՛ արկ նա ի միտս  
 30 իւր ապստամբել և գնալ առ թագաւորն Պարսից: Եւ ստերիւրեալ ի ճանապարհէն՝ գնաց ի ծովեզերն և հանդիպեալ նաւի միոջ՝ ասէ նաւորդացն. «Անցուցէ՛ք զիս յայնկոյս, զի ի գործ կարևոր առաքեալ եմ ես ի թագաւորէն»: Եւ հրապուրեալ զնաւորդան՝ անցուցին զնա, և գնաց

6 Բռլ. յամս: Տե՛ս ծան. 318:  
 8 Ա. գելն  
 11 Ա. արանայ փխ. Խաքանայ  
 12 Ա. ճեպետխոյ  
 14 Ա. ճեպետխոյն  
 15 Ա, Միհրդ., Պատկ. Պահորակն: Տե՛ս ծան. 325:  
 22 Մալխ. Խոռխոռունոյ  
 24 Ա. նմա փխ. ի նա Ա. արամբ  
 26 Ա. բազումս  
 28 Միհրդատյանը ծանոթագրում է. «Ի միւսում օրինակին՝ Թրակայ»:  
 30 Ա. ըստերիւրեալ

փութանակի, ճեպեալ հասանէր ի Հայաստան երկիր: Եւ ոչ ոք վաղա-  
գոյն իմացաւ զճանապարհ զնալոյ նորա, մինչև բազում աւթեանաւք  
մեկնեալ հեռացաւ ի ծովեզերէն: Ապա ուստեմն իրագեկ լինէին զնալոյն.  
և ելեալ ընդդէմ սորա քաղաքաց քաղաքաց զաւրք՝ և ոչ կարէին զդէմ  
5 նորա ունել, և ընդ ութ և տասն տեղի արարեալ նորա պատերազմն ի  
ճանապարհի՝ յաղթող ամենայնի գտանէր, թէպէտ և իւր զաւրականն  
պակասեալ նուազէր, և այնպէս զնացեալ փութանակի հասանէր ի Նախ-  
514ա ճաւան: Եւ ընկալեալ զնա Պարսիցն ի բերդն ամրանայր: Յայնժամ թո-  
ղովէր զամենայն զաւրս իւր ստրատելատն, և երթեալ պաշարէր զբերդն  
10 շուրջանակի զամէնն:

Ազդ լինի արքային հոսրովու եղեալ իրքն, և արձակէ ի վերայ նոցա  
զՊարսայենպետ հանդերձ զաւրու: Իբրև եկն մերձեցաւ զաւրն՝ թողին  
նոքա զքաղաքն և զնացին. և նորա փութացեալ զնաց առ թագաւորն  
Պարսից: Իսկ նա սիրով ընկալաւ զնա, մեծացոյց պատուովք, և ետ նմա  
15 զգանձս, և հրամայեաց ոտճիկ յարքունուստ:

Եւ եղև զկնի ամի միոյ մեռանել Մարկայ, և թագաւորել Փոկասայ:  
Արկ սա ի միտս իւր ապստամբել և զնալ առ թագաւորն Յունաց: Սկսաւ  
պատրաստել երկվարս տաճիկս և կազմել սպառազինութիւն, յանկուցանէ  
յինքն արս սրիկայս: Լուր եհաս ի լսելիս արքային բանն, հրաման էտ  
20 կապել զնա ոտիւք և ձեռաւք, և բրաւք սպանանել:

Եւ այս են սահմանակալք տէրութեանն Պարսից յամս հաշտութեան  
այնորիկ ի Հայաստան երկրի և ի Դուին քաղաք<sup>327</sup>: Վնդատական, Նի-  
խորական. զսա սպանին զաւրքն Պարսից ի Դուին, և ինքեանք ապստամ-  
բեալ զնացին ի Գեղումս: Ապա Մերկուտ. ապա Յազդէն. ապա Բուտ-  
25 մահ. ապա Յեմանն: Իսկ ի Յունաց կողմանէ՝ նախ Յովհան Պատրիկ.  
ապա Հերակղ. ապա Սորմէն<sup>328</sup> զաւրավար. մինչև լցան ամբ երեքտա-  
սանք հաշտութեանն:

Եւ հրաման ելանէ ի կայսերէ. «Երեսուն հազար հեծեալ վզենակալ  
է, ասէ, իմ ի վերայ աշխարհին Հայոց: Արդ՝ Լի երդաւոր ժողովեցին  
30 ինձ անտի և նստուցին ի Թիրակացոց աշխարհին»: Եւ արձակոյր  
զՊրիսկոս ի Հայս վասն գործոյն այնորիկ: Մինչդեռ եկեալ հասանէր  
համբան խոովութեան մեծի, և Պրիսկոս յարուցեալ զնայր անհնարին  
տագնապաւ:

1 Միհրդ. փութանակի զնացիւք փխ. զնաց փութանակի

2 Ա. զճանապարհն

3 Ա. Միհրդ., Պատկ. ուրեմն 2 ուստեմն (եիշտ) Ա. իրագիկ

9 Ա. զամէն ստրատելատ զգորս իւր

11 Ա. իրսն

15 Ա. գանձս

18-19 Միհրդ., Պատկ. յանգուցանէ ՁՁ սրիկասէր

22 Ա. Դուին

22 Ա. վնդատական

23 Ա. Դուին

24-25 Ա. յեզդեն Ա. յիմանն

26 Ա. Հերակլ

26 Ա. զՍորմէն Միհրդ., Պատկ. Սուրմն: Տե՛ս ծան. 328:

30 Միհրդ., Պատկ. ի թերակացոց

31 Ա. զՊրիսկոս Ա. մինչև փխ. մինչդեռ 32 Ա. պրիկոս

Գ Լ Ո Ւ Խ Լ Ա

Սպանումն Մարկայ կայսեր և քազաւորել Փոկասայ: Ապստամբութիւն ի Փոկասայ Երակղի և Երեսիսի զաւրավարաց: Պաշարումն Ուոհայի ի զաւրաց Փոկասայ, և Դարայի՝ ի զաւրաց Խոսրովայ: Հասանել Խոսրովայ 5 յաւգնականութիւն Ուոհայի, առնուլ զբաղաւն և դարձ հանդերձ Թէոդոսիս արդավն Մարկայ: Ասումն և կործանումն Դարայի ի Խոսրովայ: Ասումն Ուոհայի ի զաւրացն Փոկասայ և սպանութիւն Երեսիսի:

Եւ եղև յամի շորքտասաներորդի Խոսրովայ արքայի, ի քսաներորդ<sup>329</sup> ամի Մարկայ թագաւորութեանն՝ ապստամբեալ ի բաց կացին 10 ի կայսերէ զաւրն Յունաց, որ ի Թրակացւոց կողմանէ, և նստուցին իւրեանց թագաւոր զայր ոմն անուն Փոկաս կոչեցեալ: Եւ զնացեալ միաբանութեամբ ի Կոստանդնուպոլիս՝ սպանին զՄարիկ թագաւոր և զորդիս նորա, և նստուցին զՓոկաս յաթոռ թագաւորութեանն: Եւ զնացին ինքեանք անդէն ի կողմանս Թրակացւոց աշխարհին ի դէմ թշնամւոյն: 514բ Եւ էր որդի/մի կայսերն Մարկայ, անուն նորա Թէոդոս: Կուր համբաւոյն ելեալ տարածանէր ընդ ամենայն երկիր, եթէ զերծաւ Թէոդոս և զնաց առ թագաւորն Պարսից: Ապա ոչ սակաւ ինչ խռովութիւն լինէր ի մէջ Հռովմայեցւոց տէրութեանն անդէն ի թագաւորանիստ քաղաքին, և յԱղեքսանդր քաղաքի յԵգիպտոս, և յԵրուսաղէմ և յԱնտիոք, և յամե- 20 նայն կողմանս երկրի առեալ սուր զմիմեանս սատակէին:

Հրաման ետ թագաւորն Փոկաս սատակել զամենայն ապստամբ՝ որ երկմտեալ էին ի նորին թագաւորութենէ: Բազումք սատակեցան անդէն սրով ի թագաւորանիստ քաղաքին: Եւ առաքեալ զԲոնոս ոմն իշխան հանդերձ զաւրու ի վերայ Անտիոքայ և յԵրուսաղէմ և յամենայն կող- 25 մանս աշխարհին. և նորա երթեալ եհար զԱնտիոք և զԵրուսաղէմ սրով սուսերի, և զամենայն իսկ զբազմութիւն քաղաքաց երկրին այնորիկ սպառեաց սրով:

Յայնժամ ապստամբեալ ի բաց եկաց ի Փոկասայ Երակղէս զաւրավար զաւրու իւրով, որ էր ի կողմանս Աղեքսանդրի, և բռնացեալ ի բաց 30 կալաւ զերկիրն Եգիպտացւոց: Եւ յԱսորւոց կողմանէ ապստամբեալ ներսէս զաւրավար ի Միջագետս Ասորւոց, և հանդերձ զաւրու իւրով մտեալ բռնանայ յՈւրհայ քաղաքի: Եւ եկեալ զաւր ի վերայ նորա՝ պատեալ պաշարեալ պահէին զքաղաքն հանդերձ զաւրու:

2 Սպանումն Մարկայ խոբագիրը ձեռագրինն է: Խոբագրի դիմաց ձեռագրի լուսանցում գրված է ԻԹ գլխահամարը:

8-9 22 ի ԻԳ ամի, Միհրդ. ի քսան և երեք ամի փխ. ի քսաներորդ ամի: Տե՛ս ծան. 329:

10 Ա ի Թիրակացւոց  
 12 Ա ի Կոստանդնուպոլիս  
 18 Ա հոռմայեցւոց  
 19 Ա յԱղեքսանդր  
 20 Ա երկրին  
 29 Ա Աղեքսանդրի  
 29 Ա զօրիւ

Եւ եղև՝ իբրև լուաւ արքայն Խոսրով զլուր համբաւոյն այնորիկ՝  
 ժողովեալ գումարեաց զամենայն բազմութիւն զարաց իւրոց, և գնաց  
 ընդ արևմուտս, և հասեալ ի Դարա քաղաք՝ նստաւ շուրջ զնովաւ և  
 պաշարեաց գնա, և մարտ եղեալ կռուէր ընդ նմա: Եւ ընդ կողմանս  
 5 Հայոց գումարեալ զարս, և զՋուան<sup>330</sup> Վեհ ոմն իշխան մեծ զարագլուխ  
 նոցա: Յայնժամ արքայ Խոսրով բնութանէ յերկուս մասունս. զմի մասն  
 եթող անդէն շուրջ զքաղաքան, և միւսով մասամբն գնաց ինքն ի վերայ  
 զարուն, որ պատեալ պաշարեալ պահէին զՈւրհայ: Եւ հասեալ ի վերայ  
 նոցա յանկարծարէն ի ծագել առաւաւտուն՝ զմասնս սատակէր սրով,  
 10 զմասնս փախստական արարեալ, կէսքն<sup>331</sup> ամացեալ<sup>332</sup> ի գետն Եւփրատ  
 մեռանէին, և կէսքն գնային հալածական: Իսկ արքայն Խոսրով մատու-  
 ցեալ ի դուն քաղաքին, զի բացցեն նմա և մտցէ ի ներքս. իսկ նոքա  
 515<sup>ա</sup> բացին զդուն: Բայց մանուկ մի զարդարեալ թագաւորական հանդերձիւ,  
 և եղեալ ի վերայ գլխոյն նորա պսակ, և եհան արձակեաց առ նա ներ-  
 15 սէս, ասէ. «Դա է որդի թագաւորին Մարկայ, Թէոդոս, և արասցես ի  
 վերայ դորա ողորմութիւն, որպէս և հայր դորա ի վերայ քոյ»:  
 Եւ մեծաւ խնդութեամբ ընկալեալ գնա Խոսրովայ արքայի, դարձաւ  
 անդրէն և գնաց ի Դարա քաղաք, և ունէր գնա առ իւր թագաւորական  
 պատուով. և նստաւ նա շուրջ զԴարայիւ գտարի մի և կէս, և փորեցին  
 20 զհիմունս քաղաքին ի ներքոյ պարսպին, և կործանեալ զպարիսպն նորա՝  
 առին զքաղաքն, և սուր ի վերայ եղեալ մաշեցին զամենայն սրով սու-  
 սերի: Եւ առեալ զառ և զաւար քաղաքին, դարձան անդրէն ի Տիգրոն,  
 քանզի էր զար նորա աշխատեալ և լքեալ ի պատերազմէ քաղաքին: Եւ  
 հասեալ ի վերայ Ուրհայի այլ զար ի Յունաց կողմանէ՝ մարտեան ընդ  
 25 քաղաքին և առին գնա. և կալեալ զներսէս սպանին և արին հեղին:

Գ Լ Ո Ւ Խ Լ Բ

Պատեբազմ ի դաշտին Եղեվարդայ եւ պարտութիւն Պարսից. այլ պա-  
 տեբազմ ի դաշտին Շիրակայ եւ պարտութիւն Յունաց: Երբորդ պատե-  
 բազմ ի Սաղկոտն: Անձնատուր լինել Թէոդոսի Խոխոտունոյ գաւա-  
 30 վարին Պարսից. երթեալ ի դուն արձունի եւ ապա սպանանել:

Իսկ Ջուանն Վեհ, զոր արձակեաց ի կողմանս Հայոց հանդերձ զարու  
 իւրով՝ երթեալ հասանէ յԱյրարատ գաւառ և ի Դուին քաղաք ի ձմերային

3 Ա. ի Դար քաղաք  
 4 Պատկ. զսա փխ. գնա  
 5 Ա, Բ, Միւրդ. զՋողանան 2, Պատկ., Մայխ. զՋուվան Դ սկզբում գրված է զՋուվա-  
 նան, ապա ուղղվել է զՋուանն: Տե՛ս ծան. 330:  
 7 Միւրդ., Պատկ. գնալ  
 10 Բոլ. կէսն ամացեալ: Տե՛ս ծան. 331: ՁՁ Միւրդ., Պատկ. ամբացեալ. Տե՛ս ծան.  
 332: Ա. Եւփրատ  
 17 Ա. Խոսրով  
 19 Ա. զկէս  
 20 Ա. զպարիսպ փխ. զպարիսպն  
 31-32 Ա. զօրաւ Ա. յարայրատ  
 32 Ա. Դուին Ա. ի ձմերային

ժամանակի, և դադարեալ հանգուցանէ զզարս իւր մինչև ի գալ հասանել զարնայնոյ ժամանակի:

- Յայնժամ ապա և զարն. Յունաց ժողովեալ գումարեցան ի քաղաքազեւղն Եղեվարդ. և հասեալ ի վերայ նոցա զարն Պարսից՝ եղև պատերազմ ի դաշտին Եղեվարդայ. հարին զզարն Պարսից և կործանեցին կործանմամբ մեծաւ. և սպանին զզարավարն ի պատերազմին. և զմնացեալսն փախստական արարեալ հալածական տանէին: Եւ առեալ զառ և զաւար զբանակին<sup>333</sup> Պարսից՝ դարձան ի բանակետղն իւրեանց, որ կայ ի վերայ գետեզերն, սր կոչի Հոռոմոց մարգ:
- 10 Եւ եղև ի գալ ամին միւսոյ, մինչդեռ արքայ Խոսրով մարտնչէր ընդ Դարա քաղաքի, գումարեցաւ այլ զար Պարսից ի կողմանս Հայոց, և Դատոյեան զարագլուխ նոցա: Եւ զարն Յունաց գումարեցան ի դաշտն Շիրակ և ի գեւղն, որ կոչի Շիրակաւան: Եւ անդ զետեղեալ դադարեցան աւուրս ինչ, և ինքեանք տագնապեալք յընտանի պատերազմէն և զար-
- 15 հուրեալք յարձակմանէ աւտար թշնամուոյն: Եւ զարն Պարսից հասեալ ի վերայ նոցա իբրև զխոյանալ արծուոյ: Իսկ նոցա թողեալ զտեղի բա-
- 515բ նակին իւրեանց՝ անցին||յայնկոյս գետոյն ի դաշտն, որ կոչի Ականից. և զարն Պարսից հետամուտ եղեալ հասանէին նոցա: Եւ լինի պատերազմն ի գեւղն որ կոչի Գետիկ: Եւ մինչդեռ սոքա ճակատեալ էին դէմ
- 20 յանդիման գալ և մերձենալ առ միմեանս, իսկ բնակիչք զաւառին, որ էին ժողովեալ ի բերդն Երզնայի, և ելեալ անտի բազմութեան մանկուոյ գերանդեալք<sup>334</sup> և սրիանալք<sup>335</sup> անկան ի վերջոյ<sup>336</sup> նոցա, և գործեցին մեծ աւճիր<sup>337</sup> վնասուց, թողին վիրաւորս, և առեալ զառ և զաւար և զկապուտ՝ գնացին ի բերդն իւրեանց:
- 25 Եւ նոցա բաղխեալ պատերազմաւ՝ փախստական լինէր զարն Յունաց առաջի նոցա: Իսկ նոցա զհետ մտեալ կոտորէին զբազումս ի դաշտացն և ի ճանապարհացն ցիր և թաւալ կացուցանէին<sup>338</sup>: Եւ սակաւք մնացեալք փախստեայս գնացին: Իսկ նոցա առեալ զառ և զաւարն՝ գնացին ի բանակն իւրեանց: Եւ իբրև տեսին զեղեալ շարութիւնն՝ համա-
- 30 գունդ արշաւեալ ի բերդն՝ առեալ զնա, զբազումս սրով սատակեցին. և բազումք գահավէժ լինէին յահէ անտի. և կէսքն ելեալ ընդ դուռնն՝ որ բանայր ի կողմն գետոյն՝ փախստական գնային, և զայլսն ամենայն ի գերութիւն վարեցին: Եւ գերեցան յաւուր<sup>339</sup> յայնմիկ ի բերդէն յայնմանլ<sup>340</sup> գեւղք ԼԳ: Եւ զամենայն նոյնպէս ի գերութիւն վարեցին, և ժողովեալ

2 Ա զարանուոյ  
 3-4 Ա. քաղաքազեւղն Եղեվարդ  
 5 Ա ի դաշտին Եղեվարդայ  
 8 Ա. բանակետղ  
 13 Ա. ի գետոյն  
 14 Ա. յընդանէ  
 18 Ա. հասանեն  
 21 Գ. Եզնոյի  
 22 ՏՏ զերանդալք: Տե՛ս ծան. 334:  
 22-23 Գ սրիանեօք Գ շիք սրիանալք: ՏՏ աւճիր: Տե՛ս ծան. 337:  
 25 Ա. բախեալ  
 27 Ա. ցիրդ ի թաւալ  
 28 Միհրդ., Պատկ. նոցա զառ և զաւարն առեալ

զամենայն զառ և զաւար գաւառին. և զաւրքն դարձան և գնացին յԱտլըր-պատական<sup>341</sup>:

Ապա եկն Սենիտամ խոսրով<sup>342</sup>: Եւ զաւրն Յունաց զումարեալ նստան ի Սաղկոտանն, մերձ ի գելոն որ կոչի Անգղն, ընդ որ անցանէ գետն 5 Արածանի. և ի միւս կողմանէ քակեալ<sup>343</sup> զգելոն՝ ածին ամրութիւն շուրջ զինքեամբ: Եւ զաւրագլուխ նոցա Թէոդոս խորխոռունի, Եւ զաւրն Պարսից եկեալ բանակեցան մերձ առ նոսա ի Թիկանց կողմանէ. և նոքա զարհուրեալ խաւեցան ընդ նոսա, նախ՝ ի խաղաղութիւն, ասացին ոչ ունել պատերազմ, այլ թողուլ զբերդն և երթալ խաղաղութեամբ: Ապա 10 միաբանք<sup>344</sup> եղեալ՝ ոչ հաստատեցաւ բանն, այլ վստահացեալ յամրութիւն իւրեանց կարծէին առնել ինչ: Եւ եղև ի վաղիւ անդր դիմեաց գնաց ի վերայ նոցա զաւրն Պարսից: Եւ ոչ ոք արկանէր ի նոցանէն զէն զան-  
 « Ժամբ իւրով, և կամ թամբէր զերիվար իւր: Եւ թէ ոք զինէր/զանձն կամ թամբէր զերիվար՝ հասանէին մանկունք իշխանացն, և հանեալ ի բաց 15 ձգէին զզէնն, շարաշար տանջելով զարսն, և զգաւտիս երիվարացն սրով հատանէին:

Եւ եկեալ զաւրն Պարսից ճակատեցան մերձ առ նոսա դէմ յանդիման ի դաշտին կողմանէ, և ձգեալ բազմութեանն զաւրու աղեղնաւորացն, և թափեցին ի նոսա զկապարճս իւրեանց, և ծակտէին նետիւք իւրեանց 20 առ հասարակ զամենայն արս և զերիվարս: Եւ ընդոստուցեալ ամենայն երիվարք, որ կապեալ էին առ մսուրս առ իւրաքանչիւր դրան խորանաց, ընթաղրեալ առաթուր հարկանէին զխորանսն և զբանակսն ամենայն: Եւ թշնամուցն հատեալ զամրութիւնն՝ անկաւ ի բանակն, և անհնարին լինէր կոտորածն. և նոցա հատեալ զտեղի մի<sup>345</sup>, ոմանք հետեակք և 25 ոմանք հեծեալք յանկումուղի ձի<sup>346</sup>, ելին և գնացին փախստական: Եւ Թէոդոս խորխոռունի անկեալ ի բերդն ամրանայր. և նստան նոքա անդէն յայնմ զիշերի ի նոցուն բանակատեղն: Եւ եղև ընդ առաւատն, պատգամ արձակէին, զի թողցեն զբերդն և գնացեն իւրեանց կարասեան և ամե- նայն կազմածովն: Եւ յանձին կալեալ նոցա առնել այնպէս: Եւ յաւուրն 30 երրորդի բացին զդուռն քաղաքին, և ելին գնացին ամենեքեան ըստ ասացելումն բանին: Իսկ զԹէոդոսն խորխոռունի կոչէր զաւրավարն Պարսից և ասէր ցնա. «Ո՛չ ունիմ իշխանութիւն արձակել զքեզ առանց արքունի հրամանի, այլ տաց տանել զքեզ ի դուռն, և գրեցից վասն քոյ առ արքայ զամենայն բանս բարութեան, եթէ ո՛րպէս միամտութեամբ և տիրա- 35 սիրութեամբ զործեցեր, զի զզաւրս նոցա ի ձեռս մեր այնպէս մատնեցեր, և ապա զբերդդ առանց աշխատութեան ո՛րպէս ետուր մեզ, և երկիր

1 Ա. զօրն փխ. զաւրքն

1-2 Մալխ. Ատրպատական (տպագրական վրիպակ)

4 Ա. Անկղն

6 Միհրդ., Մալխ. խոռխոռունի

13-14 Ա. ոք որ փխ. ոք, Ա. մանգունք

20 Ա. ընդոստուցեալք

23 Պատկ. զամրութիւն

25 Միհրդ., Պատկ. յանկումուղի: Տե՛ս ծան. 346:

26 Միհրդ., Մալխ. խոռխոռունի

28 Ա. կարասասան Պատկանյանի ձեռագիրը՝ կարասանան



կամաւք քովք ի ծառայութիւն»: Եւ գրեաց ըստ նմին բանի, և ետ տանել զնա ի դուռն: Եւ արքայ խոսրով սիրով ընկալաւ զնա, և կարգեաց նմա ռոճիկս և հանդերձագինս յարքունուտ: Բայց յապա ժամանակիս եղեալ կարծիս<sup>347</sup> նենգութեան՝ հրամայեաց սպանանել: Իսկ ի բերդին Անգեղ 5 նստուցեալ բերդակալ, և զումարեալ զզարս իւր զնաց ինքն ի ներքս- 516բ գոյն և նուաճեաց||զերկիրն ի ծառայութիւն:

Եւ եղև յետ այնորիկ միւսանգամ պատերազմն ի կողմանս Բասենոյ, և եհար զՅոյնն և հալածեաց. և փախստական արարեալ ընկենոյր յերկիրն իւրեանց: Եւ կալաւ նա քաղաքս՝ զԱնգղ և զԳայլատուս, զԵրզնայ, 10 և ի Դարային զքաղաքն Մխնկերտի<sup>348</sup>: Եւ հրաման հասեալ յարքայէն՝ զնաց:

Գ Լ Ո Ւ Խ Լ Գ

Արձակել խոսրովայ գեոռեամ բազմածեոն գնդաւ յԱսորեստան եւ զԱշտատ հանդերձ Թէոդոսի որդով Մարկայ ի Հայս: Ամենայն Ասորես- 15 տան եւ Միջագետք հնազանդին ի ծառայութիւն Պարսից: Աշտատ հարկանէ զՅոյնս, երթայ ի վերայ Կարնոյ: Թէոդոս յայտնէ զանձն իւր Կարնեցոց. անձնատուր լինել Կարնոյ: Գալ զաւրավարին Շահենայ ի Կարին. գաղթեցումն բնակչաց Կարնոյ յԱհմատան: Վախճան կաթողիկոսացն Յովհաննու եւ Աբրահամու: Նստել յաթոռ Կոմիտասայ: Առումն 20 Կեսարիոյ Կապադովկացոց ի Շահենայ եւ սպանումն Վասակայ Արծրունայ:

Յայնժամ արքայ խոսրով դարձաւ ի Դարայէ<sup>349</sup> և հանգոյց զզարս իւր վերստին, և այլ ևս բազմութիւն զաւրաց ժողովեալ զումարեաց, և արձակէր ընդ կողմանս Ասորեստանի զաւր մեծ հզար յոյժ<sup>350</sup>, զԽոռեամ, 25 որ Ըռազմանն անուանեալ<sup>351</sup>, զաւրագլուխ նոցա: Եւ հրաման տայր նոցա այսպէս, եթէ «Որք եկեսցեն ի ծառայութիւն՝ սիրով ընկալ, և ի խաղաղութեան և ի շինութեան պահեսչիր. և որ ընդդէմ դարձցին և պատերազմեսցին՝ սրով սատակեսցին»: Եւ ընդ կողմանս Հայաստանի արձակէր զԱշտատ զՅեզտայար հանդերձ զաւրու մեծաւ. և զԹէոդոս կայսր 30 զանուանեալ որդին Մարկայ ընդ նմա զումարէ:

Եւ խոռեամ<sup>352</sup> առեալ զզաւրացն բազմութիւն զնաց ի կողմանս Ասորեստանի, և հասեալ ի Միջագետս Ասորոց, պատեալ պաշարեն զՈւռհայ

1 Ա. կամօք քո  
 8 Պատկ. փախստականն  
 9 Մալխ. իրեաց (տպագրական վրիպակ)  
 10 Ա, Միհրդ., Պատկ. ի Տարային, Միհրդ. Մխակերտի  
 22 Ա յայնժամ արքայ խոսրով բառերի դիմաց լուսեցնում գրված է լԱ գլխահամարը:  
 24 Ա, Պատկ., Մալխ. մեծ և փխ. մեծ, Տե՛ս ծան. 350:  
 25 Միհրդ. Ըռազմանն փխ. որ Ըռազմանն  
 25 Ա հրամանն  
 31 ՁՁ, Միհրդ. զԽոռեամ, Պատկ. խոռեամ, Մալխ. խոռեմայ փխ. և խոռեամ. Տե՛ս ծան. 352:  
 32 Միհրդ. զՈւրհայ

քաղաք, և մարտ եղեալ<sup>353</sup> կոռւի ընդ նմա: Իսկ նորա ի բազմութենէ զարացն և ի մարտիցն յաղթութենէ<sup>354</sup> և զի ոչ ուստեք գոյր նոցա աիլընկալութիւն փրկութեան՝ խաւսեցան ի խաղաղութիւն, և խնդրեցին երդումն, զի մի կորուսցեն զքաղաքն, և բացեալ զգոռն քաղաքին հնազանդեցան ի ծառայութիւն: Նոյնպէս և Ամիթ և Թելա և Ռաշայենայ և ամենայն քաղաքք Միջագետաց Ասորոց կամաւք հնազանդեալ ի ծառայութիւն՝ պահեցան ի խաղաղութեան և ի շինութեան: Եւ գնացեալ նոցա յԱնտիոք քաղաք՝ հնազանդեցան և նորա կամաւք ի ծառայութիւն հանդերձ ամենայն քաղաքաւք և բնակչաւք իւրեանց, փախստականք

10 լեալ ի սրոյն Փոկասայ:

Իսկ Աշտատ Յեզտայար եկն ի սահմանս Հայոց յամի ութ և տասնեորդի թագաւորութեանն: Եւ զարն Յունաց գումարեալ ժողովեցան ի դաւառն Բասենոյ, և ևս ահագին դիմեալ յարծակեցան ի վերայ նորա. և եղև պատերազմ մեծ ի Դու և յՈրդրու<sup>355</sup>: Հարին զարն Յունաց և խորտակեցին կործանմամբ մեծաւ: Բազումք մեռան ի պատերազմին, և ոչ

15 517ա գոյր թիւ սպանելոցն ի դաշտին: || Հալածեաց զնոսա մինչև ի քաղաքն Սատաղացոց, և ինքն գումարեալ բանակեցաւ շուրջ զԿարնոյ քաղաքաւ, և կալաւ ընդ նմա գործ պատերազմի. ընդդիմացան ի ներքուստ ինչ. և ոչ սակաւ լինէր կոտորածն<sup>356</sup> վնասուց յարտաքնոցն: Ապա յառաջ մատուցեալ Թէոդոս կայսրն ասելով, եթէ «Ես եմ, ասէ, թագաւորն. ձեր»<sup>357</sup>: Յայնժամ հաւանեալ բանային. ելին զխաւորքն քաղաքին և ընծայեցան նմա, և դարձեալ անդրէն հաւանեցուցին զքաղաքն, թէ նոյն ինքն է Թէոդոս, որդին Մարկայ: Յայնժամ բացեալ զգոռնն՝ հնազանդեցան ի ծառայութիւն: Եւ կարգեալ ի նալ պահապանս, զնաց և կալաւ զքաղաքն

25 25 Հաշտենից՝ զԶիթաոիճ<sup>358</sup> և զՍատաղ և զԱռաստիայ և զնիկոպալիս և զնաց:

Ապա եկն Շահէնն Պատգոսապան<sup>359</sup> և զանց արարեալ<sup>360</sup> զԿարնոյ քաղաքան<sup>361</sup>. և յուստանն Դըւնայ<sup>362</sup> եկն մարզպանութեանն Շահրայեանպետ<sup>362</sup>: Իսկ Շահեանն երթեալ հանդիպէր զարացն Յունաց ի Կարին

30 գաւառի: Եւ արարեալ պատերազմ՝ հարկանէր զնոսա սրով սուսերի և փախստական արարեալ հալածական առնէր յաշխարհէն:

Իսկ յամին քսաներորդի առաջներորդի արքային Խոսրովայ հրաման

1 Մալլս. մարտ եղեալ: Տե՛ս ծան. 353: Միւրդ. կռիւ ասնէ փիւ. կոռւի:  
 2 Բոյ. յաղթութիւնն փիւ. յաղթութենէ: Տե՛ս ծան. 354:  
 3 Ա. թիղա և բոաշաենայ  
 6 Ա. քաղաք  
 21-1 Ա. յամի Ը ու Ժ երրորդի  
 13 Ա. Բասենոյ  
 14 Բոյ. Յորդրու: Տե՛ս ծան. 355:  
 20 Ա. կայսր Ա, Բ, Գ ասէ փիւ. ևս եմ: Տե՛ս ծան. 357: Դ, Պատկ., Մալլս. չիք ասէ  
 23 Միւրդ., Պատկ. որդի  
 24 Ա. ծառայութիւնն  
 25 Ա. զիթաոիճ, Միւրդ., Պատկ. Զիթաոիճ: Տե՛ս ծան. 358:  
 25 Ա. զնիկոպալիս  
 28 Ա. Դունայ  
 28-29 Ա. շահրահանպետ

ես նմա՝ փոխել զբնակիչս ի Կարնոյ քաղաքէ և տանել բնակեցուցանել յԱհմատեան շահաստանի. ընդ նոսին ըմբռնեալ և երանելի ծերունի կաթուղիկոսն Յովհանն ի գերութիւն վարեցաւ հանդերձ ամենայն սպասիւք եկեղեցւոյն: Եւ անդէն վախճանեալ բերաւ մարմին նորա ի գիւղն Աւան, 5 յեկեղեցին, զոր ինքն շինեաց: Եւ ի նմին ամի վախճանեցաւ երանելին Աբրահամ կաթուղիկոսն, եւ յետ սորա յաջորդէ զաթոռ հայրապետութեանն Կումիտաս Տարոնոյ եպիսկոպոսն, որ ի գեղջէ Աղցիցն աւանէ, և առ սովաւ կատարի շինուած եկեղեցւոյն սրբոյն Գրիգորի:

Եւ յամին քսաներորդի Խոսրովայ արքայի ասպատակ արարեալ 10 Շահենայ՝ արշաւեաց ի կողմանս արևմտից և զնացեալ ի Կեսարիա Կապադովկացոց. իսկ բնակիչք քաղաքին քրիստոնեայք ելին ի քաղաքէն և զնացին. բայց Հրէայքն ընդ առաջ երթեալ հնազանդեցան ի ծառայոնթիւն. և նստաւ նա ի քաղաքին յայնմիկ զտարի 1 ան 517բ զՎասակն Արծրունի զորդի Սահակայ/նահապետին Արծրունեաց, և 15 սպանին զնա հանդէպ զրանն քաղաքին ի վերայ փայտի<sup>364</sup>. որ թէպէս և բազում աւճիրս վնասուց գործեալ էր նորա ի զարուն Պարսից, սակայն ամենայն զարն Պարսից ողբայր զնա վասն քաջութեան և արիութեան<sup>365</sup>, և մանուկ ուժեղ և բարձրահասակ: Մանաւանդ զի սնեալ ևս էր ի մէջ նոցա, և վարժեալ ևս էր ի նոցանէն հրահանգաւ: Այսպէս և սա<sup>366</sup>:

20

Գ Լ Ո Ւ Խ Լ Գ

Խոսրով մերժէ առնել հաշտութիւն. պատերազմ առ Կեսարեաւ, փախուստ Յունաց. Շահէն առնու զՄելիթիւնէ: Զարավարք պարսիկք ի Հայս: Փիլիպպիկոս արշաւէ յԱյրարատ եւ դառնայ ի փախուստ: Նստուցանել Հերակլի զԿոստանդին զորդի իւր յաթոռ քազատութեանն եւ երթալ 25 յԱսորեստան: Պարտութիւն նորա առ Անտիոք փաղափախ: Երկիրն Պարսիկեացոց հնազանդի ի ծառայութիւն Պարսից: Ապստամբութիւն Երուսաղէմ փաղափի, առումն եւ կոտորած անհնարին: Գերումն խաշափայտին: Հրաման յարժայէն Խոսրովայ՝ շինել անդրէն զԵրուսաղէմ:

ԽՈՍՐՈՎ ԻՔ, ԵՐԱԿՂՈՍ ԶԱՌԱՋԻՆՆ<sup>367</sup>

30 Եւ եղև ի ժամանակին յայնմիկ գումարել զաւրս Երակլի՝ որ ի կողմանս Եզիպտացոց, յամի քսաներորդի երկրորդի թագաւորութեանն Խոսրովայ, և նաւեալք ընդ ծով՝ հասին ի Կոստանդնուպոլիս, և սպա-

7 Միհրդ., Պատկ. Տարոնայ եպիսկոպոս  
 10-11 Ա. Կեսարիայ Կապադովկացոց  
 16 ՏՏ աւճիրոս  
 18 Ա. բարձր հասակ  
 19 ՏՏ ևս (փխ. ևս էր) ի նոցանէն  
 29 Ա. Խոսրով ԻՔ, երակղոս զառաջինն բառերը ձեռագրիցն են:  
 30 Ա. եւ եղև ի ժամանակին յայնմիկ բառերի դիմաց լուսանցեալ գրված է ԼՔ գլխահամարը:  
 31 Միհրդ., շիք երկրորդի  
 32 Ա. Կոստանդնուպոլիս

նեալ զՓոկաս թագաւոր՝ նստոյց զՀերակղոս զորդի իւր յաթոռ թագաւորութեանն, և արար յաֆենայն երկիրն խաղաղութիւն:

5 Եւ եղև իբրև թագաւորեաց Հերակղոս՝ արձակեաց հրեշտակս մեծապէս գանձիւք և հրովարտակաւք առ արքայ Խոսրով՝ խնդրել զխաղաղութիւն մեծաւ թախանձանաւք<sup>368</sup>: Որում ոչինչ կամեցաւ լսել արքայ Խոսրով ասելով. «Իմ է թագաւորութիւնն այն, և ես զԹէոդոս զորդին Մարկայ նստուցի<sup>369</sup> թագաւոր: Եւ նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, և զմեր գանձն մեզ ընծայս մատուցանէ<sup>370</sup>. Բայց ես ոչ դադարեցից՝ մինչև առից զնա ի բուռն իմ»: Եւ առեալ զգանձն՝ հրամայեաց սպանանել զհրեշտակս նորա, և բանից նորա ո՛չ արար պատասխանի:

3 3այնժամ գումարեալ Երակլի զզարս իւր՝ բանակեցաւ շուրջ զքաղաքան<sup>371</sup> և արգել զնոսս յարշաւանաց իւրեանց: Եւ գումարեալ զզարն ի ձեռն կուրատորի<sup>372</sup> ուրումն, հրաման ետ զգուշանալ, և ինքն գնաց ի 15 տեղի իւր:

Եւ պաշարեցին զքաղաքն Կեսարացոց տարի մի, և նեղեցաւ զարն Պարսից ի կերակրոյ. և զի ոչ գոյ՞ խար երիվարացն բազմութեան: Եւ եղև իբրև հասին յաւուրս ամառնային ջերմութեանն, և լցեալ սեռնեցան վայրքն բուռով դալարոյ՝ հրդեհեցին զքաղաքն հուրք, և ելեալ զնացին 20 բռնութեամբ, հարեալ զՅոյնն և փախստական արարեալ յետուստ իւրեանց. և ինքեանք երթեալ ի սահմանս Հայոց: Եւ ձմերեալ զարն Պարսից ի Հայաստան աշխարհին:

4 Կոչի Շահէն փութանակի ի դուռն թագաւորին Պարսից. և հրաման տայ նմա արքայ երթալ անդրէն ընդ արևմուտս փութանակի: Իսկ նորա||առեալ զզարս իւր յաւուրս ամառայնոյ գնացեալ հասանէ ի Կարնոյ քաղաք, և դիմեալ ի վերայ Մելտինոյ, առնու զնա և հնազանդէ ի ծառայութիւն: Եւ ինքն գնացեալ միանայր ի զարն Խոռեմայ, որ էր ի Պիսիդացոց<sup>373</sup> կողմանէ:

Եւ յոստանն Դրւնայ<sup>374</sup> եկն փոխանակ Շահրայնպետի՝ Պարսեանս- 30 պետ Պարշըրնաղգատ<sup>375</sup> ապա Նամդար Վշնասպ<sup>376</sup>. ապա Շահրապղական<sup>377</sup>: Սա արար կոխ մի ի Պարս և յաղթեաց. ապա Ըոռձ Վեհան<sup>378</sup>: Սա հետամուտ լեալ զհետ թագաւորին Երակղայ ի Հայս մինչև ի սահմանս Ասորեստանի, մինչ եղև պատերազմ մեծ ի Նինուէ, յորում անկաւ ինքն և ամենայն զարք իւր:

1-2 Ա յաթոռ թագաւորութեան և արար խաղաղութիւն ամենայն երկրին  
3 Ա Հերակղոս  
4 Ա գանձուք  
8 Ա գանձս  
14 Ա Կուրատորի որումն  
25 Ա զօրս  
27 Ա գնաց երթալ փխ. գնացեալ  
27-29 ԶԶ, Միհրդ., Պատկ. ի զարն Խոռեմայ, որ էր ի Պիսիդացոց կողմանէ և յոստանս Դրւնոյ: Եկն փոխանակ Շահրայնպետի: Տե՛ս ծան. 375:  
30 Բոլ. Նամզարուն Շոնազպ (Շնասպ) փխ. Նամդար Վշնասպ: Տե՛ս ծան. 376:  
31 Բոլ. Ճոռձ: Տե՛ս ծան. 378:  
32 Ա ի հայոց  
33 Միհրդ., Պատկ. մինչև եղև

Իսկ թագաւորն Երակղոս գումարէ զՓիլիպիկոս գոմն երէց ի զարա-  
վարութիւն: Եւ էր լեալ Փիլիպիկոսս այս փեսայ կայսերն Մարկայ, և  
բազում ժամանակաւ արարեալ զարավարութիւն՝ գործէր զմարտից  
5 յաղթութիւն: Եւ ապա յանկարծարէն արկեալ ի միտս իւր անգրէն յա-  
ւորս Մարկայ թագաւորութեանն, կտրեալ զհերս զլիսոյ իւրոյ և զգե-  
ցեալ զքահանայութիւն՝ զինուորեցաւ յուխտ եկեղեցւոյ: Արդ՝ զսա  
բոնադատեալ Հերակղի, կարգէ զարավար և արձակէ ի կողմանս արե-  
վելից զարու մեծաւ: Եւ նորա դիմեալ ընդ Կեսարիա Կապադովկացւոց՝  
երթեալ հասանէր ի Հայաստան երկիր, ի դաւառն Այրարատայ, և բա-  
10 նակի ի դաշտին Վաղարշապատ քաղաքի:

Հապճեպ ստիպով ի ձեռն թեթևընթաց երազոտն սուրհանդակաց  
հրաման թագաւորին հասաւ. մեծաւ վտանգաւ ստիպէր զզարս իւր հա-  
սանել զհետ նորա և անյիշատակ ի միջոյ ի բաց բառնալ զզարն<sup>379</sup>: Եւ  
նոքա երթեալ մեծաւ ստիպով հասին ի դաւառն Այրարատայ և բանա-  
15 կեցան ի վերայ գետեղերն Երասխայ, կամեցեալ առ վաղիւն խմբել զգործ  
պատերազմին: Ի նմին ժամու ի գիշերին գնացեալ ի վերայ<sup>380</sup>, Փիլիպպոսի  
ի Նիգ դաւառի և պատեալ զթիկամբք լերինն Արագածայ՝ երթեալ ան-  
ցանէ ընդ Շիրակ և ընդ Վանանդ մերձ քաղաքան Կարնոյ և երթեալ  
հասանէ ի սահմանս իւր: Իսկ զարն Պարսից, քանզի յաւգնեալ էր ի  
20 հեռաւոր և յայնպէս վտանգաւոր ուղեաց ճանապարհին,—քանզի բա-  
զումք մեռան ի ճանապարհին ի զարացն, և բազմաց երկվարք սատա-  
518բ կեալ՝ անկանէին հետիոտս՝—ոչ կարացեալ հապճեպ/ստիպով զկնի  
նոցա լինել հետամուտ: Այլ դադարեալ աւուրս ինչ. ապա գնացեալ  
հանգստիւ, երթեալ անցանէ ի կողմանս Ասորեստանի: Եւ բանակեցան  
25 անդէն ի տեղւոջն, ուր էին դառաջինն և լայնեալ յաջ և յահեակ իւրե-  
անց՝ լաստեցան և կալան զերկիրն ամենայն:

Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Հերակղոս զորդի իւր զԿոստան-  
ղին, ետ գնա ի ձեռն սընկղիտոսին, և յանձնեալ ամենայն մեծամեծացն  
պալատոյն<sup>381</sup> հաստատեաց զնա յաթոռ թագաւորութեան իւրոյ: Եւ իւր  
30 առեալ յանձն զանուն զարավարութեան, հանդերձ եղբարբն իւրով Թէո-  
դոսի<sup>382</sup> գումարեալ ժողովեաց զբազմութիւն զարացն, և անցեալ զնաց  
յԱսորեստան<sup>383</sup> ի կողմանս Անտիոքացւոց: Եւ եղև պատերազմ մեծ ի  
կողմանս Ասիացւոց<sup>384</sup> և բռնացեալ հոսեցաւ արիւն զարականացն<sup>385</sup> առ  
Անտիոք քաղաքաւ: Սաստիկ լինէր խումբ և խառնուրդ, և անբաւ կոտորածն  
35 ի մէջ տարուբերին. և յաւգնեալ վանեցան ի մարտին երկոքին կող-  
մանքն: Բայց սակայն զարացեալ Պարսիկն՝ փախուցեալ զՅոյնն հալա-  
ծեաց, և ստացաւ հանդերձ քաջութեամբ զյաղթութիւն: Եւ եղև միւս ևս

1 Ա. Հերակղոս Ա. զՓիլիպիկոս

3 Ա. զմարտիցն

8 Ա. Կեսարայ

9 Ա. Այրարատոյ (Ըսկ.՝ հետագայում)

16 Ա. Փիլիպոսի

17 Ա. զթիկամբ

20 Ա. ուղեաց

27 Ա. Երակղոս

33 Բոյ. զարավարցն: Տե՛ս ծան. 385:

այլ պատերազմն մաւա ի նեղուց մտին ի Կիւլիկեայ. եհար Յոյնն զՊարսիկն ի ճակատուն ԸՌ արանց սպառազինաց: Եւ ինքն դարձեալ փախըստական զնաց. և զարացեալ զարն Պարսից՝ անցեալ կալաւ զՏարսան քաղաք և զամենայն բնակիչս Կիւլիկեցուց զաւառին:

- 5 Յայնժամ ապա ամենայն երկիրն Պաղեստինացուց կամաւք հնազանդեցան ի ծառայութիւն արքային Պարսից. մանաւանդ մնացորդք ազգին Հեբրայեցուց, ապստամբեալք ի քրիստոնէից և առեալ ի ձեռն զնախանձ հայրենի՝ մեծ աւճիրս վնասուց զործէին ի մէջ բազմութեան հաւատացելոցն: Երթեալ առ նոսա միաւորեցան խառն ի միաբանութիւն:
- 10 Յայնժամ զարն արքային Պարսից նստէր ի Կեսարիա Պաղեստինացուց, և զարավարն նոցա անուանեալ Ռազմիողան, որ է խոռեամ, խաւսէր ընդ Երուսաղէմի, զի կամաւք հնազանդեցին ի ծառայութիւն, և ի խաղաղութեան և ի շինութեան պահեսցին:

- Արդ՝ նախ միաբանեալ<sup>386</sup> հնազանդեցան ի ծառայութիւն, և մատուցին զարավարին և իշխանացն<sup>387</sup> պատարագս մեծամեծս, և խնդրեալ ոստիկանս արս հաւատարիմս՝ նստուցին առ իւրեանց առ ի պահպանութիւն քաղաքին: Եւ յետ անցանելոյ՛լամսոց, մինչ<sup>388</sup> միաբանեալ ամենայն ուամիկ կաճառացն<sup>389</sup> մանկունք քաղաքին սպանին զոստիկանս թագաւորին Պարսից և ինքեանք ապստամբեալք ի բաց կացին ի ծառայութենէ նորա: Յայնժամ եղև պատերազմն ի մէջ բնակչացն քաղաքին Երուսաղէմի, հրէին և քրիստոնէին. և զարացեալ բազմութեան քրիստոնէիցն՝ հարին սատակեցին զբազումս ի հրէիցն: Եւ մնացեալքն ի հրէիցն անկեալ ի պարսպացն՝ գնացին ի զարն Պարսից: Յայնժամ ժողովեաց խոռեամ, որ է Ըռազմիողան<sup>390</sup>, զզարս իւր և երթեալ բանակեցաւ 25 շուրջ զԵրուսաղէմաւ և պաշարեաց զնա. և կալաւ ի վերայ՝ նոցա զործ պատերազմի զաւուրս ժԹ: Եւ փորեալ ի ներքոյ զհիմունս քաղաքին՝ աւերեցին զպարիսպն:

- Եւ եղև յաւուրն ժԹ-երորդի յամսեանն մարգագ<sup>391</sup>, որ ար ԻՂ էր ամսոյն<sup>392</sup>, յամի ԻՆ-երորդի<sup>393</sup> թագաւորութեանն Ապրուէզ խոսրովայ, 30 զկնի տասն աւուր անցելոյ յետ զատկին, առին զարքն Պարսից զԵրուսաղէմ, և սուր ի զործ արարեալ մինչև ցերիս աւուրս՝ սպառեցին զամենայն մարդիկ քաղաքին. և նստան ի ներքս քաղաքին ԻԱ ար. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին<sup>394</sup> և այրեցին զքաղաքն հուրք:

1 Ա մտին Կիւլիկեայ  
 9 Միհրդ. միաբանեցան փխ. միաւորեցան  
 11 Ա անուանեալն  
 11 Հ, Ա, Բ, Գ, Միհրդ., Գազմիողան Գ խազմիողան փխ. Ռազմիողան: Ա խոռեամ Գ խոռեամ  
 13 Գ պատմեցին (փխ. պահեսցին) ապա զնշված է և դարձեալ պատահեսցին (փխ. պահեսցին):  
 15 Ա, Միհրդ. զպարավարին փխ. զարավարին, ԱԱ, Միհրդ., Պատկ., զիշխանացն: Տե՛ս ծան. 387:  
 23 Ա անկեալք  
 24 Գ խոռիեամ: Բոլ. Ըռազմիողան (Ռամիկողան): Տե՛ս ծան. 390:  
 28-29 Միհրդ., Պատկ. Իէ էր ամսոյն: Տե՛ս ծան. 392: Միհրդ. ԻՆ-երորդի թագաւորութեանն: Տե՛ս ծան. 393:  
 32-33 Ա նստան ի քաղաքին, Բոլ. յիբ ԻԱ ար ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին: Տե՛ս ծան. 394:

Եւ համարեցին համար անկելոց դիականացն, և եղև թիւ սպանելոցն ժէ հազար մարդ: Եւ զորս կալան կենդանիք՝ Լն հազար մարդ: Կալան և զհայրապետն, որում անուն էր Զաքարիա, և զխաչապանն. և ի խնդիր անկեալ կենսաբեր խաչին՝ սկսան զնոսա տանջել. և զբազումս ի պաշ-  
 5 տանէից կառափնատեալ սատակէին ի ժամանակին յայնմիկ: Ապա ցուցին զտեղին, ուր ծածկեալ կայր. զոր առեալ վարեցին ի գերութիւն. և զարծաթ և զոսկի քաղաքին ձուլեալ խաղացուցին ի դուռն թագաւորին:

Ապա վասն անկելոց ձերբակալացն հրաման հասեալ ի թագաւորէն՝ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն, և զնոսա անդրէն  
 10 հաստատել յիրաքանչիւր կարգ: Եւ զհրեայնն հրամայէ հալածական առնել ի քաղաքէն. և անդէն վաղվաղակի մեծաւ ստիպով կատարեն զհրամանն արքունի: Եւ կարգեցին երիցապետ զոմն ի վերայ քաղաքին, անուն Մողեստոս<sup>395</sup>, որ գրէ ի Հայաստան երկիր արինակ այսպէս. —

Գ Լ Ո Ւ Խ Լ Ե

Առ Տէր Կոմիտաս

15

Տեառն իմոյ ամենայն բարութեան և երանութեան<sup>396</sup> և հոգևորի Կոմիտասայ արքեպիսկոպոսի և մետրապալաի աշխարհիդ Հայոց, Մո-  
 դեստոս նուաստ երէց և տեղապահ Երուսաղէմի:

519բ Աւրհնեալ է Աստուած և//հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,  
 20 հայր գթութեանց և Աստուած ամենայն մխիթարութեանց, որ մխիթա-  
 րեաց զմեզ մխիթարութեամբ բազմաւ ի վերայ ամենայն նեղութեանց մերոց ի գալստեան ձերոյ հատիդ: Քանզի ո՛չ<sup>397</sup> մխիթարեաց զմեզ ի գալստեան դոցա. նախ՝ յիշեցուցանելով մեզ զառաջին երթեկէն, զոր առնէին ի պատուական տեղիս Երուսաղէմի: Երկրորդ՝ զի հաճեաց զմիտս  
 25 մեր ի դալստեան դոցա, և ծանեաք, զի ոչ իսպառ մերժեաց զմեզ Աս-  
 տուած: Այլ արդարև սոյն Աստուած մեր ի մեզ է, ցուցանելով մեզ ի ձեռն նոցուն իրաց զմեծամեծս իւր<sup>398</sup> որ յառաջ քան զյաւիտեանս մինչև ցայժմ կատարելով. և զզարութիւն նորա և սքանչելիս նորա արհնելով և մեք զՊաղղոսին ասասցուք. «Ո՛րպէս մեծացան գործք քո, տէր. զա-  
 30 մենայն իմաստութեամբ արարեր»\*: Արդարև անքնին են դատաստանք նորա, և առանց զննելոյ են ճանապարհք նորա: Զի ո՛վ ծանեալ զմիտս տեառն, կամ ո՛ խորհրդակից եղև նմա, կամ ո՛վ ետ նմա փոխ և հատու-

\* Սաղմ. ՃԳ, 24:

1 Պատկ. հրամայեցին փխ. համարեցին  
 2 Պատկ. Ծէ փխ. ժէ  
 5 Ա. կառափնեալ  
 11 Պատկ. անդրէն փխ. անդէն  
 13 ԶԶ, Միհրդ. Մոգեստոս: Տե՛ս ծան. 395:  
 15 Առ տէր Կոմիտաս բառերը ձեռագրիւն են, Գ, Ե այդ բառերը չունեն:  
 22 Գ հօտիդ ջնջված է և ուրիշ բաճաճով ուղղված հայրապետիդ  
 22 Հ, Ա, Պատկ., Մալյս. քանզի ոչ, Միհրդ. քանի ոչ: Տե՛ս ծան. 397:  
 22 Պատկ. զմեզ փխ. մեզ  
 30 ԶԶ, Միհրդ., Պատկ. անքնին

ցանէ նմա, զի ի նմանէ են և նովաւ և ի նա ամենայն: նմա փառք յաւիտեանս, ամէն»\*: Արդ՝ զի զհակառակորդսն մեր սիրելի արար, և ետ զմեզ ի գթութիւն և յողորմութիւն առաջի ամենայն գերշաց մերոց. որ զտիրասպանունս և զհրէայս, որք կարծէին շարշարանաւք սորա դարձեալ 5 թշնամանել զայն, որ շարշարեցաւ վասն մեր, զտէրն մեր Յիսուս Քրիստոս՝ զճշմարիտ Աստուածն մեր, որք համարձակեալ պատերազմեցան իսկ, և այրեցին զպատուական տեղիս զայս՝ հաճեցաւ Աստուծոյ մարդասիրութիւնն զնոսա աւտարացուցանել<sup>399</sup> ի քաղաքէն սրբոյ իւրմէ Երուսաղէմէ: Որք կամէին բնակիչ առնել ինքեանց՝ լսեն բովանդակ 10 շքնակել, և տեսանել ո՛չ արժանատրին, և զպատուական և զերկրպագու շարշարանս և զսուրբ և զկենսընկալ նորա գերեզմանս և զսուրբ Գողգոթայ մեծափառ նորոգեալ ճանաչեն<sup>400</sup>, հատուցեալ զիրաքանչիւր փառս. բազում վերագրութեամբ զաստուածային պաշտանն և զմայր եկեղեցեաց Սիովնն, և զվերացումն նորա և միանգամայն իսկ ասացեալ՝ 15 զամենայն երկրպագու տեղիս նորոգեալ լսելով՝ նախանձաբերին, ոչ ի բարի, այլ ի բնիկ նախանձանք հայրենական հար նոցա Կայենի: Քանզի բազում անգամ ջանացան, բազում կաշառաւք հրաման խնդրէին մտանել 520ա ի սուրբ քաղաքն, և ոչ արժանատրեցան՝ յԱստուծոյ յարգելեալ, որ և խրատեաց<sup>401</sup> զմեզ ոչ ըստ գործոց մերոց, այլ հայրական զթութեամբն 20 դարձուցանել զմեզ ի նորոգութիւն:

Բայց և զհրաշալիս գրելով ուրախ առնեմք զքեզ. ոչ յանիրաւութենէ և կամ յաւերանաց շինութիւնք երկրպագու տեղեացս այսոցիկ լինին, այլ ի ձեռն նորա ողորմութեանն, որով բարձրացոյց զաշխարհս և զառ ինքն ծանաթութիւն շնորհեաց:

25 Արդ՝ որպէս ասացեալդ, թէ շնորհիւ Աստուծոյ ի ձեր սուրբ աղաւթիցդ ամենայն եկեղեցիքս Երուսաղէմի կարգաւորեցան և պաշտին: Եւ խաղաղութիւն քաղաքիս Աստուծոյ և սորին շրջեկիս, որպէս դէմ յանդիման պատմեն ձեզ, որպէս տեսին զայս քրիստոսասէր մարդիկդ ձեր: Քանզի զայս ամենայն ի նորին յարինողին՝ և միայն ի մարմնի են 30 գործքն, և ոչ ի մարդկային ձեռաց է զարութիւն, զի մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի նորա: Քանզի նա է խաղաղութիւն մեր որ առնէ զամենայն, որպէս ասացեալդ է, և վերստին նորոգէ որպէս այժմիկ մարտեալ՝ ուրախ արասցէ զմեզ ի ձեռն սուրբ աղաւթից ձերոց, քարոզելով զսորին խաղաղութիւն սուրբ եկեղեցեացն և շնորհելով մեզ հովիւս 35 և առաջնորդս եկեղեցեաց նորա: Եւ արկցէ ի միտս ձեր՝ անգագար աղաւթելով վասն մեր, և մի՛ պակասել ամենևին ի յիշել և նայել ի մեզ

\* Հոռմ. ԺԱ, 33—36

4 Մայիս. գհրեայս  
 8 Բռլ. աւարացուցանել: Տե՛ս ծան. 399: Ա ի քաղաքէ իւրոյ սրբոյ  
 9 Ա իւրեանց փխ. ինքեանց  
 13 Ա պայծառութեամբ փխ. վերագրութեամբ: Ա պաշտամունս  
 14 ՏՏ Սիանն  
 16 Ա նախանձք փխ. նախանձանք  
 18 Ա Աստուծոյ  
 19 Հ.Ա., Պատկ. ձեռագիրք՝ խրամատեաց փխ. խրատեաց: Տե՛ս ծան. 401:  
 25 Ա շնորհին  
 33 մարտեալ աղավաղված բառ է:  
 36 Միերդ., Պատկ. նայիլ



և յաղքատս Երուսաղէմի, և որ ինչ պիտոյ է՝ ընուլ: Եւ եթէ հնար իցէ զաստուածասէր ձեր նախանձդ և ի ձեռնտուութիւն շինածոյ կենարար շարշարանացն ձգել. զի և այսմ բարոյ և փափագելի պարգևաց հանդիպիմք: Բայց և զայս աղաչեմ զհայրական զձեր սրբութիւնդ և որք 5 ընդ ձեր սրբասուն եպիսկոպոսունսդ են, առաջի նոցա ընթեռնուլ զթուղթդ:

Գ Լ Ո Ւ Խ Լ Զ

Եւ այս է թղթոյն պատասխանի՝ զոր գրեցին Հայք յԵրուսաղէմ առ Մողեստոս<sup>402</sup>:

10 Չայն աւետարտոր փողոյ մեծի ի հրեշտակէն գոչէ մեզ ի ձեռն թղթոյս այսորիկ, հասելոյ յաստուածակերտ քաղաքէ այտի, որ աւետարանէ մէզ ուրախութիւն մեծ:

Վասն այսորիկ ուրախ լինին երկինք, և ցնծասցէ երկիր, զուարճացին փառաբ իւրովք եկեղեցի և մանկունք իւր: Եւ արդ՝ մեք ամենեքեան 15 միաբան գոչմամբ զհրեշտակական փառաբանութիւնսն երգեսցուք ասելով. «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»\*:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Տ. ԿՈՒՄԻՏԱՍԱՅ

520բ Ծնորհին Աստուծոյ յեպիսկոպոսապետէս և յամենայն/ուղղափառ 20 եպիսկոպոսացս և յերիցանցս, ի սարկաւազացս և ի դպրացս, և յամենայն ժողովրդոց աշխարհիս Հայոց՝ ձեզ նեղելոցդ և վշտացելոցդ, գանալից եղելոցդ\*\* և խրատելոցդ, յանձանձելոց և զգուելոց, սփոփելոցդ և սիրեցելոցդ ի Հարէն երկնաւորէ. Եղբայր պատուական Մողեստոս, քեզ և ամենայն եկեղեցեացդ որ յԵրուսաղէմի. շնորհք Տեառն մերոյ Յիսուսի 25 Քրիստոսի, և սէրն Աստուծոյ և խաղաղութիւն բազմացի\*\*\*:

Նախ՝ գոհանամք զԱստուծոյ ի վերայ մխիթարութեանց, ընդ որ մխիթարեաց զձեզ<sup>403</sup>, որպէս զի և դուք կարող լինիջիք մխիթարել զայնոսիկ, որ յամենայն նեղութիւնս իցեն\*\*\*\*: Զի ահաւասիկ մեք իսկ ի ձեռն

\* Ղուկ., Բ, 14  
 \*\* Հմմտ, Բ. Կորնթ., ԺԱ, 25  
 \*\*\* Հմմտ. Հռոմ., Ա, 7,  
 \*\*\*\* Բ Կորնթ., Ա, 4

- 5 Միհրդ., Պատկ. ընդ ձեզ փխ. ընդ ձեր
- 6 Ա. զթուխտ
- 8-9 վերնագիրը ձեռագրի են է, Ե չի վերնագիր: Ա, Բ, Գ Հայոց փխ. Հայք, Գ ի Հայոց 29 առ կայսր փխ. առ Մողեստոս, Տե՛ս ծան. 402:
- 14 Ա. ամենեքին
- 18 Ա. կումիտասայ փխ. Տ. Կումիտասայ
- 19 Ա. եպիսկոպոսապետէ
- 21-22 Պատկ., Մալխ. վշտացելոց, Ա, Միհրդ. եղելոց
- 22 Ա, Պատկ. զգուելոցդ Ա. երկնաւորէն
- 23 29, Միհրդ. Մողեստոս
- 26 Միհրդ., Պատկ. գոհանամ
- 27 Բալ. զմեզ փխ. զձեզ: Տե՛ս ծան. 403:

մխիթարութեան ձերոյ որ եհաս առ մեզ մխիթարեցաք ի բազում վշտացս  
 և ի սաստիկ նեղութեանցս և ի դառն կտտանացս որ նեղէին<sup>404</sup> զմեզ: Այլ  
 հաւատարիմ է Աստուած\*, որ սփոփեաց հայրական գթութեամբ  
 իւրով զամենայն հաւտս հաւատացելոց ի ձեռն այդորիկ, և մոռացոյց  
 5 գտրտմութիւնս մեր ուրախութեամբ լըոյս և ձայնիւ շինութեամբդ և  
 խաղաղութեամբդ Երուսաղէմի: Բայց առ մեզ գոչէ մարգարէն, աղաղակէ  
 և ասէ. «Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ, ասէ Աստուած,  
 քահանայքդ խաւսեցարո՛ւք ի սիրտ Երուսաղէմի\*\*», և մխիթարեցէ՛ք զգա,  
 զի լի եղև տառապանաւք»: Իբրև յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած,  
 10 քանզի «զոր սիրէ տէր, խրատէ»\*\*\*. ո՞ իցէ որդի, զոր ոչ խրատեսցէ զնա  
 հայր իւր. «զի նորա վիրաւքն բժշկեցաք\*\*\*\*, և խրատ խաղաղութեան  
 մերոյ ի նմա»: Բայց գիտեա՛ դու զայս, ո՞վ եղբայր սիրելի, ո՛չ սակաւ  
 մխիթարութիւն գործէին և մերոյ ժողովրդեանս յերթեկէ այդ ճանա-  
 պարհացդ: Նախ՝ զի մոռանային զամենայն վիշտս և գտրտմութիւն  
 15 աշխարհիս: Երկրորդ՝ զի սրբէին զմեզս իւրեանց ի ձեռն ապաշխարու-  
 թեան, պահոց և ողորմութեան, տքնութեամբ զտիւ և զգիշեր անհանգիստ  
 ուղեգնացութեամբ: Երրորդ՝ զի մկրտէին զմարմինս ի շուր սրբութեան ի  
 Յորդանանու յորձանսն հրաղէզս, որ յամենայն տիեզերս աղբերացաւ  
 շնորհքն աստուածային. զի սփռէին զանձուկ սրտի զաստուածամերձ  
 20 Սինէական լեռամբն առ Մովսիսիւ, զմարգարէականն (ասելով)<sup>405</sup> ըն-  
 կեր ցրնկեր. «Եկա՛յք ելցո՛ւք ի լեռոն տեառն և ի տունն Աստուծոյ Յա-  
 կովբայ»\*\*\*\*: Այլ ևս զմեծագոյնն ասացուք ըստ առաքելական ձայ-  
 521ա նի<sup>406</sup>—«զմատչելն ի Սիովն լեռոն և ի/բաղաք Աստուծոյ կենդանոյ,  
 յԵրուսաղեմն յերկինս»\*\*\*\*\* և ի բիրաւոր բանակս հրեշտակաց և յեկե-  
 25 ղեցիս անդրանկաց գրելոցն յերկինս, զաթոռն Աստուծոյ ի վերայ երկրի  
 տեսանել, և զդատաւորն ամենեցուն զԱստուած տեսանելով բազմեալ յերկ-  
 նաւոր խորանի և ի վերայ աստուածընկալ խարսխիդ: Իսկ իբրև զարձոյց  
 բարձրեալն զերեսս իւր ի մէնջ, և նայեցաւ ի մեզ խեթիւ արեգակնն<sup>407</sup>  
 և հետեւելով հետեցան անձինք մեր և խռովեցաք: Տեսոն Աստուծոյ  
 30 մերում արդարութիւն, և մեր ամաւթ երեսաց: Այլ յորժամ կամեցաւ  
 Աստուծոյ մարդասիրութիւնն ի վերայ կործանելոցդ սաստկութեամբ  
 առնել բարեբարութեամբ քաղցրութիւն, բնկղմեցաք ի խորութիւն բարձ-

\* Հմմտ. Ա. Կորնթ. Ա, 9, Ժ, 13

\*\* Եսայի, Խ, 1, 2

\*\*\* Եբր. ԺԲ, 6

\*\*\*\* Ա Պետր, Բ, 24, Եսայի, ՄԳ, 5

\*\*\*\*\* Եսայի Բ, 3 և Միքե, Դ, 2

\*\*\*\*\* Եբր. ԺԲ, 22, 23

2 Բով. նեղէ փխ. նեղէին: Տե՛ս ծան. 404:

3-4 Ա Միհրդ. գթութեամբն: Ա, Հ հաւտս փխ. հաւտս

5 Ա ուրախութիւն

10-11 Միհրդ. զի նորա վիրաւքն բժշկեցաք. ո՞ իցէ որդի, զոր ոչ խրատեսցէ զնա հայր իւր

11 Ա. Միհրդ. եթէ խրատ փխ. խրատ

14 Պատկ., Մայիս. չի՛ գամենայն

18 Ա աղբերացաւ

20 ՁՁ, չի՛ ասելով: Տե՛ս ծան. 405:

28 Ա, Միհրդատյանի մի օրինակը և Պատկ. ի քեզ խեթիւ

28 ՁՁ, Միհրդ., Պատկ. արեգականն

րութեան: Եւ ի վերայ այսր աւետաբեր նկարագրի՝ անդադար բերանովք անհանգիստ լեզուաւք զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զբարերարն և զսքանչելագործն և զպարգևաբաշխն արհնեսցուք. զի թէպէտ և այնպէս ահագին և սաստիկ էր սուրակոխ և հրակէզ արնն դատաստանին քոյ, այլ

5 ճարտարապետն իմաստուն, որ ընտրեացն և սրբեաց զձեզ որպէս ոսկի ի բովս\* նոյն նորոգեսցէ՛ վերստին զփառս իւր ի վերայ քոյ, և զարմանալի արասցէ մխիթարութիւն իւր ի քեզ:

Այլ զայս ամենայն սիրելին մեր\*\* յառաջագոյն պատմեաց մեզ<sup>408</sup> յասելն իւրում զէջ Սիովնի յԵրիբով,— զանկեալդ ի ձեռս աւազակացն, որք

10 մերկացուցին զդա, և վէրս ի վերայ վիրաց եղեալ թողին կիսամահ և գնացին. տեսանել զդա քահանայից ճանապարհորդաց՝ և առնել զանց. տեսանել զդա հրէից և ղեւտացուոց և ամբարշտաց՝ և առնել զանց. զԽրովին ճանապարհորդելդ, գթութեամբդ մատչելդ, պատել զվէր դորա և արկանել ի դա զողորմութիւն և զարիւն կենարար: Ասէ ձէթ և գինի

15 արկանել ի վերայ դորա և պատել՝ զի բժշկեսցի: Որ ահաւասիկ տեսան ածեալ ի պանդոկի յայդ և դարմանել և ղերիս<sup>409</sup> դահեկանս\*\*\*, որ ետ ի պանդոկապետն՝ ահաւասիկ դոռ ունիս ի ձեռս քոյ դարման առատ: Եւ զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ իւրում գալստեանն հատուցէ քեզ:

Մի՛ այսուհետև ողբասցէ Սիովն<sup>410</sup>, և մի՛ զգեցցի սուգ Երուսաղէմ, քանզի աւաղիկ եկեալ հասեալ է արքայն Քրիստոս փրկել և մխիթարել. այլ պսակ մխիթարութեան քո ի ծաղկացու շարչարանաց նորա բոլորի,

521ր և մահ նորա թագ մխիթարութեան եղիցի ի վերայ գլխոյ քոյ: Յոյժ հաշէին և մաշէին շարքդ որդիքդ հրէից, ո՛վ սիրելի, զի ծառքդ քրիստոսեանք, զորս հատին տապարաւք կատաղութեամբն իւրեանց ի ձեռն անմիտ փայտահարաց՝ ահաւաղիկ արձակեցին շառաւեղք և բազմացան: Եւ ելից զդա բարձրեալն ձիթենեաւք և արմաւենեաւք, զոր խաչահանուացդ մանկունք և տեսանել անգամ մի՛ արժանաւորեսցին:

Բայց դուք, եղբարք, ըստ առաքելոյ ձայնին՝ ողջ լիւրուք ի Տէր, հաս-

\* Հմմտ. Յայտնութ., Գ, 18  
 \*\* Հմմտ. Դուկ. Ժ, 30—37  
 \*\*\* Հմմտ. Դուկ. Ժ, 35.

- 4 Ա. հրաղէզ
- 5 Ա. սրբեացն
- 8 Ա. այն փխ. մեր
- 15 Ա. բժշկեսցէ: Միհրդադայանի մի օրինակում հետան փխ. տեսան: Մալխայանցը ծանոթագրում է. «թվի ուղեւի տեսանի»:
- 17 Ա. ունիս դու
- 18 ՏՏ լիք իւրում
- 20 Մալխ. այնուհետև, ՏՏ Սիւան, Ա Սիոն: Տե՛ս ծան. 410:
- 22 Ա. շարչարանացն
- 24 Ա. մարշէին փխ. մաշէին
- 26 Ա. ահաւասիկ, Միհրդ. ծանոթագրում է. «Ի բնագրիս՝ ահաւասիկ արձակեսցեն շառաւիղս»:
- 28 Ա. մանկունս: Միհրդ. ծանոթագրում է. «Ի միւսում՝ սանկունս»:
- 29 Ա. դու

տատուն կացէք, մխիթարեցարո՛ւք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք, և Աստուած խաղաղութեանց և սիրոյ եղիցի ընդ ձեզ\* ամէն

Գ Լ Ո Ւ Խ Լ Է

Շինումն տաճարին Հոփսիմեայ<sup>411</sup>:

5 Եւ եղև յամի Ի՛՛կ-երորդի թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովու քակեաց կաթուղիկոսն Կումիտաս զմատուռ սրբոյն Հոփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած և մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց կաթուղիկոսի, որդույ սրբոյն Ներսիսի:

10 Արդ՝ մինչդեռ քակէին զորմն մատրանն՝ երևեցաւ յանկարծակի լուսաւոր և շքնաղագիւտ արքունական մարգարիտն, այսինքն կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հոփսիմէի: Եւ քանզի անդամ անդամ յաւշեցին զնա, յաւշեալ ի միմեանց. եւ կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի<sup>412</sup> և մատանեաւ երանելոյն Սահակայ Հայոց կաթուղիկոսի, զոր նա ոչ հա-

15 մարձակեցաւ բանալ: Եւ կնքեալ իւրով ևս մատանեաւ, որ արժանի իսկ էր կնքել զայսպիսի մարգարիտ երից հաւատարմաց երրորդ մատանեաւ:

Ո՛վ մարգարիտ, որ ոչ ծովածին, այլ մարգարիտ, որ ծնեալ ի թագաւորական ազգէ, և սնեալ ի գիրկս սրբութեան և նուիրեալ Աստուծոյ, որում ցանկացեալ էին տեսանել զքեզ արդարք, և խանդակաթ էր ի սէր

20 քոյ երանելին Կումիտաս:

Չափ հասակի էր երանելոյն ինն թղաւ և շորս մատունս: Եւ զղրդեալ ամենայն կողմն հիւսիսոյ գայր յերկրպագութիւն. և բազում ախտաժեւաց լինէր բժշկութիւն ամենայն ցաւոց: Շինեաց զեկեղեցին, և զերանելին եթող ի բացեայ վասն զիջութեան որմոցն, մինչև ցամաքել կրոյն:

25 Ապա ամփոփեցաւ ի կայեանս իւր:

Վերացոյց և զփայտայարկս սրբոյ կաթուղիկէին. նորոգեաց և <sup>522</sup>զխախուտ որմոյն. շինեաց զքարայարկսն: Այս եղև յամս//Յովհանկան վանաց երիցու սրբոյ կաթուղիկէին:

\* Բ Կորնթ., ԺԳ, 11

4 Ա.Գ.Ե, շի՛ Շինումն տաճարին Հոփսիմեայ: ՏԵ՛ս ծան. 411:  
 5 Ա շի՛-երորդի  
 6 Ա կաթուղիկոսն  
 8 Ա որդոյն  
 10 Ա մատրեանն Ա շի՛ երևեցաւ  
 12 Ա մարմնոյ  
 13 Բոյ, և երանելի սրբոյն Գրիգորի կնքեալ մատանեաւ իւրով փխ. և կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի: ՏԵ՛ս ծան. 412:  
 24 Սիհոդ., Պատկ. որմոյն  
 25 Ա ի կայանս

## Գ Լ Ո Ւ Խ Լ Ը

Դալ խոռեմայ առնուլ գԿոստանդնուպոլիս. ողոքանք Հերակղի. հրաման ի խոսրովայ՝ առնուլ զբաղաբն: Ի նաամարտի բեկանի գարուրթին Պարսից: Ժպիրն հրովարտակ խոսրովայ առ Հերակղ: Նստուցանել Հերակղի 5 գԿոստանդին յաթոռ քագաւորութեանն եւ գնալ ի Կեսարիա: Արշաւել անտի ի Հայս եւ առնուլ գԻուրին, գնախնաւան եւ գԳանձակ: Հասանել խոռեմայ ի վերայ Հերակղի: Ճարտար շարժմունք Հերակղի եւ կոտորել գՊարսիկս մասն առ մասն:

Եւ եղև յայնմ ժամանակի դիմեաց զնաց խոռեամ զարու իւրով ի 10 Քաղկեդոն, և բանկեցաւ<sup>413</sup> դէմ յանդիման Բիւզանդիայ, և խնդրէր անցանել և գերել զքաղաքն թագաւորանիստ:

Արդ իբրև ետես կայսրն Երակղոս զՏէնն, որ եկն ի կործանել զթագաւորութիւն նորա՝ ահամայ բարեկամանայ և մեծարէ զնոսա իբրև զվաստակաւորս և զսիրելի հիրս. ել ընդ առաջ նորա պատարագաբ, և 15 տայր զարավարին և իշխանացն մեծամեծ ընծայս: Եւ բաշխէր զարացն<sup>414</sup> հոռզս, և ճաշ և ընթրիս ամենայն զարացն մինչև ցեւթն ար. և ինքն նստեալ ի վերայ նատը՝ կայր ի մէջ ծովուն և խաւէր ընդ նոսա այսպէս. «Զի՞նչ կամիք առնել, կամ է՞ր եկիք ի տեղիս յայս. մի՞թէ զծով իբրև զցամաք համարիք՝ մարտնչել ընդ նմա: Կարող է Աստուած, եթէ 20 կամի, ցամաքեցուցանել զսա առաջի ձեր. բայց զգոյշ լերուք՝ գուցէ ոչ հաճեսցի Աստուած և խնդրեսցէ ի ձէնչ զվրէժ անդունդք<sup>415</sup> ծովուս: Քանզի ոչ եթէ վասն աստուածպաշտութեան ձերոյ ետ ձեզ յաղթութիւն, այլ վասն մերոյ անարէնութեան. մեղք մեր արարին զայս, և ոչ թէ քաջութիւն ձեր: Եւ կամ դի՞նչ խնդրէ թագաւորն ձեր յինչն, որ ոչ առնէ ընդ 25 իս զհաշտութիւն. բառնա՞լ կամիցի զթագաւորութիւնս իմ. մի՞ ջանասցի<sup>416</sup>, քանզի զսա Աստուծոյ հաստատեալ է, և բառնալ զսա ոչ ոք կարէ, բայց եթէ յԱստուծոյ այնպէս ինչ թուեսցի, կամք Աստուծոյ կատարեսցին: Եւ կամ ասիցէ, եթէ ես նստուցից ձեզ թագաւոր. արասցէ զո՞վ և կամեսցի, և մեք ընդունիմք: Այլ զքէն արեան Մարկա՞յ խնդրիցէ. 30 խնդրեաց Աստուած ի ձեռաց Փոկասայ ի ձեռն հար իմոյ Հերակղի<sup>417</sup>... այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեամբ: Մինչև յե՞րբ ոչ յազեսցի արեամբ. միթէ ո՞չ կարէին Հոռոմք սպանանել զնա և բառնալ զտէրու- 35 թիւնն Պարսից, յորժամ ետ զնա Աստուած ի ձեռս մեր. այլ արար ի

9 Ա զարուն

10 Բոլ. բնակեցաւ: Տե՛ս ծան. 413: Ա Բիւզանդեալ

11 Ա գերել փխ. և գերել

12 Ա երակղոս, Ա եկն կործանել

19 Ա ընդ սմա փխ. ընդ նմա

21 Պատկ. ծովուն

25-26 ԶԶ, Միհրդ. ջանասցի փխ. մի՞ ջանասցի: Տե՛ս ծան. 416:

28 Ա ձեր փխ. ձեզ

30 Ա Երակղի: Այս բառից հետո բնագրում զգացվում է պակաս: Տե՛ս ծան. 417:

վերայ նորա ողորմութիւն: Եւ ես զնոյն խնդրեմ ի նմանէ, զհաշտութիւն  
 և զսէր: Եւս ես խնդրեմ ի ձէնչ երիս ինչս, և լուարձք ինձ. ի բաց  
 արարէք յաշխարհէս զհօր և զսուր և զգերութիւն. և յերիցունցդ աւգուտ  
 գտանէք, զի ոչ դուք նուազիք ի սովու, և ոչ հարկք արքունի կորնչիցին:  
 522բ Եւ ես առաքեմ աւասիկ թագաւորին ձերոյ/հրովարտակ պատարագաւք,  
 խնդրել ի նմանէ զհաշտութիւն և ընդ իս զխաղաղութիւն»<sup>418</sup>: Եւ նոցա  
 ընկալեալ զընծայան՝ հաւանեցան առնել ըստ խնդրոյ նորա<sup>419</sup>:

Իսկ թագաւորն Պարսից ընդունէր զպատարագան բերեալ ի կայսերէ,  
 և զհրեշտակն անդրէն ոչ արձակէր: Եւ հրաման տայր զաւրաց իւրոց  
 10 նաւաւք անցանել ի Բիւզանդիա: Եւ կազմեալ նաւ սկսաւ պատրաստել  
 նաւամարտութիւն ընդ Բիւզանդիայ: Եւ ելին ընդ առաջ նորա ի Բիւզան-  
 դիոյ զաւրք նաւամարտիկ: Եւ եղև պատերազմ ի մէջ ծովուն, ուստի  
 դարձան ամաւթով զաւրքն Պարսից. և կորեան Դ հազար մարդ նաւաւք,  
 և այլ ոչ ևս համարձակեցան ի նոյն գործ:

15 Եւ եղև յամի ԼԴ-երորդի Խոսրովայ արքայի՝ գրէ առ Երակղոս  
 հրովարտակ այսպէս.—

«Աստուածոց պատուական և ամենայն երկրի տէր և թագաւոր և  
 ծնունդ մեծի Արամազդայ Խոսրով՝ առ Երակղոս անմիտ և անպիտան  
 ծառայդ մեր:

20 «Ոչ կամեցեալ տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագա-  
 ւոր կոչես զքեզ. և զանձ իմ որ առ քեզ են, ծախես<sup>420</sup>, և զծառայս իմ  
 պատրես, և զզարս աւազակաց ժողովեալ՝ շտաս ինձ հանգչել: Ո՞չ  
 ապաքէն սպառեցի զՅոյնս: Եւ դու ասես վստահանալ յԱստուածն քոյ.  
 վասն է՞ր ոչ փրկեցին<sup>421</sup> զԿեսարիա և զԵրուսաղէմ և զԱղեքսանդրիա<sup>422</sup>

25 մեծ ի ձեռաց իմոց: Միթէ և այժմ ո՞չ գիտես, եթէ զծով և զցամաք ինձ  
 հնազանդեցուցի. իսկ արդ՝ միայն զԿոստանդնուպոլիս ոչ կարացից  
 բրել: Բայց արդ՝ զամենայն յանցանս թողում քեզ. արի՛, ա՛ռ զկին քո և  
 զորդիս և ե՛կ այսր: Եւ տաց քեզ ագարակս, այգիս և ձիթենիս, որով  
 կեցցես. և մեք սիրով նայեսցուք ի քեզ: Մի՛ խաբեսցէ զքեզ սնտաի յոյսն

30 ձեր. զի Քրիստոսն այն, որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի  
 Հրէիցն, այլ սպանին կախեալ<sup>423</sup> զփայտէ, զքեզ զիա՞րդ կարէ ապրեցու-  
 ցանել ի ձեռաց իմոց: Զի եթէ իջանիցես յանդունդս ծովու՝ ձգեցից զձեռն  
 իմ և ըմբռնեցից զքեզ\*. և ապա տեսցես զիս, որպէս դու ոչ կամիցիս»:

\* Հմմտ. Սաղմ., ՃԼԹ, 10

3 Պատկ., Մալխ. յերեցունցդ  
 4 Հ կորնչիցեն, Միհրդ. կորնչելոց են  
 5 ՏՏ թագաւորի  
 9 ՁՁ, Միհրդ., Պատկ. անդէն  
 10 Ա ընդ Բիւզանդիայ  
 15 ՏՏ Երակղէս  
 20 Միհրդ., Պատկ. չիք մեզ  
 24 Ա զԱղէկսանդրիայ, Մալխ. Աղեքսանդրիա  
 30 Ա չիք զի, Ա չիք իւր  
 31 Բոլ. կապեալ փխ. կախեալ: Տե՛ս ծան. 423:

Եւ առեալ Երակլի կայսեր զհրովարտակն՝ հրամայեաց ընթեռնուր առաջի հայրապետին և մեծամեծացն: Եւ մտեալ ի տունն Աստուծոյ՝<sup>523</sup> տարածեցին զհրովարտակն առաջի սրբոյ սեղանոյն. անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր/առաջի Տեառն, և լացին դառնապէս, զի տեսցէ.

5 զնախատինսն, զոր նախատեցին զնա թշնամիք նորա:

Հաճոյ թուեցաւ Երակլի և ամենայն սինկղիտոսացն նստուցանել զԿոստանդոս որդի Երակլի յաթոռ թագաւորութեանն, որ էր մանուկ փոքր: Եւ Երակլի հանդերձեալ զինքն՝ առնուլ զկին իւր և գնալ ընդ արևելս. ապա յայնժամ աւելի ևս հաստատեցին զԿոստանդին ի պատիւ.

10 թագաւորութեան ըստ առաջին բանին:

Ապա պատրաստեցաւ Երակլոս կնան և ներքինեալքն և իշխանաւք դրանն և արար զգատիկն ի Կոստանդնուպոլիս, և զայգոյ գատիկն<sup>424</sup> նաւեաց ի ծով ի Քաղկեդոն: Հրաման տայ զաւրաց իւրոց ժողովել ի Կեսարիա Կապադովկացւոց. և ինքն շու արարեալ ի Քաղկեդոն՝ եկն ի

15 Կեսարիա, և եհար զխորան իւր ի մէջ բանակին, և կոչել հրամայեաց զամենայն զաւրսն և ընթեռնուլ զհրովարտակն առաջի նոցա, և պատմէր զելն իւր առ նոսա: Իսկ զաւրն թէպէտ և ընդ բանսն խոռովեցան, սակայն խնդութեամբ ուրախ եղեն ի վերայ զալատեան նորա: Աւրհնեցին նմա զյաղթութիւնն և ասեն. «Ամենայն ուրեք ո՛ր և երթիցես՝ ընդ քեզ եմք

20 ի կալ և ի մեռանել. և եղիցին ամենայն թշնամիք քոյ հող ի ներքոյ ոտից քոց, ի ջնջել զնոսա յերեսաց երկրէ տեառն Աստուծոյ մերոյ, և ի բռնալ զնախատինս իւր ի մարդկանէ»: Չուեաց գնաց Երակլոս ճի հազարա՝ երթալ<sup>425</sup> ի դուռն թագաւորին Պարսից. և ճանապարհ կալեալ ընդ կողմանս հիւսիսոյ՝ ել դէպ ուղիղ ի Կարնոյ քաղաք<sup>426</sup>, և հասեալ ի 25 Դուին այրարատեան՝ աւերէ զնա և զնախճաւան: Եւ դիմեալ ի Գանճակ Ատրպատականի<sup>427</sup> կործանէ և զբազինս Հրատին մեծի, որում Վըշնասպն<sup>428</sup> կոչէին:

Եւ արքայ Խոսրով փութացուցանէր զզաւրս իւր որ ի Յունաց գաւառին, զի հասցէ նմա յաւգնականութիւն: Զի թէպէտ և կազմեցին զերիվարս իւր, և ետ ի ձեռս Շահենայ պատգոսապանի, այլ նուազ էր զաւրն և չկարացին ունել զդէմ. զգանձս իւր ամբարէր ի Տիգրոն, և ինքն պատրաստէր ի փախուստ:

\* Հմմտ. Եսայի, 12 և 15

6 Ա սրնկղիտոսացն  
 9 Միհրդ., Պատկ. յարևելս փխ. ընդ արևելս  
 12 Ա Կոստանդինուպոլիս  
 12 ԶԶ, Միհրդ., Պատկ. գատիկն: Տե՛ս ծան. 424:  
 20 Մալխ. ծանօթագրում է. «Կալ ուղղելի կեալ»:  
 21-22 Ա ի բռնալ փխ. և ի բռնալ  
 23 Բոլ. և երթեալ փխ. երթալ: Տե՛ս ծան. 425:  
 25 Ա Դըլին  
 26 ԶԶ, Միհրդ., Պատկ. արի գիւղն (գեաւղն) այն փխ. Ատրպատականի: Տե՛ս ծան. 427:  
 27-28 Ա Վնասպն կրէին փխ. Վշնասպն կոչէին Միհրդ. մի օրինակը՝ Վշնասպն կրէին. Մալխ. Վշնասպն կոչէին: Տե՛ս ծան. 428.

Իսկ զարն Պարսից փութանակի հասանէին ի Մրծուին: Ազդ լինի  
 Երակլի կայսեր, եթէ եկն Խոռեամ ի Մրծուին<sup>429</sup> առնու զզարս իւր և  
 523բ գերութին, և դառնայ առ ամուր տշխարհան Մարաց. զայ հասանէլի  
 Փայտակարան: Ազդ եղև Խոսրովու, եթէ դարձաւ Երակլոս և եհաս ի  
 5 Փայտակարան, և կամի ընդ Աղուանս անցանել ի Վիրս. հրաման ետ  
 զարավարի իւրոյ Շահր Վարազայ, զի զառաջն կալցի: Եւ նա փութով  
 հասանէ յԱյրարատ, և անցանէ ի Գարդման ընդդէմ նորա, և բանակի ի  
 միւս Տիգրանակերտի<sup>430</sup> յանդիման նորա: Եւ Շահէնն լի-աւ հասեալ  
 բանակեցաւ ի թիկանց Երակլի ի Տիգրանակերտ ականի: Եւ էին սոքա  
 10 աստի, և նոքա անտի բանակեալ: Եւ բանակն Երակլի ի մէջ նոցա եր-  
 կոցունց:

Իբրև ետես Երակլոս, եթէ ի մէջ արկին զնա՝ դարձաւ ի վերայ զաւ-  
 րուն՝ որ ի թիկանց կողմանէ, հապճեպ զարութեամբ եհար զնա և խոր-  
 տակեաց և զնաց ընդ Ծղուկս<sup>431</sup>. և թափեցաւ ընդ լեռնակողմն ի դաշտն  
 15 Նախճաւանի<sup>432</sup> ի ձմերան ժամանակի:

Եւ Շահր Վարազ զարու իւրով, և Շահէնն իւրովք գերծելովք զնացին  
 զհետ նորա: Իսկ նորա հասեալ անցանէ ընդ հուն գետոյն Երասխայ՝  
 յաւանն Վրնշունիս<sup>433</sup> և բանակի յանդաստանս նորա: Եւ զարն Պարսից  
 հասեալ՝ ոչ կարացին անցանել զգետովն այն աւրն: Հասանէ Երակլոս ի  
 20 Բազրեանդ և անցանէ յԱպահունիս, և բանակի ի գելդն, որ կոչի Հրձմունք:  
 Եւ Շահր Վարազ սփռէր զզարս իւր յԱղիովիտ, և ինքն այրընտիր եղեալ  
 2 Ջ հազար սպառազինաց վառելոց քաջաց, և երթեալ նստի յԱրճէշ դա-  
 ւառի՝ դարանամուտ լինել, որպէս զի ի մէջ գիշերի անկցի ի վերայ բա-  
 նակին Երակլի:

25 Ազդ լինի Երակլի ի ձեռն արձակելոյ լրտեսաց, եթէ եկն Խոռեամ և  
 դարանակալ եղև ի վերայ քոյ: Յայնժամ Երակլոս ըստ նմին աւրինակի  
 այրընտիր և ձիւրնտիր առնէ, և յարձակի ի վերայ նորա քսան հազարաւ,  
 և հասեալ յԱղի, գտանէ զարսն յառաջմարտիկ հինգ հարիր: Նախ՝  
 զնոսա կոտորէ. և զերծեալ մի ոմն ի հեծելոցն՝ հասեալ ի յԱրճէշ գոյժ  
 30 արկանէ Խոռեմայ, եթէ հասեալ է թշնամին ի վերայ քոյ, և կոտորեցին  
 զզարն պէշոպա<sup>434</sup> յԱղի<sup>435</sup>: Եւ բարկացաւ Խոռեամ ի վերայ առնն,  
 հրամայեաց զնա կապել ոտիւք և ձեռաւք, և ասէ. «Երակլոս ցարդ յինէն  
 փախստական զնայր. արդ եկեալ հասեալ եմ այսպիսի զինու, և նա  
 524ա յինէն ո՞չ փախիցէ»: Այն-ինչ նորա բանքն ի բերան էին, և ինոքա հասին  
 35 ստիպով ի վերայ նոցա, պատեցին զքաղաքն երեք կուսէ, և բորբոքեցին

7 Ա. յԱրայրեատ  
 8 Ա. Տիգրանակերտի  
 13 Միհրդ., Պատկ. հապճէպ  
 14-15 Ա. լեռնակողմն, Բոլ. Նախճուանն փխ. Նախճաւանի: Տե՛ս ծան. 432:  
 21 Ա. յԱղովիտ, Ա. այրընդիր  
 27 Ա. այրընդիր և ձիւրնտիր  
 28 Միհրդ. զարսն, Մալխ. ծանոքագրում է. «զարսն բերևս ուղղելի զարսն»:  
 28 Միհրդ. քաջամարտիկ փխ. յառաջմարտիկ  
 30 Ա. խոռեամ  
 34 Ա. բարանն էին  
 35 Ա. Գ-կուսի



զնա հուրբ և այրեցին զգարացն բաղմութիւնս: Են եթէ ելանէր ոք ի նմանէն ի փախուստ՝ անզէն ըմբռնեալ սատակէին. և ապրեալ ոչ ոք ել ի նոցանէ, զի զամենեսին եկեր հուր ահագին: Բայց Շահր Վարազ զերծաւ՝ նստեալ ի վերայ նուաստ երիվարի. այնպէս զերծեալ գնաց առ 5 զաւրս իւր, զոր ժողովեալ էր յԱղիովիտ գաւառի:

Իսկ Երակլոս առ զաւար և զկապուտ բանակի նոցա, դարձաւ յաղթութեամբ մեծաւ, և երթեալ հասանէ ի կողմանս Կեսարացոց. և Շահր Վարազ գնաց զհետ նորա փութանակի: Բայց զի յաւգնեալ էր զաւրն՝ խորհեցաւ բազում գաւառս ընդ մէջ արկանեւ, զի հանգիցէ զաւրն և 10 կազմիցի. և գնացեալ ի կողմանս Ասիացոց՝ անդ սփռեալ դադարեցին:

Յայնժամ առեալ Երակլի զզաւրս իւր՝ դարձաւ յերկիրն Հայոց, անցեալ ընդ Շիրակ հասանէ ի հուն գետոյն Երասխայ, և անց ընդ գետուն առ Վարդանակերտան<sup>436</sup> աւանաւ, երթեալ թափեցաւ ի Գոգովիտ գաւառ: Եւ Ռոճ Վեհանայ<sup>437</sup> և զաւրուն Պարսից կարծեցեալ զնոսա փախստական 15 գնաւ: Իսկ նորա ճանապարհ կալեալ ի Հեր և ի Զարեանդ գաւառ, դէպ ուղիղ ի Տիզբոն ի վերայ նոսրովու: Եւ իբրև միջամուխ եղև ի սահմանս Ատրպատական գաւառի՝ ապա ուրեմն լուր եղև Ռոճ Վեհանայ. առ զզաւրս իւր և գնաց զհետ նորա ի Նախճուան քաղաք: Այնպէս փութով գնացեալ զտիւ և զգիշեր, մինչև շոգաւ եհաս մերձ ի նա: Եւ նորա անկեալ 20 յայնկոյս լերինն Զարասպայ<sup>438</sup> յերկիրն Ասորեստանեաց: Եւ սոքա պնդեցան զհետ նորա. և նոցա դարձեալ ընդ արևմուտս՝ գնաց ի Նինուէ: Եւ եկեալ այլ զաւրս յաւգնականութիւն Ռոճ Վեհանայ ի դրանէ արքային՝ արք ընտիրք յամենայն թագաւորութենէն, և խառնեալ ի միմեանս՝ հետամուտ եղեն Երակլի: Իսկ Երակլոս ձգեաց զնոսա մինչև ի դաշտն 25 Նինուէի, և դարձ ետ ի վերայ նոցա սաստիկ զաւրութեամբ. և էր բալ ի վերայ դաշտին: Եւ ոչ գիտացին զաւրն Պարսից զդարձն Երակլին ի վերայ նոցա, մինչև երթեալ խառնեցան ընդ միմեանս:

Եւ այնպէս զաւրացոյց տէր ողորմութիւն իւր ի վերայ Երակլի յա- 524բ ւորվ յայնմիկ, մինչև հարեալ սատակեցին զնոսա իբրև զայր մի և սպա- 30 նին զզարաւարն ի պատերազմի: Եւ զմնացեալսն շրջափակ արարեալ՝ կամէին զամենեսեան սատակել: Իսկ նոցա բողոք կալեալ, թէ «Աստուածասէր և բարերար տէր, արա՛ ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ և չեմք արժանի ողորմութեան»: Յայնժամ Երակլոս հրամայեաց զնոսա թողուլ ի բաց: Եւ ինքն հրամայեաց Երակլոս ասպատակել ի վերայ 35 երկրին:

4 Ա. զերծեալ

7 Ա. չիք և

14 Բով. Ռոճիկ Վահանայ: Տե՛ս ծան. 437:

16 Ա. Դիզպոն փխ. Տիզբոն

18 Ա., Գ Նախըւան, Բ Նախճուան Ե Նախըւան

20 Ա. Ասորեստանեաց

22 Ա. արքայի, Միհրդ., Պատկ. ընտիր

32-33 Միհրդ., Պատկ. չիք թէպէտ և չեմք արժանի ողորմութեան

Գ Լ Ո Ի Խ Լ Թ

Փախուստ խորովայնի վեհկալատ. առնույ շերակի զՏիզբոն եւ դառնայ յԱտրպատական: Դարձ խորովայն անդէն ի Տիզբոն եւ սպանումն: Թագաւորել որդոյն նորա Կաւատայ եւ առնել հաշտութիւն ընդ շերակի, 5. ունելով երկախանջիւրաց զինն սահմանս իւրեանց:

Իսկ խորով արքայ Պարսից փախստական զնաց՝ անցանել ընդ Դիլաթ գետաւ ի վեհկալատ<sup>433</sup>, հատեալ զլարս նաւակամրջացն: Եւ Երակլոս հասեալ բանակեցաւ առ դուրս մերձ Տիզբոն քաղաքի, և այրեաց զամենայն ապարանս թագաւորականս շուրջ զքաղաքան: Եւ ինքն զնաց 10 յԱտրպատական ամենայն աղիսին և բազմութեամբ իւրով, զի էին միտք Երակլի զարհուրեալ ի խոռեմայ: Իսկ խոռեմ ոչ եկն խորով արքայի յազնականութիւն, այլ եկաց անդէն ուր էրն ի կողմանս արևմտից: Եւ խորով արքայ դարձաւ անդրէն ի տուն, և հրամայեաց կազմել զնաւակամուրջսն: Բայց տիկնայքն և որդիքն արքայի և զանձն և ախոռն ար- 15 քունի երիվարացն էին ի վեհկալատ:

Սկսաւ խորով ժողովել զմնացեալ նախարարսն. և խաւսէր ընդ նոսա ահագին դատաստանաւք, եթէ «Ընդէ՞ր և ոչ դուք մեռարուք ի տեղ- 20 տը պատերազմին, բան եթէ գալ առ իս. արդեօք զխորով մեռեա՞լ կարծէիք»: Յայնժամ խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ասեն. «Թէպէտ Ի թշնամեացն ապրեցաք, բայց ի ձեռաց դորա ոչ գոյ մեզ ապրել. այլ եկայք իմասցուք ինչ»: Յայնժամ երդուան առ միմեանս, և զնացեալ ի զիշերի ընդ զոմն ի վեհկալատ, կալան զնա և կարգեցին ի վերայ նորա պահապանս. և թագաւորեցուցին զԿաւատ զորդի նորա. նաև զերիվարսն որով եկեալ էր խորով ի Տիզբոն՝ հանին զաղտաբար: Իսկ յորժամ եհաս 25 գոյժ աղաղակին այտորիկ առ խորով՝ ընդոստուցեալ յահէն՝ զարհուրեցաւ. խնդրեալ երիվար, և մտեալ յասպաստանն ոչ գտին: Եւ արքայ Կաւատ եկն անց ամենայն զաւրաւքն իւրովք: Եւ արքայ խորով յայլա- 25ա կերպս եղեալ եմուտ ի բուրաստանն արքունի, և//մտեալ ընդ թաւ թփով ծաղկոցին՝ զաւղեալ զաղաբեաց: Եւ եկեալ Կաւատ արքայ հրամայեաց 30 խնդիր առնել, և զնացեալ ի բուրաստանն՝ գտին զնա. կալան զնա և ածին ի դահլիճ անդր<sup>440</sup>: Եւ հրամայեաց Կաւատ արքայ, և սպանին զնա: Եւ վասն որդուցն խորովու ասեն նախարարքն. «Ոչ է արժան ապրել նոցա. զի խոտվութիւն յարուցանեն»: Յայնժամ հրաման ետ արքայ Կաւատ, և սպանին զամենեսին ի միում ժամու արս Խ. և խնդրեաց յինքն զտիկ- 35 նայս և զզանձս և զախոռ արքունի:

Ապա սկսաւ արքայ Կաւատ խորհուրդ առնել ընդ նախարարս թա-

7 Ա զկլաթ, Ա նաւակարմրնջացն  
 8 Պատկ. դուս փխ. դուրս Ա ի Տիզբոն փխ. Տիզբոն  
 10 Ա ախին  
 11 Ա խոռէամայ Ա խոռէամ  
 13-14 Ա նաւակարմուրջսն  
 24 Ա Տիզբոն  
 30-31 Ա, 22, Միեռդ., Պատկ. ածին դահլիճ անդր փխ. ածին ի դահլիճ անդր: Տե՛ս ծան.  
 440:  
 35 Ա զախոռս

գաւորութեանն իւրում, եթէ «Պարտ է հաշտութիւն առնել ընդ կայսեր, և ի բաց թողուլ զամենայն սահմանս թագաւորութեան նորա. և ընդ ամենայն կողմանս հաշտութիւն արասցուք»: Եւ հաւանեցան միաբանութեամբ առնել այնպէս: Յայնժամ հրամայէ Կաւատ արքայ զրել առ 5 Երակլոս հրովարտակ ողջունի. և թողու ի բաց զամենայն սահմանս նորա: Եւ տայ տանել նմա երդումն. աղ կնքել և տանել ընդ հրովարտակին. արձակէ զՌաշնան<sup>441</sup> ոմն իշխան մեծամեծ ընծայիւք՝ հաստատել զնա ի վերայ միաբանութեանն այնորիկ:

Արդ՝ իբրև եհաս Բաշնայն և ետ աւետիս և մատոյց զհրովարտակն, 10 և կալաւ զառաջեաւ զընծայսն՝ մեծապէս զոհացան զԱստուծոյ Երակլոս արքայ և ամենայն զարք իւր: Յայնժամ հրաման ետ արքայ Երակլոս արձակել զբազմութիւն գերութեանն և զաւարն ամենայն ի բաց տալ: Եւ զրէ կտակ արհնութեան, և հաստատէ խաղաղութիւն հանդերձ երդմամբ, և արձակէ զոմն յիւրոց զլիսաւոր նախարարացն, որում անունն էր Յուս- 15 տաթ, հանդերձ մեծամեծ ընծայիւք: Եւ զՌաշնայն մեծարեալ՝ լնու պատուական գանձիւք և արձակէ: Եւ իւր չուեալ խաղաղութեամբ զնաց ի տեղի իւր:

Եւ Յուստաթ երթեալ ընծայիւք առաջի Կաւատայ արքայի, և մատուցանէ զհրովարտակն, և առաջի ունի զընծայսն: Իսկ արքայ Կաւատ 20 խնդութեամբ ընկալաւ զնա. և դարձեալ վերստին հաստատէ առ նմա զբանս խաղաղութեան և սահմանացն հատելոց երդմամբ հրովարտակաց. և կնքեաց աղ ըստ առաջին օրինակին ընդ Յուստաթ, ըստ առաջին<sup>442</sup> 535բ իթագաւորաց: Եւ յանդիման նորա հրամայէ զրել առ Շահր Վարազ, զի ժողովեսցէ զզարն և եկեսցէ անցցէ յերկիրն Պարսից, և ի բաց թողցէ 25 զսահմանս Յունաց. թէպէտ և նա ոչ կամեցաւ լսել հրամանին այնմիկ: Եւ զՅուստաթ արձակեցին լի գանձիւք, և զնաց:

#### Գ Լ Ո Ի Խ Խ

Վարագատիրոց կարգի մարգպան Հայոց: Նստել յաթոռ կաթողիկոսութեան Քրիստափորի եւ զկնի նորա Եգրի: Մահ Կաւատայ. թագաւորել 30 Արտաշրի մանկան: Խոռեամ ըստ խոհորդոյ եւ աւգնականութեամբ Հեռակլի առնու զՏիգրան, սպանանէ զԱրտաշիւր եւ ինքն թագաւորէ. զխաչն տէրունեան դարձուցանէ Յունաց: Սպանումն Խոռեմայ, թագաւորել Բորոյ դստեր Խոսրովայ, Ազարմիդիստոյ եւ Ռմգդի սակաւ ժամանակս եւ ապա Յակեբտի, որդոյ Կաւատայ: Պառակտումն տէրու- 35 թեանն Պարսից:

Յայնժամ կոչէ արքայ. Կաւատ զՎարագատիրոց զորդի Սմբատայ Բագրատունոյ Խոսրով Շում կոչեցելոյ, և տայ նմա զիշխանութիւն

7 Ա. զոռաշան ոմն: Տե՛ս ծան. 441:

9 ԶԶ, Միւրդ., Պատկ. Ռաշն այն փիւ. Ռաշնայն

11 Ա. ամենայնի

22-23 Բոյ. եւ կնքեալ աղ ըստ առաջին օրինակին զՅուստաթ ըստ առաջին թագաւորաց փիւ. կնքեաց աղ ըստ առաջին օրինակին ընդ Յուստաթ, ըստ առաջին թագաւորաց: Տե՛ս ծան. 442:

36-37 Ա. Սմբատա Բագրատունո Խոսրով Շումբն

տանուտէրութեանն. առնէ զնա մարդպան և արձակէ ի Հայս հանդերձ  
ամենայն ընչիւք հայրենի, զի վաշխարհն ի շինութեան պահեսցէ: Եւ  
իբրև եկն նա ի Հայս՝ խնդութեամբ ընկալան զնա ամենայն աշխարհն  
Հայաստանեայց: Բայց զի մեռեալ էր երանելին Կոմիտաս կաթողիկոսն  
5 և կայր տեղին անհրամանատար՝ խորհուրդ առնէր ընդ ամենեցուն  
տեսանել զոմն արժանաւոր: Յայնժամ առաջադրութեամբ Թէոդորոսի  
Թշտունեաց տեառն ընտրեցին զոմն անապատական՝ յԱբրահամեան  
տանէ, որում անուն էր Քրիստափոր: Զնա նստուցին կաթողիկոս, և նա  
զիպաւ այր հպարտ և ամբարտաւան, որոյ լեզու իւր էր իբրև զսուր  
10 սուսեր: Սա բազում խռովութիւն յուզեաց և արկ սուր ի մէջ ընդ ասպետ  
և ընդ եղբայր իւր շարախաւսութեամբ: Կալաւ սա զաթոռ հայրապետու-  
թեան ամս Բ. և յամին երրորդի եղին ի վերայ նորա բամբասանս: Եւ  
ժողովեալ զամենայն<sup>443</sup> եպիսկոպոսունս և իշխանս արարին քննութիւն:  
Եւ եկեալ արք երկու ի նորին ընտանեաց և վկայեցին զնմանէ առաջի  
15 ամենայն բազմութեանն: Ապա արձակեալ զոմանս չեպիսկոպոսաց ան-  
տի՝ և առին ի նմանէ զփակեղն պատուոյ քահանայապետութեան, և ըն-  
կեցին զնա ի կարգէն և հալածեցին զնա անարգանաւ: Եւ անդէն փու-  
թանակի նստուցին կաթողիկոս զԵզր ի Նիգ գաւառէ, որ էր առ երա-  
նելւոյն Կոմիտասաւ կարգեալ փակակալ սրբոյն Գրիգորի. և սա էր այր  
20 խոնարհ և հեզ, որ ոչ կամէր զոք ցասուցանել, և ոչ ելանէր ի բերանոյ  
նորա բան տգեղ:

Եւ արդ՝ միչդեռ խորհէր Կալատ արքայ շինութան աշխարհի, և  
կամէր ընդ ամենայն կողմանս խաղաղութիւն առնել, կեցեալ<sup>444</sup> ամիսս  
վեց՝ վախճանեցաւ: Եւ նստուցին թագաւոր զԱրտաշիր զորդի նորա. և  
526\* նա էր մանուկ տղայ: Յայնժամ//Երակղոս գրէ առ Խոռեամ այսպէս.  
«Կալատ թագաւոր ձեր վախճանեցաւ, և քեզ հասեալ է թագաւորութեանն  
այն աթոռ. և ես քեզ տամ զնա, և դաւակի քո յետ քո: Եւ եթէ զաւր պիտոյ  
է՝ արձակեցից յազնականութիւն որչափ և պիտոյ իցէ քեզ<sup>445</sup>, և ուխտ  
դիցուք ի մէջ իմ և ի մէջ քո հանդերձ երդմամբ, գրով և կնքով»: Յայն-  
30 ժամ դիւրաւ հաւանեալ Խոռեմայ՝ թողու ի բաց զԱղեքսանդրիա, և առեալ  
զամենայն զաւրս իւր և ի մի վայր գումարեաց, և թողեալ զնոսա, և ինքն  
սակաւուք զնաց ի ժամադիր տեղին, ուր ասացեալ էր նմա Երակղ<sup>446</sup>:  
Եւ տեսեալ զմիմեանս ուրախ լինէին մեծապէս: Յայնժամ երդուաւ նմա  
Երակղոս՝ տալ զթագաւորութիւնն զայն, և խոստանայ նոյնպէս որդոց  
35 նորա յետ նորա, և զաւր որչափ և պիտոյ իցէ: Եւ խնդրէր առաջին խնդիր  
ի նմանէ՝ զխաչն կենսաբեր, զոր դերեաց նա յԵրուսաղէմէ: Յայնժամ  
երդուաւ նմա Խոռեամ և ասէ. «Յորժամ հասից ի դունն արքունի՝ նոյն

1 Ա տանտիրութեանն

4 Ա, Պատկ. Կոմիտաս

6 Ա առաջնորդութեամբ փխ. առաջադրութեամբ

13 Բռլ. ամենայն փխ. զամենայն: Տե՛ս ծան. 443:

14 Ա զնմանէն

16 Ա զփակեղնն

26-27 ՏՏ հասեալ փխ. հասեալ է, Ա, Միհրդ. թագաւորութեանն աթոռոյ

30 Ա խոռեմայ Ա զաղէկասնդրիայ

36 Ա որ փխ. զոր

ժամայն խնդիր արարից խաչին և տաց բերել առ քեզ: Այլ և պայման սահման եղից՝ ցոր վայր և դու կամիցիս. արա՛ վասն նորա հաստատութիւն գրով և կնքով և աղիւ»: Եւ խնդրեաց ի նմանէ զար սակաւ, և մեկնեցան զնացին ի միմեանց:

- 5 Իսկ խոռեմայ առեալ զբազմութիւն զարաց իւրոց՝ զնաց ի Տիզբոն, և հրաման տուեալ ոմանց՝ սպանին զտղայ թագաւորն զԱրտաշիր, և ինքն երթեալ նստաւ յաթոռ թագաւորութեանն. և զամենայն արս զխատորս, որ ի դրանն կամ որ ի զարուն, յորում ոչ կարէր վստահանալ՝ հրաման ետ սրով ստնակել զնոսա, և զայլս կապանաւք ետ տանել առ
- 10 Երակլոս: Յայնժամ արձակեաց երանելին Երակլոս արս հաւատարիմս առ խոռեմ վասն տէրունեան խաչին: Եւ նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով՝ հագիւ հազ ետ ցարսն, որ եկեալ էին: Եւ նոքա առեալ զնացին փութանակի: Եւ ետ նոցա ինչս ոչ սակաւս. եւ մեծաւ ուրախութեամբ արձակեաց զնոսա պատուով:
- 15 Իսկ խոռեմ յաւուր միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական և նստեալ ի վերայ երիվարի շրջէր ի մէջ զարուն ցուցանել զինքն. յանկարծակի ի թիկանց կուտէ յարձակեցան ի վերայ նորա, հարին զնա և սատակեցին: Եւ թագաւորեցոցին զԲորն<sup>447</sup>, զուստր խոսրովայ, որ էր
- 526բ կին/նորին, և կարգեցին հրամանատար<sup>448</sup> ի դրանն զխոռոխ Որմիզդ,
- 20 որ էր իշխան կողմանց Ատրպատականի: Արդ՝ խոռոխն այն յղէ առ բամբիշն, ասէ. «Լե՛ր ինձ կին». և նորա յանձին կալեալ ասէ. «Ե՛կ միով արամբ հասարակ զիշերի, և ես արարից զկամս քո»: Եւ յարուցեալ հասարակ զիշերի միով մանկամբ զնաց. և իբրև եմուտ ի տաճարն արքունի՝ յարեան ի վերայ նորա պահապանք դրանն և հարեալ սպանին
- 25 զնա: Եւ կալաւ բամբիշն զթագաւորութիւն ամս Բ և մեռաւ: Յետ նորա խոսրով ոմն յազգէ Սասանայ: Եւ յետ խոսրովայ՝ Ազարմիզդուխտ զուստր խոսրովայ: Եւ յետ սորա Որմիզդ<sup>449</sup>, թոռն խոսրովայ, զոր խեղդամահ արարին զարն խոռեմայ: Եւ ապա թագաւորէ Յագկերտ որդի Կաւատայ, թոռն խոսրովայ, որ ունէր զթագաւորութիւնն երկելիւ, զի պատառեալ
- 30 բաժանեցան զարք աշխարհին Պարսից՝ յերիս մասունս: Զարմ մի այն՝ որ ի Պարսից և ի յարեկից կողմանէ, և զար մի խոռեմայ՝ որ յԱսորեստանեաց կողմանէ, և զար մի՝ որ յԱտրպատական կողմանէ: Բայց թագաւորութիւն նորա էր ի Տիզբոն, և ամենեքին միաբան պատուէին զնա միաբանութեամբ: Ամէն<sup>450</sup>:

3 Ա աղիւ փիւ. և աղիւ

8 Մալիս. զարսն փիւ. զարուն

13 Պատկ., Մալիս. սակաւ

15 Միհրդ., Պատկ. զհանդերձ

18 Բռլ. զԲորն: Տե՛ս ծան. 447:

15 ՏՏ հրամանատար: Տե՛ս ծան. 448:

21 Ա բամբիշն (նաև՝ հետո). Միհրդ., Պատկ. թէ փիւ. ասէ

25 Ա յետ սորա

27 Բռլ. Որմիզդի փիւ. Որմիզդ: Տե՛ս ծան. 449:

28 Ա խոռեմայ

33 Ա ի Տիզբոն

34 ՁՁ ասէ (կամ այս է) փիւ. ամէն: Տե՛ս ծան. 450:

Գ Լ Ո Ի Խ Խ Ա

Դարձ տէրունեան իաչին յերուսաղէմ: Կաթողիկոսն եզր ըստ հարկելոյ Մծէժի Գնունոյ քնդունի գժողովն Քաղկեդոնի եւ առնու պարգեւ զաղն Կողբայ: Գժտութիւն Վարագախրոցի ընդ իշխանս Ատրպատականի. խորհուրդ Մծէժի սպանանել զեա. փախուտա նորա առ Հերակլ եւ մեծաբել 5 ի նմանէ: Դավանանութիւն Աթալաբիկոսի ընդդէմ հաւր իւրոյ Հերակլի. չմիարանել Վարագախրոցի ընդ դաւանանսն. աքսոր նորա: Դաւիթ Սահառունի կարգի կիրապալատ: Թէոդորոս Թշտունի պահէ զաշխարհն Հայոց յապահովի:

Իսկ զտէրունեան սուրբ խաչն ընկալեալ երանելի աստուածասէր և 10 երջանիկ թագաւորին Երակլի՝ գումարէ զգաւր իւր յորդոր և խնդալից սրտիւ: Եւ շու յուղի անկեալ հանդերձ ամենայն թագաւորական սպասաւորութեամբն, պատուելով զնորք հրաշալի և զերկնատր գիւտն, և տարեալ հասուցանէ ի քաղաքն սուրբ հանդերձ ամենայն սպասուք եկեղեցոյ, որ ապրեալ էր ի ձեռաց թշնամեացն ի Բիւզանդիա քաղաքի: 15 Ապա անդ ոչ սակաւ ինչ լինէր ուրախութիւն յաւուր յայնմիկ ի մտանել նոցա յերուսաղէմ: Ձայն լալոյ և ողբոյ և հեղումն արտասուաց ահագին բորբոքման սրտից նոցա խանդաղատանաց, և կսկծելոյ աղեացն թագաւորին և իշխանացն և զարացն ամենեցուն և բնակչացն այնոցիկ որ ի մէջ քաղաքին: Եւ ոչ ոք կարէր երգել զտէրունեան երգս յահագին և 20 յաղիսողորմ խանդաղատանացն թագաւորին և ամենայն բազմութեանն: Եւ կարգեալ հաստատեաց ի տեղի իւր. և զամենայն սպասս եկեղեցեացն եղ յիրաքանչիւր տեղիս, և բաշխեաց ամենայն եկեղեցեացն և բնակչացն ըստ քաղաքին արհնութիւն<sup>451</sup>. և գինս խնկոց:

Եւ զնաց ինքն զձանապարհս իւր դէպ ուղիղ ի Միջագետս Ասորոց, 25 զի կալեալ հաստատեացէ ընդ ինքեան զքաղաքս սահմանացն: Եւ սահման հաստատեցաւ նոյն՝ որ առ Խոսրովաւ և Մարիաւ հաստատեալ էր: Եւ եկաց խաչն տէրունական յաստուածակերտ քաղաքին մինչև ցմեւանդամ առածն Երուսաղէմի յորդուցն Իսմայելի, և ապա զնաց փախըտական ի քաղաքն թագաւորանիստ հանդերձ ամենայն սպասուք եկե- 30 ղեցոյն:

Եկն ապա զարաւարն Յունաց Մծէժ Գնունին ի Հայաստան երկրէն, և յինքն կալաւ զամենայն երկիրն ըստ ասացելումն սահմանին: Ասէ ցկաթուղիկոսն ցճզը՝ երթալ նմա յերկիր սահմանացն Յունաց և հազորգել արինաւք ընդ կայսեր. ապա թէ ոչ՝ արասցուք մեզ այլ կաթու-

12 Ա չիք զսուրբ  
 13 Ա հասուցանէր  
 13 Միհրդ., Պատկ. սպասուք  
 14 Ա ի Բուզանդիայ  
 15 Ա ուրախութիւնք  
 17 Ա կսկծելոց  
 27-28 Ա միտանգամ  
 31 Ա Մեծեժ (Նակ՝ Նետո)  
 33 Ա յունացն Միհրդ., Պատկ. չիք յունաց

ղիկոս. և դու կա՛լ զիշխանութիւնդ քոյ ի Պարսից կողմանէ: Իսկ կաթուղիկոսն իբրև ոչ կարաց թողուլ զերկիր իշխանութեան իւրոյ՝ խնդրեաց ձեռնարկ հաւատոյ ի թագաւորէն: Եւ վաղվաղակի ւտաքեցաւ նմա տումար գրեալ ձեռամբ թագաւորին, և նզովեալ զնեստոր և զամենայն հեր-  
 5 ձուածողս, բայց ոչ էր նզովեալ զժողովն Քաղկեդոնի: Եւ զնաց կաթուղիկոսն յերկիրն Ասորեստանի, ետես զթագաւորն և հաղորդեցաւ ընդ նմա արինաւք: Եւ խնդրեալ ի թագաւորէն պարգևս զաղն Կողբայ, և առեալ զպարգևն՝ դարձաւ մեծաւ շքով ի տուն իւր: Եւ ապա յայնմհետէ նստէր ի մէջ բանակին Յունաց, մինչև զաւրավարին հաճոյանալ ըստ կամաց  
 10 նորա կարգէր զկարգս զինուորացն և բաշխումն շտեմարանաց ի վերայ ամենայն երկրին<sup>152</sup>:

Իսկ վարազտիրոց ասպետ, անուանեալ ի թագաւորաց Զաւիտեան Խոսրովու<sup>153</sup>, որդի մեծին Խոսրովայ Շումն, շինեաց բոլորովին զամենայն աշխարհն Հայոց: Բայց ոչ նուաճեալ հնազանդեցաւ իշխանին մեծի որ  
 15 յԱտրպատական աշխարհին, որում Խոռոխ Որմիզդն կոչէին: Նա և ոչ յետ նորա որդւոյ նորին Ռոստոմայ, որ էր իշխան ի կողմանս Ատրպատականի. և էր խոռովութիւն մեծ ի մէջ երկոցունց: Ապա և զաւրավարն Յունաց Մժէժ սկսաւ և նա առնել շարախաւսութիւն զասպետէ առ Ռոս-  
 20 տոմայ իշխանին, որ յԱտրպատական աշխարհին: «Մի՛ կացցէ սա ի Հայս. ապա թէ ոչ՝ խոռովութիւն մեծ լինիցի ի մէջ երկոցունց թագաւորացն»: Եւ արձակեալ նորա զեղբայր իւր դարիքպետ<sup>154</sup>, զի երթեալ ձմերեացէ ի Դրնի, և ապա կապեսցեն զասպետ և առեալ զնացեն: Արդ՝ զի ամենայն զուրն Պարսից սիրէին զասպետ՝ մի ոմն յիշխանաց անտի մեծ ազդ արար նմա և ասէ. «Տե՛ս զանձն քոյ, զի վաղիւ կապելոց են  
 25 զքեզ»: Իսկ ասպետ առեալ զկին իւր և զորդիս՝ փախեաւ ի գիշերի, և ճանապարհ կալեալ զնաց ի Տարոն: Եւ անդ երթեալ ժողովեաց զզարս իւր. և խնդրեալ երզումն ի թագաւորէն Երակլէ, զի մի՛ հեռացուցէ զնա յաշխարհէն իւրմէ, և ընկալեալ երզումն հաւատարիմ՝ երթեալ յանդիման լինէր նմա յԱսորեստանեաց աշխարհին: Յայնժամ երզուաւ նմա թա-  
 30 զաւորն Երակլոս և ասէ. «Կացցես առ իս սակաւ ժամանակս, ապա արձակեցից զքեզ պատուով մեծաւ յերկիր քոյ»: Եւ մեծացոյց զնա քան զամենայն պատրիկսն որ էին ի թագաւորութեան նորա: Եւ զնացեալ ի պաղատն՝ ետ նմա ապարանս թագաւորականս և զահոյս արծաթի և զանձս բազումս յոյժ: Եւ որդի նորա Սմբատ էր սիրելի սենեկապետին  
 35 Երակլի:

1 Ա. կաթուղիկոս (նաև՝ Լեսոս)  
 7-8 Ա. առեալ զպարգևսն  
 11 Բոլ. ըստ կամաց նորա: Կարգէր փխ. ըստ կամաց նորա կարգէր: Տե՛ս ծան. 452:  
 15 Բոլ. Որմիզդն: Ուղղեցինք Որմիզդն ըստ հաջորդ գլխում հանդիպող այդ նիշտ ուղղագրութեան  
 16 Ա. Ռատոմայ, Միհրդ. Ռատոմայ  
 17 Ա., Միհրդ. երկոցունցն  
 18-19 Ա. Ըոստոմայ: Միհրդ. Ռատոմայ (տողատակին ծանօթագրում է «քով լինէլ Ռոստոմ»)   
 21 Բոլ. Գարիքպետ: Տե՛ս ծան. 454:  
 29 Ա. ասորեստանեաց  
 29 Ա. երզումն փխ. երզուաւ  
 34 Ա. բազում

Եւ այս է շարութիւն եղեալ յորդի կայսերն Երակլի՝ ի յանցս<sup>455</sup> մեծս, որում անուն էր Աթաղարիկոս<sup>456</sup>, որ և խողխողեաց<sup>457</sup> զսիրտ հարն և խրամատեաց զհրաշալի անձն, և յերեսաց նորա զգեղեցկութիւնն, և պատճառք կորստեան<sup>458</sup> իւր անձին և բազմաց: Քանզի միաբանեալ սա 5 և Թէոդորոս եղբարորդի Երակլի, անուանեալն Մագիստրոս, և բազումք ի մեծամեծաց քաղաքին, և Վասնան Խորխոռունի. սորա ամենեքին միաբանեալ սպանանել զԵրակլոս, և զորդի նորա զԱթաղարիկոս նստուցանել յաթոռ թագաւորութեանն: Գտաւ ի խորհրդեանն յայնմիկ լեալ Վարազտիրոց, որդի Խոսրովայ Շումն Սմբատայ. բայց շէր միաբանեալ սպանման թագաւորին և որդւոց նորա. այլ ասէ. «Դուք ասէք զնոսս տեղապահս Աստուծոյ, ապա ոչ է պարտ լինել այդմ բանի, և յայդմ խորհրդի ոչ միաբանիմ ընդ ձեզ»: Եւ բանք խորհրդեանն պատմեցաւ լիով յունկն թագաւորին յումեմնէ կորատորէ, որ էր լեալ ի խորհրդեանն: Իբրև հաւաստութեամբ ի վերայ եհաս թագաւորն՝ հրամայեաց ընդ առաւատն 528<sup>ա</sup> ունել||զորդի իւր և զեղբարորդի և զամենեսեան որք ընդ նոսս էին. կտրել զքիթս և զաջոյ ձեռնն ամենեցուն: Բայց արձակեալ պատգամ առ ասպետ՝ ասէ. «Փոխանակ զի արարեր դու այդպիսի առ իս, և ոչ կամեցար արկանել զձեռն քոյ յարին իմ և յարին որդւոց իմոց, և ես ոչ արկից զձեռն իմ և քեզ և յորդիս քոյ: Բայց ե՛րթ կա՛ց ուր և հրամայեցից քեզ, 20 և արարից ի վերայ քոյ ողորմութիւն»: Եւ թէպէտ բազում անգամ աղաղակեցին կողմանքն՝ թէ «մեոցի», սակայն նա ոչ կամեցաւ լսել նոցա: Այլ հրամայեաց տանել զնա և զկին նորա և զորդիս նորա ի կղզի և ի քաղաքն նեղութեանն, որում Աքսորն կոչեն<sup>459</sup>:

Գտաւ լեալ ի խորհրդեանն յայնմիկ և Դաւիթ Սահառունի, զոր կապեալ Մծեծայ առաքէ ի պաղատն: Եւ հատեալ նմա զկապանս իւր ի ճանապարհին՝ սատակէ զարսն որք տանէին զնա: Եւ դարձեալ անդրէն միաբանէ ընդ ինքեան զգաւրս Հայոց, յարձակի ի վերայ Մծեծի Գնունուց զարաւմարին Յունաց, հարեալ սատակէ զնա և զՎարազ<sup>460</sup> Գնել Գնունի: Եւ առ յինքն զարաւմարութիւնն կամակցութեամբ և սիրով ամենայն 30 զաւրացն:

Իսկ թագաւորն առնէ ըստ խնդրոյ իշխանացն զնա իշխան ի վերայ<sup>461</sup> ամենայն աշխարհացն, և տայ նմա պատիւ կիրապաղատութեանն, և հաստատէ զնա ի ծառայութիւն իւր, և կալեալ զիշխանութիւնն ամս Գ ամենայն ճոխութեամբ մեծապէս: Ապա անարգեալ ի զաւրացն՝ հալա-

2 Բոյ. Աթաղարիկոս: Տե՛ս ծան. 456:  
 2 ՁՁ որ և Խողխողեաց, Սիհրդ., Պատկ. որ ի խոր վիրաւորեաց Մալխ. որ ի խոր իոցեաց: Տե՛ս ծան. 457:  
 4 ՁՁ չիք կորստեան: Տե՛ս ծան. 458:  
 5 Սիհրդատյանի ձեռագրեւից մեկում՝ մարգիստրոս  
 6 Ա Խորխոռունին, Ա ամենեքեան  
 9 Ա շումն  
 14 Ա ընդ առաւատուն  
 15 Ա զամենեսին  
 21 Սիհրդ., Պատկ. կողմունքն  
 23 Ա քսորս, Մալխ. քսորն (փոքրատառով)  
 25 Ա մեծեծայ (և հետո)  
 31-32 ՏՏ չիք ի վերայ: Տե՛ս ծան. 461: Ա կորապաղատութեան



ծեցաւ, և անմիաբան լեալ ամենայն ազատացն՝ կորուսին զերկիրս Հայոց: Բայց միայն աստուածասէր և քաջ իշխանն Ռշտունեաց զաւառին Թէոդորոս կազմէր զգարս իւրոյ կողմանն հանապազ և զգուշանայր զտիւ և զգիշեր ըստ իւրոյ քաջ իմաստութեանն, ոչ սակաւ աւճիրս գործէր 5 ի թշնամեացն: Եւ շինեալ զԱղթամար կղզի՝ անդ ապրեցուցանէր զբազում զաւառս:

Գ Լ Ո Ւ Խ Խ Բ

Բարձունն Սասանականին, որ կալա զիշխանութիւնն ամս Շեթ: Դիմել Հրէից առ Իսմայելացիս. երեւել Մահմետի եւ միաբանել զԻսմայելացիս: 10 Առաջին պատերազմ ի մէջ Յունաց եւ Իսմայելացոց յԱրաբիա: Պարտութիւն Յունաց. փախուցանել զխաչափայտն ի Կոստանդնուպոլիս: Իսմայելացիք տիրեն Եգիպտոսի: Այլ զաւր Իսմայելացոց առնու զՏիգրոն: Նուազումն քազատութեան Պարսից: Մահ Հերակլի եւ քազատել որդոյ նորա Կոստանդնի: Մուտ որդոցն Իսմայելի յաշխարհս Հայոց: Առումն 15 Դունայ եւ գերումն Լե հազար արանց ի Դունայ: Պատրկութիւն Թէոդորոսի Ռշտունոյ: Իսմայելացիք յաւարի առնուն զբազում աշխարհս մինչեւ ի սահմանս Հնդկաց:

2 Աբրահամեանն ճառեցից<sup>462</sup> զզաւակէ, ոչ զազատէն, այլ զայն՝ որ յաղախնոյն ծնեալ, յորոյ վերայ անսուտ կատարեալ աստուածային բանն, 20 եթէ «ձեռք նորա յամենեսեան, և ամենեցուն ձեռք ի նա»\*:

3 Յայնժամ երթեալ ժողովեցան յնդեացոց քաղաքն երկոտասան ազգք ամենայն ցեղիցն Հրէից: Եւ եղև իբրև տեսին, թէ գնաց մեկնեցաւ 528բ ի նոցանէ զաւրն Պարսից, և թողին ի բաց//վքաղաքն խաղաղութեամբ՝ փակեցին զգուտն և ամրացան ի նա. և ոչ ետուն մտանել ի նոսա զաւրացն 25 Հոռովմայեցոց տէրութեանն: Իսկ թագաւորն Յունաց Երակլոս հրաման ետ պաշարել զնա: Եւ իբրև գիտացին սոքա, եթէ ոչ կարեն<sup>463</sup> ունել զղէմ նորա պատերազմաւ՝ խաւեցան ընդ նմա ի խաղաղութիւն: Եւ բացեալ զգուրս քաղաքին՝ երթեալ կացին առաջի նորա: Յայնժամ հրաման ետ նոցա երթալ դադարել յիրաքանչիւր ի բնակութիւն. և գնացին 30 ցին նոքա: Եւ կալեալ զճանապարհս անապատին գնացին ի Տաճկաստան առ որդիսն Իսմայելի, կոչեն զնոսա իրեաց յաւանականութիւն, և ծանուցանեն նոցա զհարազատութիւն իրեանց Գրոց կտակաւ: Իսկ նոցա թէպէտ և հաւանեալ վասն մերձաւոր հարազատութեանն՝ այլ ոչ կարէին առնել հաւանութիւն ի մէջ բազմութեան նոցա, և զի էին պաշտամունք 35 նոցա բաժանեալ ի միմեանց:

\* Մեռնդք, ԺԶ, 11, 12:

8 ՁՁ Բարձունն սասանականին, որ կալա զիշխանութիւնն Շեթ ամ: Եւ մուտ որդոյն Իսմայելի յաշխարհս Հայոց  
 20 Ա. ձեռս  
 22 Ա. Միհրդ., ազգ  
 23 Ա. նոցանէն  
 26 Բուլ. կարեմք: Տե՛ս ծան. 463:  
 29 Միհրդ., Պատկ. իրաքանչիւր

Յայնմ ժամանակի այլ ոմն ի նոցունց իսկ յորդոցն Իսմայելի, որում  
անուն էր Մահմէտ, թանգար<sup>464</sup>, որպէս ի հրամանէն Աստուծոյ երևեալ  
նոցա քարոզ՝ ճշմարտութեանն ճանապարհ, զԱբրահամեանն ուսուցանէր  
նոցա ճանաչել զԱստուած. մանաւանդ զի հմուտ և տեղեակ ևս էր Մով-  
5 սիսական պատմութեանն: Արդ՝ զի ի վերուստ էր հրամանն՝ ի միոջէ  
հրամանէ ժողովէին ամենեքեան ի միաբանութիւն արինացն: Եւ թողեալ  
զունայնութեան պաշտամունսն՝ դառնային առ Աստուած կենդանի, որ  
երևեցաւ հարն նոցա Աբրահամու: Արդ՝ արինադրէ զնոսա Մահմէտ՝  
ոչ ուտել մեռելոտի, և ոչ ըմպել գինի, և ոչ խաւսել սուտ, և ոչ խառ-  
10 նակել ի պոռնկութիւն: Եւ ասէր. «Երդմամբ խոստացաւ Աստուած զեր-  
կիրն զայն Աբրահամու և զաւակի նորա յետ նորա մինչև յաւիտեան:  
Եւ կատարեաց որպէս խաւսեցան առ այնմ ժամանական, մինչ սիրէրն  
զԻսրայէլ: Իսկ արդ՝ դուք էք որդիք Աբրահամու, և կատարէ Աստուած  
զխոստումնն Աբրահամու և զաւակի նորա ի վերայ ձեր. այլ միայն  
15 սրտի<sup>465</sup> սիրեցէ՛ք զԱստուածն Աբրահամու և երթա՛յք կալարո՛ւք զեր-  
կիրն ձեր, զոր ետ Աստուած հար ձերում Աբրահամու, և ոչ կարէ որ  
ընդդէմ ձեր կալ պատերազմաւ, զի Աստուած ընդ ձեզ է»:

Յայնժամ ամենեքեան ժողովեցան միաբան յԵփուայ մինչև ցՍուր,  
որ է<sup>466</sup> յանդիման Եգիպտոսի\*, և զնացին յանապատէն Փառանու երկր-  
529 տասան ցեղ՝ ըստ ցեղի/տանց նահապետաց իւրեանց: Եւ բաժանեցին  
Ժհ հազար արանց, որպէս յորդոցն Իսրայելի\*\* ի ցեղսն իւրեանց, հազար  
այր ի ցեղէ մի<sup>467</sup> առաջնորդել նոցա յերկիրն Իսրայելի<sup>468</sup>: Եւ շուեալք  
զնացին բանակք բանակք ըստ իւրաքանչիւր նահապետութեանց\*\*\* —  
Նաբէութ, Կեղար, Աբդիւղ, Մաբսամ<sup>469</sup>, Մասմայ, Իդումա, Մասէ, Քող-  
25 դադ, Թեման, Յետուր, Նափէս և Կեղմայ: Այս են ազգք Իսմայելի: Եւ  
հասեալ յՆոաբովթ Մովաբու<sup>470</sup> ի սահմանս Ռուբէնի. զի բանակն Յունաց  
բանակեալ էին յԱրաբիա, և անկեալ ի վերայ նոցա յանկարծակի՝ հարին  
զնոսա ի սուր սուտերի, և փախստական արարին զԽէտդոս եղբայր կայ-  
սերն Երակղի, և դարձեալ բանակեցան յԱրաբիա:  
30 Եւ ամենայն մնացորդք ժողովրդեան որդոցն Իսրայելի ժողովեալ  
միաբանեցան ի միասին, և եղեն զար մեծ: Եւ եղև յետ այնորիկ ար-

\* Մնունդք, ԻՅ, 18

\*\* Թիւք, ԼԱ, 3—5

\*\*\* Մնունդք, ԻՅ, 13—14

- 2 22, Միհրդ., Պատկ. թանկանգար: Տե՛ս ծան. 464:
- 5 22, Միհրդ. զի վերուստ, Պատկ. զ՝ ի վերուստ
- 15 ՏՏ չիք սրտի: Տե՛ս ծան. 465:
- 16 Ա չիք որք
- 18 Ա յեփուայ
- 19 Բոլ. և յանդիման փխ. որ է յանդիման: Տե՛ս ծան. 466:
- 21 Բոլ. որ յորդոցն փխ. որպէս յորդոցն: Տե՛ս ծան. 467:
- 22 Բոլ. այր մի ի ցեղ մի փխ. այր ի ցեղէ մի: Տե՛ս ծան. 467:
- 22 Միհրդ. Երուսաղէմի փխ. Իսրայելի: Տե՛ս ծան. 468:
- 24 Բոլ. Մոսամբ-Մաստ փխ. Մաբսամ: Տե՛ս ծան. 469:
- 24 Ա, Բ, Գ, Ն, ՏՏ Իդովմայ, Գ Եդովմայ: Բոլ. Քողդատ: Տե՛ս ծան. 469:
- 25 Ա Եկեղմա փխ. և Կեղմայ
- 31 Ա այսորիկ

ձակեցին պատգամս առ թագաւորն Յունաց, և ասեն այսպէս. «Հար մերում Աբրահամու ետ Աստուած զերկիրդ զայդ ի կալուած ժառանգութեան և զաւակի նորա յետ նորա: Եւ մեք եմք որդիք Աբրահամու. շատ լիցի քեզ ունել զերկիրդ մեր. ի բաց թող խաղաղութեամբ, և մեք ոչ  
5 եկեսցուք յերկիր քոյ. ապա թէ ոչ՝ տոկոսուք պահանջեսցուք ի քէն զկալեալն»:

Իսկ կայսրն ոչ առնոյր յանձն, և ըստ պատգամին պատշաճի ոչ առնէր նոցա պատասխանի, այլ ասէ. «Իմ է երկիրս, և քոյ վիճակ ժառանգութեան՝ անապատն. ե՛րթ գնա՛ խաղաղութեամբ յերկիր քոյ»: Եւ  
10 սկսաւ գունդս կազմել իբրև ՀՌ, և ետ նոցա զաւրավար՝ զոմն մի ի հաւատարիմ ներքինեաց իւրոց, և հրաման ետ երթալ նոցա յԱրաբիա. և պատուիրեաց շառնել պատերազմ ընդ նոսա, այլ զգուշանալ անձանց, մինչև իւր այլ զաւրս գումարեալ արձակեսցէ յազնականութիւն նոցա: Իսկ նոցա հասեալ ի Յորդանան և անցին յԱրաբիա, և թողեալ զբանակս  
15 իւրեանց ի գետեզերին՝ հետիոտս գնացին ի վերայ բանակի նոցա: Իսկ նոցա զմասն ինչ ի բանակէն դարանակալ արարեալ աստի և անտի, և կարգեալ զբազմութիւն խորանացն շուրջ զբանական, և ածեալ զուղտերամակսն՝ մակաղեցին շուրջ զբանական և զվրանաւքն, և կապեցին շուանաւք զոտս նոցա. այս է ամբողջութիւն բանակի նոցա: Եւ սոքա յաւ-  
529բ գնեալք ի ճանապարհին՝/ուր ուրեմն կարացին հատանել զամբողջութիւն բանակին, և սկսան սատակել զնոսա: Յանկարծակի յարեան դարանակալքն ի տեղոջէ իւրեանց և յարձակեցան ի վերայ նոցա. և անկեալ ահ տեսան ի վերայ զաւրացն Յունաց, և ի փախուստ դարձան առաջի նոցա. և ոչ գոյր նոցա փախուստ ի թանձրութենէ աւազոյն, զի թաղէին ոտքն  
25 մինչև ի սրունսն, և տազնապ մեծ յարեգականն ջերմութենէն, և սուր թշնամուցն զհետ նոցա: Արդ՝ անկան ամենայն զաւրավարքն և կործանեցան: Եւ եղև թիւ անկելոցն աւելի քան զերկու հազարս: Եւ սակաւք ի նոցանէ ապրեալքն փախստական անկանէին ի տեղի ապաստանի:

Եւ նոքա անցեալ ընդ Յորդանան՝ բանակեցան յԵրիբով: Յայնժամ  
30 անկաւ ահ նոցա ի վերայ բնակչաց երկրին. և հնազանդեցան ի ծառութիւն նոցա ամենեքեան: Յայնմ գիշերի և երուսաղէմացիքն փախուցեալ զտէրունեան խաչն և զամենայն սպասս եկեղեցեացն Աստուծոյ, և արկեալ ի ծով նաւաւք յուղարկեցին ի պաղատն Կոստանդնուպալսի: Եւ ապա խնդրեալ նոցա երդումն ի նոցանէ՝ հնազանդեցան ի ծառայու-  
35 թիւն նոցա:

Իսկ թագաւորն Յունաց այլ ոչ ևս կարաց գումարել զզաւրս իւր ընդդէմ նոցա: Եւ նոքա բաժանեցին զզաւրս իւրեանց յերիս մասունս: Մասն մի յձգիպոտս, որ երթեալ կալան մինչև ցԱղեքսանդրիա: Եւ մասն մի ի հիւսիսոյ կողմանէ, ընդդէմ թագաւորութեանն Յունաց: Եւ յական թաւ-

11 Ա չիք և հրաման ետ երթալ նոցա յԱրաբիա

15 Ա հետիոտս

26 Միեղդ., Պատկ. ի վերայ փիւ. զհետ Ա զօրաւորքն փիւ. զաւրավարքն

29 Միեղդ., Պատկ. անցեալք

32-33 Ա սպաս Մալխ. ծով փիւ. ի ծով

34 Ա նոցա խնդրեալ

38-39 Ա ցԱղէկսանդրիայ Ա ի հիւսիսոյ

թափել կալան ի վերջնոյ ծովուն մինչև ցեզր գետոյն մեծի Եւփրատայ. և յայնմ կողմն գետոյն՝ զՈւրհայ և զամենայն քաղաքս Միջագետաց: Եւ մասն մի յարևելս՝ ի վերայ թագաւորութեանն Պարսից:

- Եւ նուազեցաւ թագաւորութիւնն Պարսից ի ժամանակին յայնմիկ, և
- 5 զաւրբ նոցա բաժանեալ յերիս մասունս: Յայնժամ զաւրացն Իսմայելի, որ էին գումարեալ ի կողմանս արևելից՝ երթեալ պաշարեցին զՏիգրոն, զի անդ նստէր թագաւորն Պարսից: Եւ զաւր աշխարհին Մարաց գումարեալ ի ձեռն զաւրավարին իւրեանց Ռստոմայ ՁՌ վառելոց՝ ժողովեցան և զնացին ի վերայ նոցա ի պատերազմ. յայնժամ թողեալ զքա-
- 10 ղաքն՝ անցին յայնկոյս գետոյն Դվադայ: Եւ զնացին և անցին նոքա զգետան և պնդեցան զհետ նոցա, և նոքա ոչ դադարեցին մինչև ի սահ-
- 530 մանս իւրեանց, ի գեղն որ կոչի Հերթիճան: Եւ սոքա/պնդեալք զհետ նոցա՝ և չոգան բանակեցան ի դաշտին: Էր անդ և Մուշեղ Մամիկոնեան որդի Դաւթի, զաւրավարն Հայոց երեք հազար սպառազինաւք, և Գրիգոր
- 15 իշխանն Սիւնեաց տէրն՝ Ռ արամբ: Եւ եղև յարձակումն ի վերայ միմեանց. և փախեան զաւրն Պարսից առաջի նոցա. իսկ նոքա զհետ մտեալ հարին զնոսա ի սուր սուսերի իւրեանց: Եւ մեռան ամենայն նախարարքն զխաւորք. մեռաւ և զաւրավարն Ռստամն. սպանին և զՄուշեղ երկու քնոորդովքն, և զԳրիգոր Սիւնեաց տէր միով որդւով: Եւ այլքն զերծեալ
- 20 զնացին փախստական յաշխարհն իւրեանց: Եւ իբրև եկին հասին մնացորդք զաւրացն Պարսից յԱտրպատական՝ գումարեալ ժողովեցան ի մի վայր, և նստուցին իւրեանց զաւրավար զնոոտխազատ. և փութացեալ ի Տիգրոն՝ էառ զամենայն գանձս թագաւորութեանն և զբնակիչս քաղաքացն և զթագաւորն իւրեանց. և փութացաւ հասուցանել յԱտրպատական.
- 25 և իբրև մեկնեալ հեռացան՝ յանկարծակի եհաս ի վերայ նոցա զաւրն Իսմայելի: Եւ նոքա զարհուրեալ թողին զգանձս և զբնակիչս քաղաքին<sup>471</sup> և փախեան. փախեաւ և թագաւորն իւրեանց, և անկաւ ի զաւրն հարաւոյ: Իսկ նոցա առեալ զգանձն ամենայն դարձան ի Տիգրոն, առին և զբնակիչսն քաղաքացն, և աւերեցին զամենայն երկիրն:
- 30 Յայնժամ կատարեալ երանելոյն Երակլի զկեանս իւր բարւոք ծերութեամբ. և էին աւուրք իւրոյ թագաւորութեանն ամբ Լ: Երդմնեցուցանէ զորդի իւր զԿոստանդին՝ առնել ողորմութիւն<sup>472</sup> ի վերայ ամենայն յանցաւորացն, զորս հրամայեալ էր առնել յաքսորսն, և դարձուցանել զնոսա

1 Ա. Եւփրատայ

5 Ա. զօրս

6 ԱՁ, Միհրդ., Պատկ. յարևելից

6 Ա. զտիգրոն

8 Ա. Ըստովմայ

10 Ա. Դվադայ

12 Ա. գեղն

20 Պատկ. չիք իբրև եկին հասին

23 Ա ի Տիգրոն (նակ՝ հետո)

26 Միհրդ. քաղաքաքին: Տե՛ս ծան. 471:

28 Ա զգաւէս

33 Միհրդ., Պատկ. զոր

չիրաքանչիր տեղիսն: Երդմնեցուցանէ և վասն ասպետի՝ ածել զնա և զկին նորա և զորդիս նորա, և հաստատել ի կարգն առաջին: Եւ եթէ կամեսցի զնալ յաշխարհն իւր՝ երդուեալ եմ նմա, մի՛ եղիցի սուտ երդումն իմ: Արձակեա՛ զնա, և թո՛ղ երթայ խաղաղութեամբ:

5 Եեռաւ Երակլոս, և թագաւորեաց որդի նորա Կոստանդին: Եւ ոչ ոք ընտրեցաւ զարավար յաշխարհին Հայոց. քանզի անմիաբան լեալ իշխանացն՝ մեկնեցան ի միմեանց:

Եւ ել զար ասպականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս Զորոյ<sup>473</sup> յաշխարհն Տարանոյ. առին զնա և զԲզնունիս և զԱղիոսիտ: Եւ

10 ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ որդապոյ<sup>474</sup> և ընդ Գոգովիտ՝  
530բ թափեցան յԱյրարատ: // Եւ ոչ ոք կարաց ի զարացն Հայոց արկանել զոյժ ի Դուին աւան. բայց արք երեք յիշխանացն, որք երթային ժողովել զգարն ճապաղական, Թէոդորոս Վահանունի, և Խաչեան Առաւելեան, և Շապուհ Ամատունի: Որք գնացեալ փախստական ի Դուին, և հասեալ ի  
15 կամուրջն Մեծամարի՝ ի բաց աւերեցին, և ինքեանք անցեալք զոյժ արկանել ի յաւանին: Եւ ի բերդն ժողովեցին զամենայն մարդիկ աշխարհին, որ եկեալ էին ի կոթս այգեստանին: Բայց Թէոդորոսն գնացեալ ի Նախճաւան քաղաք:

Եւ հասեալ թշնամին (Բուշայն)<sup>475</sup> ի կամուրջն Մեծամարի ոչ կարաց  
20 անցանել. բայց ունէին առաջնորդ իւրեանց զՎարդիկ իշխան Մոկաց որ կոչէր Ակնիկ: Ապա անցեալ ընդ կամուրջն Մեծամարի՝ հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ, և եկեալ բանակեցան ի յեզր մայրոյն Խոսրովակերտի<sup>476</sup>:

Եւ եղև յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին. մատնեցաւ  
25 քաղաքն ի ձեռն նոցա. քանզի արկին մուխ շուրջանակի, մերժեցին ծխովն և նետաձգութեամբն զպահապանս պարսպին, և կանգնեալ սանդուխս՝ ելին ի պարիսպն և անկեալ ի ներքս բացին զդուռն քաղաքին: Եւ դիմեալ ի ներքս զարք թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին, և առեալ զաւար և զկապուտ քաղաքին՝ ելին և բանակեցան

30 ի նմին բանակետեղն, որ աւր Ի էր տրէ ամսոյն, յաւուր ուրբաթի: Եւ զաղարեալ աւուրս ինչ՝ ելին և գնացին ընդ նոյն ճանապարհ, ընդ որ եկեալն էին: Եւ խաղացուցին զբազմութիւն գերւոյն ԼԵ հազար ոգի: Իսկ իշխանն Հայոց Ռշտունեաց տէրն դարանակալ եղեալ ի Գոգովիտ զաւառի՝ դիմէ ի վերայ նոցա սակաւուք: Եւ ոչ կարաց

4 Միհրդ., Պատկ. զդա փխ. զնա  
6 Ա յաշխարհէն  
9 Բոլ. ձորոյ: Տե՛ս ծան. 473:  
10 Ա Գորովիտ  
14 Ա Դուին  
16 Ա մարդիկք  
19 Միհրդ. Բուշայն: Տե՛ս ծան. 475:  
23 Հ. Խոսրովակերտի: Մյուս ձեռագրերը և Միհրդ., Պատկ. Խոսրակերտի: Տե՛ս ծան. 476:  
30 Ա բանակետեղն (լուսանցքում ուղղված է բանակատեղն):  
32 Ա դետոյն փխ. գերւոյն  
33 ՏՏ հոգի

զղէմ ունել նոցա. փախստական լինի առաջի նոցա. և նոքա զհետ մտեալ նոցա՝ սատակէին զբազումս ի նոցանէն. և ինքեանք չոգան անցին յԱսորեստան<sup>477</sup>: Եւ եղև այս յամս Եզրի կաթուղիկոսի:

Իւկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսերէ հրաման հասեալ զարա-  
5 վարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեսուն՝ հանդերձ պատրկութեան պատուով:

Այս ամենայն լինի ի ձեռն կաթուղիկոսին Ներսիսի, որ յաշորդեցաւ ի նմին ամի յաթոռ կաթուղիկոսութեան փոխանակ Եզրի կաթուղիկոսի:

Բայց յորժամ ելին յարևելք որդիքն Իսմայելի ի Սին անապատէն՝  
331ա ոչ ել ընդ նոսա||և թագաւորն նոցա Ամո. այլ իբրև յաղթեցին պատե-  
րազմաւք, վանեալ զերկոսին թագաւորութիւնն, կալան յձգիպտոսէ մինչև  
ցլեառն մեծ Տորոս, և ի ծովէն Արևմտից<sup>478</sup> մինչև ցՄարս և Խուժաստան՝  
ապա ելին արքունական բանակաւքն ի բուն սահմանս կալուածոցն  
Իսմայելի: Եւ հրաման ետ արքայ ժողովել զնաւ և զնաւորդս բազումս,  
15 և անցանել ընդ ծով ի հարաւակողմն յարևելս, ի Պարոս, և ի Սակաստան,  
և ի Սընտ և ի Կրման<sup>479</sup>, յաշխարհն Կուրան և ի Մակուրան, մինչև ի  
սահմանս Հնդկաց: Իսկ զարացն փութանակի պատրաստեալ՝ զհրամանսն  
կատարէին. և այրեցին զամենայն երկիրն, և առեալ զաւար և զկապուտ՝  
դարձան անդրէն, արշաւանս դնելով ի վերայ ծովուն մկանանցն հա-  
20 սանէին ի տեղիս իւրեանց:

Չայս լուաք յարանց գերելոց ի Խուժաստան<sup>480</sup> Տաճկաստանէ, որոց  
ինքեանք իսկ ականատես եղեալ պատմեցին մեզ զայս բան:

Գ Լ Ո Ի Խ Խ Գ

Վասն Հրէից եւ շար խուհրդոց նսցա:

25 Ասացից և զՀրէիցն զապստամբողացն զխորհուրդսն, որ սակաւ  
ժամանակս աւզնականութիւն գտեալ ի Հագարացւոցն՝ առին խորհուրդ  
շինել զտաճարն Սողոմոնի: Եւ գտեալ զտեղին, որ կոչի Սրբութիւն<sup>481</sup>  
սրբութեանց՝ շինեցին զնա խարսխով շինուածով տեղի աղաւթից իւրե-  
անց: Եւ նախանձեալ ընդ նոսա Իսմայելացւոցն՝ մերժեցին զնոսս: Ի  
30 տեղուղէ յայնմանէ, և անուանեցին զնոյն տուն աղաւթից իւրեանց: Նոքա  
յայլում տեղուղջ անդէն յատակս տաճարին շինեցին այլ տեղի աղաւթից

3 Ա. կաթաղիկոսի

5 Ա. պատրկութեան փխ. պատրկութեան

7 Ա. կաթաղիկոսին Ներսէսի

8 Ա. կաթաղիկոսութեան (ճակ՝ ճետո), Մալխ. կաթուղիկոսութեան (վրիպակ)

12 Բոլ. արևմտից փխ. Արևմտից: Տե՛ս ծան. 478:

14 Ա Ե փխ. և

15 Միհրդ., Պատկ. Սագաստան

16 Բոլ. Սրման փխ. Կրման, Բոլ. Տուրան փխ. Կուրան: Տե՛ս ծան. 479:

16 Ա. Մակուրան փխ. ի Մակուրան

24 Վերեագիրը ձեռագրինն է:

27-28 Բոլ. սրբութիւն փխ. Սրբութիւն: Տե՛ս ծան. 481: Ա. Խարսխով փխ. Խարսխով

30 ՉԳ, Միհրդ., շիք տուն

իրեանց: Եւ անդէն առաջի արկեալ զիրեանց շարութեան խորհուրդ, լնու կամեցեալ զԵրուսաղէմ ծայր ի ծայրէ արեամբ, շնջել զամենայն քրիստոնեայն յԵրուսաղէմէ:

Արդ՝ այլ ոմն ի մեծամեծացն Իսմայելի երթայր յերկրպագութիւն ի 5 տեղի աղաւթից իրեանց միայն: Ի դիմի հարան նմա արք երեք հրէայք ի զլիաւորաց նոցունց, որոց էին սպանեալ խոզս երկուս և տարեալ եղեալ ի տեղի աղաւթիցն, և զարինն հեղեալ զորմովքն և զյատակաւք տանն: Եւ եղև իբրև ետես զնոսա այրն՝ զտեղի էսո և խաւեցաւ ընդ նոսա<sup>482</sup> զինչ և խաւեցաւ. և նոքա պատասխանեալ նմա զանց արարին զնովաւ և զնացին: Եւ նա իսկոյն մտեալ ի ներքս կալ յաղաւթս՝ ետես զչարիս, և 10 դարձաւ փութանակի, զի կայցի զարսն: Եւ իբրև ոչ եզիտ զնոսա լուռ եղև 531բ և զնաց ի/տեղի իւր. և ապա բազումք մտեալ տեսին զչարիսն, և գոթ արկին քաղաքին: Եւ ուսուցին հրեայքն իշխանին, թէ քրիստոնեայքդ պղծեցին զտեղի աղաւթիցն: Հրաման ետ իշխանն, և ժողովեցին զամենայն քրիստոնեայն: Եւ մինչ կամէին զնոսա սրով սատակել՝ եկն 15 այրն և եկաց յանդիման, ասէ. «Ընդէ՞ր հեղոյք զայդչափ արին ի տարապարտուց. հրամայեցէ՞ք ժողովել զամենայն հրէայսդ, և ես ցուցից զմահապարտսն»: Եւ եղև իբրև ժողովեցին զամենեսեան, և մտեալ ի մէջ նոցա ծանեաւ զարսն զերիսն, որ դիպեցան նմա: Եւ կալեալ զնոսա՝ 20 դատեցին ահագին դատաստանաւք, մինչև յայտնեցին զխորհուրդն: Եւ զի իշխան նոցա էր ի հրէից անտի՝ հրամայեաց սպանանել արս վեց, զզլիաւորս խորհրդեանն. և այլոցն թոյլ ետ զնալ ի տեղի իրեանց:

#### Գ Լ Ո Ւ Խ Խ Գ

Մեռանել Կոստանդնի եւ թագաւորել Երակլոսի որդոյ Հերակլի յերկրորդ 25 կնոջէն: Գալ Վաղենտինի ի Կոստանդնուպոլիս եւ նստուցանել թագաւոր Կոստաս. գորդի Կոստանդնի: Պատերազմ Պարսից եւ Իսմայելացոց ի Մարսս գաւտի եւ պարտութիւն Պարսից: Հէնն իսմայելեան ըստ կանխասացութեան Դանիէլի մարգարէին: Ապիւրատ խորհուրդ Վաղենտինի եւ Մահ նորա: Դարձ յախորէ ասպետի, որդոյ Շումն Խոսրովայ: Թումաս 30 նենգութեամբ ըմբռնէ զԹէոդորոս եւ առաքէ կապանաւք ի Կոստանդնուպոլիս: Արդարանայ Թէոդորոս եւ դառնայ ի Հայս պատուով զաւրավարութեան: Ասպետ փախչի ի Կոստանդնուպոլսոյ եւ դարձեալ մտանէ ի ծառայութիւն Յունաց պատուով կիրապաղատութեան. մահ նորա: Բաժանել զաւրուն Իսմայելի յերիս առաջս եւ արշաւել յԱյրարատ, ի կողմանս Սեպհական գնդին եւ յԱղուանս:

35 Եւ եղև ի մահուանն Երակլի թագաւորեաց Կոստանդին որդի նորա, և կարգէ ի վերայ զարաց իւրոց զաւրավարս զՎաղենտինանոսն, որ կոչէր Արշակունի: Եւ հրամայեաց իւրոց երթալ յարևելս:

2 Ա ծայր ի ծայր

7-8 Ա զորմօքն Ա զատակօք Միհրդ. Էհաս փիս. Ետես: ԶԶ. լուսանցում XIX դարի գրչությամբ գրված է, «Սերէս ժամանակակից ա Իսմայելեաց»:

13 Ա քրիստոնեայքն

16 Միհրդ., Պատկ. հեղոյք

17 Մալիս. հրեայսդ (տպագրական վրիպակ):

Եւ սակաւ ինչ աւուրս թագաւորեալ Կոստանդին, դաւեալ ի Մարտինեայ մարտուէ իւրմէ, ի կնոջէն Երակլի՝ մեռանէր: Եւ թագաւորէ Երակլոս, որդի Երակլեայ, որ ի Մարտինեայ<sup>483</sup> Աւգոստեայ. քանզի Կոստանդին էր յառաջին կնոջէն: Եւ Վաղենտինի [լուեալ] զգործեցեալ իրս<sup>484</sup> գնայ ի վերայ նորա զարու իւրով ի Կոստանդնուպոլիս: Եւ կալեալ զՄարտինէ՝ կտրէ զլեզու նորա և ապա սպանանէ զնա հանդերձ երկու որդուվք նորա: Եւ նստուցանէ թագաւոր զԿոստաս զորդի Կոստանդնի, և անուանէ յանուն հարն իւրոյ Կոստանդին: Եւ ինքն գումարէ զզաւրսն, և գնայ ընդ արևելս:

10 Եւ եղև յառաջնումն ամի Կոստանդեայ թագաւորին Յունաց, և յամի տասներորդի Յազկերտի արքային Պարսից՝ գումարեցան<sup>485</sup> զարքն Պարսից ընդ Իսմայելի ԿՌ արանց վառելոց սպառազինաց: Եւ Իսմայելացւոցն<sup>486</sup> ճակատեցան ընդդէմ նոցա խՌ արանց սուսերամերկաց, և բաղխեցին զմիմեանս պատերազմաւ ի Մարսս<sup>487</sup> գաւառի: Մինչև յերիս  
15 աւուրս յերկարեալ պատերազմն, մինչև նուազեալ երկոցունցն կողմանցն հետեակն<sup>488</sup> մարտին: Յանկարծակի ազդ եղև զարացն Պարսից, եթէ եկն զար յաւանականութիւն Իսմայելացւոցն: Եւ փախեան զարն Պարսիցն ի բանակէն զգիշերն ամենայն. և մնացորդն զարուն Իսմայելի  
532<sup>ա</sup> գնացին//ի վերայ նոցա ընդ առաւաւտն: Եւ ոչ զոր գտին ի բանակին. և  
20 ասպատակ սփռեալ ընդ ամենայն երեսս երկրի՝ հարին զմարդ և զանասուն սրով. և առեալ բերդս ԻԲ՝ սատակեցին զամենայն կենդանի որ էր ի նոսա:

Բայց<sup>489</sup> զահագին աղէտս հէնին Իսմայելի, որ բորբոքեաց հրդեհեալ զծով և զցամաք, ո՞վ կարիցէ պատմել<sup>490</sup>: Բայց երանելին Դանիէլ կան-  
25 խաւ գուշակէ մարգարէութիւնն զայսպիսի նեղութիւնս որ եկն եհաս ի վերայ երկրի. որ չորս գազանաւք նշանակէ զչորս թագաւորութիւնսն, որ յառնելոցն էին ի վերայ երկրի: Եւ նախ առաջին զԱրևմտից թագաւորութիւն, զմարդացեալ գազանն, որ է Յունաց. և յայտ անտի է՝ ասէ. «Թափեցան վարազաթևքն և ջնջեցաւ յերկրէ»: Զդիւական կոամոլութեանն ասէ  
30 զջնջումն: «Եւ եկաց իբրև ի վերայ ոտից մարդոյ, և սիրտ մարդոյ տուաւ նմա»: Եւ ահա գազանն երկրորդ նման արջոյ, և եկաց ի կողմն մի, յարն-

2 Բռլ. մարէ փխ. մարուէ: Տե՛ս մեր աշխ. (Սեբեոսի Պատմությունը և Անանունի առեղծվածը, էջ 185):

3 Բռլ. ի Մարտինեայ փխ. ի Մարտինեայ: Տե՛ս ծան. 483:

3 Մալխ. աւգոստեայ (տպագրական վրիպակ)

4 Ա. կնոջէն

4 Բռլ. Վաղենտինի գործեցեալ իրս փխ. Վաղենտինի [լուեալ] զգործեցեալ իրս: Տե՛ս ծան. 484:

5 Ա. Կոստանդինուպոլիս

10 Ա. Կոստանդինեա

14 Ա. բախեցին

16 Ա. հետեակն

21 Ե ի բոս փխ. ԻԲ

24 Միհրդ. պարտել փխ. պատմել: Տե՛ս ծան. 490:

25 Միհրդ., Պատկ. նեղութեանս

28 Ա. անդի

30 Ա. ջնջումն



վելից կողմանէ. զՍասանականին ասէ զթագաւորութիւն: «Եւ կողք երձք  
 Ի բերան ունելով՝՝ զՊարսից և զՄարաց և զՊարթևաց թագաւորութիւնն:  
 Եւ յայտ անտի է՝ որ ասէին ցնա. «արի՛, կե՛ր զմարմինս բազմաց»:  
 Որպէս և եկեր իսկ ամենեցուն գիտելով: «Իսկ զազանն երրորդ իբրև  
 5 զինձ, և չորք թևք թռչնոյ ի վերայ նորա, և չորք գլուխ գազանին».  
 զՀրահասային ասէ զթագաւորութիւն, Գոգ և Մագոգ, և երկու ընկերք նոցին,  
 որոց տուաւ իշխանութիւն թռչել զաւրութեամբ ի ժամանակի իւրում  
 ի կողմանս հրահասոյ: «Իսկ զազանն չորրորդ ահեղ և զարմանալի, և  
 ժանիք նորա երկաթիք, և մագիլք նորա պղնձիք. ուտէր և մանրէր և  
 10 զմնացուածսն առ ոտն կոտորէր»<sup>491</sup>: Այս չորս, յարուցեալ ի Հարաւոյ  
 կողմանէ՝ Իսմայելեան թագաւորութիւնն. որպէս հրեշտակապետն մեկ-  
 նեաց, եթէ «Գազանն չորրորդ թագաւորութիւն չորրորդ»<sup>492</sup> կացցէ, որ  
 առաւել իցէ քան զամենայն թագաւորութիւնս, և կերիցէ զամենայն եր-  
 կիր»: «Եւ ժ եղջիրք՝ ժ թագաւորք յարիցեն, և զկնի նորա յարիցէ այլ՝  
 15 որ առաւել է շարեաւք քան զամենայն առաջինսն»\*. և որ ի կարգին է:

Եւ եղև յերկրորդում ամի Կոստանդի, թոռին երանելոյն Երակլի՝  
 խորհէր Վաղենտին<sup>493</sup> ի միտս իւր՝ ճարտարութեամբ խաբել զսինկդի-  
 տոսն, և համբառնալ զինքն ի պատիւ թագաւորութեանն, որպէս զի պսա-  
 կեալ զինքն այնպէս արասցէ զարաւարութիւն: Եւ ծանրացոյց զլուծ  
 20 ծառայութեան ի վերայ բնակչաց քաղաքին, և զայն երեք հազար սպառա-  
 532բ զէնս, զոր ընդ ինքն տարաւ, և զարս բազումս այլ/միաբանեալ՝ իւր  
 թիկունս հաստատէր: Յայնժամ ժողովեցան արք քաղաքին ի սուրբ եկե-  
 ղեցին Աստուծոյ առ հայրապետն, և ծանուցանեն նմա բառնալ զծանրու-  
 թիւնն ծառայութեան. և առաքեցին առ Վաղենտին՝ ի բաց բառնալ զծա-  
 25 ռայութիւն զայն, և նա ոչ կամեցաւ լսել: Եւ անդ էր մի ոմն յիշխանացն,  
 որում անունն էր Անտոնինոս. ասէ ցՎաղենտին. «Զի՞նչ է նոցա միա-  
 բանութիւնն այն և խորհուրդն. կամ զի՞ իսկ իշխեցին համարձակաբար  
 արձակել առ քեզ զայսպիսի բանս. բայց եթէ հրամայեսցես ինձ՝ ես  
 երթայց և քակտեցից զմիաբանութիւն նոցա և զխորհուրդն: Եւ հալածեմ  
 30 զնոսա յուրաքանչիւր տեղիս, զի կատարեսցին կամք քոյ»: Եւ ասէ. «Ե՛րթ  
 և արա՛՛ որպէս ասացերդ»: Եւ նա յարուցեալ գնաց արամբք հաղարաւք,  
 և իբրև եմուտ յեկեղեցին՝ սկսաւ պատուհասել զզխաւորսն գանիւ: Յոտն

\* Դանիէլ, է

4 Ա. գազան

10 Երից. ոտս փխ. ոտն

10 Մալխ. Հարաւոյ փխ. ի Հարաւոյ

12 Ա թագաւորութիւնն Երից. թագաւորութեան Բոլ. չորրորդ թագաւորութիւնն (թագա-  
 ւորութեանն) կացցէ փխ. չորրորդ թագաւորութիւն չորրորդ կացցէ: Տե՛ս ծան. 492:

14 Ա. եղջերք նորա փխ. եղջիրք

17 Ե խորհէր անդի փխ. խորհէր Ա. էնտին փխ. Վաղենտին Ե ի միտս իւր ճարտարու-  
 թեամբ Վաղենտին փխ. Վաղենտին ի միտս իւր ճարտարութեամբ Միհրդ.,  
 Պատկ. Վաղենտին անտի փխ. Վաղենտին: Տե՛ս ծան. 493:

17-18 Ա. զանկղիտոսն

18-19 Երից. թէպէտ զի փխ. որպէս Երից., Միհրդ., Պատկ. զզարաւարութիւն

20-21 Ա. սպառազէն Երից. ընդ ինքեան

եկաց հայրապետն. և ասէ. «Շատ և ոչ է իրաւացի առնել ի տեղուոջս յայսմիկ այդպիսի ինչ»: Եւ յարձակեալ Անտոնի՝ ած ապտակ ի ծնաւտ նորա, և ասէ. «Ե՛րթ կա՛լ զտեղին քոյ»: Յայնժամ խոռովեալ ամբոխն՝ յարձակեցան ի վերայ նորա: Եւ ըմբռնեալ զնա քարշեցին զոտանէ ի մէջ

5 քաղաքին, և այրեցին հրով: Ազդ եղև Վաղենտինի, և զողումն կալաւ զնա: Եւ անդէն վաղվաղակի հեղաւ ամբոխն ի վերայ նորա, և քարշեալ արտաքոյ տանցն՝ գլխատեցին. և տարեալ ի տեղին, ուր այրեցին զԱնտոնինոս՝ ի նմին տեղուոջ այրեցին և զնա: Եւ զԿոստանդին հաստատեցին յաթոռ թագաւորութեանն: Եւ արարին զաւրավար զԹէոդորոս<sup>494</sup> զոմն

10 հաւատարիմ յիշխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի Յունաց կողմանէ: Սա իբրև առ զաւրավարութիւնն՝ աղաչեաց զթագաւորն և խնդրեաց պարգևս՝ առնել ողորմութիւն այնոցիկ, զորս էր արտորեալ յԱփրիկէ: Եւ մանաւանդ վասն<sup>495</sup> ասպետի, որդւոյ Սմբատայ խոսրով Շում կոչեցելոյ: Եւ քաղցրացոյց Աստուած զսիրտ թագաւորին,

15 և հրամայեաց ածել զնոսա ի քաղաքն թագաւորական: Եւ ընկալաւ զնոսա իբրև զսիրելիս թագաւորութեանն, և զորդի նորա զՍմբատ առաջին սպաթար<sup>496</sup> ի մէջ ամենայն սպաթարացն, և կանտիտաւտ<sup>497</sup>: Եւ անդէն կարգեաց ի կարգն առաջի յամին հինգերորդի<sup>498</sup> թագաւորութեան իւրոյ: Նոյնպէս և զՎահանն խորխոտունի և զայլ ևս: Եւ արձակեաց ի Հայս այր

533ա ոմն իշխան, անուն Թումա: Սա եկեալ ոչ կամէր եղծանել զուխտն, ի որ ի մէջ կայսեր և իշխանին Մարաց. միաբանեաց զամենայն իշխանսն ընդ ինքեամբ և զնաց առ իշխանն Մարաց և խաւսեցաւ ընդ նմա ի խաղաղութիւն: Եւ առ ի նմանէ ինչս բազումս և խոստացաւ նմա երզմամբ, զի տացէ տանել զԹէոդորոս կապանաւք ի պաղատն, զի նա էր իշխան

25 աշխարհիս Հայոց: Եւ դարձաւ եկն անդրէն ի զարս Հայոց: Եւ իբրև եկն<sup>499</sup> յերկիրն Կոտէից, յանկարծակի յարձակեցան ի վերայ նորա, կալան զնա և կապեցին, և ետուն տանել յանդիման թագաւորին: Իսկ արքայ Կոստանդին իբրև լուա՝ խոռովեցաւ յոյժ. զի ոչ էր ի հրամանէ նորա կապելն. և հրամայեաց լուծանել զնա ի կապանացն, և ընթեռնով զգիրս

30 ամբաստանութեանն: Եւ ծանուցեալ զնենգութիւնն՝ հրամայեաց կոչել զառաջեաւ և ընկալաւ զնա սիրով, և նորին իշխանութեամբն պատուով: Եւ կարգեաց նմա ռոճիկ և ընդունելութիւն յարքունուատ<sup>500</sup>: Ապա հրամայէ կոչել զԹումասս ոմն<sup>501</sup> և ոչ հրամայեցաւ նմա մտանել յարքունիս, այլ արտաքոյ քննութիւն առնել. և արգարացուցին զԹէոդորոս Ռշտունաց

35 նեաց տէրն ի բանս իւր. և եղեն իրաւունս ի վերայ նորա: Իսկ զԹումաս անարգեալ ի բաց ընկեցին պատուոյն: Յայնժամ տեսին զմիմեանս ասպետ և Թէոդորոս Ռշտունեաց տէրն, և հեղուին արտասուա ի վերայ պարանոցի իւրեանց, զի էին սննդակիցք միմեանց ի դրանն խոսրովայ արքային Պարսից:

1 Սիմեոն. շատ ոչ է Երից. շատ ոչ է շեշված է և դարձված գայոց ոչ է:

2 Ա ինչ առնել փխ. ինչ

7-8 Ա զԱնտոնիոս, Պատկ. զԱնտոնիոնոս

10 Ս. հայնց փխ. յայնց

14 Ա, Երից. շումբ

17 Իոլ. առաջին սպաթար զՍմբատ փխ. զՍմբատ առաջին Սպաթար: Տե՛ս ծան. 496:

- Բայց<sup>502</sup> ասպետ ոչ կարաց նուաճել ընդ իշխանութեամբն Յունաց, այլ արկ ի միտս իւր նենգութիւն. և հրամանս խնդրեաց ի թագաւորէն Կոստանդեայ, զի արձակեսցէ արս շորս յընտանեաց իւրոց ի Հայս՝ տանել առ նա զինչս իւր: Եւ հրամայեաց թագաւորն տալ նմա զհրամանս.
- 5 Իսկ նա այլակերպեալ զինքն՝ առ ընդ իւր արս երիս, և հասեալ ի ծովեզր՝ եցոյց զհրամանն արքունի: Ել ի նաւն և էանց ընդ ծովն, և հապճեպ զնացեալ ի նմանութիւն թռչնոյ՝ եկն եհաս փութանակի ի Տայս և ամբացաւ անդ. քանզի ընկալան զնա Տայեցիքն խնդութեամբ:
- Յայնմ ժամանակի ոչ սակաւ յուզմունք լինէին ի մէջ աշխարհիս
- 10 Հայոց. քանզի փութանակի եկն եհաս հրամանն արքունի առ զարավարն Հայոց՝ ունել զամենայն անցս ճանապարհացն, և յուզել յամբոցս աշ-
- 533բ խարհին: Ապա ազդ լինէր, եթէ եկն և ամբացաւ // ի Հայս ի Տայս<sup>503</sup>:
- Յայնժամ հրաման ետ զարավարն Յունաց Թէոդորոս հանդերձ իշխանաւքն զարուն և նախարարաւքն Հայոց՝ արձակել զնորսէս կաթու-
- 15 զիկոս առ ասպետ, և տանել նմա երդումն հաւատարմութեան, ի խնդրել նմա զիշխանութիւն աշխարհին<sup>504</sup>, և ածել նմա զկին իւր և զորդիսն:
- Եւ զնաց կաթուղիկոսն, հաստատեաց առ նմա զերդումն, զի մի՛ այլ ուրեք կալցի ճանապարհ. և դարձաւ եկն անդրէն: Եւ գրեցին նոքա առ թագաւորն Կոստանդին առնել նմա ըստ երզմանն, զոր խոստացաւ.
- 20 քանզի էր գրեալ ասպետ առ թագաւորն այսպէս, եթէ «Սառայ քոյ եմ, և ոչ ուրեք երթամ ի ծառայութենէդ ձերմէ. բայց զի ասացին ցիս ոմանք, եթէ անդրէն երթալոց ես ուստի եկիրն՝ վասն այնորիկ զահի հարայ և փախեայ: Բայց արդ եթէ արժանի համարիք՝ միամտութեամբ վաստակիմ, և կեամ և մեռանիմ ի վերայ ձերոյ աստուածապաշտութեանդ»:
- 25 Յայնժամ հրամայեաց թագաւորն Կոստանդին առնել զնա կիրապաղատ, և տալ նմա պսակ պատուոյն և զիշխանութիւն աշխարհին: Եւ հրամայեաց արձակել զկին և զորդիսն մեծաւ շքով, և ետ տանել զգահոյս արժաթեղէնս հանդերձ այլովք մեծամեծ ընչիւք:
- Արդ՝ մինչդեռ զայր հրովարտակն և պատինն առնել զնա կիրապա-
- 30 ղատ՝ յանկարծակի եհաս նմա հիւանդութիւն և մեռաւ: Եւ բարձին զմարմինն նորա և տարան թաղեցին առ հարն իւրում ի Դարինս: Եւ զորդի նորա զանդրանիկ, որում անուն<sup>505</sup> էր Սմբատ, կարգեաց արքայ ի պատիւ հար իւրոյ<sup>506</sup>. տուեալ նմա զիշխանութիւնն բնիկ տանուտէրութեանն ասպետութեան<sup>507</sup>, և արար զնա զրունգար<sup>508</sup> զարաց իւրոց: Եւ

---

1 Ա Բայց ասպետ բառերի դիմաց լուսանցում գրված է 2Բ զլխահամարը: Տե՛ս ծան. 502:

3 Ա Կոստանդինեա Ա յընդանեաց

7 Ա ի նմանու

7-8 Ա ամբացաւ

11 Ա յամբոց

12 Ա Հայս Տայս (թվում է՝ «ի Հայս»-ը սխալ կրկնությունն է «ի Տայս»-ի):

25-26 Ա կորապաղատ (եւսև՝ հետո) Ա զսակ փխ. պսակ

29-30 Միճեղ. կորապաղատ

32 Բոլ. անունն: Տե՛ս ծան. 505:

33 Պատառ. զիշխանութիւն

34 Ա, պատառ., Միճեղ. Դրունգար: Տե՛ս ծան. 508:

նմա կինն ի տանէն Արշակունեաց և յիւրոց մերձաւորաց, և...<sup>509</sup> արձակեաց ի բանակն առ զաւրս իւր: Եւ յետ այսորիկ արձակեաց զՔէոզորոս Ռշտունեաց տէրն ի Հայս մեծաւ պատուով, և ետ նմա զնոյն իշխանութիւն զաւրավարութեան, եթէ կամիցին իշխանքն Հայոց և եթէ ոչ կամիցին: Եւ եկն կարգեցաւ ի նոյն իշխանութեանն:

Եւ եղև ի գալ միւսում ամի եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան յերիս: Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական  
 534ա գնդին կողմանսն, և առաջի մի/յԱղուանս<sup>510</sup>: Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին<sup>511</sup> արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն  
 10 զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի Հէրեան<sup>512</sup>, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ: Եկին ի յՈրդսպու<sup>513</sup>, և ոչ նմա ինչ կարացին առնել: Գնացին անտի և բանակեցան յԱրծափս, հանդէպ բերդին առ ջրովն: Եւ սկսան պատերազմել ընդ բերդին<sup>514</sup>, և բազում աւճիրս վնասուց գործեցին անդ ի բերդէն: Արդ՝  
 15 էր նոցա ի թիկանց կողմանէ ել ի գլուխ անդր յԱսորենայ<sup>515</sup> կողմանէ՝ որում Կախանակտուցն կոչեն: Արդ՝ իջին ընդ այն արք ի վայր ի բերդէն՝ երթալ խնդրել ի բերդէն Դարանից զաւր յաւանականութիւն իւրեանց: Եւ ետ նոցա Սմբատ Բագրատունի, որդի Վարազ Սահակայ<sup>516</sup> արս ն: Եւ գնացեալ ի գիշերի ելին ի բերդն<sup>517</sup> և ոչ զգուշացան տեղւոյն<sup>518</sup>:  
 20 Եւ գիտացին Իսմայելացիքն զտեղին, և գնացեալ ի նոյն հետին ելին ի բերդն, և կալան զտեղին մինչև ցառաւաւտն: Եւ արս ժ<sup>519</sup> պահապանս տեղւոյն ըմբռնեցին ի քուն և սպանին:

1 Պատառ. մերձաւորացն  
 3 Ա, պատառ. զըրշտունեաց  
 6 Պատառ. ամին  
 7 Պատառ. յարայրատ  
 7 Միհրդ., Պատկ. ի սեփհական (նաև՝ հետո)  
 9 Պատառ. սփռան, Պատառ. հարեալ փխ. և հարեալ  
 11 Պատառ., Ա Հէրեան, Բ,Գ,Դ,Ե, Երից., SS յԵրեան: Մեր կարծիքով՝ նախնական բնագրում Հէրեան և-ի փոխարեն եղել է «Հէր և անդ» («ժողովեցան ի Հէր և անդ մարտեան ընդ բերդին»): Տե՛ս ծան. 512:  
 12 Պատառ. էին ի Ադսպու փխ. եկին ի յՈրդսպու, Երից. յՈրդսպու  
 14 Պատառ. ի նա փխ. անդ ի  
 16 Պատառ. ի վայր արք  
 17 Պատառ. զաւրս  
 20 Պատառ. նոյն հետոյն փխ. ի նոյն հետին  
 21 Պատառ. զառաւաւտն պատառ. շարժին փխ. արս ժ: Տե՛ս ծան. 519:

Գ Լ Ո Ւ Խ Ե Ե

Թէոդորոս Ռշտունի հարկանէ զԻսմայելացիս եւ թափէ զաւարն եւ զգերին, զոր առեալ էր նոցա յԱրծափս: Այլ զար Իսմայելացաց հարկանէ սրով յԱյրարատայ մինչեւ ի սահմանս Տայոց, Վրաց եւ Աղուանից: Եւ 5 մարտոփին առ Կոստանդնուպոլսով եւ շարաշար պարտութիւն Իսմայելացոց: Կոստանդին կայսր առնէ հաշտութիւն ընդ Մաւեայ: Շինութիւն եկեղեցոյն յանուն Զուարթնոց: Ամբաստանութիւն զաւրուն Յունաց զՀայոց վասն իրաց հաւատոյ: Հրաման ի Կոստանդին՝ առնել միաբանութիւն հաւատոյ ընդ Հռոմս: Ժողով եկեղեցական վասն խնդրոյ միաբանութեան:

10

Եւ եղև յամին երկրորդի<sup>520</sup> Կոստանդինի, յամսեանն հոռի, որ աւր ԻԳ էր ամսոյն, յաւուր կիրակէի ընդ առաւատս՝ ճշեցին Իսմայելացիքն ի բերդին վերջոյ և առաջոյ, և հարին զնոսս սրով սուսերի: Եւ բազումք գահավէժ լեալ սատակէին: Եւ զկանայս և զմանկունս իջուցին ի բերդէն, 15 կամէին սատակել. և ոչ գոյր թիւ գերւոյն, և անասուն պաճարացն բազում յոյժ: Եւ եղև ի վաղիւ առաւատուն եկն եհաս ի վերայ նոցա զարավարն Հայոց Թէոդորոս զարու իւրով և յարձակեցաւ ի վերայ նոցա<sup>521</sup> և եհար զնոսս անհուն կոտորածով: Եւ էին նոքա երեք հազար ընտիր սպառազէնս յամենայն զարացն Իսմայելի, և ոչ որ զերծաւ ի նոցանէ. 20 բայց սակաւ ճողոպրեալք հետեակք երթեալ ամրացան ի Շամբին<sup>522</sup>, Եւ ապրեցոց տէր յաւուր յայնմիկ զբազմութիւն գերւոյն ի ձեռաց Իսմայելացւոցն. և զԻսմայել խորտակեաց կործանմամբ մեծաւ. և մեռան Բիշխանքն Իսմայելի, Աւթման և Ոգբայ<sup>523</sup>: Եւ եղև յաղթութիւն մեծ զարավարին Հայոց: Եւ ետ տանել զարավարն Հայոց զընծայս Կոստանդինի ի 25 պատերազմէն զընտիր ընտիր երիվարացն ճ ձի. զոր առեալ արքայի 534բ ուրախ/եղև ինքն և ամենայն պաղատն, և արձակեաց անդրէն շնորհակալութիւն մեծ:

Իսկ այն զարն, որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից, առ զաւար և զգերութիւն և եկն 30 էանց ի Նախճաւան առ այն զար, որ մարտ եղեալ կռուէին ընդ բերդին Նախճաւանի: Բայց սակայն ոչ կարացին առնուլ զնա: Առին զբերդն

11 Ա. Կոստանդինի  
 13 Երից. ի վերջոյ և յառաջոյ  
 13 Ա. բազում  
 16-17 Պատառ. առաւատին Ա. շիք զարավարն Հայոց  
 17 Բռլ. շիք Թէոդորոս զարաւ իւրով և յարձակեցաւ ի վերայ նոցա: Տե՛ս ծան. 521:  
 20 Մալլս. շամբին: Տե՛ս ծան. 522:  
 21 Պատառ. ի ձեռացն  
 23 Բռլ. Ոգբայ փխ. Ոգբայ: Տե՛ս ծան. 523:  
 24 Պատառ. ընծայս, Ա, Միեդ. Կոստանդի  
 25 Պատառ. զընդիր ընդիր  
 28 Պատառ. Այրարատս, Ա. Արայրատան  
 29 Պատառ., Ա. գերութիւն  
 31 Պատառ. Նախճուան

հրամայ և սատակէին զնոսա սրով, և զկանայս և զմանկունս գերի վարեցին:

Իսկ որ ի կողմանս Պաղեստինացւոցն՝ հրամայեաց կազմել նաւատորմիլս բազումս<sup>524</sup> և եմուտ ի նաւ, և կալաւ զործ պատերազմի ընդ 5 Կոստանդնուպալիս<sup>525</sup>, Եւ ոչ յաջողեցաւ նմա նաւամարտութիւնն. քանզի ելին ընդդէմ նորա զաւրացն բազմութիւն նաւաւք. և կործանեցին զնոսա ի խորս ծովուն, և զբազումս վանեցին հրով, և զբազումս փախստական արարեալ հալածեցին: Բայց սակայն զարհուրեցաւ արքայն Կոստանդին. լաւ համարեցաւ տալ սակ, և առնել հաշտութիւն պատգամաւորաւք. և 10 մնալ ժամանակի իւրում զի թերեւս և Աստուծոյ հաշտութեամբ հայեցի յերկիր և ողորմեցի նոցա: Եւ սկսաւ խաւսել ի հաշտութիւն պատգամաւորաւք<sup>526</sup>. և փութացուցանէին Իսմայելացիք զՅոյնս, զի կատարեցեն զբան հաշտութեանն: Իսկ թագաւորն Յունաց Կոստանդին, քանզի մանուկ էր, ոչ իշխեաց կատարել առանց կամաց զաւրուն, և գրէ առ Պոռ- 15 կոպ, զի երթիցէ ընդ նմա ի Դամասկոս առ Մաւրիաս իշխանն զաւրուն Իսմայելի, և կատարեցէ զպայման հաշտութեան ըստ զաւրուն կամացն: Արդ՝ իբրև ետես Պոռկոպ զհրամանն արքունի և լուաւ բանս ի զաւրացն՝ զնաց զհետ նոցա ի Դամասկոս առ Մաւրիաս իշխանն զաւրուն Իսմայելի. և յայտնեաց զշափ սակին և ասաց զսահմանն<sup>527</sup>, և առ զհաշտութիւնն 20 և զնաց:

Յայնմ ժամանակի<sup>528</sup> արկ ի միտս իւր կաթուղիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին՝ յորում, ասեն, ընդ առաջ եղև թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի: Շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնատր 25 Զուարթնոցն<sup>529</sup>, որոց երևեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնատր զաւրացն: Եւ շինեաց զեկեղեցին բարձր շինուածովք և շքնաղ զարմանալեալք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն: Ած շուր և եբեր զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց այգիս և ծառատունկս, և շուրջանակի պատուաբեաց 30 զբնակութեամբն<sup>530</sup> զեղեցկազիր յարիսնուածով բարձր պարսպաւ ի փառս Աստուծոյ:

535ա Այլ ոչ դադարեաց վիշապն/յայն ապստամբ, այլ թէ և աստուածամարտ լինել կամեցաւ յիւրոց խորամանկութենէ. այլ երկնէր յարուցանել հալածանս ի վերայ եկեղեցեացն Հայաստանեայց աշխարհին: Քանզի

1 Պատառ. զմանկտիս  
 3 Պատառ. պաղեստինացւոց  
 3-4 Պատառ. նաւատորմեղս բազումս Ա. նաւատորմիւղս բազում, ՏՏ նաւատորմիւղս բազում: Տե՛ս ծան. 524:  
 9-12 ի՛ք և մնալ ժամանակի իւրում զի թերեւս և Աստուծոյ հաշտութեամբ հայեցի յերկիր և ողորմեցի նոցա: Եւ սկսաւ խաւսել ի հաշտութիւն պատգամաւորաւք: Տե՛ս ծան. 526: Պատառ. զյոյնսն, Ա զյոյն: Պատառ. կատարեցեն  
 14-15 Ա պոռկոպ, Երից. Պոռկոպ: Պատառ. երթիցի  
 17 Պատառ. զհրամանսն  
 19 Պատառ. զսահման և ասաց զշափն սակի փիս. զշափ սակին և ասաց զսահմանն: Տե՛ս ծան. 527: Պատառ. զհաշտութիւն  
 21 Պատառ., Ա կաթաղիկոսն

յամս Կոստանդինայ թագաւորի թոռին Երակլի արկ ի գործ զխորամանկութիւն իւրոյ շարութեանն, արբանեակս իւր կալաւ զգաւս Յունաց որ ի Հայաստան աշխարհին<sup>531</sup>: Քանզի ո՛չ երբէք ընդունէին Հայք զՀոռոմն ի հաղորդութիւն<sup>532</sup> մարմնոյ և արեան տեանն: Եւ արդ՝ գրեն նորա ամբաստանութիւն առ թագաւորն Յունաց Կոստանդին և հայրապետն, թէ «Իբրն զանարէնս համարեալ եմք յաշխարհիս յայսմիկ: Քանզի անարգանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովն Քաղկեդոնի և զտումարն Լևոնի<sup>533</sup>, և նզովեն զնոսա»: Յայնժամ հրաման ետ թագաւորն հայրապետան հանդերձ, և գրեն հրովարտակ առ Հայս, զի միաբանութիւն

10 հաւատոյ արասցեն ընդ Հոռոմի, զի մի՛ խոտեսցեն զժողովն և զտումարն զայն: Եւ էր անդ այր մի ի Բագրևանդ գաւառէ, ի Բագաւան գեղջէ<sup>534</sup>, որ էր ուսեալ զարուեստ փիլիսոփայութեան, և անուն նորա Դաւիթ: Զնա հրամայեաց արձակել ի Հայս, զի երթեալ ի բաց հատցեն զհակառակութիւնն: Եւ ժողովեցան ամենայն եպիսկոպոստունքն և նախարարքն Հայոց ի Դուին առ քրիստոսասէր կաթողիկոսն Ներսէս և առ բարեպաշտ զարավարն Հայոց Թէոդորոս մշտունեաց տէրն: Եւ տեսին զհրամանս թագաւորին, և լուան զբանս փիլիսոփային, որ ուսուցանէր զԵրրորդութիւնն բաժանմամբ ըստ տումարին Լևոնի: Եւ իբրև լուան՝ շառին յանձն փոխել զճշմարիտ վարդապետութիւնն սրբոյն: Գրիգորի՝ ըստ տումարին

20 Լևոնի: Հաճոյ թուեցաւ ամենեցուն առնել թղթոյն պատասխանի:

Գ Լ Ո Ւ Խ Խ Զ

Պատենն պատասխանի քրթոյն եկելոյ ի Հայս ի Հոռոմոց թագաւորէն Կոստանդինայ, զոր գրեցին Հայոց եպիսկոպոսունքն եւ կաթողիկոսն Ներսէս հանդերձ նախաւարաւքն եւ զաւրավարան Թէոդորոսի Ռշտունեաց տեառն<sup>535</sup>

Ճշմարիտ եւ ուղղադաւան նամակ նիկիական:

Ա զ ա շ ե մ զ ք ե զ, ը ն թ ե ր ց ի՛ ր՝ որ զ ք ը ի ս տ ո ն է ա կ ա ն հ աւ ա տ ն ու ն ի ս, ա ս տ ու ա ծ ա ս է ր:

Հոգիբնկալ մարգարէիցն<sup>536</sup> և յառաքելոցն Քրիստոսի ունիմք զպատուէր՝ առնել աղաւթս խնդրուածովք ի վերայ աստուածասէր թագա-

2-3 Հ, Ա, Բ, Գ, Ե, Միհրդ., Պատկ. զգաւսն որ ի Յունաց աշխարհին փխ. զգաւս Յունաց որ ի Հայաստան աշխարհին Դ զգորսն աշխարհին որ ի Յունաց աշխարհէն: Տե՛ս ծան. 531:

3-4 Ա. զհոռոմի հաղորդութիւն փխ. զՀոռոմն ի հաղորդութիւն Միհրդ., Պատկ. զՀոռոմի հաղորդութիւն: Տե՛ս ծան. 532:

8 Բ Լուանի փխ. Լևոնի

11-12 ԶԶ, Միհրդ., Պատկ. ի Բագրևանդ գեղջէ փխ. ի Բագրևանդ գաւառէ, ի Բագաւան գեղջէ: Տե՛ս ծան. 534: Ա զարուեստն

13 Պատկ. հատցէ

14 Ա. եպիսկոպոստունն

15 Ա. Դրփն

22-26 Վերճագիրը ձեռագրիճն է

23-24 Ա. կաթողիկոսն, ԶԶ, Միհրդ., Պատկ. զարավարին

535բ ւորութեանդ և ամենայն իշխանացն և զարաց,||և բոլորովին ամենայն աստուածապահ պաղատոյդ, յոր սէրն Աստուծոյ հանգուցեալ է, և շնորհք աստուածային պարգևացն յայտնի են ի վերայ ձեր:

2 Զի ահա թագաւորութիւն մեծ և հզար քան զամենայն թագաւորու-

5 Թիւնս, որ ոչ ձեռամբ մարդկան<sup>537</sup>, այլ Աստուծոյ աշովն պսակեալ, զոր ոչ ոք կարացէ փոխանորդել՝ բայց Քրիստոսի թագաւորութիւն: Նոյնպէս և քահանայապետութիւն սուրբ՝ շնորհիւն Աստուծոյ, նախարարք և զարք քրիստոսասէրք: Եւ մեր պանծացեալ ի լոյս աստուածասէր թագա-

10 ւորութեանդ՝ անշարժ մնացաք ի մէջ շար և անաւրէն թագաւորացն Պարսից: Զի յորժամ բարձին զթագաւորութիւնն և կորուսին զամենայն զարս աշխարհին Հայաստանեայց, և ի գերութիւն վարեցին զարս և զկանայս, իսկ ի մնայելոցն վերայ սուր եղեալ և շողացուցեալ՝ ջանացան դարձուցանել ի մոլորութիւն, այլ ոչ կարացին շարժել, նաև «ամաչեցին ևս անաւրէնք յունայնութեան իւրեանց»\*: Մինչև հրաման տալ Կաւատայ

15 արքայի և որդւոյ նորին Խոսրովու, եթէ «Իւրաքանչիւր ոք զիւր հաւատս կայցի, և զՀայս նեղել ոք մի՛ իշխեսցէ. ամենեքին մեր ծառայք են, մարմնով մեզ ծառայեսցեն<sup>538</sup>, իսկ վասն հոգւոցն, որ զհոգիսն դատի՛ նա գիտէ»: Ապա դարձեալ Խոսրով Որմզդի՛ յետ գերութեանն Երուսաղէմի, հրաման ետ ամենայն եպիսկոպոսաց կողմանցն Արևելից և Ասորեստանի ժողովել ի զուռն արքունի և ասէ. «Լսեմ եթէ երկու կողմանք են քրիստոնէիցն, և մին զմիւսն նզովէ. վասն զի շհամարին<sup>539</sup> իրաւացի: Արդ՝ միաբանութեամբ ժողովեսցին ի զուռն արքունի, զի զուղիղն հաստատեսցեն և զթիւրն ի բաց մերժեսցեն»: Եւ ժողովեցան ամենայն եպիսկոպոսունք և երիցունք և ամենայն հաւատացեալք

20 կողմանցն այնոցիկ. և կացոյց ի վերայ նոցա ոստիկանս<sup>540</sup> զՍմբատ Բագրատունի, զանուանեալն Խոսրովայ Շընումն, և զբժշկապետն արքունի: Եւ անդ էր ի գերութեանն և Զաքարիաս հայրապետն Երուսաղէմի և այլ բազում իմաստասէրք, զորս գերեալ էր<sup>541</sup> Աղեքսանդրացւոց քաղաքէն. որոց հրաման ետ արքայ Խոսրով՝ արդարութեամբ ի վերայ

30 հասանել, և զճշմարիտն ծանուցանել արքայի:

Եւ ժողովեցան ամենեքեան ի դահլիճն արքունի, և եղև աղաղակ. քանզի էին ոմանք ուղղափառութեան հաւատով<sup>542</sup>, և գրով և կնքով հին թագաւորացն: Եւ այլ նեստորականք, և այլ բազում խառնիճաղանճ

\* Սաղմ. ԻԻ

2 Ա. պաղատոյդ

2 Ա. շնորհս

5 Իոյ. զոր ոչ ձեռին: Տե՛ս ծան. 537:

11 Ա. հայաստանեաց

16 Միհրդ., Պատկ. կայցէ

17 ԶԶ, Միհրդ., Պատկ. չի մեզ ծառայեսցեն: Տե՛ս ծան. 538:

17 Ա. հոգոցն Միհրդ. զհոգիսն դատէ Պատկ. զհոգին դատէ

19 Ա. յարևելից

21 ԶԶ, Միհրդ., Պատկ. նզովէ զինչ համարին: Տե՛ս ծան. 539:

25 ԶԶ, Միհրդ., Պատկ. ոստիկան: Տե՛ս ծան. 540:

28 ԶԶ, Միհրդ., Պատկ. «զորս և գերեալ էր»: Տե՛ս ծան. 541:

28 Ա. յնղէկասնդրացւոց

32 ԶԶ, Միհրդ., Պատկ. ուղղափառ հաւատով՝ գրով: Տե՛ս ծան. 542:

33 Ա. այլք բազում



աղանդոցն<sup>543</sup>: Նաև հրէապետն<sup>544</sup>, իսկ յառաջ մատուցեալ ասէր. «Մի՛ կոչեսցի Աստուած այրն այն»: Եւ ծանուցին զբանս թագաւորին:

Պատասխանի ետ թագաւորն և ասէ. «Ո՞ր չր հրամանաւ եկն նա ի 536<sup>ա</sup> տեղին/|յայն. արդ զանալից լիցի և զնասցէ»: Նոյնպէս և այլ բազմու-  
5 թիւն աղանդոց հրամայեաց հանել յատենէն. բայց միայն զՆիկիականն և զԿոստանդնուպոլսին և զԵփեսոսին և զՔաղկեդոնին հրամայեաց քննել:

Դիպեցան անդ արք երկու եպիսկոպոսք յաշխարհէն Հայոց, արք հաւատարիմք, զորս<sup>545</sup> վասն բռնութեան աշխարհին էին արձակեալ, զի 10 ծանուցեն թագաւորին, Կոմիտաս Մամիկոնէից եպիսկոպոս և Մատթէոս Ամատունեաց: Ունէին պատրաստական անդ ընդ ինքեանս զգիր սրբոյն Գրիգորի<sup>546</sup>: Եւ հրամայեաց թագաւորն հարցանել, եթէ «Յորո՞ց թագաւորաց ժամանակս եղեն ժողովքդ այդոքիկ»: Եւ նոքա ասացին, եթէ «Նիկիոյ ժողովն առ Կոստանդիանոսիւ եղև, իսկ Կոստանդնու- 15 պալսին առ Թէոդոսիւ Մեծիւ, և Եփեսոսին առ Փոքր Թէոդոսիւ, և Քաղկեդոնին առ Մարկիանոսիւ»: Պատասխանի ետ թագաւորն և ասէ. «Երից թագաւորաց հրամանքն ճշմարիտ թոյի լինել՝ քան միոյն»: Եւ ի վերայ հասեալ թագաւորն և վասն Նեստորի, թէ ո՞ր, կամ ուստի՛, կամ յորո՞ւմ ժողովի, և թէ զի՛նչ խաւսեցաւ, և հրամայեաց զՆեստորա- 20 կանսն<sup>547</sup> հանել յատենէն անտի արտաքս: Նոյնպէս և վասն Քաղկեդոնի ժողովոյն եհարց, եթէ «ո՞րք էին զլիաւորք». և ծանուցին նմա զամենայն և ասացին, եթէ ինքեանք իսկ ի Նիկիայ և Կոստանդնուպոլսի թագաւորքն Կոստանդիանոս և Թէոդոս Մեծն, իսկ յԵփեսոս՝ Կիրեղ Աղէքսանդրու եպիսկոպոսն. և ի Քաղկեդոնի՝ Թէոդորեոսու եպիսկո- 25 պոսն, որ զՆեստորին խորհէր»:

էր անդ Երան<sup>548</sup> անուանեալ կաթողիկոսն, և այլ եպիսկոպոսունք յԱսորեստանէ և յԱրուաստանէ և ի Խուժաստանէ, և յայլոց աշխարհաց. վասն որոյ հրաման ետ արքայ Խոսրով քանդել զամենեցունց նոցա զե- կեղեցիսն և սրով սատակել զնոսա, թէ ո՞չ զարձցին ի մոլորութենէն 30 և ելանիցեն յարքայական պողոտայն<sup>549</sup>:

Իսկ որք զՔաղկեդոնի<sup>550</sup> զՎիրոյ<sup>551</sup> զԱղուանից կաթողիկոսն, և այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ, և իշխանք, որք եկեալ

1 ՁԶ, Միհրդ. Պատկ. ժողովրդոց փխ. աղանդոցն Մալխ. աղանդոյն: Տե՛ս ծան. 543:

2Ձ հայրապետն փխ. հրէապետն: Տե՛ս ծան. 544:

8 Միհրդ., Պատկ. եպիսկոպոս

9 ՁԶ, Միհրդ., Պատկ. զոր փխ. զորս: Տե՛ս ծան. 545:

10 Ա. ծանուցանեն

10-11 Ա. Մաթէոս

14 Ա. Նիկիայ

14-15 Ա. Կոստանդիանուպոլիս

19-20 Ա. զՆեստորայեանքն, Միհրդ., Պատկ. զՆեստորեանքն: Տե՛ս ծան. 547:

21 Ա. չիք ոյք

23 Միհրդ., Պատկ. Եփեսոս

24 Ա. Թէոդորեոս

26 Ա. Երից., Միհրդ. չիք Երան: Տե՛ս ծան. 548: Ա կաթողիկոսն

30 Միհրդ., Պատկ. Էլանիցին

31 Ա զվիրոյ: Երից., Միհրդ., Պատկ. զՎրաց փխ. զՎիրոյ: Տե՛ս ծան. 551:

էին ի ծառայութիւն Պարսից թագաւորին, որով և զվայքարն<sup>552</sup> իսկ հրամայեաց տալ. բայց խնդրեաց յեակար ի կողմանցն երկոցունց, զՆիկիայն՝ որ առ Կոստանդիանոսիւ, և զԿոստանդնուպալսին՝ որ առ Մեծն Թէոդոսիւ, և զՆիքոսիւ, և զՆիքոսիւ, և զՔաղկեդոնին՝  
 536բ որ առ Մարկիանոսիւ, և զամենայնն քննել և ի վերայ//հասանել: Եւ իբրև ծանեալ զամենայն հաւաստեալ, և ճշմարտութեամբ ի վերայ եհաս՝ եհարց ցնոսա և ասէ. «Նոքա երեքին ընդէ՞ր ոչ ասացին երկուս բնութիւնս բաժանմամբ որպէս զսոսայս. յայտ է եթէ պարտ է և զմեզ յերկուս բաժանել և երկուս ասել թագաւորս<sup>553</sup>, և ոչ մի: Զի և ես յերկուց  
 10 բնութեանց եմ, թէպէտ ի հարէ և ի մարէ թէպէտ ի հոգւոյ և ի մարմնոյ: Բայց աստուածութիւնն, թէ յամենայն տեղոջ ոչ է, և զի՞նչ կամի զամենայն լինել կամ առնել ո՛չ կարէ, աստուածութիւնն զի՞նչ է»<sup>554</sup>:

Ապա հրամայեաց հարցանել զԶաքարիաս հայրապետն Երուսաղէմի և զիմաստասէրն, որ յԱղեքսանդրացոց քաղաքէն, զի զարդարն  
 15 ասացեն երդմամբ: Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն. «Նթէ ոչ էաք մեք խոտորնակս գնացեալ առ Աստուծոյ՝ և ոչ նա բարկութեամբ խոտորնակս գնացեալ էր առ մեզ. բայց արդ՝ երկուցեալ յԱստուծոյ՝ առաջի ձեր զճշմարիտն ասեմք: Հաւատ ճշմարիտ այն է՝ զոր ի Նիկիայն ասացին առ երանելոյն Կոստանդիանոսիւ: Եւ նմին միաբան Կոստանդ-  
 20 նուպալսին և Եփեսոսին. և նոցին միաբան Հայոց հաւատն ճշմարտութեամբ: Իսկ Քաղկեդոնի ասացեալն ոչ է միաբան նոցին, որպէս ձեր բարերարութիւնդ ծանեալ»:

Եւ հրաման տուեալ թագաւորն խնդիր առնել ի գանձու տեղւոյն, և զտին գրեալ զՆիկիայն հաւատս ճշմարիտս, և ի վերայ հասեալ ըստ  
 25 միաբանութեան հաւատոյ աշխարհիս Հայոց, որ էր կնքեալ մատանեալ Կաւատայ արքայի և որդւոյ նորա Խոսրովու: Յորոյ վերայ հրաման ետ արքայ Խոսրով, եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին: Եւ որք միաբանին ընդ Հայոց հաւատոյն ի կողմանս Ասորեստանեայց, Կամյիշուով<sup>555</sup> մետրապալիտ,  
 30 և այլք տասն եպիսկոպոս. և աստուածասէր թագուհին Շիրին<sup>556</sup>, և քաջն Սմբատ. և բժշկապետն մեծ: Իսկ զպատճէն ուղիղ խոստովանութեանն արքայ Խոսրով հրամայեաց կնքել իւրով մատանեալն և տալ ի գանձս արքունի:

Իսկ արդ՝ զի եհան զմեզ Աստուած ի ծառայութենէ խաւարային իշ-  
 35 խանութեանն և արժանի արար երկնաքաղաքացի թագաւորութեանդ, ո՞րչափ ևս առաւել քան զառաւել արժան է մեզ վայելել ի խաղաղութեան, որ և պարտիմք խնդրել<sup>557</sup> ի Քրիստոսէ Աստուծոյ վասն բարեպաշտ և աստուածասէր թագաւորութեանդ՝ անշարժ մնալ մինչև յաւիտեանն, իբրև զաւուրս երկնից ի վերայ երկրի<sup>558</sup> հանդերձ յաղթու-

1 ԶԶ, Միհրդ., Պատկ. չրվայքարն: Տե՛ս ծան. 552: Ա, Երից. յետիկար  
 3 Ա զԿոստանդնի պօլսին (եակ՝ հետո)  
 6 Ա հաւաստեալ զամենայն  
 11 Մալխ. որ յամենայն տեղոջ է փխ. թէ յամենայն տեղոջ ոչ է: Տե՛ս ծան. 554:  
 14 Ա ցիմաստասէրն  
 23 Ասողիկ ի գանձու արքային փխ. ի գանձու տեղւոյն  
 36-37 ԶԶ, Միհրդ., Պատկ. չիք քան զառաւել արժան է մեզ վայելել ի խաղաղութեան, որ և: Տե՛ս ծան. 557:

537<sup>ա</sup> թեամբդ բազմաւ, տիրելով ամենայն տիեզերաց, ծովու և ցամաքի, Որ  
 տուածային աթոռոյն. և լոյս փառաց աստուածասէր թագաւորութեանդ  
 լցեալ ունի դառ ի ներքոյս ամենայն, պսակեալդ յերկնուստ, պարծանքդ  
 5 ամենայն քրիստոնէից զարութեամբ աստուածային խաչին նշանան,  
 նմանեալդ աստուածասէր, աստուածապաշտ, աստուածաշնորհ, քաջ և  
 յաղթող փրկութեանագործ երջանիկն Երակլի հաւուն<sup>559</sup> քոյ, որ փրկեացն  
 զամենայն երկիր ի դառն դահճէն: Եւ այժմ զնոյն շնորհեսցէ Քրիստոս  
 Աստուած ի ձեռն բարեպաշտութեան քոյ:

10 Եւ որ վասն միաբանութեան հաւատոյ խնդիր հրամայեալ էր առնել,  
 և զգիր բարեպաշտութեան խոստովանութեան արձակեալ էր առ մեզ  
 անարժան ծառայսս, զոր իբրև տեսաք՝ երկրպագութիւն մատուցաք, և  
 մեծաւ խնդութեամբ փառաւորեցաք զՔրիստոս, և արհնեցաք զբարե-  
 րարութիւնն: Եւ արդ՝ այսպէս ուսաք զհաւատոցն ճշմարտութիւն: Յով-  
 15 հաննէս աւետարանիչն ասէ. «Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աս-  
 տուած, և Աստուած էր բանն»\*: Եւ նոյն դարձեալ ի Կաթողիկէին իւրում  
 ասէ. «Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուսքն, որում աղանատես իսկ եղաք,  
 ընդ որ հայեցաք, և ձեռք մեր շաւղափեցին ի վերայ բանին կենաց\*\*:  
 Ահա մարմին եղև բան\*\*\*. և կեանքն յայտնեցան, և տեսաք և վկայեմք  
 20 և պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն՝ որ էր առ հար, և երևեցաւ  
 մեզ»\*\*\*\*: Եւ նոյն Յովհաննէս ասէ յաւետարանին թէ «ԶԱստուած ուրուք  
 չի՞ք տեսեալ»\*\*\*\*\*: Եւ Պաւղոս ասէ. «Զոր ոչ ոք ետես ի մարդկանէ, և ոչ  
 տեսանել կարող է»\*\*\*\*\*: Իսկ զիա՞րդ ասէ, եթէ «Աղանատես իսկ ե-  
 ղաք»\*\*\*\*\*, և եթէ՝ «Ընդ որ հայեցաք և ձեռք մեր շաւղափեցին ի վերայ  
 25 բանին կենաց», և եթէ՝ «Որ էրն առ հար, և երևեցաւ մեզ»\*\*\*\*\*: Այն  
 կարի ահագին, որպէս պարտ իսկ է՝ ըստ աստուածութեանն. և այս կա-  
 րի խոնարհագոյն և մարդասիրաբար՝ ըստ մարդկային բնութեանս: Բայց  
 յայտ իսկ է. զի զմարմնանալն Աստուծոյ պատմէ, որպէս տէրունականն  
 պատմէ բան, եթէ «Որ ետես զիս՝ ետես զհայր»\*\*\*\*\*: «Զիս» ասաց,  
 30 որպէս զմի, և ոչ «զմեզ», որպէս զերկուս: Անդ զաստուածութենէն  
 միայն ասէ «Որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս ահեղ և  
 անմատոյց»\*\*\*\*\*, իսկ աստ՝ զմարդկութենէն և զաստուածութենէն,  
 զի անտեսանելին ոչ երևէր, այլ ի տեսանելումն տեսանէին զանտե-  
 սանելին. զի ի տեսանելումն՝ հայրենի բնութիւնն աստուածային և

\* Յովհ., Ա, 1

\*\* Ա թուղթ Յովհ., Ա, 1

\*\*\* Յովհ., Ա, 14

\*\*\*\* Ա թուղթ Յովհ., Ա, 2

\*\*\*\*\* Ա Յովհ., Դ, 12

\*\*\*\*\* Ա Տիմոթ., 2, 16

\*\*\*\*\* Ա Յովհ., Ա, 1

\*\*\*\*\* Ա Յովհ., Ա, 2

\*\*\*\*\* Յովհ., ԺԴ, 19

\*\*\*\*\* Ա Տիմոթ., 2, 16

7 Բոլ. հարն (հօր) փխ. հաւուն: Տէ՛ս ծան. 559:

16 Ա կաթողիկէին

29 Ա զի փխ. զիս

32 ԶԶ, Միերդ., Պատկ. իսկ արդ փխ. իսկ աստ

մայրենի բնութիւնն մարդկային: Զի հայրենի բնութիւնն ի մարդկային բնութիւնն միացաւ անփոփոխելի միութեամբ: Եւ ծնաւ մի տեսակ—

537բ Աստուած և մարդ, որպէս ճրագն: Տարսոնացին պատմէ.//«Մի է, ասէ, Աստուած, և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան»\*: Իսկ միջնորդն 5 միոյ ուրուք ոչ է\*\*.

զի յերկոցունցն զմիութիւնն. որպէս յԱբրահամէ և ի Սառայէ Իսահակ ծնեալ միաբանութեամբ: Այսպէս և Քրիստոս ի Հոգւոյն սրբոյ և ի Մարիամայ ծնեալ մի բնութիւն, անզանգ և անշփոթ միութեամբ, անճառ ըստ Աստուծոյ ի հաւրէ, և զի ոչ լուծաւ կուտութիւնն:

10 Արդ՝ մի է տէր Յիսուս Քրիստոս, Աստուած և մարդ. կեանք կախեալ զփայտէ առաջի աշաց ըստ նախամարգարէին ձայնի, «Որոյ վիրաւքն բժշկեցաք ամենեքեան»\*\*\*, Այսպէս և երանելին Յովհաննէս զմիաւորութիւն պատմէ ի Կաթողիկէին իւրում ասելով. «Սա է, որ եկն ջրով և հոգւով և արեամբն Յիսուս Քրիստոս. ոչ ջրով միայն, այլ արեամբ 15 և ջրով. և հոգին է վոր վկայէ, զի հոգին իսկ է ճշմարտութիւն\*\*\*\*: Սոքա երեքին են, որ վկայեն. հոգին և ջուրն և արիւնն. և երեքինն մի են: Եթէ զմարդկան ինչ զվկայութիւն ունիցիմք՝ ապաքէն Աստուծոյ վկայութիւն մեծ է<sup>560</sup>, զոր վկայեաց ի վերայ որդւոյ իւրոյ\*\*\*\*\*, եթէ «Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ. դմա լուարուք»\*\*\*\*\*: Եւ ոչ բաժանեաց յեր-

20 կուս բնութիւնս և յերկուս անձինս և յերկուս միտս. այլ «դայն» և «դմայն» ասելով՝ զմիութիւնն յայտ արարեալ: Որպէս և սոյն իսկ աւետարանիչն յայտնէ ասելովն, եթէ «Հոգին և ջուրն և արիւնն, և երեքինն մի են»\*\*\*\*\*: Եւ ի միւսումն վայրի ասէ. «Եւ արիւնն Յիսուսի որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց»\*\*\*\*\*: Ահա որդի Աստուծոյ է Յիսուս Քրիստոս և ան-

25 մարդոյ. և երկոքինն ի միասին մի բնութիւն: Արդ՝ զի անմարմին և անմահ է աստուածութիւնն՝ ամենեցուն յայտ է. բայց այն առաւել զարմացմամբ և բարեբարութեամբ լի, սքանչելիք և յոյժ մարդասիրութեան նշանակ: Զի անմարմինն մարմնանայր, և անտեսանելին տեսանիւր, անշաւաչափելին շաւաչափիւր, անժամանակն սկսանիւր, որդին Աստուծոյ

30 որդի մարդոյ լինէր, և զմարդկութիւն իւր խառնէր ի թիւ աստուածութեանն իւրում: Արդ՝ զխոնարհելն մահու շափ և մահու խաշի՝ առաքեալն Աստուծոյ ասէ, եթէ «Մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ

\* Ա Տիմոթ., Բ, 5  
 \*\* Գաղ., Գ, 20  
 \*\*\* Եսայի, ԾԳ, 5  
 \*\*\*\* Հմմտ. Ա Յովհ., Ե, 7  
 \*\*\*\*\* Ա Յովհ., Ե, 6 ևն  
 \*\*\*\*\* Հմմտ. Մարկ. Ա, 11 Թ, 7  
 \*\*\*\*\* Ա Յովհ., Ե, 8  
 \*\*\*\*\* Ա Յովհ., Ա, 7

1-2 Ա՝ մարդկային բնութիւնն փխ. ի մարդկային բնութիւնն  
 8 Ա՝ անշփոթ  
 12 Ա՝ ամենեքին  
 13 Ա՝ կաթողիկէին  
 20 Ա՝ դոյն փխ. դայն, երից. դայն փխ. դայն  
 22 երից. դոյն փխ. դմայն  
 26 Ա՝ ամենեցունց, Միհրդ., Պատկ. յայտնի է  
 27 Ա՝ մարդասիրութիւն

մահուամբ որդույ նորա»\*: Եւ դարձեալ ասէ. «Որ չիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա»\*\*: Եւ դարձեալ՝ «Եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեաւք զտէրն փառաց ի խաչ հանէին»\*\*\*: Եւ դարձեալ՝ եթէ «Աստուած զորդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմ-  
5 նոյ մեղաց՝ և վասն մեղաց. և դատապարտեաց զմեզս ի մարմնի անդ»\*\*\*\*: Զի՞նչ իցէ «դատապարտեացն». այն է, զի խափանեաց զայն որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն զսատանայ: Իսկ զի՞նչ  
538ա և առ մշակս այդոյն ասիցէ տէրն, եթէ «Իբրև մերձեցաւ ժամանակ|| պտղոյն՝ առաքեաց զծառայս իւր առ մշակս»<sup>561</sup> առնուլ զպտուղ նորա.  
10 և կալեալ մշակացն զծառայս նորա՝ զոմանս տանջեցին, զոմանս քարկոծեցին, զոմանս սպանին. յետոյ առաքեաց զորդի իւր՝ ասէ. թերևս ամաչեսցեն յորդոյ աստի իմմէ: Իսկ մշակքն իբրև տեսին զորդին՝ ասեն. սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, և մեր եղիցի ժառանգութիւնն: Եւ հանեալ զնա արտաքոյ այդոյն սպանին»\*\*\*\*: Արդ՝ ոչ միայն  
15 բանն է որդի Աստուծոյ, այլ և բանն և մարմինն. և մարմին բանին ի միասին. զի թէպէտ և մարդ է մարմինն, այլ և Աստուած է: Արդ՝ որք ի սկզբանէ ականատեսք և սպասաւորք եղեն բանին՝ աշակերտաց իւրոց յայտնապէս ուսուցին: Եւ նոքա դարձեալ իւրեանց աշակերտաց զնոյն աւանդեցին, և դարձեալ զնոյն աւանդութիւն գրով հաստատեցին: Եւ  
20 բազումք յառաքելոցն ընկալան զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան, որպէս զՅուստիանոս և զԾնանկլիտոս և զԿղեմենտոս ի Հռոմ, և զԱնանիաս յԱղեքսանդրիա, և զՇմաւոն Կղէովպեանց յԵրուսաղէմ, զԴիոնէսիոս Արիսպագացի յԱթէնս և զմիւս Դիոնէսիոս ի Կորնթոս<sup>562</sup>, և զմիւս Տիմոթէոս յԵփեսոս և զՏիտոս ի Կրետէս, և զՊաւլոս ի Գալիլեացի  
25 Ասիացոց, և զԵւոզիա, որ է Պետրոս՝ յԱնտիոք, և Երենիոս Գալիլեացի աշակերտ Պաւլոս իւրապոսի յԵկեղեցւոյն Լաւողիկեցոց: Եւ այլ ևս անթիւ բազմութիւն սքանչելի եպիսկոպոսաց և քահանայից և հոգեկիր ճարտասանից, փիլիսոփայից և սքանչելի մանկանց եկեղեցւոյ, որք զճշմարիտ հաւատս եկեղեցւոյ ըստ առաքելական ձայնին գրով դրոշմեցին յիւրա-  
30 քանչիւր եկեղեցիս:

Յայտնի ի Նիկիական ժողովոյն է, զի և նոքա լիով էին ամենեքին աշակերտք, որք յառաքելոցն ընկալան, և ի Նիկիայ զնոյն հաստատեցին:

\* Հոովմ., Ե, 10  
\*\* Հոովմ., Ը, 32  
\*\*\* Ա. Կորնթ., Բ, 8  
\*\*\*\* Հոովմ., Ը, 3  
\*\*\*\*\* Մատթ. ԻԱ, 34 ևն

5 Միհրդ., Պատկ. վասն մեղաց (աշխարհի)  
9 Բոլ. շիք առ մշակս: Տե՛ս ծան. 561:  
12 Ա. իմէ  
13 Ա. ժառանգութիւնսն  
23 Մալխ. զմեա ևս Դիոնէսիոս: Տե՛ս ծան. 562:  
24-25 Ա. ի զմիւսեայ Ա. զեսդեայ փխ. զԵւոզիա  
26 Ի լաւորիկեցոց

Քանզի ասացին զՈրդոյ, եթէ «նոյն բնութիւն Հաւր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի. որ յաղագս մեր մարդացաւ<sup>563</sup> և յաղագս մերոյ փրկութեան»: Այսպէս և սուրբն Գրիգոր յառաջնոցն ուսեալ՝ մեզ վարդապետեաց, եթէ «Որ ի մարմինն հաւատացին՝ ծանոյց նոցա զաս-  
 5 ստուածութիւնն իւր. և որք ի մարմնոյն գթեցին՝ ուրացան զբնութիւն նորա: Քանզի մարմնացաւ ի մի բնութիւն, և խառնեաց միացոյց զմարդկութիւնս ընդ իւրում աստուածութեանն, զանմահն ընդ մեռելոտոյս, զի զամենայն մարդիկ անբակ արասցէ յանմահ աստուածութենէ իւրմէ»: Արդ ունիմք մեք հաւատս ոչ ի նորագունից սահմանեալ,  
 10 այլ որպէս ընկալաք մեք ի սուրբ առաքելոցն ի ձեռն հայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի, վարդապետելով զՏրդատ արքայ և զիշխանսն  
 538բ Հայոց աշխարհին, զոգցես եթէ և ամաւր յառաջ քան||զԿոստանդիանոս: Նաև սուրբն Առնդ մեծ արքեպիսկոպոսն Կեսարու, ուր սնեալ և ուսեալ էր սուրբ Գրիգորիոս, որ և ձեռնադրեացն իսկ զնա ի քահանայապետու-  
 15 թիւն, և նա զնոյն հաստատեաց զաւանդութիւն<sup>564</sup>: Երկրորդ անգամ<sup>565</sup> դարձեալ ի Նիկիայն ժողովեցան սուրբ և ճշմարիտ հարքն հրամանաւ աստուածասէր թագաւորին Կոստանդիանոսի, և ի բաց բարձին զամբարիշտ աղանդոյն մոլեգնութիւնն, և սերմանեցին հաւատս ճշմարիտս ընդ ամենայն տիեզերս: Ուստի և մերն հանդիպեալ անդ սուրբն Ռուտա-  
 20 կէս որդի սրբոյն Գրիգորի, որ ընկալաւ զհրամանս հաւատոյ ի սուրբ ժողովոյն և ի մեծ թագաւորէն Կոստանդիանոսէ, բերեալ մատոյց առաջի քրիստոսասէր թագաւորին Տրդատայ և սուրբ քահանայապետին Գրիգորի հանդերձ հրամանաւ երջանիկն Կոստանդիանոսի: Եւ ի վերայ այնորիկ հաստատեալ կամք, և բաւական համարիմք զնոյնս ի վարդա-  
 25 պետութիւն ուղիղ հաւատոյս ըստ ասացելումն. «Մի՛ փոփոխեր զսահմանս հաւատոյ՝ զոր հաստատեցին հարքն քոյ»:

Եւ դարձեալ երրորդ<sup>566</sup> անգամ յորժամ հանդերձեցաւ թագաւորն Տրդատ, և առ ընդ իւր զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս և զնորին որդին զՌուտակէս եպիսկոպոս, և ի զինուորական կողմանէն զչորեսին գահ-  
 30 երէցս իւրոյ տաճարին, և հանդերձ Հ հազար արանց ընտրելոց զխաւորաց յամենայն սահմանացն իւրոց՝ գնաց ի Հոռոմ տեսանել զԿոստանդիանոս: Որ իբրև տեսին զմիմեանս՝ առաջի կալաւ Կոստանդիանոսի զսուրբն Գրիգորիոս. և նա խոնարհեալ յոտս սրբոյն Գրիգորի, զի աւրհնեսցի ի նմանէ: Յայնժամ միջնորդ կալան զհաւատսն՝ որ ի տէր  
 35 Յիսուս Քրիստոս, և երդամաք միաւորեցան երկոքին թագաւորքն, անշուշտ ունելով զխաղաղութիւն ընդ միմեանս մինչև յաւիտեան ի մէջ թագաւորաց երկոցունց: Եւ ևս հաստատեցին առ մեզ զհաւատոցն ճշմարտութիւնն, զոր հիմնադրեաց մեզ սուրբ Հոգին:

7-8 Ա ընդ մեռոտսս, Հ մեռելոտս  
 11 Ա զիշխանն  
 17 Ա եբարձ փխ. բարձին  
 19-20 Ա զՌիստակէս (եակ՝ հետո)  
 27 Բսլ. երկրորդ փխ. երրորդ: Տե՛ս ծան. 566:  
 30 Ա ՀՌ հազարաց արանց  
 31 Միհրդ. տեսանել զԿոստանդիանոս բառերից հետո ծանոթագրում է. «Ի միտում օրինակին անկեալ էր թուրք մի ի՛ տեղադէս յայսմանէ»:  
 37-38 Միհրդ., Պատկ. զճշմարտութիւնն

Չայլ ժողովս ուրեք լեալ մեք ոչ գիտեմք. և մեք այսպէս համարիմք, եթէ այդ աստուածասէր պալատանդ յերանելոյն Կոստանդիանոսէ և ի ժողովոյն Նիկիոյ ունի զհաւատոցդ հիմնադրութիւն: Եւ ամենայն որ աւելի քան զայն ունի, թէ և յերկնից հրեշտակ իցէ՝ նզովեալ եղիցի: Արդ 5 ամենայն վարդապետք եկեղեցւոյ, որք փրիստփայական արուեստիւ գերազանցեալք և աստուածային տեսութեանն հասու լեալ, ճշմարիտ հիմնադրութիւն՝ ընկալեալ ի սուրբ առաքելոցն՝ այտի ի ձէնջ աւետարանեցին ընդ ամենայն տիեզերս: Սուրբ և ճշմարիտ կաթողիկոսն մեր 539ա Գրիգորիոս ի Կեսարիա Կապադովկացւոց սնեալ/և ուսեալ վարդապետ 10 տեաց մեզ, յոր հիմնացեալ անշարժ կամք մինչև ցայժմ, և ի վերայ նորին ունիմք վարդապետս զսուրբ հարսն ճշմարտապատումս, որ ամենեքեան զՆիկիայն խաւսեցան—Յուստիանոս, Դիոնէսիոս և Բեկտովր՝ Հոռմայ եպիսկոպոսք, և Դիոնէսիոս Աղեքսանդրացի, և Պետրոս վկայ, և Թէոփիլոս, և Աթանաս, և Կիլրեղ Աղեքսանդրացի եպիսկոպոս, և Բարսեղ Կեսարու եպիսկոպոս, և Գրիգոր Նազիազու, և Գրիգորն Նէոկեսարու սքանչելագործ, և Գրիգոր Նիւսացի, եղբայր Բարսղի, և այլ անթիւ հովիւք ուղղափառութեան՝ համաբարբառք նոցին, որոց պատմութիւնքն յայտնի են:

Արդ՝ զի թշնամիք աստուածպաշտութեանն բազում անգամ արշա- 20ւեալ կորուսին զերկիրս մեր. և որպէս զմարդիկ երկրիս<sup>567</sup> կորուսին՝ և զկտակարանս եկեղեցւոյ և զվարդապետս նոյնպէս սպառեցին: Եւ արդ՝ կտակարանս և վարդապետս ոչ գոն. զգիրս և զգրութիւն մեք ոչ գիտեմք. բայց որչափ ինչ մնացեալ են ի տեղիս տեղիս վարդապետական պատմութիւնք՝ ուսուցանեն մեզ այսպէս զհաւատոցն ճշմարտութիւնսն, 25 որ ի Նիկիայն աւետարանեցաւ լոյս, յորս փութով հասանէր Ռատակէս. որդի սրբոյն Գրիգորի. և այսպէս քարոզեցաւ ձայն սինհոդոսական ժողովոյն Նիկիայ.—

ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ<sup>568</sup>

«Հաւատամք ի մի Աստուած հայր ամենակալ, յարարողն երկնի և 30 երկրի, երևելեաց և աներևութից: Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս, որդի Աստուծոյ, ծնեալ յԱստուծոյ հաւրէ միածին, այս ինքն յէութենէ հաւր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ. Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ և ոչ արարեալ: Նոյն բնութիւն հաւր. որով ամենայն ինչ եղև յերկինս և յերկրի երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան 35 և վասն մերոյ փրկութեան իջեալ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կա-

3 Ա Նիկիայ  
 6 Ա լիեալք փխ. լեալ  
 10 Միհրդ., Պատկ. հիմնեցեալ  
 11 Միհրդ., Պատկ. նորա  
 12 Ա Բեկտովր  
 13 Ա եպիսկոպոս կապուապետք (սկզբնապես հավանաբար եղև է եպիսկոպոսապետք):  
 20 Ա զմարդիկ երկիրս: Միհրդ., Պատկ. մարդիկ երկիրս: Տե՛ս ծան. 567:  
 21 Ա զկտակարանս և զվարդապետս  
 23 Ա վարդապետականք  
 24 ՏՏ ճշմարտութիւնսն հաւատոց  
 28 Ձեռագրերը վերնագիր չունեն:  
 31 Ա ի գոյութենէ փխ. յէութենէ

տարեկապէս ի Մարիամայ սրբոյ կուէն՝ հոգւովն սրբով: Որ և<sup>569</sup> էառ հոգի<sup>570</sup>, և մարմին, և միտք, և ամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեալք: Չարչարեալ, աշխնքն խաչեալ, թաղեալ, և յերիւր աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս՝ նովին մարմնով նստաւ ընդ աջմէ հար: 5 Գալոց է նովին մարմնովն և<sup>571</sup> փառաւք հար դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան: Հաւատամք և ի սուրբ հոգին յանեղ և ի կատարեալ, որ խաւսեցաւ յարէնս և ի մարգարէս և յաւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալս, և բնակեցաւ ի սուրբս: Հաւատամք և ի մի միայն ընդհանրական եկեղեցի, ի մի 10 մկրտութիւն, յապաշխարութիւն և ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս:

Իսկ ոչք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր որդի, կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ հոգի, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ կամ 539բ ի գոյութենէ||ասեն լինել զորդի Աստուծոյ կամ զսուրբ հոգին, կամ փոփոխելի, կամ ալլալելի՝ զայնպիսիսն նզովմք. զի և զնոսա նզովէ կաթողիկէ առաքելական եկեղեցի:

Իսկ մեք փառաւորեսցուք՝ որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պազանելով սրբոյ երրորդութեանն և միասնական Աստուածութեանն հար 20 և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եւ ապա կոչեցան ի Հոովմ, և յանդիման եղեն Կոստանդիանոսի արքայի, և ուսուցին նմա զհաւատս ճշմարիտս, և վկայութեամբ հաստատեցին զհիմնադրութիւն հաւատոյն<sup>572</sup>:

25 Յամի երեքտասաներորդի<sup>573</sup> կենարարին և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի թագաւորէ Դիոկղետիանոս երեք ընկերաւքն թագաւորութեանն Հոովմայեցոց: Եւ յարուցին հալածանս ի վերայ Քրիստոնէից, և աւերեցին զամենայն եկեղեցիս յամենայն տէրութեան իւրեանց: Եւ յամի եւթանասուն և հինգերորդի կենացն մեռաւ Կոստանդէս, և թագաւորեաց 30 Կոստանդիոս որդի իւր ի Գալլիա և ի Սպանիա. և էր քրիստոնեայ ճշմարիտ: Ետ ճակատ ընդ Մաքսիմիանոսի և ընդ Մաքսիմիանոսի որդոյ նորա, և ընդ Լիկիանոսի և ընդ Մարկիանոսի, և յաղթեաց նոցա, և կոտորեաց զնոսա. քանզի հաւատաց ի մի Աստուած տէր ամենայնի և յորդի նորա Յիսուս Քրիստոս, և գիտաց, եթէ նա ետ նմա զյաղթութիւնն: 35 Եւ հրաման ետ քրիստոնէիցն շինել զեկեղեցիս և ազատել զտեղիս՝ ուր եղեալ էին մարտիրոսք, և մեծաւ պատուով մեծարէջ զքրիստոնեայն:

1 22 շիֆ էառ  
 4-5 22 շիֆ նստաւ ընդ աջմէ հար: Գալոց է նովին մարմնովն և: Տե՛ս ծան. 571:  
 11 Ա ի դատաստանսն  
 14 Ա. եղև  
 25 Ա, Պատկանյանի ձեռագիրը, Մալխ. յամի ԺԳ երեքտասաներորդի, Երից., Դ, Միմրդ. ձեռագրերից մեկը՝ յամի երեքտասաներորդի, Միմրդ., Պատկ. յամի (երեկերիւր ութսուն և չորրորդի): Տե՛ս ծան. 573:  
 26 Ա. Դէոկղետիանոս  
 27 22 յարուցին փխ. և յարուցին  
 29 22 շիֆ կենացն  
 30 Ա ի Գալլիա փխ. ի Գալլիա



Եւ հրաման ետ ամենայն եպիսկոպոսաց ժողովել ի Նիկիա քաղաք. և ժողովեցան եպիսկոպոսունք և սուրբք բազումք: Եւ եղևն անդ աւուրս ժե. և ապա եմոյժ զնոսա ի պաղատն: Եւ մինչ ժողովեալ կային միահամուռ յոսկեաւծ պատշգամի միոջ՝ եմուտ եկաց ի մէջ նոցա, և խոստովան 5 եղև, եթէ «Քրիստոնեայ եմ և ծառայ տեառն Աստուծոյ ամենակալի, և Յիսուսի Քրիստոսի որդւոյ նորա սիրելւոյ»: Եւ եղև խնդիր ամենայն եպիսկոպոսաց վասն հաւատոյ առաջի Կոստանդիանոսի արքայի. քննեցին զգիրս, և գրեցին հաւատս ճշմարիտս, որ ի Նիկիայն աւետարանեցաւ մեզ:

10 Արդ՝ ի Ներովնէ կայսերէ մինչև յերջանիկն Կոստանդիանոս, և ի Կոստանդիանոսէ մինչև ի Մարկիանոս թագաւոր, ամենայն վարդապետաց գլխաւոր առաջնորդաց եկեղեցւոյ, ի քաջն Քէոքիլէ\* ի մեծ ճարտարապետէն<sup>574</sup> սկսեալ, արուեստաւոր<sup>575</sup> քաղաքացն Եգիպտացւոց և Աղեքսանդրացւոց և Հոռմայեցւոց և Կոստանդնուպալսեցւոց և Ան- 15 տիոքացւոց և Կեսարացւոց և Աթենացւոց և Կիւղիկեցւոց և միանգամայն ընդհանուր ամենայն վարդապետաց եկեղեցւոյ..... յաւուրս Մար- 540 կիանոսի ի ձեռն տումարին Լեոնի||Քէոքորիտոս գլուխ Քաղկեդոնի ժողովոյն, զոր նայն հաստատեաց շարափառութեամբ<sup>576</sup>:

Եւ մեզ մի՛ լիցի պարծել բայց միայն ի խաչն տեառն մերոյ Յիսուսի 20 Քրիստոսի<sup>\*\*577</sup>: Նաև Դաւիթ իսկ պարծի ի խաչ որդւոյ իւրոյ, և ոչ անարգանս համարեցաւ աստուածութեանն. այլ երբեմն կառք Աստուծոյ ասաց տէր, և երբեմն լեառն Սինեայ, և երբեմն բարձրութիւն երկնից: Քանզի ասէ. «Կառք Աստուծոյ բիրապատիկք, հազարք ուղղիչք, և տէր ի նոսա ի Սինէ սրբութեան: Ել ի բարձունս և գերեաց զգերութիւն»<sup>\*\*\*</sup>, և 25 զայլն ևս: «Կառք Աստուծոյ բիրապատիկք, հազար ուղղիչք, և տէր ի նոսա», զի բիրապատիկ է զարութիւն և փառք խաչին Քրիստոսի, որ բարձեալ ի վեր ունէր<sup>578</sup> զարարիչն երկնի և երկրի: Եւ հազարքն ի Հրէից կանգնեցին զնա: «Եւ տէր ի նոսա ի Սինէ սրբութեան»: Յո՛չս արդեաւք «ի նոսա»<sup>579</sup>. յայտ է, եթէ ի բարձունսն, յորս ել որդին Աստու- 30 ծոյ<sup>580</sup>, ի բիրապատիկ զարութիւն և փառս խաչին. ուստի և զգերութիւնն թափեաց. և վասն այնորիկ մեք ոչ ամաչեմք ասել ցորդին Աստուծոյ. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզար<sup>581</sup>, սուրբ և անմահ, որ խաչեցաք վասն մեր, ողորմեա՛ մեզ»:

\* Ղուկ., Ա, 3  
 \*\* Գաղ., Զ, 14  
 \*\*\* Սաղմ., ԿԸ 18, 19

13 Երից. հայրապետէն: Տե՛ս ծան. 574:  
 14 Ա Կոստանդինու պոլսացւոց  
 16 Ա ընթանուր  
 18 Պատկ., Մալխ. շարափառութեամբ  
 19 Ա շիֆ մի՛  
 22 Ա և իբրև երբեմն լեառն  
 23 Ա ուղիղք փխ. ուղղիչք  
 27 Բոլ. ունի փխ. ունէր: Տե՛ս ծան. 578:  
 28-30 ԶԶ, Միհրդ., Պատկ. յոյսք: Տե՛ս ծան. 579: Բոլ. շիֆ եթէ ի բարձունսն յորս ել որդին Աստուծոյ: Տե՛ս ծան. 580:  
 30 Զ. ի փառս փխ. փառս Ա զգերութիւնն փխ. և զգերութիւնն  
 32 Բոլ. շիֆ սուրբ աստուած, սուրբ և հզար: Տե՛ս ծան. 581: Ա անմահ փխ. և անմահ

Իսկ վասն տէրունեան խորհրդեանն, զոր մեծաւ զգուշութեամբ բաշխեմք՝ այսպիսի ինչ է. վասն զի ոչ ունիմք իշխանութիւն զսուրբն յանսուրբան մատակարարել: Վասն զի ունիմք մեք կանոնս համաշխարհականս վասն կարգաց և արինաց, արանց և կանանց. զի որք կուսու-

5 թեամբ զուգին՝ համարձակութեամբ վայելեն ի տէրունական մարմնոյն, ըստ այնմ, թէ «Պատուական է ամուսնութիւն ամենեկիմք, և սուրբ են անկողինք»\*: Իսկ երկրորդեանքն, և եթէ մին կոյս իցէ, և միւսն երկրորդական՝ հրամայէ ապաշխարել երկոցունցն ի միասին զերեամ մի, և ապա հաւասարել արինաց: Իսկ զերրորդեանսն և զչորրորդեանսն ոչ

10 ընդունի եկեղեցի, և ոչ իսկ իշխեն տալ զանուն հաղորդութեանն. ըստ այնմ թէ «Որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խտրէ զմարմինն տեառն»<sup>582\*\*</sup>: Եւ աստուածայինն բողոքէ ձայն՝ «Մի՛ տալ զսրբութիւն շանց»<sup>583\*\*</sup>: Նաև ի տախտակսն քարեղէնս զմի ի տասն պատգամացն զ«մի՛ շնար»<sup>584\*\*\*</sup> իւրով

15 մատամբն գրեաց:

Այլ տեսանեմք, զի և կարի իսկ ի հինսն և յառաջին փիլիսոփայսն պիղծ և գարշելի համարեալ էր պոռնկութիւնն: Զի Սողոմնի Աթենացոյ արէնս եղեալ աթենացոցն՝ ի բաց կալ ի պոռնկութենէ և ոչ ընդունել զպոռնկորդին ի ժառանգութիւն: Ղիկուրգոս Ղակեղովմայեցի արէնս եզ

20 ղակեղովմացոց՝ ի բաց կալ ի պոռնկութենէ, և ոչ թաղել իսկ զպոռնկորդին:

Զթէանով<sup>585</sup> ոմն զկին մարդ զաշակերտ Պիթագորայ հարցեալ եղև, 540բ թէ յետ քանի՛ ատուր մերձաւորութեանն//ի կին մարդ արժան է յարբունիս<sup>584</sup> մտանել: Եւ նա ասէ. «յիւրմէն նոյն արին<sup>585</sup>. յատարէն և ոչ 25 բնաւ»:

Իսկ եթէ նոցա այնպէս զողջախոհութիւնն համբուրեալ, ո՞րչափ ևս առաւել երկիրդիւ արժան իցէ և մեզ զառաքելականն կատարել զձայն, եթէ «Փախերո՞ւք ի պոռնկութենէ»<sup>586\*\*\*</sup>. զի թէպէտ և ոչ ոք է արդար և ոչ մի<sup>587\*\*\*\*</sup>, այլ ոչ եթէ պարտ իցէ ի ձեռն յանդգնութեան զաստճածային

\* Եբբ., ԺԳ, 4  
 \*\* Ա Կորնթ., ԺԱ, 29  
 \*\*\* Մատթ., է, 6  
 \*\*\*\* Եւբ., Ի, 14  
 \*\*\*\*\* Ա Կորնթ., Զ, 18  
 \*\*\*\*\* Հոովմ., Գ, 10, Սաղմ., ԺԳ, 3

2 Բոլ. այսպիսի ինչ փխ. այսպիսի ինչ է (ձեռ. Զ):  
 3 Զ մատակարարել այսպիսի հրամանով փխ. մատակարարել  
 4 Բոլ. կանոնք համաշխարհականք կարգաց փխ. կանոնս համաշխարհականս վասն կարգաց (ձեռ. Զ):  
 8 Ա զերկեամ փխ. զերեամ  
 9 Ա կամ շորրորդականն  
 10 Զ զանունն հարկանել զհաղորդութեանն  
 13 Ա զսրբութիւնս  
 13-14 Ա ի տախտակս  
 17-18 Ա Սողոմոնի փխ. Սողոմնի, Ա եզ փխ. եղեալ  
 19 ԶԶ, զի կուրգոս Երից. զի կուրգոս-ը ջնջել, դարձել է Լիկուրգոս Ա ղակեղովմացոց  
 22 Ա Զթէանով, Միհրդ., Պատկ. Աթէանով: Տե՛ս ծան. 563:  
 24 ԶԶ, Միհրդ., Պատկ. արէն է փխ. նոյն արին: Տե՛ս ծան. 585:  
 26 Ա զողջախոսութիւն

զմարմինն թշնամանել: Զի՞ պիղծն մերձեսցի բերան, կամ զիա՞րդ դո-  
 դումն ոչ կալցի զճաշակողն՝ ի հուրն կենդանի աներկիւղաբար մերձենալ,  
 զոր ոչ սերովբէն իսկ ձեռաւքն համարձակէր մերձենալ<sup>586</sup>, այլ ունելեալք,  
 և ոչ մարգարէն արժանաւոր լինէր ճաշակել զնա, այլ միայն մերձենալով  
 5 ի շրթունս նորա, անդէն ընկալաւ զմաքրութիւն\*:

Իսկ արդ՝ արժա՞ն իցէ անսրբոցն և պղծոցն յերկրաւորացս յանդգնել  
 յարքունիս: Եւ կամ ո՞չ իսկ թոյլ տացէ մտանել, և կամ թէ ո՞չ հալածա-  
 կանս փախիցէ. այլ մանաւանդ եթէ և կամեսցի ևս յարքունական սե-  
 դանոցն վայելել: Ո՞րչափ ևս առաւել յերկնաւոր թագաւորին յարքունիս  
 10 ունիցի որ համարձակութիւն մտանել՝ ոչ ունելով զհանդերձ մաքրու-  
 թեան, և աներկիւղ լրբութեամբ մատիցէ ի հուրն կենդանի, և ճաշա-  
 կեսցէ յարքունական և յերկնային սեղանոցն, այլ ոչ տարահալած լեալ  
 արտաքս մերժեսցի, ըստ այնմ, թէ «Ի բաց կացէք յինէն ամենեքեան՝  
 15 ոչք գործէք զանարեւնութիւն»\*\*:

Մեք ընկալաք ի սրբոցն Գրիգորէ և յաստուածասէր թագաւորացն՝  
 ի Կոստանդիանոսէ և ի Տրդատայ<sup>587</sup>, և յետ այնորիկ ապա կարգեցաւ  
 մեզ Նիկիական լոյսն ի ձեռն նորին իսկ երջանիկն Կոստանդիանոսի, և  
 ի նորին աւանդութեան վերայ հաստատեալ կամք, և ոչ խոտորիմք ի  
 20 նմանէ ո՞չ յաջ և ոչ յահեակ:

Եւ վասն այլ ժողովոց, որպէս և վերագոյն ասացաք՝ ճշմարտիւ ինչ  
 մեք ոչ գիտեմք, բայց որպէս հին վարդապետացն ասացեալ է՝ սուրբ և  
 ճշմարիտ ասացեալ է զժողովն որ ի Կոստանդնուպոլիս ժողովեցան ի  
 խափանումն Նեստորի<sup>588</sup>: ԶՔաղկեդոնի ժողովն շասացին ճշմարիտ.  
 25 քանզի ասացին՝ առաջնորդք ժողովոյն այնորիկ որ յմիեսոս՝ զմիտան  
 Նեստորի ունէին, բայց ոչ իշխէին ի վեր հանել: Եւ թէպէտ և արարին  
 զժողովն Եւտիքի ամբարշտութեանն՝ նման նորին այլանդակութեանն՝  
 զիւրեանց հաստատեցին շարափառութիւն: Քանզի Եւտիքոսն այն վրի-  
 պեալ ասէր, թէ «Յերկնից եբեր Քրիստոս զմարմինն». իսկ նոքա զմի  
 30 Քրիստոսն յետ միանալոյ բանին և մարմնոյ՝ յերկուս բնութիւնս բա-  
 ժանեցին, և ետուն կարծիս՝ զսուրբ զԵրրորդութիւնն շորրորդութիւն  
 յաւելլով: Քանզի գտեալ զտումարն Լեոնի արձան շարափառութեան  
 541ա իւրեանց՝ ի վերայ նորին հաստատեցին զիւրեանց/դժնդակութիւն, և  
 ասացին զմի տէր Յիսուս Քրիստոս յերկուց բնութեանց, ոչ ինչ բարձեալ  
 35 բնութեանցն զանազանութիւն, վասն միանալոյն առաւել ողջախոհել  
 զարութիւն երկաքանչիւր բնութեանց<sup>589</sup>, և զերկաքանչիւրսն ի մի մի  
 դէմս միաւորեալ՝ ո՞չ աստուածային բնութեանն տալ զմարդկային բնու-

\* Հմմտ. Եսայի, 2, 5—7,  
 \*\* Սաղմ., 2, 9

1-2 Մինրդ. զիարդ դողումն ոչ կալաւ Պատկ. զիանդ դողումն ոչ կալաւ Մալխ. զիա՞րդ  
 ոչ դողումն կալաւ, փխ. զիա՞րդ դողումն ոչ կալցի (ձեռ. 2):  
 3 Բոլ. շի՛ գոր ոչ սերովբէն իսկ ձեռաւքն համարձակէր մերձենալ: Տե՛ս ծան. 586:  
 10 Բոլ. հանդերձ  
 17 Մինրդ., Պատկ. Կոստանդիանոսէ փխ. ի Կոստանդիանոսէ  
 32 Ա. յաւելլով  
 37 Ա. բնութեն  
 37 Ա. ոչ զմարդկային

թեանն նուստութիւնս, և ոչ մարդկային բնութեանն՝ զաստուածային բնութեանն ճոխութիւն: Անարժան և անկարելիս համարել՝ Աստուծոյ մարդ լինել, և ի կնոջէ ծնանել, և զամենայն կրել զմարդկային կիրս, և ի խաչին բեւեռել և մեռանել:

- 5 Արդ՝ եթէ այդ ամենայն անկարելի էր՝ լինել ըստ մարմնոյ իւրոյ բանին Աստուծոյ՝ անկարելի էր ապա կուտին առանց առն յղանալ, և անապական ծնանել զմարդացեալն Աստուած, և անկարելի էր մարդումն հինգ նկանակէ զհինգ հազարսն կերակրել, և զջուրն ի գինի փոխել, և թրովն զաշս կուրին բանալ, և ի վերայ ջրոյն շրջել, և զդէս հալածել, և զմեռեալս յարուցանել, և զայլն ևս: Իսկ մեք և ամենեքին որ զուղիղն խոստովանիմք, զի չէր լոկ մարդկային մարմինն, այլ աստուածութիւնն էր ի մարմինն: Իսկ զայնոսիկ, որ յետ միատրութեանն պատառեն բաժանմամբ՝ խոտեմք և նզովեմք ըստ երանելոյն Կիրղի Աղեքսանդրացոյ որ ասէ, «Եթէ որ ոչ խոստովանեսցի, եթէ Աստուած է ճշմարտութեամբ էմմանուէլ, վասն որոյ աստուածածին կոյսն Մարիամ ծնեալ ընդ մարմնոյ զմարմնացեալ զբանն Աստուած՝ նզովեալ լիցի»: «Եթէ որ ոչ խոստովանեսցի ի մարմնի բնութեամբ միանալ բանին Աստուծոյ, և մի Քրիստոս զնոյն հանդերձ մարմնով Աստուած միանգամայն և մարդ՝ նզովեալ լիցի»: «Եթէ որ զմի Քրիստոս բաժանեսցէ յերկուս դէմս յետ
- 20 միանալոյն, և միայն մերձաւորութիւն և յարելութիւն ասիցէ, իբրև պատուով և կամ ճոխութեամբ զաւրութիւն գտեալ, և ոչ միութիւն բնութեամբ՝ նզովեալ լիցի»: Եւ մեզ տէրունականն բողոքէ ձայնն. «Այնպէս լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան», այսինքն հաւատոյն ճշմարտութիւն, «որպէս զի տեսանիցեն զգործս ձեր բարիս, և փառաւոր առ-
- 25 նիցեն զհայր ձեր որ յերկինս է»<sup>590</sup>:
- Իսկ մեք որպէս ընկալաք սփռամանս երկնաբաղաբացի և բարեպաշտ քո թագաւորութեանդ, քաջ յարանց<sup>590</sup> արքայ Կոստանդին, լաւագոյն համարեցաք զսահմանադրութիւնն ուղղափառ հաւատոյն, զոր ընկալանն հարքն մեր ի բուն առաջին վարդապետացն՝ գրով<sup>591</sup> ծանուցանել
- 30 առաջի աստուածասէր և բարեպաշտ թագաւորութեանդ ի ձեռն պատճենիս: Զի և մեր անարժանութեանս շնորհեսցէ Աստուած արժանաւորապէս խնդրել յԱստուծոյ զգիտութիւն բարւոյ, և աւրհնել զաստուածասէր և զբարեբար տէրութիւնդ, զի յաւիտեան տիրեսցես ի վերայ ամենայն
- 541բ երկրի, ծովու և ցամաքի, //յաղթութեամբ բազմա:

35

Գ Լ Ո Ւ Խ Խ Է

Յարձակումն Իսմայելացոց ըստ տեսլեան Դանիէլի: Իբf խոովութեան ի Կոստանդնուպոլիս. սպանումն երեւելի արանց<sup>592</sup>:

Ճառեցից զարձեալ զրուցելով զբանս ըստ շարիս հասելոյ ի վերայ մեր ժամանակի<sup>593</sup>, վասն պատուման առագաստին հին հաւատոյ, և

<sup>590</sup> Մատթ, Ե, 16

2 Մալխ. ծանօթագրում է. «քվում է ուղղելի՝ համարեալ»:

10 Սիհեդ., Պատկ. և զայլսն ևս

27 Բոլ. արանց: Տե՛ս ծան. 590:

29 Բոլ. գործով փխ. գրով: Տե՛ս ծան. 591:

31 Սիհեդ., Պատկ. պատճենիս Ա. անարժանութիւնս

թեանն նուաստութիւնս, և ոչ մարդկային բնութեանն՝ զաստուածային բնութեանն ճոխութիւն: Անարժան և անկարելիս համարել՝ Աստուծոյ մարդ լինել, և ի կնոջէ ծնանել, և զամենայն կրել զմարդկային կիրս, և ի խաչին բեւեռել և մեռանել:

5 Արդ՝ եթէ այդ ամենայն անկարելի էր՝ լինել ըստ մարմնոյ իւրոյ բանին Աստուծոյ՝ անկարելի էր ապա կուսին առանց առն յղանալ, և անապական ծնանել զմարդացեալն Աստուած, և անկարելի էր մարդումն հինգ նկանակէ զհինգ հազարսն կերակրել, և զջուրն ի գինի փոխել, և թրովն զաշս կուրին բանալ, և ի վերայ ջրոյն շրջել, և զդէս հալածել, և

10 զմեռեալս յարուցանել, և զայլն ևս: Իսկ մեք և ամենեքին որ զուղիղն խոստովանիմք, զի չէր լոկ մարդկային մարմինն, այլ աստուածութիւնն էր ի մարմինն: Իսկ զայնոսիկ, որ յետ միատրութեանն պատառեն բաժանմամբ՝ խոտեմք և նզովեմք ըստ երանելւոյն Կիրղի Աղեքսանդրացոյ որ ասէ, «Եթէ ոք ոչ խոստովանեցի, եթէ Աստուած է ճշմարտու-

15 թեամբ էմմանուէլ, վասն որոյ աստուածածին կոյսն Մարիամ ծնեալ ընդ մարմնոյ զմարմնացեալ զբանն Աստուած՝ նզովեալ լիցի»: «Եթէ ոք ոչ խոստովանեցի ի մարմնի բնութեամբ միանալ բանին Աստուծոյ, և մի Քրիստոս զնոյն հանդերձ մարմնով Աստուած միանգամայն և մարդ՝ նզովեալ լիցի»: «Եթէ ոք զմի Քրիստոս բաժանեցէ յերկուս դէմս յետ

20 միանալոյն, և միայն մերձատրութիւն և յարելութիւն ասիցէ, իբրև պատուով և կամ ճոխութեամբ զարութիւն գտեալ, և ոչ միութիւն բնութեամբ՝ նզովեալ լիցի»: Եւ մեզ տէրունականն բողոքէ ձայնն. «Այնպէս լուսարեցցի լոյս ձեր առաջի մարդկան», այսինքն հաւատոյն ճշմարտութիւն, «որպէս զի տեսանիցեն զգործս ձեր բարիս, և փառաւոր առ-

25 նիցեն զհայր ձեր որ յերկինս է»\*:

Իսկ մեք որպէս ընկալաք զհրամանս երկնաբաղաբացի և բարեպաշտ քո թագաւորութեանդ, քաջ յարանց<sup>590</sup> արքայ Կոստանդին, լաւագոյն համարեցաք զսահմանադրութիւնն ուղղափառ հաւատոյն, զոր ընկալանն հարքն մեր ի բուն առաջին վարդապետացն՝ գրով<sup>591</sup> ծանուցանել

30 առաջի աստուածասէր և բարեպաշտ թագաւորութեանդ ի ձեռն պատճենիս: Զի և մեր անարժանութեանս շնորհեցէ Աստուած արժանաւորապէս խնդրել յԱստուծոյ զգիտութիւն բարոյ, և աւրհնել զաստուածասէր և զբարեբար տէրութիւնդ, զի յալիտեան տիրեսցես ի վերայ ամենայն  
541բ երկրի, ծովու և ցամաքի, յյաղթութեամբ բազմա:

35 **Գ Լ Ո Ւ Խ Խ Է**

Յարձակումն Իսմայելացոց ըստ տեսլեան Դանիէլի: Իբf խոովութեան ի Կոստանդնուպոլիս. սպանումն Երեւելի արանց<sup>592</sup>:

Ճառեցից զարձեալ զրուցելով զբանս ըստ շարիս հասելոյ ի վերայ մեր ժամանակի<sup>593</sup>, վասն պատառման առադաստին հին հաւատոյ, և

\* Մատթ, Ե, 16  
2 Մայիս. ծանոթագրում է. «քվում է ուղղելի՛ համարեալ»:  
10 Սիբեդ., Պատկ. և զայլսն ևս  
27 Բոլ. արանց: Տե՛ս ծան. 590:  
29 Բոլ. գործով փխ. գրով: Տե՛ս ծան. 591:  
31 Սիբեդ., Պատկ. պատճենիս Ա. անարժանութիւնս

զարն իրեանց ի յապտամբութեան յետ իրացն եղելոց<sup>602</sup>, զի ասացին զնմանէ ընդ թագաւորին, թէ «Ասէր նա, թէ պարտ է արեան Մագիստորոսին խնդիր առնել»: Եւ Մագիստորոս էր<sup>603</sup> իշխան զարուն որ յայնմ՝ կողմանէ և սիրելի ամենայն զարացն<sup>604</sup>: Եւ Սմբատ էր իշխան զարու  
 5 Թրակացւոց իշխանացն. և Մանուէլ գործէր ի Կոստանդնուպոլիս զգործ մագիստրէի<sup>605</sup>: Եւ ոչ կոչեաց թագաւորն զՄագիստորոսն համարձակապէս իշխանութեամբ, երկուցեալ յապտամբութենէ զարացն. այլ կոչեաց առ ինքն զասպետն Սմբատ և երդմնեցոյց զնա ի խաշն տէրունական, որ ընդ անձին իւրում՝ զի մի՛ ումեք հանցէ զբանսն ի վեր, և արձակեաց զնա ի զարս իւր, և զի խաւեցի ընդ Մագիստորոսն խաղաղութեամբ՝ տարցի զնա խաբելով: Իսկ նա երթեալ ոչ կարաց զնա խաբել, և մանաւանդ զի ոչ թագուցաւ ի նմանէ բանն: Ապա խաւեցաւ ընդ ամենայն իշխանս զարուն, և ետ նմա հրամանն արքունի: Իսկ նորա և ամենայն զարն իբրև ոչ կարացին ընդդիմանալ արքունի հրամանին՝  
 10 Ետուն զնա ի ձեռս նոցա. զոր կալեալ կապեցին զնա և տարան յանդիման թագաւորին: Եւ վասն այսորիկ զարք Թրակացւոց իշխանացն խորհեցան ի վերայ նորա մահ, և ասացին զնմանէ պատճառս ապտամբութեան խորհելոյ, զի մեռցի. բայց արքայն խնայեաց ի նա, և մերժեալ ի նոցանէ ապրեցոյց զնա:

Գ Լ Ո Ի Խ Խ Ը

Պատերազմ Իսմայելացւոց ընդ Պարսիկս: Ման Յազկերտի: Բարձուն Սասանեան աւերութեանն: Հայք մտանեն ի ծառայութիւն Իսմայելացւոց  
 25 առաջնորդութեամբ Թէոդորոսի Ռշտունայ: Գալ Կոստանդնի կայսեր ի Հայս բազումք յիշխանացն Հայոց զան առ նա եւ ցուցանեն զմիամտութիւն իւրեանց:

Եւ եղև ի քսաներորդի ամի<sup>606</sup> Յազկերտի արքայի Պարսից, ի մե-  
 30 տասան ամի Կոստասի կայսեր, որ կոչեցաւ յանուն հար իւրոյ Կոստանդին<sup>607</sup>, և յամին ԺԹ-երորդի Իսմայելացւոց տէրութեանն, զարն Իսմայելացւոց, որ էին յերկրին Պարսից և Խուժաստանի՝ գնացին ընդ արևելս ի կողմանս Պահլաւն կոչեցեալ երկրի, որ է երկիր Պարթևաց, ի վերայ Յազկերտի արքային Պարսից: Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց  
 35 նոցա, և ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա մերձ ի սահմանս Քուշանաց, և կոտորեցին զամենայն զարս նորա: Եւ փախուցեալ անկաւ ի զարս Թէտալաց, որ էին ի կողմանցն եկեալ նմա յաւզնակա-

2—3 Ա. Մագիստորոսին (Երից. Մագիստորոսն) խնդիր առնել: ՋՁ, Միհրդ., Պատկ. չիք Մագիստորոս էր: Տե՛ս ծան. 603:  
 5 Ա. Կոստանդինուպոլիս  
 6 Երից. մագիստրէի Ա. կոչեաց փխ. ոչ կոչեաց  
 9 Ա. անձին իւր  
 29 Երից. չիք եղև Ա. չիք ամի: Տե՛ս ծան. 606:  
 32 Ա. Իսմայելայ որ էին  
 33 Ա. երկիր Միհրդ., Պատկ. երկրի որ էր  
 35 Ա. նորա փխ. նոցա

նութիւն: Եւ իշխանն Մարաց<sup>608</sup>, զբրմէ վերագոյն ասացի, եթէ գնաց  
 յարեւելս առ արքայն իւրեանց և ապստամբեալ ի տեղի մի ամրացաւ, և  
 խնդրեաց երդումն յիսմայելացոցն, և գնաց յանապատն ի ծառայութիւն  
 Իսմայելացոցն: Իսկ զաւրացն Քէտալաց կալեալ զՅազկերտ սպանին,  
 5 որ կալաւ զթագաւորութիւնն ամս Ի: Եւ բարձաւ տէրութիւնն Պարսից և  
 ազգին Սասանայ, որ կալան զթագաւորութիւնն ամս Շեթ<sup>609</sup>:

542բ Արդ՝ իբրև ետես արքայն Իսմայելի զյաջողումն//յաղթութեանս, և  
 զի բարձաւ թագաւորութիւնն Պարսից, իբրև լցան ամբ Գ պայմանի  
 խաղաղութեանն՝ ոչ կամեցաւ այլ աւելի առնել խաղաղութիւն ընդ թա-  
 10 գաւորն Յունաց, այլ հրաման ետ զաւրաց իւրոց ունել գործ պատերազմի  
 ընդ ծով և ընդ ցամաք, զի բարձցէ և զայն ևս թագաւորութիւն յերկրէ,  
 յերկոտասաներորդ ամի<sup>610</sup> թագաւորութեանն Կոստանդի<sup>611</sup>:

Եւ ի նմին ամի ապստամբեցին Հայք և ի բաց կացին ի թագաւորու-  
 թեանէն Յունաց և հնազանդեցան ի ծառայութիւն արքային Իսմայելի,  
 15 եղին ուխտ ընդ մահու, և ընդ դժոխոց դաշինս կոեցին թէ՛ղորոս Ռշտու-  
 նեաց տէր<sup>612</sup> ամենայն իշխանաւրն Հայոց, ի բաց ընկեցեալ զաստուա-  
 ծային դաշնաւորութիւնն: Արդ՝ խաւսէր ընդ նոսա իշխանն Իսմայելի և  
 ասէր. «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ՝ որչափ  
 ամաց և դուք կամիջիք. և ոչ առնում ի ձէնջ սակ զերեամ մի<sup>613</sup>. ապա  
 20 յայնժամ տաջիք երդամբ, որչափ և դուք կամիջիք: Եւ հեծեալ կալէք  
 յաշխարհիդ ժե հազար, և հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի  
 անդարեմ<sup>614</sup>. և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլ ուր<sup>615</sup> և  
 հրամայեմ՝ պատրաստ լիցին ի գործ. և ոչ արձակեմ ի բերդորայն ամի-  
 րայս, և ոչ տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչև ցմի հեծեալ: Թշնամի մի՛  
 25 մտցէ ի Հայս. և եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զաւրս  
 յաւանականութիւն՝ որչափ և դուք կամիջիք: Եւ երդնում ի մեծն Աստուած՝  
 եթէ ոչ ստեմ»: Եւ այնպէս քակեալ պատառեաց զնոսա ի Հոռոմոց նե-  
 ուին<sup>616</sup> արբանեակն<sup>617</sup>, զի թէպէտ և բազում աղաչանս և պաղատանս  
 զրեաց առ նոսա կայսրն և կոչեաց զնոսա առ ինքն, և ոչ կամեցան լսել  
 30 նմա: Ապա ասէ. «Ես գամ ի Կարնոյ քաղաք, և հկայք դուք առ իս»: Եւ  
 կամ՝ «Ես գամ առ ձեզ, և տամ ձեզ աւանութիւն շի ոգի<sup>618</sup>, և խորհիմք ի  
 միասին, եթէ զինչ արժան իցէ առնել». սակայն և այնպէս ոչ կամեցան  
 լսել նմա:

2 Միհրդ., Պատկ. ապստամբեալ փխ. և ապստամբեալ  
 9 Միհրդ., Պատկ. զխաղաղութիւն  
 12 Ա. երկոտասաներորդ  
 Միհրդադայանի հին օրինակը (=2) ավարտվել է «թագաւորութեանն Կոստանդի»  
 բառերից հետո: Տե՛ս ծան. 611:  
 13 Երից. ի սմին փխ. ի նմին  
 15 Ա. Քէրդոս  
 19 Միհրդ սակ (վէրկի) է ամի: Տե՛ս ծան. 613:  
 22 Գ շիք անդարեմ  
 22 Միհրդ., Պատկ. այլուր և հրամայեմ: Տե՛ս ծան. 615:  
 26 Մալխ. կամիցիք  
 28 Միհրդ. շիք նեուին արբանեակն: Տե՛ս ծան. 617:  
 31 Ա., Բ., Գ., Դ. և արհնութիւն փխ. օգնութիւն (որն ունեն Երից., Միհրդ.): Տե՛ս ծան.  
 618:

Եւ ամբաստանութիւն ամենայն զարացն Հոռոմին և տրտունջ զՌըշտունեաց տեառնէն լինէին և զՀայոց՝ առաջի թագաւորին իւրեանց վասն հարուածոց՝ որ եղեն ի Մարդոցէսն<sup>6:9</sup>: Զի ասացին, թէ «Միաբանեցան ընդ Իսմայելացիսն. զմեզ վստահացուցին և զզարսն ճապաղել ետուն 5 յասպատակ յԱտրպատական, և զնոսա ածին ի վերայ մեր յանկարծակի, և հարկանել ետուն զմեզ. և մեր ամենայն ինչ անդ անկաւ. բայց թող երթամք ի Հայս և մեր իրացն խնդիր առնեմք»:

Յայնժամ արքայ Կոստանդին հաւանեցաւ առնել զկամս զարացն: Եւ առ զզարս իւր և գնաց ի Հայս ը հազարաւ: Եւ իբրև եհաս ի Դերջան<sup>620</sup> 10 ընդ առաջ եղեն նմա արք իսմայելացիք և մատուցին նմա թուղթ յիշխանէն իւրեանց, որ էր գրեալ այսպէս, թէ «Հայք իմ են, ՚՛անդ մի՛ երթար. 543ա ապա թէ երթաս՝ ես գամ ի վերայ քոյ, և առնեմ զքեզ որ անդէն փախչել ոչ կարես»: Իսկ արքայ Կոստանդին ասէ. «Աշխարհն իմ է՝<sup>621</sup> ես երթամ. դու եթէ գաս ի վերայ իմ՝ Աստուած արդարութեան դատաւոր է»:

15 Եւ անտի գնացեալ եկն ի Կարնոյ քաղաք. յամի ԺԺ-երորդի թագաւորութեան իւրում, ի քսան ամի Իսմայելացուց տէրութեանն:

Եւ նստաւ արքայ Կոստանդին ի Կարնոյ քաղաքի աւուրս ինչ. անդ ընդ առաջ եղեն նմա իշխանք և զարք Չորրորդն կոչեցեալ Հայոց<sup>622</sup>, և այլ ամենայն զարք և իշխանք, որ յայնմ կողմանէ գնացեալ էին յՌշտունահայնէն: Ընդ առաջ ելին նմա Սպերացիքն, իշխանքն Բազրատունեաց, և Մանաղայքն, և Դարանաղայքն, և որք յԵկեղեաց զաւառէ, և ամենայն զարք տեղեացն այնոցիկ, և Կարնացիք, և Տայեցիք, և Բասենացիք: Եւ անդ ընդ առաջ եղեն նմա իշխանք Վանանդայ հանդերձ զարուն իւրեանց, և Շիրակացիք, և Խորխոռունին, և արք տանն Դիմաքսենից: Անդ 25 ընդ առաջ եղև նմա Մուշեղ Մամիկոնեան համազգեալքն իւրովք հանդերձ և այլովք ոմամքք իշխանաւք, և զար բստ Այրարատայ կողմանէ. Առաւելեանք, և Առանեանք և Վարաժնունիքն, և Գնթունիք, և Սպանդունիք, և այլք ընդ նոսին: Ընդ առաջ եղև նմա կաթուղիկոսն Ներսէս, եկեալ ի Տայոց: Եւ պատմեցին ամենայն իշխանքն թագաւորին և զմիտս 30 և զկամս ապստամբութեան Ռշտունեաց տեառն, և փութանակի երթեկէս առ նա դեսպանացն Իսմայելի: Յայնժամ նզովեաց թագաւորն և ամենայն զարք իւր զՌշտունեաց տէրն, և լուծին զնա ի պատուոյ իշխանութեանն, և արձակեցին այլ այլ փոխանակ նորա, և ինչ ընդ նմա: Որ իբրև չոզան հասին առ նա՝ կալան զնոսա և կապեցին, և ետուն տանել ի 35 բերդն Բաղիշոյ, և զոմանս ի կղզիս Բզնունեաց. և ինքն չոզաւ եմուտ

2 Ա տեռնէն  
 9 Միհրդ., թերջան: Տե՛ս ծան. 620:  
 11 Միհրդ., Պատկ. մի երթաք  
 12 Ա անդէն փխ. անգրէն  
 13 Բել. իմ փխ. իմ է: Տե՛ս ծան. 621:  
 15 Պատկ. ԲԺ-երորդի  
 17 Ա Կոստանդինի  
 21-22 Ա, Միհրդ. յեկեղեց Ա տեղացն  
 24 ՏՏ Խորխոռունին  
 26 Ա Արայրատոյ  
 32 Միհրդ., Պատկ. իշխանութեանն  
 35 Ա. Բաղաղիշոյ



յԱղթամար կղզի. և դարացն կողմանցն այնոցիկ ետ հրաման երթալ  
ամրանալ չիրաքանչիւր գաւառի: Եւ էին ընդ նմա միաբան Վրացին և  
Աղուանն և Սիւնին, որք ըստ հրամանի նորա գնացին չիրաքանչիւր աշ-  
խարհս և ամրացան ի նմին: Իսկ Թէոդորոս Վահևունեաց տէրն կալաւ  
5 զբերդն Արփայս. և Գրիգոր որդի նորա որ էր փեսայ<sup>623</sup> Ռշտունեաց տեառ-  
նըն, և Վարազ Ներսէհն Դաշտկարին<sup>624</sup> ամրացան ի բացւոջն<sup>625</sup>, և բռնա-  
ցան ի վերայ գանձուցն. զի անդ էին ամենայն գանձքն աշխարհին, եկե-  
ղեցւոյ և իշխանաց և վաճառականաց:

Իսկ արքայ Կոստանդին իբրև գայն լուաւ՝ կամեցաւ առնուլ աւար  
10 զդարացն բազմութեան, և երթալ ձմերել ի Հայս, զի բարձցէ զերկիրն ի  
միջոյ: Եւ անդէն անկան ի վերայ երեսաց իւրեանց կաթուղիկոսն և Մու-  
շեղ ամենայն իշխանաւքն Հայոց, և մեծաւ աղաչանաւք և արտասուալից  
543բ պաղատանաւք խնդրեցին/որորմութիւն, զի մի՛ ըստ նոցա յանցանացն  
իսպառ բարկասցի և զերկիրն կորուսցէ: Լուաւ արքայ պաղատանաց  
15 նոցա և արձակեաց անդրէն զգաւրացն բազմութիւնն. և ինքն զնաց  
յԱյրարատ<sup>626</sup> ի հազարաւ: Եւ երթեալ ի Դուին՝ նստաւ ի տան կաթու-  
ղիկոսին: Եւ արար արքայ զՄուշեղ Մամիկոնէից տէր՝ իշխան Հայոց  
հեծելոցն, և արձակեաց զնա ի կողմն Սեպհական զնդին Գ հազարաւք.  
նոյնպէս արձակեաց ի դարաց իւրոց ի Վիրս և յԱղուանս և ի Սիւնիս՝  
20 բակտել զնոսա ի միաբանութենէ: Այլ<sup>627</sup> դարքն նստէին շուրջ զԱրփա-  
յիւ<sup>628</sup> ի լեռնակողմանն և ի դաշտակողմանն: Վիրք<sup>629</sup> թէպէտ առ ժա-  
մանակ մի ոչ կամեցան հնազանդել, սակայն յետոյ նուաճեալ ի ծառա-  
յութիւն: Բայց Աղուանն և Սիւնին և գունդն Սեպհական ոչ հնազանդեցան,  
զորոց զերկիրն աւար առեալ տարան զինչ և գտին, և դարձան անդրէն  
առ արքայ:

Գ Լ Ո Ի Խ Խ Թ

25 Վասն Հայոց կաթողիկոսին Ներսիսի. հաղորդել նորա եւ այլոց եպիսկո-  
պոսաց ընդ Հոռոմս առ Երկիւղի: Մի ոմն յեպիսկոպոսաց բռնադատի ի  
կայսերէն՝ հաղորդել ընդ կաթողիկոսին: Դարձ Կոստանդնի ի Կոս-  
տանդնուպոլիս: Փախուտ Ներսիսի յերեսաց իշխանացն Հայոց: Թէո-  
դորոս Ռշտունի հարկանէ զգաւս Յունաց, առնու զՏրապիզոն, Երբայ  
30 առ Մափաս և ընդունի գիշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց, Աղուանից  
եւ Սիւնեաց: Պատրաստութիւն Իսմայելացոց առ ի առնուլ զԿոստանդ-  
նուպոլիս:

Արդ՝ ասացից փոքր մի ի շատէ վասն Հայոց կաթուղիկոսին Ներ-  
սիսի, զի էր նա բնակութեամբ ի Տայոց, ի գեղջէն, որում իշխանն կոչեն:

1 Ա. յաղթարմար  
5 Բոյ. էր փեսայ փխ. որ էր փեսայ: Տե՛ս ծան. 623:  
10 Ա. երթեալ  
16 Ա. յԱրարատ  
18 Միհրդ., Պատկ. սեփհական  
20-21 Ա. Երեյ., Միհրդ., Պատկ. դարբայի փխ. զԱրփայիս: Տե՛ս ծան. 628:  
21 Բոյ. ի դաշտակողմանն, իսկ փխ. ի դաշտակողմանն: Վիրք: Տե՛ս ծան. 629:  
23 Միհրդ., Պատկ. յԱղուանն և ի Սիւնին և գունդն սեփհական

5 Եւ սնեալ ի մանկութենէ յաշխարհին Յունաց ե ուսեալ զլեզուս ե զգարութիւն շոտոմին, ե շրջեալ ընդ աշխարհս զարու կարգաւ զինուորութեան. ե հաստատեալ զմիտ իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի ե ի վերայ տումարին Լեոնի: Եւ ոչ ումեք ի վեր հանէր զխորհուրդս ամբարշտութեանն, մինչև եհաս յեպիսկոպոսութիւն յաշխարհին, ե անտի կոչեցաւ յաթոռ կաթողիկոսութեան: Եւ էր այր առաքինի վարուք, պահաւք ե աղաւթիւք: Բայց ի սրտի իւրում ծածկեալ ունէր զթիւնս դառնութեան, ե խորհէր հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոյն, բայց ի վեր հանել զբանն ոչ համարձակէր: Մինչև եկն արքայ Կոստանդին ե նստաւ ի տան կաթողիկոսին, ե քարոզեցաւ յեկեղեցւոյն սրբոյն Գրիգորի ժողովն Քաղկեդոնի յաւուր կիրակէի: Եւ մատեաւ պատարագ հոտոմերէն ի հոտոմ երիցուէ, ե հաղորդեցաւ թագաւորն ե կաթողիկոսն ե ամէն եպիսկոպոսունքն, ո՛ր կամաւ ե որ ակամայ: Եւ այսպէս շարժեաց կաթողիկոսն զճշմարիտ հաւատս սրբոյն Գրիգորի, զոր<sup>630</sup> կալեալ

15 էր ամենայն կաթողիկոսացն հաստատուն հիմնադրութեամբ ի սրբոյ յեկեղեցւոյն ի սրբոյն Գրիգորէ մինչև ցայսաւր: Եւ զսուրբ ե զվճիտ ե զականակիտ աղբերացն պղտորեաց զչուրս, զոր ի վաղնչուց իսկ ունէր ի միտս իւր կաթողիկոսն, ե ոչ իշխեաց յայտնել մինչև ցայն աւր: Եւ ապա գտեալ ժամանակ՝ կատարեաց զկամս իւր. մատնէր զմի մի յեպիսկոպոսացն, ե բեկանէր ահիւ: Մինչ զի առ մահուն երկիրի<sup>631</sup> ամենեքեան զհրամանսն հաղորդութեանն կատարէին. մանաւանդ զի մեռեալ էին երանելիքն, որք էին հիմնաւորագոյնք:

544ա //Բայց յումեմնէ եպիսկոպոսէ ըմբերանեալ առաջի թագաւորին՝ պապանձէր: Քանզի յառաջագոյն ձեռն արկեալ էր նորա ե ամենայն

25 եպիսկոպոսացն, նզովէր զժողովն Քաղկեդոնի ե զտումարն Լեոնի, ե մերժէր ի հաղորդութենէ շոտոմին. ե կնքեալ զնա մատանեաւ կաթողիկոսին ե ամենայն եպիսկոպոսացն ե մեծամեծ իշխանացն մատանեաւքն. ե ետուն առ նա զի պահեսցէ յեկեղեցւոյն: Իսկ յորժամ մատեաւ պատարագն, ե հաղորդեցան ամենայն եպիսկոպոսունքն՝ եպիսկոպոսն

30 այն, զորմէ վերագոյն ասացի՝ ոչ հաղորդեցաւ, այլ շոգաւ էջ ի բեմբէն, ե ծածկեցաւ յամբոխին:

Եւ իբրև կատարեցին զգործ հաղորդութեանն ե եմուտ թագաւորն ի սենեակն՝ մատեաւ կաթողիկոսն ե շոտոմ երիցունքն ե արարին ամբաստանութիւն զեպիսկոպոսէն զայնմանէ, եթէ «Ոչ նստաւ յաթոռ, ե ոչ

35 հաղորդեցաւ ընդ մեզ, անարժան համարեցաւ զմեզ ե զձեզ, շոգաւ էջ ի բեմբէն, ե ծածկեցաւ յամբոխին»: Եւ խոովեցաւ թագաւորն ե հրաման ետ երկու արանց, զի կալցեն զնա, ե տարցեն յանդիման նորա ի սենեակն:

6 Ա վարիւք  
 9 Ա զբանսն  
 11 Ա ժողովոյն  
 11 Ա կիրակէի  
 12 Ա իրիցուէ  
 14 Բոլ. զի փխ. զոր: Տե՛ս ծան. 630:  
 33 Ա ի սինիակն  
 33 Ա իրիցունքն  
 33 Միեռդ., Պատկ. զամբաստանութիւն

Պատասխանի ետ թագաւորն և անէ. «Քահանա՞յ ես»: Ասէ եպիսկոպոսն. «Եթէ կամի Աստուած և ձեր փառք»: Ասէ թագաւորն. «Եւ զի՞նչ ես դու, որ ես՝ քո թագաւոր, և դա՛ քո կաթուղիկոս և հայր մեր. և դու ոչ արժանի համարիս զիս ընդ քեզ հաղորդութեանն, և ոչ զդա»: Ասէ

5 եպիսկոպոսն. «Ես այր մեղաւոր եմ և անարժան, շեմ արժանի ընդ ձեզ հաղորդութեան, բայց թէ Աստուած արժանի առնէր՝ ընդ ձեզ համարէի թէ ընդ Քրիստոսի ի սեղանոյ և ի նորին ձեռացն վայելեցայց»: Ասէ թագաւորն. «Թո՛ղ զայդ և զայս ասա ինձ, եթէ դա Հայոց կաթու-

10 ղիկո՞ս է, թէ ոչ»: Ասէ եպիսկոպոսն. «Այնպէս որպէս զսուրբն Գրիգոր»: Ասէ թագաւորն. «Ունի՞ս զդա առ կաթուղիկոս»: Ասէ «Այո՛»: Ասէ թագաւորն. «Հաղորդի՞ս ընդ դմա»: Ասէ. «Այնպէս՝ որպէս ընդ սրբոյն Գրիգորի»: Ասէ թագաւորն. «Իսկ այսաւր վասն է՞ր շահորդեցար»: Ասէ. «Բարերար թագաւոր, մեք զձեզ մինչ ի յորմս նկարեալ տեսանէաք<sup>632</sup>

15 դողումն ունէր զմեզ, թող թէ ահաւասիկ դէմ յանդիման տեսանեմք, և բերան ի բերան խաւսիմք: Մեք մարդիկ եմք տգէտ և տխմար, ո՛չ լեզու գիտեմք և ոչ դպրութիւն, բայց եթէ նախ ուսանիմք՝ և ի վերայ հասանիմք. այլ զբարերար հրամանսդ սբուժել ով<sup>633</sup> իշխէ: Այս աշխարհ<sup>634</sup> ամենայն կարգաց հրամանք յայս տեղոյս և ի դմանէ ի դուրս ելանէ:

20 Յառաջ քան զայս շորս ամաւր՝ ժողով արար դա, և զամենայն եպիսկոպոսունս այսր ժողովեաց, և վասն հաւատոյ զիր ետ առնել, և կնքեաց նախ իւրով մատանեան, և ապա մեր, և ապա ամենայն իշխանայն մատանեաւք: Եւ զիրն այն այժմ առ դմա է. հրամայեցէ՛ք խնդրել և տեսանել<sup>635</sup>: Եւ նա կայր պապանձեալ: Եւ գիտացեալ թագաւորն զնենգու-

25 թիւն նորա՝ յանդիմանեաց զնա բանիւք բազմաւք ի||լեզու իւր: Եւ հրաման ետ թագաւորն երթալ հաղորդել ընդ կաթուղիկոսին: Եւ իբրև կատարեաց եպիսկոպոսն զհրամանս թագաւորին՝ ասէ<sup>636</sup>. «Աւրհնեսցէ Աստուած զբարերար և զաստուածասէր թագաւորութիւնդ յաւիտեան, տիրելով ի վերայ ամենայն ծովու և ցամաքի հանդերձ յաղթութեամբ

30 բազմաւ»: Աւրհնեաց և թագաւորն զեպիսկոպոսն և ասէ. «Աւրհնեսցէ Աստուած զքեզ. այնպէս արարեր՝ որպէս վայել է քո իմաստութեանդ, և ես շնորհակալ եմ»<sup>637</sup>:

Եւ սաստիկ ստիպով փութացուցանէին զարքայ ի Կոստանդնուպոլիս վաղ հասանել անդր, և զնաց փութանակի: Եւ արար իշխանն

35 Հայոց զՄորիանոս ումն հանդերձ հայ զաւրուն՝ որ ի նոցուն կողմանէ:

Իբրև զնաց արքայ Կոստանդին ի Դըւնայ՝ զնաց և կաթուղիկոսն ընդ նմա: Եւ երթեալ դադարեաց ի Տայս, և այլ ոչ դարձաւ ի տեղի իւր. զի իշխանն Ռշտունեաց և այլ իշխանքն որ ընդ նմա՝ անհնարին ցասամաբ փքացեալ էին ի վերայ նորա:

6—7 Ա համարի թէ ընդ Քրիստոսի սեղանոյ և նորին

12 Ա սմա փխ. դմա

14 Միւրդ., Պատկ. ի յորմն

18 Միւրդ., Պատկ. բուժելով իշխէ փխ. սբուժել ո՞վ իշխէ: Տե՛ս ծան. 633:

22 ՁՁ, Պատկ. մատենեաւք փխ. մատանեաւք

27 Միւրդայալանի օրինակն ունեցել է ամէն փխ. ասէ, երից. ասեն: Տե՛ս ծան. 636:

34 Միւրդ., Պատկ. իշխան

38 Միւրդ., Պատկ. անհնարինն

Իսկ Թէոդորոս Ռշտունեաց տէր դարանակալ եղև յԱղթամար կղզի, ինքն և փեսայ իւր Համազասպ Մամիկոնէից տէր. և խնդրեաց չիւր զաւրս ի յիմայելացուցն, և եկն է հազար այր յաւգնականութիւն նմա, և նստոյց զնոսա յԱղիովիտ և ի Բզնունիս, և ինքն առ նոսա ելեալ, կայր 5 ի մէջ նոցա:

Եւ իբրև անցին աւուրք ձմերայնոյն, մերձ ի դատիկն մեծ՝ փախեալ Հոռոմ և անկաւ ի Տայս. և հանին անտի. և ոչ ուրեք կարաց զետեղել, այլ զնացին փախստական մինչև մերձ ի ծովեզրն: Եւ աւերեցին զամենայն երկիրն<sup>638</sup>. առին և զՏրապիզոն քաղաք, և խաղացուցին առ և աւար և 10 գերութիւն բազում յոյժ:

Յետ այսորիկ զնաց Թէոդորոս Ռշտունեաց տէրն առ Մաւիաս իշխանն Իսմայելի ի Դամասկոս և ետես զնա մեծամեծ ընծայիւր: Եւ ետ նմա իշխանն Իսմայելի հանդերձս ոսկեղէնս և ոսկեթելս, և վառ<sup>639</sup> մի նորին աւրինակաւն: Եւ իշխանութիւն ետ նմա զՀայս և զՎիրս և զԱղու- 15 անս և զՍինիս, մինչև ցԿապկոհ և ցՊահակն<sup>640</sup> Ճորայ, և արձակեաց զնա պատուով: Եւ նորա պայման էր եղեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն:

Եւ եղև յամին մետասաներորդի<sup>641</sup> Կոստանդի լուծումն լինի հաշտութեանն՝ որ ընդ Կոստանդին և ընդ Մաւիաս իշխանն Իսմայելի: Եւ 20 հրաման ետ արքայն Իսմայելի ժողովել զամենայն զաւրս իւր ի կողմանս արևմտից, և ունել զլործ պատերազմի ընդ Հոռոմոց թագաւորութեանն, զի առցեն զԿոստանդնուպոլիս, և ի բաց բարձցեն զայն ևս թագաւորութիւնն:

Գ Լ Ո Ւ Խ Մ

Թուրք արքային Իսմայելի առ թագաւորն Յունաց Կոստանդին: Գալ 25 Մաւիասայ ի Քաղկեդոն: Մտրիկ հողմոյ խորտակէ եւ ցրուէ գնաւատումն Իսմայելացոց. զաւրն Իսմայելացոց թողու զՔաղկեդոն: Այլ բանակ Իսմայելացոց, որ արշաւէ ի Վիրս՝ հերքի ի բոյ ձմերայնոյ: Իշխանք Հայոց միաբանին եւ բաժանեն զՀայս ի միջի իւրեանց: Աղէտ ժողովրդեանն:

30 «Եթէ կամիս, ասէ, խաղաղութեամբ ունել զկեանս քոյ՝ ի բաց կաց լընդունայն պաշտամանէդ յայձմանէ, զոր ուսեալդ ես ի մանկութենէ: 545ա Ուրացի՛ր/զՅիսուսն զայն և զարձի՛ր առ Աստուածն մեծ, զոր եսն պաշտեմ, զԱստուած հար մերում Աբրահամու: Եւ զբազմութիւն զաւրաց քոց արձակեա՛ ի քէն չիրաքանչիւր տեղիս: Եւ ես արարից զքեզ իշխան մեծ 35 ի կողմանսդ յայդոսիկ, և արձակեմ ի քաղաքդ ոստիկանս, և քննեմ զամենայն զանձս և հրամայեմ բաժանել ի շորս մասունս, երեքն՝ ինձ և

4 Ա յազովիտ

4 Ա եւ փխ. ելեալ

15 Ա զկապկոս

15 Միւրդ., Պատկ. ցՊարհակն Մալի. զպարհակն: Տե՛ս ծան. 640:

24 Թուրք արքային Իսմայելի առ թագաւորն Յունաց Կոստանդին բառերը ձեռագրին են: Ա, Բ, Երից. այդ բառերին ավելացնում են որ ունէր զայս ինչ գրեալ:

մի՛ թեզ: Եւ տամ թեզ զարս որչափ և կամիցիս, և առնում ի քէն սակ՝ որչափ և դու կարես տալ: Ապա թէ ոչ՝ Յիսուան այն, զոր դու Քրիստոս կոչես, մինչ զանձն ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, զթեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց»:

- 5 Եւ ժողովեցան ամենայն զարքն, որ ի կողմանս արեւելից, ի Պարսից և ի Խուժաստանէ և ի կողմանէն Հնդկաց և յԱրուաստանէ և յԾղիպտացուց կողմանէ առ Մաւիաս իշխան զարուն, որ նստէր ի Դամասկոս: Եւ կազմեցին նաւս պատերազմականս յԱղեքսանդրիա և յամենայն քաղաքս ծովեզերեայս. և լցին զինուք և մեքենայիւք զնաւս. ԳՃ նաւս
- 10 մեծամեծս, առ մի նաւն հազար այր յընտիր ընտիր հեծելոց: Եւ հրամայեաց գործել նաւս թեթևս հինգ հազարս: Եւ գումարեաց ի նոսա արս սակաւս<sup>642</sup> վասն թեթևութեան, առ մի նաւ արս հարիւր, զի արագապէս ձախրեսցեն սլանալով առ մեծամեծ նաւաւք շուրջանակի ի վերայ մկանանց ծովուն. և արձակեաց զնոսա ընդ ծով: Եւ ինքն առ զզարս իւր որ
- 15 ընդ իւր, և զնաց ի Քաղկեդոն: Իբրև եհաս ի վերայ ամենայն երկրի՝ հնազանդեցան ամենայն բնակիչք աշխարհին ի ծառայութիւն՝ որ զծովեզերքն և լեռնականս և դաշտականս<sup>643</sup>: Իսկ բազմութիւն զարաց Հոռոմին շոգան մտին ի Կոստանդնուպալիս պահապան քաղաքին. և ապականիչն<sup>644</sup> շոգաւ եմոտ ի Քաղկեդոն, յամի երեքտասաներորդի Կոստանդնու:
- 20 Կազմեալ ունէր յեզր ծովուն նաւս բազումս թեթևս, զի յորժամ ծանրագոյն նաւքն հասանիցեն ի Քաղկեդոն՝ նա փութանակի հասցէ յազնականութիւն նոցա: Եւ զթուղթ արքային իւրեանց ետուն տանել ի քաղաքն առ Կոստանդին:

- Իւ առ արքայ զթուղթն և եմոտ ի տունն Աստուծոյ, և անկաւ ի վերայ երեսաց իւրոց և ասէ. «Տե՛ս, տէր, զնախատինսս, զոր նախատեցին զթեզ Հազարացիքս այս. եղիցի՛ ողորմութիւն քոյ, տէր, ի վերայ մեր, որպէս յուսամք ի թեզ: Լի՛ց զերեսս նոցա, անարգանաւք, և խնդրեսցեն զանուն քո, տէր ամաշեցեալ խոովեսցին յաւիտեանս յաւիտենից, և ամաթալից կորիցեն. ծանիցեն զի անուն քոյ տէր է, և դու միայն
- 30 բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի»: Եւ վերացոյց զպսակն ի զխոյ իւրմէ, և մերկացաւ զծիրանիսն և զգեցաւ քորձ, և նստաւ ի վերայ մոխրոյ, և հրամայեաց պահս քարոզել ըստ արիւնակին Նինուէի՝ ՚ի Կոստանդնուպալիս<sup>645\*</sup>:

\* Յովնան, Գ. 7

5 Ա ի պարսաց

9 Ա ծովեզերայս

9 Ա զնաւան

12 Բոյ. Սակաւ փխ. սակաւս: Տե՛ս ծան. 642:

13 Ա ճախարեսցեն

14 Ա մկանաց

16 Միհրդ., Պատկ. աշխարհին բնակիչք

19 Միհրդ., շիք ապականիչն: Տե՛ս ծան. 644:

20—21 Ա զեզր, Ա նաւան փխ. նաւքն: Բոյ. քաղկեդովն

21—22 Միհրդ., Պատկ. հասանիցին Ա յօգնութիւն

22 Ա թուլտ (նակ՝ հետո)

25 Միհրդ., Պատկ. զնախատինս

Եւ ահա եկին հասին ի Քաղկեդոն նաւք մեծամեծք յԱղեքսանդրաց-  
 ւոց կողմանէ հանդերձ ամենայն փոքր նաւովքն և ամենայն կազմու-  
 ծովքն իւրեանց, զի էր կազմեալ ի վերայ նաւացն մանզլիոնս, և մե-  
 քենայս հրացանս, և մեքենայս քարընկէցս, աղեղնաւորս և պարսաւորս.  
 5 զի յորժամ հասանիցեն ի պարիսպ քաղաքին՝ ի վերուստ ի գլխոյ աշ-  
 տարակացն դիւրեաւ ելեալ ի պարիսպն՝ անկցին ի քաղաքն: Եւ հրա-  
 մայեաց զնաւսն կարգել ճակատ առ ճակատս, և դիմել ի վերայ քա-  
 ղաքին:

Եւ իբրև մեկնեցան ի ցամաքէն իբր երկու ասպարիզաք՝ անդ էր  
 տեսանել զպարութիւն ահին տեառն. զի ակնարկեաց տէր յերկնից  
 10 սաստիկ հողմոյ բռնութեամբ, և յարեաւ հողմն, մրրիկ մեծ, և դղրդեցաւ  
 ծովն ի ներքուստ անդնդոց ի վեր, և բարձրացեալ դիզանային ալիքն  
 նորա իբրև զկատարս բարձրաբերձ լերանց, և հողմն փոթորկեալ ի վերայ  
 նոցա ճայթէր իբրև զամպ և գոշէր, և խոխոջին յանդնդոց լինէին: Եւ  
 15 անկան աշտարակքն, կործանեցան մեքենայքն, քակտեցան նաւքն, և  
 ընկղմեցան բազմութիւն զաւրացն ի խորս ծովուն. և մնացեալքն ի վերայ  
 տախտակացն ցնդեցան ի վերայ ալեաց ծովուն, և տարաբերեալ այսր  
 և անդր յելեէջս ալեացն կործանեցան. զի եբաց ծովն զբերան իւր, և  
 եկուլ զնոսա. և ոչ մնաց ի նոցանէ, և ոչ մի: Եւ ապրեցոյց Աստուած  
 20 յաւուր յայնմիկ բարձրացեալ բազկաւ զքաղաքն ի ձեռն աղաւթից աս-  
 տուածասէր թագաւորին Կոստանդիանոսի<sup>646</sup>, և ոչ զաղաբեաց հողմոյն  
 բռնութիւնն և ծովուն խռովութիւնն մինչև ցվեց աւուրս<sup>647</sup>:

Եւ եղև իբրև տեսին Իսմայելացիքն զձեռն ահի տեառն՝ բեկաւ սիրտ  
 նոցա. և ելեալ ի գիշերի ի Քաղկեդոնէ՝ զնացին ի տեղի իւրեանց: Եւ  
 25 միւս զաւրն, որ նստէր ի կողմանս Կապուտկացւոց՝ արար պատերազմ  
 ընդ զաւրացն Յունաց. զոր եհար Յոյնն, և զնաց փախստական ի կող-  
 մանս Արուաստանի, հարեալ աւար զՉորրորդ Հայս:

Եւ եղև յետ անցանելոյ աշնանային ժամանակին, ի մերձեալ  
 ձմեռայնոյ՝ եկն զաւրն Իսմայելի և նստաւ ի Դուին. և խորհէր երթալ  
 30 հարկանել զՎիրս սրով սուսերի: Խաւսէր ընդ նմա<sup>648</sup> ի ձեռն պատգամի  
 սպառնալեալք, զի կամ եկեսցեն ի ծառայութիւն նոցա, և կամ<sup>649</sup> ի բաց  
 թողցեն զերկիրն և զնասցեն: Իսկ նոքա շառին յանձն առնել այնպէս,  
 այլ պատրաստեցան ընդդէմ նոցա ի պատերազմ: Եւ զնաց Իսմայելացիին  
 ի վերայ նոցա պատերազմաւ՝ երթալ սատակել զնոսա իսպառ:

35 Այն-ինչ եղև նոցա ի ճանապարհ ելանել՝ անկաւ ի վերայ նոցա  
 ցուրտ և ձիւն ձմեռայնոյ. վասն որոյ չոզան փութանակի և զնացին ի  
 կողմանս Ասորեստանի, և ի Հայս անիրաւութիւն ինչ ոչ գործեցին:

Իսկ իշխանքն Հայոց/որ ի Յունաց և որ ի Տաճկաց կողմանէ, Հա-  
 մազասպ և Մուշեղ, և այլն ամենայն եկեալ ի մի վայր միաբանեցան, և

7 Ա. դիմեալ

8 Ա. ասպարիսօք

15 Ա. աշտարակսն

15 Ա. մեքենայս Ա. նաւսն

17-18 Ա. այսր անդր

26 Ա. յունն

35 Ա. այս ինչ փխ. այն ինչ

արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր և արինհեղութիւն, և անցուցին խաղաղութեամբ զաւուրս ձմերայնոյն, զի և զշինականսն ապրեցուցանեն: Քանզի Ռշտունեաց տէրն անկաւ յախտս հիւանդութեան, և չոգաւ անկաւ յԱղթամար կղզի: Եւ ոչ գոյր նմա լինել 5 կարողութիւն ելանել արտաքս կամ խորհել ինչ: Եւ բաժանեցին զերկիրն ըստ թուոյ իւրաքանչիւր հեծելոց, և կարգեցին հարկապահանջս ոսկւոյ և արծաթոյ:

Եւ աստ էր տեսանել զաղէտս տարակուսի, զարէն հիւանդաց, յորժամ տազնապեցցի ցաւն, և հատանիցի ի խաւսից՝ այնպիսի ինչ եղեն. 10 զի ոչ գոյր մարդկան տեղի փախստի և թագստեան, և ոչ խնայել ի ներքուստ, այլ որպէս ոք զի անկցի ի ծով՝ և ելս ոչ կարիցէ գտանել:

Իսկ իբրև զայն ետես Ռշտունեաց տէրն՝ խնդրեաց յիւր<sup>650</sup> զարս յիսմայելացոցն, զի հարցէ զՀայն<sup>651</sup> և հալածական արասցէ, և զՎիրս սատակեսցէ ի սուր սուսերի:

15

## Գ Լ Ո Ւ Ն Ս Ա.

Ապստամբութիւն Մարաց յիսմայելացոց: Բեկումն զաւրութեան Իսմայելացոց յայնկոյս ճորայ Պահակին եւ փախուստ մնացելոցն ընդ դժուարս լերինն Կովկասու:

Յայսմ ամի ապստամբեցան Մարք ի ծառայութենէն Իսմայելի և 20 սպանին զիշխանն հարկապահանջին արքային Իսմայելի, ապաւէն և թիկունս իւրեանց արարին զամուրս աշխարհին Մարաց, զանտառս խորածորս, զվիհս, զվիմուսս, և զխորածորս զժնդակս՝ որ զգետովն Գազայ<sup>652</sup> և զլերամբն Մարաց, զժիր և զքաջ սղզացն զաւրութիւնս, որ բնակեալ էին ի նոսա, Գելն և Դելումն<sup>653</sup>:

25 Քանզի ոչ կարացին համբերել դառն և զժնդակ ծառայութեանն և հարկին ծանրութեանն որ ի վերայ նոցա, զի անդրէն ի նոցանէ միոյ միոյ ամի առնուին ՅԿԵ պայուասիկ զրամ<sup>654</sup>. և որ ոչն կարէր տալ՝ առնուին ընդ միոյ միոյ զրամի մարդ մի, և ի բաց բարձին զհեծելութիւն և զիշխանութիւն աշխարհին: Վասն այնորիկ տուեալ նոցա զանձինս 30 իւրեանց ի կշիռս՝ լաւ համարեալ զմահ քան զկեանս. զմի յերկուցն գտանել,—կա՛մ մեռանել՝ և կամ ազատել ի շար ծառայութենէն: Եւ սկսան զմնացեալ մարդիկն զարս ժողովել, և գունդս գունդս կազմել, և թերևս կարաւցեն զերծանել ի ժանեաց վիշապին և դառնաշունչ զազանէն<sup>655</sup>:

Արդ՝ իբրև ետես բազմութիւն զարացն Իսմայելի, եթէ ոչ յաջողի 35 նոցա գործն ի կողմանէ ամուր լերանցն Մարաց. քանզի ոչ իսկ նուաճեցան ի ծառայութիւն նոցա (Կեթրուս և Սկիւթեայ)<sup>656</sup>, որ են Գեղք<sup>657</sup>,

12 Բոլ. իւր փխ. չիւր: Տե՛ս ծան. 650:

23 Ա զլերամբնն

24 Բոլ. Դելն (Դէլն) փխ. Գելն: Տե՛ս ծան. 653:

27 Միհրդ. պայուասիկ: Տե՛ս ծան. 654:

33 Միհրդ. շի՛ ժանեաց վիշապին և դառնաշունչ զազանէն: Տե՛ս ծան. 655:

36 Ա կեղրուս, եսիկիւթիայ Միհրդ. կեթրուս եսկիւթեայ

36 Երբց. որ են զետք ի Դելամի: Բոլ. զետք փխ. Գեղք: Տե՛ս ծան. 657:

- Դեկումբ, հանդերձ ամենայն ամրաբնակ բազմութամբն: Եւ բազումք ծախեցան՝ յամուրս և ի խորածորս գահավէժ լինելով, և բազումք խոցոտեալ նետիւք ի խարձան դժկոտս ի քաշ և արի պատերազմողացն՝
- 546բ ոստուցեալ ի բաց ի կողմանցն յայնցանէ, դէմ եզին/|երթալ ի կողմանս
- 5 հիւսիսոյ, յազգն՝ որ ըստ Կասբիական դրացն: Չոգան հասին ի կապանս Ճորայ: Եւ անցեալ ընդ ներքս ընդ կապանն՝ աւերեցին զամենայն կողմանս աշխարհին որ առ լեռնոտամբն. և ելեալ ընդդէմ նոցա զարս սակաւս, որում Հոնաց դուռն կոչեն, հարին զնոսա, զի էին կողմնապահք տեղւոյն:
- 10 Եկն այլ զար ի կողմանցն Թետայաց, և բաղխեցին զմիմեանս զարթեամբ սաստիկ, և ի պարտութիւն մատնեցաւ զարն Իսմայելի առաջի զարացն Թետալաց: Եւ հարին զնոսա և սատակեցին սրով սուսերի: Եւ ապրեալքն փախստական ոչ կարացին ճողոպրել ընդ կապանն, զի եկն այլ զար նոցա ի նոցա թիկանց. և նոցա դէմս ի լեռոն արարեալ ի
- 15 դժուարս մեծի լերինն Կակասու, ելին ընդ կողածս<sup>658</sup> լերինն հազիւ հազ, սակաւք ճողոպրեալք մաղապուրծ, մերկ և բոկ, հետևակ և վիրաւոր, շոգան անցին ի կողմանս Տիզբոնի, յերկիր բնակութեան իւրեանց:

Գ Լ Ո Ի Խ Մ Բ

- Մուշեղ Մամիկոնեան մտանէ ի ծառայութիւն Իսմայելացոց: Թէոդորոս
- 20 Ռշտունի եւ այլ իշխանք հնազանդին ի ծառայութիւն Իսմայելացոց: Պատերազմ Յունաց եւ Իսմայելացոց ի Նախնաւանի եւ բեկումն Յունաց: Առումն Կարեոյ. աւերումն Երկրին Հայոց, Աղուանից եւ Սիւնեաց ի ձեռն Իսմայելացոց եւ տալ պատանդս: Մահ Թէոդորոսի Ռշտունայ: Համագասպ Մամիկոնեան կարգի իշխան Հայոց: Կաթողիկոսն Ներսէս դառնայ
- 25 յաթոռ կաթողիկոսութեանն եւ կատարէ զշինուած եկեղեցւոյն Զուարթնոց: Հայք ապստամբին յԻսմայելացոց. կոտորումն պատանդացն: Մուշեղ Մամիկոնեան ի բաց կայ ի ծառայութենէ Իսմայելացոց եւ կոչի ի պաղատն: Խոտվութիւն ի մէջ զարացն Իսմայելի բաժանել նոցա ի շորս մասունս եւ կոտորել զմիմեանս: Յաղթել Մալիասայ հակառակորդաց,
- 30 միապետել եւ առնել խաղաղութիւն: Վերջաբան:

Իսկ Մուշեղ Մամիկոնէից տէրն ապստամբեալ ի Յունաց կողմանէն՝ հնազանդեցաւ ի ծառայութիւն Իսմայելի. և ի նմին ամի զարն Իսմայելի որ ի Հայաստան աշխարհի՛ կալան ի ծագաց ի ծագս զերկիրն ամենայն: Եւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն և ամենայն իշխանքն աշխարհին միա-

35 բանեալ հնազանդեցան ի ծառայութիւն, և ամենայն իրաւք փութային զկամս նոցա կատարել, զի երկիւղ անհնարին մահու կայր ի վերայ նոցա:

Յամին յայնմիկ ի ձեռն նախանձու եղբար իւրոյ մատնեցաւ երա-



նեկի այրն աստուածասէր Արտաւազդն Դիմաքսեան և տուաւ ի ձեռն անողորմ դահճի Հաբիբն անուանեալ զաւրավարի, որ նստէր յԱրուճն Աշնակի: Եւ սպան զնա սատակմամբ շարաշար մահուամբ:

Եւ էին ատուրք ցրտաշունչ ձմեռայնոյն, և նեղէր զնոսա Յոյնն. և 5 նոքա ցրտոյն ոչ կարէին ելանել և տալ պատերազմ ընդ նոսա, այլ ելին յանկարծակի և գնացին անցին զգետովն, և չոգան ամրացան ի Զարեհաւանի<sup>659</sup>: Իսկ Յոյնն իբրև ետես զայն՝ ոչ ինչ փոյթ արար վասն նոցա, այլ աւարեաց զբերդն Դըւնայ, և գնաց ի Նախճաւան, և մարտեաւ ընդ բերդին, զի աւարեսցէ զնա ևս: Եւ էր զաւրավար զաւրուն Յունաց Մաւ- 10 րիանոս ոմն, զոր ասէին այր հաւատարիմ:

Արդ՝ ի հասանել ժամանակի գարնայնոյն՝ կազմեցաւ պատրաստեցաւ ի պատերազմ ընդ զաւրուն<sup>660</sup> Իսմայելի: Եւ Մաւրիանոս յամառեալ՝ զիրն խորհէր կատարել զգործ: Եւ արշաւեաց Տաճիկն ի վերայ Յունին, որ մարտ եղեալ կոուէին ընդ բերդին Նախճաւանի. եհար զնոսա 15 և սատակեաց ի սուր սուսերի, և զմնացեալսն փախստական արարեալ:

Եւ գնաց Մաւրիանոս//փախստական, և չոգաւ անկաւ ի Վիրս: Իսկ զաւրն Իսմայելի դարձաւ ի նոցանէ և պաշարեաց զԿարնոյ քաղաք, և մարտ եղեալ կոուեցաւ ընդ նոսա. իսկ նոքա ոչ կարացին զդէմ ունել նոցա պատերազմաւ, բացին զդուրս քաղաքին, և հնազանդեցան ի ծառայու- 20 թիւն: Եւ նոցա մտեալ ի քաղաքն ժողովեցին ոսկի և արծաթ և զամենայն բազմութիւն ընչից քաղաքին. և կողոպտեաց զամենայն երկիրն Հայոց, զԱղուանս, զՍիւնիս, և մերկացոյց զամենայն եկեղեցիս: Եւ կալաւ պատանդ զզխատր իշխանս աշխարհին և զկանայս և զուստերս և զդստերս բազմաց:

Եւ թէողորոս Ռշտունեաց տէրն համազգեալքն իւրովք գնաց ընդ նոսա. և տարեալ իշուցին զնոսա յԱսորեստան: Անդ մեռաւ Թէողորոս Ռշտունեաց տէրն, և մարմին նորա բերաւ ի գաւառ իւր, և թաղեցաւ ի գերեզմանի հարց իւրոց: 25

Եւ ունէր զիշխանութիւն Հայոց աշխարհիս Համազասպ Մամիկոնէից տէրն, որդի Դաթի, այր առաքինի յամենայն դէմս: Բայց ընդանեսուն և ընթերցասէր և ուսումնասէր, և ոչ ըստ հայրենի ազգին վարժ և կիրթ հրահանգաւք զինուորական վարժից, ո՛չ մտեալ ի ճակատ և ոչ տեսեալ զդէմս թշնամեաց: Եւ արդ՝ սկսաւ նախանձել ի բնութիւն հայրենի տանն քաջութեանն, ջերմեռանդ փութով կատարել և զգործ քաջութեան ըստ 35 նախնեացն վարժից լիապէս կատարել, ի վերուստ խնդրելով զառաջնորդութիւն և զյաջողութիւն անձին քաջութեանն կատարել:

Իսկ կաթողիկոսն Հայոց Ներսէս գնաց ընդ թագաւորին, որպէս

1 Միհրդ., Պատկ. Դիմակսեան

8 Ա. Դունայ Ա ի Նախճըւան

12 Ա. և պատրաստեաց

12 Ա. Մուրիանոս

18 Միհրդ., Պատկ. կոուեցան

21 Նրից. կողոպտեցաւ

22 Միհրդ., Պատկ., և զամենայն եկեղեցիս մերկացոյց

32 Միհրդ. որ մտեալ փխ. ոչ մտեալ

37 Ա. կաթողիկոսն

վերագոյն ասացի, և շուեաց ընդ նմա ի Կոստանդնուպոլսիս: Եւ ընկալաւ զնա անդ պատուով. և ետուն նմա ինչս և արձակեցին անդրէն ի տեղի իւր, և եկն դագարեաց ի Տայս՝ մինչև մեռաւ Ռշտունեաց տէրն, դագարեաց ասպատակ Տաճկին. և ապա յետ վեցերորդի ամի հալածանացն 5 դարձաւ անդրէն ի տեղիս իւր. և հաստատեցաւ յաթոռ կաթուղիկոսութեան. փութայր կատարել զշինուած եկեղեցւոյն, զոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապատ քաղաքի<sup>661</sup>:

547բ Ի նմին ամի ի բաց կացին Հայք ի ծառայութենէ Իսմայելացւոցն, և հնազանդեցան անդրէն ի ծառայութիւն թագաւորին Յունաց<sup>662</sup>: Եւ արար 10 արքայ Կոստանդին զՄամիկոնէից տէր զՀամազասպ՝ կիրապաղատ, և ետ նմա գահոյս արծաթիս և զիշխանութիւնն աշխարհին Հայոց, և պատիւս այլոց իշխանացն, և գանձս զարացն:

Յայնժամ ետես արքայն Իսմայելի, եթէ ի բաց կացին Հայք ի ծառայութենէ նոցա, զամենայն զպատանդսն, զոր տարեալ էին յերկրէն, 15 ոգիս իբրև ՌՉԸԵ, ստտակեցին զամենեսեան ի սուր սուսերի. և մնացորդքն սակաւք, թուով իբրև ԻԲ, որք ոչ զիպեցան ի տեղւոյն, այն միայն ապրեցան:

Իսկ Մուշեղ Մամիկոնէից տէր, վասն զի էին նորա շորս որդիք ի պատանդի առ Իսմայելացւոցն, վասն այնորիկ ոչ կարաց ի բաց կալ ի 20 ծառայութենէ նոցա: Եւ էր Համազասպայ եղբայր մի ի պատանդի<sup>663</sup>: Բայց զայն՝ և այլ ևս յիշխանացն հանդերձ կանամբք իւրեանց խնդրէին առ ինքեանս յԱսորիս: Վասն այնորիկ լաւ համարեալ զմահ քան զկեանս՝ ի բաց կացին ի ծառայութենէ նոցա, և հապճեպ երթեկեկով հնազանդեցան ի ծառայութիւն թագաւորին Յունաց, հանդերձ միաբանութեամբ իշխա- 25 նացն և զարացն Աղուանից և իշխանացն/աշխարհին Սիւնեաց հանդերձ 543ա աշխարհան իւրեանց. որք լծեալ էին<sup>664</sup> յառաջագոյն յաշխարհագիրն Ատրպատականի, մինչև բարձաւ թագաւորութիւնն Պարսից և տիրեաց Իսմայելացին, նոքա անդրէն նուաճեալ միաբանեցան ընդ Հայոց<sup>665</sup>: Եւ ձերբակալ արարեալ զՄուշեղ և զայլ ևս յիշխանացն որ էին ընդ նմա: 30 Արդ՝ զայլ իշխանսն, զորս ձերբակալ արարեալ էին՝ հրամայեաց թագաւորն թողով ի բաց, բայց զՄուշեղ առ ինքն խնդրեաց:

Արդ՝ առաքեաց Աստուած խոռվութիւն ի մէջ բանակացն որդւոցն Իսմայելի<sup>666</sup>, և պատահեցաւ միաբանութիւն նոցա, և խառնեցան ընդ միմեանս, և բաժանեցան ի շորս մասունս: Մասն մի այն՝ որ ի Հնդկաց 35 կողմանէն. մասն մի այն՝ որ ունին զԱսորեստանն և զկողմանս հիւսիսոյ.

1 Ա ի Կոստանդինուպոլսիս

7 Բոլ. Վաղարշապատ քաղաքի բառերին հաջորդում է Արդ թէպէտ և վարպապարդուցեալ բառերով սկսվող և այս ևս կատարեսցի ի ժամանակի իբրև բառերով վերջացող հատվածք, որը մենք տեղափոխել ենք Պատմութեան վերջը որպես նրա վերջաբանը: Տե՛ս ծան. 661:

10 Ա կորապաղատ

14 Ա ի յերկրէն

18 Ա որդիս

20 ԶԶ երեք Համազասպայ եղբայր մի, Միհրդ., Պատկ. երեք (որդիք) Համազասպայ (և) եղբայր մի: Տե՛ս ծան. 663:

25 Ա իշխանս

33 Ա խառնակեցան փխ. խառնեցան

մասն մի այն՝ որ յԵգիպտոս և ի կողմանս Թետալացոց. մասն մի ի կողմանս Տաճկաց և յԱսկարան կոչեցեալ տեղոջ: Եւ սկսան կոռել ընդ իրեարս, և անհուն կոտորածով զմիմեանս սատակէին: Արդ՝ միաբանեալ այն որ յԵգիպտոս և որ ի կողմանս Տաճկաց՝ սպանին զթագաւորն 5 իւրեանց, և աւար հարին զբազմութիւն գանձուցն, և այլ թագաւոր նստուցին: Եւ ինքեանք զնացին յիւրաքանչիւր տեղիս:

Իսկ այն իշխանն որ ի կողմանս Ասորեստանի էր, Մաւիաս անուն իշխան նոցա, որ էր երկրորդ թագաւորին իւրեանց, իբրև ետես զեղեալսն՝ միաբանեալ զզարս իւր, զնաց և նա յանապատն և սպան զայն ևս<sup>667</sup> 10 արքայ, զոր նոքայն նստուցեալ էին, և ետ մարտ ընդ զաւրացն որ ի Տաճկաց կողմանէ, և եհար զնոսա կոտորմամբ մեծաւ: Եւ դարձաւ անդրէն յաղթութեամբ յԱսորեստան: Իսկ այն զարն որ յԵգիպտոս, միաբանեալ ընդ թագաւորին Յունաց, և արար հաշտութիւն, և միաւորեցաւ: Եւ բազմութիւն զաւրաց իբրև հնգետասան հազարաց հաւատացին ի 15 Քրիստոս և մկրտեցան: Եւ սաստկացաւ արիւն կոտորածին անհուն բազմութեանց ի մէջ բանակացն Իսմայելի. և գործ պատերազմին տագնապէր զնոսա՝ զմիմեանս սատակելով: Եւ ոչ կարէին դադարել փոքր մի ի սրոյն և ի գերութենէն և ի սաստիկ պատերազմացն՝ որ ի ծովու և ի ցամաքի, մինչև զաւրացաւ Մաւիաս և յաղթեաց ամենեցուն: Եւ հնա- 20 զանդեցուցեալ ընդ ինքեամբ՝ և թագաւորէ ի վերայ կալուածոց որդուցն Իսմայելի, և առնէ խաղաղութիւն ընդ ամենեսին<sup>668</sup>:

547\* Արդ՝ թէպէտ և վայրապար զրուցեալ տողեցից զբանս ի կարգի պատմութեանս ըստ անհանձար խորհրդոյ մտացս իմոց<sup>669</sup>, և ոչ ըստ արժանաւոր շնորհի գիտութեան. այլ սակայն անոր հայեցեալ ի կարգս 25 ուսումնասիրացն, և հաստատեցից մարգարէական բարբառովն, որ ըստ հրամանի տեառն խաւեցեալ: Զի թէ և յառաջինս կանխաւ կատարեալ՝ այլ սակայն և ի վերջինսս մինչև յաւիտեան կատարեսցի ըստ բանին տեառն որ ասէ. «Երկինք և երկիր անցցեն՝ և բանք իմ մի անցցեն»\*: «Զի հուր բորբոքեսցի, ասէ, ի բարկութենէ իմմէ\*\*», այրեսցէ և իջցէ 30 մինչև ի դժոխս ներքինս»: Եւ զի զնոցանէն ասէ՝ յայտ է, զի ասէ, եթէ «Վառեսցին հրով, բորբոքեսցին հիմունք լերանց նոցա», այսինքն զմեծամեծ իշխանացն զբնութիւնսն: Եւ թէ՛ «Կուտեցից շարիս ամենայն ի վերայ նոցա, և նետիւք իմովք սպառեցից զնոսա»: Զի որպէս նետք թռուցեալք ի գրկաց առն կորովոյ ի լայնալիճ աղեղանէ ի նպատակ՝ 35 այսպէս և սոքա ի Սին անապատէ որ<sup>670</sup> ի վերայ ամենայն երկրի կա-

\* Մաթ, ԻԴ, 35

\*\* Երեմիա, ԺԵ, 14

2 Ա յԱսկարոն

6 Ա իւրեանք փխ. ինքեանք

20 Ա կալուածոյ

21 Սիմոն, Պատկ. ամենեսին (ամէն) փխ. ամենեսին

23 Ա իմոյ

27 Ա յաւիտեանս

28 Ա շիւք տեառն

29 Ա իմէ

32 Ա եթէ փխ. եւ թէ

34 Ա աղեղանէ

տարեալ սովով և սրով և ահիւ մեծաւ: Եւ զի ի կողմանս անապատին բորբոքեցաւ հուր՝ այսպէս յայտնապէս ցուցանէ այնու զի ասէ. «Լարս առանց բժշկութեան արձակեացես ի վերայ նոցա, զգազանս անապատի, որք այսր և անդր քարշեսցեն զնոսա ընդ երկիր»: Զորմէ գոչէ մարգարեն 5 Դանիէլ, եթէ «Գազանն շորրորդ ահեղ և զարմանալի, և հզաւր յոյժ. ժանիք նորա երկաթիք, և մագիլք նորա պղնձիք. ուտէր և մանրէր, և զմնացեալսն առ ոտն կոտորէր»\*\*\* և զայլն: Եւ ապա յելս<sup>671</sup> բանիցն ասէ. «Մերձ է ար կորստեան նոցա\*\*\*\*, հասեալ է պատրաստութեամբ տէր ի վերայ նոցա»: Որ և այս ևս կատարեսցի ի ժամանակի իրում:

\*\*\* Դանիէլ, է, 7

\*\*\*\* Հմմտ. Երեմիա, ԽԶ, 21

4 Միհրդ., Պատկ. կոչէ

6 Ա. պղնձիք

7 Ա. և այլն ևս ապա: Միհրդ., Պատկ. և այլն ևս ապա: Մալլս. և այլն ևս և ապա: Տե՛ս ծան. 671:

**ՅԱՆԿ ԳԼԽՈՑ**  
**ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՍԵՖԷՈՍԻ**

Գլ. Ա. Խոստաբանութիւն առաջիկայ պատմութեանց: Մատեանն Մարաբայ փրիստոփայի Մծուրնացոյ: Ազաթանգեղեան արձանագրութիւն: Հայկ և Բէլ: Պայազատք Հայկայ: Շամիրամ և Արայ Գեղեցիկ: Հայք ընդ իշխանութեամբ Ասորեստանեայց, Մարաց և Մակեդոնացոց մինչև ցամբարձումն Պարթևաց:

Գլ. Բ. Ապստամբութիւն Պարթևաց որ եղև ի յայս ժամանակի:

Գլ. Գ. Արդ՝ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացոյ և Ստեփանոսի Տարանացոյ, հաւաստի և ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հարէ ճանաչել:

Գլ. Դ. Ծննդաբանութիւն ազգին Մամիկոնէից:

Գլ. Ե. Թագաւորք Հայոց, Պարսից և Յունաց:

Գլ. Զ. Եւ արդ՝ երկակի կանոնաւ զՊարսից և զՅունաց հաստատելով նշանակեցից զթագաւորութեան ժամանակն:

Գլ. Է. Հայք զկնի բառնալոյ տէրութեանն Արշակունեաց: Բովանդակութիւն առաջիկայ պատմութեան, յապստամբութենէն Վահանայ մինչև ցլաոնելն Իսմայելացոց և տիրել յԵգիպտոսէ մինչև ի Պարսիկս:

Գլ. Ը. Ապստամբութիւն Վահանայ ի Պերոզէ: Մահ Պերոզի և թագաւորել Կաւատայ: Վահան կարգի մարզպան Հայոց: Մահ Կաւատայ և թագաւորել Անուշըռուան Խոսրովայ: Ապստամբութիւն Վարդանայ: Պատերազմ ընդ նմա Խոսրովայ և պարտութիւն:

Գլ. Թ. Ի Քրիստոս հաւատալ և մկրտիլ Անուշըռուան Խոսրովայ: Մարզպանք և զաւրավարք Պարսից որ եկին ի Հայս յետ Վարդանայ մինչև ցբարձումն Սասանեան տէրութեանն:

Գլ. Ճ. Թագաւորել Որմզդի և կոտորել զնախարարս: Վահրամ Միրհանդակ հարկանէ զՄասքութս: Որմիզդ զչարի ընդ սակաւ աւարամասնն: Զարք Վահրամայ ապստամբին յՈրմզդէ և առնեն իրեանց թագաւոր զՎահրամ: Դիմումն Վահրամայ ի վերայ Որմզդի: Նախարարք սպանանեն զՈրմիզդ և կացուցանեն թագաւոր զորդի նորա զԽոսրով: Փախուտ Խոսրովայ յերեսաց Վահրամայ:

Գլ. ՃԱ. Թուղթ Խոսրովայ առ Մարիկ կայսր: Խորհուրդ Սինկլիտոսին: Մարիկ առաքէ Խոսրովայ զաւր յաւգնականութիւն: Կրկին թուղթք Վահրամայ առ Մուշեղ և պատասխանի սորա: Պատերազմ, յորում հարկանի զաւրն Վահրամայ: Փախուտ և մահ Վահրամայ:

Գլ. ՃԲ. Նենգութիւն Խոսրովայ ընգդէմ Մուշեղի: Ամբաստանութիւն իշխանացն Յունաց զԽոսրովայ առ Մարիկ կայսր: Մարիկ պաշտպանէ Խոսրովայ և զՄուշեղ կոչէ ի պաղատն Խոսրով տայ կայսեր զաշխարհսն ըստ ուխտի խոստմանն:

Գլ. ՃԳ. Բարեպաշտութիւն Շիրին թագուհւոյ: Հրաման Խոսրովայ՝ հաստատուն կալ և մնալ ի հայրենի արէնս:

Գլ. ԺԴ. Խնդրել կայսերն Մարկայ ի Խոսրովայ՝ զմարմին Դանիելի մարգարէին. նշանք, որ եղեն ի տանելն զմարմինն:

Գլ. ԺԵ. Նենգաւոր խորհուրդ Մարկայ՝ թափուր յիշխանաց Հայոց կացուցանել զՀայս: Փախուստ բազում իշխանաց յունական մասինն Հայոց առ Պարսիկս:

Գլ. ԺԶ. Գալ համարակարին գանձու մեծաւ առ յանկուցանել զիշխանս Հայոց ի բաժնէն Յունաց. յափշտակել իշխանաց զգանձն: Միաբանութիւն երկոցունց թագաւորաց ընդդէմ յափշտակչաց: Հաշտութիւն. երթալ ոմանց յիշխանացն առ Պարսիկս և այլոց առ Յոյնս:

Գլ. ԺԷ. Ապստամբութիւն իշխանաց ոմանց յունական մասինն և կատարած նոցին: Թշնամիք ի Թրակացոց կուսէ սպառնան թագաւորութեանն Յունաց:

Գլ. ԺԸ. Մարիկ գումարէ զաւրս ընդդէմ Թրակացոց. կացուցանէ զաւրագլուխ զՄուշեղ Մամիկոնեան: Զառաջինն հարկանեն Յոյնք զթշնամիս, յերկրորդումն նուագի հարկանին մեծաւ կործանմամբ: Սպանումն Մուշեղի:

Գլ. ԺԹ. Հրաման կայսերն Մարկայ՝ քարոզել զժողովն Քաղկեդոնի յեկեղջիս Հայաստանեայց: Բաժանումն աթոռոյ հայրապետութեանն:

Գլ. Ի. Հրաման դարձեալ ի կայսերէն՝ ժողովել զաւրս ի Հայոց և առաքել ի ձեռն Սահակայ Մամիկոնենի և Սմբատայ Բագրատունուց: Դառնալ Սմբատայ անգէն յետս և խորհուրդն ապստամբութեան: Սմբատ ըմբռնի և ածի ի Կոստանդնուպոլիս. հատանի վճիռ ի վերայ նորա՝ արկանել ի կիւնիկն: Նահատակութիւնք Սմբատայ ի կիւնիկին և գտանել ողորմութիւն ի կայսերէն. զկնի աքսոր նորա յԱփրիկէ:

Գլ. ԻԱ. Խոսրով հրովարտակաւ կոչէ ի զուռն զնախարարսն՝ զորս թողեալ էր համարակարին. ցուցանէ նոցա պատիւս մեծամեծս և զզաւրս նոցա նստուցանէ ի Սպահան քաղաքի:

Գլ. ԻԲ. Սպանումն Վնդոյի. փախուստ և ապստամբութիւն Վստամայ և երթ նորա ի կողմանս Պարթևաց:

Գլ. ԻԳ. Մահ նախարարացն Հայոց որ յԱսորեստանի: Սպանումն Կոտիտայ Ամատունուց սաղրանօք Խոսրովայ: Ապստամբութիւն զաւրուն Հայոց որ նստէրն ի Սպահան: Յափշտակութիւն գանձու համարակարին և անկանել ոմանց յերկիրն Պարթևաց առ Վստամ:

Գլ. ԻԴ. Սմբատ Բագրատունի կարգի մարզպան Վրկանայ, նուաճէ զապստամբսն, բարեկարգէ զաշխարհն Վրկանայ:

Գլ. ԻԵ. Դիմելն Վստամայ յԱսորեստան ի վերայ Խոսրովու և մեռանել յուղուղ ի նենգութենէ Պարիովկայ արքային Քուշանաց: Յրուել զաւրաց Վստամայ: Պատերազմ Սմբատայ մարզպանի ընդ Գեղումս և պարտութիւն:

Գլ. ԻԶ. Գիւտ մասին տէրունեան խաչին ի ձեռն տեսլեան:

Գլ. ԻԷ. Դարձեալ պատերազմ Սմբատայ ընդ թշնամիս ի Տապարաստանի և յաղթել: Մեծանալ Սմբատայ պատուով քան զամենայն մարզպանս: Սկն Սմբատայ ի Հայս. շինութիւն եկեղեցւոյն Ս. Գրիգորի ի Դուին: Կաթողիկոսութիւն Աբրահամու Ռշտունուց:

Գլ. ԻԸ. Սմբատ կոչի անգրէն ի զուռն Պարսից, պատուի տանուտերութեամբ՝ որ անուանեալ կոչի Խոսրով—Շում և առաքի ընդդէմ Քու-

շանաց: Նախարարք Հայոց՝ որք ընդ նմա: Գունդ մի սակաւածեռն Պարսից պաշարի ի Քուշանաց և հարկանի յանլսողութենէ Գատոյենի: Սպանումն Գատոյենի: Սմբատ ի մենամարտի սպանանէ զարքայն Քուշանաց: Փախուստ զարուն Քուշանաց: Զարն Պարսից յարարի առնու զաշխարհ նոցա: Մեծաւ շքով կոչի Սմբատ ի դուն:

Գլ. ԻԹ. Մահ Սմբատայ: Ապստամբել նախարարացն Հայոց ի Պարսից և երթալ ի ծառայութիւն հաքանայ:

Գլ. Լ. Փախել Ատատայ հորխոռունոյ ի ծառայութենէ Յունաց և անկանել առ հոսրով և մեծարել ի նմանէ. ապա ապստամբութիւն ի հոսրովէ և սպանումն: Սահմանակալք Պարսից և Յունաց ի Հայաստան աշխարհի յամս հաշտութեան թագաւորացն երկոցունց:

Գլ. ԼԱ. Սպանումն Մարկայ կայսեր և թագաւորել Փոկասայ: Ապրտամբութիւն ի Փոկասայ Երակղի և Ներսիսի զարավարաց: Պաշարումն Ուռհայի ի զարաց Փոկասայ, և Գարայի՝ ի զարաց հոսրովայ: Հասանել հոսրովայ յազնականութիւն Ուռհայի, առնուլ զքաղաքն և դարձ հանդերձ Թէոդոսի որդու վն Մարկայ: Առումն և կործանումն Գարայի ի հոսրովայ: Առումն Ուռհայի ի զարացն Փոկասայ և սպանութիւն Ներսիսի:

Գլ. ԼԲ. Պատերազմ ի դաշտին Եղեվարդայ և պարտութիւն Պարսից. ալ պատերազմ ի դաշտին Շիրակայ և պարտութիւն Յունաց: Երրորդ պատերազմ ի Ծաղկոտն: Անձնատուր լինել Թէոդոսի հորխոռունոյ զարավարին Պարսից. երթալ ի դուն արքունի և ապա սպանանել:

Գլ. ԼԳ. Արձակել հոսրովայ զհոռեամբ քաղաքն գնդաւ յԱսորեստան և զԱշտատ հանդերձ Թէոդոսի որդու վն Մարկայ ի Հայս: Ամենայն Ասորեստան և Միջագետք հնազանդին ի ծառայութիւն Պարսից: Աշտատ հարկանէ զՅոնս, երթայ ի վերայ Կարնոյ: Թէոդոս յայտնէ գանձն իւր Կարնեցոց. անձնատուր լինել Կարնոյ: Գալ զարավարին Շահենայ ի Կարին. գաղթեցումն բնակչաց Կարնոյ յԱհմատան: Վախճան կաթողիկոսացն Հովհանու և Աբրահամու: Նստել յաթոռ Կոմիտասայ: Առումն Կեսարիոյ Կապադովկացոց ի Շահենայ և սպանումն Վասակայ Արժրունոյ:

Գլ. ԼԴ. հոսրով մերժէ առնել հաշտութիւն. պատերազմ առ Կեսարեաւ, փախուստ Յունաց. Շահէն առնու զՄելիտինէ: Զարավարք պարսիկք ի Հայս: Փիլիպպիկոս արշաւէ յԱյրարատ և դառնայ ի փախուստ: Նստուցանել Հերակլի. զԿոստանդին զորդի իւր յաթոռ թագաւորութեանն և երթալ յԱսորեստան: Պարտութիւն նորա առ Անտիոք քաղաքաւ: Երկիրն Պարսեախանացոց հնազանդի ի ծառայութիւն Պարսից: Ապստամբութիւն Երուսաղէմ քաղաքի, առումն և կոտորած անհնարին: Գերումն խաչափայտին: Հրաման յարքայէն հոսրովայ՝ շինել անդրէն զԵրուսաղէմ:

Գլ. ԼԵ. Առ տէր Կոմիտաս:

Գլ. ԼԶ. Եւ այս է թղթոյն պատասխանի՝ զոր գրեցին Հայք յԵրուսաղէմ առ Մողեստոս:

Գլ. ԼԷ. Շինումն տաճարին Հռիփսիմեայ:

Գլ. ԼԸ. Գալ հոռեմայ առնուլ զԿոստանդինուպոլիս. ողորանք Հերակլի. հրաման ի հոսրովայ՝ առնուլ զքաղաքն: Ի նաւամարտի բեկանի զարութիւն Պարսից: Ժպիրհ հրովարտակ հոսրովայ առ Հերակլ: Նստու-



ցանել Հերակլի զԿոստանդին յաթոռ թագաւորութեանն և գնալ ի Կեսարիա: Արշաւել անտի ի Հայս և առնուլ զԴուին, զՆախճաւան և զԳանձակ: Հասանել խօսեմայ ի վերայ Հերակլի: Ճարտար շարժմունք Հերակլի և կոտորել զՊարսիկս մասն առ մասն:

Գլ. ԼԹ. Փախուստ խոսրովայ ի Վեհկաւատ. առնուլ Հերակլի զՏիգրոն և դառնալ յԱտրպատական: Դարձ խոսրովայ անդրէն ի Տիգրոն և սպանումն: Թագաւորել որդւոյ նորա Կաւատայ և առնել հաշտութիւն ընդ Հերակլի, ունելով երկաքանչիւրոց զհին սահմանս իրեանց:

Գլ. Խ. Վարազտիրոց կարգի մարզպան Հայոց: Նստել յաթոռ կաթողիկոսութեան Քրիստափորի և զկնի նորա Եզրի: Մահ Կաւատայ. թագաւորել Արտաշրի մանկան: Խոռեամ ըստ խորհրդոյ և աւգնականութեամբ Հերակլի առնուլ զՏիգրոն, սպանանէ զԱրտաշիր և ինքն թագաւորէ. զխաչն տէրունեան դարձուցանէ Յունաց: Սպանումն խոռեմայ. թագաւորել Բորանոյ, խոսրովայ, Աղարմիղխտոյ և Որմզդի սակաւ ժամանակս և ապա Յազկերտի, որդւոյ Կաւատայ: Պառակտումն տէրութեանն Պարսից:

Գլ. ԽԱ. Դարձ տէրունեան խաչին յԵրուսաղէմ: Կաթողիկոսն Եզր ըստ հարկելոյ Մժէժի Գնունոյ ընդունի զժողովն Քաղկեդոնի և առնուլ պարգև զաղն Կողբայ: Գժտութիւն Վարազտիրոցի ընդ իշխանս Ատրպատականի. խորհուրդ Մժէժի սպանանել զնա. փախուստ նորա առ Հերակլ և մեծարել ի նմանէ: Դաւաճանութիւն Աթալարիկոսի ընդդէմ հար իւրոյ Հերակլի. չմիաբանել Վարազտիրոցի ընդ դաւաճանսն. աքսոր նորա: Դաւիթ Սահառունի կարգի կիրապաղատ: Թէոգորոս Ռշտունի պահէ զաշխարհն Հայոց յապահովի:

Գլ. ԽԲ. Բարձումն Սասանականին, որ կալաւ զիշխանութիւնն ամս Ծեֆ: Դիմել Հրէից առ Իսմայելացիս. երևել Մահմետի և միաբանել զԻսմայելացիս: Առաջին պատերազմ ի մէջ Յունաց և Իսմայելացւոց յԱրաբիա: Պարտություն Յունաց. փախուցանել զխաչափայտն ի Կոստանդնուպոլիս: Իսմայելացիք տիրեն Եգիպտոսի: Այլ զար Իսմայելացւոց առնուլ զՏիգրոն: Նուազումն թագաւորութեան Պարսից: Մահ Հերակլի և թագաւորել որդւոյ նորա Կոստանդինի: Մուտ որդւոցն Իսմայելի յաշխարհս Հայոց: Առումն Դունայ և գերումն Լեհազար արանց ի Դունայ: Պատրկութիւն Թէոգորոսի Ռշտունոյ: Իսմայելացիք յաւարի առնուն զբազում աշխարհս մինչև ի սահմանս Հնդկաց:

Գլ. ԽԳ. Վասն Հրէից և չար խորհրդոց նոցա:

Գլ. ԽԴ. Մեռանել Կոստանդինի և թագաւորել Երակլոսի որդւոյ Հերակլի յերկրորդ կնոջէն: Գալ Վաղենտինի ի Կոստանդնուպոլիս և նստուցանել թագաւոր զԿոստաս զորդի Կոստանդինի: Պատերազմ Պարսից և Իսմայելացւոց ի Մարսս գաւառի և պարտութիւն Պարսից: Հէնն իսմայելեան ըստ կանխասացութեան Դանիէլի մարգարէին: Ապիրատ խորհուրդ Վաղենտինի և մահ նորա: Դարձ յաքսորէ ասպետի, որդւոյ Շումն խոսրովայ: Թումաս նենգութեամբ ըմբռնէ զԹէոգորոս և առաքէ կապանաւք ի Կոստանդնուպոլիս: Արդարանայ Թէոգորոս և դառնայ ի Հայս պատուով զարաւարութեան: Ասպետ փախի ի Կոստանդնուպոլսոյ և դարձեալ մտանէ ի ծառայութիւն Յունաց պատուով կիրա-

դատութեան. մահ նորա: Բաժանել զարուն Իսմայելի յերիս առաջս և արշաւել յԱլլարատ, ի կողմանս Սեպհական գնդին և յԱղուանս:

Գլ. ԽԵ. Թէոդորոս Ռշտունի հարկանէ զԻսմայելացիս և թափէ զաւարն և զգերին, զոր առեալ էր նոցա յԱրծափս: Այլ զար Իսմայելացւոց հարկանէ սրով յԱլլարատայ մինչև ի սահմանս Տայոց, Վրաց և Աղուանից: Նաւամարտութիւն առ Կոստանդնուպոլսով և շարաշար պարտութիւն Իսմայելացւոց: Կոստանդին կայսր առնէ հաշտութիւն ընդ Սաւեայ: Շինութիւն եկեղեցւոյն յանուն Զուարթնոց: Ամբաստանութիւն զարուն Յունաց զՀայոց վասն իրաց հաւատոյ: Հրաման ի Կոստանդին՝ առնել միաբանութիւն հաւատոյ ընդ Հոռոմս: Ժողով եկեղեցական վասն խնդրոյ միաբանութեան:

Գլ. ԽԶ. Պատճէն պատասխանի թղթոյն եկելոյ ի Հայս ի Հոռոմոց թագաւորէն Կոստանդինայ, զոր գրեցին Հայոց եպիսկոպոսունքն և կաթողիկոսն Ներսէս հանգերձ նախարարաւքն և զարաւարան Թէոդորոսի Ռշտունեաց տերամբ:

Ճշմարիտ և ուղղադաւան նամակ Նիկիական:

Գլ. ԽԷ. Յարձակումն Իսմայելացւոց ըստ տեսեան Գանիէլի: Իրք խոտովութեան ի Կոստանդնուպոլիս. սպանումն երևելի արանց:

Գլ. ԽԸ. Պատերազմ Իսմայելացւոց ընդ Պարսիկս: Մահ Յազկերտի: Բարձումն Սասանեան տէրութեանն: Հայք մտանեն ի ծառայութիւն Իսմայելացւոց առաջնորդութեամբ Թէոդորոսի Ռշտունւոյ: Գալ Կոստանդինի կայսեր ի Հայս. բազումք յիշխանացն Հայոց գան առ նա և ցուցանեն զմիամտութիւն իւրեանց:

Գլ. ԽԹ. Վասն Հայոց կաթողիկոսին Ներսիսի. հաղորդել նորա և այլոց եպիսկոպոսաց ընդ Հոռոմս առ երկիւղի: Մի ոմն յեպիսկոպոսաց բռնադատի ի կայսերէն՝ հաղորդել ընդ կաթողիկոսին: Դարձ Կոստանդինի ի Կոստանդնուպոլիս: Փախուտ Ներսիսի յերեսաց իշխանացն Հայոց: Թէոդորոս Ռշտունի հարկանէ զգարս Յունաց, առնու զՏրապիզոն, երթայ առ Մաւիաս և ընդունի զիշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց, Աղուանից և Սիւնեաց: Պատրաստութիւն Իսմայելացւոց առ ի առնուլ զԿոստանդնուպոլիս:

Գլ. Ծ. Թուղթ արքային Իսմայելի առ թագաւորն Յունաց Կոստանդին: Գալ Մաւիասայ ի Քաղկեդոն: Մրրիկ հողմոց խորտակէ և ցրուէ զնաւատորմն Իսմայելացւոց. զարն Իսմայելացւոց թողու զՔաղկեդոն: Այլ բանակ Իսմայելացւոց, որ արշաւէր ի Վիրս՝ հերքի ի բքոյ ձմերայնոյ: Իշխանք Հայոց միաբանին և բաժանեն զՀայս ի միջի իւրեանց: Աղէտ ժողովրդեանն:

Գլ. ԾԱ. Ապստամբութիւն Մարաց յԻսմայելացւոց. բեկումն զարութեան Իսմայելացւոց յայնկոյս Ճորայ Պահակին և փախուտ մնացելոցն ընդ դժուարս լերինն Կովկասու:

Գլ. ԾԲ. Մուշեղ Մամիկոնեան մտանէ ի ծառայութիւն Իսմայելացւոց: Թէոդորոս Ռշտունի և այլ իշխանք հնազանդին ի ծառայութիւն Իսմայելացւոց: Պատերազմ Յունաց և Իսմայելացւոց ի Նախճաւանի և բեկումն Յունաց: Առումն Կարնոյ. աւերումն երկրին Հայոց, Աղուանից և Սիւնեաց ի ձեռն Իսմայելացւոց և տալ պատանդս: Մահ Թէոդորոսի Ռշտունւոյ: Համազասպ Մամիկոնեան կարգի իշխան Հայոց: Կաթողի-

կոսն ներսէս դառնայ յաթոռ կաթողիկոսութեանն և կատարէ զշինուած եկեղեցւոյն Զուարթնոց: Հայք ապստամբին յԻսմայելացւոց. կոտորումն պատանդացն: Մուշեղ Մամիկոնեան ի բաց կայ ի ծառայութենէ Իսմայելացւոց և կոչի ի պաղատն: Խռովութիւն ի մէջ զարացն Իսմայելի. բաժանել նոցա ի շորս մասունս կոտորել զմիմեանս: Յաղթել Մախասայ հակառակորդաց, միապետել և առնել խաղաղութիւն: Վերջաբան:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Վարժ խուզակի»: Ստ. Մալխասյանցը գրում է. «Նուզակի բառը ոչ մի տեղ չի հանդիպում, ընայած զիտնականները առանց որևէ հիմքի այն հասկանում են խուզարկի (հետազոտող) իմաստով» (Մալխ., էջ 131): Այստեղից երևում է, որ Մալխասյանցը «խուզակի»-ն դիտել է որպես բառի ուղիղ ձև և գտնելով, որ հայերենում այդպիսի բառ չկա՝ չի թարգմանել այն: Մինչդեռ բնագրում բառն օգտագործված է սեռական հոլովով (ուղ. «խուզակ»): «Վարժ խուզակի» նշանակում է «վարժ հետազոտողի»: Հեղինակը հայտնում է, թե մասնագետ հետազոտողին համակած ստեղծագործելու պահանջը չէ, որ իրեն ստիպել է գրիչ վերցնել, այլ գրելու շարժառիթը եղել է Մծուրնի արձանագրության հայտնաբերումը. «Եւ եղև ոչ ի կամայական պիտոյից վարժ խուզակի», այնինչ՝ Մալխասյանցի թարգմանությամբ ստացվել է այսպես. «հեղինակը իր սեփական պահանջով չէ, որ սկսում է գրել („Мне пришлось не по собственной надобности приняться за описание“, էջ 11):

2. «Ջանստորագրեսլ»: «Սերբոսի Պատմության» բոլոր տպագիր բնագրերը, ինչպես նաև մայր ձեռագիրը (№ 2639) և երկու ուրիշ ձեռագրեր (№№ 2935, 6454): ունեն «զանստորագրել» (փխ. «զանստորագրեսլ»): Հայերենում այսպիսի բառ չկա: Մինևույն մայր օրինակից ծնված այս սխալը («զանստորագրեսլ») ունեն նաև ՍՍՀՄ ԳԱ Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի ձեռագիրը (որի հիման վրա կատարված է «Սերբոսի Պատմության» պետերբուրգյան հրատարակությունը, 1879 թ.), Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 52 և 86 ձեռագրերը և Երուսաղեմի Ս. Հակոբյանց Ֆայրավանքի № 521 ձեռագիրը (հմմտ. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հինգերորդ հատոր, կազմեց Նորայր եպս. Պողարյան, Երուսաղեմ, 1960, էջ 32): Թյուրիմացությունը առաջացել է «զանստորագրեսլ» բառի ա տառը ա-ի հետ շփոթելու և սկզբնական բնագրում բառի վրա եղած հապավման նշանն անտեսելու հետևանքով: Այս պատահական զրչական վրիպակը առիթ է տվել զանազան ենթադրությունների: Այսպես. առաջարկվել է «զանստորագրեսլ»-ի փոխարեն կարգալ «զայն ստորագրել» (Միհրդատյան, Մառ), «զայն ստորագրեսլ» (Միհրդատյան), «չան ստորագրել» (Միհրդատյան, Պատկանյան, Ն. Ջնտոյան, Գ. Տեր-Պողոսյան), «անստերիս գրել» (Ֆեթթեր), «զանստու գրեսլ» (Մատիկյան), «զանստուզն նկարագրել» (Ակինյան), «զանցս տարագրեսլ» (Գևորգյան-Ճուղուրյանց Բ.) և այլն: Որ աղավաղված բառում թաքնված է «ստորագրեսլ» բառը և որ բնագրի տվյալ հատվածում միայն այդ բառն է սպասելի՝ երևում է նրանից, որ գրեթե բոլոր բանասերները որպես ուղղում առաջարկել են հենց այդ բառը կամ՝ նույնիմաստ «նկարագրել», «գրել» բառերը: Այսպես, միաձայն գտնվելով «ստորագրել»-ի դեպքում՝ բանասերները անհամերաշխ են եղել բառի մյուս մասնիկի՝ զան-ի հարցում:

Մատենադարանի № 2867 և 3122 ձեռագրերի գրիչներն անցյալ դարում վերականգնել են բառի ուղիղ ձևը՝ «զանստորագրեսլ»: Այդպես են վերծանել նաև Միհրդատյանը և ուրիշ բանասերներ: Բառը ճիշտ են թարգմանել («неописанное») Գր. խալիթյանցը («Армянский эпос», էջ 73): Այստեղ ճիշտ է թարգմանված նաև «խուզակ» բառը, Ստ. Մալխասյանցը (Մալխ., էջ 11), Հ. Մանանդյանը («Начальная история Армении:— „Палестинский сборник“, 1956, էջ 74): Ճիշտ է վերծանված նաև «խուզակ»-ը):

3. «Ջիմն յիշատակել զառասպելս»: Ակինյանը «զիմն» բառի փոխարեն առաջարկում է «զսուտն», որն ընդունելի չէ, որովհետև բնագիրը նման սրբագրման պահանջ չի ներկայացնում:

4. «Եւ ցուցից կամառուտիւի զարդեաց ժամանակագս զաղեախիցս վերաբերութիւն»: Վերջին բառը ձեռագրերում աղճատված է («վերաբերութեան») և քերականորեն չի հարմարվում նախադասությանը: Սկզբնական բնագրում եղել է, անշուշտ, «ցուցից համառուտիւք զարդեաց ժամանակացս զատեղիցս վերաբերութիւն»: Այսինքն՝ «համառոտ ցույց կտամ ներկա ժամանակների աղետների վրա հասնելը» (և ոչ թե՛ «վրա հասնելու»):

«Վերաբերութիւն» բառն ունի մի քանի նշանակություն, որոնցից մեկն է՝ «ի վերայ բերումն, գալուստ ի վերայ, յարձակումն սաստիկ» («Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Բ, երկասիրութեամբ Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Սիրմէլեան, Հ. Մ. Աւերեան, Վենետիկ, 1837, էջ 802), «վրայ գալ, հարձակուել» (Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1945,

հ. 4, էջ 320) և այլն: Մեզ թվում է, «Սեբեոսի Պատմության» բնագրում գործածված «զաղե-տիցս վերաբերութիւն» արտահայտությունը ունի այս իմաստը և նշանակում է «աղետների վրա գալը» (վրա հասնելը, հարձակվելը)», «աղետների կուտակումը»: Պիտոյից գրքի (Յաղագս պիտոյից, տպվ. Ս. Ն. Մ. Մոզլսի հորենացույ մատենագրութիւնը, Վենետիկ, 1843, էջ 354) հայ թարգմանիչը գործածել է գրեթե նույն դարձվածքը, որը հանդիպում է «Սեբեոսի Պատմության» սրբագրվող հատվածում: Նա ասում է. «Թուէլ զաղիտիցն վերաբերութիւնս» (և ոչ՝ «զաղիտիցն վերաբերութեան»):

Բառը ճիշտ են վերծանել Ն. Մառը («О „Начальной истории Армении“ Анонима», էջ 290), Գ. Խալաթյանցը («Армянский эпос», էջ 73), Ն. Ակիւնյանը («Սեբեոս եպոս-Ֆազրատունեաց և իւր Պատմութիւն ի հերակղ», «Հ. ամս.», 1923, էջ 405 և այլուր), Հ. Մանանդյանը («Начальная история Армении.— „Палестинский сборник“, էջ 74):

Անանունի թարգմանիչները ճիշտ չեն վերծանել բնագիրը: Այսպես. Բ. Պատկանյանը թարգմանել է отношение (Սատկ., էջ 1): Նույն իմաստն է տվել նաև Վ. Լանգլուան «(Collection des historiens anciens et modernes de Arménie», t. I, Paris, 1867, էջ 195): Ստ. Մալխասյանցը թարգմանել է обстоятельство (տե՛ս Մալխ., էջ 11):

5. «Զամս և զաւոս հին քազաւոսացն յիշատակելով»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «հինգ թագաւորացն»: Առաջաբանի հեղինակը խոստանում է «դրոշմել վիպասանութիւնս», հիշատակելով «հինգ» թագավորների տարիները:

Այն բանասերները, որոնք «Սեբեոսի Պատմությունը» դիտել են որպես մեկ հեղինակի՝ Սեբեոսի գործ, բնականաբար, առաջաբանը նույնպես համարելով նույն հեղինակին, փորձել են Պատմության բնագրում գտնել այս հինգ թագավորներին: Որոշումները, սակայն, որևէ արդյունք չեն տվել, որովհետև Անանունի առաջաբանը կապ չունի «Սեբեոսի Պատմության» հետ:

Երբ այժմ վերանայում ենք այդ ուղղությամբ կատարված փորձերը, տեսնում ենք, որ «Սեբեոսի Պատմության» մեջ չգտնելով որևէ թագավորական հնգյակ, որը որոշակիորեն համապատասխաներ առաջաբանում նշված հինգ թագավորներին, բանասերները դիմել են զանազան ենթադրությունների և հինգ թագավորներ են համարել մերթ ամենավաղ ժամանակների հեթանոս թագավորներին, մերթ քրիստոնյա կայսրերին, մերթ հեղինակին ժամանակակիցների, մերթ մեծածնրի և այլն: Այսպես, Ն. Ադոնցը («Начальная история», էջ 75) հինգ թագավորներ է առաջադրել պարսից թագավորներին՝ Որմիզդ, Խոսրով Ապրվեզ, Կավատ, Արտաշիր, Հազկերտ: Բ. Գևորգյան-Ճուղուրյանցը («Խորենացին հորենացով պետք է հասկանալ», Թիֆլիս, 1902, էջ 71) «հինգ թագավորներ» արտահայտությունը հասկացել է հինգ քազավորություններ իմաստով՝ Շալվականը, Ասորա-Բեբելականը, Մարա-Պարսկականը, Մակեդոնա-Սելևկյանը, Պարթևա-Արշակունին: Ն. Ակիւնյանը («Մատենագր. հետազոտություններ», հ. Բ, Վիեննա, 1924, էջ 48) նկատի է ունեցել հույն և պարսիկ թագավորների՝ Մորիկ, Խոսրով Ապրվեզ, Հերակլ, Կոստանդին, Հազկերտ: Ն. Մառը («О начальной истории Армении Анонима:— «Виз. временник», 1894, № 1, էջ 279—280) ներկայացրել է Սելևկյան երեք՝ Սելևկոս Նիկանոր, Անտիոքոս Սոտեր, Անտիոքոս Թեոս և պարթևական երկու թագավորների՝ Արշակ Մեծ, Արշակ Քաջ: Զամինյանը (Զամ., էջ 1) և Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, էջ 160 են) առաջարկել են բյուզանդական կայսրերի՝ Մորիկ, Փոկաս, Հերակլ, Երակղակ և Կոստոս: Զամինյանը մեկ ավ տեղում (Թղթ. 232, վավ. 121ա, տետրակ Բ, էջ 2) հինգ թագավորներ է համարում Խոսրով Կոստակին, Տիրանին, Արշակին, Պապին և Արշակ վերջինին («չհաշվելով բողոքի Վարդադատին, որ Արշակունի էլ չէր»): Խալաթյանցը (համա. ՍեՊ, էջ 16) հնարավոր է համարել, որ դրանք եղել են Ագաթանգեղոսի արձանագրությունում հիշված հինգ հայ և պարթև թագավորները: Միջնադարյան բանաստեղծներից Սիմեոն Ապարանեցին (XVI դ.) հինգ թագավորներ է համարել Նաբուզոդոտոսյան ժամանակաշրջանի թագավորների՝ Զարեհ, Արմոզ, Սարհանգ, Շավարշ, Փառնավազ (Սիմեոն Ապարանցի, Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի, Վաղարշապատ, 1870, էջ 17—19):

Ակիւնյանը հետազոտում («Հ. ամս.», 1938, էջ 23—24 են) վերանայել է տարիներ առաջ հայտնած իր կարծիքը և այս անգամ արդեն «հինգ» բառի մեջ ղետեղել է ոչ թե հինգ թագավորների, այլ հինգ թագավորությունների՝ «Սելևկեանց, Պարթևաց, Հայոց, Պարսից ու Հռոմայեցոց»: Հ. Պ. Անանյանը գտնում է, որ «հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց» արտահայտության մեջ կարող էին ակնարկված լինել պարթևական ժազում ունեցող հետևյալ հինգ հայ թագավորները՝ Վաղարշ Բ, Խոսրով Ա, Տրդատ Բ, Խոսրով Բ, Տրդատ Գ: «Ահա այս Տրդատ թագավորն է, որ Ագաթանգեղոսի պատվիրած է արձանագրել զինքը կանխող և իրեն նախնիքը եղող Հայ-Պարթև թագավորներու անունները» (Հ. Պ. Անանյան, Սեբեոսի Պատմության առաջին

չորս դուխները, «Քաղմավէպ», 1970, № 9—10, էջ 234): Այս ենթադրությանը, սակայն, խանգարում է Ազգաթանգեղոսի արձանագրության մեջ հանդիպող «առաջին քազաւորացն» արտահայտությունը: Ը. Պ. Անանյանի նշած հինգ թագավորներից երկուսը (Խոսրով Բ, Տրդատ Գ) Ազգաթանգեղոսի ժամանակակից թագավորներ էին, ուստի «առաջին թագաւորացն» արտահայտությունը չի կարող նրանց վերաբերել: Կասկածից վեր է, որ արձանագրության մեջ դրանցված են եղել ոչ թե Ազգաթանգեղոսին ժամանակակից թագավորներ, այլ՝ նրանից ժամանակագրական մեծ հատվածով անջատված և հայոց պատմության ամենահին շրջանին վերաբերող առաջին հայ թագավորները, որոնց անուններն ու գործերը հիշատակելու համար Ազգաթանգեղոսը դիմել է արժանական դիվանում պահված հին վավերագրերին: Այդ մասին պարզ ասված է հենց արձանագրության մեջ. «Նս՝ Ազգաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ՝ առնալ ի դիւանէ արձանի»:

Այսպիսով՝ առաջարկված հնգյակներից ոչ մեկը «Սեբեոսի Պատմության» բնագրին չեն համապատասխանում: Եթե, օրինակ, Ազոնցը նկատի է ունեցել Սասանյան թագավորներին՝ ապա նրանց թիվը «Սեբեոսի Պատմությունում» ավելի է հնչից: Եթե Ակինյանը նախընտրել է հույն և պարսիկ թագավորներին՝ սրանց քանակը նույնպես հնգից շատ է: Մառի առաջարկված հնգյակը, ի տարբերություն մյուսների, վերցված է «Սեբեոսի Պատմության» առաջին գլուխներից (Անանունից), սակայն այստեղ նույնպես հանդես են գալիս մի քանի անգամ ավելի շատ, քան Մառն է նշել, Սելևկյան և պարթև թագավորներ: Այսպես անհամապատասխան են նաև բոլոր մյուս հնգյակները:

Մալխասյանցը «Սեբեոսի Պատմությունում» հանդիպող հինգ բյուզանդական կայսրերին նույնացնում է Անանունի խոստաբանությունում ակնարկված «հինգ» թագավորների հետ և գտնում, որ խոստաբանությունը ընդհանուր է նաև «Սեբեոսի Պատմության» համար, հետևաբար, և՛ Անանունի հատվածը, և՛ «Սեբեոսի Պատմությունը» գրված են մեկ հեղինակի կողմից:

Գիտնականը, սակայն, ճիշտ չի նշել բյուզանդական կայսրերի քանակը «Սեբեոսի Պատմության» մեջ: Մորիկից մինչև Կոստոս ընկած ժամանակամիջոցում թագավորել են ոչ թե հինգ, այլ վեց բյուզանդական կայսրեր: Մալխասյանցը հաշվի չի առել «Սեբեոսի Պատմությունում» հանդես եկող բյուզանդական կայսրերից մեկին՝ Հերակլի որդի Կոստանդինին, որի գահ բարձրանալու մասին կարդում ենք. «Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Հերակղոս զորդի իւր զԿոստանդին, ետ զնա ի ձեռն սնկղիտոսին, և յանձնեալ ամենայն մեծամեծացն պալատոյն՝ հաստատեաց զնա յաթոռ թագաւորութեան իւրոյ: Եւ իւր առեալ յանձն զանուն զաւրավարութեան, հանդերձ եղբարբն իւրով Քէղոզսիւ զումարեալ ժողովեաց զբազմութիւն զաւրացն, և անցեալ զնաց յԱսորեստան ի կողմանս Անտիոքացոյց» (ՍեՊ, էջ 81—82): Մի այլ տեղում՝ «Հաճոյ թուցեալ Երակլի և ամենայն սինկղիտոսացն նստուցանել զԿոստանդոս որդի Երակլի յաթոռ թագաւորութեանն... Ապա յայնժամ աւելի ևս հաստատեցին զԿոստանդին ի պատիւ թագաւորութեան ըստ առաջին բանին» (նույն տեղում, էջ 92): Այնինչ՝ Ստ. Մալխասյանցը գրում է. «Կոստանդինի» քանի որ նա թագավորել է սակաւ աւուրս՝ ուրեմն պատմական-ժամանակագրական տեղ չէ գրավել՝ Սեբեոսը հաշվի չի առնում: Բ ղպրութեան ցանկի մեջ էլ նրան և Երակղակին միասին է նշանակում» (Ստ. Մալխասյանց, Սեբեոսի Պատմությունը և Մ. Խորենացին, Թիֆլիս, 1899, էջ 75): Իրականում, սակայն, եթե Կոստանդինը ցանկում առանձին տեղ չունի և այդ հանգամանքը իրավունք է տալիս՝ նրան ղրկելու թագավորությունից, ապա միևնույն վիճակում է գտնվում նաև Երակղակը, որովհետև սա էլ ցանկում առանձին տեղ չունի և կանգնած է հենց նույն Կոստանդինի կողքին: Ուրեմն, կամ պետք է Երակղակին էլ, Կոստանդինի նման, մերժել և ճանաչել միայն չորս կայսրերի, կամ էլ, — որ ավելի ճիշտ կլինի, — երկուսին էլ հաշվի առնել և արձանագրել վեց կայսրերի իրական ղոյութունը «Սեբեոսի Պատմության» մեջ: Երկու դեպքում էլ արդյունքը նույնն է. ո՛չ չորսը, ո՛չ էլ վեցը հնգյակ չեն կարող կազմել:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը չէր կարող Մալխասյանցի նշած հինգ թագավորներին համարել իրեն ժամանակակից թագավորներ: Այդ թագավորներից առաջինը՝ Մորիկն սպանվել էր «Սեբեոսի Պատմության» հորինման ժամանակից (661 թվական կամ ավելի ուշ) աննվազն 60 տարի առաջ: Այսպիսի հեռավոր մի ժամանակի մասին հեղինակը չէր գործածի «արդի ժամանակ» («զարդեաց ժամանակացս») արտահայտությունը:

Զինացի պատմիչ Սիմա-Յանի (145—86 թթ. մ. թ. ա.) պատմական երկի (ռուսերեն թարգմանությունը՝ Сима-Цянь, Исторические записки, перевод с китайского и комментарии Р. В. Вяткина и В. С. Таскина, М., 1972). բաժիններից մեկը կոչվում է «Հիշատա-

կուսիցներ հինգ թագավորների (գործերի) մասին» (էջ 133—149): Այստեղ հինգ թվանշանը գործածված է հատուկ իմաստով: Դա բնության հինգ տարրերի (հող, փայտ, մետաղ, կրակ, ջուր) քանակ է (տե՛ս նշված աշխ., էջ 221—222): Հայ իրականություն մեջ, սակայն, հինգ թվանշանի ընտրությունը նման հիմք չի կարող ունենալ: Բացի այդ՝ հայագիտությանը հայտնի չէ հինգ թագավորներով բնորոշվող ինչ-որ պատմական ժամանակաշրջան:

Իսկ որո՞նք են խոստաբանությունում ակնարկված իրական թագավորները: Դիմենք խոստաբանությանը: Այստեղ կա թագավորներին վերաբերող երեք նախադասություն. ա) «զամս և զաւուրս հինգ թագաւորացն», բ) «զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց», գ) «զամս առաջին թագաւորացն Հայոց»: Ինչպես տեսնում ենք, նախադասություններից և ո՛չ մեկում բյուզանդական կայսրերին վերաբերող բառ չկա: Խոսքն ամենուրեք հայ (և պարթև) թագավորների մասին է:

Հայոց բառը բացակայում է միայն առաջին նախադասությունում, բայց հենց հաջորդ նախադասությունում հեղինակը լրացնում է այդ բառը՝ գրելով «զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց», իսկ քիչ հետո՝ «զամս առաջին թագաւորացն Հայոց»: Առաջին նախադասություն մեջ «Հայոց» բառի բացակայությունը խոսում է այն մասին, որ հայ թագավորների ազգությունը (որը միաժամանակ նաև հեղինակի ազգությունն է) բնագրում այնքան հասկանալի է, որ հեղինակն այն չի նշել: Նա այդպես է վարվել նաև հայոց «նախնի քաջերի», հայկական «առասպելների» և Հայաստանի «չնկարագրված ժամանակի» մասին խոսելիս («...զանստորագրեալ ժամանակ և զնախնի քաջացն ձեռնարկելով դրոշմել վիպասանութիւնս, զիմն յիշատակել զառասպելս»), ոչ մի տեղ չօգտագործելով «Հայոց» բառը:

Երբ համարում ենք թագավորներին վերաբերող երեք նախադասությունները՝ ստանում ենք այսպիսի մի պատկեր.

զամս և զաւուրս	զամս և զաւուրս հինգ	զամս առաջին
հինգ թագաւորացն	թագաւորացն Հայոց և Պարթևաց	թագաւորացն Հայոց

Բերված երեք քաղվածքներում գործ ունենք միևնույն նախադասության գրեթե բառացի կրկնությունների հետ: Ամենուրեք հայտնվում է միևնույն միտքը, մեկ-երկու բառով ավելի կամ պակաս:

2. Աճառչանը («Բագմամվէպ», 1897, էջ 169), Բ. Գևորգյանը («Խորենացին Խորենացով պետք է հասկանալ», էջ 71), Ա. Մատիկյանը («Անանունը կամ Կեղծ Սեբեոսը», Վիեննա, 1913, էջ 68), Ն. Ակիբյանը («Սեբեոսի ժամանակագիրն», 2, ամս., 1938, էջ 24) և ուրիշներ ժամանակին արդեն ցույց են տվել, որ առաջին և երկրորդ նախադասություններում գտնվող «հինգ» բառին երրորդում համապատասխանում է «առաջին» բառը, այլ կերպ ասած՝ միևնույն թագավորների մասին մի դեպքում ասվում է հինգ թագավորներ, մյուս դեպքում՝ առաջին թագավորներ: Կնշանակի՝ հինգ և առաջին բառերը իմաստով նույնն են և ցույց են տալիս, որ հինգ թագավորները միաժամանակ ինչ-որ երկրի առաջին թագավորներն են:

Այս տվյալը չի համապատասխանում ո՛չ «Սեբեոսի Պատմությանը» սխալմամբ միացած Անանունի հատվածին, ո՛չ էլ «Սեբեոսի Պատմությանը»: Մալխասյանցի նշած բյուզանդական կայսրերը հանդես են գալիս առաջին զլուխներում հիշատակված շուրջ 30 հոռմեական-բյուզանդական կայսրերից հետո, կնշանակի՝ առաջին բյուզանդական թագավորներ չեն, այդպիսիք չեն նաև հայոց և պարթևաց թագավորները, որոնց թիվը բնագրում մի քանի անգամ գերազանցում է հնգին:

Այսպիսով, հինգ բառը ոչ մի պայմանով չի համարվում «Սեբեոսի Պատմության» բովանդակությանը և ներկայանում է որպես բացարձակ գրչական սխալ: Այնպես որ մենք առանց վարանելու սրբագրում ենք «հինգ», ըստ Պատկանյանի առաջարկի (ՌԱԿ., էջ 1): Տե՛ս նաև մեջ «Հինգ թագավորների առեղծվածը» («Լրաբեր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1890):

6. «Անը հայելով»: Չեռագրերում և առաջին հրատարակություններում գտնվող այս բառերը Մալխասյանցը դարձրել է «Անը» և «Անը»-ը «անդր»-ով են սրբագրել նաև Ա. Մատիկյանը, Ն. Ակիբյանը և ուրիշներ: Մատիկյանը («Անանունը կամ Կեղծ Սեբեոս», էջ 73) քննարկվող հատվածն ամբողջությամբ սրբագրում է այսպես. «Արդ հայելով ի մատենան Մարաբա փրիխոտփայի Մծուրնացույ, գրեցից զնախնեացն զպատմութիւնս»: Ընդգծված բառերը բնագրի մեջ ներմուծել է Մատիկյանը:

Անանունը քննարկվող հատվածում հայտնում է, որ ինքը գտնվել է Միջագետքում, որտեղ Մարաբա Մծուրնացու աշակերտների միջոցով դոեղ է նրանց ուսուցչի մատյանում եղած



Ազաթանգեղյան արձանագրությունը: Ահա, Միջագետքը նկատի ունենալով է, որ հեղինակը գրել է «անդ (այսինքն՝ Միջագետքում) հայելով ի մատնան Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացու»: Այսպիսով, «անդ»-ը բնագրի մեջ պատճառաբանված է, սրբագրության կարիք չունի: «Սերեոսի Պատմությանը» նվիրված մեր ուսումնասիրությունում մենք ցույց ենք տվել, որ ժողովրդի պարունակող առաջաբանը բաղված է ժամանակագրից: Առաջաբանի սկզբում, որը մեզ չի հասել, ժամանակագիրը հայտնած է եղել Միջագետքում իր գտնված լինելու մասին և այդ պատճառով էլ մեզ հասած քաղվածքում Միջագետք անվան փոխարեն միանգամից հանդիպում է «անդ» բառը: Եթե Միջագետքի անունը նախօրոք հայտնված չլիներ՝ անհնարին կդառնար տվյալ տեղում «անդ» բառի գործածությունը, որովհետև եթե երկրի անունը չի տրվում, ընթերցողը չէր կարող հասկանալ, թե ո՞ր երկրին կամ տեղին է վերաբերում «անդ» («այնտեղ») բառը:

7. Անանունի հիշատակած Մարաբայ փիլիսոփա Մծուրնացին հիշեցնում է Մովսես Խորենացու օգտագործած գլխավոր աղբյուրներից մեկը հեղինակին՝ Մարաբայ Կատինային: Այս երկու Մարաբաների փոխհարաբերության հարցի շուրջ գոյություն ունեն զանազան կարծիքներ: «Մծուրնացի մակդիրը ոմանք բացատրում են Մծուրք տեղանունից,—գրում է Մալխասյանցը,— ուրիշները հասկանում են Մծբնացի, համարելով թե Մծուրնացի ձևը ազավաղություն է Մծուրնացի (Մծբնացի) բառի (այսպես են կարծել Ք. Պատկանյանը, Բաումգարտները, Ֆետտերը և այլք: Տե՛ս Н. Марр, О Начальной истории, էջ 302—303. —Գ. Ա.): Թվում է, որ Հայաստանում գոյություն է ունեցել... մի գրվածք Հայաստանի հնագույն պատմության մասին, հիմնված հայ ժողովրդական ավանդությունների վրա... Այս ավանդությունների ժողովածուն, որ վերագրվում է ինչ-որ գիտնական ասորու, Մար-Աբաս անունով, ունեցել է մի քանի խմբագրություններ: Ժողովածուին վավերականություն ընծայելու նպատակով նրան տրված է պաշտոնական ծագում՝ պետական դիվանից կամ վաղեմի պաշտոնական արձանագրությունից: Այս խմբագրություններից մեկից օգտվել է Խորենացին, յուր կողմից ենթարկելով նրան զրական մշակության և լրացնելով ուրիշ ժողովրդական ավանդություններով (ինչպես Արամի գործերը), իսկ մյուս խմբագրությունից օգտվել է Սերեոսը (Իմա Անանունը—Գ. Ա.), որ իբր թե ձևեր է բերել այն՝ Մար Աբասի աշակերտներից Միջագետքում, բայց միաժամանակ օգտվել է նաև Խորենացու Պատմությունից և նրա Մարաբայան աղբյուրից: Սակայն երևում է, որ Խորենացին ունեցել է տեղեկություն Մարաբայան աղբյուրի ուրիշ գրավոր կամ անգիր վարիանտների մասին էլ, որտեղ տարբեր կերպով է եղել պատմվելիս Բագրատունյաց ծագման մասին և վայրիվերո խոսվելիս Հայկի մասին» (ՍեՊ, էջ 161):

Մալխասյանցի այս կարծիքին համամիտ են եղել նաև ուրիշներ: Մեր ուսումնասիրության («Սերեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը», էջ 147—153) մեջ մենք արդեն մանրամասն խոսել ենք Մծուրն և Մծբին քաղաքների անունների շփոթության մասին: Այս օպակցությունը անդրադարձել ենք նաև Մարաբայ Մծուրնացու ազգությունը: Մեր կարծիքով, Մծուրնացու ասորի լինելու մասին միտքը հղացել է հիշյալ շփոթի հետևանքով: «Մեզ թվում է,—գրել ենք մենք (էջ 150),—Մովսես Խորենացու ձեռքին եղած ձեռագրում նույնպես առկա է եղել հենց այսպիսի մի շփոթ, որի հետևանքով Պատմահայրը Մարաբայ Մծուրնացուն ընկալել է որպես Մարաբայ Մծբնացի և այդտեղից էլ նրան համարել է ասորի»:

Մարկվարտը (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 262, վավ. 4, միկրոֆիլմ) գրտնում է, որ Անանունը «Մծուրն», «Մծուրնացի» անուններն ստեղծել է Փավստոսի «Մծուրք»-ի և «Մծբին» տեղանուն «Մրծուին», «Մծուին» գրելաձևից: Սրանով հայ մատենագիրը Արշակունիների ռեզիդենցիան տեղափոխել է Մծբին:

8. «Ի մատնան Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացու, գոր եգիտ դրոշմեալ ի վերայ ածանի»: Նախնական բնագրում հավանաբար եղել է այսպես. «Ի մատնան Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացու [չարձանագիրն], գոր եգիտ դրոշմեալ ի վերայ արձանի»:

Մեր կարծիքով՝ բնագրում սլակասում է անկյունավոր փակագծերի մեջ մեր ավելացրած «չարձանագիրն» բառը: Առանց այդ բառի ստացվում է այնպես, որ Մարաբայ Մծուրնացին արձանի վրա գտել է իր գիրքը և ոչ թե արձանագրությունը: «Արձանագիր» բառի առկայության հնարավորության մասին է խոսում նաև շորս տող հետո հաջորդող մի արտահայտություն, որը համարյա թե կրկնությունն է քննարկվող բառը պարունակող խոսքի և որտեղ արդեն «արձանագիր» բառը կա: Այստեղ սոված է. «արձանագիրն, դրոշմեալ ի վերայ վիմի»: Այս արտահայտության օրինակով կարելի էլիներ վերականգնել պակասող բառը, այսպես. «[չարձանագիրն]... դրոշմեալ ի վերայ արձանի»: Սակայն նկատի ունենալով, որ Անանունի ժողոված պատմական հասակոտորների լեզուն արհասարակ անկանոն է՝ վստահ չենք, թե այս դեպքում

էլ գործ շունեք նման մի անկանոնութիան հետ: Ուստի բնագիրը թողնում ենք նույնութիւմբ:

9. «Ի Մծրին քաղաքի, յապարհանս Սանատրուկ արգայի»: Թվում է՝ պետք է ուղղել՝ «Ի Մծուրն քաղաքի, յապարհանս Սանատրուկ արքայի»:

Փափատոս Բուզանդի «Հայոց պատմութիւնից» գիտենք, որ Սանատրուկ արքայի ապարանքը եղել է ոչ թե Մծրինում, ինչպես որ գտնում ենք վերոհիշյալ աղճատված բնագրում, այլ՝ Մծուրքում: Փափատոսը (Դպր. շորթորդ, գլ. ԺԴ) գրում է. «Ապայ գնայր մարդպետն Հայր ի սուրբ տեղեացն և էջ յափն գետոյն հոսանացն նփրատու, հովիտան թանձրախունս անտառին, ի գետախառնունսն երկուց դետուցն, ի թաւութ խարձիցն մամխեացն, որ ի տեղուցն ի հնոց իմն շինած քաղաք՝ գոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղուցն Մծուրք կոչի»:

Մի շարք բանասերներ առաջարկել են Անանունի հատվածի «Մծրինը» ուղղել «Մծուրն»: (Հմմտ. Н. Адонц, Начальная история Армении, էջ 97, Ն. Ակիևյան, «Հ. ամս.», 1923, էջ 407—409, А. Манандян, Палестинский сборник, էջ 75, 76 և այլուր, Զամինյան՝ ՄՄ, Զամինյանի ֆոնդ, թղթ. 232ա, վավ. 101, էջ 41): Մծուրնի մասին ավելի մանրամասն տե՛ս ստորև, ծան. 27:

10. «Աստ դիպան արձանագրին»: Բոլոր ձեռագրերն ունեն ըստ դիպան (արձանագրին)», Մալխասյանցը միացրել է և դարձրել գոյութիւն շունեցող մի բառ «ըստդիպան»: Մենք, հետևելով ձեռագրերին, կրկին անջատել ենք բառերը և տվյալ տեղում անիմաստ «ըստ»-ը դարձրել «աստ», որով նախադասութիւնը իմաստավորվել է այսպես. «բացեալ զաւերածն վասն սեանցն՝ աստ դիպան արձանագրին» («սյուների պատճառով բացեցին ավերակները՝ այստեղ հանդիպեցին արձանագրութիւնը»):

Սույն արտահայտութիւն առթիվ հայտնված զանազան կարծիքների մասին տե՛ս ՍԵՊ, էջ 162: Այս էջում նշված սրբագրական փորձերին պետք է ավելացնել նաև Զամինյանի անտրպ առաջարկը՝ «ըստ դիպաց դիպեցան արձանագրին» (թղթ. 232ա, վավ. 101, էջ 41): Ի դեպ՝ Ստ. Մալխասյանցը մեր նշած էջում գրում է. «Եթե այնուամենայնիվ հարկ լիներ այս ըստ-ը չոկ գրել՝ պետք կլիներ նրան ուղղել աստ և ոչ թե անդ կամ ընդ»: Այսպես ճիշտ նկատելով հանդերձ, նա բնագիրը դարձրել է «ըստդիպան» և այդպես էլ հրատարակել:

Մարկվարտը (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 262, վավ. 4, միկրոֆիլմ, էջ 11) Ք. Պատկանյաւէի հրատարակութիւն «ըստ դիպան արձանագրին դրոշմեալ ի վերայ լիմի» արտահայտութիւնը սրբագրում է այսպես. «ըստ դիպան արձանագրին [հանդիպեալ եգիտ] դրոշմեալ ի վերայ լիմի»:

11. Զամն և զաւերս հին քագաւորացն»: Բոլոր ձեռագրերում և տպագիր բնագրերում՝ «հինգ»: Ուղղել ենք «հին»: Այսպես է սրբագրել նաև Զամինյանը (թղթ. 232ա, վավ. 101, էջ 41): Ավելի մանրամասն տե՛ս վերը, ծան. 5:

12. «Ի նորին աշակերտացն»: Ն. Ակիևյանը զանազան պատճառաբանութիւններով գրտնում է, որ բնագրում չէր կարող գրված լինել «ի նորին աշակերտացն» և այս արտահայտութիւնն ուղղում է «ի նորին դաստակերտան»: Նա գտնում է, որ «Սերետի Պատմութիւն» հեղինակը Ագաթանգեղոսի արձանագրութիւնը գտել է Պարսկաստանում Խոսրով Ապրվեզ կամ Փարվեզ թագավորի դաստակերտում: Սա շատ ազատ վերձանութիւն է և շատ է հեռանում ձեռագրից, որի մեջ գրված է «աշակերտ» և ոչ «դաստակերտ»:

Մարաբա Մծուրնացին ներկա գտնվելով Սանատրուկ արքայի պալատի պեղումներին՝ հանդիպել է հայ առաջին թագավորների տարիներն ընդգրկող մի արձանագրութիւն («գոր եգիտ դրոշմեալ ի վերայ արձանի ի Մծուրն քաղաքի»): Այս արձանագրութիւնը նա ընդօրինակել է իր մատչանի մեջ և նրա հիման վրա գրել է Հայոց առաջին թագավորաց պատմութիւնը: Այնուհետև, Մծուրն քաղաքի ավերման կամ այլ անհայտ պատճառներով, Մծուրնացու աշակերտները (գուցե՛ նաև Մծուրնացին) տեղափոխվում են Միջագետք՝ իրենց հետ ունենալով ուսուցչի մատչանը: Ահա, այս աշակերտների միջոցով խոստաբանութիւն հեղինակը գտնում է մատչանը («գոր իմ գտեալ ի Միջագետս») և նրա մեջ ընդօրինակված արձանագրութիւնը, որի հիման վրա շարադրում է իր երկը: Սա է բնագրի իրական բովանդակութիւնը:

Այս ամբողջ պատմութիւնից միաժամանակ երևում է, որ խոստաբանութիւն հեղինակն ապրել է V դարում: Միայն այդ դարում էր հնարավոր հանդիպել Մարաբա Մծուրնացու աշակերտներին: Հետագա դարերում այլևս Մծուրն քաղաքի բնակիչներ չկային: Այս քաղաքն ավերվել էր IV դարի երկրորդ կեսին (А. Манандян, Начальная история, էջ 75) և նրա բնակիչները կարող էին ապրած լինել առաջավելն մինչև V դարի երկրորդ կեսը: Զամինյանի

կարծիքով՝ արձանագրությունը Միջազգևտրում գտնող հեղինակը Փալստոսն է (տե՛ս թղթ. 232ա, վավ. 101, էջ 41)։ Այստեղ Զամինյանը «զոր իմ» բառերի կողքին փակագծերում ավելացնում է՝ «Փատտեայ»։ Սույն կարծիքը նա կրկնել է նաև այլուր)։

13. «Այս ունէր վերնագիրն այսպէս»։ Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն «այսու ունէր վերնագիրն այսպէս»։ Ն. Ակինյանն ուղղում է «այս սին ունէր»։ Բայց սա տրամաբանական չէ, որովհետև ըստ այդմ կստացվեր այնպես, թե սյունը ունեցել է վերնագիր («այս սին ունէր վերնագիրն այսպէս»)։ Ա. Զամինյանը (թղթ. 232ա, վավ. 101, էջ 41) «այս» բառի կողքին փակագծերում ավելացնում է «օրինակ» բառը։ Իսկ մեկ ուրիշ տեղ (Զամ., էջ 1) ուղղում է՝ «այս ունէր»։ Մենք նույնպես այդպես ենք վերծանել բնագիրը (տե՛ս մեր աշխ., էջ 142)։ Բնագրի աղճատումը մենք բացատրել ենք այնպես. ձեռագիրն ընդօրինակող գրիչները «այս» բառին հաջորդող «ունէր» բառի առաջին տառը («ու») սխալմամբ կրկնելով միացրել են «այս» բառին, որից և ստացվել է «այսու»։

14. Ազաթանգեղոսի անունը կրող արձանագրության կապակցությամբ Ստ. Մալխասյանցը գրում է. «Միհրդատյանը և նրա հետևողությամբ Պատկանյանը շահերտների մեջ են դնում, իբրև Ազաթանգեղյան արձանագրություն, ամբողջ առաջին գլուխը և երկրորդ գլխի ամենամեծ մասը, մինչև «արդ թագատրէ Արշակն Փոքր կոչեցեալ»։ Միհրդատյանը, նույն գլուխների վերաբերյալ ծանոթությունների մեջ, խոսելով Հայկի աստվածօգաշտության, Ազատ լերան և նրա ստորոտում Աբրահամի հարձ Մարտակի բնակության մասին՝ այս տեղեկությունները վերագրում է Ազաթանգեղոսին, ինչպես նաև տեղեկությունը՝ Բագրատունիների Հայկից սերված լինելու մասին։ Միհրդատյանի այսպիսի հասկացողության հետևող է եղել և Վ. Լանգլուան, որ յուր Collection-ի մեջ թարգմանելով վերոհիշյալ ամբողջ հատվածը՝ կնքել է նրան «Pseudo-Agathange» (Կեղծ Ազաթանգեղոս) անունով։ Խոշոր թյուրիմացություն է այս։ Նախ լեզվի տեսակետից նայելով՝ նկատում ենք, որ Ազաթանգեղոս չէր կարող ասել՝ «յիւրում տեղւոջ տեսցես զպատճէնն»։ Պատճեն կոչվում է արտագրությունը մի բնագրից, այնինչ Ազաթանգեղոսն ինքը առաջին անգամ պետք է գրեր, ոչ թե արտագրեր։ Դարձյալ՝ արձանագրության մեջ չէր կարելի չործածել՝ «սկսայց ասել»։ Ազաթանգեղոսը գրում՝ փորագրում էր արձանի վրա, և ոչ թե զրույց պատմում։ Պարզ դատողությամբ էլ գտնում ենք, որ Ազաթանգեղոս, ստանալով թագավորից հրաման արձանի վրա գրելու «զամս առաջին թագաւորաց Հայոց»՝ չէր համարձակի իրա գլխի անտես անել այս թագավորական հրամանը և առանց որևէ հրամանի նախ և առաջ պատմել «զվէպս յահեղն և յարի այրն»։ Բացի սրանից՝ մի կտոր արձանաքարը վրա չէր կարելի այդքան նյութ տեղավորել հին ժամանակի խոշոր երկաթագիր գրերով։ Բայց ամենազլխավորն այն է, որ մինչդեռ Սեբեոս խոստանում է յուր պատմության այդ մասը գրել՝ «հայելով ի մատեանն Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացոյ»՝ Միհրդատյանի և նրա հետևողների ըմբռնողությամբ Մարաբայը բուրյուրովին վերանում է մեջտեղից իբրև աղբյուր, և նրա տեղ հանդես է գալիս Ազաթանգեղոսը։ Եթե այդ բանասերները գունկ ուշադիր լինեին, որ Հայկի ու Բելի, Արայի և Շամիրամի են մասին Սեբեոսի պատմածը շատ մեծ նմանություն ունի Խորենացու պատմածին ըստ Մար Աբաս Կատինայի՝ հարկավ պետք է եզրակացնեին, որ Սեբեոսի մոտ էլ այդ հատվածներն առնված են համանուն Մարաբասի մատյանից, և ոչ թե Ազաթանգեղյան արձանագրությունից։

Սեբեոսի (իմա Անանունի—Պ. Ա.) մոտ Ազաթանգեղյան արձանագրությունից այս տեղում պահված է միայն վերնագիրը—«Նս Ազաթանգեղոս գրիչ—առեալ ի դիւանէ արբունի»։ Այստեղից սկսած արդեն Սեբեոսն է, որ շարունակում է. «Զոր փոքր մի և այպ յիւրում տեղւոջն տեսցես զպատճէնն» (այսինքն՝ Ազաթանգեղյան արձանագրության պատճենը, առաջին հայ թագավորների անունները, քիչ հետո յուր տեղում կտեսնես)։ «Նս նախ կպատմեմ վեպը ահեղ արքայի մասին», և այլն։ Իսկ թե որտեղ է զետեղել Սեբեոս այդ պատճենը՝ քիչ հետո կտեսնենք» (ՍեՊ, էջ 163—164)։

Այս ծանոթագրությունից հետո Մալխասյանցը մատնանշում է այն տեղը (ՍեՊ, էջ 10), որտեղ նրա կարծիքով զետեղված է եղել Ազաթանգեղյան արձանագրությունը։ Սակայն իրականում Անանունի հատվածն այնքան է աղավաղված, որ այժմ դժվար է որոշել նրա տեղը։ Բացի դրանից, «պատճեն» բառը զրաբարում չի նշանակում անպայման արտագրություն (копия), բնագիրը նույնպես կարող էր կոչվել «պատճեն» («տեքստ» բառի իմաստով)։ Չնարավոր է նաև, որ Ազաթանգեղյան արձանագրությունը վկայակոչող հեղինակը խոստանալով հանդերձ ցույց տալ արձանագրության պատճենը, իրականում քաղեր ոչ թե պատճենը, այլ՝ նրա հիման վրա շարագրեր իր պատմությունը։

15. «Բայց ես նախ առաջին»: Զամինյանը (թղթ. 232ա, վավ. 101, էջ 43) դարձնում է «բայց ես նախ և առաջին»: Բայց մենք համոզված չենք, թե «նախ առաջին»-ը սխալ է:

16. «Զառասպելս ունայնս անհանճար զաւրացն»: Գ. Տեր-Պողոսյանը («Նկատողութիւններ Փալատոսի Պատմութիւն վերաբերյալ», Վիեննա, 1919, էջ 9) գրում է. «Թեքես պետք է կարգացվի «անհանճոյս լսողացն»: Ն. Ակինյանը («Մատենագր. հետազ», 1924, էջ 30) և Զամինյանը (թղթ. 232ա, վավ. 101, էջ 43 և թղթ. 232բ. վավ. 133, էջ 2) առաջարկում են կարդալ «անհանճար զրուցացն» (փխ. «անհանճար զաւրացն»):

17. Աշտարակաշինութիւն մասին Անանունի աղճատված տեղեկությունը համադրենք Ագաթանգեղոսի և Խորենացու տեղեկությունների հետ, որոնց միջոցով Անանունն ավելի հասկանալի կդառնա (Ագաթանգեղոսից և Խորենացուց մեջբերումները կատարում ենք ըստ ՍՆԳ, 2):

Ագաթանգեղոս	Խորենացի	Անանուն
սկսան գործել զաշտարակն...	Հողմն իմն ցրէ զամբարտակն	Ի մեծ երկանցն աշտա-
իսկ յղութիւն նոցա ծնոյց զան-	և մարդկանն անլուր բարբառս	րակին յղութիւն ծնանելով
լուր միմեանց ձայնիցն շփոթու-	բաշխեալ... այր իւրաքանչիւր	ցրէր ընդ մեծ անապատ
թիւն:	սուր ի կող ընկերոյ իւրոյ ձգե-	անթիւ, որ ի կայս ան-
	լով:	լուրս ձայնից անդադար ի
		վերայ ան ընկերի աւ-
		նոյր սուրն:

Մարկվարտը (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 262, վավ. 4, միկրոֆիլմ, էջ 12) «գոր ի մեծ երկանցն աշտարակին յղութիւն ծնանելով ցրէր ընդ մեծ անապատ անթիւ որ ի կայս անլուրս ձայնից» հատվածի վերջին մասը սրբագրում է այսպես. «Ի սկայս անլուր [միմեանց] ձայնից»:

18. Ստ. Մալխասյանցը նշելով, որ «Բէլլն տիտանեան» արտահայտությունը հանդիպում է նաև Մովսես Խորենացու մոտ, գրում է. «Տարակույս չկա, որ Մարաբասեան երկու աղբյուրներից մեկն օգտվել է մյուսից: Ո՞րն է նրանցից այս անունների հեղինակը և ո՞րն է օգտվողը: Սեբեոսի աղբյուրում ո՞չ «Բէլլը» և ոչ «Տիտանեանը» չունին ոչ մի բացատրություն, այս բաները նրա մոտ գործ են ածվում իբրև հայտնի՝ պատրաստի տերմիններ: Այնինչ Խորենացու մոտ նրանք լիովին բացատրված են, և մենք գիտենք թե ով է Բելլը և ինչու է կոչված Տիտանյան: Հայտնի է, որ Խորենացին ժողովրդական վեպերն և արտաքո Ս. Գրքի զրույցները համարում է այլաբանություններ, որոնց տակ թաքնված է ճշմարտությունը: Նա շատ անգամ բերում է այսպիսի վեպեր և զրույցներ և յուր կողմից «ճշմարտում է», այսինքն այլաբանությունը մեկնում է, պատմական իրողությունը երևան հանում: Այսպես էլ նա արվել է ներկա դեպքում: Ս. Գրքի Զ զվտում նա բերում է մի զրույց Բերոսոսի սիբիլլայից—«Ձկնի նաարկութեանն Քսիստիթայի ի Հայս՝ Զրուանն, Տիտանն, և Յապետոսթէ լինէին իշխանք երկրի», որ նա անմիջապես «ճշմարտում է» (այսինքն՝ մեկնում է), ասելով, «որ ինձ թո՛ւն Սեմ, Քամ և Յաբեթ»: Ապա ուրեմն արտաքին զրույցների Տիտանը ըստ Խորենացու է Ս. Գրքի Քամը, Նոյի երեք որդիներից երկրորդը: Դարձյալ Խորենացին նույն Ս. Գրքի է զվտում ապացուցանում է, թե արտաքին հեղինակների Բելլը Ս. Գրքի Նեբրովթն է: Ուրեմն, ըստ Խորենացու՝ Տիտանյան Բելլը Ս. Գրքի Քամյան Նեբրովթն է: Հասկանալի է, թե ինչու Խորենացին գործ է ածել «Տիտանեան Բէլլ», և ոչ «Քամեան Նեբրովթ»: Նա ունեցել է արտաքին աղբյուր (=Մարաբասյան աղբյուրը), որի մեջ պատմված է արտաքոյ Ս. Գրքի—Բեիլ պատերազմը Հայկի հետ: Խորենացին այս Բեիլն նույնացնելով Ս. Գրքի Նեբրովթի հետ, և Հայկին դարձնելով Ս. Գրքի Քորգոմի որդի՝ նրանց մականուններն ևս պետք է զներ ըստ արտաքին աղբյուրների—Տիտանյան և Յապետոսթեան, և ոչ ըստ Ս. Գրքի Քամեան և Յաբեթեան, հակառակ դեպքում նա խարդախած կլիներ Ս. Գրքը, որտեղ ոչ Բել (հսկայ) և ոչ Հայկ կա և ոչ նրանց պատերազմը: Սրանից երևում է, որ «Տիտանեան Բէլլ» հորջորջումն ստեղծուող եղել է Խորենացին, քանի որ այս հորջորջումն ստեղծելու համար անհրաժեշտ էին երեք նախադրյալներ՝ 1) հայացք՝ թե վեպերն ու զրույցները այլաբանություններ են, որոնց տակ թաքնված է ճշմարտությունը, 2) ծանոթություն Բերոսոսյան սիբիլլայի լրջուան, Տիտան և Յապետոսթէ-ին, և 3) տեղեկություն, թե արտաքին հեղինակների Բելլը Ս. Գրքի Նեբրովթն է: Իսկ այս երեք նախադրյալներն ունի միայն Խորենացին և ոչ այլ ոք մեր հին հեղինակներից: Սրանից անհերքելի կերպով հետևում է, որ Սեբեոսի Մարաբասյան աղբյուրի հեղինակն օգտվել է Մ.

Խորենացու Պատմությունից և այնտեղից վերցրել «Տիտանեան Բէլ» հորբորչումը» (ՍեՊ, էջ 165—166):

Այնուհետև գիտնականը մասնանշում է իր հոդվածը («Խորենացի և Սեբեոս», Պատմութեան և գրականութեան ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք 1, էջ 155—160), որտեղ նա ավելի մանրամասն է կանգ առել քննվող հարցի վրա: Այստեղ շարադրված մանրամասն պատճառաբանություններով հանդերձ՝ դժվար է հավատալ, թե միայն Մովսես Խորենացին կարող էր գործածել «Բէլն Տիտանեան», «արքայն Տիտանեան» արտահայտությունները: Մանանդյանը («Палестинский сборник», էջ 80—82) գտնում է, որ Մալխասյանցի կովանները համոզիչ չեն:

Մեզ ավելի հավանական է թվում այն, որ Պատմահայրը իր օգտագործած աղբյուրներում արդեն հանդիպած է եղել այդ արտահայտություններին և իր սովորության համաձայն բացատրել, «Ճշմարտել է» դրանք, «այլաբանությունը մեկնել է, պատմական իրողությունը երևան հանել»: Մալխասյանցն ինքն էլ ասում է, որ Բելի անունը Խորենացուն ծանոթ է եղել Մարաբասյան աղբյուրից, ուրեմն հնարավոր է, որ հենց այդ աղբյուրում էլ Բելը կոչված է եղել Տիտանեան, և Խորենացին այդ «Տիտանից» ելնելով է, որ Բելի ծննդաբանությունը որոնել է Ս. Գրքի մեջ և Բերոսոսի սիբիլայի Զրուան, Տիտան, Յապետոսի եռյակը նույնացրել է Ս. Գրքի Սեմ, Քամ, Հաբեթի հետ: Որ Տիտանեան անունը կարող էր Խորենացին գտած լինել իսկապես Մարաբասյան աղբյուրում՝ երևում է հենց Անանունից, որը նույնպես Բելին կոչում է Տիտանեան և այդ անունը քաղում է «Մարաբայ փիլիսոփա Մծուրնացու» մատյանից:

19. «Որ գառաշիկն շինեալ էր Զրուանայ՝ հարցն և եղարբքն հանդերձ»: Ա. Մատիկյանը սույն արտահայտությունն սկսող «որ»-ը դարձնում է «գոր», իսկ «Զրուանայ»-ին հաջորդող բառերը համարում է ավելորդ (տե՛ս Անանունը և Կեղծ Սեբեոս», էջ 75): Հատվածն ավելի մանրամասն է քննել Ստ. Մալխասյանցը, որը Զրվանն ընկալել է որպես հայր Զրվան և «հարն»՝ բառը համարելով Զրվանի ինքնությունը բացահայտող բառ՝ բույժ է դրել նրա վրա, որպեսզի դրանով այն անշատիկ հաջորդ բառերից և վերաբերի Զրվանին: Այս կապակցությունը նա գրում է. «Ե տանն որ ի լեռնոտինն, որ զառաջինն շինեալ էր Զրուանայ հարն՝ և եղարբքն հանդերձ»: Առեղծվածային խոսք. ի՞նչ լեռան ստորոտ է. ի՞նչ տուն է, որ շինել է Զրվան հայրը. ո՞վ է այդ Զրվանը, ի՞նչ եղբայրներ են—այս հարցերից ոչ մեկին պատասխան չենք գտնում Սեբեոսի մոտ. բայց բոլորի պատասխանը գտնում ենք Խորենացու մոտ, որ իբրև բանալի է ծառայում այս առեղծվածը լուծելու: Խորենացին, ըստ իր սովորության, տեղերը աշխարհագրական անունները բացատրելու նպատակով՝ բերում է Օլիմպիոզորոս փիլիսոփայի պատմած անգիր զրույցը (գիրք Ա, գլ. 2), որի մեջ պատմվում է, թե երբ Քսիստոսը (=Սոյ) նավով հասավ Հայաստան և ցամաք իջավ՝ նրա որդիներից մեկը, Սեմը, երկիրը դիտելու նպատակով դիմեց դեպի հյուսիս-արևմուտք. այնտեղ հանդիպեց մի դաշտի, երկայնաձև լեռան մոտ, որտեղով մի գետ էր հոսում դեպի Ասորեստան: Այստեղ նա կանգ առավ երկու լուսնական ամիս ու զնաց: Նրա կրտսեր որդիներից մեկը, Տարբան, իր որդիներով, աղջիկներով ու փեսաներով մնաց նույն տեղում, բնակության տեղ շինեց: Նրա անունով դաշտը կոչվեց Տարան, իսկ լեռը հոր անունով Սեմ. իսկ որտեղ որ նրանք իրարուց բաժանվեցին՝ Յրոնք: Նույն Սեմը մի կարճ ժամանակ ապրեց նաև Բալտրիացոց կողմերը, և նրա անունով զավառը կոչվեց Զարավանդ, որովհետև Արևելքում Սեմին Զրվան են ասում: Այս զրույցով Խորենացին բացատրում է Սիմ (Տավրոս) լեռը՝ Սեմի անունից, Տարոն գավառի անունը՝ Տարբանի անունից: Յրոնք տեղի անունը՝ «ցրվել» բայից, իսկ Զարավանդ գավառը Սեմի Զրվան անունից, ինչպես կոչելիս են եղել նրան Արևելքում (և ինչպես ինքը բացատրել է Բերոսոսյան Սիբիլայի Զրվան, Տիտան և Յապետոսին): Խորենացու այս հատվածով բացատրվում է Սեբեոսի առեղծվածային հատվածը. լեռը՝ Սիմը կամ Տարոսն է, նրա ստորոտը Տարոն գավառն է, Զրվանը Սեմն է, առաջին բնակության անունը՝ որ Զրվան հայրը շինել էր սրբոց և եղբայրների հետ՝ Տարբանի շինած բնակությունն է: Նույնիսկ բացատրվում է «ե եղարբքն» խոսքում անտեղի «և» շաղկապը: Զեռագրում անշուշտ բաց է թողնված «որդուով» բառը, ինչպես երևում է Խորենացու պատմածից. ուրեմն պետք է այստեղ բնագիրը լրացնել՝ «շինեալ էր Զրուանայ հարն՝ որդուով և եղարբքն հանդերձ»: Ահա դարձյալ մի ապացույց, որ Սեբեոսի Մարաբասյան աղբյուրի հեղինակը ծանոթ է եղել Խորենացու Պատմության: Անձանոթ խմբագրողն այստեղ ամփոփել է Խորենացու պատմածը.

\* Զեռագիր և տպագիր բնագրերում՝ հաւրն (փխ. հարբն):

բայց այնքան անհաջող կերպով, որ առանց հորենացու Պատմության օգնության՝ անհասկանալի կմնար» (ՍԵՊ, էջ 166—167):

Ստ. Մալխասյանցի այս տեսակետը դժվար է հաստատել: Զրվանին վերաբերող նախադասությունը հեղինակի օրինակելի նախադասություններից է, որտեղ գրավիչ հակիրճությամբ պատմվում է. «Հայկը Բաբելոնից լվեց, խաղաց, գնաց կնոջով և որդիներով և ամենայն կազմով հանդերձ: Եվ գնաց բնակվեց Արարադ երկրում. այն տանը, որ լեռան ստորոտին էր, որ առաջինը շինել էր Զրվանը՝ հոր և եղբայրների հետ»:

Խորենացու մոտ գտնում ենք զրույցի ընդարձակ շարադրությունը, իսկ այստեղ՝ ամփոփումը, որը Խորենացու պատմածից այնքան էլ չի հեռանում:

Հատվածում հիշատակված Զրվանը նույն անձնավորությունն է, ինչ որ Խորենացու մոտ, այսինքն՝ նա իրոք որ Սեմն է և Խորենացու մոտ էլ Սեմը իսկապես իր հոր հետ է եկել Հայաստան: Զրվանը հոր (Խորենացու մոտ տրված է հոր անունը, իսկ այստեղ՝ ոչ) և եղբայրների հետ է շինել այն տունը լեռան ստորոտում, ուր որ հետո եկել բնակվել է Հայկը:

Այստեղ ձեռագիրը ոչ մի «որդովն» բառ բաց չի թողել և բոլորովին էլ անտեղի չի գործածված «և» շաղկապը: Պարզապես, Զրվանի մասին պատմող հեղինակին հայտնի է եղել զրույցի մի այնպիսի տարբերակ, որի համաձայն Զրվանը հոր և եղբայրների հետ է շինել տունը:

Ուրեմն, բնագիրը ճիշտ վերծանելիս ոչ մի բացթողում, հավելում կամ քերականական այլ աղճատում չկա: Ուղղակի բուլբը պետք է դնել իր տեղը՝ Զրվան անվան վրա և ամբողջ հատվածը կարդալ այսպես. «Զի շուեաց խաղաղ գնաց Հայկն ի Բաբելոնն է կնան և որդուվքն և ամենայն աղխին հանդերձ, և չոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ, ի տանն, որ ի լեռնոտինն, որ զառաջինն շինեալ էր Զրուանայ՝ հարրն և եղբարքն հանդերձ»:

Միակ փոփոխությունը, որ կատարեցինք այստեղ՝ դա «հարն» բառի սրբագրությունն է հարբն ճիշտ ձևով: Բառին հաջորդող «և» շաղկապից, ինչպես նաև «եղբարքն» բառի հոլովածակից (գործիական) երևում է, որ ձեռագրերում աղճատված «հարն» բառը նույնպես սկզբնական բնագրում գրված է եղել գործիական հոլովով՝ «հարբն»\*:

20. «Որոյ հգաւր զարուրեամբ»: Զամինյանը (Զամ, էջ 3) ուղղում է «որոյ հգաւր զարութիւն», որը հիմնավորված չէ:

21. «Մնաւ աւբայի Բէլայ»: Ա. Մատիկյանը («Անանունը կամ Կեղծ Սեբեոս», Վիեննա, 1913, էջ 76) դարձնում է «յարբային» (փխ. «արբայի»), որը հիմնավորված չէ:

22. «Զոր շինեալն էր ի լեռնոտին»: Մատիկյանը (նշված աշխ., էջ 76) դարձնում է «որ» (փխ. «զոր»), որը հիմնավորված չէ:

23. «Անդ ի դիմի հարկանի Հայկն Բէլայ արբայի»: Մատիկյանը (նշված աշխ., էջ 77) դտնում է, որ մեր ընդգծած նախադասությունը «նախընթաց նույնիմաստ տողին կրկնությունն է»:

24. «Ոչ վրիպի նետ իմ իմիք»: Մատիկյանը (նույն տեղում) դարձնում է «իւիք» (փխ. «իմիք»), որը հիմնավորված չէ:

25. «Յաւղ սկայաւրէն կամարին»: Վ. Ինգլիզյանը («Armenien in der Bibel», Wien, 1935, էջ 31) առաջարկում է բնագիրը լրացնել «և զնետն եղեալ» բառերով, այնուհետև կրճատել «ընդ ինքեան» բառերը և ամբողջ հատվածը կարդալ այսպես. «Եւ կանգնէ զկապարճսն ի գետին և զնետն եղեալ յաւղն սկայաւրէն կամարին»: Ըստ այսմ էլ նա բնագիրը թարգմանել է դերմաներեն: Սակայն նրա սրբագրական առաջարկն ու թարգմանությունը շատ են հեռանում բնագրից:

Ստ. Մալխասյանցը ծանոթագրել է. «Բոլոր ձեռագիրներն այստեղ ունին «յաւղ», որը Միհրդատյանը ուղղել է «յաղեղն». նրան հետևել են նաև ուրիշները (Պատկանյան, Խալաթյանց, Մատիկյան են): Սակայն Միհրդատյանի ուղղումը սխալ է, հետևանք չհասկացողության, և անիմաստ է դարձնում բնագրի այս խոսքը—«և կանգնէ զկապարճսն ի գետնոյ ընդ ինքեան յաւղ (ուղղված՝ յաղեղն) սկայաւրէն կամարին». Պատկանյանը թարգմանել է «Вставив стрелу в дугу исполнського лука, который опирался в землю» (եր. 5), որից դուրս է գալիս, իբր թե նետը արձակելու ժամանակ Հայկը աղեղը հենել է գետնին: Բացի սրանից՝ թարգմանության մեջ բաց է թողած «ընդ ինքեան», և ավելացրած է նետ, որ չկա բնագրում:—

\* «Սեբեոսի Պատմության» լեզվական առանձնահատկությունների մասին տե՛ս Գ. Բաղդիլյան, Հոլովման և խոնարհման առանձնահատկությունները «Սեբեոսի Պատմության» լեզվում («Լրաբեր», ՀՍՍՀ ԳԱ, 1976, № 9, էջ 68—78):

ևսաբը բնագրում բուրորովին այլ կերպ պետք է հասկանալ: Հայկը, երբ փախչում էր Բելի առաջ՝ կապարճը կրում էր ուսին, ինչպես սովորություն էր: Իսկ երբ որոշեց կովել՝ նա կանգ առավ, կապարճը ուսից իջեցրեց (որպեսզի չխանգարե ընդ գիրկս մտանեջ), գետնի վրա կանգնեցրեց յուր կողքին, մինչև հսկայական կամարի (քամարի, գոտու) օղը: Ուրեմն կապարճը հասնում էր մինչև Հայկի գետին, որի վրա օղ կար, որից, ինչպես երեկ, կախում էին կապարճը մի կետով, որպեսզի քալելիս կապարճը կախված մնա սրունքի մոտ, և կովողի ձեռքերն ազատ լինին: Հետաքրքրական մանրամասնություն հին զինվորավորման: Կամար բառը զինվորական գոտու նշանակությունը Սերեոսը գործ է ածում մի քանի անգամ ևս ժ զլխում, և այնուհետև» (ՍեՊ, էջ 167):

Մալխասյանցի առարկությունները տեղին են: Իսկպես, ձեռագրերում պահպանված «յալ» ձևը չի կարելի փոխել «յաղեղն» բառով: Սխալը կրկնված է նաև Անանունի տվյալ հատվածի ֆրանսերեն թարգմանչի կողմից «Collection des historiens anciens et modernes de Arménie... par V. Langlois», t. I, Paris, 1867, էջ 197):

Ստ. Մալխասյանցի բացատրությունից, սակայն, ստացվում է այն տպավորությունը, ինչ Հայկը պարզապես գործնական նպատակներով է կապարճը դետնի վրա կանգնեցրել («որպեսզի չխանգարե ընդ գիրկս մտանեջ»): Այնինչ՝ Անանունը գործածել է գեղարվեստական արտահայտության ձևեր և պատկերել է Հայկի գեղեցիկ կեցվածքը նետաձգության պահին, ինչպես հանդիպում ենք նաև առասպելական այլ հերոսների վերաբերող գրվածքներում և քանդակներում: Հայկը կանգ առնելով՝ պատրաստվում է կովել ընդդեմ նորա աղեղամբ: Եվ կանգնեցնում է կապարճն ուղղաբարձ գետնից («ի գետնոյ») իրեն հետ («ընդ ինքեան») ուղղահայաց, սլացիկ մինչ կամարը (գոտու): Քերականորեն, անուշտ, ավելի ճիշտ է «ի գետնոյ... ցալ» («գետնից մինչև օղը»), քան թե «ի գետնոյ... յալ» («գետնի վրա՝ օղի մեջ») արտահայտությունը, հետևաբար, բացառված չէ նաև այն հնարավորությունը, որ Անանունի սկզբնական բնագրում եղել է հենց մեր նեթադրած «ցալ» (և ոչ՝ «յալ») բառը:

26. «Յերկիր խառվեսլ վտաբեալ նետն»: Մատիկյանը («Անանուն կամ Կեղծ Սերեոս», էջ 78) դարձնում է «զվտարեալ» (փխ. «վտարեալ»), որը հիմնավորված չէ:

27. «Ն բնակեցաւ անդրէն ազգաւ իրով մինչև ցայժմ»: Մատիկյանը (նույն տեղում, էջ 79) դարձնում է «անդէն» (փխ. «անդրէն»), որը հիմնավորված չէ:

28. «Եղբաւր Հարմայի»: Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, էջ 5) «Հարմայի» անվան դիմաց ծանոթագրում է՝ «Թվի ուղղելի Արմայիսի»:

29. «Ն գրաւ երանեսին»: Այս արտահայտության դիմաց Ա. Զամինյանը (Զամ., էջ 7) ծանոթագրում է. «Առ վրացիս (նկատի ունի «Քարթլիս ցխովրբան» — Գ. Ա.) եօթն եղբարը»:

30. «Որով անցեալ Արամեճակ բնակ անդ»: Մատիկյանը («Անանունը կամ Կեղծ Սերեոս», էջ 79) դարձնում է «ղորով» (փխ. «որով»), որը հիմնավորված չէ:

31. «Անուանէ զանուն նորա լատ անունս իւրոյ Արամայի»: Արամայի-ը խորենացու և հայ ու սուրբ այլ մատենագիրների հիշատակած Արմավիրն է: Այս տեղանվան ստուգաբանության մասին տե՛ս Մատի աշխատությունը («О начальной истории», էջ 289) և Գ. Տեր-Մկրտչյան («Արմավիրյան նոր բեկտազիր», տպված «Արարատում», 1892, էջ 424—427): Ոմանք կարծում են, թե Արամայի-ը վրիպակ է և նրա փոխարեն եղել է Արամայիս (հմմտ. Մ. Զովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 760, 761):

32. «Ն կամեցաւ առնել ընդ նմա բարեկամութիւն»: Ա. Մատիկյանը («Անանունը կամ Կեղծ Սերեոս», էջ 80) գտնում է, որ ընդգծված նախադասությունն սկսող «և» շաղկապն ավելորդ է:

33. «Ձի ոչ գտանէր յայնմ ժամանակի նման նորա (Մատիկյանը, էջ 80, ուղղում է «նման նմա» — Գ. Ա.) այլ ո՞ր ամենևին՝ այլ պատկերաճոխ»: Ա. Զամինյանը (Զամ., էջ 8) բերված արտահայտության դիմաց՝ լուսանցքում նշել է. «Փավստոս, եր. 58», որով հայտնում է, որ հեղինակը գործածել է Փավստոս Բուզանդի՝ համապատասխան արտահայտության նման մի արտահայտություն:

34. «Սերեոսի Պատմության» ձևագիրը մեզ հասել է, ինչպես հայտնի է, բառերի ու անունների բազմաթիվ աղճատումներով: Ստ. Մալխասյանցը նշել է, որ «միջին» կոչված երկաթագրի մեջ Մ և Տ գրերը միմյանց շատ նման են, որի հետևանքով էլ այս տառերը պարունակող անունների և բառերի մեջ շատ հաճախ պատահում են աղավաղումներ: Գրանցից է նաև «Բագարատ» և «Բիրատ» անունների աղավաղումը: «Սերեոսի Պատմության» բոլոր ձեռագրերում այս անունները հանդիպում են «Բագարամ» և «Բիրամ» ձևերով: «Պատմության»

առաջին հրատարակիչ Ք. Միհրդատյանը հենց այդպես էլ տպագրել է անունները: Ք. Պատկանյանը, սակայն, ուղղել է այդ սխալը: Նրան հետևել են նաև Մալխասյանցը և ուրիշներ:

«Բագարատ», «Բիրատ», «Ասպատ» անունների «նա» վերջավորությունը թելագրում է այն միտքը, որ միևնույն վերջավորությունը պետք է ունենար նաև այդ անունների նախորդող անունը, որը, սակայն, բոլոր ձևագրերն ու տպագիր բնագրերն ունեն «Բագամ» ձևով: Ինչ վերաբերում է Ասպատ անվանը՝ Մալխասյանցը (ՄԱՄԽ., էջ 137, Ժ. 14) հնարավոր է համարում, որ դա աղավաղումն է Բագրատունյաց տոհմի տխրոսակիր «Ասպետ» անվան, որը ձևագրերում աղավաղվելով դարձել է «Ասպատ»:

35. «Զուր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբառոսացն աստուած կոչեցին»: Ա. Զամինյանը (Զամ., էջ 9), որը Անանունը դիտում է որպես Փավստոս Բուզանդի հունարեն գրած «Հայոց պատմության» առաջին դպրությունը, ենթադրում է, թե մեր ընդգծած նախադասությունը ներմուծված է VI դարում հայ թարգմանչի կողմից: Այսպես պետք է հասկանալ քննարկվող տողի դիմաց լուսանցքում նրա գրած հետևյալ լուսանցագրությունը. «հանելուած հայ թարգմանչի Զ դարու»: Մեր կարծիքով, սակայն, ընդհակառակը, «բարբառոս» բառը մատնանշում է հունական աղբյուր:

36. «Մինչև ցապստամբութիւնն Պարթևաց ի Մակեդոնացուց»: Բոլոր ձևագրերն ունեն «և (փխ. «ի») Մակեդոնացուց»: Զամինյանը (Զամ., էջ 10) ուղղել է «ի Մակեդոնացուց»: Այսպես է ուղղված նաև Մալխասյանցի կողմից (ՍԵՊ, էջ 7):

37. «Քանզի գտոյն ճառէ ժամանակագիրն»: Ն. Ակինյանը («Սեբիոսի «Ժամանակագիրն» և Փ. Բյուզանդյա Ա. պատմությունք», «Հ. ամս.», 1938) առաջարկել է նախաբանի «զամս և զաւորս հինգ թագաւորացն յիշատակելով» բառերով սկսվող ամբողջ հատվածը բերել և զետեղել «Քանզի զտոյն ճառէ ժամանակագիրն այսպէս» բառերից հետո: Նրա առաջարկի համաձայն՝ խնդրո առարկա հատվածը պետք է կարդալ այսպես. «Քանզի զտոյն ճառէ ժամանակագիրը այսպէս՝ զամս և զաւորս հինգ թագաւորացն յիշատակելով, անդր հայելով ի մատեանս Մար Աբայ փիլիսոփայի Մծուրնացուց, զոր եզիտ դրոշմեալ ի վերայ արձանի ի Մծբին քաղաքի... զոր իմ գտեալ... կամեցայ ձեզ, զրուցակարգել քանզի այսու ունէր վերնագիրն այսպէս. ևս Ագաթանգեղոս գրիչ գրեցի... առեալ ի դիւանէ արքունի. այդպէս առաջիկ կայ. Ապստամբութիւն պարթևաց որ եղև ի յայս(մ) ժամանակի»: Ակինյանի միացրած այս հատվածներն իրականում իրարից շատ հեռու են ընկած և հազիվ թե երբևէ մի ամբողջություն կազմած լինեն: Նշված հոդվածում Ակինյանը կատարում է նաև զանազան այլ սրբագրություններ, որոնք դարձյալ բնագրից շատ տարբեր լինելով՝ ընդունելի չեն: Այսպես օրինակ, նա առաջարկում է «ի մատեանս Մարաբայ փիլիսոփայի Մրծուրնացուց» բառերի փոխարեն կարդալ «ի մատեանս Ագաթանգեղոսի ի քաղաքէ ի Մեծն Հոովմայ»: Այս փոփոխությունն այնքան է հեռանում ձևագրից, որ թույլ չի տալիս ընդունել Ակինյանի առաջարկը: Այսպես անբնական եղանակով սրբագրված է նաև մի շատ ընդարձակ հատված, սկսած «եւ ծառայեցին մակեդոնացուց մինչև ցապստամբութիւնն Պարթևաց» բառերից մինչև «եւ լինին ամենայն ամբ Արշակայ թագաւորութեանն ճլ ամ» բառերը:

«Ժամանակագրի» մասին գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Գր. Խալսթյանցը («Армянский эпос» էջ 89), Ն. Ադոնցը («Начальная история», էջ 75—76), Ստ. Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 10, 168) և այլք, ելնելով Պարթևաց պատմության վերաբերյալ գլխում և Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն»-ում պահպանված որոշ ընդհանուր տվյալներից, գտնում են, որ «Սեբեոսի Պատմությանը» կից հատվածի հեղինակը (Անանունը) ժամանակագիր ասելով հասկացել է Եվսեբիոս Կեսարացուն: Իրականում, սակայն, Կեսարացուն հիշեցնող տեղեկությունները Պարթևաց պատմությանը վերաբերող գլխում սկզբից մինչև վերջ պատմվում է Արշակի մասին: Ըստ որում՝ այստեղ հայտնվում են Արշակին վերաբերող այնպիսի տեղեկություններ, որոնք գոյություն չունեն Եվսեբիոսի ժամանակագրությունում: Իրանցից են, օրինակ՝ 1. Արշակը թագավորում է 56 տարի, 2. նա Հայոց թագավոր է կարգում իր որդուն, 3. Վախճանվում է 130 տարեկան հասակում և այլն:

Քննարկվող գլուխը փաստորեն իրենից ներկայացնում է Պարթև Արշակունիների հարստության հիմնադիր Արշակի գործերի պատմությունը: Այն ժամանակ, երբ Եվսեբիոս Կեսարացու գրքում Արշակի մասին գտնում ենք ընդամենը երկու-երեք ցարցրիվ տեղեկություններ, Պարթևաց պատմությանը վերաբերող գլխում սկզբից մինչև վերջ պատմվում է Արշակի մասին: Ըստ որում՝ այստեղ հայտնվում են Արշակին վերաբերող այնպիսի տեղեկություններ, որոնք գոյություն չունեն Եվսեբիոսի ժամանակագրությունում: Իրանցից են, օրինակ՝ 1. Արշակը թագավորում է 56 տարի, 2. նա Հայոց թագավոր է կարգում իր որդուն, 3. Վախճանվում է 130 տարեկան հասակում և այլն:



Եթե Արշակի երկարակեցության մասին տեղեկությունը վերցված լիներ Եվսեբիոս Կեսարացուց, ինչպես որ ենթադրում է Գ. Խալաթյանցը («Армянск. эпос», էջ 89), ապա այստեղ պետք է Արշակին հատկացված լիներ առնվազն 150 և ոչ թե 130 տարվա կյանքի տևողություն, որովհետև ըստ Եվսեբիոս Կեսարացու («Ժամանականք», Վենետիկ, 1818, էջ 232) 132-րդ Ողոմպիասի 3-րդ տարում «Պարթևք ի մակեդոնացուց» ապստամբեցին և «ի նոցանէ թագաւորեաց Արշակ, ուստի և Արշակունիք» և ապա՝ 163-րդ Ողոմպիասի առաջին տարին «Արշակ պարթև զԱնտիոքոս սպանանէ» (նույն տեղում, էջ 244):

Ըստ այսմ Արշակը թագավոր դառնալուց 122 տարի հետո սպանում է Անտիոքոսին: Պարզ է, որ ութ տարեկան երեխան չէր կարող ապստամբել մակեդոնացվոց դեմ և դառնալ թագավոր: Գրա համար նա պետք է լիներ առնվազն 20—30 տարեկան, ուստի և՛ իր թագավորության 122-րդ տարում՝ շուրջ 150 տարեկան:

Հիշենք նաև, որ «Սեբեոսի Պատմությունում» Արշակի թագավորության տարիների գումարը 56 է, իսկ Եվսեբիոս Կեսարացու մոտ, ըստ Խալաթյանցի՝ հաշիվների, Արշակը Անտիոքոսին սպանում է իր թագավորության 122-րդ տարում, ուրեմն թագավորել է առնվազն 122 տարի:

Սրանք որոշակի փաստեր են, որոնք ցույց են տալիս, որ «Սեբեոսի Պատմությանը» կից հատվածի հեղինակի վկայակոչած ժամանակագիրը Եվսեբիոս Կեսարացին չէ:

Ն. Մառը («О начальной истории Армении», էջ 281) և Ն. Ակինյանը («Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց և իւր Պատմութիւնն ի Հերակլն», «Հ. մամ.», 1923, էջ 403, 415) ժամանակագրին նույնացրել են Մծուրի արձանագրության հեղինակ Ազաթանգեղոսի հետ: Սակայն նրանք չեն հաշիվի առել, որ պարթևաց ապստամբությանը վերաբերող զխում նշված են հինգ այնպիսի թագավորներ, որոնք ապրել են Ազաթանգեղոսից հետո, ուստի և նրանց մասին գրող ժամանակագիրը չի կարող նույնանալ Ազաթանգեղոսի հետ:

Ա. Զամինյանը (ՄՄ, թղթ. 232, վավ. 101) ժամանակագիր է համարել Մարաբա Մծուրնացուն:

Ն. Ակինյանը («Սեբիոս ժամանակագիրն», էջ 46—50) հետագայում վերանայելով իր կարծիքը, ժամանակագրին նույնացրել է Փ. Բուզանդի հետ:

35. «Ի Դամասկոսէ ասեն գնացեալ զՄաւսեակն՝ զընդծինն Աբրահամու...»: «Սեբեոսի Պատմությանը» նվիրված մեր ուսումնասիրության 85-րդ էջում ցույց ենք տվել, որ XVI դարի բանաստեղծ Միմեոն Ապարանեցու ձեռքին եղած և այժմ անհետ կորած մի ձեռագրում Մարսեակի վերաբերյալ ավանդությունը զետեղված է եղել ոչ թե այժմ մեզ հայտնի իր տեղում («Ապստամբութիւն պարթևաց, որ եղև ի յայս ժամանակի» խորագրից առաջ), այլ՝ Մամիկոնյանների զրույցից անմիջապես հետո: Արդյոք սկզբնական բնագրում նույնպե՞ս այդպես է եղել. դժվար է պնդել, բայց պարզ երևում է, որ մեկ հասած՝ ձեռագրերում հատվածը իր բնական տեղում չէ: Սա այնքան նկատելի փաստ է, որը նշել են գրեթե բոլոր այն բանաստեղծները (Ք. Պատկանյան, Ն. Զնտոյան, Ն. Մառ, Ա. Մատիկյան, Բ. Սարգիսյան, Ն. Ակինյան, Ստ. Մալխասյանց, Ա. Զամինյան և ուրիշներ), որոնք այս կամ այն առիթով գործ են ունեցել հատվածի հետ: Ակինյանն առաջարկել է հատվածը տեղափոխել դեպի նախորդ էջերը և զետեղել «ապստամբեցին յԱսորոց թագաւորացն ի ծառայութենէ» բառերից հետո: Եղել են նաև այլ առաջարկներ, բայց ինչպես իրավացիորեն նկատել է Մալխասյանցը, հատվածը միջանկյալ է և բացակայել է Անանունի սկզբնական բնագրում: Այս մասին տե՛ս նաև մեր աշխատությունը («Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը», էջ 115—119) և մեր հոդվածը («Մասիսի անվանադրության ավանդություններն ըստ Մովսես Նորենացու և Անանունի», «էջմիածին», 1971, ժԲ, էջ 25—30):

39. «Փառոխոս կոչն գտեղի բնակութեանն և Փառականն դաշտ ուսոց և արշաւանաց հոցիւն»: Այս արտահայտության արձագանքները գտնում ենք նաև Ազաթանգեղոսի «Պատմության» հետևյալ բառերի մեջ՝ «ածել, կուտել զպառականն» և «ի դաշտն փառական շեմակաց» (Ազաթ., 211): Մալխասյանցը (ՍԵՊ, 168—169) վկայակոչելով Ազաթանգեղոսի հոճարեն փոփոխականրից մեկի՝ p'arakanes emakon արտահայտությունը՝ առաջարկում է Ազաթանգեղոսի «Փառական շեմակաց»-ը դարձնել «փառականն եմակաց»: Առձեռն բառարանը փառական բառը բացատրում է «լերանց ստորոտն եղած», իսկ «եմակ» բառը՝ «անարև տեղ, ձոր, ծմակ»: Սույն բացատրությունները չեն համապատասխանում ո՛չ Ազաթանգեղոսի, ո՛չ էլ Անանունի տեղեկություններին: Այս երկու պատմիչն էլ խոսում են որսադաշտի մասին, այնինչ՝ Առձեռն բառարանը և Մալխասյանցը մատնանշում են ձոր և ծմակ տեղեր: Մեր կարծիքով՝ բառն ավելի էհիշտ է բացատրված միջնադարյան «Բառք քերթողականք» խորագիրը կրող բառարանում, որը

պահպանվել է մեր Մատենադարանի շուրջ ութսուն ձեռագրերում: Այստեղ կարողում ենք «պառական = թակարգպատ»: Հիրավի, հիշյալ պատմիչների հիշատակած որսադաշտը կարող էր թակարգպատ լինել: (Եթե սա ճիշտ է՝ ուրեմն պետք է ենթադրել, որ «Բառք քերթողականք»-ի սկզբնական բնագրում «պառական»-ի փոխարեն եղել է «փառական», կամ էլ՝ բարդ դործածվել է նաև «պառական» ձևով):

40. «Քանզի քազաուրեաց Սեղեկիոս Նիկանովր»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «Նիանովր»: Մալխասյանցը ծանոթության մեջ «Նիանովր»-ի մասին գրել է «ուղղելի Նիկանովր»: Նույն առաջարկն արել են նաև Ակիրյանը, Մատիկյանը, Զամինյանը (Թղթ. 232ա, վավ. 101, էջ 48) և ուրիշներ, իսկ Ք. Պատկանյանը ուռերեն թարգմանության մեջ սրբագրել է Никатор կամ Никанор: Որ իրականում եղել է Նիկանովր՝ դա երևում է Սիմեոն Ապարանեցու («Քանաստեղծություններ»): Աշխատասիրությունը Կ. Սուբիասյանի, Երևան, 1976, էջ 91) հետևյալ տողերից.

Թէպէտ սուղ ինչ ի լուծ մըտեալ,  
Սեղեկիայ հընազանդեալ,  
Այլ փութապէս ըզնա հերքեալ,  
Եւ ինքնագլուխ ազատացեալ...  
ԶՔէտաւացիւրն գումարեալ,  
Ընդ Նիկանովր խազմ արարեալ...

41. «Նիկանովր ի Բաբելոն ամս ԼԲ»: Զեռագրերում և նախկին հրատարակություններում մեր ուղղած «ԼԲ»-ի փոխարեն գրված է «ԼԸ»: Դա սխալ է, որն ապացուցվում է թվաբանական հաշվումներով: Այսպես. բնագրում կարողում ենք. «Եւ եղև յետ մահուանն Աղեքսանդրու կայսեր Մակեդոնացուց ծառայեցին Պարթևք Մակեդոնացուց ամս ԿԱ (= 61)»: Ալեքսանդր Մակեդոնացուց հետո պարթևները մակեդոնացիներին ծառայել են 61 տարի: Այս թվանշանը գրելուց հետո հեղինակն սկսում է թվել այն մակեդոնացի թագավորներին, որոնց տարիների գումարը պետք է տար 61. «Քանզի թագաւորեաց Սեղեկիոս Նիկանովր ի Բաբելոն ամս ԼԸ (= 38), Անտիոքոս Սոտեր՝ ամս ԺԹ (= 19), Անտիոքոս Թէոս՝ ամս (= 10)»: Եթե այստեղ նշված թվանշանները՝ (38 + 19 + 10) գումարենք, կստանանք ոչ թե 61, այլ՝ 67, այսինքն՝ վեց տարվա հավելում: Հենց այս վեց տարին էլ արդյունք է գրչական աղճատման, որի վերացմամբ ստացվում է մեր առաջարկած թվանշանը՝ «Սեղեկիոս Նիկանովր ամս ԼԲ» (երկաթագիր Ը-ի և Բ-ի շփոթը սովորական է ձեռագրերում):

Ստ. Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 7) առաջարկել է ԼԸ-ի փոխարեն ԼԱ, այսինքն մի թիվ, որի գումարը մյուսների հետ կտար ոչ թե 61, ինչպես որ նշված է բնագրում, այլ 60: Դր. Խալաթյանցը («Արմ. эпос», часть II, էջ 12) գտնում է, որ Սեղեկիոսի մասին տեղեկությունը քաղված է Եվսեբիոս Կեսարացուց, որը նշում է «ԼԲ» թվանշանը, ուստի և «Սեբեոսի Պատմությունում» էլ է եղել «ԼԲ»:

42. «Արշակ Մեծ, որդի արգալին Թէտալացուց»: Զամինյանը (Թղթ. 232ա, վավ. 101, էջ 48) «Թէտալացուց»-ի փոխարեն առաջարկում է «Հեփթաղացուց», որը հիմնավորված չէ:

43. «Ի Բանլ Եանաստանի յերկիրն Քուշանաց»: Զամինյանը (Թղթ. 232ա, վավ. 101, էջ 48) «յերկիրն»-ը ուղղում է «յերկրին», որը հիմնավորված չէ:

44. «Գնաց յԱսիաստան»: Անանունը Ասիաստան ասելով նկատի ունի Փոքր Ասիան կամ, ինչպես Ք. Պատկանյանն է ճշգրտում՝ «Փոքր Ասիայի արևելյան նահանգները» (Սարգ., էջ 175, ծ. 24):

45. «Թագաւորեն Մակեդոնացիքն յԱսիաստան ի ժամանակս ինչ»: Զամինյանը (Զամ., էջ 12) առաջարկում է «յԱսիաստանի» (փխ. «յԱսիաստան»), որը հիմնավորված չէ:

46. «Ու րաւ Անտիոքայ»: Մատիկյանը («Անանունը կամ Կեղծ Սեբեոս», էջ 84) մեր ընդգծած բառերը համարում է ավելորդ:

47. «Միևն ցրեան մեծ Կապկոհ»: «Կապկոհ»-ը Կովկասյան լեռնաշղթայի անունն է: Այս տեղանվան ստուգաբանության մասին տե՛ս Մ., Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, SPb., 1849, էջ 54:

48. «Ազգ լինի սորին»: Զամինյանը (Թղթ. 232ա, վավ. 101, էջ 48) դարձնում է «սորա» (փխ. «սորին»), որը հիմնավորված չէ:

49. «Երեմուսան բիրովք»: Զամինյանը (Զամ., էջ 13) մատնանշում է, որ Մովսես Խորենացու գրքում «Երեմուսան»-ի փոխարեն «Երկոտասան» է:

50. «Ձոր ունէր, ասէ: Զամինյանը (Զամ., էջ 13) «ասէ» բառի դիմաց գրել է «Ժամանակագիրն», որով ուզում է ասել, որ Անանունը «ասէ» գրելով նկատի է ունեցել իր օգտագործած աղբյուրը՝ Ժամանակագիրը:

51. «Ի դրանն իրում քազատուրեանն»: Բոլոր ձեռագրերն ունեն «Բարում Թագաւորին»: Զամինյանը (Զամ., էջ 13) ուղղում է «Թագաւորութեանն» (փխ. «Թագաւորին»): Ստ. Մալխասյանցը նույնպէս ուղղել է բնագիրը, գրելով. «Այսպէս ուղղեցինք ըստ Նվաքիոսի» (ՍնՊ, էջ 9): Մենք բնագիրը սրբագրել ենք ճետեկելով նախորդ բանասերներին:

52. «Յայնմ ժամանակի քազատուրեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծրին քաղաքի»: 2. Մանանդյանը («Քննական տեսութիւն Հայ ժողովրդի պատմութիւն», հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 16—17) և Ա. Զամինյանը (Յղթ. 232, վալ. 101, էջ 133) առաջարկում են ուղղել «ի Մծուրն քաղաքի»:

Նշված նախադասութիւն մեջ Մծրին տեղանվան կասկածելի լինելը երևում է հաջորդ պարբերութիւնից, որտեղ կարդում ենք. «Եւ յուղարկէ (Արշակը—Գ. Ա.) զնա (Արշակ փոքրին—Գ. Ա.) ի Մծանայ\* ընդ յարեմոտս զարու մեծաւ ելթնաստուն հազարաց սպառազինաց»: Ինչպէս տեսնում ենք, Արշակը Փոքր Արշակին դեպի արեմուտք է ուղարկում ոչ թե Մծրինից, այլ՝ «ի Մծանայ»: Սա, մեր կարծիքով, աղավաղված է «ի Մծուրնայ» ձևից: Եթե այդպէս է՝ Արշակը հենց Մծուրնում էլ թագավոր էր կարգել իր որդուն: Առաջին պարբերութիւնում «Մծուրն»-ը աղավաղվելով դարձել է Մծրին:

Մծուրն քաղաքը հիմնել են հայ առաջին Արշակունիները մեր թվագրութիւն առաջին դարում կամ երկրորդ դարի սկզբին (J. Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran:— „Philologus“, SB X, H. I, էջ 237. Boissevain, Ein verschobenes Fragment des Cassius Dio:— „Hermes“, Bd. 25, 1890, էջ 229—339. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, էջ 113):

Քաղաքն իր աշխարհագրական նպաստավոր դիրքով հանդիսացել է Հայաստանի ամենանշանավոր քաղաքներից մեկը: Փափսոտու Բուզանդի զբոսւմ պահպանված հին ժողովրդական ավանդութիւնը սույն քաղաքի անունը մեզ հասցրել է որպէս Հայաստանի մայրաքաղաքի անուն և շատ ավելի հավանական է, որ Հայաստանի կազմում երբեք չգտնված ասորական Մծրինի փոխարեն Հայաստանի մայրաքաղաքը երբևէ եղած լինի իսկապէս Մծուրնը: Այս քաղաքը IV—V դարերի սահմանագլխին իր գոյութիւնը դադարեցնելով և մեր պատմիչների օրոք այլևս հայ կյանքում որևէ դեր չխաղալով, աստիճանաբար մոռացվել է և նրա անունը, մանավանդ հետագա գրիչների կողմից, ենթարկվել է աղավաղումների: Դա է պատճառը, որ անունը հանդիպում է տարբեր ուղղագրութիւնամբ՝ «Մրծանայ», «Մրծուին», «Մըծուին», իսկ Միմեն Ապարանեցու մոտ («Քննաստեղծութիւններ»: Աշխատասիրութիւնամբ Կ. Սուքիասյանի, էջ 93) «Մըծրանայ»: Տարբերակները շատութիւնը նպաստել է անշուշտ նաև «Մծուրն» և «Մծրին» անունների նմանութիւնը:

2. Մանանդյանը գրում է. «Մովսէս Խորենացին շիմանալով Հայաստանում գոյութիւն ունեցած Մծուրն քաղաքի մասին, Սանատրուկին է վերագրում Մծրին-նիսիբին քաղաքի կառուցումը» („О торговле и городах Армении“, էջ 112—113):

«Սերեոսի Պատմութիւն» մեզ հասած ձեռագրերում Մծուրն անունը գրված է Մըծուրն ձևով:

Գրութիւն այս ձևը մեզ օգնում է պատկերացնելու, թե ինչ եղանակով է բարը հետագայում աղավաղվել և դարձել Մըծուին: Անվան երկրորդ տառը՝ ը-ն ընգորինակվել է որպէս ր, իսկ նախավերջին ր-ն շփոթվել է ի-ի հետ: Երբ շփազանց նման և ձեռագրերում հաճախ միմյանց փոխարինող այս ր, ր, ի տառերի շփոթից է, ահա, առաջացել սխալը, որին, անշուշտ նպաստել է նաև այն հանգամանքը, որ ընգորինակողներին ավելի հայտնի է եղել Մծուին (=Մծրին) քաղաքի անունը, որի հետ և սխալմամբ նույնացվել է Մըծուրնը:

Հին ձեռագրերում Մըծուրն-ը պետք է գրվեր հայալատմամբ, երբ ձայնավորները սղվում էին. այսպէս՝ ՄՐՐն: Բավական է, որ այստեղ Բ-ն շփոթվեր իրեն շատ նման Բ տառի հետ՝ ընգորինակող գրիչներն իրենց առջև կունենային ՄՐՐն ձևը, որը՝ այլ կերպ չէր կարող վերծանվել, քան՝ Մծրին: Այս հանգամանքը նույնպէս դեր է կատարել Մծուրնի և Մծրինի շփոթման գործում:

\* Մարկվարտն առաջարկում է կարդալ. «ի Մծրնայ»: Ի դեպ՝ Անանունի «Մծուրն»-ը «Մծուին»-ի հետ նույնացրել է հայ գիտնականներից առաջին անգամ 2. Գաթրըճյանը («Սերեոս եպո. պատմագիր», «Եւրոպա» շաբաթական լուրեր, Վիեննա, 1852, № 21, էջ 102 և այլուր): Աղավաղված «Մրծանայ» ձևը կարող էր ծագել նաև «Մըծունայ» («Մծուինայ») ձևից:

Ինչպես տեսանք, Հ. Մանանդյանը արդեն նշել է, որ Մովսես Խորենացու ձեռքին եղած ձեռագրում նույնպես եղել է «Մծուրն», որը Խորենացին ընդունել է Մծբինի տեղ: Այս միևնույն պատճառով էլ, մեր կարծիքով, Պատմաճայրը Մարաբա Մծուրնացուն (=Մծրնացի) ընկալել է որպես Մար (ասորերեն՝ «Տեր») Աբաս Մծրնացի և այդտեղից էլ նրան համարել է ասորի (Գիրք առաջին, գլ. Ը «գտնալ զոմն ասորի Մար Աբաս Կատինայ»): Այսպիսի մի սխալի հետևանք է հավանաբար. նաև այն, որ Խորենացին ոչ թե Մծուրն, այլ Մծբին է հասկացել այդ քաղաքը, որը երկրաշարժից հետո քանդվել է և կրկին շինվել Սանատրուկի կողմից (համտ. Ն. Ալիեյան, Սերիոս..., «Հ. ամս.», 1923, էջ 407):

Նախնական բնագրում եղած Մծուրնի օգտին է խոսում նաև Մարաբա Մծուրնացու բերանից հաղորդվող ամբողջ ավանդությունը հայոց նախնիների մասին: Նիկ. Աղոնցը («Начальная история», էջ 96) արդեն նշել է, որ այդ ավանդությունն «իր ներքին բովանդակության տվյալներով, հակված է ավելի դեպի Հյուսիսային Հայաստան... Ավանդությունում շոշափվող անվանարկումը վերաբերում է Հյուսիսային Հայաստանին: Նույնիսկ Շամիրամին գտնում ենք Այրարատում: Ում-ում, բայց նրան կարելի է թողնել հարավում, ուր մինչև այսօր ժայռերի վրա պահպանվել է նրա հիշատակը... (Արշակունիների) նախամայրը բնակվում է Ազատ լեռան ստորոտին: Պատմականորեն գիտենք, որ նրանք կապված են Հյուսիսային Հայաստանի հետ, որտեղ և բնակվել էին»: Ինչպես տեսնում ենք, ժողովրդական ավանդությունը հայոց օրրանը համարել է Հյուսիսային Հայաստանը: Ուրեմն, շատ բնական է, որ այդ նույն ավանդությունը Հայաստանի մայրաքաղաք է նշել Մծուրնը և ոչ Մծբինը՝ հարավում գտնված մի ասորական քաղաք:

Մծուրնի փոխարեն աղավաղված Մծբին քաղաքի անունը, այսպիսով, չի համապատասխանում նաև ավանդության ոգուն: Նիկ. Աղոնցը շկասկածելով Մծբին անվան ուղղագրության վրա, բայց և միաժամանակ նշելով ավանդության «Հյուսիս-հայաստանյան հակումը», Մծբինը դիտում է որպես ավանդությանը հակասող արտահայտություն («Այս բոլորով հանդերձ,— գրում է նա,— ճիշտ է, սակայն, նաև այն, որ Արշակը և Վաղարշակը ըստ «Նախնական պատմության» թագավորանիստ քաղաք են ընտրում Մծբինը՝ մի բացարձակ ասորական քաղաք, որը երբեք չի գտնվել Արշակունիների տիրապետության տակ»): Մեր առաջարկած սրբագրությունից հետո վերանում է նաև Աղոնցի նշած այս միակ հակասությունը:

Հարց է ծագում. եթե մենք պնդում ենք, որ Մարաբայի բերանից պատմվող ավանդությունը սկզբնապես գտնվել է Բուզանդարանի մեզ չհասած մասում, ապա ինչպես բացատրել այն փաստը, որ «կորած Բուզանդարանից» Անանունի քաղած տեղեկության համաձայն՝ Արշակունիների թագավորության հիմնադրման ժամանակ արդեն գոյություն ունեւր «Մծուրնը (որտեղ թագավոր կարգվեց Արշակ Փոքրը), իսկ ըստ Փավստոս Բուզանդի մեզ հասած մասի (դպր. Կ, գլ. 14) Մծուրնը շինել է Արշակից հետո թագավորած մի թագավոր՝ Սանատրուկը, «ի հնոցն հմն շինած քաղաք՝ զոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղոյն Մծուրք կոչի»:

Բանն այն է, որ «շինել» բառը հայ մատենագրության մեջ՝ օգտագործվել է նաև «վերաշինել» «վերանորոգել» իմաստով: Նուր Հայկազյան բառարանը (էջ 478) այս բառի նշանակություններից մեկն էլ համարում է հենց վերանորոգելը. «շին և կանգուն պահել նորոգութեամբ գիրս... բարեկարգել, բարեզարդել»:

Այս նշանակությամբ «շինել» բառը հանդիպում է հայկական բազմաթիվ վիմագիր արձանագրություններում և մատենագրական հուշարձաններում:

Այսպիսի մի նշանակություն է ունեցել նաև «շինել» բառը Փավստոս Բուզանդի հաղորդած մեջ. Սանատրուկը վերաշինել և ոչ թե հիմնել է Մծուրնը: Այս իրողության մասին կողմնակիորեն իմանում ենք նաև Մովսես Խորենացուց. «Այլ որ ինչ զործք եղեալ Սանատրուկոյ՝ ոչ ինչ լիշատակ արժանի համարեցաք բայց և շինուածոյ Մծբին (=Մծուրն) քաղաքի: Զի ի շարժմանէ խախտալ՝ քակեաց և վերստին շինեաց պայծառագոյն և պարսպեաց կրկին պարսպով և պատուարաւ» («Պատմութիւն հայոց», աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, գիրք 2, Տփղիս, 1913, գլ. ԼԶ, էջ 160):

Հ. Գաբրիել Նահապետյանը իրավացիորեն գտնում է, որ Բուզանդի սկզբնական բնագրում գրված է եղել հենց «վերստին շինեալ», հետագայում «վերստին» բառը ընկել է, որի հետևանքով այժմ «անիմաստ կմնան Բուզանդի շարած բառերը» («Ուղղագրութիւնը ազգային մատենագրաց», Վենետիկ, 1907, էջ 93):

53. «Նւ զատուցանէ նմա սանմանս զԱրուստան»: Արվաստանը Արտաշեսյանների թագավորության շրջանում Հայկական պետության վարչական կազմի մեջ մտնող արտաքին երկրներից

էր, որը հետագայում անցավ Ասորիբին: Վարզան Արևելցին նույնացնում է Ասորեստանի հետ: Այսպես է նաև Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացոյցում»: Արվաստանի անունը հանդիպում է նաև Արևաստան ձևով, որը «նշանակում է Արևի երկիր» (Патк., էջ 176, ծ. 30):

54. «Զկապուտկեայ առ Կիրիկեայ»: Այս անվան մասին տե՛մ Մատիկյանի (էջ 86) ցուցումը և «Մասիս», 1853, № 11(60), № 12(61) (Մ. Այվատյանցի հորվածը. «Զեռագիրներու խոզարկութեան առաջարկութիւն մը...»):

55. «Եւ հասանէ ի լեռն Զարասպ»: Զարասպը հավանաբար Զագրոշի կամ Զագրոսի լեռնաշղթան է: Անանունն այս լեռը նշում է որպես Հայոց առաջին Արշակունիների տիրապետութեան սահմանաչիւն լեռ, երկրի հարավում: Խորենացին նույնպես Զարասպը հիշատակում է որպես Հայոց նահապետների (Արամ) կողմից գրավված լեռ: «Խորենացու այս տեղեկութեամբ նույնպես հաստատվում է, որ Զարասպ-Զագրոսը հանդիսացել է սահման Հայաստանի և Պարսկաստանի միջև» (Малл., էջ 139, ծ. 22):

56. «Եւ անցանէ առ նոր Շիրակ երկրան»: «Նոր Շիրակը» Տիրզան Բ-ի օրոք Հայաստանի միացված հարավային նահանգներից էր, որը պարբերաբար ձեռքից-ձեռք է անցել, մերթ գրավվելով՝ թշնամիների կողմից, մերթ անցնելով Հայաստանին: Հայտնի են նաև Նորշիրական և Նորշիրական անվանաձևերը:

57. «Նախարարաց հագարաց բիրատուրաց»: Զամինյանը (էջ 14) «հագարաց» բառի դիմաց գրում է. «Ուղղել ըստ Փաւստոսյ՝ հագարատուրաց»:

58. «Զարդարէ զնա ի սնդր և ի վակաս»: Մալխասյանցը գրում է. «Սնդր բառը բանասերներից և ոչ մեկը չի հասկացել. նա չկա ոչ մի բառարանում: Պատկանյանը թարգմանություն մեջ պահում է հայերեն «սնդր» բառը և ծանոթություն մեջ գրում է, թե այս բառը պետք է նշանակելիս լինի որևէ արքայական զարդ, բայց հայտնի չէ ինչպիսի: Հիշում է հունարենից փոխ առնված սնդրն բառը, որ նշանակում է ազնիվ կտորից պատմուճան: Առաջին անգամ Արմատական բառարանի հեղինակը բերում է այդ բառը և համարում է «անստույգ և իհարկե խանգարված բառ»: Բերում է այնուհետև Մառի կարծիքը ЗВО 14, 88, որտեղ այս բառը հանում է ասորերեն xnurta բառից, որ նշանակում է «ուղարկենք», «որ իմաստով անհարմար է տեղին»: Բերում է հետո Քոփչյանի բացատրությունը, ըստ որում սնդր (sender) պարսկերեն բառ է և նշանակում է «խեժի նման մի սաթ», որ, ավելացնենք մեր կողմից, նույնպես անհարմար է: Սակայն Մարը մի ուրիշ տեղ («Арабское извлечение из Истории Сирийской Хроники Марибаса», СПб., 1902, եր. 88, ծանոթ.) տալիս է այս բառի ուղիղ բացատրությունը (որ անհայտ է մնացել Արմատ. բառարանին): «Սնդր բառը,—ասում է նա,—փոխադրություն է ասորական snourta բառի, որ նշանակում է սաղավարտ, որի մեջ դուրս է ձգած իրական վերջավորությունը, «ու» հնչյունն ըստ օրենքի սղված է, «ը» և «ր» հնչյունն ըստ ավորություն ուժեղացած է՝ փոխվելով nd՝ r-ի առաջ: Նույն տեղում իրավացի է նկատում Մարը, թե այս ասորական բառի զործածությունը (որի նշանակությունը, մենք կարծում ենք, Սեբեոսը չի հասկացել) ցույց է՝ տալիս ասորական ազդեցությունը Անանունի վրա» (ՍեՊ, էջ 169):

Ա. Մատիկյանը («Անանունը կամ Կեղծ Սեբեոս», էջ 87) հայտնում է, թե «սնդր» բառի իմաստն իրեն անծանոթ է: Իսկ Ա. Զամինյանը (Զամ., էջ 14) բացատրում է. «սնդր=սանդր, գլխի զարդ, պատիվ, վարսակապ»:

59. «Զաւրածողով եղեն ի վերայ նորա ի Միշագեսա Ասորւոց»: Զամինյանը (Զամ., 14 և թղթ. 232ա, վավ. 101, էջ 49) առաջարկում է մեր բերած բառերից հետո զետեղել Մամիկոնյանների հատվածը: «Զհաստուածն զՄամիկոնէից ազգաց,—գրում է Զամինյանը (թղթ. 232ա, վավ. 101, էջ 49),—այսր ըստ իս պարտ է փոխաբերել: Մծուրնացին ցուցանելով զուստն Բագրատունեաց, որք նշանաորք էին ի նախարարս, այժմ ցուցանէ զծագունն սպարապետութեան, յորում էր զօրութիւն ուժոյ հայ թագաւորութեան»:

Այնուհետև նա սրբագրում է Մամիկոնյանների հատվածը, այսպես. «զնոյն ձև օրինադրէն (և) զՄամիկոնէիցն ազգաց, սակս (կրելոյ նոցա) զնեղութիւնն... Որպէս լուալ (ևս Մծուրնացիս) յառնէն, ցոր իմ (Մծուրնացուս) հարցեալ ի դրանն»:

60. «Եւ այս են իշխանէ Պարսեաց, որք քաղաւորեցին զկնի Արշակայ հար իւրեանց ի Քանլ Շահաստան յերկիրն Քուշանաց»: Այս խոսքերից սկսած մինչև Պարթևաց և Հայոց թագավորների ցանկի նախավերջին տողերը, մինչև «Ապա քաջն հոսրով որդի Վաղարշու ամս հը» (ՍեՊ, էջ 11, տող 7—8) Զամինյանը համարում է Ազաթանգեղոսի արձանագրության հիման վրա շարագրված մաս. «Յետ այսր պատմութեան Մամիկոնեանց,—գրում է նա,—Մծուրնացի—յորմէ և Փաւստոս առեալ յարձանագրութեանէ Ազաթանգեղայ շարէ զկարգ թագաւորաց՝ պարթեւաց և հայոց յունարէն դպրութեամբ, զորմէ ասաց յառաջագոյն «փոքր մի և ապա յիրում

տեղուզն տեսցես զպատճենն... Այս է զոր առնու Մծուրնացի յարձանագրութենէ Ազաթան-գեղայ: Բայց ոչ ճշգրտորէն, այլ իւրոյ կողմանէ և խառնեալ ի կարգս հայ թագաւորաց զանուանս որպէս զԱբգար և զայս որք չէին բնիկ թագաւորք հայոց» (Թղթ., 232ա, վավ. 101, էջ 50—51):

61. «ԶԵՐԿՐՈՐՈՂ Ի ՎԵՐԱՅ ԿԻՐԻԿԵՅՈՍ»։ Հայտնվում է, որ Պարթևաց Արշակ արքան իր երկ- յորդ որդուն թագավորեցնում է Կիրիկիացիների վրա։ Ք. Պատկանյանը (ՊԱՏԿ., էջ 177, ծ. 34) գտնում է, որ «Կիրիկեցոց» բառը վրիպակ է և նրա փոխարեն պետք է լինի «Լիրիկեցոց», ինչպես որ ունի Վարդան Արևելցին։

62. «Եւ այս են քաղաւոբ Արշակունիք»։ Զամինյանը (Զամ., էջ 15) մեր ընդգծած բառերի կապակցութեամբ ծանոթագրում է. «Այս է արձանագրութիւն գրեալ ի ձեռն Ազաթանգեղոսի ի Մծբին քաղաքի, զորմէ ասաց վերագոյն»։ Ստ. Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 170) նույնպես գրում է. «ՍԵՐԵՆՈՐ ԽՈՍՏԱՅԵԼ ԷՐ Ազաթանգեղոյան արձանագրութեան պատճենը բերել քիչ հետո՝ յուր տեղումը։ Այդ տեղը՝ այս տեղն է, Պարթևաց թագավորների ցանկից հետո։ Այստեղ գետեղվում է Պարթևների տոհմի երկրորդ ճյուղի, այսինքն Արշակունի առաջին հայ թագավորների ցանկը, որ արձանի վրա գրած է եղել Ազաթանգեղոսը «Տրամանաւ քաջին Տրդատայ»։ Բայց Ազաթան- գեղոսի ցանկը կարող էր պարունակել Հայոց առաջին թագավորների անունները մինչև «Քաջն Խոսրով», առ առավելն մինչև «ՄԵԺ Տրդատես»։ Նշանակում է հաշորդ անունները նորամուծ չհավելված են» (ՍԵՊ, էջ 170):

Այսպիսի ենթադրություն անելով, այսինքն ընդունելով, որ «Եւ այս են թագաւորք Արշա- կունիք» բառերով սկսվում է Ազաթանգեղոսի արձանագրութեանը, Մալխասյանցը փաստորեն հակասում է «Տինգ թագաւորացն» արտահայտութեան վերաբերյալ իր տեսակետին, որովհետեւ նրա կողմից Ազաթանգեղոսյան սւտճենը համարվող հատվածում թվարկվում են ոչ թե Տինգ, այլ՝ անվազն 15 հայ թագավորներ (ուրեմն՝ «Տինգ» բառն այս ցանկին չի համապատաս- խանում):

63. «Որք քաղաւոբեցին Հայաստան Երկրի զԿնի Արշակայ Մեծի»։ Զամինյանը (Զամ., էջ 15) «Արշակայ Մեծի»-ն սրբագրում է «Արշակայ Փոքու», որը հիմնավորված չէ։

64. «Արդ քաղաւոբէ Արշակն Փոքր կոչեցեալ»։ Այս խոսքերից սկսած մինչև Մամի- կոնյանների ծագման մասին գրույցին նախորդող «և յետ նորա պայազատք նորին» արտա- հայտութիւնը ներառյալ՝ Ակինյանը համարում է ուրիշ գրչից հավելված։

65. «Ի Մծուիմ քաղաքի»։ Զամինյանը (Զամ., էջ 15) «Մծուիմ» անվան դիմաց ծանո- թագրում է «ոչ Մծբին», որից երևում է, որ նա «Ի Մծուիմ»-ը վերծանում է «Ի Մծուրն»։ Իսկ Վիեննայի ձեռագիրը (տե՛ս ՍԵՊ, էջ 10) ընդօրինակողը վերծանել է «Ի Մծբին»։

66. Անանունի հատվածում գտնվող ժամանակագրական ցանկերի կապակցութեամբ մանրա- մասն տեղեկութուններ կարելի է գտնել Ն. Առնոնի («Начальная история Армении») Ծ. Մահլեբի («Pseudo-Sebeos»:—Journal asiatique, 1905, Juil.,—Août.), Գ. Մարգսյանի («Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» ժամանակագրական համակարգը», Երևան, 1965), Բ. Մակ-Դերմոսի («The Convergence of Armenia in 294 A. D.», REA, NS, T. VII, 1970) և այլոց աշխատութիւններում, ինչպես նաև «ՍԵՐԵՆՈՒ Պատմութեան» հրատարակութիւնների և թարգմանութիւնների համապատասխան ծանոթագրութիւններում։ Մենք անդրադարձել ենք ցու- ցակներում գտնվող միայն այնպիսի ժամանակագրական տվյալների, որոնց սրբագրութիւնը մեզ պնդեցալի է թվացել կամ որոնց լուսաբանութիւնը անհրաժեշտ ենք համարել։

Այդպիսիներից է նաև հայ Արշակունիների ժամանակագրական աղյուսակն սկսող հետևյալ հատվածը. «Եւ այս են թագաւորք Արշակունիք, որք թագաւորեցին Հայաստան երկրի զԿնի Ար- շակայ Մեծի։ Արք՝ թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ՝ յամի հարիւրորդի քսան և իններորդի թագաւորութեանն Արշակայ հար իւրոյ ի վերայ Հայաստան երկրի ի Մծուիմ քաղաքի, եղբարք իւրով Վաղարշակաւ, զոր թագաւորեցոց Հայաստան աշխարհիս ամս ԽԲ»։

Ըստ այս տեղեկութեան, հայոց առաջին Արշակունի թագավորը եղել է Արշակ մեծի որդին՝ Արշակ Փոքրը և ապա՝ սրա եղբայր Վաղարշակը, այնինչ՝ ըստ Խորենացու հայ անդրանիկ Արշակունին Արշակ մեծի եղբայրն է՝ Վաղարշակը։ Այս հակասութիւնը տարբեր մասնագետ- ներ բացատրել են տարբեր ձևով. (Հմմտ. ՊԱՏԿ., էջ 175, ծ. 26 և անդ, էջ 176, ծ. 29, նաև՝ ՄԱՅԿ., էջ 139, ծ. 21):

Մեր կարծիքով, հակասութեան բացատրման բանալին պետք է որոնել Ստ. Մալխասյանցի հետևյալ ենթադրութեան մեջ. «Ընդգծված արտահայտութիւնը («եղբարք իւրով Վաղարշակաւ, զոր թագաւորեցոց Հայաստան աշխարհիս»—Գ. Ա.) կհամապատասխանի Խորենացու պատ- մածին, եթէ ընդունենք, որ «թագաւորեցոց» ստորգրչալի ենթական Արշակ մեծն է» (անդ)։ Հիրավի, բացառված չէ այն հնարավորութիւնը, որ Անանունը «թագաւորեցոց» բառով հայտ-

նած լինի, թե Վաղարշակին Հայաստանի վրա թագավորեցրել է Արշակ Մեծը: Այս դեպքում «եղբարբ իրով» արտահայտության «իրով» բառը կվերաբերի Արշակ Մեծին և Վաղարշակի անունը կընկալվի որպես Արշակ Մեծի եղբոր անուն: Խորհնացին էլ հենց այն է ասել, որ Արշակ Մեծը Հայաստանի վրա թագավորեցրեց իր եղբայր Վաղարշակին:

Բայց բանի որ Անանունի նախադասությունն այնպես է կառուցված, որ «թագաւորեցոյց» և «եղբարբ իրով» արտահայտություններն ընկալվում են ավելի շուտ որպես Արշակ Փոքրին վերաբերող արտահայտություններ՝ ստացվում է այնպես, թե Արշակ Փոքրն է թագավորեցրել Վաղարշակին և թե՛ Վաղարշակը Արշակ Փոքրի (և ոչ Արշակ մեծի) եղբայրն է: Այսպիսով, իսկապես ստեղծվում է հակասություն Անանունի և Խորհնացու միջև: Սակայն, ինչպես ասվեց, այս հակասությունը կարող է վերանայլ, եթե Անանունին վերծանենք, «թագաւորեցոյց» բառը հատկացնելով Արշակ մեծին: Իսկ այսպիսի վերծանման հնարավորություն կա, որովհետև ավելի սպասելի է, որ Վաղարշակին թագավորեցնեն, այսինքն՝ թագավոր դարձնեն Արշակունիների ազգը (Արշակ մեծը) և ոչ՝ կրտսերը (Արշակ Փոքրը): Անանունը այլուր նույնպես թագավորեցնողի դերում հանդես է բերում Արշակ մեծին. «Յայնմ ժամանակի քաղաքեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց» (էջ 9, տ. 16—17), «բառաչինն (առաջին որդուն—Գ. Ա.) ասեն թագաւորեցոյց (Արշակ մեծը—Գ. Ա.) Թետալացոց աշխարհին. զերկորդն ի վերայ Կիլիկեցոց. զերրորդն ի վերայ Պարթևաց. զչորրորդն ի Հայաստան աշխարհին» (էջ 10, տ. 8—11): Ամենուրեք Արշակ մեծն է թագավոր դարձնողը: Այդպես էլ կարելի է «թագաւորեցոյց» բառը վերագրել Արշակ մեծին նաև մեզ հետաքրքրող հատվածում: Այս դեպքում հատվածը կթարգմանվի այսպես. «Արդ՝ Հայաստան երկրի վրայ, Մրծովն քաղաքում թագավորում է Փոքր կոչված Արշակը՝ իր հայր Արշակի թագավորության 129-րդ տարին, իր (այսինքն՝ Արշակ Փոքրի հայր Արշակի— Գ. Ա.) եղբայր Վաղարշակի հետ, որին թագավորեցրեց (Արշակ մեծը—Գ. Ա.) Հայաստան աշխարհին՝ 42 տարի»: Այսպիսի վերծանությունն անշուշտ պայմանական է, որովհետև խախտվում է նախադասության քերականական հիմքը, սակայն Անանունը ուրիշ դեպքերում նույնպես թույլ է տալիս քերականական շեղումներ:

67. «Ապա Մեծն Տրդատէս որդի Խոսրովայ ամս ՄՁ»: Այս տողի դիմաց Զամինյանը (Զամ., էջ 16) լուսանցքում գրում է. «մինչև ցայս վայր»: Մրանից պետք է հասկանալ, որ սերեռագետը Անանունին է համարում մինչև մեր ընդգծած բառերը ներառյալ: Նրանից հետո համարում է ներմուծում, որովհետև նա ընդունում է, որ դա Ագաթանգեղոսի արձանագրությունն է (իսկ այդ արձանագրությունն մեջ չէին կարող հիշատակված լինել հաջորդ տողերում հիշատակված թագավորները, որոնք ապրել են Ագաթանգեղոսից հետո):

68. «Խոսրով՝ որդի Տրդատայ՝ ամս Թ»: Զամինյանը (Զամ., էջ 16) առաջարկում է Թ-ի փոխարեն Ժէ, հավանաբար նկատի ունենալով Ե գլխի հետևյալ տողը. «Վախճանի երանելին Տրդատէս, և թագաւորէ Խոսրով որդի նորա ամս Ժէ»:

69. Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն «Արշակ որդի Տիրանայ՝ ամս է»: Ուղղել ենք «ամս Լ»: Թյուրիմացությունն պատճառը սկզբնապես բնագրում եղած Լ-ի (=30) որպես է (=7) ընկալվելն է, որին հավանաբար նպաստել է նաև այն, որ Արշակից մեկ անուն հետո հաջորդող Պապի իշխած տարիները է (=7) են: Այս է-ն կարող էր ընդօրինակող գրիչը նկատել Լ-ի փոխարեն:

Աղճատված թվանշանը կարող է ծագել նաև Ասողիկի աղղեցությունք («Տիեզերական պատմություն», Փարիզ, 1859, էջ 70. «Եւ ետ Տիրանայ թագաւորեաց Արշակ որդի իւր ամս 7»): Իսկ Ասողիկի մեջ սխալն առաջացել է, ինչպես նկատել է Ն. Ադունցը («Нав. исторія», էջ 67), Մովսես Խորենացու՝ Արշակին տված Լ (=30) տարին է (=7) տարով շփոթելու հետևանքով:

70. Բոլոր ձեռագրերն ունեն՝ «Շապուհ աբխայ Պարսից՝ ամս 2Գ»: Ուղղել ենք «ամս ԺԹ»: Խոսքը վերաբերում է Շապուհի՝ Հայաստանում իշխած տարիներին: Շապուհը չէր կարող Հայաստանում թագավորել 73 տարի, որովհետև նրանից առաջ և հետո թագավորել են երկու հայ այնպիսի թագավորներ, որոնց միջև անհնարին է զետեղել Շապուհի թագավորության 73 տարիները: Շապուհից առաջ թագավորել է Արշակը, իսկ Շապուհից հետո՝ Արշակի որդի Պապը: Հասկանալի է, որ որդին չէր կարող զահ բարձրանալ իր հորից 73 տարի հետո: Այնպես որ «2Գ» (=73) թվանշանը բացահայտ վրիպակ է: Այդ թվանշանի փոխարեն նախնական բնագրում եղել է «ԺԹ» (=12): Դա երևում է Անանունի հետևյալ հատվածից. «Եւ տիրէ Շապուհ ի վերայ Հայոց ամս ԺԹ սրով և հրով և զերութեամբ»: Ընդօրինակող գրիչները սխալմամբ Շապուհի՝ Հայաստանում իշխած տարիների թիվը դարձրել են 2Գ: Այս սխալին հավանաբար նպաստել է այն հանգամանքը, որ Անանունի հատվածում մի երկու էջ հետո տրված է Շապուհի՝ Պարսկաստանում իշխած տարիների թիվը, որն է՝ 2Գ. «Յամին ԽԹ-երորդի Արտաշրի արքային Պարսից,

և ժԹ ամ Տրդատայ արքային Հայոց թագաւորէ Շապուհ որդի Արտաշրի ի վերայ աշխարհին Պարսից ամս 2Գ»:

71. «Արդ՝ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցաւ, Երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացոյ եւ Մտեխանոսի Տարոնացոյ՝ հասատի եւ նշմարիտ մասնագրաց»: Թ. Միհրդատ- յանը Անանունի սույն վերնագրից առաջ իր հրատարակութեան մեջ գրել է հետևյալ վերնա- գիրը. «Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի, դպրութիւն Բ»: Իսկ էջի ներքեւում ծանոթագրել է. «Երևագրին էր զլուս Գ, մեք հոգաք դպրութիւն Բ.»։ Պատկանյանը նույնպես վերնագրել է. «Դպրութիւն Բ»:

Անանունի գործը որպես «Սեբեոսի Պատմության» անբաժան մասը համարած գիտնական- ները մեր ընդգծած վերնագրում հիշատակված Տարոնացուն անջատել են Ասողիկից և համարել Սեբեոսից առաջ ապրած հեղինակ:

Վերնագիրը մեկնաբանել է նաև Զամինյանը (Զամ., էջ 17). «Ըստ օրինակի Ասողկան ղնոյն պատմութիւն երկրորդէ Սեբեոս առեալ ի Խորենացոյ»: Նույն էջում, մեկ այլ տեղ նա ենթադրում է. «Հավանական է, թէ Ստեփ. Տարոնեցի և Մովսես Խորենացի երկոքին գրեալ են զպատմութիւն Հայոց և այսպէս ծանօթ էր յէ դարու»:

Հարցը հատուկ ուսումնասիրության է ենթարկել Ստ. Մալխասյանցը: Նա 1899 թ. Թիֆլիսում առանձին գրքով հրատարակեց Մովսես Խորենացու և Սեբեոսի հարաբերություններին վերա- բերող մի ուսումնասիրություն, որի զգալի մասը նվիրված է կարծեցյալ Ստեփանոս Տարոնա- ցուն: Այնուհետև 1939 թ. նա կրկին անդրադարձավ հարցին և երկու նոր կովան բերելով՝ վճա- կանորեն հայտնեց, որ «այդ անունով մի անձ, ժամանակագրության հեղինակ, գոյություն է ունեցել» (ՍԵՊ, էջ ԽԲ—ԽԳ):

Մալխասյանցի աշխատության և առհասարակ կարծեցյալ Ստեփանոս Տարոնեցու հարցի քննությունը տե՛ս մեր ուսումնասիրությունում («Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծ- վածը», էջ 53—71, բացառելով 70-րդ էջի 24—35 տողերը, որոնցում Ստեփանոս Տարոնեցու աղբյուրը Խորենացին է):

72. «Զսա սպանեալ Ստամբուցոյն Արտաշրի, որչոյ Սասանայ, երարձ գտերութիւն Պան- լաաց»: Այս ամբողջ հատվածը գտնում ենք նաև Ուխտանեսի («Պատմութիւն Հայոց», Վաղար- շապատ, 1871, հ. 2, էջ 61) և Ասողիկի («Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 31) երկերում: Վերջիններս, սակայն, «Պահլավաց»-ի փոխարեն ունեն «Պահլավաց» («Պահ- ղավաց»): Սրանց հիման վրա կարելի էր «Սեբեոսի Պատմության» «Պահլավաց»-ը սրբագրել «Պահլավաց»: Բայց նկատի ունենալով, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը կարող էր և օգտված լինել այնպիսի մի ձեռագրից, որում «Պահլավաց»-ը արդեն դարձել էր «Պահլավաց...», բնագիրը թողնում ենք նույնությամբ:

73. «...յերկորդ ամին Փիլիպպեայ քազաւորին Հռոմայ: Ասասնոր դադարէ քազավորու- րիւնն Պարթևաց յազգէն Պահլավաց»: Այս բառերը «Սեբեոսի Պատմության» ձեռագրերում և նախորդ հրատարակություններում բացակայում են: Մենք վերականգնել ենք ըստ Ասողիկի (էջ 31) և մասամբ՝ ըստ Ուխտանեսի (հ. 2, էջ 61): Բառերի բացակայության պատճառի մասին տե՛ս մեր աշխատությունը («Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը», էջ 67—68):

74. «Զնոյն ձև օրին...»: Կիսատ մնացած այս վերջին բառին հաջորդող՝ կետերով նշված տեղում բնագիրը պակասավոր է: Ք. Պատկանյանն արդեն նկատել է, որ պակասող տեղում իրար են խառնված Ստեփանոս Ասողիկից քաղված հատվածը և Անանունը: Բայց որ այդ խառնված տեղում պակասում է մի շատ ընդարձակ հատված՝ դա առաջին անգամ նկատել է Ստ. Մալխասյանցը: Մեծանուն գիտնականը սրանով կատարել է մի շատ կարևոր հայտնա- գործություն, որը մեծ նշանակություն ունի Անանունի հատվածի նախնական ծավալը բացա- հայտելու գործում: Պակասին վերաբերող հանգամանքները և հայտնագործության բանասիրա- կան արժեքը պատկերելու համար ամբողջապես ծանոթանանք Ստ. Մալխասյանցի աշխատանքին. «Բոլոր ձեռագիրներն ունեն զնոյն ձև աւրինադրէն (ձեռագրերն իրականում ունեն «օրինադրէ» և ոչ՝ «օրինադրէն») — Գ. Ա.) Մամիկոնէիցն սակա զազգաց (կամ զգագգաց) զնեղաւրիւնն: Նույն կերպով են կատարված և տպագրությունները առանց որևէ դիտողության: Պատկանյանն այս տեղը թարգմանել է «После него (царствовали преемники его). Скажем несколько слов о роде князей Мамиконян» և գրում է ծանոթության մեջ, թե բնագրում այստեղ բոլորովին անհասկանալի է: 2. Ակիւնյան (եր. 31) տվյալ տեղն ուղղագրում և կարդում է «Զնոյն ձև օրինադրէ (Արշակ Փոքր) զՄամիկոնէիցն տան սպարապետութիւնն»: Մենք վաղուց ցույց ենք տվել (Սեբ. պատմ. և Մ. Խոր., եր. 162—163), որ այստեղ բնագիրն աղավաղված է՝ մի թուղթ



գուրս ընկած լինելով: Այս աղավաղութիւնը ցայտուն կերպով երևում է, երբ համեմատում ենք այս կտորը Ասողիկի հետ...

Սեբեոս

Յետ որոյ նուաճեալ Ստահրացոյն Արտաշէրի որդոյ Սասանայ զամենայն Արիս և զԱնարիս, և զբազումս ի նոյն ազգէ թագաւորութեան Պարթևաց և Պահլաւաց՝ թագաւորէ ինքն, և զկնի նորա պայազատք նորին զնոյն ձև արիւնադէն զՄամիկոնէիցն...

Ասողիկ (եր. 32)

Յետ որոյ նուաճեալ Ստահրացոյն Արտաշէրի որդոյն Սասանայ զամենայն Արիս և զԱնարիս և զբազումս ի նոյն ազգէ թագաւորութեան Պարթևաց և Պահլաւաց՝ թագաւորէ ինքն, և յետ նորա պայազատք նորին ձև օրինակի: (Վերջանում է զուրիւր):

Տարակույս չէ մնում, որ Սեբեոսի ձեռագրում «արիւնակի» բառի առաջին երեք վանկերը գրված են եղել թղթի երկրորդ երեսի վերջին տողի վերջում, իսկ շարունակությունը՝ «կի» փոխադրված է եղել հաջորդ թղթի սկիզբը: Սակայն այդ սկիզբը չկա մեզ հասած ձեռագրերում: Դրա փոխարեն՝ անկապ և անհասկանալի՝ «...դէն զՄամիկոնէիցն նապա զազգաց զնեղութիւնն»: Այս անկապ և անհասկանալի խոսքերը դուրս ընկած թղթին հաջորդող թղթի սկզբի բառերն են, որոնք աղավաղվել են շնորհիվ այն բանի, որ խզված է նրանց կապը նախընթաց երեսի (այսինքն՝ կորած թղթի երկրորդ երեսի վերջին տողի) հետ: Այս եզրակացությունը, որ բխում է երկու հեղինակների համեմատությունից, արդարանում է նաև Սեբեոսի բնագրի ուշագիր քննությունում: Եթե ամօմամանակ անտես անենք Մամիկոնյանների ծագման վերաբերյալ հատուկաձևը, որ բնագրի ներկա վիճակում անտեղի միջանկյալ հատված է թվում, կտեսնենք, որ հեղինակը գլխի վերնագրում խոստանալով կրկնել ազգաբանություններն ըստ Մ. Խորենացու և Ստ. Տարոնացու՝ բերում է Պարթևաց թագավորների ցանկը, Արշակ քաջից սկսած մինչև Արտավանը, որին սպանելով Սասանյան Արտաշիրը վերջ է դնում Պարթևների հարստության և թագավորում ինքը, Սասանյան հարստության հիմնադիրը: Այստեղ գալիս է Մամիկոնյանների վերաբերյալ հատվածը, որից հետո հեղինակը սկսում է թագավորների եռանուն ցանկը—Սասանյանների, հայ Արշակունիների և Հունաց կայսրների, դիտելով որ Արտավանի սպանությունը և Արտաշիրի թագավորությունը տեղի են ունեցել Հայոց Խոսրով Մեծի թագավորության 31-րդ տարում: Աչքի է ընկնում այստեղ մի մեծ պակասորդ—հայ Արշակունիների ցանկը՝ Վաղարշակից հետո մինչև Խոսրով Մեծի 31-րդ ասորին: Կարո՞ղ էր հայ հեղինակը, Պարթևների ցանկը դնելուց հետո մինչև նրանց բարձումը՝ անտես անել հայ Արշակունիների ցանկը, որ նրանց ժամանակ թագավորում էին Հայաստանում մինչև Խոսրով Մեծը: Հեղինակը հիշում է Վաղարշակի մնունը՝ առանց նրա թագավորության տարիները նշանակելու, որից հետո թելում է մինչև Խոսրով Մեծի 31-րդ տարին, այսինքն զանց է անում ավելի քան 400 տարվա ժամանակի հայ թագավորների ցանկը: Այսպիսի մոռացություն անկարելի է ենթադրել: Պարզ է, որ Պարթևների բարձումը նշանակելուց և Սասանյան Արտաշիրի թագավորությունը հիշելուց հետո, հեղինակը պետք է դառնար հայ Արշակունիներին և դեմը նրանց ցանկը, Վաղարշակից սկսած մինչև Խոսրով Մեծը, Արտաշիր Սասանյանի ժամանակակիցը, որից հետո բնական կերպով շարունակելը՝ գրելով եռանուն ցանկը: Այսպես, ուրեմն, մենք գտնում ենք դուրս ընկած թղթի բովանդակությունը—հայ Արշակունիների ցանկը Վաղարշակից մինչև Խոսրով Մեծը: Եվ որովհետև, ըստ ավանդության և ըստ Սեբեոսի, Մամիկոնյանների զաղթը Հայաստան տեղի ունեցավ Խոսրով Մեծի ժամանակ՝ հեղինակը այս թագավորի պատմությանը կցել է նրա ժամանակ տեղի ունեցած այս զաղթի պատմությունը: Ուրեմն, Մամիկոնյաններին վերաբերող հատվածը ոչ թե միջանկյալ է այստեղ, որը բանասերները դուր չանք են անում մի ուրիշ՝ ավելի հարմար տեղ փոխադրել, այլ հենց յուր բնական տեղումն է: Նրա կապը նախընթաց խոսքի հետ խզվել է՝ մի թուղթ դուրս ընկած լինելու պատճառով: Ն. Ադոնցը (եր. 3) նույնպես ընդունում է, որ վերը հիշված տեղում բնականապես պետք է գտնվեր նաև հայ Արշակունի թագավորների ցանկը, և նա կարծում է, թե այդ ցանկը հենց այն է, որ դրված է Վերջանում է «Պապ որդի Արշակայ ամս է»: Բայց նրա այս կարծիքն անընդունելի է: Հեղինակը Պարթև և Արշակունի հայ թագավորների ցանկը բերում է երկու անգամ, առաջին անգամ, ըստ Մարաբասյան (և Ագաթանգեղյան) աղբյուրի, իսկ երկրորդ անգամ «երկրորդում է» նույնը ըստ Խորենացու և Ստ. Տարոնացու: Ադոնցի հիշած ցանկը հայ Արշակունիների ցանկն է ըստ Մարաբասյան աղբյուրի կամ Ագաթանգեղյան արձանագրության, որ գրվում է յուր բնական տեղը Պարթևների ցանկից հետո ըստ նույն աղբյուրի. (հիշենք՝ «գրոմմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց»): Իսկ երբ հեղինակն երկրորդում է այդ ցանկերն ըստ Խորենացու և Ստ. Տարոնացու՝ Պարթևների ցանկը լրիվ

կա մինչև նրանց բարձուճը, իսկ հայ Արշակունիներինը չկա—կորած է, որովհետև, ինչպես սասցիներ, ձեռագրից մի թուղթ է ընկել» (ՍԵՊ, էջ 170—172):

75. «...աղբէ զՄամիկոնէիցն սակս զազգաց (կամ «զզազգաց», «ազգաց»—Գ. Ա.) զՆեղոսքիւնն»: Արդեն սավեց, որ Անանունի հատվածն այստեղ պակասավոր է: Սկիզբը կորցրած «աղբէ»-ից առջ գտնվել է մի հատված, որի վերջին բառն է այժմ մեր ձեռագրերում կիսատ մնացած «արինա» բառը: Պակասող հատվածի կորստյան հետևանքով՝ կիսատ մնացած երկու բառերն այժմ միացել են իրար և տվել են «արին-աղբէ» բառը, որով միաժամանակ միմյանց են միացել նաև պակասից առաջ և հետո գտնված և տարբեր դրույնների պատկանած տեքստերը: Մենք այդ տեքստերն իրարից անջատել ենք մեր ավելացրած «Մննդաբանութիւն ազգին Մամիկոնից» խորագրով: Վերնագիրն ավելացնելիս նկատի ենք ունեցել նաև Գ. Տեր-Պողոսյանի («Նկատողութիւններ Փավստոսի Պատմութեան վերաբերյալ», Վիեննա, 1919, էջ 116) կարծիքը, որի համաձայն՝ Միմեն Ապարանեցու գործածած «ղրուակագրեալ բառը որևէ վերնագիր է ենթադրում Մամիկոնյան տոհմի պատմութեան համար»: Առանց մեր ներմուծած խորագրի՝ քննարկվող հատվածը ձեռագրում ունի հետևյալ տեսքը. «Թագաւորէ ինքն, և շետ նորա պաշազատք նորին զնոյն ձև արինաղբէ զՄամիկոնէիցն սակս ազգաց զՆեղոսքիւնն: Քանզի ոչ են սորա որդիք Ազգածնինն Արամանկայ, այլ են եկեալ ի ճանատանէ յամս Արտաւանայ արքային Պարթևաց և մեծին Խոսրովու արքայի Հայոց. որպէս լուայ յանէն մեծէ, որ եկեալ էր հրեշտակովեալք ի ձենաց թագաւորէն առ արքայն Խոսրով. յոր իմ հարցեալ ի դրանն արքունի, եթէ՛ Ազգ մի մեծ ի Հայաստան երկրի կայ, զորմէ ասեն եթէ ի ձերմէ աշխարհէն զնացեալ են: Եւ նա սասց ինձ...»:

Այս հատվածը մենք քաղել ենք «Սերեոսի Պատմութեան» հնագույն ձեռագրից (ձ. № 2639, թ. 492ա): Տպագիր բնագրում մեր ընդգծած «արինաղբէ» բառը դարձել է «արինաղբէն»: Դժվար չէ նկատել, որ մեր բերած հատվածում աղճատված է հետևյալ արտահայտությունը՝ «պաշազատք նորին զնոյն ձև արինաղբէ զՄամիկոնէիցն»: «Պաշազատք»-ը հոգնակի է, իսկ նրան վերաբերող «արինաղբէ»-ն՝ եզակի: Սրանից ելնելով՝ հրատարակիչները փորձել են քերականորեն համաձայնեցնել բնագիրը, «արինաղբէ» ձևը տպագիր բնագրում դարձնելով «արինաղբէն»: Սակայն էականն այստեղ սովորական գրչական վրիպակը չէ: Հատվածում թաքնված է մի իրողություն, որը պետք է որոնել հենց «արինաղբէ» ձևում:

Ստ. Մալխասյանցը, ինչպես տեսանք, առաջին անգամ ինքն է դիպուկ կոհսմամբ հասել այն մտքին, որ «արինաղբէ» բառն իրենից ներկայացնում է «արինակի» բառի «արինա»— կիսատ մնացած մասնիկի և «ղբէն» վերջավորություն ունեցած ինչ-որ ուրիշ բառի (որի սկիզբը կորել է) պատահական միացում (տե՛ս ՍԵՊ, էջ 170—171):

Այս շատ կարևոր հայտնաբերությունը հանդերձ չի նկատվել, որ բառը ոչ թե հեղինակինն է, այլ զտնվում է «Սերեոսի Պատմութեանը» միացած՝ Անանունի քաղվածքում, որի վերնագրի մեջ պարզ հայտնվում է, որ մեջբերումը կատարված է Ստեփանոս Տարոնացուց (իմա՛ Ասողիկից). «երկրորդիցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացուց եւ Ստեփանոսի Տարանացուց»: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ մենք «արինաղբէ» բառը (որ Մալխասյանցը դարձրել է «արինաղբէն») ձեռագրից հարազատորեն վերցնելով՝ դիտում ենք որպես Ասողիկի «արինակի» բառի (տե՛ս Ասողիկ, 1885, էջ 32. «պաշազատք նորին զնոյն ձև արինակի») «արին-» մասնիկի և մեկ ուրիշ սկզբնաղբյուրից եկած «-աղբէ» վերջավորությամբ բառի պատահական միացություն:

Ինչպես ցույց ենք տվել Անանունի առեղծվածին նվիրված մեր աշխատության մեջ, «-աղբէ» մասնիկը հանդիսանում է Անանունի գործածած «շարաղբէ» բառի (որով նա ակնարկել է Ժամանակագրին) վերջավորությունը: Այդ և նախորդ բառերով հեղինակը ժամանակագրի պատմածը (Մամիկոնյանների մասին) քաղելուց առաջ հայտնել է, որ ժամանակագիրը «[այսպէս շարժադրէ զՄամիկոնէիցն սևի ազգացնեղութիւնն» (փխ. ազգաց զՆեղոսքիւնն)»: Այս քաղվածքը հետագայում հայտնվել է Ասողիկից կատարված մեջբերման վերջում: Եվ քանի որ մեզ հասած բնագրում կորել է ինչպես Ասողիկից քաղված հատվածի շարունակությունը («արինակի» բառի «-ակի» վերջավորութեան հետ միասին), այնպես էլ Անանունի՝ ժամանակագրից քաղած Մամիկոնյանների գրույցին նախորդած բնագիրը, ձեռագրում իրար կողք-կողքի են հայտնվել երկու տարբեր հեղինակների (Ասողիկի և Անանունի) գործերից մնացած «արին[ակի]» և «[շարժադրէ]» բառերը, որի հետևանքով ստացվել է «արինաղբէ»:

Ստ. Մալխասյանցն իր հրատարակությունում արդեն անջատել է տարբեր բառերի պատկանած մասնիկները, որով և հարցն սպառված է համարել: Սակայն, ինչպես սավեց, էականը բնագրի սուկ սրբագրությունը չէ. աղճատված բնագրում թաքնված են Մամիկոնյանների գրույցի

ծագումը պարզող կարևոր տվյալներ, որոնք հայտնի են դառնում մեր ուսումնասիրության մեջ կատարված հետևյալ վերծանմամբ. «Յետ որոյ նուաճեալ Ստահրացոյն Արաաշրի որդոյ Սասանայ գամենայն Արիս և գանարիս, և զբազումս ի նոյն ազգէ բազաւորութեան Պարթեաց և Պահլաւկաց բազաւորէ ինքն և յետ նորա պայազատք նոսին զնոյն ձև աւրինա (կի)»: (Այստեղ վերջանում է Ասողկից քաղված հատվածը: Այնուհետև Անանուն սկսում է ժամանակագրից քաղել Մամիկոնյանների մասին պատմածը, նախօրոք կցելով իր ծանոթագրությունը, որի մեջ հասած մասն սկսվում է հետևյալ խոսքերով). ...[Այսպէս շար]ադրէ (ժամանակագիրը—Գ. Ա.) զՄամիկոնէիցն սեռի ազգացեղութիւնն (քանզի ոչ են սոքա որդիք ազգածինն Արամանկայ, այլ են եկեալ ի ձեճաստաւէլ յամս Արաաւոնայ արեայի Պարթեաց և մեծին Խոսրովու արեայի Հայոց) (այստեղ վերջանում է Անանունի ծանոթագրությունը Մամիկոնյանների ոչ հայկական ծագումը ունենալու մասին և սկսվում է ժամանակագրից բերված քաղվածքը, որտեղ Ազաթան-դեղուր պատմում է, թե ինչպես ինքը՝ Տրդատի քարտուղարը, Տրդատի հոր՝ Խոսրովի արքունիքում\* ձենաց դեսպանից լսել է հետևյալ զրույցը). «Որպէս լուայ յառնէն մեծէ, որ եկեալ էր քրեշտակութեամբ ի ձեճաց բազաւորէն առ արեայն Խոսրով, յոր իմ հարցեալ ի դրանն արեւունի, երբէ՛ Ազգ մի մեծ ի Հայաստան երկրի կայ, գորմէ ասեն երբ ի ձեճմէ աշխարհէն զնացեալ են: Եվ նա ասաց ինձ...» և այլն:

Ինչպես տեսնում ենք, հատվածում միացած են երեք տարբեր հեղինակների խոսքեր. Անանունինը և նրա քաղած աղբյուրներինը՝ Ասողկի, ժամանակագիր (որը պատմում է Ազաթան-դեղուրի բերանով): Մակելը (Macl., էջ 134) Մամիկոնյանների զրույցը համարում է ուշ ժամանակի գրչական ընդմիջարկություն, բայց իր ենթագրության համար նա որև փաստարկություն չի կատարում:

76. «Սերեալ բազմացան յոյժ, և եղեն յազգ մեծ ի Մամիկայ և ի Կոնակայ»:

Բոլոր ձեռագիրը և տպագիր բնագրերում «Մամիկայ» ձևի փոխարեն հանդիպում է աղճատված «Մամիկոնայ» ձևը: Հայտնի է, սակայն, որ Մամիկոնյանների զրույցի հիմնական գծերից մեկը «Մամիկոնյան» անվան ստուգաբանությունն է: Ժողովրդական ավանդությունն այս անվան հիմքում դնում է երկու ձենացի եղբայրների անունները: Եթե եղբայրներից մեկը իրոք Մամիկոն կոչվեր, ինչպես որ է աղճատված բնագրում, ապա այլևս կարիք չէր զգացվի մի երկրորդ անվան, որովհետև «Մամիկոն»-ը արդեն պակաս շունի Մամիկոնյան ազգանունը կաղմբելու համար: Բայց որովհետև իրականում եղել է ոչ թե Մամիկոն, այլ՝ միայն «Մամիկ»: (Կամ ավելի ճիշտ՝ «Մամ», ինչպես որ գտնում ենք Մուրուզ Վալոցձորեցու Պատմությունում), պահանջվել է երկրորդ եղբոր՝ Կոնակի (ավելի ճիշտ՝ Կոն) անունը, որպեսզի երկու անունները միասին կազմեն «Մամիկոն»:

Ենթելով սրանից, մենք «Մամիկոն» անունը սրբագրել ենք «Մամիկ»: Քննարկվող բնագրում այդ անունը հանդիպում է չորս անգամ, որից միայն մեր նշած դեպքում է տեղի ունեցել աղճատումը, մնացած բոլոր դեպքերում պահպանված է «Մամիկ»-ը: Այսպես՝ «Ասեն, ասէ, գուսանք և ի մերում աշխարհին յերգս իրեանց զՄամիկն և զԿոնակն արս երկուս լեալ քաջս և զիսաւոր եղբարս հարազատս», «և զորածողով լինէին Մամիկն և Կոնակն ի վերայ նորա ի միում տեղոջ աշխարհին իրեանց», «փախստական լեալ Մամիկն և Կոնակն դնան առ արքայն Արշակունի, որ նստէր ի Բահլ Շահաստանի, յերկիրն Քուշանաց»:

Ք. Պատկանյանը սուտերեն թարգմանության (էջ 14) և Յ. Մակելըր՝ ֆրանսերեն թարգմանության մեջ («Pseudo-Sebeos. trad. et annotée par. F. Maclier», Paris, 1903, էջ 20) տպագրել են հենց «Մամիկ» ձևով: Նույնպես է վարվել նաև Ն. Աղոնցը («Начальная история», էջ 66):

\* Առաջին անգամ Մ. Բրտսեն է («Rapports sur un voyage», էջ 51) կարծիք հայտնել, թե հանդիպումը ձենաց դեսպանների հետ եղել է պարսից արքա Խոսրով Ապովելի (590—627) արքունիքում: Սակայն իրականում Անանունի հատվածում հիշատակված է հայոց Խոսրով մեծ արքայի արքունիքը (տե՛ս մեր աշխ., էջ 85): Ա. Զամինյանը (Զամ., էջ 18) համոզված լինելով, որ Անանունը Փալստոսն է, «որպէս լուայ» բառերի դիմաց գրել է «Փալստոս», մեկ այլ տեղում՝ «Ազաթանդեղուս»: Նրա կարծիքով՝ Մամիկոնյանների օրինագրությունը «երևի Վաղարշակի կարդաղությունն է կամ Խոսրովի». այսպես պետք է, հավանաբար, հասկանալ Վաղարշակի և Խոսրովի մասին հայտնված կարծիքը, որ Զամինյանը գրել է «Զնոյն ձև աւրինագրէ և (այս «և»-ն ավելացրել է Զամինյանը—Գ. Ա.) զՄամիկոնէիցն սակս» արտահայտության դիմաց: Թղթ. 232բ, վավ. 125, էջ 21-ում Զամինյանը Մամիկոնյանների վերաբերյալ խոսքի վերջին բառերը սրբագրել է այսպես. «սակս ազգաց զնեղութիւնն կրելու»:

77. «Յայտմանէ այն է սպարապետ»: Ք. Պառկանյանը 1862 թ. ռուս թարգմ. մեջ (էջ 14) հայտնել է, որ այս արտահայտությունը աղավաղված է: Եղել են հատվածը սրբագրելու զանազան առաջարկներ: Այսպես օրինակ, Ն. Աղոնցը արտահայտությունը կապելով նրան նախորդող Կոնակ անվան հետ, բնագրեր վերծանել է՝ «Կոնակայ, յայտմանէ սպարապետ»: Ն. Ակինյանը կարգացել է՝ «յայսրմ տանէ յառնէ սպարապետ» (այս կարծիքների ամփոփումը տե՛ս ՍԵՊ, էջ 172—173, ծան. 18): Երկու սրբագրությունն էլ, մեր կարծիքով, բխում են բնագրեր ոչ ճիշտ վերծանելուց: Այստեղ սրբագրելու կարիք չկա: Անանունի օգտագործած սկզբնաղբյուրում նախօրոք հայտնված է եղել, որ Մամիկոնյանները հասարակ մարդիկ չեն, այլ՝ թագավորական ծագում ունեն և ապա ավելացվել է, որ այդ պատճառով էլ, այսինքն՝ ազնվական ծագման պատճառով էլ Մամիկոնյանների ազգն սպարապետ է. «յայտմանէ այն (այս «այն»-ը վերաբերում է Մամիկոնեից ազգին, որի մասին քիչ առաջ հայտնվում էր՝ «եղեն յազգ մեծ ի Մամիկոնայ և ի Կոնակայ») է սպարապետ»: Ա. Մատիկյանը («Անանունը կամ Կեղծ-Սեբեոս», էջ 54) գտնում է, որ «այն է սպարապետ» արտահայտության ներկա ժամանակով գործածված լինելը նշան է այն բանի, որ արտահայտության հեղինակը ժամանակակից է սպարապետական ազգին: «Սեբեոսի Պատմության» հեղինակը, որի ժամանակ այլևս հայ սպարապետական ազգ գոյություն չուներ, չէր կարող գրել «այն (ազգն) է սպարապետ»:

78. Մեր ավելացրած «քազաուրք Հայոց, Պարսից և Յունաց» խորագրին հաջորդող Հայոց, Պարսից և Բյուզանդացոց թագավորների համեմատանակյա ցանկը ձևագրերում և տպագիր բնագրերում միացած է Մամիկոնյանների զրույցին և կազմում է նրա շարունակությունը: Սակայն, ինչպես ասվեց, դրանք միմյանց հետ կապ չունեն և իրար են միացել ձևագրից թերթ ընկնելու պատճառով: Երկու տեքստերը զատելու նպատակով մեր ավելացրած խորագրեր կարգավորում է բնագրեր:

Խորագրի տակ ղետեղված եռանուն ցանկն ընդօրինակող գրիչները անձանաչլիորեն աղավաղել են: Այժմ գրեթե անհնարին է անտարկելի իսկությունք վերականգնել ցանկի նախնական բնագրերը: Ն. Աղոնցը («Начальная история», էջ 7) սրբագրել է ցանկը: Մալխասյանցը նրա սրբագրումը զետեղել է ծանոթագրությունների բաժնում (էջ 173), այսպես.

Հայոց		Բյուզանդացոց	
1. Խոսրով 50 (32-րդից)	20	1. Ալրեղիանոս (3-րդ տարուց)	6
Անիշխանություն	11	2. Տերենտիոս ամիս	6
2. Տրդատ	70	3. Պրոքոս	6
3. Խոսրով	17	4. Կարոս և որդիք	7
4. Տիրան	12	5. Դիոկլետիանոս	22
5. Արշակ 49 կամ 48	.	6. Կոստանդին	9
Անիշխան. 11 կամ 12	60	7. Մաքսիմիանոս և Գաղեբիանոս	19
6. Պապ	13	8. Մաքսիմիլիան (փոխ. Մաքսիմենտ)	13
7. Վարազդատ	6	9. Կոստանցիոս	17
8. Արշակ և Վաղարշակ	5	10. Կոստանդին	32
9. Խոսրով	3	11. Կոստանցիոս և Կոստանդ	24
10. Վոսաճապուհ	8	12. Հուլիանոս	2
	255, առանց Խոսրովի	13. Վաղենտիանոս և Վաղես	13
	30 տարուն՝ 225	14. Գրացիանոս	17
	Պարսից	15. Թեոդոս	19
1. Արտաշիր	50	16. Արկադիոս	19
2. Շապուհ	73	17. Ուորեոս մինչև 2-րդ տարին	
3. Ներսես	9		
4. Որմիզդ	3		
5. Շապուհ	73		
6. Արտաշիր	4		
7. Վոսաճ	11		
8. Հազկերտ մինչև 2-րդ տարին	2		
	225		225

Մակերը Անանունի միևնույն եռանուն ցանկի հիման վրա կազմել է մի ժամանակագրական աղյուսակ, որը կցել է Անանունի ֆրանսերեն թարգմանությանը («Pseudo-Sebeos», էջ 152—155):

79. «Յամի Էրրորդի Եղիանոսի կայսեր»: Ստ. Մալխասյանցը ուսերեն թարգմանության 32-րդ ծանոթագրությանը (էջ 146) հայտնում է. «Եղիանոս կայսեր տակ հասկացվում է կամ կայսր Եմեղիանոսը (որը թագավորել է 252 թ. ընդամենը չորս ամիս), կամ, ամենայն հավանականությամբ, Ալբրեղիանոսը (270—275): Բայց Արտավանի սպանության և Սասանյան հարստության հիմնադրման ժամանակը, որը տեղի է ունեցել 226 թ., չի համընկնում ո՛չ Եմեղիանոսի, ո՛չ էլ Ալբրեղիանոսի ժամանակի հետ»: Սույն ծանոթագրությունը քաղված է հիմնականում Ք. Պատկանյանից (Патк., էջ 26, ժ. 1): Եղիանոսի անվան սրբազրահան առաջարկներ են արել նաև Ն. Աղոնցը („Начальная история“, էջ 86), Ֆ. Մալիբրը („Pseudo-Sebêos“, էջ 21), Ա. Չամիխյանը (Չամ., էջ 20) և ուրիշներ:

Ինչպես Մալխասյանցն է նկատել (ՍԵՊ, 14, ժ.), Միհրդատյանի օգտագործած ձևագրում Եմեղիանոսի փոխարեն պահպանվել է «Ալբրեղիանոս» անունը հետևյալ աղճատված ձևով. «Խոսրով Ա ամա: Եղիանոս»: Այստեղ «ամա» բառի «ա»-ը Ալբրեղիանոսի անվան սկզբնատուերն են, որ միացել են «ամ» բառին, իսկ «ա»-ին հաջորդող վերջակետի փոխարեն եղել է «բ» տառը: Եռանուն ժամանակագրական ցանկի համաձայն «Եղիանոս» կայսրին հաջորդում է Տերենտիանոսը: Անանունը գրում է «Յամին Լ-Էրրորդի չորրորդի Մեծին Խոսրովայ, և չորրորդ ամի արքային Պարսից Արտաշրի թագաւորէ Տերենտիանոս»: Մարկվարտը (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 262, վավ. 4) գտնում է, որ Անանունի նախնական բնագրում «Տերենտիանոս» անվան փոխարեն եղել է Տ[ԱԿԻՏՈՍ ԵՒ ՓՂՈ]ՐԵՆՏԻԱՆՈՍ: Առ այս վկայակոչում է Ուխտանեսին, որ «Տերենտիոս»-ի փոխարեն ունի «Փողեստիանոս»:

80. «Կարոս, հանդերձ որդավից իրով Կարինա»: Չամիխյանը (թղթ. 232ա, վավ. 101, էջ 52) «Կարինա»-ը սրբագրում է «Կարիանոսի», որ հիմնավորված չէ:

81. «Նո դիմէ ի վերայ արքային Խոսրովայ»: Չամիխյանը (թղթ. 232ա, վավ. 101, էջ 52) «Խոսրովայ» անունը սրբագրում է «Պարսից» բառով և հայտնում է, որ այդ բառին հաջորդող բնագիրը, սկսած «Անտի աճապարեալ ընդդէմ նորա» բառերից մինչև «և զգարութիւն մանկութեանն» բառերը հանդիսանում են ընդմիջարկություն: Այս հատվածը նա դուրս է գցում իր կազմած բնագրից և գրում. «Բնագիրն աստ աղաւաղեալ է անլորդ բացատրութեամբ, զոր մերժեցաք իր անհաստի»:

82. «Անտի անապարեալ ընդդէմ նորա Ելանէ»: Այս բառերից հետո Ա (№ 2639) ձևագրում գրիչը բաց է թողել չորս տող և թերթի (493ա) ստորին լուսանցքում ծանոթագրել. «Յօրինակ գրած էր. աստ ջինջ է չորս տող. թող զայլսն որ կու նորոգի, թողութիւն արարէք»: Բաց թողնված տողերի տեղում XIX դարում լրացվել են պակասող բառերը. «Կոտնակ սպարապետ Մեծին Խոսրովու հարն Տրդատայ: Ասեն զամանէ յերկարեալ զամս կենացս ճԿ և ունէն»: (Սրանից հետո հաջորդում է բնագրի «ի ծամ մահուան զհերս...» և այլն): Պակասող տողերի լրացումը կատարվել է 1850 թ. հետո: Դա երևում է նրանից, որ 1850 թվականին Ա ձևագրից ընդօրինակված Բ (№ 2935) ձևագրում նույնպես հիշյալ տողերը բացակայում են: Լրացումը կատարվել է, ինչպես երևում է, «Սերբոսի Պատմության» 1851 թ. հրատարակության հիման վրա: 1851 թ. հրատարակության հեղինակ Միհրդատյանը լրացված մասը վերցրել է փակագծերի մեջ և այդ մասին ծանոթագրել. «Փակագծի եղեալն ոչ գոյր ի բնագրին, զոր լրացուցաք ի միս օրինակէն»: Սակայն նա սխալմամբ փակագծերի մեջ է զետեղել նաև «ի ծամ մահուան» բառերը, որոնք սկզբից ևեթ եղել են բոլոր ձևագրերում: Պատկանյանը նույնությամբ կրկնել է Միհրդատյանին: Մալխասյանցը վերացրել է փակագծերը:

Ա ձևագրից անմիջապես կամ միջնորդաբար ընդօրինակված մեզ ծանոթ մյուս բոլոր ձևագրերում մինչև այժմ էլ պակասում են խնդրո առարկա չորս տողերը: Ձևագրերից երեքի (Բ, Դ, Ծ) մեջ լրացվելիք տողերի համար տեղ չի թողնված, իսկ Գ (= № 6454) ձևագրի գրիչը հետևելով Ա ձևագրին՝ չորս տողի տեղ բաց է թողել և աստղանիշ դնելով տողատակին ծանոթագրել է. «չորս տող պակաս էր յօրինակն» (ձ. № 6454, էջ 6ա): Մ. Բրոսեն (Rapports sur un voyage, S. Pб, 1849, էջ 51) սխալմամբ հայտնում է, թե ձևագրից պակասում է 4 էջ (փոխանակ՝ 4 տող): Միևնույն սխալը նա թույլ է տվել նաև 7 տողանոց պակասի (տե՛ս ստորև) կապակցությամբ: Բրոսեն տեղեկությունից միաժամանակ երևում է, որ պակասող տողերի լրացումը կատարվել է Բրոսեի գրքի հրատարակությունից հետո (Բրոսեն լրացված տողերը չի տեսել):

83. «Յամին Լ-Էրրորդի Արտաշրի»: Բոլոր ձևագրերն ու տպագիր հրատարակություններն ունեն «յամին Լ-Էրրորդի»: Ուղղեցինք «ԼԲ-Էրրորդի» հենվելով միևնույն պարբերության մեջ հանդիպող «Արտաշրի ԼԲ. Դիոկղետիանոս ԺԵ» տեղեկության վրա: Բնագիրը սրբագրել են նաև Մալիբրը («Pseudo-Sebêos», էջ 22) և Չամիխյանը (Չամ., էջ 22):

84. «ԺԹ» ամ Տրդատայ արքային Հայոց» բառերին Ա ձևազրույցում պետք է հաջորդեր նախագաստության շարունակությունը՝ «Յազատրէ Շապուհ որդի Արտաշրի ի վերայ աշխարհին Պարսից ամս 2Գ»։ Սակայն գրիչը «ԺԹ» ամ Տրդատայ արքային Հայոց» բառերն արտագրելուց հետո ընդհատել է արտագրելը և 7 տող դատարկ թողնելուց հետո միայն արտագրել է նախագաստության մեր նշած շարունակությունը։ Այսպիսով՝ նախագաստության մի մասը մնացել է դատարկ տարածության առջևում, մյուսը՝ վերջում։ Գրիչը շիմանալով, որ դրանք միևնույն նախագաստության մասերն են՝ նրանց միջև դատարկ տարածություն է թողել, որպեսզի հետագայում ուրիշները գտնեն և լրացնեն բնագրի այն պակասը, բրը բացակայել է նաև № 2639 ձևագրի համար հիմք ծառայած նախադադափար օրինակում։ Այս օրինակում նույնպես բաց է թողնված եղել յոթ-ութ տող և ծանոթագրվել է «է—Ը տող թող»։ Սույն ծանոթագրության մասին իմանում ենք № 2639 ձևագրի գրչից, որը 493բ էջի ստորին լուսանցքում գրել է. «յօրինակն այլի գրած էր թէ է—Ը տող թող»։

Պակասը № 2639 ձևագրում լրացվել է 1850 թվականից հետո, այն միևնույն անձնավորության ձեռքով, որը լրացրել է նաև վերոհիշյալ շորս տողանոց պակասը (տե՛ս 82-րդ ծանոթագրությունը)։ Լրացումը կատարվել է դարձյալ հավանաբար Միհրդատյանի հրատարակությունից։ Դա երևում է նրանից, որ լրացված մասը ձևագրում վերցված է փակագծերի մեջ, ինչպես որ Միհրդատյանի հրատարակության մեջ։ Տարբերությունն այն է, որ ձևագրի լրացնողը մոռացել է 493բ էջում փակել Միհրդատյանից ընդօրինակած փակագծերից (որոնք սկսվում են «և ի սոյն ամի» բառերով և վերջանում են «ի տեղի իւր» բառերով) երկրորդը։ Որ լրացումը կատարվել է Շահաթունյանցից հետո և՛ ըստ Միհրդատյանի հրատարակության, երևում է նաև հետևյալ փաստերից՝ 1. լրացնողի ձեռագրերն այլ է Շահաթունյանցի ձեռագրերից, 2. ոչ մի շեղում չկա Միհրդատյանի հրատարակության և ձևագրում լրացված հատվածի միջև, 3. լրացումը կատարվել է անփույթ գրչությամբ, բառերը և մանավանդ որոշ տեղանուններ (օրինակ՝ «Ճաստան») գրված են այնպես, որ վերծանվում են միայն Միհրդատյանի հրատարակության միջոցով։ Լրացնողը նկատի ունենալով, որ արդեն գոյություն ունի Միհրդատյանի հրատարակությունը՝ հոգ չի տարել բառերը պարզ և ընթերցելի գրելու համար։

Լրացումը կատարվել է այսպես։ Լրացնողն առաջին հերթին՝ պակասող 7—8 տողերի համար նախատեսված դատարկ տեղի սկզբում գետեղել է այն բառերը, որոնք ձևագրի գրիչն ինքը սխալմամբ անշատելով նախագաստությունից, գետեղել էր դատարկ տարածությունից հետո։ Այս հատվածը կրկին արտագրելուց և իր տեղը տեղափոխելուց հետո՝ լրացնողը ջնջել է սխալ տեղում հայտնված այդ միևնույն բառերը։ Այնուհետև նա իր ջնջած բառերից առաջ, դատարկ տարածության մեջ և ձևագրի ստորին լուսանցքում լրացրել է պակասող բնագիրը, քաղելով, ինչպես ասվեց, հավանաբար Միհրդատյանից։ XIX դարի խոշոր նտարգրով ընդօրինակված այս ամբողջ լրացումն սկսվում է բուն ձևագրից վերարտագրված «Յազատրէ Շապուհ որդի Արտաշրի ի վերայ աշխարհին Պարսից ամս 2Գ» բառերով և ավարտվում է «և նա առեալ զգանձս և զաւարս բազումս ղառնայ ի տեղի իւր» բառերով։ Սրանից հետո հաջորդում է բուն գրչի ընդօրինակած բնագիրը։

№ 2639 ձևագրից ընդօրինակված մյուս բոլոր ձևագրերում այժմ պակասում են հիշյալ յոթ տողերը։ Ձևագրերից երեքի (Բ, Գ, Ե) մեջ լրացվելիք տողերի համար տեղ չի թողնված, իսկ Գ (№ 6454) ձևագրի գրիչը հետևելով Ա ձևագրին՝ յոթ տողի համար տեղ է բաց թողել և ձևագրի լուսանցքում ծանոթագրել «Եօթն տող պակասէր յօրինակն» (ձ. № 6454, էջ 6բ)։

Այսպիսով՝ գոյություն ունեցող ձևագրերից և ո՛չ մեկում չկան այն տողերը, որոնք գտնում ենք Ք. Միհրդատյանի հրատարակության մեջ։ Միհրդատյանն այդ տողերը հրատարակել է. քաղելով այժմ մեզ չհասած այն ձևագրից, որը պահպանած է եղել նաև շատ կարևոր այլ բնագրական միավորներ, որոնք նույնպես բացակայում են մեզ հասած բոլոր ձևագրերում։

Միհրդատյանն իր լրացրած հատվածը (սկսած «և ի սոյն ամի վախճանի կայսրն Յունաց» բառերից) վերցրել է փակագծերի մեջ և տողատակին ծանոթագրել է. «Փակագծիւ եղեալն ոչ զոյր ի բնագրին, զոր լցուցար ի մյուս օրինակէն»։

Ք. Պատկանյանը նույնպես լրացված մասը վերցրել է փակագծերի մեջ։

85. «Վախճանի կայսրն Յունաց Կոստանդիանոս և քազատրէ Մաքսիմիանոս և Գալիանոս»։ Սրա փոխարեն բոլոր ձևագրերն ունեն. «Վախճանի կայսրն Յունաց Մաքսիմիանոս, և Յազատրէ Գալիանոս»։ Գրչական այս ակնհայտ վրիպակն ուղղել են Ա. Զամինյանը (Զամ., էջ 23) և Ստ. Մալխասյանը (ՍեՊ, 16)։ Ուղղումը հաստատվում է միևնույն պարբերության մեջ հանդիպող «Մաքսիմիանոս և Գալիանոս» գերկրորդն» արտահայտությամբ։ Մարկվարտը (ՄՄ, անհատական

արխիվների ֆոնդ, թղթ. 262, վավ. 4, միկրոֆիլմ) սրբագրում է «Մաքսիմիանոս որ և Գահանաս»:

86. «Ի նեղ անկանել զաւրուն Պարսից յերկիրն Ուրեհայո»: Զամինյանը (թղթ. 232ա, վավ. 101, էջ 53) սրբագրել է այսպես. «Ի նեղ արկանել զզարն Պարսից յերկիրն Ուրհայո»:

87. «Խոսուով զառաջինն» բառերից հետո Զամինյանը (թղթ. 232, վավ. 101, էջ 53) գրում է. «Աստի սկսեալ և անգր, մինչև ց«Վարեճանեցաւ և վճարեցաւ» ի 24 իշէ (նկատի ունի «Սեբեոսի Պատմութիան» 1912 թ. Քիֆլիսյան-Ղուկասյան հրատարակությունը—Գ. Ա.) ցմահ Վոսմշապճոյ արքայի (էջ 28) առանձին գործ է միմիայն Փաւստեայ ժամանակագրի»: Այնուհետև Զամինյանը նշում է մի շարք այնպիսի ժամանակագրական թերություններ, որոնք առկա են նաև Փալատոսի գրքում:

88. «Ուրիֆ Կոստանդիանոսի բարեպաշտի»: Եղոր ձեռագրերն ու տպագրիչներն ունեն «Կոստանդի» (փխ. «Կոստանդիանոսի»): Այս գրչական վրիպակն ուղղել ենք բոս միևնույն էջում չորս անգամ հանդիպող «Կոստանդիանոս» ձևի: Ֆր. Մակկերը («Pseudo-Sebeos», էջ 125) նույնպես ուղղել է վրիպակը, սակայն նա այդ ուղղումը տարածել է նաև Կոստանդիանոսի որդի Կոստանդիասի անվան վրա և այս անունն ամենուրեք ուղղել դարձյալ «Կոստանդիանոս». մի սրբագրություն, որի համար Անանունի բնագիրը հիմք չի տալիս:

89. «Զոր Սոկրատն պատմէ»: Նորայր Բյուզանդացին («Իմ կարծիք զկրկին հայ թարգմանութեանց եկեղեցական պատմութեան Սոկրատայ Աթոլաստիկոսի և զնոցին թարգմանչաց, «Հ. ամս.», 1893, էջ 276) նշել է, որ «Սեբեոսի Պատմության» (Անանունի) հեղինակն օգտվել է Սոկրատ Աթոլաստիկոսի եկեղեցական պատմությունից: Այս կապակցությամբ համեմատիր՝ Ստ. Մալխասյանց, Սեբեոսի Պատմությունը և Մ. Խորենացի, Քիֆլիս, 1899, էջ 105: Սույն կարծիքն է հայտնել նաև Զամինյանը (Զամ., էջ 26): Իսկ Ֆ. Մակկերը («Pseudo-Sebeos», էջ 128) գրում է, թե Օքսֆորդի համալսարանի պրոֆ. Կոնիքերը 1905 թ. մայիսի 5-ի նամակում իրեն հայտնել է մի կարծիք, որի համաձայն Անանունը «կարծես արտագրվել կամ թերևս օգտագործվել է... Վենետիկում հայր Սարգիսյանի կողմից հրատարակված մի ժամանակագրության («Անանուն ժամանակագրություն», Վենետիկ, 1904) անանուն հեղինակի կողմից: Այս տեսակետից շատ ուշագրավ է կեղծ Սեբեոսի (հրատ. Պատկանյան, էջ 16) Յամի Թ և Ժ-երոդի Շապիոյ արևայի պարսից... հատվածի համեմատությունը Անանուն ժամանակագրության 53-րդ էջի հետևյալ հատվածի հետ. Յուդիանոս՝ ամս երկուս ամիսս ուր... երկու անգամ հալածեալ յԱրիանոսաց: Նկատելի է, որ կեղծ Սեբեոսը Սոկրատին անվանապես վկայակոչում է որպես սղբուր, այնինչ՝ Անանուն ժամանակագրությունը համապատասխան հատվածում միայն ասում է որպէս ասէ պատմութիւնն: Պարզ երևում է, որ կեղծ Սեբեոսն ավելի հին է, քան Հ. Սարգիսյանի հրատարակած ժամանակագրությունը, որոնց միջև ակնհայտ նմանություն գոյություն ունի»: Կոնիքերի սույն կարծիքն ստուգելու համար համեմատենք նրա նշած հատվածները:

Անանուն  
(ՍեՊ, էջ 17—18)

Անանիա Շիրակացուն  
վերագրված ժամանակագրություն  
(Անանիա Շիրակացու մատենագրությունը,  
էջ 387)

Յամի Թ և Ժ-երոդի Շապիոյ արքայի Պարսից, Ե-երոդի չորրորդի մտի Արչակայ արքային Հայոց, թագաւորէ Յունաց Յուլիանոս՝ ամս Բ: Արչակ՝ ԻՊ: Շապուհ ժԹ: Յուլիանոս նզովածն՝ զառաջինն: Սա որդի է Բեռնեթին Կոստանդիանոսի, թողեալ զԲիստոնէութիւնն և եղև կուպաշտ: Ի նոյն ատուրս երանելին Արանաս հալածեցաւ յԱրիանոսացն, զոր Սոկրատն պատմէ:

.....  
Յուդիանոս ամս երկուս ամիսս ութ:  
Սա էր որդի Բեռնեթին Կոստանդիանոսի և եղև յանցաւոր որպէս և ասէ պատմութիւնն, զի թողեալ զկարգ Բիստոնէական՝ եղև պաշտօնեայ զիւաց և երկրպագու կոոց: Ի սուրս ատուրս երանելին Արանաս հայրապետն Ալեքսանդրի էր ի Սկիւթ՝ երկրորդ (ընդգծված բառերի փոխարեն տպագրին ունի «Իսկ երև երկու»): Սրանք զրիչների կողմից աղավաղված բառեր են, որոնք ուղղեցինք բոս Ասողիկի—Գ. Ա.) անգամ հալածեալ յԱրիանոսաց:

Այս հատվածների կապն, իրոք, որ ակնհայտ է: Բայց հակառակ Կոնիքերի պնդման, ոչ մի հիմք չկա ասելու, թե Անանունի հատվածն ավելի հին է, քան Շիրակացուն վերագրված ժա-

\* «Սեբեոսի մեջ եղած հիշատակությունը համարում եմ Ստ. Ասողիկից հետո շարագրված» (Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտ. ուսումնասիրություններ, Ե., 1979, էջ 197):

մանակագրության հատվածը: Հակառակ ենթադրության համար կան ավելի շատ հիմքեր: Այսպես օրինակ, Անանունը Հուլիանոսի թագավորության տարիները համարում է երկու տարի՝ «Յուլիանոս ամս Բ», իսկ «Ժամանակագրության» մեջ նշված է «ամս երկուս ամիսս ութ»<sup>1</sup>: Կնշանակի «Ժամանակագրության» հեղինակը Անանունից չի օգտվել և ութ ամսվա մասին տեղեկություն քաղել է մեկ ուրիշ աղբյուրից: Եվ, ընդհակառակը, Անանունը «Ժամանակագրությունից» է քաղել «Յուլիանոս ամս Բ» տեղեկությունը և բաց է թողել «ամիսս ութ» խոսքերը, որպես մանրամասնություն: Նա իր աշխուսակում թագավորների թագավորած ամիսների քանակը երբեք չի նշում, այլ ջոկում է միայն կլոր տարիների հաշիվը: «Ժամանակագրության» հեղինակը Հուլիանոսի մասին խոսելիս անորոշ կերպով վկայակոչում է ինչ-որ պատմություն՝ «որպես և աս է պատմություն»: Կնշանակի «Ժամանակագրության» հեղինակը չի տեսել Անանունի երկը, որտեղ պարզ գրված է «զոր Սոկրատն պատմէ»:

«Ժամանակագրության» (VII դ.), Ասողիկի (X—XI դդ.) և Անանունի (XI—XII դդ.) համեմատությունից պարզ երևում է, որ Անանունի հատվածը գրվել է Ասողիկից հետո, այսինքն՝ XI, XII դդ.:

«Ժամանակագրություն»  
(էջ 387)

Ասողիկ (էջ 138)

Անանուն (ՍԵՊ, էջ 17—18)

Սա էր որդի քեռ Մեծին Կոստանդիանոսի և եղև յանցաւոր որպէս և աս է պատմութիւնն, զի թողեալ զկարգ քրիստոնեական եղև պաշտօնեայ դիւաց և երկրպագու կոոց: Ի սորա աւուրս երանելին Աթնասա հայրապետն Աղեքսանդրի էր ի Սկիւթ՝ երկրորդ անգամ հալածեալ յԱրիանոսաց:

Ի սորա աւուրս երանելին Աթնաս հայրապետն Աղեքսանդրիոյ թողեալ անգամ հալածեալ յԱրիանոսաց: Սա մեռաւ ի Պարսս և թաղեցաւ ի Տարսոն՝ որպէս Սոկրատ ասէ:

Սա որդի է քեռ Մեծին Կոստանդիանոսի թողեալ զքրիստոնեութիւն եղև կոսպաշտ: Ի նոյն աւուրս երանելին Աթնասա հալածեցաւ յԱրիանոսաց: զոր Սոկրատն պատմէ:

Այս համադրությամբ բացահայտվում է երեք փաստ.

1. Ասողիկն անառակելիորեն օգտվել է «Ժամանակագրությունից» և բառացի արտագրել է նրան,
2. Անանունը օգտվել է «Ժամանակագրությունից» և համառոտագրել նրան,
3. Անանունը Սոկրատի անունն իմացել է Ասողիկից: Եվ միայն Ասողիկից կարող էր իմանալ, որովհետև «Ժամանակագրության» մեջ այդ անունը չկա:

Ասողիկը քննարկվող հատվածից առաջ գրում է «Յուլիանոս եղբորդի Կոստանդիանոսի»: Այս տեղեկությունը նա չէր կարող «Ժամանակագրությունից» քաղել, որովհետև «Ժամանակագրության» մեջ Հուլիանոսը համարված է Կոստանդիանոսի ոչ թե եղբոր, այլ քրոջ որդին՝ Հետևաբար, Ասողիկը միաժամանակ օգտվել է նաև Սոկրատից: Ն. Ակինյանը կրկնել է Ստ. Մալխասյանցի՝ 1899 թ. հայտնած («Սերբոսի Պատմությունը և Մ. Խորենացի», Քիֆլիս 1899, էջ 105—109) և հետագայում հենց Մալխասյանցի կողմից մասամբ մերժված (ՍԵՊ, էջ 174) մի կարծիք, որի համաձայն Անանունի հատվածում «ուշ ժամանակ մուտ գտած է Փ. Սոկրատեն հետևյալ տեղիքը՝ Յուլիանոս՝ ամս Բ...սա որդի է քեռ-բռնազբօսելն մեռաւ» (Ակինյան, Փոքր Սոկրատ, Համառոտութիւն և խմբագրութիւն:—«Հ. ամս.», 1948, էջ 43): Ստ. Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 174) 1939 թ. եկավ այն եզրակացության, որ ընդմիջարկություն պետք է համարել քննարկվող հատվածի միայն կեսը, սկսած «ի սուրբն Կոստանդիանոսէ սկսանի» բառերից՝ մինչև «բռնազբօսելն մեռաւ» բառերը (իսկ 1899 թ. հրատարակած հիշյալ գրքում նա ընդմիջարկություն է համարում ավելի ընդարձակ մի հատված, սկսած «սա որդի է քեռ» բառերից մինչև՝ «բռնազբօսելն մեռաւ»): Մալխասյանցն իր նոր վճիռը չի բացատրել, բայց նախորդ աշխատության մեջ (էջ 103—105) արդեն հայտնի էր, որ ընդմիջարկված մասում կան այնպիսի մանրամասնություններ, որոնք հատուկ չեն Անանունին և ակնհայտ ընդմիջարկման դրոշմ են կրում: Սրան պետք է ավելացնել նաև մի ավելի կարևոր փաստ, դա այն է, որ ընդմիջարկված մասը հակասում է նախորդ մասին: Այստեղ Հուլիանոսի ծնող է համարված ոչ թե Կոստանդին

\* Ն. Աղոնցը («Начальная история», էջ 93) նույնպես կարծիք է հայտնել, թե ընդմիջարկությունն սկսվում է «ի սուրբն Կոստանդիանոսէ սկսանի» բառերից: Սակայն Աղոնցն ընդմիջարկությունն ավարտում է «զուղղափառութիւնս» բառով:



քույրը, ինչպես որ նախորդ մասում, այլ՝ եղբայր Դաղմատիոսը: Այսպիսով՝ միևնույն Անանունի մեջ մեկ հայտնվում է, թե Հուլիանոսը Կոստանդինի թրոջ, մեկ էլ թե՛ եղբոր տղան է: Բնական է, որ միևնույն հեղինակը մի քանի տողի մեջ այդպիսի հակասական տեղեկություններ չէր հայտնի: Ուստի մնում է ընդունել, որ երկրորդ տեղեկությունն ընդմիջարկություն է: Հետևաբար, Սոկրատի անվան հիշատակությունը պարունակող մասը Անանունի հարազատ գործն է:

Եթե այդպես է՝ կնշանակի Անանունը դարձյալ ոչ մի պայմանով չի կարող նույնանալ «Սեբեոսի Պատմության» հեղինակի հետ, որովհետև, ինչպես տեսանք, Անանունը Սոկրատի մասին իր տեղեկությունը քաղել էր X դարի պատմիչ Ասողիկից. կնշանակի նա ապրել է X դարից հետո, այնինչ՝ «Սեբեոսի Պատմության» հեղինակը VII դարի մատենագիր է:

Սոկրատի անունը պարունակող հատվածի վերջին խոսքերից («զոր Սոկրատն պատմէ») անմիջապես հետո հաջորդում են ընդմիջարկողի խոսքերը Սոկրատի Պատմության բովանդակության մասին: Գուցե ընդունենք, որ Սոկրատի անունը պարունակող հատվածն էլ է պատկանում այս միևնույն ընդմիջարկողին: Բայց սա անհնարին է, որովհետև այս ընդմիջարկողը քաջ ծանոթ է Սոկրատին և, ինչպես կտեսնենք մեր 91-րդ ծանոթագրության մեջ, բառացի արտագրություններ է կատարում նրանից, հայտնելով, որ Հուլիանոսը Կոստանդինի եղբայր Դաղմատիոսի որդին էր: Այնինչ՝ Սոկրատի անունը պարունակող հատվածի հեղինակը (Անանունը) Սոկրատին ծանոթ չէ և, ինչպես տեսանք, Հուլիանոսին համարում է Կոստանդինի թրոջ որդի, իսկ Սոկրատի անունը տալիս է սխալմամբ, պարզապես կրկնելով Ասողիկի սխալը: Այնպես որ պետք է կամ անվերապահորեն ընդունել, որ Սոկրատի անունը պարունակող հատվածը հենց սկզբից էլ եղել է Անանունի տեքստում, կամ էլ՝ հավատար, թե դա էլ մի երկրորդ գրչի կողմից կատարված ընդմիջարկություն է: Բայց այս երկրորդ տեսակետը համոզել չի կարող, քանի որ կրկնակի ընդմիջարկման փաստը արդեն ինքնին անհավանական է: Անանունի ձեռագրի լուսանցքում միևնույն Հուլիանոսի կապակցությամբ չէր կարող երկու անգամ ընդմիջարկություն կատարվել և այն էլ՝ երկու ընդմիջարկողն էլ հակասական բաներ ասեին Հուլիանոսի մասին:

Այսպիսով՝ Սոկրատի անունը կրող հատվածը մնում է Անանունին և այս փաստը միանալով մյուս փաստերի՝ հետ՝ ցույց է տալիս, որ Անանունը ապրել է Ասողիկից հետո (XI—XII դդ), որ նա Սոկրատի անունը քաղել է Ասողիկից և կապ չունի «Սեբեոսի Պատմության» հեղինակի հետ, որն ապրել է VII դարում:

90. «Գաղիանոս»: Ն. Բյուզանդացին («Հ. ամս.», 1893, էջ 276) Անանունի «Գաղիանոս»-ը սրբազրում է «Գաղոս», նկատի ունենալով, որ այդ անունը քաղված է Փոքր Սոկրատից, որի մեջ (էջ 41) իսկապես «Գաղոս» է (տե՛ս մեր հաջորդ ծանոթագրությունը): Ն. Ադոնցը («Ис-чальная история», էջ 93) նույնպես հայտնում է, որ հատվածը քաղված է Փոքր Սոկրատից:

91. Փակագծերի մեջ վերցված ամբողջ հատվածը, սկսած «Ի սուրբ Կոստանդինոսէ» մինչև «բռնազբօսելն մեռաւ» բառերը, ինչպես ասվեց, ընդմիջարկություն է: Գրիչներից մեկը Անանունի գրքում հանդիպելով Սոկրատի անվանը, հարկ է համարել լուսանցքում ծանոթագրել, թե ինչ բովանդակություն է ունեցել նրա Պատմությունը («Ի սուրբն Կոստանդինոսէ սկսանի և մինչև ի Փոքր Քլեոդոն»՝ զանսրբոյ և սրբոց գործքն և զհայրապետացն ուղղափառութիւնս»): Այս հատվածը Անանունին չի կարող լինել, որովհետև Անանունը կազմել է միայն և միայն հայոց, բյուզանդացոց և պարսից թագավորների համաժամանակյա աղյուսակ, առանց որևէ շեղում կատարելու: Թագավորների այս ցանկում Սոկրատի և նրա գրվածքի մասին խոսելն անիմաստ կլիներ: Փակագծերի մեջ գտնվող ընդմիջարկված հատվածում միևնույն գրիչը միևնույն Սոկրատի հիման վրա լուսանցքում ավելացրել է երկու տեղեկություն Հուլիանոսի մասին:

Այդ տեղեկություններից առաջինն է՝

Սոկրատ  
(Վաղարշապատ, 1897, էջ 41)

Անանունի ընդմիջարկող  
(ՍեՊ, էջ 18)

Երկուք էին եղբարք միահարք, այլ ոչ ի մօրէ իւրմէ, որ անուն էր Դաղմատիոս... մնա նորա երկու որդիս՝ Գաղոս և Յուլիանոս որքք, զոր առեալ թագաւորն («Կոստանդ Բարեպաշտն»—Գ. Ա.) սնուցաներ զմանկունսն:

Յուլիանոս և Գաղիանոս, որդիք Դաղմատիոսի ումեմն, մնացին որք ի մեկ հօրէ և ոչ ի մարէ, զոր սնուց Կոստանդ Բարեպաշտն...

Այստեղ միաժամանակ նկատվում է, որ Անանունի ընդմիջարկողը չի հասկացել Սոկրատին: Վերջինս Հուլիանոսի հայր Դաղմատիոսի և Կոստանդիանոս Բարեպաշտի մասին է ասում, թե

նրանք եղբայրներ էին «միահարբ, այլ ոչ ի մօրէ իւրմէ», իսկ ընդմիջարկողն այնպես է հասկացել, թե այս տեղեկութիւնը վերաբերում է Հուլիանոսին և Գաղիանոսին:

Ընդմիջարկողի հաջորդ լուսանցազրուելունը նույնպես բաղված է Սոկրատից:

Սոկրատ (էջ 19)

Անանունի ընդմիջարկող (ՍեՊ, էջ 18)

Կոստի քոյր Կոստանդիանոսի կին Լի- Կոստի քոյր թագաւորին Կոստանդէ, կին կիանիա թագաւորին, որ բռնազբօսեալ մեռաւ Լիկիանէ թագաւորին, որ ի բռնազբօսելն մեռաւ: Այս հատվածների մասին տե՛ս Ն. Բյուզանդացու վերոհիշյալ ուսումնասիրութիւնը («Համա», 1893, էջ 276) և Ն. Ակինյանի հոդվածը («Հ. ամս.», 1948, էջ 44—45):

92. «Քազաւորէ Յունաց Իրատիանոս զառաջինն»: Այս բառերից հետո Մակէրը («Pseudo-Sebeos», էջ 28) ենթադրում է բնագրի կորուստ և ֆրանսերեն թարգմանութեան մեջ իր ենթադրած կորուստը վերականգնում է այսպես. «Գրատիանոս զառաջինն, [Արշակ ԼԹ, Շապուհ ԼԳ]»:

93. «Եւ Յալիանոսի պղծոյ»: Այս բառերը Մալխասյանցը (ՍեՊ, էջ 174) իրավացիորեն համարում է ընդմիջարկութիւն. «Ճիշտ ժամանակագրական թվերով՝ Շապուհ 44-րդ տարին, որ է 353, չէ զուգարկում Հուլիանոսի թագավորութեան տարիներին, այսինքն՝ 361—363-ին, իսկ այստեղ, Սերեոսի բերած սինխրոնիկական հաշվով ավելի ևս սխալ է Հուլիանոսի 2 տարիները ժամանակակից դնել Խոսրովի 44-րդ տարուն, որովհետև ըստ Սեբեոսի ցուցակի՝ Հուլիանոսը թագավորել է Շապուհի 19-րդ տարում, և նրան հաջորդել են Վաղենտինոս, Վաղես և Գրատիանոս: Այս պատճառով և «Յուլիանոսի պղծոյ» համարում ենք ընդմիջարկութիւն»: Մալխասյանցից առաջ «Յուլիանոսի պղծոյ» արտահայտութիւնը կասկածելի է համարել Թ. Միհրդատյանը (Միհրդ., էջ 36, ծ. 1):

94. «Շապուհ ՄԱ, ի տէրոսբաւն ի վերայ Հայոց»: Մեզ հասած ձեռագրերը չունեն «ի վերայ Հայոց»: Միհրդատյանը դա հրատարակել է ըստ իր ունեցած հին ձեռագրի: Այդ մասին նա գրում է. «Ի միւս օրինակին ոչ գոյ փակագծիւ նդեալն»: Ք. Պատկանյանը և Ստ. Մալխասյանցը նույնպես քննարկվող բառերը վերցրել են փակագծերի մեջ: Մենք փակագծերը վերացրել ենք՝ նկատի ունենալով, որ հին ձեռագրի ընթերցվածքը ճիշտ է:

95. «Ղեօթնեւորդն»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր բնագրերն ունեն «զերկոտասաներորդն»: Ուղղել ենք «զեթնեւորդն», որովհետև Շապուհի թագավորութեան 51-րդ տարին (Շապուհ ՄԱ, ի տէրութեան ի վերայ Հայոց») համընկնում է Հայաստանում նրա թագավորած տարիների ոչ թե 12-րդ (ինչպես որ է ձեռագրում), այլ՝ 7-րդ տարվան: Ուղղումը կատարել ենք հետևյալ հաշվումների հիման վրա: Անանունն ինքը հայտնում է, որ Շապուհը հայոց Արշակ թագավորին ձերբակալել և նրա թագը խել է իր թագավորութեան 44-րդ տարին («Յամի հԳ-երորդի Շապուհ արքային պարսից... ըմբռնի Արշակ Հայոց արքայ ի Շապուհ արքայն Պարսից: Եւ տիրէ Շապուհ ի վերայ Հայոց ամս ժԲ սրով և հրով և գերութեամբ»): Հետևաբար՝ 44 + 7 = 51 («Շապուհ ՄԱ»): Քիչ հետո էլ հայտնվում է, որ Պապը թագավորել է Շապուհի 56-րդ տարին («Յամի ՍԶ-երորդի Շապուհ արքային Պարսից... թագաւորեցոյց Թէոդոս զՊապ որդի Աջշակայ ի վերայ աշխարհին Հայոց»): Ուրեմն՝ եթե Շապուհը Հայաստանում թագավորել է 12 տարի և այդ 12 տարին վերջացել է նրա թագավորութեան 56-րդ տարում, կնշանակի 51-րդ տարին համընկնում է իսկապես 7-րդ և ոչ՝ 12-րդ տարվան, Յ. Մակէրը («Pseudo-Sebeos», էջ 28) մեկ տարով տարբեր է հաշվել տարիների գումարը և «զերկոտասաներորդն»-ը սրբագրել է «զութեւորդն»:

96. «Յամի Հ-երորդի Շապուհ արքայի Պարսից, Երկրորդ ամի Վարազդատայ արքայի Հայոց՝ քազաւորէ Յունաց Արկաղէոս»: Ն. Ադոնցը («Начальная история», էջ 70) «յամի Հ-երորդի»-ն սրբագրել է «յամի ՀԳ-երորդի»: Սակայն սա չի համապատասխանում Անանունի տվյալներին: Անանունը հայտնում է, որ Հայոց արքա Վարազդատը թագավոր է դարձել Շապուհի թագավորութեան 69-րդ տարին («Յամի ԿԹ-երորդի Շապուհ արքային Պարսից... թագաւորէ ի վերայ Հայոց Վարազդատ»): Հետևաբար՝ Վարազդատի թագավորութեան երկրորդ տարին ըստ Անանունի համընկնում է Շապուհի թագավորութեան 70-րդ («յամի Հ-երորդի Շապուհ արքայի») և ոչ թե 73-րդ տարվան, ինչպես կարծել է Ադոնցը:

97. «Յամի Երկրորդի Վաւամի», Յ. Մակէրը («Pseudo-Sebeos», էջ 29) «երկրորդի»-ն սրբագրում է «երրորդի»: Բայց բնագիրը սրբագրման կարիք չունի:

98. «Յունաց Անարիս՝ ամս ԻԲ»: Այս արտահայտութիւնից հետո Մակէրը («Pseudo-Sebeos», էջ 29) ենթադրում է բնագրի կորուստ և անկունավոր փակագծերի մեջ ֆրանսերեն թարգմանութեամբ վերականգնում է ենթադրյալ սրբագր, որը զրաբար կունենար հետևյալ տեսքը. [«և թագաւորէ արքայն Պարսից Յազկերտ՝ ամս ԻԱ. Ոնորիս՝ Ա»]:

99. «Յագկերտ զառաջինն»: Այս արտահայտությունից առաջ Մալխասյանցը (ՍԵՊ, 19) ենթադրում է բնագրի կորուստ և տողատակի ծանոթագրության մեջ ներկայացնում իր ենթադրած պակասը այսպես. «և ի նմին ամի թագաւորէ Պարսից»:

100. «Թարձաւ թագաւորութիւնն Հայոց, ու տեհաց ամս նն»: Հայոց Արշակունիների թագավորության տևողությանը վերաբերող այս ոչ ճիշտ տվյալի (405 տարի) մասին մանրամասն տե՛ս Ք. Պատկանյանի (Патк., էջ 130, ծ. 45) և Նո. Մալխասյանցի (Малх., էջ 147, ծ. 35) ծանոթագրությունները, ինչպես նաև Պ. Անանյանի նշված աշխատության 96—99, 122 էջերը:

101. «Եւ Ոնորիս՝ ԻՔ. Վաւա՝ Բ: Թէղոս՝ զառաջինն»: Այս տեղեկությունը գտնվում է «Երկակի կանոնում», այսինքն այն ցանկում, որտեղ համարված են երկուական թագավորների (պարսից և հունաց) անուններ: Հետևաբար, մեր բերած հատվածում պետք է հիշատակված լինեին միայն Վաւան ու Թեղոսը: Այնինչ՝ նշված է նաև Ոնորիսը: Սա ներկա դեպքում ավելորդ անուն է, որովհետև Ոնորիսին վերաբերող տեղեկությունները Անանունն արդեն հայտնել է նախորդ տողերում: Այս անունը կարելի էր հանել, եթե վստահ լինեիր, որ ոչ թե Տեղինակը, այլ գրիչն է անուշադրությամբ կրկնել անունը:

102. «Յամին Լ-երոզի Պերզի թագաւորէ Յունաց Անքիմոս»: Ն. Ադոնցը (.Начальная история, էջ 71) «Լ-երորդի»-ն սրբազրում է «ԼԼ-երորդի», որը չի համապատասխանում Անանունի տվյալներին:

103. «Յամի չորրորի Ձենոնի թագաւորէ Պարսից Ջամասպ՝ Բ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «Ջամասպ՝ Ը»: Ուղղել ենք «Ջամասպ Բ»:

Երկաթագիր Բ և Ը տառերի շփոթի հետևանքով աղճատված բնագրում Ջամասպի թագավորության տևողությունը երկուսից (Բ) դարձել է ութ (Ը): Քանի որ այս աղճատումը տեղի է ունեցել համաժամանակյա (սինքրոնիկ) աղյուսակում, որտեղ Ջամասպի թագավորության տարիները նշված են բյուզանդացի թագավոր Ձենոնի տարիների հետ համաձայնաբար, ուստի դժվար չէ Ձենոնի միջոցով ստուգել Ջամասպի տարիների իրական տևողությունը:

Այսպես. աղյուսակում հայտնվում է, որ Ջամասպը զահ է բարձրացել Ձենոնի չորրորդ տարին, հետևաբար, եթե նա իրոք Ը (=ութ) տարի թագավորած լինե՛ր՝ նրա թագավորության վերջին տարին կհամընկներ Ձենոնի թագավորության տասներկուերորդ տարվա հետ (4 + 8 = 12):

Աղյուսակում, սակայն, Ձենոնի թագավորության հինգերորդ տարին արդեն Պարսկաստանում թագավոր է դառնում Ջամասպի փոխարեն Կավատը («Եւ ի վերայ Ե-երորդի ամի Ձենոնի կայսեր թագաւորէ Պարսից Կաւատ»): Ուրեմն, Ջամասպը թագավորել է երկու տարի՝ Ձենոնի չորրորդ և հինգերորդ տարիների ընթացքում:

Այս փաստի հիման վրա «Ջամասպ Ը» աղավաղված արտահայտությունը սրբագրել ենք «Ջամասպ Բ» ճշգրիտ ձևով, որը պահպանվել է նաև Ստեփանոս Ասողկի, Մխիթար Անեցու և Մյուսների մոտ: (Հմմտ. Ասողկի, 1385, էջ 112, ծ. 4, Մխ. Անեցի, 1879, էջ 33, տե՛ս նաև Dulaurier, Recherches, էջ 140, Адонц, Нач. ист., էջ 71):

104. «Յամի երորդի Յուստիանոսի կայսեր թագաւորէ Խուրով ողդի Կաւատայ՝ ամս ԽԸ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն՝ «...ամս ԽԷ»: Ուղղել ենք՝ «ամս ԽԸ»:

Սրբազրվող արտահայտությունը նույնպես հանդիպում է համաժամանակյա աղյուսակում. Հայտնի է, որ այս աղյուսակի համար հիմք է ծառայել բուն «Սեբեոսի Պատմությունը»: Սրա միջոցով կարելի է ստուգել առաջարկվող սրբազրությունը: Այնտեղ կարդում ենք. «Այս Խոսրովի ժամանակս իբրոյ թագաւորութեանն կապեաց զՊահակն Ճորայ և Աղուանից, կայաւ ձերբակալ զարբայն Եգերացոց և առ մարտիս զԱնտիոք Պիսիդացոց, և վերեալ նստոյց առ թագաւորական կայսերին... կայաւ սա զթագաւորութիւնն ամս ԽԸ»:

Ասողկի, Սամվել Անեցիի և Մխիթար Անեցիի նույնպես Խոսրովի թագավորած տարիների գումարը նշում են ԽԸ: Ուրեմն սկզբնական բնագրում եղել է ԽԸ:

105. «Յամի Է-երոզի Մարիկայ կայսեր թագաւորէ Պարսից Խուրով»: Ն. Ադոնցը (Начальная история, էջ 71) «Է-երորդի»-ն սրբազրում է «Թ-երորդի», որը, սակայն, չի համապատասխանում Անանունի մեզ հասած բնագրի հաշվումներին:

106. «Յամի Ի-երոզի Խուրովայ Պարսից արքային թագաւորէ Յունաց Երակոս ողդի Երակի՝ ամս Լ: Խուրով՝ ԻԲ: Երակոս՝ զառաջինն»: Այստեղ բացահայտ հակասություն գոյություն ունի: Նախ հայտնվում է, որ Հերակոս թագավոր է դառնում Խոսրովի 20-րդ տարին («յամի Ի-երորդի Խոսրովայ... թագաւորէ... Երակոս»), իսկ հետո Խոսրովի ոչ թե 20-րդ, այլ 22-րդ տարին է համարվում Հերակի թագավորության առաջին տարվան համընկնող տարի («Խոսրով ԻԲ: Երակոս զառաջինն»): Այս հակասությունը կարելի էր վերացնել, եթե 20-ը դարձնեիր 22, այսինքն՝ «յամի Ի-երորդի Խոսրովայ» արտահայտությունը սրբագրեիրք «յամի ԻԲ-երորդի»:

հոսրովայ»։ Սա կհաստատվեր քննարկվող հատվածին նախորդող հատվածում գտնվող թվերի միջոցով։ Այդ հատվածում հայտնվում է, որ հոսրովի 14-րդ տարին զահ է բարձրանում Հերակլի նախորդ՝ Փոկասը և թագավորում է ութ տարի («Յամի ԺԳ-երորդի հոսրովայ թագաւորէ Յունաց Փոկաս՝ ամս Է»)։ Ուրեմն՝ եթէ Փոկասը հոսրովի 14-րդ տարվանից սկսած ութ տարի թագավորում է և հետո զահ է բարձրանում Հերակլը, կնշանակի Անանունի հաշվումների համաձայն՝ Հերակլը զահ է բարձրացել հոսրովի 22-րդ տարին, հետևաբար կարելի է «յամի Ի-երորդի հոսրովայ»-ը դարձնել «յամի ԻԲ-երորդի հոսրովայ»։

Այս ուղղումը կհամապատասխաներ նաև «Սեբեոսի Պատմությանը»։ Գիտենք, որ Անանունի իր ժամանակագրական աղյուսակը կազմել է, օգտվելով նաև «Սեբեոսի Պատմության» տվյալներից, իսկ այս Պատմության մեջ նույնպես հայտնվում է, որ Հերակլը զահ է բարձրացել հոսրովի 22-րդ տարին. «յամի քսաներորդի երկրորդի թագաւորութեանն հոսրովայ... նստոյց (Հերակլի հայրը նստեցրեց—Գ. Ա.) զՀերակղոս զորդի իւր յաթոռ թագաւորութեանն»։

Բայց այս փաստերի կողքին գոյություն ունի նաև այն ճշմարտությունը, որ արդի ճշգրիտ դիտական ժամանակագրության համաձայն Հերակլը զահ է բարձրացել հոսրովի ոչ թե 22-րդ, այլ՝ 20-րդ տարին՝ 610 թ., այսինքն՝ Տիշտ այն 20-րդ տարին, որը գտնում ենք նաև Անանունի առաջին տվյալի մեջ։ Սրան ավելանում է նաև այն փաստը, որ Միհրդատյանի հրատարակած «Սեբեոսի Պատմության» մեջ նույնպես հանդիպում ենք 20 թվանշանին. «յամի քսաներորդի թագաւորութեանն հոսրովայ» (Միհրդատյան, էջ 125)։ Հնարավոր է, որ Անանունը օգտված լինի «Սեբեոսի Պատմության» հենց այսպիսի մի ձեռագրից և հենց այդ ձեռագրից է գալիս Անանունի «յամի Ի-երորդի հոսրովայ» արտահայտությունը։

Այսպիսով՝ սրբագրության օգտին և նրա դեմ քվեարկող փաստերն ունեն գրեթե հավասար ուժ։ Ուստի բնագիրը թողնում ենք նույնությամբ։

107. «Ապա Բքար բամբիշն»։ հոսրովի դուստր Բոռանի անունը Անանունի բոլոր ձեռագրերում և տպագիր հրատարակություններում գտնում ենք աղավաղված Բքար կամ Բքոն ձևով։

Ք. Պատկանյանը («Опыт истории династии Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями», СПб., 1863, էջ 83) և Ֆ. Յուսսախն («Iranisches Namenbuch», Marburg, 1895, էջ 71) բերում են Բորան անվան հիշատակություններ հունական, ասորական, արաբական, պարսկական և այլ աղբյուրներից, որոնց մեջ երբեք Բքոր ձևը չի հանդիպում։ Հյուրըմանը («Arm. Gramm.», 33) ցույց է տվել, որ Բքորը Բորան անվան աղավաղումն է։ X դարի արաբ ժամանակագիր Տարաբլին (839—17 փետրվարի 923) իր ժամանակագրության մեջ բազմիցս հիշատակում է Բորանի անունը (տե՛ս Nöldeke-ի թրգմ., էջ 348, 385, 390—392, 433—434) և միշտ՝ «Բորան» ձևով։

Կասկած չկա, որ Բորանի անունը պարունակող երկանուն ցանկը Անանունը կազմել է «Սեբեոսի Պատմության» հիման վրա։ Հետևաբար՝ կարելի կլինի ենթադրել, որ «Բքոր» սխալագրությունը գալիս է հենց «Սեբեոսի Պատմության» հեղինակից։ Սակայն այդ Պատմությունից օգտված մյուս հեղինակների և այլ մատենագիրների երկերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Սեբեոսի Պատմության» նախնական բնագրում եղել է ոչ թե «Բքոր», այլ՝ «Բոր» կամ «Բորն» («Բորան») ուղիղ ձևը։ Միայն Ասողիկի և Անանունի օգտագործած ձեռագրերում է, որ անունն արդեն աղավաղված է եղել «Բքոր» ձևով։ Մեզ հասել է «Սեբեոսի Պատմության» հենց այս աղավաղված ձեռագրից ընդօրինակված բնագիրը, որտեղ նույնպես գտնում ենք «Բքոր» վրիպակը (հմմտ. ձ. № 2639, էջ 526 և բոլոր նախկին տպագիր ու ձեռագիր բնագրերը)։

Քանի որ Անանունն օգտվելով արդեն աղճատված բնագրից՝ գրել է «Բքոր», հասկանալի է, որ մենք չենք կարող սրբագրել նրա «Բքորը», որովհետև նա հենց այդպես էլ գտել ու ընդօրինակել է իր աղբյուրը։ Բայց որ «Սեբեոսի Պատմության» նախնական բնագրում եղել է «Բոր» կամ «Բորն», դա սպասցուցվում է «Սեբեոսի Պատմության» ավելի անաղարտ ձեռագրերից օգտված Թովմա Արծրունու և Վարդան Արևելցու, ինչպես նաև երկու այլ մատենագիրների՝ Սամվել Անեցու և Կիրակոս Գանձակեցու երկերի ուսումնասիրությամբ։ Այս բոլոր պատմիչներն ունեն մեր նշած ուղիղ ձևը։ Միայն Սամվել Անեցու տպագիր բնագրի համար հիմք ծառայած ձեռագրերում է, որ «Բորն»-ի փոխարեն գրված է «Բորմ» (հմմտ. Սամվել Անեցի, Վաղարշապատ, 1893, էջ 79)։ Նյուդեկեն («Tabari», էջ 309—392) Կեդրենոսի գրքով մատնացույց է անում Բորանի անվան աղավաղության մի ձև՝ Բարաք. որը հիշեցնում է Սամվել Անեցու «Բորմ» ձևը։ Բոլոր դեպքերում, նույնիսկ եթե անունն աղավաղված է, հանդիպում ենք միայն և միայն «Բոր» (և երբեք՝ «Բքոր») ձևին։

«Սեբեոսի Պատմության» նախնական անաղարտ բնագրի տեղը ամենից լավ պահպանվել է Թովմա Արծրունու երկում։

«Պատմութիւն Արեւոսի»  
(էջ 100)

Թովմա Արծրունի  
(Թիֆլիս, 1917, էջ 167)

Իսկ Խոռեմայ յատր միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական և նստեալ ի վերայ երիվարի շրջէր ի մէջ զարուն ցուցանել զինքն. յանկարծակի ի թիկանց կուէ յարձակեցան ի վերայ նորա, հարին զնա և սատակեցին: Եւ թագաւորեցոցին զԲորն, դուտրը Խոսրովայ, որ էր կին նորին, և կարգեցին հրամանատար ի դրանն զԽոսրոյ Որմիզդ... հարեալ սպանին զնա: Եւ կալաւ բամբիշն զթագաւորութիւնն ամս Բ և մեռաւ:

Եւ Խոռեմայ առեալ զթագաւորութիւնն՝ յատր միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական և հեծեալ յերիվար արբունի, և շրջէր ի մէջ ամեհայն զօրացն իւրոց, ցուցանել զինքն և բաշալներել զզօրսն. և յանկարծակի ի թիկանց կողմանց յարձակեալ ի վերայ նորա արանց՝ հարեալ սատակեցին զնա: Ապա թագաւորեցոցին զԲորն՝ զդուտրն Խոսրովայ, որ էր կին նորին, որում բամբիշն կոչէին. և կարգեցին հրամանատար ի դրանն զԽոսրոյ Որմիզդ, որ և սպանաւ ի բամբշանէն, որ կոչէին Բոր: Եւ կալաւ Բորն զթագաւորութիւնն ամս Բ և մեռաւ:

Ինչպես տեսնում ենք, Արծրունին գրեթե բառացի արտագրել է «Արեւոսի Պատմութիւնը»: Նա երեք անգամ գործածում է «Բոր» կամ «Բորն» ձևը, որոնք պարզ ցույց են տալիս, որ «Արեւոսի Պատմութիւն» նախնական բնագրում նույնպես եղել են այդ ձևերը: Հետեւաբար՝ Անանունի «Բբոր» ձևը իսկապես բխում է «Արեւոսի Պատմութիւն» աղճատված և ոչ նախնական բնագրից:

108. «Բամբիշ՝ զառաջինն»: Անանունը կարծել է, թէ «բամբիշ» բառը անուն է և հունաց ու պարսից թագավորների երկանուն ցանկը կազմելիս այդ հասարակ բառը (որը նշանակում է «թագուհի») գործածել է որպէս պարսից թագուհու անուն, գրելով՝ «Երակղոս՝ ԻԱ, Բամբիշ՝ գառաջինն»: Այս փաստը ոչ միայն ցույց է տալիս, որ Անանունը և «Արեւոսի Պատմութիւն» հեղինակը մինևնույն անձնավորութիւնները չեն, այլև այն, որ Անանունը ճիշտ չի հասկացել իր օգտագործած «Արեւոսի Պատմութիւն» հեղինակին և հակասում է նրան:

109. «Յամի ԽԻ-Երոզդի երանելոյն Երակղի կայսեր, և երկրորդ ամի» բառերից հետո Անանունի բնագիրն ունի պակաս, որը փորձել է լրացնել Ստ. Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 22 և 174—175): Իր սրբագրութիւնը Մալխասյանցը բացատրում է այսպես (ՍԵՊ, էջ 174—175). «Բոլոր ձեռագիրներն այստեղ ունին... և յերկրորդ ամի միաբանեալ Պարսից արքայի ընդ Իսմայելացիս հետ արտաքս ի Սինէ անապատէ: Խոսքը չի կապվում նախընթաց խոսքի հետ, և Պարսից ոչ մի թագավոր չի միաբանել Իսմայելացոց հետ: Միհրդատյանը լրացրել է բնագիրը՝ ավելացնելով՝ «որ ելին արտաքս ի Սինէ անապատէ»: Սակայն մյուս անտեղութիւնների վրա ոչ ոք ուշադրութիւն չէ դարձրել: Աղավաղութիւնն այստեղ, մեր կարծիքով, առաջ է եկել ոչ թէ գրիչների սխալից կամ անուշադրութիւնից, այլ նրանից, որ մայր օրինակում, որից արտագրված է այժմյան ձեռագիրը՝ այստեղ որևէ պատճառով զրվածքը վնասված է հաջորդաբար երեք տողերի վերջում: Սկզբնապես զրված է նշել:

և յերկրորդ ամի Յակեբտի  
պարսից արքայի միաբանեալ հրէից  
ընդ Իսմայելացիսն, ...ելին  
արտաքս ի Սինէ անապատէ, ևն:

Նոտագրված բառերը մայր ձեռագրում եղծվել են, և գրիչներն արտագրել են ինչ որ մնացել է, տեղափոխելով միայն «միաբանել» բառը: Մենք հատվածը ամբողջացրինք ու վերականգնեցինք ըստ Սեբեոսի»:

Սույն սրբագրութիւնը, սակայն, ենթակա է ճշգրտման: Բանն այն է, որ Անանունի նախնական բնագրում հրեաների և իսմայելացիների միաբանութիւն մասին խոսք չի եղել: Դա պարզվում է ՄՄ № 1898 ձեռագրի միջոցով: XIII դարում ընդօրինակված սույն ձեռագրի (որը մի քանի հարյուրամյակով ավելի հին է, քան «Արեւոսի Պատմութիւն» մեզ հասած հնագույն ձեռագիրը) 253բ էջում պահպանվել է մեզ հետաքրքրող նախադասութիւնը, որի մէջ բացակայում է Մալխասյանցի ավելացրած «հրէից» բառը: Ահա այդ նախադասութիւնը՝ «Արեւոսի Պատմութիւն» հնագույն ձեռագրում աղճատված նախադասութիւն համեմատութիւնը՝

ձ. № 1898, էջ 253բ

ձ. № 2639, էջ 495բ

Ի յառուրս Հերակլեայ կայսեր՝ Ի ԻՊ ամին և Պարսից Յազկերտի յերկրորդին՝ միաբան իսմայելացիքն ի Սին անապատէ ելին արտաքս՝ հրամանաւ Աստուծոյ առնել անապատ զամենայն երկիր:

Յամի ԻՊ-երրորդի երանելոյն Երակղի կայսեր և յերկրորդ ամի Յազկերտի Պարսից արքայի ընդ իսմայելացիսն արտաքս ի Սինէ անապատէ հրամանաւ Աստուծոյ՝ առնել անապատ միանգամայն զամենայն երկիր:

Այս երկու ձեռագրական տարրնթերցվածների հիման վրա մենք վերականգնում ենք նախնական բնագիրը, այսպես՝

Յամի ԻՊ-երրորդի երանելոյն Երակղի կայսեր և յերկրորդ ամի Յազկերտի Պարսից արքայի միաբանեալ իսմայելացիքն՝ ելին արտաքս ի Սինէ անապատէ՝ հրամանաւ Աստուծոյ առնել անապատ միանգամայն զամենայն երկիր:

Այստեղ խոսքը Իսմայելացիների 12 առանձին ցեղերի և ոչ թե՛ հրեաների և իսմայելացիների միաբանության մասին է:

110. Բայց զամս եկամտիցն և ծառայիցն քազաուրելոցն, որպէս Խոռեմայն և զԽոռոխ Ռւմզղին: Այստեղ Անանունը Խոռոխ Ռւմզղին նշում է Խոռեմի կողքին որպէս թագավորի: Սա թյուրիմացութիւն է, որը բխում է «Սեբեոսի Պատմության» սխալ ըմբռնումից: Այս Պատմության մեջ հայտնվում է, որ Բոր կամ Բորան թագուհու օրոք պարսից արքունիքի հրամանատար է կարգվում Խոռոխ Ռւմզղը. «Եւ կարգեցին հրամատար ի Դրանն զԽոռոխ Ռւմզղ» (ՍԵՊ, էջ 100): Ահա այս տեղեկությունը սխալ հասկանալով՝ Անանունը Խոռոխ Ռւմզղին համարել է թագավոր և նրա անունը գրանցել է թագավորների շարքում, Խոռեմի անվան կողքին:

111. «Յամի Թ-երրորդի Պարսից արքայի Յազկերտի վախճանի երանելին Երակղես»: Բոլոր տպագիրները «յամի Թ-երրորդի»-ի փոխարեն ունեն «յամի Զ-երրորդի»: Սա չի համապատասխանում ո՛չ «Սեբեոսի Պատմությանը» (որի հիման վրա կազմված է ժամանակագրությունը), ո՛չ էլ Իրական պատմական ժամանակագրությանը: Հայտնի է, որ Հերակղ կայսրը վախճանվել է Հազկերտի (սկսել է թագավորել 632—633 թ.) ոչ թե 6-րդ (ինչպես տպված է նախորդ հրատարակություններում), այլ՝ 9-րդ տարին՝ 641 թ.: Հետևաբար՝ մենք ճշգրիտ ենք համարում մեկ հասած հնագույն ձեռագրի (№ 2639) և նրանից արտագրված մյուս ձեռագրերի ընթերցվածքը. «յամին իններորդի», որի հիման վրա էլ սրբագրել ենք բնագիրը:

Ն. Աղոնցը («Начальная история», էջ 71) առաջարկել է սրբագրել «Ը-երրորդի», բայց ավելի ճիշտը հիշյալ ձեռագրերում պահպանված թիվն է:

112. «Կոստաս որդի Կոստանդեայ»: Բոլոր ձեռագրերն ունեն «Կոստաս»: Մակկերը («Pseudo-Sebêos», էջ 34) ուղղել է «Կոստաս», հետևելով հաջորդ տողում հանդիպող այդ ճիշտ ձևին, որի հիման վրա բնագիրը սրբագրել ենք նաև մենք:

113. «Յազկերտ Ժ-երրորդ»: Կոստաս զառաջինն: Բոլոր տպագիրներն ունեն «Յազկերտ Է-երրորդ»: Սա ակնհայտ վրիպակ է: Իրականում Հազկերտի ոչ թե յոթերորդ, այլ տասներորդ տարին է համընկնում Կոստասի առաջին տարվան: Հազկերտն սկսել է թագավորել 632—633 թ., իսկ Կոստասի թագավորության առաջին տարին 641—642 թթ. է: Հետևաբար Կոստասի առաջին տարին կհամընկներ Հազկերտի իսկապես 10-րդ տարվան: Զեռագրերը պահպանել են հենց այդ ճշգրիտ թվանշանը. «Յազկերտ՝ Ժ-երրորդ: Կոստաս՝ զառաջինն»: Սրա հիման վրա էլ մենք սրբագրել ենք բնագիրը:

Մեր սրբագրությունը հաստատվում է նաև սրբագրվող հատվածին անմիջապես հաջորդող հետևյալ տեղեկությամբ. «Յազկերտ Ի: Կոստանդին ԺԱ»: Ինչպես տեսնում ենք, Հազկերտի 20-րդ տարին այստեղ համընկնում է Կոստանդինի 11-րդ տարվան: Սա հնարավոր է միայն այն դեպքում, եթե Հազկերտի 10-րդ (և ոչ թե՛ տպագրերի 7-րդ) տարին համընկներ Կոստանդին առաջին տարվան: Անանունի համար հիմք է ծառայել «Սեբեոսի Պատմության» հետևյալ հատվածը. «Եւ եղև յառաջնում ամի Կոստանդեայ թագաւորին Յունաց, եւ յամի տասներորդի Յազկերտի արքային Պարսից» (ՍԵՊ, էջ 113):

Վրիպակն առաջին անգամ նկատել և ուղղել է Ն. Աղոնցը («Начальная история», էջ 71), սակայն՝ Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1969, էջ 103—105):

114. «Յազկերտ Ի: Կոստանդին ԺԱ»: Տպագիր բնագրում այս հատվածին նախորդում է

«Յազկերտ» է (7)-երորդ: Կոստաս՝ զառաջինն»: Սրա հիման վրա Հ. Հյուբշմանը («Zur Geschichte Armeniens», էջ 6) հակասություն է մատնանշել Անանունի հատվածում: Եվ հիրավի, եթե Հազկերտի 7-րդ տարին իսկապես համապատասխանի Կոստասի առաջին տարվան, ապա Հազկերտի 20-րդ տարին պետք է համապատասխաներ Կոստանդինի 14-րդ տարվան: Իրականում, սակայն, համապատասխանում է Կոստանդինի 10-րդ տարվան: Իսկ 14 տարվա հակասությունը բխում է նրանից, որ սույագիր բնագրերում Կոստանդինի առաջին տարվան համադրված է Հազկերտի 7-րդ տարին, որը սխալ է և նրա փոխարեն պետք է համադրվեր 10-րդ տարին: Այս սխալը մենք վերացրել ենք՝ «7-րդը» սրբագրելով «10-րդ»: Տե՛ս ծ. 113. «Յազկերտ Ժ-երորդ: Կոստաս զառաջինն»:

115. «Կոստանդին ԺԱ: Արբայն Իմայելի ԺԹ»: Ձեռագրերը և սույագիր հրատարակությունները «ԺԹ»-ի փոխարեն ունեն «Թ»։ սա պահնհայտ սխալ է, որը նկատել է Հ. Հյուբշմանը («Zur Geschichte Arm.», էջ 6) և սխալն ուղղել է այսպես. «Արաքայն Իմայելի ԺԹ»:

Այս ուղղումը մենք հաստատում ենք հետևյալ փաստերով: Թ-ից առաջ նախնական բնագրում եղած Ժ-ի անկման հետևանքով տարեթվերի հաշիվները մեզ հասած ձեռագրերում սխալ են: Աղճատված բնագրի համաձայն՝ Իմայելի արքայի Թ (= 9-րդ) տարին համընկնում է Կոստանդինի ԺԱ (= 11-րդ) տարվան, այսպես. «Կոստանդին ԺԱ: Արքայն Իմայելի Թ»: Եթե սա լիներ ճիշտ տեղեկություն, ապա Իմայելացոց արքայի Ի-երորդ (= 20-րդ) տարին պետք է համապատասխաներ Կոստանդինի 22-րդ տարվան, այնինչ՝ ձեռագրի հաջորդ տողում Կոստանդինի 22-րդ տարվա փոխարեն գտնում ենք 12-րդ տարին՝ «Յերկոտասան» (= 12) ամի Կոստանդինի, և Ի-երորդ (20-րդ) ամի Իսամելացուց տէրութեանն՝ բարձա տէրութիւնն Պարսից»:

Այսպիսով, առաջին և երկրորդ տեղեկություններն իրար չեն հարմարվում և Կոստանդինի կապակցությամբ տալիս են տասր տարվա տարբերություն: Այդ տարբերությունն ավելի պարզ է երևում Իմայելացի թագավորի կապակցությամբ: Աղյուսակում նշված է, որ Կոստանդինի 11-րդ տարին համընկնում է Իմայելի արքայի 9-րդ տարվան. այս դեպքում մի տարի անց, այսինքն՝ Կոստանդինի թագավորության 12-րդ տարում, Իմայելացի թագավորի տարիներն էլ պետք է մեկ տարով աճեին և 9-ից դառնային 10: Իրականում, սակայն, բնագրի երկրորդ մասում տասի փոխարեն կարդում ենք քսան: Սրանից պարզ երևում է, որ Իմայելացի թագավորը նախորդ տարին, այսինքն՝ Կոստանդինի թագավորության 11-րդ տարում, ոչ թե Թ (= 9), այլ ԺԹ (= 19) տարվա թագավոր էր: Տասը տարվա այս բացարձակ սխալը կվերանա, եթե վերականգնենք նախնական բնագրում եղած Ժ (= 10) թվանշանը իմայելացոց արքային վերաբերող Թ-ից առաջ: Այս դեպքում բնագիրը կկարգավորվի և այլևս անհամաձայնություն չի մնա նրա առաջին և երկրորդ մասերի միջև և այդպիսով Կոստանդինի երկոտասան (= 12) տարին իրոք կհամապատասխանի Իմայելացոց արքայի Ի-երորդ (= 20-րդ) տարվան, ինչպես որ կարդում ենք հատվածի երկրորդ մասում՝ «Յերկոտասան ամի Կոստանդի և Ի-երորդ ամի Իմայելացուց տէրութեանն բարձա տէրութիւնն Պարսից, որ կալա Շլի ամ»: Այս նկատուումով էլ մենք բնագիրը սրբագրել ենք այսպես. «Եւ թագաւորեաց Յազկերտ ի վերայ աշխարհին Պարսից, ամս Ի: Յազկերտ՝ Ի: Կոստանդին՝ ԺԱ: Արքայն Իմայելի՝ ԺԹ»:

Առաջարկվող սրբագրությունը հաստատվում է մեր կատարած հաշվումներից բացի նաև բուն «Սերեոսի Պատմության» տվյալներով: Այստեղ (էջ 139—140) գրեթե միևնույն բառերով պատմվում է. «Եւ եղև ի քսաներորդի ամի Յազկերտի արքայի Պարսից, ի մետասան ամի Կոստասի կայսեր, որ կոչեցաւ յանուն հար իւրոյ Կոստանդին և յամին ԺԹ-երորդի Իմայելացուց տէրութեանն... զարացն Թէտուլաց կալեալ զՅազկերտ սպանին, որ կալա ղթագաւորութիւնն ամս Ի: Եւ բարձա տէրութիւնն Պարսից և ազգին Սասանայ, որ կալան ղթագաւորութիւնն ամս Շեթ»:

Ի դեպ՝ այս հատվածը միաժամանակ ցույց է տալիս, որ «Սերեոսի Պատմությանը» թյուրիմացաբար միացած հատվածի հեղինակը ոչ միայն որոշակիորեն օգտվել է բուն «Սերեոսի Պատմությունից», այլև գրեթե արտագրություն է կատարել նրանից: Դրա լավագույն ապացույցն են Պարսից տերության անկմանը վերաբերող խոսքերը, որոնք և՛ հատվածում, և՛ «Սերեոսի Պատմությունում» միևնույնն են: Այդպես են նաև Կոստանդինի անվան բացատրությունը և այլ փաստեր:

116. «Բարձա տէրութիւնն Պարսից, որ կալա Շլի ամ»: Անանունի այս տեղեկությունը բաղված է «Սերեոսի Պատմությունից», որտեղ, սակայն, «Շլի»-ի փոխարեն նշված է «Շեթ» (էջ 140): Դժվար է ասել, թե երկուսից ո՞րն է ճիշտ: Հ. Հյուբշմանը («Zur Geschichte Armeniens», էջ 10) գրում է. «Սասանյանների թագավորության ճշմարիտ տեղությունը հայտնի չէ ոչ մի հայ պատմիչի»: Արաբ և ասորի պատմիչները նույնպես համերաշխ չեն այս հարցում:

Ֆ. Մակլերը («Pseudo-Sebeos», էջ 151) հավաքել է մի շարք հակասական տեղեկություններ Քովմա Արծրունու, Ասողիկի, Սամվել Անեցու, Միքայել Ասորու, Մխիթար Այրիվանեցու, Ղևոնդի, Վարդանի, Քրանս. գիտնականներ Լըրոյի և Սեն Մարտենի, Նյուդեկեի հրատարակած Տաբարիի, Մարիբաս Քալդոյոյի և այլոց գրքերում:

Ստ. Մալխասյանցն Ասողիկի Պատմության ծանոթագրություններից քաղել և «Սեբեոսի Պատմության» ծանոթագրությունների մեջ է զետեղել Սասանյան թագավորների թագավորած տարիների ցուցակն ըստ Ք. Նյուդեկեի և բյուզանդական կայսրներին՝ ըստ Մյուրալդի: Սա կարևոր ցուցակ է, և մենք քաղում ենք նույնությամբ:

Սասանյան թագավորներ		Բյուզանդական կայսրեր	
Հազկերտ Ա., նստավ	399	Արկադիոս (և Ոնորեսո) նստավ	395
Վահրամ Գ Չոր	420	Թեոդոս Փոքր	408
Հազկերտ Բ	438	Մարկիանոս	450
Որմիզդ Գ	457	Կոն	457
Պերոզ	457 կամ 459	Կոն Փոքր	474
Վաղարշ	434	Զենոն	474
Կավատ	488	(Բասիլիսկոս, Ոնտոս	
(Ջամասպ)		Զենոն 12)	
Խոսրով Ա. Անուշրովան	531	Անաստաս	491
Որմիզդ Գ	578	Հուստինոս	518
Խոսրով Բ Ապրվեզ	590	Հուստինիանոս	527
(Վահրամ Զ. Չորին, Վստամ)		Հուստինոս Բ	565
Կավատ Ե Շերոյե	627	Տիբեր	578
Արտաշիր Գ	628	Մորիկ	582
Շահր Վարազ, Բորան, զանազանք	629	Փոկաս	602
Որմիզդ Ե	631	Հերակլոս	610
Հազկերտ Գ	632	Կոստանդին	641
		Կոստանդ	641

117. Հայտնի է, որ մեզ հասած հնագույն ձեռագրում և նրանից արտագրված մյուս բոլոր ձեռագրերում «Սեբեոսի Պատմությանը» նախորդում է Անանունի հատվածը, որպես նրա սկիզբ, որը «Սեբեոսի Պատմությունից» անջատված չէ ոչ մի վերնագրով: Այս երկու տարբեր երկերի միջև, այսինքն՝ Անանունի վերջին նախադասությունից («Յերկուսասան ամի Կոստանդի, և ի Ի-երորդի ամի իսմայելացուց տէրութեանն՝ բարձաւ տէրութիւնն Պարսից, որ կալաւ ՇԼԲ ամ») հետո և «Սեբեոսի Պատմության» առաջին նախադասությունից («Եւ եղև ի նուազել ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Հայաստան աշխարհի, ի բառնալ տէրութեանն Վառաշապուհ արքայի...») առաջ № 2639 ձեռագրում գտնում ենք «Ե» տառը, այսպես. «Բարձաւ տէրութիւնն Պարսից որ կալաւ ՇԼԲ ամ: Ե: Եւ եղև ի նուազել ժամանակաց...»: Այս «Ե»-ն իմաստ չունի և ակնհայտ վրիպակի տպավորություն է գործում, այդ իսկ պատճառով էլ ձեռագիրն ընդօրինակող ջրիչներից և ոչ մեկն այդ տառը չի ընդօրինակել: «Սեբեոսի Պատմության» հրատարակիչները նույնպես կարևորություն չեն տվել վրիպակին և հարկ չեն համարել նշել դա: Միայն «Նոյեան Աղանի» շաբաթաթերթում (Կ. Պոլիս, 7 մարտի, 1853 թ.) անստորագիր մեկը Միհրդատյանի դեմ ուղղած իր միտումնավոր դիտողության մեջ, ցույց տալու համար, որ Միհրդատյանը ճիշտ չի տպագրել ձեռագիրը, բանն այնպես է ներկայացրել, թե իբր ձեռագրում այդ տառի փոխարեն գրված է «զլուխ Ե»: Սա իրականությանը չի համապատասխանում: Ձեռագրում «զլուխ Ե» չկա: Ինչ վերաբերում է վրիպակային «Ե» տառին՝ դա գալիս է հավանաբար № 2639 ձեռագրի համար հիմք ծառայած գաղափար օրինակից և հանդիսանում է իրեն հաջորդող «Ե» բառի առաջին տառի («Ե») անուշագիր կրկնությունը:

118. «Ազգն Կարճեղովմայեցի իշխանութեանն»: Ք. Պատկանյանը ռուսերեն թարգմանության մեջ (էջ 181) գրում է. «Չնայած՝ այս (Կարճեղովմայեցի— Գ. Ա.) անվան տակ պետք է հասկանալ պարսիկներին, բայց մենք ոչ մի կերպ չկարողացանք որոշել այս կոչումը: Շպիգելի վերծանած պերսիպոլիսյան արձանագրություններում („Die altpersischen Keilinschriften“, Leipzig, 1882, էջ 50, N.Ra. 30 և Glossar, էջ 192) հանդիպում է մինչև այժմ չվերծանված Karka ժողովրդանունը: Ահա թե ինչ է այդ մասին ասում Շպիգելը. Karka-ն ցեղանուն է: Այս ժողովրդի բնակավայրի վերաբերյալ հարցը դժվար է: Benfey-ը մտածում



է, որ դա Xalkes-ն է, Χαλκιδεακή-ի մայրաքաղաքը Մակեդոնիայում: Oppert-ը (Lautsystem, էջ 41, „Inscriptions des Achéménides“, էջ 257) ժամանակին հիշատակել է Καρχηδών-ը և դրա մեջ ցանկանում է տեսնել Carthaco-ն և այժմ էլ նա այդ տեսակետին է մնում... Rawlinson-ը հրաժարվել է իր նախկին տեսակետից, որի համաձայն karka-ն նշանակում է հույներ, նա Glossar-ում համեմատում է Καρχιδος-ի հետ, որոնց Պոլիբիոսը (V, 5) Մարաց (Medien) հարավ-արևմտյան սահմաններում է գետեզում: Lassen-ը ամենից հավանական է համարում Καλανική-ն (որը Պտղոմեոսը տեղադրում է Ասորեստանում Ադիաբենից վերև): Westergard-ը (անդ, էջ 376) տեղադրել է Վրաստանում... միաժամանակ, սակայն, Lassen-ը և Rawlinson-ը հիշատակել են նաև Χαρσ-ը, որն ըստ isidor-ի՝ մի պարթևական (parthische) քաղաք է Media Mattiana-ում: Ես կկամենայի մտաբերել «Շահնամ-մեում» հանդիպող Kergesaren-ը, որի kerge մասնիկը լիովին համապատասխանում է վերոհիշյալ karka-ին»:

Ստ. Մալխասյանցը (էջ 177) հայտնում է, թե Ք. Պատկանյանը «այդ անունը համեմատում է Շահնամեում պատահող Gargasar կոչված տեղի հետ»: Սակայն իրականում դա ոչ թե Ք. Պատկանյանի, այլ Շպիգելի կարծիքն է: Մալխասյանցն ինքն իրավացիորեն չի ընդունում Շպիգելից բերված օրինակներից և ոչ մեկը: «Բոլոր այս համեմատությունները,— գրում է նա,— արժեք չունեն, քանի որ ո՛չ հնչյունով և ո՛չ նշանակությամբ չեն հարմարում Արտաշիր Սասանյան Ստահրացուն»: Եվ իսկպես, «Կարբեղովմայեցի» անվամբ «Սեբեոսի Պատմության» հեղինակը անպայման պետք է գործածած լիներ Սասանյան պարսիկներին վերաբերող ինչ-որ անվանում, որն աղավաղվելով դարձել է «կարբեղովմայեցի»:

Սասանյան Արտաշիրը, այսինքն՝ Սասանյան դինաստիայի հիմնադիրը, որին ակնարկում է «Սեբեոսի Պատմության» հեղինակը ստահրացի էր, մի տեղանուն, որը հազիվ թե աղավաղվելով դառնար «կարբեղովմայեցի»: Մալխասյանցը գրում է. «Թույլ ենք տալիս մեզ մի ենթադրություն անել: Կարելի է կարծել, թե կարբեղովմայեցի բառը աղավաղություն է, և սկզբնապես եղել է շառ եղովմայեցի: Քանի որ մի կողմից հին հայ հեղինակները նայել են Սասանյանների վրա, իբրև հայ Արշակունիների դարավոր դուրսի թշնամիների վրա, և մյուս կողմից Ս. Գրքում հաճախ հիշված եղովմայեցիները, իրանց համարելով Եսապի սերունդ, անընդհատ թշնամական հարաբերության մեջ էին բուն հրեաների (Հակոբի սերնդի) հետ՝ սրա նմանությամբ Սեբեոս եղովմայեցի է կոչում Սասանյաններին՝ հայ Արշակունիների վերաբերմամբ»: Այս բացատրությունը, սակայն, ինչպես երևում է, Մալխասյանցին լիովին չի համոզել, ուստի նա վրիպակը թողել է նույնությամբ:

Յ. Մակելը Ֆրանսերեն թարգմանության մեջ (էջ 156—157) «կարբեղովմայեցի» բառը բացատրում է Դանիելի հայտնության անվանոն գրքի վկայություններով: Սակայն սրանք բունագրոսիկ բացատրություններ են: Ստ. Մալխասյանցի «Սեբեոսի Պատմությունը և Մովսես խորենացի» աշխատությանը նվիրված գրախոսականում («Արարատ», 1899, էջ 313) գրախոսողը «կարբեղովմայեցի»-ն վերծանում է՝ «Պարսք Եղովմայեցի»: Նրա բացատրությունը փաստարկված է այսպես: «Եղովմայեցի բառը պետք է լինի Ելամա (յե) ցի: Որ մեր պատմագիրները Ելամ, Ելամա (յե) ցիք ասելով իմանում են Պարսք (ազգն ու երկիրը). տե՛ս Ասողիկ (Ա. հանդես. Գ, էջ 25), ալլև՝ «Երեմիա վարդապետի Բառգիրք հայոց», էջ 489՝ «Ելամայեցիք և Պարսիկք Աճամստան է»: Ուստի՝ Կարք = Պարսք... Կարծում ենք որ այս բառը լուսանցքում իբրև բացատրություն Ելամայեցի բառին դրված լինելով վերջը մի բառ է համարվել. այնուհետև գրչագիր արտագրողին ավելի ծանրթ լինելով Ս. Գրքի եղովմայեցի, անունը շփոթել է»:

«Պարսք եղովմայեցի» սրբագրությունը կրկնել է նաև Ա. Զամինյանը (ՄՄ, անհատական արխիվ, թղթ. 232ա, վավ. 101, էջ 58—91 և թղթ. 232բ, վավ. 133):

Ն. Ակիբյանն առաջարկել է «ազգն կարբեղովմայեցի իշխանութեանն» բառերը սրբագրել այսպես. «Յազգկերտ Բ. որդի Վուսայ (իբրև հաստատեցաւ) յիշխանութեանն» (տե՛ս «Շ. ամս.», 1969, հուլիս-սեպտեմբեր, էջ 335): Սա շափազանց ազնու վերծանություն է:

Մ. Գրիգորյանը («Շ. ամս.», 1967, էջ 418—419) առաջարկում է. «Եղովմայեցի կամ Քաղղեացի (իբրև հետևող մոզուց կրոնքին) կամ Ստահրացի (Ստահրայեցի՝ = Ստահրացի Արտաշիր որդի Սասանյա)» և ներքև: Բայց հիմնականում նա կանգ է առնում «քետուրայեցի» և նի վրա, որին նա կցում է հետևյալ բացատրությունը. «Մեր մատենագրաց մոտ, սկսյալ Մովսես խորենացիեն, հաճախ կը հիշվի ավանդություն մը, ըստ որում Պարթևները ծնունդն են Արրահամու և անոր կնոջ Քետուրայ... Պարթևներու շարունակությունը կը հանդիսանան Սասանյան Պարսիկք»:

Սեբեոսի ակնարկությունը գուցե կը վերաբերի պարթևական («ի Քետուրական ծննդոց») — Սասանյան իշխանության: Եթե ենթադրությունս ճիշտ է, կարեհղովմայեցի բառը հարկ է սրբագրել իբր *փառայեցիք*:

Գրիգորյանի ուշադրությունից վրիպել է այն, որ ինչպես *Խորենացին*, այնպես էլ նրան հետևող հետագա մատենագիրները Քետուրայի անունը տալիս են հիմնականում դրական իմաստով: Այնինչ՝ «Սեբեոսի Պատմության» մեջ «Կարբեղովմայեցի իշխանություն» է կոչված շարագործ Հազկերտի իշխանությունը, որը կամենում էր Հայաստանից բաժնալ քրիստոնեությունը: Հիշենք նաև, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը Քետուրային հիշատակելիս (գլ. ԽԵ) պարսիկների հետ չի կապում:

Խորենացին (գիրք 2, գլ. Ա) Քետուրային համարում է Արշակունյաց թագավորության հիմնադիրների նախամայր. «Արշակ քաջ, որ էր ի գուսակէ Աբրահամու, ի Քետուրական ծննդոց»: Այս տեղեկությունը կրկնում է Անանիա Շիրակացուն վերագրված «Ժամանակագրության» (հրատ. Բ. Սարգսյան, 1904, էջ 32) հեղինակը. «Թագաւորէ Արշակ քաջ ի գուսակէ Աբրահամու, ի Քետուրական ծննդոց, որ եկեալ ի Հայս»: Խորենացին Բ գրքի ԿԸ գլխում խոսում է պարթևների Քետուրայից սերված լինելու մասին և պարթևների նկատմամբ իր ունեցած առանձնահատուկ ուշադրությունը բացատրում է այսպես. «Գիտեա զի ախորժելով վասն ազգականաց մերոյ լուսաւորչին քաջահմուտ կամեցեալ լինել ընթերցողացն՝ կրկնագրեցաք երկրորդելով»: Գրիգոր Մագիստրոսը պարծենում է, որ ինքն է ըստ աշխարհի պարթև, ըստ ժառանգութեան պահլապիկ, ըստ գեղընտիրն լինելոյ, յազգէ Արշակունի»: Վարդան Արևելցին («Սոփերք հայկականք», հ. 5, էջ 107) Գրիգոր Լուսավորչին նվիրված ներբողում գրում է. «ի Կենտուրական ծնունդսն բուրումն անուշից խնկոյ ծածկեալ»: Ի դեպ՝ միևնույն Վարդան Արևելցին «Կենտուրայի» մասին ունի նաև հետևյալ հիշատակությունը. «Ուտի՞ են մողք. Աբրահամեան ի Կենտուրայ... շողան յԱրևելս՝ ի Պարս» («Ժողանք», ՄՄ, Ժ. № 750, էջ 63բ):

Քետուրայի և պարթևների մասին դրական իմաստով են արտահայտվել նաև մի շարք ժամանակագիրներ («Մանր ժամանակագրություններ», կազմեց Վ. Հակոբյան, հ. 1, էջ 363: հ. 2, էջ 121) և մատենագիրներ (Սամվել Աճեցի, էջ 17, Մխիթար Աճեցի, էջ 18) և այլն:

Այսպիսով, «քետուրական» արտահայտությունը մեր մատենագրության մեջ հիմնականում դրական արտահայտություն է և վերաբերում է պարթևներին: Իսկ Սասանյան պարսիկներն իրենք վերացրին «քետուրական» պարթևների իշխանությունը և ձգտում էին վերացնել նաև պարթևների ազգային Գրիգոր Լուսավորչի կրոնը: «Սեբեոսի Պատմության» հեղինակը բնականաբար չէր կարող Սասանյաններին նույնպես կոչել Քետուրայի ծնունդ:

Մեր շարագրած փաստերի լույսի տակ Մ. Գրիգորյանը երկրորդ անգամ հանդես գալով («Համա», 1970, № 10—12, էջ 433) այլևս չի պնդել իր սրբագրական առաջարկը:

Ստեփանոս Մալխասյանցը, ինչպես տեսանք, «կարբեղովմայեցի» բառի մեջ գտել է «շար» բառը («շար եղովմայեցի»): Սա մեզ հավանական է թվում: Մալխասյանցը միաժամանակ նկատել է, որ «կարբեղովմայեցի» բառը պարունակող նախադասությունը գրված է Եղիշեի ազգեցությունով: Այսպես՝

Եղիշէ «Սեբէոսի Պատմութիւն»

«Ի բառնալ ազգին Արշակունեաց տիրեցին «Ի նուագեալ ժամանակաց տէրութեանն աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, Արշակունեաց ի Հայաստան աշխարհի... տիրէ որ վարէր զիշխանութիւն օրինօք մօզուցն»: ի վերայ սորա ազգն Կարբեղովմայեցի իշխանութեանն»:

«Սեբեոսի Պատմության» տարբերությունն այն է, որ այստեղ բացակայում են Եղիշեի «Սասանյան պարսկի» և «վարէր... օրինօք մօզուցն» տվյալները: Ուրեմն, «կարբեղովմայեցի» բառի տակ պետք է թաքնված լինեն կամ մ այս երկու տվյալները միասին, կամ էլ՝ նրանցից մեկն ու մեկը: Երկուսը միասին չէին կարող լինել, որովհետև առնվազն հինգ բառից կազմված այդ միավորները չէին կարող ընդօրինակողների կողմից վերծանվել որպես մեկ բառ («կարբեղովմայեցի»): Մնում է ընտրել երկու տվյալներից մեկն ու մեկը:

Այդ տվյալներից առաջինը՝ «Սասանայ պարսկի» արտահայտությունը գրությամբ նման չէ «կարբեղովմայեցի» բառին և չէր կարող շփոթվել նրա հետ. ուրեմն պետք է ենթադրել, որ աղծատված բառի մեջ թաքնված է Եղիշեի «իշխանութիւնն... մօզուցն» արտահայտությանը համապատասխանող մի արտահայտություն, որը գրելաձևով նման է եղել «կարբեղովմայեցի իշխանութեանն» բառերին: «Մօզուցն» բառի հոմանիշը «Քաղեայաց» բառն է և մեզ թվում է Սեբեոսը «իշխանութիւնն մօզուցն»-ի փոխարեն գործածել է «քաղեայաց իշխանութիւնն», այ-

սինքն՝ Եղիշի «մօզուցն» բառը փոխարինել է նրա հոմանիշ «քաղեայց» բառով: Ի դեպ՝ Ք. Պատկանյանը և Ստ. Մալխասյանցը «Սերետի Պատմության» ռուսերեն թարգմանության մեջ Սերետի «մեծամեծ քաղեիցն» արտահայտությունը թարգմանել են հենց «Главными магами» ձևով: Որևէ ուրիշ թարգմանություն կամ փոխադրություն չէր կարող լինել:

Որ «Սերետի Պատմության» հեղինակը գտնվում է Եղիշի «վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մօզուցն» արտահայտության ազդեցության տակ և որ նա Եղիշի «մօզուցն»-ը կարող էր փոխարինել «քաղեայց»-ով՝ երևում է նաև հեղինակի այն հաղորդումից, որի համաձայն, Հազ-կերտը գործում էր «հանդերձ միաբանութեամբ դառնաշունչ և մեծամեծ քաղեիցն»: Խորեհացին նույնպես Սասանի կապակցությամբ հիշում է «քաղեայթ» («և արտադրութեան հրոյն մանուածոյ՝ որ ի Սասանայ... և արտարժողացն յառաջասացումն որ են քաղեայթ»):

Այս տվյալների հիման վրա կարծում ենք, որ «Սերետի Պատմության» հեղինակը Եղիշի «վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մօզուցն» խոսքերից ելնելով՝ սասանյանների իշխանությունը համարել է «քաղեայց (մօզուցն) իշխանութիւնն» և այդպես էլ գրել է. «սիրէ ի վերայ սորա ազգն շար՝ քաղեայց իշխանութեանն»:

Իսկ ի՞նչ ճանապարհով կարող է «չար քաղեայց»-ը դառնալ «կարբեղովմայեցի»: «Սերետի Պատմության» հնագույն ձեռագրերում գտնում ենք «կարբեղովմայեցի» և ոչ՝ «կարբեղովմայեցի»: Ուրեմն, գաղափար օրինակում մաշված ու դժվարընթեռնելի երկամպիք տառերով գրված «ՉԱՐ»-ը կարող էր կարդացվել «ԿԱՐ», իսկ «ՔԱԻԿԵԱՅՅ»-ը՝ «ՔԵԻՈՄԱՅՅ»: Այնուհետև «իշխանութեանն» բառի առաջին տառը՝ Ի-ն կարող էր կրկնվելով միանալ «ՔԵԻՈՄԱՅՅ» վրիպակին և տալ «ՔԵԻՈՄԱՅՅԻ»: Այսպիսով՝ «ՉԱՐ ՔԱԻԿԵԱՅՅ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՆ» բառերը կարող էին սխալմամբ վերծանվել՝ «ԿԱՐ ՔԵԻՈՄԱՅՅԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՆ»: Ե՛վ բովանդակությամբ, և՛ դժգրահան առումով թերևս սա է այն ամենահավանական ճանապարհը, որով կարող էր ստացվել վրիպակը: Սակայն ավելի որոշակի ապացույցների բացակայությունն ստիպում է բնագիրը թողնել նույնությամբ:

Դանիելի գրքի հայերեն պարականոն տարբերակի մեջ պարսիկները հիշատակվում են Կարբեղովմի կողքին (տե՛ս F. Macler, Les Apocalypses apocryphes de Daniel, էջ 63 և 75): Սրա հիման վրա Մակլերը (Macl., էջ 156—157) ենթադրել է, թե «Կարբեղովմայեցի» վրիպակը պետք է կարդալ «Կարբեղովնացի» և հասկանալ այնպես, թե «Սերետի Պատմության» հեղինակը Սասանյաններին կոչել է «Կարբեղովնացի»: Սա պարզապես «կարբեղովմայեցի» և «կարբեղովնացի» բառերի արտաքին նմանությունից բխող տպավորություն է: Իսկ իրականում հեղինակը չէր կարող Սասանյաններին կոչել կարբեղովնացի: Դանիելի պարականոն գրքի մեջ նույնպես նման բան չկա: Մակլերի նշած՝ Կարթագենի զորավար Հաննիբալը (247—183) կապ չունի Սասանյանների հետ:

«Կարբեղովմայեցի» վրիպակի մակլերյան մեկնաբանությունը դուրս գալով սերետագիտության բնագավառից, թափանցել է նաև վրացագիտության մեջ: Հայտնի է, որ ավելի քան մեկ դար է, ինչ մասնագետների կողմից զանազան վերծանությունների է ենթարկվում վրաց Արշուղա կամ Աշուղա երկրորդ բղեշխին վերագրվող հունարեն հետևյալ փորագրությունը. «...Πεταζης Ἰβήρων Καρχηδων»: «Կարբեղովն» ( Καρχηδων) բառը Իբերիայի կողքին արտառոց է հնչում, այդ իսկ պատճառով էլ դիտնականները ձգտել են զանազան մեկնություններով և սրբազրույթյուններով հասկանալի դարձնել արձանագրությունը: Մեզ ծանոթ վերջին մեկնությունը պատկանում է Կիրիլ Թումանովին, որը 1963 թ. Բելգիայում հրատարակած իր կովկասագիտական ժողովածուում («Studies in Christian Caucasian History», էջ 189) Καρχηδων բառին տվել է այն միևնույն բացատրությունը, որը Մակլերը տվել է «Կարբեղովմայեցի» վրիպակին: Թումանովի կարծիքով Καρχηδων-ը պետք է վերծանել Καρχηδ[ον]ισ[τ] և հասկանալ «Կարբեղովնացի», այսինքն՝ Սասանյան: Ըստ այսմ՝ արձանագրության մեջ վրաց բղեշխին տրված է սասանյան ծաղուկ:

Այս վերծանությունն ընդունելի չէ, որովհետև հիմնված է Մակլերի բացատրության վրա, իսկ Մակլերը, ինչպես տեսանք, սխալվել է: Երբ վրիպակը նույնացրել է «կարբեղովնացի» բառի հետ: Մեզ ավելի համոզիչ է թվում Պ. Պետերսի վերծանությունը, որի համաձայն՝ Καρχηδων-ը պետք է կարդալ Κορχηδων (P. Peeters, Sainte Sousanik, martyre en Arménie-Georgie, տպված՝ „Analecta Bollandiana“, vol. 53, Bruxelles, 1935, էջ 275—279):

119. «Ի վերայ նոցա Եկին գաւրբն Պարսիկ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր հրատարակություններն ունեն՝ «Ի վերայ նոցա Եին»: Սա ակնհայտ վրիպակ է, և Ակիյանը («Ձ. ամս», 1969, էջ 335—336) իրավամբ ուղղել է «Ի վերայ նոցա Եկին»: Նախնական բնագրում եղած «Եկին» բառը կոահել են նաև Ք. Պատկանյանը և Ստ. Մալխասյանցը, որոնցից առաջինը «էին»-ի փոխարեն վերծանել է «устремилась» (Патк., 23), իսկ երկրորդը՝ «двинулись» (Малх., 26):

Հմտ. նաև գլ. ԽԳ. «Եկին ի յՈրդսպու», որը № 1343 պատասխկում վրիպակարար գրված է Էին ի յՈրդսպու»:

120. «Սեբեոսի Պատմության» հեղինակը, ի տարբերություն Ղազար Փարպեցու, Ղևոնդյանց նահատակության վայրը նշում է ոչ թե Ռեանում («յԱպար աշխարհի, մերձ ի Եօզն մօզուց, որ անուանեալ կոչի Ռեան», Ղ. Փարպեցի, 1904, էջ 101), այլ «Թէարքունի» կոչված վայրում: Այս «Թէարքունի» հավանաբար աղավաղված անուն է: Ա. Զամինյանը «Սեբեոսի Պատմության» Թիֆլիսյան-Ղուկասյան հրատարակության (1912, էջ 339) անվանացանկում «Թէարքունի» անվան դիմաց գրել է «Ռեան» և բացատրել, որ «Ռեան»-ը «Թէարքունի» է դարձել երկաթագիր «Փ» և «Ռ» տառերի շփոթի հետևանքով: «Թէարքունի»-ն սրբագրել են նաև Ն. Ակինյանը («Ղ. ամս.», 1969, էջ 336), Մ. Գրիգորյանը («Ղ. ամս.», 1967, էջ 420): Վերջինս գրում է. «Սեբեոս յուր տեղեկությունը քաղած է Ղազարայ պատմագիրքին, հետևաբար սկզբնաղբր հավանորեն ունի Ռեան արձունի: Հետագա ընդօրինակող մը Ռեանը շփոթելով առավել ծանոթ Ռե... Բաղարին հետ, գրած պիտի ըլլայ Ռե արձունի, որ ի վերջո դարձած է թէ արձունի... ուստի կամ արձունի-ն պիտի ըմբռնել լայն առումով՝ իբր նիւշապուհի և Ռեանդի համար ըսված և կամ խանգարեալ նախադասութիւնը պիտի վերականգնել այսպէս. «յԱպր շահը, մերձ ի նիւշապուհ արքունի քաղաքի, ի տեղուջն որ կոչի Ռեան» (կամ՝ «յԱպր շահը մերձ յարքունի նիւշապուհ քաղաքի ի տեղուջն որ կոչի Ռեան»):

Այս սրբագրական առաջարկի հիմքը, ինչպես տեսնում ենք, Ղազար Փարպեցին է: Սակայն հայտնի է, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը ծանոթ չի եղել Ղազար Փարպեցուն: Հետեւաբար՝ Փարպեցու միջոցով չի կարելի սրբագրել «Սեբեոսի Պատմությունը»:

Մ. Գրիգորյանը երկրորդ անգամ անդրադառնալով հարցին («Ղ. ամս.», 1970, էջ 433) գտնում է, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակի կողմից Ղազար Փարպեցուն ծանոթ չլինելու հարցը դեռևս լուծված չէ, ուստի «անկալուն կարծիքը» չի կարող հիմք ծառայել բանասիրական եզրակացության համար: Սակայն իրականում դեռևս Հ. Հյուբշմանը («Zur Geschichte Armeniens», էջ 6) նշել է, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը՝ երբ խոստանում է որպես նոռայուն նկարագրել «զայն ամենայն, որ ի Պերոզի ժամանակն եղեալ շարութիւն»՝ դրանով պարզ ասում է, որ ինքը ծանոթ չէ Ղազար Փարպեցուն: Եթե ծանոթ լիներ՝ կիմանար, որ Փարպեցին արդեն նկարագրել էր այն, ինչ ինքը նոր է կամենում նկարագրել: Ստ. Մալխասյանցը նույնպես հաստատել է «Սեբեոսի Պատմության» հեղինակի անծանոթ լինելը Փարպեցուն: Նա գրում է (Մալխ., էջ 149). «Վահան Մամիկոնյանի... գործերը մանրամասն նկարագրել է Ղազար Փարպեցին... Վահանի մասին Սեբեոսի պատմածներից երևում է, որ վերջինս Փարպեցու գիրքը չի տեսել և շարադրում է ժողովրդական ավանդությունների հիման վրա: Վահանի երեսուն հազարանոց զորքի, պարսիկների կողմից նրա դեմ ուղարկված հոնաց բանակի, պարսից զորքերին կուրացնող «Տողմն սաստկացուցեալ զմրրիկ փոշույն»—այս ամենն անծանոթ է Ղազար Փարպեցուն»:

Ինչպես տեսնում ենք, «Սեբեոսի Պատմության» և Փարպեցու փոխհարաբերությունների վերաբերյալ բանասիրության մեջ գոյություն ունեցող կարծիքը ոչ թե «անկալուն կարծիք» է, այլ որոշակի փաստերով հաստատվող իրողություն: Այդ փաստերին կարելի է ավելացնել նաև «Սեբեոսի Պատմությունում» գործածված «Ապր շահը» տեղանունը, որի փոխարեն Փարպեցին ունի «Ապար աշխարհ»: «Սեբեոսի Պատմությունը» Փարպեցուց տարբեր է նաև այնպիսի մի կարևոր պատմական տեղեկություն հայտնելիս, ինչպիսին է հայ-պարսկական պայմանագրի կնքումը Պերոզի որդի Կավատի և Վահան Մամիկոնյանի միջև: Ղազար Փարպեցին այլ կերպ է հաղորդում այս դեպքը և Կավատի փոխարեն նշում է Վաղարշին (Հմտ. ՄՄ, Զամինյանի ֆոնդ, Թղթ. 232բ, վավ. 101, էջ 91 և Թղթ. 131ա, էջ 122):

Բերված փաստերը թույլ են տալիս մտածելու, որ «Սեբեոսի Պատմության» մեղ հասած ձեռագրերի մեջ աղճատված «Թէարքունի» տեղանունը բխում է ոչ թե Ղազար Փարպեցու Ռեան-ից, այլ՝ մի այնպիսի աղբյուրից, որը նաև Եղիշեն չէ (որովհետև Եղիշեն չի նշում ո՛չ Փարպեցու Ռեանը, ո՛չ էլ «Սեբեոսի Պատմության» «Թէարքունի»):

Աղավաղված «Թէարքունի»-ի մեջ նկատելի է «արքունի» բառը: «Յայսմատուրքը» Ղևոնդյանների կապակցությամբ գրում է. «Եւ զսուրբսն քանդի կապանօք տանէին՝ յետ բազում ամսոց և ի աւուր հասին ի ձմերոցն արձունի»: Գիտենք նաև, որ Ղևոնդյանների նահատակության վայրում էր գտնվում արձունի մզեբի կենտրոնը: Ահա, արքունիքի հետ կապվող այս վայրերը կարող էին կոչվել ուղղակի «Արքունի»: (Հիշենք, որ Հայաստանի գավառներից մեկը նույնպես կոչվում էր «Արքայից»: Հմտ. «Անանիա Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944, էջ

349: Հմմտ. նաև Փարպեցի, Տփղիս, 1904, էջ 4. «Պաղատն ասեն, որ թարգմանի Արքունի»): Ըստ այսմ՝ «Սեբեոսի Պատմությունում» պետք է գրված լինի «յԱպր Շահր մերձ ի նիւշապուհ քաղաքի, ի տեղուոյն որ կոչիւր Արքունի»: Մ. Բրոսեն («Rapports sur un voyage», էջ 51) հենց այդպես էլ թարգմանել է բնագիրը. dans un lieu nommé royal. Նախնական բնագրում եղած «ԿՈՉԻՐԱՐՔՈՒՆԻ»-ն շատ հնչտուժյամբ կաղավաղվեր «ԿՈՉԻԹԷԱՐՔՈՒՆԻ» ձևով, որի մեջ ենթադրվում է ընդամենը երկու երկաթագիր տառերի շփոթ՝ ԻՐ > Թ:

Ինչ վերաբերում է Ապր Շահր քաղաքի աշխարհագրական դիրքին և պատմությանը, Ք. Պատկանյանը (Սարգ., էջ 182) ծանոթագրում է. «Ապր-Շահր, Ապար աշխարհում գտնվող քաղաք, Խորասանում: Ամրացվել է Հազկերտ երկրորդի կողմից, Քուշանների դեմ նրա մղած պատերազմի ժամանակ: Այդ քաղաքը գոյություն ունի դեռ ավելի վաղ ժամանակներում և Հազկերտն այն սոսկ վերակառուցել է: Շապուհ առաջինն այս քաղաքին միևնույն նպատակով կառուցել է մեկ ուրիշ քաղաք՝ Նյուշապուհ, նիշաբուր: Տե՛ս d'Herbelot, Aber und Nischabur».

121. «Այն ամենայն ի ձեռն այլոց գրեցաւ»: Զամինյանը (Թղթ. 232ա, վավ. 101, էջ 58) սրբագրում է «այլոյ» (փխ. «այլոց»), որը հիմնավորված չէ:

122. «Ռալսն ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն»: Սույն հատվածի առաջին թարգմանիչը Մ. Բրոսեն է, որը 1849 թ. (երբ «Սեբեոսի Պատմությունը» դեռևս հրատարակված չէր) այս Պատմության ձեռագրի նկարագրության ժամանակ մեզ հետաքրքրող հատվածը թարգմանել է այսպես. „comme le prouve cette histoire“ («Ինչպես ցույց է տալիս սույն պատմութունները», M. Brosset, Rapports sur un voyage, 1849, էջ 51):

Ք. Պատկանյանը (էջ 23) հատվածը թարգմանել է այսպես. «как показывается та же самая история», Մալխասյանցը (էջ 26). «как показывается их история»: Երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է Վարդանանց պատմությանը: Ք. Պատկանյանի տողատակային ծանոթորությունից («Այդ կրոնական պատերազմի իրադարձությունները մանրամասն նկարագրել են երկու ժամանակակիցներ՝ Եղիշեն և Ղազար Փարպեցին») կարելի է ենթադրել, թե նա «та же самая история» բառերի տակ հասկացել է առհասարակ Վարդանանց պատմությունը, որին անդրադարձել են երկու հեղինակ: Բանասեր Ս. Կ.-ն նույնպես գրում է. «նոյն իսկ պատմութիւնն խոսքը միայն Եղիշին չի վերաբերիլ այստեղ, այլ առհասարակ պատմությունը կնշանակե, ուզում ենք ասել, որ Սեբեոսն ակնարկում է և Ղազար Փարպեցուն, ինչպես ցույց է տալիս ի ձեռն այլոց գրեցաւ, եթե միայն այլոյ չհամարենք» («Արարատ», 1899, էջ 313):

Սակայն 120-րդ ծանոթագրության մեջ մենք արդեն ասացինք, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը Փարպեցուն ծանոթ չէ:

Ստ. Մալխասյանցի կարծիքով, «Սեբեոսի Պատմության» հեղինակը նկատի է ունեցել միայն Եղիշեի պատմությունը: Նա գրում է. «Սեբեոսն այստեղ նկատի ունի այդ իրադարձությունների շամանակակցի և ապստամբության պատրաստության մեջ գործունյա մասնակցություն ունեցած Եղիշեի Պատմությունը»: Այս կարծիքը, սակայն, ընդունելի չէ, որովհետև, ինչպես տեսանք, «Սեբեոսի Պատմության» հեղինակն ինքը խոսում է հոգնակի թվով և Վարդանանց պատմությունը համարում է մի քանի հեղինակների լրոծ. «ի ձեռն այլոց գրեցաւ»: Ուրեմն, նա միայն Եղիշեի պատմությունը չի նկատի ունեցել: Նա այդ պատմությունը չի էլ տեսել, այլ շատագործել է մի պատմություն, որի մեջ, ի տարբերություն Եղիշեի, Վարդանը կոչված է «Կարմիրն կոչեցեալ Վարդան», Ղևոնդյանների նահատակության վայրը համարված է «Թէարքունի»-ն («Արքունի»):

Ն. Ակինյանը քննարկվող արտահայտությունը սրբագրել է այսպես. «որպես ցուցանէ նոցին իսկ պատմութիւնն» (Հմմտ. «Հ. ամս.», 1969, հուլիս—սեպտեմբեր, էջ 336). բայց այսպիսի սրբագրության համար որոշակի հիմք չկա: Հետևաբար, բնագիրը պետք է թողնել նույնը, հասկանալով այնպես, թե «Սեբեոսի Պատմությունում» ակնարկված «նոյն իսկ պատմութիւնը» ոչ թե վերաբերում է ինչ-որ որոշակի հեղինակների երկերի, այլ՝ առհասարակ 451 թվականի դեպքերի պատմությանը, որը «ի ձեռն այլոց գրեցաւ»:

123. «Զպատամբելն յՈրմզղէ, զմահն Որմզղի»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն պատամբելն ի յՈրմզղիէ, զմահն Որմզղայի»: Մ. Գրիգորյանն առաջարկել է («Հ. ամս.», 1967, էջ 420—422) ուղղել «ի յՈրմզղէ... Որմզղի», պատճառաբանելով, որ «Որմզղ անվան բացառական հոլովի ճիշտ ձևն է «յՈրմզղէ», և որ «տրական-սեռական հոլովը... կգտնենք Որմզղի»: Այս պատճառաբանությունը զուգընթաց գոյություն ունի նաև այն կարծիքը, թե Սեբեոսն ինքն է Որմզղ գետինը սեռական հոլովում գործածել «Որմզղայի» ձևով. «Ուշագրավ գործածություն ունի և Որմզղ գետը, որի սեռականը Սեբեոսը տալիս է նաև Որմզղ ձևով»:

(Գ. Բաղդիլյան, Հոլովման ու խոնարհման առանձնահատկությունները Սեբեոսի Պատմության լեզվում, «Արաբեր», ՀՍՍՀ ԳԱ, 1976, № 9, էջ 72):

Մենք հենվելով այն փաստի վրա, որ Պատմության մի շարք էջերում անունը ճիշտ է հոլովված, սրբագրում ենք. «յՈրմզզէ, զմահն Որմզզի»:

Մեզ հասած ձեռագրերում անուններն աղավաղվել են, ինչպես երևում է, հետևյալ ճանապարհով: Ընդօրինակվող ձեռագրում եղել է զգապատմբելն ի յՈրմզզի, զմահն Որմզզայ: Հետագա գրիչներից մեկը նկատելով, որ հոլովական վերջավորությունները սխալ են՝ սրբագրել է անունները և «յՈրմզզի»-ի «ի» վերջավորության փոխարեն գրել է «է», իսկ «Որմզզայ»-ի «այ» վերջավորության փոխարեն՝ «ի»: Հաջորդ ընդօրինակողն անուններն ընդօրինակելիս արտագրել է միաժամանակ և՛ նախորդ սխալ վերջավորությունները (որոնք կարող էին շնչված չլինել), և՛ ուղղված վերջավորությունները և այսպիսով՝ անունները մեզ հասել են կրկնակի հոլովական վերջավորություններով՝ յՈրմզզ(ի) է և յՈրմզզ(այ)ի:

124. «Ձիիմելն Լեռակղի ի կղզման հիւսիսոյ առ արխայն Թէտալացոց»: Առաջաբանի հեղինակը խոստովանում է նկարագրել Լեռակղի՝ հյուսիսային կողմերում կատարած արշավանքները, բայց «Սեբեոսի Պատմության» մեզ հասած ձեռագրերում նման բան չկա: Ինչպես երևում է, այդ մասը կորել է, կամ էլ, Ք. Պատկանյանի բառերով ասած (Սատկ., էջ 182), պատմելու ընթացքում հեղինակը մոռացել է իր խոստումը և չի նկարագրել Լեռակղի՝ Խաղարների հետ վարած արշավանքները:

125. Առաջաբանի սույն հատվածում հանդիպող Փայտակարանի մասին Ս. Տ. Երեմյանը («Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», Երևան, 1963, էջ 88) հաղորդում է հետևյալ տեղեկությունը. «Մեծ Հայքի 11-րդ նահանգը՝ շուրջ 21000 կմ<sup>2</sup> տարածությամբ: Այս նահանգը հույն-հռոմեական աղբյուրներում հայտնի է Κασιπια, Caspiane, Patria Caspia անվան տակ: Հայկական աղբյուրներում միայն «Աշխարհացոյցն» է ու նրան հետևող Ղևոնդը, որ գործ են անում «Փայտակարան» անունը: Այլ աղբյուրներում այս երկիրը կոչվում է Կասպք, Կազք, Աշխարհն Կասպից, Աշխարհն Պարսից, Պարսք, ապա՝ Բաղասական: Վերջինս՝ Balasakan, Balasadan ձևերով պահպանվել է արաբական աղբյուրներում: Մեծ Հայքի այս ծայրամասային երկիրը (որի արևմտյան սահմանները հասնում էին մինչև Կասպից ծով—Գ. Ա.), որ նվաճվել է Արտաշես Ա-ի (189—161) ժամանակ, համարվում էր Փայտակարան քաղաքի քաղաքային տերիտորիան: Այս դրույթունը փոխվում է 338 թ. հետո, երբ պարսիկների սաղաքանքով մասթուֆներն իրենց թագավոր Սանատրուկ Արշակունու գլխավորությամբ ներխուժեցին Մեծ Հայք, տիրեցին Փայտակարան նահանգին և սկիզբ դրին Աղվանից երկրի Արշակունյաց հարստությանը»:

126. «Հրատն մեծ՝ որ յԱտրպատական գաւառի»: Հրատ անունը Ք. Պատկանյանը ուսուսերեն թողել է նույնությամբ (Грат), իսկ Մալխասյանցը՝ (էջ 27) թարգմանել է капище և գրել փոքրատառով: Ք. Պատկանյանը (Սատկ., էջ 182) այսպես է բացատրում բառը. «Հրատ նշանակում է ատրուշան (пирей), զոհարան (жертвенник), որի մեջ վառվում էր Որմուզի անշեջ հուրը: Գանձակի (Թավրիզ) մոտ իսկպպես գտնվում էր հայտնի զոհարանը, բայց մենք չգիտենք, թե Հրատ անունով քաղաք գոյություն ունեցել է, թե ոչ: Այս ատրուշանի մասին հիշատակում է նաև Պրոկոպիոսը. «Ադարվիգանում (Ադրբեջան) գտնվում է մեծ Պիրոնը, որին պարսիկները երկրպագում են ավելի, քան աստվածներին: Մոզերն այստեղ պահպանում են անշեջ հուրը, ճշգրիտ կերպով կատարում են իրենց սրբազան արարողությունները և կարևոր գործերում այն օգտագործում են որպես զուշակատեղի»: Տե՛ս «De Bello persico», թարգմ. Պ. Դեստունիսի, էջ 260, 261:

«Սեբեոսի Պատմության» մեջ գործածված «հրատ» բառի կապակցությամբ Ստ. Մալխասյանցը ավելացնում է նաև հետևյալը. «Այստեղ խոսքը վերաբերում է երթևեկին (о походе) շնորհիվ կրակին՝ կրկապաշտ պարսիկների երկրպագության առարկային, որը թագավորները տանում էին իրենց հետ ինչպես կրոնական արարողությունների, այնպես էլ գուշակությունների համար: Այս կրակարանի պարսկերեն անունն է «ատաշ», որը պարսկերեն նշանակում է պարզապես կրակ: Քրիստոնեաներն առանձնահատուկ վաստակ էին համարում այն, որ իրենց հաջողվում էր ջրասույզ անել պարսիկների սրբազան կրակը» (Մալխ., էջ 151):

127. «Ձայս ամենայն կամեցայ ի ձեռն գոյս այտրիկ կարճառատիւ ձեզ վիպասանել»: Նախորդ բոլոր հրատարակություններն ունեն «կարճառատ»: Մենք ուղղել ենք «կարճառատիւ», հենվելով հնագույն ձեռագրի վրա, որը պահպանել է «կարճառատի» ձևը: Ընդօրինակող գրիչը բաց է թողել «կարճառատի»-ի վերջին «ւ» տառը: Մալխասյանցը նույնպես կամեցել է «կարճառատ»-ը ուղղել «կարճառատիւ-ով»: Նա (ՍեՊ, էջ 24, տողատակ) գրում է. «Ուղղեցինք այս-

պես: Բայց, ինչպես երևում է, մոռացել է ուղղել և «կարճառատ»-ը թողել է նույնությամբ (ուղղումը կատարել է վրիպակների ցանկում):

Մեր ուղղած նախադասությամբ վերջանում է «Սեբեոսի Պատմության» առաջաբանը: Սույն առաջաբանում հեղինակը հայտնում է, որ Վարդանանց պատերազմի մասին ինքը չի գրելու, որովհետև «այն ամենայն ի ձեռն այլոց գրեցաւ, որպէս ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն», իսկ նրա հաջորդ դեպքերը՝ սկսած Պերոզի ժամանակից (459—484) «զայս ամենայն կամեցայ ի ձեռն գրոյս այսորիկ կարճառատիւ ձեզ վիպասանել»: Սրանից պարզ երևում է, որ մեր հեղինակին հայտնի ամենավերջին գրավոր դեպքը եղել է Վարդանանց պատերազմը և նա իր աշխատությունն սկսել է հենց այդ պատերազմին անմիջապես հաջորդած՝ Վահան Մամիկոնյանի ապստամբության նկարագրությամբ:

128. «Բնաբարայն գրանաց զիշխանութիւնն»: Ն. Ակինյանն առաջարկում է «բնաբարայն»-ը սրբագրել «բոնաբար ինքն» («Հ. ամս.», 1969, էջ 336), իսկ Մ. Գրիգորյանի կարծիքով նախնական բնագրում եղել է «բոնաբար այն (անդրէն)» («Հ. ամս.», 1968, էջ 101): Այս առթիվ Մ. Գրիգորյանը գրում է. «Մալխասյանց ստրկորեն հետևելով Առձեռն բառարանին՝ իբր հազվադեպ բառ կը նշանակե րոնաբայն» («Հ. ամս.», 1967, էջ 101, 102): Իրականում, սակայն, Մալխասյանց «բոնաբարայն» ձևը ճիշտ է համարել, անշուշտ, ոչ թե Առձեռն բառարանին «ստրկորեն հետևելով», այլ՝ որպես հմուտ լեզվաբան-բառարանագետ, գտնելով, որ այդ բառակազմությունը հայերենի համար անսովոր չէ: Այդպես են մտածել նաև Առձեռն բառարանի հեղինակները:

Մենք հնարավոր ենք համարել, որ «Սեբեոսի Պատմության» նախնական բնագրում եղած լինի «բոնաբարայն» (և ոչ՝ «բոնաբարայն»): Գրիգորյանը մեզ առարկել է («բոնաբար իմաստով րոնաբար բառ մը գոյություն չունի», «Հ. ամս.», 1970, էջ 436), շնկատելով, որ մենք նամակում խոսել ենք ոչ թե բոնաբար, այլ՝ բոնաբարու բառի մասին, որն Առձեռն բառարանում ունի «չարըրկող, բոնատր» իմաստը: Ըստ այսմ՝ հեղինակը Վահան Մամիկոնյանի կապակցությամբ պետք է հայտնած լիներ, թե նա «բոնաբարայն» (= «բոնաբարուայն», «ու» հնչյունի սղմամբ, — Գ. Ա.) գրանաց զիշխանութիւնն», այսինքն՝ գրավից բոնավորների (պարսիկ բռնակալների) իշխանությունը:

129. «Յայնժամ արձակ է ի վերայ նոցա Պերոզ արքայ՝ Հոնաց զար յոյժ: Ք. Պատկանյանը (Ստր., էջ 25) ծանոթագրում է. «Այս տեղը կարելի է թարգմանել երկու ձևով՝ Հոնեքի արքա Պերոզը նրա դեմ ուղարկեց հոնաց հզոր զորք: Երկու դեպքում էլ փաստի պատմական իմաստը սխալ կլինի: Ուստի և մենք դերադասեցինք «Հոնաց»-ը սրբագրել «Պարսից»-ով:

Տ. Մակկերը (Մալ., էջ 3) Պատկանյանի միտքը կրկնելով հանդերձ՝ բնագիրը թողել է նույնությամբ: Բայց չի սրբագրել նաև Ստ. Մալխասյանցը: Մենք նույնպես չենք սրբագրում, բնորոշելով, որ Պերոզ արքան կարող էր Հայաստան ուղարկած լինել իսկապես հոնեքին: Հայտնի է, որ հոնեքը խտրություն չէին դնում կողմերի միջև և պատրաստ էին կովելու իրենց օգնությանը դիմած յուրաքանչյուր երկրի բանակի կազմում, միայն թե լավ վարձատրվեին: Այսպես օրինակ, Ղազար Փարպեցուց գիտենք, որ հոնեքը դաշնակից լինելով վրաց Վախթանգ թագավորին, պատրաստ են եղել կովելու պարսիկներին դեմ: Պերոզի թագավորության 25-րդ տարին Վախթանգն ապստամբում է և որոշում պարսիկների դեմ հանել հոնեքին. «Այնչափ հանեմ հոնս, որում ոչ կարիցեն հարկանել ի դիմի զօրքն Պարսից» (Ղազար Փարպեցի, էջ 118, նաև՝ 121, 132, 133): Վահան Մամիկոնյանն ինքը Պերոզի դեմ ապստամբության պատրաստվելիս նկատի է ունեցել նաև հոնաց զորքերի օգնությունը. «Խորհի երթալ առ կայսր... Հոնաց... կամի խնորել դունդ և ապստամբել» (117): Այսպես էլ՝ պարսից Պերոզ արքան կարող էր Հայաստան ուղարկել «հոնաց զօր յոյժ»: Ուստի Պատկանյանի պատճառաբանությունը բավարար չէ բնագիրը սրբագրելու համար:

Սրբագրության համար թերևս ավելի կարևոր հիմք հանդիսանար այն, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը Հայաստան ուղարկված զորքերի գործողությունները նկարագրելիս այդ զորքերին երբեք հոնաց զորքեր չի կոչում, այլ՝ «զարն Պարսից»: Նա գրում է. «զմորիկ փոշոյն զզարաւոքն Պարսից հեղոյր», «վանեցին անդ կոտորածով զզարն Պարսից»: Ճիշտ է, հոնեքը նույնպես կարող էին հասկացվել «զարն Պարսից», որովհետև պարսից արքայի առաջադրանքն էին կատարում, բայց հեղինակը մեկ անգամ գործածում է ուղղակի «պարսիկ» բառը («ոչ զոյր ընտրել զգի անկեղոցն, ո՛չ զպարսիկ և ո՛չ զհայ զարական»), որը հագիվ թե հոնեքին վերաբերել:

Այսպիսով «Հննաց զար յոժ»-ի փոխարեն կարող էր լինել նաև «Պարսից զար յոժ»- Սակայն ավելի որոշակի հիմք չունենալով բնագիրը չենք սրբագրում:

130. «Ի դաշտին Գեւանայ»: Ա. Զամինյանը (Թղթ. 232ա, վավ. 101, էջ 58) «Գեւանայ»-ը սրբագրում է «Գիլանայ», որը հիմնավորված չէ:

131. «Քաղաքի»: Զեոագրում՝ «Ֆաղաք»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 336) ուղղում է «քաղաքի»: Մենք հետևել ենք սույն ճիշտ սրբագրությանը, որի փոխարեն բոլոր տպագրիչները նույնպես ունեն «քաղաք» սխալը:

132. «Ե ի Գրեմի և ի Մգրայ»: «Մգրայ»-ի ուղղականը կլինի Մգրայք: Այս տեղանունը պահպանվել է միայն «Սեբեոսի Պատմությունում»: Մալխասյանցը (Մալխ., էջ 150, ծ. 48) գրում է. «այժմ Ալաշկերտում գոյություն ունի Մագրա գյուղ: Արդյոք դա Սեբեոսի Մգրայքի հետ կապ ունի? չենք կարող ասել»: (Այս վերջին նախադասությունը մենք թարգմանել ենք սրբագրելով: Մալխասյանցի խոսքը տպագրված է սխալ):

133. «Եւ ապա յայնժամ քազաուրեաց Կաւատ որդի նորա (Պերողի—Գ. Ա.) ի վերայ աշխարհին Պարսից»: Այս տեղեկության համաձայն՝ Պերողին հաջորդել է նրա որդի Կավատը: Սրան հակառակ՝ Անանունը գրում է. «Եւ ի ԽՁ-երորդին Պերողի թագաւորէ Զենոն ի վերայ Յունասյ՝ ամս ժէ: Պերող ԽՁ: Զենոն՝ զառաջինն: Յամի շորրորդի Զենոն թագաւորէ Պարսից Զամասյ՝ Բ (ձեռագրում՝ «Զամասայ Ը»—Գ. Ա.): Զենոն ի վերայ Յունաց՝ զշորրորդն: Զամասայ՝ զառաջինն: Եւ ի վերայ Ե-երորդի ամի Զենոն կայսեր թագաւորէ Պարսից Կաւատ՝ ամս ԽԱ: Զենոն՝ Զ.—կաւատ զառաջինն»:

Ինչպես տեսնում ենք, Անանունը Պերողին հաջորդ է նշում ոչ թե նրա որդի Կավատին, ինչպես արել է «Սեբեոսի Պատմության» հեղինակը, այլ՝ Զամասյին: Սա Անանունի և «Սեբեոսի Պատմության» հեղինակի տարբերությունը ցույց տվող փաստ է:

134. «Եւ զի բեկեալ էր զաւուրփին քազմուրեանն—արձակէ բարեւա յեկկի իւր»: Քննարկվող հատվածի համաձայն, պարսից արքա Կավատը իր հոր՝ շարագործ Պերողի թագավորությունից հետո զահ բարձրանալով, սկսեց խաղաղ քաղաքականություն վարել և, նկատի ունենալով, որ պարսից զորքերն արդեն հոգնել էին («բեկեալ էր զաւուրփին քազմուրեանն զաւրաց իւրոց»), չկամեցավ այլևս պատերազմել. «ոչ ընդ ումեք կամեցաւ ունել գործ պատերազմի, այլ արար խաղաղութիւն յամենայն կողմանց: Առնէ և ընդ հայոց հաշտութիւն, և կըչէ զՎահան ի դուռն և մեծարէ զնա մեծնայէս պատուով: Եւ տայ նմա զմարզպանութիւն աշխարհին և զՄամի-կոնեաց տէրութիւնն և երդում առ բազում (Ակինյանը «բազում» բառը դարձնում է «ի նմանէ կալ»): «Հ. ամս.», 1969, էջ 336—337) ի ծառայութիւն, և արձակէ բարեւա յեկկի իւր»: Սրան արձագանքող մի տեղեկություն Դազար Փարպեցին, Ասողիկը և Վարդան Արեւելցին հաջորդում են «Սեբեոսի Պատմությունից» տարբերվող տվյալներով և Կավատի փոխարեն նշում են Վաղարշին: Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 102—103) վերոհիշյալ փաստերից ելնելով ենթադրել է. «Եթէ բնագրային խանգարում չի պատահեալ, Սեբիոս անուշադրությամբ շփոթության մեջ մտրոել է»: Սա ճիշտ վճիռ է, որովհետև պատմագիտության տվյալների համաձայն Պերողին հաջորդել է ոչ թե Կավատը, այլ՝ Վաղարշը: Միայն դժվար է իմանալ, թե ո՞րն է ճիշտը՝ «բնագրային խանգարումը», թե՛ «Սեբիոս անուշադրությամբ շփոթության մեջ մտրոել է»: Բանն այն է, որ հայ մատենագիրներից միայն «Սեբեոսի Պատմության» հեղինակը չէ, որ շփոթում է Պերողին հաջորդած թագավորների կարգը: Անանունը նույնպես Պերողից հետո Վաղարշին չի նշում: Նրա հիշատակած թագավորների հերթականությունն է՝ Պերող, Զամասայ, Կավատ:

135. «Կարգեսցէ զֆաղաքն ի շահմար Ատրպատականի»: Ք. Պատկանյանը (էջ 27) թարգմանել է այսպես. «ЧТОБ ОН назначил город в Шахрмаре»: «Շահրմարը» մեծատառով, որպես հատուկ անուն է տպագրել նաև Միհրդատյանը: Ք. Պատկանյանը (էջ 185) «Շահրմար»-ը ստուգաբանել է շահր (= քաղաք) և մար (= Մար կամ Մարաց = Мар или мидийский) բառերից, երկրորդաբար ավելացնելով, որ հիշյալ տեղանունը կարող էր նշանակել նաև «օձերի քաղաք», որովհետև «Շահրմար» անվան «մար»-ը կարող էր նշանակել նաև օձ: Ստ. Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 177) հայտնում է, որ «շահրմար»-ը ո՛չ հատուկ անուն է և ո՛չ քաղաքի անուն, այլ՝ հասարակ բարդ բառ է. «Պարսկերեն շահր նշանակում է աշխարհ, իսկ մար (կրճատ ձև փոխանակ «համար»-ի) նշանակում է «համար», «մաս», ուրեմն ամբողջ բառը նշանակում է աշխարհամար, աշխարհամաս: Սյունյաց Վահան, իշխանը, հայերի միաբանությունից դուրս գալով և աստիությունը լցված՝ խնդրում է Խոսրով թագավորից, որ Սյունյաց հարկային դիվանը Դվինից փոխարեն Փայտակարան և Սյունյաց աշխարհը (որը Մեծ Հայքի 11-րդ նահանգն էր և հանդիսանում էր հայկական նախարարական տներից ամենաուժեղագույններից



մեկի՝ Սյունյաց նախարարական տան ժառանգական հայրենիքը—Գ. Ա.) մտցնե Ատրպատականի աշխարհամարի մեջ, որպեսզի հայի անուն շմեա նրա վրա (բառացի՝ «իրանց վրա», այսինքն՝ որ իրանք այլևս հայաստանցի՝ հայ չկոչվին): Այս խնդիրը նորոգով կատարում է և Սյունիքը երկար ժամանակ մնում է իբրև Ատրպատականի մաս մինչև Սասանյանների բարձունքը, երբ Սյունյաց աշխարհը, «որ առջ լծվել էր Ատրպատականի աշխարհագրին» Պարսից թագավորության վերանալուց հետո նորից միաբանեցավ ու միացավ Հայոց հետ» (զլ. Մ): Այս վերջին տեղեկության մեջ՝ Սեբեոս շահրմար բառի փոխարեն գործ է ածում նրա հայերեն թարգմանությունը—«աշխարհագիր»: Շահրմարի այս ուղիղ տեղեկությունը տվել են Մարկվարտ, Ադոնց, Սպենյան, Մանանդյան: Արմատական բառարանը փոքր-ինչ տարբեր է մեկնում այս բառի նշանակությունը:

«Շահրմարի» վերաբերյալ հզորիտ տեղեկություններ են տալիս նաև Հ. Թոփչյանը («Zeitschr für arm. Philologie», Marburg, 1903, Bd. 2, H. 1, էջ 53), Ֆ. Մակլերը, Ջամիլյանը, Ազգալեզեգյանը և այլք:

136. «Ե վերուստ մինչև ի վայր»: Ք. Պատկանյանի և Ստ. Մալխասյանցի հրատարակություններում բացակայում են «ի վերուստ մինչև» բառերը, որոնք վերականգնում ենք ըստ Ա ձեռագրի և Միհրչատյանի հրատարակության:

137. «Բայց եհաս ի վերայ նոցա»: Ջամիլյանը (Ջամ., էջ 41) «նոցա»-ի փոխարեն առաջարկում է «Հայոց»:

138. «Ես եղև պատերազմ մեծ ի դաշտին հաղամխեայ»: Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, էջ 27) գրում է. «Թերևս ուղղելի հաղամ(ա)խեաց»:

139. «Միևեանն սակաւտի պրծնալ գեացին յերկիրն իրեանց»: Ակիլյանը («Հ. ամս.», 1969, էջ 337) «Միհրանն»-ը հարցականով ուղղում է «Միհրանանք»:

140. «Ես կպեալ հանապարհ գնաց ի Մեղիտինէ և բանակեցաւ դէմ յանդիման նոցա»: Բոլոր ձեռագրերը, ինչպես նաև Ք. Միհրչատյանի և Ք. Պատկանյանի հրատարակությունները «ի Մեղիտինէ»-ի փոխարեն ունեն «ի տեղի մի»: Սա վրիպակ է, որը բացահայտվում է «և բանակեցաւ դէմ յանդիման նորա» արտահայտությամբ: Այս արտահայտությունը ցույց է տալիս, որ նախնական բնագրում «ի տեղի մի» անորոշ արտահայտության փոխարեն մատնացույց է արված եղել մի որոշակի վայր, որի «դէմ յանդիման» բնակվել են զորքերը: Եթե այդ տեղի անունը նշված չլիներ ավելորդ կլիներ «դէմ յանդիման նոցա» արտահայտությունը:

Ք. Պատկանյանը (ՍեՊ, էջ 186, ծ. 73) գրում է. «Այստեղ, ամենայն հավանականությամբ խոսվում է այն պարտության մասին, որը պարսիկները կրեցին հայերից և հույներից՝ Մելիտինի մոտ 576 թ.»: Այնուհետև Ք. Պատկանյանը մանրամասն նկարագրում է այդ պատերազմը, քաղելով լեբոնի աշխատությունից («Histoire du Bas-Empire», X, 137—140):

Ֆ. Մակլերը, ելնելով Ք. Պատկանյանի նշած պատմական փաստից, ֆրանսերեն թարգմանություն մեջ (էջ 6) «ի տեղի մի» արտահայտության դիմաց ծանոթագրել է «ի Մելիտինէ»: Այդպես է վարվել նաև Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, 27, էջ 168), որը հայտնում է, որ նախնական բնագրի «ի Մեղիտինէ»-ն դարձել է «ի տեղի մի» միջին կոչված երկաթագիր S-ի և Մ-ի շփոթի հետևանքով: Բնագիրը սրբագրել են նաև Ն. Բյուզանդացին, Ջամիլյանը (Ջամ., էջ 41) և ուրիշներ:

Բանասերների կոհսույժը հաստատող մի իրական փաստ առկա է հենց միևնույն «Սեբեոսի Պատմության» հետևյալ տողերում. «Ապա եկն ինքն արքայն Անուշ Ըռուան նորոգով, որպէս ասացի, և արար պատերազմ մի մեծ ի Մեղիտինէ, յորում պարտեցաւ և գնաց» (ՍեՊ, էջ 30): Սա վերաբերում է հենց այն ճակատամարտին, որի վայրի անունը քիչ առաջ աղավաղվելով դարձել է «ի տեղի մի»: Մեր բերած հատվածում, ինչպես տեսնում ենք, այդ տեղանունը պահպանվել է անաղարտ՝ «ի Մեղիտինէ»:

141. «Խորակեցան առաջի քշեամեացն»: Ջամիլյանը (Ջամ., էջ 42) հարցականով առաջարկում է «քշեամեացն»-ը սրբագրել «քունացն»:

142. «Ես նոքա սոխն գրեակալն ամենայն հանդերձ արժունական գանձիք: Ես կալան գրամբիշն և գրանուկան»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր հրատարակություններն ունեն «գրանակն» (փխ. «գրանուկան»): Սրբագրել ենք ըստ նախորդ բանասերների ցուցման:

Սրբագրվող բառի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Ա. Կարիբը՝ Նորայր Բյուզանդացուն ուղղած մի նամակում, որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի Անհատական արխիվների ֆոնդում (թղթ. 235, վավ 205: Նամակը ֆրանսերեն է, գրված 1892 թ. օգոստոսի 26-ին): Այստեղ Կարիբը հայտնում է, որ «կալան գրամբիշն և գրանակն» արտահայտության մեջ «բանակն» բառը պետք է ուղղել «բանուկան», որը պահլավերեն «բանուկ»:

(= «տիկին») բառն է: Այնուհետև Կարիերը բերում է Փալստոս Բուզանդից համապատասխան օրինակներ, որոնցից մեկի մեջ նույնպես բառը պահպանվել է սխալ ընդօրինակությամբ. «առին ...զկանայս թագաւորին և զբամբիշն և զբանական (կարդա՛ «բանական» վրաց՝ բանողանի = տիկին) (Փ. Բուզանդ, դպր. Գ, գլ. ԻԱ) և «բամբնէին զտիկնանցն տիկինն հանդերձ այլովք կանամբքն (Փ. Բուզանդ, դպր. Ե, գլ. 2)»: Կարիերը հետագայում իր կատարած սրբագրության մասին նամակով հայտնել է Հ. Հյուբշմանին («Arm. Gramm.», Կ. 1, էջ 117): Կարիերի առաջարկը «Սեբեոսի Պատմության» ֆրանսերեն թարգմանության մեջ կիրառել է Ֆ. Մակլերը (MacI., էջ 6): Սրբագրվող բառին անգրագարձել են նաև Ն. Բյուզանդացին, Ն. Մաուր, Ա. Զամիսյանը, Հ. Աճառյանը, որն ընդունել է «բանական» ձևը («Հայերեն արմատական բառարան», Կ. Ա, 1971, էջ 408) և ուրիշներ:

143. «Թափեցին զմաշպեբեանն ամենայն»: Մաշպեբեան բառը հանդիպում է նաև «մաշկապերձեն», «մաշկապարզան», «մաշկաարզան» և այլ ձևերով: Ծիշտ ձևը «մաշկապերձեն» է, որը համապատասխանում է պահլավերեն maškarāčēn-ին: Հ. Հյուբշմանի բացատրությամբ բառը նշանակում է պարսից արքայական կանանցի վրանը: Ք. Պատկանյանը (էջ 186) Հյուբշմանից առաջ գրեթե նույն հարկացությունն է եկել, գրելով. «Մեր կարծիքով՝ այս բառը նշանակել է արքայական վրան, չնայած Ավգերյանը, որն իր բառարանը կազմելիս Սեբեոսից չի օգտվել, բառը թարգմանում է գրասենյակ և արքունի դիվանի գլխավոր պաշտոնյաներ»: Ավգերյանի այս բացատրությունը Ք. Պատկանյանից հետո, 1865 թ. ճշգրտել է Առձեռն բառարանի հեղինակը, որը «մաշկապատճեան», «մաշկապատճէն», «մաշկապերձան», «մաշկաարզան» բառերի դիմաց բացատրել է «մաշկով պատած վրաններ, վրաններու բազմություն»: «Սեբեոսի Պատմությունում» նկարագրված այս վրաններում արշավանքների ժամանակ տեղավորվում էր պարսից արքայի հարեմը:

Նախորդ հրատարակություններում բառը տպագրված է մեծատառով, որպես հատուկ անուն:

144. «Այս հոսրով, որ կոչեցաւ Անուշ Ընուան»: Այս բառերի դիմաց «Սեբեոսի Պատմության» հնագույն ձեռագրի 498ա էջի լուսանցքում կարծիք թանաքով գրված է «է» թվանշանը: Սա չի համապատասխանում ո՛չ պրակների քանակին, ո՛չ էլ Պատմության բնագրի որևէ հատվածի, ուստի չի կարող դիտվել որպես պրակի համար կամ գլխահամար: Սույն թվանշանն ամենայն հավանականությամբ գաղափար օրինակում ընդօրինակված նյութերի համարներից մեկն է: Զեռագիրն ընդօրինակած արիշն իր օրինակում գտնված էյութերը համարակալել է և այդ համարներից 7-րդով է նշել «Այս հոսրով, որ կոչեցաւ Անուշ Ընուան» բառերով սկսվող հատվածը: Նախորդ համարները, որոնք մեր ձեռագրի գրչի կողմից չեն արտագրվել, վերաբերել են «Սեբեոսի Պատմության» սկզբին և Պատմությանը նախորդած այլ բնագրերի:

Գրիչները սովորություն են ունեցել ընդհանուր համարակալության ենթարկել ձեռագրում գտնված բոլոր նյութերը՝ իրար խառնելով տարբեր հեղինակների գործերը: Սյսպես, օրինակ, մեր ստանդարտի № 1920 ձեռագրում Ագաթանգեղոսի Պատմությունը բաժանված է ութ մասերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր համարը՝ Ա (էջ 4ա), Բ (27բ), Գ (30բ), Դ (47ա), Ե (56ա), Զ (150ա), Է (163բ), Ը (176բ): Այս համարներից հետո հաջորդող համարները (Թ, Ժ, ԺԱ, ԺԲ և այլն) շարունակվում են ուրիշ պատմիչների երկերի մեջ: Այսպես, օրինակ, Եղիշեի Պատմությունը ձեռագրում 3-րդ պատմագիրքն է, բայց նրան համապատասխանող լուսանցքում նշված է ԺԸ (18-րդ) թվանշանը: Այս թվանշանին նախորդող թվանշանները Եղիշեի գրքին չեն վերաբերում: Այդպես էլ «Սեբեոսի Պատմության» լուսանցքում նշված «է» թվանշանին նախորդած թվանշանները նախագաղափար օրինակում վերաբերել են ուրիշ հեղինակի երկերի: (Լավագույն դեպքում՝ նախորդ թվանշաններից մեկը կամ երկուսը կարող էին վերաբերել «Սեբեոսի Պատմության»):

145. «Այս հոսրով ի ժամանակս իւրոյ քազաւորութեանն կապեաց զՊահակն Ճորայ և Աղուանից»: Բոլոր ձեռագիրները, Պատկանյանը և Մալխասյանցը «պահակն» բառը գրում են փոքրատառով, մենք դարձնում ենք մեծատառով՝ որպես հատուկ անուն: Ս. Երեմյանը («Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», էջ 76) գտնում է, որ «Պահակն Ճորայ» անվամբ սկզբում «պիտի կոչվեր Մազթեաց Արշակունիների թագավորության կենտրոնը հանդիսացող Չողա կամ Ճորայ մայրաքաղաքը պաշտպանող պարիսպը»: Այս «Չողա»-ն էլ անունն էր «Մազթեաց թագավորության հիմնական տերիտորիայի, որ համապատասխանում է այժմյան Ադրբեջանական ՍՍՀ Կուսարի, Խուլաթի, Խաչմազի, Ղուբայի և Ղոնաղ-քենդի շրջաններին: Չողա երկրի տարածությունն էր 4578 կմ»: «Սեբեոսի Պատմության» հեղինակի հիշատակած «Պահակն Ճորայ» անունը, սակայն, վերաբերում է Դերբենդի արհեստական ամրություններին (Դերբենդի դարպասներ, Պահ

գրուն, Աղուանից, Կասպից, Յոնաց, Խազրաց դռներ): Ըստ այս հեղինակի Ճորա պահակը «կապել է» Խոսրով Անուշիրվան թագավորը: Մեկ այլ ավանդության համաձայն Պահակը կասպոզը եղել է Ջուկարնիսը (Ալեքսանդրը): Ք. Պատկանյանը (Սատկ., էջ 187), սակայն, գտնում է, որ «Մենք ունենք բազմաթիվ ցուցումներ այն մասին, որ Խոսրով առաջինից դեռ շատ առաջ պարսկական արքաները ուղարկություն են դարձրել այդ անցքերի (проход) կարևորության վրա և ամրացրել են դրանք՝ պետությունը հյուսիսային բարեբարոսների ասպատակություններից պաշտպանելու համար»: Հմմտ. *Малх.*, էջ 151, ծան. 57:

146. «Եւ առ մարտի զԱնտիաք Պիսիդացոց»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 337) «Պիսիդացոց» բառը վերցնում է փակագծերի մեջ, հավանաբար դա համարելով հետազայի ներմուծում: Սակայն հնարավոր է, որ դա գրած լինի հենց ինքը՝ «Սեբեոսի Պատմության» հեղինակը: Որոշ հայ մատենագիրներ նոր կտակարանի («Գործք առաքելոց», գլ. 13, տ. 14) լյանտիոք Պիսիդեայ» արտահայտությունը սխալմամբ տարածում են նաև Սիրիայում, Սելևկիայից արևելք գտնվող Անտիոքի վրա: Այսպես, օրինակ, Վանական վարդապետի «Հարցմունքում» կարգում ենք. «Անտիոք Պիսիդեայ՝ մօտ ի Սելևկիայ է: Այս մեծ Ասորոցն է» (ՄՄ, ձ. № 1254, էջ 53բ): Ֆ. Մակկերը (*Macl.*, էջ 8, ծ. 6) գտնում է, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը նույնպես թույլ է տվել միևնույն սխալը: Հմմտ. նաև *J. Marquart, Armenische Streifen* («Յուշարձան» գրական ժողովածու, Վիեննա, 1911, էջ 300):

Այսպիսով՝ ընդհանրված հանդերձ, որ «զԱնտիոք Պիսիդացոց»-ը բացահայտ սխալ է, մենք այն չենք սրբաբանում, որովհետև հնարավոր ենք համարում, որ սխալը հեղինակինն է:

147. «Վեհ անշատոք Խոսրով»: Սա անունն է Խոսրով Անուշիրվան թագավորի կառուցած մի քաղաքի, որը տարբեր մատենագիրներ կոչել են տարբեր անուններով: «Սեբեոսի Պատմության» մեջ պահպանված ձևը («Վեհ անշատոք Խոսրով») հավանաբար աղճատված ձև է, որը չի հանդիպում մեզ ծանոթ ոչ մի մատենագրի մոտ: Կարելի էր մտածել, թե սա էլ բազմաթիվ ձևերի չորոքին զոյություն ունեցած մի կանոնավոր ձև է, որը առաջին անգամ գտնում ենք «Սեբեոսի Պատմության» մեջ, բայց այս դեպքում ղոժվար է գտնել անվան ստուգաբանությունը: Այնինչ՝ մնացած բոլոր ձևերն այս կամ այն կերպ ստուգաբանվում են: Ք. Պատկանյանը (*Սատկ.*, էջ 187—188) նշել է քաղաքի անվան՝ իրեն հայտնի բոլոր ձևերը: Այսպես. Անտիոք Խոսրովյան = (Պրոկոպիոս, *De bello persico*. մասն 2, գլխ. 14), Բեհ-էդ-էնդի-Խոսրու (*Մուբալաթ, Chronologie buzantin.*, էջ 688), Բեհ-ան-Անդիդ-Խոսրու (*Modjmel-altewarikh*):

Ք. Պատկանյանից բացի անվանն անդրադարձել են նաև Թ. Նյուլդեկեն («Tabari», էջ 165, 166), Հ. Հյուբերը (*Arm. Gramm.*, I, էջ 83), Ֆ. Մակկերը (*Macl.*, էջ 8), Յ. Մարկվարտը («Armenische Streifen»: «Յուշարձան», Վիեննա, 1911, էջ 300—301), Ն. Աղոնցը («Պատմական ուսումնասիրություններ», Պարիս, 1948, էջ 221—222), Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 337) և ուրիշներ:

Արաբ աղբյուրները քաղաքը կոչում են նաև Ռումիլյա («Հանեական»), իսկ ասորական աղբյուրները՝ Անտիոք Քեւրոն, պարսիկները՝ Վեհ Անտիոս-Խոսրով:

«Սեբեոսի Պատմության» մեջ հիշատակված «Վեհ անշատոք Խոսրովը» սրբագրելու առաջարկներից Ք. Պատկանյանին պատկանում է հետևյալը. «Վեհ ան-Անդոկ Խոսրով», որը պետք է նշանակեր «Լավ, քան Խոսրով Անտիոքը»: Բայց սա մեզ հասկանալի բացատրություն չէ, որովհետև մենք գիտենք, որ քաղաքը կառուցողն ինքը Խոսրովն է եղել, հետևաբար նա չէր կարող իր կառուցած քաղաքը կոչել «Լավ, քան Խոսրով Անտիոքը»: Յ. Մարկվարտը Անշատոք ձևը բացատրել է որպես բաղադրություն (Kontamination) Անշո (ուշ պարսկերեն *Andijo-ից*) և Անտիոք անունների: Ստ. Մախասյանը (*ՍեՊ.*, 178) կրկնել է Մարկվարտի բացատրությունը, որի համաձայն քաղաքի անվան «իսկական պարսկական արտասանությունն է *Veh Antijok Chosto*, որ նշանակում է Վեհ Անտիոք Խոսրովու, այսինքն այն քաղաքը, որ Խոսրով շինեց և նրա մեջ բնակեցրեց հռոմեական Անտիոքի բերած գերիներին՝ բուն Անտիոքից լավագույն է»: Մենք առաջարկել ենք «Անշատոք»-ը սրբագրել Անտիոք: («Սեբեոսի Պատմությունը և Անանունի առեղծվածը», էջ 167): Բայց բոլոր առաջարկներից ամենահավանականը մեզ թվում է Ն. Աղոնցի առաջարկը: Նա գրում է. «Սեբեոսի Վեհ-Անշատոքը հաստատում է արաբ մատենագիրների վկայությունը, որ քաղաքի անունն իրոք եղել է Վեհ-ադ-Անտոք: Հայ Անշատոք՝ աղավաղումն է կամ Ադ-Անտոք-ի կամ ավելի հին ձևի Աժ-Անտոքի» (նշված աշխ., էջ 222): «Վեհ ադ Անտիոք» նշանակում է «Լավ քան Անտիոք»: Աղոնցի կարծիքը հաստատվում է նաև հայ դասական մատենագիր Մովսես Կաղանկատվացու վկայությամբ, որի համաձայն Խոսրովի կառուցած քաղաքը «Անտիոք քաղաքից առավել էր»:

Հայ մատենագիրները Անտիոքը կոչում են նաև Անտոք (Անդոկ): Ըստ այսմ՝ մենք կա-

մենում ենք «Սերբոսի Պատմության» մեջ աղավաղված «Անշատոր»-ի մեջ տեսնել «Անտոր» անվան և «չա» աղավաղված մասնիկի թյուրիմացական միացությունը: «Ջա» մասնիկը, մեր կարծիքով, «վեճ աղ Անտիոքի, աղ մասնիկն է՝ սխալ և ետևառաջ գրություն: Սա ձեռագրի մեջ ընդօրինակված է եղել, ինչպես երևում է «Անտոր» անվան վերևում և հետագա ընդօրինակողի կողմից սխալմամբ ներմուծվելով Անտոր-ի մեջ՝ այդ անունը դարձրել է «Ան(չա)տոր»:

148. «Ջոռ անուանեալ Ծախաստան-ի Նոկ-նոյ կոչին»: Բոլոր ձեռագրերն ունեն «զոր անուանեալ շահաստանին Ոկնոյ կոչին»: Մայրսայանցը հետեւելով Յ. Մարկվարտին («Յուշարձան»), Վիեննա, էջ 301) ուղղել է «Շահաստանի-ի Նոկ-նոյ»: Այստեղ «ի»-ն պարսկերենի որոշիչ մասնիկ է, իսկ «Նոկ»-ը (միջին պարսկերեն) և «Նոյ»-ը (նոր պարսկերեն) նշանակում են նոր: Այսպիսով՝ «Շահաստան-ի Նոկ-նոյ» նշանակում է «Շահաստանն նոր», այսինքն՝ նոր մայրաքաղաք: Մարկվարտի կարծիքով՝ «Նոյ»-ը կարող էր առաջացած լինել նաև «Նոմ» («Հոմ»)՝ բառից, որի համաձայն ամբողջը պետք է նշանակեր «շահաստանն՝ նոր Հոմ»: Գրեթե նույն մտածողությամբ՝ Ն. Ակինյանը «Շահաստանին Ոկնոյ»-ը ուղղում է «Շահաստան հոովմէական» («Հ. ամս.», 1969, էջ 337): Սա փաստորեն կրկնությունն է բանասեր Ս. Կ.-ի առաջարկած սրբագրությունը: Այս բանասերը «Ոկնոյ»-ը սրբագրում է «Հոովմայ» («Արարատ», 1899, էջ 315):

149. «Որ Երան կարողիկոս անուանի»: Բոլոր ձեռագրերն ու Միհրդատյանի հրատարակությունն ունեն «որ էր անդ (փի. «որ Երան») կաթողիկոս անուանի»: Սխալն ուղղել է Ք. Պատկանյանը (Պատկ., էջ 29), հենվելով Վարդան Արեւելցու պահպանած ուղիղ ընթերցվածի («որ Երան կաթողիկոս») վրա:

150. «Եւ հաղորդեցաւ կենդանաբար մարմնոյ և արեանն տեառն»: Բոլոր ձեռագրերն ու սուպակիր բնագրերն ունեն «Եւ հաղորդեցաւ ի կենդանաբար մարմնոյ և արեանն տեառն»: Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 103—104 և 1970, էջ 136) գտնում է, որ սա խաթարված արտահայտություն է: Նա որոշակի օրինակներով ցույց է տալիս, որ «հաղորդիմ բայը սովորաբար տրական հոլովով սեռի խնդիր կանոնու»: Ըստ այդմ էլ նա նշված նախադասության մեջ առկա «ի» նախդիրը համարում է ավելորդ և հատվածը սրբագրում է այսպես. «Եւ հաղորդեցաւ կենդանաբար մարմնոյ և արեանն տեառն»: Այս սրբագրությունը հիմնավորելու նպատակով վկայակոչված բոլոր օրինակների մեջ «հաղորդել» բառն ունի իսկապես նշված խնդիրը («հաղորդիլ սուրբ մարմնոյ»): Սակայն օրինակները բերված են ուրիշ մատենագիրներից, այնինչ՝ հենց «Սերբոսի Պատմության» մեջ (գլ. ԽԵ) առկա է Մ. Գրիգորյանի սրբագրությունը հաստատող հետևյալ արտահայտությունը. «Ոչ երբեք ընդունէին Հայք ղՀոռոմն ի հաղորդութիւն մարմնոյ եւ արեան Տեառն»: Շիրակացիին նույնպես գրում է. «հաղորդելով մարմնոյ եւ արեան ճշմարիտ գաղինն» («Շիրակացու մատենագրությունը», էջ 299): Այս օրինակների հիման վրա բնագիրը սրբագրում ենք Մ. Գրիգորյանի առաջարկի համաձայն:

Ի դեպ, «Սերբոսի Պատմությունն» ընդօրինակող գրչի գործածած ձևը գտնում ենք նաև Յմբատ Սպարապետի մոտ. «հաղորդեալ ի կենարար մարմնոյ եւ արենէն Քրիստոսի» («Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 7): Եղիշեն (հրատ. Ե. Տեր-Մինասյանի, էջ 152) ունի. «հաղորդէր ի կենդանաբար մարմինն ի ք բաւիչ արեանն Տեառն»:

151. «Միջև ցայաւոր ծամանակի»: Այս արտահայտությունը առիթ է տվել զանազան ենթագրությունների: Գտնելով, որ այն գրված է 504 թ. (իսկ «Սերբոսի Պատմության» մեջ նկարագրված դեպքերի ժամանակը հասնում է մինչև 661 թ.), Հ. Հյուբշմանը (Hübisch, էջ 8, ծ. 1) հայտնել է այն կարծիքը, թե արտահայտության մեջ կան մեկ ուրիշ հեղինակի մասին վկայող նշաններ: Բայց այդ նշանները նա թողնում է առանց արձագանքի, որովհետև միաժամանակ համոզված է եղել, որ արտահայտությունը պարունակող գրուխը և գրքի ընդհանուր առաջաբանը կրում են միևնույն հեղինակի գրչի գորշմը: Այսպիսով՝ Հյուբշմանի համար հարցը մնացել է չուծված: Ն. Աղբալյանը («Պատմություն հայոց գրականության», Պեչյուր, 1970, հ. 4, էջ 448) խնդրո առարկա արտահայտությունը դիտում է որպես «Սերբոսի Պատմությունը» ընդհատումներով գրված լինելու նշան: Նրա կարծիքով՝ նախ գրվել է արտահայտությունը պարունակող մասը, ապա՝ մյուս մասերը: Պ. Անանյանը («Սերբոսի Պատմության գրքի մասին քանի մը լուսաբանություններ», Վիեննա, 1972, էջ 132) արտահայտության գրությունը ժամանակը համարում է 608 թ. և գտնում է, որ այն պատկանում է ոչ թե «Սերբոսի Պատմության» հեղինակին, այլ նույնությամբ քաղված է մեկ այլ աղբյուրից:

Կարծիքների այս բազմազանությունը բնական է, որովհետև գոյություն ունի շափազանց մեծ և առեղծվածային մի անջրպետ «Սերբոսի Պատմությունում» նկարագրված վերջին դեպքերի (661 թ.) և «միջև ցայաւոր ծամանակի» արտահայտությամբ ակնարկվող ժամանակի միջև:

Այդ ժամանակը, ինչպես տեսանք, բանասերները համարել են 604—608 թթ., իրականում,

սակայն, դա 590 թվականն է: Այս թվականին սպանվել է պարսից Որմիզզ Դ արքան, և «Սեբեոսի Պատմութիան» հեղինակը «մինչև ցայսար ժամանակի» ասելով հասկացել է արքայի սպանության տարին:

Սույն իրողությունը ակնհայտ դարձնենք մեզ հետաքրքրող հատվածը ավելի մոտիկից քննելով: Այստեղ հեղինակը նախ հայտնում է Որմիզզի գահ բարձրանալու մասին («Եւ թագաւորէ Որմիզզ») և ապա շարունակում է. «Եւ արդ այս են զպարավարք արքային Պարսից, որ եկին մի ըստ միոջէ յերկիրս Հայոց՝ յապստամբութենէ Վարդանայ Մամիկոնէից տեսան որդւոյն Վասակայ մինչև ցայսար ժամանակի»: Սրանից հետո նա մեկ առ մեկ թվարկում է Հայաստան եկած պարսիկ զորավարներին և թվարկումն ավարտում է դարձյալ Որմիզզով. «Ապա եկն Հրատրին Դատան մարզպան... առ սովաւ սպանաւ Որմիզզ»: Այսպիսով՝ պարսիկ զորավարների ցանկը «Սեբեոսի Պատմութիւնում» սկսվում և ավարտվում է Որմիզզի գահ բարձրանալու և մահվան մասին հայտնվող տեղեկություններով: Նշանակում է ցանկը կազմվել է Որմիզզի օրոք տեղի ունեցած կարևոր դեպքերի հիշատակության առիթով: Այդ դեպքերից առաջինն այն է, որ պարսիկ զորավարների Հայաստան գալու ժամանակաշրջանն ավարտվում է Որմիզզի օրոք, մյուսն էլ այն, որ Որմիզզի սպանության և վերջին զորավարի տարիները համընկնում են: Յանկն ավարտվում է Որմիզզի սպանության հիշատակմամբ:

Զորավարների ցանկին հաջորդում է սահմանակալների ցանկը. «Ապա եկին սահմանակալք պարսիկք մինչև ցայստումն խաղաղութեանն, որ ի մէջ ... Մարկայ և Խոսրովայ: Ինչպես տեսնում ենք, սահմանակալների Հայաստան գալն այլևս Որմիզզի հետ չի կապվում: Այս անգամ հանդես են գալիս Որմիզզի հաջորդած Խոսրովը և Մորիկը: Սահմանակալներից վերջինը Հայաստան է եկել այս երկու թագավորների օրոք կնքված հաշտության պայմանագրի վերջին տարին. «մինչև ցայստումն խաղաղութեանն, որ ի մէջ Պարսից և Յունաց»: Սա տեղի է ունեցել 604 թ.: Ահա այս թվականն է, որ շփոթվել է Որմիզզի օրոք Հայաստան եկած զորավարների ժամանակի հետ:

Նշված ժամանակի բացահայտումը որքան որ կարևոր է պատմագիտական առումով (ճշգրտվում է զորավարների Հայաստան գալու վերջին ժամանակը), այնքան էլ աննշան է «Սեբեոսի Պատմութիան» շարադրման հանգամանքները պարզելու առումով: 590 թվականից մինչև 604 թ. ընկած ժամանակն ընդամենը 14 տարի է, և եթե այդքան տարի հետո էլ սկսված լինեք զրքի շարադրումը՝ դարձյալ կստացվեք այնպես, որ գիրքը շարադրվել է մեծ անջրպետներ պարունակող ընդհատումներով (604 թ., 661 թ.): Այս դեպքում կարող էր ծագել նաև երկրորդ հեղինակի հարցը:

Այսպիսով՝ «մինչև ցայսար ժամանակի» արտահայտության միջոցով հնարավոր չէ ճշգրիտ եզրակացության հասնել: Մեզ հետաքրքրող հարցի անմիջական պատասխանը գտնում ենք զրքի առաջաբանում: Այստեղ հեղինակը խոստանում է նկարագրել ի շարս այլ դեպքերի նաև արաբական արշավանքները. «Թէ որպէս յանկարծարէն շարժեցան բանակքն Իսմայլի ... մինչև... ցահման Հայաստանեայց» (էջ 24): Արաբները մինչև Հայաստանի սահմաններն են հասել առաջին անգամ 640 թ., նշանակում է առաջաբանը գրվել է այդ թվականից հետո: Ուրեմն, 590 թվականը զրքի շարադրման հետ կապ չունի: Գիրքը գրվել է առաջաբանի հետ միասին, միանգամից: Ընդհատումներով կամ երկրորդ հեղինակի մասնակցությամբ գրված լինելու մասին վկայող որևէ նշան «Սեբեոսի Պատմութիւնում» չկա:

Եթե ընդունենք, որ գիրքը գրվել է ընդհատումներով՝ հեղինակի տարիքը կհասնի առնվազն հարյուր տարեկանի: Բավական է, որ 590 թվականին հեղինակը լինեք 30 տարեկան («Սեբեոսի Պատմութիւնից» երևում է, որ նրա հեղինակը փորձված և աշխարհաճանաչ մարդ է), գիրքն ավարտելու տարին (661 թ.) կդառնար 101 տարեկան: Սա գիրք գրելու համար հավանական տարիք չէ: Ուստի, մի ավելորդ անգամ պարզվում է, որ «մինչև ցայսար ժամանակի» արտահայտությունը գիրքը շարադրելու հանգամանքների հետ կապ չունի:

Այդ արտահայտությունը հեղինակը գործածել է, ինչպես երևում է, «մինչև ցայսար» («մինչև այստեղ» «մինչև այս ժամանակ», այսինքն՝ մինչև Որմիզզի ժամանակ) իմաստով: «Մինչև ցայսար»-ը ունեցել է և՛ տեղ, և՛ ժամանակ արտահայտող իմաստ, ինչպես ոտակերևն «до сих пор»: Այս իմաստով են գործածել նաև Ասողիկը («Թ թագաւորութենէն Արշակայ քաջի մինչև ցայսար», էջ 5), Մխիթար Անեցի («Թ Շապուհոյ մինչև ցայսար») և ուրիշներ\*։ Հետևաբար՝ կարելի էր նաև

\* Առաքել Դավրիժեցի («Պատմութիւն», Վաղարշապատ, 1896, էջ 403) գրում է. «Անհամեմատ և գեր ի վերոյ եղև (Միմեոն Ջուղայեցի—Գ. Ա.), քան զամենայն վարդապետս ժամանակիս այսր»:

մտածել, որ «Սեբեոսի Պատմությունում» նույնպես գրված է եղել այդպես, բայց գրիչները «մինչև ցայսր»-ը շփոթել են «մինչև ցայսար»-ի հետ և այդ ընկալման համաձայն էլ ավելացնելով «ժամանակի» բառը ստեղծել են բազում խորհրդածությունների առիթ տվող «մինչև ցայսար ժամանակի» արտահայտությունը: Այս ենթադրությունը հաստատելու համար, սակայն, պահանջվում են ավելի հաստատ ապացույցներ:

Նույնպիսի ապացույցների կարիք ունի նաև այն ենթադրությունը, որի համաձայն առեղծվածային արտահայտությունը նույնությամբ քաղված է «Սեբեոսի Պատմության» աղբյուրից: Նույն ժամ մեր ձեռքին գտնվող տվյալները ցույց են տալիս, որ աչն պատկանում է «Սեբեոսի Պատմության» հեղինակի գրչին: Այդ մասին է վկայում խնդրո առարկա արտահայտության հետ միասին պարսիկ զորավարների ցանկում գտնվող հետևյալ տեղեկությունը. «Ապա եկն ինքն արբայն Անուշ Ըռուան Խոսրով, ուրպես ասացի, և արար պատերազմ մի մեծ ի Մեղիտինէ» (էջ 30): Ինչպես տեսնում ենք, հեղինակը հայտնում է, որ ինքն ինչ-որ տեղ արգեն խոսել է Խոսրով Անուշը վանի՝ Մեղիտինեում վարած պատերազմի մասին: Եթե այդ տեղը մեզ հայտնի չլիներ՝ կրնալու ենք, որ զորավարների ցանկը «Սեբեոսի Պատմության» հեղինակը քաղել է անհայտ աղբյուրից, որտեղից և նույնությամբ արտագրել է «մինչև ցայսար ժամանակի» արտահայտությունը: Բայց իրականում Մեղիտինեի կովի մասին մեր որոնած տեղեկությունը գտնում ենք հենց «Սեբեոսի Պատմությունում» և հենց՝ ցանկին նախորդող գլխում: Այստեղ կարդում ենք. «Անուշ Ըռուան Խոսրով... կալիալ ճանապարհ՝ գնաց ի Մեղիտինէ և ...բաղխէին զմիմեանս պատերազմաւ» (էջ 27): Այսպիսով՝ զորավարների ցանկը և նրան նախորդող գլուխը գրված են միևնույն անձնավորության կողմից: Ուստի՝ «մինչև ցայսար ժամանակի» արտահայտությունը նույնպես պատկանում է նույն հեղինակի գրչին: Իսկ այդ հեղինակը «Սեբեոսի Պատմության» հեղինակն է:

152. «Ոմանք մեռան ի պատերազմի, և ոմանք պատերազմեցան և ոմանք յաղբութիւն գործեցին և զնացին»: Այս նախադասության մեջ «պատերազմեցան» բառը կասկած է հարուցում: Ի՞նչ է նշանակում «ոմանք պատերազմեցան և ոմանք յաղբութիւն գործեցին»: Մի՞թե պատերազմիլը և հաղթությունը գործելը անհարիր գործողություններ են: Ինչպես երևում է, «պատերազմեցան» բառի փոխարեն սկզբում եղել է մեկ ուրիշ բառ: Կարիերը (ՄՄ, անհատական արխիվների բաժին, թղթ. 235, վավ. 204—205) և՛ հավանաբար նրա հետևողությամբ՝ Մակիերը Macl., էջ 9) «պատերազմեցան»-ը վերծանել են «պարտեցան»: Սա հավանական վերծանություն է, որովհետև «պարտեցան» բառով իմաստավորվում է նախադասությունը. «ոմանք մեռան... ոմանք պարտեցան և ոմանք յաղբութիւն գործեցին»:

153. «Ի նմին ամի եկն»: Այս բառերից հետո Զամինյանը (Զամ., էջ 45) անկյունավոր փակագծերով ներմտծում է «Ե վերայ Վարդանայ» բառերը, ընդունելով, որ դրանք գտնվել են նախնական բնագրում:

154. Վարդան Վշնասպը հայ մատենագրության մեջ հիշատակվում է նաև Վշնաս Վահրամ (Հովհ. Գրասխանակերտցի, Վարդան) ձևով: Ք. Պատկանյանը (Սարգ., էջ 189, ծ. 84) գտնում է, որ անվան ուղիղ ձևն է Վահրամը կամ Վարամանը, որի մասին խոսում է Քեոփանես Բյուզանդացին: Ն. Ակինյանը («Հ. ամս», 1969, էջ 337) Վարդան Վշնասպի անվան դիմաց ծանոթագրել է «Arvand Gusnasp?»: Առ այս համտ. Մ. Գրիգորյանի կարծիքը («Հ. ամս», 1969, էջ 347):

155. Ք. Պատկանյանը Գողոն Միհրանին նույնացնում է Միհրան Միհրեանդակի հետ և Գողոն անունը երկբայաբար ստուգաբանում է հայերեն «գողոն» բառից կամ էլ՝ Միհրանի մականուն Ճիհր-Վղոնից (Սարգ., էջ 189, ծ. 85): «Վղոն» ձևը հարցականով առաջարկում է նաև Ն. Ակինյանը («Հ. ամս», 1969, էջ 337): Իսկ Ա. Զամինյանը (Զամ., էջ 45) «Գողոն» անվան դիմաց գրում է «ոչ անուն, այլ՝ հասարակ»:

156. «Որ բնակեալն են ընդ»: Բոլոր ձեռագրերն ունեն «ընդ որ բնակեալն են»: Այս վրիպակն ուղղել են Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, 30) և Զամինյանը (Զամ., էջ 45):

157. Ո՛չ «Փիլիպպոս» անունը, ո՛չ էլ «Սիւնեաց տէր» տիտղոսը չեն համապատասխանում «գորավարք արքային Պարսից որ եկին մի ըստ միոջէ յերկիրս Հայոց» արտահայտությանը: Ինչպես երևում է, Փիլիպպոսի անունը պատահաբար է հայտնվել պարսից զորավարների ցանկում: Ֆ. Մակիերը (էջ 9) ենթադրում է, որ «Սիւնեաց տէր» բառերից հետո տեքստը սակաս ունի: Հավանաբար այս պակասող տեղում գրված է եղել իսկական զորավարի անունը (Մակիերը անկյունավոր փակագծերի մեջ վերականգնում է «Գողոն Միհրան» անունը), իսկ Փիլիպպոսը

հիշատակված է եղել Գողոն Միհրանի հետ կապված ինչ-որ զործի առիթով: Բնագրի կորստյան հետևանքով տայվոբրուժյուն է ստացվում, թե Փիլիպպոսը Գողոն Միհրանին հաջորդող պարսկական զորավարն է: Բայց որ դա այդպես չէ երևում է նաև նրանից, որ բոլոր զորավարների Հայաստան գալն ազդարարված է «եկն» կամ «ապա եկն» բառերով («եկն Վարդան Վշնասպ», «ապա եկն և Գողոնն» և այլն), իսկ Փիլիպպոսի անունը նախորդներից անկասկա է:

158. «Արաբ կռի մի ընդ Բաղախ և ընդ Խաղամախիս»: «Սեբեոսի Պատմության» մեջ երկու անգամ գործածված է Խաղամախիս անծանոթ տեղանունը (մեկ անգամ՝ «Խաղամախիս» ձևով, որը Մալխասյանցը սրբագրում է «Ճաղամախեսաց»): Մալխասյանցն (ՍԵՊ, 179) այս տեղանունը նույնացնում է Խոսրովի անտառի հետ, հետևյալ պատճառաբանությամբ. «Քանի որ հեղինակը չէ հիշում քաղաքի անունը, որի և Խաղամախիքի միջև տեղի է ունեցել կռիվը, պարզ է, որ նա աչքի առաջ ունի մի մեծ՝ կենտրոնական քաղաք, որպիսին էր այդ ժամանակ Դվինը: Արգ՝ Դվինից դեպի արևմուտք, երկու-երեք կիլոմետր հեռավորության վրա ընկնում էր Խոսրով Կոտակի տնկած անտառը, Խոսրովակերտ, որ ռազմական կարևոր դիրք էր համարվում Դվինի դեմ պատերազմ մղելիս: Ղ. Փարպեցին հիշում է, թե Հաղարավոխտը Վահանի վրա հարձակվելիս Դվին քաղաքի մոտ հասնելով՝ պատերազմական ճակատը պատրաստում էր «ի միջոցէ մայրոյն, որում Խոսրովակերտն ասեն»: Ինքը «Սեբեոսը հետո (զլ. Խ) նկարագրելով արաբացոց առաջին հարձակումը Դվինի վրա ասում է, թե նրանք հկան բնակեցան Խոսրովակերտ անտառի եզրին և այնտեղից հարձակվեցին քաղաքի վրա:

Այս հիմունքի վրա, — արժանահում է Մալխասյանցը, — հավանական ենք համարում, որ հիշված Խաղամախիքի տակ պետք է հասկանալ Խոսրովակերտ անտառը, իսկ բառը բացատրել առաջ եկած Կաղամախիք-ից, այսինքն կաղամախի տնկված անտառ: Փավստոսը ասում է, թե անտառում տնկված էր «վայրի կաղին», և դաշտը լցրին կաղնատուն տնկով: Ոչ մի դժվարություն չկա վայրի կաղնատունը և կաղամախին նույնացնելու մեջ»:

Մակիերը բնագիրը վերծանել է այսպես. «արար կռի մի ընդ քաղաք Խաղամախիս» («attaqua la ville de Xalamaxis», Macl., էջ 9): Իսկ Ալիինյանը՝ «Արաբ կռի մի ընդ Դուին և ընդ Խաղամախիս» («Հ. մամ.», 1969, էջ 337): Այսպիսով՝ Մակիերը ջնջել է «և ընդ» բառերը, իսկ Ալիինյանը «քաղաք» բառը փոխարինել է «Դուին» անվամբ: Այս երկու փոփոխություններն էլ Մալխասյանցի բացատրությունից հետո կորցնում են իրենց ուժը, որովհետև «Սեբեոսի Պատմությունը» պետք է հասկանալ հենց այնպես, ինչպես բացատրել է Մալխասյանցը: Վերջինս (ՍԵՊ, էջ 30) միաժամանակ հարցականով գրում է. «զուցե ուղղելի՞ Կաղամախիս» (փխ. «Սաղամախիս»):

159. «Ի վերստին կռի մի ի Վաճանդ»: «Խաղամախիս» տեղանվանը «Սեբեոսի Պատմության» հնագույն ձևագրում հաջորդում է «եւ ... տին»: Բազմակետերով մեր նշած պակասը լրացնում ենք «վերս» տառերով և բառերն ամբողջապես կարդում «եւ վերստին»: Այս բառը բացակայում է բոլոր նախկին հրատարակություններում և առաջին անգամ է վերականգնվում բնագրի մեջ:

160. «Ի յկրմսու գեղ»: Զամինյանը դարձնում է «գեւջ» (փխ. «գեղ»), բայց մենք վստահ չենք, թե հեղինակն այդպես է գրել:

161. «Ապա եկն իմե՛ն արքայն Անուշ Ըռուան Խոսրով որպէս»: Զեռագրերն այս արտահայտության փոխաբեն ունեն՝ «Ապա եկն ինքն արքայն Անուշ Ըռուան, որ»: Վերջին՝ «որ» բառից հետո ձեռագրի թղթերը ետևառաջ են ընկել և ընդօրինակող գրիչը բնագրի աղճատվածությունը չնկատելով՝ ընդօրինակել է պատահաբար «որ» բառի մոտ հայտնված բնագիրը: Այսպիսով՝ ինչպես ձեռագրերում, այնպես էլ թ. Միհրդատյանի և Բ. Պատկանյանի հրատարակություններում բնագիրը աղճատված է: Մտ. Մալխասյանցը ուղղել է սխալը և բնագիրը հրատարակել կարգավորելուց հետո: Նրա կատարած աշխատանքը ներկայացնելուց առաջ ծանոթանանք նախորդ բանասերների ջանքերին:

Միհրդատյանը տեսնելով, որ մեր նշած «որ» բառին ձեռագրում հաջորդում է «զվնդոյն կապեալ եղ ի Գրուանդականի» («Ապա եկն ինքն արքայն Անուշ Ըռուան, որ զվնդոյն կապեալ եղ ի Գրուանդականի») և նախօրոք իմանալով, որ Վնդոյին կապել և Գրվանդականի բերդի մեջ բանտարկել է պարսից թագավոր Անուշիրվան Խոսրովի որդի Որմիզը, իր հրատարակության մեջ ավելացրել է Որմիզի անունը, այսպես՝ «Ապա եկն ինքն արքայն (Որմիզը որդի) Անուշ Ըռուան Խոսրով[ու], որ զվնդոյն կապեալ» և այլն: Սրանով Միհրդատյանն ավարտել է իր աշխատանքը՝ շկոհելով թղթերի ետևառաջության մասին և չնկատելով, որ իր կատարած սրբագրությամբ ավելի է աղավաղել բնագիրը:

Ք. Պատկանյանը նույնությամբ հետևել է Միհրդատյանին:

Քերթերի ետևառաջությունը և դրա հետևանքով բնագրի աղճատված լինելն առաջին անգամ նկատել է Ա. Կարիերը, որն ի դեպ սկսել է «Սեբեոսի Պատմության» ֆրանսերեն թարգմանությունը և չի ավարտել իր աշխատանքը՝ մասվան պատճառով: 1892 թ. օգոստոսի 26-ին գրած ֆրանսերեն մի նամակում (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 235, վավ. 205) նա առաջարկել է ջնջել Միհրդատյանի կողմից փակագծերի մեջ ավելացված և բնագրին աղավաղած բառերը և ձեռագրում գտնվող հիշյալ «որ» բառը դարձնելով «որպէս»՝ բնագրի շարունակել մի քանի էջով հետո ընկած «որպէս ասացի, և արար պատերազմի մի մեծ ի Մելիտինէ» արտահայտությունը:

Կարիերի այս ճիշտ ուղղումը կիրառել է նրա աշակերտ Յ. Մակլերը «Սեբեոսի Պատմության» ֆրանսերեն թարգմանության մեջ: Ստ. Մալխասյանցի կարգավորած բնագրի մեկ էջը համընկնում է Կարիերի սույն առաջարկին:

Քերթերի ետևառաջությունը կարգավորելու փորձեր են արել նաև Ն. Ակինյանը («Սեբեոս եպիսկոպոս Բագրատունեաց...», Վիեննա, 1924, էջ 30—36) և Զամինյանը (Թղթ 232ա, վավ. 101, էջ 60—61, 88, 89 և թղթ. 232ա, վավ. 133, էջ 46, 53, 57): Զամինյանի կարգավորած որոշ հատվածներ համընկնում են Մալխասյանցի կարգավորածի հետ:

Բնագրի տվյալ հատվածի վերջնական կարգավորումը պատկանում է, ինչպես ասվեց, Ստ. Մալխասյանցին: Բերենք նրա կատարած աշխատանքի նկարագիրը (ՍԵՊ, 179—180). «Մայր ձեռագրում, որից ծագել են Ա և մյուս ձեռագիրները՝ բնագրի «Անուշ Ընուան Խոսրով ու» խոսքից հետո մի թուղթ պոկված է եղել, որը նորից զետեղել են ձեռագրի մեջ, բայց ոչ յուր նեղում. այլ՝ մի թուղթ հետո, որի պատճառով մի քանի երեսի վրա ամբողջապես խառնաշփոթված են եղելությունները, խախտված է անցքերի հաջորդությունը, կցկտուր է և անհասկանալի: Վերականգնեցինք բնագրին սկզբնական ձևով, ինչպես առաջարկել էինք մեր Սեբեոսի պատմության մեջ (եր. 105—108): Որպեսզի նախորդ հրատարակությունները շտեմարկներին հասկացողություն տանք հիշյալ խառնաշփոթության մասին՝ այստեղ համառոտակի կերբենք հատվածների հաջորդությունը նրանց մեջ:

«Ապա եկն ինքն արեայն (Ռումիզդ արդի) Անուշ Ընուան Խոսրով(ու), որ զՎնդոյն կապեալ եղ ի Գրուանդականի», մինչև «զի սպանեցին զՌումիզդ և նստացեն քազաւոր գորդի աւրա գեոսրով» (եր. 35), որից հետո շարունակվում է «խորհուրդ արեալ լուծանել զնա և առնել իւրեանց առաջնորդ», մինչև «բառ հազարաւորաց, ըստ զնից, ըստ դրաւից իւրեանց» (եր. 37), որից հետո շարունակվում է. «Աւր՝ վասն զի մայր Շապինդ», մինչև «և խորհրդական և ստիւ աւիագոյն» (եր. 33), որից հետո շարունակվում է «որպէս ասացի, արար պատերազմ մի մեծ», մինչև «և ինքն երկու որդիք սպարապետիս այսորիկ, անուն թիայն Վնդոյ և միւսայն Վստամ» (եր. 30)՝ որից հետո շարունակվում է. «և զգարս աշխարհին Հայոց ընդունին զամարել» և այլն (էջ 38):

Ձեռագրում խախտված էջերի և իր շտկած բնագրի հարաբերական պատկերը ներկայացնելով հանդերձ Մալխասյանցը փորք-ինչ վրիպել է: «Ապա եկն ինքն արեայն Անուշ Ընուան Խոսրով» խոսքից հետո, ճիշտ է, պոկված է եղել մեկ թուղթ, բայց այդ թուղթը հետագայում նորից ձեռագրի մեջ զետեղվել և ընդօրինակվել է ոչ թե իր իսկական տեղից մեկ, ինչպես կարծել է Մալխասյանցը, այլ երկու թերթ հետո:

Մենք հաշվել ենք № 2639 ձեռագրի յուրաքանչյուր էջի տողերի քանակը և նկատի ունենալով նաև զըշական այլ մանրամասնություններ, պարզել ենք, որ այն նախազադափար օրինակը, որից արտագրվել է սույն ձեռագիրը և որն այժմ անհետ կորած է, գրված է եղել խոշոր երկաթագիր տառերով և յուրաքանչյուր թերթի երկու երեսի վրա ունեցել է միջին հաշվով 58 տող: Ահա այս հաշվումներով պարզվում է, որ ընկած թղթի վրա գտնված տեքստը պետք է որոնել ոչ թե մեկ, այլ երկու թերթ հետո: Բնագրի խախտումը տեղի է ունեցել Մալխասյանցի շտկած հրատարակության 30—33-րդ էջերի սահմաններում: Այդ էջերի վրա իրենց կանոնավոր հաջորդականությամբ տպագրված նյութերը № 2639 ձեռագրում ունեն հետևյալ սխալ հերթականությունը: Ետևառաջությունն սկսվում է «Ապա եկն ինքն արեայն Անուշ Ընուան Խոսրով որպէս» բառերից (Մալխասյանցի հրատարակության 30-րդ էջի 18-րդ տող) հետո: Այդ բառերը ձեռագրում ընդօրինակված են 499ա էջի վրա: Դրանից անմիջապես հետո եկող տողերը («որպէս ասացի, և արար պատերազմ մի մեծ ի Մելիտինէ» և այլն) գտնվում է ձեռագրի 500թ թերթի վրա: Այսպիսով՝ տպագրի հրատարակության մեջ միմյանց մոտ են բերված և իրար են կցված՝ ձեռագրի 499ա էջի առաջին այտուցակի 12-րդ տողը և 500թ էջի երկրորդ այտուցակի 25-րդ տողը, այսինքն՝ միացված են երկու թերթ (499թ, 500ա) իրարից հետո գտնվող բառերը: Դրանց հաջորդում է տեքստի շարունակությունը, որն ընթանում է ձեռագրի էջերի այսպիսի հերթականու-



թիւում՝ 501ա—500բ—499ա—499բ—500բ (մի քանի տող)—500ա—500բ (501ա-ն բաց է թողնված և անմիջապես հաջորդում է)—500բ: Ինչպես տեսնում ենք, թերթերի համարները հախճաթով են: Դրանց համեմատ էլ խախտված է նյութերի դասավորությունը:

162. Արար պատերազմ մեծ ի Մեղիտինէ»: Բուրը ձեռագրերն ու տպագրերն ունեն «Մեղիտինէ»-ի փոխարեն «Մելիտինէ»: Դարձրել ենք «Մեղիտինէ», նկատի ունենալով, որ նախորդ գլխում սույն տեղանունը սրբագրված է այդպես (տե՛ս ծ. 140): Որ նախնական բնագրում եղել է իսկապես «Մեղիտինէ»՝ երևում է նրանից, որ նախորդ գլխի ձեռագրերում այս տեղանվան փոխարեն գրիչները սխալմամբ ընդօրինակել են «ի տեղի մի»: «Տեղի» բառի մեջ գտնվող «ղ» տառը վկայում է նախնական բնագրում եղած «Մեղիտինէ»-ի (և ոչ՝ «Մելիտինէ»-ի) մասին:

163. «Ապա եկն Վարազ Վգուրն»: Ն. Ակինյանը («Շ. ամս.», 1969, էջ 339) «Վարազ Վըզուրն»-ը սրբագրում է «Վարազ Վզուրկ»: Հայաստան եկած զորավարների շարքում «Սեբեոսի Պատմության» հեղինակը Վարազ Վզուրից հետո նշում է անանուն մի զորավարի, որի մասին գրում է. «Ապա եկն սպասն մեծ պարթևն և պահլան»: Մարկվարտը (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 262, վավ. 2, միկրոֆիլմ, էջ 64) առաջարկում է սրյն նախադասության մեջ հանդիպող «ասպետն» բառը սրբագրել «ասպ[արապ]ետն»:

164. «Ապա եկին սամանակալի պարսիկ մինչև ցապառումն խաղաղութեանն՝ որ ի մէջ Պարսից և Յունաց և ի մէջ քաղաքացն Երկացունց Մավրիկայ և Խորովայ: Եւ ապա Վրենդատականն: Ապա խորականն: Զսա սպանին գաւր Գարսից ի Գառնի, և ինքեանք ապստամբեալ գնացին ի Գեղումս: Ապա Մերակրտն: Ապա Յաղթն: Ապա Բուտմահ: Ապա Հոյիմանն»:

Սույն տեղեկությունը համարյա միևնույն բառերով գտնում ենք նաև 514ա էջում. «Եւ այս են սահմանակալք տէրութեանն Պարսից յամս հաշտութեան այնորիկ ի Հայաստան երկրի և ի Դուրն քաղաքի: Վնդատական, Նիխորական, զսա սպանին զարքն Պարսից ի Դուրն և ինքեանք ապստամբեալ գնացին ի Գեղումս: Ապա Մերկրտ: Ապա Յաղթն: Ապա Բուտմահ: Ապա Յեմանն»: Այս վերջին հատվածում հանդիպող «Վնդատական, Նիխորական»-ի փոխարեն Մարկվարտը (ՄՄ, թղթ. 262, վավ. 3, միկրոֆիլմ) առաջարկում է սրբագրել «նախ Վնդական Նիխորականն»: Ա. Զամինյանը (թղթ. 232ա, վավ. 101, էջ 60) և Ն. Ակինյանը («Շ. ամս.», 1969, էջ 339) առաջարկել են առաջին հատվածի Խորական անունը երկրորդ հատվածի Նիխորականի նմանողությամբ սրբագրել Նիխորական (Նիխորական):

Երկու հատվածները համաձայնեցնելու առաջարկ է արել նաև Մ. Գրիգորյանը («Շ. ամս.», 1968, էջ 106—108, և «Շ. ամս.», 1970, էջ 437—439), որը նույնպես Խորականը դարձնում է Նիխորական: Մենք հատվածների տարբերությունը վերացնելուն կողմնակից չլինելով՝ մատնանշել ենք Նիխորականի սպանության վայրի անհամաձայնության փաստը երկու հատվածներում: Մ. Գրիգորյանն այս կապակցությամբ գրում է. «Աբգարյան մեծ կարևորություն կրնձայն պատուսպան Նիխորականի սպանության վայրի մասին... Տարբերությունը պարզապես արդյունք է գրչական սխալի մը... ըստ իս Նիխորականի մահվան վայրը այնքան էլ կարևոր հարց մը չէ: Աբգարյան կվախենա, որ եթե կուսակալներու անունները ուղղենք, բանասերներն այլևս ուշադիր պիտի չլինեն Գառնի-Դվին շփոթության. ես անձնապես անտեղի կը գտնեմ նրա մտավախությունը» («Շ. ամս.», 1970, էջ 438—439):

Բայց մենք ավելի մոտիկից ծանոթանանք մեզ հետաքրքրող հատվածներին:

էջ 71

Վնդատական Նիխորական զսա սպանին զարքն Պարսից ի Դուրն և ինքեանք ապստամբեալ գնացին ի Գեղումս:

Անառարկելիորեն միմյանցից բխող այս երկու հատվածների գոյությունը գրքում արտասովոր է: Ավելի սպասելի կլինեն, եթե տարբեր հեղինակներ արտագրեին մեկը մյուսից: Դժվար է հավատալ, թե միևնույն հեղինակը միևնույն գրքում երկու անգամ կրկնելու միևնույն տեղեկությունը, այն էլ՝ արտագրելով ինքն իրեն: Ուստի պատահական չէ, որ Ա. Կարիերը դեռևս անցյալ դարում կասկած է հայտնել երկու հատվածների համասեղ գոյության վերաբերյալ (տե՛ս մեր աշխ., էջ 170): Նա նույնիսկ հնարավոր է համարել, որ հատվածներից մեկը «Սեբեոսի Պատմության» աղբյուրն է, կամ էլ՝ հեղինակը երկրորդ անգամ վերախմբագրել է իր գրածը: Հատվածներում առկա է ոչ միայն Դվին-Գառնի շփոթը, այլև «Վնդատական Նիխորական» թյուրմբռնումը: Երկրորդ հատվածի հեղինակը քաջ գիտե, որ Վնդատական-Նիխորականը մի մարդ է, իսկ առաջին հատվածի հեղինակն իր աղբյուրը չհասկանալով «մշակել է» այն և գրել. «Եւ ապա Վրենդատականն: Ապա Խորականն»: Այսպիսով՝ միևնույն անձնավորության անունը դարձել է երկու տարբեր մարդկանց անուններ:

էջ 31

Եւ ապա Վրնդատականն: Ապա Խորականն: Զսա սպանին զարք Պարսից ի Գառնի և ինքեանք ապստամբեալք գնացին ի Գեղումս:

Անառարկելիորեն միմյանցից բխող այս երկու հատվածների գոյությունը գրքում արտասովոր է: Ավելի սպասելի կլինեն, եթե տարբեր հեղինակներ արտագրեին մեկը մյուսից: Դժվար է հավատալ, թե միևնույն հեղինակը միևնույն գրքում երկու անգամ կրկնելու միևնույն տեղեկությունը, այն էլ՝ արտագրելով ինքն իրեն: Ուստի պատահական չէ, որ Ա. Կարիերը դեռևս անցյալ դարում կասկած է հայտնել երկու հատվածների համասեղ գոյության վերաբերյալ (տե՛ս մեր աշխ., էջ 170): Նա նույնիսկ հնարավոր է համարել, որ հատվածներից մեկը «Սեբեոսի Պատմության» աղբյուրն է, կամ էլ՝ հեղինակը երկրորդ անգամ վերախմբագրել է իր գրածը: Հատվածներում առկա է ոչ միայն Դվին-Գառնի շփոթը, այլև «Վնդատական Նիխորական» թյուրմբռնումը: Երկրորդ հատվածի հեղինակը քաջ գիտե, որ Վնդատական-Նիխորականը մի մարդ է, իսկ առաջին հատվածի հեղինակն իր աղբյուրը չհասկանալով «մշակել է» այն և գրել. «Եւ ապա Վրնդատականն: Ապա Խորականն»: Այսպիսով՝ միևնույն անձնավորության անունը դարձել է երկու տարբեր մարդկանց անուններ:

Որ «Վնդատական-Նիխորականը» առաջին հատվածում բերված է որպես մի մարդու անուն, երևում է հետևյալից: Այդ հատվածի հեղինակը պարսից սահմանակալների անունները թվարկելիս նշում է, թե ո՞ր սահմանակալն ում է հաջորդել և բոլոր սահմանակալների անունները միմյանցից բաժանում է «ապա» բառով, այսպես. «Ապա Մերկուտ: Ապա Յազդէն: Ապա Բուտմահ: Ապա Յեմանն»: Սրա փոխարեն՝ Վնդատական-Նիխորական անունը գրում է միասին (առանց «ապա» բառով անջատելու), որից հետո եզակի թվով հայտնում է, որ նրան սպանել են Դվինում. «Վնդատական-Նիխորական զաա սպանին... ի Դուին»:

Այս օրինակը միաժամանակ ցույց է տալիս, որ դարձ ունենք ոչ թե պատահական գրչական վրիպակի, այլ՝ աղբյուրի սխալ ընկալման հետ: Պարզ առած, հատվածների մեջ մենք նշմարում ենք երկու տարբեր ձևերի հետքեր, որոնք ալելի են խորացնում մեր կասկածն այն մասին, որ երկու հատվածները չէին կարող սկզբնապես գտնված լինել միևնույն հեղինակի գրքում:

Եթե նույնիսկ ընդունենք, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակն ինքն է սկզբում սխալվել և հետագայում ուղղելով իր սխալը՝ երկրորդ անգամ կրկնել է միևնույն տեղեկությունը՝ դարձյալ իրավունք չունենք նախորդ սխալը սրբագրելու, որովհետև դրանով մենք մեր ձեռքով ջնջած կլինենք նախնական բնագրում եղած հեղինակային տարբերությունը երկու հատվածների միջև:

Ըստ որում՝ այդ տեղեկությունը միայն մեր նշածով չի սահմանափակվում: Հատվածներում նշված հինգ սահմանակալներից երեքի անունները տարբեր են միմյանցից: Առաջին հատվածում կարգում ենք՝ Նիխորական, Մերկուտ, Յեման, իսկ երկրորդում՝ Խորական, Մերակբուտ, Հոյիման: Սրանց ալելանում է նաև սահմանակալներից առաջինի սպանության վայրի տարբերությունը երկու հատվածներում: Առաջին հատվածի համաձայն՝ Նիխորականն սպանվել է Դվինում, այնինչ, ըստ երկրորդ հատվածի, սպանության վայրը Գառնին է:

Ընդամենը շորս տողում հանդիպող վերոհիշյալ տարբերությունները մեզ ստիպում են զգույշ լինել և հատվածները թողնել իրենց բնական վիճակում: Այսպես՝ կարող ենք սխալվել և բնագրի մեջ ներմուծել մեր սեփական պատկերացումները: Ահա այս նկատառումներով է, որ մենք գրել ենք. «Հատվածների տարբերությունները վերացնելուց հետո բանասերների ուշադրությունից կլրիպի դանազանությունը, այնինչ՝ բանասերները դեռ ասելիք ունեն այդ կապակցությամբ» («Շ. ամս.», 1970, էջ 439): Ինչպես տեսնում ենք, մեր «մտավախությունն» օրինական է:

Մ. Գրիգորյանը Խորականը Նիխորականով սրբագրելու իր առաջարկը պատճառաբանում է նաև այսպես. «Նիխորականն ածականն է Նիխոր անվան. հետևաբար Խորականը-ը պիտի սրբագրել իբր [Նի]խորական կամ Նիխուրական» («Շ. ամս.», 1968, էջ 106—107):

Իրականում, սակայն, զոյություն ունի նաև անվան Խորական ձևը, որը մենք գտնում ենք ոչ միայն «Սեբեոսի Պատմության», այլ և արաբական մատենագրության մեջ (տե՛ս Th. Nöldeke, Geschichte der Perser und Araber... Aus des arab. Chron. der Tabari. Leyden, 1879, էջ 154: Նաև A. Justi, Iranisches Namenbuch, Marburg, 1895, էջ 94, 95, 219):

165. «Ապտամբեալի գնացին ի Գեղումս»: Ք. Պատկանյանը (ՌԱԿ., էջ 37, ծ.) «Ի Գեղումս»-ի փոխարեն կարողում է «Ի Դեղումս» և այս տեղանունը նույնացնում է Կասպից ծովի ափին գտնվող Դիլիս կամ Դելլեմ տեղանվան հետ: Յ. Մակլերը (Macl., էջ 11) վկայակոչելով Նյուլդեկեին («Tabari», էջ 479) և Հ. Հյուբշմանին («Arm. Gramm.», I, 34) մատնանշում է Գեղումին զուգրնթաց Գեղում ձևը:

Ն. Ակինյանը («Շ. ամս.», 1969, էջ 339) նույնպես հարցականով վերծանել է «Ի Դեղումս»: Բայց բնագիրը սրբագրելու համար որոշակի ապացույցներ չի բերել ոչ որ:

166. «Մատեան ժամանակեան, պատմութիւն քաղաւորական...»: Մալխասյանցը համոզված լինելով, որ ձեռագրերի մեջ «Սեբեոսի Պատմությանը» միացած Անանունի հատվածը նույնպես այս Պատմության անբաժանելի մասն է, կարծիք է հայտնել, թե «Մատեան ժամանակեան, պատմութիւն քաղաւորական» բառերով սկսվող այս հատվածում գրեթե կրկնված է այն միտքը, ինչ հայտնված է Անանունի խոստաբանությունում, այսինքն՝ Անանունի հատվածում պահպանված առաջաբանում: Նշված բառերը («Մատեան ժամանակեան») բերելով նա գրում է (էջ 181). «Այստեղից իսկպես սկսվում է Սեբեոսի բուն Պատմությունը, որի մասին խոստաբանության մեջ ասել էր, թե «ցուցից համառատիք զարդեաց ժամանակացս զաղետիցս վերաբերութեան զամս և զատրս հինգ թագաւորացն յիշատակելով»: Այստեղ «Մատեան ժամանակեանը» խոստաբանության «արդի ժամանակն է», «պատմութիւն քաղաւորականը» խոստաբանության «հինգ թագաւորների տարիներն» են, իսկ խոստաբանության «աղետները» բանաստեղծորեն և երկար նկարագրում է ամբողջ այս նախերգանքում»: Այսպիսով՝ Մալխասյանցը գտնում է, որ և՛ Անանունի հատվածի առաջաբանում, և՛ «Մատեան ժամանակեան» բառերով սկսվող հատվածում հայտնված է գրեթե միևնույն միտքը, միևնույն բառերով:

Որ դա այդպես չէ երևում է երկու հատվածների համեմատությունից: Նախ ծանոթանանք «Մատեան ժամանակեան» բառերով սկսվող հատվածին.

«Մատեան ժամանակեան,  
Պատմութիւն թագաւորական,  
Վէպ արիական,  
Վանումն տիեզերական,  
Հէն Սասանական,  
ՅԱպրուէզն Խոսրովեան»,

Եւ արդ՝ ասացից զվէպս ի կործանիչն և յապականողն Խոսրով, յԱստուծոյ անիծեալն»:

Առաջին տողը՝ «Մատեան ժամանակեան» պարզապես նշանակում է «ժամանակական գիրք», ժամանակագրություն, «Книга временных лет», Χρονολογία և ոչ թե՛ «ժամանակակից մատեան»\* («Книга современная»), ինչպես թարգմանում է Մալխասյանցը: Երկրորդ տողում հայտնվում է, որ ժամանակագրական մատյանն իրենից ներկայացնելու է թագավորական պատմություն («Պատմութիւն թագաւորական»): Հաջորդ տողերում բացատրվում է, որ այդ պատմությունը պարսիկների և նրանց աշխարհավեր գործողությունների մասին է («Վէպ արիական, վանումն տիեզերական»), որոնք կատարվեցին սասանյան հեն Խոսրով Ապրվեզի («Հէն Սասանական, յԱպրուէզն Խոսրովեան») ձեռքով: Վերջին տողում հեղինակը բացարձակ պարզությամբ հայտնում է, որ սկսում է շարադրել: Խոսրով Ապրվեզի պատմությունը (Եւ արդ ասացից զվէպս ի կործանիչն և յապականողն Խոսրով, յԱստուծոյ անիծեալն):

Հենց «Սերեոսի Պատմության» հեղինակի ապրած օրերին, պարսից արքա Հաղկերտ 3-րդի օրոք (632—652 թթ.), դիհկան («գյուղապետ») Դանիշվարը դրել է մի պատմություն, որը «Խոսրոսի նամեր հետ նույնացնելը մեծ համարձակություն չէր լինի» („Aus der arabischen Chronik des Tabari, übersetzt... von Th. Nöldeke“, Leyden, 1879, առաջաբան, էջ XV): Այս «Պոդայինամեն» (Chodhâinâmak, Chodhâiname) այլ բան չէ, քան թագավորական պատմություն: «Սերեոսի Պատմությանից» շուրջ մեկ դար առաջ, Խոսրով Անուշրվան արքայի (531—579) կարգադրությամբ գրվել է ևս մեկ ուրիշ թագավորական պատմություն: Արաբ պատմիչ Մասուդին (Masudi, II, էջ 223) նույնպես հիշատակում է մի պարսկական գիրք, որը պարունակում էր Վահրամ Չորինի գործերի նկարագրությունը: Մեկ այլ պատմիչ (Fihrist, էջ 303) պարսկերեն գրքերի շարքում նշում է «Գիրք Վահրամ Չորինի մասին», որը Նուլբեկի կարծիքով («Tabari», էջ 477) ծանոթ է եղել նաև «Սերեոսի Պատմության» հեղինակին: Վերջապես, «Սերեոսի Պատմությանից» հետո Ֆիրդուսու գրած «Ծահ-նամեն» դարձյալ թագավորական պատմություն է:

Ահա՛, մեր կարծիքով, «Սերեոսի Պատմության» հեղինակը նույնպես նպատակադրվելով գրել իր դարի ամենանշանավոր պարսից արքաներից մեկի՝ Խոսրով Ապրվեզի պատմությունը, իր գիրքը կոչել է «Պատմութիւն թագաւորական... յԱպրուէզն Խոսրովեան»:

Նշելով, որ առաջաբանի «հեղինակը յուր գրելիք նյութը բաժանում է երեք շրջանի—1. նախնի քաջերի վիպասանությունը («Геронческое время»), 2. այդ շրջանին հաջորդող պատմական անցքերը (այս էլ յապայսս եղեալք) և 3. յուր աղետալի ժամանակի անցքերը...», Մալխասյանցը գտնում է, որ Անանունի առաջաբանը լիովին համապատասխանում է «Սերեոսի Պատմությանը», որովհետև այստեղ նույնպես նյութը բաժանված է երեք շրջանի՝ նախնական ժամանակ (գլ. Ա), նրան հաջորդող անցքեր (գլ. Բ—Է) և ժամանակակից դեպքեր (գլ. Ը—Ս):

Այս կարծիքը նույնպես իրականությունը չի համապատասխանում: «Սերեոսի Պատմությունը» երեք շրջանի չի բաժանված: Մալխասյանցը երեք շրջանի է բաժանել՝ Պատմությանը միացնելով նաև Անանունի հատվածը, որը «Սերեոսի Պատմության» հետ կապ չունի:

167. Վէպ արիական վանումն տիեզերական, հէն Սասանական»: Զամինյանը (Զամ., էջ 55) սրբադրում է «Վէպ արիական ի վատնումն տիեզերական ի հէն Սասանական»: Սակայն բնագրի մեջ նրա ներմուծած «ի» նախդիրները խախտում են գրեթե հանգավորված խորագրի շարքը:

168. «Զանցից կործանմանն առասպելս վիպասանելով»: Զամինյանը (նույն տեղում) ուղղում է կործանման դառասպելս» (փխ. «կործանմանն դառասպելս»): Բայց «Սերեոսի Պատմության» լեզվի համար այդ կարգի շեղումներն անսովոր չեն, ուստի տվյալ հատվածը սրբադրման կարիք չունի:

169. «Զարբուցեալ սրամտութիւն»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր հրատարակություններն

\* Խոսրով Ապրվեզն սպանվել է 627 թ., ուստի նրան նվիրված մատյանը, որը գրվել է սպանությունից տասնյակ տարիներ անց, չէր կարող կոչվել «ժամանակակից»:

ունեն «զարթուցանել սրտմտութիւն»: Ն. Ակինյանն ուղղում է «զարթուցեալ սրտմտութիւն» («Շ. ամս.», 1969, էջ 339): Ակինյանն իր սրբագրութիւնը շի պատճառաբանել, բայց որ նա ճիշտ է վարվել երևում է հետևյալից: «Սեբեոսի Պատմութեան» հեղինակը թվարկում է այն իրադարձութիւնները, որոնք նկարագրելու է ինքը: Թվարկվող իրադարձութիւնների շարքում է «բորբոքեալ գրարկութիւն»: Սրան պետք է համապատասխանէր «զարթուցեալ զսրտմտութիւն», այնինչ՝ մեզ հասած ձեռագրերում, ինչպես տեսանք, գրված է, «զարթուցանել սրտմտութիւն»:

170. «Զարեան հեղեղս և գինիիցն արշաւան»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր բնագրերն ունեն «զարեան հեղեղս» (փխ. «հեղեղս»): Ուղղումը կատարել ենք Ն. Ակինյանի վերոհիշյալ ցուցման համաձայն:

171. Մայր իւր դուստր էր Խաբանայ մեծի արհալին Թեալացոց, կին Խորովայ՝ հաւր սորա, անուն Կայէն, որ թէպէտ ի հայրենեաց մեծագոյն՝ Լս առանկ մեծագոյն և գագանագոյն ի մայրենեաց կողմանէ: Մահլերը (Macl., էջ 18) կարծել է, թէ «հայր սորա անուն Կայէն» արտահայտությունն ընդմիջարկություն է: Իսկ Մ. Գրիգորյանն ընդմիջարկություն է համարել «կին Խորովայ» արտահայտությունը: Նա գրում է. «Կայենի նույնությունը Աբելի եղբոր անվան հետ տեղի տված է գայթակղալի թյուրիմացության: Ըստ երևույթին՝ զրիշ մը՝ նախադասությունը պարզ ու մեկին ընծայելու նպատակով, իր կողմանի ընդմիջարկեալ է կամ լուսանցքի վրա բացատրած՝ «կին Խորովայ»: Ուրիշ ընդօրինակող մը ևս Կայենը անպայմանորեն որպէս արական անուն ընդունելով՝ «մայր սորա անուն Կայէն» խոսքը «սրբագրած» է իբր «հայր սորա անուն Կայէն» («Շ. ամս.», 1968, էջ 103):

Այսպէս հասկանալով բնագիրը՝ Գրիգորյանն առաջարկում է սրբագրել՝ ներմուծելով «մայր» (փխ. «հայր») բառը և փոխելով նախադասության շարահյուսությունը («Շ. ամս.», 1968, էջ 109): Իրականում, սակայն, նախադասությունը նախնական բնագրում եղել է այնպես, ինչպես այժմ կա և կարիք չունի սրբագրության: «Սեբեոսի Պատմութեան» հեղինակը ցանկացել է ցույց տալ, որ Որմիզդ արքան իր դաստիարակությամբ հայտնի էր ոչ միայն նրանով, որ նրա հայրը թագավոր էր (Խորովայ), այլ յառաջիկ ևս նրանով, որ նրա մայրը դուստրն էր Թեալացիների մեծ արքա Խաբանի: Այս Խաբանը շարագործ մի մարդ էր և «Սեբեոսի Պատմութեան» հեղինակն էլ Որմիզդի շար բնավորությունը վերագրել է առավելապես նրա մոր՝ Խաբանի դուստր Կայենի արշաւը: Որմիզդը «թէպէտ ի հայրենեաց մեծագոյն» էր, բայց «ևս առանկ մեծագոյն և գագանագոյն ի մայրենեաց կողմանէ»: Տարբրին (839—923) նույնպես Որմիզդի շար բնավորութիւնը վերագրում է նրա մայրական ծագմանը (հմմտ. Macl., էջ 18):

Ահա, սա է իմաստը քննվող նախադասության: Եթե բառացի թարգմանենք մեզ հետաքրքրող հատվածը, կլինի այսպես. «Իր (Որմիզդի—Գ. Ա.) մայրը դուստրն էր Խաբանի՝ Թեալացիների մեծ արքայի, կինն էր սրա (Որմիզդի—Գ. Ա.) հոր Խորովայի, անունն էր Կայեն»:

Ստ. Մալխասյանցը «Սեբեոսի Պատմութեանը» կից անձնանունների ցանկում (էջ 207) Կայենին ներկայացրել է որպէս «հայր կնոջն Խորովայ»: Բայց իրականում, տեսանք, որ Կայենը ոչ թէ Խորովայի կնոջ հայրն էր, այլ Խորովայի կինը (Որմիզդի մայրը): Ք. Պատկանյանը ավելի քան 100 տարի առաջ՝ 1862 թ. ճիշտ վերծանելով բնագիրը, թարգմանել է այսպէս. „Мать его Каен, жена Хозроя отца его, была дочь Хагана, великого царя тетальского“, «Նրա մայր Կայենը (այսինքն) նրա հայր Խորովայի կինը, դուստրն էր Խաբանի՝ Թեալացիների մեծ թագավորի»: Ծանոթագրութեան մեջ (էջ 194—195) Պատկանյանը գրում է. «Որմիզդ 4-րդը իսկպանս գավազն էր Թեալակահան կամ Թրքական իշխանուհու, որից և գալիս է նրա Turk-զան անունը (տե՛ս Djeh. Ara, էջ 56, 58)»: Գիտենք նաև, որ Որմիզդի մայրը իսկպանս Կայենն (Qagin) էր: Ուստի բնագիրը սրբագրելու պատճառ չկա:

Ն. Ակինյանը բնագիրն ավելի հասկանալի դարձնելու նպատակով՝ փակագծերի մեջ լրացուցիչ բացատրություններով է մատակարարել հեղինակի խոսքը. «...կին Խորովայ՝ հայր սորա [Որմիզդի] անուն (նորա) Կայէն, որ (Որմիզդ) թէպէտ և ի հայրենեաց մեծագոյն...» («Շ. ամս.», 1969, էջ 339): Անկյունավոր փակագծերի մեջ գտնվող [«Որմիզդի»] անունը Ակինյանը հավանաբար ցանկացել է ներմուծել բնագրի մեջ:

Ն. Ակինյանի սրբագրական առաջարկը հետամահու հրապարակվել է 1969 թ.: Սրանից դեռևս մեկ տարի առաջ 1968 թ. նոյեմբերի 14-ին Մ. Գրիգորյանին ուղղած նամակում մենք բնագիրը վերծանել ենք այնպես, ինչպես վերծանել է Ն. Ակինյանը: Մեր վերծանութեան կապակցությամբ Մ. Գրիգորյանը գրել է. «Եթե՛ն այս խոսքը (նկատի ունի մեր վերծանությունը—Գ. Ա.) հստակ և կանոնավոր է, յետս կկոչեմ իմ դիտողությունները: Բայց քանի որ համբավավոր հայագետները շփոթած են՝ կըշանակի թե վրեպ՝ մը կա» («Շ. ամս.», 1970, էջ 439): Հիրավի, համբավավոր

հայագետները շփոթվել են, սակայն դա արդյունք է այն բանի, որ բնագիրը իսկապես որ հստակ և կանոնավոր չէ:

172. «զբուն իսկ զպարթևական զպահլան անդրէն դարձուցեալ թագ կապեալ մեծարեաց, և արար իւր երկրորդ թագաւորութեանն»: «Դարձուցեալ»-ի փոխարեն ձեռագրերն ունեն «փախուցեալ»: Այսպես է նաև Թ. Միհրդատյանի և Բ. Պատկանյանի հրատարակություններում: Ֆ. Մակ-լերը (Macl., 18) ֆրանսերեն թարգմանությամբ առաջարկել է սրբագրել «դարձուցեալ»: Այս սրբագրությունը կիրառել է նաև Ստ. Մալխասյանցը գրաբար բնագրի հրատարակության մեջ (ՍԵՊ, 33): Սրբագրությունը կատարված է Ազաթանգեղոսի և Խորենացու համապատասխան հատվածների հիման վրա (ՍԵՊ, 182):

Ազաթանգեղոս (զլ. Բ, 26) Խորենացի (գիրք Բ, զլ. 4է) Մալխ., էջ 11

զբնութիւնն պարթևական զձեր զբուն պատուական զձեր սեպ- զբուն իսկ զպարթևական սեփական Պահլան ի ձեզ դար- հական Պահլան զայն անդրէն ի զՊահլան ձուցից և քեզ թագ եղեալ փա- ձեզ դարձուցին և զքեզ թագաւ անդրէն դարձուցեալ (ձեռ. փախուցեալ) թագ կապեալ րուտրեցից ...և երկրորդ ինձ փառուտրեցից Ինծարեաց և արար իւր կոչեցից երկրորդ թագաւորութեանն

Այս համեմատությունից միաժամանակ երևում է, որ 1. Ազաթանգեղոսի «զբնութիւնն» բառի փոխարեն Խորենացին և «Սեբեոսի Պատմությունն» ունեն «զբուն» բառը, որը մեզ ավելի տրամաբանական է թվում բնագրի տվյալ հատվածում, ուստի կարծում ենք Ազաթանգեղոսն այստեղ աղավաղված է, 2. Խորենացու «պատուական» բառի փոխարեն Ազաթանգեղոսն ու «Սեբեոսի Պատմությունն» ունեն «պարթևական» բառը, որը, մեր կարծիքով, ավելի իմաստավոր է քննարկվող նախադասության մեջ, հետևաբար պետք է ընդունել, որ Խորենացու «պատուական»-ը աղավաղումն է Ազաթանգեղոսի «պարթևական»-ի, 3. Ազաթանգեղոսը շունի Խորենացու և «Սեբեոսի Պատմության» պահպանած «անդրէն» բառը, որը, ինչպես երևում է, Ազաթանգեղոսի նախնական բնագրում եղել է, 4. Ազաթանգեղոսը և «Սեբեոսի Պատմությունն» ունեն «և երկրորդ ինձ կոչեցից» և «և արար իւր երկրորդ թագաւորութեանն» արտահայտությունները, որը Խորենացին շունի: Ինչպես երևում է, Խորենացին Ազաթանգեղոսից օգտվելիս այս արտահայտությունը կրճատել է, իսկ «Սեբեոսի Պատմության» հեղինակը պահպանել է: Այսպիսով, երեք պատմիչների համեմատությամբ կարելի է վերականգնել Ազաթանգեղոսի և Խորենացու նախնական բնագիրը:

Ստ. Մալխասյանցը Խորենացու և Ազաթանգեղոսի բնագրերի մեր նշած աղճատվածության մասին կասկած չունենալով՝ բնագրական տարբերությունները «Սեբեոսի Պատմությունում» դիտել է որպես արդյունք այն բանի, որ հեղինակը Խորենացու հետ համընկնելիս օգտվել է Խորենացուց: Ազաթանգեղոսի դեպքում էլ՝ Ազաթանգեղոսից: Մեր կարծիքով, սակայն, հեղինակն օգտվել է միայն Ազաթանգեղոսից, որի նախնական բնագիրն ունեցել է այս տեսքը, որը մենք ցույց տվեցինք բնագրերի համեմատության միջոցով:

173. «Սւ եղև ի ժամանակին յայնմիկ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր հրատարակություններն ունեն «Ժամանակին յայնմիկ»: Ուղղեցիք բոս Զամինյանի (թղթ. 232ա, վավ. 101, էջ 60) և Ն. Ակինյանի (Հ. ամս., 1969, էջ 338):

174. «Վահրամ ոմն Մեհեանդակ»: Խոսքը Վահրամ Զուբինի մասին է, Մովսես Կազանկատվացին նրան կոչում է հենց «Վահրամ Զորին»: Մանրամասն տեղեկություններ տե՛ս Патк., էջ 190, ծ. 90:

175. Միեչև յայնկայս գետոյն մեծի, ու կոչի Վեհոտս»: Վեհոտը հույն մատենագիրների Օքստան է, իսկ այժմ՝ Ամու-Դարյան:

Հեղինակի հիշատակած «Վեհոտ» անվանաձևի մասին տե՛ս Патк., էջ 190, ծ. 91, նաև նույնի Опыт истории династии Сасанидов, СПб, 1863, էջ 55, ծ. 1 (հմմտ. նաև „Journal asiatique“, 1866, I, էջ 187, ծ. 3 և G. Garrez-ի գրախոսականը. „Der Bunde hesh, zum ersten Male herausg., transcribiert, übersetzt und mit Glossar versehen von F. Justi“ - տպված „Journal asiatique“, № 49, 1869, p. 170-173): Վեհոտին հատուկ ուսումնասիրություն է նվիրել Յ. Մարկվարտը („Wehrot und Arang“, Leyden, 1938): Վերջերս նրան անդրադարձել է նաև Ի. Վ. Պյանկովը („Massagety Геродота“, „Вестник др. ист.“, 1975, № 2, стр. 63-64):

176. «Միեչև ցտեղին, ու կոչի Կազբին»: Garrez-ը նախորդ ծանոթագրության մեջ նշված իր գրախոսականում «Սեբեոսի Պատմության» մեջ հանդիպող «Կազբին»-ը ուղղում է «Կազ-

գարիոն» և հատվածի ֆրանսերեն թարգմանության մեջ ներմուծում է Kalzarion ձևով: Այս գետի անունը նա նույնացնում է Շահ-Նամեում հիշատակվող كازارون նույնանուն գետի հետ և հայտնում, որ այդ գետը գտնվում է Հեփթաղաց երկրում Օքսուսից այն կողմ: Ք. Պատկանյանը (Պատկ., 30) հետևելով Garrez-ին, գրում է «Թերևս Կազրիոն» և նշում է նաև Ասողիկի պահպանած ձևը՝ Գասրուն: Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, 33) գրում է. «Կազրիոն»-ի փոխարեն Ասողիկ ունի Գասպուն, ըստ Պատկանյանի թերևս ուղղելի՝ Կազրիոն»: Այսուհանդերձ՝ Մալխասյանցը «Կազրիոն»-ը չի սրբազրել: Մենք նույնպես թողնում ենք նույնությամբ, որովհետև հաստատ չենք կարող որոշել, թե Garrez-ի առաջարկած «Կաղզարիոն» ձևը իսկապես հեղինակինն է, թե ոչ: Գրչական առումով անշուշտ հնարավոր է, որ նախնական բնագրում ենթադրվող «Կալզարիոն»-ը գրված լիներ «Կաղզարիոն» ձևով, ապա «ղ»-ն ջնջվեր (սխալմամբ ընկալվելով որպես հաջորդ «ղ»-ի կրկնություն), որից հետո «րիոն»-ը կարդացվեր «բիոն» և վերջապես ստացվեր մեզ հասած «Կազրիոն» ձևը:

177. «Քանգի գանց արար յայնևոյս նիգակի քաջին Սպանդիատայ»: Ֆ. Յուստիի («Der Bundelesh», Leipzig, 1868) կարծիքով՝ «Սպանդիատ» անվանաձևը այլաբերությունն է Vendidat-ի հերոսներից մեկի Սպանդիատ պահլավական անվան, որը հանդիպում է նաև Bundelesh-ում (Հմմտ. Garrez-ի հիշյալ զրախոսականը՝ «Journal asiatique», 1869, էջ 173): Ք. Պատկանյանը (Պատկ., 190, ծ. 92) հայտնում է, որ «այս առասպելական հերոսի անունը՝ Ասպանդիատ ձևով հանդիպում է Աղվանից պատմության 197-րդ էջում: Սպանդիատի նիզակը հավանաբար եղել է քարե սյան նման ինչ-որ մի բան, որով հնում նշել են եփթաղների և պարսից սահմանը, որը խախտելը նշանակել է պատերազմ հայտարարել: Այս սյան մասին հիշատակում է Տարբրին»: Ստ. Մալխասյանցը (Մալխ., էջ 154) մատնանշում է Սպանդիատի նաև պարսկական ձևը՝ Iskandiyar և վերապատմում է Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմության» մեջ շարադրված այն պատմությունը, որի համաձայն հոնները Սպանդիատին պաշտում էին «Թանգրի խան» («Երկնային թագավոր») անվամբ: Այս հերոսին զոհարել են ձիեր, որոնց այրում էին Սպանդիատի զոհարանում: Ձիերի կաշին կախում էին Սպանդիատին նվիրված ծառին: Իսրայել եպիսկոպոսը հոնաց մեջ քրիստոնեություն քարոզելով, նրանց առաջնորդներին համոզում է, որ դա սնտիսպաշտություն է և կտրել է տալիս Սպանդիատի ծառը և քանդում է նրա զոհարանը: (Սպանդիատի մասին տե՛ս նաև Բ. Լ. Չուգասզյան, Հայ-իրանական գրական առնչություններ, Երևան, 1963, էջ 97—103):

178. «գուրմէ ասն բարբառսս»: «Բարբարոս» բառով հույները կոչում էին այլազգիներին: Հեղինակն այս բառն օգտագործել է, մեր կարծիքով, օգտվելով հունական աղբյուրից:

179. «Հասեալ նա պատերազմաւ»: «Պատերազմաւ» բառի փոխարեն բոլոր ձեռագրերն ունեն «պատ է բազմաւ»: Ք. Պատկանյանը (Պատկ., 31) ուղղել է «պատերազմաւ»: Նրան հետևել են նաև Garrez-ը (տե՛ս 175-րդ ծանոթագրության մեջ նշված աշխ., էջ 173) և Մալխասյանցը (ՍեՊ, 34):

180. «Որ էր ի կողման յայնմիկ»: Չամիխյանը (Թղթ. 232ա, վավ. 101, էջ 60) «յայնմիկ»-ը ուղղում է «յայնոսիկ», որը, սակայն, հստակապես չէ:

181. «Հրովարտակս անտաուրս»: Բոլոր ձեռագրերն ու տպագրիչներն ունեն «աւետաուրս»: Չամիխյանը (Չամ., 47) ուղղել է «աւետաուրս»: Մենք հետևել ենք Չամիխյանին, ընդունելով, որ քերականական ուղիղ ձևը նրա առաջարկածն է:

182. «Սուղ ինչ աւարամասն»: Բոլոր ձեռագրերն ունեն «աւարանս»: Յսողիկը պահպանել է «աւարամասն» ձևը, որի հիման վրա էլ բնագիրը վերականգնել են Չամիխյանը (Չամ., 47) և Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, 34): Մենք պահպանել ենք նրանց վերականգնած ձևը:

183. «Յասամբ բարբառակ ասէր»: Ֆ. Մակլերը (Maci., էջ 12) «բարբառեալ»-ի փոխարեն առաջարկում է «բորբորեալ», որը, սակայն, սպասելի չէ:

184. «Ճի զեշանն ի պատառոյս»: Բոլոր ձեռագրերն ունեն «պատուոյս» (փխ. «պատառոյս»): Ասողիկը պահպանել է ուղիղ ձևը («պատառոյս»), որի հիման վրա էլ վրիպակն ուղղել են Ք. Պատկանյանը (Պատկ., էջ 32), Չամիխյանը (Թղթ. 232ա, վավ. 101, էջ 60, Թղթ. 232բ, վավ. 133, էջ 47), Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, 34): Մենք հետևել ենք նախորդ հրատարակիչներին:

185. «Առ Որմիզ քազաուրն Պարսից»: Բոլոր ձեռագրերն ու տպագրիչներն ունեն «առ Որմիզ», Չամիխյանն (Չամ., էջ 49) ուղղել է «առ Որմիզը»: Ըստ այսմ էլ մենք սրբազրել ենք վրիպակը:

186. «Անցանն յայնկոյս գետոյն մեծի Դրգաթայ ընդ գով»: Վերջին «գով» բառը Պատկանյանը նույնացնում է հունարեն γέφυρα = կամուրջ բառի հետ: Մալխասյանցն ավելացնում է. «Նավակներով կազմած ու գետի երկու ափերին շվաններով պինդ կապված կամուրջ: Սերբոսը

ուրիշ տեղ (զլ. և) դոմ բառի տեղ գործ է ածում հայերեն նավակամուրջ» (ՍԵՊ, էջ 180, ծ. 31): Ինչպես երևում է՝ հեղինակն այս հատվածի նյութը քաղել է հունական աղբյուրից:

187. «Իսկ այս ոչ այսպես պատկանէր»: Զամինյանը (Զամ., 49, և թղթ. 232ա, վավ. 101, էջ 60) «պատկանէր»-ի փոխարեն առաջարկում է «կատարէր», որը բավական հեռանում է «պատկանէր»-ից և ընդունելի չէ:

188. «Խոռհուրդ արարեալ խորհին արանց և համահարգանց և փուշտիպանաց արքային»: Ն. Ակինյանը («Շ. ամս.», 1969, էջ 338) «արանց» բառից հետո անկյունավոր փակագծերի մեջ հարցականով ավելացնում է «[նախարարաց]»: Ստ. Մալխասյանցը ծանոթագրում է. «Խորհին արք Սեբեոս գործ է ածում մի քանի անգամ. ուրիշ հեղինակների մոտ այս բառը չի պատահում: Նշանակում է ոչ թե խորհող՝ խելոք՝ իմաստուն մարդիկ, այլ խորհրդակալներ: Սրանք արքունիքում գտնվող նախարարներն էին, որոնք թագավորից հրավիրվում էին խորհրդի»: Ավելի մանրամասն տե՛ս ՍԵՊ, էջ 180, ծ. 32, որտեղ բացատրված են նաև «համահարգ» (նրբակալից, օգնական) և «փուշտիպան» (թիկնապա՛հ) բառերը:

189. «Արդ՝ վասն զի մայր շապհոյ—և սրտի արիագոյն» հատվածը № 2639 ձեռագրում գրվում է 500բ էջի երկրորդ սյան 18-րդ տողից մինչև 25-րդ տողը: Հատվածին նախորդող և հաջորդող տողերն ընդօրինակված են 499բ էջում: Զեռագրական այս ետևառաջ ընդօրինակությունը կարգավորել է Ստ. Մալխասյանցը (մանրամասն տե՛ս վերը, ծ. 161):

Մարկվարտը (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 262, վավ. 2, միկրոֆիլմ, էջ 64) «Արդ՝ վասն զի մայր շապհոյ դուստր ասպարապետին այնորիկ» բառերը սրբագրում է՝ այսպես. «Արդ՝ վասն զի մայր [Խոսրովայ էր] Շապհոյ դուստր ասպարապետին այնորիկ» և թարգմանում է հետևյալ իմաստով. «Արդ՝ քանի որ Խոսրովի մայրը այն սպարապետ Շապուհի դուստրն էր»:

«Շապհոյ» բառը Թ. Միհրդատյանը և Ք. Պատկանյանը տպագրել են մեծատառով, իբրև հատուկ անուն: Ք. Պատկանյանը, սակայն, բացատրում է. «մայր շապհոյ այստեղ նշանակում է արքայորդու, այսինքն՝ Խոսրովի, մայր» (ՍՄԿ., էջ 193, ծ. 107): Այսպիսով՝ Ք. Պատկանյանը «շապհոյ» բառը մեծատառով տպագրելով հանդերձ՝ դիտել է որպես հասարակ բառ «արքայազն» նշանակությամբ: Ստ. Մալխասյանցը հաստատում է Պատկանյանին. «Հիրավի, շապուհ պարսկերեն բառ է, պահլավերեն (նոր պարսկերեն) sah = արքա և pur = որդի: Խորենացին էլ գիտե այս բառի նշանակությունը. «Շապուհ, որ լսի արքայի մանուկ»... Ներկա ժողովրդական լեզվում այս բառի տեղ գործ է ածվում «շահազն»:

190. «Ուրբ մեռեալ էին»: Այս արտահայտությունը անհասկանալի է: Եթե խոսքը լիներ մի անձնավորություն մասին, այսինքն՝ արքայազն Խոսրովի մորական պապի («որ էր նախարար տանն Պարթևաց») մասին, պետք է որ հեղինակը գրեր «որ մեռեալ էր» և ոչ թե «որբ մեռեալ էին»: Ֆ. Մակլերը (Macl., էջ 16) ուղղում է «որ մեռեալ էր»: Զամինյանը (Զամ., էջ 53) հիշյալ արտահայտության զիմաց, լուսանցքում ծանոթագրում է «թեթ», այսինքն՝ հատվածը թեթի է: Ստ. Մալխասյանցը (Մալխ., էջ 35) ուստերեն թարգմանում է եզակի թվով (ymerpero), բայց զրաբար բնագիրը թողել է հոգնակի: Մենք նույնպես թողնում ենք նույնությամբ, որովհետև քննարկվող հատվածը (տող 22—25) առհասարակ աղճատված հատվածի տպավորություն է թողնում և չենք կարող վերջնականապես պարզել, թե ում է վերաբերում «որբ մեռեալ էին» արտահայտությունը:

191. Եւ նստոցին գաղի նոռա քազաուր»: Զամինյանը (Զամ., էջ 50) «նորա» բառից հետո ավելացնում է՝ «գեոսորով», որը, սակայն, հեղինակային բնագրում կարող էր և չլինել:

192. «Բայց նոռա յերկիւղէ ոչինչ կարաց ունել գտեղի: Իբրև անցին գնացին փախստական»... «Իբրև» բառը Ն. Ակինյանը («Շ. ամս.», 1969, էջ 338) տեղափոխում է շորս բառ առաջ և զետեղում «ոչինչ» բառի առջև, այսինքն՝ առաջարկում է կարդալ այսպես. «Բայց նորա յերկիւղէ իբրև ոչինչ կարաց ունել գտեղի՝ անցին գնացին փախստական»:

193. «Խորհեալ ի ճանապարհի, թէ ո՞ր լուսագոյն իցէ, երբայ առ արքայն Տանկաց, եթէ առ քազաուրն Յունաց»: Հնագույն ձեռագրում (№ 2639) նախօրոք գրված է եղել, «ու՞ր (փխ. ո՞ր) լուսագոյն իցէ», հետագայում «ուր»-ի «ւ»-ն քերել, ջնջել են և «ո՞ւր»-ը դարձրել «ո՞ր», որը ճիշտ է:

194. «Ձի թէպետ և է»: Հնագույն ձեռագրում գրված է եղել «և էր», հետագայում «էր»-ը քերված, դարձված է «է» («թէպետ և է»), որը ճիշտ է:

195. «Յղէր գՓիղիպիկոս»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերը (բացի Մալխասյանցից) ունեն «յղէր գՓիղիպիկոս»: Մալխասյանցն ուղղել է, վկայակոչելով հետագա գլուխներից մեկում

(«Նոսորով իՅ, Երակոս զառաջինն») հանգիպող զՓիլիպիկոս զոմն... փեսայ կայսերն Մարկայ, տեղեկութիւնը: Մալխասայնցի սրբազրութիւնը հաստատում է նաև Ք. Արծրունին, որը մեզ հետաքրքրող տեղում «զՓիլիպիկոս»-ի փոխարեն ունի «զՓիլիպիկոս»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 338) ուղղում է «զՓիլիպիկոս»:

196. «Եւ զԵբրեսն ստարտելաւ յԱսորոց և զգաւս Էոցա»: Ք. Պատկանյանը «և զգաւս Էոցա» բառերից առաջ ենթադրում է «և զՄուշեղ այր քաջամարտիկ և հօր զօրութեամբ» արտահայտությունը, որը գտնում ենք Քովմա Արծրունու մոտ: «Քովմա Արծրունին,—գրում է նա,— որն այս տեղը Սեբեոսից է քաղել՝ գրեթե բառացի, Հովհաննից ու Ներսեսից բացի հիշատակում է նաև Մուշեղին—և զՄուշեղ այր քաջամարտիկ և հօր զօրութեամբ: Ենթադրում ենք, որ այս բառերը Սեբեոսի տեքստից բաց են թողել ընդօրինակողները: Modjmel-altewarikh-ը և այլք նույնպես հիշատակում են այս Մուշեղի՝ Տարոնի տիրոջ մասին: Նրանք սրան կոչում են Մուշիլ» (Սатк., էջ 193, ծ. 106): Հմմտ. նաև Macl., էջ 16:

Ք. Արծրունին իսկապես գրեթե բառացի արտագրում է «Սեբեոսի Պատմությունը» և կարելի է կլիներ Մուշեղի մասին նրա հայտնած տեղեկությունը ներմուծել ընագրի մեջ, մանավանդ որ օտար աղբյուրները նույնպես հաստատում են Արծրունու վկայությունը: Սակայն Արծրունին Մուշեղին վերաբերող տեղեկությունից անմիջապես հետո հայտնում է մի տեղեկություն («զամենայն զօրս... Վրաց և Աղուանից»), որը «Սեբեոսի Պատմությունը» չունի և այդ իսկ պատճառով էլ թույլ չի տալիս վճռականապես որոշել, թե Մուշեղի մասին տեղեկությունը հեղինակին ունեցե՞լ է, թե ոչ:

197. «Անցեալ ի հանդիսի»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 338) «անցեալք» բառի առջև ավելացնում է «որք» բառը, որը, սակայն, կարող էր և չլինել հեղինակային բնագրում:

198. «Ես այսպէս կարծէի»: Զամինյանը (Զամ., էջ 58) առաջարկում է ուղղել «Ես այնպէս կարծէի»: Բայց այսպես սրբագրելու որոշակի հիմք չունենք:

199. «Ընդ թշնամիս ձեր»: Զամինյանը (Զամ., էջ 58) առաջարկում է ուղղել «ընդ թշնամիս ձեր», որը, սակայն, հիմնավորված չէ:

200. «Երիցանցդ Հոովմայեցուցդ»: Մալխասայնցի հրատարակության մեջ երկու բառն էլ վրիպակով են տպագրված, այսպես. «Երիցանցդ Հոովմայեցուցդ»: Մ. Գրիգորյանը կարծելով, թե սրանք տպագրական վրիպակ չեն՝ առաջարկել է «Հոովմայեցուցդ»-ը ուղղել «Հոովմայեցուցդ»: Բայց նրան հայտնի է, որ «Միհրդատյանի և Պատկանյանի հրատարակություններն ունեն «Հոովմայեցուցդ» («Հ. ամս.», 1968, էջ 110): Այդպես է նաև հնագույն ձեռագրում: Ուրեմն, Մալխասայնցի հրատարակության «Երիցանցդ Հոովմայեցուցդ» ձևը զուտ տպագրական վրիպակ է:

201. «Եւ արդ՝ դիմեալ գայք ի վերայ իմ կորուսանել զայլեալի վատապա ձեր»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն «գայ» (փխ. «գայք»): Ստ. Մալխասայնցն այս բառի դիմաց գրում է. «ՔՎում է ուղղելի «գայք» (Հմմտ. նաև «Հ. ամս.», 1969, էջ 110): Մենք ուղղեցինք ըստ Մալխասայնցի, որին հաստատում է նաև Քովմա Արծրունին: Պատմիչն ինքը մեր ուղղած տողից հիվ տող առաջ գրում է. «Ժողովեալ գայք ի վերայ իմ պատերազմաւ»: Զամինյանը (Զամ., էջ 58) «գայ»-ի փոխարեն ենթադրել է «գան» ձևը, բայց սա ճիշտ չէ, որովհետև սովյալ տեղում խոսվում է հայերի («գայք») և ոչ թե հույների («գան») մասին:

202. «ՁԱրուստան, զՄրծուփն»: Ստ. Մալխասայնցը տպագրել է «զՄրծուփն», բայց ծանոթագրել է. «Ուղղեցինք զՄրծուփն, ըստ Քովմ. Արծր.» (ՍեՊ, էջ 39):

203. «Եւ ընդ արևմուտս մինչև ցԿեսարիա Կապադովկացոց»: Մ. Ավատյանցը («Մասիս», 1853, թ. 11—60) կարծում է, թե սկզբնական բնագրում «Կապադովկացոց»-ի փոխարեն եղել է այս անվան մյուս ձևը՝ «Կապուտկացոց»: Այս անվանաձևը հանդիպում է նաև Անանունի հատվածում, որի մեջ նույնպես Հայաստանի սահմանները նշված են գրեթե միևնույն բովանդակությամբ. «և զԿապուտկեայ առ Կիլիկիեալ»:

204. «Եւ ես մի իշխեցիք քան զՋարասպ անցանել յայնկոյս»: Միհրդատյանը Զարասպ լեռան անվան առաջին տառն ընկալել է որպես «դ» նախդիր և տպագրել է «զՋարասպ»: Նրան հետևել է նաև Ք. Պատկանյանը, վերջինս 94-րդ էջում տպագրել է «Ջարասպ» և տողատակին ծանոթագրել «τὸ ὄρος τοῦ Ζάρα»—Chron. Pasch., 2. Հյուբերմանը («Arm. Gramm.», 1, էջ 40) լեռան անունը համարում է Ζαριάσπα.

Մալխասայնցն ուղղել է Զարասպ և ռուսերեն թարգմանության մեջ ծանոթագրել. «Ջարասպը լեռնաշղթա է առաջին Արշակունիների ժամանակակից Հայաստանի հարավ-արևելքում, Պարսկաստանի սահմանին, հավանաբար՝ այժմյան Զագրոսը: Խորհնացին նույնպես հիշատակում է այս լեռնաշղթան, որպես Նյուբար Մաղեսից (մեղացուց) Արամի ձեռքով գրավված հողերի»:



սահման: Խորենացու այս տեղեկությունը նույնպես հաստատվում է, որ Զարասպ-Զագրոսը ծառայում էր որպես սահման հին Հայաստանի և Պարսկաստանի միջև» (Малх., էջ 139, ծ. 23): Հայերեն հրատ. տողատակին Ստ. Մալխասյանցը ծանոթագրում է. «SS (=Միհրդատյանի և Պատկանյանի հրատարակություններում—Գ. Ա.) քան զԱրասպ: Ուղղեցինք Զարասպ: Հմմտ. եր. 9 (նկատի ունի Անանունի համապատասխան տեղը—Գ. Ա.) լեռան Զարասպ»: Թովմ. Արծրնունի զարասպ»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 340) նույնպես առաջարկել է ուղղել Զարասպ:

Գ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 111) իրավամբ գրում է. «Ես կկարծեմ տակավին աստ պետք է հավելուլ որոշյալ հայցականի զ նախդիրը, որ ըստ երևույթին միևնույն տառերու բախումին պատճառով կորսված է ներկա բնագրին մեջ»:

Նույն էջում նա կրկնում է Ստ. Մալխասյանցի տեղեկությունն այն մասին, որ Թ. Արծրունին ունի զԱրասխ և ավելացնում է. «Հետաքրքրականորեն Մարկուար» («Südarmenien und die Tigrisquellen», Wien, 1930, էջ 9) ասանց ծանոթ լինելու Թ. Արծրունույն վկայության, Սերիոսի «Արասպ»-ը «Երասխի» միջին պրո. ձևը կնկատեմ: Հակառակ այս կարծիքի՝ Մարկվարտն իրականում բաշ ծանոթ է եղել Թովմա Արծրունու վկայությանը և հենց այդ վկայությունն է, որ առիթ է տվել նրան՝ Զարասպ լեռան անունը շփոթելու գրչական սխալի հետևանքով Արծրունու գրքում առաջացած Արասխ վրիպակի հետ: «Երասխ գետը, որի Մարկվարտը,—ըստ երևույթին նույնն է, ինչ որ Սերիոսի սահմանային Արասպ գետը, որի փոխարեն Թովմա Արծրունին երկրորդ դպր. Գ գրիում (էջ 86) հիշում է Արասխ» («Պարսկահար նահանգը», գերմաներեն անտիպ բնագիրը Թարգմանեց, ծանոթագրեց և պատրաստեց հրատարակության Գ. Վ. Արզարյան: Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2, էջ 212: նաև՝ „Revue des etudes arméniennes“, N. S, t. III, Paris, 1966, էջ 278):

Զարասպի մասին տե՛ս նաև Հ. Մանանդյան, Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան, 1945, էջ 9—15:

205. «Եւ արդ՝ գրէ նա անդրէն»: Զեռագրերը, ինչպես նաև Միհրդատյանի և Պատկանյանի հրատարակություններն ունեն. «Եւ արդ՝ գրեն անդրէն»: Ստ. Մալխասյանցը հենվելով Թ. Արծրունու «գրէ դարձեալ»-ի վրա, ուղղել է «գրէ նա անդրէն»: Մենք հետևել ենք Մալխասյանցին:

206. «Քանգի վաղի առաստիւն»: Զեռագրերը, ինչպես նաև Միհրդատյանն ու Պատկանյանն այս արտահայտության փոխարեն ունեն «այլ վաղի, քանի լինի առ Սասանյա»: Տեքստն ուղղել է Մալխասյանցը, հենվելով Թովմա Արծրունու վրա: Մենք հետևել ենք Մալխասյանցին:

207. «Յուցանեմ ձեզ փիղս վառ»: Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 111—112) վկայակոչելով Թ. Արծրունուն՝ առաջարկում է սրբագրել «փիղս վառեալս», այսինքն՝ «փիղս սպառողինեալս»: Սակայն Նոր Հայկազյան բառարանը («վառ» բառի դիմաց գրում է. «ած[ական], որպես բառ հուն[ական], վառիս, βαρος, gravis, այսինքն՝ ծանր»: Ուրեմն, պատմիչը, «փիղս վառ» ասելով հասկացել է ծանր, հուժկու փղեր: Բայց քանի որ «վառ» բառը «ծանր» իմաստով քիչ է գործածվում անսովոր է թվացել Թ. Արծրունուն կամ նրա երկն ընդօրինակողներին, որոնք պատմիչի խոսքը դարձրել են «փիղս վառեալս»: Գրիգոր Մազիստրոսը «Լուսաք թէ եկն» բառերով սկսվող տաղում (էջ 234) նույնպես դործածում է հունարեն փոխառյալ բառը «վառիս» ձևով. «միամարտիկն վառիս», այսինքն՝ «հաղթանդամ մենամարտիկը»\*: Պատմիչն իր տեղեկությունը բաղել է հավանաբար հունական աղբյուրից:

208. «Նետս Երկաթեղէնս ձեռքազուրեամբ»: Զեռագրերն ունեն «ձեռքարձգութեամբ»: Միհրդատյանն ուղղել է «ձեռքազուրեամբ»: Պատկանյանն ընդունել է Միհրդատյանի ուղղումը: Մալխասյանցը տեքստի մեջ տպագրել է «ձեռքարձգութեամբ», իսկ տողատակին ծանոթագրել է. «Մ[իհրդատյանն] ուղղել է այսպես»: Սրանից երևում է, որ Մալխասյանցը նույնպես ընդունել է Միհրդատյանի ուղղումը, բայց սխալմամբ տեքստի մեջ նույնությամբ թողել է վրիպակը:

209. «Եւ շառառունս մուխս Կողմատիկս սլախալ»: Միհրդատյանը և Պատկանյանը ձեռագրերի «շառառունս»-ի փոխարեն ունեն «շառառունս»: Այս բառը նշանակում է «ուլտ» և չի համապատասխանում տեքստի բովանդակությանը: Հեղինակը խոսում է գնեքի և ո՛չ ուլտի մասին: Ուստի, Ք. Պատկանյանը հարկ է համարել ծանոթագրել. «Թովմա Արծրունին շառա-

\* Գրիգոր Մազիստրոսի տաղի մեր վերծանության հիման վրա կատարված ուսերեն թարգմանությունը տե՛ս „Армянская классическая лирика“, Ереван, 1977, т. I, Древний период, средние века (V—XII), стр: 216 (հմմտ. նաև էջ 247—248): Թարգմանության հեղինակն է Լ. Մ. Միրոշյանը:

ունս-ի փոխարեն ունի շուառունս—նիզակ» (Ստ. Մալխասյանցը հետեւելով ձեռագրերին վերականգնել է «շուառունս» ձևը, որը Թ. Արծրունու «շուառունս»-ի («նիզակ») իմաստն ունի: Ա. Սուքիասյանը իրավացի է վարվել, երբ «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում» (էջ 621) «սեգ» բառի հոմանիշների շարքում նշել է և «Սեբեոսի Պատմության» «շավառն» և Արծրունու «շվառն» ձևերը: Սրանք սկզբնապես գրվել են, անշուշտ, միևնույն ձևով և մեզ հասել են հետագայի երկու գրություններով:

«Շառան» բառն ունի նաև «եղեգն», «շավառեղեգն» բառերի իմաստը, և Ստ. Մալխասյանցը «Սեբեոսի Պատմության» հեղինակի գործածած բառի դիմաց, տողատակին ծանոթագրել է «շառան—եղեգ բառից»: Ըստ այսմ էլ նա «շուառունս մոխս պղղվատիկս սլաբաբ» արտահայտությունը թարգմանել է «камышевыми стрелами со стальными наконечниками» (Մալխ., էջ 38): Սակայն «մոխս» բառը, որն այստեղ ունի «շիկացած», «հրաշեկ» բառերի իմաստը, չի հարմարվում «եղեգ» բառին: Հետևաբար՝ այս առումով ավելի ճիշտ է Ք. Պատկանյանի թարգմանությունը. «копьями из раскаленной стали» (Ստ. Մալխ., էջ 41):

210. «արս երիտասարդս հարսս սպառազենս վատնելոց»: Ն. Ակինյանը («Շ. ամս.», 1969, էջ 340) և Մ. Գրիգորյանը («Շ. ամս.», 1968, էջ 112 և 1970, էջ 442) «վատնելոց» բառի փոխարեն առաջարկել են «վատելոց» կամ «հեծելոց»: Երկուսն էլ տրամաբանական են, սակայն շունենք որևէ երաշխիք այն մասին, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակն իրականում գործածել է հենց այդ բառերը, մանավանդ որ առաջարկվող բառերից մեկը՝ «հեծելոց»-ը, բոլորովին նման չէ «վատնելոց»-ին: Թովմա Արծրունին X դարում կարդացել է «վատնելոց» և նա ավելի է դժվարացնում բառը սրբագրելու դրոժը: Մեր կարծիքով, եթե բառը սրբագրելու հարկ լիներ՝ ավելի հավանական է «վանելոց» բառը («վանող» իմաստով): Ինչպես Սեբեոսի Պատմության հեղինակը, այնպես էլ Մովսես Խորենացին (գիրք 2, գլ. Ը, էջ 114, ժ. 3), Դրասխանակերտցին (էջ 69), Ուխտանեսը (հ. 2, էջ 56), Մովսես Կաղանկատվացին (հ. 2, գլ. Ժ, էջ 145) «վանել» բառը գործածում են մոտավորապես «նվաճել», «հարվածել» իմաստով, որի համաձայն՝ «արս երիտասարդս հարսս սպառազենս վանելոց» արտահայտությունը կվերաբերեր զինվորների այնպիսի մի տեսակի, որը հատուկ առաջադրանք ունի առաջամարտիկ լինելով՝ թշնամուն հալածելու, հարվածելու, վանելու (ծամանակակից առաջամարտիկ հարվածող խմբերի նման):

211. «Առ աստուծոյ է թագաւորութիւն և ում կամեցաւ ետ»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն «առ աստուծոյ մարդասիրութիւնն» (փխ. «յԱստուծոյ է թագաւորութիւն»): Բայց հեղինակի խոսքն իրականում թագավորության մասին է, Աստված թագավորություն է տվել ում որ կամեցել է: Գրիչնեան աղավաղելով «թագաւորութիւն»-ը, դարձրել են «մարդասիրութիւն»: Ք. Պատկանյանը (Ստ. Մալխ., 41) նկատել է, որ Թ. Արծրունին ավելի հասկանալի է խոսում. «յԱստուծոյ է թագաւորութիւն և ում կամիցի տացէ»: Մակեբը (Մալխ., 21) առաջարկել է «թագաւորութիւն մարդկան»: Ստ. Մալխասյանցը տողատակին հայտնում է, որ ինքը վրիպակն ուղղել է ըստ Թ. Արծրունու, բայց իրականում յոռացել է ուղղել և զբաբար տեքստը տպագրել է առանց ուղղելու Ռուսերեն թարգմանության մեջ (Մալխ., 38) նա տեքստը թարգմանել է արդեն ուղղված ձևով. «Царство от бога, он дал тому, кому захотел»: Գրիգորյանը կրկին է Մալխասյանցի առաջարկը («Շ. ամս.», 1968, էջ 115)՝ հետևյալ ձևով. «այսպէս (փխ. այսքան). Առ յԱստուծոյ է թագաւորութիւնն»:

212. «Իբև փայլատակումբ հրոյ շանքելոյ. զի ցաւաւանչցեն ի յերկնից ի յերկր, և այրեցնեն զխորս դաշտաց, զանտառ զղալարս և զգաւացեալս»: Այս հատվածը ձեռագրերում և բոլոր նախորդ հրատարակություններում տպագրված է խոսնված միճակով. «փայլատակունք» բառից հետո հաջորդում են «զանտառս զղալարս և զգաւացեալս» բառերը և նախադասությունը վերջանում է «զխորս դաշտաց» բառերով: Մենք բնագրերը կարգավորել ենք հետևելով Ստ. Մալխասյանցի հետևյալ ցուցման. «Պետք է զանտառ դալարս և զգաւացեալս ներքև տանել՝ զխորս դաշտաց-ից հետո» (ԵՆՊ, էջ 40): Ռուսերեն թարգմանության մեջ բնագիրն արդեն կարգավորված է (Մալխ., էջ 38):

«Փայլատակունք» բառի փոխարեն ձեռագրերն ու նախորդ տպագրերն ունեն «զփայլատակունք», որը քերականական ակնհայտ սխալ է: Պետք է լինի «փայլատակունք», և մենք ուղղել ենք այդպես, հենվելով Ք. Պատկանյանի ռուսերեն թարգմանության 41-րդ էջի տողատակին արդեն ուղղված «փայլատակունք»-ի վրա: Գրիգորյանը կրկին է Պատկանյանին և առաջարկել միևնույն ուղղումը, կամ՝ «զփայլատակունք» («Շ. ամս.», էջ 113—114):

213. «Ոչ կարացեալ զղմ ունել»: Ձեռագրերն ու նախորդ բնագրերն ունեն «ոչ կարացաւ»: Թ. Արծրունին պահպանել է ավելի ճշգրիտ ձևը՝ «ոչ կարացեալ», որի հիման վրա էլ Մ. Գրիգորյանն ուղղել է վրիպակը («Շ. ամս.», 1968, էջ 114): Մենք հետևել ենք Գրիգորյանին:

214. «Ուր և ի բանէն խորովայ սպանաւ ի նոցունց իսկ»: Բոլոր ձեռագրերն ու սուրբագրերն ունեն «որպէս, փխ. «Ուր և»: Ք. Պատկանյանը ուս. թարգմ. 43-րդ էջի տողատակին ունի հետևյալ առաջարկը. «Պետք է կարգաւ «ուր ի բանէն»: Առ այս նա վկայակոչում է Ք. Արծրունու «որ և յետոյ իսկ սպանաւ ի հրամանէ խորովայ» բառերը: Ստ. Մալխասյանցը (Մալխ., էջ 39) հետևել է Ք. Պատկանյանի թարգմանութանը, բայց զբաբար բնագիրը թողել է նույնութիւնով («որպէս ի բանէն»): Մենք ուղղեցինք «ուր և ի բանէն»:

215. «Քանզի տեսանելով զհառայս նորա շարաշարս»: Ն. Ակինյանը «զհառայս»-ի փոխարեն հարցականով ենթադրում է շորն հնարավոր ձևեր՝ «զհարուածո», «զհաւատս», «զհամբաս», «զհայեացս» («Հ. ամս.», 1969, էջ 340): Բանի վերաբերյալ եղել են նաև այլ ենթադրություններ:

216. «Արկաւ և ինքն զանամբ զսպանակներն իւր»: Այս ամբողջ նախադասությունը բացակայում է Պատկանյանի և Մալխասյանցի հայերեն հրատարակություններում և ուսուցիչներն թարգմանություններում: Մենք վերականգնում ենք ըստ № 2639 ձեռագրի և Միհրդատյանի հրատարակության: Հմմտ. Մալխ., էջ 24:

217. «Կացին շուրջ զխորհանս սպանակներէ»: Մալխասյանցը տողատակին ծանոթագրում է. «Թվում է՝ ուղղելի կային» (փխ. «կացին»):

218. «Գրոհից զվամարս և զգաւախ յանձնէ իմէ»: Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 114—115, 1970, էջ 443) առաջարկում է «զգաւախ»-ը սրբագրել «զսուսերս»: Նրա կարծիքով «զգաւախ»-ը ավելորդ է, որովհետև ունի նույն նշանակությունը, ինչ՝ «զգամարս»-ը:

Հայտնի է, սակայն, որ հնում գոտին ծառայել է միաժամանակ որպես տարբերանշան, որով տարբեր դիրք գրված զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաները տարբերվել են միմյանցից: Մեզ թվում է, պատմիչը «կամարս և զգաւախ» բառերը դործածելիս նրանցից մեկի մեջ գրել է տարբերանշանի, իսկ մյուսի մեջ՝ սուսերը կրող գոտու իմաստ: «Գոտին, որը զինվորականներին ծառայում էր որպես տարբերանշան, քաղաքացիական պաշտոնյաների համար նույնպես հանդիսանում էր աստիճանի և պաշտոնի նշան» (Р. Гийан, Исследования по административной истории Византийской империи:—«Виз. временник», 1969, т. XXIX, էջ 88): Մովսես Կաղանկատվացին հայտնում է, որ բյուզանդական Կոստանդին կայսրը Ջուստինիանի մեջքն է անցկացնում իր պապ Հերակլի արքունիկան գոտին. «զբաշ հատն իւրոյ Հերակլի և զնիկիտա հանդիս զարժանական գոտին էած ընդ մէջ նորա» («Պատմութիւն Աղուանից», Քիֆլիս, 1913, էջ 212): «Ողմա Արծրունիին գրում է. «Եւ ետ բերել նմա ըստ օրինի զխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և գոտի արիական շրջապատեալ զմիջա» («Պատմութիւն», Ս. Պետրբուրգ, 1887, էջ 193): Փալստոս Բուզանդը գրում է. «Սուսեր ընդ մէջ, թուր զգօտայ» («Պատմութիւն Հայոց», էջ 398):

Ք. Պատկանյանը և Ստ. Մալխասյանցը տեքստը սրբագրելու անհրաժեշտությունը չեն զգացել և թարգմանել են «пояс и кушак» (Մալխ., էջ 43, Մալխ., էջ 41):

219. «Քանզի ինքն մանուկ էր, և զարուսին զարացն սուր ինչ և սակաւ»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 340) առաջարկում է «զարացն» բառը սրբագրել «խելացն» կամ «մտացն» բառերով, սակայն հեղինակի խոսքը իրականում ոչ թե խորովի մաքի, այլ զինվորական ուժի պակասության մասին է: Ուստի բնագիրը սրբագրության կարիք չունի:

220. «Կայր այնպէս յամառացեալ. և անդ կացին այսպէս յամառացեալ»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 340) «յամառացեալ» և «յամառացեալը» բառերը հարցականով սրբագրում է «յամրացեալ» և «յամրացեալը»:

221. «Վասն զի եկեալ ի զգաւամն և զարաց նորա զխոտութիւն», Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 341) վերափոխում է այսպես. «վասն զի տեսեալ զերդումն նորա եւ զխոտութիւն»:

222. «Զաւարն տարեալ հատուցին ի պաղատն»: Բոլոր ձեռագրերն ու սուրբագրերն ունեն «զգաւարն»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 341) վերականգնել է «զաւարն»: Բնագրի սղափաղված լինելը նկատել է նաև Մալխասյանցը, որը ձեռագրի «զաւարն» բառի դիմաց ծանոթագրել է «Սպասելու էր՝ և զարն զընծայն տարեալ»:

223. «ցեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստաւան և Գրոզովիտ գաւառ մինչև ցՀացին և ցՄակու»: Զամինյանը (Զամ., էջ 71) «ցեզր»-ը զարձնում է «զեզր», «ցԱռեստաւան»-ը՝ «զԱռեստաւան»: Պատկանյանի հրատարակությունն ունի «զԱռեստաւան և ցԳրոզովիտ»:

224. «Կոչեաց իսպառուհ ի պալատն»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 341) «թագաւորն» բառից հետո անկունավոր փակագծերի մեջ ավելացնում է «Յունաց»:

225. «չործամ լցան ատուք և եհաս»: Այս բառերից հետո Զամինյանը (Զամ., էջ 72) ավելացնում է՝ «վախճան Շիրին թագուհուին»:

226. «Եւ հրաման եա»: Այս բառերից հետո Զամինյանը (Զամ., էջ 72) ավելացնում է՝ «հոսրով արեաց»:

227. «Մի ոք յանաւրեաց իշխեսցէ»: Զամինյանը (Զամ., 72) «յանաւրեաց» բառը հարցականով ուղղում է «յարեաց?»:

228. «Բրիստոնէից դարձցի յանաւրեալիս»: Զամինյանը (Զամ., էջ 72) «յանաւրեալիս» բառը սրբագրում է «յարիութիւն»:

229. «Եւ դարձեալ անդէն»: Զամինյանը (Զամ., էջ 74) «անդէն»-ը սրբագրում է «անդէն»:

230. Դանիել Մարգարեի մասին այս ավանդութիւնը, ինչպես երևում է, ժամանակին ունեցել է դանազան տարբերակներ և լայն տարածում է գտել: Ք. Պատկանյանը (Ստ., էջ 197, ծ. 125) վիճաբանելով Wil. Kennet Loftus-ի աշխատութիւնը («Travels and Researches in Chaldea and Susiana in 1849—1852», London, 1857) հայտնում է երկու նման ավանդութիւնների մասին: Նրանցից մեկը արաբ պատմիչ Իբն-Ահսաբիմ էլ-Կուֆիի պատմածն է, մյուսը՝ հրեա մատենագիր Բենիամին Քուդեիլի գրի առածը: Արաբ պատմիչի հաղորդածը մեջբերելուց հետո Ք. Պատկանյանը գրում է. «Մեզ թվում է, Սեբեոսի խոսքերի մեջ զգացվում է ակնարկ այն միևնույն դեպքի մասին, որը հաղորդում է արաբ պատմիչը»: Ստ. Մալխասյանը կրկնելով Պատկանյանին, հետաքրքիր է համարում այն փաստը, որ Օմարի (634—644) օրոք կատարված դեպքը (Դանիել մարգարեի աճյունի տեղափոխումը) այդքան կարճ ժամանակամիջոցում դարձել է «Սեբեոսի Պատմութեան» մեջ պատմված առասպելի նյութ, «քոչել է երկրից երկիր և հասցրել է դանաւ հրաշապատում լեզենդ» (Մալխ., էջ 156, ծ. 87):

231. «Յայնմ ժամանակի քազաւուրն Յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ քազաւուրն Պարսից զիր ամբաստանութեան վասն իշխանացն ամենայն Հայաստանեայց և զաւրաց իրեանց»: Բուրք ձեռագիրներն ու տպագիրներն ունեն «գիր ամբաստան»: Մենք վերականգնել ենք «գիր ամբաստանութեան» ձևը, հենվելով հենց իրեն՝ պատմիչի բառապաշարի վրա: Քննարկվող գլխից տաս զուսի հետո կարդում ենք. «Եւ գրեալ զիր ամբաստանութեան բերդակալին և մարզպանին առ արքայ» (ՍեՊ, էջ 65): Ինչպես տեսնում ենք, հեղինակը սովորութեան ունի գործածելու ոչ թե արտասովոր «գիր ամբաստան» ձևը, այլ՝ շատ կանոնավոր «գիր ամբաստանութեան» արտահայտությունը: Սրա հիման վրա էլ մենք սրբագրել ենք բնագիրը:

«Հավանորեն,—գրում է Գրիգորյանը,—Սեբեոսի հարազատ Պատմութեան մեջ գրված էր «գիր ամբաստանութեան», որու քն վերջավորությունը հետագային բաց թողյալ է. դուրս հաջորդող «վն» նախադրության մերձավորության պատճառով» («Շ. ամս.», 1968, էջ 116): Հայտնի է, սակայն, որ «ամբաստանութեան» բառը ձեռագրերում կրճատված ձևով գրվելիս ունենում է ոչ թե «քն», այլ՝ «քե» վերջավորությունը, իսկ «վասն» նախադրությունը կրճատ գրվում է ոչ թե «վն», այլ «վս» ձևով: (Հմմտ. նաև «Շ. ամս.», 1970, էջ 443—444):

232. «Համարակարն՝ հանդերձ գանձու բազմաւ և մեծամեծ պատուով»: Ք. Պատկանյանը «համարակար» բառը թարգմանում է казначитель (Ստ., էջ 52), իսկ Մալխասյանցը՝ казначей (Մալխ., 46): Հ. Աճառյանը «Արմատական բառարանում» բառը ստուգաբանում է պահլավերեն hamar (համար) կար (-արար) բառերից. հաշվարար, հաշվակալ, այսինքն՝ պետության ելմանտերի գլխավոր պաշտոնյա: Ստ. Մալխասյանցն Արմատական բառարանի այս բացատրությունը ավելացնում է. «Համարակարն առհասարակ նշանակում է հաշվապահ: Բայց քանի որ տվյալ տեղում նա գանձը տանում է բաշխելու, իսկ մեկ այլ տեղ (գլ. XXI) տեսնում ենք, որ պետական հարկերը պահվում էին նրա տանը, մենք հարմար գտանք «համարակար»-ը թարգմանել казначей (գանձապահ—Վ. Ա.): Այսպիսով, «զվասպուրականն համարակարն» նշանակում է պետական գանձապետը պարսկական նշանավոր ընտանիքից» (Մալխ., էջ 156, ծ. 88): «Վասպուրականադուլն» և «Վասպուրական համարակար» բառերի մասին տե՛ս նաև Ն. Ալիկյան, Կիրոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910, էջ 161:

233. «Ատաա Խորխոռունի»: «Սեբեոսի Պատմութեան» հնագույն ձեռագիրը (№ 2639) ամենուրեք ունի Խորխոռունի, այնինչ՝ հրատարակվել է խառն ուղղագրությամբ (Խորխոռունի և Խորխոռունի): Մենք, հենվելով № 2639 ձեռագրի վրա, ամենուրեք վերականգնում ենք «Խորխոռունի»:

Ի դեպ՝ այս ազգանվան ուղղագրության բնագավառում միակերպություն չկա առհասարակ: Մատենագիրներից ոմանք գրում են Խորխոռունի, ոմանք՝ Խորխոռունի: Հաճախ միևնույն պատմիչի երկում գրիչները մերթ գրում են առաջին, մերթ՝ երկրորդ ձևով: Մովսես Խորենացին գրում է. «Իսկ Խոռն ի կողմանս հիւսիսոյ բազմանայ... և ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խորխոռունեաց» (Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տիպոս, 1913, էջ 39): Պարզ երևում է, որ Խորենացու օրոք հնչել է Խորխոռունի, ուստի Մ. Աբեղյանը և Ս. Հարությունյանը նախընտրել

են Տնեց Խոռոխունի ձևը: Մ. Գրիգորյանը, սակայն, թյուրիմացություն է համարում Մ. Արեղյանի վճիռը. «Մ. Արեղյան և Ս. Հարությունյան թյուրիմացությանը նախընտրել են Խոռոխունի կերպը» («Հ. ամս.», 1968, էջ 117): «Դասական հայերենի մեջ,—գրում է նա,—արմատ բառերու վերջավորության «ո» տառերը, կրկնության պարագային՝ բաղաձայնե առաջ փոխված են «ր»-ի. օրինակ աղագու. բառ—բարբառ, գիռ—գրգիռ, թիռ—թրթռում»: Բայց պետք է նկատել, որ սրանց կողքին գոյություն ունի նաև «մոմալ» բառը, որի մեջ ո-ն կրկնվելիս մնում է «ո»: Վերջապես փաստը մնում է փաստ, որ Խորենացին գրել է Խոռոխունի:

234. «Թէղորոս»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ընդգրկում են «Թեղորոս»: Մենք ուղղեցինք Թեղորոս, որովհետև սույն անունը «Սեբեոսի Պատմությունում» հանդիպում է երեք անգամ, որոնցից երկուսը «Թէղորոս» է և միայն մեկը «Թէղորոս»:

235. «Տրպատունի»: Զամինյանը (Զամ., էջ 77) ուղղում է «Ատրպատունի» (հավանաբար՝ «Ատրպատական» անունից): Սակայն բոլոր ձեռագրերում գրված է «Տրպատունի», այն էլ երեք անգամ միևնույն ձևով:

236. «Գանձուղ այրուիկ զձնս մեր արացուց»: Բոլոր ձեռագրերը և Միհրդատյանի ու Ք. Պատկանյանի հրատարակություններն ունեն «այրորիկ զձյաատանս»: Ստ. Մալխասյանցն ուղղել է «այրուիկ զձնս»: «Գանձը հափշտակող իշխանները,—գրում է Մալխասյանցը,— մտադիր չէին այդ գանձով Հայաստանը գնել պարսիկներից և հույներից, այլ մտադիր էին պատերազմով և ուժով իրանց հայրենիքը իրանց դարձնել: Այդ գանձը հարկավոր էր Հոն զորք վարձելու համար, «որոնցից օգնականություն ստանալով», պիտի պատերազմեին երկու թագավորների դեմ: Քիչ հետո տեսնում ենք, որ այդ խորհուրդը չի հաջողվում, իշխանների մեջ երկպառակություն է ընկնում, իսկ հոնական զորքի վրա հույս գնել կարելի չէ լինում» (ՍԵՊ, էջ 182, ծ. 38): Մենք հետևել ենք Մալխասյանցի սրբագրությանը:

237. «առեալ ի նոցանէ ազնականութիւն՝ պատերազմեսցուք ընդ եկոսին քաղաւոսդ»: Զամինյանը (Զամ., էջ 77) կոահել է, որ «ի նոցանէ» արտահայտությունը վերաբերում է հոներին և գրել է «ի Հոնաց—որպես ի ստորե», այսինքն՝ «ի նոցանէ» արտահայտությունը սրբագրել է «ի Հոնաց»: Նույն առաջարկը արել է նաև Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 341): Սակայն այս սրբագրության կարիքը չկա այն բանից հետո, երբ Մալխասյանցն արդեն «ի նոցանէ» արտահայտությունից չորս բառ առաջ գտնվող «զձյաատանս» վրիպակը սրբագրել է «զձնս»: Այս սրբագրության դեպքում պարզ երևում է, որ «ի նոցանէ»-ն վերաբերում է հոներին:

238. «Բանկ կայսերն աղարացան»: Զամինյանը (Զամ., էջ 77) ծանոթագրում է, որ այս նախադասությամբ ակնարկված է Մորիկ կայսեր նենգավոր խորհուրդը պարսից թագավորին, հայերին Քրակիա և Արևելք ուղարկելու և ոչնչացնելու կապակցությամբ. «ազգ մի խոտոր և անհնազանդ...»:

239. «Զի գմտա իսկ ամեալ էր նւրա»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն «ածեալ է», ուղղեցինք «ածեալ էր», հետևելով Զամինյանին (Զամ., էջ 78):

240. «Խորեկին սպանանել զխորատուն»: Ստ. Մալխասյանցը ծանոթագրում է. «Կորատոր կամ Կորատոր լատիներեն բառ է, суга—հոգ՝ հոգատարություն բառից, և տառացի նշանակում է՝ հոգատար, հոգաբարձու: Սա մի պաշտոնյա էր, որ հսկում էր ջրմուղների, ցորենը մթերելու, հողերը բաժանելու և այլ գյուղատնտեսական գործերի վրա» (ՍԵՊ, էջ 182, ծ. 39):

241. «նաալ է չերմկի՝ բժշկել ի քիւանդութեմէ, մեծ ի քաղաքն Կարնայ»: Բոլոր ձեռագրերը, ինչպես նաև Միհրդատյանն ու Պատկանյանն ունեն «ի չերմի», Մալխասյանցն ուղղել է «ի չերմկի»: Ք. Պատկանյանը չկոահելով «չերմուկ» (հանքային ջրերով առողջարան) բառի մասին, թարգմանել է «չերմ» բառը. «когда он страдал лихорадкою (= չերմ—Գ. Ա.) лечился от болезни близ города Карина»: Մալխասյանցն այս սխալն ուղղել է հետևյալ ծանոթագրությամբ. «Որ այստեղ չերմուկ է եղել գրված և ոչ չերմ՝ պարզ երևում է անմիջապես հաջորդող խոսքերից—«արշակելով ի չերմուկն՝ ոչ դիպան նմա». (որովհետև կորատորը, լուր ստանալով դավադրության մասին՝ փախել ընկել էր Կարին): Խոսքը այստեղ անվանի Արծաթի կամ Արծրթի չերմուկի մասին է, Կարինից դեպի հյուսիս ընկած մոտ 20 կմ. հեռավորությամբ, Արծաթի գյուղի մոտ: Այս չերմուկը հիշվում է ժողովրդական լայլիի մեջ հետևյալ ձևով.— «Արծրթի բարձր տեղ է. Զուրբ հիվընդի դեղ է. Սիրած սիրածի չեն տա. Աս ինչ անօրէն գեղ է»: (Այս քառյակը փորձը հասակումս լսել եմ իմ հորից, որ 20—24 տարեկան հասակում գնացած է եղել Ախալցխայից էրզրում՝ դերձակության արհեստին մեջ կատարելագործվելու համար, և լսել է այնտեղ էրզրումում): Նույն քառյակը զանազան վարիանտներով հետո հատկացրել են ուրիշ տեղերի—«Ալազյալ բարձր տեղ է», «Ապարան բարձր տեղ է» են, բայց սրանց մեջ անհարմար է գալիս «ջուրը հիվընդի դեղ է» խոսքը, որ շատ լավ հարմարում է Արծաթի չերմուկին:

Մեր բերած վարիանտը համեմայն դեպս 90 տարվա հնութուն ունի» (ՍեՊ, էջ 183, ծ. 40):

242. «Նւ բընամիքն... աւար առին զքաղաւորութիւնն»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր հրատարակութիւններն ունեն «զթագաւորութեանն»: Զամինյանը (Զամ., էջ 82) ուղղել է «զթագաւորութիւնն»:

243. «Յայնժամ քաղաւորն Յունաց հրամաւ տայր՝ ժողովել զաւրաց իւրոց զամենայն որ յարեկից կողմանէ»: Զամինյանը (Զամ., էջ 32) «ժողովել զաւրաց»-ը ուղղում է «ժողովել զաւրավարաց», բայց սա ընդունելի չէ, որովհետև պատմիչի խոսքը բոլոր զորքերի և ոչ թե միայն զորավարների մասին է:

244. «Կռուել ռազմ ի նիգախամուխ Գալատի»: Բոլոր ձեռագրերը, Միհրդատյանը և Պատկանյանն ունեն «ռազմի»: Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, էջ 31) և Զամինյանը (Զամ., էջ 82) վրիպակն ուղղել են այսպես. «ռազմ ի»: Մենք ընդունել ենք այս սրբագրությունը:

245. «Կազմել զունդս զարդու և զինու վառեալ»: Զեռագրերը, Միհրդատյանը, Պատկանյանն ունեն «զարդս»: Մալխասյանցն ուղղել է «զարդու»: Զամինյանը (Զամ., էջ 82) «զարդու» բառի դիմաց ծանոթագրում է «զարդարեալ որպէս յէջ 56»: Նկատի ունի «Սեբեոսի Պատմութեան» Ղուկասյան հրատարակութեան 86-րդ էջում գտնվող հետևյալ տեղեկությունը. «Նւ թագաւորն սպառազինէ զզարն և զարդարէ և զունարէ ի սահմանս Թրակացոց»:

246. «Իրեշտակ անտաւուր կայսերն և ամենայն պաղատայն փութանակի առաքէին»: Հնագույն ձեռագիրն (№ 2639) ունի «պաղատային», բոլոր տպագիր հրատարակությունները՝ «պաղատային»: Զամինյանը (Զամ., էջ 83) ուղղել է «պաղատան», Մ. Գրիգորյանը («Շ. ամս.», 1968, էջ 118) առաջարկում է «պաղատին»: Մենք ուղղեցինք «պաղատոյն», երկնով այն փաստից, որ պատմիչը երեք այլ էջերում գրում է հենց «պաղատոյն»: Ճիշտ է, «պալատ» բառի սեռական-տրական հոլովը սովորաբար լինում է «պալատին» կամ «պալատան», ինչպես որ առաջարկել են Զամինյանն ու Գրիգորյանը և ինչպես գտնում ենք մեկ անգամ զործածված հենց «Սեբեոսի Պատմութեանում», սակայն քանի որ երեք տարբեր էջերում հանդիպում է «պաղատոյն» ձևը՝ մենք ուղղում ենք այդ ձևով, ընդունելով, որ դա՛ է հեղինակի զործածած ձևը:

247. «Նւ նասեալ ի դիմին՝ ելև պատեռազմ մեծ»: Մակիերը (MacI., էջ 35) «հասեալ» բառը հարցականով ուղղում է «հարեալ»:

248. «Վառասիրութեամբ հաղորդեալ միաւորեցան արիմաւ»: Բոլոր ձեռագրերն ունեն «արիմաւորք»: Պատկանյանը (Патк., էջ 19) թարգմանել է «соединились с ними в вере», որից երևում է, որ նա ձեռագրի «արիմաւորք»-ը մտովի սրբագրել է՝ «արիմաւք»: Այդպես են վարվել նաև Մակիերը (MacI., էջ 36), Զամինյանը (Զամ., էջ 84), Մալխասյանցը (ՍեՊ, էջ 55): Մենք հետևել ենք նախորդների այս ճիշտ սրբագրությանը:

249. «Անուն միայն Մովսէս, միայն՝ Յովհանն»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «Յոհանն»: Մենք ուղղեցինք «Յովհանն», որովհետև մյուս բոլոր դեպքերում հեղինակն այս անունը գրում է հենց այդ ձևով:

250. «Նկեղեցայն որ ի Դրնի սրբոյն Գրիգորի»: Երիցյանի արխիվում պահվող մասնակի ընդօրինակություն մեջ «ի Դրնի» արտահայտությունը հարցականով սրբագրված է «ի տրուփն», որը ճիշտ չէ:

251. «Զոր տարան եղեալ ի պահեստի»: Մակիերը (MacI., էջ 36) «տարան» բառը համարում է վրիպակ, առաջացած «տար[աւ Յովհ]ան» բառերից:

252. «ի Կարնոյ Բազաֆի»: Այս բառերից հետո Զամինյանը ենթադրում է պակաս (Զամ., էջ 84):

253. «Ուստի վարեցաւ ինքն»: Այս բառերից հետո Զամինյանը (Զամ., էջ 84) ավելացնում է «Յովհանն» («հինքն՝ Յովհանն»):

254. «Այլ զՍահակ Մամիկոնեան արձակեն միով հազարաւ ընդ Սեբասիայ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «Սահակ» (առանց «զ» նախդրի): Ուղղեցինք «զՍահակ», հետևելով Մալխասյանցի առաջարկին: Մալխասյանցը (ՍեՊ, էջ 55) տողատակին ծանոթագրել է «Ուղղելի զՍահակ»:

255. «Սահակ զնացեալ տանի հասուցանել զգաւրն ի պաղատն»: Ն. Ակիւնյանը («Շ. ամս.», 1969, էջ 341) «հասուցանել»-ը ուղղում է «հասուցանէ»:

256. «Ոչ կամեցեալ երթալ ի տեղին յայն զնես քաղաւորին խնդոյ»: Ն. Ակիւնյանը («Շ. ամս.», 1969, էջ 341) առաջարկում է «զհետ»-ը սրբագրել «ըստ»: Սակայն Մ. Գրիգորյանն իրավացիորեն պատասխանում է. «Անպայմանորեն սրբագրելու հարկ չկա, «զհետ» նախորդությունը գուցե Սեբեոսի գրչին կպատկանի՝ զործածյալ «հետևողություն»-ը իմաստով» («Շ. ամս.», 1969, էջ 347):

257. «Հատա վճիռ ի վերայ նոցա՝ մեկացուցանել և ընկենուլ ի կինիկն»: Ստ. Մալխասյանցըը (Малх., էջ 158, ծ. 97) ծանոթագրում է. «Մմբատ Բագրատունին, հրապարակային դատարանի վճռով, նետվում է կինեզիոն: Մմբատի հետ միասին դատված՝ դավադրության մյուս յոթ մասնակիցների ճակատագրի մասին Սերենուր որոշակի չի խոսում, չնայած՝ նա արտահայտվում է հոգնակի թվով. «նատա վճիռ ի վերայ նոցա մեկացուցանել և ընկենուլ ի կինիկն»: Բայց հետագայում նա խոսում է միայն Մմբատի մասին, իսկ ուրիշների մասին լռում է: Մեր կարծիքով, այստեղ բնագիրը վրիպակ ունի. «ի վերայ նոցա»-ի փոխարեն պետք է կարդալ «ի վերայ նորա», այսինքն՝ կինիկիոն նետելու դատավճիռը վերաբերում էր միայն Մմբատին, որպես դավադրությունը կազմակերպողի, իսկ մյուս յոթ մասնակիցներին դատապարտել են աքսորի՝ հեռավոր կղզիներ: Դա երևում է միևնույն զլխի վերջին խոսքերից, որոնցում ասվում է, որ թագավորը հրամայեց նստեցնել (հանցագործներին), այսինքն՝ Մմբատին և նրա կողմնակիցներին, նավ և քարտուր հեռավոր կղզիներ: Այնտեղից Մմբատին տեղափոխում են Աֆրիկա և նշանակում այնտեղ գտնվող դորքերի տրիբուն»:

Մալխասյանցն անշուշտ իրավացի է, երբ նշում է, որ Մմբատի հետ միասին աքսորել են նաև մյուս դավադիրներին, բայց դա չի կարող ապացույց հանդիսանալ այն բանի, թե «ի վերայ նոցա»-ի փոխարեն եղել է «ի վերայ նորա»: Միևնույն նախադասության սկզբում հեղինակը գրում է. «Եւ քննեալ զնոսա (ինչպես տեսնում ենք, այստեղ էլ է բառը հոգնակի. խոսքը ոչ միայն Մմբատի, այլև գործակիցների մասին է—Պ. Ա.)... հատա վճիռ ի վերայ նոցա»: Ուրեմն մեր ընդգծած «նոցա»-ն ավելորդ չէ: Պատմիչն սկզբում խոսել է բոլորին վերաբերող դատավճիռի մասին և գրել «ի վերայ նոցա». իսկ հետո նկարագրել է միայն Մմբատի մենամարտը, անհրաժեշտ շահամարելով խոսել անպայման նաև այն մասին, թե ինչ եղավ մյուսների ճակատագիրը: Իսկ այդ մյուսներին, ինչպես երևում է, Մմբատի հետ միասին ներել են և աքսորել կղզիներ: Մմբատի հաղթանակը օգնել է նաև նրանց:

258. «Կինիկն»: Ք. Պատկանյանը (էջ 54) այս բառը նույնացնում է հունարեն κινική, բառի հետ, իսկ այդ բառով հույն պատմիչները կոչում են բացօթյա կրկեսի այն բեմը, որի վրա տեղի էին ունենում կառամարզումներ, ցամաքտեր և այլ մրցումներ: Մրցմանը մասնակցում էին նաև զազանների հետ մենամարտող մահապարտ հանցագործները: Մմբատի մենամարտի մասին տեղեկություն է պահպանվել նաև հունական աղբյուրներում, Ք. Պատկանյանը (Патк., էջ 199—200) վկայակոչում է Լըբոյի շախատությունը (Lebeau, Hist. du Bas—Emp., t. X, էջ 284—285), որի մեջ բյուզանդական պատմիչ Միսոկատտեսի տեղեկությունների հիման վրա պատմվում է Մմբատ Բագրատունու մահապարտի մանրամասնությունները:

259. «Յայնժամ հգաւր և պատեւազմող, որ ի բազում պատեւազմունս ցուցեալ էր զիւր քաջութիւն և գրեւորիւն»: «Յայնժամ» բառն այստեղ ակնհայտ վրիպակ է: Նրա փոխարեն պետք է եղած լիներ «ցայնքան», «ցայնչափ» բառերը կամ միևնույն իմաստն արտահայտող մեկ ուրիշ բառ, որը հարմարվեր քննարկվող հատվածում գտնվող «որ» բառին և պահպաներ նախադասության քերականական կապը: Յ. Մակիերը (MacI., էջ 38) փորձել է գտնել նման մի բառ և առաջարկել է «ցայնժամ» բառը: Սա շատ հավանական մի բառ է և կարելի էր վրիպակն ուղղել այս բառով, եթե մեր մատենագրության մեջ «ցայնժամը» երբևէ վկայված լիներ նաև «ցայնքան», «ցայնչափ» բառերի իմաստով: Այդպիսի վկայություն մեկ ծանոթ չէ:

«Դ» ձեռագրի գրիչը շեջել է «յայնժամը» և դարձրել «յոյժ», իսկ Զամինյանը (Զամ., էջ 87) առաջարկել է «յամենայն ժամ»: Բայց այս երկու բառն էլ չեն համընկնում մեր նշած «որ»-ին: Ստ. Մալխասյանցը ծանոթագրել է. «Յայնժամ՝ աղավաղված բառ է», բայց որևէ սրբագրություն չի առաջարկել:

260. «Եւ արձակեալ ի վերայ նորա արջ»: № 2639 ձեռագիրն ունի «ի վերայ նոցա»: Սա ակնհայտ վրիպակ է, որովհետև իրականում արջը բաց են թողել մեկ հոգու՝ Մմբատի («նորա») վրա: «Արջ» բառի եզակի թիվը նույնպես ցույց է տալիս, որ «նոցա»-ի փոխարեն եղել է «նորա»:

261. «Նորա բունս հարեալ զեղջերացն ցլուն և զպղաղակ հգաւրիւն և յալգեալ ցուլն ի մաւրս ին»: «Յլուն» բառից հետո ակնհայտ պակաս է զգացվում, այդ իսկ պատճառով էլ Ստ. Մալխասյանցն այդ բառից հետո գրել է բազմակետեր, որոնցից հետո գետեղել է «և զպղաղակ հգաւրին» բառերը և ապա կրկին բազմակետերով ցույց է տվել դարձյալ պակասող մասի տեղը: Զամինյանը (Զամ., էջ 88) պակաս չենթադրելով՝ մեզ հետաքրքրող տեղը սրբագրել է այսպես. «զպղաղակ հզոր բարձեալ» (փխ. «զպղաղակ հզարին»): Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969) նույն բառերը սրբագրում է՝ «զականջացն նորին»:

262. «Անդ աղաղակ բազում ամբոխին գերկիւն լնփն, և խնդրէին ի վերայ նորա ողորմու-

րիւն ի թագաւորէն»: Պատմիչը Սմբատի մենամարտը նկարագրելուց հետո հայտնում է, որ հաղթանակներից հիացած ժողովուրդը, ինչպես նաև անձամբ թագուհին ողջունի աղաղակներ բարձրացնելով՝ թախանձագին խնդրում են կայսր Մորիկից՝ ներումն շնորհել հայ բաշորդուն: Բյուզանդական պատմիչ Միմոկատտեսը, հունաց թագավորին մեծարելու և բարի գործերի հեղինակ դարձնելու միտումով՝ լուրմ է Սմբատի վարած մենամարտների մասին և փաստն այնպես է ներկայացնում, թե իբր թագավորը Սմբատին ներում է առանց այդ մարտերի: Ստ. Մալխասյանցն այդ կապակցութեամբ գրում է. «Կայսր Մորիկի կողմից Սմբատի ներման մասին Պատկանյանը (ծան. 139) վկայակոչում է Լըբոյին (վերոհիշյալ Hist. du Bas—Emp.—ի հեղինակին), որը հույն պատմիչ Միմոկատտեսի՝ Մորիկի կենսագրի բառերով պատմում է հետևյալը. «Սեփական խոստովանութեամբ մերկացված, Սմբատը (Symbace) դատապարտվեց վայրի գազանների հողումանը մրցաբեմի վրա: Հավաքվեց ժողովուրդ: Բեմ բերված հանցագործն անողոր մահից բացի ուրիշ ոչինչ չէր սպասում, երբ Մորիկի՝ գթաբարությունը կանխեց հանդիսատեսներին՝ վարեկցանքը: (Կայսեր) այդ ներողամտությունը դիմավորվեց ցնծութեամբ բարձր աղաղակներով, և ամբողջ քաղաքը օրհնում էր կայսերը, որը նրան ազատեց արյունոտ տեսարանի սարսափից»: Դատելով այս պատմությունից, — շարունակում է Մալխասյանցը, — Սմբատը ներվել է առանց գազանների հետ կռվելու, ոչնչով չարժանացած այդ ներողամտությանը: Բայց սա — պատմական անճշտություն է: Միմոկատտեսը ի գերագույն փառս Մորիկի, կամենալով փառաբանել նրա գթաբարությունը, ուղղակի դուրս է գցել Սմբատի մենամարտի տեսարանը, բայց դրանով նա հակասել է և՛ սովորույթին, և՛ իրեն: Մանր պետական հանցագործին առանց պատճառի ներելու սովորություն չի եղել, հատկապես՝ նրան հրապարակային դատարանի միջոցով դատելուց հետո: Այդպիսի վեհանձնությունը չի հարձարվում մանավանդ Մորիկ կայսերը, որին սպանեց իր իսկ զորքը խստութեան և ժախտության համար: Բացի դրանից՝ այդպիսի պատճառազուրկ ներումը կոթորակներ ժողովրդին, որը հավաքվել էր սիրված, հետաքրքիր տեսարանի... Մորիկն իր վեհանձնության ուժով չէ, որ հանցագործին ներելու նշան արեց, այլ՝ դրան հարկադրված էր հանդիսատեսների միաձայն և համառ պահանջով և իրեն՝ թագուհու խնդրանքով: Նա ներում շնորհեց այլևս ոչ թե հանցագործին, այլ գազանների դեմ արյունոտ հաղթական մարտ վարելով իր մեղքը բաված ժողովրդի սիրելուն, օրվա հերոսին: Այդ մասին է վկայում նաև այն, որ ներելուց հետո Սմբատին տանում են բաղնիք, լողացնում և ընթրիքի հրավիրում կայսերական սեղանի շուրջը: Այդպիսի պատիվ են ցույց տալիս, անշուշտ, ոչ թե հանցագործին, որի կյանքը խնայել են վեհանձնության պատճառով, այլ՝ վաստակած մարտիկին, օրվա հերոսին» (Մալխ., էջ 158—159, ծ. 100): Այնուհետև, Մալխասյանցն սկսում է մանրամասն բացատրել, թե Սմբատը որտեղից կարող էր ձեռք բերել գազանների հետ կռիվ վարելու հմտությունը և թե որոնք են մենամարտի եղանակները:

263. «(և առնել նոցա անդ ի մէջ նոցա) և առնել զնա անդ ի մէջ զաւրացն»: Փակագծերում գտնվող բառերը իրենց հաջորդող բառերի կրկնությունն են, միայն այն տարբերությամբ, որ փակագծերի մեջ երկու անգամ կրկնված «նոցա» բառի փոխարեն փակագծից դուրս գտնվող մասում կան «զնա» և «զաւրացն» բառերը: Ինչպես երևում է, ընդօրինակող գրիչը սկզբում գրել է փակագծում գտնվածը, սպա նկատել է, որ «նոցա»-ների փոխարեն պետք է լինեին «զնա» և «զաւրացն» բառերը, նախադասությունը նորից է արտագրել և ուղղել է սխալը, բայց մոռացել է ջնջել նախորդ գրածը (փակագծի միջինը) և այդպիսով մեզ են հասել միևնույն նախադասության և՛ սխալ սևագրությունը, և՛ ճշգրտված սրբագրությունը: Այս անբնական կրկնությունը նկատել է առաջինը Ք. Պատկանյանը (Ստ., էջ 62), որը փակագծի մեջ գտնվող մասը բաց է թողել առանձին թարգմանությունից: Մակչերը ֆրանսերեն թարգմանության 39-րդ էջում անհասկանալի է համարում կրկնվող նախադասությունը: Նախադասության կրկնությունը նկատել է սխալ մասը փակագծերի մեջ են վերցրել նաև Զամինյանը (Զամ., էջ 89), Մալխասյանցը (ՍՍՊ. էջ 58) և Ն. Ակիլյանը («Հ.ամս.», 1969, էջ 342):

264. «առնել զնա»: Զամինյանը (Զամ., էջ 89) դարձնում է «առնել զնոսա», որը, սակայն, հիմնավորված չէ:

265. «Տրիբուն»: Ձեռագրերը և Միհրդատյանի ու Պատկանյանի հրատարակությունները «տրիբուն» բառի փոխարեն ունեն «ի բուն»: Ստ. Մալխասյանցը (ՍՍՊ, էջ 58) հենվելով Մխիթար Անեցու վրա («և արարեալ զնա տրիբուն զօրացն որ յԱփրիկե») «իբուն»-ից առաջ ավելացրել է «տրի» և ստացել «տրիբուն»: Այս բառին նա կցել է հետևյալ ծանոթագրությունը. «տրիբուն՝ փոխ է առնված լատիներեն tribunus-ից, հունարեն՝ triboynos, որը նշանակում է լեզիոնի հրամանատար (tribunus militaris): Ցուրաքանչյուր լեզիոն ուներ վեց տրիբուն, որոնք երկու ամսվա ընթացքում հերթով հրամանատարություն էին անում լեզիներում: Սմբատ Բագրա-



տունն ներելուց հետո Մորիկը շհամարձակվեց նրան ուղարկել հայրենիք, վախենալով կրկնվող դավադրությունից. նա նրան ուղարկեց Աֆրիկա, պատվավոր քարոք, տալով նրան զինվորական տրիբունի համեստ պաշտոնը» (Малх., էջ 160, ծ. 101):

266. «Եթող համարակարգն է գնաց»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 342) չնկատելով, որ խոսքը համարակարգի մասին է, առաջարկում է «գնաց»-ը սրբագրել «մնացին»-ով:

267. «Յայնժամ եկին հասին պէշասպիկ»: Չեռագրերը, Միհրդատյանը և Պատկանյանն ունեն «պէշասպիկ», Մալխասյանը սրբագրել է «պէշասպիկը», հենվելով Հյուբերմանի ցուցման վրա: Բառի նշանակությունը Ք. Պատկանյանին սկզբում հայտնի չի եղել. նա ուսուցիչը թարգմանության մեջ (էջ 62) տառադարձության է ենթարկել «Вемаспн» ձևով, իսկ ծանոթագրության մեջ (էջ 200, ծ. 140) հայտնել է. «Այս բառի իմաստը մեզ լրիվ հասկանալի չէ: Գոյություն ունի «պեշասպիկ» (Печаспик) բառը, որը նշանակում է փոքրիկ մեծությամբ, բայց արագավազ ձի»: Հայերեն բնագրին կից ծանոթագրության մեջ (էջ 199), սակայն, Պատկանյանն ավելի է ճշգրտում իր կարծիքը. «Պէշասպի. զայս բառ պէշասպիկ ընթեռնուն բառարանը և «պատի ձի» մեկնեն, այն ինչ առավել հասանական թուի զայն ի پيشه چاوازه پاشه و اسب که در کوهستانها و در کوهستانها و در کوهستانها و در کوهستانها (56). «Բայց միայն թագավորն պրծեալ մագապուրծ, պէշասպիկ մի սուրհանդակ առաջի, պրծեալ էյանէր փախստական»: Հմմտ. նաև նույնի «Материалы для армянского словаря», СПб., 1882, էջ 12—13: Մալխասյանը ավելացնում է. «Հյուբերման բառը քայքայում է պահլավական pešaspik [(պէշասպիկ). pesh]=առաջ, asp=ձի բառերից և ik մասնիկից, որ նշանակում է առաջաձի սուրհանդակ, թագավորների արագընթաց թղթատար: Ըստ Հյուբերմանի բառը հայերենին անցել է ասորական pešaspig ձևից» (ՍԵՊ, էջ 185, ծ. 42):

268. «Յամուր երկիրն Գեղմայ»: Ք. Պատկանյանը ուսուցիչին թարգմանության մեջ «երկիրն Գեղմայ» ամենուրեք թարգմանում է «страна Дейлемов» (Патк., էջ 63): Իսկ հայերեն բնագրի տողատակին ծանոթագրում է. «Գեղում—Գեղմայ, Գեղումն—Գեղման, և Գեղմանց լեռան Խորենացույն Բ, 53, է արդի گیلکی Գիլան գաւառն պարսիցս: Գրի նույնպէս Գիլան, Գեղան, Գելմն, Գեղամն և այլն»: Տե՛ս նաև Маcl., էջ 11, ծան.: Մարկվարտը «Գեղում»-ը սովորաբար սրբագրում է «Գելում»: Գեղմանց լեռները (այժմ՝ Գիլանի լեռներ) քարտեզի վրա տե՛ս Ս. Տ. Նեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Քարտեզ, վանդակ Գ. 8:

269. «Իսկ Ստեփանոս Սիւնոյ պայլաբեալ վասն տանուտէրութեան (լեալ) ընդ հաւրեղբարն Խուրմ Սահակայ»: «Վեալ» բառը վերցրել ենք փակագծերի մեջ, ենթադրելով, որ դա ավելորդ ընդմիջարկություն է: Հնարավոր է նաև, որ դա լինի աղավաղված վերջավորությունը մեզ չհասած ինչ-որ բառի, սակայն, «թշնամացեալ» բառի («պայլաբեալ վասն տանուտէրութեան, թշնամացեալ ընդ հաւրեղբարն իրում»): Ստ. Մալխասյանը (ՍԵՊ, 60) «պայլաբեալ» բառը սրբագրել է «պայլաբ» բառով, բայց մենք վերականգնեցինք. ձեռագրի «պայլաբեալ»-ը, որովհետև Ստ. Մալխասյանցի սրբագրած նախադասությունը («Իսկ Ստեփանոս Սիւնոյ պայլաբ վասն տանուտէրութեան (լեալ)» քերականորեն անսովոր է:

270. «Յւ գլխատեցին գնա ի բուն աղունացն», Չեռագրերն ու բոլոր հրատարակություններն ունեն «աղունացն», որը վրիպակ է: Պատմիչի խոսքը աղունացքի (մեծ պաս) և ոչ աղունացի (ուտելիք) մասին է: Մենք ուղղել ենք «աղունացն», հետևելով Չամբայանին (Չամ., 93):

271. «Յւ զհետ սոցա հասանէին զաւրն պերոզական»: Ք. Պատկանյանը «Պերոզական» բառի դիմաց ծանոթագրում է. «Չգիտենք ինչ է նշանակում Պերոզական գունդ (սակայն Սեբեոսն ասում է ոչ թե Պերոզական գունդ, այլ «զաւրն պերոզական» — Գ. Ա.): Բառացի նշանակում է Պերոզի գունդ կամ էլ, թերևս, հաղթական շոկատ, որովհետև Պերոզ — پيروز նշանակում է հաղթող» (Патк., էջ 200, ծ. 145): Ստ. Մալխասյանը (Малх., էջ 161, ծ. 104) կրկնում է Պատկանյանի բացատրությունը, սակայն ուսուցիչին թարգմանության տեքստում նա վրիպակաբար գրում է «персидское (փխ. Перозовское) войско» (Малх., էջ 54): Մակելբը (Маcl., էջ 42) թարգմանել է. «L'armee de Peros» («Պերոզի բանակը»): Յ. Մարկվարտը (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 262, վավ. 2, էջ 79, միկրոֆիլմ) առաջարկում է սուլն հատվածը սրբագրել այսպես. «Յւ ճանապարհ կալեալ զնացին [ի զաւրն պերոզական] յամուրն ի յերկիրն Գեղմայ: Եւ զհետ սոցա հասանէին զաւրն ապրուեզական»:

272. «Յւ եղ ի ժամանակին յայնմիկ հաճոյանայ Սմբատայ Բագրատունոյ յայս Խոսրովու աբալային»: Սմբատ Բագրատունու մասին հայագիտության մեջ զոյություն ունի երկու կարծիք: Ոմանք գտնում են, որ Մանվելի որդի Սմբատ Բագրատունին և Խոսրով Ակրովելի կողմից «Խոս-

րով Շում» պատվավոր անունն ստացած Սմբատ Բագրատունին միևնույն անձն են: Ոմանք էլ երկու Սմբատներին զանազանում են:

Վերջին կարծիքը հենվում է այն փաստի վրա, որ Սմբատին վերաբերող ամենաարժանահավատ աղբյուրում, այսինքն՝ Սմբատի ապրած դարում գրված «Սեբեոսի Պատմությունում» Մանվելի որդի Սմբատ Բագրատունու կենսագրությունն ավարտվում է Աֆրիկյան արքայով, իսկ Սմբատ Խոսրով Շումի կենսագրությունն սկսվում է պարսից արքա Խոսրովի կողմից մեծարույնով: Սմբատների նույնության մասին ոչ մի ակնարկ չկա:

Այդպիսի ակնարկ չկա նաև օտար աղբյուրներում: Միմոկատտեսը քաջ ծանոթ է Սմբատի կրկեսամարտի պատմությանը, և, ինչպես տեսանք, գովում է բյուզանդական կայսր Մորիկին, որն իբր առանց մենամարտի ներում է Սմբատին: Եթե Սմբատը ներվելուց հետո դավաճանած լիներ իրեն ներող կայսրին և անցներ պարսից թագավորի բանակը՝ հալիվ թե Միմոկատտեսն այդ մասին չնշեր:

Երկու Սմբատների նույնության կողմնակիցները սոսկ ենթադրաբար հնարավոր են համարում, որ Աֆրիկյան արքայում գտնված Սմբատը փախել կամ վերադարձել է արքայից և ծառայություն է մտել պարսից Խոսրով Ապրվելի մոտ:

Այս տպավորությունը միջնադարում ունեցել են նաև Մխիթար Անեցին և Միմեոն Ապարանեցին: Առաջինը ապրելով Սմբատից շուրջ կեսհազարամյակ հետո, արձագանքել է ժողովրդական բանահյուսությանը (որը երկու Սմբատների քաջագործությունների պատմությունը միացրել և հյուսել է մի անձնավորության շուրջ), իսկ երկրորդը պարզապես չի նկատել, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը խոսում է երկու տարբեր Սմբատների մասին: Նրա թյուրատեսությունը երևում է «Վիպասանության» («Բանաստեղծություններ», էջ 143) հետևյալ տողերից.

Զի յաջողմամբ ճանապարհչին  
Սքմբատ եհաս յիւր հայրենին,  
Հաճոյացեալ յաշս Խոսրովու  
Պարսից արքայից արքային:

Այս պատմությունը չի հարմարվում «Սեբեոսի Պատմության» հետևյալ հաղորդմանը. «Հրամայէ (Մորիկ կայսրը—Գ. Ա.) հանել զնոսս ի նաւ և արքորել ի կղզիս հեռաւորս. և ապա անտի հրամայէ անցուցանել յԱփրիկէ» (ՍԵՊ, էջ 58): Սմբատ Բագրատունուն նստեցրել են նա՛վ և ուղարկել հեռավոր կղզիներ, ապա՝ Աֆրիկա: Ուրեմն՝ նա դեպի Աֆրիկա տանող ճանապարհին երբեք չէր կարող «հաջողմամբ» հասնել իր հայրենիքը:

Սմբատ Բագրատունու գործունեության մասին հիմնականում տեսնել Պատկանյանի ուս. թարգմանության հատկապես 146-րդ ծանոթագրությունը (էջ 200—201) և Ն. Ակինյանի «Կիրոն կաթողիկոս Վրաց» (Վրեննա, 1910, էջ 157—164):

Երկու Սմբատների նույնացնող մասնագետներին (Սեն Մարտեն, Ալիշան, Օրմանյան, Մարկվարտ և այլք) հետևել է նաև Հո. Ջանիտադյանը («Խոսրով-Շումը Մանվելի որդի Սմբատ Բագրատունին է», «Տեղեկագիր» ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, 1943, № 2, էջ 50), որը առանց բավարար հիմքի քննադատում է Չամչյանին և ժխտում Ք. Պատկանյանին ու Ստ. Մալխասյանցին:

273. «Տայ ի նա գմարգլաճնութիւն երկրին Վրկանայ»: Ա, Բ, Գ ձեռագրերն ունեն «մայ (փխ. տայ) ի նա» վրիպակը, որն առաջացել է երկաթագիր «Տ» և «Մ» տառերի շփոթից: «Դ» ձեռագիրը և Մալխասյանցն ուղղել են «տայ ի նա», Միհրդատյանը և Պատկանյանը՝ «տայ նմա»: Մենք, հետևելով Դ ձեռագրին և Մալխասյանցին, թողնում ենք «տայ ի նա»: Միհրդատյանի և Պատկանյանի «տայ նմա»-ն քերականորեն ավելի ընտանի է («Սեբեոսի Պատմության» հեղինակն ինքը երեք տող ներքև գործածում է հենց այդ ձևը. «տայ նմա զկամարն և զստահրն») և կարելի կլիներ սրբագրել այդպես, սակայն ձեռագրերի մեծամասնության «մայ ի նա» ձևն ստիպում է ընտրել «տայ ի նա» ընթերցվածը:

274. «Առնէ գեա իշխան ի վերայ ամենայն կողմանն այնուրիկ»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն «և ի վերայ»: Այստեղ «և»-ը ավելորդ է: Հավանաբար ձեռագրում սխալմամբ գրված է եղել «և», որը հետագայում ուղղել են «ի», մոռանալով ջնջել «և»-ը: Մեզ հասել են ինչպես ջնջված («և»), այնպես էլ ուղղված («ի») ձևերը: Զամինյանը (Զամ., էջ 94) սրբագրել է բնագիրը, վերացնելով «և»-ը Մենք հետևել ենք Զամինյանին:

275. «Էին ապտամբ ի ժամանակին յայնմիկ յարհայէն Պարսից երկիրքն, որ անուանեալ կոչին Ամաղ, Ռոյնան»: Ք. Պատկանյանը ուս. թարգմ. մեջ (էջ 66, 201), հետևելով Միհրդատյանի հրատարակությանը, Ամաղ և Ռոյնան տեղանունները վրիպակաբար միացրել է և ծանոթա-

գրել. «Ամաղոռյեան—չգտեսնք ինչ երկիր է» (էջ 201, ծ. 247); Հայերեն բնագիրը հրատարակելու նա ուղղել է վրիպակը և տպագրել «Ամաղ, Ռոյեան»: Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ում—Ամնդ, Ռուան (Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 352) Ամալ, Ռուան (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 114), Ամոլ, Ռուան (նույն տեղում, էջ 115): Ամաղ և Ռոյան գավառների մասին տե՛ս J. Marquart, Eransahr nach der Geographie des PS. Moses Xorenaci, Berlin, 1901, էջ 136:

276. «Զրէճան»: Ձեռագրերն ունեն այս ձևը: Միհրդատյանը նույնպես այդպես է տպել: Ք. Պատկանյանը դարձրել է «Զրէճան», որին հետևել են նաև Մակլերը (MacI., 42) և Մալխասյանցը (ՍեՊ, 61): Յ. Մարկվարտը («Eransahr», էջ 94, 125, 131 և ՄՄ, անհատական արխիվների բաժին, Թղթ. 262, վավ. 2, միկրոֆիլմ, էջ 78) Ք. Պատկանյանի հրատարակած «Զրէճան»-ի փոխարեն կարգում է «Շերճան»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1959, էջ 342) սրբագրում է «Շրէճան»: Մ. Դրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 203—204) նույնպես «Շրէճան» առաջարկելով՝ հր սրբագրությունը հիմնավորել է Պատկանյանին և այլոց ռատրիկելով: Բայց նրա ուշադրությունից վրիպել է Ք. Պատկանյանի համապատասխան ճանաթագրությունը (Պարտ., էջ 201, ծ. 146), որը կօգնե՛ր հարցի ճիշտ մեկնաբանմանը: Հմմտ. նաև «Հ. ամս.», 1970, էջ 445—447:

Մենք բնագիրը թողնում ենք այնպես, ինչպես ձեռագրում է, որովհետև հնարավոր ենք համարում, որ հեղինակը կարող էր օտար աղբյուրում հանդիպած այդ տեղանունը տառադարձություն ենթարկած լինել հենց ձեռագրում պահպանված ձևով: Տառադարձությունը կատարելիս նա ունի ուրույն սկզբունք: Այսպես օրինակ, նա սովորաբար օգտագործում է «Վրկան» անունը, բայց երբ օգտվում է օտար աղբյուրից, գրում է «Սմբատ Գուրկան (և ոչ՝ Վրկան—Գ. Ա.) մարգպան»:

Կարելի է նաև մտածել, որ «Սեբրեսի Պատմության» հեղինակն իր աղբյուրում գտած տեղանունը տառադարձության է ենթարկել «Զրէճա» (Sārijā) ձևով և գրիչներն է, որ հետագայում արտագրել են «Զրէճան»: Փակագծերում բերված տեղանունը արար պատմիչ Իբն Խուրդադ բեյը հիշատակում է այն միևնույն տեղանունների շարքում, որոնք հիշատակել է նաև «Սեբրեսի Պատմության» հեղինակը: Վերջինս գրում է. «Ամաղ, Ռոյեան, Զրէճան և Տապարաստան», իսկ Իբն Խուրդադբեյը՝ Tabaristan (Ռոյանի հետ), Amu («Ամաղ», գուցե և՛ «Ամուղ»), Sarija («Նմտ. J. Marquart, Eransahr, էջ 94»): Ի դեպ՝ այս անունների շարքում հանդիպում է նաև Sirris անունը, որը Մարկվարտի կարծիքով կարող էր և նույնանալ «Սեբրեսի Պատմության» «Զրէճան»-ի հետ:

277. «Վայիե յաշխարհին յայնմիկ ազգն գեւեալի ի Հայաստան երկրէ»: Զամինյանը (Զամ., էջ 95) «ազգն» (եզակի) բառի կողքին տեսնելով «գեբեալը» (հոգնակի) բառը սրբագրում է «ազգք»: Սակայն այստեղ պարտադիր չէ քերականական թվի, համաձայնությունը: Ընդամենը մեկ պարբերություն առաջ, նախորդ գլխում հեղինակը գրում է. «Էջհետ սոցա հապանէին զարն պերողական»: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես եզակի թվով գործածված «զարն» բառը համաձայնեցված է «հասանէին» (հոգնակի) բառի հետ («հասանէին զարն»): Սրանից երեք տող առաջ կարդում ենք. «Եսկ զարն նոցա, որ նստէին ի Սպահան յաշխարհին»:

278. «Նստուցեալ առ ստորտով անպատիւ մեծի, որ ի Քուրխաստանի և ի Դելխաստան կողմանէ»: Ք. Պատկանյանը (Պարտ., էջ 201, ծ. 148) «Դելխաստան» բառի դիմաց հարցականով գրում է. «Կարող է պատահել Բալխաստան»: Իսկ Մարկվարտը («Südarmenien und die Tigrisquellen», էջ 384, ծ. 2, նաև՝ ՄՄ., անհատական արխիվների ֆոնդ, Թղթ. 262, վավ. 2, միկրոֆիլմ, էջ 82) Դելխաստանը սրբագրում է Դեհաստան: Պատմիչի նշածը հավանաբար Իբն Խուրդադբեյի Դեհաստանն է (Նմտ. J. Marquart, Eransahr, էջ 94):

279. «Զլեզու իրեանց մոռացեալ, և դպրութիւն նուագեալի, և կարգ քաճանայսբեանն պակասեալի»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր հրատարակությունները «մոռացեալ»-ի փոխարեն ունեն «մոռացան», որև ակնհայտ վրիպակ է: Մենք ուղղեցինք «մոռացեալ»: Զամինյանը (Զամ., էջ 95) նույնպես «մոռացան»-ը դարձնում է «մոռացեալ», սակայն նա ռդպրություն»-ին ավելացնում է «և» հոդը և շնչում «նուագեալը»-ի «ք» վերջավորությունը. ստացվում է «զլեզու իրեանց մոռացեալ և դպրութիւնն նուագեալ»: Վերջին երկու սրբագրության («և» հոդի ավելացումն ու «ք»-ի շնչումը) կարիքը չկա, որովհետև հեղինակը գրել է ոչ թե ռդպրությունն նուագեալ, այլ՝ ռդպրութիւն նուագեալ», ինչպես որ՝ «կարգ... պակասեալը»:

280. «Ուսանէին զպրութիւն և զլեզու»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր բնագրերն ունեն ռդպրություն և լեզու»: Զամինյանը (Զամ., 95) սրբագրել է ռդպրութիւն և զլեզու Հայոց»: Վերջին բառի հավելումն ընդունելի չէ, որովհետև շնք կարող ապացուցել, որ նախնական բնագրում այդ բառն անպայման եղել է:

281. «Անուանել կոչչր Աբէլ»: Ա ձեռագիրը և Միհրդատյանն ունեն Աբէլ, միայն Պատկանյանն է, որ գրում է «Աբէլ»: Ստ. Մալխասյանցի ուշագրութիւնից վրիպել է Ա ձեռագրի և Միհրդատյանի ուղղագրութիւնը, ուստի նա Աբէլ անվանը վերաբերող ստղատակի ծանոթագրութիւն մեջ (Մալխ., էջ 61, ծ. 28) գրում է. «Բոլ. (այսինքն՝ բոլոր ձեռագրերն ու տպագիր հրատարակութիւններն ունեն—Գ. Ա.) Աբէլ»:

Սմբատ Բագրատունու օրոք Վրկանաց երկրում բնակեցված հայերի և նրանց եպիսկոպոս Աբելի մասին տեղեկութիւնը գտնում ենք նաև վերջերս հայտնի դարձած մի ժամանակագրութիւնում, որի հեղինակն է Ստեփանոս Վարդապետը:

Քանի որ մեկ և կես էջանոց այս աղբյուրի հրատարակիչը՝ Լ. Ս. Խաչիկյանը աղբյուրը հրատարակել է ոչ միայն Ստեփանոսի, այլ նաև ներսեսի անվամբ (Լ. Ս. Խաչիկյան, Հայ պատմագրութիւն անհայտ էջերից, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 239) հարկ կա հետևյալ բացատրութիւն:

Ժամանակագրութիւն մեջ առաջին դեմքով է խոսում ոչ միայն Ստեփանոս վարդապետը, այլև ներսեսը: Այսպես, Ստեփանոսը գրում է. «Ճս Ստեփանոս վարդապետս Մեծյորեցի և ներսէս եպիսկոպոսն զԲախստական քրիստոնայքն հասաք ի սուրբ Կարապետ»: Սրանից ընդամենը վեց տող հետո ներսեսն էլ իր կապակցութիւնը է խոսում առաջին դեմքով. «Ճս՝ ներսես եպիսկոպոս կայի ի մեջ նոցա»: «Այս պարագաներում,—գրում է Լ. Խաչիկյանը,—մինչև լրացուցիչ տվյալների երևան գալը, արդարացի պետք է համարել Պատմութիւն հեղինակ լինելու պատիվը նրանց միջև կիսելու հաշտեցուցիչ առաջարկը» (էջ 233):

Մեր կարծիքով, սակայն, ժամանակագրութիւն հեղինակը միայն Ստեփանոսն է: Իսկ ներսեսի անունը գրված է եղել հետագայում, ժամանակագրութիւն լուսանցքում: Չեռագիրն ընդօրինակող գրիչը լուսանցագրութիւնը սխալմամբ մտցրել է Ստեփանոսի ժամանակագրութիւն մեջ, որի հետևանքով այժմ ստացվում է այն տպավորութիւնը, թե ներսեսը նույնպես հեղինակ է:

Որ ներսեսի անունը գրված է եղել լուսանցքում և հետագայում է մտել տեքստի մեջ, երևում է նրանից, որ ներսեսի ասածը չի համապատասխանում այն միջավայրին, որի մեջ ներմուծված է լուսանցագրութիւնը: Այսպես. ներսեսը հայտնում է, թե ինքը նույնպես գտնվում էր այն մարդկանց մեջ, որոնք տեսնում էին «անողորմ «խեղճին» և աղաղակում: Ո՞վ է այս «անողորմ խեղճը» և ի՞նչ աղաղակներ են: Ոչինչ հայտնի չէ: Ժամանակագրութիւն մեջ պատմվում է այն մասին, որ լենկ Քեմուրը հարձակվել է Խիչանի վրա, թալանել, դերել, իսկ հայերը բարձրացել են «ի լեռան հովիտ»: Ոչ մի խոսք չկա ինչ-որ խեղճ մարդու և նրա հետ կապված աղաղակների մասին:

Քննարկվող հատվածից անմիջապես հետո, սակայն, կարդում ենք. «Ճս ի յայս ժամուս կիլ մի զիր որդին ինքն մորթեց և ինքն ի վերայ որդոյն յինքն սպանեց, թէ շանկանիք ի տաճիկ և ապականինք: Իսկ յորժամ զայս խեղճս տեսաք այլ առաւել աղաղակեցաք ի Տեառն եղբոր Սուրբ Նշանն»: Ինչպես տեսնում ենք, «խեղճ» կնոջ մասին խոսվում է միայն ներսեսի գրածից հետո: Կնշանակի ներսեսի գրածն իսկպպես իր տեղում չէ:

Ինչպե՞ս բացատրել այս երևույթը: Մեր կարծիքով տեղի է ունեցել հետևյալը: Ներսես եպիսկոպոսը, որը նույնպես Ստեփանոս վարդապետի հետ միասին ականատես էր հերոսուհու նահատակութիւնը, հարկ է համարել հաստատելու Ստեփանոսի տեղեկութիւնը և ձեռագրի լուսանցքում մակագրել է. «Ձոր և ես՝ ներսէս եպիսկոպոս կայի ի մէջ նոցա և տեսանէի զանողում խեղճն, զոր բազմութիւն հաւատացելոցն աղաղակեցին առ աստուած» (նույն տեղում, էջ 240): Ընդօրինակող գրիչը կարծելով, թե սա նույնպես ժամանակագրութիւն մասն է և շիմանալով, թե Ստեփանոս վարդապետի ժամանակագրութիւն ո՞ր տողին է վերաբերում՝ լուսանցագրութիւնը մտցրել է տեքստում, վերջինիս բովանդակութիւնը շահամապատասխանող մի տեղ: Նա դրանով խախտել է բնագրի տրամաբանական կապը և երկրորդ՝ ստեղծել է այն տպավորութիւնը, թե ներսես եպիսկոպոսը ընդամենը մեկուկես թերթից բաղկացած ժամանակագրութիւն երկրորդ հեղինակն է:

282. «Նտանեալ ընչ ինքեան»: Ստ. Մալխասյանցն առաջարկում է ուղղել «ընդ ինքեամք» (ՍեՊ, էջ 62): Սա անշուշտ ավելի է ճշգրտում սրբագրվող արտահայտութիւնը, սակայն նաև հնարավոր է, որ պատմիչն այստեղ գրած լինի «ընդ ինքեան», որը նույնպես սպասելի է: Մատենադիրները միշտ չէ, որ խոսում են այնքան շարժված ու ձևված, որքան նախատեսված է գրաբարի մեր ժամանակակից քերականական ձեռնարկներում:

283. «Ձերկաքին քազաուրսն Քուշանաց—, գՄուկն և գՊարսիովկն»: Միհրդատյանը, Պատկանյանը, Մակելը, Մալխասյանցը «գՄուկն»-ի փոխարեն ունեն «գՄուազն»: Հնագույն ձեռագիրը և Պատկանյանի օգտագործած ձեռագիրը (Պատկ., էջ 60, ստղատակի ծանոթագրութիւնը)

ունեն «գՇօկն»։ Մ. Գրիգորյանն առաջարկում է պահպանել ձեռագրի այդ ձևը։ Նա գրում է. «Միհրդատյանց տգիտաբար զայն «Շաւ» ընթերցյալ է, իսկ Պատկանյան գիտակցաբար նախընտրած է «Շաւ» ձևը։ Քուշանաց թագավորին ճշգրիտ անունն է Sawa (Marquart, Eransāhr, էջ 65, 83), որ կծագէ հավանորեն \*syawaka (Justi, Iranisches Namenbuch, 293a) բառից։ Այս պատճառով է հետևողութիւնս սակա Պահլաւունեացն զարմի և Մամիկոնեացն սեռի, Վաղարշապատ, 1870, էջ 98՝ «Շաւ») կառաջարկեմ Պարիովկի եղբոր անունը պահպանել իբր Շաւ (=Շաւ(ա)կ)» («Ձ. ամս.», 1968, էջ 204)։

Սակայն մեզ թվում է՝ սկզբնական բնագրում «գՇաւկն»-ի փոխարեն եղել է «գՇաւան» (այսպէս է Քուշանաց թագավորի իսկական անունը), ընդօրինակող գրիչները երկաթագիր «Ա»-ն կարդացել են «Կ» (Պարիովկ անվան կ-ի ազդեցութիւնս կամ պարզապէս անուշադրաբար) և այդպիսով «Շաւա» անունը դարձել է «Շաւկ»։ Մենք կարգաբերինք՝ «գՇաւան», բայց ավելի հաստատ փաստ չունենալով՝ առայժմ թողնում ենք հնադուրս ձեռագրի «գՇաւկն» ձևը, որը հիշեցնում է Յուստինի եմթադրած \*syawaka բառը։

284 «Նւ արեմ այն հայաստանեայց, որ ապստամբեալ էին ի Սպահան և գնացելալ առ Վստամ»։ Բոլոր ձեռագրերն ու տպագիր բնագրերը «Սպահան»-ի փոխարեն ունեն «Սմբատայ»։ Ստ. Մալխասյանցը (Մալխ., էջ 52) տողատակին ծանոթագրում է. «Ի Սմբատայ թվում է աղավաղութիւն հիսկ. ի խոստովայ»։ Ն. Ակինյանը («Ձ. ամս.», 1969, էջ 342) «Սմբատայ» անվան դիմաց լուսանցքում գրել է «Սպահան», առանց բացատրելու։ Ստ. Մալխասյանցի առաջարկած «ի խոստովայ» սրբագրութիւնը հաստատող որևէ շոշափելի փաստ չկա, իսկ Ն. Ակինյանի առաջարկը հաստատվում է հենց «Սեբեոսի Պատմութիւն» հետևյալ հատվածի միջոցով. «Բակ զարն նոցա (խոսքը Ստեփանոսի, Կոտիտի և այլոց զորքերի մասին է—Գ. Ա.), որ նստէին ի Սպահան աշխարհին, իբրև լուան զեղեւլան (երբ լսում են Ստեփանոս Սյունիի գլխատման և Կոտիտ Ամատունու խորդախ սպանութիւն լուրը—Գ. Ա.) ասպատակեալ աւերեցին զերկիրն. առին և զգանձն արքունի, որ ի տանն համարակարին. որ ի հարկաց ժողովեալ աշխարհին այնորիկ, և ճանապարհ կալեալ գնացին յամուրն ի յերկրին (թերև՝ «ի յերկիրն») Գեղմայ... Նւ իբրև անդ ոչ դիպէին Վստամայ՝ ճանապարհ կալեալ գնացին յերկիրն Պարթևաց, և երթեալ կային առաջի նորա»։ Այստեղից իմանում ենք, որ հայ յոթ նախարարների զորքերը, որոնք գտնվում էին Սպահանում, տեսնելով իրենց առաջնորդների մահը, ապստամբում են խոստով արքայից և գնում, միանում են խոստովից դարձյալ ապստամբած նրա քեռուն՝ Վստամին։ Ահա հենց այս դեպքը նկատի ունի հեղինակը մեր սրբագրած հատվածում։ Նա գրում է. «արքն այն հայաստանեայց, որ ապստամբեալ էին ի Սպահան և գնացելալ առ Վստամ»։ «Սպահան»-ը գրիչների անուշադրութիւն հետևանքով կարդացվել է «Սմբատայ» և աղավաղել բնագիրը, որի հետևանքով ստեղծվել է այն ոչ ճիշտ տեղեկութիւնը, որի համաձայն հայոց զորքերը իբր ապստամբել են Սմբատից և միացել պարսից թագամուլ Վստամին։ Այսպիսի դեպք չի եղել և պատմիչը սրբագրվող հատվածից առաջ ոչ մի նման դեպքի մասին չի խոսել։

285. «Կնացին եռօր յերկիրն որ կոչի Կոմշ»։ Ք. Պատկանյանը (Ստ. էջ 201, ծ. 150) ծանոթագրում է. «Կոմշը կամ Կոմշը Մ. Խոր. Աշխարհացոյցի, էջ 614, համաձայն Արիայի նահանգներից մեկն է։ Պտղոմեոսի մոտ՝ Comisene»։ Ա. Աբրահամյանի «Շիրակացու մատենագրութիւն» (Երևան, 1944) 352-րդ էջում Կոմշը հիշատակվում է հետևյալ հատվածում. «Նւ աշխարհք են Արեաց այսոքիկ. Կոմշ, Վրական, Ապրշահր, Մրու, Մրումոտ, Հրև» և այլն։ Կոմշի մասին տե՛ս նաև J. Marquart, Eransāh, էջ 71։

286. «Բայց զու երթիչի ի տեղի պատերազմին»։ Միհրդատյանն ու Պատկանյանն ունեն «ի պատերազմին տեղի»։ № 2639 ձեռագիրը նույնպէս այդպէս է, բայց այստեղ «պատերազմին տեղի» բառերի վրա գրված են «բ» և «ա» տառերը, որոնք ցույց են տալիս, որ պետք է կարդալ «տեղի պատերազմին»։ Մալխասյանցը հետևելով այս ցուցմանը, տպագրել է «ի տեղի պատերազմին»։

287. «Նւ զգոյշ լեռ, ասէ, մի մոռանայցես զլեռնին այն, զի նա է սփանելի»։ № 2639 ձեռագիրը և բոլոր հրատարակութիւնները ունեն «մի մոռանայցես. դի նա է սփանելի»։ Բացակայում է «զնորհն այն» արտահայտութիւնը, որը մենք վերականգնել ենք ըստ Միհրդատյանի օգտագործած և այժմ կորած ձեռագրի։ Միհրդատյանը և Մալխասյանցն այս ձեռագրի տվյալն իջեցրել են տողատակ, հավանաբար ենթադրելով, որ «Սեբեոսի Պատմութիւն» նախնական բնագրում «զնորհն այն» արտահայտութիւնը չի եղել։ Սակայն սա

հեղինակի համար բնորոշ արտահայտություն է, որը նա գործածում է նաև Դանիել Մար-  
գարեի մարմնի կապակցությամբ, գրելով «մի շարժեալ գնացել յաշխարհէն շնորհն այն»  
(ՍԵՔ, էջ 48):

288. «Եւ ունէր ընդ անձն շագոյր մաշկեղէն ուս ընդ անուր իւր»: Բոլոր հրատարակու-  
թյուններն ունին «ընդ ուս իւր»: Ուղղեցինք «ուս ընդ անութ իւր», հիմք ընդունելով № 2639  
ձեռագրի «ուս ընդ ութ իւր» ընթերցվածը, որը մենք սրբագրում ենք «ուս ընդ անութ իւր»,  
հենվելով միաժամանակ Սիմեոն Ապարանեցու («Բանաստեղծություններ», էջ 145) հետևյալ  
տողերի վրա.

Գրտանիցես այր մի սպիտակ  
Մէջ անկեւոց դիակուտին.  
Տեսանիցես ներքոյ անթին  
Մասն ինչ կենսատու փայտէն:

Մեր ընդգծած «անթին» բառը ցույց է տալիս, որ Ապարանեցու օգտագործած «Աերնոսի  
Պատմության» ձեռագրում գրված է եղել «ուս ընդ անութ իւր»: Բանաստեղծը մեկ վանկ  
շահելու նպատակով «անութ» բառի «ու»-ն կրճատել է գրել «անթին» (փխ. «անութին»):  
Նա այդ նպատակով կրճատել է, օրինակ, նաև «Քուշանաց» բառը («Բանաստեղծություններ»,  
էջ 145):

Ըզթագաւորս Քուշաց\* ազգին  
Անթիւ զօրոք գայր ի Տիզբոն  
Առ ի սպանել զքրեւորդին:

«Անութ»-ը այլուր հանդիպում է նաև «անթ» գրությամբ:

Քննարկվող հատվածը Սիմեոն Ապարանեցու «Վիպասանության» օժանդակությամբ  
սրբագրելու առաջարկ է արել նաև Մ. Գրիգորյանը («Շ. ամս.», 1968, էջ 205): Նրանից  
առաջ բառը սրբագրել են Ա. Զամինյանը (Զամ., էջ 99) և Ն. Ակինյանը («Շ. ամս.», 1969,  
էջ 343):

Ք. Միհրդատյանը տպագրել է «ընդ ուս իւր» և ոչ մի ծանոթագրություն չունի այն  
մասին, թե ինչպես է եղել իր օգտագործած այն հին ձեռագրում, որն այժմ կորած է: Եթե  
ծանոթագրություն չկա՝ պետք էր ենթադրել, որ եղել է այնպես, ինչպես տպագրել է Միհր-  
դատյանը: Սակայն դրանում համոզված չենք, սրովհետև Միհրդատյանը չի նշել նաև իր  
օգտագործած և մեզ հասած № 2639 ձեռագրի ունեցած «ուս ընդ ութ իւր», ընթերցվածը  
(կնշանակի՝ կորած ձեռագրի ընթերցվածը նույնպես նա կաթող էր նշած չլինել): Այնպես որ  
Գրիգորյանը իրավացի է, երբ կասկածում է Միհրդատյանի «ընդ ուս իւր» ընթերցվածի վրա  
(«Շ. ամս.», 1970, էջ 447):

289. «Եւ ապա յետոյ ամենեցուն զնայր և նա փախստական»: Զամինյանը (Զամ., էջ 99)  
այս ամբողջ նախադասությունն ընդգծելով, գրում է. «գուցե 106 երեսի հետ միացնել»: Սակայն  
նրա օգտագործած՝ Ղուկասյան հրատարակության 106-րդ էջում չենք գտնում որևէ տեղ, որին  
հարմարվեր ընդգծված նախադասությունը:

290. Ժողովէին ամենայն զունդին բշնամեաց և երթեալ բանակէին ի Տապարաստան զա-  
ւաղի»: Բոլոր ձեռագրերում և տպագրերում «բանակէին»-ի փոխարեն կա «բնակէին», սակայն  
հայտնի է, որ պատմիչի խոսքը զորքը տեղավորելու, բանակ դնելու (և ոչ թե մշտապես բն-  
կեցնելու) մասին է: Ուստի Մակլիբեր (Macl., էջ 45, ծ. 3) և Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 64, տողա-  
տակի ծանոթագրություն. «Քվում է ուղղելի «բանակէին») առաջարկել են «բնակէին»-ը սրբագրել  
«բանակէին»-ով: Սա հեղինակի հաճախ գործած բառերից է, և մենք սրբագրում ենք այդպես:

291. «Տայր ի ձեռն Միհրուի ուրումն անն երանելոյն»: Զամինյանը (Զամ., էջ 100) «Միհրուի»  
անվան փոխարեն սրբագրում է «Միհրանայ»: Սակայն պատմիչն օգտագործել է պարսկական  
Միհրոի անունը, որի մասին տե՛ս Մակլիբերի ծանոթագրությունը (Macl., էջ 46):

292. «Եւ տայր յեկեղեցին զոր ունէին երիցունմ դրան նօրա»: Զամինյանը (Զամ., էջ 100)  
«տայր» բառից հետո ավելացնում է «նա» բառը, որի կարիքը իրականում չկա:

\* «Քուշաց» ձևը քաղել ենք Սիմեոն Ապարանեցու «Վիպասանության» 1870 թ. վաղարշա-  
պատյան հրատարակությունից (էջ 98): 1976 թ. հրատարակությունն ունի (էջ 145) «Քուշեաց»,  
որը մեր կարծիքով վրիպակ է:

293. «Եւ կալաւ Սմբատ զմարզպանութիւն աշխարհին այնորիկ ամս Ը»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր բնագրերն ունեն «մարզպանութիւն»: Զամինյանը (Զամ., էջ 101) սրբագրել է «զմարզպանութիւն»: Մենք հետեւել ենք Զամինյանին:

294. «կաշել զնա բազում մեծարանաւ ի դուռն արժուի»: Զամինյանը (Զամ., էջ 101) առաջարկում է «դուռն» բառը դարձնել հասուկ անուն և գրել մեծատառով:

295. «ոչ գոյր վարդապետ ի տեղուջն յայնմիկ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր բնագրերն ունեն «ի տեղուջն յայնոսիկ»: Զամինյանն ուղղել է «ի տեղուջն յայնմիկ»: Մենք հետեւել ենք Զամինյանին:

296. «Եւ երթեալ յանդիման լինի քազաուրին»: Բոլոր ձեռագրերն ու հրատարակութիւնները «լինի» բառի փոխարենն ունեն «լինել»: Զամինյանը (Զամ., էջ 103) ուղղել է «լինի»: Այս սրբագրութեան ճշտութիւնը հաստատում է միևնույն նախադասութեան մեջ գտնվող «նստի» (և ոչ՝ «նստել») բառով: Ամբողջ նախադասութիւնը սրբագրված վիճակում այսպես է. «Եւ երթեալ յանդիման լինի թագաւորին ի մեծ անուանեալ Դաստակերտին և ելեալ արտաքս ի դահլիճն, նստի ի բոր և ի բահղակ»:

297. «Ի Մեծ անուանեալ Դաստակերտին»: Ստ. Մալխասյանցը ծանոթագրում է. «Մեծ Դաստակերտը անշուշտ Խոսրովի շինած այն նշանավոր դաստակերտն է, որի շինութեան համար նա ի միջի այլոց ինչպատանից բերել տվեց Սանատրուկ թագավորի ավերակ պալատի դարձարուն սյուները, ինչպես ավանդում է Սեբեոս: Այս դաստակերտի ճիշտ տեղը հայտնի չէ. ոմանք դնում են բուն Շիրզոն քաղաքում, ուրիշները՝ քաղաքի դուրս, մոտ 60 կմ. հեռավորութեան վրա, նույնացնելով Արտեմիսի հետ: Այս դաստակերտի շափազանց ճոխութեան նկարագիրը ըստ Գիբբոնի՝ բերված է Ղևոնդի Պատմութեան Առաջաբանում (եր. ԻԱ—ԻԲ): Տե՛ս և Հ. Ակիւնյան (եր. 90—92): Պատկանյան դաստակերտը հասկանում է իբրև հասարակ անուն և թարգմանում «великое поместье» (ՄեԳ, էջ 185):

«Դաստակերտ» հասկացութեան մասին մանրամասն տե՛ս Գ. Խ. Саркисян, О двух значениях термина „дастакерт“ в ранних армянских источниках, տպված հետևյալ ժողովածուում՝ «Эллинистический Ближний Восток, Византия и Иран, М., 1967.

298. «նստի ի բոր և բահղակ»: Միհրդատյանի և Պատկանյանի հրատարակութիւններում տպագրված են որպես հատուկ անուններ՝ Բոր և Բահղակ: Ստ. Մալխասյանցը տպագրել է փոթբառադրով և տվել հետևյալ բացատրութիւնը. «Բոր բառը Հյուսիսային համեմատում է պահլավերեն bob նոր պարսկերեն bob բառերի հետ, որոնք նշանակում են բարձ, օթոց, դորգ՝ որով վարդարում են տունը, իսկ բահղակ բառը նա թողնում է առանց բացատրութեան: Արմ. բառ. բերելով Հյուսիսային հիշյալ բացատրութիւնը՝ յուր կողմից ավելացնում է երկու ուրիշ վկայութիւններ ևս բոր բառի, որ բառարանները սխալ են բացատրել՝ իբրև կողով, զամբուղ, նաև ավելացնում Ագուլեցոց բարբառում պահպանված բյուր բառը, որ նշանակում է հաստ անկողին: Հյուսիսային առաջ բորի ուղիղ մեկնութիւնը տվել է «Եվրոպա» հանդեսը 1852 թվականին: Բահղակի մասին Արմատ. բառարանն էլ ոչինչ ստույգ չէ տալիս, հավանական համարելով, որ նույնպես իրանական փոխառութիւն է, բորի նման մի կահ, որով թագավորական դահլիճը զարդարված էր: Պատկանյան երկու բառն էլ պահում է թարգմանութեան մեջ—«Н ВОИ-дѣя в залу он сел на Боб и Баклак» և ծանոթութեան մեջ ստում է. «այս հատվածի իմաստը չկարողացանք հասկանալ» (Մալխ., էջ 185):

ՄՄ Բ (№ 2935) ձեռագրի լուսանցքում «ի բոր և ի բահղակ» բառերի դիմաց լուսանցքում գրված է «գեղեցիկ»:

299. «Յայնժամ տայ նա (Սմբատ Բագրատունուն—Գ. Ա.) արժայ զտանուէրութիւն, որ անուանեալ կոչէ Խոսրով—Շում»: Միհրդատյանը «Շում» մականվան կապակցութեամբ տողատակին ծանոթագրում է. «Յօրինակս մեր խառն էր գրեալ զայս մականուն, ոմանք տեղիս «Շումբըն, Շումն, և Շումն». բայց մեք պատշաճ վարկաբ միօրինակ ասել Շում» (Միհրդ., էջ 104): Ք. Պատկանյանը նույնպես տպագրել է «Շում» և ծանոթագրել. «Յօրինակի մեր խառն էր գրեալ այս մականունն մերթ Շումն, և մերթ Շում» (Պատկ., էջ 65): «Սեբեոսի Պատմութեան» կից ծանոթագրութիւնների բաժնում (էջ 199) Ք. Պատկանյանը «Շում» բառը բացատրում է այսպես. «Մականուն Սմբատայ բազմահաղթի. «Գովեստ կամ դրուատ Խոսրովու», ստուգաբանի ի լեզու պարսից: Տե՛ս شرح Bund[ehesh] Clossar» (Ֆ. Յուստիի աշխատութիւնը—Գ. Ա.):

300. «Արձակու ի նա զվաճառ փոքր, զդիւան աշխարհին»: Ք. Պատկանյանն այս բառերը ռուսերեն չի թարգմանել: Նա գրում է. «Վերջին տողերի աղճատման և մի քանի բառերի անձանոթ լինելու հետևանքով, արքայական պարզեցների նկարագրութիւնը լրիվ հասկանալի չէ» (Փառ., էջ 72): Հատվածը չի թարգմանել նաև Ֆ. Մակիբերը (Մակ., էջ 48): Ստ. Մալխասյանցը.

(*Малх.*, էջ 58) Թարգմանում է «малый торг и подати страны» և ծանոթագրում է. «ենթադրում ենք թե այստեղ խոսքը մի արտակարգ շնորհի մասին է, այսինքն՝ որ թագավորը Սմբատին շնորհեց յուր մարզպանություն սահմանում արքունական տուրքերի մի մասը: Դիվանը, ինչպես հայտնի է՝ արքունական հասույթների հաշվապետությունն էր. իսկ «փոքր վաճառ» թվում է, թե այդ հասույթների մի հատուկ տեսակն էր (առևտրից? մաքսից?): որ մտնում էր աշխարհի դիվանի մեջ, որը և խոսքովը շնորհեց Սմբատին» (*ՍնՊ*, էջ 186, ծ. 46):

Այս միևնույն կարծիքը հայտնել է նաև Զամինյանը (*Զամ.*, էջ 103), որը «զվաճառն փոքր» բառերի դիմաց ծանոթագրել է. «Այսինքն՝ հարկերը նրան է տալիս»: Մ. Գրիգորյանը («Համա», 1968, էջ 205—208, 1970, էջ 448—449) առաջարկում է «զվաճառն» բառը սրբագրել «զտաճարն» և հասկանալ այնպես, որ պարսից արբան Սմբատին հանձնել է երան-դարպապետի կամ խորհրդական ժողովի ատենապետի պաշտոնը: Մենք գտնելով, որ խորհրդական ժողովը պետք է կոչվեր ոչ թե «տաճար», այլ՝ «կաճառ» (Ն. Հայկազյան բառարանում «կաճառ» բառն ունի ժողովի, ատյանի նշանակություն), առաջարկել ենք «զվաճառն»-ը սրբագրել «զվաճառն»: Հնագույն ձեռագրերում երկաթագիր «կ» և «վ» տառերն այնքան նման են, որ երբեմն միմյանցից գրեթե չեն տարբերվում:

Սակայն վերջնական վճռի հանգել դժվար է, որովհետև որքան որ տրամաբանական է Սմբատին խորհրդական ժողովի ատենապետ նշանակելը, այնքան էլ հավանական է, որ նա ստացած լիներ արքունական տնտեսությանը վերաբերող մի պաշտոն: «Զվաճառն փոքր» արտահայտությունը պատմիչը բացատրում է «զղիան աշխարհին» արտահայտությամբ, իսկ «զղիան» բառը տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր նշանակություն: «Սեբեոսի Պատմության» ստեղծման ժամանակ դա ունեցել է հենց Ստ. Մալխասյանցի և Ա. Զամինյանի նշած իմաստը՝ կապված հարկահանության հետ: Հետագա դարերում նույնպես բառն արտահայտել է տնտեսական կյանքին վերաբերող իմաստ: Վ. Բարտոլդը («Персидская надпись на стене Анийской мечети Мануче», СПб., 1911, էջ 29) նշում է, որ Ռաշիդ ալ Դինը «մեծ դիվան է» կոչում պետական գրասենյակն ու պետական դանձատունը: Հատուկ դիվան գոյություն ունի նաև արքունի հասույթներին պատկանող հողերի («Ինժու») կառավարման համար:

Ք. Ավդալբեգյանը («Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 411—412) «վաճառ» բառի՝ Հայկազյան բառարանում նշված իմաստներին պակասում է նաև «զանձապետություն, հարկապետարան, դիվան, աշխարհագիր» իմաստները և ծանոթագրում է «Հմմտ. казначейство. Դիվանի հետ կապված է ոչ միայն գրասենյակի, արխիվի, այլև հարկերի գաղափարը. Hübsch., 143: Նույնը պետք է ասել նաև հայերեն աշխարհագիր բառի համար, որ մինչև այժմ հասկացվում է իբրև մարդահամար, վիճակագրություն, այնինչ՝ նշանակում է նաև հարկային հիմնարկ, այն է դիվան. հմմտ. Սեբեոս... ու Assises d'Antioche, ԺԾ, 39: Փոքր վաճառ նշանակում է փոքր դիվան: Մեծ ու փոքր դիվանների մասին տե՛ս В. Бартольд, 29: Ըստ Բարտոլդի կար պետական (казенный) դիվան ու արքունի (удельный) դիվան»:

301. «Քուճար է նմա զար մեծաւ անեղութեամբ յարեւելս յերկիրն Քուշանաց»: Զամինյանը (*Զամ.*, 103) «գումարէլ» բառից հետո ավելացնում է «ընդ» բառը և հատվածը սրբագրում է այսպես. «Քուճար է ընդ նմա զար մեծաւ անեղութեամբ»:

302. «Եկն եհաս ի մեծակալ երկիրն առաջին իւրոյ իշխանութեանն՝ Կոմշ»: Բոլոր ձեռագրերը և Միհրդատյանը «Եկն եհաս»-ի փոխարեն ունեն «Եկն ի Հայս»: Սա բացահայտ գրչական վրիպակ է, որովհետև Հայաստանում Կոմշ անունով վայր չկա: Կոմշը կամ Կոշմը Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ում նշված է ի շարս Արեաց աշխարհում գտնվող նահանգների. «Սւ աշխարհք են Արեաց այսոքիկ. Կոմշ, Վրական (=Վրկան—Վ. Ա.), Ապրշահր, Մրու, Մրուճոտ, Հրե...» և այլն (Ա. Արեանամյան, Շիրակացու մատենագրությունը, էջ 352): Ք. Պատկանյանը նկատի ունենալով այս հանգամանքը (*Ստ.*, էջ 201, ծ. 150) սրբագրել է աղճատված «Եկն ի Հայս»-ը և դարձրել «Եկն եհաս» (*Պատկ.*, էջ 65): Պատկանյանին հետևել է նաև Ստ. Մալխասյանցը: Մենք նույնպես հետևել ենք Պատկանյանին:

303. «Սւ նա դարձեալ բանակեցաւ յԱպր Շահր՝ ի Տաւ գաւառի»: Ձեռագրերն ունեն «յապրշահր տոս», «յապր շահրտոս»: Միհրդատյանը տպագրել է «յկպր Շահրտոս» (*Մալխասյանցը վրիպակաբար հայտնում է, թե Միհրդատյանն ունի «յկպր Շահրտոս»*): Ք. Պատկանյանը ուռուեղեն թարգմանության մեջ (էջ 73) տեղանունը տպագրել է այսպես. «Ար-Պախրոս», բայց հայերեն բնագրում ուղղել է սխալը և տեղանունը բաժանելով երկու անունների՝ դարձրել է «յկպր Շահր և ի Տոս գաւառի»: Ապրշահրի կապակցությամբ նա ծանոթագրում է. «Ապր-Շահրը քաղաք է Ապար աշխարհում, Խորասանում... Այս քաղաքը գոյություն ունի վաղուց և Հազկերտի կողմից միայն վերաշինվել է: Նրա կողքին Շապուհ I-ը կառուցեց մեկ այլ քաղաք հենց միևնույն նպատակով



(քուչանների հետ մարտեր մղելու համար—Ք. Ա.), նյուշապուհ, նիշաբուք քաղաքը: Տե՛ս d'Herbelot, Aber und Nischabur (Патк., էջ 128):

Ինչպես նախորդ ծանոթագրության մեջ տեսանք, Անանիա Շիրակացուն վերաբերող «Աշխարհացոյցում» Ապր Շահրը Կոմշի հետ միասին թվարկվում է ի շարս Վրկան աշխարհի սահմաններում գտնվող Արևաց նահանգի գավառների:

Տոս գավառի անունն առաջին անգամ «Շահրտոս» վրիպակից անջատել է G. Garrez-ը Ֆ. Յուստիի հրատարակած „Der Bundelesh“ գրքի զբախտականունով: Տե՛ս G. Garrez, Der Bundelesh, zum ersten Male hrsg., transcribiert, übersezt und mit Glossar versehen von F. Justi, Leipzig, 1868, տպված՝ „Journal asiatique“, № 49, Février, 1869, Paris, էջ 173, 174, 175:

Սոս Մալխասյանցը Ք. Պատկանյանի «Ապր Շահր և ի Տոս գավառի»-ն դարձրել է «Ապր Շահր՝ ի Տոս գավառի», հետեւելով հավանաբար Մարկվարտին („Erānšahr“, էջ 68): Հմմտ. նակ՝ Ն. Ակիլյան, «Հ. ամս.», 1969, էջ 343:

304. «Նեղրեցիքն իրեանց օգնական ի Մեծէն հախանայ՝ աբխայէ Կողմանցն ֆիախոյ»: «Նաբան» բառը Սոս Մալխասյանցը բացատրում է այսպես. «պարսկերեն՝ խազան, որպես հասարակ անուն նշանակում է թագավոր, կայսր: Այս կոչումը տրվել է վավարների, հոնների, թուրքերի, հատկապես շինացիների թագավորներին: Ներկա տեղում խաբան է կոչված թուրքական թագավորը, որն ապրում էր հյուսիսում, Սիբիրում, Ալտայան լեռներում և որին այդ ժամանակ ենթարկվում էին քուչաններն ու հեփթաղները» (Малх., էջ 162, ծ. 113): Ք. Պատկանյանը Патк., էջ 202) Խաբանի կապակցութեամբ հղում է Լըրոյի աշխատութեանը՝ Lebeau, Histoire du Bas-Empire, éd. St. Martin, IX, էջ 303, X, 169, 377 և այլն:

305. «Անց գգետովն որ կոչի Վեհոտ (որ էլանէ ի Թուրքաստանէ, յերկէն նիդատայ, գրիմնոսփեստեայս, գժամնն և գրեահմնն, և հոսի ի Հնդկիկ)»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր հրատարակութիւններն ունեն «Դիոնոս Եփեստեայս»: Ուղղել ենք «Գրիմնոսփեստեայս»: G. Garrez-ը՝ Բունդեհիշի անդրանիկ հրատարակութեանը նվիրած իր զբախտականի (տե՛ս ծան. 303) 173-րդ էջում մեզ հետաքրքրող հատվածը վկայակոչել է հետևյալ վերծանութեամբ. „passa le fleuve qu'on appelle Vehrot, lequel sort du Turkastan, du pays de Evilat (arrose la contrée des Ephthalites?), des Shamm et des Brahm, et debouche chez les Indiens“ («անցավ գետը, որ կոչվում է Վեհոտ, որը դուրս է գալիս Թուրքաստանից, Եփլատի երկրից (ոռոգում է երկիրը հեփթաղների), շամանների և բրահմանների և հասնում է դեպի Հնդկաստան»):

Ինչպես տեսնում ենք, Garrez-ը «Դիոնոս Եփեստեայս» բառերի մեջ տեսել է հեփթաղների մասին հիշատակության հետքեր: Այս ենթադրությունը նա արել է սուկ որպես ենթադրություն, հայտնելով, որ ինքը չի փորձել սրբագրել Դիոնոս Եփեստեայս-ը, և՛ թարգմանության մեջ, փակագծերում իր ավելացրած բառերը շունեն որևէ այլ իմաստ, բան տեքստը վերծանելու փորձ: Այսուհանդերձ՝ Garrez-ը առաջինն է նկատել, որ «Դիոնոս Եփեստեայս» բառերը ենթակա են սրբագրման: Բայց, ինչպե՞ր տեսանք, նրան չի հաջողվել կռահել նախնական բնագրում եղած իրական բառը, որի փոխարեն նա փակագծերի մեջ սխալմամբ հիշատակել է հեփթաղներին:

Քննարկվող հատվածին անդրադարձել է նաև Հ. Հյուբշմանը («Arm. Gramm.», I, 1895, էջ 84), որը, սակայն, հատվածը թարգմանելիս կրճատել է հենց մեզ հետաքրքրող «Դիոնոս Եփեստեայս» արտահայտությունը, որով ցույց է տվել, որ չի կարողացել վերծանել բնագիրը:

Վերծանության հաջորդ փորձը պատկանում է Յ. Մարկվարտին („Erānšahr“, Berlin 1901, էջ 148, նակ՝ ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 262, վավ. 2, միկրոֆիլմ, էջ 74), որը խնդրո առարկա հատվածը թարգմանել է այսպես. „Sie überschritten den Fluss, welcher Wehrot heisst, welcher aus dem Lande Turkastan entspringt, und das Land Evilat, Dionos ep'esteajk' (Διονύσου ἐφέστια), die Buddhisten (Samm) und Brahmanen (Bramn) umfließt und in Indien mündet“ («Նրանք անցան գետը, որ կոչվում է Վեհոտ, որը բխում է Թուրքաստան երկրից, և հոսում է Եփլատա երկրի, Դիոնոս Եփեստեայքի (Διονύσου ἐφέστια), բուդդայականների (Շամն) և բրահմանների (Բրամն) շուրջը և թափվում է Հնդկաստան»):

Սույն վերծանությունը կատարելիս Մարկվարտը հայերեն տեքստը լրացրել է Մննդոց գրքի (ղլ. Բ, տ. 11) «Եւ պատէ զերկիրն» բառերով («եկան է ի Թուրքաստան երկրէն [և պատէ զերկիրն] Եփլատայ, գրիմնոս Եփեստեայս» և այլն): Այսպիսով՝ Մարկվարտը, հակառակ Garrez-ի, համոզված է եղել, որ «Սերեոսի Պատմությունը» սրբագրության կարիք չունի և որ «Դիոնոս Եփեստեայս» բառերը այլ բան չեն, բան հելլենիստական Դիոնիսոս աստծու անվամբ և հունարեն

ἑφέστια բառից բաղկացած մի բաղաբ-անուն: Այդ բաղաբը Մարկվարտի կարծիքով Նյուսան է: Նշված էջում նա գրում է. «Իրանոս եփեստայի-ր, այսինքն՝ Διονύσου ἑφέστια-ն, Νουα-ն է, Դիոնիսիոսի հիմնադրութունը Մերու լեռան տակ հմմտ. Մեգեսթենես առ Արիանոս (Ind., 5, 9, Ստրաբոն, XV, 1, 8, էջ 687):

«Նյուսա» անվամբ վայրի հին աղբյուրներում հիշատակվում են գինեգործությամբ զբաղված բազմաթիվ երկրներում՝ Հնդկաստանում, Եթովպիայում, Կապադովկիայում, Քրակիայում, Եգիպտոսում, Կովկասում և այլուր (St' u Friedrich Lübkers Reallexikon des classischen Altertums für Gymnasten, Leipzig, 1882, էջ 808, ուսերեն՝ Реальный словарь классической древности Фр. Любкера, СПб., Москва, 1883, էջ 701): Մարկվարտը սրանից ընտրել է Մերու լեռան ստորոտում գտնվող Նյուսան, որովհետև համոզված է եղել, որ «Սերեոսի Պատմության» հեղինակը Վենոտ գետը նույնացրել է Փիսոն գետի հետ: «Այսպիսով, — գրում է նա միևնույն էջում, — մենք այստեղ արդեն ունենք Hawila (Ἡειλιατ) երկիրը շրջապատող (Մենդոց, 2, 11) Փիսոնի նույնացումը Վենոտի և Ինդոսի կամ Գանգեսի հետ»:

Մարկվարտի վերծանությունը, սակայն, ընդունելի չէ, որովհետև իրականում Διονύσου ἑφέστια անվամբ վայր չկա: Այդ բառակապակցությունը Մարկվարտն ինքն է ստեղծել: Ինչպես տեսանք, Դիոնիսոս աստծու անվան հետ կապվող վայրերը կոչվում են ոչ թե «Դիոնիսոսի հիմնադրություն», այլ՝ Նյուսա: Բացի այդ՝ «Սերեոսի Պատմության» մեջ «Դիոնոս եփեստայի» վրեպակի կողքին գտնվող «ՂՇամնն և զԲրահմնն» անունները ցույց են տալիս, որ որոնվող տեղանունը պետք է փնտրել այդ անունները կրող հիշատակարաններում (տե՛ս ստորև):

Այսպիսով՝ «Դիոնոս եփեստայա» վրեպակի փոխարեն նախնական բնագրում եղած բարձր անհայտ է մնացել նաև Մարկվարտին:

Նույնն է վիճակը նաև հետագա ուսումնասիրողների երկերում: Մակլերը (Macl., էջ 49) պարզապես կրկնել է Մարկվարտին, իսկ Ստ. Մալխաչյանցը առհասարակ ծանոթ չի եղել ո՛չ Garrez-ի, ո՛չ Մարկվարտի, ո՛չ էլ Մակլերի կարծիքներին:

Մալխաչյանցի առավելությունը, սակայն, այն է, որ նա կռահել է այն ճիշտ իրողությունը, որ «Դիոնոս եփեստայա, ՂՇամնն և զԲրահմնն և հոսի ի Հնդկիս» բառերը ընդմիջարկություն են: Նա գրում է (ՍԵՊ, էջ 186, ժ. 47). «Հասի ի Հնդկիս չէ կարող վերաբերվել Վենոտին (Օթուս, այժմ Ամու-Դարիս), որովհետև սա Հնդկաստանի սահմանների մեջ չէ մտնում և հոսում է Արալյան լիճը: «Դիոնոս եփեստայա, ՂՇամնն և զԲրահմնն» հայցական հոլովները տեղ չունին և չեն կապվում ոչ նախընթաց խոսքի և ոչ հաջորդ «հոսի»-ի հետ: Թվում է, թե այս խոսքերը մեկը գրել է յուր ձեռագրի լուսանցքում (իրան հայտնի հատուկ անուններ), իսկ այդ ձեռագրից արտագրողը մոծել է բնագրի մեջ, որ շատ սովորական բան է, և սրանով խոսքի կապը խզվել է և իմաստն աղճատվել: «Դիոնոս եփեստայա»՝ մենք չկարողացանք որոշել մեր ձեռքի տակ եղած միջոցներով: Նրանց հունական արմատները ցույց են տալիս, թե շատ հին բառեր են (տեղ նշանակող), դուցե Աղեքսանդր Մակեդոնացու ժամանակից մնացած: «Շամն և Բրամն» իբրև կողքի պատահում են Խորենացու Աշխարհագրության մեջ (հրատ. Սուբբի, եր. 43) իբրև անգրի անուններ Հնդկաստանում՝ պարսկերեն այսպես կոչված: Կապ ունի՛ն արդյոք այս անունները Հնդկաստանում հոսող երկու գետերի, Բրահմապուտրայի և Շամալոյի հետ՝ չենք կարող ասել»:

Իրականում, իհարկե, «Սերեոսի Պատմության» մեջ ներմուծված Շամն և Բրահմնն անունները կապ չունեն Բրահմապուտրայի և Շամալոյի հետ, այլ՝ հին Հնդկաստանում գոյություն ունեցած փիլիսոփայական մի հոսանքի երկու հյուղերն են, որոնք հունական աղբյուրներում կոչվում են Βραχμάνιοι և Σαμανάιοι: Նրանց ընդհանուր անունն է Γυμνο-σοφισταί, որոնց մասին հիշատակում են Արիստոտելը (Fragmenta, ed. V. Rose, Leipzig, 1886, էջ 35), Ստրաբոնը (Geographia, ed. Kramer, Berlin, 1844—52, 16, 2, 39, ուսերեն հրատ., էջ 662, 663, 666, 668), Փիլոնը (2, 27), Պլուտարքոսը (Alexander, 64, հայերեն՝ Պլուտարքեայ Չուգակչիք, 5. Ե, Վենետիկ, 1834, էջ 127, ուսերեն՝ Плутарх, Сравнительные жизнеописания, М., 1963, էջ 441—442), Լուկիանոս Իմաստասերը (Fugitivus, 7), Պոբլիոսը (De Abstinentia, ed. A. Hauck, Leipzig, 1886, 4, 17), Բարդեժան Բարեկոնացին (տե՛ս Collekktion des historiens anciens et modernes de l'Arménie..., par Victor Langlois, t. I, Paris, 1867, էջ 61—62) և այլն:

Վերջին աղբյուրում (չեղոնիմոսի «Առ Հովիանոս» թղթում) կարգում ենք. „Bardesanes vir Babylonius in duo dogmata apud Indos gymnosophestas dividit, quorum alterum appellat Brachmanes, alterum Samanaeos“ (Adv. Jovianum, II, 14—Օբեյա, t. II, էջ 344), «Բարդեժան Բարեկոնացին հնգիկ մերկիմաստուններին բաժանում է երկու զոդ-

մաների, որոնցից ոմանց կոչում է բրախմաններ, մյուսներին՝ սամաններ»։ Սրանք ապրում էին անտառներում, զարում էին ճգնաժողովրդական կյանք և չէին հագնվում։ Այդ իսկ պատճառով էլ հույն մատենագիրները, ինչպես ասվեց, նրանց կոչում էին «մերկ-իմաստուններ»՝ γυμνο-σοφισταί\*։

Հայ թարգմանական մատենագրության մեջ նրանք կոչված են նույնությամբ՝ «գիմնոսոփիստայք»։ Հունարենից փոխառյալ այս բառը վրիպել է բառարանագետների ուշադրությունից և չի գրանցված հայկական ոչ մի բառարանում. նրա գործածության օրինակները գտնում ենք հետևյալ աղբյուրներում. «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 362, տ. 22—23՝ «Գիմնոսոփիստայք»։ Նույն տեղում, տող՝ 33՝ «Գիմնոսոփիստայք»։ «Սեբեոսի Պատմության» սրբազրվող հատվածում՝ «Գիմնոս եփեստեայս»։ «Բարոյախոս» կոչվող առակների ժողովածու», հրատ. **Н. Я. Марр**, Сборник притч Вардана, III, СПб., 1894, էջ 169՝ «Սիւնգիմոսոփիստայք»։ Սամուէլ Անեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1893, էջ 13՝ «Գիմնոսոփիստայք» (Ինչպես տեսնում ենք, միայն Սամուէլ Անեցու ձեռագրերում է, որ բառը չի աղավաղվել)։ Այս բառը գործածել է նաև թարգմանաբար՝ «մերկիմաստակք», «մերկիմաստունք», «մերկաղաբաղ», «մերկավերարկու» ձևերով։ Տե՛ս Հայկազյան բառարանում, այդ բառերի դիմաց, ինչպես նաև՝ «Անանիա Շիրակացու Մատենագրությունը», էջ 242, տող 25—26։ Այստեղ «գրանականն ունի ի մերկիմաստակս, որ շրջի ի դէմս Եփիստայս» բառերն աղավաղված են այսպես. «գրանակինն ունի ի մեզ տեսակս, որ շրջի ի Ի՛էմս, և ի կատայս»։ Տե՛ս նաև՝ էջ 362, տող 22—23, 33 և «Géographie de Moïse de Corène», Venise, 1881, էջ 43։

Ահա այս «գիմնոսոփեստներն են, որ հիշատակված են «Սեբեոսի Պատմության» մեջ ներմուծված հատվածում։ Ընդօրինակող գրիչները բառին անծանոթ լինելով՝ աղավաղել են «Գիմնոս եփեստեայս» ձևով, ինչպես որ «Բարոյախոսի» ընդօրինակողները նույն բառը դարձրել են «Սիւնգիմոսոփիստեայք»։

Ներմուծումը «Սեբեոսի Պատմության» մեջ կատարվել է այսպես։ Ներմուծողը կարգացել է «անց զգետովն, որ կոչի Վեհոտտ» բառերը և լուսանցրում ավելացրել է Վեհոտտի մասին երիմացած հետևյալ գիտելիքը. «որ ելան է թուրքաստանէ՝ յերկրէն Եփիստայ, զԳիմնոսոփեստեայս, զՇամանն և զԲրահմանն, և հոսի ի Հնդկիս»։

Garrez-ը Բունդեհիշին նվիրված հիշյալ գրախոսականում ոչ շատ պարզ շարադրված է՝ կարծիք է հայտնել, թե այդ գիտելիքը բխում է Աստվածաշնչից (Մինդոց, Բ, 11) և Մովսես խորենացուն (այժմ՝ Շիրակացուն) վերագրվող «Աշխարհացոյց»-ից («Géographie de Moïse de Corène», էջ 42—43)։ Նույն կարծիքին է նաև Մարկվարտը («Eransahr», էջ 148)։ Իրականում, սակայն, մասնագետների ուշադրությունից վրիպել է այն բուն աղբյուրը, որտեղից քաղված է մեզ հետաքրքրող հիմնական բառը՝ «Գիմնոսոփեստեայս»։ Դա՝ Հիպպոդիտոսին վերագրվող «Ժամանակագրության» հունարեն բնագիրն է, որին համապատասխանում է հայերեն հատվածական թարգմանության հետևյալ տեղը. «Եփիղաթ, ի նմանէ Գիմնոսոփիստեայք, որ կոչին մերկիմաստակք»\*\*։ Ահա այստեղից էլ քաղված «Սեբեոսի Պատմության» ներմուծողի «յերկրէն Եփիստայ, զԳիմնոսոփեստեայս» գիտելիքը։ Իսկ «ՁՇամանն և զԲրահմանն, և հոսի ի Հնդկիս» գիտելիքի համար աղբյուր է ծառայել այն միևնույն աղբյուրը, որի հիման վրա շարադրված է նաև Աշխարհացոյցի Սուրբյանական հրատարակության 43-րդ էջի հետևյալ հատվածը. «Երաժանեալ են Հնդկիք յերկուս, յարևելից և յարևմտից Գանգես գետոյ... Փիսոս առ Մերկիմաստակօրն... կոչեն զնոսա Պարսիկք Շաման և Բրահման ազգն»։

\* «Գիմնոսոփիստայք և որ են մերկ իմաստասէրք, ամենկին հանդերձ ոչ զգենուն և անիրաւ ոչ գործեն և մարմին կենդանեաց ոչ ուտեն» («Բարոյախոս», հրատ. **Н. Я. Марр**, էջ 169)։ Միևնույնը տե՛ս նաև «Շիրակացու մատենագրությունը», էջ 353. «մերկիմաստակք, որ գործն անիրաւ ոչ գործեն և զմարմինս կենդանեաց ոչ ուտեն» (հիմ.տ. նաև թուրք. կիրիկեցու Աշխարհացոյցը տպված՝ «Բանբեր Մատենադարանի», № 8, էջ 280)։ Այս երկու աղբյուրների փոխադարձ կապն ակնհայտ է։

\*\* «Շիրակացու մատենագրությունը», 1944, էջ 362։ Հիպպոդիտոսի «Ժամանակագրության» հայերեն թարգմանության նախնական բնագրում «որ կոչին մերկիմաստակք» բառերը շեն եղել և ավելացված են հետագայում։ Դա երևում է նախ՝ «Ժամանակագրության» № 5254 ձեռագրում պահպանված համառոտագրությունից և ապա՝ Սամուէլ Անեցու (էջ 13) արտագրությունից, որոնցից և ոչ մեկի մեջ նշված բառերը չկան։

Այս տողերից քիչ վերև 42-րդ էջում հայտնված է, որ Վեհոտը և Փիսոնը միևնույն գետերն են. «Փիսոն է, զոր Պարսիկք Վեհոտ կոչեն»: Սա նույնպես առիթ է տվել, որ ներմուծողը «Սեբեոսի Պատմության» «Վեհոտի» կողքին շարադրի այն գիտելիքը, որը իրականում վերաբերում է Փիսոնին:

Մեր կարծիքով՝ շակերտների մեջ վերցված այդ գիտելիքը Աշխարհացոյցի բուն հեղինակինը չէ, այլ ավելացված է հետագայում: Դա երևում է հետևյալ հատվածից. «Եւ բաժանեալ են Հնդկիք յերկուս. յարեւելից եւ յարեւմտից Գանդէս գետոյ. եւ ցուցանէ Պտղոմէոս թէ եօթն գետք են յատուկ անուամբք, որ ի մի եկեալ կոչին Փիսոն, առ Մերկ-իմաստակօքն» (էջ 43): Ինչպես տեսնում ենք, «Աշխարհացոյցի» հեղինակը Փիսոն գետը ցույց է տալիս Հնդկաստանում, ուրեմն չէր կարող պատահել, որ նա դրանից մի քանի տող վերև միևնույն Փիսոնը նույնացներ Խորասանում գտնվող առասպելական Արանգի հետ և գրեր. «Բայց Պարսիկք կոչեն զկողմանքս զայս (Քուստի) Խորասան\*... մինչև ցգետն զոր կոչեն Արանգ... որ թուի թէ Փիսոն է, զոր Պարսիկք Վեհոտ կոչեն»:

Այս տողերում առկա անունների կուտակումը նույնպես նշան է, որ սկզբնական բնագրում եղել է միայն Արանգի անունը, որից հետո մեկ բարձր լուսանցքում ավելացրել է Փիսոնի և Վեհոտի անունները, շնկատելով, որ դրանով ինքը միևնույն գետին տվել է երեք անուն՝ Արանգ, Փիսոն, Վեհոտ:

Ահա նաև այս կուտակումներն են, որ հետագայում նյութ են տվել ներմուծողի գրչին և Garrez-ի գրախոսականում ստեղծել են այն երկու կարծիքները, թե 1. Սասանյանների օրոք պարսիկները Բակտրիան ընկալել են որպես հնդկական հող, իսկ Վեհոտը՝ որպես բուդդայականների և բրահմանների գետ (Garrez, էջ 176), 2. Սմբատ Բագրատունին հայոց զորքերի հետ միասին Ամու-Դարչայի մոտերը մարտեր մղելիս այս տեղերում իբր հանդիպել է մերկիմաստունների հիշյալ ճյուղերին՝ բրահմաններին և շամաններին:

Այս ենթադրությունը Garrez-ը փաստարկել է նաև Համգա Իսպահանցու այն վկայությամբ, թե խորասանցիները ծանոթ էին շամաններին, ինչպես նաև այն տեղեկությամբ, թե «այդ ժամանակաշրջանի հույն մատենագիրները Բակտրիան միշտ հիշատակում են Հնդկաստանի հետ միասին և նշում են հազարավոր բրահմանների և շամանների, որոնք ապրում էին այնտեղ: Տե՛ս Lassen, Indische Altertumskunde, II, 1073 (Garrez, էջ 177): Բայց այս ամենը ոչ մի կապ չունի «Սեբեոսի պատմության» և Սմբատ Բագրատունու հետ, որովհետև «Սեբեոսի Պատմության» նախնական բնագրում բրահմաններին ու շամաններին վերաբերող հատվածը գոյություն չի ունեցել և ներմուծվել է հետագայում:

Ներմուծման փաստը, ինչպես ասվեց, առաջինը նկատել է Ստ. Մալխասյանցը: Մ. Գրիգորյանը («Ղ. ամս.», 1968, էջ 209—210), սակայն, համաձայն չէ Մալխասյանցին: Նա հայ մատենագիրներից վկայակոչել է Փիսոն-Գանգես-Վեհոտ գետերի մասին զանազան վկայություններ և գրել. «Հարկ չկա Սեբեոսի պիտառյալ հատվածին վերջին նախադասությունը անդամահատելու կամ մերժելու»: Գրիգորյանի վկայակոչած աղբյուրներում, իսկպպես, հանդիպում ենք Վեհոտի և Փիսոնի նույնացման փաստին, սակայն այս փաստը հայտնի է եղել նաև Մալխասյանցին: Վերջինս վերը բերված ծանոթագրության մեջ նշել է «Աշխարհացոյցի» 43-րդ էջը, որին անմիջապես նախորդող էջում գտնում ենք գետանունների նույնացման հենց այն փաստը, որը վկայակոչել է նաև Գրիգորյանը: Ուրեմն՝ Մալխասյանցը փաստին ծանոթ լինելով հանդերձ հնարավոր չի համարել, թե «Սեբեոսի Պատմության» հեղինակը կարող էր Վեհոտը նույնացնել առասպելական Փիսոնի հետ: Եվ հիրավի, հեղինակը ծամանակակից էր իր նկարագրած գեպքերին և, անշուշտ, գիտեր, որ Վեհոտը Արալյան լիճը թափվող և ոչ թե դեպի Հնդկաստան հոսող գետ է: Իսկ Գրիգորյանի վկայակոչած աղբյուրներում Փիսոնի և Վեհոտի նույնացումը կատարվել է զբաղյին տեղեկությունների հիման վրա:

Որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը Վեհոտը Փիսոնի հետ չի նույնացրել՝ երևում է նաև ժ գլխում հանդիպող հետևյալ տեղեկությունից. «Վահրամ ոմն Մերհեանդակ, իշխան արևելից կողմանց աշխարհին Պարսից... բոնութեամբ ունէր զԲաճ և զամենայն երկիրն Քուշանաց, մինչև յայնկոյս գետոյն մեծի, որ կոչի Վեհոտ, և մինչև ցտեղին, որ կոչի Կազբիոն»: Ինչպես տեսնում ենք, պատմիչն այստեղ Հնդկաստանի անունը չի տալիս (այն դեպքում, երբ նա այլ առիթներով բազմիցս հիշատակում է այդ երկիրը) և Վեհոտը տեղադրում է Քուշանաց

\* Վեհոտը (Ամու-Դարչան) Խորասանում հոսող գետ է համարված նաև Ջենդ-ավեստայում (I, 2, էջ 268, ծ. 2, տե՛ս Garrez, էջ 170):

երկրում: Նա միաժամանակ հայտնում է, որ Մերհանդակի իշխանությունը ձգվում էր մինչև Կազբին, որը նույնպես Հնդկաստանում չէր (տե՛ս վերը, ծան. 176):

Մխիթար Այրիվանեցու ինքնագիր ձեռագրի (ՄՄ № 1500) 8բ—12ա էջերի լուսանցքներում կարդում ենք. «Գեոս այս Փիսովն ի շրոս ականց ելանէ, որ է բերան հրոյ, բերան այլայլութեան, Գանգես, Վեհնոտ, Ինդոս, Հնդկեան»: Մեկ այլ ձեռագրում (ՄՄ 5254, էջ 160բ, ընդօրինակված 1280 թ.) գրված է. «Հնդկեք Գանգես ասեն, Պարսիկք՝ Վեհնոտ, Եբրայեցիք՝ Փիսոն, Յոնք՝ Ինդոս»: Աստվածաշնչային Փիսոնի և Ինդոս ու Վեհնոտ գետերի նույնության մասին հաղորդող այս կարգի գիտելիքները միջնադարում դասվել են հանրահայտ գիտելիքների շարքը\*, այսուհանդերձ՝ «Սեբեոսի Պատմության» հեղինակն ամենուրեք իրեն դրսևորում է որպես քաջ աշխարհագրագետ և Վեհնոտը ներկայացրել է ճիշտ տեղում, չնույնացնելով առասպելական Փիսոնի հետ:

Պատկանյանը հայտնում է, որ իր ունեցած ձեռագրում (1840—50-ական թթ. ընդօրինակություն) գրված է եղել «որ ելանէ ի Թուրքաստան երկրէն Եփրատայ»: Բայց եթե «Սեբեոսի Պատմության» նախնական տեքստում նույնպես այսպես լինեի՝ այդ դեպքում «Եփրատայ» բառից առաջ կենթադրվեր լրացման կարոտ մի պակաս, որովհետև Վեհնոտի մասին հայտնվող «որ ելանէ ի Թուրքաստան երկրէն» տեղեկությունը արդեն լրիվ լինելով՝ լրացման կարիք չունի, իսկ Եփրատայ բառը մնում է կիսաբառ: Պակասը կարելի է լրացնել Մենդոց գրքի (Բ, 11) «պատէ զամենայն երկիրն» բառերով, ինչպես որ առաջարկել են Մարկվարտը և Գրիգորյանը: Բայց Իրդու-թյունն այն է, որ «Սեբեոսի Պատմության» նախնական բնագրում եղել է ոչ թե այնպես, ինչպես խոստովել է Պատկանյանի նորագույն ընդօրինակությունում, այլ այնպես, ինչպես հրատարակել են բոլոր հրատարակիչները, նրանց թվում նաև Պատկանյանն ինքը: Իսկ սա նշանակում է, որ հատվածը լրացման կարիք չունի: Դրանում համոզվելու համար ցույց տանք հատվածն այնպես, ինչպես առկա է մեզ հասած հնագույն ձեռագրում և բոլոր հրատարակություններում. «Ելանէ (Վեհնոտ գետը ելնում է—Գ. Ա.) ի Թուրքաստանէ, յերկրէն Եփրատայ»: Ինչպես տեսնում ենք, նախադասությունն այստեղ լրիվ է. հայտնվում է, որ Վեհնոտ գետը ելնում է Թուրքաստանից, Եփրատայի երկրից: Սա ներմուծողի գիտելիքն է:

Եթե անգամ հատվածը լրացման կարիք ունենար, շարձյալ չէինք կայող որոշել, թե լրացումն ինչ աղբյուրից պետք է կատարվի, որովհետև Եփրատայի անունը «Սեբեոսի Պատմության» ներմուծողին կարող էր ծանոթ լինել Աստվածաշնչից բացի նաև այլ աղբյուրներից: Այսպես օրինակ, Ստեփանոս Սյունեցին գրում է. «Ասեն թէ ի Հնդկային ծայրիցն արեւելից ունի (Փիսոնը—Գ. Ա.) զակունս եւ դաշ ընդ Հնդկեա ընդ Եփրատ» («Ի մեկնութենէ Արարածոց», «Հ. ամս», 1964, էջ 137): Սա ավելի մոտ է «Սեբեոսի Պատմության» ներմուծողի «յերկրէն Եփրատայ... և հոսի ի Հնդկեա» բառերին, քան թե Մենդոց գրքի «պատէ զամենայն երկիրն Եփրատայ» բառերը, որոնց մեջ Հնդկաստանի անունը չի էլ հիշատակված:

Եփրատայի մասին տեղեկության հանդիպում ենք նաև Անանուն հեղինակի հետևյալ հաղորդման մեջ. «Փիսոն ի Հնդկաց և յՅթիապաց Գանգէս կոչի, իսկ Յոնքը Հնդկաց գետ ասեն: Ելանէ յմաւոն լեռնէ և զամենայն երկիրն Եփրատայ շրջապատէ» (F. N. Fink, Kleinere mittellarmenische Texten.—Zeitschr. f. arm. Philol., 1902, Bd. I, H. 3, էջ 191):

Եփրատը մերկիմաստակների կապակցությամբ հիշատակված է նաև վերը նշված Հիպպոդիտոսին վերագրվող «Ժամանակագրության» («Եփրատ, ի նմանէ գիմնոսփիստեայք, որ կոչին մերկիմաստակք») և Շիրակացուն վերագրվող «Սակա բացայայտութեան թուոց» («գրանականն ունի ի մերկիմաստակս, որ շրջի ի գէմս Եփրատայ») աշխատությունների մեջ:

306. «Եւ բանակեալ ի վերայ գետեզբն»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր հրատարակություններն ունեն «բնակեալ»: Ուղղեցինք «բանակեալ», որովհետև պատմիչը խոսում է զորքերի բանակատեղի հաստատելու և ոչ թե բնակվելու մասին: Հենց նախորդ պարբերության մեջ նա գրում է. «Եւ նա (Մաբատ Բագրատունին —Գ. Ա.) դարձեալ բանակեցաւ յԱպր Շահր ի Տոս գաւառին»: Ընդգծված բառը նա գործածում է նաև իր Պատմության այլ էջերում, որոնց հիման վրա և սրբագրում ենք բնագիրը: Վրիպակն առաջին անգամ նկատել և սրբագրել է Նորայր Բյուզանդացին («Հայկական բառաքնություն», Կոստանդնուպոլիս, 1880, էջ 83):

\* Այս հանրահայտ գիտելիքը համարելով միայն «հայկական մի քանի ձեռագրերում» հանդիպող գիտելիք, Բ. Չուգասազյանը կարծել է, թե դրանց, Աստվածաշնչի և «Սեբեոսի Պատմության» «տվյալների զուգադրումով» կարելի է ապացուցել, որ «Փիսովնը նույն ինքն է» («Հայ-իրանական գրական աննշխություններ», էջ 108—109): Լստ որում նա ծանոթ չի եղել Յ. Մարկվարտի աշխատությանը, որում Գրիգոր Մագիստրոսի հիշատակած Փիսոնն արդեն նույնացված էր Վեհնոտի հետ (Erānšahr, էջ 148):

307. «Ոմն մի ի զհնալուսն գեղու հեծեալ»: Ա. Զամինյանը (Զամ., էջ 105) «գեղու» բառը սրբագրում է «գեղուկ», բայց հնարավոր է, որ հեղինակը գրած լինի հենց «գեղու» («գեղեկալ» բառի նմանողությամբ):

308. «Առդ՝ քէպէտ և արձակու առ նա Սմբատ որ է խոսով Շումն, խոյս տալ ի նոցանէ»: Այստեղ պատմվում է, որ Սմբատ Բագրատունին ինչ-որ բան է ուղարկում («արձակում») պարսից իշխան Դատոյեանին: Իսկ թե ուղարկածն ի՞նչ է (հրաման, սուրհանդակ), հայտնի չէ: Պարզ է, որ բառ է պակասում: Թարգմանիչներն այդ պակասը լրացրել են յուրաքանչյուրն ըստ իր ենթադրության: Ք. Պատկանյանը (Ստ., էջ 73) թարգմանել է «послал к нему нарочно» («ուղարկեց սուրհանդակ»), Ստ. Մալխասյանցը (Մալխ., էջ 59) «послал ему приказание» («ուղարկեց հրաման»): Ա. Զամինյանը (Զամ., էջ 105) հարցականով ներմուծում է «հրաման» բառը («Թէպէտ և հրաման արձակու առ նա»): Սակայն վերջնական վճիռ ընդունել հնարավոր չէ, որովհետև պակասը նկատելով հանդերձ՝ չենք կարող որոշել, թե առաջարկված և շտապարկված հնարավոր բառերից ո՞րն է իսկապես եղել նախնական բնագրում և որտե՞ղ պետք է ավելացնել («արձակու» բառից առաջ, թե՞ հետո) պակասող բառը:

309. «Հրաման հասեալ ի Մեծէն Խաբանայ առ ձեմրախ»: Ա. Զամինյանը (Զամ., էջ 106 և էջ 346՝ անվանացանկում) ձեմրուխի նույնացնում է հաջորդ զլխում հանդես եկող ձեպետի հետ: Այս ենթադրության համար հավանաբար հիմք է հանդիսացել Ք. Պատկանյանի (Ստ., էջ 263, ծ. 159) ծանոթագրությունը, որի համաձայն նույնպես ձեպետից նույնացվում է ձեմրուխի հետ:

Ինչ-որ կապ կա «Սեբեոսի Պատմության» ձեմրախի և Մովսես Կաղանկատվացու (հատոր երկրորդ, գլ. 11, 12, 14) Ջերու անունների միջև: Հավանաբար, Կաղանկատվացու Ջերու-ի նախնական ձևը եղել է «Սեբեոսի Պատմության» ձեմրախ-ին նմանվող Ջերախ-ը, հետագայում ին-ն ընկել է՝ հաջորդ «Նաբան» բառի առաջին տառի ազդեցությամբ («Ջերուխ խաբան» բառերն արտագրելիս գրիչները կարող էին «խ» տառերից մեկը համարել ավելորդ և կրճատել):

310. «Իսկ արդարացուցին զաւրն ամենայն մնացեալն զՍմբատ և գրատոյեան տարեալ ի դուռն կապանաւ՝ սպանաւ յարքայէ»: Սա շարահյուսորեն կանոնավոր նախադասություն չէ, ուստի Զամինյանը (Զամ., էջ 106) վերակառուցել է այսպես. «Նա արդարացուցին զաւրն ամենայն մնացեալն զՍմբատ. Իսկ զԴատոյեան տարեալ ի դուռն կապանաւ՝ սպանաւ յարքայէ»: Տեղափոխված են «և»-ը և «իսկ»-ը: Բայց սրբագրման կարիք չկա, որովհետև «իսկ»-ը վերաբերում է «զաւր»-ին, այս իմաստով. «Իսկ զաւրն արդարացուցին զՍմբատ»:

311. «Արք սկայազարք էին երկոքինն և կուռ սպառազինեալք»: Միհրդատյանը և Պատկանյանը «սկայազարք»-ի փոխարեն ունեն «սակաւազարք», որը հատվածի բովանդակությանը չի համապատասխանում: Պատմիչը խոսում է Սմբատ Բագրատունու և Քուշանաց արքայի հզորության և ոչ թե սակավազորության մասին, ուստի աղճատված «սակաւազարք»-ի փոխարեն սպասելի է, հակառակ իմաստն արտահայտող բառ: Ք. Պատկանյանը (Ստ., էջ 74) ենթադրում է, որ «սակաւազարք»-ից առաջ եղել է «ոչ» բառը («ոչ սակաւազարք»): Ն. Ակինյանը («Շ. ամս.», 1969, էջ 343) առաջարկել է «սակաւազարք»-ի փոխարեն «սկայազունք»: Ն. Ազնեցը («Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948, էջ 118) և Ա. Զամինյանը (Զամ., էջ 107) իրավացիորեն առաջարկել են սրբագրել «սկայազարք»: Սրա հիման վրա էլ Մալխասյանցը սրբագրել է բառը:

Սմբատի հետ մենամարտած արքան ըստ «Սեբեոսի Պատմության» կոչվում էր «Նեփթաղեայ արքայ», հավանաբար՝ պետք է լիներ «արքայ Նեփթաղեաց»: Նեփթաղեների մասին տե՛ս «Պրոպիոս Կեսարացի», թարգմ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 311, 312, ծ. 17):

312. «Ի վերստ իմն հասեալ ազնուքին՝ պատառի վերտամուտ, բանլիկ և կուռ զրանին ամուրփին արքային Քուշանաց ի նիզակէն Սմբատայ»: Բոլոր ձեռագրերն ու առաջին երկու հրատարակությունները (Միհրդատյան, Պատկանյան) «վերտամուտ» բառի փոխարեն ունեն «վերտեամուտ»: Ստ. Մալխասյանցը, հետևելով Հ. Աճառյանին դարձրել է «վերտ և ամուրք»: Մենք («Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, էջ 170) ցույց ենք տվել, որ այդ սրբագրությունը հիմնավոր չէ: Երբ «վերտեամուտ» վրիպակը բաժանում ենք երկու մասի և վերծանում «վերտ և ամուրք», այդ դեպքում մեզ հետաքրքրող նախադասության մեջ իրար հաջորդում են հինգ զրիթի նույնիմաստ բառեր (վերտ, ամուրք, բահլիկ, կուռ, ամուրփին): Սա անիմաստ բառակուտակում է:

Սիմեոն Ապարանեցին («Բանաստեղծություններ», էջ 144) «Սեբեոսի Պատմությունը» վերապատմելիս մեզ հետաքրքրող բառը զործածում է «վերտուտ» ձևով: Սրա հիման վրա մենք վրիպակը դիտում ենք որպես «վերտ» և «մուտ» բառերից կազմված բարդ բառ, որն

սկզբնապես գրված է եղել «վերտամուտ» ձևով (Միմենի Ապարանեցի, շափածոյի պահանջներին ելնելով, «ա» ձայնավորը կրճատել է և դարձրել «վերտամուտ»: Նա նման կրճատման օրինակներ ունի նաև այլուր): Ընդօրինակող գրիչները սա վրիպակաբար ընդօրինակել են «վերտամուտ», այսինքն «ա» հոդակապը վերծանել են «և»: Հետագա սրբագրողներն ուղղել են բնագիրը, բայց մոռացել են կամ յավ շին ջնջել սխալը և այժմ ձեռագրերում գտնում ենք ինչպես ճիշտը («ա»), այնպես էլ սխալը («և»). որի հետևանքով «վերտամուտը» դարձել է «վերտամուտ»:

Նոր Հայկազյան բառարանը (հ. 2, էջ 817) «վերտ» բառը բացատրում է այսպես. «ոյրեակ, հրեակ, շարամանեակ, շրթայագործ»: Ուրեմն, մեր վերականգնած «վերտամուտ» բառը ունի մոտավորապես «դրահապատ» բառի իմաստը և նշանակում է հյուսվածամուտ, հյուսվածապատ, շրթայագործ գրահ (կազմված «դարանամուտ», «իւնամուտ», «շինամուտ» բառերի օրինակով):

Միջնադարյան «Բառք քերթողականք» կոչվող ձեռագիր բառարանում (ՄՄ ձեռ. № 5596, էջ 195բ և այլ ձեռագրերում) և Երեմիա Մեղրեցու տպագիր բառարանում հանդիպում է «վերամտեաց» կամ «վերամտեալ» բառաձևեր, որը բացատրված է «ի ներքս եմուտ» կամ «ր ներքս մտեալ»: Սա նկատի ունենալով կարելի էր կազմել «վերամուտ» կոչվող մի բառ և ենթադրել, թե «Սեբեոսի Պատմության» հեղինակը գործածել է այդ բառը, սակայն այս դեպքում ի՞նչ կնշանակիր «պատմութի վերամուտ... ի նիզակէն Սմբատայ» («Սմբատի նիզակից... պատմում է ներսամուտ գրահի ամրութունը»):

«Վերտամուտ» բառին ուղեկցող «բահլիկ» բառը Ք. Պատկանյանը (Ստեփ., էջ 75, ծանոթ.) բխեցնում է Բահլ անունից, «որովհետև այդ քաղաքը քուչանների մայրաքաղաքն էր»: Ըստ այսմ՝ «բահլիկ և կուռ գրահ» նշանակում է Բահլում պատրաստված, ամուր գրահ: Ստ. Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 187, ծ. 48) բացատրում է «ինչպես Դամասկոսի անունով ազնիվ սրերը կոչում էին դամասկյան», այնպես էլ Բահլի անունով գրահը կոչվում էր բահլիկ: Մարկվարտը (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 262, Վավ. 2, միկրոֆիլմ, էջ 76) Ք. Պատկանյանի հրատարակության «վերտ և ամուտ»-ի մեջ «ամուտ»-ը նույնացնում է պահլավերին amut բառի հետ:

313. «Ասու հարեալ գերիհրն ամենայն, զՀարև, զՎատագէս»: Բոլոր ձեռագրերն ունեն «զՀար և» (փխ. «զՀարև»), այսինքն՝ «Հարև» տեղանվան վերջին տառը սխալմամբ բնկավել է որպես շղկապ և անշատվել է բառից: Վրիպակը նկատել են Հ. Հյուբշմանը («Atm. Gramm.» հ. 1, էջ 48 և 80), Յ. Մարկվարտը («Erānsahr», էջ 76), Ֆ. Մակլերը (MacI., էջ 51), Ն. Ակինյանը («Կիւրոն կաթողիկոս Վրաց», էջ 162), Զամինյանը (Զամ., էջ 107) և այլք:

Հարև երկրի կամ քաղաքի անունը, որը հանդիպում է նաև Հրև (կամ Հրէ) ձևով, հիշատակում են նաև Ղազար Փարպեցին և այլ մատենագիրներ: Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ում (էջ 352) Հրևը հիշատակված է Կոշմի և Ապրշահրի հետ միասին որպես Արեաց աշխարհի նահանգի անուն. «Կոմշ, Վրական, Ապրշահր, Մրու, Մրումուտ, Հրև...»: «Սեբեոսի Պատմության» մեջ բացառած ձեռագրերում գտնվող և բոլոր հրատարակություններում տպագրված «Հար» անունը բացահայտ վրիպակ է:

314. «զՏոխոստայն ամենայն»: Միհրդատյանը «զՏոխոստայն»-ի փոխարեն ունի «զՏոխոստոսայն»: Ք. Պատկանյանը նույնպես ուսերին թարգմանության մեջ գրել է Тохост (էջ 75), սակայն ծանոթագրությունների բաժնում (էջ 202, ծ. 156) ենթադրել է, որ դա հավանաբար Տոխարիստանի անունն է: Հայերեն բնագիրը հրատարակելիս նա ուղղում է վրիպակն ըստ իր օգտագործած ձեռագրի և տպագրել է «զՏոխոստոսայն»: Այսպես է նաև № 2639 ձեռագրում և Մալխասյանցի հրատարակության մեջ: Գարեն նույնպես, հավանաբար, օգտվելով Ք. Պատկանյանի առաջ. թարգմանության ծանոթագրությունից, Միհրդատյանի «զՏոխոստոսայն»-ը (Գարեի մոտ՝ սխալմամբ Tokhostan) սրբագրել է Տոխարիստան («Journal asiatique», Paris, 1869, էջ 174):

315. «Երեւալ բանակէր ի Մարգ և ի Մարգոտ, գաւաղի»: Բոլոր ձեռագրերն ու տպագրիչները մեր ուղած «բանակէր»-ի փոխարեն ունեն «բնակէր»: Սակայն քանի որ պատմիչի խոսքը ոչ թե Սմբատ Բագրատունու զորքերի բնակավայրի, այլ՝ բանակատեղի մասին է. ձեռագրի «բնակէր»-ը ուղղել ենք «բանակէր»: Մարգ և Մարգոտ տեղանունների կապակցությամբ Ք. Պատկանյանը ծանոթագրում է. «Մարգը պետք է լինի Մարգիանան: Հին պարսկական արձանագրություններում՝ Մարգն: Եպիգելը («Altper. Keilinschr.», էջ 212—213) ենթադրում է, որ նահանգի այդ անունը ծագել է պարսկերեն 𐎧𐎡𐎴 «թուրն» բառից, այնտեղ մշտապես ապ-

րող մեծ քանակով թռչունների պատճառով: Այդ պատճառով էլ այդ նահանգով հոսող գետը կոչվում է Մուրգաբ, որը կարող էր հնում կոչվել Մարգրոզ, որովհետև Ռոյ կամ ռուզ 29) պարսկերեն նշանակում է գետ (Սառ., էջ 202, ծ. 156): Ձեռագրերում «Մարգրոտ»-ի փոխարեն հանդիպում է Մարդոտ (Մարդոտ) անը:

316. «Անուանեալ կոչել յարձայն Ջավխեան հոսրով»: «Ջավխեան հոսրովը» պատվավոր կոչում է, որը պարսից արբա հոսրովը շնորհեց Սմբատ Բագրատունու որդի Վարազտիրոցին՝ ի նշան Սմբատի կողմից քուչանների դեմ տարած հաղթանակի: Ի դեպ Ստ. Մալխասյանցի ուսանողներն թարգմանության մեջ (էջ 60) բաց է թողնված «զորդի նորա» բառերի թարգմանությունը, որի հետևանքով ուսա ընթերցողին հայանի չէ, թե ով էր Վարազտիրոցը:

«Ջավխեան հոսրով» արտահայտության կապակցությամբ Ստ. Մալխասյանցը ծանոթագրում է. «Այս տիտղոսը պարսկերեն նշանակում է «հավիտենական» կամ «հավերժ հոսրով», իսկ եթե հոսրով բառն ընդունենք որպես հասարակ անուն՝ նշանակում է «հավերժ հաղթող» (Մալխ., էջ 163, ծ. 116):

317. «Կոչել զճա ի դուռն մեծաւ պատուով»: Զամինյանը (Զամ., էջ 108) առաջարկում է «դուռն» բառը գրել մեծատառով, հավանաբար նկատի ունենալով այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է ոչ թե սովորական մի դռան, այլ՝ պարսից արքունիքին: Բայց և այնպես բառը մեծատառով գրելու հարկ չկա, որովհետև հայերենում այդ բառը բացի իր ուղղակի իմաստից արտահայտում է նաև արքունիք իմաստը և այդ իմաստով նրա գործածությունն այնքան սովորական է, որ բառը մեծատառով գրելու պահանջ չի առաջադրում:

318. «Յամի ԻԸ-երորդի»: Բոլոր ձեռագրերն ու տպագրիչներն ունեն «յամս» (փխ. «յամի»), որը ակնհայտ սխալ է: Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, էջ 69, ծանոթ.) տպագրել է «յամս», բայց տողատակին ծանոթագրել է. «Ուղղելի՛ յամի»: Միևնույն առաջարկն արել է նաև Զամինյանը (Զամ., էջ 109):

319. «Կեցեալ ժամանակս սակաւ՝ վախճանեցաւ յամի ԻԸ-երորդի քաղաւորութեան նորա»: Պատմիչը հայտնում է, որ Սմբատ Բագրատունին վախճանվել է պարսից հոսրով Ապրվիզ արքայի թագավորության 28-րդ տարին: «Հետևաբար,—գրում է Ք. Պատկանյանը (Սառ., էջ 202) Սմբատը վախճանվել է ոչ թե 601 թ., ինչպես որ հավատացնում է Ս. Մարտենը (ՏԵՍ Հովհաննես կաթող., և Զամչյան, Պատմ., հ. 3, էջ 61 ժամանակագր. մեջ)», այլ՝ 617—618 թթ.: Մեկ ուրիշ ծանոթագրության մեջ (Սառ., էջ 200—201, ծ. 146) նա ավելի մանրամասն է անդրադառնում Սմբատ Բագրատունու մահվան թվականին, գրելով. «Հենվելով մյուս հայ մատենագիրների կարծիքների վրա, Զամչյանը և Ս. Մարտենը գտնում են, որ Սմբատը վախճանվել է 601 թ.: Սակայն Սեբեոսի կարծիքն արժանի է առանձնահատուկ վստահության, որովհետև նախ՝ Սեբեոսը նրա մասին հաղորդող մատենագիրներից ամենահինն է, և երկրորդ՝ նա գրեթե նրա ժամանակակիցն էր: Այդպիսով մենք նրանից իմանում ենք, որ Սմբատը, Վնդոյի սպանությունից և Վստամի ապստամբությունից անմիջապես հետո, ստացել է թուրքական ցեղերի դեմ կովոզ պարսկական զորքերի հրամանատարությունը, որ նա Ամաղ, Ռոյան, Զորջան, Տաբարաստան նահանգներում ապստամբությունը հանդարտեցնելուց հետո ստացել է Վրկանի մարզպանի կոչումն ու պաշտոնը. որ նա 8 տարի կառավարել է այդ երկիրը, 600-ից մինչև 608 թթ., և հոսրովի թագավորության 18-րդ տարին ստացել է թուլյովություն՝ գնալու Հայաստան, որտեղից նա շուտով վերադարձել և կրկին ստանձնել է Պարսկաստանի հյուսիսային սահմաններին տեղակալված քուչանների և հեփթաղների դեմ կովոզ զորքերի հրամանատարությունը. որ նա դեռ երկար ժամանակ ծառայել է պարսից զորքում, որից հետո որոշ ժամանակ ապրում է պատվավոր հանգիստ արքունիքում, եղել է պետության երրորդ անձը և վերջապես վախճանվել է հոսրով 2-րդի թագավորության 28-րդ տարին, այսինքն՝ 617—618 թթ.: Այս կարծեցյալ հակասությունը համաձայնեցնելու համար պետք է հիշել, որ նա Հայաստանի մարզպան է եղել ավելի վաղ, քան պարսից ծառայության անցնելը, այսինքն՝ 593-ից մինչև 600 կամ 601 թվականը»: Որոշ բանասերներ (Ակինյան և այլք) գտնում են, որ Սմբատ Բագրատունու օրոք Հայաստանն ունեցել է ուրիշ մարզպան:

320. «Նդին ի տապանի ի գիւղն Գարինս, որ է ի Գոգովիտ գաւառի»: Գարինը կոչվող ամրոցը եղել է Բագրատունիների բնիկ հանգստարանը: Փափստոս Բուզանդի վկայությամբ՝ Հայոց Արշակունի հարստությանը պատկանող թագավորները պետական զանձը պահում էին այս ամրոցում, որը գտնվում էր պատմական Հայաստանի բուն կենտրոնում՝ Այրարատյան երկրում, Արարատ լեռան հարավ-արևմտյան կողմում, Բագրևանդից արևելք և Վասպուրականից հյուսիս, հին Բայազետի տեղը (նշված վայրերն այժմ գտնվում են Քուրթբայում):

321. Կետերով նշված տեղում ն. Ակինյանը ենթադրում է պակաս, որի հիման վրա էլ Ստ.



Մալխասյանցն այդտեղ տեքստն անջատել է նախորդ տողերից: Կետերին հաջորդող պարբերության բովանդակությունից ելնելով Պատկանյանը, Լասկինը, Ակինյանը, Մալխասյանցը և ուրիշներն ենթադրել են, որ պարբերությունում խոսվում է խազարների կողմից Հերակլին ուղարկված զինվորական օգնության մասին: Ք. Պատկանյանը գրում է. «Սեբեոսի ամբողջ գրքում սա միակ ակնարկն է այն մասին, որ խազարները Հերակլին օգնության են եկել՝ նրա Պարսկաստան կատարած արշավանքի ժամանակ: Մեր կողմից հրատարակված «Աղվանից պատմության» թարգմանության մեջ խազարների՝ Հայաստան և Պարսկաստան կատարած այդ արշավանքին նվիրված են երկու ամբողջական գլուխներ՝ երկրորդ մասի Ժ և ԺԲ գլուխները» (ՍՄԿ., էջ 203, ծ. 160): Սահայն Ք. Պատկանյանը չի նշել Ստ. Մալխասյանցի արձանագրած այն փաստը, որ «ըստ Սեբեոսի այժմյան բնագրի հունաց կայսրն այս ժամանակ Մորիկն էր և ոչ՝ Հերակլը» (ՍԵՊ., էջ 188, ծ. 49):

Հատվածի բովանդակությունը վերագրվել է Հերակլին, նկատի ունենալով այն հանգամանքը, որ հեղինակն իր գրքի առաջաբանում խոստանում է պատմել Հերակլի հյուսիսային կողմերում վարած պատերազմների մասին («զդիմելն Հերակլի ի կողմանս հյուսիսոյ առ արքայն Քէտալացւոց. զյուղարկումն անհուն բազմութեանն ազգաց, զասպատակն Յունաց յԱտրպատական, զառ և զաւար»), բայց ներկա «Սեբեոսի Պատմության» մեջ այդ պատերազմների նկարագրությունը չկա: Սրանից ելնելով՝ Ակինյանը ենթադրել է, որ քննարկվող հատվածը (որի մեջ իսկապես խոսվում է հյուսիսային կողմերի մասին, սակայն, առանց նշելու հունաց կայսրի անունը) հանդիսանում է հորած նկարագրության մի հատվածը, որին նախորդող մասը պարունակող թուղթն ընկել է ձեռագրից: Բայց այս ենթադրությունը խանգարում է այն հանգամանքը, որ քննարկվող հատվածը գտնվում է այնպիսի մի տեղում, որը վերաբերում է ոչ թե Հերակլի, այլ Մորիկի գործերին: Թերևս պետք է մտածել, որ հատվածն իր տեղում չէ:

322. «Ապա ապստամբելս զճացին ի ծառայութիւն Մեծին Խախանայ»: Զամինյանը (Զամ., էջ 109) «Ապա ապստամբեալ» բառերից հետո ավելացնում է «առք հայաստանեայց» բառերը, որով ցույց է տալիս, որ ինքը համոզված է, որ խոսքը հայկական զորքերի խորովից ապստամբելու և Հերակլին օգնության գնալու մասին է:

323. «Ի ձեռն ձենաստանն ձեպետխոյ»: «Ձենաստանն» բառն այստեղ ընկալվում է որպես ածական՝ «Ձենաստանեան» (ձենացի) իմաստով: Բոլոր թարգմանիչները թարգմանել են այդ իմաստով: Ա. Զամինյանը (Զամ., էջ 109), սակայն, առաջարկում է հատվածը սրբագրել այսպես. «Ապա ապստամբեալ զճացին... ձենաստանն, ի ձեռն ձեպետխոյ (փխ. «Ի ձեռն ձենաստանն ձեպետխոյ»)», որի համաձայն «Ձենաստան»-ը դառնում է տեղանուն: Յ. Մարկվարտը (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 262, վավ. 2, էջ 78) առաջարկում է «ձեպետոխ»-ի փոխարեն կարդալ ձեպուխ (Ջերուխ):

324. «...խառնել ընդ զաւրացն ձեպետխոյն այնորիկ, հրամանաւ քազաուրին իւրեանց Խախանայ: Եւ եկեալ ընդ պահակն ձորայ զաւրաւ բազմութեան՝ զճացին յաւգնակաւութիւն քազաուրին Յունաց»: Ն. Ակինյանը («Շ. ամս.», 1969, էջ 343) առաջարկում է «ձեպետխոյն» բառից հետո զնն վերջակետ, որից հետո ավելացնել տեքստում գոյություն չունեցող մի բառ՝ «յետ»: Այնուհետև նա ջնջում է «Խաբանայ» բառին հաջորդող վերջակետը և «և» շաղկապը: Այս սրբագրությունից հետո հատվածի բովանդակությունը փոխվում է, այսպես. «...խառնել ընդ զաւրացն ձեպետխոյն: Յետ այնորիկ հրամանաւ քազաուրին իւրեանց Խաբանայ ելեալ ընդ պահակն ձորայ» և այլն:

325. «Եւ եկեալ ընդ Պահակն ձորայ»: Ն. Ակինյանը («Շ. ամս.», 1969, էջ 343) առաջարկում է «պահակն» բառը սրբագրել «պահակն», ելնելով նրանից, որ Միհրդատյանի և Պատկանյանի հրատարակություններն ունեն «պահորական» ձևը: Սակայն Միհրդատյանի օգտագործած մյուս՝ հին ձևագիրն ունեցել է «պահակն» ձևը, որի հիման վրա էլ Ստ. Մալխասյանցն ուղղել է նախորդ հրատարակությունների «պահորական»-ը: Մենք հետևում ենք Մալխասյանցին, չնայած նա հետևողական չի գտնվել և երբեմն էլ տպագրել է «պահակն» ձևը (ՍԵՊ., 146):

326. «Իսկ արդ՝ զԲ°նչ ևս զԱտատ Խորխոռունույ ասացից և զՍիւսանգամ զապստամբութիւնն»: Զամինյանը (Զամ., էջ 109) «զապստամբութիւնն» բառը սրբագրում է «զապստամբութեանն»:

327. «Եւ այս եւ սահմանակալք մէրութեանն Պարսից յամս հաշտութեան այնորիկ ի Հայաստան երկրի և ի Դուին քաղաք»: Այս նախադասությամբ սկսվող հատվածը կապ չունի իրեն նախորդող պարբերությունների հետ, որոնցում պատմվում է Ատատ Խորխոռունու գործերի մասին: Հատվածին հաջորդող «և հրաման ելանէ ի կայսերէ» բառերով սկսվող հատվածը նույնպես չի

հարմարվում իր միջավայրին: Ինչպես երևում է, այստեղ տեղի է ունեցել հատվածների ետևաաշուժյուն կամ մասերի դրոստա:

Սանոթագրվող հատվածում թվարկված սահմանակալների անուններն ուղղագրական տարբերություններ ունեն նախորդ գլուխներից մեկում թվարկված միևնույն անունների համեմատությամբ: Այսպես, օրինակ, Նիխորական անվան փոխարեն այնտեղ գրված է Խորական, Մերկաու-ի փոխարեն՝ Մերակրուտ, Յեման-ի փոխարեն Հոյիման: Ա. Կարիերը (ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 235, վավ. 205) հնարավոր է համարում, որ սահմանակալների անուններն այս երկրորդ անգամ հեղինակինը չեն, այլ՝ նրա աղբյուրինը, կամ էլ՝ հեղինակը այս անգամ վերափոխել է իր ասածը:

Ֆ. Մակիերը (MacI., էջ 54) Մերկուտ-ը և Յեման-ը սրբագրել է Մերակրուտ և Հոյիման:

328. «Սորմէն գորավար»: Թ. Միհրդատյանը և Ք. Պատկանյանն ունեն Սուրեն: Սակայն Պատկանյանը (Ռադ., էջ 203, ծ. 161) ծանոթագրում է. «Հունական Հայաստանում այդպիսի կառավարիչ չի եղել: Կարծում ենք այստեղ ազավազված է ինչ-որ մեկ ուրիշ անուն»: Ստ. Մալխասյանը (ՍեՊ, էջ 188, ծ. 51) գրում է. «Մենք ուղղեցինք Սորմէն, որ արդարանում է մի կողմից Ա-ի (№ 2639—Գ. Ա.) ընթերցվածքով (Սորմէն) և մյուս կողմից Գիրք թղթոցով, որտեղ (եր. 90) բերված է թուղթը «փառաւորելոց տէրանց Վրթանիսի... Ի Սորմենայ ստրատելատէ և Հայոց զաւրավարէ», և (եր. 92) «պատասխանի թղթոյն Սորմենայ, որ առ Վրթանէս վարդապետ գրեալ»: Ազգապատումը (Մ. Օրմանյան—Գ. Ա.) այս թղթակցութիւնները հիշելով՝ Սորմէն գորավարին անվանում է Սորմենա (եր. 596—598)»:

329. «Ի ֆաներոդ ամի Մարկայ թագաւորութեանն ապստամբեալ ի բաց կացին ի կայսերէ զաւրն Յունաց»: Զեռագրերը և Միհրդատյանն ունեն «ի քսաներեք ամի» (կամ «ի ԻԳ ամի») և Ք. Պատկանյանը սրբագրել է ի քսաներորդ ամի: Նրան հետևել է նաև Մալխասյանը: Պատկանյանը հայտնում է, որ իր ունեցած ձեռագրում գրված է «ի քսաներորդ ամի» (Ռադ., էջ 79): Մեկ այլ ձեռագիր ունեցել է «ի ԻԳ ամի» (Պատկ., էջ 70):

330. «զճուան Վեն ոմն իշխան մեծ զաւրագոյս ևոցա»: № 2639 ձեռագիրն ու Միհրդատյանի օգտագործած նորագույն ընդօրինակությունն ունեն «զՋովանան»: Դ (№ 2867) ձեռագիրը նույնպես սկզբում ունեցել է «զՋովանան», որը հետագայում դարձրել են «զՋուանն»: Միհրդատյանի օգտագործած հին ձեռագիրը (կորած) և Պատկանյանի ձեռագիրն ունեցել են «զՋովան», որի հիման վրա էլ Պատկանյանը և Մալխասյանցն ուղղել են «զՋովան»: Մենք ուղղում ենք «զՋուան», հենվելով № 2867 ձեռագրի, ինչպես նաև հայտնի գլխի «Ջուան» ուղղագրության վրա:

331. «Կէսքն ամացեալ ի գետն Եփրատ մեռանէին, և կէսքն զնային հարածական»: Այս նախադասության մեջ երկու անգամ հանդիպող «կէսքն» բառերից առաջինը բոլոր ձեռագրերում գրված է «կէսն» ձևով և այդպես էլ տպագրել են բոլոր հրատարակիչները: Սակայն սա բացահայտ սխալ է, որովհետև չէր կարող պատահել, որ միևնույն հեղինակը միևնույն նախադասության մեջ մեկ ասեր «կէսն», մեկ՝ «կէսքն»: Զամինյանը (Զամ., էջ 114) առաջին անգամ հանդիպող «կէսքն»-ը դարձրել է «կէսքն» և համաձայնեցրել երկրորդ «կէսքն»-ի հետ:

332. «Ամացեալ ի գետն Եփրատ»: Բոլոր ձեռագրերը, ինչպես նաև Միհրդատյանն ու Պատկանյանը «ամացեալ»-ի փոխարեն ունեն «ամրացեալ»: Զամինյանը (Զամ., էջ 114) և Մալխասյանցն ուղղել են «ամացեալ»:

333. «Եւ առեալ զառ և զաւար գրանակին Պարսից»: «Զբանակին» բառի մեջ գտնվող «զ» նախդիրը ավելորդ է: Ա. Ա. Արբախյանն իր կազմած «Գրաբարի ձեռնարկում» (Երևան, 1952, էջ 503—509) մանրամասն նշել է «Սեբեոսի Պատմության» իր ընտրած շրջա գլուխներում հանդիպող լեզվական զանազան անկանոնություններ, որոնցից մեկն է նաև «զբանակին» բառում հանդիպող «զ» նախդիրը:

Այս վրիպակը կարելի էր սրբագրել, սակայն հնարավոր է, որ վրիպողը ինքը՝ հեղինակն է, որը «զառ և զաւար» բառերի «զ» նախդիրների աղբյուրությամբ այդ նախդիրը կրկնել է նաև նրանց կողքին գտնվող «զբանակին» բառը գրելիս:

334. «Ելեալ անտի բազմութեան մանկտոյ գերանդեալ»: Բոլոր նախորդ հրատարակությունները «գերանդեալ»-ի փոխարեն ունեն «գերանդալ»: Այս կապակցությամբ Ա. Ա. Արբախյանը («Գրաբարի ձեռնարկ», էջ 507, ծ. 98) ծանոթագրում է. «Ավելի ճիշտ կլիներ գերանդեոֆ, որովհետև ուղիղ ձևն է գերանդի, թեև հիշյալ ձևն էլ բացառված չէ, մանավանդ որ ի ձայնավորը անկոմով հանդիպում ենք նաև այլ կազմությունների մեջ, ինչպես՝ գերանդալեֆ, գերանդալէն»: № 2639, 6454 և մյուս ձեռագրերում գտնում ենք հենց «գերանդեալ» ձևը, որի հիման վրա էլ սրբագրել ենք բնագիրը:

335. «Մրիանալ անկան ի վերջոյ նոցա»: «Մրիան» բառն անձանոթ բառ է և տեղիք է տվել:

այլևայլ ենթադրություններ: Պատկանյանն ու Մալխասյանը թարգմանել են «մանգաղ» (сепн) բառով: Մակերը (Macl., էջ 58) թարգմանել է «խորող գործիքներով» («instruments tranchants»): Հ. Աճառյանը («Արմատական բառարան», տե՛ս «սրիան» բառը) թարգմանում է «մանգաղ», բայց Ստ. Մալխասյանցը առարկում է (ՍԵՊ, էջ 188, ծ. 52), գրելով. «Հիշյալ բացատրությունը կասկածելի ենք համարում, նկատի ունենալով, որ մանգաղը կովելու համար գործիք չէ»: Զամինյանը (Զամ., էջ 117) սրբազրում է «սուսերոք», սակայն սա ևս համոզիչ սրբազրություն չէ: Հավանաբար, նախնական բնագրում եղել է հենց «սրիան», որն ինչ-որ երկրագործական կտրող գործիքի անուն է:

336. «Անկան ի վերջոյ նոցա»: Զամինյանը (Զամ., էջ 117) «վերջոյ» բառը սրբազրում է «վերջոյս»:

337. «Կոռծեցին մեծ աճիբ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիր բնագրերն ունեն «աճիբ»: Զամինյանը (Զամ., էջ 117) սրբազրել է «ոճիրս»: Մենք սրբազրում ենք «աճիր», հետևելով հաջորդ գլխում հանդիպող «աճիրս» ձևին, որը պահպանվել է № 2639 ձեռագրում:

338. «Իսկ նոցա գնեալ մտեալ կոտորէին զբազումս ի դաշտացն և ի ճանապարհացն ցիր և քաւալ կացուցանէին»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 343) առաջարկում է այս հատվածը սրբազրել այսպես. «Իսկ նոցա զհետ մտեալ կոտորէին զբազումս եւ դաշտացն և ճանապարհացն ցիր և թաւալ կացուցանէին»:

339. «Եւ գերեցան յաւուր յայնմիկ»: Ա. Ա. Աբրահամյանը («Գրաբարի ձեռնարկ», էջ 507, ծ. 105) նկատի ունենալով, որ «ցուցական դերանունը ետադաս է, ուստի գոյական անունը պետք է ունենա համապատասխան հոդ», դրնում է, որ «յաւուր» բառի ուղիղ ձևն է «յաւուրն»:

340. «Ի բերդէն յայնմանէ գեղբ ԼԳ»: Այս արտահայտության համաձայն՝ թընամին Երզնկայի բերդից գերի է տարել 33 գյուղ՝ «գեղբ ԼԳ» (№№ 2639 և 6454 ձեռագրերում՝ «գեղբ ԼԳ»): Հ. Ղ. Արիշանը ենթադրել է, թե «ի բերդէն յայնմանէ» բառերից առաջ նախնական բնագրում եղել է «բաց» կամ «զատ» բառը և ամբողջ արտահայտությունը գրված է եղել այսպես. «[բաց] Ի բերդէն յայնմանէ գեղբ ԼԳ»: Ըստ այս սրբազրության՝ թընամին Երզնկայի բերդի բնակիչներից բացի՝ գերի է տարել նաև 33 այլ գյուղ: Սակայն Մ. Հովհաննիսյանը («Հայաստանի բերդերը», Վենետիկ, 1970, էջ 732) իրավացիորեն նշում է, որ «բաց» կամ «զատ» բառերը ներմուծելու կարիքը չկա, որովհետև բնագիրն իր ներկա վիճակում պակասավոր չէ և կարող է «հասկացվիլ ուրիշ ձևով, այսինքն, թե բերդին մեջ ապաստանածներն էին 33 գյուղերու բնակիչները, որոնք գերի տարվեցան»: Բնագիրը հենց այսպես են հասկացել և թարգմանել նաև «Սերեոսի Պատմության» թարգմանիչները:

341. «ԶաւրԲն դարձան և զճացին յԱտրպատական»: Մալխասյանցի հրատարակությունն ունի «Ատրպատական»: Ա. Ա. Աբրահամյանն ուղղում է «յԱտրպատական» և բացատրում. «Ուղեորման հայցական է, ուստի պետք է ունենա համապատասխան նախդիր («Գրաբարի ձեռնարկ», էջ 106): Սակայն Մալխասյանցի հրատարակության մեջ բառն աղավաղված է պատահական վիճակի հետևանքով: Բոլոր նախորդ հրատարակություններն ու ձեռագրերն ունեն ուղիղ ձևը՝ «յԱտրպատական»:

342. «Ապա եկն Սենիաւմ Խոսրով»: Հ. Հյուբշմանը («Arm. Gramm.», I, էջ 73, 87) «Սենիաւմ» անունը բաժանում է երկու մասի՝ «Սենի» և «Տաւմ» և ստուգաբանում է «seni (?)» և «Տաւմ Խոսրով» անուններից: «Տաւմ Խոսրով» անվանաձևի համար նա մատնանշում է միևնույն «Սերբեոսի Պատմության» մեջ հանդիպող Տաւմ Խոսրով անունը, հետևյալ նախադասության մեջ. «Ապա եկն Տաւմ Խոսրով, և արար երկու կոխա»: Թ. Նյուդեկեն («Tabari», էջ 443, ծ. 1) «Տաւմ» անունն ստուգաբանում է «ուժեղ» բառից:

343. «Եւ ի միւս կողմանէ քակեալ գգեղն՝ ածին ամուրսիւն շուրջ զինքեամբ»: Տվյալ հատվածում հայտնվում է, որ հույները Անզղն գյուղի մոտ գտնվող Մաղկոտն վայրում քանդում են գյուղը և իրենց շուրջն ամրություններ են կառուցում: «Գյուղը քանդել» («քակեալ գգեղն») արտահայտությունն այստեղ կասկածելի է թվացել Զամինյանին, որն առաջարկել է սրբազրել «փակեալ գգեղն» (Զամ., էջ 118): Սակայն սրբազրության հարկ չկա, որովհետև գյուղը քանդելը և ամրությունների վերածելը արտասովոր չէ:

344. «Նոքա զարճուրեալ խաւսեցան ընդ հոսա, նախ ի խաղաղութիւն, ասացին ոչ ունել պատեհազմ, այլ թողոյ գրեթոն և երթալ խաղաղութեամբ: Ապա միաբաճԲ եղեալ՝ ոչ քստատեցաւ բանն, այլ վստաճացեալ յամուրսիւն իւրեանց կարձէին առնել ինչ»: Հատվածը վերաբերում է նախորդ ժամթագրության մեջ հիշատակված Մաղկոտն վայրում հավաքված հույն և պարսիկ զորքերին: Պարսիկներն սպառնում են պաշարել բերդը, իսկ հույները վստեցած խոստանում են առանց կովելու հեռանալ բերդից, սակայն հետո փոխում են իրենց որոշումը. «Ապա

միաբանք եղեալ՝ ոչ հաստատեցաւ բանն»: Ստ. Մալխասյանցը գտնում է, որ «միաբանք» բառն այստեղ տեղին չէ: Նրա կարծիքով, պետք է լինի, ընդհակառակը, «անմիաբանք», այսինքն՝ հույներն սկզբում խոստանում են խաղաղութիւն, բայց հետագայում անմիաբան են գտնվում և խախտում են իրենց խոստումը: Նա գտնում է. «Հաւանորէն ուղղելի՛ անմիաբանք: Առաջ Ս. Շաճեանի» (Մալխ., 75): Այսպես էլ նա թարգմանել է. „затем произошли разногласия“ (Малх., էջ 66):

Իրականում, սակայն, բնագիրն աղճատված չէ և հատվածը պետք է հասկանալ այնպես, ինչպես հասկացել է Ք. Պատկանյանը. «единодушно отвергли свое предположение» (Ստք., էջ 82), այսինքն՝ հույներն սկզբում խաղաղութիւն խոստանալուց հետո միաձայն որոշում են հետ կանգնել իրենց խոստումից:

345. «Նոցա հատեալ գտեղի մի»: Խոսքը վերաբերում է հույներին, որոնք ամբողջութեամբ մի հատվածը կտրում («հատեալ»), ճանապարհ են բացում իրենց համար և փախչում են: Զամինյանը (Զամ., էջ 119) առաջարկում է սրբագրել՝ «նոցա հատեալ ի տեղի մի», բայց սա քմաստ չէր ունենա, որովհետեւ ի՞նչ կըշանակէր «մի տեղ հասնելով՝ փախչում են»: Պատմիչն անշուշտ խոսում է շրջապատված ամբողջութեամբ մեջ մի տեղ հատելու, անցք բաց անելու և աղտեղից փախչելու մասին:

346. «Ոմանք հետեալք և ոմանք հեծեալք յանկումուղի ձի, ելին և գնացին փախստական»: «յանկումուղի» բառը ոչ մի տեղ չի հանդիպում, հավանաբար վրիպակ է: Միհրդատյանի և Պատկանյանի հրատարակություններն ունեն «յանկումուղի»: Պատկանյանը բառը չի թարգմանել: Մակլերը (MacI., էջ 60) հարցականով ենթադրում է, թե «յանկումուղի» բառի փոխարեն նախնական բնագիրն ունեցել է «յանկաղմի» բառը: Ըստ այսմ հույները փախել են լքամբած ձիերի վրա նստած: Բայց սա այնքան էլ հավանական բացատրություն չէ: Նույնչափ անհավանական է նաև Հ. Աճառյանի («Հայերեն արձատական բառարան», Գ. Ա, Երևան, 1971, «անկումուղ» բառի տակ) բացատրությունը, որի համաձայն «անկումուղի ածական է ձի բառին և թերևս «տրմուղ, կրմուղ» բառերի հետ նույն է (խամ, անվարժ ձի) և ա՛հա այս պատճառով ավելի մոտ են ձեռագրի Ղ-ով բնթերցվածին»: Ստ. Մալխասյանցն ընդունել է Աճառյանի այս բացատրությունը: Բայց «անվարժ» ձիերի մասին խոսքն անհավանական է թվում: Զամինյանը (Զամ., էջ 119) և ուրիշներ առաջարկել են «յանկումուղի ձի»-ի փոխարեն «յանկումուղ ի ձի» ձևը, որը չնայած տեքստը դարձյալ չի լուսաբանում, բայց քերականորեն ավելի է կարգավորում, որովհետև հնարավորություն է ստեղծում «ձի ելին» արտահայտության փոխարեն կարգալու «ի ձի ելին»: Մենք («Աբրեհուի Պատմությունը» և Անանունի առեղծվածը», էջ 172) առաջարկել ենք «յանկումուղի ձի ելին»-ի փոխարեն կարգալ «անկան յուղի, ի ձի ելին», որը անհամեմատ ավելի հասկանալի է դարձնում տեքստը, սակայն չենք կարող անվերապահորեն պնդել, թե նախնական բնագրում եղել է հենց անպայման մեր ենթադրած ձևը: Այդ իսկ պատճառով էլ բնագիրը թողնում ենք նույնությամբ:

347. «Յապա ծամանակիս եղեալ կարծիս հենգութեան»: Զամինյանը (Զամ., 120) առաջարկում է սրբագրել «Յապա շամանակի ելեալ ի կարծիս»:

348. «Եւ կալաւ նա Բաղախ՝ զԱնզղ և զԴալլատուս, զԵրգինայ, և ի Դարային գաղաքն Միսկերտի»: Մակլերը (MacI., էջ 60) «ի Դարային գաղաքն Միսկերտի» արտահայտությունը վերծանել է այսպես. «ի Տարանի գաղաքն Չինկերտ»: Դարան Տարոնի հետ շփոթելու պատճառն այն է, որ Մակլերի օգտագործած տպագրում Դարայի փոխարեն գրված է Տարա: Մալխասյանցն ուղղել է Դարա՝ հետևելով Միհրդատյանի հրատ. սողատակի ծանոթագրությանը (էջ 120) որտեղ գրված է «Դարային»:

349. «Յայնժամ արեայ Խոսրով դարձաւ ի Դարայէ»: Դարայի մասին կարևոր ուսումնասիրությունների ցանկը տե՛ս «Պրոկոպիոս Կեսարացի», թրգմ. Հ. Բարթիկյանի, էջ 320, ծ. 80:

350. «Եւ արձակիւր ընդ կողմանս Ասարեստանի զաւր մեծ հզաւր յոյժ: Բոլոր ձեռագրերն ու Միհրդատյանն ունեն այսպես: Սակայն Ք. Պատկանյանի և Մալխասյանցի հրատարակություններում «մեծ» և «հզաւր» բառերի մեջ ավելացված է «և» բառը («մեծ և հզաւր»): Մենք այդ ներմուծումը չենք անք, նկատի ունենալով, որ ձեռագրերում դա չկա և որ առանց դրան էլ բնագիրը կանոնավոր է:

351. «զԽոռեան, ու Ըրագմանն անուանեալ»: «Թագման» մականվան կապակցությամբ Ք. Պատկանյանը (Ստք., էջ 204, ծ. 169) ծանոթագրում է. «Թագման-ը նույնն է, ինչ որ արևմտյան մատենագիրների Rasmizas-ը, Romizanès-ը: Սա պատվավոր անունն է պարսկական այն հուշակավոր զորավարի, որը Հերակլի արշավանքների պատմության մեջ ծանոթ է Շահր-Վարազ, Սար-բարազ, Առբրանազաս և այլ անուններով: Այս գեներալի անունը, որը պահպանել են հայ մա-

տենագիրները, եղել է *Խոռյամ*, *Խոռեմ* կամ *Խոռյան*: Տե՛ս «Պատմ. Աղուանից», գիրք 2, գլ. 10 և սրա հավելվածը: Թազման անունը մատենագիրների մոտ հանդիպում է տարբեր վարիանտներով՝ Թամիզան (Միխ. Ասորու մոտ), Թամիկոզան և այլն: Այս անվան ճշգրիտ ընթերցումը հանդիպում ենք Աղվանից Պատմության նույն տեղում, Թազմիոզան ձևով և Թեոփանեսի գրքում (էջ 245) — *Ῥοσμιζαν*: Այս գեներալի մյուս՝ Շահր-Վարազ կամ Շահ-Վարազ անվան մասին մենք խոսել ենք Աղվանից պատմության նույն հավելվածում: Գ. Լերիք Աղվանից պատմության ուսերեն թարգմանության գրախոսականում (Извест. Арх. общ., III, вып. 6, էջ 497) այդ անունը թարգմանում է ֆալաֆների միավորիչ: Որ սույն բառի երկրորդ մասում վարազ-ը նշանակում է վարազ — *вепры* (հայերեն՝ վարազ, հին պարսկերեն յայ նոր պարսկերեն՝ کزک) դա ինչ-որ ձևով հաստատում է նաև Barhebraeus-ը, և մենք դրանում շեղք կատակածում: Ինչ վերաբերում է այդ բառի առաջին մասին, այսինքն՝ Շահ կամ Շահր բառին, ապա մենք այստեղ նույնպես ոչ մի կերպ չենք կարող համաձայնել Գ. Լերիքի հետ: Այդ բառի մեջ մենք տեսնում ենք թագավորի և ոչ քաղաքի նշանակությունը: Khsatra (die Herrschaft, das Reich) բառի մեջ կամ էլ Artaschethre անվան մեջ (տե՛ս Spiegel, die Alt-persischen Keilinschriften, 193), որից ծագում է *عشاه*-ը, ք ստորը շատ զգալի է, չնայած նա այդ անվան հայկական ձևի (Արտաշես) մեջ բաց է թողնվում: Հունական ձևում այն պահպանվել է՝ Artaxerxes. Տե՛ս նաև Ս. Մարտենի՝ *Fragm. d'une Histoire des Arsacides*, II, 256—267, որտեղ հեղինակը բավականին մանրամասն զրադվում է *عشاه* բառի բացատրությունը: «Ռազման»-ի մասին տե՛ս նաև *Macl.*, էջ 61:

352. «Եւ Խոռեմ առեալ զգաւրացն բազմութիւն»: Բոլոր ձեռագրերն ունեն «ԶԽոռեմ», որը ակնհայտ վրիպակ է: Պատկանյանը՝ Խոռեմ, Մալխասյանցը՝ Խոռեմայ: Նախնական բնագրում անշուշտ եղել է «Եւ Խոռեմ», ընդօրինակող գրիչները «Եւ»-ը կարդացել են «Զ» և «Եւ Խոռեմ»-ը դարձրել են «ԶԽոռեմ»: Մենք վերականգնում ենք նախնական ձևը:

353. «Մաւր եղեալ կոտի ընդ մմա»: Բոլոր ձեռագրերը, ինչպես նաև Միհրդատյանն ու Պատկանյանն ունեն այսպես: Սակայն Մալխասյանցը վրիպակաբար տպագրել է «Եղեալ» (փխ. «Եղեալ») և իր վրիպակը չեկատելով՝ տողատակին ծանոթագրել է «Թվի ուղղելի մաւր եղեալ», այսինքն՝ առաջարկել է ուղղել այնպես, ինչպես արդեն ունեն բոլոր ձեռագրերն ու տպագրերը:

354. «Նոմ»-ի բազմութենէ զաւրացն և ի մաւրիցն յաղթութենէ, և զի ոչ ուստե՛ գոյր Եոցա ակնկալութիւն փրկութեան՝ խաւսեցան ի խաղաղութիւն»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն «ի մարտիցն յաղթութիւն»: Մենք ուղղել ենք «ի մարտիցն յաղթութենէ» ըստ օրինակի իրեն նախորդող «ի բազմութենէ զաւրացն» արտահայտության: Հեղինակը հայտնում է, որ Ռուհա քաղաքի պաշտպանները Խոռեմի զորքերի շատությունից և մարտերի մեջ տարած հաղթությունից («ի մարտիցն յաղթութենէ») սարսափած՝ առաջարկում են հաշտություն կնքել:

Ռուսերեն թարգմանիչները «ի բազմութենէ զաւրացն» արտահայտության առջև մտովի ավելացրել են «զարհուրեալ» բառը և թարգմանել են *устрашенные, устрашившись*, առանց որի հնարավոր չէ բնագիրը թարգմանել: Ենթադրվող «զարհուրեալ» բառը հայերեն տեքստի մեջ ներմուծել է նաև Զամինյանը (*Ձամ.*, էջ 123), որն առաջարկում է ամբողջ հատվածը կարգալ այսպես. «Նորա ի բազմութենէ զաւրացն զարհուրեալ և ի մարտիցն յաղթութեան անյոյս լեալ և զի ոչ ուստե՛ գոյր նոցա...»: Այստեղ ներմուծված են նաև «անհույս լեալ» բառերը, որոնք, սակայն, բոլորովին փոխում են նախադասության իմաստը և ընդունելի չեն:

355. «Եղև պատերազմ մեծ ի Դու և յՌդրու»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն «Յորդրու»\*: Բ. Պատկանյանը (*Սարգ.*, էջ 85) ուսերեն թարգմանության մեջ տեղանվան ուղիղ ձևը համարել է «Որդրու»-ն: Այդպես է վարվել նաև Մակիերը (*Macl.*, էջ 62): Մենք նույնպես հետևում ենք նրանց ուղղագրությանը:

Դու և Որդրու գյուղերը գտնվում էին Բասենում (Այրարատյան նահանգ), Կարինից հյուսիս-արևելք: Որդրուն Որդունյաց տան կենտրոնն էր: Այժմ գոյություն չունի: «Դուն մինչև այժմ էլ գոյություն ունի, թուրքական հնչմամբ կոչվում է Թյու, Դեվեթյոյսու լիւան ստորոտին» (*Մալխ.*, էջ 164):

356. «Ընդդիմացան ի ներխուտ ինչ. և ոչ սակաւ լիներ կոտորածն»: Զամինյանը (*Ձամ.*, էջ 123) սրբագրում է «ընդդիմացան ի ներքուստ և ոչ սակաւ ինչ լինէր կոտորածն»:

357. «Ապա յառաջ մատուցեալ Թէոդոս կայսրն սանլով, եթէ «Եւ եմ, ասէ, քազաւո՛ւն ձեր»: № 2639 ձեռագրում և նրանից արտագրված Բ, Գ ձեռագրերում «Եւ եմ» արտահայտությունը

\* Ստ. Մալխասյանցի մոտ սա տպագրական վրիպակ է, որը գրանցված է վրիպակներից ցանկում:

բացակայում է: Միհրդատյանի և Պատկանյանի օգտագործած ձեռագրերում այդ արտահայտութիւնը եղել է, սակայն Պատկանյանի ձեռագրում բացակայել է նրա կողքին գտնվող «ասէ» բառը: Մալխասյանցը կարծելով, որ № 2639 և մյուս ձեռագրերում գտնվող «ասէ» բառը «ես եմ» բառի աղավաղված ձևն է՝ ջնջել է «ասէ»-ն և դարձրել «ես եմ»: Իրականում, սակայն, նախնական բնագրում գտնվել են և «ասէ» և «ես եմ»: Մենք վերականգնում ենք այդ երկու ձևն էլ, որոնք պահպանվել են Միհրդատյանի հրատարակութիւնում: Ստացվում է այսպես. «Ապս. յառաջ մատուցեալ Թէոդոս կայսրն ասելով, եթէ «ես եմ, ասէ, թագաւորն ձեր»։ Այստեղ մեր ընդգծած «ասելով» և «ասէ» բառերը կարող են ստեղծել այն սովավորութիւնը, թէ երկրորդ «ասէ»-ն ավելորդ է: Հավանաբար այսպես է կարծել նաև Մալխասյանցը, որը ջնջել է «ասէ»-ն: Սակայն իրականում «ասէ»-ն ավելորդ չէ: Սեբեոսի Պատմութիւն» հեղինակի խոսեցածն է այդպես: Նման օրինակներ կարելի է բերել նաև այլ մատենագիրներից: Հենց Սեբեոսի Պատմութիւնը» կից Անանունի հատվածում երեք անգամ կողք-կողքի կրկնված են միևնույն բառերը. «Եւ նա ասաց ինձ. «Ասեն, ասէ, դուսանք և ի մերում աշխարհին յերգս իւրեանց» (ՍԵՊ, էջ 12):

358. «Գնաց և կալա զգաղաքն Հաշտենից՝ զՊիթառին»: Ձեռագրերն ունեն «զիթառին»: Այստեղ գ-ն նախդիր է, իսկ Պիթառին-ի առաջին տառը՝ Ձ-ն բաց է թողնված: Մալխասյանցը վերականգնել է տեղանունը և ուղղել է «զՄիթառին»: Միհրդատյանը և Պատկանյանն ունեն «Ձիթառին» (առանց «զ» նախդրի):

Տեղանվան կապակցութիւնը Մալխասյանցը գրում է. «Ուղղագույն ձևը թվում է «Կիթառին»: Տե՛ս նորայր, Տեղեկ., եր. 26, ծանոթ.» (ՍԵՊ, էջ 78) Ասողիկը նույնպես ունի «Կիթառին» («զԿիթառին քաղաք Հաշտենից»: Հմմտ. «Հ. ամս.», 1969, էջ 343, ծ. 55): Ն. Ակիւնյանը նույնպես Պիթառինը սրբագրում է Կիթառին («Հ. ամս.», 1969, էջ 343):

Այս փաստերի հիման վրա կարելի էր իսկապես «Ձիթառինը» դարձնել «Կիթառին», սակայն Միհրդատյանը սպառնալով լինելով «Ձիթառին» ձեռով՝ մեզ հուշում է այն միտքը, որ նրա օգտագործած հնագույն ձեռագրում եղել է Պիթառին:

Ձիթառիճի (հունարեն՝ Κιταριζων) և «-առին» («առին») վերջավորութիւնն ունեցող նման այլ տեղանունների մասին տե՛ս Յ. Մարկվարտի «Eranšahr», էջ 240 և «Պարսկահայր նահանգը» (գերմաներենից թարգմանեց Գ. Վ. Արզարյան: Տպվ. «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2, էջ 216—218):

359. «Ապա եկն Շահենն Պատգոսապան»: Բ. Պատկանյանը (ՍԵՊ, էջ 105, ծ. 173) գրում է. «Chron. Alex.-ուժ, էջ 387, այս դրավարչին տրվում է Babmanzadago տիտղոսը. Σάγν ὁ ἐνδοξότατος Βαβμανζαδαγ» Մեզ թվում է՝ այս տիտղոսն աղճատումն է Սեբեոսի մոտ հանդիպող Պատգոսապանի»: Պատգոսապանի և Շահը վարազի (Ֆարուկան, Ռոմեզան) մասին տե՛ս նաև «Tabari», էջ 151—153, 290—292 և A. Christensen, L'Iran sous les Sassanides, էջ 448):

360. «Եւ զանց արարեալ»: Պատմիչը գրում է. «Եւ զանց արարեալ զԿարնոյ քաղաքան»: Ք. Պատկանյանը թարգմանել է «миновав город Карин» (ՍԵՊ, էջ 86), սակայն «քաղաքան» արտահայտությունը ցույց է տալիս, որ պատմիչը գրել է «անցնելով (անցնում կատարելով) Կարին քաղաքով»: Մալխասյանցը թարգմանել է «направился в сторону Карина», որը նույնպես ճիշտ թարգմանություն չէ:

361. «ԶԿարնոյ քաղաքան. և»: Միհրդատյանի հրատարակության մեջ «և» շաղկապից առաջ միջակետ չկա, որի հետևանքով ստացվում է այնպես, թէ Շահեն պատգոսապանն անցել է Կարինով և Դվինով («զանց արարեալ զԿարնոյ քաղաքան և յոստանն Դրնայ»): Այնինչ՝ հեղինակը Դվինի անունը հիշատակել է ոչ թե Շահեն պատգոսապանի, այլ Շահրայեանյանի կապակցութիւնը, հայտնելով, որ վերջինս մարդկանի պաշտոնով եղել է Դվին, այսպես. «Ապա եկն Շահէնն Պատգոսապան և զանց արարեալ զԿարնոյ քաղաքան. և յոստանն Դրնայ եկն մարդպանութեանն Շահրայեանյան»:

Բնագիրն այսպես ճիշտ է վերծանել և Դվինը Կարինից ստորակետով բաժանել է առաջին անգամ Ք. Պատկանյանը (Պատկ., էջ 77): Նրան հետեւել են նաև Հյուբշմանը («Արմ. Gramm., հ. 1, էջ 59»), Յ. Մակիբը (Մաժ., էջ 63) և Ստ. Մալխասյանցը: Վերջինիս ուշագրությունից վրիպել է Պատկանյանի ճիշտ վերծանությունը, ուստի նա նշել է միայն այդ վերծանությունը նախորդած բառերին սխալ թարգմանությունը (ՍԵՊ, էջ 189, ծ. 54): Սակայն հայտնի է, որ Պատկանյանը ուռեւերեն թարգմանությունը հրատարակել է ավելի վաղ, քան հայերեն բնագիրը և բազմաթիվ տեղերում ուղղել ու ճշգրտել է Միհրդատյանի հրատարակությունը: Այդ ճշգրտումներից մեկն էլ մեզ հետաքրքրող հատվածն է:

362. «Յոստանն Դրնայ»: «Ոստան» բառը Մալխասյանցն այսպես է բացատրում. «Հավա-

նարար իրանական ծագում ունեցող բառ է: Սկզբում ուստան էին կոչվում Արշակունի թագավորներին պատկանող հողերը կամ քաղաքները, ի տարբերություն նախարարական հողերի կամ քաղաքների: Արշակունյաց թագավորության ավարտից հետո սկսեցին ուստան կոչվել առանձին նախարարների ղեկիղենցիաները, զլխավոր քաղաքները, այնպես որ գոյություն ունեին Վասպուրականի, Արծրունյաց, Ուշտունյաց, Բագրատունյաց և այլ ուստաններ: Ուշտունյաց—ը ժամանակի ընթացքում դարձավ հատուկ անուն: Սերեոսի մոտ Ուստանը, առանց քաղաքի հատուկ անվան, գործածվում է նշելու համար գերազանցապես ղեկիղենցիա հանդիսացող Դվինը, որովհետև սա Հայաստանի պարսկական մասի մարզպանների գտնվելու տեղն էր»:

363. «Եկն մարզպանութեանն Շահրայեանպետ»: Հյուբըմանը («Arm. Gramm.», I, էջ 59) հայտնում է, որ «այեանպետ» վերջավորություն ունեցող բարդ բառերը ցույց են տալիս տիտղոս և ոչ թե անուն: Հետևաբար՝ «շահրայեանպետ»-ը ոչ թե մարզպանի անունն է, այլ նրա տիտղոսը: Այս բառը Հյուբըմանը (նույն տեղում) ստուգաբանում է «շահր» (=երկիր, նահանգ), «այեան» (=կանոն, կանոնավորել, կարգավորել, ղեկավարել) և «պետ» (=պետ) բառերից:

364. «Սպանին զնա հանդէպ դրանն քաղաքին ի վերայ փայտի»: Ք. Պատկանյանը (Պատկ., էջ 86) և Մալխասյանը (Մալխ., էջ 69) սուպանին ի վերայ փայտին արտահայտությունը թարգմանել են բառացի («умертвил его на древе»: Մալխասյանը (Մալխ., էջ 65) թարգմանել է իմաստը՝ «le crucifiérent» («խաչեցին»):

365. «Զաւրն Պարսից ռըրայր զնա վանն քաջաբեան և արիութեան, և մանուկ ուծող և քարձրահասակ»: Այստեղ «և մանուկ ուծող և քարձրահասակ» արտահայտությունը քերականորեն այնքան էլ լավ չի շաղկապվում իրեն նախորդող նախադասությանը, ուստի Զամինյանը (Զամ., էջ 124) «արիութեան» բառից հետո ենթադրում է բնագրի կորուստ: Սակայն, մեր կարծիքով, կորուստ չկա, այլ՝ պարզապես հեղինակը հաջող չի արտահայտվել: Նա կամեցել է ասել, որ Արծրունյաց նահապետ Սահակ Արծրունու որդուն՝ Վասակ Արծրունուն սպանելուց հետո պարսից զորքը ողբում էր նրա կորուստը «վանն քաջութեան և արիութեան»: Սրանից հետո նա կամեցել է նաև հայտնել, որ Վասակն էր «մանուկ ուծող և քարձրահասակ», բայց չի կարողացել քերականորեն կանոնավոր շարադրել իր միտքը:

366. «Այսպէս և սա»: Այս արտահայտությունը թարգմանիչներից յուրաքանչյուրը հասկացել է յուրովի: Պատկանյանը (Պատկ., էջ 87) թարգմանել է. «так было с ним»: Մալխասյանը (Մալխ., էջ 69)—«так погиб и он»: Զամինյանը (Զամ., էջ 124) նույնպես արտահայտությունը վերագրել է Վասակ Արծրունու սպանությանը և առաջարկել է տեքստը լրացնել «վճարէր» բառով՝ «այսպէս և սա վճարէր»: Մեր կարծիքով, սակայն, պատմիչը պարզապես ցանկացել է ասել, որ այսպիսով ավարտվեց նաև իր Պատմության տվյալ հատվածը:

367. «Խոսրով ԻԲ, Երակղոս զառաջինն»: Ն. Ակիկյանը իրավամբ ենթադրում է, որ սույն քառերը, որոնք «Սերեոսի Պատմության» բոլոր ձեռագրերում և տպագիր հրատարակություններում ընկալված են որպես հեղինակի կողմից գրված խորագիր, հեղինակինը շնն և պատկանում են ընդօրինակող գրիչներին կամ ծանոթագրողներին: ԾՅԵ հեղինակն ինքը կամենար որևէ կերպ նշանակվորել Հերակլի մուտքն իր Պատմության մեջ՝ կգտներ մի հարմար եզանակ (ինչպես որ գտել է Խոսրով Այրվելզի մուտքը նշելիս) և ոչ թե կբավարարվեր միայն նշելով, թե Խոսրովի 22-րդ տարին՝ համընկնում է Հերակլի 1-ին տարվան. «Խոսրով ԻԲ, Երակղոս զառաջինն»: Սա լուսանցագրության տպավորություն է թողնում: Հավանաբար՝ ծանոթագրողներից մեկը «Սերեոսի Պատմության» մեջ կարգալով այն մասին, որ Խոսրովի թագավորության 22-րդ տարում Հերակլի հայրն սպանում է Փոկասին և թագավոր նստեցնում Հերակլին («յամի քսաներորդի երկրորդի թագաւորութեանն Խոսրովայ... նստոյց զՀերակղոս զորդի իւր յաթոռ թագաւորութեանն») նպատակահարմար է գտել՝ այդ տվյալների համաձայն՝ լուսանցքում գրել «Խոսրով ԻԲ, Երակղոս՝ զառաջինն»: Սրանով նա ցանկացել է ընթերցողին օգնել՝ հեշտությամբ գտնելու Հերակլի գահակալման թվականը տեքստում: Հավանաբար՝ այդ միևնույն ծանոթագրողն է ավելացրել նաև «Սերեոսի Պատմության» մեջ հանդիպող մյուս բոլոր վերնագրերը (ընդամենը մի քան վերնագիր), որոնք նույնպես, ինչպես երևում է, սկզբում եղել են լուսանցագրությունների և տեքստի մեջ են ներմտծվել հետագայում:

Ինչորո առարկա վերնագրի մասին տե՛ս նաև մեր հոդվածը. «Դարձյալ Սերեոսի մասին» («Բանբեր Մատենադարանի», № 19, 1971, էջ 461—462):

368. «Նւ եղև իբրև քագաւորեաց Հերակղոս՝ արձակեաց հրեշտակս մեծապէս զանձիւ և հրովարտակաւ առ արքայ Խոսրով՝ խնդրել զխաղաղութիւն մեծաւ յափանձանաւ»: Թովմա Արծրունին Հերակլի նամակի այս բառերը «Սերեոսի Պատմությունից» արտագրելուց հետո բերում է միայն նամակի հետևյալ բառերը, որոնք այդ Պատմությունը շունի. «Ասէ (Հերակլը—Ք. Ա.) զլրեժ արեանն

Մուրկայ առի ի թշնամույ նորա. արդ կամ էղիցի քեզ առնել ընդ իս խաղաղութիւն և արգելով զսուր քո ի երկրէ իմմէ: Սրանից հետո դարձյալ բառացի արտագրում է նամակի շարունակութիւնը «Սեբեոսի Պատմութիւնից»: Սրանով նա թելադրում է մտածել, որ նամակի՝ «Սեբեոսի Պատմութիւնից» բացակայող մասը նույնպէս ինքը արտագրել է այդ Պատմութիւնից: Այլապէս՝ անիմատ կլինէր նամակի մեջ ներմուծել մի հատված, որը բովանդակութեամբ էական ոչինչ չի ավելացնում «Սեբեոսի Պատմութիւնում ասվածի վրա: Մ. Գրիգորյանը («Շ. ամս.», 1968, էջ 281—282, նաև «Շ. ամս.», 1971, էջ 47—49) համոզիչ փաստարկներով հիմնավորում է Արծրունու հատվածը «Սեբեոսի Պատմութիւն» մեջ ներմուծելու իր առաջարկը: Բայց մենք չկասկածելով հանդերձ այն մասին, որ Արծրունու հատվածը քաղված է «Սեբեոսի Պատմութիւն» նախնական բնագրից, չենք կարող Արծրունու գրածը ներմուծել այդ Պատմութիւն մեջ, որովհետև չգիտենք, թե որքան հարազատութեամբ է Արծրունին արտագրել իր աղբյուրը: Եթե նա բառեր է փոփոխել, ապա այդ փոփոխութիւնները «Սեբեոսի Պատմութիւն» մեջ կներմուծեն օտար տարրեր: Իսկ որ Արծրունին կարող էր արտագրելիս փոփոխած լինել աղբյուրը՝ դա երևում է այն հատվածներից, որոնք նախորդում և հաջորդում են ներմուծվող հատվածին: Ահա դրանք.

«Սեբեոսի Պատմութիւն»

(ՄեՊ, էջ 58)

արձանկեաց հրեշտակս մեծապէս զանձիւք և հրովարտակօք առ արքայ խոսորով՝ խնդրել զխաղաղութիւն մեծաւ թախանձանօք: Որում ոչինչ կամեցաւ լսել արեւայ խոսորով ասելով. «Իմ է թագաւորութիւնն այն, և ես զԹէոդոս գորդին Մարկայ նստուցի թագաւոր»:

Թ. Արծրունի

(Թիֆլիս, 1917, էջ 152—153)

առաւեկեաց հրեշտակս մեծապէս զանձիւք և հրովարտակօք առ արքայ խոսորով, խնդրել ի մեմանէ զխաղաղութիւն մեծաւ թախանձանօք... Որում ոչ կամեցեալ լսել խոսորովայ ասէ. «Իմ է թագաւորութիւնն այն, և ես գորդին Մուրկայ նստուցի թագաւոր»:

Ընդգծված բառերի դեպքում Արծրունին փոփոխել է իր օգտագործած աղբյուրը: Ուրեմն, հնարավոր է, որ նա փոփոխած լինէր նաև այն հատվածը, որը չի պահպանվել «Սեբեոսի Պատմութիւն» մեջ հասած ձևադրերում:

Արծրունու հատվածում հայտնվում է, որ Փոկասին սպանել է Հերակլը, այնինչ՝ «Սեբեոսի Պատմութիւն» հեղինակն սպանող է համարում Հերակլի հորը: Ուրեմն, եթե Արծրունու հատվածը ներմուծենք «Սեբեոսի Պատմութիւն» մեջ, կստացվի այնպէս, որ «Սեբեոսի Պատմութիւն» հեղինակը երեք տող հետ փոխում է իր միտքը և այս անգամ հայտնում, որ Փոկասին սպանողը Հերակլն է (և ոչ՝ հայրը): Սա անսպասելի շրջադարձ է, որը հազիվ թե տեղի ունենար նույնիսկ այն դեպքում, եթե «Սեբեոսի Պատմութիւն» հեղինակն իմանար, որ Հերակլը «գործոն դեր ունեցավ Փոկասի սպանութիւն մեջ» («Շ. ամս.», 1971, էջ 49):

«Սեբեոսի Պատմութիւն» մեջ Հերակլն ինքն ասում է, որ Փոկասին սպանողն իր հայրն է. «զբքն արեան Մարկայ... խնդրեաց Աստուած... ի ձեռն Կօր իմոյ»:

Սրան հակառակ, Արծրունու հատվածում Հերակլն ասում է, որ վրիժառուն եղել է ինքը. «զվրէժ արեան Մուրկայ առի»: Ինչպէս երևում է, Արծրունին «Սեբեոսի Պատմութիւնն» արտագրելիս փոփոխել է նրան, որով և մեզ գրկում է իր հատվածն այժմ «Սեբեոսի Պատմութիւն» մեջ ներմուծելու վճռականութիւնից:

369. «Որում ոչինչ կամեցաւ լսել արեւայ խոսորով ասելով. «Իմ է թագաւորութիւնն այն, և ես զԹէոդոս գորդին Մարկայ նստուցի թագաւոր»: Հերակլ կայսրը ցանկանում է հաշտութիւն և խաղաղութիւն պայմանագիր կնքել խոսորով Ապրվեզի հետ: Այդ նպատակով նա դեսպանութիւն է ուղարկում պարսից թագավորի մոտ: Վերջինս, սակայն, մերժում է Հերակլի պահանջը, որովհետև նրան թագավոր չէր ճանաչում և կամենում էր թագավոր նստեցնել «զԹէոդոս գորդին Մարկայ»:

Մեզ հասած տեքստի համաձայն՝ խոսորովը Թէոդոսին ասում է, որ ինքը Թեոդոսին արդեն թագավոր է կարգել («նստուցի թագաւոր»), բայց քանի որ ուրիշ աղբյուրներից հայտնի չէ, թե պարսից արքան երբևէ Թէոդոսին թագավոր է կարգել, ուստի Ա. Զամիչյանը (Զամ., էջ 126) գտնում է, որ «Սեբեոսի Պատմութիւն» նախնական տեքստում պետք է եղած լինի ոչ թե «նստուցի», այլ՝ «նստուցից», այսինքն՝ խոսորով արքան Թէոդոսին ոչ թե արդեն նստեցրել է, այլ պատրաստվել է նստեցնել թագավոր: Սա շատ հավանական ենթադրութիւն է, սակայն մենք տեքստը չենք սրբագրում, որովհետև սրբագրելու համար անհրաժեշտ է ավելի շոշափելի հիմք:

370. «Զմեք գանձն մեզ ընծայս նստուցանէ»: Այս խոսքերից հետո Թ. Արծրունու երկում կարդում ենք նամակի հետևյալ բառերը, որոնք «Սեբեոսի Պատմութիւն» մեջ հասած տեքստում չեն պահպանվել. «ոչ գիտելով եթէ համարս խնդրեցից զանձիս այսմիկ»: Մ. Գրիգորյանը («Շ.



ամս.», 1968, էջ 281, հմմտ. նաև «Հ. ամս.», 1971, էջ 49) իրավամբ գրում է. «Կարելի է եզրակացնել, թե զրչագրին անուշադրության հետևանքով խնդրո առարկա նախադասությունը կորուսյալ են»: Այսուհանդերձ՝ Արծրունու պահպանած նախադասությունը շենք կարող ներմուծել «Սեբեոսի Պատմության» մեջ, որովհետև շղիտենք, թե Արծրունին որքան հարազատությամբ է օգտվել իր աղբյուրից:

Ք. Պատկանյանը «Սեբեոսի Պատմությանը» զուգահեռ հրատարակել է Արծրունու բոլոր այն հատվածները, որոնք քաղված են «Սեբեոսի Պատմությունից»: Նա (և ուրիշներ) Արծրունու հիման վրա վերականգնել է «Սեբեոսի Պատմության» այս կամ այն բառը, բայց քանի որ Արծրունին իր աղբյուրն արտագրելիս երբեմն փոփոխություններ է մտցրել արտագրածի մեջ, բանասերները շին համարձակվել ընդարձակ ներմուծումներ կատարել Արծրունուց «Սեբեոսի Պատմության» տեքստում:

Արծրունին «Սեբեոսի Պատմությունից» է քաղել նաև մի քանի այլ անպիսի տեղեկություններ (նրանց շարքում՝ նաև հենց մեզ հետաքրքրող արտահայտության հետ անմիջապես կապվող «ոչ գիտես, եթե վաղիս համարս տալոց ևս»—Պատկանյանի զուգահեռ հրատարակության էջ 160), որոնք բացակայում են ներկա «Սեբեոսի Պատմությունից», սակայն դրանք նույնպես մենք շենք կարող ներմուծել, որովհետև ընդարձակ ներմուծումները միշտ էլ հղի են բնագիրն աղավաղելու վտանգով: Գիտական ուսումնասիրություններում մասնագետները կարող են «Սեբեոսի Պատմության» վերաբերյալ իրենց տեղեկությունները լրացնել՝ քաղելով Արծրունուց, սակայն հրատարակիչները շին կարող միևնույն կերպ վարվել:

371. «Յայնժամ գումարեալ Երակի զգարս իւր՝ բանակեցում շուրջ զՖաղաբաւն»: Այս բաներից հետո Զամինացը (Զամ., էջ 126) ավելացնում է «Կեսարիա Կապադովկացոց» բառերը, բրոնցով ցանկանում է ասել, որ Հերակլի գործերը բանակ են դրել Կապադովկիայի Կեսարիա քաղաքի շուրջ: Մակեբրը (Macl., 65) անկյունավոր փակագծերի մեջ ավելացրել է Césarée?

372. «գումարել զգարն ի ձեռն Կուրատորի ուրումն»: Մակեբրը (Macl., էջ 65, ծ. 3) վկայակոչելով Muralt-ի համապատասխան աշխատությունը (Eduard de Muralt, Essai de Chronographie Byzantine 1057—1453. Bale et Genève, 1871, էջ 271) հայտնում է, որ «Սեբեոսի Պատմությունում» հիշատակված կուրատորը պետք է լինի Priscus-ը:

373. «Եւ ինքն գնացեալ միայնար ի զարն Խոռեմայ, որ էր ի Պիսիդացոց կողմանէ»: Որևէ այլ աղբյուրից հայտնի չէ, թե Խոռեմի զորքը երբևէ գտնված լինի Պիսիդիայում, ուստի Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 282 և «Հ. ամս.», 1971, էջ 50) ենթադրում է, թե «Սեբեոսի Պատմության» նախնական բնագրում «Պիսիդացոց»-ի փոխարեն եղել է «Պաղեստինացոց»: Տրամաբանական ենթադրություն է, սակայն, հայտնի է նաև, որ հայ մատենագիրները երբեմն շփոթում են Պիսիդացվոց և Պաղեստինացվոց կողմերը (տե՛ս ծ. 146), ուստի հաստատ շենք կարող ասել, թե սխալվողն անպայման գրիչներն են և ոչ՝ հեղինակը: Հնարավոր է նաև, որ հեղինակին հայտնի եղած լինի նաև Խոռեմի՝ հենց Պիսիդացոց կողմերում գտնված լինելու մասին մի աղբյուր, որի հիման վրա էլ նա գրել է «որ էր ի Պիսիդացոց կողմանէ»:

Մ. Գրիգորյանը վկայակոչում է «Սեբեոսի Պատմությունից» մի հատված, որից իմացվում է, որ Խոռեմի զորքը իսկապես գտնվել է Պաղեստինի կողմերում («Յայնժամ զարն արքային Պարսից նստէր ի Կեսարիա Պաղեստինացոց»), բայց պետք է նկատի ունենալ, որ տվյալ տեղեկությունը վերաբերում է Խոսրովի թագավորության 25-րդ տարվան. այնինչ՝ «Պիսիդացոց» բառը պարունակող հատվածը վերաբերում է Խոսրովի 23-րդ տարվան (երկու տարվա ընթացքում Խոռեմի զորքը կարող էր Պիսիդիայից տեղափոխված լինել Պաղեստին):

Խոռեմի զորքի՝ Պիսիդացվոց կողմերում գտնված լինելու մասին է հուշում կարծես թե նաև պատգոսապան Շահենի երթուղին: Պարսից թագավորը Շահենին կանչում է իր մոտ և հրամայում գնալ արևմուտք: «Երթալ անդրէն ընդ արևմուտս» (ՍեՊ, էջ 80): Շահենը գնում է նախ Կարին, ապա՝ Մելիտինե, որից հետո ճանապարհը շարունակելով հասնում է Խոռեմի զորքին. «գնացեալ միանայր ի զարն Խոռեմայ, որ էր ի Պիսիդացոց կողմանէ» (նույն տեղում): Եթե հետևենք Շահենի անցած այս ճանապարհի ուղղությանը (Կարին—Մելիտինե—ընդ արևմուտս) կտեսնենք, որ պարսից զորավարը ճանապարհն այդ ուղղությամբ դեպի արևմուտք շարունակելով կարող էր հասնել ավելի շուտ Պիսիդիա, քան Պաղեստին: Ուրեմն՝ «Պիսիդացոց» բառը «Պաղեստինացոց»-ով սրբագրելու համար բավարար հիմքեր չկան:

374. «Եւ յոստանն Դրւնայ»: «Սեբեոսի Պատմության» առաջին, երկրորդ և երրորդ հրատարակություններում «Եւ յոստանն Դրւնայ» բառերը սխալմամբ միացվել են իրենց նախորդող «որ էր ի Պիսիդացոց կողմանէ» բառերին և տպավորություն են տակադրել, թե Խոռեմը գտնվել է ոչ միայն Պիսիդացվոց կողմերում, այլև Դվինում: Այս սխալը թափանցել է նաև Պատկանյանի

ուսերեն և Մակեդի ֆրանսերեն թարգմանությունների մեջ: Վրիպակը նկատել է շ. Հյուբշմանը (. Arm. Gramm., I, էջ 59), որ Գվինը վերջակետով անջատել է Պիսիդիայից և թարգմանել է այսպես. „In das Ostan von Dvin kamm statt des Šahrayanpet der Perseanpet“, այսինքն՝ այնպես, ինչպես գրաբարն է. «յոստանն Դրնայ եկն փոխանակ Շահրայինպետի Պարսեանպետ»: Ստ. Մալխասյանցը նույնպես նկատել է ուղղել է վրիպակը:

375. «Եկն փոխանակ Շահրայինպետի՝ Պարսեանպետ Պարշրնազգատ»: Հյուբշմանը («Arm. Gramm.», էջ 59) հայտնում է, որ «-այինպետ» վերջավորություն ունեցող բառերը ոչ թե հատուկ անուններ են, այլ տիտղոսներ: Ըստ այսմ էլ նա առաջարկում է «Պարսեանպետ» բառը «Շահրայինպետ» բառի նմանությամբ սրբագրել «պարսա.ենպետ»: Նրա բացատրությամբ «շահրայինպետ»-ը բխում է «շահր», իսկ «պարսայինպետ»՝ «պարս» (Persis «պարսիկ») բառերից: Պարշրնազգատ անվան կապակցությամբ Հյուբշմանը (նույն տեղում, էջ 67) գրում է. «Պարշրնազգատը անունն է պարսկական մի գեներալի՝ Խոսրով II-ի օրոք: Paršənaz+ dat = հին պարսկ. data (= ատրված)... որը կցվում է պարսայինպետի տիտղոսին»:

376. «Նամդար Վշնասպ»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն «Նամդարուն Ծեռապա»: Վրիպակը 1879 թվականին նկատել է Թ. Նյուդեկեն և առաջարկել է ուղղել «Նամդար Վշնասպ» («Tabari», էջ 388, ծան. 1): Մենք հետևում ենք Նյուդեկեի սրբագրությանը, որը 1968 թ. կրկնել են նաև Մ. Գրիգորյանը («Հ. ամս., 1968, էջ 284—285») և Ն. Ակիսյանը («Հ. ամս.», 1969, էջ 344):

Տաբարին հայտնում է, որ Նամդար Վշնասպը որդին էր Ասորշնասպի և զորավարն էր Նիմրոզի, Խոսրով Ապրվելի օրոք (հմմտ. Tabari, էջ 388, F. Justi, Iranisches Namenbuch, Marburg, 1895, էջ 220, H. Hübschmann, Arm. Gramm., I, էջ 56, MacI., էջ 66): «Նամդար» պարսկերեն բառ է և նշանակում է «ականավոր», «հայտնի», «հռչակված» (Junker-Alavi, Persisch-Deutsches Wörterbuch, էջ 795, տե՛ս «Հ. ամս.», 1968, էջ 284, ծ. 173), ուրեմն՝ «Նամդար Վշնասպ» նշանակում է «Հռչակավոր Վշնասպ» (տե՛ս Justi, Iranisches Namenbuch, էջ 220):

«Վշնասպ» անվանաձևը պարսկերեն Gušnasp անվան հայերեն տառադարձությունն է, այդ իսկ պատճառով էլ Նյուդեկեն Տաբարիի Gušnasp-ի դիմաց առաջարկել է հայերեն «Վշնասպ» ձևը, որը հանդիպում է նաև հայ ուրիշ հեղինակների (Ղազար Փարպեցի) երկերում:

377. «Շահրապղպան»: Այս պարսկական զորավարի անունը Թեոփանեսը (էջ 475 են) հաղորդում է Տαραβλαγῆς անվ (հմմտ. MacI., էջ 66, ծ. 5):

378. «Ըռոն Վեհան»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն «ձռոն Վեհան»: «ձռոն»-ը աղավաղումն է սկզբնական բնագրում եղած «Ըռոն» ձևի: Գրիչներն անվան սկզբի «Ը»-ն կարդացել են «Ճ» և աղավաղել բնագիրը:

«Սեբեոսի Պատմության» ձեռագրերը սովորություն ունեն «Ռ» տառով սկսվող անուններից առաջ ավելացնել «Ը» ձայնավորը: Այսպես օրինակ, կարդում ենք «Ըռաբովթ» (ՍեՊ, էջ 106), Ըռամիկողան (էջ 83): Այդպես էլ գրված է եղել «Ըռոն Վեհան», որը մեզ հասել է «Ճռոն Վեհան» ձևով: Որ պարսից զորավարի անունը «Սեբեոսի Պատմության հեղինակին հայտնի է եղել Ռոն (և ոչ՝ Ճռոն») ձևով՝ այդ մասին են վկայում նաև երկու այլ հատվածներում հիշատակվող Ռոնիկ և Ռոն ձևերը:

Միակերպություն ստեղծելու համար կարելի է ամենուրեք անունը տպագրել կա՛մ միայն Ռոն, կա՛մ էլ միայն Ըռոն ձևով, բայց հաստատ չգիտենք, թե հեղինակն ինքը ո՞ր ձևով է գրել, ուստի չենք փոփոխում ձեռագրերում հանդիպող տարբեր ձևերը (Ռոն, Ըռոն):

Առաջինը Պատկանյանն է (Պատկ., էջ 201) նկատել «Ճռոն» ձևի սխալ լինելը, հետևյալ ծանոթագրության մեջ. «Ռոնիկ Վեհան, Ճռոն Վեհան, Ռոնվեհ: Ուղղագրւնն Ռոնվեհ թուի լինել, զի այլ ձև մականունն Ռուբրիհան յիշատակի ի Միքայելէ Ասորոյ և ի յոյն պատմագրաց: Ռոնվեհ, պարսկերեն ԺձյՅ, զայր յաշողակ նշանակէ: Իրոն նախկին պահլավկաց ձևն է յՅ) բառիս, որ է ար կամ լոյս»:

Հյուբշմանը նույնպես ճիշտ է համարել Ռոն Վեհան ձևը և առաջարկել է սրբագրել «Ճռոն Վեհան»-ը: Նա հայտնում է, որ պարսից զորավարի իսկական անունը եղել է Rāh-zād (Թեոփանեսը գրում է՝ Ραζάτις), իսկ Rōzbihān-ը (հայերեն՝ Ռոն Վեհան), որը նշանակում է «երջանիկ», հանդիսացել է զորավարի պատմավոր մականունը, որը նա ստացել է Ասորեստանում տարած հաղթանակի համար: Nöideke, Tabari, էջ 294, ծ. 3: Ն. Ադոնցը («Քննություն Մովսեսի Կաղանկատվացու», «Անահիտ», Փարիզ, 1939, հունիս-դեկտեմբեր, էջ 27) «Ռոնվեհ»-ը թարգմանում է «լավօրյա», որը բառացի թարգմանությունն է պարսկերենի «ռոզբեհ» բառի:

Ա. Զամինյանը (Զամ., էջ 127) նույնպես նկատել է «ձոռձ Վեհան»-ի սխալ լինելը և առաջարկել սրբագրել «Ռօժիհեհան»:

379. «Հրաման թագաւորին հասաւ. մեծաւ վառակաւ ստիպել զգաւս իւր հասանել զհետ նորա և անխշատակ ի միջոյ ի բաց բառնալ զգաւրն»: Այս հատվածում հայտնի չէ, թե խոսքը ո՞ր թագավորի և ո՞ր հակառակորդ զորքերի մասին է: Հնդհանուր բովանդակությունից կարելի է կռահել, որ հեղինակը նկատի ունի պարսից խոսրով թագավորին և նրա հակառակորդ հունաց զորքին: Այսպես կռահելով՝ Զամինյանը (Զամ., էջ 128) առաջարկում է հատվածը սրբագրել «Հրաման թագաւորին խոսրովայ հասանէր, մեծաւ վտանգաւ ստիպել զգաւս իւր հասանել զհետ նորա և անխշատակ ի միջոյ ի բաց բառնալ զգաւրն Յունաց»:

380. «Ի նմին ժամաւ ի գիշերին գնացեալ ի վերայ Փիլիպպոսի ի Նիզ գաւառի»: «Ի վերայ» արտահայտությունը կապակցությունը Մալխասյանցը գրում է. «Բառը ավելորդ է թվում: Այս բառը առիթ է եղել սխալ թարգմանության: Պատկանյանը այստեղ թարգմանել է (եր. 89). «Но вдруг, в ту же ночь, они напали на Филиппика, в области Ниг, (но тот) обоидя гору Арагац... Հոգնած՝ պարտասած Պարսից զորքը, որ բանակ էր դրել Երասխի ափերին՝ անկարող էր հենց նույն գիշերը հարձակվել Փիլիպպիկոսի վրա Նիզ գավառում, Ապարանում (ամենաքերը 60 կիլոմետր տարածություն անցնելով), մանավանդ որ Փիլիպպիկոսը Վաղարշապատի դաշտում էր գտնվում և ոչ Նիզ գավառում: Ուղիղ իմաստն այս է: Երբ Պարսիկները բանակում էին Երասխի ափերին, պատրաստվելով հաջորդ օրը պատերազմ սկսել Փիլիպպիկոսի հետ, որ գտնվում էր Վաղարշապատի դաշտում՝ Փիլիպպիկոսը հենց նույն գիշերը փախչում է Նիզ գավառի կողմով (այսինքն՝ շարունակ հեռանալով Պարսիկներից), և Արագած լեռան թիկունքով ընկնում է Շիրակ: Պարսիկները չեն կարողանում նրան հետապնդել, որովհետև զորքը վաստակաբեկ էր եղած: Հատվածը պետք է ուղղել այսպես. «Ե ի նմին գիշերի գնացեալ Փիլիպպոսի ի Նիզ գաւառ» են.»:

Մալխասյանցը, անշուշտ, իրավացի է, երբ գտնում է, որ պարսից զորքն «անկարող էր հենց նույն գիշերը հարձակվել Փիլիպպիկոսի վրա», սակայն սա միայն տրամաբանական փաստարկ է: Հեղինակն ունի ավելի որոշակի նշաններ, որոնք ցույց են տալիս, որ պարսից զորքը առհասարակ մտադիր էլ չի եղել գիշերը հարձակվել Փիլիպպիկոսի վրա: Այսպես. պատմիչը պարզ ասում է, որ հարձակումը տեղի էր ունենալու հաջորդ օրը. «կամեցեալ առ վաղին խմբել զգործ պատերազմին»:

Որ խոսքը պարսիկների հարձակման մասին չէ՝ երևում է նաև նրանից, որ պատմիչը պարսից զորքի մասին գործածում է հոգնակի «նոքա» դերանունը («Եւ նոքա երթեալ մեծաւ ստիպով հասին ի գաւառն Այրարատայ»), այնինչ՝ Նիզ գավառում կատարված գործողությունների հեղինակի մասին նա գրում է «երթեալ անցանէ ընդ Շիրակ... և երթեալ հասանէ»: Սա վերաբերում է Փիլիպպիկոսին: Ուրեմն Նիզ գավառ են գնացել ոչ թե պարսիկները, այլ՝ Փիլիպպիկոսը: Իսկ պարսից զորքը հոգնած լինելով՝ չի կարողանում նույն օրերին առաջ շարժվել: «այլ դադարեալ աւուրս ինչ. սպա զնացեալ»: Այսպիսով պարզ է, որ «գնացեալ ի վերայ Փիլիպպոսի» արտահայտության մեջ գործողության տեղը Փիլիպպիկոսի է: Իսկ թե ինչ է նշանակում «ի վերայ գնալ» — չգիտենք: Գուցե սա պատմիչը գործածել է մեզ անծանոթ մի իմաստով, կամ էլ դա աղավաղված մի բառ է, որի փոխարեն եղել է մեկ ուրիշ բառ: Որոշել չենք կարող: Պարզ է միայն, որ մեր այսօրվա հասկացողությամբ բառն իսկապես ավելորդ է և չպետք է թարգմանվի: Մալխասյանցը իրավացիորեն չի թարգմանել («Но Филиппик в ту же ночь отступил в область Ник», էջ 70): Զի թարգմանել նաև Մակեբը (էջ 67):

381. «Ամենայն մեծամեծացն պալատոյն»: Ապասելի էր «պալատան» (փխ. պալատոյն), այդ իսկ պատճառով էլ Զամինյանը (Զամ., էջ 129) սրբագրել է «պաղատան»: Բայց այս բառի անկանոն հոլովումը ձեռագրերում հանդիպում է նաև այլուր, որով և խանգարում է սրբագրելուն: Տե՛ս վերը ծ. 246:

382. «Հանգերծ եղարքն իւրով Թէոդոսի»: Հերակլի եղբոր անունը Թէոդորոս էր և ոչ Թէոդոս: Հյուբշմանը (Hübseh., էջ 12) գրում է. «Թէոդոսի փոխարեն պետք է դնել Թէոդորոս: Ատեփանոս Ասողիկը նույնպես ունի Թէոդոս»: Վարդան Արևելցին էլ գրում է Թէոդոս: Սակայն միևնույն Վարդանը մեկ այլ տեղ գրում է Թէոդորոս, որով թույլ է տալիս նաև մտածել, որ «Աեբեոսի Պատմության» նախնական բնագրում նույնպես կարող էր լինել Թէոդորոս: Բայց բանի տր «Թէոդոս» անվանաձևն ավելի մեծ քանակով է պահպանվել, չենք կարող սրբագրել «Թէոդո-

\* Հնարավոր է, որ նախնական բնագրում եղած լինի «Փիլիպպոս», առանց «ի» վերջավորության, որը պետք է դիտել որպես հաջորդ «ի Նիզ գաւառի» արտահայտության մեջ հանդիպող «ի» նախդիրի կրկնություն, գրիչների անուշադրության հետևանքով:

րոս» ձևով, ինչպես որ առաջարկել էինք մեր ուսումնասիրության մեջ («Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը», էջ 173—174):

383. «Անցեալ գնաց յԱսորեստան և կողմանս Անտիոքացոց»: Կարծելով, թե պատմիչը չէր կարող Անտիոքը համարել Ասորեստանի կողմերում գտնվող քաղաք, մենք առաջարկել ենք «յԱսորեստանը» փոխել «յԱսիաստան»-ով («Շ. ամս.», 1971, 51): Սակայն իրականում նման փոփոխության կարիք չկա, որովհետև «Սեբեոսի Պատմությունում» կա որոշակի վկայություն այն մասին, որ հեղինակն ինքն Անտիոքը համարում է իսկապես Ասորեստանի կողմերում գտնվող քաղաք: Նա գրում է. «Եւ Խոռեամ առեալ զգարացն բազմութիւն գնաց ի կողմանս Ասորեստանի և հասեալ ի Միջագետս Ասորոց, պատեալ պաշարեն զՈւռհայ քաղաք... նոյնպէս և Ամիթ և Քելա և Ռաշայենայ և ամենայն քաղաքք Միջագետաց Ասորոց կամաբ հնազանդեալ ի ծառայութիւն պահեցան ի խաղաղութեան և ի շինութեան: Եւ գնացեալ նոցա Անտիոք քաղաք՝ հնազանդեցան և նոքա կամաբ ի ծառայութիւն»:

Ինչպես տեսնում ենք, Խոռեամը Անտիոք է մտնում այն բանից հետո, երբ արդեն գրավել էր Ասորական Միջագետքի բոլոր քաղաքները: Կնշանակի՝ ըստ Սեբեոսի՝ Անտիոքը գտնվում էր ոչ թե Ասորական Միջագետքում, այլ՝ Ասորեստանում, դեպի ուր ճանապարհ էր բնկել Խոռեամը («գնաց ի կողմանս Ասորեստանի»):

384. «Եւ եզև պատերազմ մեծ ի կողմանս Ասիացոց»: Մ. Գրիգորյանը առաջարկում է «Ասիացոց»-ը սրբագրել «Ասորոց»: Նա գրում է. «Այստեղ խոսքը հստակորեն կվերաբերի Ասորեստանի սահմանակից Սյուրիո Անտիոք քաղաքին և ոչ Փոքր Պիսիդացոց Անտիոքին: Հետևաբար հաստատապես թյուրիմացության կամ գրչագրական վրեպի մը հետևանքով «Ասորոց» տեղանունը դարձած է «Ասիացոց» («Շ. ամս.», 1968, էջ 283):

Իրականում, սակայն, թյուրիմացություն տեղի չի ունեցել: Պատմիչի ապրած տարիներին «Ասիացոց» բառը կարող էր վերաբերել հավասարապես և՛ Ասորեստանի սահմանակից Սյուրիո Անտիոք քաղաքին, և՛ Փոքր Ասիո Պիսիդացոց Անտիոքին: Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացոյցում» հենց այդպես էլ գրված է (տե՛ս «Շիրակացու մատենագրությունը», էջ 345 և 351):

Մ. Գրիգորյանը «Ասիացոց» բառը վրիպակ է համարում նաև այն պատճառով, որ գտնում է, թե «Ասիա» տեղանունը հոգնակի ձև չունի: Նա գրում է. «Ըմ ենթադրությունը առավել կորահանա այն պարագայով, ըստ որում խանգարյալ բառը հոգնակի է, Ասիացոց և ոչ եզակի՝ Ասիոյ, որ սովորական տրվ.-սեռական ձևն է Ասիա տեղանվան» («Շ. ամս.», 1968, էջ 283): Պետք է, սակայն, նկատել, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակի օրոք «Ասիա» անունից հոգնակի՝ «Ասիացոց» ձևը կազմելը սովորական երևույթ էր: Հեղինակը քննարկվող տեղից բացի հոգնակի է գործածել նաև այլուր: Նա ամբողջ զբոսում ընդամենը երկու անգամ է գործածել «Ասիա» անունը և երկու անգամն էլ՝ հոգնակի ձևով: Միևնույն կերպ են վարվել նաև Անանիա Շիրակացուն վերագրվող Աշխարհացոյցի հեղինակը (էջ 345. «Աշխարհք բնդհանուր Ասիացոց»), Սամվել Անեցիցի, Եվսեբիոս Կեսարացու հայ թարգմանիչը և այլ մատենագիրներ:

385. «բռնացեալ հոսեցաւ ալիւն զաւրականացն»: Բոլոր ձեռագրերը և տպագրերն ունեն «զաւրավարացն» (փխ. զաւրականացն): Սա ակնհայտ վրիպակ է, որի համաձայն՝ պատերազմում թափվել է միայն զորավարների արյունը: Հասկանալի է, որ «Սեբեոսի Պատմության» նախնական բնագրում խոսվել է ոչ թե զորավարների, այլ առհասարակ պատերազմի մասնակիցների մասին: «Սեբեոսի Պատմության» թարգմանիչները այդպես էլ վերծանել են բնագիրը և վրիպակի փոխարեն թարգմանել են՝ воевавшие, guerrier, воины. Մենք «զաւրավարացն» բառը սրբագրում ենք «զաւրականացն» բառով:

386. «Արդ նախ միաբանեալ»: Այս բառերից հետո Զամինյանը (Զամ., էջ 130) ներմուծում է «բնակիչք քաղաքին» բառերը, որով հայտնի է դառնում, թե ովքեր են միաբանողները («միաբանեալ բնակիչք քաղաքին»): Սակայն հնարավոր է, որ հեղինակն ինքն այդ բառերը գրած չլինի, որովհետև առանց այդ բառերի էլ հասկանալի է, որ խոսքը քաղաքի բնակիչների մասին է: Բացի այդ՝ հեղինակը նկատի է ունեցել քաղաքի հարուստ, անվանի բնակիչներին, որոնք ի վիճակի են եղել պարսիկներին նվիրել՝ «պատարագս մեծամեծս»: Ուրեմն, հեղինակը Զամինյանի ենթադրած «բնակիչք քաղաքին»-ի փոխարեն կարող էր գործածած լինել նաև մեկ ուրիշ բառ, որով նա հարուստներին պետք է տարբերեր քիչ հետո իր հիշատակած «ուսիկ կաճառացն»-ից:

387. «Մատուցին զաւրավարին և իշխանացն»: Բոլոր ձեռագրերն ու Միհրդատյանի և Պատկանյանի հրատարակություններն ունեն «զիշխանացն», Մալխասյանցն ուղղել է «իշխանացն», Այդպես է վարվել նաև Զամինյանը (Զամ., էջ 130): Մենք հետևել ենք նախորդներին:

388. «Եւ յետ անցանելոյ ամսոց, մինչ»: Ստ. Մալխասյանցը «Ամսոց, մինչ»-ի կապակցութեամբ տողատակին ծանոթագրում է. «Բլի ուղղելի՛ ամսոց ինչ»: Միևնույն առաջարկն է արել Համինյանը (Ջամ., էջ 130): Սակայն «մինչ» բառը բնագրում ունի իր որոշակի դերը և չի կարելի փոխարինել «ինչ»-ով: Հեղինակը հայտնում է, որ Երուսաղեմի հարուստները միաբանում են և պարսիկներին մեծամեծ ընծաներ տալով՝ նրանցից խնդրում են՝ ոստիկաններ կարգել «առ իրեանց առ ի պահպանութիւն քաղաքին»: Սակայն ամիսներ անց, երբ արդեն միաբանել էին նաև քաղաքի տարբեր խմբերի բոլոր ուսմիկները («յետ անցանելոյ ամսոց, մինչ միաբանեալ ամենայն կաճառացն») քաղաքի երիտասարդներն ապստամբում են և սպանում պարսիկ ոստիկաններին: Մալխասյանցը հատկաժողովարարները թարգմանել է այսպես. «Но по прошествии нескольких месяцев, когда вся масса населения жила в единодушии, молодежь города убила блюстителей персидского царя»: Ինչպես տեսնում ենք, «когда» բառը փոխարինում է բնագրի «մինչ» բառին, ուստի այդ բառն ունի իր որոշակի դերը և չի կարելի փոխարինել «ինչ» բառով:

389. «Միաբանեալ ամենայն ուսմիկ կաճառացն»: Ջամինյանը (Ջամ., էջ 130) «կաճառացն» բառը սրբագրում է «վաճառացն», սակայն ավելի ճիշտ է «կաճառացն», որը նշանակում է «բազմություններ», «խմբերի»: Պատմիչն այդ բառով նկատի ունի Երուսաղեմի շարքային բնակիչների տարբեր խմբերի, որոնք ժամանակի ընթացքում միաբանելով՝ սպանում են պարսիկ ոստիկաններին: Այդպես են հասկացել բնագրի նաև «Սեբեոսի Պատմության» թարգմանիչները:

390. «Խոռեամ, որ է Ընագմիդգան»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն Ընագմիդգան (փխ. Ռագմիդգան): Սա «Ուսմիկ» բառի ազդեցությունը առաջացած վրիպակ է: Մենք ուղղել ենք «Ընագմիդգան», որովհետև պատմիչը նախորդ էջում գրել է այդ ճիշտ ձևը. «զարավարն նոցա անուանեալ Ռագմիդգան (ձեռագրում սխալմամբ «Գագմիդգան»), որ է Խոռեամ»:

Մակերը (MacI., էջ 68) և Ստ. Մալխասյանցը (Malx., էջ 71) ֆրանսերեն և ռուսերեն թարգմանություններում բառը տառադարձության են ենթարկել ուղղված ձևով (Ξραμιοζαν, Размиозан): Պատկանյանը շնայած՝ տեքստում թողել է «Ռամիկոզան» վրիպակը, սակայն ծանոթագրության մեջ գրում է. «Ռագմիդգան. ասի ևս Ռագման, Ռամիկոզան և Ռագմալուզան, իսկ առաջինն է ուղղագույն» (Պատկ., էջ 200):

Ռագմիդգանի մասին հմտ. նաև Nöldeke, Tabari, էջ 290—291:

391. «Եւ եղ յաւուրն ԺԹ-Երորդի, յամսեանն մարգաց»: «Սեբեոսի Պատմության» նախորդ հրատարակություններում և թարգմանություններում (բացի Մալխասյանցի հրատարակություններից) սխալ կետագրության հետևանքով բնագիրը տպագրված ու վերծանված է այսպես. «Եւ եղ յաւուրն ԺԹ-Երորդի՛ յամսեանն մարգաց»: Ստացվում է այն տպավորությունը, թե խոսքը մարգաց ամսի ԺԹ-Երորդ օրվա մասին է, այնինչ՝ իրականում ԺԹ-Երորդ օրը վերաբերում է Երուսաղեմի պաշարման 18-րդ օրվան: Պարսից զորավար Խոռեամը «երթեալ բանակեցաւ շուրջ զԵրուսաղէմաւ և պաշարեաց զնա. և կալաւ ի վերայ նոցա գործ պատերազմի զաւուրս ԺԹ... և եղ յաւուրն ԺԹ-Երորդի, յամսեանն մարգաց, որ աւր ի՛ւ էր ամսոյն... առին զաւրքն Պարսից զԵրուսաղէմաւ: Ինչպես տեսնում ենք, Երուսաղեմի գրավումը տեղի է ունեցել մարգաց ամսի 29-ին («աւր ի՛ւ էր ամսոյն»), երբ Երուսաղեմը 18 (= ԺԹ) օր է, ինչ պաշարված էր: Եվ 18-րդ օրը գրավվում է քաղաքը («յաւուրն ԺԹ-Երորդի... առին զԵրուսաղէմաւ»):

Մ. Օրմանյանը («Աղբապատում», հ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 651) հենվելով «Սեբեոսի Պատմության» մեր նշած ոչ ճիշտ տպագրությունների վրա (Մալխասյանցի ճշգրտած բնագիրը, որը տպագրվեց 1939 թ., Օրմանյանին բնականաբար ծանոթ չէր), առաջարկել է «մարգաց» բառը սրբագրել «մարերի»:

Միևնույն առաջարկը կրկնել է նաև Մ. Գրիգորյանը (Հ. ամս., 1968, էջ 290, 292), որը, սակայն, մեր բացատրությունից (նամակ, 3 ապրիլի, 1969 թ.) հետո հանգել է ճիշտ վճռի («Հ. ամս., 1971, էջ 52—53»):

Նա գրում է. «Սեբեոս տոմարական հաշիվներու մեջ մուտրած է, վասն զի 614 թ. մարգաց ամսո ի՛ւ-ին (մայիսի 19) ոչ թե Զատիկն (մարերի Թ—մարտի 31), այլ Համբարձումեն (մարգաց ԺԸ—մայիսի 9) տասը օր անցած կլլա» (նույն տեղում): Այս կապակցությամբ նույնպես մենք նախորդը նամակով բացատրել ենք. «Մայիսի 19-ը կամ Սեբեոսի նշած մարգաց 28-ը համընկնում է ոչ թե Զատիկից (614 թ. մարտի 31), այլ Քրիստոսի Համբարձումից (614 թ., մայիսի 9-ը) հետո 10-րդ օրվան» (Հմտ. M. Brosset, Collection d'histories Arméniens, I, 80): Այստեղից պետք է եզրակացնել, որ Սեբեոսը մարգաց 28-ը նշելով, ամենայն հավանականությամբ նկատի է ունեցել ոչ թե Քրիստոսի Հարության (Զատիկ), այլ՝ Համբարձման 10-րդ օրը, որն իսկապես համընկնում է մարգաց 28-ին: Պատմիչը հավանաբար մտքում ունենալով Համբարձման օրը, սխալմամբ գրել է Հարության տոնի (Զատիկի) 10-րդ օրը: Կամ էլ պետք է ենթա-

դրել, թե սկզբնապես եղել է «զկնի Մ (փխ. ժ) աուր (հմտ. H. Geizer, Chalkedon oder Karchedon, տպվ. Rheinisches Museum für Philologie, N. F., Bd. 48, Frankfurt am M., 1893, էջ 169) անցանկելոյ յետ Զատիկին»: Սա կհամապատասխանի իրոք մարգաց ամսի իջ օրվան: Հնարավոր է նաև, որ Սեբեոսը Երուսաղեմի գրավման մասին օգտագործած լինի հունարեն մի ձեռագիր, որի մեջ հստակ գրված չլինեին 'Ανάσσεις (Համբարձումն) և 'Ανάστασις (Յարութիւն) բառերը: Ուրեմն, «մարգաց»-ը «մարերի»-ով սրբագրելու կարիք չկա, ինչպես նաև կարիք չկա սրբագրելու «որ աւր իջ էր ամսոյն» նախադասութիւնը» (նամակ, 1969, ապրիլի 3):

392. «Ո՛ր աւր իջ էր ամսոյն»: Նախորդ ծանոթագրութիւն (№ 391) մեջ նշված սխալ վերծանման հետևանքով՝ Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 344) և Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 292) առաջարկել են «ԻԼ» թվագրերը սրբագրել «Ի» (Ակինյան) կամ «Ժ» (Գրիգորյան):

393. «Յամի ԻԾ-Երորդի քազաուրութեանն Ապրուէզ Խուրովայ»: Պատմիչը Երուսաղեմի գրավման թվականը նշում է Խոսրով Ապրվեզի թագավորութիւնի 25-րդ տարին. «յամի ԻԾ-Երորդի թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովայ»: Հայ և օտար հայագետները բազմիցս նշել են սույն տեղեկութիւնի ճշգրտութիւնը: Խոսրով Ապրվեզի 25-րդ տարին համապատասխանում է մ. թ. 614 թվականին, երբ իսկապես գրավվեց Երուսաղեմը:

Երուսաղեմի գրավման տարվա և ամսի մասին եղած զանազան կարծիքների կապակցութեամբ տե՛ս Յ. Մակեթի (MacL., էջ 68, 69) և Մ. Գրիգորյանի («Հ. ամս.», 1968, էջ 177) մատնանշած մատնագիտական տեղեկութիւնները, որոնց պետք է ավելացնել նաև Ք. Պատկանյանի («Опыт истории династии Сасанидов по сведениям. сообщаемым армянскими писателями», СПб. 1863, էջ 64. այստեղ Պատկանյանը Միհրդատյանի «յամի ԻԷ»-ն ուղղում է «յամի ԻԾ») և Հ. Գեղցերի («Chalkedon oder Karchedon», 1893, Bd. 48, էջ 169) աշխատութիւնները:

394. «Նստան ի ներխա քաղաքին ԻԱ աւր. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին և այրեցին զքաղաքն հուրք»: Բոլոր ձեռագրերում և տպագրերում բացակայում է «ԻԱ աւր. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին» բառերը, որոնք Մ. Գրիգորյանի առաջարկով մենք քաղել ենք Ք. Արծրունու երկում պահպանված քաղվածքից: Առանց մեր ներմուծած նախադասութիւնի ստացվում է այնպես, թե պարսիկները մտնում են քաղաք, նստում են (բնակվում են) քաղաքում և իրենց հետ միասին այրում են քաղաքը. «Նստան ի ներքս քաղաքին և այրեցին զքաղաքն հուրք»: Այս անհեթեթութիւնը վերանում է Ք. Արծրունու մոտ պահպանված բառերի ներմուծմամբ, որից պարզվում է, որ պարսիկները քաղաքում նստել են 21 օր («Նստան ի քաղաքին ԻԱ աւր»), ապա դուրս են եկել քաղաքից և այրել են քաղաքը («ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին և այրեցին զքաղաքն հուրք»):

Մ. Գրիգորյանը արդարացիորեն բացատրում է, որ «խնդրո առարկա նախադասութիւնը կսկսի և կավարտի «քաղաքին» բառով... Հայտնորեն զրչին մատը կամ նալվածքը սահած է առաջին «քաղաքին» բառին երկրորդին և ահա այսպես կորուսել է միջանկյալ խոսքը... զոր կառաջարկեմ մուծանել Սեբեոսի բնագրին մեջ» («Հ. ամս.», 1968, էջ 286 և 1971, էջ 51):

395. «Երիցապետ զովն... անուն Մոզեստոս»: Բոլոր ձեռագրերում և Միհրդատյանի հրատարակութիւնի մեջ Երուսաղեմի երիցապետ Մոզեստոսի անունը վրիպակաբար արտագրված է Մոզեստոս: Վրիպակն առաջին անգամ նկատել և ուղղել է Մ. Բրոսեն («Papports sur un voyage archéologique», S. Petersbourg, 1849, էջ 53): Ք. Պատկանյանը (Պատկ., էջ 91) Մոզեստոսի անունը սրբագրել է «Սեբեոսի Պատմութիւն» ինչպես գրաբար բնագրում, այնպես էլ ռուսերեն թարգմանութիւնի մեջ: Պատկանյանին հետևել են Յ. Մակեթի և Ստ. Մալխասյանը:

396. «Տեառն իմոյ ամենայն բարութեան և երանութեան»: Զամինյանը (Զամ., էջ 132) «բարութեան և երանութեան» բառերը սրբագրում է «բարութեամբ և երանութեամբ»:

Սակայն քննարկվող նախադասութիւնը հաջորդող հատվածում սակա «հայր գրութեանց և Աստուած ամենայն մխիթարութեանց» արտահայտութիւնները ցույց են տալիս, որ Մոզեստոսի համար ավելի ընտանի են «բարութեան և երանութեան» ձևերը, ուստի դրանք սրբագրութիւն կարող չեն:

Պատմիչը, ամենայն հավանականութեամբ, նամակը թարգմանել է հունարենից (վերցնելով կաթողիկոսական դիվանից), այդ իսկ պատճառով էլ նամակում հանդիպում են անհասկանալի տեղեր և անսովոր արտահայտութիւններ, որոնցից է նաև քննարկվող արտահայտութիւնը:

397. «Քանդի ո՛չ մխիթարեաց զմեզ ի զալտեան դոցա»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերը ունեն «Քանդի ոչ» առանց հարցական նշանի, իսկ Միհրդատյանի օրինակներից մեկն ունեցել է «Քանի ոչ»: Զամինյանը (Զամ., էջ 133) առաջարկել է ուղղել «Քանիօն»: Ստ. Մալխասյանը տպագրել է «քանդի ոչ», սակայն տողատակին ծանոթագրում է. «Թվում է ուղղելի՛ր Քանիովն»:

(ՍԵՊ, 84), Ք. Պատկանյանի ուսերեն թարգմանության մեջ «Քանզի ոչ»-ի փոխարեն թարգմանված է «как!» («как мы утешились их прибытием!»), որը գրեթե այլ բան չէ, քան «քանիօն»-ի թարգմանությունը: Մ. Գրիգորյանը («Ճ. ամս., 1968, էջ 292») առաջարկել է «Քանզի ոչ»-ը դարձնել «քանզի»: Ց. Մակիբեր (Мақл., էջ 70) «Քանզի ոչ»-ը հասկացել է հարցական արտահայտության իմաստով, մոտավորապես «արդեօք ոչ» արտահայտության նշանակությամբ:

Այս ամենից երևում է, որ տեքստը խանգարված է և մասնագետներից ամեն մեկը յուրովի է հասկացել բնագիրը:

Նկատելի է առարկա հատվածի ընդհանուր բովանդակությունն այս է. հայ ուխտագնացները գնում են Երուսաղեմ այն բանից հետո, երբ պարսիկներն այդ քաղաքը բարուբանդ անելուց հետո թույլ էին տվել նորից վերաշինել: Հայերի ուխտագնացությունը ուրախացնում է Երուսաղեմի տեղապահ Մողեստոսին, որն այդ առիթով մի նամակ է գրում Կոնիտաս կաթողիկոսին, շնորհակալով, ի դեպ, նաև միջոցներ խնդրել Երուսաղեմի շինության համար («եթէ հնար իցէ զաստուածասէր ձեր նախանձ և ի ձեռնարկութիւն շինածո կենարար շարշարանացն ձգել»): Նա հայերի այցը Երուսաղեմ համարում է Աստուծո մխիթարություններից մեկը. «Աւրհնեալ է Աստուած... որ մխիթարեաց զմեզ... ի գալստեան ձերոյ հատիր»: Ահա այս նախադասությանն անմիջապես հաջորդում են «քանզի ոչ մխիթարեաց» բառերը, որոնցով հայտնվում է նախորդ նախադասության բոլորովին հակասող այն գաղափարը, թե Աստված «ոչ մխիթարեաց զմեզ»: Սա բացահայտ վրիպակ է, որը մենք սրբագրել ենք՝ «ոչ»-ի վրա ավելացնելով հարցական նշանը, որից հետո «Քանզի ոչ» մխիթարեաց զմեզ» նախադասությունը պետք է հասկանալ «Մի՞թե մեզ չմխիթարեաց» իմաստով:

Մոգեստոսի նամակը առհասարակ կառուցված է հենց մեր նշած հարցականների ոճով: Նույն էջում, մեկ այլ տեղ կարդում ենք. «Ձի ո՞վ ծանեալ զմիտս տեսն, կամ ո՞ խորհրդակից իղև նմա, կամ ո՞վ ետ նմա փոխ և հատուցանէ նմա»: Ահա այս հարցականների կարգին է պատկանում նաև մեր սրբագրած «Քանզի ոչ» մխիթարեաց զմեզ» արտահայտության մեջ գտնվող ո՞չ բառի հարցականը:

398. «Ցուցանելով մեզ ի ձեռն ճոցուն իրաց զմեծամեծս իւր»: Այս բառերից հետո Չամիսյանը (Չամ., էջ 133) ենթադրում է պակաս:

399. «Չեսսա աւտարացուցանել ի քաղաքէն սրբոյ իւրմէ Երուսաղեմէ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրները «աւտարացուցանել» բառի փոխարեն ունեն «աւտարացուցանել»: Նորայր Բյուզանդացին («Հայկական բառաքննութիւնք», էջ 85), Ա. Չամիսյանը (Չամ., էջ 133) և Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 84) առաջարկել են սրբագրել «աւտարացուցանել»: Այս միևնույն իմաստով են բառը թարգմանել նաև Պատկանյանը և Մակիբերը: Այսպիսով, վրիպակը բացահայտ է և բոլոր մասնագետները միաբան են սրբագրության հարցում: Ելնելով սրանից մենք ձեռագրերում և նախորդ տպագրություններում առկա «աւտարացուցանել»-ը սրբագրել ենք «աւտարացուցանել»: Սա կ'իմաստով, կ' քերականական ձևով ավելի տրամաբանական է, քան «աւտարացուցանել»-ը, որը բնագրին չի համապատասխանում ինչպես բովանդակությամբ, այնպես էլ քերականական անսովոր ձևով:

400. «...ճանաչեն, հատուցեալ զիւրաբանչիւր փառս. բազում վերագրութեամբ զաստուածային պաշտամունս և զմայր եկեղեցեաց Սիււնն, և զվերացումն նորս»: Այս ամբողջ հատվածը Ք. Պատկանյանը (ՍԵՊ, էջ 93) անհասկանալի է համարել և չի թարգմանել: Ստ. Մալխասյանցին հաջողվել է կուսնել հատվածի բովանդակությունը և ճիշտ թարգմանել (Մալխ., էջ 73): Ա. Չամիսյանը (Չամ., էջ 134) «բազում վերագրութեամբ զաստուածային պաշտամունս» արտահայտության փոխարեն առաջարկել է կարդալ «բազում պաշտոնութեամբ զաստուածային պաշտամունս»:

401. «Նրաւեաց զմեզ ոչ ըստ գործոց մերոց, այլ՝ հայրական գրութեամբ»: «ՍԵՐԵՆՈՒ Պատմության» հնագույն ձեռագրերը և գրեթե մյուս բոլոր ձեռագրերը (բացի Միհրդատյանի ունեցած ընդօրինակությունից) «խրատեաց»-ի փոխարեն ունեն «խրամատեաց»: Բայց սա բացահայտ վրիպակ է, որովհետև պատմիչը չէր կարող աստժո մասին ասել, թե նա հայրական գրությամբ խրամատել է մեզ. «գթութուն» և «խրամատել» բառերը հակառակ իմաստներ արտահայտելով չլին կարող միասին գործածվել: Այդ իսկ պատճառով էլ «ՍԵՐԵՆՈՒ Պատմության» բոլոր հրատարակիչները հետևելով Միհրդատյանի ընդօրինակությանը, բառը տպագրել են սրբագրած ձևով («խրատեաց»):

402. «Չար գեղցին Հայք յԵրուսաղեմ առ Մողեստոս»: Բոլոր ձեռագրերն ունեն «առ կայսր»: Սա ակնհայտ վրիպակ է, որովհետև հայոց նամակն ուղղված է ոչ թե կայսրին, այլ Մողեստոսին: Այս նկատի ունենալով Միհրդատյանը (էջ 135) գրում է. «Ի բնագիրս մեր գրեալ էր

«առ կայսր», բայց մեք ըստ պատշաճի գործոյն եղաք «առ Մաղեստոս»: Միհրդատյանին հետեւել են մյուս բոլոր հրատարակիչներն ու թարգմանիչները:

403. «Նախ գոհանամ գԱստուծոյ ի վերայ մխիթարութեանց, ընդ որ մխիթարեաց զձեզ»: Բոլոր ձեռագրերն ու տպագրիչներն ունեն «զմեզ»: Զամինյանը (Զամ., էջ 137) առանց բացատրելու ուղղել է «զձեզ»: Այս ճիշտ սրբագրութիւնը հաստատվում է հետեւյալ փաստերով: Նախ «զմեզ»-ը տրամաբանորեն չի համապատասխանում նախադասութեանը: Կոմիտաս կաթողիկոսը չէր կարող Երուսաղեմի տեղապահ Մողեստոսին գրել, թե Աստված մխիթարել է մեզ, որպէսզի դուք էլ կարողանաք մխիթարել ուրիշներին: Բնական է, որ նա պետք է գրեր՝ Աստված մխիթարել է ձեզ, որպէսզի դուք էլ կարողանաք մխիթարել ուրիշներին, այսպես. «գոհանամ գԱստուծոյ ի վերայ մխիթարութեանց, ընդ որ մխիթարեաց զձեզ (և ոչ՝ «զմեզ»—Ք. Ա.), որպէս զի և դուք կարող լիջէք մխիթարել զայնոսիկ, որ յամենայն նեղութիւնս իցեն»: Երկրորդ՝ Մողեստոսն ինքն իր նամակում ասում է, որ Աստված մխիթարել է իրենց, այսինքն՝ երուսաղեմացիներին (և ոչ՝ Կոմիտասին), «Աստուած... մխիթարեաց զմեզ մխիթարութեամբ բազմա», հետեւաբար՝ Կոմիտասը Մողեստոսին պատասխանելիս պետք է գրեր «գոհանամ գԱստուծոյ ի վերայ մխիթարութեանց, ընդ որ մխիթարեաց զձեզ»: Այս նկատառումներով մենք ձեռագրերում և տպագրերում եղած «զմեզ»-ը սրբագրում ենք «զձեզ»:

404. «Մխիթարեցամ ի բազում վշտացս և ի աստիկ նեղութեանցս և ի դառն կտտանացս որ նեղէին զմեզ»: Բոլոր ձեռագրերն ու տպագրիչներն ունեն «նեղէ» (փխ. «նեղէին»): Սա վրիպակ է, որովհետեւ գործածված է եզակի թվով, այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է «բազում վշտացս» (և այլն): «Սեբեոսի Պատմութեան» բոլոր թարգմանիչները (Патк., էջ 95, Мацл., 73, Малх., 74) և Մ. Գրիգորյանը («Շ. ամս.», 1963, էջ 486, և 1971, էջ 57—58) բառը վերծանել են հոգնակի թվով (ТЯГОТЯЦИХ, affligent, угнетают, «նեղեն»): Սակայն նրանք բոլորն էլ բային վերագրել են ներկա ժամանակ, այնինչ՝ բնագրի ուսումնասիրութեանը ցույց է տալիս, որ նախնական բնագրում բառը գործածված է եղել անցյալ ժամանակով: Այսպես. Կոմիտաս կաթողիկոսը Մողեստոսին հայտնում է, որ նեղութիւններն արդեն մոռացվել են. «մոռացոյց զարամութիւնս մեր ուրախութեամբ լրոյսս և ձայնիս շինութեամբդ և՛ խաղաղութեամբդ Երուսաղէմի»:

Քանի դեռ պարսիկները գրավել և ավերել էին Երուսաղեմը, այդ քաղաքը դադարել էր ուխտագնացների ընդունելուց: Իսկ այժմ հայերի պատվիրակութիւնն այցելելով Երուսաղեմ, ուրախացրել է Երուսաղեմի տեղապահին: Կոմիտասը այնուհետև հայտնում է, որ հայերն իրենք շահում էին, երբ երթևեկ կար Երուսաղեմում. «գիտեա դու զայս, ով եղբայր սիրելի, ոչ սակաւ մխիթարութիւն գործէին և մերոյ ժողովրդեանս յերթևեկէ այդ ճանապարհացդ»: Իսկ երբ երթևեկը կտրվեց՝ սկսվեցին նեղութիւնները: Այժմ վերստին սկսվել է Երուսաղեմի շինարարութիւնը և հայերը մոռացել են տրամութիւնները: Այսպիսով՝ հայոց կաթողիկոսն ամենուրեք նեղութիւնները հիշատակում է որպէս անցյալի հուշ, այդ իսկ պատճառով էլ նա պետք է գրեր «մխիթարեցաք ի բազում վշտացս և ի սաստիկ նեղութեանցս և ի դառն կտտանացս որ նեղէին զմեզ»: Ընդօրինակող գրիչները «նեղէին» բառի վերջին երկու տառը բաց են թողել և ստացվել է «նեղէ»: Մենք լրացրել ենք պակասը և վերականգնել նախնական բնագիրը:

405. «Զմաբարեալականն (ասելով) ընկեր ցոնկեր»: Ձեռագրերից ոչ մեկը չունի «ասելով» բառը: Միհրդատյանը պակասը նկատելով, փակագծերի մէջ ավելացրել է այդ բառը, Պատկանյանը և Մակլերը հետեւելով Միհրդատյանին, պահպանել են փակագծերը: Բայց Մալխասյանը վերացրել է դրանք և բառը ներմուծել բնագրի մէջ, առանց որևէ տարբերիչ նշանի: Մենք վերականգնում ենք փակագծերը, որպէս նշան այն բանի, որ բառը ներմուծված է Միհրդատյանի կողմից: Հեղինակը կարող էր գործածած լինել միևնույն իմաստն արտահայտող «ձայնելով» (հենց հաջորդ նախադասութեան մէջ կարգում ենք. «ըստ առաքելական ձայնի») կամ մեկ այլ բառ: Այդ իսկ պատճառով էլ Միհրդատյանի ավելացրածը անհրաժեշտ է մատնանշել փակագծերով:

406. «Ըստ առաքելական ձայնի»: Ակնարկում է Պողոս առաքյալի առ Եբրայեցիս թուղթը (տե՛ս Мацл., էջ 74, ծ. 4 և 5): Այս թղթից բերված քաղվածքը Միհրդատյանը, Պատկանյանը և Մակլերը վերցրել են չակերտների մէջ, իսկ Մալխասյանը չակերտները վերացրել է, հավանաբար նկատելով, որ քաղվածքը բառացի չի համընկնում Պողոս առաքյալի խոսքին: Սակայն Կոմիտասը իր նամակում դա բերել է որպէս քաղվածք, այդ իսկ պատճառով էլ մենք վերականգնում ենք չակերտները:

407. «Նայեցաւ ի մեզ խեթի արեգակնն և նետելով նետեցան անծիբ մեզ»: Բոլոր ձեռագրերում «արեգակնն»-ի փոխարեն գրված է «արեգականն», որի համաձայն Աստված նայել է «խեթի արեգականն» (արեի խայթոցով): Սա անիմաստ արտահայտութիւն է: Ստ. Մալխաս-



յանցը «արեգականն» բառը սրբագրել է «արեգակնն», որով ստացվում է այնպես, թե արեգակը մեզ խեթ է նայել: Բայց սա նույնպես չի կարգավորում բնագիրը: «ե» շաղկապը («ե հետտելով») նույնպես չի հարմարվում նախադասությանը: Ինչպես երևում է, բնագիրն այստեղ աղճատված է: Բայց թե ինչ է եղել նախնական բնագրում՝ կոահել չենք կարող:

408. «Այլ զայս ամենայն սիրելին մեր յառաջագոյն պատմեաց մեզ»: «Սիրելին մեր» ասելով պատմիչը նկատի ունի Քրիստոսին, որը Ղուկասի ավետարանի 10-րդ գլխի 29—37 տներում բարի սամարացու օրինակով պատմում է քնկերասիրության մասին: Կոմիտասը ավետարանի այս հատվածը շարադրում է աննշան փոփոխություններով, որոնցից երևում է, որ նամակը գրելիս նա միայն հիշողությամբ է վերարտադրել Ավետարանի բովանդակությունը: Նա Երուսաղեմի տեղապահ Մողեստոսին համեմատում է բարի սամարացու հետ, որը մոտեցավ ուրիշների կողմից անտարբեր լքված վիրավորին և օգնեց նրան: Այս դեպքում Մողեստոսը օգնեց վիրավոր նրուսաղեմին:

409. «Ջերիս դանեկանս, որ ետ ի պանդոկապետն»: Արտահայտությունը քաղված է Ղուկասի ավետարանի 10-րդ գլխի 35-րդ տնից, որտեղ, սակայն, և՛ հունարեն բնագրում, և՛ հայերեն թարգմանության մեջ երեք դահեկանի փոխարեն գրված է երկու դահեկան (*δύο δαχρύατα*, «երկուս դահեկան»)։ Ֆ. Մակելերը (*Macl.*, էջ 75, ծ. 6) Կոմիտասի նամակի շեղումը վերագրում է արտագրող գրչին: Սակայն, ելնելով հատվածում գտնվող նաև մյուս շեղումներից (օրինակ, նամակում խոսվում է քահանաների, իսկ ավետարանում քահանայի, նամակում՝ հրեաների, ղեռացիների և ամբարշտաց, իսկ ավետարանում՝ միայն ղեռացիների և այլն), կարելի է նաև կարծել, որ Կոմիտասն ինքն է շփոթվել: Անգիր պատմելով ավետարանի բովանդակությունը՝ նա որոշ մանրամասներ (դրանց շարքում նաև երկու դահեկանի պատմությունը) լավ չի հիշել և երկու դահեկանի փոխարեն նշել է երեք դահեկան:

410. «Մի այտունեոև ողբասցէ Սիովն»: Բոլոր ձեռագրերում և տպագրերում «Սիովն»-ի փոխարեն գրված է «Սիանս»: Ուղղել ենք «Սիովն», ելնելով Կոմիտասի միևնույն նամակի մեջ երկու անգամ հանդիպող «Սիովն» ձևից:

411. «Շինումն տեսարին Հոփիսիմեայ»: Այս վերնագիրը շունի մեզ հասած հնագույն ձեռագրեր (*№ 2639*), ինչպես նաև *№ 2867* և *№ 3122* ձեռագրերը: Միհրդատյանը հավանաբար հենվելով իր օրինակներից մեկի (նորագույնի) վրա՝ հատվածը ղետեղել է այդ խորագրի տակ: Հատվածը պահպանվել է նաև Մաշտոցի անվան մատենադարանի *№ 1912* (թ. 175բ—178ա) և *№ 993* (թ. 511բ) ձեռագրերում, որոնցից առաջինն ունի «Գիտ նշխարաց սրբոյն Հոփիսիմեայ», իսկ երկրորդը՝ «Յաղագս գիտի նշխարաց սրբոյն Հոփիսիմեայ կուսին» խորագրերը:

Այս երկու ձեռագրերի և հնագույն ձեռագրի հիման վրա մենք կազմել ենք հատվածի բաղադրական բնագիրը («էջմիածին», 1968, հունվար, էջ 58—61), մակայն այժմ հակված ենք կարծելու, որ հիշյալ երկու ձեռագրերում հատվածը ենթարկվել է վերամշակման և հավելումների: Նրանց հեղինակը հատվածը «Սերբոսի Պատմությունից» քաղելուց հետո ավելացրել է Հոփիսիմեի անդամահատված մարմնի մանրամասն նկարագրությունը և այլ մանրամասներ, որոնք, մեր կարծիքով, ավելի ուշ ժամանակների կնիք են կրում: Ուստի, մենք «Սերբոսի Պատմության» հնագույն ձեռագրում պահպանված հատվածը հրապարակում ենք այնպես, ինչպես հրատարակել են նախորդները, առանց մյուս ձեռագրերից ներմուծումներ կատարելու:

412. «Եւ կնեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի»: Բոլոր ձեռագրերն ու տպագրիչներն այս արտահայտության փոխարեն ունեն. «Եւ երանելի սրբոյն Գրիգորի կնքեալ մատանեաւ իւրով»: Այստեղ «երանելի» և «իւրով» բառերն ավելորդ են: Մանավանդ վերջին բառի պատճառով ստացվում է այն տպավորությունը, թե Գրիգոր Լուսավորիչը Հոփիսիմեի պատանը կնքել է «մատանեաւ իւրով և մատանեաւ երանելոյն Սահակայ»:

Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 485—488 և 1971, էջ 58—59) առաջարկել է անկյունավոր փակագծերի մեջ ավելացնել «կնքեալ էր» բառը («և մատանեաւ երանելոյն Սահակայ» արտահայտությունից առաջ): Նա հայտնում է, որ իր սրբագրությունը «մոտավորապես կվերականգնի խանգարյալ հատվածը» («Հ. ամս.», 1968, էջ 487): Բայց հասկանալի է, որ բնագրեր վերականգնելիս իրավունք չունենք առաջնորդվելու «մոտավորապես» շափանիշներով, այլ պետք է հաստատ ապացույցներ, որ նախնական բնագրում եղել է հենց «կնքեալ էր» բառը: Այսպիսի ապացույց չունենք:

Մենք բնագիրը վերականգնել ենք, հենվելով մեր Մատենադարանի *№№ 1912, 993* ձեռագրերում պահպանված միևնույն հատվածի հետևյալ արտահայտության վրա. «Եւ կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի»:

Որ «Սեբեոսի Պատմության» նախնական բնագրում եղել է իսկապես մեր վերականգնած արտահայտությունը, երևում է նրանից, որ «Սեբեոսի Պատմությունից» օգտված բոլոր պատմիչները (Հովհաննես Գրասխանակերտցի, Ստեփանոս Ասողիկ, Վարդան Արևելցի) գրում են՝ «կնքեալ մատանեալ սրբոյն Գրիգորի»:

413. «Բանակեցաւ ի վմ յանդիման Յիզանդիայ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «բնակեցաւ», սակայն հասկանալի է, որ պատմիչի խոսքը ոչ թե պարսից զորավար Խոռեամի՝ Բյուզանդիայի մտտերում բնակվելու, այլ՝ զորքը բանակեցնելու մասին է: Պատմիչն այլուր գործածում է «բանակեցաւ» արտահայտությունը, որի հիման վրա էլ «բնակեցեալ»-ը սրբագրում ենք «բանակեցաւ»: «Սեբեոսի Պատմության» բոլոր թարգմանիչները բառը վերծանել են հենց «բանակեցաւ» իմաստով, իսկ Մակիերը (Macl., էջ 77, ծ. 6) ուղղակի գրում է. «Տեքստում՝ բնակեցաւ, որը մենք սրբագրում ենք բանակեցաւ: Հմմտ. Սեբեոս, հրատ. Պատմ., էջ 27, տող 3» (այստեղ նույնպես հանդիպում է «բանակեցաւ» բառը—Գ. Ա.):

414. «Եւ բաշխէր զաւրացն հոռոս»: Զամինյանը (Զամ., էջ 143) առաջարկում է ուղղել «զաւրավարացն» (փխ. «զաւրացն»), սակայն պատմիչի խոսքը ոչ թե զորավարի, այլ զորքի մասին է: Իսկ զորավարի մասին նա խոսում է նախորդ նախադասությունում. «տայր զաւրավարն և իշխանացն մեծամեծ ընծայս»: Հերակլը Խոռեամիին և նրա իշխաններին տալիս է մեծ նվերներ, իսկ զորքին բաշխում է «հոռոս, և ճաշ և ընթրիս»:

415. «Բայց զգոչ լերու՛ գոցէ ոչ հանեսցի Աստուած և խնդրեսցէ ի ձեռք զվրէժ անդունդք ծովուս»: Այս նախադասության մեջ «խնդրեսցէ» բառը քերականորեն (եզակի թիվ) չի կապվում «անդունդք» (հոգանի) բառի հետ: Այսուհանդերձ, «Սեբեոսի Պատմության» թարգմանիչները նախադասությունը թարգմանել են հասկանալով այնպես, որ ծովի անդունդը վրեժ կպահանջեր, եթե բյուզանդացիները չհամաձայնեին պարսից զորավարի պահանջներին: Այսպիսով, մեզ հետաքրքրող հատվածի բոլոր թարգմանիչները «խնդրեսցէ» բայի տեղ են համարել «անդունդ» բառը (Патк., 99, Macl., 78, Малх., 78, ИТІТАНЯИЦ—ՄՄ, կազարյանների արխիվ, թղթ. 100, վճով. 51, էջ 1):

Այլ կարծիք է հայտնել Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 488—489 և 1971, էջ 59): Ընդունելով, որ բայի տեղը «Աստուած» (և ոչ՝ «անդունդք») բառն է, նա առաջարկել է «անդունդք» բառը հարմարեցնել «Աստուած» բառին և հատվածը սրբագրել այսպես. «Բուցէ ոչ հանեսցի Աստուած և խնդրեսցէ ի ձեռք զվրէժ անդունդք ծովուն»:

Ինչպես տեսնում ենք, բնագիրը վերծանվել է երկու բոլորովին տարբեր մտեցմամբ, որոնք երկուսն էլ տրամաբանական են: Ո՞րն է իսկականը. դժվար է պատասխանել: Ուստի բնագիրը թողնում ենք այնպես, ինչպես կա և ինչպես հասկացվել ու թարգմանվել է մինչև այժմ: Միայն ավելացնենք, որ «խնդրեսցէ» բառի եզակի թիվն այնքան էլ խանգարիչ հանգամանք չէ, որպեսզի այդ բառը վերաբերեր «անդունդք» (հոգանակի) բառին: Նման անհամաձայնություններ հաճախ են պատահում:

416. «Մի ջանացի, քանզի զսա Աստուծոյ հաստատեալ է և բառնալ զսա ոչ ոք կարէ»: Բոլոր ձեռագրերն ու Միհրդատյանն ունեն «ջանացի» (փխ. «մի ջանացի»): Վրիպակը նկատել և ըստ Թովմա Արծրունու ուղղել է Ք. Պատկանյանը (էջ 90): Պատկանյանին հետևել են հետագա հրատարակիչներն ու թարգմանիչները:

417. «Ի ձեռն հաւր իմոյ Հեռակղի... այլ տակալին ծաբալի է արիւնարբութեամբ»: Բազմակետերով մեր նշած տեղում բնագրի կորուստ է նկատվում: Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 490—491) Թ. Արծրունու հիման վրա կռահել է այդ պակասը և մատնանշել նրան համապատասխանող հետևյալ տեղը Արծրունու գրքում. «Եւ եթէ երկիր խնդրիցէ՛ ահաւազիկ երկիրդ առաջի ձեռ, եթէ կամիմք եւ եթէ ոչ կամիմք՝ եհան Աստուած ի մէջ եւ ետ ի ձեռս ձեռ: Եւ եթէ քաղաքս խնդրիցէ՛ ահաւազիկ է քաղաքն մեծամեծք եւ պարսպաւորք. այլ (եթէ) զանձս խնդրիցէ՛ ասացի թէ տաց՝ որչափ եւ ձեռն հասանիցէ. եւ ոչ կամեցաւ լսեք»: Այս ամբողջ հատվածը կարելի էր ներմուծել «Սեբեոսի Պատմության» մեջ, բազմակետերով մեր նշած տեղում, սակայն «չէ կարելի պնդել այլ որ Սեբեոսի բնագրին ինկած հատածը տառացիորեն ձեռտ՝ այնպես էր, ինչպես կերևա Արծրունու Պատմության մեջ»:

418. «Խնդրել ի նմանէ զհաշտութիւն և բնդ իս զխաղաղութիւն»: Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 489—490 և 1971, էջ 60) առաջարկում է այս նախադասության մեջ ներմուծել «աշխարհի» բառը և նախադասությունը վերաշարադրել այսպես. «Խնդրել ի նմանէ զխաղաղութիւն աշխարհի և բնդ իս գհաշտութիւն»: Սակայն նման վերադասավորության և ներմուծման կարիք չկա, որովհետև առանց դրանց էլ նախադասությունը կանոնավոր է ու հասկանալի. Հերակլ կայսրը Պարսից Խոսրով արքայից պահանջում է հաշտություն և իր հետ խաղաղություն:

419. «Եւ նոցա ընկալեալ զընծայսն՝ հաւանեցան առնել ըստ խնդրոյ նոցա»: Այս բառերից անմիջապէս հետո Յ. Մակելըրը (MacI., էջ 79, ժ. 2) ֆրանսերէն թարգմանութեամբ ընագրի մեջ ներմուծում է Ք. Արծրունուց քաղած հետեւյալ հատվածը. «մինչև տեսցեն եթէ զինչ պատահանի եկեցեցէ յարքայէն իւրեանց և կամ զօրուն զինչ հրամայեսցէ առնել: Եւ զօրուն զնացեալ անտի ձմերեցին ի Սուրիա» («Պատմութիւն տանն Արծրունեաց», ի լոյս էած Ք. Պ., Պետերբուրգ, 1887, էջ 91): Այս տողերի բովանդակությունն ունեցող մի հատված, ինչպես երևում է, կորել է «Սեբեոսի Պատմությունից»:

420. «Եւ գանձ իմ որ առ քեզ եմ, ծախես»: Այս բառերից հետո Ք. Արծրունին ունի՝ «Եւ զայդ ոչ գիտես, եթէ վաղի համարս տալուց ես»: Մ. Գրիգորյանը գտնում է, որ այս նախադասությունը Ք. Արծրունին ինքը «անտեղիորեն ընմիջարկյալ կերևա» («Հ. ամս.», 1968, էջ 492), հետևաբար՝ չի կարելի ներմուծել «Սեբեոսի Պատմության» մեջ: Այս վճիռը, սակայն, հակասում է Մ. Գրիգորյանի մեկ ուրիշ վճռի («Հ. ամս.», 1968, էջ 281), որի համաձայն «Սեբեոսի Պատմության» մեջ պետք է ներմուծել Քովմա Արծրունու հետևյալ հատվածը՝ «ոչ գիտելով եթէ համարս խնդրեցից զանձիս այսմիկ», որը, ինչպես տեսնում ենք, այլ բան չէ, քան «և զայդ ոչ գիտես, եթէ վաղի համարս տալուց ես» արտահայտության արձագանքը: Հետևաբար, պետք էր կամ մերժել երկու հատվածն էլ, կամ էլ երկուսն էլ ընդունել: Իսկ ավելի ճիշտն այն է, որ այդ հատվածների բովանդակությունն ունեցող տողեր իսկապես եղել են «Սեբեոսի Պատմության» մեջ: Միայն թե՛ շփոտենք, թե Արծրունին ինչպիսի հարազատության մեջ է վերաբարտարել իր աղբյուրի բովանդակությունը, այլպպես կարելի էր երկու հատվածն էլ ներմուծել:

421. «Եւ զու ասես վստահանալ յԱստուածն քոյ, վասն է՛ր ոչ փրկեցին զԿեսարիա և զԵրուսաղէմ և զԱղեֆանդերիա մեծ ի ձեռաց իմոց»: Այստեղ «փրկեցին» (հոգնակի) բառը չի կապվում «Աստուած» բառի հետ: Պետք է լիներ «վասն է՛ր ոչ փրկեցան զԵրուսաղէմ» («Հ. ամս.», 1968, էջ 493), կամ էլ՝ «վասն է՛ր ոչ փրկեցան Երուսաղէմ» («Հ. ամս.», 1971, էջ 59):

422. «ԶԱղեֆսանդերիա մեծ ի ձեռաց իմոց»: Ստ. Մալխասյանցի թարգմանության մեջ (Մալխ., էջ 79) Ալեքսանդրիա քաղաքի անվան փոխարեն վրիպակաբար գրված է «Անտիոք» («Великую Антиохию»):

423. «Սպանին կախեալ զփայտէ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «կապեալ զփայտէ»: Զամինյանը (Զամ., էջ 145) առաջարկել է ուղղել «կախեալ զփայտէ»: Այս ճիշտ առաջարկը հաստատվում է հենց «Սեբեոսի Պատմության» միջոցով: Այսպես, «Պատմէն պատասխանի թղթոյն եկելոյ ի հայս ի Հոռոմոց թագաւորէն Կոստանդինայ» խորագիրը կրող նամակում կարդում ենք. «Արդ՝ մի է տէր Յիսուս Քրիստոս, Աստուած և մարդ. կեսնք կախեալ զփայտէ»: Սրա հիման վրա մենք «կապեալ» վրիպակը սրբագրում ենք «կախեալ»:

424. «Եւ զայգայ գատկին նուեաց ի ծով ի Քաղկեդոն»: Ձեռագրերը, ինչպես նաև Միհրդատյանի և Պատկանյանի թատարակությունները ունեն «գատկին»: Մալխասյանցն ուղղել է «գատկին»: Այս ճիշտ սրբագրությունը հաստատել է նաև Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1968, էջ 493—494), որը գատկին հաջորդած հետևյալ առավտորը նշում է 622 թ. ապրիլի 5-ին, երկուշաբթի օրը: Զամինյանը, սակայն, նշել է 623 թ. մարտի 25-ը (Զամ., էջ 146):

425. «Զուեաց գեաց Երակլոս ճի հագարաւ, երթալ ի դուն բագատրին պարսից և նահապարհ կալեալ ընդ կողման հիւսիսոյ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «և երթեալ» (փխ. «երթալ»), որը խախտում է նախադասության շարահյուսական կապը և, ինչպես Մալխասյանցն է գրում, «միջանկյալ խոսք է թվում... կամ ազավաղված» (ՍԵՊ, էջ 93): Զամինյանը (Զամ., էջ 147) ուղղել է «երթալ», որով վերանում է սխալը և կարգավորվում է նախադասությունը: Մենք սրբագրել ենք ըստ Զամինյանի առաջարկի:

426. «Ել դէպ ուղիղ ի Կարնոյ քաղաք»: Ք. Արծրունին այս նախադասությունից անմիջապէս հետո ավելացնում է «և անցանէ ի Շիրակ», որը «Սեբեոսի Պատմությունը» չունի: Միևնույն նախադասության մեջ Արծրունին Հերակլի ավերած Դվինի ու Նախճավանի անունների կողքին ավելացնում է նաև «և զՈրմի», որը դարձյալ «Սեբեոսի Պատմությունը» չունի: Սրանք «մանր ալլ պիտանացու լրացումներ են Սեբեոսի պարբերության մեջ, թերևս հավելյալ Արծրունվո կողմանէ՝ ըստ մի այլ աղբյուրի» (Գրիգորյան, «Հ. ամս.», էջ 495):

427. «Եւ դիմեալ ի Գանձակ Ատրպատականի»: Բոլոր ձեռագրերն ունեն «արի գիւղն այն» (փխ. «Ատրպատականի»): Այդպես են տպագրել նաև Միհրդատյանը և Պատկանյանը: Սակայն Պատկանյանը (Պատկ., էջ 92) տողատակին նշել է, որ Քովմա Արծրունին «արի գիւղն այն»-ի փոխարեն ունի «Ատրպատականի»: Թուսերեն թարգմանության մեջ (Սաք., էջ 102) նույնպես նա գրում է. «Հրատարակության մեջ՝ արի գիւղն այն: Քովմա Արծրունին ունի Ատրպատականի: Երկրորդը մենք ավելի ճիշտ ենք համարում, ըստ որում՝ եթե Գանձակը նշանակում է Քավրիզ»:

ապա մյուս Գանձակից (Գյանջա, Ելիզավետպոլ) տարբերելու համար միշտ կողքին դրվում է Ալբրեքտանական (= Ատրպատական—Գ. Ա.) բառը: Է. Գեռլանդը («Die persischen Feldzüge des Kaisers Herakleios», Leipzig, 1894, էջ 27) ընդունել է Պատկանյանի տեղեկությունը: Մակլերը նույնպես (Macl., 81) վկայակոչել է Պատկանյանի հայերեն հրատարակության ծանոթագրությունը, բայց Պատկանյանի և Միհրդատյանի նման շարունակել է տեքստի մեջ թողնել «արի գիւղն այն» ձևը: Զամինյանը (Զամ., էջ 147), սակայն, սրբագրել է բնագիրը և ազավազված բառերի փոխարեն ներմուծել է «Ատրպատական» տեղանունը: Նույն կերպ է վարվել նաև Ստ. Մալխասյանցը (ՍՅՊ, էջ 93): Մենք նույնպես սրբագրել ենք տեքստը, որովհետև «արի գիւղն այն» արտահայտությունը բացահայտ սխալ է:

428. «Կործանել և զբազինու շրտին մեծի, որում Վշնասպն կոչլին»: Մեզ հասած հնագույն ձեռագիրը (№ 2639) և նրա նմանողությամբ մյուսներն ունեն «Վնասպն կրէին» (փխ. «Վշնասպն կոչէին»): Միհրդատյանի ունեցած երկու օրինակից մեկն ունեցել է «Վնասպն կոչէին», որը Միհրդատյանը նույնությամբ տպել է, իսկ մյուսն ունեցել է «Վշնասպն կրէին», որը Միհրդատյանն իջեցրել է տողատակ: Պատկանյանը ռուս. թարգմանության մեջ (Патк., էջ 102) գրել է. «Վնասպ», իսկ հայերեն հրատարակության մեջ ուղղել է «Վշնասպ», պատճառաբանելով այսպես. «Մենք հրաք Վշնասպ, ուղղագոյն համարեալ զայս ձեւ ը: րտ հնշման հայոց. տես չեր 29 Վարդան Վշնասպ. նոյնպես առ Ղազ. Փարպ., եր. 359, 390, 487, 489, 325 և այլն, նոր տպ. դանուան՝ Ատր Վշնասպ, Նիխոր Վշնասպդատ, Միհր Վշնասպ, Յզատ Վշնասպ եւ այլն: Իսկ ըստ պարսից հնշման անուն հրատիս էր 𐭮𐭣𐭥𐭩 Գուշասպ, թերևս Վշասպ, այլ ոչ Վնասպ կամ Վշնասպ» (Պատ. 92, տես նաև 197): Լ. Հյուբշմանը (Hübisch., էջ 7, ծ. 1) նույնպես գտնում է, որ պարսկերեն ճշգրիտ ձևը «Գուշասպ» է, բայց քանի որ հայերեն ավելի տարածված է «Վշնասպ»-ը, արգարանում է Պատկանյանի սրբագրությունը: Մակլերը (էջ 81) նույնպես հետևել է Պատկանյանին, վկայակոչել է, սակայն, Հյուբշմանի «Arm. Gramm.» աշխատությունը: Ստ. Մալխասյանցը տպագրել է «Վշնասպն» կարծելով, թե № 2639 ձեռագրում այդպես է: Նա գրում է. «Մենք ընտրեցինք Ա ձեռագրի պահպանած ուղղագույն ձևը—Վշասպ» (ՍՅՊ, էջ 190, ծ 57): Իրականում, սակայն, Ա ձեռագրում է՝ «Վնասպն կրէին»: Մենք հետևել ենք Պատկանյանին և տպագրել «Վշնասպն կոչէին»: Գուշասպ («Վշնասպ») կոչված հրատի (հրո տաճար) մասին մանրամասն տե՛ս Հյուբշմանի աշխատության նշած ծանոթագրությունը:

429. «Եկն իտեւում ի Մրծոխին»: Զամինյանը (Զամ., էջ 147) սրբագրում է Մծրին (փխ. Մրծոխին):

430. «Եւ բանակի ի միա Տիգրանակերտի»: Բ (№ 2935) ձեռագրի ստորին լուսանցքում, հավանաբար, Հասան Զալալյանի կողմից Տիգրանակերտի կապակցությամբ ծանոթագրված է. «Անկրակ այսր Տիգրանակերտի անկանի ի գլուխ սահմանայ Ուղի նահանգի ի ներքոյ Շուշի քաղաքի, որ այժմ ասի ի ռամկաց թեզուակերտ, իսկ ի տաճկաց՝ քառնագիւտտ»:

431. «Եւ զնաց ընդ Մղուկս»: Բ ձեռագրի լուսանցքում հավանաբար Հասան Զալալյանի կողմից Մղուկի կապակցությամբ ծանոթագրված է. «Մղուկ է մինն ի գաւառաց Սիւնեաց նահանգին»:

432. «քափեցաւ ընդ լեռնակղզմն ի դաշտն նախնաւանի»: Բոլոր ձեռագրերն ու տպագրիւններն տնեն «ի դաշտն նախնաւանն»: Հեղինակն այսպիսի սխալ ձև չի օգտագործում: Նախ նա բազմաթիվ տեղերում գրում է «նախնաւան» (և ոչ՝ «նախնաւան») և երկրորդ՝ պետք է լինի ոչ թի «ի դաշտն նախնաւանն», այլ «ի դաշտն նախնաւանի», ինչպես որ այլուր ասված է. «ընդ բերդին նախնաւանի»: Մենք վրիպակն ուղղել ենք ըստ մեր նշած փաստերի: Զամինյանը (Զամ., էջ 148) առաջարկել է ուղղել «նախնաւանտ», սակայն, ինչպես տեսանք, հեղինակը գործածում է ոչ թե «տ», այլ «ի» հոլովը («նախնաւանի»):

433. «Անցանէ ընդ հուն գետոյն Երասխայ՝ յաւանն Վրեջուկիս»: Այս վերջին տեղանվան մասին տե՛ս J. Marquart, Erānšahr, էջ 177: Մովսես Խորենացին նույնպես հիշատակում է Վրեջուկիքը, որը պետք է գտնվեր Արաքսի աջ ափին:

434. «կոտորեցին զգաւրն պէշուպա»: Ք. Պատկանյանը (էջ 104) «պէշուպա» բառն ընկալել է որպես հատուկ անուն, սակայն հետագայում ուղղել է իր սխալը, գրելով. «ոչ է այս անուն զպարպետի ուրուք, այլ ազավազողութիւն պարսիկ բառիս 𐭮𐭣𐭥𐭩 փեշուա, թերևս ըստ նախկին հնշման՝ պէշուպայ, այսինքն՝ յառաջապահ գունդ» (Պատկ., էջ 93): Յ. Մակլերը (Macl., էջ 83) հետևելով Պատկանյանի ծանոթագրությանը, բառը թարգմանել է նույն իմաստով՝ «les soldats de l'avant-garde»: Մալխասյանցը նույնպես թարգմանել է «передовой отряд» (Мах., էջ 81), իսկ հայերեն հրատարակության մեջ (Մալխ., էջ 190) նա «պէշուպա» բառի կապակցությամբ ծանոթագրել է. «Հյուբշման հանում է պահպակերին pesupaի (պէշուպայ) բառից, որ նշանակում է առաջնորդ, գլխավոր, վարիչ: Նույնը ընդունում է նաև Արմ. բառ. (= Աճառյանի

Արմատական բառարանը—Գ. Ա.) նույն բառի փոխանակ Սեբեոս մի քանի տող վերը գործ է ածել հայերեն «յառաջամարտիկ» բառը:

435. «Պոյձ աւկառնէ Խոռեմայ, եթէ հասեալ է թշնամին ի վերայ քո, և կոտորեցին զգաւրն պէշոպա յԱղի»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 344) հակված է Աղի տեղանունը Աղիովիտի հետ նույնացնելու: Սակայն, ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1969, էջ 448) «Հարկ չկա սրբագրելու վասն զի ի հնումն «Աղի» գյուղ մը գոյութիւն ուներ. (տե՛ս վերև ծանոթագրութիւն թ. 61)»: Այս ծանոթագրութեան մէջ Մ. Գրիգորյանը (նույն տեղում, էջ 344) հայտնում է. «Աղի կը հիշվի երկիցս, նույն անդ, Սեբ. հրտ. Պտկ. 93. Աղիովիտ՝ նույն անդ, 93, 94, 108, և 143: Դուկաս վրդ. Ինճիճեան («Ստորագրութիւն հին Հայաստանեայց», Վենետիկ, 1822, էջ 506) «անծանոթ» տեղանուններու շարքին կը լինէ Ալի գյուղը՝ քաղելով թովմա Մեծոփեցիէն («Չաղաթա պարոն մի ի բերդէն Բասենու եկն զձ մարդով ի գեղն Աղի»), և իրավամբ կը հավելու. «Թուր լինել ի կողմանս Արճիշու»: Հմմտ. Հլուբըմանն, Հին հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 261՝ ծանոթագրութիւն 1»:

Որ Աղի և Աղիովիտ վայրերը տարբեր են՝ ապացուցվում է հենց «Սեբեոսի Պատմութեան» միջոցով: Այստեղ հայտնվում է, որ պարսից զորավար Շահր Վարազը (Խոռամը) իր առաջամարտիկ զորքերի պարտութեան մասին լսելուց հետո փախչում է Աղիովիտ. «Շահր Վարազ զերծա՛ւ նստեալ ի վերայ նուաստ երիվարի. այնպէս զերծեալ գնաց առ զաւրս իւր, զոր ժողովեալ էր յԱղիովիտ գաւառի»: Սրանով պարզ ասված է, որ Աղին և Աղիովիտը տարբեր վայրեր են: Առաջինը պարսից առաջատար զորքերի (պեշոպա) ջարդի վայրն է, իսկ երկրորդն այն վայրն է, ուր փախալ Շահր Վարազը իր զորքերի ջարդի մասին լուրն առնելուց հետո: Աղիում զորքն ամբողջովին ջարդվել էր, իսկ Աղիովիտում «ժողովեալ էր զաւրբն»:

Մալխասյանցը ծանոթագրում է. «Ինչ վայր է Աղին՝ ճշգրիտ հայտնի չէ: Քանի որ Աղին գտնվում էր Աղահովիտ գավառում, որը հին մատենագիրները կոչում են Աղոյ հովիտ, այսինքն Աղիի հովիտ, կարելի է ենթադրել, որ Աղին լեռան անունն է: Թովմա Մեծոփեցին ծանոթ է Աղու լեռան և Արճիշի մոտ գտնվող Աղի գյուղը» (Մալխ., էջ 168, ծ. 146):

436. «Անց ընդ գետան առ Վարդանակերտան աւանա»: Մալխասյանցը (Մալխ., էջ 168, ծ. 147) ծանոթագրում է. «Արաբսի ափին գտնվող Վարդանակերտ ավանի տեղը հայտնի չէ: Քանի որ այն գտնվում էր Հերակլի Շիրակից դեպի Կոզովիտ գնացած ճանապարհի վրա, կնշանակի դա ընկած էր Արարատ լեռան զանգվածից հյուսիս արևմուտք և ոչ մի ընդհանրություն չունի Փայտակարան նահանգում գտնվող Վարդակերտի հետ»:

437. «Նւ Ռոն Վեհանայ և գաւրն Պարսից կաճեալ զնոսա փախստական զնալ»: Բուրր ձեռագրերն ու տպագրերն ունեն «Ռոճիկ Վահանայ», որն, անշուշտ, սխալմամբ առաջացել է «ռոճիկ» բառի և «Վահան» անվան աղղեցություն: Զամինյանը (Զամ., էջ 151) առաջարկում է «Վահանայ»-ը սրբագրել «Վեհանայ». իսկ «Ռոճիկ»-ը թողնում է նույնությամբ: Ծ (Ռ 3122) ձեռագրի գրիչը գրել է «Ռոճիկ գաւառ Վահանայ», բայց լուսանցքում զգալիորեն չենք ընդված է: Մենք «Ռոճիկ Վահանայ»-ը սրբագրել ենք «Ռոճ Վեհանայ», հենվելով հենց «Սեբեոսի Պատմութեան» միևնույն դիտում երկու անգամ հանդիպող «Ռոճ Վեհանայ» ձևի (ՍեՊ, էջ 95), որը մոտենում է Միխայիլ Ասորու կամ Բարհեբրաուսի Rōzbehān ձևին (հմմտ. Մալ., էջ 83, 84, ծ. 1): «Ռոճ Վեհան» անվան մասին ավելի մանրամասն տե՛ս վերը, ծանոթագրություն 378:

438. «Նորա անկեալ յայնկոյս լերինն Զարապայ»: Այս տեղեկության մասին տե՛ս E. Gerland, Die persischen Feldzüge des Kaisers Herakleios:—«Byzantinische Zeitschrift», III, 369 և ն.:

439. «Իսկ Խուրով արքայ Պարսից փախստական զնաց՝ անցանել ընդ Դգլաք գետա ի Վեհկալառ»: Վերջին տեղանվան կապակցությունը Պատկանյանը (Սալխ., էջ 208, ծ. 186) ծանոթագրում է. «Վեհ-Կալառը հայ մատենագիրների կողմից հաճախ հիշատակվում է որպես պարսիկ թագավորների նստավայր: Սա հավանաբար գտնվում էր այն տեղում, որտեղ առաջ ընկած էր Սելևկիան: Հայտնի է, որ 563 թ. Ամիրթը գրավելուց հետո Կավառը Պարսկաստանում հիմնադրեց մի քաղաք, այն բնակեցրեց զերի ամիրթցիներով և կոչեց Beh-an-Amid-Kavad, որը բառացի նշանակում էր՝ Կավաղի Ամիրթից ավելի լավ (բաղա՛վ) ... Քանի որ, ինչպես հայտնի է, Խոսրովը միշտ ապրում էր հույների կողմից դատապարտված կողմից քաղաքում, պետք է ենթադրել, որ հույն մատենագիրներն այստեղ նկատի ունեն հայ մատենագիրների Վեհ-Կալառը, որովհետև դատապարտվող պարսկերեն և հայերեն կոչվում է առհասարակ գյուղ, զվարճալի կայան, դասա՛ ձեռք և կերտ՝ կերտել բառերից, այսինքն կառուցված իրեն համար (իր «ձեռքին բանեցնելու», սեփական—Գ. Ա.) ամառանոց, հանգստավայր»:

Մասնագետները (A. Christensen, L'Iran sous Sassanides, էջ 493) Սելևկիան նույնացնում են Վեհ-Արտաշէր քաղաքի հետ:

440. «Կալան զնա և ածին ի դահլին անդ»: Բոլոր ձեռագրերը, ինչպես նաև Միհրդատյան ու Պատկանյան ունեն «ածին դահլիճ»: Սրա համապատասխան էլ կատարվել են Պատկանյանի և Մակլերի թարգմանությունները: Սակայն Շալճյանը նկատել է, որ դա վրիպակ է և առաջարկել է Թովմա Արծրունու հիման վրա՝ սրբագրել «ածին ի դահլիճ»: Միևնույն առաջարկն արել է նաև Ա. Զամինյանը (Չամ., էջ 154), որը, սակայն, հետո իր սրբագրածի վրա գիծ է քաշել, շնչել է: Ստ. Մալխասյանցը Ա. Շալճյանի ցուցման համաձայն ուղղել է քնագիրը «ածին ի դահլիճ» ձևով, սակայն ոտսերին թարգմանության մեջ թարգմանել է առանց ուղղելու, այսպես. «подвели к нему палача» (Малх., էջ 82): Ինչպես երևում է, Մալխասյանցը նույնպես, Զամինյանի նման, կասկածել է իր սրբագրածի վրա: Սակայն կասկածելու պատճառ չկա, որովհետև «Սեբեոսի Պատմության» հեղինակն իրոք գրել է խոսքովին դահլիճ տանելու և ոչ թե՛ նրա մոտ դահլիճ բերելու մասին:

Քէր կարող պատահել, որ խոսքովի նման նշանավոր մի թագավորի, իր այգու մեջ, թիերի տակ, անզնն թաքնված տեսնելուց հետո, բռնեին և հենց տեղում դահլիճ կանչեին՝ սպանելու համար: Սպանելուց առաջ պետք է այդուց հանեին, տանեին արքունիք, քննեին և ապա վճիռ էլայացնեին: Թովմա Արծրունին հենց այդպես էլ հաղորդում է. «ածին զնա ի դահլիճ (= դահլիճ— Գ. Ա.) անդր. հրաման ետ արքայ Կաւատ արկանել զնա ի տուն մի արհուրանական սենեկացն. և մտանէին առ նա արք ի նախարարացն խօսէին դատաստանօք և նախատէին զնա, անարգէին և զեային: Այլ եղև զատուրս ինչ, ապա անարգեաց զնա և Կաւատ արքայ, եհատ ի վերայ նորա դատաստան մահու, և հրամայէ արանց մտանել և սպանանել զնա, որք մտեալ քարակատեցին զնա տապարօք ի սենեկի անդ և սպանին» (Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 163—164):

Մեր ընդգծած տողերի բովանդակությունը Արծրունիի քաղել է անշուշտ «Սեբեոսի Պատմության» նախնական բնագրում եղած մի հատվածից, որը մեզ հասած բնագրում բացակայում է: Բայց որ այդ հատվածը իսկապես եղել է՝ երևում է Արծրունու «ածին զնա ի դահլիճ անդր. հրաման ետ արքայ Կաւատ... և սպանին» բառերից: Սա գրեթե բառացի քաղված է «Սեբեոսի Պատմության» հետևյալ հատվածից. «ածին ի դահլիճ անդր. և հրամայեաց Կաւատ արքայ, և սպանին զնա»: Թովմա Արծրունուց մեր վկայակոչած հատվածում մենք բազմակետերով նշել ենք վերը մեր ընդգծած այն հատվածը, որն այժմ «Սեբեոսի Պատմությունում» չկա: Ինչպես նկատում ենք, բազմակետերին հաջորդում է «սպանին» (հոգնակի թիվ) բառը: Այդպես է նաև «Սեբեոսի Պատմությունում»: Արդ՝ եթե նախնական բնագրում խոսված լիներ դահլիճ մասին՝ պարզ է, որ «սպանին» բառն էլ պետք է գործածված լիներ եզակի թվով: Բայց որովհետև իրականում խոսքովին սպանել է ոչ թե դահլիճ, այլ, ինչպես Արծրունին է հաղորդում, մի քանի հոգի («որք մտան քարակատեցին զնա տապարօք»), այդ իսկ պատճառով էլ «Սեբեոսի Պատմության» հեղինակը գործածել է «սպանին» արտահայտությունը: Այս արտահայտությունից առաջ գտնված ամբողջ հատվածը (որը մենք Արծրունու մոտ, ինչպես ասվեց, նշել ենք բազմակետերով) կորել է: Նրանից մնացել է միայն հատվածի վերջին բառը. («սպանին»): Որ նախնական բնագրում եղել է ոչ թե «դահլիճ», այլ «դահլիճ» բառը՝ երևում է նաև Մովսես Կաղանկատվացու հետևյալ արտահայտությունից. «մուծին ի սրահ (= դահլիճ— Գ. Ա.) մի» (Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 168):

441. «Արձակէ զՌաշեան ում իշխան մեծամեծ ընծայիս»: Միհրդատյանը (էջ 152) առանց որևէ ծանոթագրության «Ռաշնան» անունը տպագրել է «Ռաշ», որից պետք է ենթադրել, որ իր օգտագործած ձեռագրերում այդպես է եղել: Միհրդատյանին հետևել են նաև Պատկանյանը և Մակլերը: Պատկանյանը, սակայն, տողատակին ծանոթագրում է, որ իր ունեցած ձեռագրում եղել է «Ռաշնան»: Մեր կարծիքով՝ այսպես պետք է եղած լինի նաև Միհրդատյանի ձեռագրերում (Միհրդատյանը մոռացել է ծանոթագրել), որովհետև այդպես է նաև մեզ հասած հնագույն ձեռագրում և մյուս ձեռագրերում:

Հաջորդ նախադասություններում նույնպես կրկնվում է միևնույն անունը «Ռաշնան» ձևով: Սակայն, ինչպես Միհրդատյանը, այնպես էլ Պատկանյանն ու Մակլերը դա ընկալել են «Ռաշնայն» ձևով: Սխալն ուղղել է Ստ. Մալխասյանցը:

442. «Եւ կեմեաց աղ ըստ առաջին աւիհեակին ընդ Տուստար, ըստ առաջին բազաուրաց»: Բոլոր ձեռագրերն ու տպագրիչներն այս նախադասության փոխարեն ունեն «Եւ կեմեալ աղ ըստ առաջին արհիակին զՏուստար ըստ առաջին թագաւորաց»: Այստեղ խախտված է նախադասությունը, բայց Միհրդատյանը և Պատկանյանն այդ մասին որևէ ծանոթագրություն չունեն: Բ.

Պատկանյանը նախադասությունը թարգմանել է այսպես. «Запечатав соль, как в первый раз, он отправил Иуздата по обычаю древних царей»: Այս թարգմանությունը մենք ճիշտ ենք համարել (տե՛ս «Աեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը», Երևան, 1965, էջ 174—175) և ինքնևս էլ ենթադրել ենք, որ նախնական բնագրում եղել է Պատկանյանի թարգմանած «отправил» («արձակեաց») բառի իմաստն արտահայտած մի բառ: Սակայն բնագրի ավելի ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ բառը չէր կարող գրված լինել, որովհետև հաջորդ նախադասության մեջ հայտնվում է, որ պարսից Կավատ արքան հրամայում է հենց Յուստաթի ներկայությամբ հրաման գրել Շահր Վարազին. «Եւ յանդիման Ետա հրամայէ գրել առ Շահր Վարազ»: Եթե հրամանը գրվում է Յուստաթի ներկայությամբ, կնշանակի պարսից արքան Յուստաթին դեռևս տուն չէր արձակել: Յուստաթին իսկպակես տուն ուղարկելու մասին հեղինակը հաղորդում է քիչ հետո, պարզ գրելով՝ «Եւ զՅուստաթ արձակեցի լի գանձիբ, և զնաց»:

5. Մակլեբը (Macl., էջ 86) ֆրանսերեն թարգմանության տողատախի ծանոթագրության մեջ հայտնում է, որ քննարկվող նախադասությունը չի համապատասխանում «Աեբեոսի Պատմության» տեքստի արդի քերականական կառույցին: Փորձելով վերականգնել նախնական բնագիրը, նա անկյունավոր փակագծերի մեջ Յուստաթի անունից առաջ ավելացրել է «avec» բառը և հատվածը թարգմանել այսպես. «scellant le sel [avec Yusdat]»: Սա դրաբարի «կնքեալ աղ [ընդ] Յուստաթ» բառերի թարգմանությունն է: Սակայն բնագիրն ունի ոչ միայն այս բառերը, այլև ըստ առաջին օրինակին՝ արտահայտությունը, որը Մակլեբը չի թարգմանել: Այնինչ՝ Պատկանյանը ընադիրը ճիշտ հասկանալով՝ թարգմանել է այսպես. «как в первый раз»: Մակլեբը, որ ֆրանսերեն թարգմանությունը կատարել է հիմնականում Պատկանյանի հրատարակած հայերեն բնագրի և սեղ-տեղ էլ նույնի ուսերեն թարգմանության (Ա. Մեյի միջոցով) հիման վրա, նշված արտահայտությունը բաց է թողել՝ հավանաբար անվերծանելի համարելով: Սակայն այդ արտահայտության բնագրի վրա մեզ մեկ պարբերություն վերև հայտնված այն տեղեկությունը, որ Կավատ արքան Հերակլ կայսեր մոտ պատվիրակություն ուղարկելիս հրամայում է «աղ կնքել և տանել ընդ հրովարտակին»: Ահա «Աեբեոսի Պատմության» հեղինակն աղ կնքելու այս առաջին դեպքը վերհիշելով է, որ մեզ հետաքրքրող արտահայտության մեջ գրել է. «կնքեալ աղ ըստ առաջին ատիճակին»: Մեր ընդգծած բառերը ուսերեն թարգմանության մեջ բաց է թողել նաև Մալխասյանցը (Macl., էջ 83), որը, սակայն, հայերեն բնագիրը վերականգնելու ճիշտ միջոց է գտել, երբ դրաբար տեքստի տողատախին առաջարկել է «զՅուստաթ»-ից առաջ ավելացնել «ընդ» բառը և շնչելով «զ» նախդիրը՝ սրբագրել այսպես. «ընդ Յուստաթ»: Մենք ձեռագրերի վրիպակն ուղղում ենք ըստ Մալխասյանցի այս առաջարկի, որով կարգավորվում և իմաստ է ստանում «Աեբեոսի Պատմության» հեղինակի խոսքը, այսպես. «Եւ կնքեաց (կնքեաց)՝ի փոխարեն ձեռագրորն ու նախկին հրատարակություններն ունեն «կնքեալ», որը մեկը սրբագրում ենք ըստ նախադասության վերականգնման հետևանքով առաջացած պահանջի—Գ. Ա.) աղ ըստ առաջին արինակին ընդ Յուստաթ, ըստ առաջին թագաւորաց»: Բացատրությունը կլինի այսպես. Եվ առաջին դեպքի նման՝ նա Յուստաթի հետ կնքեց աղ, ըստ հին թագավորների սովորության:

143. «Եւ ծաղովեալ զամենայն եպիսկոպոսունս»: Բոլոր ձեռագրերում և տպագրիչներում «զամենայն»-ի փոխարեն գրված է «ամենայն», որը սխալ է: Մենք ուղղել ենք «զամենայն», հենվելով «Աեբեոսի Պատմության» մեջ տարբեր տեղերում գործածված այդ միևնույն քերականական ձևի վրա: Հենց միևնույն գլխում հեղինակը գրում է. «Յայնժամ դիրաւ հաւանեալ իտոնմայ՝ թողու ի բաց զԱղեքսանդրիա, և առեալ զամենայն զարս իւր և ի մի վայր գումարեաց»:

Չամինյանը (Չամ., էջ 157) նույնպես առաջարկել է «ամենայն»-ը սրբագրել «զամենայն»-ով:

444. «Կեցեալ ամիսս վեց վախճանեցաւ»: Մակլեբը (Macl., էջ 88, ծ. 3) առաջարկում է «կեցեալ»-ի փոխարեն կարդալ «կացեալ», բխցնելով «կենալ» բայից: Բայց թովմա Արծրունի դուևս X դարում կարդացել է «կեցեալ»: Նա գրում է. «մեռաւ, կեցեալ ամիսս վեց» (Ք. Արծրունի, էջ 164): Նույն «կեցեալ» բառն է գործածում նաև Ասողիկը, որը գրում է. «Բսկ Կաւատ վեցեալ ամիսս վեց՝ վախճանի» («Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 117):

445. «Եւ եթէ զաւր պիտոյ է՝ արձակեցից յազնակաճուրխն որչափ և պիտոյ իցէ քեզ»: Այս արտահայտությունից ամփոփապես հետո, ինչպես երևում է, նախնական բնագրում եղել է մի տեղեկություն, որն այժմ չկա և որի բովանդակությունը գտնում ենք Արծրունու հետևյալ հատվածում. «Բայց արդ եկ ի կողմանցդ յայդցանէ, եկից և ես յԱսորեստան, և երդումն արարեալ»: Սրանք Հերակլի խոսքերն են, ուղղված իտոնմային: Տեսնելով, որ Կավատ թագավորը վախճանվել է և թագը ծառանդելու է նրա անշափահաս որդի Արտաշիրը, Հերակլ

կայսրը պարսից զորավար Խոռեամին առաջարկում է թողնել իր զբաղեցրած տեղերը և գալ Ասորեստան հաշտութիւն կնքելու: Այս հատվածի կորստյան պատճառով այժմ «Սեբեոսի պատմութիւն» մեջ հայտնի չէ, թե ո՞րն էր այն «ժամադիր տեղին, ուր ասացեալ էր նմա Երակիլ»: Արծրունու հատվածի միջոցով պարզվում է, որ դա Ասորեստանն էր: Ասողիկը նույնպէս գրում է, որ Հերակլը Խոռեամին «կոչէ առ ինքն» («Պատմութիւն տիեզերական», էջ, 117): Այսպիսով, «Սեբեոսի Պատմութիւնից» օգտված երկու պատմիչների միջոցով պարզվում է, որ «Սեբեոսի Պատմութիւնը» տվյալ տեղում ունի Խոռեամին Ասորեստան կանչելու վերաբերյալ մի հատվածի կորուստ, որը կարելի կլինե՞ր վերականգնել՝ Արծրունու հատվածը ներմուծելով, եթէ համոզված լինեինք, որ Արծրունին նույնութիւնը է արտագրել իր աղբյուրը:

446. «Եւ քողեալ զնոսա, և ինքն սակաւով զնաց ի ժամադիր տեղին, ուր ասացեալ էր նմա Երակիլ»: Ֆ. Մակկերը (Macl., էջ 88, ծ. 5) հայտնում է, որ Ք. Պատկանյանը «Journal asiatique»-ի 1866 թ. № 1, էջ 219-ում ասում է, թե Խոռեամը և Հերակլը «ժամադրութիւն են ունեցել Հերակլի կողմով մի տեղում»: Իրականում, սակայն, մեզ հետաքրքրող տողերում հանդիպող Երակիլ-ն Հերակլ կայսեր անունն է և ոչ ժամադրութիւն վայր: Պատկանյանը «Journal asiatique»-ում հրատարակած հոդվածից չորս տարի առաջ՝ 1862 թ. «Սեբեոսի Պատմութիւն» ռուսերեն թարգմանութիւն մեջ ճիշտ է թարգմանել մեզ հետաքրքրող տեղը «подел (Խոռեամը—Չ. Ա.) в назначенное место, указанное ему Ираклом», էջ 109): Այսպիսով, ինչպես Մակկերն է ասում, Ք. Պատկանյանի սխալը հետևանք է անուշադրութիւն:

447. «Եւ քազաւորեցուցին զԲոսն, դաւառ Խոսրովայ»: Բոլոր ձեռագրերում և տպագրերում՝ «զԲոսն»: Սխալմամբ կրկնված է Բոսան անվան առաջին՝ «բ» տառը: Մենք անվան ճիշտ ձևը վերականգնել ենք ըստ Թովմա Արծրունու, որը «Սեբեոսի Պատմութիւնից» օգտվելիս երեք անգամ կրկնում է «Բոսն» ձևը (Հմմտ. Թ. Արծրունի, էջ 167) և ըստ Վարդան Արևելցու, որը, դարձյալ օգտվելով «Սեբեոսի Պատմութիւնից», գրում է «Բոսն» (Պատկ., էջ 183): Անունը «Սեբեոսի Պատմութիւն» ձեռագրերում աղավաղված է եղել դեռևս X դարում, այդ իսկ պատճառով էլ Ասողիկը և Անանունը գործածել են «Բբոր» վրիպակը: Այս մասին մանրամասն տե՛ս ծ. № 107:

448. «Եւ կարգեցին հրամատար»: Բոլոր տպագիրներն ունեն՝ «հրամանատար»: Ստ. Մալխասյանցը ծանոթագրութիւնների բաժնում և տողատակի տարբնթերցվածքների մեջ հայտնում է, որ ինքը ուղղել է «հրամատար», սակայն իրականում նա բնագրի մեջ բառը թողել է նույնութիւնը և ուղղել է միայն վրիպակների ցանկում: Մենք հետևելով մեզ հասած ձեռագրերում պահպանված «հրամատար» ձևին, բառը սրբագրում ենք այդպէս:

Մալխասյանցն իր սրբագրութիւնը կցել է հետևյալ ծանոթագրութիւնը. «Ա ձեռագիրը (№ 2639—Չ. Ա.) շարունակ գործ է ածում հրամատար, որ մենք ըստ տպագիրների ուղղել ենք հրամանատար, երբ խոսքը վերաբերել է զորքի առաջնորդութիւն: Բայց այստեղ պահեցինք հրամատար ձևը, քանի որ խոսքը վերաբերում է բոլորովին այլ բանի—պետութիւն վրիպակով կառավարչին. ներքա դեպքում՝ Թագուհու վրա խնամակալի: Եղիշի մեջ Միհրնեսիս իրան կոչում է «Վզուրկ հրամատար» (Հայոց պատասխան-նամակի մեջ թարգմանված՝ մեծ հազարապետ), որ ուրիշ օրինակներ գրում են հրամանատար: Բառը առաջ է դալիս պահլավերեն framatar-ից, հին պարսկերեն framatar, նոր պարսկերեն framadar. Տե՛ս նաև Արմ. բառ.» (ՄԵՊ, էջ 190—191, ծ. 59):

Թովմա Արծրունուց երևում է, որ «Սեբեոսի Պատմութիւն» «հրամատար» բառը X դարում արդեն աղավաղված է եղել «հրամանատար» ձևով: Արծրունին գրում է. «Կարգեցին՝ հրամանատար ի դրանն զԽոռոխ Որմիզը» (Թ. Արծրունի, էջ 167):

449. «Եւ յետ սորա Որմիզը»: Բոլոր ձեռագիրներն ու տպագիրներն ունեն «Որմիզի» (փխ-«Որմիզը»), Ֆ. Մակկերը (Macl., էջ 90) սրբագրել է «Որմիզը»: Մ. Գրիգորյանը կրկնել է Մակկերին:

«Որմիզը» անվան սրբագրութիւն մասին տե՛ս նաև ծ. № 123:

450. Եւ ամենէին միաբան պատուէին զնա միաբանութեամբ: Ամէն: Այս վերջին բառի փոխարեն ձեռագրերում հանդիպում ենք «ասէ» կամ «այսէ» բառերը: Վրիպակը նկատել է Միհրդատյանը, որը բառը սրբագրել է «ամէն» և տողատակին ծանոթագրել: «Յօրինակին՝ գրեալ էր ասէ, բայց մեք եզաք ամէն» (Միհրդ., էջ 157): Պատկանյանը հետևել է Միհրդատյանին և դարձյալ սրբագրելով «ամէն»՝ տողատակին ծանոթագրել է. «Ի ձեռ. օրին. էր այսէ»: (Պատկ., էջ 100): Այս երկու հրատարակիչներն էլ բառը որևէ կետագրութիւնը չեն անջատել նախորդ բառերից, որի հետևանքով Ֆ. Մակկերն այդ բառը շփոթել է հայերեն «ամէն» բառի հետ և միացնելով նախորդ՝ «միաբանութեամբ» բառին, վերծանել է այսպես. «միաբանութեամբ ամէն» („dun commun accord“, էջ 90):



Պատկանյանը ուսերեն թարգմանության մեջ բառը նախորդներից անջատել է ստորակետով և թարգմանել այսպես. «единодушно почиталч его, аминь» (Սարկ., էջ 117):

Ավելի ճիշտ է վարվել Մալխասյանցը, որը բառն անջատել է վերջակետով (Մալխ., էջ 100) և այդպես էլ թարգմանել է. «единодушно почитали его Аминь.» (Մալխ., էջ 86):

451. «Քաշիխեաց ամենայն եկեղեցեացն և բնակչաց փաղափին աւեմուրիւն և զինս խնկոց»։ Հերակլ կայսրը 629 թ. սեպտեմբերին Քրիստոսի խաչափայտը պարսկական գերութունից վերադարձրեց Երուսաղեմ, Գողգոթա։ Այս կապակցությամբ տեղի ունեցան ժողովրդական տոնախմբություններ, որոնց մասին հաղորդում են հայ և օտար մի շարք մատենագիրները։ «Սեբեոսի Պատմության» հեղինակը հայտնում է, որ բյուզանդական կայսրն այդ օրը երուսաղեմցիներին բաժանեց խնկի զին և օրհնություն։ «Օրհնություն բաժանել» արտահայտությունը արտասովոր է, որովհետև բուն հայերենում «օրհնություն» բառն ունի միայն բանավոր օրհնության իմաստ, իսկ բանավոր օրհնության մասին չի կարելի ասել «օրհնություն բաժանել»։ «Սեբեոսի Պատմության» հեղինակի արտահայտության ձևից երևում է, որ մեր պատմիչն օգտվել է հունական աղբյուրից, որի մեջ «օրհնություն» բառն ունեցել է նյութական օրհնության իմաստ։ Հայ մատենագրության մեջ միայն հունարենից թարգմանված նրկերում է հանդիպում բառի այդ իմաստը։

452. «Մի՛նչև զաւրավարին հաճոյանալ (քերևս՝ «հաճոյացեալ») ըստ կամաց նորա կարգեր զկարգս զինուորացն և բաշխումն շտեմարանաց ի վերայ ամենայն երկրին»։ Բոլոր հրատարակություններում «նորա» բառից հետո դրված է վերջակետ, այնինչ այդ բառն անբաժանելիորեն կապված է իրեն հաջորդող «կարգէր» բառի հետ։ Պատմիչն ասում է «ըստ կամաց նորա կարգեր զկարգս զինուորացն»։

Հատվածի բովանդակությունը անհասկանալի են համարել ինչպես հրատարակիչները, այնպես էլ ուսումնասիրողները։ Ստ. Մալխասյանցը գրում է. «Տեքստն այստեղ պարզ չէ։ Մի՞թե հայ կաթողիկոսը (խոսքը Եզր կաթողիկոսի մասին է—Գ. Ա.) զինվորական կարգեր էր սահմանում հունաց բանակում։ Հասկանալի չէ նաև, թե ինչ շտեմարաններ էր նա բաժանում ամբողջ երկրով մեկ» (Մալխ., էջ 168, ծ. 152)։ Այս հարցերը ծագել են տեքստը ոչ ճիշտ վերծանելու հետևանքով։ Պատմիչի խոսքը իրականում ոչ թե կաթողիկոսի, այլ զորավարի (Մծեծ Գնունու) մասին է։ Վերջինս է, որ հաճոյանալով կաթողիկոսին նրա կամքով էր կարգավորում Հայաստանի բյուզանդական մասի զինվորական զործերը։ Դարձյալ կաթողիկոսի կամքով է, որ նա ամբողջ երկրի վրա էր բաժանում շտեմարանները։ «Ինչ շտեմարաններ էր նա բաշխում ամբողջ երկրում, տարօրինակ է ու անհասկանալի» (Վ. Կ. Խկանյան, Հայբյուզանդական հարաբերությունները VII դարում՝ արաբական առաջին արշավանքների ժամանակ, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4, էջ 70, ծ. 53)։ Մեր կարծիքով, պատմիչն ակնարկել է այն շտեմարանները, որոնք սննդամթերք էին պահում Հայաստանում նստած բյուզանդական բանակի համար։ Եզրը գտնվում է հունական բանակում («նստէր ի մէջ բանակին Յունաց»), մինչև որ հաջողացնում է զորավարին համաձայնեցնել («մինչ զաւրավարին հաճոյանալ») ըստ իր՝ կաթողիկոսի կամքով տեղաբաշխելու շտեմարանները Հայաստանում։

Տեքստն այնքան մութ է, որ «Սեբեոսի Պատմության» առաջին թարգմանիչներից Պիտանյանցը իր անտիպ հատվածական ուսերեն թարգմանության մեջ (ՄՄ, կազարյանների արխիվ, թղթ. 100, վավ. 51, էջ 7) նույնիսկ չի էլ նկատել, որ խոսքը հունական բանակում նստած հայոց կաթողիկոսի մասին է։ Նրա թարգմանության համաձայն՝ բանակում նստածը Մծեծն է։ Այս անունը իրենից ավելացնելով տեքստի մեջ, նա գրել է. С тех пор Мжеж находился в греческом лагере, так, что даже полководец угаждал его воле». Թարգմանիչը չի նկատել, որ հունական բանակի զորավարը հենց Մծեծն ինքն է, հետևաբար, Մծեծը՝ չէր կարող են թաքրվել դարձյալ Մծեծի (հունական զորավարի) կամքին։

453. «Իսկ Վարազտիրոց ասպետ, անուանեալ ի քաղաւորաց Զափտեան խոսրովու։ Սմբատ Բագրատունին կրում էր «Նոսրով Շումն» («Նոսրով Ապրվեզ թագավորի գովեստ, գովատ») պատվավոր տիտղոսը։ Նրա որդին՝ Վարազտիրոց ասպետն էլ, ինչպես տեսնում ենք, կրել է «Ջափտեան խոսրովու» («Ջափտան՝ խոսրովի», այսինքն՝ մշտապես խոսրովին հավատարիմ) պատվավոր տիտղոսը։ Մալխասյանցը (Մալխ., էջ 191) «Ջափտեան» մականունը բխեցնում է պահլավերեն yavētan, պարսկերեն javedan բառերից, որոնք նշանակում են հափտյան, մշտական։

454. «Եւ արձակեալ նորա զեղբայր իւր դարիփպետ»: «Գարիբպետ»-ի փոխարեն բոլոր ձեռագրերն ու նախկին հրատարակութիւններն ունեն «Գարիբպետ»: որն ընկալվել է որպէս անձնանուն և մտել իրանական անձնանունների բառարանը (F. Justi, Iranisches Namenbuch, Marburg, 1895, էջ 111): Սակայն բառավերջի «պետ» մասնիկը պաշտոնի անվան տպավորութիւն է թողնում և հավանաբար այդ պատճառով էլ Հ. Հյուբշմանը դեռևս 1895 թ. հայտնել է, որ դա տիտղոսի անուն է («Arm. Gramm.», էջ 34):

3. Մարկվարտը 1901 թ. որոշակիորեն պարզեց այդ տիտղոսը և գտավ, որ «Սեբեոսի Պատմութիւն» մեղ հասած ձեռագրերում աղավաղված «Գարիբպետ»-ի (այսպիսի անձնանուն առհասարակ գոյութիւն չունի) փոխարեն նախնական բնագրում եղել է «գարիկպետ» բառը: Հայագետի բացատրութիւնը՝ այս ոտը նշանակում է «գարիկի»՝ արքունիքի գործերի պետ» և իր կազմութիւնը համապատասխանում է բյուզանդական պատմիչ Քեոփիլակտես Սիմոկատտասի (Theophyl. Sim., 3, 18, 12) կողմից նույնացված Κοροπαλατης տիտղոսին: A. Christensen («L'Iran sous les Sassanides», Copenhagen, 1944, էջ 499) բառը տառադարձու է darigbhadh ձևով:

Մարկվարտը «Սեբեոսի Պատմութիւն» համապատասխան տեղը վերապատմելիս արդեն սրբագրել է բնագիրը և «Գարիբպետ»-ի փոխարեն տպագրել է «գարիբպետ», փակագծի մեջ հայտնելով, որ բառը պետք է կարդալ հենց այդպես. „So [I]esen“ (կամ՝ „so [I]ies“): Տե՛ս J. Markwart, Erānšahr, Berlin, 1901, էջ 112—113:

Մարկվարտի սրբագրութիւնը մտել է գիտական շրջանառութիւն մեջ և բազմիցս նշվել է ն. Մառի, 2. Օրբելու և այլոց համապատասխան ուսումնասիրութիւններում: 2. Օրբելին («Избранные труды», Ереван, 1963, էջ 526) գրել է. «Այս բառը («գարիկպետ»—Գ. Ա.) հայերենում գրանցված է առայժմ երկու անգամ, VII դարի պատմիչ Սեբեոսի 39-րդ գլխում (ներկա հրատ. 41-րդ գլուխը—Գ. Ա.), որտեղ բառը սխալմամբ ընդունվում է որպէս հատուկ անուն, և ներկա տեղում (Շիրակացու «Ճաղագս հարցման և լուծման» աշխատութիւն մեջ—Գ. Ա.), որտեղ սա աղավաղված է գրիչների ձեռքով և չի սրբագրված առաջին հրատարակչի կողմից»: Շիրակացու «եկեալ ի տուն գարիկպետի» աղավաղված արտահայտութիւնը Հ. Օրբելու 1918 թ. հրատարակած ուսանելի թարգմանութիւն մեջ տպագրված է արդեն սրբագրված վիճակում. «прибыв в дом дарикпета» (նշված աշխ., էջ 517): նույն սրբագրութիւնը կրկնված է նաև Մելիքսեթ-Քեկովի 1930 թ. հրատարակած աշխատութիւնում («К истории точных наук в Армении и Грузии», Тифлис, 1930, էջ 227) և այլուր:

Այս ամենը դժբախտաբար վրիպել է ինչպէս «Սեբեոսի Պատմութիւն» և Շիրակացու գրաբար բնագրի հրատարակիչների, այնպէս էլ հայերենի բառարանների հեղինակների, մասնավորապէս Հ. Աճառյանի և Ստ. Մալխասյանցի, ուշադրութիւնից և բառը շարունակելով հրատարակվել «գարիկպետ» սխալ ձևով՝ իր ճիշտ ուղղագրութիւնը («գարիկպետ») չի մտել ո՛չ բառարանների, ո՛չ էլ «Սեբեոսի Պատմութիւն» մեջ և Շիրակացու երկերում: Իսկ Մ. Գրիգորյանը 1973 թ. հրատարակած իր գրքի («Գիտողութիւններ և սրբագրութիւններ Սեբեոսի պատմագրոց բնագրին վերա», Վիեննա, 1973, էջ 6)\* առաջաբանում գրում է. «գարիբպետ» կամ «գարիկպետ» անհասկանալի տիտղոսը սրբագրելով իբր գարիկպետ... խավարեն փրկած եմ անձանոթ բառ մը»:

Ոչ մի կասկած չի կարող լինել այն բանում, որ «Սեբեոսի Պատմութիւն» հեղինակն այդ բանն ընկալել է իսկապէս որպէս տիտղոսի և ոչ անձի անուն: Պատմիչը գրում է. «Եւ իբրև եկին հասին մնացորդը զարաբցն Պարսից յԱտրպատական՝ զումարեալ ժողովեցան ի մի վայր, և նստուցին իրեանց զարավար զեռոտխազատ» (էջ 109): Այստեղ եռոտխազատը հենց անունն է այն գարիկպետի («պալատապետի»), որի մասին պատմիչը սրբագրվող հատվածում գրում է. «Եւ արձակեալ նորա (Ատրպատականի իշխան Ռոստոմը ուղարկում է—Գ. Ա.) զեղբայր իւր դարիբպետ, զի երթեալ ձմերեաց է ի Դունի» (էջ 102): Ինչպէս տեսնում

\* Մ. Գրիգորյանի գիրքը անփոփոխ արտատպութիւնն է «Հանդես ամսօրյայում» նախօրոք տպագրված նրա հոդվածների: Վերջիններս մենք քննարկել ենք հեղինակին ուղղած նամակներում, որոնց պատասխանները նույնպէս տպված են «Հանդես ամսօրյայում»: Ժամանակագրութիւնը պահպանելու համար մենք մեր սույն հրատարակութիւն մեջ հարգելի բանասերի աշխատութիւնն անդրադառնալիս նշել ենք ոչ թի գրքի, այլ «Հանդես ամսօրյայի» համապատասխան էջերը:

ենք, առաջին քաղվածքում հայտնված է անձնանունը (հոռոխազատ = Farrukh-zād, Khvarreh-zād), իսկ երկրորդում՝ տիտղոսը (աղարիբպետ)։

455. «Նա այս է շարտիսն եղեալ յորդի կայսերն Երակղի՝ յանցս մեծս»։ Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 344) «յանցս» բառի փոխարեն առաջարկում է «յանցանս» բառը։ Սակայն նման սրբաբանության կարիք չկա, որովհետև «յանցանք» բառը գրաբար գործածվում է նաև «յանցս» ձևով։

456. «Որում անուն էր Աթաղարիկոս»։ Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն Աթաղարիկոս։ Մենք սրբագրում ենք Աթաղարիկոս։ Մեր սրբագրության ճշգրտությունը հաստատվում է հենց հաջորդ նախադասության մեջ հանդիպող Աթաղարիկոս ձևից («գորդի նորա զԱթաղարիկոս նստուցանել յաթոն թագաորութեանն»)։

Աթաղարիկոսի՝ իր հոր (Չերակ կայսեր) դեմ նյութած դավադրության մասին հայտնում են նաև հունական աղբյուրները։ Դավադրության մասին ավելի մանրամասն տե՛ս Lebeau, Histoire du Bas-Empire, 224. հմմտ. Патк., էջ 210, ծ. 196։

457. «Որ և խողխողեաց զսիրս հաւուն և խրամատեաց զհրաշալի անձն»։ Բոլոր ձեռագրերն ունեն «որ ի հոռոխոռունեաց»։ Միհրդատյանը ուղղել է «ի խոր վիրատրեաց» (Միհրդ., էջ 161)։ Նրան հետևել է նաև Ք. Պատկանյանը (Պատկ., էջ 102). Մալխասյանցը դարձրել է «ի խոր խոցեաց» (ՄԾՊ, էջ 103)։ Սակայն աղճատված «հոռոխոռունեաց» բառը կարող էր ծագել ամենից առաջ խողխողուն (= խողխողված) բառից, որովհետև այս դեպքում գործ ունենք միայն մեկ տառի՝ դ < ո աղավաղման հետ։ Դ-ն և Ռ-ն զծագրական առումով այնքան մոտ են իրար, որ բավական է, որ Դ-ի գլխիկի ձախ կողմը մի փոքր դեպի վար իջնի և նրանից կտրված լինի։ Այդպես էլ պատահել է մեզ հետաքրքրող դեպքում. սկզբնական բնագրի խողխողեաց բայն ունեցել է «խողխոռեաց տեսքը, և քանի որ հայերենում «հոռոխոռունեաց» բառ չկա՝ ընդօրինակող գրիչն այն մեքենայաբար նույնացրել է միևնույն պարբերությունում հանդիպող հոռոխոռունեաց (Վահան հոռոխոռունի) ազգանվան հետ և այդպիսով խողխողեաց-ը դարձել է «հոռոխոռունեաց»։

Խողխողել և խրամատել բառերը քննարկվող հատվածում օգտագործված են պատկերավոր արտահայտությամբ և երկուսն էլ սկսում են համահնչուն խ-ով։ Սա ճարտասանական արտահայտության ձև է, որին դիմել է հեղինակը, ինչպես որ արտահայտվել է ասենք, Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսը Նեստորի մասին՝ «Պատատող (=խրամատող) և խողխողիչ» (տե՛ս «Նոր Հայկազյան բառարան», հ. 1, էջ 960)։

458. «Պատեառք կարտեան իւր անձին և բազմաց»։ Ձեռագրերը և Միհրդատյանի հրատարակությունը չունեն «կորստեան» բառը։ Ք. Պատկանյանը ուստ. թարգմանության մեջ (Պատկ., էջ 114) նրա փոխարեն փակագծերի մեջ ավելացրել է «ГИБЕЛИ» բառը, իսկ հայերեն բնագրում դարձյալ փակագծերի մեջ ներմուծել է «կորստեան» բառը (Մալխասյանցը վրիկապարար հայտնում է, թե բառը ներմուծողը Միհրդատյանն է)։ Ֆ. Մակիլըր (Macl., էջ 93) Պատկանյանին հետևելով՝ ֆրանս. թարգմ. մեջ փակագծերի մեջ է վերցրել «կորստեան» բառի թարգմանությունը [de la perte]։ Մալխասյանցը վերացրել է փակագծերը և բառը տպագրել է առանց որևէ տարբերիչ նշանի։ Մենք հետևել ենք Մալխասյանցին, որովհետև քննարկվող բառը գիտում ենք որպես նախնական բնագրում հենց այդ ձևով գտնված բառ։

459. «Այլ հրամայեաց տանել զնա և զկին նորա և զորդս նորա ի կղզի և ի քաղաքն նեղուքեանն, որում Ախուրն կոչեն»։ Միհրդատյանը և Պատկանյանը «Աքսորն» բառը տպագրել են մեծատառերով։ Մալխասյանցը դարձրել է փոքրատառ, բայց անվանացանկում և ուսուցիչի թարգմանության մեջ (Մալխ., էջ 88) կրկին վերականգնել է մեծատառը։ Սակայն թարգմանությանը կից ծանոթագրության մեջ (էջ 169, ծ. 154) նա գրում է. «Աքսորք (աքսոր բառի ուղղական հոլովը, հոգնակի թիվ) ոչ թե հատուկ, այլ հասարակ անուն է, որը նշանակում է աքսոր, աքսորավար, ծագում է հունարեն exoria բառից, որը հայերենի մեջ թափանցել է ասորական aks'oria ձևով»։ Մալխասյանցից առաջ Պատկանյանն է բառը նույնացրել հունարեն εξορία բառի հետ, գրելով. «հայտնի չէ, թե հեղինակը ո՞ր քաղաքն է ակնարկում» (Պատկ., էջ 310, ծ. 197)։ Պատկանյանից հետո բառի նույն ձևով ստուգաբանել են Հ. Հյուբեր-ճանը (.Arm. Gramm., 1, էջ 301) և Ֆ. Մակիլըր (Macl., էջ 93, ծ. 2)։

Մենք բառը տպագրում ենք մեծատառով, որովհետև պատմիչը դա գործածել է որպես հատուկ անուն, գրելով «ի քաղաքն նեղութեանն, որում Աքսորն կոչեն»։ Եթե նա որպես հատուկ անուն ընկալած չլիներ՝ չէր գրի «Աքսորն կոչեն» և կբավականանար միայն հայտնելով, որ կալանավորներին ուղարկել են «ի քաղաքն նեղութեանն»։ Սա արդեն բավական էր պատժի մասին հայտնելու համար. բայց պատմիչը սրանով չի բավարարվել և քաղաքի մասին խոսե-

լուց հետո ավելացրել է «որում Աքսորն կոչեն»: Կնշանակի քաղաքը ժամանակակիցները կոչել են հենց «Աքսորք» (Ξεσορια), ինչպես, ասենք, հունարեն «Մով» (Μόνος) բառով կոչել են երբեմն Սև ծովը, երբեմն Միջերկրական ծովը, երբեմն էլ՝ Սև ծովի և պատմական Հաստանի միջև գտնված մի երկիր:

Յ. Մակկերը (MacI., էջ 93, ծ. 2) իրավացիորեն ենթադրում է, որ պատմիչի նշած արտորվայրը կարող էր լինել Աֆրիկան: Առ այս նա մատնացույց է անում մի քանի էջ հետո եկող հետևյալ տեղեկությունը. «Սա (Թեոդորոս զորավարը—Գ. Ա.) իբրև առ զգալավարութիւնն՝ աղաչեաց զթագաւորն (Կոստանդ կայսերը—Գ. Ա.) և խնդրեաց պարգևս՝ առնել ողորմութիւն մանոցիկ, զորս էր արտորեալ յԱֆրիկէ: Եւ մանաւանդ վասն (Վարազտիրոց) ասպետի, որոյց Սմբատայ Խոսրով Շում կոչեցելոյ»: Ինչպես տեսնում ենք, Վարազտիրոցը գտնվում էր Աֆրիկայում: Ուրեմն, եթե «Աքսորք» տեղանվանը վերաբերող հատվածում հայտնվում է, որ կայսրը Վարազտիրոցին ուղարկում է «ի քաղաքն նեղութեան, որում Աքսորն կոչեն» և քիչ հետո էլ իմանում ենք, որ Թեոդորոս Ռշտունին կայսրից խնդրում է՝ աղատել Աֆրիկա արտորված Վարազտիրոցին, պարզ է, որ Վարազտիրոցը արտորված էր իսկապես Աֆրիկա և որ «Աքսորքը» Աֆրիկայում գտնված մի վայրի անուն է: Հիշենք, որ Սմբատ Բագրատունուն նույնպես հույներն արտրեցին Աֆրիկա:

460. «Սատակէ զնա և զվարագ Գնել Գնունի»: «Վարագ Գնել» անունը կրկնակի անուն է, որի առաջին «Վարագ» անունը պատվավոր կոչում է: Հմմտ. H. Hübschmann, Arm. Gramm., I, էջ 81: Մայլասայնցը ծանոթագրում է. «Վարագ, պահլավերեն varâz կամ varâi նշանակում է վարագ: Այս բառը գործածվում է իբրև հատուկ անուն: Վարագի նկարը Սասանյան թագավորների զինանշանն էր, դա փորագրված էր որպես կնիք ծառայող մատանիների վրա, այստեղից էլ «Վարագագիր մատանի» արտահայտությունը («մատանի՝ վարագի նկարով»): Բայց ավելի հաճախ «Վարագ»-ը կցվում էր հատուկ անուններին, որպես պատվավոր կոչում, երբեմն հատուկ անուններից անշատ, ինչպես՝ Վարագ Ներսեհ, Վարագ Տրդատ, Վարագ Գնել, երբեմն էլ միացած, ինչպես՝ Վարագվահան, Վարագդատ, Վարագտիրոց և այլն» (Մառ., էջ 169, ծ. 155):

461. «Իսկ թագաւորն առնէ ըստ խնդրոյ իշխաւեացն զնա իշխան ի վերայ ամեհայն աշխարհացն»: Նախորդ հրատարակությունները շունեն «ի վերայ» արտահայտությունը: Մենք վերականգնել ենք ըստ 2639 ձեռագրի:

462. «ՁԱքրահամեանն հանեցից զգաւակէ»: Այստեղից սկսած մինչև Պատմության վերջը 2. Հյուբշմանը հատվածաբար և երբեմն էլ բովանդակությունը համառոտ վերաշարադրելով թարգմանել է գերմաներեն և նրան կցելով մի փոքրիկ առաջարան, ներկայացրել է որպես դիսերտացիոն աշխատություն, հետևյալ տիտղոսաթերթով. „Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber. Aus dem Armenischen des Sebêos. Habilitationsschrift durch welche mit Zustimmung der philosophischen Facultät der Universität Leipzig zu seiner Dienstag, den 27, April, Nachmittags 5 Uhr im Auditorium № 2 des Bornertanum zu haltenden Probevorlesung: Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen ergebenst einladet Dr. Heinrich Hübschmann“.

Մեր Մատենադարանում պահվող (գերմաներեն գրականության բաժին, № 2144) 44 էջանոց այս գրքույկի (որը, ի դեպ, Մատենադարան է մուտք գործել 1903 թ. ք. Պատկանյանի գրադարանից) միակ օրինակի տիտղոսաթերթի վրա հրատարակության տարեթիվը չի նշված: Բայց դատելով տիտղոսաթերթի վրա հայտնվող այն տեղեկությունից, որ Հյուբշմանն այս գրքույկի միջոցով մասնագետներին հրավիրում է ապրիլի 27-ի ցերեկվա ժամը 5-ին ներկա գրողներին իր կարողացվելիք զեկուցմանը („Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen“ թեմայով), իսկ այդ զեկուցումը կայացել է 1875 թվականին (տե՛ս „Zeitschrift für vergleichenden Sprachforschung“, Güthersloh, 1877, Bd 23, H, 1), պետք է ենթադրել, որ գիրքը հրատարակված է 1875 թ.: Այս թվականը նշում են Հյուբշմանի թարգմանությունը հիշատակելու առիթ ունեցած մի շարք մասնագետներ, առանց հայտնելու, թե որտեղից են քաղել թվականը: Ի դեպ՝ «Սեբեոսի Պատմության» գերմաներեն սույն հատվածական թարգմանության խորագիրը ճշգրիտ չի նշված նույնիսկ Ստ. Մայլասայնցի հրատարակության մատենագիտական բաժնում (Առաջաբան, էջ 2Գ) և Ա. Մայլասայնի «Հայկական մատենագիտության» մեջ (Ծրեան, 1969, էջ 117): Ինչպես երևում է, այս մատենագիտական տվյալները քաղված են ոչ թե գերմաներեն թարգմանության տիտղոսաթերթից, այլ կողմնակի աղբյուրներից: Մատենագիտական սույն մանրակրկիտ տեղեկությունները հարկ համարեցինք թղթին հանձնելու, նկատի ունենալով, որ Հյուբշմանի երկից մնացել են հազվագյուտ օրինակներ: Նրա մասին տե՛ս մեր հոդվածը՝ REArm. N. S., T. XIV.

463. «Եւ իբրև գիտացին սոքա էրն ոչ կարեն ունել զղէմ ճորս պատեւազմա՝ խոսեցան ընդ նմա ի խաղաղութիւն: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «ոչ կարեմք»: Սա ակընհայտ վրիպակ է: Ստ. Մալխասյանցը մտովի ուղղել է «ոչ կարեն» և ուսերեն թարգմանել է «He moгыт» (Малх., էջ 89), փակագծերում նշելով, որ խոսքը հրեաների մասին է: Միևնույն ուղղումը կատարել է նաև Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1969, էջ 201): Մենք նույնպես վրիպակն ուղղել ենք միևնույն ձևով:

464. «Որում անուն էր Մանվէտ, քանգար»: Բոլոր ձեռագրերում և Միհրզաթյանի ու Պատկանյանի հրատարակություններում Մահմեդի անունը հանդիպում է քանկանգար սխալ ձևով: Պատկանյանը ուսերեն թարգմանության մեջ (էջ 116) բառը նույնությամբ էլ թողել է, չի թարգմանել, իսկ ծանոթագրության մեջ գրել է. «քանգանկար բառը հավանաբար աղավաղումն է քանգար վաճառական բառի» (Սатк., էջ 210, ժ. 199): Հայերեն բնագրի ծանոթագրությունների բաժնում (էջ 202—203) նա ավելի մանրամասն է անդրադարձել բառին. «Թոմա Արծր. (110) և Վարդան (63) քանգար կոչեն զՄահմէտ: Ձթանգարն վաճառական թարգմանեն բառգրք և հայագէտք, իբր թե յարաբացի ۱۰۰۰ ۱۰۰ քաչիբ բառէ, կամ յարամականէն քազգար (Lagarde, Arm. Stud., 173) ի փոխ անուկ քանկանգարն, եթէ շիցէ աղաւաղութիւն գրչի, թուի լինել ۱۰۰۰۰ ۱۰۰۰ քավանգար բառն, որ է հարուստ կամ իշխան: Իսկ քանգարն թերևս է թանգար ۱۰۰۰۰ ۱۰۰۰ բառն պարսից, որ թարգմանի՝ վարսավիրայ, սափրիչ զլիւյ. զի սաէ Թոմա Արծրունին (110). «և եղև (Մահմէտ) ար քանգար արուեստի և հմուտ վաճառական», որով զարուեստն վաճառականութենէ որոշէ»:

Այսպիսով, «Սեբեոսի Պատմության» հրատարակիչներից առաջինը Պատկանյանն է կոահել, որ «թանկանգար» բառը վրիպակ է և որ նրա փոխարեն եղել է «թանգար» (վաճառական) բառը (հմմտ. նաև «Всеобщая история Вардана Великого», пер. М. Эмина, М., 1861, էջ 202: «Один купец по имени Махмет»): Պատկանյանին հետագայում այլևայլ տարբերակներով կրկնել են Հ. Հյուբշմանը (Hübsch., էջ 11, ժ. 1 և «Arm. Gramm.», I, էջ 303), Ֆ. Մակլերը (MacI., էջ 95, ժ. 1), Ա. Զամինյանը (Չամ., էջ 168), Հ. Աճառյանը («Հայերեն արմատական բառարան», հ. Բ, Երևան, 1928, էջ 1124), Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, էջ 191, ժ. 61) և այլք:

Պատկանյանի սրբագրական առաջարկը գործնականորեն կիրառվել է նաև «Սեբեոսի Պատմության» Մալխասյանցի հրատարակության և Հյուբշմանի գերմաներեն ու Մակլերի ֆրանսերեն թարգմանությունների մեջ: Այսուհանդերձ սրբագրությունը կարոտ է ավելի հիմնավոր փաստարկման, քան բանասիրական կոահումն է: Այդ կոահումն հիմնական ուժը թովմա Արծրունու և Վարդան Արևելյու գործածած «թանգար» բառի մեջ է, բայց դիտենք, որ Արծրունին Մահմեդի մասին տեղեկությունները «Սեբեոսի Պատմությանից» չի քաղել, իսկ Վարդանն էլ այս Պատմությանից քաղած տեղեկությունների մեջ այնքան շատ ներմուծումներ է կատարել, որ «թանգար»-ը նույնպես կարող էր ներմուծված լինել:

Տարակույսներին վերջ է տալիս բանասերների ուշադրությունից վրիպած մի հատված, որը գտնում ենք 13-րդ դարի մի ձեռագրում (ՄՄ. ձ. № 1898, էջ 253բ) և որը Ֆ. Ն. Ֆինկի կողմից 1902 թ. հրատարակվել է արդեն «մի նոր դեռևս չհրատարակված կարճ տեղեկություն Իսլամի մասին» (F. N. Fink, Kleine mittelarmenische Texte, տպվ. Zeitschr. für arm. Philol., Marburg, 1902, B. I, H. 2, էջ 102: Տեղեկությունը տպված է միևնույն հատորի 3-րդ պրակի 206-րդ էջում): Ֆինկի «դեռևս չհրատարակված տեղեկությունը» այլ բան չէ, քան «Սեբեոսի Պատմությանից» և նրան կից Անանունի հատվածից քաղված այն միևնույն հատվածը, որի սկիզբը մենք ներկայացրել ենք 109-րդ ծանոթագրությունում: Մեր ներկայացրած այդ հատվածին անմիջապես հաջորդում է նրա հետևյալ շարունակությունը.

ձ. № 1898, էջ 253 բ

Մի ոմն ի նոցանէ, Մանվէտ քանգար  
անուն, ծանոյց նոցա զկենդանի Աս-  
տուած Աբրահամու և արիւնադրեաց  
նոցա՝ ոչ ուտել միս մեռելոտի, և  
ոչ ըմպել գինի\*:

\* Այս բառերին անմիջապես հաջորդում է «այլ՝ պահել զբազում կանայս» արտահայտությունը, որը, սակայն, ձեռագրում ավելացված է այն բանից հետո, երբ Ֆինկը 1902 թ. ձեռագիրն արդեն հրատարակել էր առանց այդ հատվածի: Ներմուծումը կատարել է էջմիածնի մատենադարանի այն միևնույն աշխատակիցը, որը կաղմել է № 1898 ձեռագրում գտնվող նյութերի

Դժվար չէ նկատել, որ սա քաղված է «Սեբեոսի Պատմութիան» հետևյալ հատվածից.

«Այլ ոմն ի նոցունց... Մահմեթ  
թանգար... զԱբրահամեանն ուսու-  
ցաներ նոցա ճանաչել զԱստուած...  
կենդանի... արինազրէ զնոսա...  
ոչ ուտել մեռելոտի, և ոչ բմպել  
զինի»:

Ինչպես տեսնում ենք, XIII դարի ձեռագրում «թանգար» բառը աղավաղված չէ. կնշա-  
նակի՝ «թանկանգար» վրիպակը «Սեբեոսի Պատմութիան» ձեռագրի մեջ թափանցել է XIII դա-  
րից հետո: Ձեռագրական այս որոշակի փաստի հիման վրա մենք վերջնականապես սրբադրում  
ենք վրիպակը:

465. «Այլ միայն սրտի սիրեցել գևստուածն Աբրահամու»: «Սրտիւ» բառը չունեն նախորդ  
հրատարակություններից և ոչ մեկը: Ինչպես երևում է, չի ունեցել նաև Միհրդատյանի օգտա-  
գործած հնագույն ձեռագիրը, որն այժմ կորել է (եթե այդ ձեռագիրը բառն ունեցած լիներ,  
Միհրդատյանը կնշեր): Մենք «սրտիւ»-ը վերականգնում ենք ըստ մեզ հասած հնագույն ձե-  
ռագրի (№ 2639):

466. «Յայնժամ ամենեքեան ժողովեցան միաբան յնիվայ մինչև ցՍուր\*, որ է յանդիման  
եգիպտոսի»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «և (փխ. որ է) յանդիման Եգիպտոսի»: Հ.  
Հյուբշմանը (Hübisch., էջ 11, ծ. 4) իրավացիորեն նկատել է, որ բնագիրն այստեղ աղավաղ-  
ված է և մատնանշել, որ Վարդան Արեւելցիի (Վենետիկյան հրատ., էջ 63) ավելի ճիշտ է  
պահպանել նախնական բնագիրը, գրելով. «ժողովեցան յնիվայ մինչև ցՍուր. որ է հանդէպ  
Եգիպտոսի»: Սրա աղբյուրը Մենդոց գրքի՝ 25-րդ գլխի 18-րդ տունն է. «Եւ բնակեցաւ (Իսմա-  
յելը—Դ. Ա.) յնիվայ մինչև ցՍուր, որ է յանդիման Եգիպտոսի»: Ինչպես տեսնում ենք, այստեղ  
«և յանդիման»-ի փոխարեն գրված է «որ է յանդիման», որի հիման վրա էլ մենք սրբագրել  
ենք բնագիրը, որովհետև «Սեբեոսի Պատմութիան» հեղինակի սկսած «յնիվայ» բառից բառա-  
ցիտորեն արտագրելով Աստվածաշունչը, բնականաբար պետք է գրեր «որ է յանդիման»: Որ սա  
այսպես է եղել հաստատվում է, ինչպես տեսանք, նաև Հյուբշմանի վկայակոչած Վարդանի  
«որ է հանդէպ» արտահայտությամբ: Ք. Պատկանյանը (Ռատ., էջ 117), Յ. Մակլերը (Macl.,  
էջ 96) և Ստ. Մալխասյանցը (Մալխ., էջ 90) թարգմանել են ըստ Աստվածաշնչի ճիշտ  
բնագրի:

467. «Եւ բաժանեցին ժԹ հազար\*\* արանց, որպէս յորդոցն Իսրայելի ի ցեղսն Իսրայելի,  
և ազար այլ ի ցեղէ մի»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն այս արտահայտության մեջ գտնը-  
վող «որպէս»-ի փոխարեն ունեն «որ», իսկ «հազար այլ ի ցեղէ մի»-ի փոխարեն՝ «հազար  
այլ մի\*\*\* ի ցեղ մի»: Այս վրիպակները անհասկանալի են դարձրել բնագիրը, որի հետևան-  
քով և «Սեբեոսի Պատմութիան» թարգմանիչները բնագիրն այնպես են հասկացել, թե իսմա-  
յելցիներն իրենց մեջ բաժանել են արայելցիների սրգիներին (Ռատ., էջ 117, Hübisch., 11,  
Macl., էջ 96, Մալխ., էջ 90, այսպես են հասկացել նաև «Սեբեոսի Պատմութիան» հատվածա-  
կան թարգմանիչներ Դյուրրիեն, էմինը և այլք): Այնինչ՝ իրականում իսմայելցիներն իրենք են  
բաժանվել 12 խմբերի, ինչպես Իսրայելցիների որդիները («որպէս յորդոցն Իսրայելի»): Պատ-  
միչն իր տեղեկությունը նմանեցրել է Աստվածաշնչի հետևյալ հատվածին. «Հազար այլ ի ցեղէ,  
յամենայն ցեղիցն Իսրայելի առաքեցեք տալ պատերազմ: Եւ համարեցան ի հազարաւորացն  
Իսրայելի հազար այլ ի ցեղէ, երկոտասան հազար վառեալ ի պատերազմ» (Թիւք, գլ. ԼԱ, 4,  
5): Սրա հիման վրա էլ մենք սրբագրել ենք բնագիրը:

Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1969, էջ 202) առաջարկել է «որ յորդոցն Իսրայելի»  
արտահայտությունը սրբագրել «որ յորդոցն Իսմայելի»: Նա գտնում է, որ այդ արտահայտու-  
թյունը «միջանկյալ նախադասություն մըն է, որ կը բացահայտե տասներկու խումբի (հազար  
առ հազար) բաժանեալ Իսրայելացւոց ո՛ր արմատէն լինէլը: Համաձայն Ս. Գրոց՝ ժԹ ցեղերը

ցանկը և կցել ձեռագրին: Այդ աշխատակցի ձեռագրով կատարված ներմուծումների հան-  
դիպում ենք նաև ձեռագրի այլ հատվածներում:

\* է. Դյուրրիեն «Սուր»-ը սրբագրում է Կուր («Recherches sur la Chronologie Armen.»,  
էջ 211):

\*\* Չամինյանը (Չամ., էջ 169) «հազար» բառը դիտել է որպես հետագա ընդմիջարկու-  
թյուն:

\*\*\* Չամինյանը (Չամ., էջ 169) «մի» բառը նույնպես դիտել է որպես ընդմիջարկու-  
թյուն:

Իսմայելի սերունդն էին»։ Սակայն իրականում ո՛չ Ս. Գրոց մեջ, ո՛չ էլ այլուր Իսրայելի ԺԲ ցեղերը երբևէ «Իսմայելի սերունդ» չեն կոչվել։ Այդպես է նաև «Սեբեոսի Պատմութիւնում», Այստեղ, ինչպես ասվեց, 12 ցեղերի են բաժանված ոչ թե իսրայելացիները, ինչպես կարծել է Գրիգորյանը, այլ իսմայելացիները, որոնք համեմատված են նույնքան ցեղերի բաժանված իսրայելացիների հետ։ Այս իսրայելացիներին նկատի ունենալով է, որ պատմիչը գրել է «որ(պէս) յորդոցն Իսրայելի»։ Այնպես որ խնդրո առարկա արտահայտության մեջ «Իսրայելի» բառը սրբագրութեան կարիք չունի։ Պատմիչը միևնույն գլխում շատ պարզ զանազանում է ինչպես իսրայելացիների 12 ցեղերին («յայնժամ երթեալ ժողովեցան յնդեսացոց բաղաքն երկոտասան ազգք ամենայն ցեղիցն ճշիւից», որոնք հետաւալում զնացին «ի Տաճկաստան առ որդիսն Իսմայելի»), այնպես էլ, իսմայելացիների 12 ցեղերին («Այս են ազգք Իսմայելի», որոնցից էր նաև Մահ-մեդը)։

468. «Առաջնորդել նոցա յերկիրն Իսրայելի»։ Միհրդատյանի հրատարակութունը «Իսրայելի»-ի փոխարեն ունի «Նրուազգէմի»։ Այս սխալը թափանցել է նաև Դյուլորիեի («Recherches sur la Chronologie arménienne», էջ 211), Հյուբշմանի (Hübbsch., էջ 12) և Միհրդատյանի հրատարակութունից օգտված մյուս մասնագետների (էմին) թարգմանութունների մեջ։

469. «Եւ շուեալ գնացին բաւակի բաւակի ըստ իւրաբանչիւրն նահապետութեանց—Նաբէոս, Կեղար, Արդիւղ, Մաբսամ, Մամայ, Իդումա, Մաւէ, Քոզդալ, Թեման, Յետուր, Նափէս և Կեղմայ»։ Բոլոր ձեռագրերն ու տպագրիչները «Մաբսամ»-ի փոխարեն ունեն «Մոսամբ» և բացի դրանից Իսմայելի որդիների ցանկի մեջ նշում են ոչ թե 12, այլ 13 անուն, ավելացնելով «Մաստ» անունը («Մոսամբ» անունից հետո)։ Այս վրիպակները նկատել են անունների ցանկով զբաղված գրեթե բոլոր մասնագետները։ Առաջին Դյուլորիեն է («Recherches sur la Chronol. arménienne», էջ 211—212), որ «Մոսամբ»-ը ուղղել է «Մասամբ» և շնչել է ավելորդ «Մաստ» անունը։ Ք. Պատկանյանը (Ստր., էջ 210, ժ. 200) նույնպես անուղղակիորեն նույնն է արել։ «Սեբեոսի Պատմութեան» ձեռագրերում աղավաղված ցուցակը համարելով Մնացորդաց գրքի (զլ. Ե, 29—31) և «Սեբեոսի Պատմութունից» օգտված Վարդան Արեւելցու ցանկերի հետ։ Իսկ հայերեն բնագիրը հրատարակելիս (Պատկ., էջ 105, ժ. 2) նա ավելի որոշակի գրել է. «Ի կարգս ԺԲ ցեղից իսմայելականաց աւելորդ փակագծիւ եղեալն մեր՝ Մաստ, նախ զի այսու ԺԳ լինին թիւք նոցա. երկրորդ՝ զի ի գիրս Մննդ. պլ. ԻԾ, 13—16 ոչ յիշատակի ի շարս որդոց Իսմայելի։ Տես նոյնպէս Պատ. Վարդանայ տպ. ի Վեն., եր. 63»։ Պատկանյանին կրկնել է նաև Հ. Հյուբշմանը (Hübbsch., էջ 12), գրելով. «Այսպես («Մաբսամ»—Գ. Ա.) նմ են սրբագրում տեքստի «Մոսամբ»-ը, ըստ Աստվածաշնչի Մննորոց 25, 13—15 բնագրի։ Ըստ այդմ էլ են բաց եմ թողնում հաջորդ «Մաստ»-ը, այլպպես՝ 13 ցեղեր կդառնային։ Վարդանը (էջ 63, ժ. 5) նույնպես այս անունը չունի»։ Ֆ. Մակկերը (Macl., էջ 96) Հյուբշմանին վկայակոչելով հանդերձ, նույնպես չի համարձակվել սրբագրել և նույնութեամբ տպագրել է աղավաղված «Մոսամբ» և ավելորդ «Մաստ» անունները։ Ստ. Մալխասյանցը նույնպես չի սրբագրել բնագիրը, չնայած և հայերեն բնագրի, և ռուսերեն թարգմանութեան ծանոթագրութիւններում (Մալխ., էջ 106, Մալխ., էջ 169, ժ. 159) նա վկայակոչել է Պատկանյանի սրբագրական առաջարկները և իր կողմից էլ ենթադրել է, որ «Մաստ» անունը «հավանաբար նույնն է, ինչ որ հաջորդ «Մասամ» բառը, որը գրվել է երկու անգամ (Հայերեն երկաթագիր Մ և Տ տառերը ձեռագրերում զծագրական տեսքով նման են և հաճախ են շփոթվում)»։

Այսպիսով, նշված բոլոր մասնագետները բնագրի սրբագրման անհրաժեշտութիւն են զգացել, բայց նրանցից ոչ ոք չի համարձակվել սրբագրել բնագիրը։ Սա, անշուշտ, անտեղի զգուշավորութիւն է։ Եթե Աստվածաշնչում Իսմայելի որդիների անունը 12 է և եթե «Սեբեոսի Պատմութունից» օգտված Վարդան Արեւելցին նույնպես նշում է 12 անուն՝ այլևս բնագիրը չսրբագրելու համար հիմք չի մնում, մանավանդ որ «Սեբեոսի Պատմութեան» հեղինակն ինքը շատ որոշակիորեն հայտնում է, որ իսմայելացիները 12 ազգ էին. «Բնացին յանապատէն Փառանու երկոտասան ցեղ՝ ըստ ցեղի տանց նահապետաց իւրեանց։ Եւ բաժանեցին ԺԲ (=12) հազար արանց, որպէս յորդոցն Իսրայելի ի ցեղսն իւրեանց, հազար այլ ի ցեղէ մի»։ Այս հատվածում, ինչպես տեսնում ենք, երկու անգամ հայտնված է, որ ցեղերի քանակը 12 է։ Ուրեմն, հենց հեղինակն ինքն ստիպում է մեզ սրբագրել գրիչների ավելացրած 13-րդ անունը։ Իսկ ո՞րն է այդ ավելորդ անունը. իհարկե «Մաստ»-ը, որովհետև Աստվածաշնչում «Սեբեոսի Պատմութեան» հեղինակի նշած բոլոր 12 անունները կան, բացի Մաստից։ «Եւ այս են անուանք որդոցն Իսմայելի ըստ անուանց ազգացն նորա։ Անդրանիկն Իսմայելի նաբեովթ և

Կեդար և Արդեի և Սաբամ և Սասամ և Իդոմա և Մասէ և Քողզատ և Թեմա և Յետուր և Նափես և Կեղմայ» (Մենդոց, Իծ, 13—16): Ի ուր 12 անունները թվարկված են այն միևնույն հերթականությամբ, որը գտնում ենք «Սեբեոսի Պատմության» մեջ: Կնշանակի՝ հեղինակը ոչ թե հիշողությամբ է թվարկել այդ անունները, այլ իր առջև դրել է Աստվածաշունչը և արտագրել, հետևաբար՝ թյուրիմացություններն անսպասելի են:

Ստ. Մալխասյանցը, ինչպես տեսանք, հնարավոր է համարել, որ ավելորդ «Մաստ» անունը առաջաժամ լինի «Մասամ» անվան կրկնողությունից: Սակայն այս երկու անունները միմյանց այնքան նման չեն, որքան «Մաստ» և «Մասէ» անունները: Բավական է, որ երկաթագիր «ՄԱՍէ» անվան վերջին «է»-ն կարդացվեր «Տ» (իսկ դա շատ հնարավոր է), ՄԱՍէ-ն կդառնար ՄԱՍՏ: Իրականում, իհարկե, այդպես էլ եղել է: «Սեբեոսի Պատմության» ձեռագրերից մեկում «Մասէ» անունը գրված է եղել աղճատված ձևով՝ «Մաստ», գրիչներն այդ սխալը նկատելով, լուսանցքում ավելացրել են անվան ճիշտ ձևը՝ Մասէ: Հետագայում բնագրին ընդօրինակող գրիչը լուսանցքում սրբագրված անունը սխալմամբ ներմտծել է բնագրի մեջ և այդպիսով միևնույն անունը ընդօրինակվել է երկու ձևով՝ Մաստ և Մասէ, որի հետևանքով 12 ազգայությունների քանակը դարձել է 13: Ուրեմն պետք է ներկա աղավաղված բնագրից հանել «Մաստ» սխալ ձևը և վերականգնել նախնական բնագրին այնպես, ինչպես, որ է Մենդոց գրքում» (Արզաբյան, «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածքը, էջ 177): Քննարկվող հատվածում սրբագրության ենթակա են նաև «Իդոմայ» և «Քողզատ» սխալ ձևերը, որոնք ավելի ճիշտ են պահպանվել Վարդան Արևելցու արտագրած հատվածում: Վերջինիս հիման վրա մենք ուղղել ենք՝ «Իդոմա», «Քողզադ»:

Նշված անունները սրբագրելու առաջարկ են արել նաև Ա. Զամինյանը (Չամ., էջ 170) և Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1969, էջ 202—203): Ա. Զամինյանն իր առաջարկը չի պատճառաբանել, իսկ Մ. Գրիգորյանը հենվել է տպագիր Աստվածաշնչի վրա:

Վարդան Արևելցու ձեռագրերում, դժբախտաբար, աղճատված է սրբագրվող անունների շարքում գտնվող Աբդիէլ անունը (դարձել է Աբդլա), և մենք զուրկ ենք «Սեբեոսի Պատմության» մեջ նույնպես աղճատված այդ անունը սրբագրելու հնարավորությունից: Մ. Գրիգորյանը առաջարկել է այս անունը սրբագրել դարձյալ Աստվածաշնչի հիման վրա, բայց ներկա դեպքում միայն Աստվածաշունչը հաստատ հիմք չի կարող հանդիսանալ սրբագրության համար:

470. «Եւ հասեալ յԼուարովք Մովսբու ի սամմանս Ռուբէնի»: Հ. Հյուբշմանը (Hübsch, էջ 12) «Լուարովք Մովսբ» բառերի դիմաց տողատակին ծանոթագրել է. «Մեռյալ ծովից արևելք (Rabbath Moab)»: Հյուբշմանին նույնությամբ կրկնել է Մակկեբը (Macl., էջ 96, ծ. 6):

471. «Թողին զգանձս և զքնակիշս քաղաքին»: Միհրդատյանի հրատարակության մեջ «քաղաքին» բառը վրիպակաբար տպված է քաղաքաքին»: Հյուբշմանը (Hübsch., էջ 15, ծ. 2) ծանոթագրում է. «Բաղաբաբին? կարո՞ւ քաղաքային»:

472. «Երդմնեցուցանէ զարդի իւր զԿոստանդին՝ առնել ողորմութիւն»: Այս վերջին բառը ձեռագրերում չկա, ավելացրել է Մալխասյանցը, հենվելով մեկ գլուխ հետո հաջորդող գլխում հանդիպող «առնել ողորմութիւն» արտահայտության վրա: Միհրդատյանը «ողորմութեան»-ի փոխարեն ավելացրել է «գթութիւն» բառը: Նրան հետևել է նաև Պատկանյանը: Ճիշտը, սակայն, Մալխասյանցի սրբագրությունն է, որովհետև հենված է հենց «Սեբեոսի Պատմության» բառապաշարի վրա:

473. «Եւ ել զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճահապպահս Չորոյ յաշխարհն Տարօնոյ»: Բոլոր ձեռագրերում ու տպագրիչներում «Չորոյ» տեղանունը գրված է փոքրատառով և ընկալված է որպես հասարակ բառ: Մենք սրբագրել ենք բնագրից և բառը տպագրել ենք մեծատառով, որովհետև «Սեբեոսի Պատմության» հեղինակն ինքն այդ բառը գործածել է որպես հատուկ անուն: Արարները Ասորեստանից ելնելով մտել են նախ Չոր և ապա գնացել Տարոն: Եթե Չորը հատուկ անուն չլիներ՝ «Սեբեոսի Պատմության» հեղինակը նրա կողքին ցույց կտար, թե իր խոսքը ո՞ր ձորի մասին է, բայց քանի որ Տարոնի հարավում գտնվող վայրը ժամանակակիցներին հայտնի է եղել Չոր անվամբ, հեղինակը հենց այդպես էլ կոչել է վայրը:

Որ քննարկվող բառն իսկապես ընկալվում է որպես հատուկ անուն, դա երևում է նրանից, որ «Սեբեոսի Պատմության» գրեթե բոլոր թարգմանիչները բառն այդպես էլ ընկալել են (Hübsch., էջ 15—16, Macl., էջ 100, Малх., էջ 92): Ա. Զամինյանը (Չամ., էջ 175) նույնպես բառը դիտել է որպես հատուկ անուն:



2. Հյուբշմանը Չորը ենթադրաբար նույնացրել է Վանա լճի հարավային սահմանների մոտ ընկած Հայոց ձորի հետ: Գա գրում է. «Չորը կարող է լինի այդ նահանգի (Տուրուբերանի—Փ. Ա.) հարավում գտնվող Հայոց Չորը, Վասպուրականի սահմանի վրա» (Hübsch., էջ 16, ծ. 1): Սակայն, եթե նկատի ունենանք, որ արարենբը Հայաստան ներխուժելիս ելակետ են ունեցել Ասորեստանը («ել զպր պակահանիչ յԱսորեստան կողմանէ»), այդ դեպքում Հայոց Չորը բավականին հեռու է մնում նրանց ճանապարհից: Ասորեստանից Տարոն գնալու համար նրանք, բնականաբար, պետք է ընտրեին ավելի մոտիկ մի ճանապարհ, և պատմիչի ասածից էլ նրանում է, որ Չորն ընկած էր հենց անմիջապես Տարոնի հարավում («ընդ ճանապարհս Չորոյ յաշխարհն Տարոնոյ»): Այս տեսակետից ավելի հավանական կլինի ենթադրել, որ հեղինակը նկատի է ունեցել Աղձնյաց բզեչխության 9-րդ գավառը՝ Սալնո Չորը:

474. «Նւ հաճապարհի կալեալ ի Թերկրոյ ձորն ընդ Որդսպոյ»: է. Դյուլորիեն («Recherches sur la Chronologie arménienne», էջ 231, 257) Որդսպուռ անուհով վայր չճանաչելով՝ այդ անունը դարձրել է Ortorou, նույնացնելով Բասեան գավառի Օրդուռ վանքի հետ: Նրան հետևել է Նակ Պետերսը (Παζάγιάδης—Πετρούγενης.—„Byzantion“, t. VIII, fasc. 2, Bruxelles 1933, էջ 410): Ք. Պատկանյանը ուսերեն թարգմանության մեջ (Սатк., էջ 120) տեղանունը վրիպակաբար տպագրել է «Ордобад» ձևով, որի մասին, սակայն, հետազոտում գրել է. «Որդսպուռ (ի մերում ուս թարգմանութեանս վրիպակաւ գրի Ордубад) առ այլ մատենագիրս մեր ոչ յիշատակեալ, երևի լինել ի մէջ Բերկրոյ և Բայազիդի» (Պատկ., էջ 201): 2. Հյուբշմանը Պատկանյանի այս ճշգրտման մասին լիմանալով գրել է. «Թէ ինչ հիմք ունի Պատկանյանի Օրդուրազը՝ չեմ կարող ասել» (Hübsch., էջ 16, ծ. 1):

Փակագծեցրում նշված էջում Հյուբշմանը իրավայտորեն չի ընդունել Դյուլորիեի վերոհիշյալ սրբագրությունը («Որդսպուռ» «Օրդուսով» փոխելը), բայց ինքն էլ հենվելով «յերևան» սխալ ընթերցվածքի վրա (տե՛ս ստորև, ծ. 512), Որդսպուռի տեղը ցույց է տալիս Երևանի և Արծափի միջև, դեպի Դվին տանող ճանապարհին: Նա գրում է. «Ինձիճյանի մոտ (Ստորագրութիւն Հին Հայաստ.) որևէ Որդսպուռ չեմ գտնում, այլ՝ միայն Օրդու՝ Այրարատ նահանգի Բասեան գավառում, որը, սակայն, ճանապարհից հեռու է ընկած: Բայց ավելի վաղ (Սեբէոս, էջ 183) հիշատակվում է մի Որդսպուռ, որն անշուշտ նույնացվում է մեր Որդսպուռի հետ: Սա ընկած էր Երևանի և Արծափի միջև..., այսինքն՝ ուղիղ դեպի Դվին տանող ճանապարհին: Այ՛ք իսկ պատճառով էլ չի կարելի Դյուլորիեին հետևելով՝ Որդսպուռ սրբագրել Որդուրու-ով»:

Ստ. Մալխասյանցը գրում է. «Որդսպուռն հիշատակվում է միայն Սեբեոսի մոտ... Նրա տեղը հայտնի չէ: Դատելով Բերկրիի ձորով, Կոզովիտի վրայով, դեպի Այրարատ գնացած հեծյալների ուղիովությունից, պետք է ենթադրել, որ Որդսպուռն գտնվում էր Աբաղայի հարթավայրի և Բայազետի միջև, վերջինից բաղաբիցս ոչ հեռու, որտեղ ՚՝ լում է Արարատ լեռան փեշերով դեպի Իգդիր տանող այսի ճանապարհը» (Մալխ., էջ 1, ծ. 164):

Ս. Տ. Երեմյանի կազմած բարտեզի («Торговые пути I о-Кавказа в конце IV в.») (На правах рукописи) վրա Որդսպուռն նույնացվում է Պատինգերյան բարտեզի Catispi-ի հետ: 2. Մանանդյանը գտնում է, որ «այս ենթադրությունը միանգամայն հավանական է» (2. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 144: Որդսպուռի տեղադրությունը տես Մանանդյանի սույն աշխատության նաև 147—150 էջերում): Նա որոշակիորեն ցույց է տալիս Հեր—Որդսպուռ—Արծափ կայաններով ընթացած մի ճանապարհ: «Այս ճանապարհը,— գրում է նա.— ինչպես պարզ երևում է Պատինգերյան բարտեզի նկարից, Արտաշատից դեպի Պարսկաստան էր գնում հին Կոզովիտ գավառի միջով (այստեղ էր գտնվում Արծափը—Փ. Ա.) և հին Որդսպուռի (Catispi հավանական է ուղղել Ortispi կամ \*Ortispu)... վրայով՝ այժմյան Խոյ» (2. Մանանդյան, Քննական տեսություն հայ յոզովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 392):

475. «Նւ հասեալ քչնամին (Բուշայն) ի կամուրջն Մեծամարտի ոչ կարաց անցանել»: Բուլոր ձեռագրերն ու տպագրիչներն ունեն «Բուշայն»: Միջրդատյանի հրատարակությունը «Բուշայն»-ի փոխարեն ունի «Բուղայն»: Բառի մասին եղել են զանազան ենթադրություններ, որոնցից և ոչ մեկը վերջնականապես ընդունելի չէ: Այսպես. Դյուլորիեն („Recherches sur la Chronologie arménienne“, II, էջ 356, ծ. 3, № XII) «Բուշայն»-ի փոխարեն կարգում է «բուռն այն», որը ոչնչով չի բարելավում տեքստը, և իրավացի է Ք. Պատկանյանը, երբ գրում է, որ Դյուլորիեի ընթերցվածքը «ոչ մի ուշագրության արժանի չէ» (Սатк., էջ 211, ծ. 202): 2. Հյուբշմանը (Hübsch., էջ 17) «Բուշայն» բառը դուրս է գցել տեքստից: Նրան հետևել է նաև Մակլիերը (Macl., էջ 100):

2. Թուրյանը (Armenien vor und während der Araberzeit: — „Zeitschrift für ar- 20—417

menische Philologie“, Marburg, 1903, Bd.2, H. 1, էջ 53) փորձել է նոր բացատրութիւն տալ բառին: նա գրում է. «Բյուրրինն սրբագրում է՝ թշնամին բունն այն: Բայց սա բուրրութիւն հայերեն դարձվածք չէ»: Այնուհետև ավելացնում է. «Բառի մեջ հավանաբար բնկած է այսօրվա բոշա-ի (գնչուներ, թափառաշրջիկ իմաստով) հին ձևը»: Բայց սա նույնպես հավանական չէ: Ն. Ակիսյանը («Հ. ամս.», 1969, էջ 345) «Բուշայն»-ի փոխարին սրբագրում է «գիշերայն» կամ «զարացն», որոնք նույնպես բավարար չեն (հմմտ. նույն տեղում, էջ 348):

Մեր կարծիքով, «Բուշայն»-ը այլ բան չէ, քան իր առջև գտնվող «թշնամին» բառի կրկնակը: Ձեռագրում այդ բառը դժվարընթեռնելի է եղել, թողել է «Բուշայն»-ի տպավորութիւնը և ընդօրինակողն այդպես էլ ընդօրինակել է: Հետագայում, մեկ ուրիշ ձեռագրի հիման վրա, լուսանցքում ուղղել են բառը, գրելով «թշնամին»: Մի երրորդ ընդօրինակող չիմանալով, որ դա «բուշայն» վրիպակի սրբագրված ձևն է՝ արտագրել է և՛ վրիպակը, և՛ նրա սրբագրութիւնը: Այդպիսով ստացվել է «թշնամին բուշայն»: Մենք, հետևելով Հյուբշմանին և Մակկերին, «բուշայն»-ը դուրս կոչեցինք տեքստից, բայց դրա համար պետք էին տրամաբանականի կողքին նաև առավել հաստատ փաստեր: Ուստի բավարարվում ենք միայն բառը փակագծերի մեջ վերցնելով:

476. «Եկեալ բանակեցան ի յեգր մայրոյն Խոսրովակերտի»: Միհրդատյանի օգտագործած ձեռագրերից մեկը ունեցել է «Խոսրակերտի», մյուսը՝ «Խոսրովակերտի»: Միհրդատյանը նախապատմութիւնը տվել է «Խոսրակերտին», հավանաբար այդ ձևը գտնելով ավելի հին ձեռագրում: Սակայն կասկած չկա, որ ճիշտը «Խոսրովակերտի»-ն է:

Միհրդատյանին հետևել են նաև Պատկանյանը և Մակկերը, որը, սակայն, տողատակի ծանոթագրութիւն մեջ գրել է. «Հմմտ. Խոսրովակերտ, Հ. Հյուբշմանի „Arm. Gramm.“-ի մեջ, հ. 1, էջ 44» (Macl., էջ 100, ձ. 5):

Վրիպակն առաջինն ուղղել է Հյուբշմանը (Hübisch., էջ 17), գերմաներեն թարգմանութիւն մեջ վերականգնելով «Խոսրովակերտ» ձևը: Նույն կերպ է վարվել Մալխասյանցը հայերեն բնագիրը հրատարակելիս, սակայն ուսերեն թարգմանութիւն մեջ նա մոռացել է ուղղել և տպագրել է Хосракерт (Macl., էջ 93):

477. «Եւ ինքեանք շոգան անցին յԱսորեստան»: Հ. Հյուբշմանը (Hübisch., էջ 17) գերմաներեն թարգմանութիւն մեջ Ասորեստան անունը թողել է նույնութ.ամբ (Asorestan) և ծանոթագրել. «Հետագայում նույնպես պահպանում հմ այս օտար անունը, որովհետև չգիտեմ, թե Սեբեոսը «Ասորեստան»-ի տակ մի՞շտ է, որ հասկանում է Ասորեստանը (Assyrien), ի տարբերութիւն Ասորիքի (Syrien)»: Եվ հիրավի, զմար է որոշել, թե «Սեբեոսի պատմութիւն» մեջ Ասորեստան անվան տակ ի՞նչ է հասկացվում:

478. «Կալան յեգիպտոսէ մինչև ցլեառն մեծ Տարս, և ի ծովէ Արևմտից մինչև ցՄարս և Խուժաստան»: Բոլոր նախկին հրատարակութիւններում «Արևմտից» բառը զրված է փոքրատառով, սակայն հասկանալի է, որ պատմիչը «արևմտյան ծով» («ի ծովէն Արևմտից») արտահայտութիւնը գործածել է հատուկ անվան նշանակութիւնով: Այդ իսկ պատճառով էլ մենք բառը տպաբերում ենք մեծատառով, ինչպես վարվել է Մալխասյանցը ուսերեն թարգմանութիւն մեջ (Macl., էջ 93):

479. «Եւ ի Կուրան, յաշխարհն Կուրան և ի Մակուրան»: Բոլոր ձեռագրերը և տպագիրները Կրման և Կուրան անունների փոխարին ունեն Սրման և Տուրան (Դրասխանակերտցու յոս՝ Մորան», «Վարան»), բայց այսպիսի անուններ իրականում գոյութիւն չունեն: Մենք բնագիրը սրբագրել ենք հետևելով Հ. Հյուբշմանի (Hübisch., էջ 18) ներկայացրած հետևյալ փաստերին. «Մովսես Խորենացու Աշխարհացոյցը (Շիրակացուն վերագրված Աշխարհացոյցը—Ք. Ա.) Պարսք-ի (Պարսկաստան) նահանգների շարքում հիշատակում է Կրման, Կուրան, Մակուրան, Սնդ, Սրան-Սագաստան: Իսկ Վարդանի (St. Martin, Mémoires, II, էջ 439) Աշխարհացոյցը (բառ եղիշի) կոչում է Կուրան և Մակուրան, որ է Խորին Խորասան = Կուրանը և Մակուրանը, այսինքն՝ ներքին Խորասանը: Այսպիսով, Տուրանի փոխարեն կկարգացվեր Կուրան, ինչպես նաև Սրմանի (= Կրման) փոխարեն՝ Կրման: Lelewel-ի ատլասում, 5-րդ բարտեզի վրա միմյանց հաջորդում են ծովափնյա Տարսը, Կրմանը, Մեկրանը, Սինդը, Հինդը»:

Կրմանի և Կուրանի կապակցութիւնը համեմատիր նաև J. Marquart, Eranšahr, էջ 34 և B. Бартольд, Худуд Ал-Алем, II., 1930, էջ 14, ինչպես նաև Թովմա Կիլիկեցու Աշխարհացոյցը («Բանբեր Մատենադարանի», № 8, էջ 280):

«Կուրան»-ի փոխարեն «Սեբեոսի Պատմութիւն» ձեռագրերում ազգաղված «Տուրան» անունը գտնում ենք նաև Շիրակացուն վերադրվող Աշխարհացոյցի որոշ ձեռագրերում (հմմտ.

«Շիրակացու մատենադրութիւնը», Երևան, 1944, էջ 352): Բայց, ինչպես տեսանք, Հյուսիս-մասնի բերած քաղվածքում պահպանվել է ճիշտ ձևը՝ Կուրան: Հյուսիս-մասնի և Մարտիկարտի բնիկադրութիւնը «Սրման»-ը «Քրման» կամ «Կրման» ձևով սրբագրելու առաջարկ է արել նաև Մ. Գրիգորյանը («Ղ. ամս.», 1969, էջ 204):

480. «Չայս լուսի յարանց զերեկոց ի Խուժաստան Տաճկաստանէ, որոց ինքեանք իսկ ակա-  
 Էատես եղեալ պատմեցին մեզ զայս բան»: «Խուժաստան Տաճկաստան»-ի կապակցութիւնը Ք. Պատկանյանը (Պատկ., էջ 201) ծանոթագրում է. «Ոչ է սա Արաբիա—Տաճկաստան, այլ մասն-  
 ինչ Խուժաստանի յարեւելեան հիւսիսային եզերս ծոցոյն Պարսից, որ այժմ Արաբիստան յոր-  
 շորշի, եթէ չիցէ Խուժաստան հասարակ անուն և ի կիր առեալ ի տեղի խուժական կամ այլ  
 նոյնանման բառի»: 2. Հյուսիս-մասնը զրում է. «գերեկոց ի Խուժաստան Տաճկաստանէ» = գերիները  
 Խուժաստան Արաբիայից ? Դյուլորինն թարգմանում է՝ captifs originares du pays barbare  
 (Խուժաստանը թարգմանել է որպէս հասարակ բառ՝ խուժան իմաստով—Ք. Ա.) d'Arabie: Հա-  
 մենայն դեպս «Խուժաստան»-ը, —եթէ սա ծանոթ տեղանունը չէ, —հայերեն կնշանակեր խուժան-  
 ների երկիր (Barbarenland), Պատկանյանը թարգմանում է «տաճիկների կողմից գերի տար-  
 վածներէից», մի թարգմանութիւն, որը տեքստի բառերի հետ համաձայնութեան մեջ չէ» (Hübsch,  
 էջ 18, ծ. 3): Ինքը Հյուսիս-մասնը թարգմանել է այսպես. «Արաբիայից եկած գերիներէից»  
 (նույն տեղում): Նրան հետեւել է նաև Մակիւրը (Macl., էջ 102): Մալխասյանցի թարգմանու-  
 թիւնն է՝ «от лиц, взятых в плен в Хужастан-Тачкастане» (Մալխ., էջ 94):

Հատվածի իմաստը ամենից հաջող արտահայտված է Պիտանյանցի՝ ՄՄ (Հաղարայանների  
 արխիվ, թղթ. 100, վավ. 51) պահվող հետևյալ անտիպ հատվածական թարգմանութեան մեջ.  
 «от пленных, взятых турками в Хужастане».

«Խուժաստան Տաճկաստան» կրկնակի անունը տարօրինակ է: Եթէ այս անվամբ պատմիչը  
 կոչել է իսկապես Պարսից ծոցի հյուսիս-արեւելյան եզրերին գտնվող «Արաբիստանը», ապա  
 դժվար թէ այդ հողամասն ունենար այդպիսի կրկնակի անուն: Հնարավոր չէ նաև, որ պատմիչը  
 տվյալ հատվածում «Խուժաստան» բառը գործածեր որպէս բացասական արտահայտութիւն  
 («խուժան») Տաճկաստանի վերաբերյալ: Ուրեմն պետք է ենթադրել, որ «Խուժաստան Տաճ-  
 կաստանէ» արտահայտութեան մեջ Խուժաստանը և Տաճկաստանը տարբեր իմաստներ են  
 արտահայտում: Ինչպէս երևում է, պատմիչին պետք է հասկանալ այսպէս. «Մենք այս լսեցինք  
 Տաճկաստանի (ձեռքով) Խուժաստանում գերված տղամարդկանցից, որոնք իրենք իսկ ակա-  
 նատես լինելով՝ մեզ պատմեցին այս բանը»\*:

481. «Նւ գտեալ գտեղին, որ կոչի Սրբութիւն սրբութեանց»: Բոլոր նախորդ հրատարա-  
 կութիւններում «Սրբութիւն սրբութեանց» արտահայտութիւնը գրված է փոքրատառով: Սակայն  
 պատմիչը պարզ ասում է, որ դա տեղանուն է: Այդ իսկ պատճառով էլ լինեք «Սրբութիւն»  
 բառը տպագրում ենք մեծատառով, ինչպէս որ վարվել է Մակիւրը Փրանսերեն թարգմանու-  
 թեան ընթացքում (Macl., էջ 102):

482. «Նւ եղև իբրև ետես զնոսա այրև՝ գտեղի էառ և խաւեցաւ ընդ նոսա»: Այս բառե-  
 րի դիմաց Ա (№ 2639) ձեռագրի լուսանցքում մանր նոտագրով, մատիտով, հազիվ նշմարելի  
 ծանոթագրված է «Սերիոս ծամանակակից առաջին խամայեկաց»: Գիտենք, որ Սերիոս ան-  
 վանաձևը առաջինը գործածել և տարածել է 2. Շահխաթունյանցը (մինչև այդ գործածվել են  
 միայն ու միայն «Սերիոս» կամ «Սեսերիոս» ձևերը) 1831 թվականին, մյուս կողմից էլ՝ հիշյալ լու-  
 սանցագրութիւնը գտնում ենք № 2639 ձեռագրից արտագրված նաև Միհրդատյանի ունեցած  
 նորագույն ընդօրինակութիւնում, որեմն՝ պետք է ենթադրել, որ № 2639 ձեռագրի լուսանցա-  
 գրութիւնն արված է 1831—1851 թթ. միջև:

483. «Նւ թագաւորէ Երակոս, որդի Երակիւայ, որ ի Մարտինեայ Ալոստեայ»: Բոլոր  
 ձեռագրերն ու տպագիրները «Մարտինեայ»-ի փոխարեն ունեն «Մարինեայ»: Վրիպակը  
 առաջինը նկատել է Պատկանյանը (Պատկ., էջ 202), որը ծանոթագրել է. «Մարինեայ պարտ-  
 է ընթեռնուլ Մարտինեայ»: 2. Հյուսիս-մասնը (Hübsch., էջ 19) գերմաներեն թարգմանութեան մեջ  
 սրբագրել է «Մարտինեայ»: Նրան հետեւել է նաև Մակիւրը (Macl., էջ 103): Սակայն ա-  
 ռանց փաստարկման ու բացատրութեան կատարված սրբագրութիւնը հավանաբար համոզիչ  
 չի եղել և «Սերիոսի Պատմութեան» գրաբար բնագիրը շարունակել է տպագրվել վրիպակով:  
 Մենք վրիպակը սրբագրել ենք հետևյալ նկատառումներով:

\* Կարելի է նաև կարծել, թէ «Տաճկաստան է» արտահայտութիւնն ավելացրել են գրիչ-  
 ները, կամենալով բացատրել, որ Խուժաստանը գտնվում է Տաճկաստանում. «Խուժաստան»  
 Տաճկաստան է: Սա մեզ ավելի հավանական է թվում:

Սթե բնագրին ընդունում ենք այն ձևով, ինչպես որ հասել է մեզ, ստանում ենք հակապատմական և հակաբնական դեպքերի մի գումար: Մի դեպքում Մարտինյան՝ Հերակլի կինը մահացած է և Հերակլն ամուսնացած է Մավրինայի (Մորինա) հետ, մյուս դեպքում Մարտինյան նորից կենդանի է և դավեր է նյութում հարազատ որդի Կոստանդին դեմ, որպեսզի ճանապարհ հարթի իր ախոյանի՝ Մավրինայի՝ որդի Երակղայի համար և այլն: Հասկանալի է, որ նման անբնական դեպքեր չէին կարող պատահել: Թյուրիմացությունն արդյունք է գրական սխալի: Մարտինեայ-ը սխալմամբ ընդօրինակվել է Մարինեայ, որի հետևանքով միևնույն անձնավորությունը դարձել է երկու և այդպիսով Հերակլի համար ստեղծվել է մի անսովոր կենսագրություն: Նիկեփորոս Կոստանդնուպոլսեցին (մահ. 815 թ.) հայտնում է, որ Հերակլի առաջին կնոջ անունը Եվդոկիա էր (Εὐδοκία) և ոչ Մարտինե, ինչպես որ սխալ տպավորություն է ստեղծում «Սեբեոսի Պատմության» աղավաղված բնագիրը,—իսկ երկրորդ կինը Մարտինա Ավգոստան է (Μαρτίνα ἡ Αυγουστα):

Հեղինակի արտահայտության ձևից հենց երևում է, որ նա Մարտինայի մասին խոսում է որպես Կոստանդին խորթ մոր մասին՝ «գառնալ ի Մարտինեայ մարտ իւրմէ»: Եվ ավելացնում է «ի կնոջէն Հերակլի»: Այս բացատրության կարիքը չէր զգացվի, եթե Մարտինեն Կոստանդին հարազատ մայր հաշվվեր:

«Սեբեոսի Պատմության» սկզբնագրում «մարտէ»—բառի փոխարեն եղել է «մարուէ»: Սև-ի կորստյան պատճառով խորթ մայրը («մարու») դարձել է մայր: «Սեբեոսի Պատմությունից» օգտված մյուս պատմիչների մոտ պահպանվել է «մարուէ» ձևը: Հովհաննես Գրասխանակերտցին (Թիֆլիս, 1912, էջ 84) գրում է. «Կոստանդին ի Մարտինեայ մորուէ իւրմէ դառնալ», Վարդան Արևելցին (Վենետիկ, 1362, էջ 67)՝ «Կոստանդին դառնալ ի մորուէ Մարտինեայ» և այլն:

484. «Ն Վաղենտինի [լուեայ] զգործեցեալ իրս՝ զնա ի վերայ նորա գաւրու իւրով ի Կոստանդնուպոլսի»: Բոլոր ձեռագրերն ունեն Վաղենտինի (փիս. «Ն Վաղենտինի»): «Ն»-ը ավելացրել է Միհրդատյանը, որին և հետևել են մյուս հրատարակիչները: Ավելացված «ն»-ը, սակայն, բավարար չի եղել նախադասությունն ամբողջապես կարգավորելու համար, որովհետև ձեռագրերում և բոլոր նախկին հրատարակություններում բացակայում են մեր վերականգնած «լուեայ» բառը և «զ» նախդիրը («գործեցեալ» բառի առջև): Առանց մեր այս սրբագրության՝ բնագիրը պակասավոր է և հնարավոր չէ թարգմանել, այդ իսկ պատճառով էլ բոլոր թարգմանիչները այս կամ այն շափով շեղվել են բնագրից, իսկ Մալխասյանցը (Մալխ., էջ 95) ստիպված է եղել փակագծերի մեջ ավելացնել «УЗНАВ» բառը, որն այլ բան չէ, քան մեր ներմուծած «լուեայ»-ը:

Բնագիրը սրբագրելու փորձեր են կատարել նաև Ն. Ակիմյանը («Հ. ամս.», 1969, էջ 345) և Մ. Գրիգորյանը (նույն տեղում, էջ 349): Առաջինը «գործեցեալ» բառը դեն է գցել բնագրից և փոխարինել է «լուեայ» բառով (կամ էլ՝ առաջարկել է «գործեցեալ իրս»-ի փոխարեն գրել օդարձակ յետոս), իսկ երկրորդը «գործեցեալ»-ի փոխարեն առաջարկել է «զգացեալ» բառը:

Ակիմյանի առաջարկն ընդունելի չէ, քանի որ շատ է փոփոխում բնագիրը, իսկ Գրիգորյանի առաջարկած «զգացեալը» չի համապատասխանում սրբագրվող նախադասությանը, որովհետև զորավար Վաղենտինը Կոստանդնուպոլսի էր գնացել ոչ թե կատարված դեպքերը «զգայով», այլ՝ նրանց մասին լսելով («լուեայ զգործեցեալ իրս»):

485. «Գումարեցան զաւրէն Պարսից ընդ Իսմայելի»: Զամինյանը (Զամ., էջ 181) «գումարեցան»-ը սրբագրել է «գուպարեցան»-ով:

486. «Ն Իսմայելացոցն ևակտեցան ընդդէմ նոցա»: Զամինյանը (Զամ., էջ 181) «Իսմայելացոցն» բառից հետո ներմուծում է «բանակը» բառը:

487. «Քաղիցեցին զմիմեանս պատերազմալ ի Մարսս գաւառի»: Ք. Պատկանյանը (Պատկ., էջ 202) «Մարսս տեղանվան կապակցությամբ ծանոթադրում է. «Զ՛ է այս մեծ նահանգն Պարսից Սեղիա, զոր Հայք Մարս կոչեն, այլ գաառ ինչ փոքրիկ մերձ ի Նեհաւնդ. Կարանկատուացին (139) Բեկղաղ կոչէ զանուն տեղույն մեծի պատերազմին ի մէջ տաճկաց և պարսից: Ի Պատմ., նոր. Բ. 60. նոյնպէս յիշատակի սա. «Ի Մարսս ի Մոհունդ անուանեալ տեղուոջ»: Ուստի յայտ է, թէ չէ պարտ շփոթել զՄարսս ընդ Մարսս անուան, որպէս անենն ումանք»:

Վերջին բառը («ոմանք») վերաբերում է հավանաբար Դյուլորիեին, որը Մարսսը շփոթել է Մարքի հետ (Հմմտ. Hübsch., էջ 20, ծ. 1):

488. «Նուագեալ երկոցուցն կողմանցն հետեւակն մարտին»: Զամինյանը (Զամ., էջ 181) «հետեւակն» բառը սրբագրում է «ի հետեանս»-ով:

489. «Քայց զանգալին աղէտս հէնին Իսմայելի»: Այս բառերով սկսող ամբողջ պարբերությունը, որն ընդօրինակված է հնագույն ձեռագրի 532ա էջում, Զամինյանը (Զամ., էջ 181) առաջարկում է հանել տեղից և տեղափոխել ավելի ետ և կցել 541բ էջի երկրորդ պարբերությանը («որ արար անապատ զամենայն երկիր» բառերից հետո): Զամինյանն օգտագործել է «Սեբեոսի Պատմության» Դուկասյան հրատարակությունը (Քիֆլիս, 1912), ուստի մեր նշած էջերը համապատասխանում են նրա օգտագործածի 181-րդ և 220-րդ էջերին: Այս իսկ պատճառով էլ Զամինյանի սրբադրական առաջարկն արված է Քիֆլիսի հրատարակության 181-րդ էջի լուսանցքում, որտեղ կարդում ենք. «Այս կտորը տանել կապել 220 երեսի հետ»: Այս առաջարկությունը, սակայն, կիրառելի չէ, որովհետև հատվածն իր այժմյան տեղում ավելի բնական է, քան առաջարկվող տեղում: Իսկ եթե տեղափոխելու հարկ լիներ, ավելի հարմար տեղ է 529բ էջի երկրորդ և երրորդ պարբերությունների միջև («ի վերայ թագաւորութեանն Պարսից» բառերի միջև) որտեղ հատվածն ավելի բնական է երևում, քան իր այժմյան տեղում:

490. «Ո՛վ կարիցէ պատմել»: Միհրդատյանի հրատարակությունը «պատմել»-ի փոխարեն ունի «պարտել»։ հայտնի չէ, թե զա վրիպակ է, թե այլպես է եղել նաև Միհրդատյանի օգտագործած ձեռագրերում: Ք. Պատկանյանը մտովի սրբագրել է բառը «պատմել»-ով և թարգմանել «НО КТО МОЖЕТ РАССКАЗАТЬ» (Патк., էջ 124): Հյուբշմանը Պատկանյանի սրբագրածից հետո գրում է. «պարտել-ի փոխարեն ես կարդում եմ պատմել» (Hübsch., էջ 20, ծ. 2): Մալխասյանը նույնպես հետևել է Պատկանյանի սրբագրությանը:

491. «Իսկ գազանն չորբորդ անեղ և զարմանալի և ժանիք ետա երկաթիք, և մագիլ և ուրա պղնձիք. ուտէր և մանրէր զմնացուածսն առ ոտն կտորէր»: Այս բառերից սկսած մինչև «Սեբեոսի Պատմության» վերջը ընդօրինակված ենք գտնում անցյալ դարեկեսի մի անհայտ ընդօրինակողի ձեռքով: Այդ ընդօրինակությունը պահվում է ՄՄ Երեցյանի արխիվում (թղթ. 153, վավ. 124): Ընդօրինակության առանձնահատկությունների մասին տե՛ս սույն հրատարակության առաջաբանը:

Սույն ծանոթագրությունն սկսող նախադասությունը պատմիչը քաղել է Աստվածաշնչից (Իսնիկ, է, 7): Նա քաղվածքները երբեմն բերում է անգիր, այդ իսկ պատճառով էլ տարբեր ձևերով է քաղում նույնիսկ միևնույն քաղվածքը: Այսպես օրինակ, խնդրո առարկա քաղվածքը նա Պատմության վերջին գլխում (547բ) բերել է հետևյալ կերպ. «Գազանն չորբորդ անեղ և զարմանալի, և հզար յոյժ. ժանիք նորա երկաթիք, և մագիլք նորա պղնձիք. ուտէր և մանրէր, և զմնացեալսն առ ոտն կտորէր»: Անշուշտ, հավասարաչափ հնարավոր է նաև, որ ընդգծված փոփոխություններն արդյունք լինեն հետագա գրիչների անուշադրության:

492. «Ուրպէս հրեշտակապետն մեկնեաց, երէ «գազանն չորբորդ թագաւորութիւն չորբորդ կացցէ»: Բուր ձեռագրերն ու տպագրիչներն ունեն. «գազանն չորբորդ թագաւորութեանն (փիս. «թագաւորութիւն»)» և բաց են թողել մեր վերականգնած «չորբորդ» բառը («թագաւորութիւն չորբորդ» արտահայտության մեջ): Մենք բնագիրը վերականգնել ենք հենվելով ինչպես Աստվածաշնչի (Իսնիկ, է, 23), այնպես էլ իր՝ «Սեբեոսի Պատմության» հեղինակի վրա:

Աստվածաշնչում բնագիրը ճիշտ այնպես է, ինչպես վերականգնել ենք մենք, առանց որևէ տառի փոփոխության («գազանն չորբորդ թագաւորութիւն չորբորդ կացցէ»), միայն՝ «Սեբեոսի Պատմության» հեղինակը բաց է թողել փակագծերում բերված բառերին Աստվածաշնչում հաջորդող «չերկրի» բառը:

Այս բանը փոքր-ինչ տարբեր ձևով («ի վերայ երկրի») գտնում ենք «Սեբեոսի Պատմության» հաջորդ գլուխներում (541բ) հանդիպող միևնույն քաղվածքի հետևյալ տեքստում. «գազանն չորբորդ՝ չորբորդ թագաւորութիւն կացցէ ի վերայ երկրի»:

Ահա, այս երկու «չորբորդ»-ներից մեկն է, որ բաց են թողել ընդօրինակող գրիչները մեր վերականգնած տեքստն ընդօրինակելիս:

493. «Խորհէր Վաղենտին ի միտս իւր՝ ճարտարութեամբ խաբել զսինկղիտսն»: Հնագույն ձեռագիրը (№ 2639) «Վաղենտին»-ի փոխարեն ունի «-էնտին»: Անվան առաջին կեսի երեք տառերը («Վաղ») չեն կարդացվել, և ընդօրինակող գրիչը բաց է թողել:

Անուան չի կարդացվել նաև մեզ չհասած այն ձեռագրում, որը ժամանակին գտնվել է Միհրդատյանի ձեռքին: Այդ ձեռագրում եղած «էնտի» մասնիկի դիմաց լուսանցքում ուրիշները գրած են եղել լրիվ անունը՝ «Վաղենտին», բայց մոռացել են ջնջել «էնտի» մասնիկը, որը հետագա ընդօրինակողը կարդացել է «անտի»: Այսպիսով, սռացվել է «Վաղենտին անտի», որը և տպագրել են Միհրդատյանը և Ք. Պատկանյանը: Մալխասյանը ջնջել է «անտի»-ն և թողել է «Վաղենտին»-ը:

Այն հանգամանքը, որ Միհրդատյանը չի նշել № 2639 ձեռագրի տարբնիքը («էնտին»

մասնիկը՝ «Վաղենտին» անվան փոխարեն) ցույց է տալիս, որ նա կա՛մ չի նկատել այդ տարրն Թերցվածքը, կա՛մ էլ կարևորություն չի տվել դրան: Երկու դեպքում էլ գալիս ենք այն եզրակացությանը, որ բառերը սրբագրելիս նման դեպքում հնարավոր չէ լիովին վստահությամբ հենվել Միհրդատյանի նշած կամ շնչած լինելու փաստի վրա: Բայց որ Միհրդատյանի օգտագործած ձևագիրը եզակի չի եղել «Վաղենտին անտի» արտահայտությամբ, երևում է նրանից, որ Ք. Պատկանյանի ձևագիրը նույնպես ունի ճիշտ միևնույն ընթերցվածքը:

Մաշտոցի անվան Մատենադարանի Երիցյանի արխիվում պահվող մասնակի ընդօրինակությունից մեջ (թղթ. 153, վավ. 124) մեզ հետաքրքրող նախադասությունը գրված է այսպես. «Նորհեր անդի ի միտս իւր ճարտարութեամբ Վաղենտին»: Ինչպես տեսնում ենք, այստեղ «էնտին» մասնիկը դարձել է ոչ թե «անտի», այլ «անդի», իսկ «Վաղենտին» անունը գտնվում է սողի վերջում և ոչ թե «անդի»-ի կողքին: Սրանով հաստատվում է մեր այն ենթադրությունը, որ «Վաղենտին»-ը սկզբում գրված է եղել լուսանցքում և հայտնվելով «ճարտարութեամբ» բառի կողքին՝ հենց այդպես էլ արտագրվել է («ճարտարութեամբ Վաղենտին») Երիցյանի արխիվի ընդօրինակության մեջ: Միհրդատյանի ձևագրի ընդօրինակողը լուսանցքի «Վաղենտինը» տեղափոխել է «Նորհեր անտի» բառերի կողքին և ընդօրինակել է նրանց հետ միասին («Նորհեր անտի Վաղենտին»):

Ինչպես ասվեց, մեզ հասած հնագույն ձևագիրը (№ 2639) «Վաղենտին» անունը չունի, այլ ունի միայն «էնտին» մասնիկը: Կնշանակի Միհրդատյանի օգտագործած օրինակը և Երիցյանի արխիվում գտնվող մասնակի ընդօրինակությունը բխում են մի ընդհանուր ձևագրից, որն ընդօրինակողներին յուրաքանչյուր գրիչ յուրովի է վարվել լուսանցքում գտնված «Վաղենտին»-ի և «էնտին» մասնիկի հետ: Այսպիսի ընդհանրության այլ օրինակներ գտնում ենք նաև մի քանի ուրիշ բառերի դեպքում: Դրանցից մեզ համար ամենահավանք հետագա ծանոթագրություններից մեկում մեր ցույց տված ընդհանրությունն է՝ «օգնութին հոգի» արտահայտության դեպքում: Միհրդատյանն էլ, Երիցյանի արխիվի ընդօրինակությունն էլ տալիս են «օգնութին» ընթերցվածը (ի տարբերություն № 2639 ձևագրի «օրհնութին» բառի): Այս մասին ավելի մանրամասն տե՛ս ստորև, ծ. № 618:

Դժբախտաբար, հիշվել երկու ընդօրինակությունների աղբյուրը մեզ չի հասել: Պարզ է միայն այն, որ դրանք ծագում են ոչ թե անմիջապես միևնույն ձևագրից, այլ մի երկրորդ ընդօրինակությունից, որովհետև ունեն նաև տարբերություններ:

494. «Ջորավար գլխոզորոս զոմն հաւաարիմ յիշխանացն Հայաստանեաց»: Այս Թեոդորոսի Մարկվարտը („Osteuropäische und Ostasiatische Streifzüge“, 1903, էջ 440) և Կուլակովսկին („История Византии“, III, 191) շփոթում են Թեոդորոս Ռշտուհու հետ (հմմտ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժող. պատմ., հ. Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 196, ծ. 1, 201—203):

495. «Եւ մանանդ վասն սպպտի, որդոյ Սմբատայ Խոսրով Եում կռչեցելոյ»: Զամինյանը (Զամ., էջ 185) «վասն» բառից հետո ավելացնում է «Վարագորից» անունը («Եւ մանանդ վասն Վարագորից սպպտի»): Ք. Պատկանյանը ոտուերին թարգմանության մեջ Патк., էջ 127) փակագծում է նշում է „(t. e. Вараз-Тироча)“. Ֆ. Մակելը (Macl., էջ 106, ծ. 3) նույնպես ծանոթագրում է. „Il sagit du Varaz-tiroch“.

496. «Ջորդի նորա զՍմբատ առաջին սպաբար ի մէջ ամենայն սպաբարացն»: Բոլոր ձևագրերն ու տպագրիչները սույն նախադասությունն ունեն այսպիսի խառն վիճակում. «Ջորդի նորա առաջին սպաբար զՍմբատ մեջ ամենայն սպաբարացն»: Սա բացահայտ վերական է, ուստի «Սեբեոսի Պատմության» բոլոր թարգմանիչները նախադասությունը թարգմանել են այնպիսի կանոնավորված շարահյուսությամբ, որպիսին վերականգնել ենք մենք: Ստ. Մալխասյանցը (ՍեՊ, էջ 116, ծ. 5) տողատակի ծանոթագրության մեջ առաջարկել է կանոնավորել շարահյուսությունը, բայց չի համարձակվել բնագիրը սրբագրել:

497. «Սպաբար ... և Կանտիտատ»: Ք. Պատկանյանը (Պատկ., էջ 202) ծանոթագրում է. «Սպաբար = σπαθάριας զինակիր թարգմանի, իսկ այն որ ունի զպատիւ սպաբարի և կանդիլատի՝ σπαθαραδιδάτος յորջորջէր: Du Gange: Հ. Հյուրըմանը („Zur Gesch. Armeniens“, էջ 21, ծ. 4) նույնությամբ կրկնել է Պատկանյանի ծանոթագրությունը: Ֆ. Մակելը (Macl., էջ 106, ծ. 4) Σπαθάριας -ի կապակցությամբ փոխանակ հղելու Պատկանյանին, որն առաջինն է ծանոթագրել բառը, հղում է Հյուրըմանին («Arm. Gramm.», I, էջ 380): Ստ. Մալխասյանցը ի մի է բերել նախորդների ծանոթագրությունները և որոշ հավելումներով տվել է հետևյալ ամփոփումը. «Սպաբար հունարեն բառ է, spathareios, որ նշանակում է թուր կրող, զինյալ, որով կոչվում էր պալատական մի պաշտոնյա: Կանդիլատ (հին նշանակությամբ) լատինական

բառ է, candidatus, որ բառացի նշանակում է ճերմակավոր, սպիտակազգեստ և լատիներենից անցնելով հունարենին kandidatos ձևով՝ գործ է ածվել նշանակելու համար պալատական մի սրբիչ պաշտոնեություն...» (Հմմտ. նաև Малх., էջ 171, ծ. 169):

498. «Եւ անդէն կարգեաց ի կարգն առաջի յամին հինգերորդի քաղաւոսութեանն իւրոյ»: Ք. Պատկանյանը (Патк., 211, ծ. 207) ծանոթագրում է. «Այստեղ նկատի է առնված Կոնստանտ 2-ը, 641—669, նրա թագավորության հինգերորդ տարին կլինի 646 թվափանը»: Համբարյանը վիճարկել է «հինգերորդ» թվականը, սակայն Հ. Մանանդյանը արդարացիորեն զրոյն է, որ «Համբարյանի առարկությունը, իբր այդ թվականը հայտնի սխալ է, անշուշտ, հիմնավոր չէ» («Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Բ, Բ մասի նյութեր, էջ 196):

499. «Եւ իբրև եկն յերկիրն Կոտից»: Ստ. Մալխասյանցը ծանոթագրում է «Հասկանալու է՝ և իբրև եկն Թեղոսոս»: Եվ իսկապես, այստեղ խոսքը վերաբերում է Թեղոսոս Ռշտունուն:

500. «Եւ կարգեաց նմա ոռնիկ և ընդունելութիւն յարժունուստ»: Ք. Պատկանյանը թարգմանել է. «назначил (Կոնստանտին կայսերը — Գ. Ա.) ему (Թեղոսոս Ռշտունուն—Գ. Ա.) жалованье и содержание из Казны». Հ. Հյուբշմանը (Hübisch., էջ 22) չի իմացել «ընդունելություն» բառի նշանակությունը և բառը չի թարգմանել: Իսկ բառի կողքի «յարջունուստ» բառը նա թարգմանել է գրեթե Պատկանյանի նման. „aus der königlichen Kasse.“ («Արքունի գանձարանից »): Ֆ. Մակլեբը (MacI., էջ 107) նույնությամբ կրկնել է Հյուբշմանին: Ստ. Մալխասյանցը (Малх., էջ 98) թարգմանել է. «назначил ему казенное содержание и получки от двора». Իսկ ծանոթագրության մեջ (էջ 171, ծ. 171) բացատրում է. «Արտահայտության իմաստը պարզ չէ... բառացի՝ «և նշանակեց նրան կենսամիջոց և ընդունելություն գանձատնից», որի մեջ «ընդունելություն» բառը մեզ հասկանալի չէ»:

Ինչպես տեսնում ենք, բոլոր մասնագետները միաձայն անհասկանալի են համարել «ընդունելություն» բառը: Մեր կարծիքով, դա վերաբերում է բյուզանդական արքունիքում կատարված ընդունելություններին: Հայտնի է, որ եկեղեցական տոներին, ինչպես նաև կարևոր պատմական իրադարձությունների և հյուրընկալությունների ժամանակ՝ բյուզանդական արքունիքում տեղի էին ունենում հանդիսավոր ընդունելություններ: Սրանք ունեին հատուկ կանոններ այն մասին, թե ընդունելությունների ժամանակ կայսրը ինչ ճանապարհով պետք է անցնեի, ինչպես պետք է նրան ուղեկցեին, ինչպես էին վարվելու տարբեր դասերը և այլն: Գոյություն ուներ ընդունելության մասնակիցների հատուկ կազմ: Ահա, մեր կարծիքով, երբ բյուզանդական Կոստանտ կայսրը Թեղոսոս Ռշտունուն նշանակել է տարեկան ոռնիկ և «ընդունելություն յարջունուստ» նշանակում է նրան էլ է թույլ տվել մասնակցելու ընդունելության հանդեսներին:

Այս տեսակետից ջննարկվող արտահայտության վրա կարող է լույս սփռել նաև «Մեքենոսի Պատմության» մեկ այլ հատված, որը վերաբերում է հայոց մեծամեծ իշխաններին պարսից արքունիքում ոռնիկ նշանակելուն և արքունի ընթրիքի հրավերելուն: «Եսկ նա,—գրում է պատմիչը, ակնարկելով պարսից արքա Խոսրովին,—ինդուլթեամբ ընկալաւ զնոսա, և երևելի շքեղութեամբ մեծացոյց պատուովք. և զմեծամեծ իշխանսն հրամայէ պահել ի դրանն արքունի, կարգել նոցա ոռնիկս յարժունուստ՝ տալ ի տունս իւրաքանչիւր, և կոչել յամենայն աուր յընթիս արժունի»:

501. «Ապա հրամայէ կոչել զԹումասս ոմն»: Մալխասյանցը ծանոթագրում է. «զԹումասս ոմն՝ թվի ուղղել զԹումասսն»:

502. «Բայց ասպետ ոչ կարաց նուանել ընդ իշխանութեամբն Յունաց»: Այս բառերի դիմաց № 2639 ձեռագրի 533ա էջի լուսանցքում դրված է «ՀԲ» թվագիրը: «Պատմության» ժԱ—ԼԲ զլուխները որոշ բացթողումներով լուսանցքներում ունեն գլխահամարներ, որոնք հետո ընդունվում են: Հավանաբար «ՀԲ» թվագիրը այդ գլխահամարների մնացորդներից է կամ էլ գաղափար օրինակում գտնված նախկին նյութերի հետ կապվող ընդհանուր համարակալման մնացորդ: Մանրամասն տե՛ս №. 2639 ձեռագրի մեր նկարագրությունը:

503. «Ապա ազգ ինէր, եթէ եկն և ամբացաւ ի Հայս՝ ի Տայս»: Հ. Հյուբշմանը (Hübisch., էջ 22—23) թարգմանել է այսպես. «Բայց երբ լուր ստացվեց, որ նա (Ասպետը) փախել է Տայք, հայերի մոտ»: Վերջին երեք բառերը չեն համապատասխանում գրաբար բնագրին, որտեղ ասված է «ամբացաւ ի Հայս՝ ի Տայս»: Ինչպես տեսնում ենք, խոսքը ոչ թե հայերի, այլ Հայաստանի մասին է («ամբացաւ ի Հայս»), Ֆ. Մակլեբը (MacI., էջ 107) նույնությամբ կրկնել է Հյուբշմանի սխալը:

504. «Արձակել զՆերսէ կարողիկոս առ ասպետ, և տանել նմա երդումն հաւատարմութեան ի խնդրել նմա զիշխանութիւն աշխարհիւն»: Զամինյանը (Զատ., էջ 187) «և տանել» բառերը փոխարինել է «տալ» բառով, կարծելով, թէ պատմիչը «երդում տանել» արտահայտութիւնը չէր կարող գործածել: Բայց այստեղ այդ արտահայտութեան գործածութիւնը հնարավոր է, որովհետեւ «երդում» ասելով հեղինակը կարող էր նկատի ունենալ նաև գրավոր երդումը, երդման գրութիւնը, որի մասին «տանել» բառը գործածելի է:

Խնդրո առարկա հատվածի և նրա հետ կապվող հաջորդ մասի անհաջող շարադրման հետևանքով հեղինակի միտքը պարզ չի արտահայտված, և «Սեբեոսի Պատմության» բոլոր թարգմանիչները (Патк., էջ 128, Hübsch., էջ 23, Macl., էջ 107, Малх., էջ 98) սխալ են վերծանել բնագիրը: Այն ունի իրականում հետևյալ իմաստը. «Տանել նրան (Վարազտիրոցին— Գ. Ա.) հավատարմության երդում՝ նրա կողմից երկրի իշխանությունը պահանջելու դեպքում», այսինքն՝ տանել ասպետի անունից վաղորոք գրված հավատարմության երդում այն մասին, որ նա իշխանությունն ստանձնելիս հավատարիմ կմնա բյուզանդական կայսրին: Այս երդումը պետք է հաստատվեր Վարազտիրոցի մոտ: Այդպես էլ լինում է. կաթողիկոսը գնում է Վարազտիրոցի մոտ և նրա մոտ էլ հաստատում է երդումը, որպեսզի նա գործողության այլ ուղի չբռնի. «Հաստատեաց առ նմա զերդումն, զի մի այլ ուրեք կալցի ճանապարհ»: Սրանից հետո կաթողիկոսն ու մյուսները նամակ են գրում Կոստանդին կայսրին, որպեսզի նա Վարազտիրոցի հետ վարվի ըստ նրա երդման. «Եւ զրեցին նոքա առ թագաւորն Կոստանդին առնել նմա ըստ երդմանն զոր խոստացաւ»: Այդ երդումից մի հատված (որն սկսվում է «Մտաչ բոլ նմ, եւ ոչ ուրեք երթամ ի ծառայութենէդ ձերմէ») բառերով բերելուց հետո հեղինակը հայտնում է, որ Կոստանդինը հրամայում է Վարազտիրոցին դարձնել «կիրապաղատ և տալ նմա պսակ պատուոյն և զիշխանութիւն աշխարհիւն: Եւ հրամայեաց արձակել զկին և զորդիսն մեծաւ շքով»:

505. «Արում անուն էր»: Բոլոր ձեռագրերն ու տպագրերն ունեն «որում անունն էր»: Սրբագրել ենք ըստ Մաշտոցի անվան մատենադարանի № 1343 ձեռագրի պատմադրիկի (XVI դար): Նկատի ենք ունեցել նաև № 2639 ձեռագրի 525 բ էջի (=ՍԵՊ, էջ 98) հետևյալ նախադասությունը. «ընտրեցին զոմն անապատական՝ յԱբրահամեան տանէ, որում անուն էր Քրիստափոր»:

506. «զՍմբատ կարգեաց արքայ ի պատիւ հաւ իւրոյ»: Այստեղ հայտնվում է, որ բյուզանդական կայսրը Վարազտիրոցի անդրանիկ որդի Սմբատին բարձրացնում է նրա հոր աստիճանին: Այդ աստիճանը կյուրոպաղատության աստիճանն էր: Սրանից ելնելով մասնագետները (Զամյան, Սեն Մարտեն, Տուրնեբիզ, Աբալան, Ղազարյան, Մորզան, Լորենտ և այլք) Սմբատին ամենուրեք ներկայացրել են որպես կյուրոպաղատ և իշխան հայոց: Սակայն Չ. Մանանդյանը («Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Բ, Բ մասի նյութեր, էջ 203—206) գտնում է, որ դա ճիշտ չէ, որովհետև «Սեբեոսն իր վկայության շարունակության մեջ որոշ կերպով վկայում է, որ Սմբատը ստացել էր կայսրից դրոնգարի պաշտոն և ուղարկվել բանակ: Իսկ դրոնգարությունը կամ զնդապետությունը, ինչպես հայտնի է, գորական հասարակ պաշտոն էր. ուստի միանգամայն հասկանալի է, որ Հայաստանի կյուրապաղատին չէր կարելի կարգել դրոնգար և ուղարկել բանակ» (նույն տեղում, էջ 206):

Այսպիսով, տակավին անհասկանալի է մնում «կարգեաց արքայ ի պատիւ հաւ իւրոյ» արտահայտությունը: Եթե Սմբատի հայրը՝ Վարազտիրոցը կյուրապաղատ էր, Սմբատն էլ պետք է կյուրապաղատ լիներ, որովհետև բյուզանդական կայսրը նրան կարգել էր «ի պատիւ հաւ իւրոյ»: Ինչպե՞ս հասկանալ այս:

507. «Տունալ նմա զիշխանութիւն բնիկ տանուէրութեանն ասպետութեանն»: Այս նախադասությունը Ք. Պատկանյանը թարգմանել է. „дав ему наследственное право старшенства в роде аспетов“ (Патк., էջ 129): Պատկանյանին նույնությամբ կրկնել են նաև Չ. Հյուբշ-մանը (Hübsch., էջ 23) և Ֆ. Մակլիբը ((Macl., էջ 108): Մալխասյանցը թարգմանել է. „дал ему право владения собственным нахарарским домом“ (Малх., էջ 99): Չ. Մանանդյանը («Քննական տեսություն հայ ժող. պատմ.», հ. Բ, Բ մասի նյութեր, էջ 206) գրում է. «Սեբեոսի վկայության իմաստն այն է, որ Սմբատը լինելով Վարազտիրոցի անդրանիկ որդին՝ ճանաչվել է կայսր կողմից իբրև Բագրատունյաց տանուտեր»:

Իրականում, սակայն, Սեբեոսն այստեղ նշում է հատուկ պաշտոնի անուն. «տանուտերության ասպետություն», որից երևում է, որ պատմիչի ապրած ժամանակ գոյություն է ունեցել հայոց հեծելազորի ընդհանուր հրամանատարի պաշտոն: Հիշենք, որ բյուզանդական Կոստանդ կայսրը Մուշեղ Մամիկոնյանին նշանակել էր հենց «իշխան Հայոց հեծելոցն»: Ահա, այս միև-



նույն պաշտոնն է, հավանաբար, պատմիչը նկատի ունեցել «բնիկ տանտուէրութեան ասպետութիւն» կոչելով:

508. «Արար գնա դրոնգար»: Բոլոր ձեռագրերը, № 1348 պատառիկը և Միհրդատյանը ունեն «գրունդար»: Վրիպակն ուղղել է Պատկանյանը (Պատկ., էջ 116, ծ. 202), որը գրում է. «Դրոնգար և ոչ դրոնդար, որպէս էր ի տպագ. և ի ձեռագ. օրինակի մերում. է ծροϋγγόριος, drucgarius զինվորական պատին առ բիզանդացիս, այսինքն՝ պետ վաշտի. Du Gange»: Պատկանյանի բացատրութիւնը կրկնել են նաև Ն. Բյուզանդացին («Հայկ. բառաքնութիւն», էջ 10), Հյուբշմանը («Hübsch.», էջ 23, ծ. 6), Մակեերը (Macl., էջ 108, ծ. 3), Մալխասյանցը (Մալխ., էջ 171, ծ. 174), Աճառյանը (Արմ. բառ.) և ուրիշներ:

Պատկանյանի կոչած «վաշտ»-ը հավանաբար պետք է հասկանալ ոչ թե այսօրվա վաշտի (գումարտակի մաս), այլ ավելի մեծ զինվորական ուժի իմաստով:

509. «Ետ նմա կին ի տանէն Արշակունեաց և... յիրոց մերձաւորաց»: Այստեղ «և»-ը կարծես թե ավելորդ է: Քարգամանիչներն այն դուրս են գցել: Սակայն հնարավոր է, որ «և»-ից հետո ինչ-որ բաներ են պակասում և դա է պատճառը, որ այժմ շաղկապն ավելորդ է թվում:

Պատկանյանը (Պատկ., էջ 129) և նրան հետևելով նաև Հյուբշմանը (Hübsch., էջ 23) և Մակեերը (Macl., էջ 108) բնագիրը վերծանել են այն իմաստով, թե Արշակունիները բյուզանդական կայսեր մերձավորներից են: Իսկ Մալխասյանցի (Մալխ., էջ 99) թարգմանության համաձայն՝ հեղինակի խոսքը ոչ թե կայսեր և Արշակունիների մերձավորության, այլ այն մասին է, որ կայսրը Սմբատին կնութիան է տվել իր մերձավորներից մի կնոջ, որը Արշակունիների տոհմից էր:

Նրկու դեպքում էլ «յիրոց մերձաւորացն» բաները բյուզանդական կայսրին չեն հարմարվում և թողնում են այն տպավորութիւնը, թե նախնական բնագրում դրանցից առաջ իսկապես եղել են ինչ-որ բաներ, որոնց կորստյան հետևանքով բնագիրը անհասկանալի է դարձել: Ենթադրյալ այդ բաների փոխարեն մենք «և» շաղկապից հետո բնագրում ավելացրել ենք բազմակետ:

510. «Եւ եղև ի գալ միս ամի եկն գաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան յերիս: Առաջ մի յԱրարատ, և առաջ մի ի Սեպհական գեղին կողմանս, և առաջ մի յԱղուանս»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 345) «յԱղուանս» բառը սրբագրում է «ի Նախճաւանս»: Մ. Գրիգորյանը (նույն տեղում, էջ 349—350) այդ կապակցութեամբ գրում է. «Եթե ընդունենք, որ Սեբեոս պատմութեան դեպքերու և տեղանուններու դասավորման մեջ շփոթած է, այդ պարագային կարելի է ընդունիլ Հ. Ակինյանի սրբագրութիւնը: Բայց այդ պարագային «յԱրժափս» ընթերցվածն ևս հառաջադրվելու իրավունք կրնա ստանալ: Եվ հիրավի, «յԱրժափս» և «յԱղուանս» ավելի մոտ են, քան «ի Նախճաւանս» և «յԱղուանս», ուստի եթե «յԱղուանս»-ը սրբագրելու հարց լինէր, ավելի ընդունելի կլինէր նրա փոխարեն գրել «յԱրժափս», քան «ի Նախճաւանս»: Սա կարողարացվիր նաև նրանով, որ պատմիչն արարական այս արշավանքը նկարագրելիս իսկապես խոսում է Արժափի գրավման մասին:

511. «Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գեղին»: «Սեպհական գեղի կողմեր» արտահայտութեան շուրջ տարբեր մասնագետներ հայտնել են տարբեր կարծիքներ: Դեռևս 1849 թ., երբ «Սեբեոսի Պատմութիւնը» նոր էր հայտնաբերվել և տպագրված չէր, ֆրանսիացի արևելագետ Մ. Բրոսեն («Rapports sur un voyage», 1849, էջ 53) մեզ հետաքրքրող տեղը հասկացել է այնպես, թե արարական գործերի մի մասը գնացել է Հայաստան, մյուսները՝ Տայք, Վրաստան և Աղվանք: Այստեղ պարզ չի երևում, թե Բրոսեն «Տայք» ասելով արդյոք հասկացել է Սեպհական գեղի կողմերը, թե՛ կրկնել է մի քանի պարբերութիւն հետո հայտնած այս տեղեկութիւնը. «Իսկ այն գաւրն, որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից» (ՍԵՊ, էջ 119):

Մեկ ուրիշ ֆրանսիացի արևելագետ՝ է. Դյուլորիենն («Recherches sur la chronologie arménienne», I, 358) 1859 թ. «Սեպհական գունդ» արտահայտութիւնը թարգմանել է «la legion noble», այսինքն՝ «ազնվական գունդ» և կարծել է, թե դա «անշուշտ նույնն է, ինչ որ Հովհաննես կաթողիկոսը կոչում է Տանուտերական գունդ»: Սա ճիշտ կարծիք չէ, որովհետև, ինչպես քիչ հետո կտեսնենք, «տանուտերական» և «սեպհական» արտահայտութիւններն ունեն յարմար իմաստներ և վերաբերում էին տարբեր պատկանելութեան տիրույթներին:

Պատկանյանը (Պատկ., էջ 211, ծ. 209) գրում է. «Մենք չենք կարող որոշել Հայաստանի ո՞ր մասը պետք է հասկանալ «Սեպհական գեղի կողմանս» արտահայտութեամբ»:

Հ. Հյուբշմանը (Hübsch., էջ 24) «Սեպհական» բառը թարգմանել է լատիներեն «peculiares, selectus, proprius» (=հատուկ, ընտրյալ, առաջին) բաներով և գրում է. «Այս առթիվ

որևէ մոտավոր բան չեմ կարող գտնել: Եթե կարողանայինք Սեպհական գունդը նույնացնել Տանուտերական գնդին՝ նրանց նահանգը կլինեիր Զորքը Զորորոդ Հայքում, Հաշուեանքը և Առբերանին (Իճնիյան, Հնախօսութիւն, 2-րդ, էջ 274):»

«Սեպհական գնդի կողմեր» արտահայտության ճիշտ բացատրությունը տվել են Ղ. Ալիշանը («Այրարատ», էջ 420), Ն. Ադոնցը («Армения в эпоху Юстиниана», էջ 318—320), Թ. Ավդալբեգյանը (նշված աշխ., էջ 141—147), Ստ. Մալխասյանցը (Малх., էջ 157, ծ. 92) և ուրիշներ, որոնք ցույց են տվել, որ «Սեպհական գունդ» և «Վասպուրական գունդ» անունները նույնն են:

«Հին Հայաստանում,—գրում է Մալխասյանցը,—սեպուհներ էին կոչվում իշխանական տան անդամները (արական սեռի), բացի իշխանից իրենից՝ տիրոջից, որը կոչվում էր աէր, տանուտէր, նահապետ, իշխան, նախարար: ...նախարարական տիրույթներն անբաշխելի էին: Բայց ժամանակի ընթացքում աստիճանաբար սովորություն դարձավ այդ տիրույթներինց առանձնացնել փոքր հողակտորներ հօգուտ սեպուհների, նրանց լրիվ արամադրության պակ: Այդպիսի հողերն սկսեցին կոչվել սեպհական հող, ի տարբերություն «անուտերական հողի: Եվ քանի որ տանուտերական հողի, որպես մայրատի վրա ունեցած իշխանի իրավունքը սահմանափակված էր (նա իրավունք ուներ դա բաժանելու), իսկ սեպուհի իրավունքն իր հողի վրա լրիվ էր, անսահմանափակ, ապա «սեպուհական հողը» դարձավ «սեպհական հողի» հոմանիշը և «սեպական» բառը նոր ուղղագրությամբ «սեպական» ձևով ստացավ «սեպական» բառի նշանակություն...: «Սեպուհ» և «Սեպական» բառերը ծագմամբ հարազատ են պահլավական vaspuhr և vaspuhrakan բառերին: Ինչպես հայերեն, այնպես էլ պահլավերեն բառերը նշանակում են՝ իշխանական տոհմից, իշխանական տոհմին պատկանող մեծամեծ: Սրա հետևանքով, Սեբոսի մեջ հանդիպող «Վասպուրական գունդ» և «Սեպհական գունդ» արտահայտությունները միևնույն նշանակություն ունեն» (Малх., էջ 157): Հմտ. նաև Н. Я. Марр, Этимология двух терминов... сепуհ և նախարար, СПб., էջ 165—174.

512. «Եւ եկին ժողովեցան ի Հէրևան»: Բոլոր տպագիրները և անցյալ դարեկեսին ընդօրինակված Բ,Ք,Դ,Ե, ձեռագրերն ունեն «ի յԵրևան»: Ուղղել ենք «ի Հէրևան» ըստ № 1343 պատասիկի (XVI դար) և մեզ հասած հնագույն ձեռագրի (№ 2639, ընդօր. 1672):

Մեր կարծիքով, նախնական բնագրում եղել է «Հէր Եի Ան և»-ի փոխարեն «Հէր Եի ԱՆԻ»: Ըստ այսմ ամբողջ արտահայտությունը կլինեիր այսպես. «Եւ եկին ժողովեցան ի Հէր Եւ անդ մարտեան ընդ բերդին Եւ ոչ կարացին առնուլ»:

Այս սրբագրության մասին ավելի մանրամասն տե՛ս մեր հոդվածը («Երևանի» բերդի հնագույն հիշատակությունը, ՀՍՍՀ ՔԱ հաս. գիտ. «Հրաբեր», 1972, № 8, էջ 24—31):

513. «Նկին յՈրդապու, և ոչ նեա ինչ կարացին առնուլ»: Դյուլորիեն, Պետերսը և այլք այս Որդապուն շփոթել են Որդորուի հետ և Տեղինակի սույն հատվածը թարգմանելիս Որդապուի փոխարեն գրել են Ortorou (Dulaurier, Recherches, էջ 231) կամ Ordorou (P. Peters, Πασαγιάτης—Περσογένεσις:—„Byzantion“, VIII, f. 2 (1933), Bruxelles, 1933, էջ 410):

Մեր Մատենադարանի նրիցյանի արխիվում (թղթ. 153, վավ. 124) պահվող հատվածական ընդօրինակության մեջ գրված է «Օրդրապու»: Ընդօրինակող գրիչը սկզբում հավանաբար կամեցել է գրել Օրդրու, հետո նկատել է, որ խոսքը Օրդապուի մասին է, գրել է Օրդապու, մոտանալով շնչել «բ»-ն:

Օրդապուի իրական տեղի մասին տե՛ս մեր 474 ծանոթագրությունը:

514. «Բազում աւնիքս վնասուց գործեցին անդ ի բերդէն»: Զամինյանը (Զամ., էջ 189) «ի բերդէն»-ի փոխարեն սրբագրում է «ի բերդին»:

515. «Արդ՝ էր Եոցա ի բիկանց կողմանէ էլ ի գլուխ անդ յԱտրեհայ կողմանէ»: Բոլորովին անհասկանալի բառ է «յԱտրեհայ»-ն: Նման տեղանուն ծանոթ չէ: Մենք չենք կասկածում, որ դա աղավաղված բառ է: Անցյալ դարում ընդօրինակված № 3122 ձեռագրի գրիչը «յԱտրեհայ»-ի փոխարեն գրել է «յԱտրեհտանայ» (էջ 74 բ), որը պարզապես անհեթեթություն է, քանի որ պատմիչի խոսքը ոչ թե Ատրեհտանի, այլ Այրարատյան նահանգի հյուսիսային սահմանամերձ մի ամրոցի (Արծափի) մասին է: «Արծափը. բաղաբ. և ամրոց Կոզովիտ գավառում, Դարլունքից հյուսիս-արևմուտք, Արարատ լեռից արևմուտք. Արարս թափվող և Բալլիս-չալի վտակը հանդիսացող մի փոքրիկ գետի վրա: Այժմ ոչ մեծ գյուղ» (Малх., էջ 171, ծ. 176):

Զարմանալի է, որ Դյուլորիեն («Recherches sur la chronologie arm.», I, էջ 231) № 3122 ձեռագրի մասին չիմանալով կրկնել է նրա սխալը, թարգմանելով «du côté de l'Assyrie» («Սիրիայի կողմից»): Սակայն Ֆրանսիացի գիտնականը հարկ է համարել միաժամանակ ծա-

ճոթագրելու (նույն տեղում, ծ. 3), որ տեքստը շատ աղճատված է, և իր թարգմանությունը ճշգրիտ չէ: Ֆ. Մակլերը (Macl., էջ 109) վերացրել է Դյուլորիին կասկածը և առանց այլևայլության թարգմանել է. « du côte de la Syrie»: Մա կոպիտ սխալ է:

Ք. Պատկանյանը (Патк., էջ 130, ծանոթ.) իրավացիորեն գրել է. «Տեքստը շատ է աղճատված, արտահայտության իմաստը հասկանալի չէ»: Ստ. Մալխասյանցը ծանոթագրում է. «Ասորեն կամ Ասորյան անվամբ անձանոթ տեղ է: Կախանակտուցը Արծափից հարավ գտնվող բարձունքի անունն է» (Малх., էջ 171, ծ. 177):

Միակ հեռավոր ենթադրությունը, որ մենք կարող ենք անել, այն է, որ «յասորենայ կողմանէ» արտահայտության փոխարին կարող է եղած լինել «ի սարոյն կողմանէ», որը հավանական է դառնում նաև իրեն հաշորդող «որում Կախանակտուցն կոչեն» արտահայտությամբ: «Կախանակտուց» բառը բարդ բառ է և կազմված է «կախան» (=կախված) և «կտուց» բառերից: Արծափի բերդի թիկունքի կողմից բարձրացած սարի զագաթը կարող էր կախված կոտրի սպավորություն թողնել և կոչվել այդպես: Հետևաբար, մեր ենթադրության համաձայն՝ հեղինակը գրել է «էր նոցա ի թիկանց կողմանէ ել ի գլուխ անդր ի սարոյն կողմանէ, որում Կախանակտուցն կոչեն»: Աշխարհաբար թարգմանությունը կլիներ. «նրանց թիկունքի կողմից կար մի ելք, դեպի բերդի գլուխը, այն սարի զագաթի կողմից, որը կոչվում է Կախանակտուց»: Սրան անմիջապես հաշորդում է. «Արդ՝ իշին ընդ այն արբ ի վայր ի բերդէն», այսինքն՝ «արդ նրա վրայով («ընդ այն») մարդիկ իջան բերդից ցած»: Ուրեմն՝ իսկապես բարձր տեղից, սարից են իջել ցած: Մեր այս ենթադրությամբ բնագիրը իմաստ է ստանում, այլապես՝ «յասորենայ կողմանէ» արտահայտությունը մնում է անհասկանալի:

516. «Եւ ետ նոցա Սմբատ Բագրատունի, որդի Վարազ Սահակայ առա խ»: Այստեղ Սմբատ Բագրատունին կոչված է «որդի Վարազ Սահակայ», այն դեպքում, երբ նա հայտնի է որպես «որդի Վարազ-Տիրոցայ»: Արդյոք սա մեկ ուրիշ անձնավորություն է և չպե՞տք է նույնանա Վարազ-Տիրոցի որդու հետ. չգիտենք: Դյուլորիեն («Recherches sur la Chronologie arm.»., էջ 358, ծ. 5) ծանոթագրում է. «Վարազ Սահակ. ավելի սովորաբար՝ Վարազ-Տիրոց. Բագրատունյաց իշխան»: Ալիշանը («Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 496) գրում է. «Առ Սեբիոսի աստ Սմբատ որդի կոչի Վիրազ-Սահակայ, եթէ ոչ շփոթութեամբ գրեալ իցէ փոխանակ Վարազ-Տիրոցի»: Հմմտ. նաև Մ. Վ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 840, ծ. 6:

Թերևս կարելի է չկասկածել, որ Վարազ-Սահակը նույն Վարազ-Տիրոցն է, որովհետև նախորդ պարբերության մեջ խոսվում է հենց Վարազ-Տիրոցի «ի Դարիւնս» թաղելու մասին և այն մասին, որ նրա՝ որդի Սմբատ Բագրատունին նշանակվում է զորքերի հրամանատար՝ գրունդար: Արդ, եթե Արծափի պաշտպանները զնացել են հենց «ի Դարիւնս» և այնտեղ հանգրվանել են Սմբատ Բագրատունուն՝ կնշանակի դա միևնույն Սմբատն է, Վարազ-Տիրոցի որդին: Մենք «Վարազ-Սահակ»-ը կարգադրեինք «Վարազ-Տիրոց», եթե վստահ լինեինք, որ Վարազ-Տիրոցը չի կոչվել նաև Վարազ-Սահակ:

517. «Եւ գնացեալ ի գիշերի ելին ի բերդն»: Ֆ. Մակլերը (Macl., էջ 109) թարգմանել է «ելին ի բերդէն» (այսինքն՝ ոչ թե «ելան՝ բարձրացան մտան, բերդ», այլ «բերդից դուրս ելան») իմաստով: Այս ոչ ճիշտ ընթերցմանը վերաբերող ծանոթագրության մեջ (էջ 109, ծ. 2) նա հայտնում է իր կարծիքն այն մասին, որ սկզբնապես իբր եղել է «ելին ի բերդէն», իսկ հետագայում գրիչները երկու տող ներքև գտնվող «ելին ի բերդն» արտահայտության ազդեցությամբ դարձրել են «ելին ի բերդն»: Մակլերի այս վերծանությունը անուշադրության արդյունք է: Իրականում պատմիչը հայտնում է, որ հայերը Սմբատ Բագրատունուց 40 զինվոր օգնություն ստացած՝ գիշերը մտնում են Արծափի բերդը, որպեսզի ներսից դիմադրեն բերդը պաշարած թշնամուն («եւ գնացեալ ի գիշերի ելին ի բերդն»): Ուրեմն՝ հայ զինվորները մտել են բերդ և ոչ թե դուրս են եկել բերդից: Ք. Պատկանյանը (Патк., էջ 130), Հ. Հյուբշմանը (Hübisch., էջ 24) և Ստ. Մալխասյանցը (Малх., էջ 99) բնագիրը ճիշտ են թարգմանել:

518. «Ոչ զգուլացան տեղոյն»: Խոսքը վերաբերում է նախորդ ծանոթության մեջ հիշատակված 40 զինվորներին, որոնք գիշերը մտել են բերդ, բայց «ոչ զգուլացան տեղոյն», այսինքն՝ բերդ մտնելիս այնպես զգույշ չեն մտնում, որ արաբները չնկատեն զաղտնի մուտքը: Նրանց անզգուշության պատճառով «գիտացին Իսմայելացիքն զտեղին, և գնացեալ ի նոյն հետին» (նույն հետքերով գնալով—Ք. Ա.) ելին ի բերդն, և կալան գտեղին մինչև ցառաւատն: Եւ արս ժ պահապանս տեղոյն ըմբռնեցին ի քուն և սպանին»: Գաղտնի մուտքի պահապանները ան-

փուլի քնած են լինում, արարները մինչև առավոտ հետևում են նրանց և մեկ-մեկ սպանում, որից հետո ներխուժում են ամրոց և ընդհանուր սպանդ կազմակերպում:

Ք. Պատկանյանը (Патк., էջ 130), Ղ. Հյուբշմանը (Hübisch., էջ 24), Ֆ. Մակկերը (Macl., էջ 109) համեմատաբար ավելի ճիշտ են թարգմանել «ոչ զգուշացան տեղույն» արտահայտությունը, քան Ստ. Մալխասյանցը (Малх., էջ 99): Փակագծերում նշված էլում կարդում ենք. «НО МЕСТО ВЫХОДА ОСТАВИЛИ БЕЗ ПРИСМОТРА». Սա ճիշտ թարգմանություն չէ: Նախ գրաբար բնագրում խոսվում է ոչ թե ելքի («место выхода»), այլ մուտքի մասին և երկրորդ պատմիչը մուտքը առանց հսկողության թողնելու («оставили без присмотра») մասին ուշիշ չի ասել, այլ գրել է «ոչ զգուշացան տեղույն» («տեղի կապակցությամբ շղջուցացան»):

519. «Եւ արս ժ (=10) պահապան տեղույն ըմբռնեցին ի քուն և սպանին»: Հասկանալի է, որ Արծափի ամրոցի բոլոր 10 պահապաններն էլ միևնույն տեղում չէին գտնվում և միասին միանգամից քնած չէին: Բերդի գաղտնի մուտքը բնականաբար պետք է ունենար աստիճանական պաշտպանության գոտի, այսինքն՝ պահապանները պետք է հսկելիս լինեին նախ մուտքի մատուցները, ապա աստիճանաբար խորանային դեպի բերդի ներսը: Ահա, արաբները սկզբում անձայն սպանել են մատուցները հսկող պահակներին և ապա աստիճանաբար մյուսներին: Այդ իսկ պատճառով էլ նրանք մուտքը գրավել են գիշերվանից մինչև առավոտը՝ նկատ երկար ժամանակամիջոցում. «կալան զտեղին մինչև ցառաւտոտն»:

Մեր ընդգծած «կալան զտեղին» արտահայտությունը վերաբերում է ոչ թե ամբողջ բերդին, այլ միայն նրա մուտքին: Այդ մասին են վկայում «ոչ զգուշացան տեղույն» և «գիտացին իսմայելացիքն զտեղին» արտահայտությունները: Իսկ ամբողջ բերդը գրավվել է առավոտյան. «ընդ առաւտաւ՝ ճշացին իսմայելացիքն ի բերդին ի վերջոյ և յառաջոյ և հարին զնոսա սրով սուսերի»: Հյուբշմանը (Hübisch., էջ 24—25) ճիշտ չվերծանելով բնագիրը՝ թարգմանել է այսպես. „Die Ismaeliten... erstiegen... die Burg, die sie bis zum morgen eroberten“, այսինքն՝ «Իսմայելացիները բարձրանում են բերդ, որը նրանք գրավում են մինչև առավոտ»: Ինչպես տեսնում ենք, գերմանացի գիտնականը «կալան զտեղին» արտահայտությունը հասկացրել է ոչ թե բերդի մուտքի, այլ ամբողջ բերդի գրավման իմաստով:

Ի դեպ, գրչական աղճատման մի հետաքրքիր օրինակ է տալիս «Սեբեոսի Պատմության» մեկ հասած հնագույն պատարկը (№ 1343, XVI դար): Այստեղ 10 պահապաններին վերաբերող «արս ժ» (= «10 բարդ») արտահայտության փոխարեն սխալմամբ ընդօրինակված է «շարժին»:

520. «Եւ եղև յամին երկրորդի Կոստանդնի, յամսեանն հողի, որ ար ԷԳ էր ամսոյն»: Հեղինակն Արծափի բերդի գրավումը նշում է հրաի ամսվա 23-ին: Հողին հայոց օրացույցի երկրորդ ամիսն էր: Ըստ շարժական տոմարի (տե՛ս Малх., էջ 165, ծ. 132) VII դարի 40-ական թվականներին այդ ամիսը համընկնում էր հուլիս-օգոստոս ամիսներին: Զամինյանը (Զամ., էջ 190) և Ղ. Մանանդյանը («Քննական տեսություն հայ ժող. պատմ.», հ. Բ, Բ մասի նյութեր, էջ 197—201) առաջարկում են «յամին երկրորդի Կոստանդնի» բառերը սրբագրել «յամին ուրբերդի (կամ՝ ինեբրդի) Կոստանդնի»:

521. «Եւ եղև ի վաղի առաւտաւուն եկն եհաս ի վերայ նոցա զաւրավաւն Հայոց Թէոդորոս զաւրու իւրով և յարձակեցաւ ի վերայ նոցա և եհար անհուն կառաւածով»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրները «զաւրավարն Հայոց» և «և հար զնոսա» արտահայտությունների միջև ունեն պակաս, որը մենք լրացրել ենք, քաղելով մեր Մատենադարանի № 1343 ձեռագրական պատարկից: Լրացված մասի («Թէոդորոս զաւրու իւրով և յարձակեցաւ ի վերայ նոցա») միջոցով հայտնի է դառնում Արծափում արաբների վրա հարձակված և հաղթանակած զորավարի՝ Թեոդորոս Ռշտունու անունը:

522. «Բայց սակաւ նողապեալ հետեակի երթեալ ամրացան ի Շամբին»: Վերջին բառը «Սեբեոսի Պատմության» բոլոր հրատարակիչները և թարգմանիչները իրավամբ տպագրել են մեծատառով, որպես հատուկ անուն: Միակ բացառությունը Ստ. Մալխասյանցն է, որը հայերեն տեքստի մեջ բառը տպագրել է փոքրատառով: Իսկ ռուսերեն թարգմանելիս տվել է «շամբ» բառի թարգմանությունը այս ձևով՝ „Тростник“ (Малх., էջ 100):

Բայց որ պատմիչը Շամբ անունը գործածել է հատուկ անվան իմաստով՝ դա նկատել է դեռևս 1859 թ. Ե. Դյուլորիենն („Recherches sur la chronologie arm., էջ 358, ծ. 6), որը տեղանունը նույնացրել է Նախճատյանի մոտ, Արաբսի ափին դտնվող իրամի հետ: Ք. Պատկանյանը (Патк., էջ 212, ծ. 211) նույնպես բառը դիտել է որպես հատուկ անուն և ծանոթագրել. «Շամբը առհասարակ նշանակում է եղեգնուտ, եղեգներով ծածկված տեղ: Որպես հատուկ անուն դա պետք է նշանակի Նախիջևանից ոչ հեռու, Արաբսի ափին գտնվող մի քաղաք»:

2. Հյուբշմանը (Hübsch., էջ 25) վկայակոչում է նախորդ գլուխներում հանդիպող «և նստան ի Շամբին, որ կոչի Ճահուկ» արտահայտությունը և գրում. «Ճահուկն ընկած էր Դվինի և նախճավանի միջև»:

Այսպիսով, և Դյուլյորիեն, և Պատկանյանը, և Հյուբշմանը Շամբը տեղադրել են նախճավանի մոտակայքում: Սակայն «Սեբեոսի Պատմության» հեղինակի պատմածից երևում է, որ դա Արծափին մոտ գտնված մի վայր է հղել, ուր ամրացել են այն սակավաթիվ արաբ զինվորները, որոնց հաջողվել է պրծնել Արծափի կոտորածից (բայց սակաւ ճողպարեալը հետևակը երթեալ ամրացան ի Շամբին): Նախճավանը Արծափից այնքան հեռու էր, որ փախուստականների այնտեղ ամրանալը իմաստ չէր ունենա: Բացի այդ, նույն հեղինակը հայտնում է, որ նրաժ բերդում (որի ճշգրիտ տեղը, ի դեպ, հայտնի չէ) գտնվում էին ոչ թե փախուստականները, այլ՝ հայերը, որոնց նվաճեցին Այրարատյան (և ոչ՝ Արծափյան) զորքերը. «Առին զբերդն նրամայ, և սատակէին զնոսա (հայերին—Գ. Ա.) սրով, և զկանայս և զմանկունս զերի վարեցին»:

Հեղինակն ամենայն հավանականությամբ նկատի է ունեցել Արծափից ոչ շատ հեռու, զեպի հյուսիս գտնվող այն Շամբը, որը հայտնի է «Շամբ կողովտի» անվամբ: Տե՛ս Ս. Տ. Խրեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963. Քարտեզի շրջանակ Գ. 6: Նըշված վայրը այժմ կոչվում է Շելխի-գյուլ և գտնվում է հին Բայազետից հյուսիս: (Ս. Տ. Խրեմյան, նույն աշխատութ., էջ 73): Ճիշտ է, այս վայրը ռազմական տեսակետից հարմար վայր չէ մարտերի մղելու համար, բայց, ինչպես երևում է, փախստական արաբները զերազասել են պահվել զովարանցանի ճահուկներում, քան թե մարտնչել հայերի հետ:

523. «Մեռան Բ ի իխանէն Խամայելի, Արման և Ոգբայ»: Բոլոր ձեռագրերն ու սպաղիրները վրիպակաբար ունեն «Ոգբայ»: Մենք ուղղել ենք «Ոգբայ»: Այս ուղիղ ձևը պահպանել է Ղևոնդը:

Վրիպակն առաջինը նշել է Դյուլյորիեն («Recherches sur la chronologie arm.», էջ 358, ծ. 7), որը վկայակոչել է Ղևոնդին: Ք. Պատկանյանը (Սարգսյանի թարգմանության տեքստի մեջ սրբագրել է «Ոգբայ», իսկ «Ոգմայ» վրիպակն իջեցրել է սողատակ: 2. Հյուբշմանը (Hübsch., էջ 25) նույնպես վկայակոչել է Ղևոնդին և Ինճիճյանի Հնախոսութիւնը, հ. 2, էջ 424, որից հետո հայտնում է, որ անվան ճշգրիտ գրությունը արաբերեն կլիներ Օկբա:

524. «Հրամայեաց կազմել նաատորմիլո բազումս»: Բոլոր ձեռագրերն ու սպաղիրներն ունեն «բազումս»: Ուղղել ենք «բազումս» ըստ № 1343 պատմագրի:

525. «Կալալ գարժ պատերազմի ընդ Կոստանդնուպոլսի»: Պ. Պետերսը (Πασαγιάδης —Περσογένης:—«Byzantion», t. VIII, . 2, Bruxelles 1933, էջ 410) առաջարկում է «ընդ Կոստանդնուպոլսի»-ը ուղղել «ընդ Կոստանտինա», նկատի ունենալով, որ արաբական նավատորմի Վիպրոսի Կոստանտինա քաղաքից այս կողմ՝ Կոստանդնուպոլսի շանցավ: Պետերսի ենթադրությունը հիմնավորվում է Միխայել Ասորու հետևյալ վկայությամբ. «Եւ ի սոյն ժամանակս հրամանաւ Մաւեայ եկին հազար և եւթն հարիւր նաւ յնգիպտոսէ և առեալ զնոսա Մաւի՝ զնաց ի Կիպրոս կղզի և խնդրեաց ի նոցանէ հարկս. և ամրացան ի քաղաքս և ոչ կամեցան տալ: Եւ յարձակեցաւ ի վերայ նոցա սուրն Հազարու և կոտորեաց բազմութիւն յով: Եւ շոգաւ ի քաղաքն Կոստանդիա որ զուրս էր կղզոյն (Կիպրոսի—Գ. Ա.) և լցեալ կայր մարդով և զանձիւք և նստեալ շուրջ զնովաւ էառ զնա և կոտորեաց և իւրց զնա արեամբ» («Ժամանակագրութիւն տեանս Միխայելի Ասորոյ պատրիարքի», Յերուսաղէմ, 1871, էջ 313):

Մեզ թվում է, «Սեբեոսի Պատմության» հեղինակը մեր ընդգծած «էաղաքն Կոստանդիա» արտահայտությունը հանդիպելով մի հունական աղբյուրում՝ անուշադրաբար ընկալել է որպես «Կոստանդինի քաղաք» (Կոստանդնուպոլսի): Այլապես իրական Կոստանդնուպոլսի՝ արաբների կողմից սովյալ ժամանակ պաշարվելու մասին որևէ մատենագրական տեղեկություն մեզ ծանոթ չէ:

Բյուզանդական պատմիչ Թեոփանեսը նույնպես, Միխայել Ասորու նման, նշում է «հազար և եւթն հարիւր» նավերի կռիվը Կիպրոսի (և ոչ Կոստանդնուպոլսի) շուրջ (հմտ. Hübsch., էջ 26, ծ. 2) և այդ կապակցությամբ հիշատակում է այն միևնույն Պրոկոպիոսին («Պրոկոպ»), որը զնաց Դամասկոս՝ արաբների առաջնորդ Մոավիայի հետ հաշտություն կնքելու և որը հիշատակված է նաև «Սեբեոսի Պատմության» մեր քննած հատվածում: Կիպրոսի և Պրոկոպիոսի կապակցությամբ «Սեբեոսի Պատմության» հեղինակի, Թեոփանեսի և Միխայել Ասորու ընդհանրությունները ցույց են տալիս, որ նրանք օգտվել են միևնույն աղբյուրից, ուստի չքանց բոլորի խոսքն էլ Կիպրոսի մասին է:

Միխայել Ասորի և «Սեբեոսի Պատմության» հեղինակը նման են նաև Մոավիայի պա-

հանչած հարկերի մասին հայտնելիս: Միխայիլ Ասորին գրում է. «Գնա ի Կիպրոս կղզի և խնդրեաց ի նոցանէ հարկս», իսկ մեր պատմիչը հայտնում է այս պահանջի արդյունքը. «արքայն Կոստանդին լաւ համարեցաւ տալ սակ և առնել հաշտութիւն»:

Իերլած փաստերի հիման վրա կարելի էր «Սեբեոսի Պատմության» Կոստանդնուպոլսիս-ը սրբազրել «քաղաքն Կոստանդիա»: Սակայն, քանի որ, ինչպես ասացինք, պատմիչը կարող էր հունական աղբյուրում գտնված «քաղաքն Կոստանդիա» արտահայտությունը աճուլաղբաբար ընկալած լիներ որպես «Կոստանդին քաղաք», բնագիրը թողնում ենք նույնությամբ:

526. «Նւ մնալ ժամանակի իւրում զի քերես և Աստուծոյ հաշտութեամբ հայնեցի յերկիր և ողորմեցի նոցա: Նւ սկսաւ խաւել ի հաշտութիւն պատգամաւորաւ»: Այս ամբողջ հատվածը բացակայում է «Սեբեոսի պատմության» բոլոր ձեռագրերում և տպագիր հրատարակություններում: Մենք վերականգնել ենք քաղելով № 1343 ձեռագիր պատահիկից:

527. «Նւ յայտնեաց զչափ սակիւն և ասաց զամմանն»: № 1343 պատահիկն այս նախադասությունն ունի հետևյալ վերադասավորությամբ. «Նւ յայտնեաց զսահման և ասաց զչափն սակի»: Սակայն մենք նախընտրում ենք մյուս ձեռագրերում և նախորդ հրատարակություններում պահպանված ձևը, որն ավելի ճիշտ է, քան պատահիկի մատուցածը (չնայած՝ սա մեզ հասած հնագույն ձևն է):

528. «Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթուղիկսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մեծաւ առ սուրբ Եկեղեցեացն, որ ի Վաղարշապատ քաղաքիւն»: «Սեբեոսի Պատմության» նախնական բնագրում այս բառերով սկսվող հատվածը մինչև պարբերության վերջը կազմած է եղել առանձին գլուխ, կամ էլ ընդօրինակողների կողմից դիտվել է որպես առանձին մաս: Դա երևում է նրանից, որ մեզ հասած հնագույն պատահիկում (№ 1343) հատվածն սկսող «Յայնմ» բառի առաջին «Յ» տառը չի գրված և նրա համար բաց է թողնված առանձին տեղ, որպեսզի հետագայում ձեռագիրը ծաղկողը կամ ինքը՝ գրիչը, կարմիր թանաքով գրի այդ գլխատառը: Առաջաբանում մենք արդեն ցույց ենք տվել, որ կարմիր թանաքով գլխատառերը «Սեբեոսի Պատմության» ձեռագրերում ունեն իսկապես գլխատառի (այսինքն՝ նոր գլուխ սկսող տառի) նշանակություն:

Նախորդ գլխի նախավերջին պարբերությունն սկսող «Նւ» բառը («Նւ յետ այսորիկ արձակեաց զԹէոդորոս Ռշտունեաց տէրն ի Հայս մեծաւ պատուով») նույնպես գրված է կարմիր թանաքով և դիմացը լուսանցքում գրված է գլխանշան, որը նույնպես խոսում է նախազաղափար օրինակում եղած առանձին գլխի մասին: Հետագայի կ ձեռագրերում գլուխների բաժանումը կորցրել է իր հետքերը, որի հետևանքով շնչվել են լուսանցքներում գտնված գլխահամարները: Սրանցից մոտ հետքեր տասնյակ գտնում ենք № 2639 ձեռագրի լուսանցքներում, իսկ մյուսներն անհետ վերացել են:

Ի դեպ, № 2639 ձեռագրում կարմիր գլխատառով գրված տառերը իսկ և իսկ համընկնում են № 1343 պատահիկի միևնույն տառերին:

529. «Շինեաց անդ և Եկեղեցի մի յանուն Երկնատ Զուարթնոցն»: Հայ ճարտարապետության այս հրաշալիքի կառուցման մասին առաջին հայտնողը մեր պատմիչն է, Զվարթնոցի շինության ժամանակակիցն ու ակնանատեը: «Սեբեոսի Պատմությունից» մեր քաղած հատվածից է, որ իմանում ենք, թե ինչու է եկեղեցին կոչվում Զվարթնոց. «Շինեաց անդ և Եկեղեցի մի յանուն Երկնատ Զուարթնոցն, որոց երևալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի»: Ուրեմն Եկեղեցին կառուցվել է հանուն Գրիգոր Լուսավորչի տեսիլի մեջ երևացած երկնային հսկող վճարթունների (հրեշտակների) «Գրիգոր» անունն ինքնին նշանակում է «զվարթուն», «արթուն», «հսկող» (չրդչօթէ — արթուն մնալ, հսկել բառից): Հմմտ. Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, էջ 164:

«Սեբեոսի Պատմության» հեղինակը, որ առհասարակ չափավոր է իր արտահայտությունների մեջ, Զվարթնոցի մասին խոսելիս չի կարողանում զսպել իր հիացմունքը և նշում է շինության աստվածային պատվին արժանի շքանդ զարմանալիությունները. «Բարձր շինուածովք և շքանդ զարմանալեալք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն»: Այս ոգեշունչ խոսքերը ցույց են տալիս, որ ճիշտ չէ հետագայում ստեղծված այն կարծիքը, թե Ներսեսը իբր քաղկեդոնական լինելով, դիտամբ էջմիածնի մոտակայքում կառուցում է սքանչելի Զվարթնոցը, «որը կնսմացններ էջմիածնին իր հրաշակերտությամբ և ժողովրդին կզբավեր իր կողմը, որպես ժխշ էջմիածնի» (Մալխ., էջ 172—173): «Սեբեոսի Պատմության» հեղինակն ինքը որպես դրական երևույթ է դիտում այն, որ Զվարթնոցը շինվել է «մերձ առ սուրբ Եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին, որում, ասեն, ընդ առաջ եղև թագատրն Տրդատ սրբոյն Գրիգորի»: Ինչպես տեսնում ենք, տեղի ընտրությունը

նույնպէս կապվում է Գրիգոր Լուսավորչի անվան և Վաղարշապատի «սուրբ եկեղեցիների» հետ:

Զվարթնոցի մասին վկայող սկզբնաղբյուրների և նրան նվիրված գիտական գրականության ցանկը տե՛ս Ս. Խ. Մնացականյանի հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակած (Երևան, Մոսկվա, 1971) «Զվարթնոց» մենագրության վերջում, ծանոթագրությունների մեջ:

530. «Եւ շուրջանակի պատուարեաց զբնակութեամբն»: Զամինյանը (Զամ., էջ 193) «գրեականութեամբն» բառից հետո ավելացնում է «մարդկան» բառը, կարծելով, թէ խոսքը մարդկանց բնակեցնելու կամ բնակության մասին է: Այնինչ պատմիչը միևնույն պարբերության մեջ, մի քանի տող վերև հայտնում է, որ ինքը նկատի ունի ներսես կաթողիկոսի կառուցած շինքերը Զվարթնոցի շուրջը: «Արկ ի միտս իւր կաթողիկոսն Հայոց Ներսէս շինել իր բնակութիւն»: Ահա այս բնակելի շինքերի շուրջ բոլորը նա պատեց («շուրջանակի պատուարեաց գրեականութեամբն») շինեցիկ ճարտարապետությամբ շինված բարձր պարիսպով («գեղեցկադիր յորինուածքով բարձր պարսպաւ»): Այսպես են վերծանել բնագիրը «Սերբոսի Պատմության» բոլոր թարգմանիչները (Патк., էջ 132, Hübsch., էջ 27, Macl., էջ 111, Малх., էջ 101):

531. «Զգաւոս Յունաց որ ի Հայաստան աշխարհին»: Սրա փոխարին բոլոր ձևագրերը (բացի № 2867 ձևագրից) և Միհրդատյանն ու Պատկանյանն ունեն «զգաւոսն որ ի Յունաց աշխարհին»: Այսպես է թարգմանել նաև Մակիբերը (Macl., էջ 112): № 2867 (=Գ) ձևագրին ունի «կալու զօրսն աշխարհին, որ ի Յունաց աշխարհէն»: Երկու ձևերն էլ վրիպակ են: Զամինյանը (Զամ., էջ 193) ուղղել է այսպես. «զգաւոսն որ ի Յունաց աշխարհէն»: Այսպես է վերծանել բնագիրը, թարգմանությունները նաև Ք. Պատկանյանը (Патк., էջ 132):

Հ. Հյուբշանը փոքր-ինչ այլ կերպ է հասկացել. „griechischen Truppen, die im Lande standen“ («հունական զորքերի, որոնք երկրում էին գտնվում»):

Մալխասյանցը, հետևելով Ասողիկին, բնագիրը սրբագրել է այսպես. «զգաւոս Յունաց որ ի Հայաստան աշխարհին» (Մալխ., էջ 121) և թարգմանել է՝ «греческое войско, пребывавшее в Армении»: Մենք ընդունել ենք այս ճիշտ վերծանությունը, որը հենված է իրական մատենագրական նյութի վրա (չնայած՝ ճիշտ լինելու հատկություններից զուրկ չեն նաև Ք. Պատկանյանի ռուս. թարգմանությունը և Զամինյանի վերծանությունը):

532. «Քանգի ոչ երբէք ընդունէին Հայք զՀռոմսն ի հաղորդութիւն»: Բոլոր ձևագրերն ունեն «զՀռոմվմի», Միհրդատյանը և Պատկանյանը՝ «զՀռոմի»: Մալխասյանցը, հենվելով Ասողիկի վրա, սրբագրել է «զՀռոմսն ի»: Այս ճիշտ սրբագրությունը ժամանակին կատարել է նաև Զամինյանը (Զամ., էջ 193):

Աղճատված բնագրից կատարված թարգմանությունները (Патк., էջ 132, Hübsch., էջ 27, Macl., էջ 121), բնականաբար, ընդունելի չեն: Ծճգրիտ է՝ Մալխասյանցի թարգմանությունը (Малх., էջ 101):

533. «Քանգի անարգանս համարին Քրիստոսի Աստուծոյ զծոզովն Քաղկեդոնի և գտուաբն իւրեի»: Յ. Մակիբերը (Macl., էջ 112, ծ. 1) «գտուաբն կոնի» («le tumar de Leon») արտահայտության վրա դրել է ծանոթագրության նշան և տողատակին ծանոթագրել է. «կոնի թղթի մասին հմտտ. Hübsch., էջ 29: Սակայն սա սխալ տեղեկություն է: Հյուբշանը Մակիբերի նշած էջում կոնի տուճարի մասին ոչինչ չի ստում: Նրա ծանոթագրությունը (էջ 27, ծ. 4) վերաբերում է հայոց Տալատին, այսպես. «Հայոց հավատի մասին այժմ համեմատիր Histoire, dogmes, traditions et liturgie l'eglise arménienne orientale, Paris, 1855 (նկատի ունի հավանաբար Դյուլորիեի նույնանուն աշխատությունը, որի հեղինակի անունը Հյուբշանը չի նշել—Ք. Ա.), որի մեջ ռուսահայերը փորձում են ակնհերև դարձնել, որ հունական եկեղեցուց հայոց բաժանման պատճառը սոսկ մի թյուրիմացություն է եղել»:

534. «Եւ էր անդ այր մի ի Բագրեանդ գաւառէ, ի Բագաւան գեղջէ»: Բոլոր ձևագրերը, Միհրդատյանը և Պատկանյանն ունեն «այր մի ի Բագրաւան գեղջէ»: Մալխասյանցը հենվելով Ասողիկի վրա սրբագրել է. «այր մի ի Բագրեանդ գաւառէ, ի Բագաւան գեղջէ»: Միևնույն սրբագրությունը կատարել է նաև Զամինյանը (Զամ., էջ 193): Բագաւան, Բագարան տեղանունների ստուգաբանության մասին տե՛ս Hübsch., էջ 27, ծ. 5:

535. «Պատուէն պատասխանի բրթոյն եկելոյ ի Հայս ի Հռոմաց բագաւառէն Կոտանդիեայ, գոր գեցին Հայոց եպիսկոպոսուեմէն եւ կաթողիկոսն Ներսէս հանդերձ նախարարաւմէն եւ գաւազաւարան Թէոդորոսի Ռշտունեաց տեառն»: Հ. Գաթրճյանը («Եվրոպա», Վիեննա, 1852, № 21) «Սերբոսի Պատմության» անգրանիկ հրատարակության կապակցությամբ գրած իր գրախոսականում նկատել է այս թղթում գտնվող զանազան անհամաձայնություններ, «որոնք Սերբոսին սա մասին վրայ մեծամեծ տարակույսներ կյարուցանեն»: Իսկ Ստ. Մալխասյանցը

(Մալխ., էջ 191—192) գտնում է, որ թուղթը «Սեբեոսի Պատմության» մեջ զետեղված է սևագիր վիճակում: Նա գրում է. «Դավանության ընդարձակ թուղթը, որ գրել է Հայոց եպիսկոպոսների և նախարարների ժողովը, Ներսես Շինող կաթողիկոսի նախագահությամբ, Կոստանդ կայսրին, ոչ միայն սաստիկ աղավաղված է բառերի կողմից, որոնցից մի մասը ուղղեցինք Ասողիկի Պատմության լավագույն ընթերցվածներով, այլև արժի է ընկնում ամբողջ հատվածների կրկնությամբ, ետ և առաջ դասավորությամբ, փաստերի անճշտությամբ: Նիկիո ժողովի դավանությունը բերելուց հետո կրկին անգամ գրում են Նիկիո ժողովի մասին, երրորդ անգամ նույն ժողովի մասին մեջ բերելով նիկիական հանգանակը, որից հետո անցնում են Դիոկղետինոսին (սխալ սարբեթիվ նշանակելով), նրա հաջորդներին և Կոստանդիանոսին, և նորից Նիկիո ժողովի մասին: Նիկիական հանգանակը բերելուց հետո գրում են. «և ապա կոչեցան ի Հռոմ և յանդաման եղևն Կոստանդիանոսի արքայի և ուսուցին նմա զհասարս ճշմարիտս»: Ովքե՞ր են զնացել Հռոմ Կոստանդիանոսին ճշմարիտ հվատը սովորեցնելու, հայտնի չէ: Եթե Նիկիո ժողովի անդամներից մի քանիսը, սա խոշոր պատմական սխալ է. որովհետև Կոստանդիանոսը ինքը անձամբ գտնվում էր Նիկիո ժողովում և հսկում էր նրա բարեկարգության վրա: Այսպիսի անտեղեկությունները թելադրում են ենթադրել, թե Սեբեոսի մեջ բերած Դավանության թուղթը վավերական գրվածք չէ: Մի ազգի բարձր հոգևոր և մարմնավոր ներկայացուցիչների կողմից կայսրին ուղարկվելիք գրությունը չէր կարող այսքան անփութ, կարելի է ասել անգրագետ խմբագրված լինել: Ավելի հավանական է կարծել, թե այս թուղթը (որ համենայն դեպս կեղծիք չէ) եղել է մի նախագիծ՝ սևագիր, որի համաձայն պետք է խմբագրվեր իսկական վավերական օրինակը կայսրին ուղարկելու համար. բայց այս բանը տեղի չունեցավ. կայսրը Հայոց կողմից դավանության թուղթ չստացավ... Սեբեոս եպիսկոպոսը, որ ներկա է եղել Դվնա ժողովին, որտեղ խմբագրվել է այս թուղթը, հարկ է համարել նրան զետեղել յուր Պատմության մեջ այս անկատար ու պակասավոր ձևով: Մեր այս կարծիքը հաստատություն է գտնում նաև նրանով, որ Դավանության թուղթը չի կրում սովորական վերնագիրը, որտեղ նշվում են թուղթը գրողների անունները և այն անձի անունը, որին ուղղված է թուղթը: Պաշտոնական գրությունների մեջ միշտ պահպանվում էր այս կարգը: Մի ուրիշ կարևոր ապացույց այս թղթի անվավերականության պետք է համարել այն, որ այս թուղթը, որ այնպիսի բացարձակ պաշտպանություն է Հայոց եկեղեցու դավանության և դատապարտություն քաղկեդոնականության՝ տեղ չէ գտել Գիրք թղթոց պաշտոնական ժողովածուի մեջ»:

Դավանության թղթի կրկնությունները նկատելով հանդերձ, ինչպես տեսնում ենք, Մալխայանցը չի կասկածել թղթի «Սեբեոսի Պատմությանը» պատկանելու վրա և անկասկածություններ բացատրել է, ենթադրելով, թե թուղթը վավերական գրվածք չէ, սևագրություն է: Սակայն դժվար է պատկերացնել, թե հեղինակն իր Պատմության մեջ կզետեղեր մի սևագիր գրություն, որը երբեք կայսրին չի ուղարկվել (հետևաբար և զուրկ էր գործնական նշանակությունից): «Գիրք թղթոցում» այս գրության բացակայության փաստը նույնպես չի կարող անտարկելի կովան հանդիսանալ թղթի սևագիր վիճակը հաստատելու համար: «Գիրք թղթոցում» բացակայում են նաև ուրիշ թղթեր, որոնք մեզ հայտնի են կողմնակի աղբյուրներից:

Որ թուղթը կայսրին իսկապես չի ուղարկվել, դա երևում է պատմիչի հետևյալ վկայությունից. «Յառաջ քան զայս շորս ամաթ՝ ժողով արար դա (Ներսես կաթողիկոսը.— Գ. Ա.) և զամենայն եպիսկոպոսունս այսր ժողովեաց և վասն հաւատոյ զիր ետ առնել... եւ զիրն այժմ առ դաս է: Եթե «գիրն այժմ առ դամ է», այսինքն՝ կաթողիկոսի մոտ է, կնշանակի դեռևս կայսրին չի ուղարկվել: Բայց կայսրը տեղեկացել է այդ թղթի մասին, որը նկատի ունենալով էլ հեղինակը թուղթը զետեղել է իր Պատմության մեջ:

Թղթում տեղ գտած անհամաձայնությունները պետք է բացատրել, հավանաբար, նրա մեջ հետագա ժամանակներում սխալմամբ ընդօրինակված զանազան նյութերով, որոնք թղթի հետ կապ չունեն: Դա առանձնապես ցայտուն է երևում Նիկիայի ժողովին հաջորդող հատվածից:

Հայտնի է, որ Նիկիայի ժողովի բանաձևը («Հանգանակ Նիկիական ժողովույ») մի դավանաբանական տեսություն է և «Սեբեոսի Պատմության» հեղինակը շարադրել է այդ տեսությունը: Բանաձևի վերջին բառերն են՝ «Իսկ մեք փառաւորեալք՝ որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պազանելով սրբոյ երրորդութեանն և միասնական աստուածութեանն հար և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեանից, ամէն»: Սրանց անմիջապես հետո բնագրում հաջորդում է բոլորովին անսպասելի մի արտահայտություն՝ «Նւ ապա կոչեցան ի Հռոմ և այլն, Ովքե՞ր «կոչեցան ի Հռոմ» նախորդ բնագիրը, սացիինք, որ մի դավանաբանական տեսություն է և ոչ թե որևէ զեպքի նկարագրություն, որպեսզի հիշատակվեին զեպքին մասնակից մարդկանց անունները:



Այնուհետև՝ Հոովմի հիշատակությանը հաջորդում է «Յամի երեքտասաներորդի կենարարին և փրկչին մերոյ» (և այլն) արտահայտությունը, որը չէր կարող գտնվել ոչ միայն Դավանության թղթում, այլև VII դարում գրված «Սեբեոսի Պատմության» որևէ այլ մասում, որովհետև այս Պատմության մեջ դեպքերի տարեթվերը նշված են ոչ թե փրկչական թվագրությամբ, այլ հույն և պարսիկ թագավորների ժամանակին հարմարեցնելով:

Մեկ այլ փաստ: Հայտնի է, որ «Սեբեոսի Պատմության» սկզբում թյուրիմացաբար զետեղված համաժամանակյա աղյուսակների հեղինակը (Անանունը) իր աղյուսակները կազմելիս օգտվել է նաև «Սեբեոսի Պատմությունից»: Եթե այս պատմության սկզբնական բնագրում նա գտած լիներ «Յամի երեքտասաներորդի կենարարին և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի թագաւորէ Դիոկղետիանոս երեք ընկերաւոյն թագաւորութեանն Հոովմեացոց» տեղեկությունը, այդ դեպքում համաժամանակյա աղյուսակի տվյալները կարձագանքեին այս տեղեկությանը: Այնինչ այնտեղ (ՍԵՊ, էջ 15) Դիոկղետիանոսի թագավորության տրիթն նշված է ոչ թե «յամի երեքտասաներորդի Յիսուսի Քրիստոսի», այլ Հայոց Խոսրով արքայի 48-րդ և Պարսից Արտաշիրի 18-րդ տարին: Համաժամանակյա աղյուսակում խոսք չկա նաև այն մասին, թե Դիոկղետիանոսը թագավորել է «երեք ընկերաւոյն»: Կնշանակի մեր նշած նյութերը Դավանության թղթի մեջ թափանցել են հետագա ժամանակներում, XI դարից հետո, երբ Անանունն իր հաճաժամանակյա աղյուսակներն արգեն կազմել էր:

Ե. Տեր-Մինասյանը նույնպես նշել է մի քանի կետեր, որոնց առկայությունը Դավանության թղթի մեջ կասկած է հարուցում այդ թղթի տվյալ կետերի վավերականության հանդեպ: Կետերը թվարկելուց հետո, Ե. Տեր-Մինասյանը եզրակացնում է. «Այս բոլորը, ըստ էս, պարզ ցույց են տալիս, որ Ներսես Ծինողի՝ հոռոմոց Կոստանդին թագավորին գրած նամակի մեջ պահված այդ տեղեկությունները Պարսից ժողովի մասին չափազանց այլափոխված են և նոր պայմանների համաձայն միտումնավորված» (Ե. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 99):

536. «Հոգիբնկալ մարգարէիցն և յառաքելոցն Քրիստոսի ունիմք զպատուէր՝ առնել ազարթս ինդրուածովք ի վերայ աստուածաւէր թագաւորութեանդ»: Այս և հետագա տողերը, մինչև «անշարժ մնացաք ի մէջ շար և անարէն թագաւորացն Պարսից» բառերը Զամինյանը (Զաւ., էջ 194) սրբագրում է այսպես. «Ե հոգիբնկալ մարգարէիցն և յառաքելոցն Քրիստոսի ունիմք պատուէր՝ առնել աղաւթս ինդրուածովք ի վերայ ամենայն մարդկան բայց և առանել ի վերայ աստուածասէր թագավորութեանդ և ամենայն իշխանաց և զաւրաց և բոլորովին ի վերայ ամենայն աստուածապահ պաղատուր, յոր սէրն Աստուծոյ հանգուցեալ է, և շնորհք աստուածային պարգևացն յայտնի են ի վերայ ձեր: Զի ահա թագաւորութիւն մեծ և հզար քան զամենայն թագաւորութիւնս, զոր ոչ ձեռին մարդկան գործ, այլ աստուծոյ աջովն պահեալ, զոր ոչ ոք կարասցէ փոխանորդել՝ բայց Քրիստոսի թագաւորութիւնն: Նոյնպէս և քահանայապետութիւն սուրբ և ճշմարիտ, ի շնորհիւն Աստուծոյ: Նախարարք և զաւրք քրիստոսաւէրք և բազմութիւն ամենայն յողովուրդոց և մեկ ժողովուրդ Քրիստոսի Աստուծոյ պանծացեալ և լոյս փառաց ձերոց աստուածասէր թագաւորութեանդ՝ անշարժ հաւատով կացեալ մնացաք ի մէջ շար և անարէն թագաւորացն Պարսից»:

Ընդգծված բառերը Զամինյանը վերականգնել է, մեր կարծիքով, Ասողիկի հիման վրա: Ասողիկը մանավանդ նամակի սկիզբը փոքր-ինչ այլ կերպ է շարադրում, քան «Սեբեոսի Պատմության» մեղ հասած բնագիրն է:

537. «Որ ոչ ձեռամբ մարդկան, այլ Աստուծոյ աջովն պահեալ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն հետևյալ աղճատումը. «զոր ոչ ձեռին մարդկան, այլ՝ Աստուծոյ աջովն պահեալ»: Միայն նկատել են Ք. Պատկանյանը, Ստ. Մալխասյանցը, Ա. Զամինյանը, Մ. Գրիգորյանը: Ա. Զամինյանը բնագիրը թողնում է նույնությամբ և «ձեռին» բառից հետո փակագծերի մեջ ավելացնում է «զոր» բառը (տե՛ս նախորդ ծանոթագրությունը): Իսկ Մ. Գրիգորյանը գրում է. «կամ աջովն պիտի ուղղել իբրև աջոյն և կամ հարաբերական դերանունն ու ձեռին բառը պիտի սրբագրել որպես ո՛ր ոչ ձեռամբ մարդկան (այլ Աստուծոյ աջովն պահեալ), ինչպես ունի Ստ. Ասողիկ»:

Մենք սրբագրել ենք ըստ Ասողիկի, որն ունի. «որ ոչ մարդկային ձեռամբ, այլ աստուածային աջովն է պահեալ»: Այսպես են վերծանել բնագիրը ուսուերեն թարգմանությամբ նաև Ք. Պատկանյանը (Ստ., էջ 133) և Մալխասյանցը (Մալխ., էջ 102):

538. «Մեր ծառայք են, մարմնով մեզ ծառայեցեն»: Բոլոր ձեռագրերը, Միհրդատյանը և

Պատկանյանն ունեն «մեր ծառայք են մարմնով» (չիք «մեզ ծառայեսցեն»): Փակագծերում գտնվող լրացումը կատարել է Ստ. Մալխասյանցը Ասողիկի հիման վրա:

539. «...ևզովէ, վասն զի շնամարին...»: Սրա փոխարեն բոլոր ձեռագրերը, Միհրդատյանը և Պատկանյանը ունեն «նզովէ զինչ համարին»: Վրիպակն ուղղել է Մալխասյանցն ըստ Ասողիկի:

540. «Եւ կացոյց ի վերայ նոցա ոստիկանս»: Վերջին բառաձևի փոխարեն բոլոր ձեռագրերը, Միհրդատյանը և Պատկանյանը ունեն «ոստիկան»: Վրիպակն ուղղել է Մալխասյանցն ըստ Ասողիկի:

541. «զորս գերեալ էր»: Սրա փոխարեն բոլոր ձեռագրերը, Միհրդատյանը և Պատկանյանն ունեն «զորս և գերեալ էր»: Վրիպակն ուղղել է Մալխասյանցն ըստ Ասողիկի:

542. «Ուղղափառութեան հաւատով, և գրով»: Սրա փոխարեն բոլոր ձեռագրերը, Միհրդատյանը և Պատկանյանն ունեն «ուղղափառ հաւատով՝ գրով»: Վրիպակն ուղղել է Մալխասյանցն ըստ Ասողիկի:

543. «Եւ այլ բազում խառնիհաղանն աղանդոցն»: Բոլոր ձեռագրերը, Միհրդատյանը և Պատկանյանը «աղանդոցն» բառի փոխարեն ունեն «ժողովրդոց»: Մալխասյանցը հենվելով Ասողիկի վրա, «ժողովրդոց»-ը դարձրել է «աղանդոյն»: Սակայն պարզ է, որ հեղինակն «աղանդ» բառը պետք է գործածած լիներ հոգնակի թվով, որովհետև խոսում է «խառնիհաղանձ» աղանդների մասին: Այս իսկ պատճառով էլ մենք Ասողիկի «աղանդոյն» ձևի մեջ տեսնում ենք «աղանդոցն» բառի ազնատումը և բնագրին ուղղում ենք «աղանդոցն», նկատելով ունենալով նաև այն, որ երկաթագիր 3 և 3 տառերի շփոթը ձեռագրերում սովորական երևույթ է: Մեր սրբագրությունը հաստատում է հեղինակն ինքը, մի քանի տող հետո, գրելով. «բազմութիւն աղանդոց հրամայեաց հանել յատենէն»:

544. «Նաև հեղայպետն իսկ յառաջ մատուցեալ ասէր. «Մի կոչեսցի Աստուած այրն այն»: Բոլոր ձեռագրերը, Միհրդատյանը և Պատկանյանն ունեն «հայրապետն»: Մալխասյանցը, հենվելով Ասողիկի վրա, սրբագրել է «հեղայպետն»: Սրբագրության մանրամասնությունները նա շարագրել է ստորև բերվող ծանոթագրության մեջ, որը մենք քաղում ենք գրեթե ամբողջությամբ, բաց թողնելով միայն սկզբից մի երկու տող: «Ասողիկի ձեռագրերներից մեծ մասն,— գրում է Մալխասյանցը,—ինչպես և առաջին տպագրությունն այստեղ ունին. «հայրապետն իսկ... առնեն ամբաստանություն... մի կոչեսցի ասեն աստ այրն այն», իսկ ուրիշ ձեռագրերն Վերջին խոսքն ունին. «մի կոչեսցի ասեն աստուած այրն այն»: Պատկանյանը հիշյալ հատվածը թարգմանել է. «Даже сам патриарх (какой?) подошел и сказал: «Муж тот да не назовется Богом» (եր. 134): Իսկ էմին Ասողիկի Պատմության ռուսերեն թարգմանության մեջ (ինչպես և Դյուլորինն Ֆրանսերեն թարգմանության մեջ) հետևել է տպագրությանը և թարգմանել. «Здесь не должен присутствовать этот человек», համարելով, որ այդ մարդը Զաքարիա հայրապետն է, որի անունը նույնիսկ մուծել է թարգմանության մեջ: Այս վարիանտը լի է անտեղություններով. ինչո՞ւ քրիստոնյա դավանությունների ժողովին չպետք է ներկա լիներ Երուսաղեմի պատրիարք Զաքարիա հայրապետը, ինչպե՞ս նա չպետք է ներկա լիներ, երբ արդեն ներկա էր ժողովին և մնաց այնտեղ նույնիսկ խոսողի հրամանից հետո, որ նրան ձեռնն ու դուրս վռնդեն: Վերջպես՝ «Մի կոչեսցի աստ» կոպիտ սխալ է. պետք է լիներ՝ «մի կոչեսցի այսր»: Չնայելով այս բոլոր անտեղություններին, որ չէր նկատել էմինը, նա դեռ մեղադրել էր Պատկանյանին, որ սա Սեբեոսը թարգմանելիս աչքի առաջ չէ ունեցել Ասողիկը և այս հատվածը չէ թարգմանել ըստ Ասողիկի վարիանտի, այսինքն իրան նման:

Վերջպես գտնվեց մի ընտիր ժողովածու պատմագիրների (նկարագրված մեր Ասողիկի հրատարակության Առաջաբանում, եր. ԼԵ—ԼԸ), որ պարունակում էր նաև մի օրինակ Ասողիկի Պատմության: Այս օրինակը տվյալ տողում «հայրապետ» բառի փոխանակ ունի «հեղայպետ»: Առեղծվածը լուծվեց, թյուրիմացությունը. բացատրվեց: Քրիստոնյա դավանությունների ներկայացուցիչների ժողովը անկող կերպով մտած է եղել և հրեապետը (հրեաների կրոնապետը): Նա առաջարկել է, որ «Մարդը» (Քրիստոս) աստված չկոչվի, ինչ որ բնական է մի հրեայի կողմից: Քրիստոնյա ժողովականները այս բանը հայտնում են խոսքովին: Սա հարցնում է. ո՞վ թույլ տվեց նրան ժողովին գալ. ձեռնեցը և դուրս արքե: Այսպես էլ անում են:

Այս ուղիղ վարիանտը առաջին անգամ հրատարակեց Պատկանյանը յուր Հայոց բառարանի նյութերի առաջին պրակում («Материалы для армянского словаря», СІԾ., 1882, էջ 28—29—Գ. Ա.): Այս վարիանտը հետո մենք մտցրինք Ասողիկի Պատմության մեր հրատարակության մեջ, որի հիման վրա էլ այստեղ ուղղեցինք Սեբեոսի աղավաղված բնագիրը:

Մալխասյանցի այս սրբագրությանը հիմնականում շտաբակելով հանդերձ՝ Նորայր Բյուզանդացին («Տեղեկութիւն ի գիրս Պատմութեան Ստեփանոսի Տարոնացոյ Ասողիկ կոչեցելոյ», Մոսկվա, 1889, էջ 28) գրում է. «Հարկ կհամարիմ ծանուցանել, թէ՛ և այլուք ի ժողովրդեան գիրս մեր կայ գրեալ Հայրապետ իբր կրոնական զլուխ Հրէից (նշում է Զաքարիա Սարկավագի Պատմության մասն Բ, եր. 113—Գ. Ա.)... գաղղիերէն patriarche (հայրապետ) բառն որ նոյնպէս Հրէից հոգևոր առաջնորդին համար ըսուած է»:

Նորայր Բյուզանդացու բերած օրինակները, որոնց Մալխասյանցը չի անդրադարձել, կարող էին ենթադրել տալ, թե Դավանության թղթի նախնական բնագրում եղել է ոչ թե «հրէապետ», այլ՝ «հայրապետ»: Եվ հիրավի, եթե «հայրապետ» բառը ունի նաև «հրէապետ»-ի նշանակութիւն, ուրեմն թղթում կարող էր հենց այդ իմաստով գործածված լինել «հայրապետ» բառը: Սակայն գործնականում բացառված է նման ենթադրության հնարավորութիւնը: Նախ այն պատճառով, որ Բյուզանդացու բերած օրինակները մասնակի օրինակներ լինելով՝ չեն կարող տարածվել թղթի վրա: Եվ երկրորդ, թղթի հեղինակներն ընդամենը մի քանի տող վերև արդեն գործածել են «հայրապետ» բառը, Զաքարիա հայրապետի կապակցութեամբ. «Զաքարիա հայրապետն Երուսաղէմի և այլ բազում իմաստասէրք... որոց հրաման ետ արքայ Խոսրով՝ արդարութեամբ ի վերայ հասանել, և զճշմարտոն ծանուցանել արքայի»: Ինչպէս տեսնում ենք, Զաքարիա հայրապետը գրական դեր ունի Դավանության թղթի մեջ (ուրիշ հարց է, թե նա իրականում ժողովին մասնակցել է, թե ոչ: Այս մասին տե՛ս Ս. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտութիւններ, էջ 56, 58), հետևաբար թղթի հեղինակները չէին կարող հակասակորդ հրէապետին նույնպէս միևնույն հատվածում կոչել «հայրապետ» բառով, առանց նրա անունը տալու: Այդ դեպքում ընթերցողը հրէապետի մասին սովածը տրամաբանորեն վերագրելու էր Զաքարիա հայրապետին: Արանից խուսափելու համար հեղինակները բնականաբար պետք է գործածէին մի տարբերիչ բառ, որն է «հրէապետ»:

Մեր ասածը վերաբերում է նաև Ս. Տեր-Մինասյանի հետևյալ եզրակացութեանը, որին նույնպէս Մալխասյանցը չի անդրադարձել. «Մի կոչեցի Աստուած այրն այն ասող հայրապետը կամ եպիսկոպոսը միայն նեստորական կարող է լինել: Ասողիկի հրատարակչի առաջարկած սրբագրութիւնը Հայրապետի փոխարեն Հրէապետ կարգալ, որ հենվում է նաև ձեռագիր ընթերցվածի վրա, անընդունելի է, որովհետև անկարելի է ընդունել, որ Պարսից արքունիքում եղած մի ժողովում հրավիրված հրէապետը կարող էր մտնել և այդպիսի սկանդալ սարքել» (Ս. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտութիւններ, էջ 99, ժ. 24):

Այսուհանդերձ փաստն այն է, որ, ըստ թղթի հեղինակի, հրէապետը մտնել և «սկանդալ» է սարքել: Ըստ որում, եթե նա նեստորական լիներ, ևսուրով արքան չէր զարմանա, թե «Ո՛ր հրամանա եկն նա ի տեղին յայն. արդ գանալից լիցի և գնասցէ»: Նեստորականները ժողովի եկել էին ըստ թագավորի հրամանի և ժողովից վտարվեցին միայն այն ժամանակ, երբ թագավորը մանրամասն քննեց նեստորի մասին. «Եւ ի վերայ հասեալ թագաւորն և վասն նեստորի, թե ո, կամ ուստի, կամ յորում ժողովի, և թէ զինչ խաւսեցաւ և հրամայեաց զնեստորականն հանել յատենէն անտի արտաքս»:

Որ կարծեցալ հայրապետը իրականում հրէապետն էր և նեստորական չէր՝ երևում է նաև նրանից, որ Դավանության թղթի հեղինակները նրան անշատում են նեստորականներից, գրելով. «Եւ այլ նեստորականք, և այլ բազում խառնիճաղանճ աղանդոցն: Նաև հրէապետն: Ինչպէս տեսնում ենք, նեստորականները թվարկված են առանձին, հրէապետն՝ առանձին: Ըստ որում հրէապետն առանձնացված է առհասարակ բոլոր քրիստոնյա աղանդավորներից. «բազում խառնիճաղանճ աղանդոցն: Նաև հրէապետն»:

Ելնելով վերը նշվածից, մենք հաստատում ենք Ասողիկի ձեռագրերում պահպանված «հրէապետ» բառի ճշմարտութիւնը և հետևելով Պատկանյանին, Զամինյանին (Զամ., էջ 196) և Մալխասյանցին, «Սերեոսի Պատմության» ձեռագրերում մեզ հասած «հայրապետ»-ը սրբագրում ենք «հրէապետ»-ով:

Առանց այս սրբագրության բնագիրը պակասավոր է և միշտ էլ կարող է հարուցել այն տարակուսանքները, որոնցից մեկը գտնում ենք նաև Պատկանյանի և այլոց վերոհիշյալ սրբագրութեանն անտեղյակ մնացած Մակլերի (Macl., էջ 114, ժ. 3) հետևյալ ծանոթագրութեան մեջ. «Այս հատվածում կա ակնհայտ պակաս: Ասողիկի զուգահեռի միջոցով այն լրացնելու մասին մտածել չի կարելի: Ասողիկի տեքստը նույնպէս այս հատվածում աղճատված է» (ինչպէս տեսնում ենք, Մակլերը ծանոթ չէ նաև Ասողիկի՝ մալխասյանական հրատարակութեանը, որի մեջ «հրէապետ» սրբագրութիւնն արդեն ներմուծված է):

545. «Դիպեցան անդ արք երկու եպիսկոպոս յաշխարհէն Հայոց, արք հաւատարիմ»,

գորս վասն բռնութեան շախարհին էին արձակեալ»: Բոլոր ձեռագրերը, Միհրդատյանը և Պատկանյանն ունեն «գոր» վրիպակը: Մալխասյանցն ուղղել է «գորս», ըստ Ասողիկի:

546. «Ունէին պատրաստական անդ ընդ ինմեան գգիր սրբոյն Գրիգորի»: Պարսից արքա խոսրովի հրավիրած եկեղեցականների ժողովին, ի թիվս այլ եկեղեցականների, Հայաստանից մասնակցում էին «Կոսմիտաս Մամիկոնէից եպիսկոպոս (տպագա կաթողիկոսը—Գ. Ա.) և Մատթէոս Ամատունիաց»: Սրանք իրենց հետ պատրաստի վերցրել էին «զգիր սրբոյն Գրիգորի»: Այս գրքի բովանդակությունը իմացվում է հետևյալ հարցուպատասխանից, որը վարում է պարսից արքան հայոց եպիսկոպոսների հետ. «Եւ հրամայեաց թագաւորն հարցանել, եթէ յորո՞ց թագաւորաց ժամանակս եղեն ժողովքդ այդոքիկ: Եւ նորա ասացին, եթէ՛ Նիկիոյ ժողովնս առ Կոստանդիանոսիւ եղև, իսկ Կոստանդնուպոլսիս առ Թէոդոսիւ Մեծիւ, և Եփեսոսին առ Փոքր Թէոդոսիւ, և Քաղկեդոնին առ Մարկիանոսիւ»: Ինչպես տեսնում ենք, «Գրիգորի գիրքը» պարունակել է տիեզերական ժողովների պատմությունը, կամ էլ՝ նրանց մասին հիշատակություններ:

Հավանաբար սա այն միևնույն «Գրիգորի գիրքն» է, որի մասին ակնարկված է նաև Անահիտ Շիրակացուն վերագրված «Ժամանակագրության» մեջ, հետևյալ տողերում. «Գիողղետիանոս՝ ամս քսան և երկուս, ետ Հիպատիս Ժ. և մեռաւ ի Դաղմատիա: Առ որով հալածումն եկեղեցեաց. և կենարար վարդապետութիւնն Քրիստոսի պատմեցաւ հայոց՝ ի ձեռն սուրբ Գրիգորի Պարթևի» («Շիրակացու մատենագրությունը», կազմեց Ա. Աբրահամյան, Երևան, 1944, էջ 374): Կարելի է կարծել, թե խոսքը Ազաթանգեղոսի Պատմության մասին է, մանավանդ, որ սկսած Ղազար Փարպեցուց այս Պատմությունը կոչվում է նաև «Գիրք Գրիգորի» (Ասողիկն իր աղբյուրը վերապատմելիս գրում է. «Պատմութիւն սրբոյն Գրիգորի»): Ազաթանգեղոսի մեզ հասած Պատմության մեջ Դիողղետիանոսի օրոք կատարված «հալածումն եկեղեցեաց» մասին պատմվում է 142 և 154-րդ հատվածներում (էջ 80 և 87 ըստ Տփղիսի 1909 հրատարակության):

547. «Հրամայեաց զնստորականսն հանել յատենէն»: Բոլոր ձեռագրերն ունեն «զնեստորայիանքն»: Միհրդատյանը և Պատկանյանը տպագրել են «զնեստորանքն»: Մալխասյանցը սրբագրել է «զնեստորականքն», հենվելով Ասողիկի վրա:

Այս սրբագրությունը մեք հաստատում ենք հենց հեղինակի միջոցով: Քննարկվող պարբերությունից մեկ պարբերություն առաջ, միևնույն գլխում նա գործածում է նախորդ ծանոթագրություններից մեկ արդեն ծանոթ հետևյալ արտահայտությունը. «Եւ այլ նեստորականք և այլ բազում խանդեհաղանճ աղանդոցն»: Ինչպես տեսնում ենք, հեղինակն ինքը գործածում է «նեստորականք» ձևը, որի հետքերը մնացել են նաև № 2639 ձեռագրի «զնեստորայիանքն» (այստեղ «կ» տառը կարդացվել է «յե» և «զնեստորականք»-ից ստացվել է «զնեստորայիանք») ընթերցվածի մեջ:

548. «Էր անդ Երան անուանեալ կարողիկոսն, և այլ եպիսկոպոսունք յԱուրեստանէ և յԱրուաստանէ և ի Խուստասանէ, և յայոց շախարհաց»: «Սիբեոսի Պատմության» մեզ ծանոթ ձեռագրերից և ոչ մեկում չկա «Երան» բառը: Թե որտեղից է դա թափանցել Ք. Պատկանյանի հրատարակած ձեռագրի մեջ, մեզ հայտնի չէ: Միհրդատյանի հրատարակությունն այդ բառը չունի: Առաջինը Պատկանյանն է դա հրատարակել, որին և հետևել են Մակելը՝ Ֆրանսերեն թարգմանության մեջ (Macl., էջ 115) և Մալխասյանցը՝ հայերեն բնագիրը հրատարակելիս և ռուսերեն թարգմանության մեջ: Ք. Պատկանյանի ռուսերեն թարգմանության մեջ (Патк., էջ 135) այդ անունը բացակայում է, որովհետև թարգմանությունը կատարված է Միհրդատյանի հրատարակությունից, որի մեջ, ինչպես ասվեց, անունը չկա:

Ե. Տեր-Մինասյանը Երան կաթողիկոսի անունը պարունակող հատվածի կապակցությամբ գրում է. «Այս խոսքերը միայն նեստորականներին կարող են վերաբերել, որով սակայն կաթողիկոս չունին» («Պատմա-բանասիրական հետազոտություններ», էջ 99): Ընդգծված արտահայտությունից երևում է, որ Ե. Տեր-Մինասյանը կասկածում է Երան կաթողիկոսի հիշատակությունը պարունակող վավերագրի վրա: Նա քիչ անց պարզ հայտնում է, որ անունը պարունակող հատվածում «տեղեկությունները Պարսից ժողովի մասին չափազանց այլափոխված են և նոր պայմանների համաձայն միտումնավորված»: Բայց սա վերաբերում է, անշուշտ, Դավանության թուղթը կազմողներին կամ նրա միտումնավոր խմբագիրներին: Իսկ բնագրագիտական առումով «Երան անուանեալ կաթողիկոսն» արտահայտությունը կասկած չի հարուցում, որովհետև նույնպես այդ կաթողիկոսի մասին հիշատակություն կա. «Եղչեալ զեպիսկոպոսապետն, որ Երան կաթողիկոսն անուանի»:

«Երան» բառի հետքերը մնացել են նաև Ասողիկի աղճատված ձեռագրերում (տե՛ս Ասո-

զիկի հատվածը Ք. Պատկանյանի Սերետսյան հրատարակության հավելվածների բաժնում, էջ 174): Այստեղ կարդում ենք. «Եւ Աննա անուանեալն կաթողիկոս»: Պարզ է, որ սկզբում եղել է «Երանն անուանեալ» (փխ. «Եւ Աննա անուանեալ»):

549. «Եւ Ելանիցեն յարխայական պողոտայն»: Այս բառերից հետո Մակլերը (Macl., էջ 115, ծ. 1) ենթադրում է աղճատում կամ պակաս:

550. «Իսկ որք գՔաղիկոնի»: Այս բառերից հետո Զամինյանը (Զամ., էջ 198) ավելացնում է «ունին զհաստ»: Սա տրամաբանական հավելում է, բայց չգիտենք, թե նախնական բնագրում այդ բառերը եղել են, թե՞ ոչ:

551. «ԶՎիրոյ գԱղուանից կարնոյիկոսն»: Հնագույն ձեռագիրը (№ 2639) ունի «զՎիրս» (փխ. զՎիրոյ), Նրիցյանի արխիվում պահվող մասնակի ընդօրինակության մեջ, ինչպես նաև Միհրդատյանի և Պատկանյանի հրատարակություններում աղվանից կաթողիկոս Վիրոյի անունը դարձել է «զՎրաց»: Այդպես էլ թարգմանված է ռուսերեն (Патк., էջ 135 „иверскому“) և Ֆրանսերեն (Macl., էջ 115 „le catholico de Géorgie“), Վրիպակն ուղղել է Մալխասյանց «բառ Ասողիկի և Նորայրի (Նորայր Բյուզանդացու—Վ. Ա.) ցուցման» (ՍԵՊ, էջ 124):

552. «Ռրով և գիայխառն իսկ Իրամայեաց տալ»: Բոլոր ձեռագրերը, ինչպես նաև Միհրդատյանի և Պատկանյանի հրատարակություններն ունեն «չըփայլբարն»:

Ք. Պատկանյանը (Патк., էջ 135) բառը չի թարգմանել և ծանոթագրել է. «անծանոթ բառ»: Իսկ հայերեն բնագրի (էջ 122) տողատակի ծանոթագրության մեջ նա բացատրել է. «թուի լինել պարսիկ բառ ګلښ և ګلښ փախար կամ փայխար, որ նշանակ է զհարկապահանջն և զտուրս հարկաց ի պետս կալուածատեսարց»:

Մակլերը (Macl., էջ 115, ծ. 2) ծանոթագրում է. «կարգա գիայխար: Փայխար—ը մեկ այլ ձևն է պայխարի, որը պարսկական ծագման բառ է: Պ—ի փոխարեն գրվող փ—ն համեմատաբար ավելի նոր է: Հմմտ. H. Hübschmann, Arm. Gram., I, էջ 220»: Մակլերը «փայխար»-ը թարգմանել է՝ „discussion“ („Il leur fit offrir la discussion“):

Մալխասյանցը, հետևելով Պատկանյանի բացատրություններին և Ասողիկի պահպանած «զփայխարն» ձևին, բառը սրբագրել է «զփայխարն» և ռուսերեն թարգմանության մեջ թողել է նույնությամբ („приказал даже дать п'ак'ар“): Ծանոթագրության մեջ (Малх., էջ 173, ծ. 182) նա բացատրել է. «Ընդհանուր մտքով հասկացվում է որպես էանապարհածախս կամ մըթերք»:

Հայերեն բնագրին կից 66-րդ ծանոթագրության մեջ (ՍԵՊ, էջ 194) նա միաժամանակ բերում է Ասողիկի ձեռագրերի հետ կապվող հետևյալ տեղեկությունները. «Ասողիկի երկու հին ձեռագիրները, որոնցից կատարվել է առաջին տպագրությունը՝ ունեցել են «զփայխարն»: Մի ուրիշ ձեռագիր, որի բաղդատությանը կատարվել է երկրորդ հրատարակությունը (տ. անդ, ծանոթ. 62)՝ ունի «զփայխարն»: Մի այլ օրինակ (Բրոսեի), որից օգտվել է էմին՝ այստեղ ունեցել է՝ «որոք զփախառն և տեղոյ աառին ակն իսկ հրամայեաց տալ: (Նոտրագրված բառերը՝ Նորայր Բյուզանդացի (Տեղեկութիւն ի գիրս Ասողիկն) սրամտությամբ վերծանել է. «Մուռ է տեղոյ(ս) ապրինակն»: —էմին հրամարվել է այս բառի բացատրությունից: Կ. Շահնազարյան, Ասողիկի առաջին հրատարակիչը, ենթադրել է, թե այս բառը գուցե նշանակում է ոռճիկ, թռչակ: Դյուլորիե, առանց բառի ծագումը մեկնելու՝ գիպխար բառը անկասկածելի կերպով թարգմանում է provision (ինչ որ ենթադրել էր Շահնազարյանը)»:

Ինչպես տեսնում ենք, Մալխասյանցը բառը ռուսերեն թարգմանելիս հետևել է Շահնազարյանի և Դյուլորիեի բացատրություններին: Պատկանյանի բացատրությունը («հարկապահանջն և զտուրս հարկաց ի պետս կալվածատեսարց») նրան չի համոզել, իսկ Մակլերի բացատրությանը նա ծանոթ չի եղել:

Մակլերի վերծանությունը (ինչպես նաև Մալխասյանցի հրատարակությունն ու ռուսերեն թարգմանությունը) վրիպել է նաև Հ. Մանանդյանի ուղարկությունից, ուստի նա անդրադառնում է միայն Ք. Պատկանյանի, Կ. Շահնազարյանցի և Ծ. Դյուլորիեի կարծիքներին: Նրան ավելի հիմնավոր է թվում Պատկանյանի կարծիքը. «Ք. Պատկանյանի ստուգաբանական այս բաղդատությունը (պարսկերեն pākār կամ pākār բառերի հետ—Վ. Ա.) կարևոր է և, անտարակույս, ավելի հիմնավոր է, քան մյուս քմահաճ ենթադրությունները: Ընդունելով «Փայխար» բառի ծագումը պարսկերեն pākār-ից, անհավանական չի լինի, իմ կարծիքով, այդ բառը համապատասխան համարել «պեկար, բեկար»-ին, որ քննության է առնված «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» իմ նախորդ աշխատության մեջ (էջ 32—37)» (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժող. պատմ., մասն Բ, Բ մասի նյութեր, էջ 243): Այնուհետև, նա ընդունում է «զըփայլբարն իսկ հրամայեալ տալ» ընթերցումը, որը իր կարծիքով

պետք է «մեկնել այն իմաստով, որ քաղկեդոնական եկեղեցուց պահանջվել է նույն իսկ «չը-  
 վայթար»-ը, այսինքն՝ բացի «փայլար-պեկար» հողային հարկից նաև այն հարկերը, որ «պե-  
 կար» չէին» (նույն տեղում, էջ 245): Բայց սա պարզապես «չըփայթար» վրիպակի մեջ ան-  
 պայման որևէ իմաստ գտնելու ցանկություն արդյունք է և չի կարող լուսաբանել «Սեբեոսի  
 Պատմության» տվյալ հատվածը: Եթե «պայթարը» հարկի տեսակ է և պետք է տրվի պետու-  
 թյանը, ապա այդ բառի առջև ավելացվող «չ» ժխտականը իմաստազրկում է բառին, որով-  
 հետև ի՞նչ կնշանակեր՝ թագավորը հրամայեց տալ նույնիսկ «ոչ պայթարը»...

Հատվածում ոչ միայն աղավաղված է «չըփայթար» բառը, այլև պակասում են այլ տար-  
 րեր, որոնց հետևանքով նախադասությանը չի հարմարվում նաև «որով և» արտահայտու-  
 թյունը («իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն Պարսից թագաւորին, որով և զփայթարն  
 իսկ հրամայեաց տալ»): Եվ առհասարակ ի՞նչ գործ ունեին իշխանները եկեղեցական ժողո-  
 վում, այն էլ այն իշխանները «որք եկեալ էին ի ծառայութիւն Պարսից թագաւորին»: Պարզա-  
 պես պետք է ընդունել, որ բնագրին անճանաչելիորեն աղճատված է և այն վերականգնելու  
 փորձերը առայժմ արդյունք չեն տալիս:

553. «Յայտ է եթէ պարտ է և զմեզ յերկուս բաժանել և երկուս ասել քագաուրս»: Վերջին  
 բառը Ասողիկի մոտ (էջ 96) գտնում ենք «թագաւորութիւնս» ձևով, որի հիման վրա Մ. Գրի-  
 գորյանը («Ձ. ամս.», 1969, էջ 297) առաջարկել է սրբագրել նաև «Սեբեոսի Պատմությանը»,  
 բառը դարձնելով «թագաւորութիւնս»: Սակայն այսպիսի սրբագրության համար բավարար  
 հիմք չկա: Բնագիրը հասկանալի է, կանոնավոր է և սրբագրության կարիք չունի: «Սեբեոսի  
 Պատմության» թարգմանիչները ճիշտ են ընկալել նախադասությունը և թարգմանել են «թագա-  
 ւորս» (և ոչ՝ «թագաւորութիւնս») բառը:

554. «Բայց աստուածութիւնն, քէ յամենայն տեղուք ոչ է, և զինչ կամի՝ զամենայն լինել  
 կամ առնել ոչ կարէ, Աստուածութիւնն զի՞նչ է»: Բոլոր ձեռագրերը, Միհրզաթյանը և Պատկան-  
 յանն ունեն այսպես: Սակայն Մախասայանցը սա ճիշտ չի համարել և հետևելով Ասողիկին  
 փոփոխել է այսպես. «Բայց աստուածութիւնն, որ յամենայն տեղուք է, և զինչ կամի զամենայն  
 լինել կամ առնել ոչ կարէ, աստուածութիւնն զի՞նչ է»: Սրանով բոլորովին հակառակ իմաստ  
 է հաղորդվում աստվածությանը: «Սեբեոսի Պատմության» ձեռագրերում պահված հատվածի  
 համաձայն՝ պարսից-արբան ասում է. «Բայց եթե աստվածությունը ամեն տեղ չէ և չի կարող  
 լինել կամ անել այն ամենը ինչ կամենում է՝ այդ ի՞նչ աստվածություն է»: Իսկ ըստ Ասո-  
 ղիկի ստացվում է այնպես, որ աստվածությունը, ընդհակառակը, ամեն տեղ է. «Բայց աստ-  
 վածությունը, որն ամեն տեղ է և չի կարող լինել կամ անել այն ամենը ինչ կամենում է՝  
 այդ ի՞նչ աստվածություն է» (Մախասայանցն այսպես էլ թարգմանել է ռուսերեն (Малх., էջ  
 104): Բայց սա ճիշտ միտք չէ: Եթե աստվածությունն ամեն տեղ է, ինչպես ասված է Ասո-  
 ղիկի մոտ, կնշանակի նաև ամեն ինչ կարող է անել, որովհետև Աստված ամենագոր է: Այն-  
 ինչ, պարսից արբան զարմանում է, թե այդ ինչ աստվածություն է, որ ամեն տեղ չէ և չի  
 կարողանում իր կամեցածն անել ամենուրեք:

555. «Եւ որք միարանին ընդ Հայոց հաւատոյն ի կողման Ասորեստանեայց, Կամիշով  
 մետրապոլիտ և այլք»: Ք. Պատկանյանը (Պատկ., էջ 123, ծանոթագր.) ծանոթագրում է. «Կամ-  
 յիշով, Kamjesu, որ թարգմանի յարեաւ Քրիստոս, է անուն ոմանց եպիսկոպոսաց Ասորոց:  
 Տե՛ս Ասսեմ. II, 414»: Հմմտ. նաև H. Hübschmann, Arm. Gram., I, էջ 294. Ստ. Մախաս-  
 յանցի ռուսերեն թարգմանության մեջ (Малх., էջ 105) «Կամիշով» անունը վրիպակաբար  
 տպված է Каминшов: Ասորի ժամանակագիր Էլիաս Մծբնացին (մահ. մ. թ. 1046 թ.) Կամիշու-  
 յի՝ Մծբնի մետրոպոլիտ դառնալու տարին նշում է իր «Ժամանագրության» մեջ 77-րդ տար-  
 վա դիմաց (Fragmente syrischer und arabischer Historiker, herausg. und übersetzt von.  
 Fr. Baethgen. Leipzig, 1884. Genehmigter Nachdruck Kraus, 1966. Տպվ. Abhandl. für  
 die Kunde des Morgenlandes, B. VIII, 3, էջ 119):

556. «Աստուածաւէր քագաւի՛ Ծիրին»: Խոսքը պարսից Խոսրով Ապրվել արքայի կնոջ  
 մասին է, որին հեղինակն իր Պատմության սկզբում առանձին հատված է նվիրել, շինայելով  
 գովասանական խոսքեր նրա հասցեին. «Եւ սորա (Խոսրովայ—Գ. Ա.) կին քրիստոնեայ յոյժ  
 գեղեցիկ ի Խուժաստան աշխարհէ, անուն Ծիրին: Սա է Բամբիշն, տիկնաց տիկին: Ծիրնաց վանս  
 և եկեղեցի մերձակայ արքունական կայանիցն... և բարձր ի գլուխ համարձակութեամբ բարոզէր  
 զաւետարանն արքայութեան ի դրանն արքունի. և ոչ որ իշխեր ի մեծամեծաց քաղէիցն բանալ  
 զբերան իւր և ասել բան մի մեծ կամ փոքր ընդ քրիստոնէիք»:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ոչ մի խոսք չկա այն մասին, որ Ծիրին թագուհին երբևէ  
 միաբանել է Քրիստոսի հայոց հաւատոյն: Այնինչ՝ Դավանության թղթում գրված է. «Եւ որք միաբա-

նին ընդ Հայոց հաւատոյն ի կողմանս Ասորեստանեայց, Կամիշլով մետրապոլիտ և այլք տան եպիսկոպոս, և աստուածասէր Թագուհին Շիրին, և քաջն Սմբատ, և բժշկապետն մեծ»: Եթէ հեղինակն անձամբ ծանոթ լինէր այս տեղեկութեանը, թվում է, այդ մասին կգրեր Շիրինին նվիրված բաժնում: Եթէ չի գրել, կնշանակի նա Դավանութեան թուղթը ձեռք է բերել հետագայում կամ էլ չի կռահել՝ այդ թուղթը Շիրինի կապակցութեամբ որպէս սկզբնաղբուր օգտագործելու մասին:

557. «Որչա՞փ ևս առաւել քան զառաւել արժան է մեզ վայելել ի խաղաղութեան որ և պարտիմք խնդրել»: Բոլոր ձեռագրերը և Միհրդատյանն ու Պատկանյանը սրա փոխարեն ունեն «որչա՞փ ևս առաւել պարտիմք խնդրել»: Պակասը լրացրել է Մալխասյանցը՝ հենվելով Ասողկի վրա:

558. «Անշարժ մնալ մինչև յաւրանան, իբրև գաւուս երկնից ի վերայ երկրի»: Այս բաներով ընդհատվում է Դավանութեան թուղթը Ասողկի Պատմութեան մեջ: Ընդհատումը կարելի է բացատրել կամ բնագրի կորստով, կամ էլ Ասողկի կողմից գիտակցաբար ընդհատմամբ: Երկու դեպքում էլ ընդհատումը մեզ զրկում է «Սեբեոսի Պատմութեան» Ասողկի հետ համեմատելու և Դավանութեան թղթի բնագրին ուղղելու հետագա հնարավորությունից:

559. «Քաջ և յաղբող փեղութեանցաբո՛ւ երջանիկն Երակլի հատուն էոյ»: Բոլոր ձեռագրերն ու տպագրիչներն ունեն «հաւրև»: Մենք ուղղել ենք «հատուն», որովհետև Դավանութեան թուղթը ուղղված է ոչ թէ Հերակլ կայսեր տղային, այլ քոռանը («չամս Կոստանդինայ թագաւորի, բռնին Երակլի... ժողովեցան ամենայն եպիսկոպոսունքն և նախարարքն Հայոց ի Դուին առ քրիստոսասէր կաթողիկոսն Ներսէս և առ բարեպաշտ զաւրաւարն Հայոց Թէոդորոս Ռշտունեաց տէրն... Հաճոյ թուեցաւ ամենեցուն անել թղթոյն պատասխանի»), հետևաբար, Դավանութեան թղթի հեղինակները Հերակլի թոռանը ուղղած թղթում չէին կարող նրա պապի մասին գրել «Երակլի հաւրև քո»: «Սեբեոսի Պատմութեան» նախնական բնագրում եղել է «Երակլի հաւուն քոյ»: Ընդօրինակող գրիչներն անուշադրաբար «հատուն»-ը դարձրել են «հաւրև»:

560. «Աստուծոյ վկայութիւն մեծ է»: Այս բաներից հետո Հովհաննու Ա թղթի 5-րդ գլխի 9-րդ տան մեջ կարդում ենք. «Այս է վկայութիւն Աստուծոյ», որը «Սեբեոսի Պատմութեանը» շունի: Աստվածաշնչի համեմատութեամբ կան նաև այլևայլ մանր-մունր գրչական փոփոխություններ, որոնք մատնանշել է Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1969, էջ 207): Բայց մենք «Սեբեոսի Պատմութեան» մեզ հասած տեքստը չենք սրբագրում, որովհետև հնարավոր ենք համարում, որ պատմիչը կարող էր օգտված լինել Հովհաննու Թղթի նաև այնպիսի մի ձեռագրից, որը հենց ինքն էր պարունակում այն տարբերակները, որոնք այսօր շեղվում են տպագիր Աստվածաշնչից և թողնում են սրբագրութեան կարոտ հատվածների տպավորություն:

Աստվածաշնչի հատվածները առհասարակ պետք է սրբագրել այն դեպքում, երբ միևնույն պատմիչը (կամ նրան արտագրողը) տրամադրում է լրացուցիչ այնպիսի տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ երկի նախնական բնագրում եղել է այնպես, ինչպես արդեն տպագիր Աստվածաշնչում է: Այլպես հնարավոր է, որ պատմիչն Աստվածաշնչից օգտվել է յուրովի: Ներկա դեպքում շատ հնարավոր է, որ «Սեբեոսի Պատմութեան» հեղինակն ինքը կրճատած լինի «այս է վկայութիւն Աստուծոյ» արտահայտությունը, որը թողնում է ավելորդ արտահայտության տպավորություն և նոր իմաստ չի ավելացնում: Պետք է նաև նկատի ունենալ, որ պատմիչները միշտ չէ, որ տառացի են արտագրում Աստվածաշնչույը: Նրանք երբեմն անգիր են շարագրում կամ մոտավոր բովանդակությամբ են ներկայացնում այս կամ այն բաղվածքը:

561. «Իբրև մեծնեցաւ ժամանակ պտղոյն՝ առաքեաց զճառայս իւր առ մշակս՝ առնուլ զպտուղ նորա»: Բոլոր ձեռագրերում և տպագրերում պակասում է «առ մշակս» արտահայտությունը: Մենք վերականգնել ենք ըստ Մատթեոսի ավետարանի (գլ. ԻԱ, 34) և ըստ Մակկեթի առաջարկի (Մաժ., էջ 120, ծ. 2): Վերջինս այսպես է բացատրել «առ մշակս առնուլ» արտահայտության մեջ եղած «առ մշակս» բառերի կորուստը. «առ [մշակս առ]նուլ»: Անկուսակոր փակագծերի մեջ գտնվող բառերը կորել են, որի հետևանքով իրար են միացել «առ» բառը և «առնուլ» բառից մնացած «նուլ» մասնիկը և միասին տվել են «առնուլ»:

562. «Նւ գմիս Դիոնէսիոս ի Կորնթոս»: Այսպես են բոլոր ձեռագրերն ու տպագրիչները, բացի Մալխասյանցից, որը «զմիւս» բառը դարձրել է «զմեւս» (չնկատելով, որ միևնույն նախագատմության մեջ, երբ բառ հետո հենց ինքը տպագրել է «միւս»): Նա այս բառի ու Դիոնէսիոս» անվան միջև ավելացրել է նաև «ևս» բառը, որի կարիքը չկա (Հենց Դիոնէսիոսի անվանը հաջորդում է «զմիւս Տիմոթէոս» արտահայտությունը, որի մեջ նույնպես «ևս» բառը չկա):

Մենք վերականգնել ենք բնագրին այնպես, ինչպես կա ձեռագրերում և Միհրդատյանի ու Պատկանյանի հրատարակություններում:

563. «Նոյն բնութիւն հաւր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի. որ յաղագս մեր մարդացաւ և յաղագս մերոյ փրկութեան»: Այս խոսքերը կրկնությունն են հենց նույն «Սեբեոսի Պատմության» մեջ, երկու էջ վարը հանդիպող «Հանգանակ նիկիական ժողովոյն» կոչված թղթի հետևյալ խոսքերի. «Նոյն բնութիւն հաւր, որով ամենայն ինչ եղև յերկինս և երկրի երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան»:

Ինչպես նկատում ենք, զրեթե բառացի արտագրված են մեկը մյուսից: Հետևաբար կարելի կլինենք մեկի միջոցով սրբագրել մյուսը, ինչպես առաջարկել է Մ. Գրիգորյանը («Հ. ամս», 1969, էջ 208—209): Սակայն ընդամենը երկու էջով միմյանցից բաժանված այս հատվածներում առկա են նաև այնպիսի տարբերություններ, որոնք ցույց են տալիս, որ առաջին դեպքում պատմիչը նիկիական ժողովի հանգանակը շարադրել է ըստ իր անգիր իմացածի, իսկ երկրորդ դեպքում բառացի արտագրել է հանգանակը: Այսպես. նա գրում է «ի վերայ երկրի», այնինչ՝ նիկիական հանգանակի մեջ կարդում ենք «յերկրի»: Սրան հաջորդող «Երևելիք և աներևոյթք» արտահայտությունը պատմիչն առհասարակ բաց է թողել: Այնուհետև՝ նա գրում է «յաղագս մեր մարդացաւ», իսկ նիկիական հանգանակում՝ «յաղագս մեր մարդկան» (հմտ. Macl., էջ 120, ծ. 4): Ապա՝ հեղինակը գրում է «յաղագս մերոյ փրկութեան», իսկ Հանգանակում՝ «Վասն մերոյ փրկութեան»:

Այս տարբերությունները միաժամանակ մեզ ծանոթացնում են հեղինակի աշխատանքային ոճին: Նա եկեղեցական կանոնական գրականությունը երբեմն օգտագործում է իր սեփական վերաշարադրանքով: Ըստ որում՝ բոլոր այս դեպքերում նա ցույց է տալիս, որ քաջ ծանոթ է Աստվածաշնչին և այն դավանաբանական գրականությանը, որն օգտագործել է:

564. «Նաև սուրբն Ղևոնդ մեծ աբխալսկոպոսն Կեսարու, որ սենալ և ոսեալ էր սուրբ Գրիգորիոս, որ և ձեռնադրեացն իսկ զնա ի Բաղանայայետութիւն, և նա զնոյն հաստատեաց զաւանդութիւն»: Այս տեղեկությունը Ֆ. Մակլերը (Macl., էջ 121, ծ. 1) համարում է որպես վկայություն հայոց հավատի առաջին հաստատման մասին («Ղևոնդի կողմից հայոց հավատի առաջին հաստատումը»):

565. «Երկրորդ անգամ դարձեալ ի նիկիայն ժողովեցան սուրբ և ճշմարիտ հարքն հրամանաւ աստուածաւէր թագաւորին Կոստանդիանոսի... Ուստի և մերն հանդիպեալ անդ սուրբն Ռատակէս, որդի սրբոյն Գրիգորի, որ ընկալաւ զհրամանս հաւատոյ ի սուրբ ժողովոյն... բերեալ մատոյց առաջի Բրիտոսասէր թագաւորին Տրդատայ և սուրբ Բաղանայայետիւն Գրիգորի...»: Այս տեղեկությունը Մակլերը (Macl., էջ 121, ծ. 2) համարում է որպես վկայություն հավատի երկրորդ հաստատման մասին նիկիական ժողովի կողմից:

566. «Ի դարձեալ երրորդ անգամ, յորժամ հանդերձեցաւ թագաւորն Տրդատ, և առ ընդ իւր զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիս և զնորին որդին զՌատակէս եպիսկոպոս... զնաց ի Հռոմ տեսանել զԿոստանդիանոս... Եւ ևս հաստատեցին առ մեզ զհաւատոցն ճշմարտութիւնն, զորն իմնադրեաց մեզ սուրբ Հոգին»:

Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «Երկրորդ անգամ»: Մենք սրբագրել ենք «Երկրորդ անգամ» հետևյալ պատճառաբանությամբ:

Նախորդ երկու ծանոթագրությունների մեջ մենք արդեն ցույց ենք տվել, որ Ֆ. Մակլերը «Սեբեոսի Պատմության» առաջին և երկրորդ տեղեկությունները դիտել է որպես վկայությունների հայոց հավատի առաջին և երկրորդ հաստատումների մասին: Հետևաբար, այս երրորդ տեղեկությունը պետք է վերաբերի երրորդ հաստատմանը: Սրանից ելնելով՝ Մակլերը (Macl., էջ 121, ծ. 3) սողաատակի ծանոթագրության մեջ գրում է. «Հետևաբար տեքստի երկրորդը պետք է ուղղել երրորդը»:

Այսուհանդերձ՝ Մակլերը տեքստը չի ուղղել և թարգմանել է այսպես. «Et encore une autre fois», որի գրաբար թարգմանությունը կլինենք. «Եւ դարձեալ միւս անգամ»: Մակլերի զգուշավորությունը կարողարանար, եթե նախորդ պարբերության մեջ Դավանության թղթում օգտագործված չլիներ «երկրորդ» բառը («Երկրորդ անգամ դարձեալ ի նիկեայն ժողովեցան սուրբ և ճշմարիտ հարքն»): Բայց քանի որ այդ բառը կա՝ կնշանակի նրան հաջորդել է «երրորդ» բառը:

Որո՞նք էին հայոց հավատի հաստատման այն երեք դեպքերը, որոնցից երրորդի մասին խոսվում է սրբագրվող հատվածում:

Առաջին: Դավանության թղթի հեղինակները հայտնում են, որ հայոց հավատը նոր չէ սահմանված, այլ գալիս է հնից և որպես ապացույց հիշատակում են Գրիգոր Լուսավորչի



կողմից քարոզված հավատը Տրդատ Թագավորին և Հայոց իշխաններին դեռևս 30 տարի առաջ, քան Կոստանդինոս կայսրը: Այս դավանութունը առաջին անգամ հաստատեց Գրիգոր Լուսավորչին ձեռնադրող Կեսարիայի մեծ արքեպիսկոպոս Ղևոնդը. «Արդ ունիմք մեք հաւատս ոչ ի նորագունից սահմանեալ, այլ որպէս ընկալաք մեք ի սուրբ առաքելոցն ի ձեռն հայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի, վարդապետելով զՏրդատ արքայ և զիշխանսն Հայոց աշխարհին, զոգցես եթէ և ամաբ յառաջ քան զԿոստանդինոս: Նաև սուրբն Ղևոնդ մեծ արքեպիսկոպոսն Կեսարու, ուր սնեալ և ուսեալ էր սուրբ Գրիգորիոս, որ և ձեռնադրեացն իսկ զնա ի քահանայապետութիւն, և նա զնոյն հաստատեաց զաւանդութիւն»: Սա հայոց հավատի առաջին պաշտոնական հաստատումն էր (ըստ Դավանության թղթի):

Երկրորդ անգամվա հաստատման մասին վկայող պարբերությունն սկսվում է հենց «երկրորդ» բառով. «Երկրորդ անգամ դարձեալ ի Նիկիոյն ժողովեցան... մերն հանդիպեալ անդ սուրբն Ռատակէս... ընկալալ զհրամանս հաւատոյ ի սուրբ ժողովոյն... բերեալ մատոցն առաջի Քրիստոսասէր Թագաւորին Տրդատայ և սուրբ քահանայապետին Գրիգորի հանդերձ հրամանաւ երջանկին Կոստանդինոսի»: Սա երկրորդ պաշտոնական հաստատումն էր, որին բնականաբար պետք է հաջորդեր երրորդը:

Այդ երրորդն էլ հետևյալն էր. «Եւ դարձեալ երրորդ (ձեռագրում «երկրորդ») անգամ. յորժամ հանդերձաւ Թագաւորն Տրդատ, և առ ընդ իւր զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս և զնորին որդին Ռատակէս եպիսկոպոս... ևս հաստատեցին առ մեզ զհաւատոցն ճշմարտութիւնն, զոր հիմնադրեաց մեզ սուրբ Հոգին»:

Ինչպես տեսնում ենք, անկախ պատմական իրադարձությունների մասին հաղորդված խառնաշփոթ տեղեկություններից, Դավանության թղթի հեղինակներն իրենք, հայոց հավատի հաստատման երեք դեպք են նշում: Հետևաբար, երեք դեպքերից վերջինի մասին գործածված «երկրորդ» բառն ակնհայտ վրիպակ է, որը մենք սրբագրում ենք «երրորդ» բառով:

567. «Արդ՝ զի թշնամիք սաստածապաշտութեանն բազում անգամ արչաեալ կորուսին գերկիրս մեր և որպէս զմարդիկ երկրիս կորուսին՝ և զկտակարանս եկեղեցոյ և զվարդապետս նոյնպէս սպառեցին»: Հայ պատմիչները հաճախ են նշել Հայաստանում ստեղծված գրավոր մշակույթի հուշարձանների կործանման ու ոչնչացման փաստեր: Քշնամիները զբերել ոչնչացրել են ինչպես շնչավոր մարդկանց: Այս տեսակետից պատմիչի խոսքը թևավոր խոսքի նշանակություն է ստանում. «Որպէս զմարդիկ երկրիս կորուսին՝ և զկտակարանս եկեղեցոյ և զվարդապետս նոյնպէս սպառեցին»:

Այս կարևոր խոսքը «Սերեոսի Պատմության» առաջին երկու հրատարակություններում տպագրված է գրչական վրիպակով. «զմարդիկ երկրիս» արտահայտության փոխարեն տպագրված է «մարդիկ երկիրս», որը բոլորովին շրջում է արտահայտության իմաստը: Եթե առանց վրիպակի ասված է ինչպես մեր երկրի մարդկանց են ոչնչացրել, ապա վրիպակով ստացվում է այնպես, թե մարդիկ ոչ թե ոչնչացվել են, այլ իրենք են ոչնչացրել. «որպէս մարդիկ երկիրս կորուսին՝ և կտակարանս եկեղեցոյ և զվարդապետս նոյնպէս սպառեցին»: Այսպես վրիպակաբար թարգմանել է նաև Մակկերը (Macl., էջ 122). „Comme les hommes ont perdu le pays ils ont égelement détruit les testaments de l'Eglise et vardapets“.

Բարբախտաբար, Պատկանյանը կոռճել է նախնական բնագրի միտքը և ճիշտ է թարգմանել արտահայտությունը. „Как погубили людей страны нашей (և ոչ թե) „Как люди погубили страну нашу“, также истребили св. книги церкви и vardapetov eя“ (Պատկ., էջ 143):

Մալխասյանցը (Մալխ., էջ 109) նույնպես ճիշտ է թարգմանել. Погубили не только людей нашей страны. но истребили также церковные книги и учителей. Այս թարգմանությունը հիմնված է իր՝ Մալխասյանցի կողմից վերականգնված բնագրի վրա: Վերականգնումը կատարվել է ըստ մեզ հասած հնագույն ձեռագրի (№ 2639), որտեղ գրված է «զմարդիկ երկիրս»: «զ» նախդիրի առկայությունը «մարդիկ» բառի սկզբում ցույց է տալիս, որ սկզբում եղել է «զմարդիկ երկիրս»: Այսպես էլ վերականգնել է Մալխասյանցը:

Քանի դեռ վրիպակը չէր ուղղված, ստացվում էր հետևյալ լեզվական անհեթեթությունը. «թշնամիք... կորուսին գերկիրս մեր... մարդիկ երկիրս կորուսին»:

568. «Հանգանակ նիկիական ժողովոյն»: Այս խորագիրը, ինչպես երևում է, ավելացրել են անցյալ դարի այն ընդօրինակողները, որոնցից օգտվել են Միհրդատյանը և Պատկանյանը: Հնագույն ձեռագիրը (№ 2639), ինչպես նաև մեր Մատենադարանում պահվող XIX դարի ընդօրինակությունները այդ վերնագիրը չունեն:

Նիկիական ժողովի հանգանակի մասին տե՛ս Aršak Ter-Mikelian, Die armensiche Kir-

che in ihren Beziehungen zur Byzantinischen (vom IV bis zum XIII Jahrhundert), Leipzig, 1892, էջ 22 և շար.):

569. «Մնա կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ հոգովն սրբով: Որ և»: Վերջին («որ և») արտահայտութեան կապակցութեամբ Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 132, տողատակ) գրում է. «Ուղղելի՛ որով», Սակայն բնագիրն այսպիսի ուղղման կարիք չունի:

570. «Էառ հոգի: Ձեռագրերը չունեն «էառ» բառը, որը լրացրել են բոլոր նախորդ հրատարակիչները և որը պահպանում ենք նաև մենք:

571. «Նստաւ ընդ աջմէ հաւր: Գալոց է նովին մարմնովն և»: Այս բառերը չկան «Սեբեոսի Պատմութեան» ձեռագրերից և ոչ մեկում: Հրատարակիչները լրացրել են Հանգանակի լրիվ տեքստից, առանց որևէ բացատրութեան:

Մեր կարծիքով՝ այդ բառերի կորուստը տեղի է ունեցել հետևյալ ճանապարհով: Նախնական բնագրում եղել է այսպես. «... ելեալ ի յերկինս՝ նովին մարմնով նստաւ ընդ աջմէ հաւր: Գալոց է նովին մարմնովն և փառաբ հաւր դատել զկենդանին և զմեռեալս»: Մեր ընդգծած բառերից առաջ գտնվող «մարմնով» բառն արտագրելուց հետո գրիչը նորից ձեռագրին նայելիս տեսել է ոչ թէ այդ բառը, այլ դրանից վեց բառ հետո եկող միևնույն՝ «մարմնովն» բառը և կարծելով, որ դա արդեն արտագրել է, բաց է թողել դրանից պոռչ գտնվող բառերը: Այսպիսով, նա իս արտագրել երկու միևնույն բառերի միջև գտնվող տեքստը: Այս կարգի բացթողումներ հաճախ են լինում:

572. «Նւ ապա կոչեցան ի Հռովմ, և յանդիման եղեն Կոստանդիանսի արքայի, և ուսուցին նմա զհաւատս ճշմարիտս, և վկայութեամբ հաստատեցին զհիմնադրութիւն հաւատոյն»: Այս նախադասությունը չի կապվում նախորդ բնագրի և առհասարակ «Սեբեոսի Պատմութեան» հետ: Ստ. Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 194, ծ. 67) գրում է. «Հավանական է, որ այս խոսքը ... ընդմիջարկություն է»: Նվ հիրավի, ուսումնասիրությունը պարզում է, որ այն և նրան հաջորդող մի ամբողջ էջանոց հատված (ՍԵՊ, էջ 132, տ. 29, էջ 133, տ. 32) պատահաբար են միացել «Սեբեոսի Պատմութեանը»:

Հավանաբար, «Սեբեոսի Պատմությունը» պարունակած մի ձեռագրում ընդօրինակված են եղել նաև ուրիշ երկեր («Սեբեոսի Պատմութեան» մեկ հասած հնագույն ձեռագիրը (№ 2936) բացի այս Պատմությունից պարունակում է նաև մի շարք այլ մատենագիրների երկեր), որոնցից մի հատված, ձեռագրի քայքայված լինելու հետևանքով, պոկվել և պատահաբար ընկած է եղել «Սեբեոսի Պատմությունը» պարունակող մասի մեջ: Ընդօրինակող գրիչը այդ բնագիրը նույնպես ընդօրինակել է որպես «Սեբեոսի Պատմության» հարազատ մաս, չնկատելով, որ դա «Սեբեոսի Պատմության» հեղինակինը չէ: (Այդպես է վարվել, օրինակ, նաև ՄՄ № 8228 ձեռագրի գրիչը, որը Անանիա Շիրակացու երկի կազմում թյուրիմացաբար ընդօրինակել է ձեռագրի այդ մասում պատահաբար ընկած մի թերթ վրաց «Քարթլիս ցխովրեյա»-ի հայերեն թարգմանությունից):

Ահա, այսպիսի եղանակով «Սեբեոսի Պատմության» մեջ հայտնվել է ուրիշ հեղինակի դրած ժամանակագրական երկից մի հատված, որի բովանդակությունը չի կապվում այդ թղթին (մանրամասն տես՝ Աբգարյան, Անանուսի առեղծվածը, էջ 186—191):

573. «Յամի երեքտասաներորդի կենարարին և փրկչին մեռոյ Յիսուսի Քրիստոսի քազաւորէ Դիոկղետիանոս»: Բոլոր ձեռագրերն ունեն «յամի ԺԳ երեքտասաներորդի», որի մեջ «ԺԳ»-ն ավելորդ կրկնությունն է «երեքտասաներորդի» բառի: Մալխասյանցը ձեռագրերում գտնվող վրիպակը նույնությամբ էլ տպագրել է: Իսկ Թ. Միհրդատյանը «յամի ԺԳ» երեքտասաներորդի-ի փոխարեն գրել է «յամի (երկերիւր ութսուն և շորրորդի)» և ծանոթագրել է. «ի բնագիրս սխալ գրեալ էր այսպէս՝ «երեքտասաներորդի» մեք եղաք զհաւաստին՝ որ ըստ ժամանակագրաց» (Միհրդ., էջ 203—204): Միհրդատյանին հետևել են նաև Բ. Պատկանյանը (ՌԱԿ., էջ 144, Պատկ., էջ 130) և Յ. Մակիերը (ՄԱԿ., էջ 124), որը Միհրդատյանի հրատարակությանը ծանոթ չլինելով կարծել է, թե 284 թվանշանը գրել է Պատկանյանը:

Մենք հենվելով ՄՄ Երիցյանի արխիվում պահվող հատվածական ընդօրինակության վրա, չնչել ենք ավելորդ «ԺԳ»-ն և բնագիրը սրբագրել ենք ըստ այդ ընդօրինակության. «Յամի երեքտասաներորդի կենարարին»: Այսուհանդերձ սրբագրված վիճակում նույնպես «երեքտասաներորդ» թվականը չի համապատասխանում Դիոկղետիանոսի գահակալության ժամանակին (284 թ.):

Սրբագրված հատվածի կապակցությամբ Ստ. Մալխասյանցը գրել է. «Մ. թ. 247 թ. հոռմեական իմպերատոր Փիլիպպոս Արաբի օրոք, լրացավ այն ժամանակ ընդունված թվագրության առաջին հազարամյակը՝ սկսած Հռոմի հիմնադրման օրից (մ. թ. ա. 753 թ.—Գ. Ա.)...

հաջորդ տարվանից սկսվում էր հաջորդ հազարամյակի առաջին տարին, բայց այդ տարիներն ընդունված էր կոչել ոչ թե 1001, 1002, այլ միայն 1, 2, սկսած Փիլիպպոսից, այսինքն՝ սկսած քրիստոնեական դարաշրջանի 248 թվականից: Ինչպես երևում է, Դվինի ժողովն օգտվել է այդ թվագրությունից, որը կոչվում էր հունական թվագրություն կամ էլ Փիլիպպոսի թվագրություն: Այսպիսով՝ Քրիստոսի ծննդյան 13-րդ տարին համապատասխանում է 247 + 13 = քրիստոնեական դարաշրջանի 260-րդ տարվան\*: Այս թվականը 24 տարով տարբերվում է Դիոկղետիանոսի թագավորության իրական թվականից (284), բայց դա բխում է Դավանության թղթի Դիոկղետիանոսի թագավորության ճշգրիտ թվականը չիմացող հեղինակների ոչ շատ տեղյակ լինելուց: 2է\* որ Սեբեոսն ինքը (զլ. III) Դիոկղետիանոսին թագավորած է համարում Սասանյան Արտաշիրի (գահ է բարձրացել 226 թ.) 18-րդ տարին, այսինքն՝ մեր թվագրության 243-րդ տարին, որը 41 տարով ավելի վաղ է Դիոկղետիանոսի գահ բարձրանալու իրական տարվանից» (Մալա., էջ 173—174):

Դավանության թղթում և Անանունի 5-րդ զլխում Դիոկղետիանոսի գահ բարձրանալու տարվա տարբերությունը ցայտուն պացուցւց է այն բանի, որ Դավանության թղթի հեղինակները և Անանունն օգտվել են տարբեր աղբյուրներից: Վերջերս, սակայն, բանասեր Ա. Մարտիրոսյանը «Հայաստանը և առաջին Սասանյանները» հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 3, էջ 155) հայտնեց այն կարծիքը, թե այդ տարբերությունը կվերանա, «եթե պեղենք անհարիր շերտերը»: Պեղելուց հետո, ըստ Մարտիրոսյանի, կստացվի այնպես, որ և՛ Դավանության թղթում, և՛ Անանունի 5-րդ զլխում Դիոկղետիանոսի գահ բարձրանալու տարի է նշված 261 թվականը: Այսպես կարծելով նա գրում է. «Բա կարևոր հանգամանք է Սեբեոսի և Անանունի հարաբերության հարցում» (էջ 156): Այսպիսով, Մարտիրոսյանի հաշվումները փաստորին բերել են այն համոզմանը, թե Դավանության թղթի հեղինակները և Անանունը միևնույն անձնավորություններն են: Բայց սա ճիշտ չէ, որովհետև Դավանության թուղթը իրականում գրել են Դվինի 648 թ. ժողովի մասնակից մի խումբ եպիսկոպոսներ և նախարարներ, ներսես Շինող կաթողիկոսի ղեկավարությամբ, իսկ Անանունը նրանից հարյուրավոր տարիներ հետո՝ XI դարում ապրած մի պատմիչ է:

Դավանության թղթի և Անանունի միջև կապ չէր կարող ստեղծվել եւյնբիսլ այն դեպքում, եթե ընդունեճէ, որ Անանունը և Սեբեոսը միևնույն անձնավորություններն են: Այս դեպքում կնույնանային երկու պատմիչներ և ոչ թե Դավանության թղթի հեղինակներն ու «Սեբեոսի Պատմության» հեղինակը:

Պետք էր նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Դիոկղետիանոսի գահ բարձրանալու տարվան վերաբերող «յամի երեքտասաներորդի կենարարին» արտահայտությունը «Սեբեոսի Պատմության» մեջ ներմուծված է հետագայում և կապ չունի ո՛չ այդ Պատմության, ո՛չ էլ Դավանության թղթի հետ, հետևաբար՝ այն չի կարող առհասարակ որևէ դեր խաղալ Սեբեոսի և Անանունի հարաբերության հարցում\*\*:

Ուղղման կարող են «Սեբեոսի Պատմության» և Անանունի կապակցությամբ Մարտիրոսյանի հորվածում տեղ գտած նյաև հետևյալ տեղեկությունները. «Սեբեոսի տվյալները համաձայն են արձանագրությանը (Քաաբա ի Զարդուշտի արձանագրությանը—Գ. Ա.) և հաստատում են հորենացուն» (էջ 155), «Հենց աղյուսակներում էլ (Անանունի 5-րդ զլխում—Գ. Ա.) դեպքերը շփոթված են 20—25 տարով», «Խառանի և Ուրհայի պատերազմը եղել է 260 թ., Անանունը այդ ժամանակ է դնում Կարոսի վախճանը» (էջ 156), «Սեբեոսի հաշվումներով Տրդատի գահակալությունն ընկնում է ո՛չ 298, բայց և ոչ 286/7 թ., այլ 275-ին» (էջ 157) և այլն:

Իրականությունն այն է, որ հորենացին հետևել է հայկական ավանդությանը, որի համա-

\* Հմմտ. նաև Ստ. Մալխասյանց, երբ է Հայաստանն ընդունել քրիստոնեություն («էջ-միածին», 1944, հունվար, էջ 24—25):

\*\* «Յամի երեքտասաներորդի կենարարին» արտահայտության հետագա հավելում լինելու փաստը բացահայտված է Անանունին նվիրված մեր գրքում (էջ 186—191), որը, սակայն, վրիպել է Մարտիրոսյանի ուշադրությունից: Վ. Ս. Խաչիկյանը, — գրում է Մարտիրոսյանը (էջ 156, ծ. 26), — կարծում է, որ բնագրի մեջ «Երեքտասաներորդի կենարարին և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի» նախադասությունը հետագա հավելում է: Ինչպես տեսնում ենք, մեր բացահայտած փաստը Մարտիրոսյանին հայտնի է դարձել որպես Լ. Խաչիկյանի բանավոր հայտնած կարծիք: Այսուհանդերձ պետք էր քննել ժամանակագրական տվյալի հետագա հավելում լինել-լիկնելու խնդիրը և ապա նոր օգտագործել տվյալը:

ձայն՝ հայոց խոսքով թագավորը պայքարել է Սասանյան դինաստիայի հիմնադիր Արտաշիրի դեմ: Սրան հակառակ՝ Քաաբա ի Զարդուշտի արձանագրության ժամանակագրական տվյալները հաշվելիս խոսքովին ժամանակակից պարսից թագավոր է ստացվում Շապուհ Ա-ի որդի Որմիզդ-Արտաշիրը: Այս միևնույն հակասությունը գտնում ենք նաև «Սեբեոսի Պատմությունում»: Ուրեմն, հայկական աղբյուրները համաձայն չեն արձանագրությանը: Մարտիրոսյանը գրում է. «Նորինացու մոտ այդպես է ստացվել ակամա» (էջ 149): Սրանով, սակայն, լավագույն դեպքում բացատրվում է և ոչ թե վերանում անհամաձայնությունը խորհնացու և արձանագրության միջև: Նույնը վերաբերում է նաև Անանունին, որը գրում է. «Եւ տիրէ ի վերայ աշխարհիս Հայոց Արտաշիր արքայ պարսից, ամս ժԱ»: Այստեղ նույնպես նկատի է առնված Արտաշիր Սասանյանը և ոչ արձանագրության մեջ հիշատակված Որմիզդ-Արտաշիրը: Ուրեմն, Անանունի դեպքում նույնպես հակասությունը առկա է:

Դեպքերի 20—25 տարով շփոթված լինելու մասին իր կարծիքը Մարտիրոսյանը հիմնել է (էջ 156) Անանունի հետևյալ տեղեկության վրա. «Եւ ապա յայնժամ եղև պատերազմ մեծ ի մէջ իսառանու և Ուրհայի, հարկանեն և վանեն զզարն Յունաց. և մեռանի Կարոս ի պատերազմին հանդերձ միով որդւովն Կարիանոսի: Եւ ի նմին ամի թագաւորէ Յունաց Դիոկղետիանոս»: Այս հատվածը վկայակոչելուց հետո նա կրկնել է Մակ-Դերմոտի կարծիքը, որի համաձայն Անանունը իբր Վալերիանոսին շփոթել է Կարոսի հետ (հմմտ. B. Mac Dermot, The Conversion of Armenia in 294 A. D., Revue des Etudes Arméniennes, N. S., VII, 1970, էջ 347—348): «Ինչպես տեսնում ենք,—կրկնում է Մարտիրոսյանը,—Կարոսը շփոթված է Վալերիանոսի հետ և 20—25 տարով ետ է գնացել»: Այս եզրակացությունը չի համապատասխանում Անանունից վկայակոչված հատվածին, որը, ի դեպ, պետք է քննվեր իրեն նախորդող տողերի հետ միասին, որովհետև միայն նախորդ տողերից է պարզվում, թե Անանունը ժամանակագրական ինչ չափանիշ է ունեցել: Վկայակոչված հատվածում հանդիպում է «ի նմին ամի» արտահայտությունը, որի արժեքը տվյալ հատվածում հայտնի չէ և պարզվում է միայն նախորդ տողերում. «Յամին ԽԸ(=48)-երորդի խոսքովայ, ԺԸ(=18) Արտաշիր, մինչ արքայ խոսքով ի Միշաբեսու էր, Կարոս կայսր գումարէ ամբոխ զարաց բազմաց, և դիմէ ի վերայ արքային խոսքովայ»:

Ինչպես տեսնում ենք, Անանունն «ի նմին ամի» ասելով հասկացել է հայոց խոսքովի 48-րդ և պարսից Արտաշիր Սասանյանի 18-րդ տարին: Եթե խոսքովի գահակալման առաջին տարին վիճելի է\*, ապա Արտաշիր տարին ժամանակակից գիտության կողմից ընդունված է 226/227 թթ., հետևաբար նրա 18-րդ տարին կլինի 244/245 թ.: Այսպիսով, եթե ժամանակակից գիտության տվյալները զուգակցենք Անանունի տվյալների հետ, կստացվի այնպես, որ Կարոսն սպանվել է ոչ թե իր իրական սպանության թվականից (283 թ.) 20—25 տարի առաջ, ինչպես կարծել է Մակ-Դերմոտը և նրա հետևողությանը՝ Մարտիրոսյանը, այլ՝ 40 տարի առաջ: Հետևաբար, Կարոսի և Վալերիանոսի շփոթի մասին խոսք լինել չի կարող: Իսկ սա իր հերթին նշանակում է, որ ճիշտ չէ Մարտիրոսյանի նաև այն կարծիքը, թե «Դիոկղետիանոսը... համաձայն Անանունի գահակալել է 261 թ., ինչպես բուն Սեբեոսի մոտ ուղղակի հաշվով»\*:

Անանունի մոտ և «Սեբեոսի Պատմությունում» Մարտիրոսյանն ստացել է միևնույն 261 թվականը, որովհետև Անանունից իր վկայակոչած հատվածի ժամանակագրությունը որոշելու համար հիմք է ընդունել ոչ թե հատվածում իսկապես նշված ժամանակագրությունը (Արտաշիրի և խոսքովի տարիները), այլ մեր օրերի գիտության կողմից ընդունված՝ Կարոսի սպանության իրական թվականը, որի մասին, սակայն, Անանունի հատվածում խոսք չկա:

Անանունը իրականում համոզված է եղել, որ Կարոսն սպանվել է խոսքովի զորավար Կոռնակի ձեռքով և որ դա տեղի է ունեցել խոսքովի թագավորության 48-րդ տարում: Այս համոզմունքը գոյացել է Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» հայերեն թարգմանության և Կոռնակի մասին գոյություն ունեցած բուն հայկական ավանդության զուգակցությունից: Ըստ

\* Մակ-Դերմոտի (էջ 348) հավաստմամբ խոսքով անունն այսպեղ ունի տիտղոսի նշանակություն, ինչպես Ցեզար անունը հռոմեական շրջանում և Արշակ անունը պարթևների մոտ: Սասանյան թագավորության վերջին շրջանում թագավորներին կոչել են «խոսքով» և հայերեն էլ իբրև այդ անունը ընկալել են Վահրամ երկրորդի փոխարեն:

Հայաստանում խոսքովի անունը որպես թագավորական տիտղոս ընկալված լինելու մասին մի օրինակ տե՛ս Ս. Երևմյան, Մեծ Հայքի թագավորության բաժանումը Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության միջև (244—253 թթ.): «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 82:

\*\* Սույն սխալը կրկնված է նաև Մարտիրոսյանի երկրորդ հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 1, էջ 52—53):

հաշվական ավանդութիան՝ Կոռնակը\* եղել է «սպարապետ մեծին խոսրովու, հարն Տրդատայ Ասեն զման է յերկարեակ զամս կենացն ՃԿ և ունել ի ժամ մահուանն զՏերս և զաշս և զլսելիս և զառուրովինն մանկութեանն» (ՍԵՊ, էջ 14—15): Այս ավանդությունն իմանալով, մյուս կողմից էլ Եվսեբիոս Կեսարացու հայերեն թարգմանությունում (հատ. Բ, էջ 302) կարգավով, որ Կարոսն սպանվել է «ի Կոռնակայ պատերազմին»\*\*, Անանունը երկու տեղեկությունները միացրել է և Կարոսի սպանությունը հիշատակել է խոսրով թագավորի զորավար Կոռնակի օրոք: Նրան Եվսեբիոսից հայտնի է եղել նաև, որ Կարոսը զոհվել է Միջագետքում («ի Կարայ վախճանելն ի Միջագետս»), սրա հիման վրա նա գրել է, որ հայոց խոսրով թագավորը զոհվում էր Միջագետքում, երբ Կարոսը զորք է հավաքում և գալիս է Միջագետք, որտեղ լինում է «պատերազմ մեծ ի մէջ խառանու և Ուրհայի»:

Այս երկու վայրերի անունները Եվսեբիոսի հայերեն և ասորերեն թարգմանություններում չկան, բայց Անանունին քաջ հայտնի է եղել, որ հունաց զորքերը Միջագետքում բազմիցս պատերազմներ են մղել խառանի և Ուրհայի միջև: Բացի խոսրովի և Կարոսի պատերազմից, Անանունը միևնույն վայրերում է նշում նաև Գալիանոսի պատերազմը («Գալիանոս... տայ պատերազմ ընդ Շապուհոյ որդոյ Արտաշրի ի Միջագետս ի խառան... յերկիրն Ուրհայո»)։ Միևնույն վայրերում տարբեր ժամանակներում պատերազմներ են մղել նաև Անտոնինոս Կարակալան, Արտաշիր Սասանյանը, Օղենատոսը, Գալբերիոսը և այլք:

Այսպիսով, խառանը և Ուրհան պատերազմի թատերաբեմ են եղել ամենատարբեր ժամանակներում և ամենատարբեր մարզկանց կողմից: Հետևաբար, միայն այդ երկու տեղանունների հիշատակության հիման վրա հնարավոր չէ որոշել, թե այդ վայրերում եղած պատերազմները ո՞վ է վարել և երբ: Այնինչ՝ Մարտիրոսյանը (էջ 156) Անանունի մոտ միայն այդ վայրերի անուններին հանդիպելով՝ կարծել է, թե դա ապացույց է այն քանի, որ Անանունը շփոթմամբ ակնարկել է արձանագրության մեջ հիշատակվող պատերազմը: Նա գրում է. «արձանագրության մեջ սոված է, որ Շապուհոյ պարտութեան մատնեց Վալերիանոսի կողմից առաջնորդվող հռոմեական զորքերին խառանի և Ուրհայի մոտ: Հենց նույնն է Անանունի ժամանակագրության մեջ»: Սրան հակառակ, Անանունը պարզ գրել է, որ ինքը նկատի ունի Կարոսի և Կոռնակի միջև մղված պատերազմը: Ոչ մի խոսք չկա արձանագրության մեջ հիշատակված Շապուհոյի և Վալերիանոսի մասին:

574. «Ի քաղէն Թլուփիլէ ի մեծ ճարտարապետէն սկսեալ»: Թէոփիլեն քրիստոնեական եկեղեցու ամենաշնամվոր ճարապետներից է, որը հիշատակվում է նաև Ղուկասի ավետարանում (Ա, 3): Սպասելի է, որ Դավանության թղթում նա կոչված լիներ ոչ թե ճարտարապետ, այլ՝ հայրապետ: Մեր Մատենադարանի՝ Երեցյանի արխիվում պահվող հատվածական ընդօրինակության մեջ (էջ 13 ա) նա այդպես էլ կոչված է: Այս ընդօրինակության հիման վրա կարելի կլիներ «ճարտարապետ» բառը սրբագրել «հայրապետ» բառով, եթե համոզված լինեինք, որ Դավանության թղթի հեղինակները Թեոփիլիեն փոխաբերական մտքով կամ մեծարելու համար են կոչել «մեծ ճարտարապետ», որը կնշանակեր մեծ վարպետ, եկեղեցու (եկեղեցական գործերի) շինության մեծ ճարտարապետ: Սեբեոսի Պատմության բոլոր թարգմանիչները բառը թարգմանել են «ճարտարապետ» բառի իմաստով (ՍԵՊ, էջ 145, ՄԱԿ, էջ 125, ՄԱՄԿ, էջ 111):

575. «Արուեստաւոր քաղաքացն եղիպտացոց և Աղեփանդացոց և Հռոմայեցոց և Կաստանդուպայսեցոց և Անտիոքացոց և Կեսարացոց և Արենացոց և Կիլիկիցոց»: Այս հատվածում հանդիպող «արուեստաւոր» բառի կապակցությամբ Ն. Աղոսը ծանոթագրում է. «Այստեղ արուեստաւոր բառը համապատասխանում է հույն τεχνικός τεχνιη, և նշանակում է գիտական: Այսպես է կոչում մեր պատմագիրն այն քաղաքները, ուր բարձրագույն դպրոցներ կային և հայտնի էին իրենց հռչակով» (Ն. Աղոս, Հայ գիտական դեմքեր Բյուզանդիայում: Տպված՝ «Պատմական ուսումնասիրություններ» ժողովածուում, լույս ընծայեց Ա. Խոնդկարյան, 1948, էջ 501):

\* Սամվել Անեցու ժամանակագրության մի քանի ձեռագրեր, սրանց թվում նաև հնագույն ձեռագիրը, «Կոռնակ»-ի փոխարեն ունեն «Մամիկոնյան սպարապետական տան համար ավելի սպասելի Կոռնակ անունը» (Աբգարյան, Կոռնակ սպարապետի ավանդությունը, ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 1, էջ 81):

\*\* Կարոսին Կոռնակի ժամանակակից են համարում նաև Եվսեբիոսի ասորի թարգմանիչը (Eusebi Chronicorum canonum, ed. A. Schoene, Berolini, 1866, էջ 218), Խորենացին, Անանունը, Երեմյանցուն վերագրված ժամանակագրությունը, Սամվել Անեցին:

576. «Նւ միանգամայն բեղհանուր ամենայն վարդապետաց եկեղեցւոյ... յաուրս Մարկիանոսի ի ձեռն տուարիքն Առնի. Թէդոզրիտոս գրովս Քաղկեդոնի ժողովոյն, զոր այն հաստատեաց շարափառութեամբ»: Բազմակետերին նախորդող «եկեղեցւոյ» և հաջորդող «յաուրս» բառերի միջև ենթացած է կորուստ, որի հետևանքով էլ բնագիրը հասկանալի չէ:

Ն. Ակինյանը առաջարկել է բազմակետերով նշված տեղում ղետեղել Դավանութեան թղթի մի մեծ հատված, սկսած «Մեք ընկալաք ի սրբոյն Գրիգորէ» խոսքերից մինչև «և ոչ միութիւն բնութեամբ՝ նզովեալ լիցի» բառերը: Սակայն, ինչպես Մալխասյանցն է գրում, «այսպիսի տեղափոխութեամբ էլ բնագիրը ոչ մի չափով չէ ուղղվում» (ՍԵՊ, էջ 195, ծ. 68):

Մենք կառաջարկեինք Ակինյանի նշած հատվածը ղետեղել ոչ թե բազմակետերի տեղում, այլ անմիջապես «Նիկիական ժողովի հանգանակի» տեքստից հետո, որովհետև այդ Հանգանակին է վերաբերում «Մեք ընկալաք ի սրբոյն Գրիգորէ» խոսքը: Այժմ Հանգանակին հաջորդում է 572-րդ ծանոթագրութեան մեջ մեր ցույց տված այն օտար հատվածը, որը պետք է դուրս հանվի «Սեբեոսի Պատմութեան» կազմից: Ահա, այդ հատվածի փոխարեն պետք է ղետեղել «Մեք ընկալաք ի սրբոյն Գրիգորէ» բառերով սկսվող ամբողջ հատվածը, որից հետո կհաջորդի Դավանութեան թղթի վերջին պարբերությունը. «Իսկ մեք որպէս ընկալաք զհրամանս երկնաբաղաբացի» (և այլն):

577. «Նւ մեզ մի լիցի պարծել բայց միայն ի խաչն տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Գաղաթագիտների թղթից (Ձ, 14) բաղված այս բառերով սկսվող մոտ երկու էջանոց հատվածը, մինչև «ի բաց կաց կացք յինէն ամենեքեան» ոչ գործէք զանարկեութիւն» բառերը ներառյալ, ամբողջութեամբ, որպես առանձին միավոր գտնում ենք ընթրիհանկում Հայկական ամենահին (981 թ.) թղթյա ձեռագիր ժողովածուում (ՄՄ, ձ. № 2679, էջ 191ա—192ա):

Գ. Տեր-Մկրտչյանը («Ստեփանոս Իմաստասէր», արտատպ. 1902 թ. «Արարատի» մարտապրիլ համարներից, Վաղարշապատ, 1902, էջ 35) գրում է. «107 (այժմ՝ № 2679—Գ. Ա.) ձեռագրում հետևում է ձՂԸ հատվածը... որ մի կտոր է Դվինում գրված Հաւատոյ նամակից»: Ինչպես տեսնում ենք, Գ. Տեր-Մկրտչյանը չի կասկածել հատվածի՝ Դավանութեան թղթի մասը լինելու մեջ: Սակայն հատվածը № 2679 ձեռագրում արտագրված լինելով անմիջապես Ստեփանոս Իմաստասերի «Վասն ապականութեան մարմնոյ» (տպված «Արարատ», 1902, մարտապրիլ) երկից հետո և նրանից անշատված չլինելով ոչ մի վերնագրով կամ նոր հեղինակի անվամբ, կարող է դարձյալ Ստեփանոս Սյունեցու գրածի տպավորություն թողնել, մանավանդ, որ հատվածի բովանդակությունը նույնպես դավանաբանական վեճ է:

Սա կլինի Տամոզի մի տպավորություն, եթե չլինի հատվածում գտնվող հետևյալ խոսքը. «Իսկ վասն տերունեան խորհրդեանն, զոր մեծաւ զգուշութեամբ բաշխեմք՝ այսպիսի ինչ վասն զի ոչ ունիմք ի իշանութիւն զտուրքն յանսուրբսն մատակարարել»: Ինչպես տեսնում ենք, այստեղ պատճառաբանվում է, թե ինչու տերունեան խորհուրդը («հաղորդութիւն մարմնոյ և արեան տեան») ամեն մարդու շին բաժանում («մեծաւ զգուշութեամբ բաշխեմք»): Դժվար չի լինի կուսել, որ պատճառաբանողները Դավանութեան թղթի հեղինակներն իրենք են, որոնք թուղթն ուղղել են Բյուզանդական կայսր Կոստանդինի հենց այն պատճառով, որ Հայաստանում տեղակայված հույն զինվորականները կայսրին գանգատվել էին, թե «ոչ երբէք ընդունէին Հայք զՀռոմն ի հաղորդութիւն մարմնոյ և արեան տեան»: Ահա, նյս գանգատին պատասխանած լինելու համար է, որ Դավանութեան թղթի հեղինակները բացատրում են, թե ինչու նրանք ամեն մարդու (ներկա ղեպքում՝ հույն զինվորներին) թույլ չեն տալիս մտնել եկեղեցի և հաղորդվել Քրիստոսի մարմնին ու արյանը:

Դավանութեան թղթի այս մասը կարևոր պատմական փաստաթղթի նշանակություն է ստանում այն պատճառով, որ պատմությունը հայտնի է դարձնում բյուզանդական զինվորականների միջավայրում տիրած խորթ բարբերի մասին: Սա այնպիսի չափերի է հասել, որ Դավանութեան թղթի հեղինակները շին քաշվել բյուզանդական կայսրին ուղղված նամակում հույն զինվորականների կապակցությամբ (առանց նրանց անունը տալու) գործածել «շուն», «պղոնկութիւն» և այլ խիստ բառեր. «Նւ աստուածայինն բողոքէ ձայն՝ «Մի տուչ զարբութիւն շանց» ...Այլ տեսանեմք զի և կարի իսկ ի հինսն և յառաջին փիլիսոփայան պիղծ և զարշելի համարեալ էր զպղոնկութիւն»:

«Վասն զի ունիմք մեք կանոնս համաշխարհականս վասն կարգաց և արինաց արանց և կանանց. զի որք կուսութեամբն զուզին՝ համարձակութեամբ վայելեն ի տերունական մարմնոյն... իսկ զերրորդեանսն և զորրորդեանսն ոչ ընդունի եկեղեցի, և ոչ իսկ իշխեն տալ զանուն հաղորդութեանն»:

Քանի որ խոսքն ամուսնութեան մասին է, նշանակում է Դավանութեան թղթի հեղինակ-

ները նկատի են ունեցել հույն գինվորների ընտանիքներում տիրած բարբերը: Եվ որպեսզի այդ բարբերը չթափանցեն նաև Հայաստան, հայ եկեղեցու հայրերը խստագույնս արգելել են այն գինվորների մուտքը եկեղեցի, որոնք մեղանչել են ընտանեկան սրբության առջև:

Դավանության թղթի այս հատվածը № 2679 ձևագրում, երեք տարբեր տեղերում, ունի այնպիսի լրացումներ, որոնք չեն պահպանվել «Սեբեոսի Պատմության» բուն ձևագրերում և բացակայում են նաև նախորդ բոլոր հրատարակություններում: Մենք այդ հատվածները ներմուծում ենք մեր հրատարակության համապատասխան տեղերում: Այս ձևագրի հիման վրա կատարում ենք նաև այլ սրբագրություններ: Սակայն ընդհանուր առմամբ № 2679 ձևագրում ընդօրինակված հատվածը բնագրական ճշգրտությամբ չդիչում է մինչ այժմ հայտնի եղած բնագրին: Ամեն քայլափոխի հանդիպում են այնպիսի փոփոխություններ, որոնք գիտական կարևորություն չեն ներկայացնում և անտեղի կծանրաբեռնեին տողատակային ծանոթագրությունների բաժինը, ուստի մենք այդ տարբերությունները չենք բերում (բացի կարևորներից) տողատակին:

Սակայն նկատի ունենալով, որ հատվածը գտնվում է հայկական ամենահին թղթյա ձևագրում և շուրջ 700 տարով ավելի հին է, քան «Սեբեոսի Պատմությունը» պարունակող մեզ հասած հնագույն ձևագիրը (№ 2639), հարմար ենք համարում այն նույնությամբ զետեղել սույն ծանոթագրության մեջ, ցույց տալու համար հին ու նոր ընդօրինակությունների փոխհարաբերությունը:

«Այլ մեզ մի՛ լիցի պարծիլ բայց միայն ի խաչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Նաև Դավիթ իսկ պարծի ի խաչ որդոյն աստուծոյ՝ իւրոյ. և ոչ անարգանս համարեցաւ աստուծութեանն, այլ երբեմն կառք աստուծոյ ասաց, երբեմն լեառն Սին[եայ, եւ երբեմն] բարձրութիւնք երկնից: Քանզի ասէ. «Կառք աստուծոյ միապատիկ Ռ ուղիչք եւ տէր ի նոսա ի Սինէ սրբութեան || եւ ի բարձունս գերել զգերութիւն» եւ զայն ևս: Կառք աստուծոյ բիրապատիկ (այստեղ ունի № 2639-ի հետեկալ բառերը. «հազար ուղիչք, և տէր ի նոսա»—Գ. Ա.) զբիրապատիկ զարութիւնն եւ զփառս խաչին Քրիստոսի, որ բարձեալ ի վեր ունէր զարարիչն երկնի եւ երկրի: Եւ հազարք ի Հրէիցն առ կանգնեցին զնա: «Եւ տէր ի նոսա ի Սինէ սրբութեան» Յո՞վ արգեաւք՝ «ի նոսա»: Յայտ է, երէ ի բարձունսն, յորս որդին աստուծոյ եւ բիրապատիկ զարութիւնս եւ ի փառս խաչին, ուստի զգերութիւնն թափեաց: Եւ վասն այնորիկ մեք ոչ ամաչեմք ասել ցորդին աստուծոյ. «Սաւր աստուծ, սուրբ եւ հզաւր, սուրբ և անմահ սր խաչեցար վասն մեր մարմնով ողորմեայ մեզ»:

Իսկ վասն տէրունական խորհրդոյն, զոր բազում զգուշութեամբ քաշխեմք՝ այսպիսի ինչ է վասն զի ոչ ունիմք իշխանութիւն զուրբն յանսուրբն մատակարարել. այսպիսի հրամանով զի ունիմք մեք կանոնս համաշխարհականս վասն կարգաց եւ արինաց. արանց եւ կանանց. զի որք կուտութեամբն զուզին՝ համարձակ վայելեն զտէրունական մարմինն ըստ այնմ, թէ «Պատուական է ամուսնութիւնն և սուրբ անկողինք»: Իսկ երկրորդականքն (sic) եւ կամ թէ մինն կուսան իցէ եւ միւսն երկրորդական իցէ՝ հրաման է ապաշխարել նրկուցունցն (sic) ի միասին գերկեամբ (№ 2639-ը՝ գերեամ—Գ. Ա.) մի, եւ ապա հաւասարել արինաց: Իսկ զերրորդն կամ զչորրորդականն ոչ ընդունի եկեղեցի, եւ ոչ իսկ իշխեն զանունն հաւելանել զհաղորդութեանն. ըստ այնմ թէ «Որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ դատ[աստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ, զի ոչ խորէ զմարմինն տեառն»] (անկյունավոր փակագծերի մեջ վերցված բառերը սույն ձևագրերը՝ 2679-ը շունի, բայց, ինչպես երևում է, զբիշը պարզապես զիտակցաբար կրճատել է. կիսատ մնացած «դատ.» բառի կողքին նա դրել է կրճատման կետ—Գ. Ա.): Եւ աստուածայինն բողոքէ ձայն՝ «Մի տալ զսրբութիւնն շանց»: Նաև տախտակս քարեղէնս՝ զմի մասն պատգամացն զ«Մի շնարն» իւրով մատամբն գրեաց:

Այլ տեսանեմք զի եւ կարի իսկ ի հինսն եւ յառաջին փիլիսոփայսն պեղծ եւ զարշիլի համարեալ էր զպոռնկութիւնն: Զի Սողոն Աթենացի արէնս եղ արթնացոցն՝ ի բաց կալ ի պոռնկութենէ եւ ոչ ընդունել զպոռնկորդիսն ի ժառանգութիւն: Դիկուրգոս Լակեդոմոնացի արէնս եղ զակեդոմոնացոց ի բաց կալ պոռնկութենէ եւ ոչ թաղել զպոռնկորդիսն:

ԶԹեանովն կին մարդ զաշակերտ Պիլիպպորայի հարցեալ եղև, թէ յետ քանի աւուր մերձավորութեան ի կին մարդ արժան իցէ յարքունիս մտանել: Եւ նա ասէ. «Եւրմէն նոյն արինս. յատարին ոչ բնա»:

\* Ընդգծված բառերը չկան «Սեբեոսի Պատմության» ձևագրերում և նախկին հրատարակություններում (ընդգծել ենք միայն կարևորները):

Իսկ եթէ նոցա այսպէս զողջախոսութիւն համբուրեալ՝ որչափ եւս առաւել մեզ արժան է երկիրդի դառաքելական զհրամանսն կատարել թէ «Փախերուք ի պոռնկութենէ», զի թէպէտ եւ ոչ որ է արդար եւ ոչ մի. այլ ոչ եթէ պարտ իցէ ի ձեռն յանդգնութեան աստուածային մարմինն թշնամանել: Զի՞ ի պեծոն մերձեցի բերան. եւ կամ զիս՞րդ ոչ զողովմն կայցի զճաշակողն ի հուրն կենդանի աներկիրաբար մերձենալ. գոր ոչ սերտիլն իսկ ձեռալին համարձակէր մերձենալ, այլ ունեւեալք, եւ ոչ մարգարէն արժանաւորեալ լինէր ճաշակել զնա, այլ միայն մերձենալով ի շրթունսն նորա՝ անդէն ընգալաւ զմաքրութիւն:

Իսկ արդ արժա՞ն է անսրբոցն եւ պղծոյն յերկրաւորացն յանդգնել յարբունիս || (Նւ կամ ոչ) իսկ թոյլ տացէ նոցա մտանել, եւ կամ թէ ո՞չ հալածական լինալ փախիցէ. այլ մանաւանդ թէ եւ կամիցի եւս յարբունական սեղանոյն վայելել: Ո՞րչափ եւս առաւել յերկնաւոր թագաւորին յարբունիսն ունիցի որ համարձակութիւն մտանել՝ ոչ ունելով զհանդերձ մաքրութեան, եւ աներկիր սրբութեամբ մարիցէ ի հուր կենդանի, և ճաշակեցէ յարբունական (չի՞ք՝ երկնային — Գ. Ա.) սեղանոյն. այլ ոչ տարահալածեալ արտաքս մերժեցի, ըստ այնմ թէ «Ի բացէլ յինէն ամենեքեան, որ գործէք զանարէնութիւն»:

578. «Քիրապատիկ է զաւուրիսն և փառք խաշին Քրիստոսի, որ բարձեալ ի վեր ունէ՞ զարարիչն երկնի և երկրի»: Բոլոր նախկին հրատարակութիւնները «ի վէր ունէր»-ի փոխարէն ունեն «ի վէր ունի»: Սակայն հասկանալի է, որ հեղինակի խոսքն անցյալի մասին է (Քրիստոսի խաշը վեր բարձրածուած ունէր Քրիստոսին), ուրմն, «Սերնոսի Պատմութեան» բնագրում պետք է գրված լինէր ոչ թէ «բարձեալ ի վէր ունի», այլ «ունէր»: Հենվելով № 2679 ձեռագրի վրա, մենք բնագիրը սրբագրել ենք ըստ ասվածի:

579. «Նւ տէր ի նոսա ի Սինէ սրբութեան»: Յո՞յս արդեալ «ի նոսա»: Այստեղ Դավանութեան թղթի հեղինակները բերել են նախ Սաղմոսի (ԿԸ, 18, 19) արտահայտությունը («Նւ տէր ի նոսա ի Սինէ սրբութեան») և մեկնաբանելու համար իրենք հարց են առաջադրել, թե այդ արտահայտության մեջ ի՞նչ է նշանակում «ի նոսա» («Յո՞յս արդեալք «ի նոսա»):

Բոլոր ձեռագրերը և Միհրդատյանի ու Պատկանյանի հրատարակությունները այ՞ոյս-ի փոխարեն ունեն «յոյսք»: Մալխասյանցը սա քերականական սխալ համարելով, ուղղել է «յոյս», որին և հետևել ենք մենք:

«Յո՞յս արդեալք «ի նոսա» արտահայտությունն ամենից ճիշտ է վերծանել Պատկանյանը (Патк., էջ 146). «В ком же в них». Հաջող չէ Մալխասյանցի (Малх., էջ 111) թարգմանությունը. «с кем именно»: Հայերեն բնագիրը նման բան չունի: Այնտեղ ասված է այն, ինչ թարգմանել է Պատկանյանը: Բոլորովին սխալ է թարգմանել Մակելը (MacI., էջ 125) «Y aurait-il quelque espoir pour eux» («Կլինի՞ արդյոք որևէ հույս նրանց համար»): Իրականում Դավանութեան թղթի բննաբովոզ հատվածում գործածված «յոյս»-ը ոչ թե «հույս» բառն է, այլ՝ «ո՞վ» հարցական դերանվան հոգնակի թվի, հայցական հոլովի («զոյս») և «ի» («յ») նախդրի միացումը («զ» նախդրի անկմամբ), որը ներկա դեպքում արտահայտում է ներդոյական հոլովի իմաստ և նշանակում է «ո՞ւմ մեջ»: Արտաքին տեսքով նույնանալով «յոյս» («հույս») բառի հետ, շփոթեցրել է Մակելին:

580. «Նթէ ի բարձունսն յորս էլ որդին աստուծոյ»: Սույն բառերը բացակայում են բոլոր ձեռագրերում և նախորդ հրատարակություններում: Մենք վերականգնել ենք, քաղելով Մաշտոցի անվան Մատենադարանի № 2679 ձեռագրում պահպանված հատվածական ընդօրինակությունից, որի մեջ սրբագրել ենք. «յորս» (ձեռագրում «յոր») բառը:

581. «Սուրբ աստուծո՞ւ, սուրբ և հզար»: Սույն բառերը բացակայում են բոլոր ձեռագրերում և նախորդ հրատարակություններում: Մենք վերականգնել ենք, քաղելով ՄՄ № 2679 ձեռագրում (981 թ.) պահպանված հատվածական ընդօրինակությունից:

582. «Ռատասաւն աննին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խառէ զմարմինն տեառն»: № 2679 ձեռագիրը չունի այս ամբողջ հատվածը (բացի «դատաստան» բառի «դատ» մասնիկից): Բայց գրիչը կրճատել է գիտակցաբար և կիսատ մնացած «դատ.» մասնիկի կողքին դրել է կրճատման կետ:

583. «ԶԹէանով ոմն զկին մարդ զաշակեաւ Պիրպզորայ հարցեալ Եղև»: Միհրդատյանի ձեռագիրն ունեցել է Աթէանով (փխ. գթէանով) և Միհրդատյանն այդպես էլ տպել է: Նրան հետևել է նաև Պատկանյանը, չնայած նրա ձեռագիրն ունեցել է՝ «զթէանով»: Այս ճիշտ ձևը գտնում ենք № 2639 ձեռագրում, որի հիման վրա Մալխասյանցը սրբագրել է բնագիրը: Բառագրությունները (Über das Buch «Die Chriev», 1886, էջ 465) անունը սրբագրել է իր գերմաներեն ուսումնասիրությունում, իսկ Զամիկյանը (Զամ., էջ 215) բնագրի մեջ:



Մալխասյանցը (Մալխ., էջ 174, ծ. 136) բացատրիկ դրական նշանակություն է վերագրել Քեանովի անվան հիշատակությանը: Այս անունը «Սեբեոսի Պատմությունից» առաջ հիշատակված լինելով Պիտոյից գրքի հայերեն թարգմանության մեջ, ցույց է տալիս, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակը ծանոթ է եղել Պիտոյից գրքին: Իսկ սա իր հերթին նշանակում է, որ նա ծանոթ է եղել Մովսես Խորենացուն, որովհետև Պիտոյից գրքի թարգմանիչը Խորենացին է: Եվ քանի որ որոշ մասնագետներ հակում են ունեցել Խորենացուն տեղաշարժելու V դարից դեպի նույնիսկ մինչև IX դար, ապա Պիտոյից գրքի հետքերը «Սեբեոսի Պատմության» մեջ ապացուցում են, որ Խորենացին ապրել է «Սեբեոսի Պատմության» հեղինակից առաջ, այսինքն VII դարից առաջ: Սա է Մալխասյանցի վերլուծությունը:

Առանց Խորենացու ժամանակի հարցը շոշափելու, սակայն պետք է ասենք, որ «Պիտոյից գրքում» և «Սեբեոսի Պատմության» մեջ պահպանված կտորներն ունեն այնպիսի տարբերություններ\*, որոնք կարող են նաև առիթ տալ մտածելու, թե դրանք միմյանց հետ կապ չունեն:

Պիտոյից գիրք

(Մատենագրութ. Մ. Խորենացույ, Վենետիկ, 1865, էջ 352)

Պատմութիւն Սեբեոսի

Զբօնով ոմն պիթագորական եհարց, էթէ յետ քանի ատուց կնոջ առ այր մերձատուութեան արժան է մտանել ի տերուհիսն. և նա ասէ. յիւրմէ՛ն՝ նոյն օրին, յօտարէ՛ն՝ և ոչ բնաւ երբէք՛:

Զբօնով ոմն զկին մարդ գաշակերտ Պիթագորայ հարցեալ եղև, թէ յետ քանի ատու մերձատուութեանն ի կին մարդ արժան է յարբունիս մտանել: Եւ նա ասէ. «յիւրմէն նոյն արին, յատարէն և ոչ բնաւ»:

Ինչպես տեսնում ենք, Պիտոյից գրքում կինն է սրբատեղի մտնողը, իսկ «Սեբեոսի Պատմությունում»՝ տղամարդը, Պիտոյից գրքում մտնում են «ի տերունիսն», իսկ «Սեբեոսի Պատմությունում»՝ «յարբունիս»: Պիտոյից գրքի պատումը պատկանում է Քեոն Աղեքսանդրացու (Theonis Progymnasmata, Armeniaca et graeca, ed. Pr. Dr. A. Manandian, Erevani, 1938, էջ 37) պատումի շարքին, որի նմանք գտնում ենք նաև 1280 թ. ընդօրինակված մի ձեռագրում (ՄՄ, ձ. № 5254, էջ 181բ): Իսկ «Սեբեոսի Պատմությունն» առանձին դիրք է գրավում:

584. «Յետ քանի՞ ատու մերձատուութեանն ի կին մարդ արժան է յարբունիս մտանել»: 2. Տաշյանը («Մատենագրական հետազոտություններ», Վիեննա, 1895, էջ 215), Ն. Ակինյանը («2. ամս.», 1934, էջ 205) «յարբունիս» բառը համարել են աղճատված: Նրանց կարծիքով՝ այդ բառի փոխարեն նախնական բնագրում եղել է «սրբատեղի» կամ այդ նշանակությունն ունեցող մի այլ բառ\*\*։ Գրեթե նույն կարծիքն է հայտնել նաև Ա. Բաումգարտները (Über das Buch „Die chrie“, ZDMG, Leipzig, 1886, III, էջ 466): Սակայն մեր Մատենադարանի № 350, 4149 և այլ ձեռագրերում գտնում ենք հունարենից հայերենին անցած փոխառյալ բառերի մի միջնադարյան բառարան, որտեղ հունարեն θεσμοφορεῖον բառը բացատրված է այսպես. «թեսմոփորոն = արբունիք կամ եկեղեցի»:

Թարգմանիչները երբեմն էլ բառը չեն թարգմանել, այլ ենթարկել են տառադարձության. «Քեանով պիթագորական հարցեալ յունեմէն. քանարեայ կին մարդուր յառնէ ի թեսմոփորոնն իջանէ. ասաց՝ յիւրմէն նոյնժամայն, յատարէն և ոչ երբեք» (ՄՄ, ձ. № 5254, էջ 181բ): Ավելի մանրամասն տես մեր աշխատությունը («Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը», էջ 192—193, որտեղ, ի դեպ, սպրդել է θεσμοφορεῖον (փխ. θεσμοφορεῖον) տպագրական վրիպակը (էջ 193, 252):

585. «Եւ նա ասէ. «յիւրմէն նոյն արին և յատարէն և ոչ բնաւ»: Բոլոր ձեռագրերը, Միհրդատյանը և Պատկանյանն ունեն «յիւրմէն արէն է»: Մալխասյանցը սրբագրել է «յուրմէն նոյն արին», հենվելով Պիտոյից գրքի վրա («Մատենագրութիւնք Մ. Խորենացույ», Վենետիկ,

\* Քեանովի հատվածը ձեռագրերում ընդօրինակված ենք գտնում նաև առանձին, որպես Բանք իմաստասիրացի շարքին պատկանող խոսք: Հնարավոր է, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակն օգտված լիներ այդպիսի մի ընդօրինակությունից և ոչ «Պիտոյից գրքից»: Բացառված չէ նաև այն հնարավորությունը, որ հատվածը «Սեբեոսի Պատմության» մեջ ներմուծվել է հետագայում:

\*\* ՄՄ № 1740 ձեռագրում (էջ 440ա) «յարբունիս»-ի փոխարեն կարդում ենք «ի տուն կողոց», այսպես. «Զթէ՛ոնաս ոմն կին՝ կին պիթագորական հարցեալ, թէ յետ քանի՞ ատու մտցն ի տուն կողոց՝ այր, որ լինի ընդ կնոջ: Ասէ՛ յիւրն նոյն օրին և յօտարին ոչ բնաւ»: 22—417

1865, էջ 352): Այս ճիշտ սրբագրությունը մենք հաստատել ենք № 2679 ձեռագրի միջոցով, որի մեջ պահպանվել են Մալխասյանցի կառահած բառերը:

586. «Զոր ոչ Սերովբէն իսկ ձեռագին համարձակէր մերձեցալ»: Սույն բառերը բացակայում են բոլոր ձեռագրերում և նախորդ հրատարակություններում: Մենք վերականգնել ենք, բաղնիով ՄՄ № 2679 ձեռագրում (971 թ.) պահպանված հատվածական ընդօրինակությունից:

Վերականգնված հատվածի բացակայությունը «Սեբեոսի Պատմության» մեզ հասած բնագրում առիթ է տվել զանազան ենթադրությունների: Ստ. Մալխասյանցը այդ առիթով գրում է. «Այստեղ նորից աղավաղված է խոսքը: Թվում է, թե այլ ունելեալ պետք է տեղափոխել մի տող ներքև և կարգաւ. զհա՛րդ դողումն ոչ կալաւ զճաշկողն՝ ի հացն կենդանի աներկիւղաբա՛ր մերձեցալ. և ոչ մարգարէն արժանաւոր լինէր հաշակել զճա, այլ ունելեալ միայն մերձեցալ ի շրթունս նորա անդէմ ընկալաւ զմահութիւն: Ակնարկություն է ծայրի մարգարեի տեսլանս: Ես. 2, 6—7: Պատկանյանը այսպես է թարգմանել այս հատվածը (եր. 147) «И пророк не удостоился взглянуть его сам-шпицами, но приблизив губы свои получил ощущение», որից ոչինչ չի հասկացվում» (ՍԵՊ, էջ 165):

587. «Մեք ընկալաք ի սրբոյն Գրիգորէ և յաստուածաւտը թագաւորացն՝ ի Կոստանդինուէ և ի Տրդատայ»: Այս բառերով սկսվող հատվածը, մինչև «փառաւոր անիցեն զհայր ձեր որ յերկինս է» բառերը ներառյալ, պետք է տեղափոխել «Հանգանակ Նիկիական ժողովոյն» կոչվող փաստաթղթի վերջը և զետեղել նրա վերջին նախադասությունից («այժմ և՛ միշտ և յափտեանս յափտենից. ամէն») հետո:

«Մեք ընկալաք ի սրբոյն Գրիգորէ» արտահայտությունը հենց Նիկիական ժողովի բանաձևն ընկալելու մասին է: Սա հաստատվում է Դավանության թղթում գտնվող նաև հետևյալ արտահայտությամբ. «Որպէս ընկալաք մեք ի սուրբ առաքելոցն ի ձեռն հայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի վարդապետելով զՏրդատ» (և այլն):

Բննարկվող արտահայտությունն իր ներկա տեղին չի հարմարվում, նրան անմիջապես նախորդում են ամուսնությանը, բարոյականությանը վերաբերող մտքերն այն մասին, թե «արժան իցէ անսրբոցն և պղծոցն յերկրաւորացս յանդգնել յարքունիս», ապա բացասական պատասխան է տրվում «ըստ այնմ, թէ «ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ ոչք զործէք զանաւրէնութիւն»: Սրանից անմիջապես հետո կարդում ենք. «Մեք ընկալաք ի սրբոյն Գրիգորէ», որը ոչ մի կերպ չի կասկածում նախորդի հետ:

Մենք հատվածը կտեղափոխեինք և կզետեղեինք Նիկիայի ժողովի հանգանակից հետո, եթե զետեղվելիք տեղն այժմ զբաղեցրած շիններ «եւ ապա կոչեցան ի Հռովմ և յանդիման եղեն Կոստանդինուսի արքայի» բառերով սկսվող հատվածը (մինչև «Թլոգորիսս գլուխ Քաղկեդոնի ժողովոյն, զոր նայն հաստատեաց շարափառութեամբ» բառերը ներառյալ), որը, ինչպես նախորդ ծանոթագրություններում ասվեց, պատահաբար է հայտնվել «Սեբեոսի Պատմության» կազմում: Այս հատվածը պետք է դուրս գա Պատմությունից և իր տեղը զիջի «Մեք ընկալաք ի սրբոյն Գրիգորէ» բառերով սկսվող հատվածին: Բայց բանի սր Պատմությունից հանվելուց հետո հատվածը որևէ այլ տեղ զետեղել չենք կարող, թողնում ենք նույն տեղում, իբրև այլ վիճակում մեզ հասած զբավոր մի հուշարձանի բեկոր:

588. «Սուրբ և ճշմարիտ ասացեալ է զժողովն որ ի Կոստանդնուպոլիս ժողովեցան ի յափաննումն Նեստորի»: Այս բառերից հետո, մինչև դիսի վերջը, Ք. Պատկանյանը (ՍԵՊ, էջ 148) չի թարգմանել, պատճառաբանելով այսպես. «Այս գլխի վերջը պարունակում է դավանաբանական բացատրություններ և եկեղեցական ժողովների սահմանումներ: Մեր թարգմանության մեջ դա բաց ենք թողնում, որովհետև շատ տեղերի մոթ իմաստն ավելի է մթազրնվում աղճատումների և ուշ ժամանակների ներմուծումների պատճառով: Ցանկացողը կարող է գտնել հայերեն բնագրի 208—210 էջերում (Միհրդատյանի հրատարակություն—Գ. Ա.)»:

2. Հյուբշմանը (Hübsch., էջ 27—28) չի թարգմանել առհասարակ ամբողջ Դավանության թողթը և բավարարվել է միայն նրա բովանդակությունը շատ հակիրճ վերապատմելով: Թողթը լրիվ թարգմանել են Մակլերը և Մալխասյանցը:

589. «Ասացին զմի տէր Յիսուսի Քրիստոս՝ յերկուց բնութեանց ոչ ինչ բարձեալ բնութեանցն զանազանութիւն, վասն միանալոյն առանկ ողջախոնել զաւրոսիւն երկախանչիւր բնութեանց, և զերկախանչիւրսն ի մի մի դէմս միաւորեալ՝ ոչ աստուածային բնութեանն տալ զմարդկային բնութեանն նուաստութիւն, և ոչ մարդկային բնութեանն՝ զաստուածային բնութեանն երկախել: Ինչպէս նախորդ ծանոթագրության մեջ ասվեց, Դավանության թղթի այս հատվածն այնքան խրթին է, որ Պատկանյանը չի թարգմանել: Մակլերն ու Մալխասյանցն էլ թարգմանել են մոտավոր ճշտությամբ: Մալխասյանցը գրում է: «Ոչ ինչ բարձեալ—երկաքան-

չիր բնութեանց» արտահայտությունը լրիվ հասկանալի չէ, մենք այն թարգմանել ենք կոահ-  
ւամբ, մոտավոր ճշգրտությամբ» (Մալք., էջ 175, ծ. 188):

Մենք հատվածը վերծանում ենք հետևյալ բովանդակությամբ:

Առաջին. նեստորականները ասում են, թե Քրիստոսն ունի երկու բնություն՝ չվերացնելով  
այդ բնությունների տարբերությունը: Այսինքն, նրանք Քրիստոսի մարդկային բնությունը թող-  
նում են որպես սովորական մարդու բնություն, այնինչ, ինչպես հայանվում է մի քանի տող  
հետո, Քրիստոսի մարմինը «չէր լիվ մարդկային մարմինն, այլ՝ աստուածութիւնն էր ի մար-  
մինն»:

Երկրորդ. նեստորականներն ասում են, որ Քրիստոսի մեջ երկու բնության միավորելու  
հետևանքով ավելի են ընդգծվել ու զորացել այդ երկու բնությունները առանձին-առանձին:  
Նրան հակառակ, Դավանության թղթի հեղինակներն այն կարծիքին են, որ Քրիստոսի մեջ  
երկու բնության միավորմամբ Քրիստոսի ամբողջությունը ավելի է զորացել, մի ամբողջության  
մեջ միավորվել են երկու մեծ ուժեր:

Երրորդ. նեստորականները դարձյալ ասում են, որ երկու բնություններից յուրաքան-  
չյուրն ինքնին իր մեջ միավորվելով անհաղորդ են դառնում միմյանց, նրանք ո՛չ աստվածային  
բնությունն են հաղորդում մարդկային բնություն հատկանիշներ, ո՛չ էլ մարդկային բնությանը  
հաղորդում են Աստվածային բնության ճոխությունը:

Մեր այս վերծանության համաձայն, բնագիրը թարգմանում ենք այսպես. «Ասացին  
(նեստորականները—Գ. Ս.), թե միասնական տեր Հիսուս Քրիստոսը երկու բնություն ունի,  
բոլորովին չվերացնելով բնությունների զանազանությունը, (ասացին, թե) միանալու պատ-  
ճառով ավելի է իմաստավորվել բնություններից ամեն մեկի զորությունը, և (ասացին, թե)  
յուրաքանչյուրը մեկական կերպի մեջ միավորվելով՝ ոչ աստվածային բնությանն են տալիս  
(բնագրի «տալ» բառը թերևս պետք էր սրբագրել «տան»—Գ. Ս.) մարդկային բնության խո-  
նարհությունը, ո՛չ էլ մարդկային բնությանն են տալիս աստվածային բնության ճոխությունը»:

590. «Քաջ յարանց արեայ Կոստանդին»: Բոլոր ձեռագրերն ու սպագիրներն ունեն «ա-  
րանց» Ուղղել ենք «յարանց»: Վրիպակը չնկատելով թարգմանիչները թարգմանել են  
„Царь мужей храбрых, Константин“ (Սառ., էջ 148), „d vaillant roi Konstantin“ (Մալք.,  
էջ 129), „О доблестный царь Константин“ (Մալք., 114): Ինչպես տեսնում ենք, Պատ-  
կանյանի թարգմանության համաձայն ստացվել է այնպես, թե Կոնստանտինը քաջ սը-  
ղամարդկանց թագավորն է, իսկ մյուս երկու թարգմանիչներն էլ թարգմանել են ոչ թե  
«քաջ արանց արքայ», այլ՝ միայն «քաջ արքայ» արտահայտությունը, այսինքն՝ կրճա-  
տել են «արանց» բառը: Բոլոր երեք թարգմանություններն էլ պերճախոս վկայություն  
են այն մասին, որ բնագիրն աղճատված է:

Մեր սրբագրությունից հետո այն կանոնավորվում է այսպես. «քաջ յարանց», այսինքն՝  
տղամարդկանց մեջ քաջ, ընտիր (խիզախ, քաջագույն) տղամարդ: Հունարեն համարժեքը  
կլինի «αγαλός τῶν ἀνδρῶν»:

591. «Իսկ Սեկ..., հաջ յարանց արեայ Կոստանդին, լաագոյն համարեցաք զսահմանա-  
դրութիւնն ուղղափառ փառատայն, գոր ընկալաք հարեմ մեր ի բուն առաջին վարդապետացն՝  
գրով ծանուցանել առաջի աստուածաւեր և բարեպաշտ քաղաութեանդ ի ձեռն պատենեիս»: Բոլոր  
ձեռագրերն ու սպագիրներն ունեն «գործով ծանուցանել», մենք ուղղեցինք «գրով ծա-  
նուցանել»:

Բնագիրը սրբագրել են առաջարկել նաև Զամինյանը (Զամ., էջ 219) և Մալխասյանցը,  
որը գրում է. «գործով թվում է ուղղելի գրով» (ՍեՊ, էջ 137): Բայց երկու դեպքում էլ առա-  
ջարկը չի պատճառաբանվել, և բնագիրը շարունակել է սպագրվել վրիպակով, չնայած Մալ-  
խասյանցը (Մալք., էջ 114) ուսերեն թարգմանության մեջ թարգմանել է ոչ թե «գործով»,  
այլ «գրով» (писменно) բառը:

Որ «գործով»-ը վրիպակ է, երևում է առաջին հերթին «ի ձեռն պատճենիս» արտահայտու-  
թյունից: Դավանության թղթի հեղինակները բյուզանդական կայսրին հայտնում են, որ իրենք  
«պատճենի», ուրեմն՝ գրայթյալ միջոցով ծանուցում են նախնիներից ժառանգած հավատի հի-  
մունքների մասին: Հասկանալի է, որ հավատի հիմունքները կարելի է շարադրել միայն բա-  
նավոր կամ գրավոր խոսքով, իսկ գործով՝ երբեք: Այդ իսկ պատճառով էլ սխալ պետք է  
համարել նաև Պատկանյանի (Սառ., էջ 148. „на деле показать... учение“) և Մակլերի (Մալք.,  
էջ 129. „foir connaitre par un acte... la constitution“ վերծանությունները, որոնք փաս-  
տորեն վրիպակի կրկնություններն են ուսերեն և ֆրանսերեն լեզուներով:

Հատվածը մենք թարգմանում ենք այսպես. «Իսկ մենք, երբ ստացանք քո երկնաքաղա-

քացի և բարեպաշտ թագավորութեանը հրամանը, տղամարդկանց մեջ քաջ Կոստանդին արքա, լավագույն համարեցինք՝ այս թղթի («պատճենի») միջոցով, աստվածասեր և բարեպաշտ թագավորութեանը առջև գրով ծանուցանել սահմանումներն այն ուղիղ հավատի, որը մեր հայրերն ստացել են բուն առաջին վարդապետներից»:

592. «Յարձակումն Իսմայլեացոց ըստ տեսլեան Դանիէլի: Իբր խոսվութեան ի Կոստանդնուպոլիս, սպանումն երեւելի արանց»: Այս խորագրի տակ գտնվող գլուխը Հյուբշմանը (Hübsch., էջ 28—29) չի թարգմանել, այլ կրճատումներով ու շատ համառոտ վերապատմել է նրա բովանդակությունը:

593. «Ճառեցից դարձեալ գրուցելով զբանն ըստ շարիս հասելոյ ի վերայ մեր ժամանակի»: Այստեղ «ըստ շարիս հասելոյ» արտահայտությունը կանոնավոր չէ, ուստի Ջամիլյանը (Ջամ., էջ 219) սրբագրել է այսպես. «զշարիս հասեալ» (ընչել է «ըստ» նախդիրը, ապա «շարիս» բառի առջև ավելացրել է «զ» նախդիրը և «հասելոյ» բառը դարձրել «հասեալ»): Սրանով իսկապես ավելի կանոնավոր է դառնում նախադասությունը, սակայն շղիտենք, թե նախնական բնագրում եղել է իսկապես այդպես, թե մեկ այլ ձևով:

594. «Որ տապախառն արարեալ զվեճամեծ. վարսավոր, զգեղեցիկ ծառս մատաղատունկս բուրաստանաց»: «Մեծամեծ» բառն այնքան էլ չի հարմարվում «մատաղատունկ» բառին: Հավանաբար դա է պատճառը, որ Պատկանյանը (Патк., էջ 149) «մատաղատունկ» բառն անշատել է այդ բառից և հատկացրել է «բուրաստան» բառին («молодого рассадника») Ստ. Մալխասյանցը (Малх., էջ 114) «մեծամեծ» բառը թարգմանել է «высокие» բառով: Ջամիլյանը (Ջամ., էջ 219) «մատաղատունկ» բառի առջև դրել է «զ» նախդիրը, որը, սակայն, սովյալ դեպքում կարող էր և չլինել:

Հեղինակին պետք է հասկանալ այնպես, թե նա «մատաղատունկ» բառը գործածել է, նկատի ունենալով ոչ թե անպայման առաջին տարին տնկված մատղաշ տնկերը, այլ արդեն մեծամեծ դարձած ծառերը, որոնք պետք է դարեր ապրեին, բայց դարերի համեմատությամբ դեռևս մատաղատունկ են: «Մատաղատունկ» բառը նրա բառապաշարում ոչ այնքան ծառերի տարիքը, որքան թանկարժեքությունն ու գեղեցկությունն է մատնանշում:

Հովհաննես Դրասխանակերտցին (Թիֆլիս, 1912, էջ 85) նույնպես խուսափել է «մեծամեծ» բառը գործածելուց: Նա գրում է. «Տապախարը արարեալ զմատաղատունկս իմանալի բուրաստանաց մերոց»: Բայց և այնպես և այնպես Դրասխանակերտցին «մատաղատունկ» բառը իրավամբ գործածել է ծառերի (և ոչ՝ բուրաստանի, ինչպես կարծել է Պատկանյանը) վերաբերյալ:

595. «Ձսոյն իսկ մրբիկ ի վերայ Բարելովնի տեսանի, այլ եկեալ հասեալ ի վերայ երկրի»: Այս արտահայտությունն անկանոն է թվացել Ջամիլյանին (Ջամ., էջ 219) և Ն. Ակինյանին: Ջամիլյանն առաջարկել է սրբագրել «տեսաննիլի, այլ» բառերը՝ դարձնելով «տեսաննեմք արդ» իսկ Ն. Ակինյանը ուղղելի է համարել «զսոյն իսկ մրբիկ» արտահայտությունը, որի փոխարեն առաջարկել է կարգալ «սուրն այն ոչ միայն»: Երկուսն էլ ընդունելի սրբագրություններ չեն: Բնագիրը սրբագրության կարիք չունի, այլ պետք է վերծանել հետևյալ բովանդակությամբ. «Այս միևնույն մրբիկը (խոսքը քիչ առաջ հիշատակված «մահաբեր խորշակի» մասին էր—Պ. Ա.) Բարելովնի վրա է տեսնվում (այսինքն՝ ըստ մարգարեների նախատեսվում է Բարելունի վրա—Պ. Ա.), բայց եկել, հասել է ամբողջ երկրի վրա»:

596. «Ամրամ»: Աբրահամ նահապետի աղախնուց ծնված որդիներից մեկի անունը «Սեբեոսի Պատմության» մեջ մեզ հասել է «Ամրամ» ձևով: Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1969, էջ 209—210) առաջարկում է սրբագրել այնպես, ինչպես պահպանվել է Աստվածաշնչում (Մնն., 25, 1—2 և Ա. Մնաց. 1, 32), այսինքն՝ «Ճմբան» («Ջեմբան»): Այս սրբագրությունն իրագործելի չէ արդեն վերը նշված այն պատճառով, որ «Ամրամ» ձևը կարող էր ծագել հենց պատմիչի օգտագործած Աստվածաշնչի ձևագրից: Մովսես Խորենացու Հայոց պատմության (Տփիսիս, 1913, էջ 203) որոշ ձևագրերում անունն աղավաղվելով դարձել է «Եմբան», նույնիսկ՝ «Ճփրեմ»: Մ. Գրիգորյանն ինքը նշել է, որ Գրիգոր Ակնեբցու (Երուսաղեմ, 1870, էջ 10) Պատմությունում անունը դարձել է «Ճմբան», իսկ Աստվածաշնչի հունական որոշ ձևագրերում գտնում ենք Σεββαμα (Ա. Մնաց. 1, 32) ձևը, որը գրեթե նույնանուն է «Սեբեոսի Պատմության» ձևագրերում պահպանված «Ամրամ» ձևին: Այսքան տարբեր գրչաձևերի առկայության դեպքում հնարավոր է չորոշել, թե անունն ինչպես է գրված եղել «Սեբեոսի Պատմության» սկզբնական բնագրում:

597. «Մեխիսաէ»: Աստվածաշնչային նահապետ Աբրահամի Քետորա անունով աղախնուց ծնված որդիներից մեկի անունը «Սեբեոսի Պատմության» մեջ մեզ հասել է «Մեխիսաէ» ձևով, Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1969, էջ 210) առաջարկում է սրբագրել այնպես, ինչպես պահ-

պանվել է Աստվածաշնչում (Մնն. 25, 1—2, Ա. Մնաց. 1, 32), այսինքն՝ «Սովիւն»: Այս առաջարկը նույնպես իրագործելի չէ (տե՛ս նախորդ ծանոթագրութ.):

Ք. Պատկանյանը (Патк., էջ 149) քաջ ծանոթ լինելով Աստվածաշնչի անուններին, «Սեբեոսի Պատմության» անսովոր տարբեթեքվածքների կողքին նշել է ընդունված անունները, օրինակ, «Амрам (Зомбран), Мадан (Мадала), Иексан (Иезан)»: Այնուհանդերձ նա «Մելիսաւէ» անունը թողել է նույնությամբ: Մակեբը (Macl., էջ 130) նույնպես բնագիրը չի սրբագրել: Կնշանակի նախորդ հրատարակիչները նույնպես հնարավոր են համարել, որ «Սեբեոսի Պատմությունում» օգտագործված ձեռագրերում անունները գրված են եղել այնպես, ինչպես հասել են մեզ «Սեբեոսի Պատմության» կազմում: Կամ էլ՝ պետք է ենթադրել, որ պատմիչը Աբրահամի որդու փոխարեն անուշադրաբար գրել է Սավուդի որդու անունը: Հմմտ. «Եւ էին որդիք Սաուդայ... Մելիսաւէ» (Ա թագ., ԺԴ, 49):

598. «Եւ կատարեցաւ ասացեալն, թէ Գագանն չորրորդ՝ չորրորդ թագաւորսին կացցէ ի վերայ երկրի. որ տաւել է շարեաւ քան զամենայն թագաւորսինս, որ արար անապատ զամենայն երկիր»: Այս բառերը պարունակող պարբերության կապակցությամբ Յ. Մակեբը (Macl., էջ 130, ծ. 3) ծանոթագրում է. «Այս պարբերությունը, որը գրված է աստվածաշնչական Դանիելի գրքի ներշնչմամբ, մեզ հիշեցնում է միջնադարյան բազմաթիվ այն հայտնութենական (ապոկալիպտիկ) պարականոնները, որոնք սիրված էին հրեական և քրիստոնեական եկեղեցիներում, ինչպես նաև մուսուլմանների մեջ»:

599. «Եւ՝ արդ զի՞նչ ևս գժոռովոց թագաւորսեանն ասացից զխոտլութիւն և զաղէտս կործանման, որ ոչ երբէք դադարեաց յընտանի պատերազմէն»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «յընտանի պատերազմին», որի համաձայն ստացվում է այնպես, թե Բյուզանդական կայսրությունը «երբեք չի հանգստացել ներքին՝ երկպառակչական պատերազմի մեջ»: Հասկանալի է, սակայն, որ պատերազմի մեջ չեն հանգստանում: Նախնական բնագրում անշուշտ եղել է «ոչ երբէք դադարեաց յընտանի պատերազմէն», այսինքն՝ «երբեք չդադարեց երկպառակչական պատերազմից»: Ըստ այսմ էլ սրբագրել ենք «յընտանի պատերազմէն»: Այդպես է թարգմանել Ք. Պատկանյանը (Патк., էջ 149 «ОТ МЕЖДУОУСОБНЫХ ВОЙН»), որին հետևել է նաև Զամինյանը (Զամ., էջ 220):

Մակեբը (Macl., էջ 130) և Մալխասյանցը (Малх., էջ 115) ճիշտ չեն թարգմանել բնագիրը:

600. «Սպանին և զԻնորգ Մագիստրոս, և զՄանուէլ զայրն առափինի, որ էր անեւ Սմբատայ ասպետի, որդոյ Վարազտիրոցի, որդոյ մեծին Սմբատայ Խոսրով Շումն կոչեցելոյ»: Բոլոր ձեռագրերում և տպագիրներում բացակայում են «որդոյ Վարազտիրոցի» բառերը, որոնք մենք վերականգնել ենք, հենվելով հենց «Սեբեոսի Պատմության» վրա: Հեղինակը բազմիցս հայտնում է, որ ասպետ Սմբատ Բագրատունին Վարազտիրոցի որդին էր. «Ըրդիի նորա (Վարազտիրոցի—Յ. Ա.) զանդրանիկն, որում անուն էր Սմբատ»: Մեզ հասած ձեռագրերում «որդոյ Վարազտիրոցի» բառերի կորստյան պատճառով ստացվում է այնպես, թե ասպետ Սմբատը որդին էր ոչ թե Վարազտիրոցի, այլ «մեծին Սմբատայ Խոսրով Շումն կոչեցելոյ» (Սմբատ Խոսրով Շումը ասպետ Սմբատի պապն էր, և ոչ՝ հայրը): Վրիպակը առաջին անգամ նկատել է և առաջարկել է սրբագրել ն. Աղոնցը (Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 486: Տե՛ս նաև Nicolas Adontz, Etudes Armeno-Byzantines, Lisbone, 1965, էջ 89):

«Սեբեոսի Պատմության» թարգմանիչները (Պատկանյան, Մակեբ, Մալխասյանց) կրկնել են աղճատված բնագրի սխալը: Միայն Պատկանյանն է, որ «որդոյ մեծին Սմբատայ» արտահայտությունը թարգմանելիս անհրաժեշտ է համարել «СЫНА» բառի կողքին փակագծերում ավելացնել նաև «ВНУКА» բառը, նկատելով, որ ասպետ Սմբատը ոչ թե որդին, այլ թոռն է մեծ Սմբատի:

2. Հյուրըմանն այս հատվածը չի թարգմանել, բայց նրա բովանդակությունը վերապատմելիս կրկնել է Պատկանյանի նշած այն փաստը, որ ասպետ Սմբատը մեծ Սմբատի թոռն է (des Aspet Sembat, des Enkels des grossen—Khosrow Shum genannten—Sembat\*—Hübisch., էջ 28):

601. «Զորմէ ասացին ոմանէ՝ տեսնել ի գիշերի երագունս լուցեալս ի տեղոյ սպանման նորա»: Ստ. Մալխասյանցը (Малх., էջ 115) այս նախադասությունը թարգմանել է այսպես. «Նրա մասին ասում էին, թե նա իր սպանման վայրում տեսել է վառված մոմեր»: Սա ուղղակի անուշադրության հետևանքով առաջացած վրիպում է: Իրականում ճրագի լույսերը տեսել են, իհարկե, ուրիշները, և դա պարզ ասված է գրաբար տեքստում: Հատվածը պետք է թարգմանել այսպես. «որի մասին ոմանք ասում էին, թե գիշերը նրա սպանման վայրում

վազված ճրագներ են տեսել»: Մալխասյանցն անուշադրության հետևանքով բաց է թողել նաև «ի գիշերի» արտահայտությունը: Բնագիրը ճիշտ են թարգմանել Պատկանյանը (Патк., էջ 50) և Մակեբը (Маcl., էջ 131):

602. «Եւ արկին զՍմբատ յախօսու, վասն զի պարտաւորեցին զնա զաւրն իրեանց ի յապրտամբութեան յետ իրացն եղիւոց»: Այս բառերից սկսած մինչև զլիս վերջը զժվար է հասկացվում: Մալխասյանցը ծանոթագրել է. «Բնագիրն այս հատվածում զժվարհասականալի է, զլիսավորապես այն պատճառով, որ մի քանի տեղ բաց են թողնված անձերի անունները, այնպես որ չէ հասկացվում, թե ում մասին է խոսքը: Այս պատճառով Պատկանյանի թարգմանությունն այստեղ մի քանի տեղ սխալ է: Բնագրի խոսքը «պարտաւորեցին զնա զաւրն իրեանց ի յապրտամբութեան» նա թարգմանել է. «ВОЙСКО ПРИНУДИЛО ЕГО К ВОССТАНИЮ» բաց է թողել (իրականում բաց չի թողել, այլ տեղադրել է դեպի ետ, «արկին զՍմբատ յաքսորս» բառերից անմիջապես հետո—Գ. Ա.) մի ամբողջ նախադասություն (իրրև անհասկանալի)—«Եւ իշխան զաւրուն որ յայնմ կողմանէ և սիրելի ամենայն զաւրացն»: (Մենք լրացրինք բնագիրը՝ «էր Մագիստրոս» բառերով): Շարունակության մեջ նա այնպես է թարգմանել, իբր թե Սմբատը պիտի խաբեր Մանուկին, և Մանուկին էլ բռնում են, այնինչ՝ խոսքը վերաբերում է Գևորգ Մագիստրոսին: Հատվածի համառոտ բովանդակությունն այս է. կայսրը ուզում է Գևորգ Մագիստրոսին սպանել, բայց հայտնի հրամանն չէ տալիս, Սմբատին պատվիրում է, որ խաբեությունը նրան բռնե: Մագիստրոսը դավը լսած լինելով՝ չէ խաբվում. այն ժամանակ Սմբատը կայսրի հրամանը երևան է հանում: Մագիստրոսին բռնում, ուղարկում են Պոլիս, որտեղ նրան սպանում են: Սմբատի զորքը զայրանալով նրա վարմունքի վրա՝ մտածում է նրան սպանել տալ. ուստի ամբաստանում է նրան ապստամբության մեջ, իբր թե նա ասած լինի, թե պետք է Մագիստրոսի արյան վրեժն առնել: Բայց կայսրը խնայում է Սմբատի կյանքը, և նրան աքսոր է ուղարկում» (ՍեՊ, էջ 196, ծ. 71):

Մալխասյանցին հայտնի չեն եղել Հյուբշմանի, Մակեբի և Զամինյանի կարծիքները հատվածի մասին: Հյուբշմանը (Hübsch., էջ 28—29) հատվածը վերծանել է այնպես, ինչպես Մալխասյանցը: Մակեբը (Маcl., էջ 131) գրեթե Պատկանյանի նման է հասկացել «պարտաւորեցին զնա զաւրն իրեանց ի յապրտամբութեան» արտահայտությունը, որը նա սխալմամբ թարգմանել է այսպես. «Նրա սեփական զորքերը նրան դատապարտում են և ապստամբում»: Զամինյանը (Зам., էջ 221) առաջարկել է «զաւրն իրեանց ի յապրտամբութեան» բառերը սրբագրել այսպես. «զաւրն իր ի յապստամբութիւն»: Սրանից երևում է, որ Զամինյանը նույնպես, Պատկանյանի նման, սխալ է հասկացել տվյալ տեղը, այսինքն՝ կարծել է, թե Սմբատի զորքերը նրան ստիպել են ապստամբել:

Բնագիրը համեմատաբար ավելի ճիշտ է վերծանել Ստ. Մալխասյանցը (Малх., էջ 115), որը թարգմանել է այսպես. «զորքը, կատարված դեպքերից հետո նրա վրա հանցանք բարդեց»: Սակայն այստեղ մոռացված է թարգմանել «ի յապստամբութեան» բառը, որի բացակայության հետևանքով Մալխասյանցի թարգմանությունից չի երևում, թե զորքը Սմբատի վրա ինչ հանցանք է բարդել: Հատվածի ճշգրիտ թարգմանությունը կլինի այսպես. «Իրադարձություններից հետո նրանց (բյուզանդացիների—Գ.Ա.) զորքերը նրան (ասպետ Սմբատին—Գ. Ա.) մեղադրեցին ապստամբության մեջ»:

603. «Եւ Մագիստրոս էր իշխան զաւրուն»: Զեռագրերը, Միհրդատյանը և Պատկանյանը շունեն «Մագիստրոս էր» բառը: Ավելացրել է Մալխասյանցը, որովհետև առանց այդ բառի հասկանալի չէ, թե խոսքն ում է վերաբերում: Բառի պակասն զգացել է նաև Զամինյանը (Зам., էջ 221), որը Մալխասյանցի ավելացրած «Մագիստրոս էր»-ի փոխարեն առաջարկել է ներմուծել «նա» դերանունը, որը, սակայն, բավարար չէ հասկացնելու համար, որ խոսքը Մագիստրոսի մասին է:

604. «Իշխան զաւրուն որ յայնմ կողմանէ և սիրելի ամենայն զաւրացն»: Այս արտահայտությունը վերաբերում է Գևորգ Մագիստրոսին, թակայն ձեռագրերում Մագիստրոսի անունը չի պահպանվել, ուստի Պատկանյանը արտահայտությունը վերագրել է ասպետ Սմբատին, գրելով. «Смбата, любимого всем войском военачальника» (Патк., էջ 150):

605. «Մանուկ գործէր ի Կոստանդնուպոլիս զգործ մագիստրէի»: Այս Մանուկի կապակցությամբ Ք. Պատկանյանը (Патк., էջ 212, ծ. 215) ծանոթագրում է. «Մեզ թվում է, որ այստեղ խոսվում է այն Մանուկի մասին, որին Հերակլ կայսրը հանձնել էր Եգիպտոսի կառավարչությանը: Թեոփանեսի կարծիքով (էջ 280), նա հայկական ծագում ուներ, և հավանաբար Մամիկոնյան տոհմից: Երբ Ամրուն գրավեց Եգիպտոսը, Մանուկն հարկադրված էր փրկվել՝

Կոստանդնուպոլսի փախչելով, բայց 646 թ. նա վերստին հայտնվեց Ալեքսանդրիայի պատե-  
րի տակ, վերցրեց քաղաքը և ամրացրեց: Վերադարձած Ամրոն, համառ պաշարունից հետո  
այդ քաղաքը խլեց հոմեալացիներից (բյուզանդացիներից—Պ. Ա.): Մանվելն ստիպված էր  
փախուստով փրկվել երկրորդ անգամ: Նրա հետագա ճակատագրի մասին հույն մատենագիրները  
ուշինչ չեն ասում»:

606. «Նւ եղև ի Բաւնեւոյղի ամի Յագիեւոյի»: Ստ. Մալխասյանցը «ամի» բառի կա-  
պակցութեամբ տողատակին ծանոթագրում է. «Յուլ. շիֆ ամի: Այսպէս լրացրինք» (այսինքն՝  
«բոլոր ձեռագրերը և տպագիրները շունեն «ամի» բառը, լրացրել ենք մենք»): Բայց սա ան-  
ուշադրութեան հետեանքով առաջացած անճշտութուն է: Իրականում բոլոր տպագիրներն ունեն  
«ամի» բառը և Մալխասյանցը հետեւի է նախորդներին: «Ամի» բառը շունեն միայն ձեռագրերը  
(№ 2639 և այլն):

607. «Է մետասան ամի Կոստասի կայսեր, որ կոչեցաւ յաճում հաւր իւրոյ Կոստանդին»: Այս բառերը վկայակոչելով Պ. Պետերսը (P. Peeters, Πασαγιάδης—Περσογενής:—„Byzantion“  
t. VIII, fasc. 2 (1 33), Bruxelles, 1933, էջ 411, ծ. 5) գրում է. «Այս ցուցումը, որի ճշ-  
գրությունը ճանաչվեց միայն մեր օրերում, արժանի է հիշատակութեան: Հմտ. E. W.  
Brooks, Who was Constantine Pogonatus?—„Byzantinische Zeitschr. XVII, 1908, էջ  
460—462: Հմտ. „Analecta Boilandiana“, LI (1933) էջ 228»:

608. «Նւ իշխանն Մարաց: Հայտնի չէ, թե ինչ իշխանի մասին է խոսքը, չնայած՝ հեղի-  
նակը գրում է «զորմէ վերագոյն ասացաք»: «Վերագոյն» բառի վրա Հյուբշմանը (Hübsch., էջ  
29, ծ. 4) դնում է ծանոթագրութեան նշան և հարցնում «որտե՞ղ»:

609. «Նւ բարձաւ տէրութիւնն Պարսից և ազգին Սասանայ, որ կալան գրագաւորութիւնն  
ամս Շեթ»: Ինչպես տեսնում ենք, այստեղ Սասանյանների հարստութեան թագավորութեան  
տեղումը համարվում է ամս Շեթ», այսինքն 542 տարի: Պատկանյանն այս կապակ-  
ցութեամբ ծանոթագրում է. «Եթե ընդհանուր ճանաչողություն գտած կարծիքի համապատաս-  
խան՝ Սասանյան դինաստիայի սկիզբը համարենք 226 թ., ապա նրանց թագավորութեան  
տեղումը կլինի 416 կամ 426, նայած թե՛ նրանց թագավորութեան վերջին տարին հա-  
մարվում է 642-րդ, թե՛ 652-րդ տարին: Նկատելի է, որ չնայած Սասանյանների մասին հայ  
պատմիչների տված բազմաթիվ ճշգրիտ ցուցումների, նրանց կարծիքը Սասանյանների տիրա-  
պետութեան տեղումը մասին իրականությունից հեռու է: Թ. Արծրունին (էջ 115) նույն-  
պես 542 է համարում: Վարդանը և Կիրակոսը՝ 481: Ատնդը (էջ 3) նույնպես 481: Ասողիկը՝  
(էջ 119)՝ 386: Բոլորից շատ իրականությունը մոտենում են Միխայիլ Ասորին և Միսիթարը,  
որոնք գտնում են, որ Սասանյանները թագավորել են 418 տարի» (Սառ., էջ 213, ծ. 217):

Սակայն պետք է նկատի ունենալ, որ հայ հեղինակների նշած թվականների անհամապա-  
տասխանութեան մեջ իրենց նշանակալի մասն ունեն նաև գրչական վրիպումները: Թվա-  
նշանները ձեռագրերում այնքան հաճախ են աղավաղվում, որ մեծ զգուշությամբ և քննադատո-  
րեն պետք է մոտենալ նրանց: Հենց Պատկանյանն ինքը գրում է, որ Միսիթար Այրիվանցու  
Պետերբուրգի Ակադեմիայում պահվող ձեռագիրը տալիս է ավելի լավ ընթերցվածքներ, քան  
էմիսի հրատարակածը: Այսպես օրինակ, ըստ Ակադեմիայի ձեռագրի՝ Սասանյանների իշ-  
խանությունն ընդհատվել է 651 թ., իսկ ըստ էմիսի հրատարակության՝ 637 թ.:

Սասանյանների թագավորութեան տեղումը մասին տե՛ս նաև Macl., էջ 132:

610. «Հրաման ետ գաւրաց իւրոց ունել գործ պատեւագով ընդ ծով և ընդ ցամաք, զի  
բարձոց է կայն և գայն և քաղաւորութիւն յերկրէ, յերկոտասաներոց ամի քաղաւորութեանն Կոս-  
տանդի»: Այս հատվածի համաձայն՝ «արքայն իմայնի» (Օթմանը. հմտ. Hübsch., էջ 29,  
ծ. 5) Կոստանդին թագավորի 12-րդ տարին խախտում է բյուզանդացիների հետ կնքած եռամյա  
հաշտութեան պայմանագիրը: Մակլերը (Macl., էջ 132, ծ. 5) որպես դեպքի թվական է նշում  
653 թ. և ծանոթագրում է. «Սա հավասար է այդ տարվա հուլիս ամսին, երբ Մոավիան նվա-  
ճեց Ռոդոսը և տապալեց Հսկան, իր հիմնադրման օրից 1360 տարի հետո: Հմտ. Mu-  
ralt, Chronogr., Byz., I, էջ 229»:

Մակլերը նկատի ունի Աշխարհի յոթ հրաշալիքների շարքը դասվող Ռոդոսյան 37 մետրա-  
նոց բրոնզյա կոթողը (Հելլոսի արձանը), որը «կործանվել է անտարակույս դեռևս մ. թ. ա.  
227 թ. երկրաշարժի ժամանակ» („Lexikon der Antike“, Leipzig, 1972, էջ 465—466):

Պ. Պետերսը (Πασαγιάδης—Περσογενής:—„Byzantion“, VIII (1933). Bruxelles, 1933, էջ  
411) վիճարկում է Մակլերի հիշյալ ծանոթագրութեան մեջ նշված թվականը:

611. «Թագաւորութեանն Կոստանդի»: Այս բառերից հետո ընդհատվել է Միհրդատյանի  
օգտագործած հնագույն պակասավոր ձեռագրի տեքստը, որի մասին Միհրդատյանը (էջ 215)

տողատակի ծանոթագրության մեջ գրում է. «Միւս օրինակն մինչև ցայլ վայր աւարտեալ»:

612. «Եղին ուխտ ընդ մահու և ընդ դժոխաց դաշինս կոեցին Քեղոքոս Ռշտունեաց տէր մանեայն իշխանաւն Հայոց»: 652 թ. կնքված հայ-արաբական դաշինքը\* հիշատակելիս բյուզանդական պատմիչ Թեոփանես Խոստովանողը Քեղոքոս Ռշտունու փոխարեն դաշինք կնքող հայ պատրիկ է նշում «Պասագնաթես» անունով մեկին: Նա գրում է. «Τούτω τῷ ἔτει ἐστασίασεν Πασαγνάθης ὁ τῶν Ἀρμενίων πατριχίος τῷ βασιλεῖ. καὶ σπονδὰς μετὰ Μανίου πεποιήκεν, θεδωκῶς αὐτῷ καὶ τὸν ἰδίον υἱὸν ἀκούσας δὲ ὁ βασιλεὺς ἤλθεν ἕως Καισαρείας Καππαδοκίας, καὶ ἀπελπίσας τῆς Ἀρμενίας ὑπέστρεψεν» (Theophanis Chronographia, vol. I, Bonnae, MDCCCXXXIX, էջ 527): «Այս թվականին ապստամբեց Պասագնաթեսը՝ Հայաստանի պատրիկը կայսեր դեմ և դաշինք կնքեց Մավիայի հետ, նրան տալով նաև իր հարազատ որդուն: Այս լսելով՝ կայսրը եկավ մինչև Կապադոկիայի Կեսարիա և Հայաստանից վերադարձավ հուսահատ»:

Պասագնաթես անունով հայոց պատրիկ հայ պատմիչներին հայտնի չէ: Հունական և այլ օտար աղբյուրներում նույնպես «Պասագնաթես» անունը երբևէ չի հիշատակված: Նման անուն առհասարակ գոյություն չունի: Այդ իսկ պատճառով էլ «Πασαγνάθης բարը պետք է դիտել որպես վրիպակ»:

Մ. Չամչյանը («Պատմութիւն հայոց», հ. Բ, էջ 534) կարծելով, թե դա հայերեն Վասակ անունն է, ենթադրել է, թե Մծեծ Գնունուց հետո Հայաստանի պատրիկ է նշանակվել Վասակ անունով մեկը: Չամչյանին կրկնել է նաև Հ. Աճառյանը («Հայոց անձնանունների բառարան», Ե, Երևան, 1962, էջ 45—46, № 16): Սակայն, ինչպես Սևն Մարտենն է նշել (Lebeau, Histoire du Bas-Empire, Paris, 1830, էջ 351), Չամչյանի ենթադրությունը ոչ մի տվյալով չի փաստարկված: Մ. Ղազարյանը («Armenien unter der arabischen Herrschaft», Marburg, 1903, էջ 21) նույնպես կասկածելի է համարել Պասագնաթես անունը: Բայց նշված մասնագետներից ոչ ոք չի փորձել սրբագրել վրիպակը:

Անվանը հատուկ ուսումնասիրություն է նվիրել Պ. Պետերսը («Πασαγνάθης — Περσογένης», տպված «Byzantion»-ում, t. VIII, fasc. 1 (1933), Bruxelles, էջ 405—423): Նրա կարծիքով՝ Πασαγνάθης-ը այլ բան չէ, քան վրացիերեն «სპარსთაგანი» = «sparstagani» («պարսկաստանցիներից») բառի աղճատված ձևը: Իբր վրացական աղբյուրներում Քեղոքոս Ռշտունին կոչված է եղել «sparstagani» և այդպես էլ կրկնվել է հունական աղբյուրներում: Սա իրականությանը չի համապատասխանում, որովհետև Քեղոքոս Ռշտունին «պարսկաստանցիներից» չէր և նրան այդպես չեն կոչել ո՛չ վրացիները, ո՛չ էլ հույները:

Պ. Պետերսին գայթակղել է Միխայիլ Ասորու «Ժամանակագրության» մեջ («Chronique de Michel le Syrien», ed. J. B. Chabot, t. IV, էջ 433, Փրզմ., հ. II, էջ 451) հունարեն Περσογένης բարը Aprasitgan ձևով թարգմանված լինելու հանգամանքը: Թեոփանեսի «ὁ τῶν Ἀρμενιάκων στρατηγὸς Σαβώριος Περσογένης» («Արմենիակոնի զորավար Սաբորիոս Պարսկածինը») արտահայտությանը Միխայիլ Ասորու գրքում Պետերսի մեջբերմամբ համապատասխանում է՝ «dux militaris Armentiacorum nomine Sapor, quem Aprasit'gan vocitabant» («Արմենիակոնի Շապուհ անունով զորավարը, որին կոչում են Ապրասիտգան»): Այստեղ պարզ երևում է, որ Միխայիլ Ասորուն արտագրող գրիչն աղավաղել է Ասորու նախնական բնագրում եղած «Persogenes» բարը (կամ էլ՝ ասորերեն պարսկաստանցի», «պարսկածին» կամ նման մի այլ իմաստ արտահայտող բար): Այնինչ, Պետերսը կարծել է, թե դա վրացական sparst'agani բառն է, որի նմանությունը էլ նա փորձել է սրբագրել Թեոփանեսի Πασαγνάθης-ը:

Մենք արդեն ցույց ենք տվել («Սեբեոսի Պատմությունը» և Անանունի տեղեկվածքը, էջ 195, ծ. 19), որ Թեոփանեսի «Ժամանակագրության» նախնական բնագրում «Πασαγνάθης-ի»\*\* փոխարեն գրված է եղել παραβάτης («ուխտազանց», «ղավաճան», «ուրացող»): Հույն

\* Հայ-արաբական դաշինքի թվականի վերաբերյալ հայտնված զանազան կարծիքների մասին տե՛ս Բ. Առաքելյան, Ժամանակագրական դիտողություններ (Արմֆանի «Տեղեկագիր», 1941, № 1, էջ 63):

\*\* Թեոփանեսի լատիներեն խմբագրության (հեղինակ՝ Անաստաս Մատենադարանպետ) ձեռագրերում գուգահեռաբար գտնվում են և՛ Pasagnathes, և՛ Pasagnates ձևերը (հրատ. de Boor, հ. II, էջ 216), որոնցից երևում է, որ Թեոփանեսի աղճատված ձեռագրերում անունը կարող էր գրված լինել նաև Πασαγνάθης ձևով, որն ավելի մոտ է Παραβάτης-ին: (Լատիներեն տարբերակները մասին տեղեկությունը բերում ենք ըստ Պ. Պետերսի վերոհիշյալ աշխատության, էջ 406):



պատմիչը փոխանակ հայոց գորավարի անունը տալու՝ նրան կոչել է «ուխտազանց», որովհետև Քեոդորոս Ռշտունին իսկապես դրժեց բյուզանդացիների հետ կնքած ուխտը և անցավ արաբների կողմը: Գրա համար էլ Քեոփանեսը գրել է. «Այս թվականին (աշխարհի արարչագործության 6143 թ.—Վ. Ա.) կայսեր դեմ ապստամբեց Հայաստանի ուխտազանց (Սարգստ) պատրիկը և դաշինք կնքեց Մավիայի հետ»: Իսկ ընդօրինակող գրիչները Սարգստ-ը կարդացել են Սասարտց (որը հետագայում դարձել է Սասարձց):

Այսպիսի ընթերցումը գրչական առումով շատ սպասելի է: Բավական է, որ Սարգստ-մեջ գտնվող ր-ն մաշված լինելով նմանվեր օ-ի (երկու տառն էլ կազմված են շրջանակից և պոչից), իսկ ֆ-ի գլխի մասն անջատված լինելով ստեղծեր երկու ( ր ) տառի տպավորություն՝ սարգստ-ը: դառնար Սասարձց:

Ուրիշ ոչ մի բառ այնքան նման չէ աղճատված Սարգստ-ին, որքան Սասարձց-ը: Մյուս կողմից էլ՝ Քեոդորոս Ռշտունուց բացի ուրիշ ոչ մի հայոց պատրիկ հայտնի չէ, որը դավաճանած լիներ Բյուզանդիային և դաշինք կնքած Ասորիքի արաբ կառավարիչ Մոսավիայի հետ: Այնպես որ Քեոփանեսն անկասկած նկատի է ունեցել Քեոդորոս Ռշտունուն:

2. Բարթիկյանը մեր մենագրությունը նվիրած գրախոսականում («Византийский временник», XXVIII, 1968, էջ 288) գրում է. «Սակայն այդ եղբակացությունը (Սասարձց-ի փոխարեն մեր ենթադրած Սարգստ-ի մասին—Վ. Ա.), քիչ է համոզիչ ոչ միայն այն պատճառով, որ սարգստ-ը և Սասարձց-ը հենում են (ընդգծումը մերն է—Վ. Ա.) բավական տարբեր, այլև որովհետև հույն գրիչը ավելի շուտ կարող էր հունականացնել օտար բառը, քան թե աղավաղել իրեն միանգամայն հասկանալի հունական բառը, այն դարձնելով իրեն ոչինչ չափող անուն»:

Բայց իրականում սարգստ-ը և սասարձց-ը ոչ միայն բավական տարբեր են «հնչում», այլև միմյանց շատ ավելի մոտ են, քան Չամչյանի առաջարկած «Վասակ»-ը կամ Պետերսի Sparstagani-ն, որոնք իմաստով էլ հեռու են քննարկվող հատվածից:

Բարթիկյանի առարկությունն ստեղծում է նաև այն տպավորությունը, թե մենք իբր ասել ենք, որ հույն գրիչն իր առջև ունեցել է «իրեն միանգամայն հասկանալի» Սարգստ. հունական բառը և գիտակցաբար այն դարձրել է ոչինչ չափող Սասարձց\*։ Եթե իրականում էլ այսպես լիներ՝ հույն գրիչը մեզ կհերկայանար որպես ոչ թե վրիպակի, այլ՝ հանցանքի հեղինակ: Իրականությունն այն է, որ գրիչն իր առջև ունեցել է մաշված ու անճանաչելի Սարգստ. բառը, որը նրան՝ գրչին, ոչ մի հունարեն բառի իմաստ չի հուշել և թվացել է օտար մի անուն: Եվ իսկապես, հայի անունը հույն գրչի համար օտար էր, դրա համար էլ նա ստացել է Սասարտց անվանաձևը, չիմանալով, որ նման անուն հայերենում չկա:

613. «Ոչ առնում ի ձեռք սակ զերեամ մի»: Այս վերջին արտահայտությունը՝ «զերեամ մի» («մեկ եռամյակ») բոլոր ձևադրերում մեզ հասել է աղճատված վիճակում: Հնագույն ձևագրերը (№ 2639) և նրանից արտագրված № 6454 ձևագրերն ունեն «վեր է ամմի» № 2935 և № 2867 ձևագրերը, ինչպես նաև ՄՄ Երիցյանի արխիվում պահվող հատվածական տեքստն ունեն «վեր է ամի»: № 3122 ձևագրերը, հնագույն ձևագրի նման, ունի «վեր է ամմի», սակայն լուսանցքում հարցականով ուղղված է՝ «զերեամ մի?»:

Այսպիսով, գրիչներից ոչ ոք չի կարողացել կռահել և վերականգնել նախնական բնագրում եղած «զերեամ մի» արտահայտությունը: Իսկ № 3122 ձևագրի լուսանցքում կատարված սրբագրությունն անծանոթ է մնացել Միհրդատյանին, որը իր օգտագործած ձևագրերում եղած «սակ վեր է ամի» վրիպակը (տե՛ս էջ 216, ծ. 1) դարձրել է «սակ (վերկի) է ամի»:

Այս ներմուծումից երևում է, որ Միհրդատյանը ձևագրերի «վեր է» մասնիկի մեջ տեսել է թուրքերեն «վերկի» բառը, որը հայերեն «սակ» բառի իմաստն ունի (Հմմտ. Hübsch., էջ 30, ծ. 4), իսկ «վեր է»-ի վերջին տառն ընկալել է որպես «լոթ» թվանշան և ստացել է «ոչ անուն մի ձեռք սակ (վերկի) է ամի»: Ըստ այսմ՝ արաբների առաջնորդը հայերին խոստանում է յոթ տարի հարկ չվերցնել հայերից: Իրականում, սակայն, պատմիչը գրել է «զերեամ մի»:

Ք. Պատկանյանի օգտագործած ձևագրում եղել է «զերեամ մի» (Պատկ., էջ 138), որը նա

\* Բարթիկյանը մեկ ուրիշ դեպքում ինքն է կիրառել փաստարկման այն միեկուն եղանակը, որն այժմ մերժում է: Այսպես. «Ուտհայեցու երկում հանդիպող «Մարցէ» անվան մասին» հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 2, էջ 165) նա ընդունում է, թե գրիչները աղավաղել են իրենց միանգամայն հասկանալի մի բառ («Մարցի») և դարձրել են իրենց ոչինչ չափող անուն («Մարցէ»):

Քարգմանել է «в продолжение трех лет» (Պատկ., էջ 152) և հայտնել է, որ Միհրդատյանի հրատարակությունը հասկանալի չէ (նույն տեղում):

Հյուբշմանը (Hübisch., էջ 30, ծ. 4) իմանալով հանդերձ, որ Պատկանյանի օգտագործած՝ Ասիական թանգարանի ձեռագրում գրված է. «գերեամ մի», ինքը հետևել է Միհրդատյանի ստեղծած է (= «յոթ») թվանշանին և Քարգմանել է „Ich werde sieben Jahre lang von euch keinen Tribut erheben“ («Ես ձեզանից յոթ տարի հարկ չեմ վերցնի»): Ինչպես երևում է, Հյուբշմանի հաշվումներով յոթ տարին ավելի հավանական է, քան երեք տարին: Այլապես նա մեծ մասամբ հետևում է Պատկանյանին և այդպես կվարվեր նաև այժմ: Հյուբշմանին մեքենայաբար կրկնել է նաև Մակլերը (Macl., էջ 133), առանց որևէ ծանոթագրության, չնայած նա նույնպես «Սերետի Պատմությունը» Քարգմանելիս հիմնականում օգտվել է Պատկանյանից:

Եթե նույնիսկ արաբները իսկապես էլ խոստացած լինեին հայերից հարկ վճարցնել յոթ տարի ժամանակով (հմտ. Հ. Հարությունյան, Սերետու եպիսկոպոսի Պատմության մեջ եղած մի պայմանագրի ժամկետի ճշտման հարցի շուրջը, ՀՍՍՀ Ծրեանի պետ. մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատություններ», հ. 1, Երևան, 1940, էջ 199—205), դարձյալ դա կապ չունի «Սերետի Պատմության» բնագրի հետ, որովհետև, ինչպես ցույց է տալիս վրիպակի ուսումնասիրությունը, պատմիչն ինքը գրել է «գերեամ մի»:

«Վերէ ամմի» վրիպակից ոչ մի կերպ հնարավոր չէ ստանալ ենթադրյալ յոթ տարվա գաղափարը, այլ դա շատ պարզ ձևով ձևով աղճատված «գերեամ մի» արտահայտությունն է: Այդ լսկ պատճառով էլ Պատկանյանը և Մալխասյանցը նկատել են Միհրդատյանի ներմուծած վրիպակը և վերականգնել են նախնական բնագրի ճիշտ ընթերցվածը:

614. «Եւ հեծեալ կալիք յաշխարհիդ օծ հազար, և հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արբուճի անգարեմ»: «Անգարեմ» բառի կապակցությամբ Հյուբշմանը (Hübisch., էջ 30, ծ. 5) գրում է. «Տեքստում՝ «անգարեմ», որն Ակադեմիայի (նկատի ունի Վենետիկի Մխիթարյան միաբանությունը—Գ. Ա.) բառարանում չկա: Բայց փոքր բառարանում («Առձեռն բառարան», 2-րդ հրատ., Վենետիկ, 1865) բացատրված է «սեպիլ» բառով: Սեպիլ = halten für, schätzen («համարել», հաշվել, սեպիլ—Գ. Ա.) և այլն, ուստի՝ «անգարեմ» = պարսկական angârdan, angâridan»:

Քննարկվող հատվածի իմաստը ճիշտ չեն վերծանել Պատկանյանը (Պատկ., էջ 152. «по-сылайте мне хлеб из страны вашей»), Հյուբշմանը (Hübisch., էջ 30. „und Brot aus demselben liefern“), Մակլերը (Macl., էջ 133. „vous en livrez du pain“): Իրականում արաբները ոչ թե պահանջում են հաց ուղարկել Հայաստանից, այլ՝ հացը այրուձին կերակրել երկրի ներքին միջոցներով:

Բնագիրը ճիշտ է վերծանել Մալխասյանցը (Մալխ., էջ 116—117) «им содержание (хлеб) отпускайте из вашей страны», որն այդ կապակցությամբ ծանոթագրում է (Մալխ., էջ 175—176, ծ. 192). «Արաբական իշխանությունների պահանջով արշավի դուրս եկող հայկական հեծելազորի կերակրումը մտնում էր այդ իշխանությունների պարտականության մեջ: Պայմանագիրը կնքելիս արաբ կառավարիչը Թեոդորոս Ուտունուն առաջարկում է հեծելազորի այդ կերակրումը (որը կոչում է «հաց», այսինքն՝ «հաց տալ», կերակրել) հայերը վերցնեն իրենց վրա և խոստանում է այդ ծախսերը հաշվել հատանելիք հարկի հաշվին: Եվ հիրավի, ինչպես որ տեսնում ենք Ղևոնդի Պատմությունից (գլ. XXI), արաբ կառավարիչները հայոց հեծելազորի կերակրման համար ամեն տարի բաց են թողնում դրամ (100000 դինար), չնայած նրանք երբեմն դրամ տալը ուղացնում էին մի քանի տարով: Միայն Աբբասյանների դինաստիայի առաջին ներկայացուցչի՝ Աբդալի կառավարչության օրոք (մոտ VIII դ. կեսին) դրամ տալը իսպառ ընդհատվեց և հայ իշխաններն ստիպված եղան սեփական միջոցներով պահել և հանդերձավորել արաբների ծառայության մեջ գտնվող հեծելազորը (Ղևոնդ, գլ. XXVIII)»:

615. «Այլ ուր և հրամայեմ՝ պատրաստ լիցիք ի գործ»: Միհրդատյանն ու Պատկանյանն ունեն «այլուր», Մալխասյանցն ուղղել է «այլ ուր» և ծանոթագրել. «կարող է լինել նաև «այլուր՝ ուր և հրամայեմ» (ՍեՊ, էջ 141):

616. «Ենեռ»: Այս բառը, որով նկատի է առնվում Քրիստոսի ավանդական թշնամին (անտիքրիստոսը), մասնազետեները բխեցնում են ներքնի անունից: Բառի նշանակության մասին տե՛ս նաև F. Macler, Les Apocalypses apocryphes de Daniel, էջ 85, ծ. 1: նաև՝ Թ. Ավդալբեգյան, նշված աշխ., էջ 65:

617. «Եւ այնպէս քակեալ պատառեաց զճոսս ի Հոռոմոց նեղին արբանեակն»: Միհրդատյանը «նեղին արբանեակն» արտահայտությունը չի տպագրել և նրա փոխարեն դրել է բազմակետեր: Մալխասյանցը դա համարել է «գրաքննական խոսույթուն» (ՍեՊ, էջ 141, տողատակ):

Հիրավի, Միհրդատյանի օրոք, Կոստանդնուպոլսում տպագրված մի գրքում հազիվ, թե թույլ տրվեր հրատարակել նման մի արտահայտություն, որն ուղղված էր հակաբրիտանյանների դեմ:

618. «Ես գամ առ ձեզ, և տամ ձեզ ազնուփին ՀՌ՝ ոգի, և խորհիմի ի միասին, եթէ զինչ արժան իցէ առնել»: Հնագույն ձեռագիրը և նրանից ընդօրինակված մյուս ձեռագրերը «ազնուփին ՀՌ՝ ոգի»-ի փոխարեն ունեն «արհնուփին հոոգի»: ՄՄ Երիցյանի արխիվում պահվող մասնակի ընդօրինակությունն ունի «օգնուփին հոոգի»: Այսպես է ունեցել նաև Միհրդատյանի օգտագործած ձեռագիրը:

Թե որտեղից է ծագում Միհրդատյանի ձեռագրի «օգնուփին»-ը՝ չենք կարող ասել, որովհետև գիտենք, որ այդ ձեռագիրն ընդօրինակված է անմիջապես (կամ միջնորդաբար) № 2639 ձեռագրից, իսկ այս ձեռագրում նման ընթերցված չկա: Այստեղ, ինչպես ասվեց, գտնվում է «արհնուփին» ընթերցվածը, որը գրված է այնքան հստակ տառերով, որ չէր կարող շփոթվել «ազնուփին»-ի հետ: Մյուս կողմից՝ «օգնուփին» բառն առկա է երկու այնպիսի տարբեր ընդօրինակություններում (Երիցյան, Միհրդատյան), որոնք միմյանց հետ անմիջական կապ չունեն: Մնում է ենթադրել, որ անցյալ դարում էջմիածնում դեռևս առկա են եղել այսօր մեր ձեռքին գտնվող № 1343 պատարկի մայր ձեռագիրը ( որը հավանաբար պատկանել է մասնավոր անձանց և այդ պատճառով էլ ձեռագրացուցակներում չի գրանցված, ինչպես որ չի գրանցված նաև Միհրդատյանի օգտագործած և այժմ անհետ կորած ձեռագիրը) կամ էլ՝ Միհրդատյանի մյուս ձեռագրի (=2) վերջին մասը, որոնց հետ և համեմատվել ու սրբապղծվել է «արհնուփին» վրիպակը:

«Արհնուփին» բառի վրիպակ լինելու փաստն այնքան բացահայտ է, որ Ստ. Մախասյանցը հարկ չի համարել որևէ բացատրություն տալ այն մասին, թե ինչու է ինքը մեզ հասած հնագույն ձեռագրի (№ 2639) ընթերցվածն իջեցրել տողատակ և նախընտրել նախորդ հրատարակությունների «ազնուփին»-ը\*:

Քննարկվող հատվածում հայտնվում է այն մասին, որ բյուզանդական կայսրը խոստացել է հայ իշխաններին տալ «օրհնուփին հոոգի»: Այս վրիպակն աշխարհաբար թարգմանությամբ կլինի «ռոճկի օրհնություն»: Սա լեզվական և պատմական անհեթեթություն է, որովհետև «ռոճկի օրհնություն» արտահայտություն և կարգ գոյություն չունի:

Վրիպակ է ոչ միայն «օրհնուփին», այլև «հոոգի» բառը, որն արտաքին տեսքով նմանվելով «հոոգ» (բօղչ) բառին՝ ոմանց կողմից ընկալվել է այդ բառի իմաստով:

Ինչպես արդեն ցույց են տվել Հայկազյան բառարանի հեղինակները, Հ. Աճառյանը («Արմատական բառարան», Ն. Բյուզանդացին («Բառգիրք ստորին հայերենի», անտիպ), Հ. Հյուբշմանը («Arm. Gramm.» II) և այլ բառարանագետներ, «հոոգ» («խոոկ», «հոոք» = «հոոքել») բառը հայ մատենագիրներից օգտագործել են «Սեբեոսի Պատմության» հեղինակը, Անանիա Շիրակացին, Ղևոնդը, Հովհաննես Դրասխանակերտցին, Քովմա Արծրունին, Ասողիկը, Մատթեոս Ուռույեցին, Արիստակես Լաստիվերցին, Մխիթար Գոշը, Սմբատ Գունդուտաբլը, Վարդան Արեվելցին, Ստեփանոս Օրբելյանը, Գրիգոր Տաթևացին, «Գիրք թղթոցի», «Պատմություն պղնձե քաղաքի» հեղինակներն ու թարգմանիչները և շատ ու շատ ուրիշ հայ մատենագիրներ: Սրանցից ոչ ոք «հոոգ»-ը օգնություն չի կոչել և չի գործածել «օգնուփին» բառի հետ միևնույն բառակապակցության մեջ: Նրանք գրել են. «Բաշխէշ զարացն հոոգս» («Սեբեոսի Պատմություն»), «Ի հոոգս աբկանէր» (Մատթ. Ուռույեցի), «տալ հոոգ զօրացն» (Մխիթայի Ասորի), «Մեծափին հոոգոյ նոցին» (Մխիթար Գոշ), «զգանձն եբաց եւ զամէն հոոգեց» («Պղնձե քաղաքի Պատմությունը», «Հ. ամս.», 1958, էջ 39) և այլն:

Մյուս կողմից էլ գիտենք, որ «Սեբեոսի Պատմության» հեղինակն «օգնուփին» բառը գործածում է ոչ թե նյութական, այլ գերազանցապես ֆիզիկական, բարոյական կամ ուզմական օգնության իմաստով: Ուստի քննարկվող արտահայտության մեջ պետք է թաքնված լինի ուժ ցույց տվող ինչ-որ բառ:

Բերենք զինվորական օգնության վերաբերյալ համապատասխան օրինակներ «Սեբեոսի Պատմությունից». «տայր նոցա զգաւսն կայսերական յալգնութիւն», «արձակեա ինձ զաւր յազնութիւն», «մատուցէ զգաւսն յալգնութիւն», «զաւրս բազումս յալգնութիւն իւր», «եթև զաւր պիտոյ է՝ արձակեցից յալգնականութիւն», «Գունդս կազմել իբրև ՀՌ (=70.000)... այլ զաւրս գումարեալ արձակեցէ յալգնականութիւն նոցա», «խնդրել ի բերդէն Դարանից զաւր յալգնականութիւն իրեանց» և այլն:

\* «Օգնուփին» և «օրհնուփին» բառերի շփոթք սովորական է: Հմմտ., օրինակ, Մ. Չամչյան, Մեկնութիւն Սաղմոսաց, Վենետիկ, 1823, էջ 337, 518 և այլուր:

Սույն արտահայտություններին ծանոթ լինելով, Ք. Պատկանյանը հանգել է այն մտքին, որ «տամ ձեզ օգնութիւն հոգի» արտահայտութիւնը նույնպէս ակնարկված է ռազմական օգնութիւնը: Նա թարգմանել է. «ДАМ ВАМ СИЛНЬЮ ПОМОЩЬ» (Սարգ., էջ 153): Լեոն ավելի որոշակի է արտահայտվել, գրելով. «Կայսրը... խոստանում էր նույնիսկ օգնական զորք տալ» («Երկերի ժողովածու», հ. Բ, Երևան, 1967, էջ 314):

Ժամանակի քաղաքական իրադրությունը նույնպէս թելադրում է մտածել ռազմական օգնութեան մասին: Հայտնի է, որ Բյուզանդական կայսրութիւնը Հայաստանին բավականաչափ զորք չտրամադրեց արաբների հարձակումից պաշտպանվելու համար և հենց դա էր պատճառը, որ Թեոդորոս Ռշտունին որոշեց արաբների հետ դաշինք կնքելով փրկել երկիրը կործանումից: Արաբները դաշինքի մեջ մտցրին հատուկ կետ, որով նախատեսվում էր Հայաստանին զորք տրամադրել հենց բյուզանդացիների դեմ. «Եթե դաշ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զաւրս յազնականութիւնս»:

Բյուզանդական կայսրը հայ-արաբական այս դաշինքի մասին իմանալով որոշում է անձամբ գալ Հայաստան և օգնութեան զորք տալ հայերին, որպէսզի «Երանք կարողանան ետ կենալ արաբներից: Բայց ամեն ինչ ապարդշուն անցավ: Թեոդորոս Ռշտունին չզավաճանեց իր խոսքին որ տվել էր արաբներին, և նախարարներից ոչ ոք չզնայց կայսրի մոտ: Այն ժամանակ Կոստանդինին ինքը զնաց Հայաստան, բայց զնաց մի ստվար բանակով, որի թիվը «Սեբեոսի Պատմութիւնում» նշված է 100 հազար» (Ան, նշված աշխ., էջ 314):

Այս 100 հազարանոց բանակը հավանաբար այն զորքն էր, որ Կոստանդ կայսրը խոստանում էր անձամբ բերել Հայաստան: Տեսնելով, որ Ռշտունին մերժել էր պահանջը, նա այդ զորքով գալիս է Հայաստան: Ճիշտ է, «Սեբեոսի Պատմութեան» հեղինակը չափազանցում է զորքերի քանակը, բայց մեզ համար կարևորը ոչ թէ քանակն է, այլ այն փաստը, որ բյուզանդական կայսրը վերացական խոստում չէ, որ տալիս էր հայերին, այլ այդ խոստման համաձայն արդէն տրամադրել էր որոշակի զորք, որի գլուխն անցած, դարձյալ խոստման համաձայն, ինքն անձամբ եկավ Հայաստան:

Արդ, քանի որ «Սեբեոսի Պատմութեան» հեղինակին, իր ժամանակակիցների նման, թվերը նշում է տառերով (համեմատոր, Երևանի, «Սևասա գունդս կազմել իբրև ՀՌ», այսինքն՝ 70.000-անոց գունդ կազմեց), բնականաբար «օգնութիւն հոգի» արտահայտութեան մեջ նույնպէս նա պետք է տառերով նշեր խոստացված ռազմական օգնութեան չափը: Ուտի քննարկվող արտահայտութեան առաջին երկու տառերը պետք է անշատել մյուսներից և կարդալ «ՀՌ» (=70.000): Մնացած երեք տառերը կազմում են «ոգի» բառը: Ըստ այսմ ամբողջ նախադասութիւնը կարդացվում է այսպէս. «Ես գամ առ ձեզ, և տամ օգնութիւն (կարող էր լինել նաև՝ «օգնութիւն») — Գ. Ա.» ՀՌ ոգի (=70.000 հոգի)\* և խորհիք ի միասին, եթէ զինչ առժամ իցէ առնել»: Մեր ընդգծած «զինչ արժան իցէ առնել» արտահայտութիւնը վերաբերում է 70.000 հոգուն. կայսրը Թեոդորոս Ռշտունուն հայտնում է, որ ինքը կգա Հայաստան և միասին կմտածեն, թե ինչ պետք է անել այդ 70.000-անոց զորքը, այսինքն՝ ինչպէս պետք է զորքն օգտագործել արաբների դեմ:

Թեոդորոս Ռշտունին այնքան նշանավոր մի զորավար էր, և Անդրկովկասյան ճակատն արաբների դեմ այնքան կարևոր էր, որ կայսրը որոշել է անձամբ գալ Հայաստան և Ռշտունու հետ միասին խորհել այս ճակատը կարգավորելու մասին: Այլապէս, նրա Հայաստան գալն անիմաստ կլիներ:

Հայտնի է, որ հին ձեռագրերում, տեղ շահելու նպատակով, բառերը գրվում էին իրար միացած առանց միմյանցից անջատելու: Սրա համապատասխան էլ՝ «ՀՌ ոգի» բառերը «Սեբեոսի Պատմութեան» նախնական բնագրում գրված են եղել հենց այնպէս միացած, ինչպէս գտնում ենք այժմ՝ «ՀՌՈԳԻ»: Ուրեմն, մենք այսօր բնագիրը սրբագրելիս փաստորեն մի առանձին նորամուծութիւն չենք կատարում, այլ պարզապէս անշատում ենք միասին գրված երեք տառերը բառեր («Հ», «Ռ», «ոգի»):

Հնագույն ձեռագրի (№ 2639) գրիչը «Հ» և «Ռ» տառերը փոխանակ գրելու մեծատառով, անտալաբար գրել է փոքրատառերով և շանջատելով «ոգի» բառից, ակամայից ստեղծել է «հոգ» (ռոճիկ) բառին նմանվող մի բառ՝ «հոգի»:

«Սեբեոսի Պատմութեան» մեջ պահպանվել են մի շարք տեղեկութիւններ, որոնք պատմա-

\* Հմմտ. «Թիւ մարդկանն ապականելոց ի շարժմանէ՝ ոգի առուել քան ՀՌ» (Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 372):

գիտությունը հայտնի են դարձել միայն հայ պատմիչի շնորհիվ\*։ 70.000-անոց զորքին վերաբերող տեղեկությունը դրանցից մեկն է։

Հ. Բարթիկյանը գրում է. «ՀՈՒ ոգի» սրբագրությունը համոզիչ չէ. առաջին, որովհետև հազիվ թե բյուզանդական կայսրը հակառակորդին (մանապակեղ եթե ընդունենք Աբգարյանի վերոհիշյալ մեկնությունը՝ ուրացող հակառակորդին) խոստանար այդպիսի անհավատալիորեն մեծ քանակությամբ զորք, և երկրորդ. Սեբեոսի Պատմության մեջ հոռու կողմած է նվեր, որը ոչ մի կերպ չի հարմարվում զորքին, «...Կոստանդինը (Միրանածինը—Պ. Ա.) դա կոչում է ճարձ, ճիշտ այնպես, ինչպես և Սեբեոսի մոտ» («Византийский временник», XXVIII, 1968, էջ 288; Հմմտ. նաև «Կ. Միրանածին», Երևան, 1970, էջ 319, ծ. 30)։

Սույն առարկության երկու մասն էլ իրականությանը չեն համապատասխանում։ Առաջին. կայսրը Ռշտունուն 70.000-անոց զորք տրամադրելու էր, անշուշտ, ոչ թե այն ժամանակ, երբ հայոց իշխանը շարունակելու էր մնալ որպես նրա ուրացող հակառակորդը, այլ այն դեպքում, երբ նա միանալով կայսրին կովեր արարներին դեմ. (Հինց արարներին դեմ կովելու համար է, որ կայսրը Ռշտունուն առաջադրում էր զորքը)։ Ըստ որում՝ զորքի քանակի չափազանցված լինելը չի կարող դիտվել որպես զորքի գոյությունը առհասարակ ժխտող կովան։ Չափազանցությունների դիմել են հայ և հույն նաև այլ մատենագիրներ, բայց դա չի խանգարել նրանց երկերի օգտագործմանը։

Երկրորդ. եթե նույնիսկ ընդունենք, որ բնագրում եղել է ոչ թե «օգնութիւն», այլ «օրհնութիւն», դարձյալ Կոստանդին Միրանածինը և Սեբեոսի Պատմության միջև կապ չկա։ «Օրհնութիւն» բառը համապատասխանում է հունարեն ոչ թե ճարձ-ին, այլ εὐλογία-ին։ Հայ մատենագրության մեջ «օրհնութիւն» բառը նյութական նվերի իմաստ արտահայտում է միայն հունարենից թարգմանված եկեղեցական գրականության մեջ և միայն այն դեպքում, երբ հունարեն բնագրում նրան համապատասխանում է εὐλογία բառը։ Այս բառը հունարենում նույնպես նյութական նվերի իմաստ արտահայտում է միայն հազվագյուտ դեպքերում և միայն եկեղեցական գրականության մեջ։ Այնպես որ նրա գործածության հնարավորությունը Թեոֆորոս Ռշտունուն ուղղված կայսերական նամակում բացառվում է։

Որ այդ նամակում գործածված բառը վերաբերում է ուղղական օգնությանը (և ոչ թե «օրհնությանը»), այդ մասին կողմնակիորեն վկայում է նաև Թեոֆանեսի հետևյալ տեղեկությունը. «Այս թվականին (աշխարհի արարչագործության 6143 թ.—Պ. Ա.) կայսեր դեմ ապստամբեց հայոց պատրիկ Պասագնաթեսը (իմա Թեոֆորոս Ռշտունին—Պ. Ա.) և դաշինք կնքեց Մավիայի հետ... Կայսրը իմանալով այդ մասին՝ եկավ մինչև Կապադովկիայի Կեսարիա, բայց Հայաստանից հույսը կտրած՝ վերադարձավ» (Theophanis, Chronographia, Bonnae, 1839, t. I, էջ 527 և Ան, նշված աշխ., էջ 734, ծ. 76)։ Պարզ երևում է, որ կայսրը Կապադովկիա է եկել հայոց պատրիկի հետ ուղղական բանակցություններ վարելու (և ոչ թե Ռշտունուն ռոճիկ տալու) նպատակով։ Ռշտունին չի համաձայնվել, այդ իսկ պատճառով էլ կայսրը «Հայաստանից հույսը կտրած վերադարձավ»։

Թեոֆորոս Ռշտունու հետ ուղղական գործողությունների շուրջ բանակցություններ վարելու հնարավորությունները Բարթիկյանը ժխտում է նաև այն պատճառաբանությամբ, թե «VII դարի կեսերից սկսած մինչև IX դարի երկրորդ կեսը Բյուզանդական կայսրությունը հայ իշխանների հետ անմիջական շփման մեջ չէր կարող մտնել այն պարզ պատճառով, որ Հայաստանը գտնվում էր արարական տիրապետության ներքո» (Կոստանդին Միրանածին, էջ 219, ծ. 30)։ Եթե «VII դարի կեսեր» արտահայտությամբ հասկանանք նաև այդ դարի երկրորդ կեսը, մասնավորապես՝ 653 թվականը, երբ կնքվեց հայ-արաբական դաշինքը, կտեսնենք, որ Բարթիկյանը մեկ գրում է, թե այդ թվականին «Բյուզանդական կայսրությունը հայ իշխանների հետ անմիջական շփման մեջ չէր կարող մտնել», մեկ էլ՝ միևնույն պարբերության մեջ հայտարարում է, թե այդ նույն թվականին «բյուզանդական կայսր Կոստանդ 2-րդը (641—668)... դիմեց հայոց իշխան Թեոֆորոս Ռշտունուն, առաջարկելով հոռոգ (ռոճիկ)»։ Ստացվում է այնպես, որ 653 թ. բյուզանդական կայսրը Ռշտունու հետ 70.000-անոց զորքի մասին թանկացել չէր կարող («այն պարզ պատճառով, որ Հայաստանը գտնվում էր արաբական տիրապետության ներքո»), իսկ ռոճիկի մասին բանակցել կարող էր։

Ռշտունուն ռոճիկ առաջարկելու մասին առհասարակ խոսք լինել չի կարող, որովհետև Կոստանդ 2-րդը հայոց զորավարին ռոճիկ նշանակել էր դեռևս խնդրո առարկա դեպքից առաջ։

\* Տե՛ս, օրինակ, А. И. Колесников, Иран в начале VII века, «Палестинский сборник» вып. 28 (85). Л., 1970, стр. 52, 69, 70, 71, 82, 83 և այլն։

«Սեբեոսի Պատմության» հեղինակը կայսեր նշանակած այդ ոտճիկի մասին հայտնում է, գործածելով հենց «ոտճիկ» և ոչ թե «հոռո» բառը, որը հեղինակի բառապաշարում այլ նշանակություն ունի\*։ Նա գրում է. «Եւ կարգեաց (կայսրը—Գ. Ա.) նմա (Ռշտունուն—Գ. Ա.) ոտճիկ»։ Այստեղ ուշադրության արժանի է նաև «կարգեաց» բառը։ Կայսրը իսկապես կարգում էր և ոչ թե ինքն էր ոտճիկ բաժանում։ Գոյություն ունեին ոտճիկ բաժանելու հատուկ տոնական օրիք (սովորաբար՝ դատկի օրերը), երբ ոտճիկ ստացողները գնում էին Կոստանդնուպոլիս և պետական գանձարանից անձամբ ստանում իրենց հասանելիքը։ Կայսրը ոտճիկ տալու համար Հայաստան չէր գա, նա գալիս էր, ինչպես ասվեց, որպեսզի Ռշտունու հետ միասին խորհեին, թե «Հոռոց» բաղկացած զորքը ինչպես հանեին արարների դեմ։

Բյուզանդական կառավարության մեջ ընդունված կանոնների համաձայն, ոտճիկը տրվում էր սլատվի աստիճանին կից\*\*, կնշանակի Ռշտունին կայսրից ոտճիկ ստանում էր սկսած հենց այն ժամանակներից, երբ նրան շնորհել էին իշխանի աստիճան։ Բայց այդ աստիճանը Ռշտունու նման պետական մի գործիչ համար այնքան աննշան մի բան էր, որից նա գիտակցաբար հրաժարվեց և անցավ արարների կողմը։ Քննարկվող ժամանակաշրջանում արարներն այնքան էին հզորացել, որ հարցականի տակ էին դրել նույնիսկ հենց Բյուզանդական կայսրության գոյության հարցը։ Նրանք 636—653 թթ. ընթացքում գրեթե ամեն տարի գրավում էին բյուզանդական որոշ տեղիտորիս՝ Սիրիա (636), Երուսաղեմ (647), Անտիոք (638), Եփեսոս (640—642), Կիրենաիկա, Տրիպոլիտանիա (642—643), Հյուսիսային Աֆրիկա (647), Փոքր Ասիա (651) և այլն (հմմտ. Մ. Диль, История Византийской империи. Перевод с французского А. Е. Пергинской, М., 1948, էջ 48—49)։ Այսպիսի պայմաններում հայոց զորավարը բնականաբար պետք է մերժեր Բյուզանդական կայսրության խոստացած ռազմական օգնությունը և դաշինք կնքեր ժամանակի ամենազորեղ քաղաքական ուժի՝ արարների հետ։

619. Վասն հարուածոց, որ եղեն ի Մարդոցէսն»։ Միհրդատյանը «Մարդոցէսն» բառի կապակցությամբ գրում է. «Գուցէ նշանակէ ի մարտուցեալսն կամ ի մարտկոցսն» (Միհրդ., էջ 216)։ Ք. Պատկանյանը (Ստր., էջ 153) միևնույն բառի կապակցությամբ տողատակին ծանոթագրել է. «Զգիտենք՝ ինչ է նշանակում մարդոցես—աղավաղված բառ է, թե՛ հատուկ անուն»։ Հետազայում, սակայն, նա ճշտել է իր տեղեկությունը, գրելով. «Մարդոցէս. ո՛չ մարտուցեալ և ո՛չ մարտկոց, որպէս կարծէ հրատարակիչն (1851), այլ անուն տեղիս ինչ ի Գոգովիտ գաւառի, որպէս ասէ Ղևոնդ. «Պոռկոպ որ էր բնակեալ ի գաւառին Գոգովիտ ի սահմանս Բազու ձորոյ և Մարդուցայից» (Պատկ., էջ 202)։ Հյուբշմանը (Hübisch., էջ 31, ծ. 3) տեղյակ չլինելով Պատկանյանի հայերեն հրատարակությանը կից այս բացատրությանը, չի թարգմանել և տողատակ է իջեցրել «որ եղեն ի Մարդոցէսն» բառերը, նրանց դիմաց դնելով հարցական նշան։ Մակլերը (Macé., էջ 133, ծ. 3) նույնությամբ հետեւելով Հյուբշմանին, բաց է թողել նույն բառերը և տողատակին ծանոթագրել է. «Այս հասվածն աղճատված է և Ա. Մեյեն մեղ տեղեկացնում է, թե Պատկանյանը, իր ոտաերեն թարգմանության մեջ, չի հասկացել Մարդոցէսը»։ Սակայն եթե Մակլերը ծանոթ լիներ Պատկանյանի հայերեն թարգմանությանը կից ծանոթագրություններին, կիմանար, որ Մարդոցես-ը տեղանուն է, որ հիշատակվում է նաև Ղևոնդի մոտ։

«Մարդոցէս»-ի ստուգաբանությանը անդրադարձել է ն. Աղոնցը, որն այս տեղանունը բացատրում է «մարդերի երկիր» նշանակությամբ։ Ինչպես որ «Կորճ-էք», Հայաստան-եայք» անունների մեջ «էք» և «եայք» մասնիկները ցույց են տալիս «բնակիչներ» հասկացությունը, այնպես էլ Մարդոցէս-ը կամ Մարդուցայք-ը կազմված լինելով նույն մասնիկներով, նշանակում են «Մարդոցի բնակիչներ», այսինքն՝ «մարդեր»։ «Այս մարդերից է բխում նաև այն իշխանական տոհմը, որի ներկայացուցիչը կրում էր «մարդպետ», այսինքն՝ «մարդերի պետ» անունը։ Հետագայում այս անունը վերածվեց տոհմական տիտղոսի, ինչպես՝ մալխազ, ասպետ։ Եվ ինչպես, որ վերջիններս կրողներն սկսեցին կոչվել Մալխազունի, Ասպետունի, ճիշտ այդպես էլ մարդ-

\* «Հոռո» բառը «Սեբեոսի Պատմության» հեղինակը գործածում է շարքային զինվորների բաշխվող շնչին նպաստի իմաստով. «Տայր գաւրավարին և իշխանացն մեծամեծ ընծայու։ Եւ բաշխէր զգարացն հոռոս և ճաշ և ընթրիս»։ Ինչպես տեսնում ենք, պատմիչը զորավարներին և իշխաններին տրված բարձր պարգևները զանազանում է հասարակ զինվորներին բաժանված հոռոցից, որը ճաշին և ընթրիքին հավասար մի բան է «Սեբեոսի Պատմությունում»։

\*\* Տե՛ս Скабаланиович, Византийское государство и церковь в XI веке, СПб., 1884, էջ 161։ Նաև՝ «Сборник документов по социально-экономической истории Византии», М., 1951, стр. 309.

պետների տոհմը և նրանց տիրությունները կոչվեցին Մարդպետ-ական, այսինքն՝ մարդպետական» (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, издание второе, էջ 417, նաև՝ ծ. 5): (Հմտ. նաև՝ Малх., էջ 176, ծ. 193):

Ս. Տ. Երեմյանը Մարդոցես-ը նույնացնում է Մարդաստանի հետ (տե՛ս «Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», քարտեզ Գ<sub>6</sub>) և ծանոթագրում է. «Վասպուրականի 14-րդ գավառն է, 1265 կմ<sup>2</sup> տարածությունը: Գտնվում էր Մակու քաղաքից դեպի արևմուտք, Վասպուրականի (Կոտուրի) լեռների արևելյան փեղերին» (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 65):

620. «Եւ իրև եհաւ ի Սերջան»: Միհրդատյանի հրատարակությունը հնագույն ձեռագրի «Կերջան»-ի փոխարեն ունի Քերջան: Հ. Հյուբշմանը (Hübisch., էջ 31, ծ. 5) սա հարցականով եմանեցնում է Կերջանի հետ և ծանոթագրում. «Գավառ Բարձր Հայքում, Կարինից հարավ-արևմուտք»: Ս. Տ. Երեմյանի կազմած քարտեզի («Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի») վրա Կերջան գավառը նշված է Գ<sub>4</sub> վանդակում: Այժմ էլ գոյություն ունի Քերջան կամ Մամախաթուն անունով վայր Քուրքիայում:

'Կերջան գավառը «Բարձր Հայքի 6-րդ գավառն է, հուն. այժմյան Քերջանը՝ Եփրատ գետի հովտում, որտեղ այն լայնանում է, կազմելով դաշտավայր (այժմ կոչվում է Քերջան օվասի): Այս գավառի տարածությունն է շուրջ 2575 կմ<sup>2</sup>: Այս գավառում հայտնի է Բագաոիճ ավանը Միհրի տաճարով», («Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 49):

621. «Աշխարհն իմ է՝ ես երթամ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «աշխարհն իմ, և ես երթամ»: Ուղղել ենք «աշխարհն իմ է՝ ես երթամ», այսինքն՝ աշխարհն իմն է, դրա համար էլ այնտեղ ես եմ գնում: Ձեռագրերում «է» օժանդակ բայը սխալմամբ կարդացվել է «և», որի հետևանքով՝ «իմ է» արտահայտությունը զարձել է «իմ և»: Չամխյանը (Չամ., էջ 225) առաջարկել է սրբագրել «իմ է և», սակայն այս դեպքում մեր կողմից բնագրի մեջ ներմուծած կլինեինք «է» օժանդակ բայը, առանց «և»-ին ձեռք տալու: Այնինչ՝ պարզ երևում է, որ «և»-ը հենց աղճատված «է» օժանդակ բայն է և պետք է վերանայով իր տեղը դիջել նրան:

622. «Ընդ առջ եղեն նմա իշխանք և զաւր Զորորդ կռչեցեալ Հայոց»: Զորորդ Հայքը, որը կոչվում է նաև Մոփաց աշխարհ, Ս. Տ. Երեմյանի քարտեզի վրա զբաղեցնում է Գ<sub>3</sub>-Գ<sub>4</sub> վանդակները: Մեծ Հայքի 2-րդ նահանգը, որ բաժանված էր 8 գավառների և ուներ 15390 կմ<sup>2</sup> տարածություն: Այս նահանգը ընդգրկում էր հելլենիստական ժամանակաշրջանի Մոփաց քաղաքապետության տերիտորիան, ուստի կոչվում էր Մոփաց կողմ: 387 թ. հետո հիշյալ նահանգի տերիտորիան բաղկացած էր հինգ նախարարական տերություններից—սատրապիաներից, որոնք բյուզանդական օրենսդրական աղբյուրներում անվանվում են gens, այսինքն՝ «ազգեր»: Հուստինիանոս Ա-ի 536 թ. նովելայով Մոփաց կողմը դառնում է առանձին պրովինցիա՝ Զորորդ Հայք (Armenia Quarta) անունով (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 57):

623. «Եւ Գրիգոր որչի նորա, որ էր փեսայ Ռշտունեաց տեառն»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «նորա էր փեսայ»: Ուղղեցինք «նորա, որ էր փեսայ»: Առանց մեր վերականգնած «որ» դերանվան՝ բնագիրը ճիշտ չի հասկացվել և վերծանվել է զանազան ձևերով: Ավելի պարզ պատկերացում տալու համար բերենք ամբողջ հատվածն ըստ նախորդ հրատարակությունների. «Իսկ Քէղորոս Վահևունեաց տէրն կալաւ զբերդն Արփայս. և Գրիգոր որդի նորա էր փեսայ Ռշտունեաց տեառն. և Վարազ Ներսէհն Դաշտկարին ամրացան ի բացուոջն, և բռնացան ի վերայ գանձուցն» (ՍեՊ, էջ 142): Ինչպես տեսնում ենք, «և Գրիգոր որդի նորա էր փեսայ Ռշտունեաց տեառն» արտահայտությունն անկախ արտահայտություն է և կարող է ընկալվել առանց կապվելու իրեն հաջորդող նախադասության հետ: Այդպես են ընկալել Պատկանյանը (ՍեՊ, էջ 154) և Մալխասյանը (Մալխ., էջ 118): Սակայն, երբ այդ արտահայտությունն չի կապվում հաջորդի հետ, վերջինս դառնում է անկանոն ու աղճատված, այսպես. «և Վարազ ներսէհն Դաշտկարին ամրացան ի բացուոջն, և բռնացան ի վերայ գանձուցն»: Մեր ընդգծած «ամրացան» և «բռնացան» բառերը հոգնակի թիվ են արտահայտում, այնինչ՝ հիշատակված է միայն Վարազ ներսէհնը: Մույն անկանոնությունը վերացվում է միայն այն դեպքում, երբ Ռշտունյաց փեսա Գրիգորին վերաբերող նախադասությունը նույնպես կապում ենք այս նախադասության հետ: Այդպես են վարվել Հ. Հյուբշմանը (Hübisch., էջ 32) և Ֆ. Մակլերը (MacI., էջ 135):

Ստ. Մալխասյանը (Մալխ., էջ 177, ծ. 198) գրում է. «Կամ Վարազ ներսեհից հետո բաց է թողնված մեկ ուրիշ անուն, կամ էլ նախորդ արտահայտությունը պետք է սրբագրել և վերականգնել այսպես. «և Գրիգոր որդի նորա, որ էր փեսայ Ռշտունեաց տեառն, և Վարազ-Ներսեհն Դաշտկարին ամրացան»: Այս վերջին սրբագրությունը իսկապես կանոնավորում է բնագիրը և

կասկած չկա, որ այսպես է եղել նաև նախնական բնագրում: Միևնույն սրբագրութունն է առաջարկել նաև Զամինյանը (Զամ., էջ 227), որոնց հիման վրա էլ մենք սրբագրել ենք բնագիրը:

624. Եւ Վարազ Ներսէնն Դաշտկարին: Մտ. Մալխասյանցը (ՄԱՃՄԽ., էջ 177, ծ. 193) գրում է. «Դաշտկարի տեղը հայտնի չէ: Դվինի Է05 թ. ծոցովին, ի միջի այլոց, մասնակցում էր Դաշտկարանի իշխանը, Վարազ-Ներսէ՛՛ն անվամբ: Դաշտկարը և Դաշտկարանը անշուշտ անուններն են միևնույն վայրի, որի (աշխարհագրական) դիրքը ծանոթ չէ, իսկ «ՍԵՐԵՏՈՒ Պատմութիւնում» հիշատակված Վարազ-Ներսէ՛՛նը, հավանաբար, առաջինի ծոռան ծոռն էր, որովհետև հայերը սովորութիւն ունեն երեխաներին կոչել պապերի անուններով»:

Այսպես, Դաշտկարը որպես տեղանուն ընկալելով հանդերձ Մալխասյանցը (Մալխ., էջ 118) դա թարգմանել է որպես անձնանուն. «А Вараз Нерсех Дашткарин»: Սրան հակառակ, նա հիշյալ ծանոթագրութեան մեջ վերծանել է «и Вараз-Нерсех Даштکارа», որի համաձայն՝ Դաշտկարն ընկալված է որպես տեղանուն:

«ՍԵՐԵՏՈՒ Պատմության» մյուս բոլոր թարգմանիչները Դաշտկարինը վերծանել են որպես անձնանուն (Սատկ., էջ 154, Hübsch., էջ 32, Macl., էջ 135):

Զնայած այս անվան վերջավորութիւնը մեղ հիշեցնում է Մովսես Կաղանկատվացու (Քիֆ-լիս, 1913, էջ 152) հիշատակած Քրտակարին (Καρδαριγας) անվան վերջավորութիւնը և դրանով իսկպպես անձնանվան տպավորութիւն է թողնում, այնուամենայնիվ, Վարազ Ներսէ՛՛ն անվան կոչքին անբնական ձևով հայտնված այդ մականունն այնքան արտասովոր է թվում, որ մեզ թելադրում է կարծելու, որ «Դաշտկարին» բառի փոխարեն նախնական բնագրում եղել է «դաշտակողմանն» բառը: Մեր այս ենթադրութիւնը փաստարկվում է քննարկվող հատվածին հաջորդող պարբերութեան հետևյալ տեղեկութեամբ. «Այլ զարքն նստէին շուրջ զԱրփայի ի լեռնակողմանն և ի դաշտակողմանն»: Ինչպես տեսնում ենք, Արփա ամրոցն ունեցել է լեռնային կողմ և դաշտային կողմ: Ահա գրեթէ նույն բովանդակութիւնն ենք ենթադրում նաև Դաշտկարին անունը պարունակող հատվածում: Այնտեղ նույնպես հայտնվում է, որ հայոց իշխանների մի մասը գրավեց ամրոցը, իսկ մյուսները «ամրացան ի բացուղն»: Այս «բացուղն»-ը պետք է գտնվեր լեռնակողման հակառակ մի տեղում, այսինքն՝ ամրոցի դաշտային կողմում: Ուստի շատ հնարավոր է, որ պատմիչը գրած լինէր այսպես. «Թէ՛ղորոս Վահևունեաց տէրն յաշու գրբորն Արփայս. և Գրիգոր... և Վարազ Ներսէ՛՛ն ի դաշտակողմանն (փիս. Դաշտկարին) ամրացան ի բացուղն»:

625. «Ամրացան ի բացուղն»: Մալխասյանցը (Մալխ., էջ 177, ծ. 198) գրում է. «Ի բացուղն» = բաց տեղում «խոսքը կասկած է հարուցում: Գուցե դա ինչ որ տեղանվան աղհատումն է»: Կասկածն արդարացի է, որովհետև դժվար է հավատալ, թե երկրի գանձերը, որոնք սովորաբար հավաքվում և պահվում էին անառիկ ամրոցներում, այս անգամ պահվեին «Ի բացուղն»: Թննարկվող հատվածի բովանդակութիւնն է. «ամրացան ի բացուղն և բռնացան ի վերայ գանձուցն. զի անդ էին ամենայն գանձէն աշխարհին եկեղեցու և իշխանաց և վաճառականաց»:

Ինչպես երևում է բնագրից պետք է հասկանալ այնպես, թե «անդ էին ամենայն գանձէն աշխարհին» արտահայտութիւնը վերաբերում է ոչ թե «Ի բացուղն» բառին, այլ դրանից առաջ հիշված Արփայը ամրոցին: Հայ իշխանների մի մասը գրավել են այդ ամրոցը («Թէ՛ղորոս Վահևունեաց տէրն կալա գրբորն Արփայ»), իսկ մյուս մասն ամրացել էր բերդը շրջապատող բաց տեղերում, որպեսզի պահպանի ամրոցի շրջերը և թշնամուն թույլ չտա գրավելու այն գանձերը, որ «անդ էին», այսինքն՝ ամրոցում էին: Այսպիսով՝ մենք «և բռնացան ի վերայ գանձուցն, զի անդ էին ամենայն գանձէն աշխարհին» արտահայտութիւնը վերագրում ենք ոչ թե միայն իրեն անմիջապես նախորդող բառերին («և Գրիգոր որդի նորա, որ էր փեսայ Ռշտունեաց տեանն և Վարազ Ներսէ՛՛ն Դաշտկարին ամրացան ի բացուղն»), այլև փակագծերում բերվածից անմիջապես առաջ գտնվող ժողովրդի թէ՛ղորոս Վահևունեաց տէրն կալա գրբորն Արփայ» նախադասութեանը: Ըստ այսմ ամրոցը հատվածի վերծանութիւնը կլինի այսպես. «Իսկ Թէ՛ղորոս Վահևունեաց տերը (կարելի էր թարգմանել նաև «Իսկ Վահևունյաց տեր Թէ՛ղորոսը») գրավեց Արփայը բերդը, իսկ նրա որդի Գրիգորը (որ Ռշտունյաց տիրոջ վեսան էր) և Վարազ Ներսէ՛՛ն Դաշտկարինը ամրացան բացատում, և բռնի իշխեցին գանձերին, որովհետև այնտեղ (ամրոցում—Գ. Ա.) էին երկրի բոլոր գանձերը, եկեղեցու, իշխանների և վաճառականների»:

626. «Եւ ինքն գնաց յԱյրարատ»: Մալխասյանցն իր հրատարակութեան 143-րդ էջի տողատակի ծանոթագրութեան մեջ հայտնում է, թե բոլոր ձեռագրերն ու նախորդ հրատարակութիւններն ունեն «Այրարատ», որն ինքն ուղղում է «յԱյրարատ»: Իրականում, սակայն, ինչպես ձեռագրերը, այնպես էլ Մալխասյանցին նախորդած բոլոր հրատարակութիւններն ունեն հենց այն



(«ՅԱյրարատ»), ինչ հրապարակել է Մալխասյանցը: Վերջինս պարզապես անուշադրաբար վրիպել է:

627. «Այլ զարբն»: Այստեղ «այլ» բառն ունի «ուրիշ», «մյուս բաների իմաստը, որը ճիշտ են թարգմանել Հյուբշմանը (Hübsch., էջ 33) և Մակլերը (Macl., էջ 135): Մյուս թարգմանիչները բառը կամ չեն թարգմանել (Патк., էջ 155) կամ էլ ճիշտ չեն թարգմանել (Малх., էջ 118):

628. «Այլ զարբն նստէին շուրջ զԱրփայի ի լեռնակաղմանն և ի դաշտակաղմանն»: Մեզ հասած հնագույն ձեռագիրը (2639) և նրանից արտագրված մյուս ձեռագրերը, ինչպես նաև Երիցյանի արխիվի ձեռագիրն ու Միհրդատյանի օգտագործած ընդօրինակումները «շուրջ զԱրփայի» արտահայտության փոխարեն ունեն «շուրջ զարբայի»: Ք. Պատկանյանը ուսերեն թարգմանել է «շուրջ զԱրփայի» («вокруг Арпа»), որովհետև իր օգտագործած ձեռագիրն ունեցել է այդ ընթերցվածը: Այդ մասին նա հայտնում է սողառատակին. «В издании: шурцъ зарбъайи. В рукописи—զԱրփայի»: Չնայած սրան՝ նա հետագայում հայերեն տեքստը հրատարակել է ոչ թե ըստ իր ունեցած ձեռագրի և թարգմանության, այլ՝ ըստ Միհրդատյանի հրատարակության «շուրջ զարբայի»: Ինչպես երևում է, նրան վերջին հաշվով համոզել է երևացել այդ ընթերցումը: Երկմտանքը շարունակվել է նաև մյուս մասնագետների մեջ: Այսպես. Հյուբշմանը (Hübsch., էջ 33) թարգմանել է «շուրջ զԱրփայի» («um Arphay»), իսկ Մակլերը (Macl., էջ 135)՝ «շուրջ զարբայի» («autour du roi»): Զամինյանը (Չամ., էջ 228) ընտրել է «շուրջ զԱրփայի» ընթերցվածը: Այդպես է վարվել նաև Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 143, Малх., էջ 119):

Հրատարակիչներից ու թարգմանիչներից ոչ ոք չի փորձել պատճառաբանել, թե ինչու է տպագրել այս կամ այն ընթերցվածը: Մենք ընտրել ենք «շուրջ զԱրփայի» ընթերցվածը՝ հետևյալ պատճառաբանությամբ: Քննարկվող հատվածում հայտնվում է, որ բյուզանդական կայսրը գալիս է Հայաստան պատժելու համար ապստամբ իշխաններին: Նա «երթեալ ի Դուին՝ նստա ի տան կաթողիկոսին»: Այստեղ նա իր հետ բերած 100.000-անոց զորքի մեծ մասն ուղարկում է ետ («արձակեաց անդրէն զզարացն բազմութիւն») և իր հետ թողնում է միայն 20.000 զինվոր, որպեսզի նրանց ուղարկի ապստամբների դեմ՝ Վասպուրական («ի կողմն Սեպհական գնդին»), «ի Վիրս, և յԱղուանս, և ի Սիւնիս»: Նա մյուս զորքերին ետ ուղարկեց անշուշտ այն պատճառով, որ «կաթողիկոսն և Մուշեղ ամենայն իշխանաւ Հայոց» (բացի ապստամբներից, որոնք գտնվում էին Վասպուրականում) հավատարմություն հայտնեցին կայսրը: Ուրեմն կայսրը Դվինում, կաթողիկոսի տան նստած, շրջապատված էր հավատարիմ իշխաններով և կարիք չուներ իր շուրջը զորք պահելու: (Եթե նա չվստահեր իրեն հավատարմություն հայտնած իշխաններին, զորքը ետ չէր ուղարկի, կպահեր առժամանակ): Այս տրամաբանությամբ մենք կարծում ենք, որ «այլ զարբն նստէին շուրջ զարբայի» արտահայտությունը վրիպակ է: Նրա փոխարեն եղել է «շուրջ զԱրփայի»:

Մեր սույն ենթադրությունն ապացուցվում է նաև քննարկվող հատվածին նախորդող պարբերության մեջ հայտնվող այն տեղեկությամբ, որ ապստամբ իշխանները գրավել էին Արփա բերդը («Թեոդորոս Վահևունեաց տէրն կալալ զբերդն Արփայս»): Սա նշանակում է, որ բյուզանդական կայսրը Հայաստան գալով՝ իր զորքերի մի մասն էլ հատկացնելու էր Արփա ամրոցը գրավելու համար, մանավանդ որ այդ ամրոցում էր պահվում «ամենայն գանձքն աշխարհին»:

Հյուբշմանը (Hübsch., էջ 32) հենվելով Ինճիճյանի (Ստորագրութիւն հին Հայ., էջ 511) ցուցման վրա՝ Արփա անունով մի գյուղ նշում է Վայոց ձորում: Նույն կարծիքին է նաև Մալխասյանցը (Малх., էջ 177, ծ. 197), որը գրում է «Արփայք կամ Արփա անունով գոյություն ունեն գյուղ և ամրոց Որոտան գետի մոտ, Ուլցքից ոչ հեռու, Սյունյաց նահանգի Սղուկ գավառում»: Եթե անգամ ընդունենք, որ հեղինակի հիշատակած Արփայք բերդն իսկապես գտնվում էր Սյունիքում, դարձյալ կտեսնենք, որ հեղինակը բյուզանդական կայսրից ապստամբած զորքերին բաժանում է առանձին-առանձին՝ Սյունիքի և Արփայքի վրա. «Եւ էին ընդ նմա (այսինքն՝ Թեոդորոս Ոշտունու հետ միասին ապստամբել էին—Գ. Ա.) միաբան Վրացին և Աղուանն և Սիւնին. որք ըստ հրամանի նորա գնացին յիրաքանչիւր աշխարհս և ամբացան ի նմին: Իսկ Թեոդորոս Վահևունեաց տէրն կալալ զբերդն Արփայս» (ՍԵՊ, էջ 142): Ինչպես տեսնում ենք, Արփայքը և Սյունիքը նշված են, որպես տարբեր վայրեր:

Այս թվարկմանը (Վիրք, Աղուանք, Սիւնիք, Արփայք) զուգարկելով նաև Սեպհական գնդի կողմերը (որտեղ ամբացել էր ապստամբ Թեոդորոս Ոշտունին) կատանանք ապստամբության հինգ օջախ: Կնշանակի բյուզանդական կայսրն իր զորքերն ուղարկելու էր հիշյալ հինգ կետերով: Ահա այս հինգ կետերը կլրանան միայն այն դեպքում, եթե բնագիրը վերծանենք «Այլ զարբն նստա շուրջ զԱրփայի» իմաստով:

Միևնույն իմաստի օգտին են խոսում նաև «շուրջ զԱրփայի» բառերին անմիջապես հաջորդող «ի լեռնակողմանն և ի դաշտակողմանն» բառերը, որոնք հիշեցնում են Արփայք ամրոցի շրջակայքը՝ լեռնոտ կողմը և դաշտային մասը («ի բացուշն»)։

629. «Վիրք թէպէտ առ ժամանակ մի ոչ կամեցան հնազանդել, սակայն յետոյ նուաճեալ ի ծառայութիւն»։ Բոլոր ձեռագրերն ու տպագիրները «Վիրք» անվան փոխարեն ունեն «իսկ» բառը։ Մենք սրբագրել ենք «Վիրք» հետևյալ պատճառաբանութեամբ։

Նախորդ ծանոթագրութեան մեջ տեսանք, որ բյուզանդացիների դեմ ապստամբած զորքերը գտնվում էին հինգ վայրերում՝ Սեպհական գնդի կողմեր, Արփայք, Սյունիք, Վրաստան, Աղվանք։ Սրանցից մեկը կամ երկուսը առժամանակ դիմադրելուց հետո հնազանդվում են. «...թէպէտ առ ժամանակ մի ոչ կամեցան հնազանդել, սակայն, յետոյ նուաճեալ ի ծառայութիւն։ Բայց Աղուանն և Միւնին և Գունդն Սեպհական ոչ հնազանդեցան»։ «Բայց»-ին նախորդող նախադասութեան մեջ պակասում են այն վայրի կամ վայրերի անունները, որոնց վերաբերում է հոգնակի թվով գործածված «ոչ կամեցան հնազանդել» արտահայտությունը. հայտնի չէ։ Թե ո՞ր վայրերն են, որ «առ ժամանակ ոչ կամեցան հնազանդել»։ Պարզ է, որ պատմիչն անպայման պետք է գրած լիներ նրանց անունները, որպեսզի հետո դրանց հակադրել Աղվանքը, Սյունիքը և Գունդն Սեպհական, որոնք «ոչ հնազանդեցան»։ Քանի որ այս երեքի անունները հիշատակված են չհնազանդվածների շարքում, կերականգնելին միայն մեկն է՝ Վիրքը, որովհետև նախ՝ ձեռագրերում մեկ բառ կա աղավաղված (դա «իսկ» բառն է, որը «Վիրք» անվան աղճատված ձևն է), և երկրորդ՝ «ոչ նուաճեալ ի ծառայութիւն» արտահայտությունը կարող է վերաբերել միայն ու միայն երկրի, ժողովրդի և ոչ ամրոցի։ Բացի այդ, Արփայք ամրոցը մտնում էր Սյունյաց աշխարհի մեջ, իսկ պատմիչը Սյունիքի անունը արդեն թվարկել էր ի շարս ոչ չհնազանդյալների, ուրեմն նա կարող էր այս անգամ բավականանալ այդ անվամբ և այլևս առանձին չնշել Արփայի անունը։ Այսպիսով, անստարկելիորեն չհիշատակված է մնում Վիրքը, այդ իսկ պատճառով էլ մենք միայն Վիրքի անունն ենք վերականգնում բնագրի մեջ, այս ձևով. «Վիրք» (փխ. «իսկ») թէպէտ առ ժամանակ մի ոչ կամեցան հնազանդել, սակայն յետոյ նուաճեալ ի ծառայութիւն»։ Ինչպես տեսնում ենք, առանց «Վիրք» անվան նախադասությունը պակասավոր է։

Այս պակասը նկատել է դեռևս 1926 թ. Թ. Ավդալբեգյանը, որը գրում է. «Վիրքն բառը Սեբեոսի բնագրում չկա, մենք ենք աղելացնում»։ Սրանով կրկին մեջտեղ է գալիս ապստամբների քառանուն ցանկը, որ ծանոթ է մեզ։ Սրանցից երեքը չեն հնազանդվում և պատմվում են. հարատև ըմբոստներն են՝ Աղվանք, Սյունին և Սեփական գունդը։ Ո՞վ կարող է լինել «ի ծառայութիւն» շորորդը։— Անշուշտ և միայն վրացիք» (Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, էջ 145)։ Սույն ճիշտ ենթադրությունը Մալխասյանցի կողմից հաշվի չի առնվել, որովհետև Թ. Ավդալբեգյանը չկոսհեղով, որ «իսկ» բառը հենց աղճատված «Վիրք» բառն է, դա թողել է բնագրի մեջ, որի հետևանքով «Վիրք»-ի պակասը պարզ չի երևում։

Ավդալբեգյանի սրբագրության ճիշտ ընկալմանը խանդարել է նաև «շուրջ զարքայի» վրիպակը, որը նույնպես Ավդալբեգյանը նույնությամբ թողել է բնագրի մեջ։

Վերականգնվող «Վիրք» բառի՝ նախնական բնագրում եղած լինելը ապացուցվում է նաև մասնագետների ուշադրությունից վրիպած հետևյալ փաստով։ Հովհաննես Գրասխանակերտցին, որն անառարկելիորեն օգտվել է Սեբեոսի Պատմությունից, գրում է. «Իսկ կայսեր (բյուզանդական կայսր Կոստանդինը—Գ. Ա.) զօրս բազումս զումարտակ արարեալ՝ չուէ գնա ի Հայս ընդ իւր նուաճել, որում ոչ ոք թերևս գտաւ հնազանդեալ բայց միայն ի Վրաց աշխարհէն» («Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, էջ 86)։

Այստեղ պարզ գրված է, որ միայն Վիրքն է, որ սկզբից ևեթ հնազանդել է բյուզանդացիներին։ Կեշանակի X դարում, Գրասխանակերտցու օրոք «Սեբեոսի Պատմության» ձեռագրերը դեռ չէին կորցրել «Վիրք» բառը, որը կրկնել է Գրասխանակերտցին։

630. «Եւ այսպէս շարժեաց կաթողիկոսն գեշմարիս հաւատս սրբոյն Գրիգորի, զոր կալեալ էր ամենայն կաթողիկոսացն... մինչև ցայաւուր»։ Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «զի կալեալ էր»։ Ուղղել ենք «զոր կալեալ» էր, հետևելով Մալխասյանցի հետևյալ ցուցմանը. «Զի թվում է ուղղելի. զոր» (ՍԵՊ, էջ 144, տողատակ)։ Բայց Մալխասյանցը բավարարվել է սուկ առաջարկով և բնագիրը չի սրբագրել։ Սա, անշուշտ, չպատճառաբանված զղուշավորություն է, որովհետև «զի» բառը բոլորովին անիմաստ է և պետք է անպայման սրբագրվեր։ Բոլոր թարգմանիչները, նրանց թվում նաև Մալխասյանցը, բնագիրը թարգմանելիս «զի»-ի փոխարեն թարգմանել են հենց մտովի սրբագրած «զոր»-ը։

631. «Մինչ զի առ մահուն երկիրի ամենեքեան զհրամանն հազորդութեանն կատարէին»։

Մալխասյանցը «երկիւղի» բառի դիմաց տողատակին ծանոթագրել է «ուղղելի՛ երկիւղի» (ՍԵՊ, էջ 144)։

632. «Բարեբաբ քազաուր, մեկ զձեզ մինչ ի յարմա նկարեալ տեսանեալ՝ դողումն ունէր զմեզ՝ թող թէ անաւասիկ դէմ յանդիման տեսանեմք, և բերան ի բերան խաւսմք»։

Բյուզանդական կայսր Կոստանդ 2-րդի (642—668) նկարը պատկերող որմնակարներ մեզ չեն հասել։ Բյուզանդական արվեստի հանրաճանաչ մասնագետ Վիկտոր Նիկիտիչ Լազարեթ 1964 թ. ապրիլի 6-ին մեզ ուղղած նամակում (ոուսերեն) հայտնում է. «Բյուզանդական կայսր Կոստանդ 2-ի դիմանկարները պահպանվել են միայն զրամների վրա (Wroth, I, էջ 260, 262, Толстой, VII, 777 շար, 783)։ Նրանք արտատպված են նաև A. Grabar, L'iconoclasie Byzantine գրքում, Paris, 1957, էջ 15, fig. 7—8: Խճանկարների և որմնակարների վրա Կոստանդ 2-ի նկարներ չեն պահպանվել»։

Այս տեսակետից սույն վկայությունը լուրջ նշանակություն է ստանում։ Պատմիչը հաղորդում է, որ կայսրն իր թագավորության 12-րդ տարին (653 թ.) գալիս է Հայաստան՝ ճնշելու համար Թեոդորոս Ռշտունու զլիսավորությանը բարձրացված ապստամբությունը։ Իր գործը տեսնելուց հետո նա մի կիրակի օր «քարոզեցաւ յեկեղեցւոյն սրբոյն Գրիգորի ժողովն Քաղկեդոնի... եւ մատեաւ պատարագ հոռոմերէն ի հոռոմ երիցուէ, և հաղորդեցաւ թագաւորն և կաթողիկոսն և ամէն եպիսկոպոսունքն, որ կամաւ և որ աղամայալ։ Եկեղեցում գտնվող եպիսկոպոսներից մեկը չի հաղորդվում, «այլ չոգաւ էջ ի բեմբէն, և ծածկեցաւ յամբոխին»։ Կայսրն այդ իմանալով դայրանում է և «հրաման ետ երկու արանց, զի կալցեն զնա, և տարցեն յանդիման նորա ի սենեակն»։ Եպիսկոպոսին բերում են կայսեր մոտ։ Վերջինս նրան նախ զանազան հարցեր է տալիս և այսպէս հարցնում է, թե ինչու նա չհաղորդվեց։ Եպիսկոպոսը պատասխանում է. «Բարեբաբ թագավոր, դեռևս պատի վրա ձեզ նկարված տեսնելիս՝ դողը պատում էր մեզ, ինչ մնաց, թե՛ այժմ երբ դիմ հանդիման տեսնում և բերան ի բերան խոսում ենք... ո՞վ կհամարձակվեր բարեբաբ հրամայող շկատարել»։

Եպիսկոպոսի այս խոսքերից երևում է, որ VII դարում գոյություն են ունեցել Կոստանդ կայսերը պատկերող որմնակարներ։ Եվ սա շատ հասկանալի է մանավանդ այնպիսի արվեստասեր մի կայսեր համար, ինչպիսին էր Կոստանդ 2-րդը։ Հայտնի է, որ նա 663 թ. մայիսի 5-ին գնաց Հռոմ, ուր 12 օր մնալով՝ հավաքեց և իր հետ տարավ բավականաչափ արվեստի նմուշներ (տե՛ս Փ. И. Успенский, История Византийской империи, том I, СПб., էջ 702)։ Ուրեմն նա կարող էր զբաղվել նաև նկարվելով և իր նկարները տարածելով (Մովսես Խորենացուց գիտենք, որ Հուլիանոս կայսրը նույնպես «տայ զիր պատկերն նկարեալ ի տախտակս... և հրամայէ յեկեղեցւոջ կանգնել»։ Խորենացի, Տփղիս, 1913, էջ 271)։

633. «Զբարեբաբ հրամանսդ սրուծել ո՞վ իշխէ»։ Պատկանյանի և Միհրդատյանի հրատարակություններում «սրուծել ո՞վ իշխէ» («ո՞վ կհամարձակվի շկատարել») արտահայտությունը դարձել է «բուծելով իշխէ»։ Այս վրիպակը Ք. Պատկանյանը (Ստեղծ, էջ 157) թարգմանել է «исцеляя» («բուծելով») բառով։ Մակիբեր (Մաժ, էջ 138) առհասարակ այդ բառը պարունակող նախադասությունը բաց է թողել, չհասկանալով նրա իմաստը։

«Բուծելով իշխէ» վրիպակը միմյանցից անկախ ուղղել են («սպուծել ո՞վ իշխէ») Ն. Բյուզանդացին («Հայկական բառաբանություն», էջ 85), ապա Եղիշե Գուրջյանը («Պատմություն հայ մատենագրության», Երուսաղեմ, 1937, էջ 19, ծ. 1, «սպուծել» և ոչ՝ «սբուծել»), Զամինյանը (Թղթ. 232ա, վավ. 114, էջ 11) և ուրիշներ։

634. «Այս աշխարհ»։ Մալխասյանցը «աշխարհ»-ի դիմաց տողատակին ծանոթագրում է. «Թվի ուղղելի՛ աշխարհի»։

635. «Եւ զիրն այն այժմ առ դմա է. հրամայեցէք խնդրել և տեսանել»։ «Գիրն այն» ասելով եպիսկոպոսը նկատի է ունեցել նախորդ գլուխներում բերված դավանության այն ընդարձակ թուղթը, որը «նզովիդ զժողովն Քաղկեդոնի և գտումարն Լևոնի և մերժէր ի հաղորդութենէ Հոռոմին. և կնքեալ զնա մատանեաւ կաթողիկոսին և ամենայն եպիսկոպոսացն և մեծամեծ իշխանացն մատանեաւքն և ետուն առ նա (կաթողիկոսի մոտ—Վ. Ս.) զի պահեսցէ յեկեղեցւոջն»։

Եթե եպիսկոպոսը կայսրին հայտնում է, որ թուղթը կաթողիկոսի մոտ է, «հրամայեցէք խնդրել և տեսանել», դրանով կողմնակիորեն հայտնի է դարձնում, որ «Դավանության թուղթը» կայսրին չէր ուղարկված (ՍԵՊ, էջ 196, ծ. 72)։

636. «Եւ իբրև կատարեաց եպիսկոպոսն զհրամանս քազաուրին՝ ասէ»։ Վերջին բառի փոխարեն Միհրդատյանի ձեռագիրն ունեցել է «ամէն», որը Միհրդատյանն ուղղել է «ասէ», տողատակին ծանոթագրելով. «Յօրինակին գրեալ էր ամէն»։

637. «Սի ես շնորհակալ եմ»: Մ. Օրմանյանը («Ազգապատում», հ. 1, 4. Պոլիս, 1912, էջ 726) ենթադրում է, թե բուլղանդական կայսրի հետ բանավիճող եպիսկոպոսը հենց հեղինակն ինքն է: Մալխասյանցը (Малх., էջ 177, ծ. 200) հաստատում է սույն տեսակետը, բայց չի բաժանում Օրմանյանի այն կարծիքը, թե հեղինակը խիստ է գտնվել ներսես կաթողիկոսին դատապարտելիս: Մեր կարծիքով, սակայն, Պատմության հեղինակին եպիսկոպոսի հետ նույնացնելու համար բավարար հիմք չկա:

638. «Այլ գնացին (հույները—Գ. Ա.) փախստական, մինչև մերձ ի ծովեզերն: Եւ ամերեցիք զամենայն երկիրն. առին և զՏրապիզոն քաղաք»: Այս հատվածում «ծովեզերն» բառին անմիջապես հաջորդող «եւ ամերեցիք»-ը քերականորեն պետք է վերաբերեր դարձյալ հույներին, սակայն իրականում Սերետուր նկատի է ունեցել Քեոզորոսի ղեկավարությամբ գործած արաբներին: Քիչ վերջ հայտնվում է, որ Քեոզորոս Ռշտունին Վանդրեաց յիւր զարս ի յիմայելացոցն, և եկն է հազար (=7000) այր յաւանականութիւն նմա»: Ահա այս զորքերով Ռշտունին հետապնդում է հույներին, որոնք հազիվ փախչում ընկնում են ծովափնյա վայրերը. «գնացին փախստական մինչև մերձ ի ծովեզերն»: Խոնճապի մատնված հույներն իհարկե չէին կարող գրավել Տրապիզոնը: Ուստի իրավացի են ելել բոլոր թարգմանիչները, որ բնագրի մեջ փակագծերում կամ էլ սողաձայնի ծանոթագրություններում ավելացրել են արաբների և Քեոզորոս Ռշտունու անունները:

639. «Սի ետ նմա իշխանն Իմայելի հանդերձս ոսկեղէնս և ոսկեթելս և վառ մի նորին աւրիանակաւն»: «Վառ» բառի կապակցությամբ Մալխասյանցը (Малх., էջ 177, ծ. 201) հայտնում է, որ բառն ունի «զանազան նշանակություններ. ծածկոց, քող, թանկարժեք կտոր, ինչպես նաև արթայական դրոշ, խաչվառ: Մենք այդ բառը թարգմանել ենք «ПОЛОТНИЩЕ» բառով, ճիշտ չիմանալով, թե Սերետուր դա ինչ նշանակությամբ է գործածել: Պատկանյանը «վառ» ասելով հասկանում է парча (ամուր, նախշավոր, մետաքսյա կտոր, կարված ոսկյա, արծաթյա թելերով—Գ. Ա.)»:

«Առձեռն բառարանը» (էջ 749) «վառ» բառի դիմաց ունի. «բարակ լաթ, կամ բանած զարդ՝ թազավորի և թազուհիի համար. ա(անկերեն) տյուլպենտ, պյուրունճուք, սանտալ, ֆերանճե, ջար... դրոշակ... խաչվառ»: Ինչպես տեսնում ենք, բառն ունի բազմաթիվ իմաստներ, և բառարանները միջոցով հնարավոր չէ պարզել, թե արաբների առաջնորդը՝ Մավիան որոշակի ինչ է նվիրել Քեոզորոս Ռշտունուն:

Հայտնի չէ նաև, թե ինչ է նշանակում «նորին արիևակաւն» («և վառ մի նորին արիևակաւն»): Թարգմանիչներից ամեն մեկը հասկացել է յուրովի: Պատկանյանը (Патк., էջ 159) «также же парча», Հյուբշմանը (Hübsch., 34) «ein königliches Gewand, wie er selbst es trug» («մի թագավորական պատմուճան, ինչպիսին, որ ինքն էր կրում»), Մակլերը (Macl., էջ 139). «une banniere de la même façon» («մինչուոյն ձևի մի դրոշակ»), Մալխասյանցը (Малх., էջ 121) «такое же полотно»:

Թարգմանություններից և ոչ մեկը ճիշտ չէ: Իրականում «նորին արիևակաւն» նշանակում է սերս (Ռշտունու) օրինակով: Մավիասը Ռշտունուն տվել է մի «վառ», հետևելով Ռշտունու օրինակին: Այսինքն՝ ինչպես որ Ռշտունին է նրան «վառ» նվիրել, այնպես էլ նա է Ռշտունուն «վառ» նվիրում:

Այս «վառը» չէր կարող հազուստ լինել, որովհետև հեղինակը հազուստի մասին խոսում է առանձին, իսկ «վառը» հազուստից բաժանում է «և» շարղկապով. «հանդերձս ոսկեղէնս և ոսկեթելս և վառ մի նորին արիևակաւն»: Ամենահավանականը Մակլերի ենթադրությունն է՝ դրոշակ:

Քննարկվող հատվածում ի միջի այլոց կարդում ենք. «Գնաց Քեոզորոս Ռշտունեաց տէրն առ Մաւիաս իշխանն Իմայելի ի Դամասկոս և ետես զնա մեծամեծ ընծայիւք»: Եթե բառացի թարգմանենք՝ կստացվի «տեսավ նրան մեծամեծ նվերներով»: «Նվերներով տեսնել» արտահայտությունը այսօր էլ գործածվում է մեր լեզվում, մանավանդ՝ ժողովրդական մտածողությամբ: «Սերետուրի Պատմությունում» պահպանված ձևը այս առումով հետաքրքիր է: Պատկանյանը ուստի թարգմանելիս անհրաժեշտություն է զգացել բացատրել, թե ինչ է նշանակում «և ետես զնա մեծամեծ ընծայիւք». «Այսինքն՝ տեսել է և նրան մատուցել է հրաշալի նվերներ» (Патк., էջ 159, ծանոթ.): Հյուբշմանը (Hübsch., էջ 34) «տեսնել» բառի կողքին տեքստի մեջ իրենից ավելացրել է նաև մատուցել բառը, որպեսզի գերմանացուն ընտանի լինի «նվերներով տեսնել» արտահայտությունը. «տեսավ նրան և մատուցեց մեծ նվերներ»: Մակլերը (Macl., էջ 139) հայերեն բնագիրը թարգմանել է նույնությամբ («տեսավ նրան մեծ նվերներով»), Մալխասյանցը (Малх., էջ 121) «տեսաւ» բառը չի թարգմանել և նրա փոխարեն ավելացնելով մատուցել բառը, թարգմանել է մատուցեց նրան «մեծ նվերներ»:

640. «ՅՊահակն ճորայ»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն «ԳՊարհակն» (Մալխաս-

յանը՝ վրիկասաբար՝ «զպարհակն»)։ Ուղղեցինք «ԳՊահակն»)։ Տե՛ս նաև ծ. 145, 325 և V. Langlois, Collection des historiens, էջ 185, ծ. 2։ Հ. Հյուբշմանը (Hübsch., էջ 35) նույնպես «ցպարհակն»-ը ուղղել է «ԳՊահակն»)։

641. «Նւ եղև յամին մետասաներորդի Կոստանդի լուծումն լինի հաշտութեանն՝ որ ընդ Կոստանդին և ընդ Մավիաս իշխանն Իսմայելի»։ Այստեղ հայտնվում է, որ արաբների և բյուզանդացիների միջև կնքված հաշտության խախտումը տեղի է ունեցել «յամին մետասաներորդի Կոստանդին»։ Այս իվականը կասկած է հարուցել։ Հ. Հյուբշմանի կարծիքով (Hübsch., էջ 35, ծ. 2) հեղինակը քննարկվող հատվածից առաջ (էջ 118) որպես հաշտության լուծման իվական է նշել Կոստանդի թագավորության ոչ թե 11-րդ, այլ՝ 12-րդ տարին, իսկ հատվածից հետո (էջ 126) իբր նշել է ո՛չ 11-րդ, ո՛չ էլ 12-րդ, այլ՝ 13-րդ տարին։

Հյուբշմանին մասամբ կրկնել է նաև Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», 1969, էջ 211—212), որն առաջարկել է 11-րդ տարին սրբագրել դարձնելով 12-րդ տարի։ Իր սրբագրությունը հիմնավորելու համար նա վկայակոչել է հետևյալ հատվածը. «Իբրև ետես արքայն Իսմայելի գյաջողումն յաղթութեանն, և զի բարձաւ թագաւորութիւնն Պարսից, իբրև լցան ամբ Գ պայմանի խաղաղութեանն՝ ոչ կամեցաւ այլ աւելի առնել խաղաղութիւնն ընդ թագաւորն Յունաց, այլ հրաման ետ ունել գործ պատերազմի... յերկոտասաներորդ ամի թագաւորութեան Կոստանդին» (ՍԵՊ, էջ 118)։ Սույն հատվածը, սակայն, հիմք չի կարող հանդիսանալ 11-ը 12-ով սրբագրելու համար, որովհետև հատվածում հայտնվող տեղեկությունները չեն բացառում այն հնարավորությունը, որ հաշտության ժամկետը կարող էր համընկնել նաև Կոստանդին թագավորության հենց 11-րդ տարվան։

Սվ հիրավի, եթե ժամկետը լրանար իսկապես մեր նշած տարին և դրանից անմիջապես հետո, այսինքն՝ 12-րդ տարում արաբները հարձակվեին բյուզանդացիների վրա, դա նույնպես կնշանակեր, որ հաշտության ժամկետը լրանալուն պես, առանց որևէ միջանկյալ տարի կորցնելու, Իսմայելի արքան հենց հաջորդ տարին պատերազմ է հայտարարել հունաց թագավորին, չկամե՛նալով այլևս շարունակել խաղաղությունը. «ոչ կամեցաւ այլ աւելի առնել խաղաղութիւն»։

Չմոռանանք, որ հաշտության ժամկետին վերաբերող նախադասությունը հարակից է հաստատ 11-րդ տարում տեղի ունեցած մի իրադարձության՝ Սասանյան դինաստիայի անկման հիշատակությունը պարունակող նախադասությանը և սկսվում է միևնույն «իբրև» բառով («իբրև ետես արքայն Իսմայելի... զի բարձաւ թագաւորութիւնն Պարսից, իբրև լցան ամբ Գ պայմանի խաղաղութեանն»)։ Չկա ոչ մի նշան, որից ենթադրվեր, թե առաջին «իբրև»-ը գործածված է 11-րդ, իսկ երկրորդը, 12-րդ տարիների կապակցությամբ։ Հետևաբար, մենք հաստատ հիմքեր չունենք Սեբեոսի նշած 11-րդ տարին («և եղև յամին մետասաներորդի Կոստանդի լուծումն լինի հաշտութեանն») սրբագրելու և դարձնելու 12-րդ տարի։ Այս վերջին տարին հեղինակը հիշատակել է որպես պատերազմի սկզբի տարի, որին անմիջապես նախորդել է հաշտության ժամկետի լրացման տարին։ Այսպես պետք է հասկանալ հեղինակին։

Արաբների սկսած պատերազմի մասին գրելուց անմիջապես հետո հեղինակը հայտնում է, որ այդ միևնույն տարին («ի նմին ամի»), այսինքն՝ Կոստանդին 12-րդ տարին, հայերն ապստամբում են բյուզանդացիների դեմ և ապստամբությունը ճնշելու համար բյուզանդական կայսրը գալիս է Հայաստան իր թագավորության 12-րդ տարում. «Նւ անտի գնացեալ եկն ի Կարնոյ քաղաք, յամի ժի-երորդի թագաւորութեան իւրում» (ՍԵՊ, էջ 141)։ Այս հատվածում հիշատակված «յամի ժի-երորդի» արտահայտությունը նույնպես Գրիգորյանը վկայակոչել է ցույց տալու համար, որ հաշտությունը լրացել է 12-րդ տարում։ Սակայն նշված արտահայտությունը իրականում վերաբերում է ոչ թե հաշտության ժամկետին, այլ արաբների վարած պատերազմին, որն իսկապես սկսվել էր 12-րդ տարում։ Ահա, այս 72-րդ (և ոչ թե հաշտության երրորդ) տարին նկատի ունենալով է, որ հեղինակը գրել է «ի նմին ամի ապստամբեցին Հայք և ի բաց կացին ի թագաւորութենէն Յունաց»։ Ուրեմն, Գրիգորյանի կողմից վկայակոչված սույն հատվածը նույնպես չի կարող հիմք հանդիսանալ բնագիրը սրբագրելու համար։

Նույնը պետք է ասենք նաև Հյուբշմանի ակնարկած հետևյալ հատվածի կապակցությամբ. «Ապականիչն (Մոավիան—Գ. Ա.) շոգաւ եմտտ ի Քաղկեդոն, յամի երեքտասաներորդի Կոստանդնոս» (ՍԵՊ, էջ 126)։ Այստեղ պարզապես հայտնված է Քաղկեդոնի գրավման տարին։ Մոավիան պատերազմ էր սկսել Կոստանդին 12-րդ տարում և հաջորդ տարին գրավել է Քաղկեդոնը։ Հաշտության պայմանագրի լրացման մասին դարձյալ ոչ մի խոսք չկա։

642. «Նւ գումարեաց ի նոսա առ սակաւ»։ Բոլոր ձեռագրերն ու սրբագրիչներն ունեն «արս սակաւ»։ Ուղղեցինք «արս սակաւ», հենվելով հենց միևնույն պարբերության մեջ, սրբագրվող բառին անմիջապես նախորդող նախադասություններում հանդիպող հետևյալ արտահայտու-

թյունների վրա. «կազմեցին նաև պատերազմական», «յամենայն քաղաքս ծովեզերեայս», «Գձ նաև մեծամեծ», «հրամայեաց գործել նաև թեթևս հինգ հազարս»: Հմմտ. նաև «ելեալ ընդդէմ նոցա զարս սակաւս»:

643. «Հնազանդեցան ամենայն բնակիչք աշխարհին ի ծառայութիւն՝ որ զծովեզերքն և լեռնականս և դաշտականս»: Զամինյանը (Զամ., էջ 235) առաջարկում է «և» շարդապներից հետո ավելացնել «ի» նախդիրը, այսպես «և ի լեռնականս և ի դաշտականս»:

644. «Եւ ապականիչն շոգաւ եմուտ ի Քաղկեդոն»: Միհրդատյանի հրատարակութեան մեջ գրաքննչական խստութեան հետեանքով բաց է թողնված «ապականիչն» բառը, որին փոխարինում են բազմակետերը:

645. «Եւ վերացոյց զպսակն ի գլխոյ իւրմէ, և մերկացաւ զծիրանիսն և զգեցաւ փութ, և նստաւ ի վերայ մխրայ, և հրամայեաց պահս քառոցել քստ արիւնակին նիւնուի՝ ի Կոստանդնուպոլիս»: Մակիերը (Macl., էջ 141, ծ. 1) ծանոթագրում է. «Սա հավանաբար մեկն է արտահայտութիւններից այն բազմաթիվ հայտնութեան-պարականոնային առասպելների (des Légendes apocalyptico-apocryphes), որոնց մեջ հոռոմների թագավորը, Անտիքրիստոսի հայտնութիւններից հետո, հանում է թագը և մտնում Սուրբ քաղաքը: Հմմտ. F. Macler, Les apocalypses apocryphes de Daniel, էջ 97 և շար., և René Busset, Les apocryphes éthiopiens... t. X., La sagase de Sibylle, էջ 75 և շար.»:

646. «Աստուածաւթ բազաւորին Կոստանդիանոսի»: Մ. Գրիգորյանը («Հ. ամս.», էջ 213—214) առաջարկում է «Կոստանդիանոսը» սրբազրել «Կոստանդ»: Սակայն ձեռագրերում գտնում ենք շորս տարբեր ձևեր՝ Կոստաս, Կոստանդ, Կոստանդին, Կոստանդիանոս: Չենք կարող հաստատ պնդել, թե խնդրո առարկա էջում հեղինակը գրել է անպայման «Կոստանդ» և ոչ, ասենք, «Կոստանդին»: Սրբազրել նշանակում է ոչ թե գտնել ընդհանրապես ճիշտ մի ձև, այլ վերականգնել այն միավորը, որը գտնվել է տվյալ հեղինակի նախնական բնագրում: Ներկա ղեկավարում հնարավոր չէ որոշել հեղինակի գրած նախնականը («Կոստանդ», թե՞ «Կոստանդին»): «Կոստանդիանոս»-ը անշուշտ սխալ է:

647. «Եւ ոչ դադարեաց հողմոյն բռնութիւնն և ծովուն խռովութիւնն մինչև ցվեց ատուս»: Արաբական նավատորմի կործանման պատմութիւնը պատմիչը շարագրել է զեղարվեստական ոճով, որով պատմական իրողութեան նկարագրութիւնն ստանում է առասպելական երանգ: Յ. Մակիերը (Macl., էջ 142, ծ. 1) ծանոթագրում է. «Կոստանդնուպոլսի երկարատև (7 օր) պաշարման, հունական կրակի և արարների նավատորմը կործանած մրրկի մասին հմմտ. «Noel Desvergers, Arabie», էջ 280 և շար.»:

648. «Եկն գաւրն Խամայեի և նստաւ ի Դուիւն. և խոհիէր երթալ հարկանել զՎիրս սրով սուտերի: Խաւէր ընդ նմա»: Ն. Ակինյանը («Հ. ամս.», 1969, էջ 346) առանց բացատրելու առաջարկում է «ընդ նմա»-ն սրբազրել «ընդ նոսա»: Սա շատ հավանական առաջարկ է, որովհետև եզակի թվով գործածված «ընդմա»-ին անմիջապես հաջորդող նախադասութիւնների մեջ միևնույն հասցեատիրոջ վերաբերյալ բազմիցս գործածվում են հոգնակիի ձևեր, որոնք թիւնդրում են՝ «ընդ նմա»-ն դարձնել «ընդ նոսա»: Այսպես. «Խաւէր ընդ նմա ի ձեռն պատգամի սպառնալեալք, զի կամ եկեացեն ի ծառայութիւն նոցա, և կամ ի բաց թողցեն զերկիրն և զնապեհն: Իսկ նոքա շաղին յանձն առնել այնպէս, այլ պատրաստեցան ընդդէմ նոցա՝ ի պատերազմ. եւ զնաց Խամայելացին ի վերայ նոցա պատերազմաւ՝ երթալ սատակել զնոսա իսպառն»:

Այսուհանդերձ մենք չենք համարձակվում սրբազրել բնագիրը, որովհետև գործածելիս նկատի ունենալ ոչ թե մարդկանց, այլ՝ Վրաստանը, մի կենտ երկիր, որի կապակցութեամբ հեղինակը կարող էր արտահայտվել եզակի թվով: Դրանից հետո նա կարող էր մտովի աննկատ անցնել վրաստանցիներին (կամ, ավելի ճիշտ, Վրաստանում գտնված հույներին, որոնց մասին կիսոսենք հաջորդ ծանոթագրութեան մեջ) և գործածել հոգնակի թիվ:

Լեզվական նման անկանոնութիւններ կարելի է նկատել հայ և օտար բազմաթիվ մատենագիրների երկերում: Հենց անմիջապես նախորդ գլխում մեր հեղինակը տալիս է միևնույն անկանոնութեան հետեւալ օրինակը. «Վիախաւ Հոռոմ և անկաւ ի Տայս... և ոչ ուրեք կարաց զետեղել (մինչև այստեղ երեք անգամ գործածված է եզակի թիվը՝ «Վիախաւ», «անկաւ», «կարաց», բայց սրանից անմիջապես հետո միևնույն «Հոռոմի» մասին հեղինակը շարունակում է—Գ. Ա.) այլ զնացին փախստականս»: Սկզբում եզակի թվով նկատի է առնված Հոռոմ ազգը, իսկ հետո հոգնակիով՝ հոռոմները:

649. «Զարն Խամայեի... խոհիէր երթալ հարկանել զՎիրս սրով սուտերի: Խաւէր ընդ նմա ի ձեռն պատգամի սպառնալեալք, զի կամ եկեացեն ի ծառայութիւն նոցա, և կամ ի բաց թողցեն

զերկիրն և զնասցեն»: Բնագիրն այս վիճակում ստեղծում է այն տպավորությունը, թե արաբները վրացիներին առաջարկել են թողնել իրենց երկիրը և զնալ («ի բաց թողցեն զերկիրն և զնասցեն»): Հասկանալի է, որ իրականում նման առաջարկ լինել չէր կարող, որովհետև հազիվ թե արաբները երբևիցե հանգեին մի ամբողջ ժողովրդի իր երկրից վտարելու մտքին: Եթե նույնիսկ խոսքը միայն վրացական զորքի և ոչ ժողովրդի մասին լիներ, դարձյալ արաբները նրանց արտաքսման մտքին չէին հասնի, այլ կբավականանային առաջարկելով ենթարկվել, այլապես՝ կբապտիզային ոչնչացնել նրանց «ի սուր սուսերի»:

Երկիրը թողնելու առաջարկը մեզ թելադրում է այն միտքը, թե արաբներին խոսքն ուղղված է ոչ թե վրացիներին, այլ Վրաստանում գտնված օտար զորքերին, որոնց նկատմամբ երկիրը թողնելու և հեռանալու առաջարկը բնական կլիներ: Օտարներին մասին է վկայում, մեր կարծիքով, նաև «եկեսցեն» բառը «եկեսցեն ի ծառայութիւն» արտահայտության մեջ: Եթե խոսքը վրացիներին վերաբերեր, արաբները նրանց իրենց մոտ չէին կանչի, այլ՝ պարզապես կառաջարկեին տեղում հնազանդվել. մի՞թե արաբներն իրենց ենթարկեցնելու համար պետք է վրացիներին անպայման կանչեին Վրաստանից դուրս. չէ՞ր կարելի թողնել երկրում և առաջարկել ենթարկվել:

Մի կողմից «եկեսցեն ի ծառայութիւն», մյուս կողմից «թողցեն զերկիրն և զնասցեն» արտահայտությունը՝ մեզ թելադրում է արաբների առաջարկը վերաբերել Վրաստանում գտնված հունական զորքերին: Վերջիններս, ինչպես երևում է, Թեոդորոս Ռշտունու հարվածներից խուսափելով և խուճապահար փախչելով «մինչև մերձ ի ծովեզերն»՝ թափանցել էին Վրաստան և ամրացել լեռներում: Ահա նրանց է, որ արաբները առաջարկել են զալ իրենց մոտ, ենթարկվել կամ էլ թողնել Վրաստանը և հեռանալ դեպի իրենց երկիրը:

Պատահական չէ, որ հեղինակը քիչ անց հայտնում է, որ Թեոդորոս Ռշտունին արաբներին զորք է խնդրում՝ հալածելու համար Հայաստանում և Վրաստանում գտնվող հույներին («զի հարցէ զՀայն և հալածական արասցէ [զյոյնս]\*, և զՎիրս սատակեսցէ ի սուր սուսերի»):

Մեր ենթադրության հավանական լինելու նշան ենք ուզում համարել նաև նախորդ ծանոթագրության մեջ նշված քերականական անհամաձայնությունը մեզ արդեն բազմիցս ծանոթ հետևյալ նախադասության մեջ. «Բխասէր (արաբների առաջնորդը—Գ. Ա.) ընդ նմա (Վրաստանի հետ—Գ. Ա.) ի ձեռն պատգամի սպառնալեալք, զի կամ եկեսցեն ի ծառայութիւն նոցա, և կամ ի բաց քողցեն զերկիրն և զնասցեն»: Եզակի թվով խոսելիս, ինչպես արդեն ասել ենք նախորդ ծանոթագրության մեջ, հեղինակը նկատի է ունեցել Վրաստանին (այսինքն՝ բուն երկրին), իսկ հոգնակի թվով՝ հույներին: Հավանաբար բնագիրն այսպես է վերծանել նաև Զամինյանը (Զամ., էջ 238), որն առաջարկել է. «և կամ ի բաց թողցեն զերկիրն» արտահայտության մեջ ավելացնել «յոյնք» բառը՝ «և» շողկապից առաջ:

650. «Ռշտունեաց տէրն խնդրեաց յիւր զաւրս յիմայելացոցն»: Բոլոր ձեռագրերը և տպագիրներն ունեն «իւր զաւրս»: Սրբագրել ենք «յիւր զաւրս», հենվելով նախորդ գլխում տառացի նույնությամբ հանդիպող միևնույն արտահայտության («խնդրեաց յիւր զաւրս ի յիմայելացոցն») վրա:

651. «Ձի հարցէ զՀայն և հալածական արասցէ, և զՎիրս սատակեսցէ ի սուր սուսերի»: 649-րդ ծանոթագրության մեջ արդեն ասվեց, որ խոսքը ոչ թե վրացիներին, այլ Վրաստանում գտնված հույների մասին է: Թեոդորոս Ռշտունին իմայելացիներից զորք է պահանջում, որպեսզի զնա Վրաստան և դուրս քրի հույներին: Նա պարտավոր էր այդպես վարվելու, որովհետև արաբները նրան նշանակել էին նաև Վրաստանի կառավարիչ: Պատմիչը գրում է. «Ետ նմա. իշխանն Իմայելի հանդերձս ոսկեղէնս և սակեթելս, և վառ մի նորին արինակական: Եւ իշխանութիւն ետ նմա զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿապկոհ և զՊահակն Ճորայ, և արձակեաց զնա պատուով: Եւ նորա պայման էր եղեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»:

Ի դեպ՝ մեր ընդգծած «զերկիրն զայն» արտահայտությունը հեղինակի լեզվում այնքան արտասովոր է, որ թելադրում է այն միտքը, թե նա այս տեղեկությունը բաղել է օտար աղբյուրից և մեքենայաբար կրկնել է այդ աղբյուրի «զերկիրն զայն» արտահայտությունը: Հայաստանում նստած հայ պատմիչը չէր կարող այդքան սարբեր երկրներ—Հայաստան, Վրաստան, Աղվանք, Սյունիք, մինչև Կապեկ ու Դերբենդ—կոչել մի հավաքական անվամբ՝ «զերկիրն զայն»: Այդպես կարող էր կոչել նշված վայրերից համեմատաբար ավելի հեռու գտնված մեկը, որի համար արտասովոր չէր լինի՝ Կովկասյան հեռավոր վայրերը մի ընդհանուր երկրամասի մեջ միավորելը և «զերկիրն զայն» կոչելը: Հեղինակն օգտվել է հավանաբար հունական աղբյուրից:

\* «զյոյնս» բառն ավելացնում ենք ըստ Զամինյանի (Զամ., էջ 239):

Զամինյանը (Զամ., 239) «զի հարցէ զՀայն և հալածական արասցէ» բառերից անմիջապես հետո կցում է «զլոյնս» բառը, հավանաբար բնագիրը հասկանալով այնպես, թե Հայաստանում ծայր առած աղետները (եւ աստ էր տեսանել զաղէտս տարակուսի, զարէն հիւանդաց, յործամ տազնպանցի ցան, և հատանիթի ի խաւից՝ այնպիսի ինչ եղեն. զի ոչ գոյր մարդկան տեղի փախստի և թագըստեան, և ոչ խնայել ի ներքուստ, այլ՝ որպէս ոք զի անկցի ի ծով՝ և ելս ոչ կարցիցէ գտանել») հետևանք էին երկրում գտնվող հույների, որոնց հովանավորութեամբ հայ իշխանները «բաժանեցին զերկիրն ըստ թուոյ իւրաքանչիւր հեծելոց, և կարգեցին հարկապահանջս ոսկուց և արծաթոյ: (Եւ աստ էր տեսանել զաղէտս տարակուսի)»: Ահա, Հայաստանում և Վրաստանում հույների այս կարգի միջամտութիւնները վերացնելու համար է, որ Թեոդորոս Ռշտունին արաբներից զորք է պահանջում «զի հարցէ զՀայն և հալածական արասցէ [զլոյնս] և զՎիրս սատակեցէ ի սուր սուսերի»:

652. «Ապաւեն և թիկունս իւրեանց արարին զամուս աշխարհին մարաց, զանտառս խոռածոս, զլինս, զլինուս, և զխոռածոս դժնախս՝ որ զգետովն Գազայ և զԵրամբն Մարաց»: Արարիներն այնքան ծանր հարկեր էին դրել մարերի վրա, որ սրանք «ոչ կարացին համբերել դառն ու դժնդակ ծառայութեանն և հարկին ծանրութեանն, որ ի վերայ նոցա»: Նրանք ապստամբում են արաբների դեմ և ապստամբ գտնում Մարաց աշխարհի անմատչելի լեռներում և անտառներում, նրանց թվում նաև այն խոր ձորերում, «որ զգետովն Գազայ»: Յ. Մարկվարտը («Ergänzer», էջ 25 և ՄՄ, թղթ. 262, վավ. 3, միկրոֆիլմ) մեր ընդգծած Գազայ անվան փոխարեն կարդում է «Գեղայ» (այսպիսի անունով գետ մեզ հայտնի չէ): Հյուբշմանը (Hübsch., էջ 39) «Գազ» անվան դիմաց տողատակում հարցականով դրել է. «Sefid Rud?»: Սակայն մեզ ավելի հավանական է թվում՝ «Գազայ»-ը նույնացնել Ս. Տ. Երեմյանի «Աշխարհացոյց»-ի քարտեզի վրա նշված, Գեղմանց լեռների հյուսիսից դեպի արևմուտք հոսող «Գառ-ուս» գետի հետ:

653. «Զմիւր և զգաջ ազգացն զաւրուքիւնս, որ բնակեալ էին ի նոսա, Գեյն և Գեյումն»: Բոլոր տպագրիչներն ունեն «Գեյն», № 2639 ձեռագիրը՝ «Գէյն»: Ուղղել ենք «Գեյն»: Երկաթագիր «Գ» և «Դ» տառերի շփոթի հետևանքով Գեյ (Գեղայք, Γελοι, Geloe) ցեղի անունը դարձել է գոյութիւն չունեցող մի անուն՝ «Գեյն»: («Գեղայք» ցեղի բնակչության վայրը տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, վանդակ Գճ):

«Գեյ» վրիպակը ենթադրաբար նկատել է դեռևս Ք. Պատկանյանը (Պատկ., էջ 147), որն իր հրատարակության մեջ «Գեյ» անվան կողքին փակագծերում հարցականով դրել է «Գե՛յ»: Նրան հետևել է նաև Հյուբշմանը («Arm. Gramm.», 5. I, էջ 34—35): Վերջինս Պատկանյանի հրատարակությունից առաջ, օգտվելով Միհրդատյանի հրատարակությունից, «Գեյ»-ը նույնութեամբ թողել է գերմաներեն իր թարգմանության մեջ (էջ 39, ծ. 2) և տողատակին վկայակոչել է Ալիշանի ցուցումը «Գեյերի» և Գեյումների մասին, քաղելով նրա «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխատությունից: Գերմանացի գիտնականը, ի միջի այլոց, գերմաներեն թարգմանության մեջ ծխտում է Ս. Մարտնեի («Memoires», էջ 332) մի ճիշտ սրբագրական առաջարկ՝ Անանիա Շիրակացուն վերագրվող Աշխարհացոյցի տեքստում (Խորենացի, Վենետիկ, 1865, էջ 592): Այստեղ կարդում ենք «Գեյիպար» հոլովված անունը, որը Ս. Մարտենը իրավամբ առաջարկում է սրբագրել «Գեղաւ»: Սա փաստորեն հսկայական աղբյուրներում հանդիպող վրիպակային «Գեյ»-ի առաջին ճիշտ սրբագրության դեպքն է, որը հետագայում հաստատվեց «Աշխարհացոյցի» ավելի ընտիր ձեռագրերի միջոցով (Աշ. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 840 «Գեղաւք»): Սակայն Հյուբշմանը, հավանաբար վստահելով Պատկանյանի ռուսերեն թարգմանությանը (Հյուբշմանը առհասարակ մեծ վստահությամբ է վերաբերվել հմուտ հայագետի վերծանություններին), որի մեջ Պատկանյանը դեռևս «Գեյ»-ի վրա չէր կասկածել, ծխտում է Ս. Մարտենին: Այնինչ, հետագայում, ինչպես տեսանք, ինքն է՛ հանգել «Գեյ»-ը «Գեղ»-ով սրբագրելու մտքին («Arm. Gramm.», էջ 34—35), հետևելով Պատկանյանին (այս անգամ՝ Պատկանյանի հայերեն հրատարակությանը):

Գեյ-ը «Գեղ»-ով սրբագրելու առաջարկ են արել նաև Մարկվարտը (ՄՄ, թղթ. 262, վավ. 3, միկրոֆիլմ) և Ս. Շալչյանը («Գեյմիկները և նրանց արշավանքը դեպի Հայաստան», Արմֆանի «Տեղեկագիր», 1941, № 1, էջ 108, ծ. 1):

Վրիպակը նկատելով հանդերձ, ոչ ոք այն չի սրբագրել «Սեբեոսի Պատմության» տեքստում: Բայց որ դա իսկապես վրիպակ է, երևում է հենց քիչ առաջ՝ «Աշխարհացոյց»-ի մեր բերած օրինակից, որը գտնում ենք Կասպից ծովի հարավային սահմանների հետևյալ նկարագրության մեջ. «հարաւոյ՝ Մարաւք, Գեղաւք և Իրիւմովք և Կասբիք»: Այնտեղ թվարկված է հենց այն միջավայրը, որը ակնարկել է նաև «Սեբեոսի Պատմության» հեղինակը: Իմ հենց այստեղ «Գեղ»



և «Դելամ» անունները գտնվում են կողք-կողքի «Մարք» անվան անմիջական հարևանության մեջ: Ճիշտ այդպես էլ եղել է նախնական բնագրում. «զլերամբն Մարաց, զժիր և զքաջ ազգացն զարութիւնն, որ բնակեալ էին (Թերես պետք է լինի «բնակեալ են»—Գ. Ա.) ի նոսա, Գելն և Դելամն»:

Այստեղ հիշատակված Գելերը, ինչպես ասվեց, Ս. Տ. Երեմյանի քարտեզի դեղայք ցեղն է, այժմյան գիլանցիները (սրանց մասին հույն և հայ աշխարհագրագետների հիշատակություններ տե՛ս մեր՝ «Սերեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը», էջ 199—200), իսկ «Դելամն»-ը դարձյալ նույն քարտեզի վրա, նրանց հարևանության մեջ նշված դելուսներն են, հետագա դելյեմիտները:

Սեր սրբագրությունը հաստատվում է նաև հենց քննարկվող պարբերությունից մեկ պարբերություն հետո հանդիպող «որ են Գեղք, Գելումք» արտահայտությամբ, որը փաստորեն մեր սրբագրած «Գեղն և Դելումն» արտահայտության կրկնությունն է:

«Աշխարհացոյց»-ի մեկ ուրիշ տարբերակում («Աշխարհացոյց Մովսէսի Խորենացու, յաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 41) նույնպես կարդում ենք «Գելք, Գելումք»: Երկու անունները կողք-կողքի գրված գտնում ենք նաև հունական աղբյուրներում. «Κάσιτοι, Καρχαῶδοι, Γελοὶ (Գեղք), Δριβίτες (=Դելումք)\* (Ptolemeaus, Geographia, Paris, 1883, VI, 25: Տե՛ս նաև՝ «Geographia de Moise de Coréne, d'après Ptolémée», Թարգմ. A. Soukry, Venise, 1881, էջ 54, ծ. 1):

Ս. Մարտենի սրբագրության առիթով վերը ցույց տվինք, որ Մովսես Խորենացու 1865 թ. Վենետիկյան հրատարակության մեջ «Գեղալք»-ի փոխարեն գրված է «Դելփալք»: Տեղի է ունեցել երկաթագիր «Դ»-ի և «Գ»-ի այն միևնույն շփոթը, որը գտնում ենք «Սերեոսի Պատմության» մեջ հասած ձեռագրերում: Ուրեմն՝ մեր ձեռքին ունենք տեղանվան աղճատման ընթացքը ցույց տվող փաստ նաև այլ մատենագրական երկերում:

654. «Ե ևոցանէ միոյ միոյ ամի առնուին ՅԿԵ պայուասիկ դրամ»: Միհրդատյանը վրիպակաբար տպագրել է «պայուասիկ» (փխ. «պայուասիկ»). սա. անշուշտ, տպագրական վրիպակ է: Պատկանյանը (Սառ., էջ 163, ծանոթ.) ենթադրում է, որ «պայուասիկ» բառը «հավանաբար նույնն է, ինչ որ պայուսակ, այսինքն՝ քսակ, տուպրակ»: Հյուբշմանը (Hübseh., էջ 39) թարգմանել է «քսակ» (Beutel) և տողատակին հայտնել, որ հետևել է Ք. Պատկանյանի վերծանմանը: Մակլերը (Macl., էջ 143) նույնպես հետևել է Պատկանյանին, թարգմանելով դարձյալ «քսակ» (bourse):

Ստ. Մախաւայանը բառը չի թարգմանել, թողել է նույնությամբ (пайвасик) և (ՍեՊ, էջ 196, ծ. 73, նաև Սառ., էջ 177—178, ծ. 203) ծանոթագրել. «Պայուասիկ-ը պայուսակ բառի մի այլ ձևն է և ծագում է պահլավերեն payūsak-ից և գործ է ածվում թե՛ տուպրակի և թե՛ ծանրության և դրամի որոշ կշռի նշանակությամբ (ինչպես քսակ բառը, որ նշանակում է թե՛ տուպրակ և թե մի քսակ փող, այն է 500 դուրուշ): Ինչպես ցույց է տալիս Չ. Մանանդյանը («Կշիռները և չափերը», եր. 41) «պարսկական պայուասիկը, որի կշիռը Շիրակացու մոտ ցույց է տրված 50 լիտր, որ է 1000 սատեր՝ այժմյան կիլոգրամներով հավասար կլինի... 16 կլգր. 320 գրամի»: Ուրեմն Արաբացիք Մարաստանի վրա հարկ էին դրել տարեկան 365×16,320 կլգր. քաշով, ուրեմն մոտ 5956 կլգր. արծաթի դրամ»:

Պայուասիկին հատուկ հոդված է նվիրել Չ. Մանանդյանը («Քննական տեսություն հայ ժող. պատմ.», հ. Բ, Բ մասի նյութեր, էջ 235—240):

655. «Ե ժանեաց վիշապին և դառնաշունչ զագանէն»: Այս բառերը Միհրդատյանի հրատարակության մեջ (էջ 231) չեն տպագրված և փոխարինված են բազմակետերով: Պատճառը գրաքննչական այն միևնույն խոստովություններն են, որոնց օրինակները տեսանք նաև նախորդ ծանոթագրությունների մեջ:

656. «Քանգի ոչ իսկ ևուանցան ի ծառայութիւն ևոցա (Կերոս և Սկիբեայ): Այս երկու տեղանունները վերցրել ենք փակագծերի մեջ, դիտելով որպես հետագա գրիչների կողմից ներմուծված ընդմիջարկություն:

«Սերեոսի Պատմության» նախնական բնագրում այդ տեղանունները չէին կարող հիշատակված լինել, որովհետև հեղինակի խոսքը մաքուր մասին է. «Ապստամբեցան մարք ի ծառայութենէն Իսմայելի... ապաւէն և թիկունս իւրեանց արարին զամուրս աշխարհին Մարաց... և զլերամբն Մարաց... Գելն և Դելումն» (ՍեՊ, էջ 150): Այս միջավայրում Կեղրուսիան ու Սկյութիան չեն եղել: Առաջինը գտնվում էր Իրանի հարավ-արևելյան ծայրամասում, գրեթե այժմյան Բելուջիստանի տեղերում, իսկ երկրորդը՝ Սև, Ազովի և Կասպից ծովերի հյուսիսային շրջաններում: Սա գրեթե այնքան մեծ հեռավորություն է, որքան այժմ, ասենք Պակիստանի և Սև ծովի

միջև ընկած հեռավորությունը: Եվ ճիշտ այնպես, ինչպես որ այժմ աշխարհագրական առումով արտառոց կլինեն Պակիստանի և Սև ծովի համատեղ թվարկումը, այնպես էլ «Սեբեոսի Պատմության» մեջ արտառոց է մարերի երկրում կատարված դեպքերի կապակցությամբ Կեդրուսիայի և Սկիւթիայի հիշատակությունը:

3. Մարկվարտը («Erānšahr», էջ 125) «Կեթրուս»-ը սրբագրում է «Կեդուս» և նույնացնում է Մարաց աշխարհի սահմաններում գտնված Կադուսների (կադիշք, կատիշք, Καδοσοι, Καδοσιγιοι, Cadsemi, Cadusii) հետ, սակայն սրանով էլ դրուծությունը չի փոխվում, որովհետև կադուսները նույնպես Սկիւթիայից հեռու էին: Բացի այդ՝ «Կեթրուս» անվանանքը համընկնում է Կեդրուսիայի Кедрουσοι, Γεδρωσια և ոչ՝ Կադուսների (Καδοσοι) անուններին և սրբագրվելու հարկ չունի: Եթե և՛ «Կեթրուսները», և՛ Կադուսները Մարաց կողմերում չէին՝ այլևս ի՞նչ իմաստ ունի մի սխալը (Կեթրուս) սրբագրել նաև ուրիշ սխալով (Կադուս):

Գոյությունի ունի նաև մեկ այլ հանգամանք: Ինչպես հայկական, այնպես էլ հունական աշխարհագրական երկրանուն Սկիւթիայ և Կեթրուս անունները (սխալ, թե ճիշտ) հաճախ հանդիպում են միասին և դրանով հուշում են այն միտքը, որ այս երկու անունները միասին գրված են եղել նաև «Սեբեոսի Պատմության» լուսանցքներում որպես գիտելիք, ներմուծված գրիչների կողմից, և հետագայում թափանցել են Պատմության տեքստի մեջ:

Անունների համատեղ գործածության մի օրինակ գտնում ենք Անանիա Շիրակացուն վերագրված ժամանակագրության մեջ (սրա իրական հեղինակի հարցին նվիրված մեր զեկուցման հիշատակությունը տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 477): Ժամանակագրության հեղինակին իր հունարեն սկզբնաղբյուրը թարգմանել է այսպես. «Եւ զԳէկղամ, ի նմանէ՛ Կէդրուսացիք (=Կեթրուսիա), եւ զԲերաղ, ի նմանէ՛ Սկիւթացիք (=Սկիւթեա), եւ զԱբիմէղ, ի նմանէ՛ Վրկանիկէ»: Այստեղ թվարկված են Նոյի շառավիղները (Գեկղամ, Գերաղ, Աբիմէղ) և նրանցից սերած ցեղերը՝ կէդրուսացիք, սկիւթացիք\*, վրկանիք: Այսպիսով, հենց «Սեբեոսի Պատմության» հեղինակի ապրած տարիներին գոյություն են ունեցել Կեթրուս և Սկիւթեա անունների համատեղ գործածության օրինակներ: Այդ անունների կողքին նշված Վրկանիկե անունը հիշեցնելով Վրկանա (Կասպից) ծովի անունը, կարող էր պատճառ դառնալ լուսանցագրության: Քանի որ «Սեբեոսի Պատմության» մեջ գործածված Գեղք, Գելուս անունները Կասպից ծովի հարավարևմտյան շրջակայքում բնակված ցեղերի անուններ են, կարող էին անտեղյակ գրչի կողմից նույնացվել Վրկանք ցեղի հարևանության մեջ նշված Կեթրուս և Սկիւթեա ցեղերի հետ և լուսանցում նշվել որպես բացատրություն Գեղք, Գելուս անունների: Սրան կնպաստեր նաև Կեթրուս անվան նմանությունը իրոր Կասպից ծովի հարավային շրջակայքում բնակվող Կադուսների անվան հետ:

Մեկ ուրիշ նպաստող հանգամանք կարող էր լինել այն, որ հին աշխարհագրական աղբյուրներում սկիւթացիներին հիշատակված ենք գտնում ոչ միայն հեռավոր կեթրուսների, այլև համեմատաբար ավելի մոտիկ Կադուսների հետ միասին: Այսպես օրինակ, Գիոդորոս Սիկիլիացին գրում է. «Ապա հրամայեալ երկու հազար Կատուսաց և հազար ընտիր հեծելոց Սկիւթացոց» («Պատմութիւն մեծին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ», թրգմ. Գաբրիել Ս. Վ. Պատկանեսց, Աստրախան, 1827, էջ 115): Պլուտարքոսը Կադուսների հարևան Գելերին նույնիսկ համարում է սկիւթացիներ: Ահա, այս մատենագրական միջավայրում շատ հնարավոր է դառնում «Գել, Գելուս» անունների դիմաց, լուսանցում «Կեթրուս, Սկիւթեա» անունների հավելումը գրիչների կողմից:

Իսկ հեղինակն ինքը չէր կարող շփոթվել, որովհետև ժամանակակից էր կատարվող դեպքերին, ցուցաբերում է քաջ ծանոթություն իր հիշատակած տեղանունների կապակցությամբ և լավ գիտեր, թե ժամանակակիցներն ինչպես էին կոչում Հայաստանին գրեթե սահմանակից Գելերին ու Գելուսներին: Ու իր Պատմության մեջ բազմիցս հիշատակում է այդ անունները: Ուրեմն հեղինակային շփոթի հնարավորությունը բացառված է: Եվ դա երևում է հենց Պատմության տեքստից, որի մեջ Կեթրուս և Սկիւթեա անունները օտար միջավայրից ընկած բեկորի սպավորություն են թողնում: Այսպես. «Արդ՝ իբրև ետես բազմութիւն զաւրացն Իսմայելի, եթէ ոչ յաշողի նոցա գործն ի կողմանէ ամուր լերանցն Մարաց. քանզի ոչ իսկ նուաճեցան ի ծառայութիւն նոցա Կեթրուս և Սկիւթեայ, որ են Գեղք, Գելուսք, հանդերձ ամենայն ամբարնակ քաղմութեամբն»: Այստեղ կամ «Կեթրուս և Սկիւթեայ»-ը պետք է ընդմիջարկություն լիներ, կամ էլ՝ «Գելք և Գելուսք»-ը, որովհետև երկուսի համատեղ գործածությունը հնարավոր չէ ոչ միայն

\* Կեթրուսների և սկիւթացիների համատեղ հիշատակության մի օրինակ է նաև հետևյալը. «Κεδρουσοι, Σκόθαι» (Georgius Syncleus, vol. I, Bonnae, 1829, էջ 87):

այն պատճառով, որ Մարաց լեռներում Կեթրուս և Սկիթեա չկա, այլ որովհետև «որ են» («որ են Գեղը, Դելումը») բառերը հավասարության նշան են դնում նշված շորս անունների մեջ և նույնացնում են նրանց. մի բան, որ հնարավոր է:

Պարզ է, որ ընդմիջարկված օտար տարրերն են՝ «Կեթրուս և Սկիթեայ»: Ինչ վերաբերում է «Գեղը, Դելումը»-ին, արդեն ասվեց, որ ընդամենը մեկ պարբերություն առաջ հեղինակը հայտնում է, որ դրանք Մարաց ամուր լեռների բնակիչներն են (աղբերամբ Մարաց, զծիր և զբջջ ազգացն զարութիւնս, որ բնակեալ էին ի նոսա, Գեղն և Դելումն): Այժմ էլ հայտնվում է. «Ի կողմանէ ամուր լեռանցն Մարաց... Գեղը, Դելումը, հանդերձ ամենայն ամրաբնակ բազմութեամբն»:

Եթե կեթրուսները և սկյութացիները թվարկված լինեին որպես գեղերից և դելումներից անկախ ցեղեր, կարելի կլիներ ինչ-որ մի բացատրություն գտնել նրանց հիշատակության համար (ասենք, արաբները Մարաց աշխարհում կոմպլիս հանկարծ, որտեղից որտեղ, հիշեին երկու տարբեր աշխարհագրական բեռներում ընկած «Կեթրուս և Սկիթեայ»-ը և մտածելով, որ դրանք զեռևս իրենց չեն հնազանդվել, դուրս գալին Մարաց աշխարհից և զնային նրանց դեմ, չնայած նրանցից մեկը, ինչպես ասվեց, գտնվում էր հարավում, մյուսը՝ հյուսիսում), բայց քանի որ այդ անունները նույնացված են Գեղը և Դելումը անունների հետ, կասկած չի կարող լինել, որ դրանք տարբեր ձեռքերի արդյունք են: «Գեղը, Դելումը»-ը պատկանում է հեղինակին, իսկ «Կեթրուս և Սկիթեայ»-ը լուսանցագրություն է, որը, ի դեպ, կարող էր նույնիսկ նուսանցքում գրված լինել ոչ որպես «Գեղը, Դելումը»-ի բացատրություն, այլ որպես զրիչ շտամբ զուտ որպես ինչ-որ պայմանական հիշեցում, գիտելիք, նույնիսկ՝ գրչափորձ: Նման դեպքեր ձեռագրերի մեջ հանդիպում են նաև այլուր:

657. «(Կեթրուս եւ Սկիթեայ, որ են) Դեղք, Դելումք»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն ունեն՝ «գեղք Դելումք»: Ուղղել ենք»։ Գեղք, Դելումք»:

«Ղ» և «Տ» տառերի շփոթի հետևանքով «Գեղք» տեղանունը դարձել է «գետք», որը միանալով նախորդ նախադասության մեջ նշված «Կեթրուս և Սկիթեայ» ընդմիջարկությանը, ստեղծել է այն թյուրիմացությունը, թե Կեթրուսի և Սկիթեայ երկրները Գեղք և Դելումք երկրների գետերն են («Կեթրուս և Սկիթեայ, որ են գետք Դելումք»): Սույն վրիպակը ծավալվել և ծնել է նաև մի երկրորդ թյուրիմացություն, որի համաձայն արաբներին չեն ենթարկվել ոչ թե Դելումը և երկրի բնակիչները, այլ՝ գետերը. «ոչ իսկ նուաճեցան ի ծառայութիւն նոցա... գետք Դելումք»:

3. Մարկվարտը զեռևս մեր դարեսկզբին՝ 1901 թ. Բեռլինում հրատարակած իր ուսումնասիրության մեջ («*Erānšahr*», էջ 125) տվյալ հատվածն օգտագործել է արդեն սրբագրած (գետք = Գեղք) վիճակում, սակայն, նրա սրբագրությունը բավականաչափ պատճառաբանված չլինելով՝ չի նկատվել և հաշվի չի առնվել ո՛չ Մակիբերի (որն իր օգտագործած գրականության ցանկում նշում է նաև Մարկվարտի «*Erānšahr*»-ը), ո՛չ էլ Մալխասյանցի կողմից: Այս երկու մասնագետներն էլ, նախորդների նման, շարունակել են «Կեթրուս և Սկիթեայ»-ը հրատարակել որպես Դելումք գետեր (*Macl.*, 144, *Manx.*, էջ 125, ՍեՊ, էջ 151): Մեր սրբագրությամբ վերանում է այս վրիպակը:

«Գեղք» և «Դելումք» ցեղանուն-տեղանունների մասին մանրամասն տե՛ս վերը, ժ. 653:

658. «Նյին ընդ կողածս լեռինն հագիւ հագք»: Զամինյանը (Զամ., էջ 241) «կողածս» բառը սրբագրում է «կողս», հավանաբար ընդունելով, որ «կողած» բառը վրիպակ է, սակայն Առձեռն բառարանն» այդ բառաձևն ունի գրանցած, ուղղական հոլովով՝ «կողածք = կող (լեռան)»:

659. «Չոգան ամրացան ի Զարեհաւանի»: Ն. Ակիսյանը («Շ. ամս.», 1969, էջ 346) ուղղում է «Չոգան ամրացան ի նախճաւանի»: Քննարկվող հատվածի բովանդակությունը հետևյալն է: Արաբները գրավում են Հայաստանը: Հույները դուրս են գալիս դիմադրության: Զմեռային ցրտաշունչ օրեր են, և հույները նեղում են արաբներին: Վերջիններս չեն կարողանում դիմանալ ցրտին և խուսափելով կովից՝ հանկարծակի գնում, ամրանում են Զարեհավանում: Հույները կարևորություն չեն տալիս նրանց Զարեհավան գնալուն և չեն հետևում նրանց, այլ ավերում ու թալանում են Դվինի բերդը, այնուհետև գնում են Նախճավան և կովում նախճավանի բերդի հետ, որպեսզի կողպտեն նաև այդ բերդը: Գարեհանը նրանք պատրաստվում են կովելու Զարեհավան գնացած արաբների հետ: Սակայն հույաց զորավար Մավրիանոսը համառելով, կամենում է նախքան այդ իրագործել նախճավանի կողպտման իր ծրագիրը և սկսում է կովել նախճավանի բերդապահների հետ: Այդ ժամանակ Զարեհավանում ամրացած արաբները հարձակվում են նախճավանի գրավմամբ զբաղված հույների վրա և կոտորում ու փախուստի մատնում նրանց: Այնուհետև արաբները գրավում են Կարինը, կողպատում են ամբողջ Հայաստանը, Աղվանքը,

Սյունիքը, պատանդ են վերցնում երկրի գլխավոր իշխաններին, նրանց կանանց ու երեխաներին և տանում են Ասորեստան:

Ռազմական գործողությունների այս ընդհանուր պատկերից երևում է, որ Զարեհավանում ամրացած արաբական զորքերը և Նախճավանի բերդում գտնված արաբական զինվորները տարբեր են եղել: Հուլյններ թողել են, որ արաբները ազատ նահանջ են դեպի Զարեհավան: Իսկ իրենք այդ ժամանակամիջոցում զբաղվել են Դվինը և Նախճավանը պաշտպանող արաբական զորքերի հետ կռիվով և այդ քաղաքները կողոպտելով: Այնուհետև արաբների հիմնական զորքը (որը հետագայում ավերեց ամբողջ Հայաստանը, Աղվանքը, Սյունիքը) գալիս է Զարեհավանից և պատերազմում հուլյնների դեմ հենց այն ժամանակ, երբ նրանք կոչում էին Նախճավանի դեմ: Այսպիսով, «Սեբեոսի Պատմության» տվյալ հատվածը սրբագրության կարիք չունի. նախնական բնագրում եղել է «չողան ամրացան ի Զարեհավանի» (և ոչ թե՛ «ի Նախճավանի»):

660. «Կազմեցաւ պատրաստեցաւ ի պատերազմ ընդ գաւրուն Իսմայելի»: Ստ. Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 153) «ընդ գաւրուն» արտահայտության կապակցությամբ տողատակին ծանոթագրում է. «Թվում է ուղղելի՛ ընդ գաւրն»:

661. «Փութայր կատարել զշինուած եկեղեցույն, զոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապատի»: Բոլոր ձեռագրերն ու տպագիրներն այս բառերից անմիջապես հետո ունեն հետևյալ ընդարձակ պարբերությունը: «Արդ՝ թէպէտ և վայրապար դրուցեալ տողեցից դրանս ի կարգի պատմութեանս ըստ անհանձար խորհրդոյ մտացս իմոց, և ոչ ըստ արժանաւոր շնորհի գիտութեան... (մինչև պարբերության վերջի հեռակալ բառերը ներառյալ—Գ. Ա.) որ և այս ևս կատարեսցի ի ժամանակի իւրում» (ՄԻԽԵՂ., էջ 235, տող 15-ից մինչև էջ 236, տող 22 ներառյալ, Պատկ., էջ 151, տող 3—28, Մալխ., էջ 154, տող 6—31):

Այս ամբողջ հատվածը ձեռագրերում և նախորդ հրատարակություններում իր գրաված տեղից մենք հանել և տեղափոխել ենք Պատմության վերջը որպես նրա վերջաբանը:

Տեղափոխման առաջարկ է արել նաև Ն. Ակիւնյանը («Հ. ամս.», 1923, էջ 224), սակայն նա իր առաջարկը չի հիմնավորել, որի հետևանքով Մալխասյանցը չի ընդունել նրա ո՛չ միայն այս, այլև բոլոր 26 ուղղումները: «Ուղղումների թիվը հասնում է 26-ի,—գրում է Մալխասյանցը (ՍԵՊ, էջ 42),—...Մենք... բնականապես շատ հետաքրքրվեցինք այս ուղղումներով, և մի առ մի ստուգելով, հուսախաբ եղանք. գոնե շվտաճեցանք որևէ մեկից օգտվել և ըստ այնմ տեղափոխել հատվածները»:

Այսուհանդերձ պետք է ասել, որ Ակիւնյանի դիտողությունը քննարկվող հատվածի նկատմամբ ճիշտ է: Մնում է բերել այն ապացուցող փաստեր: Դրանք են՝

1. Հատվածն առաջացրել է մի սեպ և ընդհատել է իրենից առաջ և հետո գտնվող բնագրի կապը: Հատվածին նախորդող բնագրի բովանդակության շարունակությունը գտնում ենք հատվածից հետո: Այսպես. նախորդ տողերում հայտնվում է, որ Ներսես կաթողիկոսը «չետ վեցերորդ ամի հալածանացն դարձաւ անդրէն ի տեղիս իւր»: Իսկ այս «վեցերորդ ամի» խոսքին վերաբերող «ի նմին ամի ի բաց կացին Հայք ի ծառայութենէ Իսրայելացոցն» բառերը գտնում ենք հատվածից հետո: Միջանկյալ հատվածը բոլորովին այլ բովանդակություն ունի, այնտեղ չկա որևէ ժամանակագրական տվյալ, որին համապատասխաներ հատվածից հետո եկող «ի նմին ամի» արտահայտությունը:

2. Հատվածի սխալ տեղադրված լինելը բացահայտում են նաև հատվածում հանդիպող «ընոցանէն ասէ», «սոբա», «զորմէ» բառերը, որոնք վերաբերում են սկզբնապես հատվածից առաջ գտնված բնագրին: Հատվածում հեղինակը բերում է Հին կուսակարանից ասացվածքներ՝ «երկինք և երկիր անցցեն» և բանք իմ մի անցցեն» (Մաթ., 24, 35 և այլուր), «Զի հուր բորբոքեսցի ի բարկութենէ իմմէ» (ՄԵՄԻՔԱ, 15, 14) և ավելացնում է, թե դրանք վերաբերում են Նրանց («զի զեցանէն ասէ՛ յայտ է»): Ո՛վքեր են այս «նրանք»: Բնագրի նախկին վիճակում զա հայտնի չէր: Բայց այժմ, երբ հատվածը տեղափոխել ենք իր տեղը, այսինքն՝ զետեղել ենք «Սեբեոսի Պատմության» վերջում, որպես այդ Պատմության հեղինակային վերջաբան, տեսնում ենք, որ խոսքը վերաբերում է իսմայելացիներին:

«Սեբեոսի Պատմության» նախկին հրատարակությունների վերջաբանում (ՍԵՊ, էջ 155, տ. 27—էջ 156, տ. 23) հեղինակը պատմում է այն մասին, որ «առաքեաց Աստուած խոռվութիւն ի մեջ բանակացն որպոցն Իսմայելի, և պատառեցաւ միաբանութիւն նոցա և խառնեցան ընդ միմեանս, և բաժանեցան ի չորս մասուս... Եւ սկսան կոռել ընդ իրեարս, և անհուն կոտորածով զմիմեանս սատակէին»: Ապա հայտնում է, որ բոլորին հաղթում է չորս մասի իշխաններէից մեկը՝ Մավիասը, որը «հնազանդեցուցեալ ընդ ինքեամբ՝ և թագաւորէ ի վերայ կալուածոց որդոցն Իսմայելի և անէ խաղաղութիւն ընդ ամենեանս»:

Ահա այս խոսքերից հետո է սկզբնական բնագրում ընդօրինակված եղել մեր վերականգնած վերջաբանը, որտեղ կարգում ենք. «Զարմէ (իմա՛ Մավիասի մասին—Փ. Ա.) գոչէ մարգարէն Դանիէլ, եթէ՛ «Փազանն շորտող անէղ և զարմանալի և հզար յոյժ, ժանիք նորա երկաթիք, և մագիթ նորա պղնձիք. ուտէր և մանէր և զմնացեալսն առ ոտն կտտութէր» և այլն ևս. և ապա ելս բանիցն ասէ. «Մերձ է ար կորստեան նոցա, հասեալ է պատրաստութեամբ տէր ի վերայ նոցա»: Որ և այս ևս կատարեսցի ի ժամանակի իւրում»:

Այսպես էլ ավարտվել է «Սեբեոսի Պատմութիան» սկզբնական բնագիրը: Հեղինակն արարների տիրապետութիւնը նշելուց հետո իր գիրքը եղրափակել է ընթերցողին քաջալերող լավատեսութեամբ այն մասին, որ իսմայելացիների տիրապետութիւնը չի հարատեկելու. «մերձ է ար կորստեան նոցա... Որ և այս ևս կատարեսցի ի ժամանակի իւրում»: Սա պատմական գրվածքին բնորոշ վերջաբան է:

Իր տեղը կորցրած այս վերջաբանի սկզբի բառերի բնույթից էլ է երևում, որ այն գրված է ամբողջ Պատմութիւնն ավարտելուց հետո: Հեղինակը գրում է. «Արդ՝ թէպէտ և վայրապար գրուցեալ տողեցից զբանս ի կարգի պատմութեանս ըստ անհանճար խորհրդոյ մտացս իմոց, և ոչ ըստ արժանաւոր շնորհի գիտութեան. այլ սակայն անդր հայեցեալ ի կարգս ուսումնասիրացն, և հաստատեցից մարգարէական բարբառովն, որ ըստ հրամանի տեառն խաւեցեալ»: [«Արդ՝ թեպէտ ևս զոր տեղը գրուցելով եմ տողելու այս խոսքերը Պատմութիւնս կարգի մեջ (իմ մտքի անհանճար խորհրդով և ոչ թե գիտութիւնս արժանավոր շնորհով), բայց նայելով ուսումնասիրողների կարգին՝ (ասածս) կհաստատեմ խոսքով մարգարէի, որ խոսել է տիրոջ հրամանով»]:

Անշուշտ, հեղինակն իր պատմութիւնը պետք է վերջացրած լիներ, որպէսզի գրեր, թե ինքը զոր տեղն է այս տողերը մտցնում իր Պատմութեան կարգի մեջ և այդ քայլին էլ դիմում է, որպէսզի Պատմութիւնն ընթացքում իր ասածը հաստատի մարգարէի խոսքով: Իսկ այդ մարգարէի խոսքն այն է, որ իսմայելացիների կորուստը մոտ է. «Մերձ է ար կորստեան նոցա»: Սրանք պարզ կերպով խոսում են այն մասին, որ մեր նշած հատվածն իրոք «Սեբեոսի Պատմութիւն» վերջաբանն է, որը գրված է իսմայելացիների մասին հեղինակի ասածը Կտակարանի խոսքերով հաստատելու համար: Եթե նախորդ բնագրում իսմայելացիների շորս մասի բաժանվելու մասին խոսք եղած շիւներ՝ չէին կարող գրվել միջանկյալ հատվածում գտնվող Դանիէլ մարգարէի խոսքերը՝ շորս գաղաններն և նրանցից ամենատուժեղի՝ շորորդ գազանի մասին:

662. «Ի նմին ամի ի բաց կացին Հայք ի ծառայութենէ Իսմայելացացն» և հնազանդեցան անդրէն ի ծառայութիւն քաղաւորին Յունաց»: Այս բառերի և նրանց նախորդող «փութալը կատարել զշինուած եկեղեցւոյն, զոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապատ քաղաքի» միջև նախորդ բոլոր հրատարակութիւններում, ինչպես նաև բոլոր ձեռագրերում սխալմամբ ընկել է «Սեբեոսի Պատմութիւն» վերջաբանը, որը մենք այդտեղից հանել և զետեղել ենք Պատմութիւն վերջում, որպէս նրա վերջաբանը (Այս մասին ավելի մանրամասն տե՛ս նախորդ ծանոթագրութիւնը):

Մեր կատարած ուղղման շնորհիվ հայտնի է դառնում նաև «Ի նմին ամի ի բաց կացին Հայք ի ծառայութենէ Իսմայելացացն» արտահայտութիւնն իմաստը: Նախորդ հրատարակութիւններում և ձեռագրերում հայտնի չէ, թե ո՞ր տարվան է վերաբերում «ի նմին ամի» արտահայտութիւնը: Բնագիրը հասկանալուն խանգարում էր սխալմամբ այդ արտահայտութիւնն առջևն ընկած վերջաբանը, որը կտրել էր կապը նախորդ տողերի հետ: Այժմ, երբ մենք վերջաբանը զետեղել ենք իր տեղում, կրկին իրար մոտ են եկել նախնական բնագրի տողերը, որով հասկանալի է դառնում, որ «ի նմին ամի» խոսքը վերաբերում է անմիջապէս իրենից առաջ գտնվող նախադասութիւն «վեցերորդի ամի» բառերին:

663. «Իսկ Մուշեղ Մամիկանէից տէր, վասն զի էին նորա չորս որդիք ի պատանդի առ Իսմայելացացն, վասն այնորիկ ոչ կարաց ի բաց կալ ի ծառայութենէ ճոցա: Եւ էր Համազասպայ եղբայր մի ի պատանդի: Բայց զայն՝ և այլ ևս յիշխանացն, հանդերձ կանամբք իւրեանց խնդրէին առ ինքեանս յԱտրիս: Վասն այնորիկ լաւ համարեալ զման քան զկեանս՝ ի բաց կացին ի ծառայութենէ ճոցա»: «Եւ էր» բառերի փոխարեն բոլոր ձեռագրերն ունեն «երեք»: «Սեբեոսի Պատմութիւն» առաջին հրատարակիչները (Ք. Միհրդատյան, Ք. Պատկանյան) «երեք» բառի կողքին փակագծերում ավելացրել են «որդիք», այնուհետև «Համազասպայ» անունից հետո դարձյալ փակագծերում ավելացրել են «և» շաղկապը, որից հետո ստացվել է հետևյալը. «Երեք (որդիք) Համազասպայ (և) եղբայր մի ի պատանդի»: Սույն սրբագրութիւնը Ստ. Մալխասյանցին իրավամբ չի համոզել և նա գտել է ավելի համոզիչ մի սրբագրութիւն. «Եւ էր (փխ. «երեք») Համազասպայ եղբայր մի ի պատանդի»: Միևնույն սրբագրութիւնն են առաջարկել նաև Ա. Զա-

մինչանը (Չամ., էջ 246) և Ն. Ակինյանը («Ղ. ամս.», 1969, էջ 346): Մենք հետևել ենք Մայրխասյանցի հրատարակությանը:

Սրբազրված հատվածին հաջորդում է «բայց զայն և այլ ևս յիշխանացն... խնդրէին առ ինքեանս յԱտրիք» նախադասութիւնը, որով հայտնվում է, որ արաբները Հայաստանը գրավելուց հետո պատանդ էին պահանջում, «բայց զայն և այլ ևս յիշխանացն»: Ի՞նչ է նշանակում «բայց զայն». արդ չէ: Ք. Պատկանյանը (էջ 168) թարգմանել է «сверх того (բայց զայն—Գ. Ա.) Исмаильяне требовали к себе в Сирию других князей». Այս թարգմանությունը մեզ ավելի ճիշտ է թվում, քան Մայրխասյանցի հետևյալ թարգմանությունը (էջ 128) «Но его самого (բայց զայն—Գ. Ա.) и других князей... потребовали в Сирию». Հստ այս թարգմանության արաբները պատանդ են պահանջել մյուս իշխանների հետ միասին նաև Համազասպ Մամիկոնյանին: Այսպես է հասկացել բնագիրը նաև Ն. Ակինյանը, որն առաջարկում է «բայց զայն»-ը սրբազրել «բայց զնա» («Ղ. ամս.», 1969, էջ 346):

Ինչպես Ստ. Մայրխասյանցի թարգմանությունը, այնպես էլ Ն. Ակինյանի սրբազրական առաջարկն ընդունելի չեն, որովհետև արաբները Համազասպ Մամիկոնյանին չէին կարող պատանդ պահանջել: Նա արաբների օրոք Հայաստանի կառավարիչն էր, արաբներն իրենք էին նրան կառավարիչ նշանակել (Թեոդորոս Ռշտունուց հետո): Հետևաբար, նրան պատանդ պահանջելու մասին խոսք լինել չէր կարող: Պատանդ էին տարված արդեն նրա եղբայրը և Մուշեղ Մամիկոնյանի շորս զավակները, ինչպես նաև բազմաթիվ այլ իշխաններ: Արաբները չբավարարվելով պատանդների այդ քանակից, նորից պատանդներ պահանջեցին. «Բայց զայն (բացի դրանից, «сверх того»—Գ. Ա.) և այլ ևս յիշխանացն... խնդրէին առ ինքեանս»: Սա վրդովեց Համազասպ Մամիկոնյանին և մյուս իշխաններին և նրանց մղեց ապստամբության՝ ընդդեմ արաբների: Հայերը կրկին անցան հուլաների կողմը, ձերբակալելով Մուշեղ Մամիկոնյանին և այն իշխաններին, որոնք համաձայն չէին արաբներից հրաժարվելուն: Մուշեղ Մամիկոնյանին հունաց կայսր Կոստանդինը շպատեց, այլ հրավիրեց իր մոտ: Իսկ Համազասպ Մամիկոնյանին նշանակեց Հայաստանի կառավարիչ և շնորհեց կյուրապաղատի տիտղոս: Արաբներն ի պատասխան այս գործողությունների՝ սպանեցին պատանդ տարած «ՌՉԶԵ» (=1775) մարդ: Ազատվեցին միայն «ԻԲ» (=22) մարդ, «որք ոչ դիպեցան ի տեղուին»: Սա է պատմական իրողությունը, որը փոքր ինչ դժվարությամբ է ընկալվում, որովհետև «Սեբեոսի Պատմության» հեղինակը կանոնավոր հերթականությամբ չի պատմել դեպքերը:

664. «Ուր լծեալ էին»: Զամինյանը (Չամ., էջ 247) ուղղում է «որք մուծեալ էին»:

665. «Հնազանդեցան ի ծառայութիւն թագաւորին Յունաց, հանդերձ միաբանութեամբ իշխանացն և զաւրացն Արուաւնից և իշխանացն աշխարհին Սիւնեաց հանդերձ աշխարհաւն իւրեանց. որք լծեալ էին յառաջագոյն յաշխարհագիրն Ատրպատակաւնի». մինչև բարձաւ թագաւորութիւնն Պարսից և տիրեաց Իսմայելացիւն, եոբա անդրէն եուանեալ միաբանեցան ընդ Հայոց»: Վերը, 19-րդ ժանտարաբության մեջ տեսանք, որ Սյունյաց Վահան իշխանը, մյուս հայ իշխաններից վրդովված, կամովին դուրս էր եկել Հայոց հարկային դիվանի կազմից և Պարսից Խորրով թագավորի միջնորդությամբ մտել էր Ատրպատականի աշխարհահամարի մեջ: Ահա, այժմ էլ հայտնվում է, որ Սյունեցիները Պարսից թագավորության անկումից հետո վերստին «միաբանեցան ընդ Հայոց»:

666. «Աւր՝ առաքեաց Աստուած խոռվութիւն ի մէջ բանակացն որդոցն Իսմայելի»: Զամինյանը (Չամ., էջ 247) այս բառերի կողքին ծանոթագրել է. «Այս կտորը կապել 246 թերթի հետ»: Նկատի ունի «Սեբեոսի Պատմության» Թիֆլիսի 1912 թ. հրատարակության 246-րդ էջի այն ընդարձակ պարբերությունը, որը մենք մեր այս հրատարակության մեջ տեղափոխել ենք Պատմության վերջը որպես վերջաբան: Սա վերջանում է «որ և այս ևս կատարեցի ի ժամանակի իւրում» բառերով: Ահա, այս բառերից հետո է Զամինյանը առաջարկել զետեղել «Արդ առաքեաց Աստուած խոռվութիւն ի մէջ բանակացն որդոցն Իսմայելի» բառերով սկսվող պարբերությունը:

667. «Մալխա անուն իշխան ևնցա... գնաց և նա յանապատն և սպան զայն ևս արքայ, զոր ևոբայն ևստուցեալ էին»: Ն. Ակինյանը («Ղ. ամս.», 1969, էջ 346) առաջարկում է «զայն ևս» բառերը սրբազրել «զԱլխ»: Նման սրբազրության կարիք չկա, որովհետև բնագիրն այստեղ շատ հասկանալի է և կասկածի առիթ չի տալիս: Բացի այդ՝ «ևս» բառը նախադասության մեջ ունի իր որոշակի դերը: Հեղինակը քննարկվող հատվածից առաջ հայտնել էր, որ Եգիպտոսի և Տաճկաց կողմերում գտնվող արաբներն սպանել են իրենց թագավորին և նոր թագավոր նստեցրել: Ահա, նա այս անգամ «ևս» բառով հայտնում է, որ Մալխար զնում է Եգիպտոս և սպանում է նաև այդ նորնստի արքային. «և սպան զայն ևս արքայ, զոր նորայն նստուցեալ էին»:

668. «Զաւրացաւ Մալխա և յաղթեաց ամենեցուն: Եւ հնազանդեցուցեալ ընդ ինքեամբ՝

և քազաուրէ ի վերայ կալուածոց որդոցն Խամայեի, և առնէ խաղաղութիւն ընդ ամենեպէն: Բոլոր ձեռագրերում և հրատարակութիւններում «Մեքեոսի Պատմութեան» տեքստն ավարտուում է այս բառերով: Իսկ նրանց հաջորդող վերջաբանը, որ այդ բառերին կցված է առաջին անգամ մեր սույն հրատարակութեան մէջ, ինչպէս ասվեց, նախորդ հրատարակութիւններում և ձեռագրերում սխալմամբ զետեղված է մի քանի էջ առաջ: Մենք տեղափոխել ենք Պատմութեան վերջը:

Միհրդատեանի հրատարակութիւնը տեքստի վերջում ունի իր հիմքում ընկած նորագույն ընդօրինակութեան հետևյալ հիշատակարանը, որը բառացի քաղված է Ռ 2639 ձեռագրից. «Չյետինս ի գրչաց և զառաջինս ի մեղաւորաց՝ զանարծան, զանարհեստ և զանիմաստ զԳրիգոր Երէցս արծանի առնել աղաչեմ զձեզ ով սուրբ ընթերցողք միով ողորմեայիւ, և մեղաց իմոց թողութիւն շնորհել՝ ինձ և իմոցն ամենայնի. և նա՝ որ յիշէ, յիշեալ լինիցի յարգարամէտ դատաւորէն մերմէ՝ Յիսուսէ Քրիստոսէ և նմա փառք յափտեանս ամէն»:

Սրանից հետո Միհրդատեանն զգալի տարածութիւն թողնելով և սառածները փոխելով՝ շղագրով ավելացնում է «Արդ՝ գրեցաւ սա ի թուին (Հայոց) ՌձԻԱ. ի Բաղէշ ի վանս Յովհաննու Կարապետի»: Սույն հավելվածը Ռ 2639 ձեռագրում չկա, ուստի չէր կարող լինել նաև Միհրդատեանի օգտագործած ձեռագրում: Հրատարակիչը, կամ նրանից առաջ մեկ ուրիշը, կամենալով հայտնի դարձնել, որ տպագրութեան համար հիմք ծառայած ձեռագիրն արտագրված է եղել Հայոց ՌձԻԱ (=1672) թվականին, որոշել է Ռ 2639 ձեռագրից (էջ 142ա) քաղել այս թվականի վերաբերյալ տեղեկութիւնը և զետեղել հիշատակարանի վերջում:

Պատկանյանի ունեցած ձեռագրերը հիշատակարան չի ունեցել և Պատկանյանն էլ այդպիսին չունի իր հրատարակութեան մէջ: Մալխասյանցը օգտվել է անմիջապէս Ռ 2639 ձեռագրից և տեքստի վերջում տպագրել է այդ ձեռագրի հիշատակարանը, որը նույնն է, ինչ որ Միհրդատեանի հրատարակութեան վերջում զետեղված հիշատակարանը, առանց Միհրդատեանի շղատառով ավելացրած հավելվածի:

669. «Արդ՝ քէպէա և վայրապար գրուցեալ տողեցից զբանս ի կարգի պատմութեանս քստանհանար խորհրդոյ մտացս իմոց»: Այս բառերով սկսվող ամբողջ վերջաբանը, մինչև վերջ, նախորդ բոլոր հրատարակութիւններում և ձեռագրերում գտնվում է ոչ թե տեքստի վերջում, ինչպէս որ մեր հրատարակութեան մէջ է, այլ դրանից երկու էջ առաջ, «գոր շինեաց ի վերայ պղոտային Վաղարշապատ քաղաքի» և «Ե՛ նմին ամի ի բաց կացին Հայք ի ծառայութենէ Իսմայիլացոցն» բառերի միջև:

670. «Այսպէս և տախ ի Սին անապատէ որ ի վերայ ամենայն երկրի կատարեալ սովով և սովով և ահիւ մեծաւ»: Չամինյանը (Չամ., էջ 245) «որ» բառից հետո ավելացնում է «սփռեալ»: Այս կամ նման բովանդակութիւն ունեցող մի բառի պակաս տեքստում զգացվում է, բայց չգիտենք, թե նախնական բնագրում եղել է արդյոք հենց այդ բառը, թե՞ մեկ ուրիշը:

671. «Եւ գայլն եւս: Եւ ապա յելս»: Հնագույն ձեռագիրն ունի. «և այլն ևս ևս ապա ելս»: Միհրդատեանը՝ «Եւ այլն ևս: Եւ ապա ելս»: Պատկանյանը՝ «Եւ այլն ևս ապա ելս»: Մալխասյանցը՝ «և այլն ևս. և ապա ելս»: Չամինյանը (Չամ., էջ 245) «և այլ ևս: Ապա յելս»,

Մենք ուղղել ենք «Եւ զայլն ևս: Եւ ապա յելս»: Սրանցից «Եւ զայլն ևս»: արտահայտութիւնը գործածված է նաև Գավանութեան թղթում (ՍՆՊ, էջ 154, տող 5—6), որը և նկատի ենք ունեցել հատվածը սրբագրելիս:

Մեր սրբագրութիւնը նախորդների համեմատութեամբ ավելի պարզ պատկերացնելու համար սրբագրված բառերը բերենք ավելի ընդարձակ քաղվածքի մէջ. «Զորմէ գոշէ մարգարէն Գանիէլ, եթէ «Գազանն շորորդ ահեղ և զարմանալի, և հզար յոյժ, ժանիք նորա երկաթիք, և մագիլ» նորա պղնձիք, ուտէր և մանրէր, և զմնացեալսն առ ոտն կոտորէր», և զայլն ևս: Եւ ապա յելս բանիցն ասէ. «Մերձ է ար կորստեան նոցա, հասեալ է պատրաստութեամբ տէր ի վերայ նոցա»: Որ և այս ևս կատարեցի ի ժամանակի իւրում»:

Այս խոսքերով էլ հեղինակն ավարտում է իր գիրքը:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Ա

### «ՍԵՔԵՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԸ

Հրապարակվող երկը մեզ հասել է առանց հեղինակի անվան: Այն պարու-  
նակող հնագույն ձեռագրում (ՄՄ, ձ. № 2639, ընդօրինակված 1672 թ. Ամրդուլու  
վանքում) բացակայում են ինչպես Սեքեոսի անունը, այնպես էլ նրա անվամբ  
հրատարակվող երկի վերնագիրը: Զեռագրի պատվիրատու Վարդան Բաղիշեցին  
1689—1704 թթ.<sup>1</sup> կազմել է Ամրդուլու վանքում գտնված ձեռագրերի ցուցակը,  
որտեղ իր պատվիրած ձեռագիրը գրանցել է «Պատմութիւն Խոսրովու» խորա-  
գրով<sup>2</sup>: Սույն ձեռագրի գաղափար օրինակում (XII—XIII դդ.) և նրա հետ առնչ-  
վող մյուս ձեռագրերում<sup>3</sup> նույնպես «Սեքեոսի Պատմությունն» ընդօրինակված  
է եղել առանց հեղինակի անվան: 1828 թ. ձեռագիրը գտնվել է էջմիածնի մա-  
տենադարանում և Մանվել Գյումուշխանեցու կազմած անդրանիկ ձեռագրա-  
ցուցակում գրանցվել որպես «Պատմութիւն մի ահեղիճակ»<sup>4</sup>:

Բանասերներից առաջինը Հովհաննես Շահխաթունյանցն է, որ ձեռագրում  
հեղինակ և խորագիր չունեցող երկը վերագրել է Սեքեոսին<sup>5</sup>: Նրա ենթադրու-  
թյան հիման վրա հետագայում անհեղինակ երկը բազմիցս ընդօրինակվել և  
սպագրվել է Սեքեոսի անվամբ:

Բրոսսեի հաղորդումից գիտենք, որ Շահխաթունյանցն իր հայտնաբերած  
բնագիրը Սեքեոսին վերագրել է ձեռագրի ուսումնասիրության հիման վրա<sup>6</sup>:  
Բայց թե որոշակի ինչ հիմունքներ է ունեցել Շահխաթունյանցը՝ հայտնի չէ:  
Դժվար չէ, սակայն, կոսահել, որ նրա ենթադրությունը պետք է հիմնված լիներ  
Ասողիկի, Սամվել Անեցու, Մխիթար Անեցու, Կիրակոս Գանձակեցու և Մխիթար  
Այրիվանեցու տեղեկությունների վրա: Այս մատենագիրները հիշատակում են

<sup>1</sup> Գ. Արզաբաբյան, Դարձյալ Սեքեոսի մասին, «Բանբեր Մատենադարանի», № 10, Երևան, 1971, էջ 449, ծ. 78:

<sup>2</sup> Գ. Արզաբաբյան, «Սեքեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 21—27: Այսուհետև՝ Արզաբաբյան, Անանունի առեղծվածը:

<sup>3</sup> «Սեքեոսի Պատմության» մեզ հասած հնագույն ձեռագիրը սերտորեն առնչվում է նաև Սիմեոն Ապարանեցու ունեցած ձեռագրի հետ (տե՛ս Արզաբաբյան, Անանունի առեղծվածը, էջ 122—126): Այս ձեռագիրը նույնպես հեղինակ չի ունեցել և Սիմեոն Ապարանեցին XVI դարում անհեղինակ երկը վերագրել է Ղազար Փարպեցուն. «Ի վիպասանութենէն Ղազարու Փարպեցու» (Սիմեոն Ապարանեցի, Բանաստեղծություններ: Աշխատասիրություններ Կարապետ Սուքիասյանի, Երևան, 1976, էջ 79):

<sup>4</sup> ՄՄ, ձ. № 3801, էջ 209ր:

<sup>5</sup> Հովհ. Շահխաթունյանցը 1831 թ. մայիսի 15-ին գրած նամակում Զվարթնոցի շինության մասին խոսելիս վկայակոչում է անհեղինակ երկից մի հատված և նրա հեղինակն է համարում Սեքեոսին. «Զհիմնարկութիւն եկեղեցոյս գրէ Սեքեոս կախկոպոս պատմարան յայս ձև օրինակի» (ՄՄ., Կաթ. դիվան, թղթ. 59, վավ. 652ա—12, թ. 15ա):

<sup>6</sup> M. Brosset, Rapport sur un voyage archéologique dans le Géorgie et dans l'Arménie, St.-Petersbourg, 1849, p. 49.

Սեբեոս անունով մի պատմիչի, որը գրել է «Պատմութիւն Հերակլի» կոչված երկը: Եահիաթունյանցը նկատելով, որ իր հայտնաբերած երկում գործող գլխավոր անձերից մեկը Հերակլն է, ենթադրել է, որ հենց այդ երկն է Սեբեոսի գրածը: Բայց նա երբեմն էլ կասկած է հայտնել Սեբեոսի կապակցութեամբ<sup>7</sup>:

Առաջին իսկ հրատարակութեան հետ ծագում է «Պատմութիւն Հերակլի» խորագրի առեղծվածը: Միջնադարյան մատենագիրները Սեբեոսին ճանաչել են որպես Հերակլի պատմությունը գրած հեղինակի, այնինչ՝ Եահիաթունյանցի հայտնաբերած գիրքը Հերակլի պատմությունը չէ: Այս գրքի համար «Պատմութիւն Հերակլի» խորագիրն այնքան անպասելի է, որ առաջին հրատարակիչը հանգել է նույնիսկ այն արտառոց մտքին, թե բյուզանդական կայսրը հավանաբար անձամբ հանդիպել է հայ պատմիչին և նրան խնդրել գրել սույն գիրքը, այդ իսկ պատճառով էլ գիրքը կոչվել է «Պատմութիւն Հերակլի»<sup>8</sup>:

Մեկ այլ կարծիք է հայտնել Հ. Գաթրճյանը, որի համաձայն՝ գիրքն սկզբում նվիրված է եղել Հերակլին, բայց հետագայում «հառաջ և վերջն ալ շատ հարակից բաներ շարեր է»<sup>9</sup>, որի հետևանքով ստեղծվել է հակասություն գրքի վերնագրի և բովանդակության միջև: Այս դեպքում, սակայն չի նկատվել, որ գրքի առաջաբանում հեղինակը հենց սկզբից հայտնում է իր ծրագիրը և հետագայում էլ գիրքը շարադրում է այդ ծրագրի համաձայն. այնպես որ նա խորագիրն ընտրելիս սկզբից ևեթ պետք է նկատի ունենար գրքին համապատասխանող վերնագիր:

Ն. Ակինյանը գտնում է, որ Հերակլի անունը ավելացրել են ուրիշները: Սրանք իբր կամեցել են գրքի վրա տեսնել ոչ թե «օտարադեն» թագավոր խոսրովի, այլ Քրիստոսի խաչափայտն ազատած բյուզանդական «բարեպաշտոն» կայսեր անունը<sup>10</sup>: Բայց հասկանալի է, որ Հերակլի անունը գրքի վրա ավելացնելու համար միայն այդ կայսեր նկատմամբ ունեցած հարգանքը բավական չէր, պետք է, որ գրքի բովանդակությունը նույնպես թույլ տար գիրքը «Պատմութիւն Հերակլի» կոչել:

Եթե քրիստոնյա հեղինակն ինքը նպատակահարմար է գտել իր գիրքը կոչել «օտարադեն» խոսրովի անվամբ, կնշանակի դա համապատասխանել է ժամանակի հոգեբանությունը և փոփոխման պահանջ չէր առաջադրի: Թովմա Մեծոփեցու Պատմությունը Լենկթեմուրի անունով կոչելիս միջնադարում ելակետ են ունեցել, անշուշտ, գրքի բովանդակությունը և ոչ թե Լենկթեմուրի կրոնական պատկանելությունը:

Օտար մատենագրություններում նույնպես պահպանվել են խոսրովի

<sup>7</sup> Սեբեոսի առթիվ Եահիաթունյանցի առաջին կասկածն արտահայտված է 1833 թ. կազմված մի ձեռագրացուցակում (ՄՄ., ձ. № 3801, էջ 142բ), որտեղ կարդում ենք. «Պատմութիւն (կարծի) Սեբեոս: Երկրորդ կասկածը հայտնվել է Եահիաթունյանցի մահվան տարին լույս տեսած Բրոսեի հիշյալ աշխատության 45 և 49 էջերում, որտեղ Սեբեոսի անվան դիմաց երկու անգամ դրված է հարցական նշան: Այս նշանը վկայում է ոչ միայն Բրոսեի, այլև Եահիաթունյանցի կասկածի մասին, որովհետև Բրոսեն «Սեբեոսի Պատմության» անտիպ ձեռագիրը նկարագրել է նաև Եահիաթունյանցի տված տեղեկությունների համաձայն: Ի դեպ՝ Բրոսեն Եահիաթունյանցի մահից հետո նույնպես շարունակում էր ձեռագիրը միայն ենթադրաբար վերագրել Սեբեոսին: Իր ունեցած ձեռագիր օրինակի վրա նա մակագրել է. «Histoire presumée écrite par Sébèos» (տե՛ս այդ ձեռագրին վերաբերող բաժնում):

<sup>8</sup> «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն ի Հերակլն», Կ. Պոլիս, 1851, էջ ԺԱ:

<sup>9</sup> «Նւրոպա», Վիեննա, 1852, № 21, մայիսի 24, էջ 33:

<sup>10</sup> Տե՛ս Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, Կ. Ա., Վիեննա, 1924, էջ 4:

անունը կրող երկեր: Այսպես օրինակ, «Երուսաղեմի գերումը» կոչված հունական գրվածքի վրացական խմբագրության (փոխ է առնված արաբականից) վերնագրի մեջ խոսքովը ոչ միայն հիշատակված է, այլև «մեծարված է» որպես «բաբելացիների, պարսիկների և քաղղեացիների արքա»<sup>11</sup>: Այս ժողովուրդներին թվարկելով, թարգմանիչը ցանկացել է վերնագրի մեջ ավելի խտացնել խոսքովի բացասական գծերը, որովհետև թարգմանիչի հայեցողությամբ՝ թվարկված ժողովուրդները նույնպես բացասական խմաստ ունեն: Այսպիսով, վերնագրերը ծառայել է որպես աչքի զարնող մի տեղ, «օտարադեն» թագավորին ի ցույց դնելու համար:

Ուշագրավ է այն, որ վրաց թարգմանության համար բնագիր հանդիսացած մեզ ծանոթ արաբական խմբագրությունը խոսքովի անվան կողքին ունի նաև Հերակլի անունը<sup>12</sup>: Բայց վրացի քրիստոնյա թարգմանիչն այս «բարեպաշտոն» կայսեր անունը չունի: Ինչպես երևում է, նրա օգտագործած արաբական օրինակի վերնագրի մեջ հիշատակված է եղել միայն խոսքովի անունը: Կնշանակի, ժամանակակիցների համար կարևորը եղել է ոչ թե թագավորների «օտարադեն» կամ «բարեպաշտոն» լինելը, այլ այն, որ Երուսաղեմի գերության և խաչափայտի առևանգման հեղինակը հանդիսացել է խոսքովը, ուստի և նա պետք է առաջին հերթին հիշատակվեր «Երուսաղեմի գերումը» կոչված մի երկի վերնագրի մեջ:

Հ. Պ. Անանյանը, հետևելով Գաթրճյանին, հայտնել է այն կարծիքը, թե Սեբեոսի երկը Հերակլի անվամբ է կոչվել հեղինակի իսկ կողմից: «Բյուզանդացի մատենագիր Պիսիդես նույնիսկ դյուցազնեբզություն մը գրած է՝ Հեռակլիական անունով: Ուստի մեզի զարմանալի չի թվիր, որ Սեբեոս ալ... ուզած ըլլա իր Պատմությունը կապել պատմական այս մեծ եղելության (խաչափայտի ազատմանը—Գ. Ա.)»<sup>13</sup>: Սակայն հիշենք, որ Պիսիդեսի դյուցազնեբզությունը կրում է ոչ միայն Հերակլի, այլև խոսքովի անունը<sup>14</sup>: Բացի այդ, «Հերակլեականի» նկատմամբ մեր մատենագիրների ունեցած լուրջությունը ցույց է տալիս, որ հայ իրականության մեջ Հերակլին չափազանցված գույներով փառաբանելու պահանջ չի զգացվել: Պիսիդեսը միջնադարյան Հայաստանում սիրված հեղինակ էր, մեր թարգմանիչները թարգմանել են նրա «Յաղագս վեցօրեայ արարչութեան» երկը. եթե շահագրգռվածություն լիներ՝ կթարգմանեին նաև «Հերակլեականը»:

Հերակլը մեզանում առհասարակ չի վայելել այն արտակարգ հեղինակությունն ու սերը, որը նրան վերագրել են բանասերները: Խաչափայտն ազատելը համաքրիստոնեական նշանակություն ունի և Հայաստանում նույնպես խանդավառություն առաջացրեց: «Սեբեոսի Պատմության» հեղինակն այդ կապակ-

<sup>11</sup> Антиох Стратиг, Пленение Иерусалима персами в 614 г. Грузинский текст исследован, переведен и арабское извлечение приложил Н. Мара, СПб., 1909, վրացերեն բնագիր, էջ 1:

<sup>12</sup> „Expunctionis Hierosolymae A. D. 614. Recensionnes arabicae...“, translatae a Gerardo Garitte, Louvain, 1973, էջ 71: Այստեղ խոսքովը կոչված է Քարու նվշրվն (= խոսքով Անուշարվան):

<sup>13</sup> Պ. Անանյան, Սեբեոսի Պատմության գրքի մասին քանի մը լուսաբանություններ, Վեներտիկ, 1972, էջ 26—27: Նախօրոք «Բազմավէպի» 1970—1973 թվականների համարներում հրատարակված արժեքավոր սույն ուսումնասիրության մեջ «Սեբեոսի Պատմության» հեղինակի հարցին նվիրված բաժնի, ինչպես նաև նույն հարցին անդրադարձած մյուս հեղինակների կարծիքների քննությունը տե՛ս «Բանբեր Մատենագրարանի», № 10, էջ 425—474:

<sup>14</sup> Ἡρακλίας ἦτοι εἰς τὴν τελευταίαν πτώσειν γερουροῦ βασιλέως Περσῶν.

ցությամբ Հերակլին կոչում է «երանելի, աստուածասէր և երջանիկ թագաւոր»: Բայց շպետք է մոռանալ, որ հենց խաչափայտն ազատող կայսրն էր, որ բռնի քաղկեդոնացման բացահայտ քաղաքականութիւնն էր վարում Հայաստանում և այդ միևնույն կայսեր թելադրանքով է, որ Կարինի քաղկեդոնական ժողովում «Հայք քաղկեդոնիկք եղեն և գժողովն ընկալան»<sup>15</sup>:

«Սեբեոսի Պատմութեան» հեղինակը խաչափայտի պատմութեանն անդրադարձել է ընդամենը մի քանի էջով: Ըստ որում, խաչափայտի պատմութիւնը և առհասարակ Հերակլի հիմնական գործերի նկարագրութիւնը պարունակող բաժինը «Սեբեոսի Պատմութիւնում» զետեղված է ոչ թե Հերակլի, այլ Խոսրովի անունը կրող «Մատեան ժամանակեան... յԱպրուէզն Խոսրովեան» («Ժամանակագրական մատյան... Խոսրով Ապրվեզի մասին») խորագրի տակ:

Այս բաժնի նախերգանքում հեղինակն իր գրելիքի շարժառիթը ներկայացնելիս չի գործածում ոչ մի այնպիսի արտահայտութիւն, որն առիթ տար մտածելու, թե նա իսկապէս կամեցել է «իր Պատմութիւնը կապել պատմական այս մեծ եղելութեանը»: Այստեղ մոռացված են և՛ խաչափայտը, և՛ նրան ազատողը: Հեղինակի մտքին իշխում է իր անհանգիստ դարի գլխավոր թելադրողը՝ Խոսրով արքան, որը «հրդեհեալ բոցացոյց զառ ի ներքոյս ամենայն, դղորդեալ գծով և զցամաք, դարթուցեալ զկործանումն ի վերայ ամենայն երկրի»: Մովն ու ցամաքը «դղորդացնող» այս անձը ժամանակակիցներին երեւում է որպէս «ահեղ որսորդն, առիւծն Արևելից, յորոյ ի գոչելն միայն ազգք հեռաւորք դողային և մօտաւորք յերեսաց նորա իբրև զմօմ հալեալ պակասէին»<sup>16</sup>: Այս ահեղ արքային արգելել չկարողանալով, Հերակլը թույլ տվեց, որ նա գրավի Երուսաղեմը<sup>17</sup> և գերի խաչափայտը: Քրիստոնեական աշխարհին սույն իրադարձութիւնն ավելի է հուզել, քան խաչափայտի ազատագրումը Հերակլի կողմից, այդ իսկ պատճառով էլ ավելի հաճախ նկարագրվել է Երուսաղեմի առումն ու ավերումը, քան խաչափայտի ազատումը<sup>18</sup>:

«Բարեպաշտոն» Հերակլը ռազմական գործողութիւններ մղելիս հայերի հետ հաշվի չէր նստում: Ընդհակառակը, նա Հայաստանում կործանում է Դվինն ու Նախիջևանը, ասպատակում է այլ շրջաններ: Երկու ահեղ թշնամիների միջև մղված պատերազմների հետևանքով տուժում էին բազմաթիվ ժողովուրդներ: «Սեբեոսի Պատմութեան» հեղինակը այս ընդհանուր պատկերի վրա միայն որպէս մասնակի կետ էր դիտում խաչափայտի ազատումը, որին արդեն հաջորդել էին արաբական արշավանքները: Քննարկվող Պատմութիւնը գրվում էր այն ժամանակ, երբ Հերակլը խաչափայտն ազատելուց հետո դարձյալ

<sup>15</sup> «Շիրակացու մատենագրութիւնը», կազմեց Ա. Արրհամյան, Երևան, 1944, էջ 397:

<sup>16</sup> Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քիֆլիս, 1912, էջ 166:

<sup>17</sup> «Կայսերաց գրքի» հեղինակը դառնութեամբ է նշել Հերակլի օրոք տեղի ունեցած այդ իրադարձութիւնը: Նա գրում է. «Առ սովաւ (այսինքն՝ Հերակլի օրոք—Գ. Ա.) առաւ աստուածաշէն քաղաքն Երուսաղէմ ի զարացն Պարոսից, յորում եկեղեցիք աւերեցան և սուրբ խաչն դերեցաւ և կտակարանք այրեցան» («Շիրակացու մատենագրութիւնը», էջ 397):

Հերակլի նկատմամբ վերաբերմունքը Հայաստանում այնպիսին է եղել, որ Սիմեոն Ապարանցիին կարողացել է նրա մասին ազատ գրել. «Հերակլ պոռնկացեալ ի ձերութեան ժամանակին» (Սիմեոն Ապարանցի, Բանաստեղծութիւններ, Աշխատասիրութեամբ Կ. Առաքիսայանի, Երևան, 1976, էջ 156):

<sup>18</sup> Հմմտ. նաև «Сказания о трех пленениях Иерусалима» և «Сказание о Хоздрое» (О. В. Творогов, Древнерусские хронографы, Л., 1975, стр. 60, 95).

չկարողանալով արգելել թշնամիներին (այս անգամ՝ արաբներին) նորից նրուսաղեմը թողեց նրանց և մինչև մահ այլևս չկարողացավ վերստին գրավել: Խաչափայտը գտնվում էր Կոնստանդնուպոլսում, որտեղ դահ բարձրացած նոր կայսրը շարունակելով Հերակլի գիծը, նոր ծրագրեր էր մշակում Հայաստանը քաղկեդոնացնելու:

Արդեն քսան տարի է, ինչ Հերակլը վախճանված էր, արաբաբլուզանդական պայքարը շարունակվում էր, հայտնի չէր, թե ում էր պատկանելու վերջնական հաղթանակը: Հաշիվները վերջնականապես մաքրված էին միայն պարսից Սասանյան հարստության հետ, որի վերջին շրջանի ամենագորեղ ներկայացուցիչը Խոսրովն էր: Եվ «Սեբեոսի Պատմության» հեղինակը՝ գրիչ է վերցնում սկսելու համար այս արքայի պատմությունը, որովհետև նրանով էին սկսվում դարաշրջանի աղետները, կործանարար անցքերը: «Եւ արդ,—գրում է նա,—ես ճառեցից զեղեղոցն յերկրի զանցից կործանման առասպելս վիպասանելով, զի վերուստ զարթուցեալ սրտամտութիւն և զառ ի ներքոյ բորբոքեալ զբարկութիւն, զհրոյն և զարեան հեղեղն և զհինիցն («Սասանական հէն» Խոսրովի—Գ. Ա.) արշաւանս և զմահաբերն ասպատակս... Եւ արդ՝ ասացից զվէպս ի կործանիչն և յապականողն Խոսրով յԱստուծոյ անիծեալն»:

Խոսրովի գործունեությունն ընթացել է նաև Հերակլի գործունեությանը զուգընթաց, ուստի Խոսրովի պատմությունը շարադրելիս հեղինակը բնականաբար պետք է հիշատակեր նաև Հերակլի գործերը: Բայց քանի որ գլխավոր դերակատարը Խոսրովն էր, նա այդ ամենը ներկայացրել է Խոսրովի անունը կրող հետևյալ չափածո խորագրի տակ.

Մատեան ժամանակեան,  
Պատմութիւն թագաւորական,  
Վէպ արիական,  
Վանումն տիեզերական,  
Հէն Սասանական,  
ՅԱպրուէզն Խոսրովեան:

Եթե կրճատենք երկրորդից հինգերորդ տողերը, որոնք սոսկ լրացուցիչ պարագաներ են, կմնա մեր ընդգծած առաջին և վերջին տողերում շարադրված հետևյալ խորագիրը. «Մատեան ժամանակեան յԱպրուէզն Խոսրովեան», այսինքն՝ «Ժամանակագրական մատյան Խոսրով Ապրվեզի մասին»:

«Մատեան» բառն ավելի հաճախ գործածվում է ամբողջ գրքի իմաստով, բայց ունեցել է նաև գրքի որևէ գլխավոր և ամբողջական բաժին ցույց տվող իմաստ: Եթե անգամ ընդունենք, որ հեղինակն այս վերջին իմաստով է գործածել բառը, դարձյալ դրանով բացատրվում է ամբողջ գիրքը Հերակլի անվամբ կոչելու հնարավորությունը, որովհետև, ինչպես ասվեց, Հերակլի գործունեությունը նկարագրված է Խոսրովի անունը կրող բաժնում: Սրան հաջորդում է գրքի երկրորդ բաժինը, որը վերաբերում է արաբներին և որի հենց առաջին գլխում հայտնվում է Հերակլի մահվան մասին: Այսպիսով, հեղինակն իր գրքի երկու գլխավոր բաժիններից և ոչ մեկը Հերակլի անվամբ չի կոչել, ուրեմն ամբողջ գիրքն այդ անվամբ կոչելու մասին խոսք լինել չի կարող:

Որ հեղինակն սկզբից ևեթ ծրագրել է գրել «Խոսրովի մատյանը», այդ մասին է վկայում նաև գրքի առաջին բաժնում պատմական անցքերի ժամանակագրությունը նշելու համար ընդունված հիմքը: Ինչպես Հայաստանում,

այնպես էլ այլուր կատարված դեպքերը նշված են ըստ հոսսորովի թագավորած տարիների հաջորդականությամբ: Նույնիսկ այնպիսի մի դեպք, ինչպիսին է Հռիփսիմեի տաճարի շինությունը, որը, թվում է, պետք է նշվեր շափանիշ ընտրելով քրիստոնեա «բարեպաշտ» կայսր Հերակլին, նշված է ըստ հոսսորովի տարիների. «Եւ եղեւ յամի ԻԸ-րդի թագաւորութեանն Ապրուէզ հոսսորովու քակեաց կաթողիկոսն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի»<sup>19</sup>:

«Սեբեոսի Պատմությունում» հատկացված արտակարգ դերի մասին վկայող փաստ է նաև այն, որ հեղինակը սույն գործիչին նվիրել է հատուկ նախերգանք, որը, ինչպես տեսանք, սկսվում է գրեթե շափածո մի շարագրանքով: Սրան հակառակ, Հերակլը գրքի մեջ մուտք է գործում սովորական ձևով, այնպես, ինչպես մյուս գործիչները:

«Սեբեոսի Պատմությունից» օգտված մատենագիտներից (Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Ասողիկ, Վարդան Արևելցի, Սիմեոն Ապարանեցի, Վարդան Բաղիշեցի) ոչ ոք այս աղբյուրից քաղված տեղեկությունների կողքին չի նշել ո՛չ Սեբեոսի և ո՛չ էլ որևէ այլ հեղինակի անուն: Այս համատարած լուծությունից երևում է, որ «Սեբեոսի Պատմությունն» իր խորագրից զրկված է եղել շատ վաղ ժամանակներում: Այդ մասին են վկայում հատկապես Դրասխանակերտցին, Սիմեոն Ապարանեցին և Վարդան Բաղիշեցին: Առաջինը դեռևս X դարում, չիմանալով իր աղբյուրի անունը, նրանից քաղված մի տեղեկություն (Քրիստափոր կաթողիկոսի մասին) վկայակոչել է, գործածելով «բան ճառի», «ասէ» արտահայտությունները<sup>20</sup>, երկրորդը XVI դարում իր աղբյուրը վերագրել է Ղազար Փարպեցուն<sup>21</sup>, իսկ երրորդը մեկ դար անց իր կազմած ձեռագրաց ցուցակում «Սեբեոսի Պատմությունը» գրանցել է «Պատմութիւն հոսսորովու» կոչելով<sup>22</sup>, որով կողմնակիորեն ցույց է տվել, որ ինքն այդ պատմությունը Սեբեոսին չի վերագրել (Սեբեոսին վերագրելու դեպքում գրանցելու էր «Պատմութիւն Հերակլի» խորագրով):

<sup>19</sup> Խոսքովի թագավորության տարիները, որպես ժամանակագրական շափանիշ ընդունելն իսկ խոսում է այս արքայի միջնադարում ունեցած մեծ ազդեցության մասին: Ձեռագրերում պահպանվել են ժամանակագրական այնպիսի ցանկեր, որոնց վերջին եզրը նրա թագավորության ժամանակն է: Հայ մատենագրության մեջ Հովհան Մամիկոնյանի «Տարոնի Պատմության» համար նույնպես որպես եզրափակիչ ժամանակ է ընդունված դարձյալ Խոսքովի թագավորության ժամանակը: Այս արքայի շուրջ հյուսվել են զանազան պատմություններ, ստեղծվել են նրա պատկերը կրող արվեստի գործեր, երաժշտության մեջ թափանցել է «խոսքովային» տերմինը, որը մատնանշում է երաժշտության արևելյան ոճը և որը դեռևս Խոսքով նուշովանի օրոք ծագած լինելով՝ միջնադարում ավելի ամրապնդվել և տարածվել է նրա անվան հետ կապվելուց հետո: Ֆիրդուսին ոգևորված նկարագրել է Խոսքովի պալատում տեղի ունեցած երաժշտական այն միջազգային մրցույթը, որի մասնակիցներից էր, ի դեպ, նաև հայ անվանի երաժիշտ Սարգիսը (որին Ֆիրդուսին հիշատակում է «Սարկաշ» անվամբ):

<sup>20</sup> «Բանբեր Մատենագրարանի», № 10, էջ 440—441:

<sup>21</sup> Սիմեոն Ապարանեցին իր «Վիպասանության» նյութը քաղել է Ղազար Փարպեցուց և «Սեբեոսի Պատմությունից», բայց նրա օգտագործած ձեռագրում «Սեբեոսի Պատմությունը» խորագիր չի ունեցել և ընդօրինակված լինելով Փարպեցու գրքին կից՝ թողել է այն տպավորությունը, թե այդ պատմության շարունակությունն է: Սա է պատճառը, որ Ապարանեցին «Վիպասանության» խորագրում հիշատակել է միայն Ղազար Փարպեցու անունը, գրելով՝ «Ի վիպասանութեանն Ղազարու Փարպեցոյն» (Սիմեոն Ապարանեցի, Բանաստեղծություններ, էջ 79):

<sup>22</sup> Գ. Արքաշյան, Անանունի առեղծվածը, էջ 21—26 և «Բանբեր Մատենագրարանի», № 10, էջ 426, 449—456:

Այսպիսով, մեր օրերում և մեր իսկ ձեռքով Սեբեոսի անվամբ հրատարակվող երկը միջնադարում այդ անվամբ չի կոչել ոչ ոք: Ավելի ճիշտ, մեզ չի հասել Սեբեոսի անվամբ կոչված լինելու մասին վկայող ոչ մի ստույգ մատենագրական հիշատակություն:

Որքան էլ որ զարմանալի լինի, Սեբեոսի անունը պահպանվել է միայն պատմիչների ընդհանուր ցանկերում, այն էլ այնպիսիներում, որոնց հեղինակները (Սամվել Անեցի, Մխիթար Անեցի, Կիրակոս Գանձակեցի, Մխիթար Այրիվանեցի) «Սեբեոսի Պատմությունից» չեն օգտվել<sup>23</sup>:

Միակ պատմիչն Ասողիկն է, որ միաժամանակ և՛ օգտվել է «Սեբեոսի Պատմությունից», և՛ իր կազմած ցանկում<sup>24</sup> հիշատակել է Սեբեոսի անունը: Նրա ցանկում գրանցված են ինը աղբյուր: Նրանցից հինգը ներկայացված են միայն հեղինակների անուններով, իսկ չորսի (Ագաթանգեղոս, Եղիշե, Սեբեոս, Ղևոնդ) դեպքում ներկայացված է նաև նրանց բովանդակությունը: Գրանցումը կատարված է ոչ թե ըստ աղբյուրները պարունակած ձեռագրերի վրա գտնված ինչ-որ վերնագրերի (որպիսիք կարող էին և ձեռագրերում չգտնվել), այլ՝ ըստ նրանց բովանդակության: Ասողիկն իր սեփական բառերով ազատ շարադրել է աղբյուրներից յուրաքանչյուրը վերին աստիճանի ճշգրտությամբ ներկայացնող մեկական նախադասություն: Գրանցման այս եղանակը ցույց է տալիս, որ նա «Սեբեոսի Պատմությունը» նույնպես պետք է գրանցեր նրա բովանդակությանը ճշգրտությամբ համապատասխանող մի ընդարձակ նախադասությամբ, անկախ նրանից, թե այս Պատմությունը պարունակած ձեռագրին իր վրա որևէ խորագիր («Պատմութիւն Հերակլի» կամ «Մատեան Խորովեան») կրել է, թե ոչ:

Աղբյուրների բովանդակության ճշգրիտ գրանցման օրինակներն Ասողիկը ցույց է տվել Ագաթանգեղոսի, Եղիշեի և Ղևոնդի երկերը գրանցելիս: Այսպես. «Քաջ Ագաթանգեղոս, որ նորասքանչ հրաշից և շարչարանաց սրբոյն Գրիգորի և աստուածածանօթութեանս մերոյ է պատմիչ», «Եղիշէ վարդապետ, որ վասն Վարդանանց և սուրբ քահանայիցն շարչարանաց և կատարման», «Պատմութիւն Ղևոնդ Երիցու, որ ինչ վասն Տաճկաց ելիցն և անցից Հայոց ի նոցունց բնութենէ»<sup>25</sup>, թվում է, թե ավելի ճշգրիտ բնութագրել հնարավոր չէր: Միաժամանակ երևում է, որ Ասողիկը ձգտել է աղբյուրները ներկայացնել յուրաքանչյուրին բնութագրող անվագն երկու գծերով (որոնք միմյանց կապել է «և» շաղկապով): Հետևաբար, «Սեբեոսի Պատմությունը» Ասողիկի ցանկում պետք է

<sup>23</sup> «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 429—439:

Սեբեոսին հիշատակող պատմիչներից մեկի՝ Սամվել Անեցու հայտնած տեղեկությունը Կոնստակ սպարապետի մասին կարող է ստեղծել այն տպավորությունը, թե Անեցին օգտվել է «Սեբեոսի Պատմությանը» կից Անանունից, բայց իրականում այդ տեղեկությունը Անեցու բնագրի մեջ ներմուծվել է հետագայում: Ավելի վաղ ժամանակներում գրված ձեռագրերն այդ հատվածը չեն ունեցել (տե՛ս մեր հոդվածը՝ ՇՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 1, էջ 81—84): Մեկ այլ տեղեկություն (Գվինի առման մասին, որն Անեցին իրականում քաղել է մեզ անհայտ մի աղբյուրից, որտեղ հայտնված է եղել նաև քաղաքի առման ժամանակ սպանված 12000 զոհերի մասին) վկայակոչելիս նա գործածել է «ասէ պատմագիրն» փնորոշ արտահայտությունը, որից երևում է, որ նա իր վկայակոչած աղբյուրի հեղինակի անունը չի իմացել: Նա ճիշտ այդպես է վարվել նաև Հիպպոլիտոսին վերագրվող երկից օգտվելիս, գրելով. «այլուր ասի թէ» (էջ 13—14), «և ապա թուէ» (էջ 15), «այլում Պատմութեան ասի» (էջ 24), հմմտ. նաև էջ 53, տ. 1—6, 20—էջ 54, տ. 14 և այլուր:

<sup>24</sup> Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ., 1885, էջ 5—7:

<sup>25</sup> Ասողիկ, էջ 6—7:

գրանցված լինել իր երկու գլխավոր մասերով, այսինքն՝ սասանյանների և արաբների ժամանակաշրջաններին վերաբերող բաժիններով: Այս բաժիններից ոչ մեկին համապատասխան գրանցում չգտնելով, պետք է մտածենք, որ Ասողիկը «Պատմութիւն Հերակլի» խորագրով գրանցել է իսկապես Հերակլին նվիրված մի գիրք, որում Հերակլին հավասար դեր ունեցած որևէ գործիչ հանդես չի եկել (այդ իսկ պատճառով էլ Ասողիկն իր այդ աղբյուրը նշել է միայն Հերակլի անվամբ):

Ասողիկն իր աղբյուրներից չի շեղվել նույնիսկ այն դեպքում, երբ անհրաժեշտ է եղել շեղվել և երբ, ընդհակառակը, աղբյուրներին չմիջամտելով՝ նա իր սեփական ձեռքով հակասություններ է մտցրել «Տիեզերական պատմության» մեջ: Այսպես օրինակ, «Սեբեոսի Պատմությունից» օգտվելիս նա հայտնում է, որ խոսքով Ապրվեզին սպանել են պարսիկները<sup>26</sup>, իսկ «Կայսերաց գիրքը» վերապատմելիս սպանողի դերում հանդես է բերում Հերակլին<sup>27</sup>: Այսբան ծայրահեղ կերպով աղբյուրներին հավատարիմ մնացող մեկը բնականաբար նույնպիսի հավատարմությամբ պետք է կրկներ նաև «Սեբեոսի Պատմության» հեղինակի խոսքը: Իսկ այս հեղինակը ոչ միայն «Մատեան խոսրովեան» խորագրով, այլև նրա տակ գետեղված նախերգանքով ամենայն որոշակիությամբ հայտնում է, որ ինքը գրել է խոսրովի (և ոչ՝ Հերակլի) «վեպը»: «Եւ արդ ասացից զվէպս ի կործանիչն և յապականողն խոսրով»<sup>28</sup>:

«Տիեզերական պատմությունում» չենք գտնում ոչ մի այնպիսի տեղեկություն, որը հիմք տար կարծելու, թե Ասողիկն ինքը սեփական նախաձեռնությամբ կարող էր փոխել «Սեբեոսի Պատմության» հեղինակային խորագիրը և իր աղբյուրը կոչել Հերակլի անվամբ: Հերակլին մանրամասն անդրադարձած պատմիչներից միակը թեթևա Ասողիկն է, որը բյուզանդական հայտեր գործերը հիշատակում է ամենայն զսպվածությամբ, երբեմն՝ նույնիսկ շթաբցնելով իր դժգոհությունը: Այսպես օրինակ, քաղկեդոնականությունը տարածելու նպատակով բյուզանդական կայսեր նախաձեռնությամբ Կարինում գումարված եկեղեցական ժողովի կապակցությամբ Ասողիկը գրում է. «Եւ հասեալ ի ժողովն՝ խնդրէ ի նմանէ Հերակլ (Հերակլը հայոց կաթողիկոս Եզրից պահանջում է— Գ. Ա.) ձեռնարկ հաւատոյ: Իսկ նոքա (հայերը— Գ. Ա.)... խաբեալ խորամանկութեամբ Յունաց՝ նզովեալ զամենայն հերձուածողս բացի ժողովոյն Քաղկեդոնի»<sup>29</sup>: «խորամանկ» և «խաբեբա» բառերը փաստորեն հասցեագրված են Հերակլին, որովհետև նա՝ էր ժողովի գործերը տնօրինողը:

Հերակլին փառաբանելու միակ առիթը հայ մատենագրության մեջ պետք է լինել խաչափայտի ազատման առիթը, բայց նույնիսկ այս դեպքում Ասողիկը, կարծես թե կամեցել է բյուզանդական կայսեր վաստակի կեսն էլ հանձնել պարսից զորավար խոռեմին. «Խնդրէ ի նմանէ զխաչն փրկչական (Հերակլը խոռեմից պահանջում է խաչափայտը— Գ. Ա.)... Եւ եկեալ խոռեմայ սպան զմանուկն Արտաշիր և խնդիր արարեալ փրկչական խաչին՝ առաքեաց առ Հերակլէս, և նորա առեալ՝ տարաւ յԵրուսաղէմ»<sup>30</sup>: Ահա՛ խաչափայտի

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 116:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 142:

<sup>28</sup> Ասողիկն այս նշանավոր տեղեկությունը չէր կարող չնկատել:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 177:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 116:



ազատմանը վերաբերող ամբողջ տեղեկությունը «Տիեզերական պատմությունում»:

«Սեբեոսի Պատմությունից» Հերակլի վերաբերյալ քաղված տեղեկությունները տեղավորելով «Քազաւորք Պարոնից Սասանականք» խորագրի տակ, նա ցույց է տվել, որ ինքը Հերակլի գործերը ներկայացրել է սոսկ այնքանով, որքանով որ դրանք առնչվել են «Տիեզերական պատմության» տվյալ հատվածում ավելի կարևոր դեր ստանձնած պարսից թագավորների և հատկապես խոսքով Ապրվեզի գործերին: Ամբողջ-գրքում նա Հերակլի մասին չի գործածել ոչ մի ոգեշունչ, դրական ածական:

Այս ամենից բխող ընդհանուր եզրակացությունն այն է, որ Ասողիկը չի ունեցել որևէ պատճառ «Սեբեոսի Պատմությունը» Հերակլի անվամբ կոչելու համար և որ նա, որպես շշմարտապատում պատմիչ, պետք է իր աղբյուրը ցանկում նշեր նրա բովանդակությանը համապատասխանող մի գրանցմամբ: Այդպիսի գրանցում «Տիեզերական պատմությունում» չկա, ուստի մնում է ենթադրել, որ Ասողիկը «Սեբեոսի Պատմության» հեղինակի անունը չի իմացել և չի նշել իր ցանկում: Նրա ունեցած ձեռագիրը, ինչպես երևում է, գտնվել է այն միևնույն վիճակում, ինչ վիճակում որ գտնված է եղել նաև Ասողիկից առաջ ապրած Հովհաննես Գրասխանակերտցու օրոք, այսինքն՝ զրկված է եղել հեղինակի անունը պարունակած խորագրից:

Ասողիկի ցանկում չեն նշված «Սեբեոսի Պատմության» վիճակում գտնված նաև երկու այլ նշանավոր աղբյուրներ՝ Հիպոդոտոսին վերագրվող ժամանակագրությունը<sup>31</sup> (որը հայ և հույն գրականության մեջ լայն տարածում գտած մի երկ է) և «Կայսերաց գիրքը»<sup>32</sup> (որն օգտագործվել է մի շարք հայ մատենագիրների երկերում): Եթե Ասողիկը կամենար ցանկում գրանցել իր օգտագործած բոլոր աղբյուրները, կասկած չկա, որ նա կգտներ որևէ եղանակ գրանցելու համար նաև հեղինակների անունները կորցրած երկերը: Օրինակ, «Կայսերաց գիրքը» հայ մատենագրության մեջ հայտնի է հենց «Գիրք Կայսերաց» խորագրով (այսպես են կոչել մի շարք մատենագիրներ)<sup>33</sup> և այդպես կնշեր նաև

<sup>31</sup> Հիպոդոտոսին վերագրվող ժամանակագրությունը տե՛ս «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 359, տ.18—էջ 375, տ. 22:

«Տիեզերական պատմության» քննական բնագրի հրատարակության ժամանակ (1885 թ.) Հիպոդոտոսի ժամանակագրությունը դեռևս գտնված չէր, այդ իսկ պատճառով էլ հրատարակիչը (Ստ. Մալխասյանց) այս աղբյուրից Ասողիկի քաղած տեղեկությունները սխալմամբ ներկայացրել է որպես Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրությունից քաղված տեղեկություններ (տե՛ս Ասողիկ, էջ 306, ծ. 27): Սխալը կրկնվել է նաև հետագայում (հմմտ., օրինակ, Պ. Անանյան, նշված աշխ., էջ 12): Ասողիկը Հիպոդոտոսին վերագրվող ժամանակագրությունից օգտվել է նաև պարսիկ (Ասողիկ, էջ 15, տ. 21—էջ 15, տ. 22, հմմտ. «Շիրակացու Մատենագրությունը», էջ 369, տ. 29, էջ 370, տ. 4) և ապա՝ եբրայեցի (Ասողիկ, 19, 2—21, 23 և Շիրակացին, 370, 23—371, 30) իշխանների ցանկերը կազմելիս:

<sup>32</sup> «Կայսերաց գիրքը», տե՛ս «Շիրակացու Մատենագրությունը», էջ 378—399: Ասողիկն այս գրքից օգտվել է 137—142 էջերում:

<sup>33</sup> Ասողիկի ժամանակակից պատմիչ Ուխտանեսն այս երկը կոչում է «Գիրք կայսերաց» («Պատմութիւն Հայոց», հ. 1, էջ 49 և 111): Այդպես է կոչված նաև ՄՄ 993, 996, 7729 և այլ ձեռագրերում, ինչպես նաև Վենետիկի Ս. Ղազարի մատենադարանի 512 և այլուր պահվող գրադրերում: Հովհաննես Սարկավազն այն կոչել է «Կայսերական պատմութիւն» («Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», Երևան, 1950, էջ 224): Մեկ այլ հեղինակ կրկնել է գրեթե նույն անունը՝ «Կայսերաց պատմութիւն» («Բանասեր», Փարիզ, 1905, էջ 118—124): Վարդան Բախիշեցին այն կոչել է «Կայսերք Հռովմայեցւոցն» («Աբարատ», 1903, էջ 184) և այլն:

Ասողիկը, որն այդ գրքից քաղված նյութերը ղետեղել է «Կայսերք Յունաց» խորագրի տակ<sup>34</sup>, դրանով ցույց տալով, որ ինքը ծանոթ է եղել իր աղբյուրի հանրահայտ անվանը: «Սեբեոսի Պատմությունը» նա կարող էր նշել, ասենք, Վարդան Բաղիշեցու նշած «Պատմութիւն Խոսրովու» խորագրով: Այդպիսի մի եղանակով էլ կգրանցեր նաև Հիպպոդիտոսին վերագրվող ժամանակագրությունը: Եթե այս աղբյուրները նա չի գրանցել, կնշանակի նրա նպատակը եղել է ոչ թե իր բոլոր աղբյուրների գրանցումը, այլ պարզապես իրենից առաջ արած պատմիչների հայտնի անունների թվարկումը, որով նա կամեցել է ուրվագծել նախորդ ժամանակաշրջանի պատմագրության պատկերը: Եվ հիրավի, նրա կազմած ցանկի խորագիրն է. «Յաղագս թէ ոչք եղեն պատմագիրք Հայաստանեայց և»<sup>35</sup> այլոց ազգաց<sup>36</sup>: Ինչպես տեսնում ենք, խոսքը ընդհանրապես հայ և օտար մատենագիրների և ոչ թե «Տիեզերական պատմությունում» օգտագործված բոլոր աղբյուրների մասին է:

Ցանկը կազմելուց հետո է միայն Ասողիկը, որպես ծանոթություն, հայտնում, որ ինքն օգտագործելու է ցանկում իր թվարկած բոլոր աղբյուրները. «Յամենեցունց ի սոցանէ... բերեալ ընծայ մատուցանեմ»<sup>37</sup>: Այս խոստման համաձայն՝ նա «Տիեզերական պատմությունում» իսկապես օգտվում է իր թվարկած բոլոր աղբյուրներից, ուստի պետք է օգտված լինի նաև «Պատմութիւն Հերակլի» կոչված երկից: Թե նա ինչ է քաղել այս երկից, չենք կարող ասել, որովհետև այդ աղբյուրը մեզ չի հասել: Բայց կարելի է կոհհել, որ նրանում չափազանցված գույներով փառաբանված է եղել խաչափայտի ազատումը (Հերակլին վերաբերող մյուս երկերը նույնպես կրում են փառաբանական բրնույթ), և Ասողիկը գերադասել է Հերակլի վերաբերյալ տեղեկությունները քաղել ավելի ստույգ մի աղբյուրից, որպիսին է «Սեբեոսի Պատմությունը»: Իսկ «Հերակլի պատմությունից» նա կարող էր քաղել նաև Հերակլին չվերաբերող այնպիսի միջանկյալ տեղեկություններ, որոնք այժմ որոշել հնարավոր չէ: Հիշենք, որ նա Շապուհ Բագրատունու կորած երկից նույնպես քաղել է մի այնպիսի տեղեկություն (Դավիթ մարգարեի թաղի պատմությունը), որը չի համապատասխանում Բագրատունու գրքի մասին մեր ունեցած պատկերացմանը և որի աղբյուրը չէինք իմանա, եթե Ասողիկն ինքը չհայտնեք, որ օգտվել է Շապուհ Բագրատունուց<sup>38</sup>: Եթե ընդունենք, որ նա Բագրատունու գրքից քաղել է ընդամենը հինգ տողանոց այդ տեղեկությունը, նույն տրամաբանությամբ կարող ենք մտածել, որ նա «Հերակլի պատմությունից» նույնպես կարող էր քաղել այդքան չնչին մի բան: Իսկ եթե իրականում նա քաղել է ավելին՝ նրա քաղածը չենք կարող գտնել այնպես, ինչպես որ չենք գտնում նաև Բագրատունուց քաղածը (եթե իրոք քաղել է): Ազաթանգեղոսի երկից նույնպես Ասո-

<sup>34</sup> Ասողիկ, էջ 137:

<sup>35</sup> «Հայաստանեաց և» բառերը Ասողիկի մեզ հասած բնագրում չկան, մենք ավելացրել ենք ըստ գլուխն սկսող նախադասության հետևյալ հատվածի. «...պոլետիկոսք եւ հետորք Հայաստանեայց և այլոց ազգաց»: Քննարկվող գլխում խոսվում է ավելի շատ հայ, բայց թե օտար պատմագիրների մասին, ուստի կասկած չկա, որ «Տիեզերական պատմության» նախնական բնագրում եղել է այնպես, ինչպես մեր վերականգնածն է:

<sup>36</sup> Ասողիկ, էջ 5:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 138:

դիկը գրեթե ոչինչ չի քաղել, շնայած այս երկը նա ցանկում նշել է առաջին տեղում<sup>39</sup>։

Ի դեպ, Ագաթանգեղոսի օրինակը ցույց է տալիս, որ Ասողիկի ցանկում նշված որոշ աղբյուրներ «Տիեզերական պատմությունում» ավելի քիչ են օգտագործված, քան ընդհանուր հիշյալ երեք աղբյուրները։ Հետևաբար՝ ցանկը կազմելիս Ասողիկին առաջնորդողը եղել է իսկապես ոչ թե աղբյուրների օգտագործման շափը, այլ նրանց հեղինակների անունների հայտնի լինելը։

«Տիեզերական պատմության» երկրորդ հանդեսի առաջին գլխում Ասողիկը ի շարս իր աղբյուրների հիշատակում է նաև Կորյունին. «որպէս պատմեն Կորին և Ղազար»<sup>40</sup>։ Նշանակում է ցանկը կազմելիս նա պետք է Փարպեցու հետ միասին նշեր նաև Կորյունի անունը։ Սակայն ցանկի մեզ հասած բնագրում այդ անունը բացակայում է։ Բացակայության հնարավոր պատճառները կարող էին լինել երեքը՝ 1. Կորյունի անունը «Տիեզերական պատմության» սկզբնական բնագրում եղել է և կորել է հետագայում, 2. Ասողիկը պատահաբար մոռացել է ցանկում նշել Կորյունի անունը, 3. Կորյունը Ասողիկի կողմից պատմիչ չի համարվել և դրա համար ցանկում չի նշվել։

Վերջին պատճառը հավանական չէ, որովհետև իրականում Կորյունը պատմիչ է և Ասողիկը «որպէս պատմեն Կորին և Ղազար» արտահայտությամբ ցույց է տվել, որ ինքը Կորյունին համարել է պատմիչ։ Ըստ որում, միայն Ասողիկը չէ, որ Կորյունին միջնադարում դասել է հայտնի պատմիչների շարքը։ Այդպես են վարվել նաև նրանից առաջ և հետո ապրած Ղազար Փարպեցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին և ուրիշներ։

Փարպեցու գրանցումը, սակայն, կարիք ունի լրացուցիչ պարզաբանություն, այդ իսկ պատճառով էլ փոքր-ինչ ավելի հանդամանորեն անդրադառնանք նրան։ Մեր այս պատմիչն իր երկն սկսում է, թվարկելով իրենից առաջ գրված հայոց պատմությունները (Ագաթանգեղոս, Բուզանդ) և իր գիրքը համարում է նրանից հետո շարադրված երրորդ պատմությունը. «երրորդ Պատմութիւնս այս»<sup>41</sup>։ Այդ երեք գրքերի շարքում նա Կորյունի երկը չի հիշատակել, մի փաստ, որը հիմք է տվել ենթադրելու, թե Փարպեցին Կորյունի գիրքը համարել է ոչ թե պատմական, այլ վարքագրական երկ և դրա համար է, որ չի նշել մյուս երեք երկերի կողքին։ Այսպես կարծելու առիթ է տվել նաև Փարպեցու հետևյալ խոսքը. «Նուզայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեալ ի Պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանելոյն Մաշտոցի կարդացեալ տեղեկասցի զվարս կենաց նորա»<sup>42</sup>։ Ընդգծված «զվարս կենաց» բառերը թողել են վարքագրական երկի մասին վկայող բառի տպավորություն<sup>43</sup>։ Իրականում, սակայն,

<sup>39</sup> Ագաթանգեղոսի գիրքն Ասողիկին հայտնի է եղել Գրիգոր Լուսավորչի անվամբ որպես «Պատմութիւն սրբոյն Գրիգորի» (էջ 94)։ Նրա աղբյուրներում («Սերեոսի Պատմութիւն») նույնպես Ագաթանգեղոսի երկը կոչված է «Գրե՛. սրբոյն Գրիգորի»։ Թվում է, թե Ասողիկը Լուսավորչի մասին տեղեկությունները պետք է քաղեր այս գրքից, բայց նա կարևորություն չի տվել գրքի անվանը և օգտվել է ավելի ստույգ մի աղբյուրից՝ Մովսես Խորենացուց։ Այդպես էլ նա Հերակլի մասին տեղեկությունները քաղել է «Սերեոսի Պատմութիւնից», շնայած այս գիրքը Հերակլի անվամբ չի կոչվում։

<sup>40</sup> Ասողիկ, էջ 74։

<sup>41</sup> Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 2։

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 13։

<sup>43</sup> Մ. Ավրայբեգյան, Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը, Երևան, 1971, էջ 138։

դրանցով պարզապես ասված է, որ Կորյունի գրքում կարելի է կարդալ Մաշտոցի կենսագրությունը: Փարպեցին «վարք» բառը գործածում է նաև Բուզանդի կապակցությամբ, հայտնելով, որ այդ պատմիչն իր գրքում նկարագրել է «զվարս և զգործս զարանց սրբոց»<sup>44</sup>: Սա նույնպես, անշուշտ, չի նշանակում, թե Փարպեցին Բուզանդի գիրքը համարել է վարքագրական երկ: Կորյունին վերաբերող հիշյալ նախադասության մեջ Փարպեցին, ինչպես տեսանք, գործածել է «ի Պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան»: Սրանով նա ցույց է տվել, որ ինքը Կորյունի գիրքը ընդունել է որպես պատմական երկ: Նույն բանը նա ավելի որոշակի ցույց է տվել «ի Պատմութենէ երանելոյ առն Կորեան»<sup>45</sup> բառերով:

Ձեռագրերում նույնպես Կորյունի գիրքը կոչված է «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելոյն սրբոյն Մաշտոցի»<sup>46</sup>: Իսկ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Կորին՝ զՊատմութիւն սրբոյն Մեսրոպայ և այլ ժամանակաց»<sup>47</sup>: Ինչպես տեսնում ենք, այստեղ Կորյունի երկը համարված է ոչ միայն Մեսրոպի, այլև «այլ ժամանակաց» պատմություն<sup>48</sup>: Գանձակեցին հայ պատմիչների իր կազմած ցանկում նույնպես Կորյունին հիշել է որպես ընդհանուր պատմության հեղինակի. «Պատմութիւն առն սքանչելի Կորեան»<sup>49</sup>:

Իսկ ինչպես հասկանալ, որ Փարպեցին Կորյունի երկը չի հիշատակել ի շարս Ագաթանգեղոսի և Բուզանդի երկերի: Պատասխանը տալիս է հենց ինքը Փարպեցին: Նա իրենից առաջ գրված գրքերի թվարկումն սկսում է այսպես. «Սկիզբն առաջին գրոց պատմութեանն Հայոց, որում սկիզբն արարեալ պատմեաց ստուգիւ այրն երանելի Ագաթանգեղոս»<sup>50</sup>: Ինչպես տեսնում ենք, Փարպեցին սկսել է թվարկել ոչ թե առհասարակ իր աղբյուրները, այլ միայն հայոց ընդհանուր պատմությունները, «Գիրք պատմութեան Հայոց» կոչվածները: Առաջին գիրքը նա կոչել է «առաջին գիրք պատմութեան Հայոց», իսկ երկրորդ գրքի մասին գրում է. «երկրորդ գրոց սկիզբն արարեալ պատմելոյ ի կարգէ առաջին գրոցն»<sup>51</sup>: Այստեղ «գրոց» բառը գրելիս նա այլևս հարկ չի համարել կրկնել նաև «պատմութեան Հայոց» բառերը, որովհետև առաջին գրքի կապակցությամբ արդեն գրել էր: Բայց որ նա նկատի է ունեցել դարձյալ ընդհանուր հայոց պատմությունը, դա երևում է նրա հետևյալ խոսքերից. «զոր անուանեալ կոչեն զանուն գրոցն Հայոց պատմութիւն»<sup>52</sup>: Երրորդ գիրքը իր գրածն է, որը նա ներկայացնում է այսպես. «Ի մնացեալ տեղոյ պատմութեանց երկրորդ գրոցն աճեցուցանել յառաջ և գրել յայնմհետէ զեղեալս աշխարհիս Հայոց»<sup>53</sup>:

<sup>44</sup> Փարպեցի, էջ 1:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>46</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխատությամբ Մ. Աբեղյանի, Երևան, 1941, էջ 22:

Ի դեպ՝ Կորյունի գրքի վերնագիրը գտնում ենք միայն շատ ուշ ժամանակների ձեռագրերում, իսկ թե ինչպես է Կորյունն ինքը վերնագրել՝ չենք կարող ասել:

<sup>47</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 28—29:

<sup>48</sup> Ղազար Զահկեցին նույնպես Կորյունի գիրքը համարել է ընդհանուր պատմություն («Գիրք աստուածաբանական, որը կոչին Դրախտ ցանկալի», Կ. Պոլիս, 1735, էջ 621):

<sup>49</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 7:

<sup>50</sup> Փարպեցի, էջ 1:

<sup>51</sup> Նույն տեղում:

<sup>52</sup> Նույն տեղում:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 5:

Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես խոսքը հայոց ընդհանուր պատմության մասին է: Այդ պատմությունը պետք է սկսվեր երկրորդ գրքի ընդհատված տեղից («ի մնացեալ տեղուց») և շարունակեր պատմել «զեղեալս աշխարհիս Հայոց»:

Ի տարբերություն այս ընդհանուր պատմությունները պարունակող երեք գրքերի, Կորյունի գործը վերաբերում է միայն մի մասնակի իրադարձության՝ հայոց գրքի գլուտին, ուստի չէր կարող դասվել ընդհանուր պատմությունների շարքը: Ահա սա է պատճառը, որ Փարպեցին Կորյունի գիրքը հիշատակել է ընդհանուր պատմություններից անջատ:

Այժմ վերադառնալով Ասողիկի ցանկին, տեսնենք, թե ինչու այստեղ Կորյունի անունը չի նշված: Նշված չլինելու հիշյալ երեք հնարավոր պատճառներից վերջինը (որի համաձայն Ասողիկը իբր Կորյունին պատմիչ չի համարել), ինչպես տեսանք, իրականությունը չի համապատասխանում: Մնում են այն երկու պատճառները, որոնց համաձայն Կորյունի անունը ցանկում եղել է և հետո է կորել, կամ էլ՝ Ասողիկը պարզապես մոռացել է հիշատակել Կորյունին: Մոռացման հնարավորությունը որքան էլ որ ընդհանրապես չի բացառվում<sup>54</sup>, համեմայնդեպս քիչ հավանական է (չնայած մեզ հետաքրքրող հարցում դա գործնական նշանակություն չունի, որովհետև և՛ մոռացման, և՛ կորստյան դեպքերում փաստերը խոսում են հօգուտ մեր տեսակետի, որի համաձայն Ասողիկի ցանկում ոչ բոլոր աղբյուրներն են նշված, ուստի և չի բացառվում նաև «Սեբեոսի Պատմության» նշված չլինելու հնարավորությունը): Ուրեմն, մնում է ընդունել, որ «Տիեզերական պատմության» սկզբնական բնագրում Կորյունի անունը նշված է եղել: Եվ հիրավի, դժվար է հավատալ, որ Ասողիկը Կորյունի անունը ցանկում չէր գրանցի, այն էլ՝ այն դեպքում, երբ նա գիրքը շարադրելու ընթացքում այդ պատմիչին վկայակոչել է, ինչպես ասվեց, Փարպեցու հետ միասին:

Որ Ասողիկի ցանկում Կորյունի անունը եղել է կողմնակիորեն երևում է թերևս նաև Կիրակոս Գանձակեցու ցանկից: Գանձակեցին մինչև Ղևոնդր ներառյալ՝ պատմիչներին թվարկում է այն միևնույն հերթականությամբ, ինչպես Ասողիկը: Բայց Սեբեոսի և Ղևոնդի միջև նա ունի երկու ավելի անուն. «Կորյուն, Խոսրով»<sup>55</sup>: Մեր կարծիքով՝ այս երկու անուններն էլ Ասողիկի ցանկում սկզբնապես եղել են և հետո են կորել: Գանձակեցին ընդօրինակել է Ասողիկի ցանկի հերթականությունը, նախքան Կորյունի և Խոսրովի անունների կորուստը: Իսկ որ ցանկերում անունների կորուստը հնարավոր է՝ այդ մասին է վկայում առաջին հերթին հենց Կիրակոս Գանձակեցու ցանկը, ՄՄ մի քանի ձեռագրերում այդ ցանկի ընդօրինակողները չեն ընդօրինակել ո՛չ Կորյունի, ո՛չ Խոսրովի, ո՛չ էլ նույնիսկ Սեբեոսի անունները<sup>56</sup>: Միևնույն ժամանակ ցանկը նույնպես որոշ ձեռագրերում մեզ հասել է կորուստներով: Նրանցից մեկում չի նշված դարձյալ Սեբեոսի անունը<sup>57</sup>: Անունների կորուստ պարունակող ցանկերի օրինակները կարել է շարունակել:

<sup>54</sup> Անունների մոռացման դեպքեր կարելի է գտնել նաև տպագիր ցանկերում: Այսպես օրինակ, Ամրդուլու վանքի մատենադարանի ձեռագրացուցակի տպագիր բնագրում մոռացվել է Լաստիվերցու անունը (Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 454, ծ. 83):

<sup>55</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 7:

<sup>56</sup> Նույն տեղում, տողատակի տարրնթերցվածքները:

<sup>57</sup> Հ. Անալյան, Հայկական մատենագիտություն, 1, Առաջաբան, Երևան, 1959, էջ 50:

Ահա այսպիսի վիճակում են ցանկերը մեզ հասել: Այդ ցանկերից մեկն է նաև Աստղիկի կազմածը, որի մեջ չեն նշված ոչ միայն հիշյալ երեք անհեղինակ երկերը, այլև, ինչպես տեսանք, հանրահայտ Կորյունի գիրքը: Նման մի ցանկի հիման վրա, անշուշտ, չենք կարող ապացուցել, որ ցանկում նշված «Պատմութիւն Հերակլի» երկը և «Սեբեոսի Պատմութիւնը» միևնույն երկերն են<sup>58</sup>:

Սույն հրատարակության և հավելվածում մենք հրատարակել ենք «Պատմութիւն Հերակլի» կոչված մի երկից տարբեր դարերում ծաղկաքաղ արված երկու հատվածներ: Մեր կարծիքով, Աստղիկի ցանկում նշված «Պատմութիւն Հերակլի» երկը հենց այս հատվածների աղբյուրն է: Թե ինչ է Աստղիկը քաղել այդ աղբյուրից՝ չենք կարող որոշել, քանի որ, ինչպես ասվեց, այն մեզ չի հասել: Հատվածներում պահպանված տեղեկություններից ոչ մեկը Աստղիկի գրքում չենք գտնում, բայց դա գործնական նշանակություն չունի, որովհետև պարտադիր է, որ Աստղիկը նույնպես օգտված լիներ «Հերակլի պատմության» անպայման այն միևնույն մասերից, որոնցից օգտվել են նաև հիշյալ հատվածների հեղինակները:

Եվ ընդհակառակը, Սամվել Անեցու երկում նշմարում ենք հատվածները հիշեցնող հատուկներ հետքեր (տե՛ս հավելված Ը), որոնք հուշում են այն միտքը, թե Անեցին իր կազմած ցանկում «Պատմութիւն Հերակլի» երկը նշելով՝ նկատի է ունեցել այս երկը:

«Պատմութիւն Հերակլի» կոչված մի երկ, առանց հեղինակի անունը տալու, հիշատակում է նաև Ուխտանեսը, որի քաղած տեղեկությունները նույնպես չեն համապատասխանում «Սեբեոսի Պատմութիւնը»<sup>59</sup>:

«Սեբեոսի Պատմության» իրական հեղինակի անունը կորել է, բայց Կիրակոս Գանձակեցին իր կազմած ցանկում կողք-կողքի նշելով և՛ Սեբեոսի, և՛ Խոսրովի անունները, հասկացնել է տալիս, որ Սեբեոսը իսկապես «Պատմու-

<sup>58</sup> Աստղիկի ցանկի իրական վիճակի մասին շիմանալով և կարծելով, թե ցանկում գրանցված են «Տիեզերական պատմությունում» օգտագործված բոլոր աղբյուրները, «Սեբեոս պատմիչը և նրա երկը» հոդվածի հեղինակը առաջարկել է «Սեբեոսի Պատմության» և «Պատմութիւն Հերակլի» երկի նույնացման մի սկզբունք», որը նա կոչել է «Հայտնիի բացառման սկզբունք» («Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 471): Այս «սկզբունքով» Աստղիկի գիրքը «զտելուց» հետո՝ նրա կարծիքով գրքում կմնան միայն «Սեբեոսի Պատմությունից» և Շապուհ Բագրատունու կորած երկից քաղված հատվածները և զրանով կպարզվի, որ հատվածներից կեսի հեղինակը ցանկում նշված Սեբեոսն է, մյուս կեսինն էլ՝ Բագրատունին:

Իրականում, սակայն, եթե մենք իսկապես առաջնորդվենք «Հայտնիի բացառման սկզբունքով»՝ կստացվի այնպես, որ Սեբեոսը և Շապուհ Բագրատունին միանգամից տեղ կդառնան իրենց գրքերից բացի, նաև մի քանի այլ երկերի (Հիպոկորիտոս, Կորյուն, «Գիրք կայսերաց» և այլն), որոնք ցանկում չեն նշված:

Այնպես որ «Հայտնիի բացառման սկզբունքն» արդյունք է շիմացած բանի մասին խոսելու որոշման և չի կարող որևէ դեր խաղալ «Սեբեոսի Պատմության» հեղինակը որոշելու գործում:

Իսկ առհասարակ այն բանից հետո, երբ գիտենք, որ «Տիեզերական պատմությունում» «Սեբեոսի Պատմության» հետ համընկնող տեղեկությունների մի մասն Աստղիկը քաղել է ոչ թե անմիջապես «Սեբեոսի Պատմությունից», այլ Դրասխանակերտացուց և մեզ անհայտ մեկ այլ աղբյուրից, չենք կարող պնդել, թե մյուս տեղեկությունները նույնպես այդ անհայտ աղբյուրից, ասենք, Շապուհ Բագրատունուց, չեն քաղված: Շապուհ Բագրատունու մեզ չհասած գրքի բացակայության պայմաններում անիմաստ կլիներ Աստղիկի ցանկի հիման վրա լուրջ եզրակացությունների հանգել և պնդել, թե Սեբեոսի անունը տալով Աստղիկը նկատի է ունեցել այսօր Սեբեոսի անունով հրատարակվող երկը:

<sup>59</sup> «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 437—438, 463—464: Տե՛ս նաև հավելված Ը:

թիւն Հերակլի» կոչված երկի հեղինակն է, իսկ խոսքովը՝ կա՛մ «Սեբեոսի Պատմութեան» գլխավոր դերակատար խոսքով Ապրվեզն է<sup>60</sup>, կա՛մ էլ նրա անվանակից խոսքով պատմիչը: Այս անունով մատենագիրներ միջնադարում եղել են<sup>61</sup>:

<sup>60</sup> Մատենագիտական որոշ ցանկերում Սեբեոսի անվան փոխարեն պատմիչների շարքում նշված է Հերակլի անունը (Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. 1, առաջաբան, ԺԱ, ԺԲ ցանկեր): Այդպես էլ կարող էր Գանձակեցու ցանկում նշված լինել խոսքովի անունը:

<sup>61</sup> Գանձակեցին հիշատակում է երկու խոսքովների, մեկը Մաշտոցի աշակերտին (էջ 28), մյուսը՝ պատմիչների ցանկում (էջ 7): Աշակերտին հիշատակելիս Գանձակեցին նրա անվան դիմաց որևէ գիրք չի նշում, իսկ պատմիչների ցանկում նշված խոսքովը ամենից շատ մոտենում է «Սեբեոսի Պատմութեանը», որովհետև նշված է Սեբեոսի կոչքին և հարմարվում է VII դարի իրադարձությունների պատմութեանը:

Կիրակոս Գանձակեցու հիշատակած խոսքովների մասին տե՛ս նաև «Բանբեր Մատենագարանի», № 10, էջ 435—436:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Բ

### ԱՆԱՆՈՒՆԻ Ա—Ձ ԳԼՈՒԽՆԵՐԸ

Թ. Միհրդատյանի և Ք. Պատկանյանի հրատարակություններում որպես «Սեբեոսի Պատմության» առաջին երկու դպրություններ, իսկ Ստ. Մալխասյանցի հրատարակության մեջ որպես այդ Պատմության առաջին շորս գլուխներ տպագրված հատվածի (ներկա հրատարակության Ա—Ձ գլուխները) պատկանելիությունը միևնույն հեղինակին կասկած է հարուցել դեռևս 1862 թ., երբ Ք. Պատկանյանը ռուսերեն թարգմանության առաջաբանում կարծիք հայտնեց, որ հիշյալ գլուխները «Սեբեոսի Պատմությանը չեն պատկանում»<sup>1</sup>: Այդ ժամանակներից սկսած հիշյալ հատվածի և նրա հեղինակի (Անանունի) առեղծվածը դարձել է բանասիրության ամենակենդանոտ հարցերից մեկը, որի դարավոր պատմությունը հանգամանալի շարադրված է Ստ. Մալխասյանցի առաջաբանում<sup>2</sup>:

Ք. Պատկանյանի կարծիքը գնալով ավելի մեծ ընդունելություն է գտել: Այդ կարծիքի հիման վրա Ֆ. Մակլերը 1904 թ. «Սեբեոսի Պատմությունը» ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակեց առանց Անանունի հատվածի: Ն. Ադոնցը, որը Պատկանյանի կարծիքը 1901 թ. հռչակել էր որպես «հետադիմական քայլ Անանունի ուսումնասիրման պատմության մեջ»<sup>3</sup>, հետագայում բազմիցս առիթ է ունեցել հայտարարելու, որ «Անանուն... ուշ է, քան Սմբատ Բյուրատի մահը 727 թ.», «նա չէր կարող ութերորդ դարու վերջերից հառաջ լինել»<sup>4</sup>:

Եղել են նաև Անանունը Սեբեոսի հետ նույնացնող մասնագետներ, որոնցից գլխավորը՝ Ստ. Մալխասյանցը 1939 թ. «Սեբեոսի Պատմությունը» հրատարակեց Անանունի հետ միասին, որպես մեկ հեղինակի գործ: Մալխասյանցի կարծիքը մենք քննել ենք Անանունի առեղծվածին նվիրված ուսումնասիրության մեջ, որտեղ ներկայացված փաստերը վերստին հաստատում են Ք. Պատկանյանի տեսակետը<sup>5</sup>:

Ք. Պատկանյանը հատուկ ուշադրություն է դարձրել Ստեփանոս Տարոնա-

<sup>1</sup> «История императора Иракла, сочинение епископа Себеоса, писателя VII века», СПб., 1862, стр. VI—X.

<sup>2</sup> «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն», Երևան, 1939, էջ 6—2Ա: Սույն էջերում ընթերցողը կգտնի իրեն հետաքրքրող անհրաժեշտ տեղեկություններ Անանունի կապակցությամբ հայտնված կարծիքների մասին:

<sup>3</sup> Н. Адонц, Начальная история Армении у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фавста Византийского:—«Византийский временник», т. VIII, 1901, вып. 1—2, стр. 64.

<sup>4</sup> Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 118, նաև էջ 114—117, 119: (Իսկ 116-րդ էջում կարողում ենք. «Եթե այս հոսրովը պարսից թագավոր հռչակված Ապրըվեզն է, Անանունս պետք է է-րդ դարու հեղինակ համարվի»):

<sup>5</sup> Գ. Արզաբյան, Անանունի առեղծվածը, էջ 30—133:



ցուց Անանունի կատարած մեջբերմանը<sup>6</sup>: Այսօր ոչ ոք չի կասկածում,—և դա կասկածելու բան չէ,—որ Անանունի հիշատակած Տարոնացին նույն ինքը Ասողիկն է, որն ապրել է Սեբեոսից հարչուրավոր տարիներ հետո: Միայն այս փաստը բավական է, որպեսզի Անանունն այլևս շնույնացվի Սեբեոսի հետ: Բայց Պ. Անանյանը վերջերս հայտնեց անցյալում նաև ուրիշների կողմից հայտնված այն տեսակետը, որի համաձայն Ասողիկից քաղված «հատվածը Սեբեոսի Պատմության մեջ մտած է երկրորդ ձեռքե մը»<sup>7</sup>: Հարցի վերատին արծարծումը պահանջում է դիմել լրացուցիչ փաստարկների: Հարգելի բանասերի ուշադրությունը պետք է հրավիրենք ամենից առաջ իրեն իսկ բացահայտած այն հատկանշական տարրերի վրա, որոնք ցույց են տալիս, որ Անանունն ունեցել է շարադրելու ուրույն ոճ: Ահա այդ ոճը մենք գտնում ենք հենց Ասողիկի անունը կրող խորագրում: Նկատի ունենք երկու հատկանշական տարր: Առաջին, «Արդ և ապա շաղկապների հաճախակի գործածությունը»<sup>8</sup>: Այս շաղկապներից առաջինով սկսվում է Ասողիկի քաղվածքի խորագիրը. «Արդ՝ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր»: Երկրորդ. «Ապաունի Ա դեմքի գործածության հատուկ առիթները»<sup>9</sup>: Սույն առիթը գտնում ենք Ասողիկի անունը կրող խորագրի հետևյալ արտահայտության մեջ. «Երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացույ եւ Ստեփանոսի Տարանացույ»: Ընդամենը մեկ խորագրի մեջ երկու այսպիսի ակնհայտ հատկանշական տարրերի առկայության փաստը կասկած չի թողնում այն մասին, որ Ասողիկի անունը կրող խորագիրը շարադրված է ոչ թե «երկրորդ ձեռքե մը», այլ՝ միևնույն անձնավորության կողմից:

Այդ մասին է վկայում նաև քննարկվող խորագրի կապը իրեն նախորդող գլխի խորագրի հետ: Երկու դեպքում էլ Անանունը միևնույն եղանակով և միևնույն ընթերցողին հայտնում է իր ծրագիրը: Առաջին դեպքում գրում է. «Արդ... երկրորդեցից», իսկ երկրորդ դեպքում՝ «Եւ արդ... նշանակեցից»: Ըստ որում՝ նկատում ենք, որ երկրորդ դեպքում «արդ» բառը գործածված է «և» շաղկապի հետ միասին, որով երկու գլուխները տրամաբանորեն շաղկապվում են միմյանց («արդ», «և արդ»): Անանյանն ինքն էլ մեկ այլ տեղ նկատել է, որ «չորրորդ գլուխին վերնագիրը... կազմված է ճիշտ երրորդին պես»<sup>10</sup>: Ուրեմն առարկելու առիթ այլևս չի ներկայանում:

Բառամշակութային սկսած՝ մասնագետները նշել են մի շարք մատենագիրների, որոնք «Սեբեոսի Պատմությունից» օգտվելով հանդերձ, ծանոթ չեն եղել Անանունի հատվածին<sup>11</sup>: Ավելացնենք նաև Ասողիկի, Ուխտանեսի և Սամվել Անեցու վկայությունները: Ասողիկը Մովսես Խորենացուն գրեթե բառացի կրկնելով գրում է. «Արդ խնդրելով զառաջին ամն Տրդատայ՝ զտաք թագաւորեալ չեբոռդ ամին Դիոկղետիանոսի»<sup>12</sup>: Ինչպես տեսնում ենք, Ասողիկը որոնել է Տրդատի առաջին տարվան վերաբերող տեղեկություններ: Ուրեմն, եթե նա ծանոթ լիներ նաև Անանունին, կիմանար նաև նրա հետևյալ տեղեկու-

<sup>6</sup> «История имп. Иракла», էջ VII—VIII.

<sup>7</sup> Պ. Անանյան, էջ 68:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 114:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 82:

<sup>11</sup> Գ. Աբգարյան, Անանունի առեղծվածը, էջ 120—122:

<sup>12</sup> Ասողիկ, էջ 60: Տե՛ս նաև էջ 335, ծ. 59:

թյունը. «Յամին... հնգետասաներուդի Դիոկղետիանոսի... Թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց»<sup>13</sup>: Ուխտանեսը նույնպես բրոնզէ է միևնույն տեղեկությունները հորենացու և Զենոբի գրքերում, ինչպես նաև «Կայսերաց գրքում». «Բայց ոչ միաբանէին ընդ միմեանս Զենոբ և Մովսէս... Վկայէ և յայսմ Գիրք կայսերաց»<sup>14</sup>: Եթե նա ծանոթ լիներ Անանունի նշած 15-րդ տարվան, այդ մասին նույնպես կգրեր: Նույնը պետք է ասել նաև Սամվել Անեցու կապակցութեամբ: Սա նույնպես Տրդատի առաջին տարին որոշում է «ըստ Մովսիսի Հայոց պատմագրի և ոչ իններորդին կամ առաջներորդին ըստ ոմանց»<sup>15</sup>: Թվարկել է առնվազն երեք աղբյուր և դարձյալ ծանոթ չէ Անանունի 15-րդ տարվան: Ասողիկը, որ երբեմն էջ առ էջ արտագրում է «Սեբեոսի Պատմությունը», տեղյակ չէ նաև Բագրատունիների հայկական ժագմանը<sup>16</sup>, որի մասին հաղորդում է Անանունը:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ X—XII դարերում ապրած մատենագիրները դեռևս ծանոթ չեն եղել Անանունին, որն ապրել է Ասողիկից հետո, հավանաբար՝ XI—XII դարերում<sup>17</sup>:

Որ Անանունը «Սեբեոսի Պատմության» հեղինակի հետ նույնանալ չի կարող, դա երևում է ամենից առաջ Անանունի Դ գլխի հենց այն ժամանակագրական կանոնից, որն ավարտվում է ճիշտ այնտեղ, որտեղ վերջանում է նաև «Սեբեոսի Պատմության» ժամանակագրությունը: Այստեղ գտնվող երեք փաստեր ցույց են տալիս, որ Անանունը այդ հեղինակից օգտվելիս մերթ ձիշտ չի հասկացել, մերթ էլ չի վստահել և դիմել է ուրիշ աղբյուրների:

Առաջին. «Սեբեոսի Պատմության» համաձայն, պարսից արքա Պերոզին հաջորդել է նրա որդի Կավատը. «եւ ապա յայնժամ Թագաւորեաց Կաւատ որդի նորա ի վերայ աշխարհին Պարսից»<sup>18</sup>: Սրա փոխարեն՝ Անանունը Պերոզի հաջորդ է նշանակում Զամասպին. «Պերոզ՝ ԽԶ... Զամասպ՝ Բ... Կաւատ՝ ամս ԽԱ»<sup>19</sup>: Այսպիսով, Անանունը «Սեբեոսի Պատմության» հեղինակին չհավատալով, իր տեղեկությունը քաղել է այլ աղբյուրից:

Երկրորդ. «Սեբեոսի Պատմությունում» հայտնվում է, որ պարսիկները Ատրպատականի մեծ իշխան խոռոխ Որմիզդին նշանակում են արքունիքի կառավարիչ՝ հրամատար. «Եւ կարգեցին հրամատար ի Դրանն զխոռոխ Որմիզդ, որ էր իշխան կողմանց Ատրպատականի»<sup>20</sup>: Կառավարիչ եղած ժամանակ էլ խոռոխ Որմիզդն սպանվում է. «Յարեան ի վերայ նորա պահապանք Դրանն և հարեալ սպանին զնա»<sup>21</sup>: Սրա փոխարեն Անանունը խոռոխ Որմիզդին

<sup>13</sup> ՍԵՊ, էջ 15:

<sup>14</sup> Ուխտանես, հ. 1, գլ. 29: Տե՛ս Ա. Տեր Միքելյանի ծանոթագրությունը Սամվել Անեցու գրքում (Վաղարշապատ, 1893, էջ 265):

<sup>15</sup> Սամվել Անեցի, էջ 63:

<sup>16</sup> Ասողիկը հորենացուց օգտվելով գրում է. «Զկոչեցեալն ի Հրէից Բագարատ պատուէ՛լ պտանուտիրական պատին ազդին պարզեւելով» (էջ 33):

<sup>17</sup> Յովհան Տարոնացու և Անանունի հատվածները համեմատելով, մենք կարծիք ենք հայտնել, թե «կարելի է ենթադրել նշված երկու երկի նույնության մասին» («Անանունի առեղծվածը», էջ 130): Բայց այս ենթադրությունը հաստատելու համար առաջիմ ռե՛ք ոտքին տակ կը պակսի հաստատուն հող» (Պ. Անանյան, էջ 120):

<sup>18</sup> ՍԵՊ, էջ 26:

<sup>19</sup> Անանուն, էջ 21:

<sup>20</sup> ՍԵՊ, էջ 100:

<sup>21</sup> Նույն տեղում:

նշում է պարսից թագավորների շարքում. «Զամս եկամտիցն և ծառայիցն թագաւորելոցն, որպէս Խոռեմայն և զԽոռոխ Ուրմզդին.. որք բոնութեամբ կալան գրագաւորութիւնն»<sup>22</sup>: Ըստ որում Անանունի ուշադրությունից միաժամանակ վրիպել է «Սեբեոսի Պատմության» նաև այն տեղեկությունը, որ Խոռոխ Ուրմզդի հրամանատարության օրոք պարսից թագավորության գլուխ էր կանգնած Բորան («Բբոր») թագուհին. «Եւ թագաւորեցուցին զԲորն, դուստր Խոսրովայ, որ էր կին նորին (Խոռեմայ—Գ. Ա.) և կարգեցին հրամատար ի Դրանն զԽոռոխ Ուրմզդ»<sup>23</sup>: Ինչպես տեսնում ենք, «Սեբեոսի Պատմության» հեղինակը Խոռոխին ճանաչում է որպես հենց Բորանի օրոք պաշտոնավարած հրամանատարի, այնինչ Անանունը նրանց բաժանում է միմյանցից:

Երբորդ. «Սեբեոսի պատմությունում» պարսից Խոսրով արքայի հաջորդ է նշանակված նրա դուստր Ազարմիդուխտը. «Եւ յետ Խոսրովայ՝ Ազարմիդուխտ դուստր Խոսրովայ»<sup>24</sup>: Անանունը չի վստահել (կամ էլ՝ չի նկատել) իր աղբյուրի նաև այս տեղեկությանը և Զ գլխի ժամանակական կանոնը կազմելիս Ազարմիդուխտին չի նշել պարսից թագավորների շարքում:

Ընդամենը երեք էջանոց ժամանակագրական կանոնում երեք հակասությունների առկայությունը չի կարող բացատրվել այլ կերպ, բան այն, որ Անանունը և «Սեբեոսի Պատմության» հեղինակը տարբեր մարդիկ են: Միևնույն մարդը չէր կարող ինքն իրեն չհասկանալ կամ չվստահել ինքն իրեն:

Նրկու տարբեր հեղինակների երկերի պատահական միացման մասին է վկայում նաև «Սեբեոսի Պատմության» հնագույն ձեռագիրը (№ 2639): Այստեղ «Սեբեոսի Պատմությունը» բաժանված է 70 հատվածների: Յուրաքանչյուր հատված սկսվում է կարմիր գլխատառով, կամ էլ՝ կարմիր տողով: Արդյոք բաժանումը կատարել է «Սեբեոսի Պատմության» հեղինակն ինքը, թե հետագա գրիչները, չենք կարող ասել: Տեղ-տեղ հանդիպող ոչ ճիշտ բաժանման դեպքերից ավելի շուտ կարելի է ենթադրել, որ բաժանողը հեղինակը չէ: Բայց որ բաժանումը գալիս է հին ժամանակներից, երևում է նաև XVI դարում գրված մի ձեռագիր պատառիկից, որը մեր Մատենադարանի ձեռագիր պատառիկների բաժնում կրում է 1343 համարը: Այս պատառիկում նույնպես գտնում ենք հատվածների նույն բաժանումը, որն ունի նաև № 2639 ձեռագիրը: Եվ այստեղ նույնպես բաժանումը կատարված է կարմիր գլխատառերով:

Հատվածներից 22-ը ձեռագրի լուսանցքներում կարմիր գլխատառերի դիմաց ունեն նաև հերթական թվանշաններ: Մյուս 48 թվանշանները մեղ չեն հասել: Հավանաբար, գաղափար օրինակում դրանք բացակայել են կամ գրված են եղել այնպիսի մի ձևով, որ № 2639 ձեռագրի գրիչը չի կարողացել որոշել նրանց համապատասխանող տեղերը և բաց է թողել:

Հատվածների թվանշաններով համարակալումն սկսվում է ԺԱ (=11) թվանշանով և շարունակվում է մինչև ԼԲ (=32) թվանշանը: Նրանց միջև հանդիպում են չորս կարմիր գլխատառեր, որոնք, սակայն, համարակալված չեն և չեն համապատասխանում համարակալման կարգին: Կանոնավոր համարակալված են ԺԱ—ԻԵ հատվածները: Սա այն դեպքն է, երբ կարմիր գլխատառերով սկսվող հատվածները համարակալված են անընդմեջ և չի հանդիպում

<sup>22</sup> Անանուն, էջ 22:

<sup>23</sup> ՍԵՊ, էջ 78:

<sup>24</sup> Նույն տեղում:

ոչ մի անհամապատասխանություն հատվածների և թվանշանների միջև: Այսպես անթերի համարակալված են 15 հատված<sup>25</sup>:

Երբ այդ հատվածների (այսինքն՝ 11-րդ հատվածից մինչև ներառյալ 25-րդ հատվածը) անսխալ համարակալման սկզբունքով սկսում ենք համարակալել նաև նրանց նախորդող տաս հատվածները, տեսնում ենք, որ մեր ստացած առաջին համարը համընկնում է «Սեբեոսի Պատմության» հենց առաջին գլխի (ներկա հրատարակության գլ. է) հետ: Սա նշանակում է, որ հին ժամանակներում, երբ գաղափար օրինակի գրիչն սկսել է համարակալել հատվածները, Անանունի հատվածը դեռևս միացած չի եղել «Սեբեոսի Պատմությանը», և գրիչը համարակալումն սկսել է «Սեբեոսի Պատմության» առաջին գլխից<sup>26</sup>:

Այսպիսով, ձեռագրում պահպանվել են «Սեբեոսի Պատմության» առաջին կեսի, այսինքն՝ առաջին 25 գլուխների գլխահամարները կամ գլխատառերը, որոնցով այս Պատմությունն անջատվում է Անանունի հատվածից: Զեռագրական սույն փաստը միանալով մի կողմից Ասողիկից քաղված հատվածին, մյուս կողմից էլ Անանունի և «Սեբեոսի Պատմության» միջև նկատվող բազմակողմանի հակասություններին, հիմք են տալիս միմյանցից տարբերելու անառարկելիորեն VII դարում գրված հայ դասական պատմիչի երկը X դարի պատմիչ Ասողիկի քաղվածքը պարունակող Անանունի երկից<sup>27</sup>: Բայց քանի որ երկու երկերն էլ մեզ հասել են միևնույն ձեռագրի կազմում, մենք հրատարակում ենք միասին:

<sup>25</sup> Զի համարակալված միայն ԺԱ (11) և ԺԳ (13) հատվածների միջև գտնվող 12-րդ հատվածը, բայց նախորդ և հաջորդ հատվածների համարներից պարզ երևում է, որ 12-րդ հատվածը չի համարակալված զուտ պատահականորեն և եթե համարակալվեր, պետք է կրեր անպայման 12-րդ (ԺԲ) համարը:

<sup>26</sup> Անանունի երկը նույնպես ձեռագրում մասնատված է կարմիր գլխատառերով, որոնց քանակը (8), սակայն, չի համապատասխանում Անանունի գլուխների քանակին (4):

<sup>27</sup> Անանունի և «Սեբեոսի Պատմության» հեղինակի տարբերության մասին վկայող մի շարք այլ փաստեր տե՛ս նաև վերը՝ 89, 110, 115, 133 և 164-րդ ծանոթագրություններում:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ս Կ

ՅՈՎՀԱՆՆՈՒԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՑ, ԹԻՖԼԻՍ, 1912, էջ 66—89

Բայց մինչդեռ կենդանի էր սուրբ հայրապետն Մովսէս, խոսրով որդի Կաւատայ արքայի Պարսից յետ բազում մարտից արութեանց և քաջութեանց և տիրելոյ ազգաց բազմաց, ըստ ծագման նշողից աստուծային լուսոյն ի սիրտ նորա՝ ի ժամ վախճանի իւրոյ հաւատացեալ յԱստուած ճշմարիտ, և յՈրդի նորա միածին և ի Հոգին սուրբ Աստուծոյ, և անարգեալ ի բաց ընկէց զկռամոյ ամբարշտութիւնն, խոստովան եղեւ՝ թէ ոչ գոյ այլ Աստուած բաց ի միոյն միայն զոր քրիստոնեայքն պաշտեն: Եւ ապա աւագանին սրբոյ վերստին ծննդեան լուսաւորութեամբ հաղորդի ի կենդանարար մարմնոյ և արեան Տեառն, և ողջունեալ զսուրբ Աւետարանն Քրիստոսի համբուրմամբ, յետ երից աւուրց վախճանի ի բարտք ծերութեան: Եւ բարձեալ զմարմին նորա քրիստոնէից, նուիրական սաղմոսերգութեամբ և քահանայական դասուր տարեալ դնեն ի շիրիմս թագաւորացն: Եւ թագաւորէ որդի նորուն ընդ նորա Որմիզդ, զոր իւրոց իսկ մերձաւորացն և այլոց ևս նախարարաց նենգ գործեալ, յիւրումն իսկ դահլճի զնա սպանեն. և փոխանակ նորա որդի նորուն խոսրով թագաւորէ: Այլ և սմա եւս ի Վահրամայ ումեմնէ իշխանէ, որ թագաւոր զինքն կարգայր, նենգ գործեալ՝ փախստեայ անկանի առ Մօրիկ կայսր Հոռոմոց: Իսկ կայսերն օժանդակեալ խոսրովայ բազում զօրու հանդերձ, սպանանի Վահրաման Յիռայ՝ առ հասարակ ի նոցանէ:

Եւ խոսրով, թոռն հաւատացեալ խոսրովուն, հաստատի դարձեալ ի թագաւորութիւնն Պարսից. և ըստ երախտահատոյցն լինելոյ՝ խնդրէ Մօրիկ ի խոսրովայ զՄիջագետս Դարայիւ և Մծբնաւ հանդերձ. և ի Հայոց զայն աշխարհը որ Տանատիրական գունդն անուանէր, բաց յՈստանէն ի Դվին քաղաքէ, և յերկուցն ևս գաւառաց՝ որ է Մասեացոտն և կողմն Արագածու: Զայսոսիկ ի բաց զատուցեալ, զայլն ամենայն թողու խոսրով ի Մօրիկ, ի լեռնէն որ կոչի Ընծաքիսար մինչև ցԱռեստն աւան, և ցՀացիւն:

Խոսրովայ հաստատեալ ի թագաւորութիւնն Պարսից, աստանօր Սմբատ քաջ Բագրատունի բազում և անհնարին մարտս յարդարէր ընդդէմ բոլոր թշնամեաց նորա, և արիաբար մրցմամբ վանեալ վտանգեալ զբնաւ հակառակորդս նորա, յոտին նմա կացուցանէր: Ընդ որ զարմացեալ խոսրովայ՝ յաւէտ իմն հաճոյանայր Սմբատ յաշս նորա, և բազմօքումամբք ընծայական օժտութեամբք զնա պատուասիրեալ՝ տայ նմա և զմարդպանութիւն Վրկանայ: Իսկ Սմբատայ երթեալ հասեալ յաշխարհն այն, գտանէ անդ ազգս գերեալս ի Հայաստանեայցս, և բնակեցուցեալս ի թուրքաստան կողմանէ մեծի անապատին՝ որ Սագաստան անուանի: Զլեզու իւրեանց մոռացեալ, և դպրութիւնն նուագեալ յոյժ.

\* Պետք է լինի «ի Ռայ» (փխ. Յիռայ):

որոց և տեսեալ զՍմբատ՝ յաւէտ իմն խրախք լինէին, և ի հրամանէ նորուն դարձեալ աշակերտեալ ըստ հայերէն հագագացս սիղոբայիցն զլեզու նորոգէին. և ուսեալ զդպրութիւն հայերէն՝ հաստատէին ի հաւատս: Եւ ապա զերէցումն ի նոցունց իսկ Աբէլ անուն՝ եպիսկոպոս նոցա հրամայէ կացուցանել մեծի հայրապետին մերոյ Մովսէսի: Եւ այսպէս վիճակ մեծի աթոռոյ սրբոյն Գրիգորի ի հեռաստան երկրի զնոսա կազմէ մինչև ցայսօր ժամանակի:

Բայց Սմբատայ, որ մարտիւ քաջութեամբ զամենայն թշնամիս խոսրովու նուաճեալ հնազանդէր, յետ բազմաբաղձ բարութիւնս նմա պարգեւելոյ խոսրովու, և մեծահարկի մեծարանս զնելոյ, հրամայէ երթալ տեսանել Սմբատայ զերկիր ծննդեան իւրոյ: Իսկ նա յերթալն իւրում ըստ հրամանի խոսրովայ՝ ինչորէ շինել զեկեղեցին ի Դվին քաղաքի, որ էր իսկ անուանակոչութեամբ սրբոյն Գրիգորի: Իսկ արքայի աշախոյջ երեսօք զհայցուածս նորա լցեալ, և այնպէս հրաման առ ի նմանէ ընկալեալ, շուէ գնայ. և եկեալ հասեալ յերական յաշխարհս յայս, և տեսեալ առանց առաջնորդի զաշխարհս Հայոց, վասն զի վախճանեալ էր մեծ հայրապետն Մովսէս, ապա կարգէ ի վերակացութիւն Հայոց զԱբրահամ Ռշտունեաց եպիսկոպոս՝ ի գեղջէ Աղբաթանից. և ինքն արկանէ հիմն եկեղեցոյն սրբոյ կոփածոյ քարամբք, զեղեցկագիր շինուածիւ, կրով ձուլեալ ի մի. զի յառաջ յաղիւսոյ և ի փայտէ կազմեալ էր նա ի սրբոյն՝ Վարդանայ: Իսկ պահնակ ամրոցին՝ ամբաստան առ արքայ լինի իբր վնասակար զնա գոլ բերդին... և վաղվաղակի հրաման ընդունի եթէ՝ բերդը քակեսցի և եկեղեցիդ ի դմին տեղ շինեսցի:

Յետ այսորիկ ըստ հրամանի կայսերն Մօրկայ զՅովհանն ոմ ի գաւառէ Կոգայ ի Բագարան գեղջէ, կացուցանեն կաթողիկոս յունակ և կողմանն, բնակեցուցանելով զնա ի քաղաքագիւղն Աւան. ուր և շինեաց իսկ նքն Յովհանն զպայծառակերտ քաւարանն սուրբ, և շուրջանակի նորա յարդա աց կալուածս կայանի իւրոյ: Իսկ մեծ հայրապետն Աբրահամ ըստ նա խասաց բանին ի Դվին քաղաքի բնակէր՝ ի Պարսից բաժնի անդ, վասն զի գետն Աղատ զսահման բաժնիցն երկոցունց ընդ մէջ հատանէր: Եւ թէպէտ և Յովհանն այր ճշմարիտ և արդար էր և առաքինի ի վարս, և բնաւ ոչ ինչ շեղեալ զկնի Քաղկեդոնական ազանդիցն, սակայն հակառակաթոռ գոլով՝ յերկուս հատուածս ճեղքեալ լինէր միատարր միութիւնն հայրապետական Աթոռոյն, և ապա ոչ սակաւ հակառակութիւն կրեալ լինէին կողմանքն երկոքին:

Բայց Սմբատ զկնի բազում արիական քաջութեանցն և բազմահանդէս երկոց, և կրկին անգամ մենամարտիկն լինելոյ ընդ Եփթաղեայ արքային Քուշանաց և սպանանելոյ զնա, վախճանի ի բարոք ծերութեան ի Տիզբոն քաղաքի: Եւ բարձեալ տարան զմարմինն նորա ի Հայք, և զնեն ի Դարոյնս՝ որ ի Կոգ գաւառի: Իսկ զօրքն Մօրկայ ապստամբեալ առ ի նմանէ, և սպանեալ զնա ի պալատանն, կացուցանեն փոխանակ նորա զՓոկաս: Իսկ Փոկաս եկեալ զօրօք բազմօք ի Բասեան, առ ընդ իւրեաւ զՀայաստանեայսս նուաճել. իսկ Աշոտ ոմն հրամանաւ խոսրովայ հասեալ ի Հայս, և զիմեալ ի վերայ՝ խորտակէր զօրօսն Յունաց, զի ոչ լինէր թիւ սպանանելոցն ի դաշտին, և ինքն կալեալ

\* Բազմակետերով նշված տեղում Դրասխանակերտցին պատմում է հայոց և վրաց բաժանման հեղինակ Կյուրոս կաթողիկոսին Դվինի եկեղեցական ժողովում նգովելու մասին: Թվում է, այդ տեղեկությունը նույնպես Դրասխանակերտցին քաղել է «Անբեռսի Պատմութունից», որի տվյալ մասը, ինչպես երևում է, կորել է:

զգործ պատերազմի ընդ Կարնոյ քաղաքի՝ առնոյր զնա: Եւ յետ երկեամ մի ամաց զբնակիչս քաղաքին յԱճմատան փոխէ: Եւ վասն զի ծերունի կաթողիկոսն Յովհան կայր ի փախտականութեան ի նմա, ընդ նոսին և նա ևս ըմբռնեալ վարեալ ի գերութիւն, և անդէն վախճանեալ բերաւ ի գիւղն Աւան, որ եղաւ մերձ յեկեղեցին՝ զոր իւր իսկ էր շինեալ. կալեալ զաթոռ հայրապետութեան ամս ԻԶ: Ի նմին իսկ ամի՝ ապա երանելի Հայրապետն Աբրահամ լցեալ զթուականն կենաց իւրոց իբրեւ ամս ԻԴ, փոխի և նա յաշխարհէ, և յաջորդէ զաթոռ նորա Կոմիտաս ի գեղջէ Աղցից, փակակալ սրբոյն Հռիփսիմեան վկայարանին, և եպիսկոպոս զկնի ի Մամիկոնեան Տարօնոյ:

Բայց Հերակլի սպանեալ զՓոկաս՝ զորդի իւր ընդ նորա թագաւորեցուցանէ, և ինքն զօրու բազմաւ շուէ գնայ յԱսորեստան: Իսկ Խոռեմ հրամանաւ Խոսրովայ առեալ զԵրուսաղէմ անհնարին կոտորածիւ, սպառէ ի նմա զամենայն այր, և զբազումս գերէ: Ընդ որս և զհայրապետն նոցա զԶաքարիա, և զքրիստոսընկալ զսուրբ Խաչն տէրունեան ի գերութիւն վարէին:

Զայսու ժամանակաւ մեծ Հայրապետն Կոմիտաս զվկայարան սուրբ Հռիփսիմեանցն՝ որ նախ խրթին և փոքրատեսակ իմն էր շինեալ, ևս հրաշապէս և վայելուչ և նազելի և պայծառ շինուածով յարդարէր. ուր և պատահեալ սուրբ տիկնոջն Հռիփսիմեայ՝ ոչ սակաւ լինէր հոգևոր մխիթարութիւն բնաւ իսկ Հայաստանեայցս: Եւ էր նա կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի և սրբոյն Սահակայ, ապա և մեծի հայրապետին ևս Կոմիտասայ ոչ համարձակեալ բանալ զնա, եղ և զիւր ևս կնիք ի վերայ նորա. իսկ շափ հասակի սուրբ տիկնոջն՝ ինն թիզ և առ շորս մատունս: Ապա շինեալ զեկեղեցին սուրբ, և անդ ամփոփեալ ժողովէ զնշխարս սուրբ Տիկնոջն ի պատրաստեալ իւր կայանսն: Յետ որոյ ապա քակեալ սորա զփայտայարկ զմբեթ սրբոյ կաթողիկէին՝ որ ի Վաղարշապատ քաղաքի, շինէ զնա գեղեցկայարմար և շքնադատես կոփածոյ քարամբք:

Բայց Կաւատ\* որդի առաջնոյ Խոսրովայ սպանեալ զերկրորդն Խոսրով Պարսից արքայ՝ ինքն փոխանակ նորա թագաւորէ: Եւ ապա տուեալ Կաւատայ զմարզպանութիւն Հայոց Վարազտիրոցի որդւոյ քաջին Սմբատայ, առաքէ զնա յիւրական յաշխարհն: Իսկ եկեալ նորա եգիտ հրաժարեալ ի կենաց աստի զմեծ հայրապետն Կոմիտաս, որ եկաց իսկ յաթոռ հայրապետական ամս ութ: Ապա զՔրիստափոր ոմն յԱբրահամեան տանէ խորհրդակցութեամբ Թէոդորոսի Ռշտունեաց տեառն՝ կացուցանէ յաթոռ Հայրապետութեան: Զսմանէ բան ճառի՝ թէ քսութիւն իմն յիւրում լեզուի կրէր, և սակա այնորիկ ասէ՝ ասպետն Վարազտիրոց զչարեալ գտանէր ընդ հղբարս իւր: Իսկ ի վերայ այսպիսի համբաւոյ ապա և յընտանեաց տանն քիղք շարաբանք ի վերայ յարուցեալ նորա՝ բամբասանս ապիրատս յօդէին. և ապա այնուհետև ոչ ըստ իրաւանց ուղղոց ինչ, այլ կամակար մտօք, ըստ կամս անձանց հաստատէին վճիռ՝ անկանել նմա ի պատուոյն: Իսկ նորա իւրովի կամաւ խոյս ի շարէն տուեալ, երթեալ շինէ միայնարան մերձ ի գիւղն Ուղեաց որ ի Մասեաց ոտան, և բազում միանձունս առ ինքն գումարեալ առաքինաշան երկօք և բազմաշխատ քրտամբք. փայլէր պահոց պնդակազմութեամբ և աղօթից պաշտպանութեամբ և ամենագիշեր տքնութեամբ, կացեալ յաթոռ Հայրապետութեան ամբ երիս: Ապա փոխանակ նորա կացուցանեն զԵզր ի նիգ գաւառէ՝ ի Փառածնակերտ գեղջէ, որ էր փակակեալ սրբոյն Գրիգորի:

\* Տպագիր բնագրում Կուտաս (փխ. Կաւատ):

Յառուրս սորա վախճանի Կալատ Պարսից արքայ՝ թողլով զթագաւորութիւնն Արտաշրի տղայադիտակ որդոյ իւրոյ: Իսկ ապա Հերակլ սակս ըղձակերտութեան քրիստոսընկալ նշանի Խաչին թագաւորեցուցանէ Պարսից զԽոռեմ, և զԽաչն սուրբ փոխարէն իւր առ ի նմանէ հայցեալ. որոյ երթեալ և սպանեալ ի Տիզբոն զտղայ թագաւորն Արտաշիր, վաղվաղակի առաքէ զտէրունեան Խաչն առ կայսրն Հերակլ: Եւ իսկ և իսկ ապա զօրքն Խոռեմայ սպանանին զԽորեմ ի ճեմարանի իւրոյ ասպարիսին, կացուցեալ թագաւոր զԲբոր դուստր Խոսրովու՝ որ էր կին Խոռեմայ, և յետ մահուան նորա՝ զԽոսրով ոմն յազգէ Սասանայ: Իսկ յետ նորա զԱլզրմիկ դուստր Խոսրովայ, և յետ նորա զՈրմիզ թոռն Խոսրովայ, զոր խեղդամահ արարին: Եւ զկնի թագաւորէ Յազկերտ թոռն Խոսրովայ:

Իսկ Հերակլեայ զքրիստոսընկալ Խաչն տարեալ զնէ յԵրուսաղէմ ի տեղոջ իւրում: Բայց Մաթեժ Գնունի զօրավարի ի Հերակլեայ և առաքի ի Հայս. ապա պատուէր տայ հայրապետին Եզրի երթալ լինել կցորդակից և հազորդ կայսեր ի գործ մասին խոստովանութեան հաւատոյ: Եւ եթէ ոչ, ասէ, կամիցիս երթալ միակցիլ, արասցուք մեզ այլ կաթողիկոս: Եւ Եզրի վասն զի ոչ կարացեալ զատանիլ յիւրոց հաւատացեալ հօտիցն, յանձն առնու երթալ առ կայսր: Եւ իբրև շոգաւ, ոչ տանէր ընդ իւր զՅովհան փակակալ սրբոյն Գրիգորի, որ էր յայնմ ժամանակի փիլիսոփայ կատարեալ, և աստուածային գրոց գիտութեան բանիբուն ճանաչէր. այլ զայլ ոմն իւր քեռորդի՝ կիսակատար ուսմամբ՝ առեալ զնայր նովաւ վճարել զգործ իրին: Եւ ի հանդիպել կայսերն՝ խնդրեն առ ի նմանէ ձեռնարկ հաւատ նամակի: Որ և վաղվաղակի իսկ գրեալ ետ նոցա՝ նզովել զամենայն հերձուածողս բաց ի ժողովոյն Քաղկեդոնի: Իսկ Եզրի և իւրայոցն տգիտաբար իմն իբր անծանօթ գրոց աստուծայնոց, ոչ կարացեալ ի միտ առնուլ զխորամանկ հնարիմացութիւն հերձուածոյն՝ որ ընդ կայսերական ձեռագրին իբրև ընդ գրուանաւ էր թագուցեալ, դաւաճանեալ խաբեցան ընդ նորա՝ ըստ օրինի տօմարին Լեոնի: Եւ ապա մեծարեալ յարքայէն, և ընկալեալ պարգևս զերիւր մասն գիւղաքաղաքին Կողբայ, և զաղս նորուն բովանդակաբար, դառնայ մեծաւ շքով ի տեղի իւր:

Իսկ ի շուեւ զալ նորա ըստ օրինի սովորական կարգացն, կղերք եկեղեցւոյն իւրոյ փութացեալ ընդառաջ լինէին: Բայց փիլիսոփոսն Յովհան՝ զոր վերագոյն ասացաք, ոչ ևս ընդ այլսն երթալով լնուլ զսակ հարկին որ ի վերայ կայր: Եւ մտեալ ի տաճարն խնդիր Յովհաննու լինէր ի հայրապետէն Եզրէ: Եւ պատմեցաւ ապա յոմանց Յովհաննու՝ հանդերձ մեղադրութեամբ, եթէ ընդէ՞ր ոչ շոգար ընդ առաջ նորա յերկրպագութիւն: Առ որս և պատասխանի տուեալ ասէ. «Զիարդ պարտ վարկանիմ յողջոյն կամ յերկրպագութիւն նմա երթալ, որ քակեացն իսկ զսահման կանոնի հարցն մերոց ուղղափառաց. և հանգունակից զմեզ խորհեցաւ առնել Քաղկեդոնեան շար հերձուածոյն»: Ապա հրամանն Եզրի սաստկանայր ի վերայ և ակամայ կամօք մուծանէին զՅովհան ի սենեակն: Եւ իբրև յանդիման եղև, ասէ կաթողիկոսն. «Խորխտաբար իմն ամբարհաւանութեամբ ընդվզեալ թուիս. վասն այնորիկ ախտակրեալ սրտի ոչ տեսեր զմեզ»: Եւ նա ասէ. «Խորխտումն և ամբարհաւանութիւն յիս ոչ գտանի. այլ ջատագով ճշմարտութեանն լինել հաւանիմ: Բայց քո յիրաւի կոչեցաւ անունդ Եզր, վասն զի յեզր տարեալ հաներ տրոհեցեր զՀայաստանեայսս, քակեալ զսահման հաւատոյ հարցն մերոց ուղղափառաց, և խրամատեալ զցանկն առաքելական, և ի մարդադաւան տօմարն Լեոնի կործանեալ»: Ապա



հրամայէ Եզր մուրցացի տանջել զպարանոց նորա և զկզակս: Իսկ Յովհանն ձեռս ի վեր ամբարձեալ ասէ, թէ՛ ահաւասիկ գնացի խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուանն Տեառն արժանի անարգելոյ: Եւ զայս ասացեալ ելեալ գնաց: Եւ երթաեալ առկայանայր ի Մայրոյ վանս՝ որ ի ծործորս լերինն ամրոցին Բջնոյ, և սակս ի նմա բնակելոյն Յովհաննայ՝ փոխեալ Եզրի զանուն տեղւոյն Մայրոյ վանաց՝ Մայրեգոմ գնա անուանէր, և զՅովհանն՝ Մայրեգոմեցի: Բայց վասն զի յայնմ տեղւոյ ևս հրամայէր գնա հալածել, ապա շուէ գնայ ի գաւառն Գարդմանայ, և անդ ապա խստամբեր վարս իւր ստացեալ, նեղ և անձուկ պողոտայիւ հետեի զկնի ամենայն առաքինի վարուց:

Զամանէ ապա համբաւ ամբաստանութեան պատմի, իբր դառն հերձուածս իմն նմա մուծանել ի մէջ եկեղեցոյ սրբոյ. սակայ ես ոչ կարեմ հաւանութիւն իմոյ կամացս տալ վասն այնպիսւոյ առնն, թէ զհա՛րդ նա կարէր խորհել առ ի փլուզանել զուղիղ հաւատոյ շինուածս: Այլ կարծիս իմն ընդունի սիրտ իմ ի հակառակագիր և յոխորիմաց այլոց կամաց այս գործ համբաւոյ լեալ: Բայց և թէ սակս Սարգսի աշակերտի նորա համբաւէ ոք զայնպիսի շար հերձուածս ընձիւղեալ, և եւս ոչ վասն նորա հակառակիմ, զի իմ իսկ ընթերցեալ է գիր վնասու նորա. այլ վասն զի Յովհանն ի բաց յիւրմէ հալածեաց զՍարգիսն, սակս այնորիկ արտաբոյ կամաց նորա ասեմ գնորայն հերձուած: Իսկ ապա հայրապետն Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ, զոր երբեմն խրթին և մթին էր գնա շինեալ, քակեալ զայն՝ ևս ընդարձակագոյն և պայծառագոյն գնա շինեաց, կոփածոյ քարամբք և կրով ձուլելով, և արտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց ի պաշտօն աստուծային խորանին: Այս եղև սկիզբն ժամատուն շինելոյ. մինչև ցայս վայր ոչ երևիր ի Հայս:

Ի ժամանակի աստ յայսմիկ Վարազտիրոց որդի քաջին Սմբատայ փախըստեայ լեալ յՌոստոմայ իշխանէ Ատրպատականի, շուէ գնայ ընտանեաօք և աղխիւ առ կայսրն Հերակլ. վասն զի նենգ թագուցեալ յինքեան Ռոստոմայ սպանանել զՎարազտիրոց, սակս այնորիկ գնացեալ տարաբնակէր ի Յոյնս: Ի սմին յայսմիկ յաւուրս կայսրն Հերակլ գԴաիթ Սահառունի կուրապաղատ արարեալ՝ իշխան Հայոց կացուցանէր, որ մեծաւ ճոխութեամբ և յաղթութեամբ քաղմաւ քաղաքավարէր զիշխանութիւնն ամս երիս, և ի հրամանէ նորուն շինէր իսկ եկեղեցին գեղեցկայարմար՝ որ ի քաղաքագեղն Մրեն: Իսկ յետ երեամ մի անարգեալ գնա նախարարացն և զօրաց իւրոց, հալածեցաւ: Եւ յայնմ հետէ ապա ի շար հակառակութենէ նախարարացն և ի նանիր նախանձուէ դղրդեալ կործանեցին սպառսպուռ զՀայաստանեայսս. բայց միայն բարեպաշտ իշխանն Թէոդորոս ըստ սակաւածեռն կարի՝ դիմակաց հինից թշնամեաց գտանիր:

Զայսու ժամանակաւ ապա երևեալ ժառանգն Հագարայ աղախնոյն Մահմէտ որ ըստ Պօղոսի ի լեռնէն Սինայ կամ յանապատէ ի ծառայութիւն ծնեալ է. սա հպարտացեալ ի վերայ քրիստոսադրոշմ և ստուգահաւատ ազգաց, լնոյր ապա զիւր կորստական խորխորատն խորհրդոց, ոչ տալով յագուրդ սրոյն ծարաւոյ, զոր միշտ արբուցանէր յարենէ վիրաւորելոց՝ գերելոց գլխոց իշխանաց թշնամեացն յարձակելոց ի վերայ հաւատացելոց. որ թէպէտ կարծեցուցանէր զինքն հակառակորդն, հպարտացեալ ի հրամանէ աստուծոյ զոլ քարոզ ճշմարտութեան արբահամեանն հաւատոյ և մովսիսականն օրինաց, սակայն սնաստուած աստուածածանութիւն նորա, դաւաճանումն միայն լինէր մտաց տգիտաց, վասն զի դատապարտ էր դատաստան նորա, և անարգագոյն յարգանք նորա, և ուխտադրուժք ուխտք և աննուէր նուիրմունք և անողորմ ողոր-

մուսթինք: Քանզի և ոչ իսկ թերևս ի Տեառնէ տուաւ աղախնորդոյ՝ ընդ որդոյ ազատին լինել ժառանգորդ, որպէս և ոչ իսկ բաժին հաւատացելոյն ընդ անհաւատին: Արդ՝ իբրև գումարտակ մեծ լինէր Հազարացին, և յաղթեալ կոտորէին առ հասարակ զգօրս կայսերն Հերակլի որ յԱրաբիա, այնուհետև ազգք և ազինք պակուցեալք ի յահէ նոցա՝ հնազանդեցան ի ծառայութիւն նոցա: Իսկ Երուսաղէմացիք զքրիստոսընկալ սուրբ Խաչն վաղվաղակի յուղարկէին նաւօք Կոստանդնուպօլիս. զի մի կրկին ևս ի թշնամեացն գերեսցի, և ինքեանք հնազանդեցան ի ծառայութիւն Հազարացոյն:

Աստ ապա վախճանեալ կայսրն Հերակլ, Կոստանդին որդի նորա ընդ նմա թագաւորէ: Եւ վասն զի նախարարք աշխարհիս մերոյ անմիաբանք լեալք, և ոչ ոք էր որ սմա զօրավարէր, յայնժամ ապականիչ զօրքն Հազարայ համարձակութիւն առեալ յԱսորեստան կողմանէ՝ ասպատակ ի Հայս սփռէին. և ըստ օրինակի հրացայտ իմն հրդեհի՝ ճարակ բոցոյ նոցա վաղվաղակի հասանէր յԱյրարատ գաւառ, հարեալ զզաշտավայրն ամենայն, և պաշարեալ պատերազմաւ զԴվին քաղաք և առեալ զնա՝ զսուսերս իւրեանց արբուցին յարեննէ քաղաքին, ուր ոչ ևս կայր թիւ բաղմութեան սպանելոցն ԼԵ հազար ոգի գերեցին վաճառակոր լինել, և անցեալ գնացին ընդ որ շուեալ եկեալ էին յԱսորեստան: Եւ իսկ և իսկ վախճանէր հայրապետն Եզր, կալեալ զաթոռ Հայրապետութեան ամս տասն:

Իսկ Թէոդորոս Ռշտունեաց տէր, և այլ նախարարք Հայոց հանդերձեցին կացուցեալ յաթոռ Հայրապետութեանն փոխանակ Եզրի՝ զներսէս եպիսկոպոս Տայոց. բայց նա յապշութեան լեալ յանհնարին կոտորելոցն՝ որ ի գերելոց քաղաքին, գաղտագնաց փախստեալ լինել խորհէր, իբր ոչ կարող կալ ի քաղաքավարութեան այնմ աստիճանի մեծի: Ապա յողոքական բանից և ի սաղորելոյ նախարարացն հնազանդեալ հանդարտիր: Եւ կացեալ յաթոռ Հայրապետութեան՝ ամփոփեալ հաւաքէր զբազմութիւն դիակացն անկելոց, և ի նմին տեղին վերստին շինէր զհրդեհեալ զվկայարան մեծի նահատակին Սերգեայ: Զկնի ապա շինէ տաճար սրբութեան և ի վերայ վիրապի սրբոյն Գրիգորի. ուր ի մէջ թունաւորացն թաղեալ առաքելանուէր այրն Աստուծոյ. զկամակոր վիշապին ջախջախեաց զգլուխ, ի միտելութեանէ խորոց կոսապաշտութեան վերածելով զՀայաստանեայս ի յոյս փառաց Որդոյն Աստուծոյ: Գարձեալ յուսացեալ ի Տէր, և ոչ ածեալ զմտաւ զկրթական արշաւանս հինիցն թշնամեաց, գեղեցիկ իմն մոլութեամբ զնէ ապա հիմն մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի տան Աստուծոյ՝ ըստ անուանակրութեան սրբոյն Գրիգորի, յանձն առնելով զկատարումնն իմաստութեան շինողին Քրիստոսի: Իսկ ի հիմնարկել զաստուածակերտ փարախն բանաւոր հօտին Քրիստոսի, ի ներքոյ շորից սեանցն հաստահեղութիցն բաժանեալ զնէ զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի, առ ի անշուշտ մնացականութեամբ պահիլ գանձուն երկնաւոր ի գերշաց ապականչաց, և ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց: Իսկ քրիստոսադրոշմ և զպատուական զբլուխն ոչ ի խորոջ, այլ արտաքոյ ի զզրոցի եղեալ՝ զնէ ի գանձարանս Աստուածութեանն ի յոյս բարեաց փափաքողաց նմա և ի բժշկութիւն ախտակրելոց: Բայց հայրապետն մեծն Ներսէս հրաման հայցեալ ի կայսերէն Կոստանդնէ, կացուցանէ զօրավար Հայոց զԹէոդորոս Ռշտունեաց տէրն:

Արդ՝ մինչ ցայս վայր, ոչ ևս էր իւրովի ելեալ ի պատերազմ ընդ ումեք՝ ամիրապետի Հազարացոյն, այլ միայն զգօրսն և եթ ասպատակաւ հանեալ սփռէր ի ծագս երկրի: Ապա յայսմ նուագի ինքն իսկ ամիրապետն ելեալ ի Սին

անապատէ, անթիւ բազմութեամբ անցանէր ընդ ծովի հարաւակողմ և յարևելս, ի Պարս և ի Սագաստան, ի Սինդ և ի Մորան, ի Դարան և ի Մակուրան, և յաշխարհն Հնդկաց. առեալ և աւերեալ զբոլորեսին, բառնայ զամենայն թագաւորութիւնս ազգաց, բաց ի յՂիտանացոց՝ որք են Հոռովմայեցիք:

Իսկ կայսրն Կոստանդին ի Մարտինեայ մօրուէ իւրմէ դաւեալ սպանանի, կացուցեալ փոխանակ նորա զորդի իւր զԾրակլակ: Իսկ Վաղենտին զօրավար հուպ ի վերայ հասեալ, և սպանեալ զՄարտինէ և զԾրակլակ զորդի նորա, կացուցանէ թագաւոր զԿոստանդ որդի Կոստանդինի: Իսկ ապա վասն զի հատուած եղեալ՝ և եկեալ էր ի Յունաց ասպետն Վարազտիրոց, ապա մեծ հայրապետն Ներսէս խնդրէ հաշտութիւն նմա ի կայսերէ, և տայ առնել զնա կուրապաղատ և հրամանատար Հայաստանեայցս: Իսկ նա յառնուլ զիշխանութեան պատիւն՝ վաղվաղակի վախճանի, զոր և տարեալ եղին ի Դարօն առ հօր իւրում քաջին Սմբատայ: Ապա Ներսէս զորդի նորա զՍմբատ ի պատիւ հօրն խնդրէ կացուցանել, և հայցէ ևս զԹէոդորոս Ռշտունեաց տէր ի զօրավարութիւն հաստատել. և այսպէս պայազատեալ ապահովանայր առ ժամանակ մի ի շար հինից Հագարու աշխարհս մեր:

Իսկ իբրև բառնայր առ հասարակ տէրութիւն ազգաց և ազանց, այնուհետև պատահեալ առագաստն հին հարաւոյ՝ շնչեաց ի մեզ նոր հարաւահողմ մահաբեր խորշակ, և տապախարշ արարեալ զմատաղատունկս իմանալի բուրաստանաց մերոց՝ խայթոցօքն խոցոտեաց. և այսպէս ապա յամս սակաւս արագընթաց ազգք հարաւոյ փոթորկեալ պտուտեալ տիրեցին ամենայն երկրի, զոր տեսեալ Թէոդորոսի և այլոց ևս նախարարացն, և պակուցեալք յահէ հինիցն եկելոց՝ հնազանդեցան ի ծառայութիւն Հագարացոյն, զնելով ուխտ ընդ մահու, և կռելով դաշինս ընդ դժոխոց: Եւ այսպէս ի բաց կացին ի կայսերէ:

Իսկ կայսեր զօրս բազումս գումարտակ արարեալ, շուէ գնայ ի Հայս՝ ընդ իւրև նուաճել, որում ոչ ոք թերևս գտաւ հնազանդեալ, բայց միայն ի Վրաց աշխարհէն: Ապա կայսրն Կոստանդին յաւէտ իմն բարկացեալ՝ խորհէր կործանմամբ սաստիւ բառնալ զերկիրն ի միջոյ: Իսկ հայրապետն Ներսէս մեծապաղատ աղաչանս արքային մատուցեալ՝ դառնայ յայնց կամաց իւրոց: Եւ ապա հեզաբար զնացեալ ի քաղաքն Դվին՝ իջաւանս ի տան Կաթողիկոսարանին արարեալ, և անդ ապա հրամայէ հոռում քահանայիցն պատարագ ի սուրբ յեկեղեցուցն մատուցանել, և քարոզել ի նմա ժողովն Քաղկեդոնի. և հաղորդեցան օրինացն ի միասին թագաւորն և հայրապետն մեր Ներսէս. այլ և ժողովեալ ևս եպիսկոպոսունքն: Եւ այսպէս ապա թէ կամաւ և թէ ակամայ պատճառք գայթակղութեան բազմաց այս լեալ. շարժեցաւ հաւատն զոր ընկալեալ էր ի սրբոյն Գրիգորէ, և ցայն վայր անշուշտ կացեալ և մնացեալ: Իսկ մի ոմն յեպիսկոպոսացն ի վայր ի բաթրոնէ բեմին իջեալ՝ լոկի իմն ծածկեցաւ յամբոխին: Իսկ իբրև յայտ իբք եպիսկոպոսին դայր, ածաւ եպիսկոպոսն առաջի արքային. և ապա հարցեալ առ ի նմանէ թէ՛ Ընդէ՛ր ոչ ընդ իս՝ կամ ընդ քում Հայրապետին ոչ հաղորդեցար: Նա պատճառս փաստաբանականս ի մէջ առնոյր. Առ ահի սրտիս, ասէ, զայն գործեցի. քանզի մեք, ասէ, մինչ ի տախտակի տպաւորեալ նկարապաճոյճ դեղով միայն զձեզ զկայսերսդ տեսանեմք, դողումն զմեզ պատեալ պաշարէ. թողում ասել զկենդանի դիտակ երեսացդ նկատել, և հաղորդակից ևս լինել: Կայսրն ասէ. Արդ հաղորդի՞ս ընդ քում պատրիարքիդ: Ասէ եպիսկոպոսն. Իբրև ընդ սրբոյն Գրիգորի. սակայն ինքն իսկ դա եղև պատճառք շահորդելոյս իմոյ ընդ իւր: Զի երկու ամօք յառաջ քան զայս հրամայէր

դա ժողով եպիսկոպոսացն առ ինքն լինել. որք միաբան ընդ դմա ձեռնարկ արարեալ, նզովեցին զամենայն հերձուածողս, և առաւել ևս զժողովն Քաղկեդոնի, և ես ևս ապա խառն ընդ նոսա: Վասն որոյ կայսր զայրազնեալ յանդիմանէր զնենգութիւնն Ներսեսի ի լեզու իւր. և ապա յայն ևս եպիսկոպոսն հաղորդէր ընդ նոսա՝ օրհնելով զթագաւորն, և թագաւորն զնա:

Եւ ապա ըստ հապճեպ տալոյ խնդրակաց ի Կոստանդնուպօլսէ՝ զնայ կայսրն փութանակի: Իսկ Հայրապետն Ներսէս երկուցեալ իմն ի սաստիկ ցամանէն Ռշտունեաց տեառնն, երթեալ դարբարէր ի Տայս: Բայց յետ մի անգամ և երկիցս ասպատակի իսմայէլեան դօրու ի Հայս, և սպառնալու տիրելոյ, առին պատանդ յամենայն զլիսաւորաց աշխարհին զկանայս և զուստերս և զգոտերս: Բայց Թէոդորոս Ռշտունեաց տէր զնաց ընդ Իսմայէլեան զօրուն յԱսորեստան իւրայնօքն համազգօք, և անդ մեռաւ, և մարմինն նորա բերեալ եղաւ ի գերեզմանի հարցն իւրոց:

Իսկ հայրապետն Հայոց Ներսէս յետ վեց ամի հալածանաց իւրոց, իբրև լուաւ զվախճանն Թէոդորոսի, և զգաղարունն իսմայէլեան ասպատակին, դարձաւ անդրէն ի տեղի իւր: Եւ միախորհ ապա լեալ ընդ նախարարացն, իշխան ի վերայ Հայաստանեայցս կացուցանեն զՀամազասպ Մամիկոնեան, որ էր այլ ընթերցասէր և ուսումնասէր, և վարժ ի բոլոր հրահանգս, և զնախնական քաջութեանցն պայման միշտ ջանայր լրութեամբ կատարել մրցարանաց կրթութեամբ: Բայց հայրապետն Ներսէս պարապ անձին գտեալ. զարտաքոյս հրաշակերտ Եկեղեցւոյն՝ զոր իւր իսկ էր շինեալ, շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահողոյս կոփածու քարամբք: Այլ և կարգեալ կացուցանէր ի նմա ամբօխութիւնս երգումարդաց ըստ պայմանի քաղաքականաց, և ածեալ ջուր ի Քասաղ գետոյ՝ զամենայն աւազախիր առապար դաշտավայրն ի գործ արկանէր, տնկէր այգիս և բուրաստանս ծաղկոցաց:

Աստ ապա դարձեալ սակս անհնարին և ծանրաբեռն ծառայութեանն ի բաց կացեալ Հայք յիսմայէլեան բռնակալացն, հնազանդէին ի ծառայութիւն կայսեր: Եւ մեծին Ներսեսի խնդրեալ յարքայէ առնել կուրապաղատ զՀամազասպ և հրամանատար Հայաստանեայցս. զոր ապա լուեալ ամիրապետին՝ զամենայն պատանդն Հայոց առ հասարակ կոտորէ, հոգիք իբրև ՌՉԶ (1775): Եւ յայնմ օրէ հետէ ապա հոգի խոռվութեան առաքեալ յԱստուծոյ ի մէջ բոլոր բանակացն իսմայէլեան, և այլ ի վերայ ընկերի յարուցեալ, և սուր յազդեր կալեալ անհնարին սատակմամբ զմիմեանս կոտորէին. և սպանանէին ևս զամիրապետն իւրեանց, և այլ ի տեղի նորա կացուցանէին: Ապա զօրքն իսմայէլեան որ էր յԾգիպտոս, միաբանեալ ընդ կայսեր Կոստանդնի, հաւատացին ի Քրիստոս և մկրտեցան արք իբրև վեշտասան հաղար: Եւ ապա զօրացեալ Մաւի, և սպանեալ զայն ևս ամիրապետ, ինքն իսկ թագաւորէ ի վերայ բոլորից Հագարացոցն, արարեալ խաղաղութիւն ընդ բոլոր ծագս երկրի:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Գ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹՈՎՄԱՅԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ, Կ. ՊՈԼԻՍ,  
1852, ԵՐ. 93—109

Եթէ որպէս եղև բարձումն շար քաղաւորութեանն պարսից  
տանն Սասանական:

Յամի ութերորդի Մուրկայ Յունաց թագաւորի, թագաւորն Պարսից Որմզդ որ ի տանց Սասանայ սպանաւ յիրոց հաւատարմաց, և որդի նորա Խոսրով մանկագոյն տիովք մնացեալ, առնու զթագաւորութիւնն: Վահրամ ոմն Մեհրեւանդակ, որ էր իշխան կողմանցն արևելից, այր հզոր զօրութեամբ, քաջութեամբ իրով եհար զգօրս Թետալացոց, և բռնութեամբ կալեալ զԲախլ և զամենայն երկիրն Քուշանաց, մինչև յայնկոյս գետոյն մեծի որ կոչի Վահրոս. սա և զթագաւորութիւնն պարսից յինքն կորզեաց. և որդի Որմզդի Խոսրով գնաց փախստական առ Մուրիկ թագաւորն Յունաց. զոր առեալ քեռիք նորա Վնդով և Վստամ գնացին փախստական ի դուռն կայսերական: Առաքեցին առ Մուրիկ թագաւորն արս ձոխս մեծամեծ ընծայիւք և պատարագօք. և թուղթ գրեալ ի բերանոյ Խոսրովայ զայս ինչ:

«Թագաւոր մեծ իշխան ծովու և ցամաքի, տուր ինձ զօր յօգնականութիւն և հաստատեալ զիս ի տեղի թագաւորութեան հարց իմոց, զի թէ կարացից հարկանել զթշնամին իմ և կանգնել զթագաւորութիւնն իմ. և եղէց քեզ որդի հնազանդութեան, և տաց քեզ զկողմանս Ասորոց և զսմենայն Արեւաստան մինչև զՄծուին քաղաք. և ի յերկրէ հայոց զաշխարհ Տանուտերական իշխանութեանն մինչև և յԱյրարատ. և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բղնունեաց, և ցԱռեստն աւան. և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. և կայցուք ուխտ խաղաղութեան ի մէջ մեր երկոցունց, և անշուշտ լիցի այս երգումն և պայման ի մէջ մեր և որդոց մերոց յետ մեր թագաւորելոյ»:

Եւ կայսր Մուրիկ հաւանեալ նմա յղէր առ նա զՓիլիպիկոս փեսայ իւր. և տայր տանել նմա գիր ընդունելութեան, և առնոյր ի նմանէ երգումն: Եւ տայր նմա զօր կայսերական յօգնականութիւն, և զՅովհան պատրիկ ի Հայոց կողմանց, և զՆերսէս ստրատելատ յԱսորոց, և զՄուշեղ այր քաջամարտիկ և հզօր զօրութեամբ, և զամենայն զօրս Յունաց և Հայոց, Վրաց և Աղուանից, գունդ անթիւ բազմութեամբ եկեալ ի կողմանս Ատրպատականի ի Վառարատ գաւառի: Գրէ և Վահրամ առ Մուշեղ և առ այլ զօրագլուխսն այսպէս:

«Սո այսպէս կարծէի թէ՛ յորժամ ես ընդ թշնամիս ձեր մարտնչիմ, դուք յայդմ կողմանց օգնական ինձ լինիցիք, և միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն զտունդ Սասանայ: Դուք աւագիկ ժողովեալ գայք ի վերայ իմ պատերազմաւ. այլ ես ոչ եկեայց ի ժողովելոց երիցանցդ Հռոմայեցոց որ գումարեալ գան ի վերայ իմ: Բայց դուք Հայք տարածամ ցուցանէք զտիրասիրութիւն. ո՛չ ապաքէն տունդ Սասանայ եբարձ գերկիր ձեր զտէրու-

թիւնդ, և դուք դիմեալ գայք ի վերայ իմ. բայց ապա հաճոյ թուիցի ձեզ ի բաց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս. զի թէ ես յաղթեցից երդուեալ ի մեծ աստուածն Որմազդ և յարեգակն և ի լուսին և ի հուր և ի ջուր և ի Միհր և յամենայն աստուածս՝ զի ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց. և զոր կամիջիք՝ արասջիք ձեզ թագաւոր. և յԱսորոց կողմանց զԱսորեստան, և զՄծուին, և զՆուշիրական մինչև ի սահմանս Տաճկաց: Եւ ես մի իշխեցից քան զԱրասխ անցանել յայդ կոյս. և զգանձդ արեաց թագաւորութեան այնչափ արձակեցից՝ մինչև շատ լիցի ասել ձեզ, և բազմութիւն զօրաց որքան և պիտոյ իցէ ձեզ մինչև ձեր թագաւորութիւնն հաստատեսցի»: Եւ ըստ կարգի օրինաց իւրեանց երդուեալ, և ազ ծրարեալ հրովարտակին ետ տանել. և նոցա առեալ և ընթերցեալ, ոչ արարին բանիցն պատասխանի:

Կրէ դարձեալ թուղթս երկրորդս և ասէ. «Գրեցի ձեզ ի բաց կալ յայդմանէ. ուրեմն ոչ կամեցարուք լսել, ես զձեզ ապաշաւեմ, ասէ: Քանզի վաղիւ առաւօտուն ցուցանել ձեզ փիղս վառեալս, ի վերայ հոգո սպառազէնս ի քաջաց, որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս և շուառունս մուխս պաղաւատիկք սլաքովք, և հաստածիգք աղեղանց, և կուսիք բազմադիմիք, որչափ խոսրովայ և ձեզ պիտոյ իցէ»:

Կրէ պատասխանի Մուշեղ նմա այսպէս: «Ձբանս քո լուեալ ասեմ, եթէ յԱստուծոյ է թագաւորութիւն և ում կամի տացէ. բայց դու պարտիս յանձն քո ապաշաւել քան թէ ի մեզ. զի տեսանեմ զքեզ այր պոռտաբան, զի յանձն քո խրախուսես և ոչ յԱստուած, ի բազմութիւն զօրաց և ի փղաց զօրութիւն. այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ձեթեացեն ի վերայ քո իբրև զամպս երկնից. և բռնալիք նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփալատակունս հրոյ շանթից: Քանզի թէ Աստուած կամեսցի տանելոց է սաստկութիւն հողմոյ զզօրութիւն քո իբրև զփոշի: Էին անդ, և Վնդայ, և Վստամ, և զօրք պարսիկք իբրև ութ հազար հեծեալ, թող զզօրս Յունաց և Հայոց: Եւ ի վաղիւ անդր մինչդեռ արեւն ընդ ծայրս հարկանէր, կարգեցաւ պատերազմ սաստիկ, ճակատ առ ճակատ ուժգին խումբ և անհնարին խառնուրդ, և մարտուցեալ ընդ միմեանս յայգուէ մինչև ընդ երեկս քաջապէս. և յօգնեցան երկոքեան կողմանքն ի մեծ պատերազմին. և այնչափ սաստիկ լինէր կոտորածն, մինչ զի սաստկութիւն վտակաց արեանն խաղացեալ ոռոգանէր զերկիրն ամենայն: Եւ ոչ կարացեալ ունել զդէմ զօրն՝ Վահրամայ փախստական լինէր առաջի զօրաց Յունաց. և նոցա հետամուտ եղեալ մինչև ի մութ երեկոյին, լցին դիակամբք զերկիրն. և զբազումս ձերբակալ արարեալ ածին առ խոսրով. և զօրացաւ յաւուր յայնմիկ յաղթութիւն խոսրովայ: Եւ Վահրամ զնաց փախստական և անկաւ ի Բախդ Շախստան. որ և յետոյ իսկ սպանաւ ի հրամանէ խոսրովայ:

Եվ հաստատեցաւ խոսրով յաթոռ թագաւորութեան, և զխոստացեալսն կայսեր կատարեաց: Ետ նմա զԱրեւաստան զամենայն մինչև ցՄծուին, և զերկիրն հայոց մինչև ցգեան Հուրաստան, և զգաւառն Կոտայից մինչև յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց, և մինչև յԱռեստն աւան. և զԿոզովիտ գաւառ մինչև զՀացին և ցՄակու: Եւ էր սէր դաշնաւորութեան մեծի ի մէջ երկոցունց թագաւորացն Պարսից և Յունաց:

Եւ եղև յամի շորեքտասաներորդի խոսրովայ արքայի, ի քսաներորդ ամի Մուրկայ թագաւորութեանն, ապստամբեցան ի կայսերէ զորքն Յունաց, որք ի Թրակացւոց կողմանէն, և նստուցին իւրեանց թագաւոր այր զոմն անուն Փոկաս

կոչեցեալ. և գնացեալ միաբանութեամբ ի Կոստանդնուպօլիս սպանին զՄուրիկ թագաւոր, և նստուցին զՓոկաս յաթոռ թագաւորութեան:

Իբրև լուա Խոսրով արքայ զլուր համբաւոյն այնորիկ, շարժեցաւ ի բարկութիւն մեծ, լինել վրէժխնդիր արեանն Մուրկայ: Եւ ժողովեալ զբազմութիւն զօրաց իւրոց, առնէր վնասս մեծամեծս և սաստիկս ի բաժնին Յունաց: Իբրև լցան ամբ ութ Փոկաս՝ սպանաւ և նա ի Հայրակղէ, որ դաւեալ նմա էառ ըզթագաւորութիւն նորա: Եւ առաքեաց հրեշտակս մեծապէս գանձիւք և հրովարտակօք առ արքայ Խոսրով, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն մեծաւ թախանձանօք, ասէ. «Զվրէժ արեանն Մուրկայ առի ի թշնամոյ նորա. արդ կամ եղիցի քեզ առնել ընդ իս զխաղաղութիւն, և արգելուլ զսուր քո յերկրէ իմմէ»: Որում ոչ կամեցեալ լսել Խոսրովայ, ասէ. «Իմ է թագաւորութիւնն այն, և ես զորդին Մուրկայ նստուցի թագաւոր, և նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց. և զմեր գանձս մեզ ընծայ մատուցանէ, ոչ գիտելով եթէ համարս խնդրիցից գանձիս այսմիկ, և ոչ դադարեցից մինչև առից զնա ի բուռն իմ»: Եւ առեալ զգանձսն հրամայեաց սպանանել զընծայաբերսն, և բանիցն Հայրակղի ոչ արար պատասխանի, այլ առնէր վնասս սաստիկս, ի կողմանս կողմանս աւարառութիւն և գերութիւն և սուր. և զօրք Պարսից որք էին ի կողմանս Պաղեստինացւոց, և զօրավար նոցա անուանեալ Ռազմայուզան, որ է Խոռեամ, խօսէր ընդ Երուսաղէմի զխաղաղութիւն. քանզի էին հնազանդեալք յառաջագոյն ընդ թագաւորութեամբն Յունաց, և սպանեալ զոստիկանն Պարսից որ էր ի վերայ նոցա, և ինքեանք պատրաստեալ ի պատերազմ ընդդէմ Պարսից: Յայնժամ ժողովեալ Խոռեմ Երազմայուզան զզօրս իւր բնակեցաւ շուրջ զԵրուսաղէմաւ, և պաշարեաց զնա. և պատերազմեցաւ ընդ Երուսաղէմի աւուրս իննևտասան, և փորեալ ի ներքոյ զհիմունսն անրեցին զպարիսպն: Եւ եղև յաւուրն ինն և տասներորդի յամսեանն մարգաց, որ օր քսան և ութ էր ամսոյն. յամի քսան և հինգերորդի թագաւորութեանն Խոսրովու, որ կոչէր Ապրուէզ, զկնի տասն աւուր անցանելոյ զատկին, առին զքաղաքն, և սուր ի գործ արարեալ զերիս աւուրս, սպառեցին զամենայն մարդ ի քաղաքին, և նստան ի ներքս ի քաղաքին քսան և մի օր. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին, և զքաղաքն այրեցին հրով: Եւ հրամայեցին համար առնել անկեղծց դիակացն, գտաւ թիւ սպանելոցն յիսուն և եօթն հազար մարդ. կալան և զհայրապետն Զաքարիայ, և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ Նշանին սկսան զնոսա տանջել, մինչև զբազումս ի պաշտօնէիցն կառափեալ սատակեցին. ապա ցուցին զտեղին ուր ծածկեալն էր. զոր առեալ վարեցին ի գերութեան, և ոսկի և արծաթ անբաւ խաղացուցին ի դուռն թագաւորին: Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա, ել հրաման յարքունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն. շինել զքաղաքն և հաստատեալ զամենեսին յիւրաքանչիւր կարգ. և անդէն վաղվաղակի կատարէին զհրաման արքունի. և կարգեցին երիցապետ զոմն ի վերայ քաղաքին որում անուն էր Մոգեստոս: Եւ յետ այսորիկ գումարեցոյց զօրս բազումս Խոռեմ, և ել ի Քաղկեդոն և նստած յանդիման Բիւզանդայ, և խնդրէր անցանել և կործանել զքաղաքն թագաւորանիստ: Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն որ եկին հասին ի վերայ նորա. ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զհիւրս. ընկալաւ զնոսա մեծամեծ ընծայիւք, և տայր զօրավարին և իշխանացն ամենեցուն պարգևս մեծամեծս, և բաշխէր զօրացն ամենեցուն դահեկանս ի խոկս, և ճաշս և ընթրիսս ուրախութեան կազմէր ամենայն

զօրացն մինչեւ ցեօթն օր: Ապա ելեալ ի նաւ եկն ի մէջ ծովուն խօսել ընդ զօրավարին Պարսից. «Զի՞նչ կամիր, ասէ, առնել, և վասն է՞ր եկիր ի տեղիս յայս. մի՞թէ զծով իբրեւ զցամաք համարեցիր՞, մարտնչել ի սմա ընդ մեզ. կարող է Աստուած եթէ կամեսցի ցամաքեցուցանել զծովս առաջի ձեր. բայց զգոյշ լերուք. մի գուցէ ոչ հաճեսցի Աստուած և խնդրեսցէ ի ձէնջ զվրէժ արեան կոտորածի աշխարհի. զի ոչ թէ վասն աստուածպաշտութեան ձերոյ կամ բարեգործութեան և սրբութեան արար Աստուած զայս յայսպէս, այլ վասն մերոյ ամբարշտութեան ի Տէր, մեղք մեր արարին և ոչ քաջութիւն ձեր. բայց և զի՞նչ իսկ խնդրիցէ թագաւորն ձեր յինչն որ ոչ առնէ զխաղաղութիւն: Բառնա՞լ կամի զթագաւորութիւնս զայնս: Մի ջանասցի, քանզի յԱստուծոյ հաստատեալ է, և բառնալ զսա անհնար է: Բայց թէ Աստուծոյ այնպէս հաճոյ իցէ, կամք Աստուծոյ կատարեսցին: Եւ եթէ ասիցէ եթէ այլ թագաւոր նստուցից, արասցէ զո՞ եւ կամեսցի և արձակեսցէ, և մեք ընդունիմք. ահաւասիկ է տեղի թագաւորութեանս, և եթէ զքէն արեանն Մուրկայ խնդրէ, զքէն արեան Մուրկայ խնդրեաց Աստուած ի Փոկասայ ի ձեռն հօր իմոյ Հայրակղի. և եթէ երկիր խնդրիցէ, ահաւաղիկ երկիրդ առաջի ձեր, եթէ կամիմք և եթէ ոչ կամիմք եհան Աստուած ի մէնջ և ետ ի ձեռս ձեր. և եթէ քաղաքս խնդրիցէ, ահաւաղիկ է քաղաքք մեծամեծք և պարսպաւորք. այլ զա՞նձս խնդրիցէ, ասացի թէ՛ տաց որչափ և ձեռն հասանիցէ: Եւ ոչ կամեսցաւ լսել, այլ տակաւին ծարաւի է արինարբութեան: Մինչև յե՞րբ ոչ կամիցի յազենալ արեամբ: Միթէ՞ ոչ կարէին հոռոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի իբրեւ ետ Աստուած զսա ի ձեռս մեր, այլ արարին ի վերայ նորա ողորմութիւն: Բայց արդ ես զնոյն բարիս խոսեցայց և խնդրեցից ի նմանէ հաշտութիւն և սէր. և ի ձէնջ խնդրեցից երիս ինչս և լուարուք ինձ. ի բաց արարէք յաշխարհէ զսուր և զհուր և զգերութիւն, և յերիցդ օգուտ գտանէք. զի ոչ դուք նուազիցիք ի սովոյ և ոչ հարկք արքունի կորնչիցին, և ես աւասիկ արձակեցից թագաւորին ձերում պատարագս և հրեշտակս հրովարտակօք, խնդրել ի նմանց զխաղաղութիւն աշխարհի և ընդ իս հաշտութիւն»: Եւ նոցա ընկալեալ զխնդիրսն հաւանեցան առնել ըստ կամաց նորա, մինչեւ տեսցեն եթէ զի՞նչ պատասխանի եկեսցէ յարքայէն իրեանց, և կամ զօրուն զի՞նչ հրամայեսցէ առնել: Եւ զօրուն գնացեալ անտի ձմերեցին ի Սուրիայ:

Իսկ թագաւորն պարսից ընդունէր զպատարագսն բերեալս ի կայսերէն, և հրեշտակսն անդրէն ոչ արձակեաց, և ոչ հրովարտակացն պատասխանի առնէր. այլ հրաման տայր զօրացն նաւս կազմել և անցանել ի Կոստանդնուպօլիս, Եւ եղև պատերազմ և նաւամարտութիւն սաստիկ ի մէջ ծովուն: Եւ կորեան ի զօրացն պարսից յաւուր յայնմիկ սպառազէնք հեծելոց շորք հազարք հանդերձ նաւօք իրեանց: Եւ տեսեալ զայնպիսի կորուստ ոչ ևս համարձակեցան ի նոյն գործ. այլ տարածեալ կալան զերկիրն ամենայն:

Եւ յաւել գրգռելի ի սիրտս իւր արքայ խոսրով. զի Տէր խստացուցանէր զսիրտ նորա, զի կործանելոց էր զթագաւորութիւն. նորա:

Գրէ հրովարտակ նախատանաց առ Կայսր՝ որ ունէր օրինակ զայս:

«Աստուծոց պատուական և ամենայն թագաւորաց տէր երկրի և ծովու, ծնունդ մեծին Արամազդայ խոսրով թագաւոր: Առ Հայրակղոս անմիտ, և առ անպիտան ծառայ մեր. ոչ կամեսցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձ արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես եթէ վաղիւ համարս տալոց ես: Զծառայս իմ պատրես, և զզօրս



աւազակաց ժողովեալ ոչ տաս ինձ հանգչել, այլ հանապազ պատրաստիս ինձ ի պատերազմ, և ասես վատահանալ յԱստուածն իմ. արդ ո՞ր է Աստուածն այն զոր դուդ ասես, վասն է՞ր ոչ փրկեաց զԿեսարիայ, և զԱնտիոք, և զՏարսոն, և զԱմասիայ, և զԵրուսաղէմ, և զԱղէքսանդրիս, և զԹեբեայիտ, և զայլ աշխարհս: Մի՞թէ և այժմ ոչ գիտիցես թէ զամենայն երկիր, զծով և զցամաք ինձ հնազանդեցուցի, արդ զԿոստանդնուպօլիս միայն ոչ կարիցեմ բերե՞լ: Բայց արդ զամենայն յանցանս քո և զվնաս զոր արարեր թողում քեզ. արի առ զկին քո և զորդիս և եկ այսր. և տաց քեզ ագարակս. այգիս, և ձիթենիս և սերմանս զի վարեսցես և հնձեսցես և մեք սիրով նայեսցուք ի քեզ: Ապա թէ ոչ՝ մի խաբեսցէ զքեզ յոյսն սնտոի, զի Քրիստոսն այն՝ որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի հրէիցն, այլ կալան զնա և սպանին ի վերայ փայտի, իսկ արդ զքեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց: Զի թէ իշանիցես յանդունդս ծովու՝ ձգեցից զցանցս իմ և ըմբռնեցից զքեզ. և ապա տեսանիցես զիս այնպէս որպէս դու ոչ կամիցիս»:

Եւ առեալ Հայրակղի զհրովարտակն հրամայեաց ընթեռնուլ առաջի հայրապետին և ամենայն մեծամեծացն, և ապա մտին ի տունն Աստուծոյ, և տարածեալ զհրովարտակն առաջի սրբոյ սեղանոյն, անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր առաջի Տեառն և լացին դառնապէս. զի տեսցէ Տէր զնախատինս զոր նախատեաց զնա թշնամին: Եւ հաճոյ թուեցաւ Հայրակղի և ամենայն սինկղիտոսիցն նստուցանել զորդին Հայրակղի յաթոռ թագաւորութեան, որ էր մանուկ փոքր. և ինքն հանդերձեալ կազմել զնալ ընդ արեւելս, նաւել ի Քաղկեդոն: Եւ զօր պարսից արքային որ յաշխարհին՝ ոչ գիտացին. և Հայրակղի ժողովեալ զամենայն արեւելեայս իբրև հարիւր և քսան հազար, զիմէ ի վերայ Խոսրովայ: Եւ ճանապարհ արարեալ ընդ կողմն հիւսիսոյ ել դէպ ուղիղ ի Կարնոյ քաղաք, և անցանէ ի Շիրակ, և հասեալ ի Գուրիս աւերէ զնա, և զնախճաւան, և զՈրմի, և զիմեալ ի Գանձակն Ատրպատականի, բրէ զնա, աւերէ զԱհմատան, և զՄայ, կործանէ զբագին հրատին մեծի, որում վշնապն կոչէին, և լնուն զծովակն որ յանդիման հրատին՝ դիակամբք. զխօսուն և զանասուն, զայր և զկին և ըզմանուկ առ հասարակ մաշեցին ի սուր սուսերի. և արքայ Խոսրով զարհուրեալ պատրաստի ի փախուստ, քանզի զօրացաւ յաղութիւնն Հայրակղի. և ամենայն ուրեք ուր և հանդիպէր զօրուն Պարսից, առ հասարակ սատակէր զամենեսեան մինչ ոչ մնալոյ ապրեալ:

Զայս յառաջագոյն իմացեալ հին պատմագրին, յառաջատես զկործանումն նոցա յայտ առնէ. և զոր ասեն այսպիսի ինչ է. «վայ քեզ. եղուկ դու երկիրդ Պարսից, յորժամ բազմախուռն դունդք զօրացն Յունաց ի քեզ արշաւանս եղեալ հասանիցեն և հարկանիցեն զքեզ ի սուր սուսերաց, և յառաթուր սմբակաց: Վայ քեզ. եղուկ դու այր քաջ արքայդ մեծանուն, յորժամ կարկառիցէ Բարձրեալն զձեռն իւր ի կործանել զքեզ, և ի խորտակել զգաւազան ամբարտաւանութեան քո. յայնժամ մերկասցի արեգակն զլոյս իւր ի քն, և զգեցուցէ քեզ խաւար. յայնժամ ահագինս որոտալով ճայթիցէ ի վերայ քո երկիրք. և լսիցէ հնչին և բոմբին և դրրդին յանդնոց. ձայն որոտալոյ սմբակաց բազում ամբոխից երիվարաց, և աղաղակ բազում սպառազինաց յարձակեսցին ի վերայ քո: Յայնժամ ամօթալից աշօք տեսցես զբազմափառ և զպայծառացեալ նշանս դրոշմացն բարձրացելոց: Յայնժամ թանձրացեալ մթացի, բալ և մառախուղ, խաւար ի վերայ լերանց և դաշտաց քոց. յայնժամ կերիցէ սուր զպատերազմողս քո. ելցեն ի քեզ փայտահարք բազումք և կոտորեսցեն զմայրս քո մե-

ժամեծս, և զմատաղատունկս բարձունս. յայնժամ ելցէ հուր ի քէն ծնեալ և կերիցէ զքեզ և զբազմութիւն ուստերաց և դստերաց քոց, ի քէն ակնունելով զբորբոքումն: Զի որովք բարձրացար և ամբարտաւանեցար, նոքիմբք խոնարհեցիս և անկցիս: Քակտեցի և աւերեցի պերճութիւն տաճարաց քոց, և ամենայն ուրեք անարգեցի: Եւ զոր ծնար և զգուեցերն՝ քեզէն կոչեցես ի մահ»: Այս ամենայն վճարեցաւ պարսից ի ձեռն յունական սրոյն:

Իսկ Խոսրովու կարծեալ արծարծեալ զգօրս իւր, և որք ի դրանէն արքունի որ կոչին համհարզք և փուշտիպանք. և ամենայն արք ընտիրք տան թագաւորին ոյժ առեալ դարձեալ պատերազմել ընդ Հայրակղի: Եւ նա գնաց ընդդէմ նոցա սաստիկ զօրութեամբ. և եղև բալ և մութ թանձրամած խաւարին ի վերայ երեսաց ամենայն երկրին. և ոչ գիտացին զօրն պարսից զդարձն Հայրակղի ի վերայ նոցա. մինչև երթեալ խառնեցան և բախեցին զմիմեանս պատերազմօք: Եվ յայպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ Հայրակղի յաւուր յայնմիկ տալ ի ձեռս նորա զամենեսեան. և նոքա հարեալ սատակեցին զնոսա սրով սուսերի յանխնայ. սպանին և զզօրավարն ի պատերազմին. և զմնացեալ սակաւն ի մէջ արարեալ, շրջափակ տուեալ, կամէին զամենեսեան սատակել: Եւ նոցա ձայն բարձեալ ողորմագին պաղատանօք առ Հայրակղոս, եթէ՝ «Աստուածասէր և բարերար տէր, արա ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ և շեմք արժանի ողորմութեան»: Յայնժամ Հայրակղոս հրամայեաց առնել ի վերայ նոցա ողորմութիւն: Եւ թողին զնոսա արք իբրև չորք հազարք, վիրաւորք բոկք և մերկք և հետեւակք: Եւ ընդ առաւօտն հրամայեաց Հայրակղոս ասպատակս սփռել ի վերայ ամենայն երկրին, և հարկանել զամենայն երկիրն սրով սուսերի: Եւ Խոսրով արքայ փախստական գնաց, և անցեալ շրջեցաւ ի վեհակաւատ հրամայեաց զլար կամուրջացն կտրել: Եւ Հայրակղի հասեալ բանակեցաւ առ դուրս Տիսպոն քաղաքի. և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին, և այրեաց զնոսա հրով, և բազում զանձս մթերեալս յափշտակեաց անշափ աւարաւ զանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: Բայց տիկնայքն և հարձքն և ամենայն որդիքն արքայի, և արքունի երիվարացն էին անդէն ի վեհակաւատ. և սկսաւ Խոսրով արքայ ժողովել զմնացեալ նախարարս զօրացն և զզօրն որ գերծեալ էին ի պատերազմէն: Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք. թէ՝ «Ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք»: Յայնժամ խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ամենեցուն նոցա ասեն. «Թէպէտ և ի թշնամեացն ապրեցաք, սակայն ի ձեռաց դորա մեզ շիք ապրել. արդ եկայք իմասցուք ինչ»: Յայնժամ երդուեալ միաբանութեամբ գնացին ի գիշերի և անցին ընդ գոմ ի վեհակաւատ. և կալան անդ գտիկնայքն ամենայն, և զհարձսն, և զորդիսն արքայի, և գերիվարսն արքունական, որով եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն. հանին գաղտաբար ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միայն իւր շէր տեղեակ, և զորդի նորա Կաւատ նստուցին թագաւոր. և նա դիմեալ եկն ի վերայ նորա. և ոմն ընթացեալ ետ գոյժ վաղվազակի Խոսրովու, թէ ապստամբեցաւ ամենայն արեաց երկիր ի քէն, և զորդի քո Կաւատ նստուցին թագաւոր, և ահաւասիկ դիմեալ գայ ի վերայ քո: Եւ ընդոստուցեալ Խոսրով ի յահէն և զարհուրեալ մեծաւ դողութեամբ, խնդրեաց իւր տեղի փախստեան,

աղաղակեաց և ասէ, «ձի, ձի», և մտեալ յասպաստանն, ոչ հանդիպեցան ձիոյ յայնժամ արքայ Խոսրով յայլակերպս եղեալ զնաց եմուտ ի բուրաստանն արքունի, և երթեալ ի թաւ պուրակս բուրաստանացն մտեալ ի ներքոյ թաւ թփոյ ծաղկոցն որ էր մուրտ բազում, զուղեալ դադարեաց: Եւ Կաւատ արքայ հրամայեաց խնդիր առնել, և երթեալ ի բուրաստանն՝ գտին զնա ի թաւի անդ զուղեալ: Կալան զնա և եկին ածին զնա ի դախդիճ անդր: Հրաման ետ արքայ Կաւատ արկանել զնա ի տուն մի արքունական սենեկացն: Եւ մտանէին առ նա արք ի նախարարացն խօսէին դատաստանօք և նախատէին զնա, անարգէին և զնային: Այս եղև զաւուրս ինչ, ապա անարգեաց զնա և Կաւատ արքայ, եհատ ի վերայ նորա դատաստան մահու, և հրամայէ արանց մտանել և սպանանել զնա: Որք մտեալ քարտակատեցին զնա տապարօք ի սենեկի անդ և սպանին: Հրամայեաց և զեղբարսն իւր սպանանել, որք ի միում ժամու սպանան արք քառասուն, ամենեքեան ի շափ հասակի եկեալ, և Կաւատ արքայ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան և արար խաղաղութիւն մեծ ընդ կայսեր և ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ: Ետ և կայսեր զամենայն զոր և կամեցաւ առնուլ: Եւ մինչդեռ խորհէր արքայ Կաւատ վասն շինութեան աշխարհի և խաղաղութեան, եհաս նմա վախճան կենաց և մեռաւ, կեցեալ ամիսս վեց: Եւ յետ մահու նորա նստուցին թագաւոր զորդի նորա զԱրտաշիր, կարի տղայ մանուկ:

Յայնժամ Հայրակղէս գրէ առ Խոռեամ և ասէ. «Կաւատ թագաւորն ձեր վախճանեցաւ, և որդի նորա մանուկ տղայ է. բայց արդ ի քեզ հասեալ թագաւորութիւնդ, և ես քեզ տաց զնա, և եթէ զօր պիտոյ իցէ յօգնականութիւն արձակեցից որչափ և կամիս. բայց արդ եկ ի կողմանցդ յայգցանէ. եկից և ես յԱսորեստան, և երզումն արարեալ ուխտ դիցուք ի մէջ մեր երկոցունց, խաղաղութեամբ ունել զթագաւորութիւն»: Եւ հաւանեալ Խոռեմայ եկն առ Հայրակղոս արքայ յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ, և զԿեսարիայ Պաղեստինացոց, և զամենայն կողմանս Անտիոքացոց, և զամենայն քաղաքս զաւանացն այնոցիկ. և զՏարսոն Կիլիկիացոց, զմեծ մասն Հայոց, և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. և ուրախ եղև մեծապէս խնդութեամբ. և Հայրակղոս տայ նմա զթագաւորութիւնն, և խոստանայ զօր որչափ և պիտոյ իցէ: Եւ խնդրէ ի նմանէ խնդիրս առաջին, ասէ. զԱստուածնկալ սուրբ Նշանն զոր զերեցեր յԵրուսաղէմէ, խնդիր արարեալ մեծաւ փութով այսրէն դարձուցես»: Յայնժամ երզուաւ նմա Խոռեամ և ասէ. «Հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի, ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և զտեալ զնա տայց բերել առ քեզ». և արար նմա հաւատարմութիւն յոյժ գրով, և կնքեալ աղիւ ըստ սովորութեանն իւրեանց երզումն, և խնդրեաց ի նմանէ զօր ինչ սակաւ յերեւելի մարդկանէ, յորս ինքն վստահն էր: Իսկ Խոռեմայ առեալ զզօրսն երթեալ ի թագաւորանիստն, հրաման տուեալ ալոց ոմանց պսանին զտղայ թագաւորն զԱրտաշիր: Յայնժամ արձակեաց Հայրակղոս արս հաւատարիմս առ Խոռեմ վասն Աստուածնկալ սուրբ Խաչին. և նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով մինչև կարացին գտանել նովմբ կազմածաւ. և ետ յարսն որք եկեալ էին. նոքա առեալ զնացին փութանակի և ետ բերողացն Հայրակղոս ինչս բազումս և մեծարեալ արձակեաց պատուով: Եւ գումարեալ Հայրակղի զամենայն զօրս իւր յորդոր և խնդալից սրտիւ, բազմութեամբ զօրաց ել ընդ առաջ սուրբ Նշանին, ի պատիւ հրաշալի և երկնաւոր գանձուն. և տարեալ հասուցանէր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ ապա անտի ոչ սակաւ ինչ լինէր յաւուր յայնմիկ ձայն լալոյ, հեղումն արտասուաց յահա-

զին բորբոքմանէ սրտից նոցա, և զուր խանդաղատանաց թագաւորին և իշխանացն և զօրացն ամենեցուն և բնակչաց քաղաքին. և ոչ ոք կարէր երգել զօրհնութիւն սաղմոսացն, և կամ լսել ի գթալից արտասուաց ժողովրդեանն միանգամայն և յայնչափ խնդութենէն: Եւ կարգեալ հաստատեաց Հայրակղոս զսուրբ Նշանն անդէն ի տեղւոջ ի սուրբ Գողգոթայ: Եւ բաշխեաց ամենայն եկեղեցեացն և աղքատաց քաղաքին օրհնութիւն և զինս խնկոց, և ինքն զնաց ի Միշագետս Ասորոց, զի կալեալ հաստատեսցէ ինքեան զքաղաքսն և զսահմանսն ամենայն որ առ Խոսրովու և առ Մուրկու հաստատեալ էր: Եւ եկաց սուրբ Խաչն Տերունական յԱստուածակերտ քաղաքին մինչև զմիսանգամ առածն Երուսաղէմի, որ յորդւոցն Իսմայէլի:

Եւ Խոռեմայ առեալ զթագաւորութիւնն յաւուր միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական, և հեծեալ յերիվար արքունի, և շրջէր ի մէջ ամենայն զօրացն իւրոց ցուցանել զինքն և քաջալերել զզօրսն. և յանկարծակի ի թիկանց կողմանէ յարձակեալ ի վերայ նորա արանց, հարեալ սատակեցին զնա: Ապա թագաւորեցուցին զԲորն զդուսարն Խոսրովայ որ էր կին նորին, որում Բամբիշն կոչէին. և կարգեցին հրամանատար ի դրանն զԽոռոխ Որմզզ, որ և սպանաւ ի Բամբշանէն որ կոչէին Բոր: Եւ կալաւ Բորն զթագաւորութիւնն ամս երկու և մեռաւ: Եւ յետ նորա ածին զԽոսրոյ զոմն տղայ մանուկ և նստուցին իւրեանց թագաւոր. և նա փութանակի վախճանեցաւ. ապա ոմանք թագաւորեցուցին զԱզարմիկ դուստր Խոսրովու. և զօրն Խոռեմայ թագաւորեցուցին զՈրմզզ ոմն ի Մծուին քաղաքի. և յայնմհետէ նուազեալ պատառեցաւ թագաւորութիւնն Պարսից: Յետ այսր ամենայնի Յազկերտ թագաւորեաց ի Տիսպովն, և ունէր զթագաւորութիւն երկիւղիւ. և ոչ հրամանատու այլ անձնապահ: Որ և ի սահասեալ՝ վախճան եղև թագաւորութեանն պարսից զոր յետ սակաւու միոյ ասացուր: Աստանօր և ի դէպ եյանէ մարգարէութիւնն Դանիէլի, տեսութիւն անհեղեղ պատկերին բազմախառն նիւթօքն ի վերայ խեցեղէն և երկաթեղէն ոտիցն:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Ե

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏԱՐՕՆԵՑԻՈՅ ԱՍՈՂԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ,  
Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ, 1885, էջ 84—99 եվ 111—117

Եւ ապա խորով՝ արքայն Պարսից զՍուրէն ոմն ազգական իւր, որում անուն էր Ճիհովր-Վշնասպ հանէ ի հազարապետութիւն Հայոց: Որ եկեալ կալաւ գերկիրս մեր յոյժ հարստահարելով զնախարարս Հայոց. զի շնայր ընդ կանայս ազատաց ոչ առնելով զայրն տէր կնոջ իւրոյ: Ընդ որ զայրացեալ Վարդանայ բղեշխի՝ որդոյ Վասակայ որ էր յազգէն Մամիկոնէից, սպասեալ դիպող ժամանակի՝ սուսերահար առնէր զՍուրէն մարզպան, եւ յերկիր կործանէր յամի քառաներորդի առաջներորդի թագաւորութեանն խորովու, որ է ամ եօթներորդ թագաւորութեան Յուստիանոսի՝ յամսեանն արեգի քսաներկուսն ամսոյն, որ է փետրուարի յաւուր երեքշաբաթուոյ: Եւ իշխանք Հայոց համօրէն ապստամբեալ ի Պարսից՝ ձեռն ետուն ի Յունականն՝ նոքօք ընդդէմ կալով սաստիկ մարտիւ: Իսկ Վարդանայ առեալ զընտանիս իւր և զայլ պալազատսն՝ փախստեայ անկանի յաշխարհն Յունաց ի թագաւորեալ քաղաքն Կոստանդնուպօլիս: Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին Յուստիանոսի որ զսուրբն Սոփիա շինեաց, և հաղորդի ընդ նմա օրինաց. և յիւր անունն անուանէ զաւագ դուռնն սուրբ Սոփիայ, որ մինչեւ ցայսօր կոչի դուռն Հայոց:

Եւ այս են ժամանակք մարտից, երկպառակութեանց, անթիւ սպանմանց, գերութեանց, առից, խռովից, կապանաց, նեղութեանց, պակասութեանց, խիստ սովու, սրոյ և մարդամահու, աւերելոյ աւանից, հրդեհից շինուածոց և ամենայն վնասուց բազում աշխարհաց յերկուց կողմանց հասանէր, մոռացեալ աստուածպաշտութիւն: Իսկ զկնի Տեառն Մովսիսի եկաց կաթողիկոս Հայոց տէր Աբրահամ ի գաւառէն Ռշտունեաց, ի գեղջէ Աղբաթանից հրամանաւ Սմբատայ Բագրատունուոյ որ էր մարզպան Հայոց ի խորովու հրամանէ: Այս Սմբատ երթեալ յաշխարհն Վրկանի պատերազմաւ, և գտեալ անդ ազգս գերեալս ի Հայոց և բնակեալ ի Քուրքաստան անապատին որ Սագաստան անուանի, մոռացեալ զլեզու և զդպրութիւն հայերէն: Զոր տեսեալ Սմբատայ, և ուրախացեալ յոյժ՝ երէց մի Հաբէլ անուն՝ վարդապետ նոցա կարգէ. յորմէ ուսեալ զդպրութիւն հայերէն՝ կան մինչեւ ցայսօր վիճակ սրբոյն Գրիգորի:

Իսկ հայրապետն Աբրահամ բազում ջանիւ հոգ տարեալ վասն Վրաց աշխարհին՝ ոչ կարաց դարձուցանել յուղղութիւն. ապա հատեալ աստուածային սրով նզովեաց ամենայն Հայոց միաբանութեամբ: Իսկ կայսրն Մարիկ զՅովհան ոմն նստուցանէ կաթողիկոս մասինն Յունաց: Եւ Աբրահամ նստէր ի Բուին: Եւ Աշոտ ոմն առաքեալ յարքայէն Պարսից խորովու և հարեալ զՅոյնն՝ էառ զկթոիճ՝ քաղաք Հաշտենից, նոյնպէս և զքաղաքն Կարնոյ. և գերեաց զՅովհան կաթողիկոս ամենայն սպասուք եկեղեցւոյն և տարաւ ի Համատան Շահաստան. որ կալալ զաթոռն ամս 16: Այլ Աբրահամու կալեալ զաթոռն ամս 23՝ վախճանի: Իսկ յետ սուսերահարն լինելոյ Սուրենայ ոչ ևս պարսիկ մարզպան առա-

քէր ի Հայս թագաւորն պարսից. այլ ի խնդրոյ նախարարացն իշխան հաստատէ Հայոց գԴաւիթ Սահառունի, որ կալաւ զհազարապետութիւն Հայոց ամս 30 հրամանաւ Որմզդի՝ որդւոյ Խոսրովու՝ պարսից արքային: Ի սորա երկոտասան ամին երեւեցաւ Մահմետ՝ որդի Աբդլայի ի 68 թուականին: Եւ սկիզբն լինի թագաւորութեան Իսմայելի յ72 թուականին: Եւ զկնի Տեառն Աբրահամու եկաց կաթողիկոս Հայոց Տէր Կոմիտաս ի գավառնէ Արագածոտնէ ի գեղջէ Աղցից՝ ամս 8: Սա շինեաց զհանգստարան սրբոյն Հոփսիմեայ գեղեցկադիր շինուածովք, քանզի խարխալեալ էր առաջին շինուածն սրբոյն Սահակայ: Եւ ի սորա ժամանակս փայլէր վարդապետութեամբ Յովհան Մայրազոմեցի որում զկաթողիկոսութիւնն հաւատացեալ էր Կոմիտաս: Սա գրեաց զերես դիրս. և զանուն իւր ոչ վերագրեաց ի նոսա վասն շքնդունելոյ ժողովրդեանն. անուն միոյն Խրատ վարուց, և անուն միւսոյն՝ Հաւատարմատար, և անուն միւսոյն՝ Նոյեմակ:

Եւ ապա Տէր Քրիստափոր ազատ յԱբրահամեան բարձէն յԱպահունեաց գաւառնէ՝ ամս 6: Զսա ընկեցին յաթոռոյն՝ զի խոռովութիւն առնէր ի մեջ իշխանացն. յետոյ և այլ ինչ պատճառ ասացին: Տէր Եզր ի Նգայ գաւառէ, ի գեղջէ Փառանժնակերտոյ՝ ամս 10: Սա հանդիպեալ Հերակլի ի Կարնոյ քաղաքի, ոչ տանելով ընդ իւր զՅովհան՝ փակակալ սրբոյն Գրիգորի, որ յայնմ ժամանակի կատարեալ էր աստուածային գրոց գիտութեամբ, այլ զոմն կիսակատար գիտութեամբ ընդ իւր առնուր: Եւ հասեալ ի ժողովն՝ խնդրե ի նմանէ Հերակլ ձեռնարկ հաւատոյ: Իսկ նոքա իբրև տգէտ գոլով աստուածային գրոց՝ խաբեալ խորամանկութեամբ Յունաց՝ նդովեալ զամենայն հերձուածողս բաց ի ժողովոյն Քաղկեդոնի, հաղորդեալ նոցա ըստ օրինաց՝ մեծապարգև փառօք դառնային, զԿողբ ժառանգեալ փոխան հաւատոյն: Որոյ ընդ առաջ ելեալ նմա ուխտ եկեղեցոյն. իսկ Յովհան ոչ ել. և մեղադրեալ Եզրի՝ ծանուցանէ նմա. որոյ ասացեալ «Քաւ լիցի ինձ հաղորդել այնմ որ քակեաց զցանկ հավատոյ»: Եւ ապա բռնութեամբ մուծեալ ի սենեակն՝ ասաց Եզր. «Զի՞ ընդվզեալ և խրոխտացեալ ոչ տեսանես զմեզ»: Եւ նա ասէ. «Խրոխտումն յիս ոչ գոյ. այլ ջատագով ճշմարտութեան կամիմ լինել. բայց դու յիրաւի կոչեցար՝ Եզր. զի յեզր հանեալ տրոհեցեր զՀայաստանեայս քակեալ զսահմանս հաւատոյ հարցն և խրամատեալ զառաքելական զցանկն՝ կործանեալ ի մարդադաւան տօմարն կեռնի»: Եւ զայս ասացեալ զնաց յերեսաց նորա անարգանօք: Եւ երթեալ քնակեցաւ ի Մայրոց վանս. ուստի հալածեալ զնա Եզրի կոչէ զտեղին Մայրազոմ, և զՅովհանն՝ Մայրազոմեցի: Իսկ նորա զնացեալ ի Գարդման՝ անդ կատարէ զկեանս իւր առաքելաջան հանդիսի: Զսմանէ համբաւի հերձուած մուծանել յեկեղեցի, որ ոչ է սորա. այլ ոմն Սարգիս անուն յաշակերտաց նորա արար զայն, զոր հալածեաց Յովհան յիւրմէ:

Իսկ զկնի Դաւթի Սահառունոյ եկաց իշխան Հայոց Թէոդորոս Ռշտունի ամս 25: Եւ զկնի Եզրի յաշորդէ զաթոռն Ներսէս՝ եպիսկոպոս Տայոց: Սա շինեաց զվկայարան սրբոյն Գրիգորի ի վերայ վիրապին յԱրտաշատ, և զմիւս ևս հրաշապայծառ եկեղեցին զսուրբ Գրիգոր Վաղարշապատու առապարին զանազան յօրինուածով:

Յայնմ ժամանակի ամիրապետն Տաճկաց ել ի Սին անապատէն զօրու ծանու, և անցեալ ընդ ծով ի հարաւակողմն յարևելս ի Սինդ, ի Պարս, ի Սագաստան և ի Սրման և ի Հնդիկս. և աւերեալ զերեաց բառնալով զամենայն թագաւորութիւնս ազգաց բաց ի Հոռմէացոցն: Զոր տեսեալ ապա Թէոդորոս Ռշտունեաց տեսանն, որ էր զորավար Հայոց և այլոց համախորհից ի բաց կացեալ

ի կայսերէ՝ հնազանդին Տաճկաց: Իսկ կայսրն Կոստանդին՝ թոռն Հերակլի մեծաւ ցասմամբ դիմէ ի Հայս, խրոխտայր ջնջել ի միջոյ: Որում ընդ յառաջ ելեալ Հայրապետն Ներսէս՝ համոզէր ի խաղաղութիւն. և ի միասին հասեալ ի Դուին քաղաք, հրամայէ կայսր հոռոմ երիցանց մատուցանել պատարագ յեկեղեցիսն. և ի միասին հաղորդեցան օրինաց կայսրն և կաթողիկոսն: Յորմէ գայթակրղեցան բազումք զի ութ օր ի խորհրդի եկաց կայսրն ըստ սովորութեան: Եւ ի ժամ ճաշուն արհամարեալ լինէին ազատքն Հայոց առաջի նորա:

Իսկ կայսրն գնացեալ ի Կոստանդնուպօլիս թողու ի զօրաց իւրոց վերակացու աշխարհիս Հայոց. և ապա վիշապն ապստամբ, ամենաշար դեն՝ աստուածամարտ գազանն ոչ լռէր յիւրոց խորամանկ խորհրդոց շարութենէ, այլ անքուն ակամբ երկնէր յանձն իւր յարուցանել հալածանս ի վերայ եկեղեցեացն Աստուծոյ որ ի Հայաստան աշխարհիս. քանզի յամս թագաւորութեան Կոստանդինի՝ որդոյ Կոստանդեայ թոռին Հերակլի, արկ նա ի գործ զբնիկ կախարդութեան իւրոյ զշարութիւն պղտորել զհավատս մանկանց եկեղեցոյ. և արբանեակըս իւր կալաւ զզօրան Յունաց որ ի Հայաստան աշխարհիս: Քանզի ոչ երբէք ընդունէին Հայք զՀոռոմն ի հաղորդութիւն մարմնոյ և արեան Տեառն:

Եւ արդ՝ գրեն նոքա ամբաստանութիւն ի Կոստանդնուպօլիս առ Կոստանդին թագաւորն և առ Հայրապետն թէ՝ իբրև զանօրէնս համարեալ եմք յաշխարհիս այսմիկ զի անարժանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովն Քաղկեդոնի և զտօմարն Լեւոնի, և նղովեն զնոսա և զամենեսին որք ըստ նոցա խորհին ի հաւատս: Յայնժամ հրաման ետ թագաւորն հայրապետան գրել ի Հայս հրովարտակ առ սրբասէր կաթողիկոսն Հայոց Ներսես և առ եպիսկոպոստնսն ամենայն և առ մեծն Թէոդորոս Ռշտունեաց տէր, որ էր իշխան աշխարհիս և զօրավար զօրացըն, և առ ամենայն իշխանս աշխարհիս զի միաբանութիւն հաւատոյ արասցեն ընդ Հոռոմոց, և մի խոտեցեն զժողովն զայն և զտօմարն. և եթէ գտցի որ յիշխանացն, որ ընդ դիմացի հրամանին, ի պատուոյն և յիշխանութենէն ի բաց ընկեցի. և զինչս նորա զամենայն յարքունիս կալցեն, և տարեալ զնա ի դրունս թագաւորաց՝ անդ արասցեն պատասխանի: Եւ էր անդ այր մի ի Բագրեանդ գաւառէ, ի Բագան գեղջէ, որ էր ուսեալ զարուեստ փիլիսոփայութեան, և էր անուն նորա Դաւիթ. զնա՝ հրամայեաց արձակել ի Հայս. զի երթեալ ի բաց հատցէ զհակառակութիւն և արասցէ միաբանութիւն:

Եւ ժողովեցան ամենայն եպիսկոպոստնք և ամենայն իշխանք աշխարհին ի Դուին քաղաքի առ քրիստոսասէր և ճշմարտապատում կաթողիկոսին Հայոց Ներսէս և առ բարեպաշտ իշխան աշխարհին և զօրավարն Հայոց Թէոդորոս Սահառունի պատրիկ, որ էր Ռշտունեաց տէր. և տեսին զհրաման թագաւորին, և լուան բանս ի փիլիսոփայէն, որ ուսուցանէր բաժանմամբ զերկուց բնութեանցն վարդապետութիւն ըստ ժողովոյն Քաղկեդոնի: Եւ իբրև լուան ոչ առին յանձն փոխել զճշմարիտ վարդապետութիւն սրբոյն Գրիգորի ըստ տօմարին Լեւոնի: Արդ հաճոյ թուեցաւ ամենեցուն առնել բանիցն պատասխանի և ցուցանել զհաստատութիւն հիմնադրութեան ճշմարիտ հաւատոյն իրեանց զոր ունէին և ի բուն վարդապետացն իրեանց: Զաղաղակ բարձեալ ամենեցուն ասէին թէ՛ «Լաւ լիցի մեզ մեռանել քան թէ՛ փոխանակել զվարդապետութիւն սրբոյն Գրիգորի ընդ ժողովոյն Քաղկեդոնի և տօմարին Լեւոնի, յոյս ճշմարիտ թուի մեզ ամենեցուն, իսկ որ զուղիղն կամիցին պարադիտել ճանապարհ, ասացեալն յառաքելոյն: Արդ աղաչեմ նախքան զամենայն առնել աղօթս, ինդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն ամենայն մարդկան, մանաւանդ վասն թագաւո-

րաց և ամենայն իշխանաց. զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր ամենայն աստուածապաշտութեամբ և սրբութեամբ:

Արդ թէպէտև անարժանութիւնս մեր յուրվագոյն է, բայց զհրամայեալսն՝ մեզ յոյժ փութամբ կատարել առնել աղօթս ի վերայ ամենայն մարդկան. բայց ևս առաել ի վերայ աստուածընկալ փառաց թագաւորութեանդ և ամենայն իշխանաց և զօրաց և բոլորովին իսկ աստուածապահ պալատանդ, յոր սէրն Աստուծոյ լիով հանգուցեալ է, և շնորհք աստուածային պարգևացն ամենեցուն իսկ յայտնի են ի վերայ ձեր, զի ահա թագաւորութիւն մեծ և հօրագոյն՝ քան զամենայն թագաւորութիւնս. որ ոչ մարդկային ձեռամբ. այլ աստուածային աշտին է պսակեալ, զոր ոչ ոք երբէք կարասցէ փոխանորդել, բայց միայն Քրիստոսի թագաւորութիւնն. քահանայապետութիւն սուրբ և ճշմարիտ՝ լի աստուածային շնորհիւ, նախարարք և զօրք քրիստոսասէրք, և բազմութիւն ամենայն ժողովրդոցդ՝ ժողովուրդ Քրիստոսի Աստուծոյ. և մեք պանծացեալ ի լոյս փառաց ձերոյ աստուածասէր թագաւորութեանդ՝ անշարժելի հաւատով կացեալ մնացաք ի մէջ դառնաշունչ և դժնդակ և անօրէն թագաւորացն Պարսից: Զի յորժամ բարձին զթագաւորութիւնն, կորուսին զամենայն նախարարս և զզօրս աշխարհիս, կոտորեցին սրով զարս և զկանայս, և ի գերութիւն վարեցին ըզբազմութիւն քաղաքաց և զհիւրից: Իսկ ի մնացելոցն վերայ սուր շողացուցեալ՝ բազում անգամ ջանացան դարձուցանել ի մոլորութիւն. բայց ոչ կարացին շարժել: Նաև ամաշեցին ևս անօրէնքն յունայնութեան իրեանց զի նշան քրիստոնէական հաւատոյ հօրագոյն է քան զամենայն թագաւորութիւնս հեթանոսաց. մինչև հրաման տալ անօրէն թագաւորացն Կապտայ, և յետ նորա որդւոյ նորին Խոսրովու թէ՛ իւրաքանչիւր ոք զիւր հաւատ կալցի. և յայսմհետէ մի ոք իշխեսցէ նեղել զՀայս. ամենեքեան մեր ծառայք են, մարմնով մեզ ծառայեսցեն. վասն հոգւոց, որ զհոգին դատէ՝ նա գիտէ և նոքա:

Ապա դարձեալ յաւուրս Խոսրովու՝ որդւոյ Որմզդի յետ գերութեանն Երուսաղէմի հրաման ետ արքայն Խոսրով ժողովիլ ամենայն եպիսկոպոսաց կողմանց արևելից և Ասորեստանեայց ի դուռն արքունի. «Լսեմ, ասէ, թէ երկու կողմանք են քրիստոնէից, և մին զմիւսն նզովէ վասն զի Համարին իրաւացի. արդ՝ միաբանութեամբ ամենեքեան ի մի վայր ժողովեցին»: Եւ ժողովեցան անդ ամենայն եպիսկոպոսունք և երիցունք և ամենայն հաւատացեալք կողմանցն այնոցիկ: Եւ կացոյց ի վերայ նոցա ոստիկանս զՍմբատ Բագրատունի՝ զանուանեալն Խոսրովշնում և զբժշկապետն արքունի: Էր անդ ի գերութեան և Զաքարիա՝ հայրապետն Երուսաղէմի և այլ իմաստասէրք բազումք զորս գերեալ էր յԱղեքսանդրացւոց քաղաքէն: Որոց հրաման ետ արքայ Խոսրով արդարութեամբ ի վերայ հասանել, և զուղիղն և զճշմարիտն ծանուցանել արքայի: Եւ ժողովեալ ամենեքեան ի դահլիճն արքունի՝ եղև վէճ և աղաղակ մեծ. քանզի ոմանք էին յուղղափառութեան՝ հաւատով և զրով և կնքով հին թագաւորացն միաւորեալք և միաբանեալք ընդ հաւատոյ աշխարհին Հայոց: Եւ ոմանք՝ նեստորականք և ոմանք Սեւերիտք և այլ բազմութիւն խառնիճաղանճ աղանդոյն: Նաև հրէապետն ևս իւրովք համազգեօքն յառաջ մատուցեալ՝ առնէր ամբաստանութիւն ըստ իրեանց բնիկ սովորութեանց: «Մի կողեսցի, ասեն, աստ այրն այն»: Եւ ծանուցին զբանս թագաւորին: Ասէ թագաւորն «Ո՞ր հրամանաւ եկն նա ի տեղին յայն. արդ՝ գանալից լիցի և գնացէ ի տեղի իւրոյ»: Նոյնպէս և զայլ աղանդոյն բազմութիւնն. բայց միայն զնիկիականն և զԿոստանդնուպոլսին և զԵփեսոսին և զՔաղկեդոնին հրամայեաց քննել:



Դիպեցան անդ ի ժամանակին յայնմիկ արք երկու՝ եպիսկոպոսք յաշխարհէն Հայոց, արք հաւատարիմք զորս վասն բռնութեան աշխարհիս էին արձակեալ զի ծանուցեն թագաւորին. Կոմիտաս՝ Մամիկոնէից եպիսկոպոս և Մատթէոս՝ Ամատունեաց. և ունէին ընդ ինքեանս պատրաստական զպատմութիւնս սրբոյն Գրիգորի և զայլ ևս վարդապետական պատմութիւնս: Եւ հրամայեաց հարցանել թագաւորն եթէ՝ յորոց թագաւորաց աւուրս եղեն ժողովքոյ այդոքիկ: Ասացին թէ՝ «Նիկիոյ ժողովն առ Կոստանդիանոսիւ եղել. Կոստանդնուպօլսին՝ առ մեծն Թէոդոսիւ. Եփեսոսին առ Թէոդոսիւ փոքու. Քաղկեդոնին՝ առ Մարկիանոսիւ»: Պատասխանի ետ թագաւորն և ասէ «Երից թագաւորաց հրամանքն ճշմարիտ լինել թուին քան զմիոյն»: Եւ ի վերայ հասեալ թագաւորին գրով վասն Նեստորի, թէ ո կամ ուստի կամ յորում ժողովի և թէ զինչ խոսեցաւ և որպէս եղև նմա և հրամայեաց զՆեստորականն հանել յատենէն արտաքս:

Նոյնպէս և վասն Քաղկեդոնի ժողովոյն եհարց եթէ ոչք էին զլիաւորք, և կամ զի իսկ եղև ժողովն այն. և ծանուցին նմա զամենայն: Եվ ասացին թէ ի Նիկիայն և ի Կոստանդնուպօլսին ինքեանք իսկ թագաւորն Կոստանդիանոս և Թէոդոս մեծն. իսկ յԵփեսոս Կիրեզ Աղեքսանդրացոյ եպիսկոպոսն և ի Քաղկեդոնի Թէոդորեոսոս ոմն եպիսկոպոս որ զՆեստորին խօսէր, և Աննա անուանեալ կաթողիկոս\* և այլ եպիսկոպոսունք և երիցունք բազումք ի նորին իշխանութենէ՝ յԱրուաստանէ, ի Խուստան կողմանէ և յայլոց աշխարհաց: Վասն որոյ հրաման ետ արքայ Խոսրով քանզել զամենեցուն նոցա զեկեղեցիս: «Թէ Քաղկեդոնին ընդունելի էր, ասէ, ապա թուղթս ընդէ՞ր ոչ տարաւ. և այն զիս ես ճշմարիտ գրեցի. այլ արտաքոյ է երից սուրբ ժողովոցն». և սրով սպանացեալ զամենեսեան զնոսս սատակել, եթէ ոչ ի բաց դարձցին ի մոլորութենէն և ելանիցեն յարքունական պողոտայն:

Իսկ որք զՔաղկեդոնին Իվերիոյ\*\* և Աղվանից կաթողիկոսն որ էր ի Փայտակարան, ի դրան արքունի, և այլք ոմանք եպիսկոպոսունք և երիցունք քաղաքաց որ ի Յունաց կողմանէ, և իշխանք որք եկեալ էին ի ծառայութիւն թագաւորին պարսից. որոց շփաբարն իսկ հրամայեաց տալ: Եւ ապա խնդրեալ նա յերկար ի տէրանց կողմանցն երկոցունց՝ զՆիկիայն որ առ Կոստանդիանոսիւ և զԿոստանդնուպօլսին որ առ մեծն Թէոդոսիւ, և զԵփեսոսին որ առ փոքր Թէոդոսիւ, և զՔաղկեդոնին որ առ Մարկիանոսիւ. և զամենայնք քննեալ և ի վերայ հասեալ՝ ասէ «Նոքա ընդէ՞ր ոչ ասացին երկուս բնութիւնս բաժանմամբ որպէս զբոսա. յայտ է եթէ և զմեզ պարտ է յերկուս բաժանել, երկուս ասել թագաւորութիւն և ոչ մի. զի եթէ զբնութիւն ոք քննէ, և ես յերկուց բնութեանց եմ՝ թէպէտ ի հօրէ և ի մօրէ, թէպէտ ի հօգուց և ի մարմնոյ: Բայց Աստուածութիւնն որ յամենայն տեղուոյ է՝ ինքն զինչ կամի զամենայն լինել և կամ առնել՝ ոչ կարէ, ապա Աստուածութիւնն զի՞նչ է»:

Ապա հրամայեաց հարցանել զԶաբարիա՝ հայրապետն Երուսաղէմի և զայլս բազումս զորս ածեալ էր յԱղեքսանդրացոց քաղաքէն՝ թէ որ իցէ ճշմարիտն, զարդարն ասացէք երգամբ: Եւ նոսս պատասխանի տուեալ ասեն. «Եթէ ոչ էաք խոտորնակի գնացեալ առաջի Աստուծոյ, և ոչ նա բարկութեամբ խոտորնակս գնացեալ էր ընդ մեզ: Բայց արդ երկուցեալ յԱստուծոյ՝ առաջի

\* «և Աննա անուանեալ կաթողիկոս»-ի փոխարեն «Սերնոսի Պատմութեան» մեջ պահանջուի է ճիշտ ձևը. «էր անդ Երան անուանեալ կաթողիկոս»:

\*\* Ձեռագրում ավելի ճիշտը՝ «Վիրոյ»:

ձեր զճշմարիտն ասեմք. հաւատ ճշմարիտ ասն է որ ի նիկիայն ասացաւ առ Երանեկեան Կոստանդիանոսիւ, և նմին միաբան են Կոստանդնուպօլսին և Եփեսոսին. և նոցին միաբան Հայոց հաւատն է ճշմարտութեամբ: Իսկ Քաղկեդոնի ասացեալն ոչ է միաբան նոցին, որպէս ձեր իսկ բարերարութիւնդ ծանեաւ: Եւ հրաման տուեալ թագաւորին խնդիր առնել ի գանձս արքայի: Եւ խնդրեալ գտին տետրեայս գրեալ ի վերայ հաւատոս ճշմարիտս ըստ միաբանութեան հաւատոյ աշխարհիս Հայոց, որ էր կնքեալ մատանեաւ Կավատայ արքայի և որդւոյ նորին Խոսրովու: Յորոյ վերայ հրաման ետ և արքայ Խոսրով եթէ ամենայն քրիստոնեայք որք ընդ իմով իշխանութեամբ են՝ զհաւատս Հայոց կալցին: Եւ որ միաբանէին ընդ Հայոց հաւատոյս ի կողմանս Ասորեստանի Կամկայէշով՝ մետրապօլիտ և այլ տասն եպիսկոպոսք, և նոցին միաբան աստուածասէր թագուհին Շիրին և քաջն Սմբատ և բժշկապետն մեծ: Իսկ զպատճէն ուղիղ խոստովանութեան արքայ Խոսրով հրամայեաց կնքեալ իւրով մատանեաւ, և տալ ի գանձն արքունի:

Իսկ արդ՝ զի եհան զմեզ Աստուած այժմ ի խաւարին իշխանութեանց, և արժանի արար ծառայութեան երկնաքաղաքացի թագաւորութեանդ, որչափ ևս առաւել քան զառաւել արժան է մեզ վայելել ի խաղաղութեան, որ և պարտիմք աղօթել և խնդրել ի Քրիստոսէ Աստուծոյ վասն բարեպաշտ և աստուածասէր թագաւորութեանդ հաստատուն և անշարժ կալոյ մնալոյ մինչեւ յաւիտեան իբրեւ զաւուրս երկնից ի վերայ երկրի»:

Իսկ յետ գնալոյ կայսեր երկուցեալ Ներսէս ի ցասմանէ իշխանացն՝ փախչի ի Տայս՝ ի բնիկ գաւառն իւր: Յետ վեց ամի, յորժամ վախճանեցաւ Թէոդորոս զօրավարն՝ դարձաւ ի Հայս: Յաւուրս յայտոսիկ և յիշխանութեան Թէոդորոսի Ռշտունւոյ, յ86 թուին եղև առաջին ելք ի Հայս Տաճկաց հրամանաւ Օմարայ Ամիրալմուսնոյ, որ էր երկրորդ ի Մահմետէ, և ի 95 ամի թուականութեան դարձեալ սաստիկ զօրու եկեալ Տաճկաց՝ առին զԴուին քաղաք, և եղև համար գերութեան 35.000. և ապա տիրեցին Հայոց, Վրաց և Աղվանից: Իսկ աշխարհս Հայոց ի բաց կացեալ ի Տաճկաց՝ հնազանդի կայսեր, և ի խնդրոյ Ներսիսի լինի Համազասպ հրամանատար Հայոց ի 104 թուականին: Զոր լուեալ ամիրապետին՝ զայրացեալ կոտորեաց զպատանդսն Հայոց ոպիս իբրև 777. և իսկոյն մեռանի ինքն յիւրոց զօրացն. և զօրն Իսմայէլի որ յնգիպտոս՝ միաբանեալ կայսեր՝ հաւատացին ի Քրիստոս և մկրտեցան 16.000:

Իսկ ի վախճանել Համազասպայ հայցէ Ներսէս նախարարօք հանդերձ յամիրապետէն զԳրիգոր Մամիկոնեան՝ եղբայր Համազասպայ, որ ի պատանդի իսկ էր առ նմա, կացուցանել իշխան Հայոց. և շինեաց զկաթողիկէն որ յԱրուճ: Իսկ Ներսիսի կացեալ ամս 10. յաջորդէ զաթոռն Անաստաս ի 120 թուին, որ էր սենեկապետ Ներսիսի, ի գաւառէն Մասեացոտնէ, ի գեղջէ Ակոուոյ, որ և զեկեղեցին Ակոուոյ վայելուչ շինեաց:

Թագաւորք Պարսից Սասանակաւք. անուաւք և ժամանակք հոցին

Արտաշիր ամս 40. Շապուհ՝ ամս 23. Ներսէս՝ ամս 14. Որմիզդ՝ ամս 3. Շապուհ՝ ամս 58. Արտաշիր՝ ամս 3. Վռամ որ և Կրման երկանոյն ամս 11.

\* «Սեբեոսի Պատմութիւնում» պահպանվել է ավելի ճիշտ ձևը. «Կամյիշով»:

Յազկերտ՝ ամս 20. Վոսմ՝ ամս 22. Յազկերտ Զախչախ՝ ամս 19. Պերոզ՝ ամս 27. Վաղարշ՝ ամս 4. Կավատ՝ ամս 11. Զամասպ՝ ամս 4. Կավատ՝ ամս 31. Խոսրով որ մկրտեցաւ՝ ամս 48: Սա ի ժամ մահուան իւրոյ ընկալաւ գերկնային շնորհս, հաւատաց ի Քրիստոս և մկրտեցաւ յԵրրորդութիւն սուրբ. և ի սենեկի իւրում ետ պատարագ մատուցանել և հաղորդեցաւ մարմնոյ և արեան Տեառն. Որմիզդ՝ ամս 12: Ի սորա ժամանակս էր Վահրամ ոմն Մեհհանդ՝ իշխան արևելից կողմանց աշխարհին պարսից, որ հարկանէր քաջութեամբ զգօրսն Քետալաց, և բռնութեամբ ունէր զԲահդ և զամենայն աշխարհն Քուշանաց մինչև յայնկոյս գետոյն մեծի որ կոչի Վեհոտ, և մինչև ցտեղին որ կոչի Կազբիուն: Այս Վահրամ պատերազմեալ ընդ արքային Մազթթաց՝ եհար զբազմութիւն զօրացն և սպան զթագաւորն յափշտակեաց զգանձս թագաւորութեան. և սուղ ինչ աւարամասն առաքեաց ի մեծամեծ գանձոցն թագաւորին Որմիզդի. և զայլսն զօրացն բաշխեաց:

Իսկ թագաւորն առեալ զայն ասէ ցասմամբ. «Ընթրիքն առաւել մեծագոյն, և զնշանն ի պատառոյս ծանեալ. յայնչափ մեծամեծ գանձուց զայս միա՞յն բերիք յարքունիս»: Եւ հրամայեաց փշտիպանացն երթալ ժողովել զգանձսն ի զօրացն: Ընդ որ զայրացեալ զօրացն սպանին զփշտիպանսն, և թագաւորեցուցին զՎահրամ. և միաբանութեամբ դիմեցին յԱսորեստան սպանանել զՈրմիզդ. զոր լուեալ Որմիզդի փախչել կամելով, և անցեալ ընդ գետն Դկլաթ ընդ գտնն ի Վեհկավատ: Այլ խորհուրդ արարեալ խորհին արանցն և համահարզացն և փշտիպանաց սպանին զՈրմիզդ. և նստուցին թագաւոր զԽոսրով՝ որդի նորին ի վերայ աշխարհին Պարսից: Եւ ոչ յետ բազում աւուրց Վահրամ ամենայն զօրօք եկն, եհաս փութանակի իբրեւ զխոյանալ արծուեաց. իսկ Խոսրով իւրայօքն փախստեայ անց ընդ գետն մեծ Դկլաթ. և Վահրամ հասեալ էառ գտուն և զգանձն արքունի, և նստաւ ի գահոյս թագաւորին...

Ապստամբեցին զօրք նորա ի Թիրակ, և կացուցին իւրեանց թագաւոր զՓոկաս. և եկեալ ի Կոստանդնուպօլիս սպանին զՄօրիկ և զորդիս նորա: Եւ լուեալ Խոսրովու՝ առ զբազմութիւն զօրաց իւրոց և ել ի կողմանս արեւմտից. և առ նախ՝ զԳարայ քաղաք. և ապա զԽոռեմ զօրավար որ Ռազմանն անուանի՝ զօրօք առաքէ ընդ Ասորիս, և զԱշդատ՝ ընդ սահմանս Հայոց: Որոյ եկեալ պատերազմեցաւ ընդ զօրսն Յունաց, որ ի Դու և ի յՈրդրու և փոխստեայ տանի մինչև ի Սատալայ, և առնու զքաղաքն Կարնոյ և գերէ զկաթողիկոսն Յովհան ամենայն սպասուք կաթողիկոսարանին. և ամենայն բնակչօք քաղաքին տանի յԱհմատան: Իսկ Խոռեմ անցեալ ընդ Ասորիս՝ հնազանդեցոյց զԱմիթ, զՈւռհայ և զԱնտիոք: Եւ Շահենայ՝ զօրավարի Պարսից, առեալ զքաղաքն Կեսարիա՝ եկաց ի նմա տարի մի:

Խոռեմայ անցեալ ի Պիսիդայ՝ առնու զՏարսոն քաղաք. և պաշարեալ զԵրուսաղէմ աւուրս 19, փորեաց զհիմն քաղաքին և առ զնա, և այրեցին զնա հրով և սատակեցին սրով 57.000, և գերեցին 35.000. և զԶաքարիա հայրապետն և զսուրբ խաչն փրկչական ամենայն սպասուքն ոսկով և արծաթով տարան ի դուռն արքունի: Իսկ թագաւորն զկալանաւորսն հրամայեաց ի քաղաքն դարձուցանել և շինել զքաղաքն և հալածել զՀրէայսն. և կացուցանել երիցապէտ քաղաքին զՄողեստոս որ ի Հայս թուղթ գրեաց:

Եւ յամի 29 թագաւորութեան Խոսրովու քակեաց Կոմիտաս զմատուռ սրբոյն Հոսիփսիմէի զշինեալն ի սրբոյն Սահակայ. և եգիտ անդ զմարմին սրբոյն

Հոփսսիմէի ինն թիզ և շորս մատն՝ կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի և սրբոյն Սահակայ, և իւրով ևս մատանեաւ կնքեալ՝ շինեաց գեկեղեցիս. և ի նոյն տեղին եղ զնշխարան: Եւ զՍուրբ կաթողիկէին փայտաշարգան վերացուցեալ՝ քարայարկ շինեաց. և էր Յովհան վանաց երէց:

Իսկ խոռեմ՝ զօրավարն Պարսից, որ գերեաց զԵրուսաղէմ, ամենայն զօրօքն ի Քաղկեդոն հասանէր. և մարտուցեալ նաւուք ընդ Կոստանդնուպօլիս, ի միում ատուր մեռանին ի պարսից զօրացն արք 4.000: Եւ ապա Հերակլէս թագաւորն զԿոստանդին՝ զորդի իւր թագաւորեցուցեալ ի Կոստանդնուպօլիս. ինքն ել ի Կեսարիա ժողովել զամենայն զօրս իւր 120.000. և դիմեաց ի վերայ արքային պարսից: Եւ եկն ի Կարնոյ քաղաք, և հասեալ ի Դուին ակերէ զնա, զնախճավան և զԳանձակ և զՀեղակ ի հիմանց բրէ. կործանէ և զբազինս հրատին մեծի որում Վնասան կոչէին: Յաւարի առեալ զաշխարհն Պարսից դառնայ ընդ Մարս. գայ, հրամայէ ի Փայտակարան յաշխարհն Կասպից, բանակի ի Տիգրանակերտ աւանի: Եւ զօրավարքն պարսից Շահր-Վարազ և Շահէն երկու բանակօք յառաջոյ և զկնի հասանեն Հերակլէսի: Եւ դարձաւ Հերակլէս ի թիկունս կոյս, հարկանէ զՇահէն 30.000-օքն: Եւ ինքն ընդ Մղուկս ի նախճավան թափի. և անցեալ ընդ գետն Երասի յաւանն Վրնշունիս՝ զնաց ի Բագրեւանդ. և անցեալ յԱպահունիս՝ բանակի ի գիւղ որ կոչի Խրճտօնք\*: Եւ Շահր-Վարազ այր ընտիր եղեալ՝ վեց հազարաւ նստի յԱրճէշ դարան գործեալ Հերակլէսի: Եւ հասանէ ի վերայ նոցա ի գիշերի, հուրք վառեալ զքաղաքն. և զելեալսն ի նմանէ սրով սատակեաց. և առեալ զօրն ամենայն զնաց ընդ Կեսարիա յԱմասիա հանգուցանել զզօրս իւր:

Եւ դարձեալ դառնայ զօրօքն ի Հայս, անցանէ ի Շիրակ, ընդ Կոզովիտ ճանապարհ կալեալ ի Հեր և Զարեւանդ գաւառ, դէպ ուղիղ ի Տիգրոն ի վերայ Խոսրովու. և անցեալ յայնկոյս լերինն Զարասպայ յերկիրն Ասորեստանեաց: Եւ անցեալ ընդ արևմուտս գնաց ի Նինուէ: Եւ Հերակլէս սաստիկ զօրութեամբ դարձաւ ի վերայ նոցա. և զօրքն պարսից ոչ գիտացին զդառնալն Հերակլէսի զի բալ ունէր զերեսս դաշտին, մինչև երթեալ խառնեցան ընդ միմեանս: Եւ օգնեաց Տէր Հերակլէսի յաւուր յայնմիկ. և պարսեցան զօրքն Պարսից առաջի նորա. սպանաւ և զօրավարն նոցա. և ասպատակս սփռեալ յաւարի առեալ զաշխարհն Պարսից:

Եւ ինքն կայսրն հասանէ ի դուռն Տիգրոն քաղաքի. և այրէ շուրջ զքաղաքան զամենայն թագաւորական ասպարանս. և դառնայ յԱտրպատական: Յայնժամ զօրն Պարսից և նախարարքն թագաւորեցուցին զԿավատ՝ որդի Խոսրովու, և սպանին զԽոսրով: Եւ Կավատ առաքեաց հրեշտակս պատարագօք առ կայսրն ի հաշտութիւն. և նա առաքեաց նոյնպէս. և խաղաղութիւն արարին ընդ միմեանս. և սահման նոյն հաստատեցաւ, ի մէջ Մօրկայ և Խոսրովու: Իսկ Կավատ կեցեալ ամիսս վեց վախճանի. և թագաւորէ Արտաշիր՝ որդի նորա, մանուկ տղայ: Իսկ կայսրն Հերակլէս գրէ առ Խոռեմ զօրավարն Պարսից, որ էր ի կողմանս Աղեքսանդրի. և կոչէ առ ինքն. և թագաւորեցուցանէ պարսից. և խնդրէ ի նմանէ զխաչն փրկչական, և առաքէ զկնի նորա արս հաւատարիմս սակաւ զօրօք: Եւ եկեալ Խոռեմայ սպան զմանուկն Արտաշիր: Եւ խնդիր արարեալ փրկչական խաչին՝ առաքեաց առ Հերակլէս, և նորա առեալ տարաւ յԵրուսաղէմ:

\* «Սեբեոսի Պատմութիւնում». Հրճմունք: Երկաթագիր Մ-ի և Տ-ի շփոթի հետևանքով Հրճմունք-ը դարձել Խրճտօնք:

Աստանոր դադարէ թագաւորութիւն պարսից յազգէն Սասանայ սկսեալ յերրորդ ամի Փիլիպպոսի՝ թագաւորի Հռոմայ, և դադարեալ ի 18 ամի Հերակլէսի յ77 թուականին, կալեալ ընդ ամենայն զթագաւորութիւն Պարսից ազգին Սասանեան ամս 386:

Յետոյ թագաւորեցին մի մի ամ բազում պատանիք, այլ և աղջկունք, աճսականօք, որ ոչ իսկ են արժանի յիշատակի. բայց անուանք նոցա են այսոքիկ: Յետ հռոմայ թագաւորէ Բորն՝ դուստր հոսորովու Եւ ապա Յազկերտ՝ որդի Կավատայ թոռն հոսորովու, որ թագաւորէ ի Տիգրոն:

Ընդհանուր թաղանթի շարքից մտնելով վախճանն հաւատայ ի Քրիստոս, և կոչեալ առ ինքն զԵրան կաթողիկոսն՝ զոր տէր Գիւտ էր ձեռնադրեալ հանդերձ այլօք եպիսկոպոսօք, ի գնալն իւրում առ Պերող արքայ՝ ուր յանդիմանեաց զմոլորութիւնն պարսից, ցանկալով մահու, մկրտեցաւ յԵրանայ և հաղորդեցաւ. և զկնի սակաւուց կատարեցաւ, և թաղեցին զնա քրիստոնեայքն յարքունական գերեզմանս: Եւ առ զթագ նորա որդի նորա Որմիզդ. որոյ նենգ գործեալ սպանին զնա յիւրում դահլիճի, և առնու զթագն որդի նորա Խոսրով. յորոյ վերայ յառնէ Վահրամ զուխ զօրացն, և առնց զնա փախստական: Եւ նա զնայ առ Մօրիկ կայսր, և գտեալ ի նմանէ օգնութիւն դառնայ և տիրէ հայրենեացն, և լինի երախտահատոյց, թողլով ի Մօրիկ զՄիշապետս, և ի Հայոց զաշխարհն՝ որ Տանուտերական գունդն կոչի. բաց յոստանէն Դնայ, և յերկուց գաւռացն՝ որ է Ոտն Մասեաց և կողմն Արագածու, թողու ի Մօրիկ ի լեռնէն որ կոչի Ընծաքիսար, մինչև ցԱռեստն աւան և ցՀացիւնս: Որ յանդգնեալ զեղեալ անուանսն յԱրայէն՝ փոխէ. զԱրմնին կաշեցեալ ի նմանէ որ է Առաջին Հայք՝ Երկրորդ Հայք զնա կոչէ, յորում մայրաքաղաքն Սևաստ. և զԿապոտկիա, յորում մայրաքաղաքն Կեսարիա՝ Երրորդ կոչէ Հայք, և առնէ զնա եպարքի. և և զՄելիտենի՝ որ ունի զհոմանուն զաւետն իւր, կոչէ զնա Առաջին Հայք. և զՊոնտոս, յորում մայրաքաղաքն Տրապիզոն, Մեծ մասն Հայոց կոչէ զնա. և զԶորրորդ Հայք, յորում մայրաքաղաքն Նփրկերտ որ ասեն Մուփարկին: Յուստիանուսիստ գրէ զնա ի դիւան արքունի. և զաշխարհն Կարնայ յորում քաղաքն Թէոփուպօլիս՝ Մեծ մասն Հայոց կոչէ. և որ ի Մեծ Հայոց մասն էր առ նոսա, ի կողմանց Բասենոյ մինչ ցսահմանս Ասորեստանի, Մեծ Հայք անուանէ. և զկողմանս Տայոց սահմանօքն իւրովք՝ Խորագոյն Հայք կոչէ. և զկողմն Դնայ՝ Ներքսագոյն Հայք կոչէ: Զայս անուանս գրէ ի դիւանի:

Յորում աւուր Սմբատ Բագրատունի քաջապէս խոնարհեցուցանէ ընդ ոտիւք Խոսրովու զամենայն թշնամիս նորա. և նորա պատուասիրեալ նմա տայ զըմարդպանութիւնն Վրկան աշխարհի, ուր երթեալ գտանէ ազգս Հայոց գերեալ, և բնակեալ ի Թուրքաստան անապատին մեծի՝ որ Սաղաստանն կոչի, մոռացեալ զլեզու և զդպրութիւն. որք տեսեալ զՍմբատ խրախ լինէին, և նորոգէին զլեզու և զգիր. և զերէց մի նոցա Հաբէլ անուն՝ տայ եպիսկոպոս ձեռնադրել մեծի հայրապետին Մովսիսի. հաստատէ զնոսա վիճակ սրբոյն Գրիգորի, և առեալ հրաման յարքայէ՝ գայ տեսանել զերկիր իւր: Եւ եկեալ ի Դուին՝ սկսաւ շինել զըփայտաշէն սուրբ Գրիգորն ի Վարդանայ սրբոյ. և պահնակ բերդին բողբոջ ի դուռն, թէ վնասակար է բերդիս. և ելանէ հրաման քակել զբերդն, և հեռագոյն շինել. և խնդացեալ Սմբատ փառս Քրիստոսի, շինէ զեկեղեցին կոփածոյ վիմօք, և տայ ձեռնադրել պատրիարք զտէր Աբրահամ զեպիսկոպոսն Ռշտունեաց, որ շատ ջանացեալ թղթով ի ձեռն Պետրոսի՝ ոչ կարաց դարձուցանել զԿիրիոն

յուզղափառութիւն. վասն որոյ արարեալ ժողով ի Դուին, անիծին զԿիրիոն հերեսիտեայ: Եւ Մօրիկ կացոյց յիւր կողմանն կաթողիկոս զՅոհան որ նստէր ի գեօղն Աւան, շինեալ անդ եկեղեցի, այր սուրբ, և ընտրեալ յամենեցունց:

ԼԲ. Յայնմ ժամանակի նախարարքն Մօրկայ սպանին զնա, և եղին թագաւոր զՓովկաս, որ և եկեալ ի Բասեն՝ ջանայր նուաճել զՀայս. և ընդ առաջ երթեալ Աշոտ, հարկանէ անշափ կոտորմամբ հրամանաւ իտարովու, և առնու զԿարնայ քաղաք, և փոխէ զբնակիչսն յԱհմատան, տարեալ զՅոհան կաթողիկոս զկնի, որ կայր ի գաղթի անդ, որ և անդէն վախճանեալ, բերաւ դին ի գեօղն Աւան, որ կալաւ զկաթողիկոսութիւնն ամս քսան և վեց. և սուրբ պատրիարզն Աբրահամ փոխի զկնի քսան և երեք ամի աթոռակալութեանն. և յաջորդէ զնա տէր Կոսիտաս, ի գեղջէ Աղցից:

Իսկ յիշխանաց կարգի զկնի Մեծեծայ պարսիկք կացին. նախ Դենշապուհ, որ զշնմոլութիւնսն շատացոյց, և յետ նորա Վարազդատ ոմն, և ապա Սուրէն ազգական իտարովու, որ շնայր ընդ կանայս իշխանացն, ընդ որ զայրացեալ Վարդանայ՝ որդույ Վասակայ Մամիկոնենոյ՝ սպան զնա, և առեալ զընտանիս իւր զնաց ի Կոստանդնուպօլիս: Բայց Հերակլ սպանեալ զՓովկաս, թագաւորեցուցանէ զորդի իւր, և ինքն խաղայ յարեւելս. և իտոնմ աւերէ զՅոյնս հրամանաւ իտարովու, քինախնդիր մահուանն Մօրկայ, և զերէ զԵրուսաղէմ և զփայտն փրկական, և զՋաքարիա պատրիարզն Երուսաղէմի: Յայնմ ժամանակի պատրիարզն Կոսիտաս ընդարձակէ զվկայարան սրբոց Հոփսիմեանցն, և պատահէ սուրբ նշխարաց նոցա. և լինի ոչ սակաւ մխիթարութիւն քրիստոնէից. և էր կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի, և սրբոյն Սահակայ, զոր ոչ իշխեաց բանալ, այլ և զիւրն եղ ի վերայ. և շափ հասակին Հոփսիմեայ՝ տասն թիզ և շորս մատն, և զսուրբն Գրիգոր ասեն՝ ինն թիզ, և զՏրտատ՝ մետասան թիզ:

ԼԳ. Առաքեաց Հերակլ դեսպանս պատարագօք առ իտարով խնդրել զխաղաղութիւն, որում ոչ ետ պատասխանի. և բարկացեալ Հերակլի, առնու ընդ իւր զեղբայր իւր զԹեոդորոս, երկիցս հարկանէ զզօրսն Պարսից առ Անտիոքաւ, և երթայ ընդ Հայս ի վերայ իտարովու, և զնա ոյժառեալ Կաւատայ որդույ առաջնոյ իտարովու, սպանանէ զիտարով, և խնդրեալ սէր ի Հերակլէ՝ թողու ի նա զՄիշազետս. և դառնայ Հերակլ և գայ ի Կարնոյ քաղաք: Յորում յաւուրս յաջորդեալ էր զսուրբ աթոռն Կոսիտասայ տէր Քրիստափոր, և հանեալ զնա զի առնէր խոտովութիւն ի մէջ իշխանացն, զնեն զԵզր Նիզացի, զոր կոչեաց թագաւորն ի Կարնոյ քաղաք, որ վասն տգիտութեանն իւրոյ քաղկեդոնիկ եղև, առեալ զԱղցք, և զերրորդ մասն Կողբայ զին հաւատոյն: Եւ ի դառնալ նորա կշտամբեաց զնա Յոհան վարդապետ կաթողիկոսարանին, ասելով. Յիրաւի Եզր կոչեցար, զի յեզր ելեր յուղղափառութենէ. և ինքն շոգաւ յԱղուանս, ի զլուխ Գարդման գաւառի, և ճգնեցաւ խիստ վարիւք: Սա գրեաց երիս գիրս, զանուն իւր շղնելով ի նոսա. զմինն կոչեաց իրատավարք, զմինն Հաւատարմատ, և զմինն Նոյեմակ: Էր սորա աշակերտ մի Սարգիս անուն, որ զՍաբելին ախտանայր. զոր հալածեալ մերժեաց յինքենէ: Յաւուրս յայտոսիկ մեռանի Կաւատ արքայ, և թագաւորէ տղայ որդի նորա Արտաշիր. և լուեալ Հերակլ, յորդորէ զիտոնմ՝ առնով զթագն, սպանանելով զտղայն: Չոր և արար իսկ. և ետ զխաչն սուրբ ի Հերակլ: Եւ սպանեալ զօրացն զիտոնմ՝ տան զթագն ի Բորն դուատր իտարովու, և զկնի նորա ի Զամրիկ քոյր նորա. և յետ նորա, զՈրմիզդ թոռն իտարովու, զոր խեղդամահ արարին, և եղին զՅազկերտ թոռն իտարովու:

Իսկ Հերակլ զխաչն տարեալ յԵրուսաղէմ, կանգնէ ի տեղուշ իւրում. յորում

ժամանակի կարգէ զօրավար Հայոց զՄեծեծ, զոր սպանեալ Դաւիթ Սահառունի, ինքն լինի իշխան հրամանաւ Հերակլի. զամս երեք, որ շինեաց զեկեղեցին Մրենոյ. և ապա անարգեալ յիշխանացն հալածեցաւ. և անկաւ շփոթ մեծ ի Հայս, զմիմեամբք ելանելով. յորում աւուրս ընդարձակեաց Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ. և տէր Քրիստափոր շինեաց միայնարան ի յՈտն Մասեաց, և առաքինանայր բազում ջանացող աղօթիւք, երեքհարիւր խարազնազգեստ արամբք: Յորում աւուր ժողովեալ յԵդեսիա երկոտասան հազար Հրեայ՝ ապրատամբեցին ի Հերակլեայ, և նա երթեալ պաշարեաց զՈւռհա, և առ զնա և արձակեաց զՀրեայն կենդանի, յո և կամիցին երթիցեն, ոչ լսելով Թէոդորոսի եղբօրն՝ որ կամեցաւ սատակել զնոսա: Եւ զնացեալ անտի ընդ անապատ ռզան ի Տաճկաստան առ որդիսն Իսմայելի, որպէս առ ազգայինս և կոչէին յօգնութիւն. և կէսք ախորժէին, և ոմանք ոչ, վասն այլ և այլ աղանդոյ նոցա, որպէս երբեմն Եգիպտացւոցն, ըստ զանազան պաշտամանց նոցա:

Լ՛ի. Յայնժամ ապա այր մի յորդուցն Իսմայելի, որում անուն էր Մահմաթ Թանգար, որ էր ծնեալ ի քաղաքին Մադինա, մերձ ի Մաքա երկօրեայ ճանապարհաւ, յազգէն՝ որ կոչի Կորէշ, որդի Աբդլայ, որ մեռաւ որք թողեալ զնա. որ և յարեցաւ ի վաճառական մի, և եղև ի տան նորա յառաջադէմ, մեռաւ վաճառականն և տիրացաւ տան տեառն իւրոյ, առեալ զկին նորա. և երթայր ուղտօք յԵգիպտոս, և պատահեաց նմա միայնակեաց մի Սարգիս անուն յաղանդոյն Արիոսի և Կերինթոսի, որ և ուսոյց նմա ի հին մատենիցին զԱստուած, և զգիրս տղայութեան Տեառն մերոյ. և ի դառնալն ի տուն քարոզեաց զոր լուան. և հալածեցին զնա ազգն իւր. և եկն յանապատն Փառանու. և յորժամ եկին երկոտասան հազար Հրեայքն, առեալ պատճառս ի նոցանէ, քարոզեաց որդուցն Իսմայելի զԱստուածն Աբրահամու, և եղև երաշխաւոր նոցա, որ թէ պաշտեն զնա՝ ժառանգեն զերկիրն զոր ետ Աստուած Աբրահամու:

Եւ լուան նմա, և ժողովեցան յԵւրայ յինչև ցՍուր, որ է հանդէպ Եգիպտոսի, և զերկոտասան հազարսն ըստ ցեղիցն Իսրայելի երկոտասանից նահապետացն, հազար հազար արկին յինքեանս, և եղեն երկոտասան բաժին, ազգապետ զնելով ինքեանց, յորոց անուն կոչեցան իսկ՝ Նաբէովթ, Կեդար, Աբդլա, Մարսամ, Մասմա, Իդումա, Մասէ, Քողղադ, Թեման, Յետուր, Նաբէս, Կեդմա: Եւ զնացին բանակս բանակս յանապատէն Փառանու ցՌաբովթ Մովաբու, և անցին յայնկոյս Յորդանանու ի վիճակն Ռուբինի: Եւ զօրն Յունաց էր յԱրաբիահարին զնոսա, և փախեաւ Թեոդորոս եղբայր կայսերն մաղապուրծ: Եւ զարձան ինքեանք յԱրաբիա, բնակեցան ըստ ցեղից ցեղից, և ժողովեցան առնոսա ամենայն մնացեալք յորդուցն Իսրայելի, և եղեն զօր մեծ: Եւ յղեն բանս առ կայսր, թողու զերկիրն զոր ետ Աստուած Աբրահամու. և արար նոցա ընդդէմ պատասխանի, և գումարեաց զօրս եօթանասուն հազար ի ձեռն ներքինոյ մի հաւատարմի, և պատուիրեաց երթալ յԱրաբիա ի վերայ Իսմայելի, ուր և սատակեցան իսկ և լցան մեծութեամբ բանակքն Մահմեդի:



## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Է

ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՅՆ ՀՌԻՓՍԻՄԵԱՅ՝

Հրապարակվում է ըստ 1220 թ. ընդօրինակված ՄՄ № 1912 ձեռագրի, էջ 175բ—178բ: Տողաակին տրված են 1456 թ. ընդօրինակված ՄՄ № 999 ձեռագրի տարբերեցվածքները

75բ Եւ եղև յամի<sup>2</sup> Քսաներորդի ութերորդի Ապրուէզ Խոսրովու քակեաց կաթողիկոսն Կոմիտաս<sup>3</sup> զմատուռն սրբոյն Հռիփսիմէի<sup>4</sup> Ի<sup>5</sup> Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած էր<sup>6</sup> եւ մթին շինուածն<sup>7</sup> որ շինեալ<sup>8</sup> էր Ի Սահակայ կաթողիկոսէն<sup>9</sup>: Արդ՝ մինչդեռ քակէին զորմն մատրանն հանդիպեալ<sup>10</sup> պատահեցան<sup>11</sup> զանձին<sup>12</sup> ծածկելոյ յազարակի ըստ տէրունեան<sup>13</sup> ձայնին, որ էր գանձ բոլորասէր, լուսաւորիչ, չքնաղագեղ<sup>14</sup>, արքունական մարգարտին, այսինքն կուսական մարմնոյն, սրբոյ տիկնոջն Հռիփսիմեայ:

Եւ քանզի անդամ անդամ յաւշեցին զնա յաղեալ Ի միմեանս զյաւշուած անդամոցն մեծի ճարտարապետին, երանելոյ քահանայապետի սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի<sup>15</sup>: Եւ կայր գլուխն հերովն հանդերձ Ի վերայ պարանոցին իւրոյ պնդեալ են եղեալ<sup>16</sup>: Նոյնպէս եւ զբազուկսն ուսովքն հանդերձ, եւ զբարձսն, եւ բոլորովին իսկ զամենայն փորոտին 176բ Ի ներքոյ կողիցն ամփոփեալ, եւ յար/մարեալ զամենայն անդամսն զաղուածացն<sup>17</sup> ըստ կարգի իւրում և վար արկեալ զամենայն<sup>18</sup> վերուստ Ի վայր շուանաւք:

Եւ կային թաթք ձեռացն եւ մատունքն<sup>19</sup> Ի վերայ լանջացն զարէն մեռելոյ: Նոյնպէս եւ ծունկք սրբոյն եւ ոտքն եւ մատունք ոտիցն եւ զամենայն մարմինն երիզապատեալ<sup>20</sup> կտաւաւք հանդերձ նորուն պատառոտուն հանդերձին<sup>21</sup> վար արկեալ վերուստ մինչ<sup>22</sup> Ի վայր, եւ կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի եւ մատանեաւ երանելոյն սրբոյն Սահակայ կաթողիկոսի, զոր ոչ համարձակեցաւ սայ բանալ, այլ կնքեաց իւրով եւս 177ա մատենեաւ: Արժանի իսկ եւ Ի դէպ էր կնքեալ<sup>23</sup> զայսպիսի<sup>24</sup> // մարգարիտ, որ ոչ ծովածին, այլ մարգարիտ ծնեալ Ի թագաւորական երանաց, անեալ Ի գիրկս սրբութեան եւ նուիրեալ Աստուծոյ:

Ով մարգարիտ, որ ոչ Ի թագս թագաւորաց երկրի յարինեալ փայլես, այլ Ի բոլորս փայլակնացայտ պսակին Աստուծոյ, կազմեալ յարինիս նմա:

1 Յաղագս գիտի նշխարաց սրբոյն Հռիփսիմեայ կուսին 2 յամին 3 տէր Կոմիտաս փիւ. Կոմիտաս 4 Հռիփսիմեայ 5 որ Ի 6 նստուկ էր փիւ. ցած էր 7 շինուածք 8 շինեալն էր 9 կաթողիկոսէ 10 չիք հանդիպեալ 11 պատահեցին 12 զանձի 13 տրունեան 14 չքնաղագիւտ 15 չիք մերոյ Լուսաւորչի 16 եղեալ և պնդեալ 17 չիք զաւրուածացն 18 վայր առեալ զամենայն փիւ. վար արկեալ զամենայն 19 մատունք 20 երիզապնդեալ 21 հանդերձիւ 22 մինչեւ 23 կնքել 24 զայնպիսի

Ո՞ր<sup>25</sup> մարգարիտ, զոր ոչ արժեն տիեզերք ամենայն, եւ ոչ բովանդակին ի գինս քո ամենայն գանձք թագաւորաց:

Ո՞ր<sup>26</sup> մարգարիտ, որ առաւել եւս պատուականագոյն, քան զամենայն ականս պատուականս, որ ի հնդկային աշխարհին, իբրեւ<sup>27</sup> զկաւ համարեալ<sup>12</sup> առաջի քո, տպագիրոնն եթեովպացի<sup>28</sup>:

177բ Ո՞ր<sup>29</sup> մարգարիտ պատուական, որ առաւել զե//ղեցկագոյն քան զվարսագեղ Արաւսեակն<sup>30</sup> ծագեալ պայծառանայ<sup>31</sup> յերկրի, հանդերձ բազմութեան դասուց<sup>32</sup> առաւաւտին աստեղացն<sup>33</sup>:

Ո՞ր<sup>34</sup> մարգարիտ, զարէն<sup>35</sup> բազմութեան<sup>36</sup> եզրպտական ցորենոյն յըշտեմարանս ամբարեալ, կերակրես ի ժամանակի սովոյս այսորիկ զերկիր<sup>37</sup> Թորգոմայ<sup>38</sup>, տախտակ<sup>39</sup> լուսեղէն նկարեալ մատամբն Աստուծոյ և եղեալ ի տախտակի<sup>40</sup> սրբութեան, որում փափագէին տեսանել զքեզ արդարքն<sup>41</sup>, և խանդակաթ էր ի սէր քո երանելին Կոմիտաս:

178ա Եւ շափ հասակի երանելոյն Հոփսիմեայ<sup>42</sup> էր ինն թիզ և շորս մատուս: Եւ ամենայն երկիր կողմանցն // հիւսւային (sic!) զղորդեալ գային յերկրպագութիւն<sup>43</sup>: Եւ բազում ախտաժետաց բժշկութիւնք լինէին:

Շինեաց զեկեղեցին են զերանելին եթող ի բացեայ վասն խոնարութեան<sup>44</sup> որմոյն, մինչեւ ցցամաքել կրոյն, առ վայր մի գայն պատեհագոյն համարեալ: Եւ ապա ամփոփեալ<sup>45</sup> ժողովեաց ի կայանս իւր, փառաւորելով<sup>46</sup> զհայր և զորդի եւ զսուրբ հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտենից, ամէն:

25 ով փխ. n 26 ով փխ. n 27 եւ իբրև 12 համարեալ է 28 եթովպացուց 29 ով փխ. n 30 Արուսեակն 31 պայծառանա 32 դասուցն 33 աստեղաց 34 ով փխ. n 35 որ զարէն փխ. զարէն 36 բազմութեանց 37 զերկիրս 38 Թորգոմայ 39 տախտակ 40 ի տապանակի 41 արդարք 42 երանեալ կուսին փխ. երանելոյն Հոփսիմեայ 43 յերկրպագութիւն 44 զիշտութեան 45 անփոփեալ 46 փառաւորելով բառից հետո հաջորդող բառերի փոխուելն Ն 999 ձեռագիրն ունի զամենասուրբ զերրորդութիւնն յաւիտեանս յաւիտենից:

Ապա հաջորդում է Հոփսիմեին նվիրված հետևյալ ոտանավորը, գրված Մաաթէոս գրչի կողմից.

Ով սրբազան կոյս պանծալի,  
Գովեալզ ի մէջ հանուրց ազգի,  
Բարեխաւսեա տեսոն Յիսուսի  
Թողուլ զմեզս Մաթէոսի:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ը

### «ՀԵՐԱԿԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՈՒՄՆԵՐԸ

Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի № 7729 և № 993 ձեռագրերում պահպանվել են «Հերակլի պատմությունից» ծաղկաքաղ արված երկու հատվածներ: Սրանք քաղված են տարբեր ժամանակներում, տարբեր անձանց կողմից: № 7729 ձեռագրում ընդօրինակված հնագույն հատվածն սկզբում չունի մի փոքրիկ կտոր, որը «Հերակլի պատմությունից» ընդօրինակել է № 993 ձեռագրի գրիչը: Հնագույնը ծավալով պակասավոր է նաև վերջին մասերում, բայց դա արդյունք է ձեռագրից թերթ ընկած լինելու: № 7729 ձեռագիրն ընդօրինակված է 1200—1202 թթ. ընթացքում: Նրանում ընդօրինակված հատվածի խորագիրն է «Ի Պատմութենէ Հերակղի»: Այն սկզբնապես ընդօրինակված է եղել, ինչպես երևում է, Սողոմոն Մաքենացու՝ 727 թ. կազմած Տոնականի կազմում<sup>1</sup>: Նրա կորած շարունակության մասին կարելի է գաղափար կազմել 1456 թ. ընդօրինակված № 993 ձեռագրում պահպանված հատվածից, որը ծաղկաքաղ է արված ավելի ուշ ժամանակներում և արդեն հայտնի է մասնագետներին<sup>2</sup>: Ստորև հրատարակվող այդ հատվածները գալիս են հաստատելու 1724 թ. կազմված և «Պատմագիրք Հայոց» կոչվող մատենագիտական ցանկի տեղեկությունն այն մասին, որ «Հերակլի պատմության» հիմնական բովանդակությունը եղել է Հերակլի և Խոսրովի միջև մղված պատերազմների պատմությունը: Նշված ցանկում «Հերակլի պատմությունը» գրանցված է այսպես. «Հերակլ յնվսեբիոսէ ասացեալ, որ ինչ սակս պատերազմացն Հերակլի և Խոստրովու (sic) և այլ բանք պիտանիք»<sup>3</sup>: Սրան հակառակ՝ «Սեբեոսի Պատմության» գլուխներից միայն չորսն են վերաբերում Հերակլի և Խոսրովի պատերազմներին:

Կորած «Պատմութիւն Հերակլի» երկից բառացի քաղված մի ամբողջ հատված (Սմբատ Բագրատունու մասին) գտնում ենք նաև Ուխտանեսի գրքում: Հատվածը քաղելիս Ուխտանեսը հայտնում է, որ օգտվել է «Պատմութիւն Հերակլի» կոչված երկից. «որպէս ցուցանէ քեզ Պատմութիւնն Հերակլի»<sup>4</sup>: Այս Պատմության հեղինակն իր հերթին հատվածը քաղած է եղել Սմբատի կենդանության օրոք գրված մի հիշատակարանից, որի հեղինակը Սմբատի մասին խոսում է որպես իր ժամանակակիցի մասին, ներկա ժամանակով («այժմ և յայժմու ժամանակս»): Քանի որ հատվածը «Հերակլի պատմությունից» մնացած հազվագյուտ քաղվածքներից է, բերենք ամբողջությամբ. «Նա է (Սըմ-

<sup>1</sup> Ա. Մաթևոսյանը գտնում է, որ № 7729 ձեռագրի «գաղափար շրինակը... անպայման սերում է Տոնականի՝ Մաքենացու խմբագրությունից»: Տե՛ս Ա. Մաթևոսյան: Երբ և որտեղ է գրվել Մշո Տոնական-ճառերտիրը («Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 141):

<sup>2</sup> Антиох Стратиг, Пленение Иерусалима, стр. 2—59.

<sup>3</sup> Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ LIV:

<sup>4</sup> Ուխտանես, Պատմութիւն Հայոց, հ. 2, էջ 56: Տե՛ս նաև մեր «Անանունի առեղծվածը», էջ 19 և «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 437—438:

բատր—Գ. Ս.) ի մերազնի, ի մերոց թագաւորացս, և ազգաւ Բագրատունի և սիրելի մեր որպէս բնիկ մերոց թագաւորաց արեանառու և հաւաստի. որ լեալ մարդպան Վրկան իշխանութեանն ի հրամանէ Ապրուէզ խոսրովու արքայից արքային Պարսից, յաշխարհակալութեանն Մուրկայ Յունաց թագաւորի, որ բազում պատերազմունս վանեալ և վատնեալ ի Հայս, ի Յոյնս և ի Պարսիկս, որպէս ցուցանէ քեզ Պատմութիւնն Հերակլի: Իսկ այժմ և յայժմու ժամանակս հեղ և հնազանդ հարցն հաւատոյ և հաւան և հպատակ ուղղափառ հաւատոյ սուրբ հարցն և վարդապետացն, և կարի պէտ և կարեկից ամենայն կարոտելոց և զօրավիգ և օգնական Հայաստանեայցս, զօրացեալ յԱստուծոյ և զօրացեալ Աստուծով: Որ և յայնմ նուագի և յանիշխանութեան Հայոց ելից զթերութիւն թագաւորի և զպակասութիւն հայրապետի»<sup>5</sup>:

Այստեղ բացի մեր ընդգծած հինգ բառից, որ ընդմիջարկել է Ուխտանեսը, մնացած ամեն ինչ գրված է Սմբատի ժամանակակցի կողմից: Իսկ այդ ժամանակակիցը չէր կարող լինել ո՛չ Ուխտանեսը (որ պարել է Սմբատից հարչուրավոր տարիներ հետո), ո՛չ էլ «Պատմութիւն Հերակլի» երկի հեղինակն ինքը, որը նույնպես իր գիրքը գրել է Սմբատի մահից հետո<sup>6</sup>: Ժամանակակցի հիշատակարանը գրվել է Սմբատ Բագրատունու կյանքի վերջին տարիներին, երբ նա արդեն ավարտել էր մարզպանութիւնը Վրկան աշխարհում («լեալ մարդպան Վրկան իշխանութեանն»), երբ նա բազում պատերազմներ էր մղել «ի Հայս, ի Յոյնս և ի Պարսիկս» և երբ Մովսեսի մահից հետո Հայաստանում կաթողիկոսի բացակայութեան պայմաններում նա «ելից զթերութիւն թագաւորի և զպակասութիւն հայրապետի»: Այս ամենից հետո նա վայելում է մեծ հեղինակութիւն և շարունակում է այժմ էլ հավատարիմ մնալ հայրերի ավանդներին. «Այժմ և յայժմու ժամանակս հեղ և հնազանդ հարցն հաւատոյ»: Այժմ էլ նա կարեկիցն է բոլոր կարոտյալների և զօրավիգն է հայաստանցիների. «կարեկից ամենայն կարոտելոց և զօրավիգ և օգնական Հայաստանեայցս»:

Այս տեղեկութիւնները «Հերակլի պատմութիւնից» քաղելուց առաջ Ուխտանեսն ընթերցողին հայտնում է, որ Սմբատը եղել է «այր քաջ ի պատերազմունս, արի և առաքինի հօր և զօրաւոր յամենայնի ամենայն ուրեք»: Սրանից անմիջապէս հետո նա սկսում է «Հերակլի պատմութիւնից» բառացի արտագրել Սմբատի ժամանակակցի հիշատակարանը, բայց ընթերցողին չի հայտնում, որ կրկնում է ուրիշներին (կամ էլ հայտնել է, բայց մեզ հասած օրինակում չկա), որի հետևանքով ստեղծվել է այն տպավորութիւնը, թե ժամանակակցի խոսքերն էլ են իրենր<sup>7</sup>:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Ի դեպ՝ Ուխտանեսը Սմբատի մասին նախորդ էջերում սեփական խոսքերով պատմելիս որոշ գիտելիքներ արդեն քաղել էր ժամանակակցի հիշատակարանից, այդ իսկ պատճառով էլ մեր բերած հատվածում այդ գիտելիքները հանդիպում են երկրորդ անգամ: Դրանք են. «նա ընդր զպակասութիւն թագաւորի և հոգաբարձութեամբն իւրով յամենայնի...» (հ. 2, էջ 55) և «հաւատարիմ և հաստատուն ի հաւատս ուղղափառութեան» (էջ 17):

<sup>7</sup> Սմբատ Բագրատունին «մեռավ 617 թ.» (2. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1948, էջ 540): Իսկ Հերակլը թագավորել է 610—641 թթ.:

<sup>8</sup> Ուխտանեսը նաև ուրիշ ազբյուրներից արտագրութիւնները կատարում է երբեմն այնպէս, որ թվում է, թե խոսողն ինքն է (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 466): Ներկա դեպքում նա առիթ է տվել ենթադրելու, թե Սմբատ Բագրատունու հայկական ծագման մասին

Ժամանակակցի հիշատակարանում Սմբատին վերաբերող տեղեկությունները նկատելիորեն տարբերվում են «Սեբեոսի Պատմության» տեղեկություններից: Նախ «Սեբեոսի Պատմությունում» Սմբատ Բագրատունու հայկական ծագման մասին առհասարակ չի խոսվում, և երկրորդ՝ այստեղ Հերակլը պատերազմներ է մղում միայն Պարսից սահմաններում, իսկ հիշատակարանում՝ Հայաստանում, Հունաստանում և Պարսկաստանում:

«Հերակլի պատմությունից» մնացած բոլոր տեղեկությունները վերաբերում են Հերակլի և Խոսրովի ժամանակաշրջանին (խաչափայտի գերումն ու ազատումը, Սմբատ Բագրատունու վերջին տարիները) և հիմք են տալիս մտածելու, որ «Հերակլի պատմությունն» ընդգրկել է միայն Հերակլի թագավորած տարիներին ընթացած դեպքերի և նրանց մասնակիցների պատմությանը: Եվ քանի որ հեղինակը, ինչպես ասվեց, իր գիրքը շարադրած է եղել Հերակլի փառաբանության դիրքերից, հետագա մատենագիրները գերադասել են բյուզանդական կայսեր մասին տեղեկությունները քաղել «Սեբեոսի Պատմությունից», որի խորագիրը չիմանալով՝ չեն հիշատակել, իսկ «Պատմութիւն Հերակլի» խորագիրը և Սեբեոսի անունը հիշատակվել է միայն պատմիչների ընդհանուր ցանկերում, որպես գիտելիք:

Կորած «Հերակլի պատմության» հետ որոշ ընդհանրություններ գտնում ենք նաև Մովսես Կաղանկատվացու երկում: Դա երևում է № 7729 ձեռագրում (հ. Բ, էջ 538ա—բ) պահպանված «Ի Պատմութենէ Հերակղի» հատվածի և Կաղանկատվացու «Աղվանից պատմության» (էջ 146) համեմատությունից:

«Ի Պատմութենէ Հերակղի»

Մովսես Կաղանկատվացի

Ապա մտեալ (Խոռիանի զորքերը— Գ. Ա.) ի Սրբութիւնսն կենսատու Յարութեանն և առին զսպասս ցանկալի Յարութեանն, զոսկեղէն և զարծաթեղէն... յերլուզեալ մարգարտով: Առին և զպատուական փայտ խաչին Քրիստոսի... Եւ ապա հրաման ետ հրածիգ առնել զբաղաքն:

Սա (Խոռիանը—Գ. Ա.) էառ և հրծիգ արար զմեծ քաղաքն Երուսաղէմ, և ի գերութիւն վարեաց զփայտն կենաց, զխաչն... և զսպասս ամենայն սրբութեանց կողմանցն այնոցիկ զոսկալ և զարծաթոյ... ընդերլուզեալս մարգարտով...

Երուսաղեմը կողոպտելու, հրդեհելու և խաչափայտը գերելու մասին հայտնում են նաև մի շարք այլ աղբյուրներ («Սեբեոսի Պատմություն», Թովմա Արծրունի, Հովհաննես Գրասխանակերտցի, Ասողիկ, Վարդան Արևելցի և այլք), բայց միայն «Ի Պատմութենէ Հերակղի» հատվածում և Մովսես Կաղանկատվացու երկում է, որ միևնույն բառերով են ներկայացված միաժամանակ վեց մարամասնություններ: 1. հրդեհելը երկու դեպքում էլ կոչված է «հրծիգ (կամ հրածիգ) առնել», 2. խաչը կոչված է «փայտ խաչին», 3. կողոպտված իրերը

խոսողը իսկապես ինքն է (Պ. Անանյան, Սեբեոսի Պատմության գրքի մասին քանի մը լուսաբանություններ, էջ 122—123): Իրականում, սակայն, Ուխտանեսը Բագրատունիների ծագման մասին բաժանում է Մովսես Խորենացու կարծիքը, որի համաձայն Բագրատունիները ծագում են ոչ թե հայերից, այլ հրեաներից: Նա իր գրքում երեք անգամ (հ. Ա, էջ 36, 40) կրկնում է Խորենացուն (Տփղիս, 1913, էջ 68, 104—105, 110), հետևյալ ձևերով. «Ի սմանէ (հրեա Շամբատից—Գ. Ա.), ասէ պատմագիրն, լինել զազգ Բագրատունեաց, և հաւաստի է: «Ճախնոյն մերոյ որ ի Հրէից՝ Բագարատուն», «եւ զկոչեցեալն, որ ի Հրէից՝ Բագարատ»:

կոչված են «սպասք սրբութեանց»<sup>8</sup>, 4. «ոսկի և արծաթ» արտահայտությունը գործածված է ոչ թե Երուսաղեմի ընդհանուր հարստությունների, այլ միայն «սրբութեան սպասների» կապակցությամբ, 5. հայտնված է իրերի «մարգարիտներով ընդելուզված» լինելու մասին, 6. քաղաքն ավերող պարսից զորավարը կոչված է Խոռհան (և ոչ՝ «Խոռեամ» կամ «Խոռեմ»)։

Այս մանրամասնություններից մի քանիսին ծանոթ է նաև Սամվել Անեցին, որը գրում է. «Խոռիան... առ զԵրուսաղէմ... և զփայտ փրկական խաչին և զայլ սպասք Սրբութեան տարեալ եղ ի տան գանձուց Խոսրով թագաւորին»<sup>9</sup>։ Ընդգծված արտահայտություններից վերջինը Կաղանկատվացին շունի, բայց որ դա գտնվել է «Հերակլի պատմությունում», երևում է «Ի Պատմութենէ Հերակղի» հատվածում պահպանված հետևյալ արտահայտություններից. «Փայտ խաչին Քրիստոսի... եղ (Խոսրովը—Գ. Ա.) ...ի գանձատունն իւր»<sup>10</sup>։ Հավանաբար «Հերակլի պատմությունից» է բխում Անեցու նաև հետևյալ տեղեկությունը. «Սպանանէ Հերակլ զԽոսրով թագաւորն Պարսից»<sup>11</sup>։ Սա հիշեցնում է № 993 ձեռագրի (էջ 647ա) «Մանկունքն Հերակլայ զհետ մտեալ հատին զգլուխն Խոսրովու և բերին առաջի Հերակլի»։ Ծիշտ է, այստեղ սպանողը զինվորներն են, բայց քանի որ հրաման տվողը Հերակլն է՝ Անեցին և մյուսները («Կայսերաց գիրքը», «Ծիծառնեայ խաչ», Կիրակոս Գանձակեցի և այլն) գրել են «սպանանէ Հերակլ», այսինքն վարվել են այնպես, ինչպես Դրասխանակերտցին, որը գրում է «Կաւառ... սպանեալ... զԽոսրով» (այնինչ՝ Դրասխանակերտցու աղբյուրում Կավատը ոչ թե սպանողն է, այլ՝ հրամայողը. «Հրամայեաց Կաւատ արքայ և սպանին զնա»<sup>13</sup>)։

Կորած «Հերակլի պատմության» մասին ավելի ճշգրիտ գաղափար կարելի է կազմել «Ի Պատմութենէ Հերակղի» հատվածից (№ 7729), որը շնայած թերթի կորստյան պատճառով զրկվել է իր շարունակությունից, բայց պահպանված մասով ավելի մոտ է կանգնած բնագրին։ Դա երևում է նախ վերնագրից. «Ի Պատմութենէ Հերակղի»։ Սա համապատասխանում է Սեբեոսի երկի խորագիրը («Պատմութիւն Հերակղի») պահպանած մատենագիրների տեղեկություններին։ Սրա փոխարեն № 993 հատվածը կոչվում է «Ի Հերակլայ պատմութեանց», որը ենթագրում է ընդհանուրից շեղվող և անհաջող մի վերնագիր («Հերակլայ պատմութիւնք»)՝<sup>14</sup> և ցույց է տալիս, որ կազմված է ծաղկաքսոյ անողի կողմից։

<sup>8</sup> «Ի Պատմութենէ Հերակղի» հատվածում որոշակի նշված է, որ պարսիկները կողոպտել են Հարության տաճարի սպանները («զսպասս ցանկալի Յարութեանն»), իսկ Կաղանկատվացին գրում է «զսպասս ամենայն սրբութեանց կողմանցն այնոցիկ»։ Ինչպես երևում է «ցանկալի յարութեանն» արտահայտության մեջ գտնվող «յարութիւն» բառն այս դեպքում ընկալվել է որպես հասարակ անուն։

<sup>9</sup> Սամվել Անեցի, էջ 77։

<sup>10</sup> ՄՄ, ձ. № 7729, էջ 538բ, Հմմտ. «բացեալ գոռն գանձին էգիտ ի նմա զփրկական փայտ խաչին Քրիստոսի» «(История Анонимного повествователя», перевод с древнеармянского, предисловие и комментарии М. О. Дарбинян-Меликян, Ереван, 1971, стр. 61)».

<sup>11</sup> Սամվել Անեցի, էջ 79։

<sup>12</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Քիֆլիս, 1912, էջ 75։

<sup>13</sup> ՍեՊ, էջ 96։

<sup>14</sup> Հոգնակի թվով գործածված «պատմութեանց» բառը տպավորություն է ստեղծել, թե վերնագիրը մատնանշում է «Հերակլայ պատմութիւն» կոչված մի քանի երկեր, որոնցից իբր Օգտվել է № 993 հատվածի հեղինակը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 10, 467)։ Եթե նույնիսկ այդպես էլ լիներ, հատվածի զխալոր աղբյուրը մնում է դարձյալ «Պատմութիւն Հերակղի» երկը.

Մառը դեռևս 1909 թ. ցույց է տվել, որ № 993 հատվածը պետք է ստեղծված լինի IX—X դարերում, որովհետև կրում է այդ դարերում ապրած քաղկեդոնական հայերի մտածողության հետքեր<sup>15</sup>: Որպես ապացույց է բերվում այն փաստը, որ Հերակլը հատվածում կոչված է «սուրբ»: Սա համարվում է քաղկեդոնականության նշան, որովհետև հայ իրականության մեջ, ինչպես տեսանք, Հերակլի պաշտամունքը գոյություն չի ունեցել: № 7729 հատվածի շարունակության կորստյան պատճառով մենք չենք կարող ասել, թե «սուրբ» բառն արդյոք կորած մասում եղել է, թե ոչ, բայց պահպանված մասում հանդիպող մի տողի միջոցով կարելի է ցույց տալ, որ «Պատմութիւն Հերակլի» երկի նախնական բնագրում հեղինակը Հերակլի մասին արտահայտված է եղել ավելի դուսպ, քան գտնում ենք № 993 հատվածում:

№ 7729

Իսկ թագաւորն Հերակղ յանաջիմաց  
եղեալ կոչեաց իւր յօգնականութիւն  
զմեծ թագաւորն ճենաց զԽաքան»:

№ 993

Հերակլ աստուածաւէր թագաւորն  
Յունաց կոչէ իւր յաւգնականութիւն  
զթագաւորն ճենաց, զմեծ Խական»:

Ինչպես տեսնում ենք, № 7729-ի հատվածը Հերակլի անվան կողքին չունի «աստուածասեր» բառը, որն ավելացված է քաղկեդոնական ազդեցություն կրող № 993 հատվածում: Ուրեմն, հնարավոր է, որ «սուրբ» բառը նույնպես նախնական բնագրում չի եղել: Նույնը կարելի է ասել նաև № 993 հատվածում հիշատակվող Վրաց պողոտայի մասին, որը նույնպես Մառը դիտել է որպես քաղկեդոնականության նշան և որն անցնում էր քաղկեդոնական հայերով բնակեցված Տայքով<sup>16</sup>:

Ուրիշները քաղկեդոնականության հետքեր են տեսել № 993 հատվածի նաև այլ տողերում<sup>17</sup>: Իսկ ձեռագիրն արտագրող գրիչն ինքը, որ քաղկեդոնիկ չէ և ձեռագիրն ընդօրինակել է Սյունիքում (1456 թվականին), իր ընդօրինակած բնագիրը բոլորովին էլ չի դիտել որպես քաղկեդոնական հեղինակի գործ: Ընդհակառակը, նա հատվածին կից հիշատակարանում արձագանքել է այդ հեղինակին<sup>18</sup>:

որովհետև այդ երկից քաղված «ի Պատմութենէ Հերակլի» հատվածը (№ 7729) ամբողջությամբ համապատասխանում է № 993 հատվածին և բացահայտում իրենց ընդհանուր աղբյուրից բառացի արտագրված մի շարք տեղեր (տե՛ս ստորև): Այնպես որ նույնիսկ հոգնակի առումով վերծանման դեպքում № 993 հատվածը № 7729-ի հետ միասին գալիս է հաստատելու «Պատմութիւն Հերակլի» կորած երկի գոյությունը: Իսկ առհասարակ «պատմութեանց» բառը հոգնակի թվով գործածված լինելով հանդերձ, այս դեպքում արտահայտում է եզակիի իմաստ և մատնանշում է ընդամենը մեկ «Հերակլի պատմություն»: Հմմտ. «Թ Ագաթանգեղոյ պատմութեանցն» (Խորենացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 303), «որպէս ցուցանէ քեզ պատմութիւն սրբոց վարդանանց» (Թ. Արծրունի, Պատմութիւն Տանն Արծրունեաց, 1887, էջ 27), «որ է պատմութիւն Տարօնոյ» (Հ. Անաւայան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ LIV) և այլն:

<sup>15</sup> Антиох Стратиг, Пленение Иерусалима, էջ 60: Այստեղ Մառը գրում է. «Պատմութիւնը (№ 993-ի հատվածը—Գ. Ա.) կարող է մեզ ներկայացնել ատանձնահատուկ հետաքրքրություն որպես հայ մատենագրության քաղկեդոնական հոսանքի մեզ հասած հազվագյուտ հուշարձաններից մեկը»:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>17</sup> Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 466—468:

<sup>18</sup> № 993 ձեռագրում քաղվածքին հաջորդում է մի շարժած հիշատակարան, որով գրիչը դիմում է Աստվածածնի բարեխոսությանը («հայցմամբ մարտը քո ծնողին»): Սրանից երևում է, որ գրիչը ոչ միայն քաղվածքում քաղկեդոնականության հետքեր չի նկատել, այլև բաժանել է

Տարբերություններով հանդերձ երկու հատվածներն ունեն ընդհանուր աղ-  
բուրից եկող բառացի արտագրություններ, որոնք միաժամանակ զաղափար են  
տալիս կորած «Հերակլի պատմության» հեղինակի լեզվի և ոճի մասին: Բե-  
րենք մի քանիսը.

№ 7729

№ 993

...զի լցցի բանն որ ասէ, թէ յորժամ  
տեսանիցէ զԾրուաղէմ շուրջ պատե-  
ալ զարաւք՝ յայնժամ գիտասջիք թէ  
մերձեալ է աւր նորա:

...զի լցցի բանն, որ ասացաւն, թէ  
յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ  
զԾրուաղէմ զարաւք՝ գիտասջիք եթէ  
մերձ է աւէր նորա:

Այս շորրորդ բարկութիւն հասեալ ի  
վերայ Ծրուաղէմի. առաջին՝ նաբու-  
քոնդոնոսորեայն, երկրորդն՝ Անտիո-  
քայն, երրորդն՝ Վեսպիանոսին, իսկ  
չորրորդս այս ծանրագոյն է եւ շարա-  
գոյն. եւ եւս ողորմելի քան զառա-  
ջինսն...

Այս շորրորդ բարկութիւն էր հասեալ  
ի վերայ Ծրուաղէմի. առաջինն՝ նա-  
բուքոնդոնոսորայն, երկրորդն՝ Ան-  
տիոքայն, երրորդն՝ Վեսպիանոսին,  
իսկ չորրորդս՝ այս կարի ծանրագոյն  
և ողորմելի քան զառաջինսն...

Ապա եւ հրեայքն որ ի ներքս բնակե-  
ալ էին, ըստ սովորական ապստամ-  
բութեամբ հարց իրեանց յԱստուծոյ  
ի բանի լինեն թշնամեացն:

Իսկ հրեայքն որ ի նաւ բնակեալ էին  
ըստ սովորութեան ապստամբու-  
թեամբ հարցն ուր յաստուծոյ ի բանի  
եղեն թշնամեացն:

Եւ անկեալ դիակունքն՝ գեշ թռչնոց  
երկնից և մարմինք սրբոցն՝ գազա-  
նաց երկրի և սողնոց<sup>19</sup>, հեղեալ ա-  
րիւնն որպէս շուր շուրջ զԾրուաղէ-  
մաւ:

Քանզի արկին զդիակունս նոցա գեշ  
թռչնոց երկնից և զմարմինս նոցա  
գազանաց երկրի, հեղին զարիւնս  
նոցա որպէս շուր շուրջ զԾրուաղէ-  
մաւ:

Սրանք «Հերակլի պատմության» հեղինակի խոսքերն են, որոնք երկու  
քաղվածքում էլ արտագրված են մեծ հարադատությամբ: Արդ, եթե կորած  
գիրքը և արդի «Սեբեոսի Պատմությունը» լինեին միևնույն գրքերը, ինչպես որ  
ներկայացված է որոշ ձեռագրացուցակներում<sup>20</sup>, պետք է, որ մենք այսօր վերո-  
բերյալ արտագրությունների բնագրերը գտնեինք «Սեբեոսի Պատմությունում»:  
Իրականում, սակայն, այս Պատմությունում չկա ոչ մի նախադասություն, որը  
համապատասխաներ «Հերակլի պատմությունից» քաղված հատվածներին:

նրա հեղինակի հայացքները: Այդ հեղինակը Հերակլի հաղթանակների պատճառ է համարում  
Աստվածածնի բարեխոսությունը: Աստվածածինը հայ իրականության մեջ համարվել է Քրիստոսի  
առջև բարեխոսող սրբերից ամենաառաջինը. «Սուրբ Աստուածածինն և զամենայն սուրբս բարե-  
խոս արացուք», «ի բարեխոսութիւն փութացիր մեզ սուրբ Աստուածածին», «Աստուածածին և  
կոյս... բարեխոս խոստովանողացս» (ՆՃԲ, հ. Ա, էջ 443—449): Ձեռագրի գրիչն այս հոդի վրա  
է, որ արձագանքել է քաղվածքի հեղինակին:

<sup>19</sup> Սաղմոսներում (ՀԼ, 2) «սողնոց» բառը բացակայում է:  
<sup>20</sup> «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ», կազմեց  
Բ. Մարգիսյան, հ. 2, Վենետիկ, 1924, էջ 462: «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենա-  
դարանի», կազմեցին Օ. Եզանյանը, Ա. Զելթոնյանը, Փ. Անթարյանը, հ. 1, Երևան, 1970, էջ 599:  
«Հերակլի պատմությունից» քաղված հատվածների և «Սեբեոսի Պատմության» հարաբերու-  
թյունների մասին տե՛ս նաև «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 466—469:



Ընդհակառակը, գոյություն ունեն որոշակի նշաններ այն մասին, որ համեմատվող երկերի հեղինակները միմյանցից անկախ են<sup>21</sup>: Սույն տեսակետից առանձնապես հետաքրքիր է խոսրովի նամակը Հերակլին: Նամակի բովանդակությունը երկու աղբյուրներում բոլորովին տարբեր է: Նմանություն չենք գտնում նամակի նույնիսկ այն մասում, որտեղ նմանությունը անխուսափելի էր, այսինքն, որտեղ խոսրովն ինքն է իրեն մեծարում: «Սեբեոսի Պատմությունում» խոսրովն իրեն կոչում է «Աստուածոց պատուական և ամենայն երկրի տէր և թագաւոր և ծնունդ մեծի Արամազդայ», իսկ «Հերակլի պատմությունում» նա ասում է. «Ես՝ խոսրով նստեալ ի վերայ ամպոց և ընդ Աստուածս փառաւորեալ»<sup>22</sup>:

Տարբերությունը ոչ միայն բառապաշարի, այլ առավել ևս գաղափարների զանազանության մեջ է: «Սեբեոսի Պատմությունում» խոսրովը հանդես է գալիս որպես երկրային թագավոր: Նա չնայած իրեն կոչում է «ծնունդ մեծի Արամազդայ», և «աստուածոց պատուական», բայց իշխում է միայն երկրի վրա, հանդիսանում է միայն «ամենայն երկրի տէր և թագաւոր»: Սրան հակառակ, «Ի Պատմութենէ Հերակլի» հատվածում պարսից արքան իրեն ներկայացնում է որպես երկնքում նստած և աստվածների հետ հավասար փառաբանության արժանի աստված. «նստեալ ի վերայ ամպոց և ընդ աստուածս փառաւորեալ»:

Պարսկաստանում դեռևս խոսրովից հարյուրավոր տարիներ առաջ ծագել և մեր թվականության III դարում արդեն ձևավորվել էր երկնային թագավորի գաղափարը: Մեզ հասել են իրանական արվեստի մի շարք նմուշներ, որոնցում այս կամ այն արքան աստվածացվել և պատկերվել է երկնքում, տիեզերքի կենտրոնում<sup>23</sup>: Վրացական մատենագրության մեջ նույնպես պահպանվել է տեղեկություն խոսրովին ամպերի մեջ պատկերող մի հուշարձանի մասին. «Նա նստած է երկնքում, նրա շուրջը արևն է, լուսինը և աստղերը»<sup>24</sup>: Գրեթե նույն կերպ է պատկերված խոսրովը նաև այժմ Փարսիի Ազգային մատենադարանում պահվող «խոսրովի գավաթի» վրա<sup>25</sup>: Այսպիսով, «Ի Պատմութենէ Հերակլի» հատվածում գտնվող նամակում պարսից արքայի գործածած «Ես՝ խոսրով նստեալ ի վերայ ամպոց» արտահայտությունը բխում է երկնային թագավորի գաղափարից և վկայում է այդ գաղափարի վերաբերյալ հայ հեղինակի ունեցած գիտելիքի մասին: Նույն իրողության մասին վկայող փաստ է նաև այն, որ քննվող հատվածում խոսրովը Հերակլից պահանջում է անհապաղ գալ իր մոտ և պաշտել իրեն. «Մի յապաղեր գալ պաշտել զիս»: Պաշտելը դարձյալ երկնային թագավորի պահանջ է: Սրա փոխարեն, «Սեբեոսի Պատմության» մեջ հանդիպող նամակում խոսրովը հանդես է գալիս, ինչպես ասվեց, միայն որպես երկրային գործիչ: Այստեղ նա նույնիսկ պատրաստ է ներելու Հերակլին («զամենայն յանցանս թողում քեզ»), խոստանում է նրան երկրի վրա նվիրել

<sup>21</sup> «Սեբեոսի Պատմության» և «Պատմութիւն Հերակլի» երկի տարբերությունները բացահայտող մի շարք փաստեր տե՛ս նաև Պ. Անանյան, Սեբեոսի Պատմության գրքի մասին քանի մը լուսաբանություններ, Վենետիկ, 1972, էջ 28—29:

<sup>22</sup> «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 469:

<sup>23</sup> П. А. Лелеков, Искусство древней Руси в его связях с Востоком («Древнерусское искусство», 1975), стр. 60.

<sup>24</sup> «Сборник материалов описания местностей и племен Кавказа», т. XXVII, Тифлис, 1900, стр. 51.

<sup>25</sup> П. А. Лелеков, Искусство древней Руси, стр. 60.

ազարակներ, այգիներ, ձիթենիներ և սիրով նայել նրան: Նա իր հետ միասին միևնույն հողի վրա ապրելու հրավեր է ուղարկում ոչ միայն Հերակլին, այլև նրա ընտանիքին. «Ա՛ռ զկին քո և զորդիս և եկ այսր»:

Քանի որ և՛ «Սեբեոսի Պատմության» մեզ հետաքրքրող մասը, և՛ «Հերակլի պատմությունից» քաղված հատվածները երկուսն էլ վերաբերում են հիմնականում Երուսաղեմի գերմանն ու ազատմանը, բնական է, որ երկու երկերում էլ պետք է գտնենք միևնույն իրադարձությունների նկարագրությունը: Այդ իրադարձություններից են. պարսից զորավար Խոռհանը գրավում է «զամենայն երկիրն Ասորուց, և զմայրաքաղաքն մեծ՝ ՂԱնտիոք, առնոյր և զԿեսարիա և զամենայն քաղաքն Պաղեստինացոց... Եւ նստեալ շուրջնակի... պաշարեաց զնա (Երուսաղեմը—Գ. Ա.)»<sup>26</sup>: Հրեաներն ապստամբում են, Խոռհանը հրամայում է «առհասարակ սատակել զամենեսեան»: Պարսիկներն այրում են քաղաքը և խաչափայտը տանում են «առ թաղաւորն Խոսրով»<sup>27</sup>: Այս իրադարձությունների հիշատակությունը գտնում ենք ոչ միայն «Սեբեոսի Պատմությունում» և «Հերակլի պատմությունում», այլև նույն դեպքերին վերաբերող վերոհիշյալ (տե՛ս հավելված Ա) հունական գրվածքի վրացական և արաբական թարգմանություններում և այլուր: Իսկ մանրամասնությունների մեջ «Սեբեոսի Պատմության» և «Հերակլի պատմությունից» քաղված հատվածներն այնքան տարբեր են, որ, կրկնում ենք, վկայում են երկու հեղինակների միմյանցից անկախ լինելու մասին: Այս իրողությունը հաստատող փաստերից են նաև հետևյալները. «Սեբեոսի Պատմությունում» Խոսրովին սպանում են պարսիկները, իսկ «Հերակլի պատմությունում»՝ հույները, մի դեպքում պարսից արքա Արտաշիրին սպանում է Խոռհանը, մյուս դեպքում՝ արքան մահանում է բնական մահով, մի դեպքում Երուսաղեմը գրավում է բազմակի պաշարումներից հետո, մյուս դեպքում՝ միանգամից, մի դեպքում Դանիելի տեսիլը վերաբերում է արաբներին, մյուս դեպքում՝ պարսիկներին, մի դեպքում հայտնվում է Երուսաղեմում գերվածների և սպանվածների ընդհանուր գումարը, խոսվում է Զաքարիա հայրապետի գերեվարության, քաղաքի՝ պաշարման օրերի քանակի, պարիսպների հիմքերը փորելու և պատերը խորտակելու, Խոռհանին նվերներ մատուցելու և մի շարք այլ մանրամասնությունների մասին, որոնց անտեղյակ է «Հերակլի պատմության» հեղինակը, որն իր հերթին հայտնում է բազմաթիվ մանրամասնություններ, որոնք բացակայում են «Սեբեոսի Պատմությունում»:

Աղբյուրագիտական առումով կարևոր է պարսից զորավար Խոռհանի և Հերակլի միջև կայացած բանակցություններին վերաբերող տեղեկությունը «Ի Հերակլեոյ պատմությանց» հատվածում: Խոռհանը Հերակլից պահանջում է օգնական զորք, որպեսզի կովի պարսից արքայի դեմ և ինքը դառնա թագավոր: Հերակլը չի մերժում և Խոռհանին տրամադրում է «զաւրս և զաւրավարս չորս, որոց էին անուանքն այսոքիկ՝ Գէորգ, Դաւիթ, Վահան, Սմբատ և զՀայոց նախարարս»: Ինչպես տեսնում ենք, Հերակլը Խոռհանին տրամադրել է միայն հայկական զորքեր, չորս հայ զորավարների և հայ նախարարների ղեկավարությամբ: Սա «Հերակլի պատմության» հեղինակի հայ լինելու մասին վկայող բացահայտ փաստ է, որը միաժամանակ կրկին ու կրկին ակնհայտ է դարձնում «Պատմութիւն Հերակլի» կոչված երկի և «Սեբեոսի Պատմության» տարբերու-

<sup>26</sup> ՄՄ, ձեռ. 7729:

<sup>27</sup> Նույն տեղում:

թյան փաստը: «Սեբեոսի Պատմությունում» հոտոհանին տրամադրված հայկական գորքերի մասին ոչ մի խոսք չկա:

\*  
\*  
\*

Համառոտակի ներկայացնենք «Հերակլի պատմությունից» ծաղկաբաղարված հատվածները պարունակող ձեռագրերը:

1. Ձ. № 7729 (Մշո Տոնական-հաղըտիր):

1200—1202 թթ. ընդօրինակություն: Մագաղաթ: Երկաթագիր, Եռասյուն: Գրիչ՝ Վարդան քահանա Կարնեցի: Ստացող՝ Պատրոն Աստվածատուր Բաբերդցի: Ծաղկող՝ Ստեփաննոս: Երկու միմյանցից անշատված հատորներ: Առաջին հատորը՝ 325 թերթ, երկրորդը՝ 282 թերթ: Մեծություն՝ առաջին հատորը՝ 67,5×52×9,5, երկրորդ հատորը՝ 70×55,5×6,5: Տողերը՝ 45:

Ձեռագրի մեծ մասի ընդօրինակությունը (ընդօրինակող Ն. Սարգսյան, 1847 թ.) գտնվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում (ձ. № 228 կամ ԻԹ, հին № 653): Այս արտագրության նկարագրությունը տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Բ, հորինեց Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 478—482: Ձեռագրի ընդօրինակման ժամանակի և վայրի մասին տե՛ս Ա. Մաթևոսյանի հոդվածը («Բանբեր Մատենադարանի», № 9, 1969, էջ 137—161):

№ 7729 ձեռագրի հիշատակարանները և վեց մանրանկարների անգույն արտատպությունները տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս, հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (ե դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 699—726:

«Ի Պատմութենէ Հերակղի» հատվածը՝ էջ 538 (հ. Բ):

2. Ձ. № 993 («Հրաշափառ տոնական»):

1456 թ. ընդօրինակություն: Թուղթ: Բուրդգիր: Երկսյուն: Վայր՝ Վերին Նորավան: Գրիչ՝ Մատթեոս: Ստացող՝ Թադէոս և Ստեփաննոս եղբայրներ: Ծաղկող՝ Եսայի: 769 թերթ: Մեծություն՝ 34×25×5: Տողեր՝ 44:

«Ի Հերակլայ պատմութեանց» հատվածը՝ էջ 647 ա—648 բ:

Ձեռագրի մանրամասն բովանդակությունը տե՛ս Կարենեան ցուցակ (Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի սրբոյ Աթոռոյն էջմիածնի, Թիֆլիզ, 1863, էջ 102—126): Որոշ մանրամասնություններ տե՛ս նաև Антиох Стратит, Пленение Иерусалима, стр. 52—59. նաև՝ М. van Esbroek, U. Zanetti, La manuscrit 993. տպված՝ REA, NS, t. XII, 1977, p. 123—167:

1. «Ի ՊԱՏՄՈՒԹԵՆԷ ՀԵՐԱԿՂԻ»

Ի պատմութենէ Հերակղի, վասն աւերածոյն Երուսաղէմի, եւ տանելոյն ի գերութիւն զաւրբ փայտ խաչին (Քրիստոսի) ի Պարսիկս:

Յայնժամ զաւրավարն Պարսից, Խոռիան, կալեալ զամենայն երկիրն Ասորոց, եւ զմայրաքաղաքն մեծ, զԱնտիոք, առնոյր եւ զԿեսարիայ, եւ զամենայն քաղաքսն Պաղեստինացոց: Արդ հասեալ բարկութիւն ի վերին հրամանացն սուսերն պողովատիկն, որ անդ առ երկնիւքն բերէր. եւ աստ յերկիր հասանէր: Սկիզբն արարեալ բարկութեանն ի տանէ Տեառն հասանէր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ նստեալ շուրջանակի զաւրավարն Պարսից Խոռիան պաշարեաց զնա: Զի լցցի բանն որ ասէ, թէ յորժամ տեսանիցէ զԵրուսաղէմ շուրջ պատեալ զաւրաւբ, յայնժամ գիտասջիք թէ մերձեալ է ար նորա: Եւ պաշարեալ աւուրս բազումս առնոյր զքաղաքն:

Այս շորրորդ բարկութիւն հասեալ ի վերայ Երուսաղէմի: Առաջին նաբուքոդոնոսորեայն, երկրորդն Անտիոքայն, երրորդն Վեսպիանոսին, իսկ չորրորդս այս ծանրագոյն է եւ շարագոյն. եւ եւս ողորմելի քան զառաջինսն, ըստ արինակի շորրորդ մասին երկաթոյն, որ մանրէր եւ մալէր զամենեսեան, զորմէ ետես նաբուքոդոնոսոր. եւ ի տեսլեանն Դանիէլի շորրորդ գագանն, որ ուտէր, եւ մանրէր եւ մնացորդս առ ոտն կոտորէր: Սոյնպէս եւ այս շորրորդ թագաւորութիւն Պարսից ազգիս ըստ բանի հրեշտակին, որ խաւէր ընդ Դանիէլի մեծաւ զարութեամբ եկաց: Եւ յարեաւ ի վերայ թագաւորութեանն Յունաց. եւ արար ըստ կամս իւր: Արդ հասեալ վերին արքունեացն հրաման ոչ տայր թոյլ նոցա. իւրեանց կամաւ տալ զքաղաքն Երուսաղէմ ի ձեռն նոցա, այդ կոբի եղեալ զանձինս ի մահ մատնեցին սուրբքն ի վերայ կենսաբեր սուրբ նշանին Քրիստոսի: Եւ վասն այսորիկ զայրացեալ զաւրավարն Պարսից Խոռիան: Ոչ միայն վասն բազում աշխատութեանն, այլ վասն բազմից զաւրացն մեռանելոյ եւ բազմաց վէրս առելոյն: Իսկ յորժամ հասաւ վճիռ բարկութեանն Աստուծոյ եւ բռնութեամբ մտին ի քաղաքն, հրաման ետ զաւրաւարն Խոռիան զաւրացն սուր ի վերայ եղեալ քաղաքին, եւ առհասարակ սատակել զամենեսեան: Ապա եւ հրեայքն որ ի ներքս բնակեալ էին, ըստ սովորական ապստամբութեամբ հարց իւրեանց յԱստուծոյ ի բանի լինեն թշնամեացն: Եւ անդուստ ի քաղաքէն ձեռնատու լինեին նոցա: Եւ լցաւ բարկութիւնն ըստ հրամանի զաւրաւարին, սուր ի վերայ եղեալ կոտորեցին: Իսկ եթէ գերծեալ թաքուցեալ ոք լինէր յանարինացն ի ձեռաց հրէից ոչ կարէր ապրել: Եւ այսպէս զարթուցեալ սուր բարկութեան Աստուծոյ ի վերայ ամենայն բնակչացն Երուսաղէմի արբենայր ի սպանումն սրբոցն: Անդ լինէր լալումն եւ ողբումն եւ աշխարումն յոյժ: Կանացն ճշին, մանկանց, ոռոգումն յարեանն սպանանելոցն: Եւ անկեալ դիակունքն գեշ թռչնոց երկնից: Եւ մարմինք սրբոցն զազանաց երկրի եւ սողնոց: Հեղեալ արիւնն որպէս ջուր շուրջ զԵրուսաղէմաւ: Եւ լցաւ քաղաքն ի ծայր եւ ի ծայր, եւ ոչ ոք էր որ թաղէր: Ապա մտեալ ի սրբութիւնսն կենսատու Յարութեանն: Եւ առին զսպաս ցանկալի Յարութեանն, զոսկեղէն եւ զարծաթէղէնս, եւ զպսակ թագաւորացն եւ զանաւթ սպասուցն յելուգեալ մարգարտով: Առին եւ զպատուական փայտ խաչին Քրիստոսի: Եւ առեալ զայն ամենայն պահեին պատուով եւ զգուշութեամբ: Եւ ապա հրաման ետ հրաձիգ առնել ըզքաղաքն: Եւ այսպիսի կատարումն եկեալ բարկութեանն լքեալ մնայր քաղաքն Երուսաղէմ: Ապա առեալ զսպաս տանն եւ զպատուական փայտ խաչին Քրիստոսի եւ զամենայն սպաս տանն եկեղեցւոյն Երուսաղէմի եւ զսպաս եկեղեցեացն Պաղեստինեայ. եւ ետ տանել առ թագաւորն Խոսրով: Արդ իբրեւ հասեալ եղեւ պատուական խաչին Քրիստոսի մաւտ ի դուռն քաղաքի թագաւորութեանն, հրաման ետ թագաւորն զաւրացն իւրոց ընդառաջ ելանել ի պատիւ խաչին առ ի ցոյցս արութեան իւրոյ տէրութեանն: Եթե. «Այն ինչ ոչ էր եղեալ ի ժամանակի հարցն իմոց, այժմ եղեւ յաւուրս իմոյ տերութեանս»: Ոչ եթե ի կամաց ինչ լինէր, այլ հարկէ, զի եթէ կամայ եթէ ակամայ անունն Քրիստոսի փառաւորեսցի: Արդ մտեալ այսպիսի պատուով պատուական փայտ խաչին Քրիստոսի ի քաղաքն, առ զնա թագաւորն պարսից Խոսրով եւ եղ զնա ի գանձատունն իւր մեծաւ պատուով. ի մէջ հալուէ փայտից. եւ պահէր զգուշութեամբ: Եւ եղեւ յետ հարուածոցն Երուսաղէմի. եւ գերութեանն եւ տանելոյն զսուրբ նշանն Քրիստոսի շոգաւ Խոռիանն զաւրավար ի թագաւորանիստ քաղաքն ի Կոստանդինուպոլիս մեծ եւ ծանր ամբոխի: Իսկ թագաւորն Հերակղ յառա-

չիմաց եղեալ կոչեաց իւր յաւգնականութիւն, զմեծ թագաւորն Ճենաց զԽաքան: Եւ նորա յանձն առեալ զալ նմայ աւգնականութիւն առնուլ ի Հերակղայ սակա հարկաց: (ց՞) Իսկ յորժամ եկն զաւրավարն Խոռիան՝ եկն եւ թագաւորն Խոսրով եւ միաբանեալ երկոցունց թագաւորացն Խոսրով եւ Խաքան խաբեութեամբ...\*

2. «Ի ՀԵՐԱԿԼԱՅ ՊԱՏԹԱԻԹԵԱՆՅ»

Յաղագս սրբոյ խաչին ի Հերակղայ պատմութեանց

Ի ժամանակին յորում թագաւորեաց Պարսից Խոսրով ամբարիշտ թագաւորն, սկսաւ նախանձել՝ ընդ աստուածակարգ թագաւորին Հերակլի: Խորհուրդ վատթար ի մէջ առեալ, գրէ առ նա այսպիսի ձեռով. «Ես Խոսրով նստել ի վերայ ամպոց եւ ընդ աստուածս փառաւորեալ, որ հրամայեալ եմ քեզ Հերակլի՝ զալ եւ յետոյ խոհակերաց իմոց լինել ի ստրկութեան եւ յորժամ հասանի առ քեզ հրամանք իմ, մի յապաղէր զալ պաշտել զիս. ապա թէ ոչ՝ շարաշար անցք անցուցանեմ ընդ քեզ: Եւ իբրև անհաշտելի աղմուկ իմն լինէր:

Գրէր եւ նա ընդդէմ հպարտացելոյն եթէ սուրն աստուծոյ եւ զաւազանն երկաթի խորտակեսցէ զքեզ:

Յայնժամ Խոսրով զաւրս կազմեալ տայ ի ձեռս Խոռիանու մեծի իւրում: Եւ Խոռիան ժողովեալ զբազմութիւն զաւրացն երթայր հասանէր յաշխարհն Յունաց: Եւ սկսաւ այրել եւ աւար հարկանել զամենայն աշխարհն Պաղեստինացոց. զբուն մայրաքաղաքն Անտիոք եւ զԿեսարիայ առ, այրեաց եւ աւարեաց: Եւ հասանէր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, առնուլ զնա: Եւ պատեալ, պաշարեալ զնա զաւրս բազումս, զի լցցի բանն որ ասացան թէ յորժամ տեսանիցեք շուրջ պատեալ զԵրուսաղէմ զաւրաբ՝ զիտասջիք եթէ մերձ է աւէր նորա:

Իսկ Հրէայքն որ ի նմա բնակեալ էին, ըստ սովոր/ութեան ապստամբութեամբ հարցն որ յաստուծոյ ի բանի եղին թշնամեացն եւ ի գիշերի բացին զգրունսն եւ մուծին զայլազգիսն վասն խաղաղութիւն մնացելոյ ազգին իրեանց:

Ո՞ աղետին, որ եհաս ի վերայ քրիստոնէիցն: Քանզի բազում արեանց ճապաղիք լինեին:

Այս շորորդ բարկութիւն էր, հասեալ ի վերայ Երուսաղէմի: Առաջինն Նաբուգոդոնոսորայն, երկրորդն Անտիոքայն, երրորդն Վեսպիանոսին, իսկ չորրորդս այս կարի ծանրագոյն եւ ողորմելի քան զառաջինսն: Քանզի արկին զգիակունս նոցա գէշ թռչնոց երկնից եւ զմարմինս նոցա գազանաց երկրի, հեղին զարինս նոցա որպէս շուր շուրջ զԵրուսաղէմաւ եւ ոչ ոք էր, որ թաղէր զնոսա: Պատերազմեցան ի վերայ խաչին Քրիստոսի եւ անշատեալք կոշկոճեցան, որոց անուանք գրեցան ի դպրութիւն կենաց: Եւ եթէ ի թշնամեացն զերծանէր՝ ի Հրէիցն անհնար էր ապրել:

Եւ Խոռիանու ժողովեալ զամենայն սպասս եկեղեցւոյն եւ զպատուական փայտն Խաչին Քրիստոսի, ետ տանել ի թագաւորութիւնն Պարսից: Եւ եղև իբրև մերձեցաւ սուրբ խաչն ի թագաւորութիւնն Պարսից՝ ինքն իսկ Խոսրով ընդ յառաջ ելանէր, զի թէ կամաւ եւ եթէ ակամայ, սակայն փայտն խաչին փառաւորեսցի: Եւ տարեալ եղ զնա այնուհետև ի գանձու տան թագաւորութեանն իւրոյ ի մէջ փայտիցն, եւ կանթեղս անշէջս պատրաստէր առաջի նորա: Եւ Խոռիան շու արարեալ երթայ ի քաղաքն Կոստանդնուպալիս:

\* Բնագիրն ընդհատուած է:

Յայնժամ Հերակլ աստուածասէր թագաւորն Յունաց կոչէ իւր յազնակա-  
նութիւն զթագաւորն Ճենաց, զմեծ հակաւն: Եւ հոռոհանու ազդարարեալ հոսոր-  
վայ, խնդրէ իւր զարս: Յայնժամ թագաւորն հոսորով ժողովեալ զբազմութիւն  
ազգաց անարինաց, արանց խուժադուժաց բազմաց բիրաւորաց և զԱտրպա-  
տական, և զԹորգոմեանց, և զԻեռնային այլազգիսն և ինքն իսկ զխովին գայ  
հանդիպի հոռոհանու:

Եւ եղև ի պատերազմել ընդ միմեանս մարտուցեալս, թագաւորն Ճենաց  
հական՝ անարէն նենգիչն ընդ հոսորովու միաբանեաց // և պարտեցան զար-  
քըն Հերակլի լեալ փախստական մտին ի քաղաքն: Եւ Հերակլի ընկեցեալ զթագն  
իւր և մերկացեալ զծիրանափայլ պատմուճանն զգեցաւ քուրձ. և անկեալ ի վե-  
րայ մոխրոյ, եղ զերեսս իւր ի մէջ ծնկաց իւրոց: Խոնարհեցուցեալ իբրև զանար  
զպարանոց իւր, աղաւթս առ բարձրեայն մատուցանէր՝ ունելով բարեխաւս  
զփառաւորեալ աստուածածին սուրբ կոյսն Մարիամ: Լայր դառնագին արտա-  
սուաւք և աղիողորմ ձայնիւ մաղթէր, ասելով. «Ոչ զոք ունիմք բարեխաւս, եթէ  
ոչ զքեզ, Մարիամ»: Եւ զերիս ատուրս ոչ եկեր և ոչ այլ ինչ բարբառէր, բայց  
միայն անձանձրոյթ աղաւթս մատուցանէր, մինչև էառ զպտուղ աղաւթիցն:  
Եւ ի շորորդ ատուրն տեսանէի, ասէ, ես Հերակլ, զի լինէր բլուր մի բարձր և  
հոսորով ի վերայ բլրին. և ազգք և ազինք և լեզուք երկիր պագանէին և արհը-  
նեցին զհոսորով, և ես Հերակլ ոչ երկիր պագանէի և ոչ արհնէի զնա: Եւ մինչ-  
դեռ յայսմ էի՝ տեսանէի զսուրբ Աստուածածինն՝ ունելով սուսեր մերկ հրեղէն  
ի ձեռին իւրում, մատոյց առ իս և ասէ. «Հար զնա և ընկեալ»: Եւ իմ  
առեալ թևս արծուոյ՝ սլացայ ի վերայ նորա և ջախջախեցի զզուխ նորա առա-  
ջի ամենայն բազմութեանն ատենին: Եւ յարուցեալ Հերակլ պատմեաց իւրոց  
զարականացն, եթէ բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածինն ընդ մեզ Քրիս-  
տոս և յաղթութիւն տուեալ է:

Եւ ի լուսանալ առաւաւտուն ելին ի պատերազմ: Եւ մանկունքն Հերակլայ  
զհետ մտեալ հատին զզուխն հոսորովու և բերին առաջին Հերակլի, և այնուհետև  
յանխնայ կոտորեցին զայլազգիսն: Եւ մնացորդք նոցա յետ դարձեալ փախըս-  
տական երթեալ նստուցին յաթոռ թագաւորութեան զմանուկն Արտաշիր զորդի  
հոսորովու:

Իսկ ի գալ միւս տարւոյն աստուածասէր թագաւորն Հերակլ ժողով բազ-  
մութեամբ գայր յարևելս, երթալով յերկիրն Պարսից՝ հատուցանել զվրեժս թըշ-  
նամեաց: Եւ մանուկն Արտաշիր թագաւորեալ՝ սպառնացեալ զվճիռ մահու հա-  
տանէր ի վերայ հոռոհանու. և ամենեքեան ասէին՝ արժանի գործեալ մահու:  
Իսկ սիրելիքն և մերձաւորքն, որ էին ի տան թագաւորին, ազգ արարին հոռե-  
նայ: Այնուհետև հոռոհան եկն անկաւ առաջի սուրբ կայսերն և ասէ. «Տուր ինձ  
զարս և // ընդ իս լեր և ինքեան ինձ ազնական լեր և զամենայն զոր  
ինչ կամեսցի անձն քո՝ արարից:

Կամ եղև մեծ թագաւորին տալ նմա զարս և զարաւարս շորս, որոց էին  
անուանքն այսորիկ Գէորդ, Դաւիթ, Վահան, Սմբատ և զՀայոց նախարարս:  
Եւ երթեալ ի վերայ անարինացն: Եւ մեռաւ մանուկն Արտաշիր և հրամանաւ  
սուրբ կայսերն նստուցին զհոռոհան յաթոռ թագաւորութեանն Պարսից: Իսկ մեծ  
կայսրն յոյժ տագնապեալ էր վասն պատուական խաչին Քրիստոսի: Գրէ առ հո-  
ռոհան. «Տուր ինձ բերել զաւարն Երուսաղէմի և զպատուական փայտ խաչին Քր-  
իստոսի: Եւ թողանու փոքր համարեալ, ասէ. «Զհարդ թագաւորն մեծ խնդրէ  
չնչին փայտ»: Ապա այնուհետև նա զաւրացն և զարաւարացն մեծամեծ տուեալ

պարզևս եւ սրբոյ խաչին թագաւորական պատիւարարեալ, ետ տանել առ Հերակլ, եւ Հերակլ ուրախութեամբ լցեալ, գոհանայր զպարզևացն աստուծոյ: Այնուհետև բարձեալ սայլից, բազում զարարք հանեալ ի բուն պողոտայն վրաց առեալ տանէր ի թագաւորութիւնն Յունաց Կոստանդինուպոլիս: Եւ եղև իբրև մերձեցաւ սուրբ խաչն ի թագաւորութիւնն Յունաց, ձայն անտեսաց հասեալ ի քաղաքն՝ ելանեին ընդ առաջ բազմութիւն հայրապետաց և մեծամեծ աւագաց. մանաւանդ և այլ խառնիճաղանջ ժողով արանց և կանանց, ծերոց և տղայոց միաբան իբրև ի միոջէ բերանոյ մատուցանէին արհնութիւն աստուծոյ: Եւ տարեալ եղին ի փոքր եկեղեցւոջ ի սուրբ Սիովն և տանեցին նաւակատիս զարն մեծ ի սեպտեմբերի ԺԳ:

Իսկ ի միւսում աւուր դարձեալ տանէինի մեծն կաթուղիկ, կոչեցեալն սուրբ Սոփի: Եւ տանէին զտան սրբոյ խաչին որ ար ժԳ էր սեպտեմբերի ամսոյ, զուարակաւ բազում և անուշահոտ խնկաւք և ջահիւք բորբոքելովք. զի ութ ար սահմանեցին կատարել տան սրբոյն խաչին: Վասն որրոյ և մեք տանեսցուք և երկրապագեսցուք սրբոյ խաչին և նշանեսցի առ մեզ լոյս երեսաց Քրիստոսի աստուծոյ մերոյ, որում փառք և պատիւ այժմ և յաւիտեանս յաւիտենից»:

Անմիջապես հաջորդում է գրչի հիշատակարանը.

«Վասն դարձի, տէր, քո խաչին,  
Հայցմամբ մաքուր քո ծնաւդին  
Կորգեա զհոգի զծօղի սորին  
Ի գերութեանց շար իշխանին»:

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ



Արգար թագ. Հայոց, որդի Արշամայ—55  
Արդիւ 135  
Արեթայն Հայկ, ա. Հայկ  
Արել Երէց 97  
Արահամ Եպիսկ. Ռշտունեաց, ա. Արահամ  
կաթող.  
Արահամ կաթող. 100, 112  
Արահամ ճահապետ Իսրայելի 52, 134, 135,  
136, 153, 162, 169  
Արահամեան տուն 129  
Ազարանգեղոս 47  
Ազատ լեռն 52  
Ազարմիդուխտ, Ազարմիկ, դուստր Խոսրովայ  
130  
Աթաղարիկս 133  
Աթանաս Եպիսկոպ. 60, 156  
Աթենացիք 158, 159  
Աթենք 154  
Ականից դաշտ 108  
Ակնիկ, ա. Վարդիկ իշխան Մոկաց  
Անմատան (Անմատեան) շահատան 91, 112  
Աղեբանդր Մակեդոնացի 51, 52, 55  
Աղեբանդրացիք 158, 171  
Աղեբանդրիա. Աղեբանդրացոց քաղաք 65,  
106, 123, 129, 136, 149, 151, 154, 170  
Աղբամար կղզի 134, 166, 169, 172  
Աղի 125  
Աղիովիտ 125, 126, 138, 169  
Աղձնիք 68  
Աղուանից աշխարհ 65, 88, 146  
Աղուանից դուռն 69, 78  
Աղուանք 125, 145, 166, 169, 174, 175  
Աղցից աւան կամ գետ 112  
Ամաղ Երկիր 96  
Ամասիա, որդի Արամայիսի 48, 50  
Ամատունիք 150  
Ամիք քաղաք 111  
Ամոն 162  
Ամո, արք. Իսմայելի 64, 139  
Ամրամ 162  
Այրարատ գաւառ 76, 107, 114, 125, 138, 145,  
146, 165, 166  
Այրարատ դաշտ 50  
Անակ 58, 73  
Անանիաս Եպիսկոպ. 154  
Անաստաս 63

Մնգեղ 51  
Մնգեղ բերդ, քաղաք 110  
Մնգեղտուն 51  
Մնգղ գետ 109  
Մնգղ քաղաք 110  
Մնքիմոս կայսր 62  
Մնկղ 70  
Մնուշ Հռոմեաց Խոսրով, ա. Խոսրով  
Անուշ Հռոմեաց  
Անտիոք Պիսիդացաց 69  
Անտիոքացիք 114  
Անտիոքացոց քաղաք 53, 106, 111, 114, 151,  
158  
Անտիոքոս Թէոս 52  
Անտիոքոս Սոսեր 52, 53  
Անտոնինոս իշխան 142, 143  
Աշնաշ 54  
Աշոտ ասպետ 94  
Աշոտ Յեզդայար 110, 111  
Ապահունիք 125  
Ապր Շահեր 65, 101  
Ապրուէզ Խոսրով, ա. Խոսրով Ապրուէզ  
Քառնեանք 166  
Առաստիայ 111  
Առանդեանք 165  
Առեստ աւան, Առեստաւան 76, 84  
Ասիատեան 52, 53  
Ասիացիք 154  
Ասիացոց կողմանք 114, 126  
Ասկարան տեղի 176  
Ասորենի կողմն 145  
Ասորեստան 74, 84, 94, 95, 97, 110, 113, 114,  
132, 138, 139, 149, 150, 174, 175, 176  
Ասորեստանեայց աշխարհ 126, 132  
Ասորեստանեայք 51, 53, 130, 151  
Ասորիք 51, 53, 54, 57, 76, 77, 78, 90, 97, 106,  
145, 164, 171, 175, 176  
Ասպահան 102  
Ասպատ 51  
Ատատ Խորխոռունի 87, 88, 104  
Ատրպատական 65, 66, 68, 74, 77, 84, 87, 109,  
124, 126, 127, 130, 132, 137, 145, 165,  
175  
Արաբիա 135, 136  
Արագած լեռն 52, 114  
Արալէզ 51

- Արածանի գետ 109  
 Արամ, որդի Հարմայի 48, 50  
 Արամազդ 77, 123  
 Արամայիս, որդի Արամենակայ 48, 50  
 Արամայիր 50  
 Արամենակ, որդի Հայկայ 48, 49, 50, 51, 52, 54, 56  
 Արայ Գեղեցիկ 48, 50, 51  
 Արայի դաշտ 51, 52  
 Արարատայ երկիր 48, 49, 50  
 Արեաց քաղաւրոսին 78  
 Արեւտից ծով 53, 66, 139  
 Արիանոս 60  
 Արիֆ 56  
 Արծափ, Արծափու բերդ 145  
 Արծրունի 112  
 Արկադէոս, որդի Քէոքոսի 61  
 Արնէշ 65, 125  
 Արմոզ 52  
 Արշակ քազ. Հայոց՝ Փոքր, որդի Արշակայ Քաշի 53, 54  
 Արշակ քազ. Հայոց, որդի Արշարի 54  
 Արշակ քազ. Հայոց (Բ), որդի Տիրանայ 55, 60, 61  
 Արշակ քազ. Հայոց (Գ), եղբայր Վաղարշակայ 61  
 Արշակ արքայ Պարթևաց՝ Մեծ 53, 54, 55  
 Արշակ արքայ Պարթևաց՝ Քաշ 54, 55  
 Արշակ արքայ Պարթևաց, յաջորդ Դարեհի 53, 55  
 Արշական 55  
 Արշակունեաց տուն 145  
 Արշակունիք Հայոց և Պարթևաց 52, 54, 55, 57, 64, 140  
 Արշամ 55  
 Արշանակ 55  
 Արշաիր Արշակունի 54  
 Արշաիր արքայ Պարթևաց 54, 55  
 Արշէն 54  
 Արշէս 55  
 Արուստան 53, 76, 78, 84, 150, 170, 171  
 Արուն Աշնակի 174  
 Արտազ գաւառ 68  
 Արտաշէս քազ. Հայոց 54  
 Արտաշէս, եղբայր Արշակայ 55  
 Արտաշէս, որդի Սանատրկոյ 55  
 Արտաշէս Պարթև 54, 55  
 Արտաշէս Պարթև մեծ 55  
 Արտաշիր, որդի Արշակայ Քաշի 55  
 Արտաշիր, որդի Կաւատայ 63, 129, 130  
 Արտաշիր, որդի Շապհոյ 61  
 Արտաշիր Ստահրացի 55, 56, 57, 58, 59  
 Արտաւազդ Ապահունի 101  
 Արտաւազդ Դիմախան 174  
 Արտաւազդ քազ. Հայոց, որդի Արտաշիսի 55  
 Արտաւան քազ. Հայոց, յաջորդ Արտաշիսի 54  
 Արտաւան, Արտաւան, արքայ Պարթևաց 54, 55, 56, 57  
 Արտաւան, տ. Արտաւան արքայ Պարթևաց  
 Արփայք, բերդ 166  
 Ասան գետ 112  
 Ասքան, իշխան Իսմայէլացոց 146  
 Ափրիկէ 93, 143  
 Ախուր, քաղաք ճեղուքեան 133  
 Բաբելացիք 51, 53, 57  
 Բաբելոն, Բաբելոն 48, 49, 51, 52, 53, 162  
 Բագամ 51  
 Բագարատ 51  
 Բագարատ Փառագեան 54  
 Բագասան գետ 148  
 Բագրատունիք 165  
 Բագրեանդ գաւառ 68, 71, 125, 148  
 Բահլ Շահաստան, Բահլ, Բախլ 52, 53, 54, 55, 57, 73, 80, 103  
 Բաղիշոյ բերդ 165  
 Բասեան 60, 71  
 Բասեւացիք 165  
 Բասեհոյ գաւառ 110, 111  
 Բարսեղ Եպիսկ. Կեսարու 156  
 Բքոք քամբիշ 63  
 Բոռն 130  
 Բեկտուր Եպիսկ. Հոռվոյ 156  
 Բերկոյ ձոր 138  
 Բզնունեաց ծով 76, 84  
 Բզնունեաց կղզիք 165  
 Բզնունիք 71, 138, 169  
 Բէլ Տիտանեան 48, 49, 50  
 Բիւզանդիա, տ. և Կոստանդնուպոլիս 59, 122, 123, 131  
 Բիրատ 51  
 Բոլորապանակ 71  
 Բոնոս իշխան 106  
 Բուշայ 138  
 Բուսման 71, 105  
 Բրաման 102  
 Դագիկ Մամիկոնեան, որդի Մանուէլի 94, 95  
 Դագայ գետ 172  
 Դայլատուր 110  
 Դալիանոս կայսր 59  
 Դայլիա 157  
 Դաղիանոս, որդի Դաղմատիսի 60  
 Դանձակ, Դանձակ Ատրպատականի 66, 124  
 Դարդման գաւառ 125  
 Դառնի 71, 84  
 Դել, Գեղ Երկիր, ցեղ 172  
 Գեղ լեռն 52  
 Գեղամ, որդի Ամասիայ 48, 50  
 Գեղումք, Գեղումայ Երկիր 71, 95, 96, 98, 105  
 Գեռիկ գետ 108  
 Գերանայ դաշտ 66

Գէորգ Մագիսարոս 162, 163  
 Գիմնասոփեսեայք 102  
 Գեթուիք 165  
 Գոգ և Մագոգ 142  
 Գոգովիտ գաառ 84, 104, 126, 138  
 Գողգոթայ 117  
 Գոզնն Միհրան, տ. և Միհրան Միհրեանդակ  
 Գուպ 58  
 Գրատիանոս կայսր 61  
 Գրիգոր (Ս), Գրիգորիոս Լուսարիչ 121, 129,  
 147, 148, 150, 155, 156, 160, 167, 168  
 Գրիգոր, Էպիսկ. Նագիանգոս 156  
 Գրիգոր, Էպիսկ. Նէոկեսարոս 156  
 Գրիգոր Նիսացի, եղբայր Բարսղի 156  
 Գրիգոր, որդի Քէոզորոսի Վանունեաց 166  
 Գրիգոր Սիւնեաց իշխան 137  
 Գրիգոր (Ս) Էկեղեցի 68, 91, 100, 112, 167  
 Գրուանդական բերդ 73, 75  
  
 Դաղմատիոս 60  
 Դամասկոս 52, 147, 169, 170  
 Դանիէլ մարգարէ 85, 141, 177  
 Դանիէլի կամուրջ 89  
 Դանուք գետ 90  
 Դաշուկար 166  
 Դաստակերտ Մեծ 100  
 Դատոյեան զարազլուխ, իշխան 102, 108  
 Դարայ քաղաք 69, 107, 108, 110  
 Դարանաղայք 165  
 Դարանից բերդ 145  
 Դարեհ, արքայ Պարթևաց 54, 55  
 Դարիսնի 104, 144  
 Դաիթ Մամիկոնեան, հայր Համազասպայ 174  
 Դաիթ Մամիկոնեան, հայր Մուշեղի 137  
 Դաիթ մարգարէ 158  
 Դաիթ Սահառունի 133  
 Դաիթ փիլիսոփայ ի Բագաան գեղջէ 148  
 Դգլաթ, Դգլաթ գետ 74, 75, 127, 137  
 Դելիաստան 97  
 Դելն 172, 173  
 Դելումն, Դելումք 172, 173  
 Դեմետրիոս 53  
 Դերջան 165  
 Դերնայ բերդ 174  
 Դիմախենից տուն 99, 165  
 Դիակոնիանոս կայսր 58, 157  
 Դիոնէսիոս Աղեֆանդրացի 156  
 Դիոնէսիոս Արիսպագացի 154  
 Դիոնէսիոս Կորնթացի 154  
 Դիոնէսիոս, Էպիսկ. Հոովմայ 156  
 Դու քաղ. 111  
 Դուին ոստան, քաղաք, ատան 67, 68, 74, 76,  
 91, 95, 100, 105, 107, 111, 113, 124, 132,  
 138, 148, 166, 168, 171

Եգերացիք 69  
 Եգիպտացիք 106, 112, 158, 170  
 Եգիպտոս 64, 65, 106, 135, 136, 139, 176  
 Եղեսացոց քաղաք 134  
 Եղոմ 162  
 Եզր կարող. 129, 131, 139  
 Եկեղեցաց գաառ 165  
 Եղևկարդ քաղաքագետ 108  
 Եղևկարդայ դաշտ 108  
 Եղիազար, տ. Փառոխ  
 Եղիանոս կայսր 57  
 Ենանկլիտոս Էպիսկ. 154  
 Եսաւ 162  
 Երակլ, Երակղ, Երակլէս, Երակլոս, Երակղոս  
 կայսր, տ. և Հերակլ կայսր 63, 64, 106, 112,  
 113, 114, 122, 123, 124, 125, 126, 127,  
 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135,  
 138, 140, 141, 142, 148, 152  
 Երակլ, Երակլէս զարազլար, հայր Երակլի կայ-  
 սեր 63  
 Երակլակ, Երակլոս, որդի Երակլի կայսեր 64  
 Երան կարող. 70, 150  
 Երասխ գետ 71, 114, 125, 126  
 Երգիեայ քաղ., բերդ 108, 110  
 Երենիոս Գալ[[ի]]եացի 54  
 Երիֆով 120, 136  
 Երուանդ, որդի Արշակայ 54  
 Երուանդէմ 106, 115, 116, 117, 118, 119, 120,  
 123, 129, 131, 140, 149, 151, 154  
 Երուանդէմացիք 136  
 Եփլայ 135  
 Եփրատայ Երկիր 102  
 Ետղիա-Պետրոս Էպիսկ. 154  
 Ետիֆոս 160  
 Եփեսոս 154  
 Եփեսոսի ժողով 150, 151, 160  
 Եփրատ, Եփրատէս գետ 65, 68, 107, 137  
  
 Զարասպ լեան 54, 78, 126  
 Զարեհ, յորդոց Արամենակայ 51  
 Զարեհաան 174  
 Զարեհանդ գաառ 126  
 Զարեհիոս հայրապետ Երուանդէմի 149, 151  
 Զենոն 62, 63  
 Զենոն մեա 62  
 Զմիտնիա 154  
 Զրէհան 96  
 Զրուան 48  
 Զուարթնոց Էկեղեցի 147  
  
 Ընաբովք Մովսրոս 135  
 Ընազման, Ընազմազան, Ընազմիտզան, տ. Խո-  
 նեան  
 Ըոն Վենան 113

Քելայ 111  
 Քեման 135  
 Քեռալացոց աշխարհ 52, 173  
 Քեռալ, Քեռալացիք 54, 65, 73, 163, 164, 176  
 Քէանով 159  
 Քէարբունի 65  
 Քէոզու, Քէոզորու, Էղբայր Երակլի կայսեր 114, 135  
 Քէոզու Մեծ, կայսր 61, 150, 151  
 Քէոզու Փոքր, կայսր 60, 62, 150, 151  
 Քէոզու, որդի Մարկայ 106, 107, 110, 111, 113  
 Քէոզու Խորխոռունի 109  
 Քէոզու Տրպատունի, տ. Քէոզորու Տրպատունի  
 Քէոզորխուս Եպիսկ. 150, 158  
 Քէոզորու հայկազն, գաւազար 143, 144  
 Քէոզորու Մագիստրոս, Էղբարորդի Երակլի 133  
 Քէոզորու Ռշտունի, Ռշտունեաց տէր 129, 134, 138, 139, 143, 145, 146, 148, 164, 165, 166, 168, 169, 172, 173, 174, 175  
 Քէոզորու Վանեունի 138, 166  
 Քէոզորու Տրպատունի 87, 89  
 Քէոս Անտիոֆու, տ. Անտիոֆու Քէոս  
 Քէոփիլու Եպիսկ. 156, 158  
 Քիրակ 104, 105  
 Քումա, Քումա իշխան 143  
 Քուրխասան 97, 102  
 Քրակացիք 88, 90, 92, 106, 163  
 Քրակացոց աշխարհ 90, 91, 106  
 Քրակէ 86

Իդումայ 135  
 Իշխան գեղ 166  
 Իսանակ նահապետ 52, 153  
 Իսմայել, Իսմայելի որդիք, Իսմայելացիք 131, 134, 135, 137, 139, 140, 141, 145, 146, 147, 162, 163, 164, 165, 169, 171, 172, 173, 174, 175, 176  
 Իսմայելեան-բագաթորութիւն, տէրութիւն 64, 142, 163, 164, 165  
 Իսրայել, Իսրայելի որդիք 135, 162

Նատղիկեցոց եկեղեցի 154  
 Նոն կայսր 62  
 Նոնի տոմար, տոմար 148, 158, 160, 167  
 Նիկիանոս 60, 157

Նաղար. ֆաղ. 75  
 Նաղամախիք 68, 70  
 Նաղտիք 92  
 Նաշեան Առուեղեան 138  
 Նառան 58, 59  
 Նախան արքայ Քէտալացոց կամ Հիախոյ 73, 101, 102, 104

Նեկեանդ գեղ 98  
 Նոնեամ 64, 110, 113, 115, 122, 125, 127, 129, 130  
 Նոռոյս Ռոմիզդ 64, 130, 132  
 Նոռոյսգաս 137  
 Նոսրով Մեծ, Նոսրով Քաջ, բագ. Հայոց 55, 56, 57, 58, 73  
 Նոսրով Փոքր, որդի-Տրգատայց, բագ. Հայոց 55, 59  
 Նոսրով (Ա. Անուշրոտան) արքայ Պարսից, որդի Կաասայ 63, 67, 68, 69, 70, 72, 73, 83, 85, 88, 149, 151  
 Նոսրով (Ք. Ապրուէզ), որդի Ռոմզդի, հայր Կաասայ Ք. 63, 64, 65, 71, 72, 74, 75, 76, 77, 78, 80, 94, 95, 96, 97, 103, 104, 105, 106, 107, 108, 110, 111, 112, 113, 123, 124, 125, 126, 127, 130, 131, 143, 149, 150  
 Նոսրով (Գ) յազգէ Սասանայ 65, 130  
 Նոսրով ուն, բագ. Հայոց 61  
 Նոսրով Շոմ, տ. Սմբատ Բագրատունի Նոսրով Շոմ  
 Նոսրով, Վանեունեաց տէր 94, 95  
 Նոսրով Տամ, տ. Տամ Նոսրով  
 Նոսրովակերտ մայրի 138  
 Նոսրական 71  
 Նորեմացի, տ. Մովսէս Նորեմացի  
 Նորխոռունի 133, 143, 165  
 Նուսաստան 85, 139, 150, 163, 170  
 Նոռիս ֆաղաֆազեղ 101  
 Նրամայ բերդ 147

Մաղկաշուր 71  
 Մաղկոսն 109  
 Միսնկերտի ֆաղաֆ 110  
 Մղուկ 125

Կադմոս, բոռն Հայկայ 48, 49, 50  
 Կագբիռն 73  
 Կախանակառոյ 145  
 Կաղնիկոս 69  
 Կամյիշով մետրապոլիտ 151  
 Կայեն, Կայէն, որդի Ադամայ 117  
 Կայէն, մայր Ռոմզդի, կին Նոսրովայ 73  
 Կապկոն լեռան, տ. և Կովկաս լեռան 53, 78, 169  
 Կապուտկացիք 171  
 Կապուտկեայ 53  
 Կառեամ նախարար 56  
 Կասրիական, Կասպիական դրոնք 173  
 Կարին գառառ 111  
 Կարին ֆաղ., Կարեոյ ֆաղ. 68, 89, 91, 111, 112, 113, 114, 124, 164, 165, 174  
 Կարին, Կարիանոս, որդի Կարոսի 58  
 Կարմիրն Վարդան, տ. Վարդան Մամիկոնեան 65

- Կարնացիք 165  
 Կարոս կայսր 58  
 Կարժեղովմայեցի իշխանութիւն 64  
 Կառ խորով 85  
 Կասառ (Ա), որդի Պերոզի, հայր խորովայ 63, 67, 72, 149, 151  
 Կասառ (Բ) Շերոյէ, որդի խորովայ 63, 64, 65, 127, 128, 129, 130  
 Կաւկասու լեան, տ. Կովկաս լեան  
 Կեղար 135  
 Կեղմայ 135  
 Կեքրու 172  
 Կեսարացիք 158  
 Կեսարացոց ֆաղափ 113  
 Կեսարացոց կողմանք 126  
 Կեսարիա 123, 124, 155  
 Կեսարիա Կապադովկացոց 78, 112, 114, 121, 156  
 Կեսարիա Պաղեստինացոց 115  
 Կրքի 71  
 Կիլիկեցիք, Կիլիկեցիք 54  
 Կիլիկէ, Կիսիկէ 53, 158, 115  
 Կիլիկեցոց զաւառ 69, 115  
 Կիրեղ Էպիսկ. Աղեմսանդրացի 150, 156, 161  
 Կղեմնէտոս Էպիսկ. 154  
 Կոզովիտ, տ. Գոզովիտ  
 Կորացիք 97  
 Կոզր 132  
 Կոմիտաս. Կոմիտաս Էպիսկ. Մամիկոնէից, տ. Կոմիտաս կաթող.  
 Կոմիտաս կաթող. 112, 116, 118, 121, 129, 150  
 Կոմձ Երկիր 98, 101  
 Կոնակ 56, 57  
 Կոնակ սպարապետ 58  
 Կոստանդ, Կոստանդիաս, Կոստանդէս կայսր, որդի Կոստանդիանոսի 59, 60, 157  
 Կոստանդիանոս Մեծն, կայսր 59, 60, 68, 150, 151, 155, 156, 157, 158, 160, 170  
 Կոստանդիանոս, որդի Կոստանդեայ 59, 157  
 Կոստանդիաս կայսր, յաջորդ Քէլադոսի Փոքու 62  
 Կոստանդին, Կոստանդոս, կայսր, որդի Հերակլի 64, 114, 124, 137 138, 140, 141, 146, 147, 148  
 Կոստանդին, Կոստաս, Կոստոս կայսր, թոռն Հերակլի 64, 141, 142, 143, 144, 146, 147, 148, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 175  
 Կոստաս, որդի Կոստանդիանոս Բ-ի 60  
 Կոստանդնուպոլսեցիք 158  
 Կոստանդնուպոլսի ժողով 150, 151, 160  
 Կոստանդնուպոլսի 106, 112, 123, 124, 136, 141, 147, 163, 168, 169, 170, 175  
 Կոստի ֆոյր Կոստանդիայ կայսեր 60  
 Կովկաս լեան 53, 70, 173  
 Կոսէից զաւառ, Երկիր 84, 143  
 Կոտիտ, Ամատունեաց տէր 87, 88, 94, 96  
 Կորդուաց Երկիր 89  
 Կորնթոս 154  
 Կոր գետ 88  
 Կորան 139  
 Կրեմէս 154  
 Կրման Երկիր 139  
 Հաբիբ զարավար 174  
 Հագար 162  
 Հագարացիք 139, 170  
 Համազասպ, Մամիկոնէից տէր 89, 169, 171  
 Համազասպ, Մամիկոնէից տէր որդի Դարի 171, 175  
 Համադան 66  
 Հայաստան աշխարհ, Երկիր 54, 56, 57, 64, 88, 91, 97, 104, 105, 110, 111, 114, 131, 148, 173  
 Հայաստանեայք 66, 67, 86, 90, 91, 143  
 Հայաստանեայց աշխարհ, Երկիր 51, 129, 147, 149  
 Հայկ Աբեբայ, Աբեբաձիք 48, 49, 50  
 Հայոց աշխարհ, Երկիր 53, 55, 57, 58, 61, 66, 67, 70, 75, 77, 78, 84, 90, 91, 105, 116, 118, 126, 132, 134, 138, 143, 144, 150, 151, 155, 174, 175  
 Հայոց բագաւորութիւն 47, 55, 62, 78  
 Հայք (Երկիր և ազգ) 49, 51, 60, 61, 64, 66, 67, 68, 70, 73, 77, 84, 87, 88, 91, 92, 95, 101, 105, 107, 108, 111, 113, 118, 129, 132, 133, 137, 138, 143, 144, 145, 146, 148, 149, 151, 164, 165, 166, 167, 168, 169, 171, 175  
 Հաշտեանք 111  
 Հարկ զաւառ Քուրանաց 103  
 Հարմայ որդի Գեղամայ 48, 50  
 Հարք 48, 49, 50  
 Հացիւն 84  
 Հերայեցոց ազգ 115  
 Հերակլ, Հերակղ, Հերակլոս կայսր, տ. և Երակլ կայսր 65, 105, 113, 114  
 Հերակղ զարավար 88, 89  
 Հերակղ, հայր Հերակլի կայսեր 122  
 Հեր և Զարեանք 126  
 Հերթիման գետ 137  
 Հեփթաղք 102  
 Հէրեան 145  
 Հիափսայիս բագաւորութիւն 142  
 Հմայեակ Ապահունի 101  
 Հնդիկ 102, 139, 162  
 Հնդկաց աշխարհ 110, 175  
 Հոյիման 71  
 Հոնաց դուռն 173  
 Հոնք 66, 70, 87, 88

- Հոռոմ, ա. և Յոյն, Հոռոմոց քաղաւորութիւն  
 122, 148, 164, 165, 167, 169, 170  
 Հոռոմոց մարզ 108  
 Հոիփսիմեայ մատուռ 121  
 Հոիփսիմէ 121  
 Հոռոմ, Հոռովմ 154, 155, 156, 157  
 Հոռովմայեցիք 77, 157, 158  
 Հոռովմայեցոց տէրութիւն, քաղաւորութիւն 162,  
 169  
 Հոռովմոց տէրութիւն, քաղաւորութիւն 83, 90,  
 106, 134  
 Հուրազգան (Հրազգան) 84  
 Հրահատ մարզպան 71  
 Հրատ Աուրպատականի 66  
 Հրատ Վշնասպ (Աքաշ) 69, 124  
 Հրատրին Դատան մարզպան 71  
 Հրէայք 112, 123, 134, 139, 158, 170  
 Հրեմունք գեղ 125  
  
 Զիբադին 111  
 Զոր 138  
  
 Դակեղովմացիք 159  
 Դեռոն արեւելիսկ. 155  
 Դիկուրգոս Դակեղովմայեցի 159  
 Դովա 162  
  
 Ճահուկ շամբ 87  
 Ճենքովա 102  
 Ճենաստան 56  
 Ճենաց քաղաւոր 56  
 Ճենքակուր 56, 57  
 Ճենք 56  
 Ճեպետի Ճենաստան 104  
 Ճորայ պահակ, կապան 69, 104, 169, 173  
  
 Մաքսամ 135  
 Մազոզ, ա. Գոզ և Մազոզ  
 Մազան 162  
 Մադիամ 162  
 Մազոբոբ 73  
 Մակեդոնացիք 51, 52  
 Մակու 84  
 Մակուրան 139  
 Մանմէտ մարզաւէ, որդի Արդլայի 135  
 Մամակ Մամիկոնեան 87, 88, 94, 95  
 Մամիկ, Մամիկոն 56, 57  
 Մամիկոնեանք 56  
 Մամիկոնէից տէրութիւն 67  
 Մամիկոնէից տուն 65  
 Մանաղայք 165  
 Մանուէլ Բագրատունի 92  
 Մանուէլ Մամիկոնեան 94  
 Մանուէլ, աներ Մաքսայ 162, 163  
 Մանուէլ Ապահունեաց տէր 101  
  
 Մասէ 135  
 Մասմայ 135  
 Մատրէոս Եպիսկ. Ամատունեաց 150  
 Մարաբաս փիլիսոփայ Մծուրնացի 47  
 Մարանդ 66  
 Մարաց աշխարհ 54, 125, 137, 139, 172  
 Մարաց քաղաւորութիւն 51, 142  
 Մարաց լեռնք 172  
 Մարզ 103  
 Մարզոտ գաւառ 103  
 Մարդոցէք 165  
 Միրիամ ա. կոյս 153, 157, 161  
 Մարկիանոս կայսր 62, 150, 151, 157, 158  
 Մարսս գաւառ 141  
 Մարեսկ 52  
 Մարտինէ Աւգոստեայ, մայր Կոստանդինի 141  
 Մարտ (Երկիր և ազգ) 53, 57, 143, 164, 172  
 Մալիաս իշխան Իմայելացոց 147, 169, 170,  
 175  
 Մարիանոս զարավար (նոյն և Մորիանոս) 174  
 Մարիկ կայսր 63, 65, 71, 75, 80, 86, 105, 106,  
 107, 110, 111, 113, 114, 122, 131  
 Մախսիմիանոս կայսր 59, 157  
 Մախսիմիանոս, Միխսիմիանոս, որդի Մախսի-  
 միանոսի 59, 157  
 Մելիսաւէ 162  
 Մեծամարտի կամուրջ 138  
 Մեղիտինէ, Մելիտինէ 68, 70, 113  
 Մերակրտա 71  
 Մերկուտ 105  
 Մգրայք 67  
 Մժէժ, Մեժէժ Գեունի 131, 132, 133  
 Միհր 78  
 Միհրան Գողոն, Միհրեանդոսկ 68, 70  
 Միհրու ի տանէ Գիմախսէնից 99  
 Միշագետք 47, 54, 58, 59, 137  
 Միշագետք Ասորոց 66, 106, 110, 111, 131  
 Մծրին, Մծուին 47, 53, 76, 84  
 Մծուրն 47  
 Մողեստոս Երէց 116, 118  
 Մոկք 138  
 Մովաք 162  
 Մովսէս Խորենացի 55  
 Մովսէս կաթող. 91, 100  
 Մովսէս մարզաւէ 162, 119, 135  
 Մորիանոս իշխան 168  
 Մուշեղ Մամիկոնեան, զարավար 77, 78, 81,  
 83, 84, 90, 91, 165, 166, 171, 173, 175  
 Մուշեղ Մամիկոնեան, որդի Դաքի 137  
 Մուրց գետ 71  
 Մրծուին, Մրծունի, Մրծան 54, 71, 78, 96, 125  
 Մորիկ, ա. և Մարիկ  
  
 Յազկերտ (Ա) արքայ Պարսից, հայր Վառմայ  
 62

- Յազկերտ (Բ) արքայ Պարսից, որդի Վոսմայ 62
- Յազկերտ (Գ) վերջին արքայ Սասանեան, որդի Կաաաայ 63, 64, 130, 141, 163, 164
- Յազդէն 71, 105
- Յակոբ ճահապետ 119
- Յեզտայար Աշտատ, տ. Աշտատ Յեզտայար
- Յեման 105
- Յեսրոկ 162
- Յետուր 135
- Յեխան 162
- Յոյն (երկիր, ազգ) 58, 59, 60, 61, 62, 63, 65, 67, 68, 71, 74, 75, 79, 80, 84, 85, 88, 89, 90, 91, 92, 97, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 113, 114, 115, 123, 128, 131, 132, 133, 134, 135, 136, 141, 142, 144, 147, 148, 150, 164, 167, 171, 173, 174
- Յոսիայ գեղ 60
- Յովհան կարող. 91, 112
- Յովհան Պատրիկ 74, 77, 82, 83, 105.
- Յովհաննիկ երէց, վաճառայր 121
- Յովհաննէս աւետարանիչ 152, 153
- Յովսէփ այր մի 98, 99
- Յորդանան 157, 119, 136
- Յովիանու կայսր 60, 61
- Յունաց աշխարհ 59
- Յունաց գաւառ 124
- Յուստաթ նախարար 128
- Յուստիանու եպիսկ. 154, 156
- Յուստիանու կայսր 63
- Նաբէոթ 135
- Նաբուգոդոնոսոր 51
- Նախնաան 65, 87, 88, 105, 124, 126, 138, 146, 174
- Նախնաանի բերդ 146, 174
- Նախնաանի դաշտ 125
- Նամդար Վշնասպ 113
- Նարկիսոս կայսր 62
- Նափէս 135
- Նեստոր հերետիկոս 132, 150, 160
- Նեստորական 149, 150
- Ներովն կայսր 158
- Ներսէն արքայ Պարսից, որդի Շապնոյ 59, 60
- Ներսէս զարափար 106, 107
- Ներսէս (Ա Մեծ), կարող. 121
- Ներսէս (Բ, Շիճող) կարող. 139, 144, 147, 148, 165, 166, 174
- Ներսէս սորատելյան 77
- Ներսէս Վանտունի 89
- Նիկանովր Սելեկիոս, տ. Սելեկիոս Նիկանովր
- Նիգ գաւառ 114, 129
- Նիխորական 105
- Նիկիա քաղ. 154, 155, 157
- Նիկիական՝ Նիկիոյ ժողով 150, 151, 154, 156
- Նիկիական հանգանակ՝ ճամակ 148
- Նիկիական լոյս 160
- Նիկոպոլիս 111
- Նիկոս արքայ 51
- Նիկուլ 51, 65, 113, 126, 170
- Նիկուլի դաշտ 126
- Նիշապուրն քաղաք 65
- Նովերիանու կայսր 58
- Նոր Շիրակ երկիր, տ. և Նոր Շիրակն
- Նոր Շիրակն 54, 78
- Շահաստան-ի Նոյ-Նոյ 69
- Շահէն՝ Շահեան զարափար պատգոսապան 111, 112, 113, 124
- Շահր վահրին 98
- Շահր Վարազ զարափար 125, 126, 128
- Շահրայեանպետ 111
- Շահրապան Բանդական 102
- Շահրապական 113
- Շամբ 148
- Շամն 102
- Շամիրամ, կին Նիկոսի 51
- Շապուր (Բ) արքայ Պարսից, որդի Ռամազդայ 60
- Շապուր (Գ) արքայ Պարսից, որդի Արտաշրի 59, 60, 61
- Շապուր Պարսիկ, քաղաւոր Հայոց 55
- Շապուր Ամասունի 138
- Շառաշ 51
- Շակ քաղ. Քուշանաց 97
- Շաշ քաղ. 85
- Շիրակ 114, 126
- Շիրակայ դաշտ 108
- Շիրակացիք 165
- Շիրակաան 71, 108
- Շիրին քաղուրի 85, 151
- Շիրինայ վանք 85
- Շմաուն Կղեմովեանց եպիսկ. 154
- Ոգրայ, իշխան Իմայելի 146
- Ոնորիոս կայսր 62
- Ոստան Դունայ, տ. Դուն
- Ռամազդ արքայ Պարսից, որդի Շապնոյ 60
- Ռոդոպոս 145
- Ռոդրոս 111
- Ռոմիզդ (Գ) արքայ Պարսից, հայր Խոսրովայ 64, 75, 76, 96
- Ռոմիզդ (Գ) արքայ Պարսից, որդի Խոսրովայ 63, 70, 71, 72, 74
- Ռոմիզդ (Ե) բռն Խոսրովայ 130
- Ռութսու գեղ 70, 71
- Ռովիմպաս կայսր 62
- Ռունայ, Ռոհայ 58, 59, 106, 107, 110, 137

- Չորրորդ Հայք 165, 171
- Պահլա Երկիր 163
- Պահլապահ տերութիւն 55, 56
- Պաղեստինացոց Երկիր 115, 147
- Պապ բագ. Հայոց, որդի Արշակայ 55, 61
- Պապ Բագրատունի, որդի Աշոտայ ասպետի 94
- Պարթև 47, 51, 52, 54, 55, 56, 57, 75, 95, 96, 142, 163
- Պարիով արքայ Քուշանաց 97
- Պարս գաառ 113
- Պարսայեանք, Պարսեանք, Պարշընագղաս 105
- Պրասիկ (Երկիր, ազգ) 53, 55, 57, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 70, 71, 74, 76, 80, 82, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 106, 108, 109, 112, 113, 114, 115, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 130, 132, 134, 137, 139, 141, 149, 151, 163, 169
- Պարսից աշխարհ 59, 67, 72, 73, 74, 75, 163, 130
- Պարսից թագաւորութիւն 47, 55, 64, 66, 67, 95, 137, 142, 164, 175
- Պաղիկարպուս
- Պաղոս առաքել 116, 152
- Պետրոս վկայ 156
- Պերոզ արքայ Պարթևաց 54
- Պերոզ արքայ Պարսից 55, 62, 65, 66, 67
- Պիսիդացիք 113
- Պիսպոս 159
- Պոսկոպ գաւառ 147
- Պրիսկոս 105
- Պրապուս 58
- Համասայ արքայ Պարսից 63
- Հալիսեան խորով, տ. Վարագոթրոց 103, 132
- Հերմայ գետ 89
- Հուան Վեհ, իշխան 107
- Ռագմայոզան, Ռագման, Ռագմիոզան տ. Խոնեամ 115
- Ռաշայեան 111
- Ռաշեան իշխան 128
- Ռէ, Ռէն, Ռեն, աշխարհ 95, 102
- Ռշտունական 165
- Ռշտունեաց գաառ 134
- Ռշտունիք 138, 143
- Ռոն Վեհան 126
- Ռոյեան Երկիր 96
- Ռոստոմ, Ռըստամ գաւառ, որդի Խոռոյս Ռոմզդի 132, 137
- Ռուբէնի սահմանք 135
- Ռստակես, որդի ս. Գրիգորի 155, 156
- Սագաստան 139
- Սահակ ս. կարող, որդի ս. Ներսիսի 121
- Սահակ Արծրունի 112
- Սահակ Մամիկոնեան 92
- Սահակ Սիւնի, հարեղբայր Սահպանոսի Սիմոն 95
- Սամուէլ Վահուանի 87, 88, 89
- Սանատրուկ բագ. Հայոց 47, 55
- Սառայ, կին Աբրահամու 153
- Սասան 55, 56, 164
- Սասանայ, Սասանական տուն, թագաւորութիւն 72, 74, 77, 142
- Սատղացոց քաղաք 111
- Սարգիս Գիմախեան 101, 102
- Սարգիս Վահուանի 89
- Սարգիս Տալեյի 101
- Սարգիս Տրպատունի 101, 102
- Սարհանդ 51
- Սարայ քաղաքագետ 88
- Սեբաստիա 92
- Սեղկիկոս Նիկանովր 52
- Սեղկիկոս, որդի Անտիոքոսի 53
- Սենեֆարիմ արքայ Ասորեստանեայց 51
- Սենիտամ Խոսրով 109
- Սընա 139
- Սեպհական գեղին կողմանք 145, 166
- Սիւն, Սիւնայ անապատ 64, 139, 176
- Սիւնայ, Սիւնա լեռն 158
- Սիւնեական լեռնիք 119
- Սիովն 117, 120
- Սիովն լեռն 119
- Սիւնեաց աշխարհ 67, 175
- Սիւնիք 70, 95, 166, 169, 174
- Սկիւրիա 172
- Սմբատ Բագրատունի խորով Շում 101, 102, 128, 132, 133, 143, 149, 151, 162
- Սմբատ Բագրատունի, որդի Մանուէլի 92, 96
- Սմբատ Բագրատունի, որդի Վարագ Մահակայ 145
- Սմբատ ասպետ, որդի Սմբատայ խորով Շում 143, 144, 162, 163
- Սմբատ, Գուրկան մարզպան, տ. Սմբատ Բագրատունի խորով Շում 98, 99, 100, 102, 103
- Սմբատ, որդի Վարագոթրոցի 132
- Սմբատիկ ոմն գեղզու 102
- Սոկրատ պատմագիր 60
- Սողոմոնի տանար 139
- Սողոմ Արթուրի 159
- Սոսեր Անտիոքոս, տ. Անտիոքոս Սոսեր Սոսմէն գաւառ 105
- Սուր 135
- Սուրէն մարզպան 67, 70
- Սպահան 94, 96, 98
- Սպանդիատ քաղաք 73
- Սպանդունիք 165



Սպանիա 157  
 Սպերացիք 165  
 Ստեփանոս Սինի 87, 88, 94, 95, 96  
 Ստեփանոս Տարանացի պատմազիր 55  
  
 Վանան իշխան Սինեաց 67  
 Վանան հորխունի 133, 143  
 Վանան Միմիկոնեան 67  
 Վանեունիք 89  
 Վահրամ Միհրեանդակ 73, 74, 75, 77, 79, 80  
 Վահրին, տ. Շահր Վահրին 99  
 Վաղարշ թագ. Հայոց, որդի Տիգրանայ 55  
 Վաղարշ արքայ Պարսից, որդի Յազկերտի 62  
 Վաղարշակ (Ա) թագ. Հայոց 54, 55  
 Վաղարշակ (Բ) թագ. Հայոց, եղբայր Արշակայ 61  
 Վաղարշակ Պարթև, Վաղարշ արքա Պարթևաց 54, 55, 57  
 Վաղարշապատ քաղ. 66, 114, 121, 147, 175  
 Վաղեմտին, Վաղեմտիանոս գաւրավար 140, 141, 142, 143  
 Վաղեմտիանոս Կայսր 60, 62  
 Վաղէս կայսր 60  
 Վանանդ 65, 70, 71, 114  
 Վասակ Արծրունի, որդի Սահակայ 112  
 Վասակ Մամիկոնեան, հայր Վարդանայ Մամիկոնեանի 70  
 Վասպուրական գունդ 84  
 Վասպուրական համարակար 87, 88  
 Վատագէս գաւառ 103  
 Վարազ Գնէլ Գնունի 133  
 Վարազ ներսէն Վանեունի 89, 166  
 Վարազ Սահակ Բագրատունի 145  
 Վարազ Վգուր 71  
 Վարազդատ թագ. Հայոց 61  
 Վարազշապուհ Արծրունի 101  
 Վարազփրոց ասպետ, որդի Սմբատայ Խոսրով Շում 99, 103, 128, 132, 133, 162  
 Վարաժնունիք 165  
 Վարարատ գաւառ 77  
 Վարդ Պատրիկ, եղբայր Վահանայ 67  
 Վարդան Արծրունի 94  
 Վարդան Մամիկոնեան բղէշխ, որդի Վասակայ Մամիկոնեանի 65, 67, 68, 70  
 Վարդան Մամիկոնեան Կարմիրն կոչեցեալ 65  
 Վարդան Վշնասպ 70  
 Վարդանակերտ ասան 126  
 Վարդիկ իշխան Մոկաց 138  
 Վեն Անշատոք Խոսրով, տ. Շահաս տան-ի Նոկ-նոյ 69  
 Վեն Արտաշիր 66  
 Վենկատատ 74, 127  
 Վենոոս գետ 73, 101  
 Վիրոյ կարող. Աղոսանից 150  
 Վիրք (Երկիր, ազգ) 70, 125, 169, 171, 172, 174

Վնդատական 71, 105  
 Վնդոյ 73, 75, 79, 94  
 Վշնասպ-Հրատ, տ. Հրատ-Վշնասպ 124  
 Վոսմ արքայ Պարսից 61, 62  
 Վոսմ որդի Յազկերտի Բ 62  
 Վոսմ Գողթնեաց տէր 101  
 Վոսմշապուհ թագ. Հայոց 61, 62, 64  
 Վոսփնոս կայսր 62  
 Վստամ Ապահունի 101  
 Վստամ, եղբայր Վնդոյի 73, 75, 94, 95, 96, 97, 98  
 Վստամ Վանեունի 89  
 Վրաց աշխարհ 76, 79, 84, 146  
 Վրացիք 166  
 Վրկան աշխարհ, Երկիր 96, 98, 101  
 Վրեջունիք ասան 125  
  
 Տաղական 103  
 Տանիկ, Տանկաստան 74, 75, 78, 134, 139, 174, 175, 176  
 Տանկաց Երկիր 53, 171  
 Տամ Խոսրով 71  
 Տայեցիք 144, 165  
 Տայք 144, 146, 165, 166, 168, 169, 175  
 Տանուտրական իշխանութիւն 76  
 Տանուտրական տուն 84  
 Տապարաստան գաւառ 96, 99  
 Տարան, Տարոն 112, 132, 138  
 Տարսան քաղ. 115  
 Տարսունացի, տ. և Պաղոս առաքեալ 153  
 Տերեմտիանոս 57  
 Տիբերոս կայսր 63  
 Տիգրան թագ. Հայոց, Եղբայր Տիրանայ 55  
 Տիգրան թագ. Հայոց, որդի Արտաշիսի 55  
 Տիգրանակերտ ասան 125  
 Տիգրանակերտ մեա 125  
 Տիգրոն, Տիսրոն 65, 66, 76, 107, 124, 126, 127, 130, 137, 173  
 Տիմոթէոս Եպիսկ. 154  
 Տիտան, տ. Բէլ Տիտանեան  
 Տիտոս 154  
 Տիրան, որդի Արտաշիսի 55  
 Տիրան, որդի Խոսրովայ 55, 59, 60  
 Տոխուրաստայն 103  
 Տոս գաւառ 101  
 Տորոս լեռան 139  
 Տրապիզոն քաղ. 169  
 Տրդատ՝ Տրդատիոս թագ. Հայոց, որդի Խոսրովայ քաղի 47, 55, 58, 59, 68, 147, 155, 160  
 Տփլիսի քաղ. 76, 84  
  
 Փայտակարան, Փայտակարան քաղ. 65, 67, 125  
 Փառագեան Բագրատ 54  
 Փառական դաշտ 52  
 Փառանու անապատ 135

- Փառնաագ 51  
 Փառոխ, որ և Եղիազար 52  
 Փառոխա 52  
 Փիլեղելիոս Պաղովէոս 56  
 Փիլիպպիկոս՝ Փիլիպպոս, նաև Փիղիպիկոս.  
     փեսայ Մարկայ, զարավար 76, 114  
 Փիլիպպոս բագ. Հոռմայ 55  
 Փիլիպպոս Սիմեոս աէր 70  
 Փոկաս կայսր 63, 65, 105, 106, 111, 113, 122  
 Քաղկեդոն 122, 124, 132, 170, 171  
 Քաղկեդոնի ժողով 91, 148, 150, 151, 158, 160,  
     167  
 Քեսոս 162  
 Քոզդադ 135  
 Քուզանաց աշխարհ, Երկիր 52, 55, 57, 67, 73,  
     101, 163  
 Քուզանք 54, 67, 97, 102, 103  
 Քրիստափոր կարող. 129  
 Քրիստոս, Յիսուս 148, 149, 152, 153, 156, 157,  
     158, 160, 161, 168, 169, 170, 176

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
Համառոտագրություններ	43
Պատմութիւն Սերբոսի	45
Յանկ գլխոց Պատմութեան Սերբոսի	179
Ծանոթագրություններ	187
Հավելվածներ	369
Ա. «Սերբոսի Պատմության» հեղինակի հարցը	371
Բ. Անանունի Ա—Ջ գլուխները	386
Գ. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց	391
Դ. Պատմութիւն Թովմայի Արծրունւոյ	399
Ե. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն արեւելեական	407
Զ. Պատմութիւն Վարդանայ	416
Է. Գիւտ նշխարաց սրբոյն Հոփսիմեայ	419
Ը. «Հերակլի պատմության» հատվածական վերապատմաները	421
Հատուկ աճուճների ցանկ	435

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՍԵՔՆՆՈՍԻ

Ա Ղ խ ա տ ա ի ռ ո թ յ ա մ ք  
Գ Ե Վ Ո Ր Գ Վ Ա Ր Ա Գ Ի Ա Ր Գ Ա Ր Յ Ա Ն Ի

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի  
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր  
Ժ. Մ. Ադունց  
Գեղարվեստական խմբագիր  
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ  
Տեխնիկական խմբագիր  
Ս. Կ. ԶԱՔԱՐՅԱՆ  
Սրբագրիչ  
Է. Ա. ՍՈՆԻԿՅԱՆ

ՎՖ 04608 Պատվեր 417 Հրատ. 4782 Տպագրման 1500

Հանձնված է շարվածքի 16.05.1978 թ.: Ստորագրված է տպագրու-  
թյան 14.09.1979 թ.: Տպագր. 28,0 մամուլ, հրատ. 38,44 մամուլ,  
պայման. 39,2 մամուլ, տառատեսակ գրքի սովորական, տպագրու-  
թյուն հարթ: Փուլք № 1, 70×108: Գինը՝ 5 ռ. 90 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ.  
Издательство Академии наук Арм. ССР. 375019, Ереван, Барекамутян, 24-г.  
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան  
Типография Издательства АН Армянской ССР, г. Эчмиадзин

## ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
Համառոտագրություններ	43
Պատմութիւն Սեբէոսի	45
Յանկ գլխոց Պատմութեան Սեբէոսի	179
Մանրագրություններ	187
Հավելվածներ	369
Ա. «Սեբէոսի Պատմության» հեղինակի հարցը	371
Բ. Անանունի Ա—Զ գլուխները	386
Գ. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց	391
Դ. Պատմութիւն Թովմայի Արծրունւոյ	399
Ե. Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Եփեզերական	407
Զ. Պատմութիւն Վարդանայ	416
Է. Գիւտ նշխարաց սրբոյն Հոփսիմեայ	419
Ը. «Հերակլի պատմության» հատվածական վերապատումները	421
Հատուկ աւուճների ցանկ	435

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջ	տող	տպված է	պետք է լինի
41	34	ՀԲԲԲԿԼԻ	ՀԲԲԿԼԻ
44	4	2965	2935
56	18	չիք	ձախ լուսանցքում պետք է ավելացնել «492բ»
78	18	02բ	502բ
102	4	12բ	512բ
109	13	չիք	ձախ լուսանցքում պետք է ավելացնել «516ա»
126	20	436	438
127	28	25ա	525ա
168	25	չիք	ձախ լուսանցքում պետք է ավելացնել «544բ»
171	38	չիք	ձախ լուսանցքում պետք է ավելացնել «546ա»
176	27	չիք	ձախ լուսանցքում պետք է ավելացնել «547բ»
189	14ն	բառք»,	բառք»),
192	9ն	1890	1980
275	21	դեղք	դեղք
345	23	են «հնչում»	չեն «հնչում»
419	4	999	993
420	26	999	993